ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՌՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԶՆԿԱ

ՀՆԱԳՈՒՅՆ ԴԱՐԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2005

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Ս 887

Ստեփանյան, Գ. Խ.

Ս 887 Երզնկա (Հնագույն դարերից մինչև մեր օրերը)/Պ. Հ. Հովհաննիսյանի և Ա. Գ. Տեր-Ստեփանյանի խմբագրությամբ.– Եր., Երևանի համալս. հրատ., 2005, 680 էջ + 46 էջ ներդիր + 1 քարտեզ:

Գիրքը նվիրված է պատմական Հայաստանի ամենանշանավոր բնակավայրերից մեկի՝ Երզնկայի (Երիզա), ավելի քան երեքհազարամյա պատմությանը: Աղբյուրագիտական հարուստ հենքի վրա ներկայացված են Հայասայի, Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների, Բագրատունիների, ինչպես նաև արաբական, բյուզանդական, սելջուկյան, մոնղոլական ու թուրքական տիրապետությունների ժամանակաշրջանների Երզնկա քաղաքի և Եկեղյաց գավառի պատմության հիմնական դրվագները: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Երզնկայի հայերի հավատալիքների, կենցաղին, սովորույթներին, բանահյուսությանը և մշակույթի պատմությանը վերաբերող հատվածները: Ներկայացված է նաև 1895 թ. և 1915–1916 թթ. հայկական կոտորածների ժամանակ Երզնկայի հայոց ունեցած տուրքի դաժան հաշվետվությունը: Տրվում են ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում հանգրվան գտած մի քանի նշանավոր երզնկացիների կենսագրականները:

Կարող է օգտակար լինել հայագետներին, ինչպես նաև ընթերցող լայն հասարակայնությանը:

Ս $\frac{0503020913}{704(02)05}$ *2005* *ԳՄԴ 63.3(2Հ)*

ISBN-5.8084-0686-2

© Երևանի համալսարանի հրատ., 2005 թ.
© Գ. Խ. Ստեփանյան, 2005 թ.

Գիրքը հրատարակվում է
ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ
հիմնարկության հովանավորությամբ

Խմբագրությամբ՝

Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
Ա. Գ. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

Ամիրում եմ հորս՝ Երկնքայի Թարպի

ԽԱՉԻԿ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻ – *հորս՝*

ՈՍԿԵՃՅՈՒԼ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

պայծառ հիշատակին

ՀԵՂԻՆԱԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երզնկան հայ ժողովրդի հնագույն բնօրրաններից է, պատմական Հայաստանի այն նշանավոր բնակավայրերից, որտեղ հեթանոսական դարերից մինչև 1915 թ. անընդմեջ ապրել են հայեր, սերնդեսերունդ փոխանցելով դարավոր ավանդույթները, որոնք շարունակվում են մինչև մեր օրերը՝ մայր հայրենիքում և սփյուռքում: Երզնկայի անմահության, վերածնման հուսադրիչ փաստը հանդիսացավ 1965 թ., Աշտարակի շրջանում Նոր Երզնկա ավանի հիմնադրումը:

Այժմ գիտական միջավայրում ընդունված ճշմարտություն է, որ դեռևս երեք հազարամյակ առաջ ***Հայասա*** *երկիրը եղել է հայ ժողովրդի բնօրրանը, իսկ վերջինիս կենտրոնը եղել է Եկեղյաց գավառը, այսինքն՝ այժմյան Երզնկայի դաշտավայրը:*

Երզնկան եղել է նաև հայ էթնոսի մյուս բաղկացուցիչ մասը կազմող արմենների նախնական բնակավայրը: Այս տեսակետը միշտ էլ հետաքրքրել է գիտական աշխարհին և այժմ էլ հանդիսանում է կարևոր ազդակ՝ հայ ժողովրդի ծագման հարցերով զբաղվող պատմաբանների համար

Երզնկան Ուրարտական թագավորության ժամանակաշրջանում պահել է քաղաքական, մշակութային կենտրոնի դերը, ինչպես ցույց տվեցին վերջին տասնամյակներում Երզնկայից ոչ հեռու գտնվող Ալթըն թեփե ամրոցում կատարված պեղումները:

Իր աշխարհագրական դիրքի, բարեխառն կլիմայի շնորհիվ է, որ Երզնկան քաղաքական, կրոնական կենտրոն է եղել նաև հայկական պետականության ծաղկման դարերից՝ Արտաշեսյան հարստության և Արշակունիների թագավորության ողջ շրջանում: Բավական է հիշել, որ այնտեղ են եղել հեթանոսական կրոնական կենտրոնները, Անահիտի փառահեղ տաճարները, որոնց շրջապատում հատկապես Նավասարդյան տոնախմբությունների օրերին եկել են Հայաստանի տարբեր կողմերից բազմահազար մարդիկ ու մասնակցել հանդիսությունների, ժողովրդական խաղերի ու զվարճությունների:

Երզնկան մտավոր ու կրոնական կենտրոնի իր դերը պահել է նաև քրիստոնեության արշալույսին: Հեթանոսական տաճարների տեղը կառուցվել են քրիստոնեական եկեղեցիներ, վանքեր, որոնք եղել են կրթական, մշակութային կենտրոններ: Ըստ ավանդության Գրիգոր

Լուսավորիչն իր կյանքի վերջին տարիներն անց է կացրել Երզնկայի մոտակայքում գտնվող Մանյա այրում:

Հետագա դարերում Երզնկան շարունակում է հայ ժողովրդի տնտեսական ու հոգևոր կյանքում կատարել նշանակալից դեր: Քաղաքում ու նրա շրջակայքում գործող տասնյակ վանքերում կրթություն են ստացել հայ մշակույթի շատ գործիչներ, որոնց թվում՝ միջնադարյան գրականության այնպիսի ականավոր ներկայացուցիչներ, ինչպես Հովհաննես Երզնկացին, Կոստանդին Երզնկացին, երաժիշտներ, ծաղկողներ և այլն:

Երզնկայի վանքերում գրվել ու նկարազարդվել են հարյուրավոր ձեռագրեր: Դրանցից երկու հարյուրից ավելին հասել են մեր օրերը: Անհնարին է ենթադրել, թե որքան էլ ոչնչացել է ժամանակի ընթացքում՝ տևական թալանի, հրդեհների ու ավերածությունների հետևանքով:

Լինելով առևտրաշահ կենտրոն և գտնվելով Արևելքի ու Արևմուտքի նշանավոր մայրուղիների խաչմերուկում, քաղաքը նշանակալից դեր է կատարել միջազգային առևտրի զարգացման գործում: Երզնկացի վաճառականներն առևտրական լայն գործառնությունների մեջ են եղել եվրոպական պետությունների հետ, իսկ նրանցից մեկը՝ Մարտիրոս Երզնկացին, փորձել է նավարկել Ատլանտյան ու Խաղաղ օվկիանոսներով:

Երզնկան դեռևս միջին դարերից գրավել է օտար ճանապարհորդների ուշադրությունը: Արաբ, ֆրանսիացի, իտալացի և այլ բազմաթիվ ճանապարհորդներ իրենց ուղեգրություններում հիացմունքով են խոսել քաղաքի մասին, կանգ առնելով մասնավորապես նրա նուրբ մանածագործության, պղնձագործության և այլ արհեստների վրա: Նրանք հատուկ ուշադրություն են դարձրել հայերի ազգային նկարագրի, հյուրասիրական սովորույթների, աշխատասիրության վրա:

Մինչև Թուրք-թաթարական արշավանքների սկիզբը քաղաքն ու շրջակա գյուղերը եղել են զուտ հայաբնակ, ապրել են տոհմիկ հայ կենցաղով: Հետագայում թուրքական տարրն աստիճանաբար աճել է, փոխել բնակչության ազգային հարաբերակցությունը, սակայն մինչև վերջ էլ բազմաթիվ գյուղեր մնացել են հայաբնակ, իսկ բուն քաղաքում մեծամասնություն են կազմել հայերը:

Տիրապետող տարրի տևական հալածանքն ու ճնշումը, պարբերական երկրաշարժերը ստիպել են շատ երզնկացիների, հատկապես 16–17-րդ դարերից սկսած՝ հեռանալ պապենական վայրերից թե՛ անհատորեն և թե՛ զանգվածային գաղթի ճանապարհով:

Ինչպես գավառական այլ վայրերի, այնպես էլ Երզնկայի համար չարիք է եղել տղամարդկանց պանդխտությունը, որն աղետալի ծավալ է ընդունել 19-րդ դարի կեսերից: Զանգվածային գաղթը կատարվել է հիմնականում դեպի Կ. Պոլիս ու նրա շրջակայքը: Կա կարծիք, որ Ադրիանապոլսի, Ռոդոստոյի հայերի մի մասը դեռևս ջալալիների արշավանքների օրերին Երզնկայից գաղթած հայեր են:

Չնայած այս բոլորին, Երզնկան պատմական Հայաստանի այն կենտրոններից է, որտեղ հայերը մինչև 1915 թ. պահել են մայրենի լեզուն, ազգային նկարագիրը, կրոնը:

Հարատև ճնշումներից, գաղթերից ու պանդխտությունից խեղճացած, կիսաճորտական վիճակի հասած Երզնկայի հայությունը ինքնագիտակցության որոշ աշխուժացում է ապրել 1850–1860-ական թվականների ազգային զարթոնքի տարիներին, երբ ստեղծվել են կրթական, բարեգործական ընկերություններ, միություններ, բացվել են դպրոցներ ոչ միայն արական, այլև՝ աղջիկների համար, աշխուժացել է հասարակական կյանքը, կազմակերպվել են թատերական ներկայացումներ: Երզնկայում բեմադրել են պատմական Հայաստանի փառքը ցուցահանող իրադարձություններ. թագավորներ, իշխաններ, նախարարներ իրենց հայրենասիրական ճառերով ոգևորություն են առաջացրել հայ երիտասարդության մեջ: Երզնկան գավառական քաղաքների մեջ միակն էր, որ անլուր գրկանքներով, անձնվեր աշխատանքով կառուցեց թատրոնի սեփական շենք՝ հար և նման Կ. Պոլսի Կետիկ փաչա թաղամասում գործող Հ. Վարդովյանի «Օսմանյան թատրոնի»:

Ազգային զգացումների այդ պոռթկումը կասեցվեց 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: Օսմանյան կառավարությունն արգելեց հայկական դպրոցներում հայոց պատմության դասավանդումը, փակվեց թատրոնը, ընդհատվեց մշակութային ընկերությունների գործունեությունը: Սակայն ժողովուրդն արդեն այն չէր, ինչ կես դար առաջ: Գիտեր, որ ստրկական այն համակերպումը, որի մեջ իրեն պահում էին դարերից ի վեր տիրապետող տարրերը, երբեք էլ ի վերուստ սահմանված չէր: Ինչպես որ ազատագրվել էին թուրքական տիրապետության տակ գտնվող շատ ժողովուրդներ, այնպես էլ օրակարգի հարց էր հայ ժողովրդի անկախության ձեռքբերումը:

Այս գիտակցության արտահայտություններն էին ազատագրական այն խմորումները, հայդուկային ընդվզումները, որ նկատում ենք Երզընկայում 1890-ական թվականներից, ընդվզումներ, որոնց ամենափայլուն էջերն էր գրել ժողովրդական հերոս Գալուստ Արխանյանն իր խմբով:

Մեծ եղեռնի օրերին ամենից շատ տուժած վայրերից մեկը եղավ Երզնկան: Քաղաքի ու շրջակա գյուղերի ավելի քան 26.000 հայերից 22.000-ը զոհ գնաց կոտորածներին, մարտիրոսացավ ու խեղդվեց իր սիրած Եփրատի մեջ, քչերը հասան մինչև Դեր Զոր, իրենց անմեղ արյունով ներկելու արաբական անապատները: Միանգամից ամայացավ երբեմնի չեն ու ծաղկուն Երզնկան, հայերի ավերակ տների վրա բուեր վայեցին, կարիճներ, մողեսներ երևացին այն սենյակներում, որտեղ առաջ հարս ու աղջիկ, մատաղ երեխաներ իրենց կենսախինդ ճռվողյունով մեր ժողովրդի հավերժությունն էին ազդարարում:

Եղեռնից ազատված փոքրաթիվ երզնկացիները ցրվեցին աշխարհով մեկ: Մի մասը եկավ Հայաստան, մի մասն անցավ արտասահման՝ Բալկանյան երկրներ, Ֆրանսիա, ԱՄՆ, Եգիպտոս, Սիրիա, Լիբանան և այլն:

Թուրք ոճրագործները թալանեցին հայերի անթիվ հարստությունը, գրավեցին նրանց տները, այգիները, խանութները:

Բայց չվայելեցին: Նախախնամությունը պատժեց նրանց. 1939 թ. դեկտեմբերի 27-ի երկրաշարժը այնպիսի ուժգնությամբ ցնցեց քաղաքը, որ այն վերածեց ավերակույտերի: Ու այժմ չկա Երզնկան գեթ անցյալի տեղում, որտեղ անտառներ են գոյացել: Իսկ երկաթուղու երկայնքով բարձրացող մի քանի նոր թաղամասեր պահում են Երզինջյան անունը:

Պատմական Հայաստանի շատ քաղաքների, գավառների վերապրող հայերը, մեծ մասամբ ԱՄՆ-ում ապրողներ, ստեղծել են հայրենակցական միություններ, որոնց հիմնական խնդիրներից մեկն էլ եղել է արդեն պատմության գիրկն անցած հարազատ քաղաքի պատմության շարադրումն ու լույս ընծայումը:

Նման աշխատություններ են հրատարակել կեսարացիները, եվդոկացիները, ակնցիները, խարբերդցիները, մարաշցիները, սեբաստացիները, վանեցիները, մալաթիացիները, ամասիացիները, կարնեցիները, արաբկիրցիները, պարտիզակցիները, թոմարզացիները, զեյթունցիները, հաճընցիները, աղանացիները, եդեսացիները և տասնյակ այլ քաղաքների վերապրող հայերը՝ միմյանց հետ մրցելով ավելի ծավալուն, ավելի չքեղ մի հուշամատյան հրապարակ հանելու համար:

Երզնկայի պատմությունը գրելու ուղղությամբ նույնպես եղել են փորձեր, որոնցից են.

1. Գալուստ Սյուրմենյան, Երզնկա, Կահիրե, 1947: Այս գիրքն առաջին ծավալուն աշխատությունն է (510 էջ) Երզնկայի մասին: Պարունակում է ժամանակակցի և ականատեսի վավերական տեղեկություններ: Ուշագրավ են մասնավորապես տեղագրական, աշխարհա-

գրական, բուսական և կենդանական աշխարհին վերաբերող տեղեկությունները, որոնցից մեծապես օգտվել ենք ներկա աշխատության համապատասխան գլուխը շարադրելիս: Սյուրմենյանի գիրքն ուշագրավ տեղեկություններ է պարունակում նաև 19-րդ դարի հասարակական-քաղաքական կյանքի, ինչպես և Մեծ եղեռնի օրերի վերաբերյալ:

Այս բոլորով հանդերձ՝ նրա աշխատությունը չի հետապնդել գիտական նպատակ: Սյուրմենյանը, չլինելով պատմաբան, հին շրջանի մասին խոսում է շատ թռուցիկ, հազիվ 10–15 էջ: Անգամ 19-րդ դարի մտավոր վերելքը ներկայացրել է հարևանցիորեն: Դրա փոխարեն՝ նրա «Երզնկա» գրքում լայն տեղ է տրվել նորագույն պատմությանը, Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող քաղաքական իրադարձություններին, ազատագրական պայքարին, քաղաքական կուսակցությունների գործունեությանը, պատերազմի տարիների դեպքերին, վերապրող երզնկացիների ճակատագրին և այլն: Գրքի զգալի մասը, մոտ 100 էջ, հեղինակի անձնական հիշողություններն են, նույնքան տեղ էլ հատկացված է այլ երզնկացիների հիշողություններին: Այս բոլորով հանդերձ, Սյուրմենյանի գիրքը որպես առաջին փորձ արժանի է ուշադրության և օգտակար՝ Երզնկայի պատմության հետագա հետազոտողների համար:

2. Հարություն Քյուրտյան, Երիզա և Եկեղյաց գավառ, հատ. Ա, Վենետիկ, 1953: Հեղինակը, լինելով ճանաչված պատմաբան, Երզնկայի հնագույն շրջանի պատմությունը գրել է գիտական խորությամբ, քննական սկզբունքով: Քյուրտյանի գրքի Ա հատորն ընդգրկում է մինչև 14-րդ դարը: Թե հանգուցյալ պատմաբանի հաջորդ հատորներն ինչ ընդգրկում պիտի ունենային, գրվե՞լ են թե ոչ, մեզ հայտնի չէ: Մեզ հետ ունեցած անձնական զրույցի ժամանակ նա ասել է, թե ամբողջ աշխատությունը բաղկացած է լինելու հինգ հատորից, թե արդեն տպագրության համար պատրաստ է Բ հատորը: Քյուրտյանի գրքից մեծապես օգտվել ենք մասնավորապես Երզնկայի մատենագրական դպրոցին վերաբերող գլուխները շարադրելիս, քանի որ նա օգտագործել է աշխարհի տարբեր վայրերում պահվող հայերեն բազմաթիվ ձեռագրեր, որոնք անմատչելի են եղել մեզ:

3. Գուրգեն Տեր-Վարդանյան, Երզնկա–Կամախ գավառաբարբառը և ազգագրական հուշեր, Երուսաղեմ, 1968: Վերնագրից էլ երևում է, որ այս գիրքն այլ նպատակ է հետապնդում և ամենևին չի կարող փոխարինել Երզնկայի պատմությանը: Ավելի քան 310 էջից բաղկացած գրքի կեսը հատկացված է Երզնկա–Կամախ գավառաբարբառի քննությանն ու Երզնկա–Կամախ գավառաբարբառի բառարանին, մյուս կեսը՝ ազգագրական բնույթ ունի. հեղինակը հուշերի ձևով

խոսում է կաղանդի, ծնունդի, բարեկենդանի, ծաղկազարդի, զատիկի, վարդավառի և այլ տոների մասին, նաև հարսանեկան սովորությունների: Մեր աշխատության տարբեր գլուխներում օգտվել ենք Գ. Տեր-Վարդանյանի այս արժեքավոր աշխատությունից:

4. Գառնիկ Ստեփանյան, Մղձավանջային օրեր, Երևան, 1945, Բ տպագրություն՝ Բեյրութ, 1952: Հուշագրական այս երկասիրությունը, որտեղ պատմվում է Երզնկացի Խաչիկ Տեր-Ստեփանյանի (Թարգի Խաչիկ) արկածալից կյանքը, պատմագրական գործ չէ, բայց պարունակում է վավերական ուշագրավ փաստեր Առաջին համաշխարհային պատերազմի տարիների, Մեծ եղեռնի օրերի և ետպատերազմյան Երզնկայի վիճակի մասին. վերցրել ենք որոշ հատվածներ որպես ականատեսի վկայություններ:

5. Դ. Մ. Կոստանդյան, Երզնկայի բարբառը, Երևան, 1979: Երզնկայի բարբառի գիտական ամենաընդարձակ հետազոտությունն է: Օգտագործել ենք Երզնկայի բանահյուսությանն ու բարբառին վերաբերող գլուխներում:

Այս է մեզ հայտնի այն գրականությունը, որ լույս է տեսել Երզնկայի մասին: Ինչպես տեսնում ենք, մինչև այժմ չունենք սկզբից մինչև մեր օրերն ընդգրկող Երզնկայի ամբողջական պատմությունը, մի բան, որ ունեն պատմական Հայաստանի համարյա բոլոր նշանավոր քաղաքներն ու գավառները:

Այս բացն է, որ ուզում ենք լրացնել սույն աշխատությամբ, խրթան ունենալով ամենից առաջ հայրենասիրական մեր պարտքի գիտակցությունը, նաև երկար տարիների բանասիրական աշխատանքի փորձն ու կուտակած փաստական նյութը:

Ի՞նչ գրականություն ենք օգտագործել:

Երզնկայի պատմության հետ կապված քաղաքական դեպքերի համար առաջին հերթին օգտագործել ենք հայ ժողովրդի պատմությանը վերաբերող հիմնական գրքերը՝ Մ. Չամչյանի «Հայոց պատմության» երեք հատորները (Վենետիկ, 1784–1786), Մ. Օրմանյանի «Ազգապատումի» երեք հատորները (հատ. Ա–Գ, Կ. Պոլիս, 1912, 1913, Երուսաղեմ, 1927), Ա. Գարագաշյանի «Քննական պատմություն հայոց» քառահատոր աշխատությունը (Թիֆլիս, 1895), Լեոյի «Հայոց պատմության» երեք հատորները (հատ. Ա–Գ, Թիֆլիս, 1917, Երևան, 1946, 1947), Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» բազմահատոր հետազոտությունը (հատ. Ա, 1944, հատ. Բ, 1957, 1960, հատ. Գ, 1952, 2-րդ հրատ., Երևան, 1977–1978), Հայաստանի ԽՍՀ ԳԱ հրատարակությամբ լույս տեսած «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակը, ինչպես նաև տասնյակ այլ պատմագրական աշխատություններ:

Անմիջապես Երզնկայի պատմության հետ կապված հարցերի համար դիմել ենք սկզբնաղբյուրներին: Նայել ենք մեր բոլոր պատմիչների գործերը (Մովսես Խորենացի, Ագաթանգեղոս, Կորյուն, Փավստոս Բուզանդ, Սեբեոս, Ղազար Փարպեցի, Մատթեոս Ուռհայեցի, Թովմա Արծրունի, Ասողիկ, Արիստակես Լաստիվերցի, Թովմա Մեծոփեցի, Գրիգոր Դարանաղցի և այլն), վերցրել Երզնկայի հետ կապված նյութերը, հիշատակությունները:

Թերթել ենք ժամանակի պարբերական մամուլը, որքան հնարավոր է եղել: Օգտակար նյութեր ենք քաղել «Հանդես ամսօրյա», «Բազմավեպ», «Մասիս», «Արևելյան մամուլ» և այլ պարբերականներից, նոր շրջանից՝ «Հայաստանի կոչնակ», «Անահիտ», «Լրաբեր», «Արև», «Ապագա», «Պայքար» և այլ տասնյակ ամսագրերից ու թերթերից, որոնցում տպագրված են վերապրող երզնկացիների հուշերը, մանր հետազոտություններ:

Մեր աշխատության համար նյութեր ենք քաղել արխիվային փաստաթղթերից, մասնավորապես Զարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում պահվող Թ. Ագատյանի բազմահարուստ արխիվից:

Ձեռքի տակ ունեցել ենք մեր հոր՝ Թարգի Խաչիկ Տեր-Ստեփանյանի ձեռագիր երկու ստվար տետրերը, գրի առնված 1949 թ., Երևանում: Դրանք պարունակում են ոչ միայն Տեր-Ստեփանյանների գերդաստանի պատմությունը, այլև Երզնկայի կենցաղի, սովորությունների, կրթական ու հասարակական կյանքին վերաբերող արժեքավոր տեղեկություններ, բանահյուսական նյութեր՝ հեքիաթներ, առածներ, սրամիտ մանրադեպեր՝ կապված հայ-քրդական փոխհարաբերությունների հետ: Հաճախ ենք դիմել Թարգի Խաչիկի այդ հիշողություններին:

Երզնկացի բազմաթիվ ընտանիքների վերաբերյալ տեղեկություններ ենք վերցրել այլ ընտանիքների վերապրող ներկայացուցիչներից կամ նրանց ժառանգներից, որոնք ապրում են Հայաստանում, մի քանիսն էլ արտասահմանում: Այդ ընտանիքներից են՝ Մոմճոնք, Հայրունիները, Գասպարյանները, Սեիյանները, Խանջյանները, Աղալյանները, Սյուրմենյանները, Երզնկյանները և այլն:

Սույն աշխատության պատրաստման գործում մեզ օժանդակել է մեր կրտսեր որդին՝ Արմեն Տեր-Ստեփանյանը, որն աշխատում է Մաշտոցի անվան Մատենադարանում և քաջ տեղյակ է Երզնկայի մատենագրական դպրոցին: Նա տպագիր և անտիպ հիշատակարաններից քաղել է նյութեր՝ Երզնկայի վանքերում աշխատած գրիչների, ծաղկողների, մանրանկարիչների մասին: Դրանց մի մասը տեղ չի գտել անգամ Հ. Քյուրտյանի մանրակրկիտ հետազոտությունում:

Հակառակ մեր թափած ջանքերին, չենք կարողացել հաղթահարել ժողովրդական բանահյուսության բնագավառը: Վանի, Ակնի, Զեյթունի և այլ վայրերի անգիր բանահյուսությունը հարյուր տարուց ի վեր ուսումնասիրվել և հրատարակվել է:

Երգնկան զարմանալիորեն մոռացության է մատնվել: «Ազգագրական հանդեսի» տասնյակ հատորներում, «Բյուրակն» և այլ բանահյուսական հակում ունեցող պարբերականներում աննշան բեկորներ միայն կան Երգնկայի ժողովրդական բանահյուսությունից: Բայց չէ՞ որ այս քաղաքն էլ ունեցել է իր հեքիաթասացները, գուսանները, այստեղ էլ հայ մայրը օրոր է ասել մանկիկին, ճանապարհ գցել պանդուխտ որդուն՝ տրտմաթախիծ երգերով, հանդում ու աշխատանքի վայրում հնչեցրել իր հորովելը:

Ոչ ոք չի փորձել հավաքել և հրատարակել դրանք:

Կարծեք այս բացը լրացնելու փորձեր են Ամերիկայի «Երգնկացիների հայրենակցական միության» եռանդուն գործիչներից Ա. Ազնավուրյանի «Հեքիաթներ, զվարճալիքներ» գիրքը (Միչիգան, 1971) և Թարգի Խաչիկի վերևում հիշատակված ձեռագիր գրառումները, որոնցում գտնում ենք բավականաչափ նյութեր: Դժբախտաբար երկուսն էլ վերապատմել են և ոչ թե գրի առել ժողովրդական խոսվածքը, մի բան, որ զեղչում է պատմվող հեքիաթի կամ մանրապատումի բանահյուսական արժեքը:

Վերցրել ենք «Բյուրակնում» և այլ ամսագրերում տպագրված մի քանի բեկոր, որոնք օգտագործվել են նաև Գ. Տեր-Վարդանյանի վերոհիշյալ գրքում:

Անչահախնդիր եռանդով ու նվիրվածությամբ ենք ձեռնարկել այս գրքի ստեղծմանը և հասցրել վախճանին: Այն ամբողջ ժամանակ, որ զբաղվել ենք նրա չարադրանքով, երևակայությամբ շրջել ենք մեր հայրենիքի կախարդական լեռներում ու ձորերում, պաղ աղբյուրների մոտ հանգստացել, ըմբոշխնել Եփրատի ափերում ընկած այգիների բույրը, վերապրել մեր մանկության օրերի անջնջելի տպավորությունները, ահասարսուռ դեպքերը:

Բազմահազար երգնկացիներ զոհ դառնալով Մեծ եղեռնին, այնպես էլ չունեցան իրենց գերեզմանը, չիրմաքարը: Մեր այս համեստ աշխատությունը թող լինի չիրմաքար-մատյան, որի յուրաքանչյուր թերթը պիտի պատմի ապագա սերունդներին հայկական հնօրյա մի քաղաքի անցյալի փառքի ու ողբերգության դրվագները, կոտորածների, նաև հերոսական ոգորումների ու սխրանքների մասին:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԵՐԶՆԿԱՆ ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵՐԶՆԿԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. ԵՐԶՆԿԱ ԱՆՎԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Տեղանունների ստուգաբանությունը քիչ է զբաղեցրել գիտնականներին, և դա այն պատճառով, որ անհնար է աշխարհի տարբեր քաղաքների, բնակավայրերի ճնշող մասի անվան գիտական բացատրությունը տալ: Ստուգաբանվում են միայն այն տեղանունները, որոնք տվյալ ժողովրդի լեզվական իմաստավորումով հեշտ ըմբռնելի են, ինչպես հայերեն ***ազարակ*** *բառից առաջացած Ագրակ տեղանունը, կամ եթե այս կամ այն պատմական անձնավորության անվան հետ է կապվում վայրի, տեղի անունը՝ Տիգրանակերտ, Վաղարշապատ, Կոստանդնուպոլիս և այլն: Բայց սրանք աննշան թիվ են կազմում. մեծ մասի ծագումն անհնար է որոշել, ինչպես՝ Անի, Բջնի, Երիզա, Երևան: Ժողովուրդը նրանցից յուրաքանչյուրին տվել է միամիտ բացատրություն, որոնք ամենևին գիտական հիմք չունեն: Ասենք Երևան տեղանունը մարդիկ կապել են* ***երևալ*** *հայերեն բառի հետ, մինչդեռ վերջին տարիներին միայն պարզվեց, որ այն ուրարտական* ***Էրեբունի*** *անունն է, թե Էրեբունի էլ ի՞նչ է նշանակել, ոչ ոք չի կարող ասել: Գուցե շատ ավելի հին մի անվան կամ բառի հնչյունափոխված ձևն է:*

Այս դժվարության պատճառով է, որ հայագետներից և ոչ մեկը գոհացուցիչ արդյունքի չի հասել պատմական Հայաստանի հարյուրավոր տեղանունների ստուգաբանման գործում:

Գերմանացի նշանավոր հայագետ Հ. Հյուբշմանը տպագրել է «Հին հայոց տեղվո անունները» արժեքավոր աշխատությունը, սակայն նա այստեղ շատ ավելի խոսել է հայկական տեղանունների վկայությունների մասին, այսինքն՝ թե որ տեղանունը, որ պատմիչի մոտ ինչպես է հիշատակվել, որ գավառում է գտնվում, քան թե փորձել է ստուգա-

բանել: Պրոֆ. Հ. Աճառյանը տասնամյակներ առաջ ձեռնարկել էր Անձնանունների և տեղանունների բառարանների պատրաստմանը: Առաջինն ավարտեց և հրատարակեց հինգ հատորներով, Տեղանունների բառարանի վրա այնպես էլ ժամանակ չգտնվեց: Մեր այն հարցին, թե ինչո՞ւ է թերի թողնում այդ օգտակար գործը, հարգելի ուսուցչապետը պատասխանել է. «Գիտությունը կեղծիք չի սիրում. անհնար է գիտական բացատրություն տալ այն տեղանուններին, որոնք գալիս են դարերի խորքից և ժամանակի ընթացքում կրել են հնչյունաբանական ու իմաստային փոփոխություններ»:

Այս բոլորից հետո, բնական է, որ մենք էլ որոշակի բան չպիտի կարողանանք ասել Եկեղյաց գավառ և Երզնկա անունների ծագման մասին: Սակայն քանի որ այդ անունների վերաբերյալ եղել են կարծիքներ, ավելորդ չենք համարում արձանագրել դրանցից մի քանիսը:

Եկեղյաց գավառի մասին հայ մատենագրության մեջ հիշատակություններ ունեն Խորենացին, Բուզանդը, Փարպեցին, Ագաթանգեղոսը, Կորյունը և ուրիշներ, ոմանք ուղղական կամ հայցական հոլովով, ուրիշներ՝ սեռական հոլովով: Եվ որովհետև հունական աղբյուրներում այն հիշատակվում է **Ակիլիսենե** (Ստարբոն), **Եկելեսեսինի** (Պրոկոպիոս) ձևով, իսկ այդ բառերը մոտ են հունարեն էկլիսիա-եկեղեցի բառին, ուստի սրանից ելնելով, ոմանք կարծել են, թե հայկական Եկեղյաց բառը պետք է նույնացնել հունական **Էկլիսիա**-եկեղեցի բառի հետ:

Հայագետները միաբերան մերժել են այս ստուգաբանությունը: Օրինակ՝ Հյուբշմանը գրել է. «Ծագմամբ այս մութ անունը՝ բնականապես հյ. եկեղեցի (սեռ. եկեղեցվո, հք. սեռ. եկեղեցյաց) հուն. **Էկլիսիա** բառին հետ առնչություն չունի»[1]:

Երզնկա տեղանունը մեր մատենագրության մեջ ունեցել է տարբեր գրություններ՝ Երեզ (սեռ. Երիզա), Եզնկա, Երզնկա, Երզինջան, Արզնջան, Արզինջան և այլն: Վերջին երեքը արաբական և թուրքական տիրապետությունից հետո տեղանվան կրած փոփոխություններն են:

Տրվել է հակագիտական այն բացատրությունը, թե քանի որ հնագույն ձևը եղել է Եզնկա, և քանի որ Անահիտի պաշտամունքի դարերում Երզնկայի հովտում անարգել արածում էին այդ աստվածուհուն նվիրաբերված եզները, կնչանակի բառը առաջացել է դրանից, այսինքն՝ Եզն-կա, Երզնկա:

---

[1] **Հ. Հյուբշման**, Հին հայոց տեղվո անունները, Վիեննա, 1907, էջ 130:

Եվ այսպես, թե՛ Եկեղյաց գավառի և թե՛ Երզնկայի գիտական ստուգաբանությունը չունենք դեռ այսօր և դժվար է ասել, թե հետագայում կունենանք:

Առավել հավանական ենք համարում պատմաբան Հ. Քյուրտյանի կողմից ընդունված այն տեսակետը, թե Երիզա, Եզնկա տեղանունը նախահայկական ակունքներ ունի և ըստ պրոֆ. Գարստանգի՝ կապվում է հեթիթական «Որուսա» անվան հետ: Գարստանգը գրում է, թե այժմյան Երզնկայի տեղում կամ նրա մոտակայքում հնում եղել է մի մեհյան, և այդ վայրը հեթիթների մոտ կոչվել է Որուսա:

Գարստանգի այդ տեսակետը հիմնավորող փաստեր ունի նաև եգիպտագետ Ֆ. Փեթրին, որ հեթիթների 24 աստվածներից 17-րդի տաճարը համարում է Թերպանտ-Արիզայի մեհյանը:

Քյուրտյանը բերելով նման վկայություններ, եզրակացնում է. «Այսպես Երիզան առաջին անգամ պատմության մեջ կը ներկայանա իբր համբավյալ կրոնավոր մը»[1]:

2. ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Երզնկան Բարձր Հայքի Եկեղյաց գավառի կենտրոնն է: Գտնվում է Կարինից արևմուտք՝ 144 կմ հեռավորության վրա: Կառուցված է Երզնկայի ձվաձև դաշտի արևմտյան կողմում: 2 կմ հեռու է Եփրատից: Ենթադրվում է, թե առաջ ավելի մոտ է եղել գետին, սակայն տևական երկրաշարժերի հետևանքով աստիճանաբար հեռացել է: Մյուս կողմից, Եփրատն էլ այդ վայրերում անցնելով փխրուն հողերի միջով, հաճախ է փոխել հունը, մոտեցել է քաղաքին կամ հեռացել: Գետի հունի այդ տեղափոխության ապացույցներից է Արշակունիների օրերին կառուցված Արշակա կամուրջի մի քանի կամարների առկայությունը Եփրատի այժմյան հունից բավականաչափ հեռու, արտերի մեջ: Այդ կամուրջի մնացորդները մինչև այժմ էլ տեղական թուրքերը կոչում են **Էշեկ քեոփրուսու,** *որ աղավաղված ձևն է Արշակ քյոփրյուսու, այսինքն՝ «Արշակի կամուրջ» բառերի:*

Երզնկան երեք կողմերում ունի մեծ ու փոքր մի քանի լեռներ: Հյուսիսային կողմում է գտնվում Աղ դաղը՝ 2900 մետր բարձրությամբ և Սբնգոր լեռը (2310 մ), որ հավանաբար առաջ կոչվել է Սուրբ Գրիգոր, և աղավաղվելով դարձել է Սբնգոր (ինչպես շատ այլ անուններ):

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա և Եկեղյաց գավառ. պատմական համագրություն, հատ. Ա (սկզբեն մինչև 1375), Վենետիկ, 1953, էջ 6:*

Այս երկու լեռները Եկեղյաց գավառը բաժանում են Քելքիտից, իսկ Քեչիչ դաղը (3500 մ) և Զիմեն դաղն ու Մրլփեթը բաժանում են Դերջանից:

Երզնկայի գավառը հարավային կողմից շրջապատված է Մնձուրի լեռնաշղթայով, որի գագաթներից Մնձուրը՝ 3000 մետր բարձրություն ունի, Մերջանը՝ 3100 մետր, իսկ Մթինը՝ 3163 մետր:

Քաղաքի արևմտյան կողմում բարձրանում է Սեպուհ կամ Գոհանամ սարը, որի գագաթը ծովի մակերևույթից բարձր է 2750 մետր: Այս սարի մյուս կողմն է ընկնում Կամախը:

Նշված լեռների՝ Երզնկային նայող լանջերը ընդհանուր առմամբ լերկ են, զուրկ անտառային շերտերից: Միայն հարավային լանջերին երևում են նոսր ծառաշերտեր:

Երզնկայի հովիտը Հայկական լեռնաշխարհի ամենաընդարձակ և արգասառատ դաշտավայրերից է: Այն ունի արևելքից-արևմուտք 35–40 կմ երկարություն, իսկ հյուսիսից-հարավ՝ 15–20 կմ լայնություն, այսինքն՝ չուրջ 600 կմ^2 տարածություն:

Երզնկայի հովիտն ունի երեք կիրճ՝ Ճիպիճեի, որը ձգվում է դեպի Դերջան, Զարդախլրի, որտեղից անցնում է Մերջանիս–Սեբաստիա ճանապարհը և Քեմախի, որը ձգվում էր դեպի Կամախ, Ակն, Արաբկիր:

Բացի այս երեք ճանապարհներից, մի խճուղի ձգվում է դեպի Տրապիզոն: Հնագույն դարերից երթևեկության ծառայող այս ճանապարհները մինչև մեր օրերը մնացել էին անխնամ, քարքարոտ ու դժվարանցանելի:

Հեռավոր վայրերն ուղևորվելը հղի էր բազմապիսի դժվարություններով և վտանգներով, առաջին հերթին կողոպուտի, թալանի, սպանության սարսափների պատճառով: Դրա համար էլ միշտ խոհեմություն է համարվել քարավանային ճանապարհորդությունը, այսինքն՝ խմբերով, քարավան կազմած, հաճախ ապահովված զինված պաշտպաններով:

Քարավանները մեծ մասամբ ուղեկցել են քրդերը, որոնք որոշ վարձատրության փոխարեն երաշխավորել են ուղևորների կյանքի և ինչքի ապահովությունը: «Ասոնք առտուն կանուխ բեռները կը բառնային,- գրում է Գ. Սյուրմենյանը,- ճամփորդներն ալ բեռներուն վրա կնստեցնեին ու ճամփա կելլեին, երեկոյան, երբ մութը կոխելու վրա ըլլար, գյուղ մը կամ օթևան մը կիջևանեին ու գիշերը հոն անցընելե հետո առավոտ կանուխ կրկին ճամփա կելլեին: Այսպիսով, Երզնկայեն ճամփա ելլող կարավան մը հինգ օրեն Կարին, վեց օրեն

Տրապիզոն և յոթը օրեն Սեբաստիա կհասներ, օրական 10–12 ժամ ճամփորդելով»[1]:

Երզնկայի շրջապատի գետերի մեջ ամենից նշանավորը մայր Եփրատն էր, որ սկիզբ առնելով Ծաղկավետ լեռների հարավային լանջերից մինչև Երզնկա հասնելը դառնում էր հսկա ու խոր գետ: Եփրատի սկիզբը կոչվում է Սև ջուր, Դերջանի մոտակայքում բաժանվելով երկու մասի, մի ճյուղը սահում է դեպի Կապան–Մեղեն, մյուսը՝ ճիպիճե լեռան ստորոտից մտնում է Երզնկայի հովիտը, որտեղով անցնում է այնքան հանդարտ, որ ջրի հոսքի ուղղությունը որոշելու համար մարդիկ հաճախ տերևներ, փայտի կտորներ են գցում գետը:

Այսպես անցնելով Երզնկայի դաշտի միջից, գետը դուրս է գալիս նրա հարավ-արևմտյան անկյունից, ձգվում է դեպի Հայաստանի հարավը, այնուհետև անցնելով Իրաքի ավազուտները, թափվում Պարսից ծոցը, կտրել անցնելով ավելի քան երկու հազար յոթ հարյուր կիլոմետր տարածություն, ջուր ու կենդանություն տալով պատմական Հայաստանի հազարավոր գյուղերի ու բնակավայրերի:

Երզնկայի հովտով անցնելիս Եփրատը սնվում, ուժ է ստանում շրջապատի լեռներից սահող տասնյակ առվակներից, աղբյուրներից, գետակներից, որոնք աղմկոտ արագությամբ իջնում են դեպի հովիտը, մերթ հանդիպում միմյանց, գրկախառնվում, մերթ կրկին բաժանվում, ստեղծում փոքրիկ կղզյակներ, մինչև որ վերջնականապես ձուլվում են Եփրատի հետ:

Գարնան ձյունհալի օրերին Եփրատը տեղ-տեղ ափերից դուրս է գալիս և մեծ վնաս պատճառում ցանքատարածություններին, կրկնապատկելով իր լայնքը: Ամռան ամիսներին փոքրանում է, մտնում իր հունի մեջ, իսկ ձմռանը երբեմն ամբողջ մակերեսով սառչում է և մարդիկ երթևեկում են վրայից, հաճախ ենթարկվելով աղետալի դեպքերի:

Առվակների, գետակների, հեղեղատների առատությունը, բնականաբար, նախադրյալներ են ստեղծել ճահիճների գոյացման, որոնք առաջացել են մասնավորապես Եփրատի վարարումների հետևանքով: Ճահճուտները թե տվել են իրենց օգուտը, թե վնասը: Օգուտն այն է եղել, որ աճել են եղեգի մի քանի տեսակներ, որոնք օգտագործվել են զանազան նպատակների համար: Փոքր տեսակի եղեգները, որոնք գրեթե մարգագետինների տպավորություն են թողնում, ծառայել են որպես արոտավայր: Բայց և եղել են ծառերի բարձրություն ունեցող եղեգներ, որոնք օգտագործվել են առաստաղներ ծածկելու համար:

---

[1] **Գ. Այուրմենյան**, *Երզնկա, Կահիրե, 1947, էջ 426:*

3. ԿԼԻՄԱՆ

Բուն Երզնկա քաղաքի կլիման առողջարար չէր: Գտնվելով վերոհիշյալ ճահիճներին այդքան մոտ, կրում էր նրանց աննպաստ ազդեցությունը: Այդ է պատճառը, որ լայնորեն տարածված է եղել դողէրոցքը (մալարիան):

Մյուս կողմից՝ քաղաքը զուրկ էր լեռնային սառնորակ ջրերից: Բնակչությունը հիմնականում օգտագործել է ջրհորների ջուրը՝ թե՛ խմելու և թե՛ այլ կարիքների համար: Հին քաղաքի հատվածում հողը ծծմբային էր, ջուրը՝ անհամ:

Գրեթե յուրաքանչյուր տուն ունեցել է ջրհոր, որը ոչ միայն ջուր է մատակարարել այդ ընտանիքին, այլև ծառայել է որպես սառնարան: Ամռան տոթ օրերին պարաններով ջրհորների մեջ են իջեցվել նախորդ օրվա եփված կերակուրները, մրգեր, հատկապես սեխ և ձմերուկ:

Գտնվելով ծովի մակերևույթից շուրջ 1300 մետր բարձրության վրա, այսինքն՝ ավելի բարձր, քան Երևանը, Երզնկային հատուկ պետք է լիներ զով կլիման, բայց և, ընկած լինելով երեք կողմից շրջապատված լեռների արանքում, հովտային տարածքում, ձմռանը Երզնկայում խիստ ցուրտ էր լինում (մինչև մինուս 10–15 աստիճան), իսկ ամռանը՝ սաստիկ շոգ (ստվերի տակ մինչև 38 աստիճան): Երզընկային հատուկ էր նաև մի այլ երևույթ: Պատահում էր, որ դաշտավայրի ցածր գյուղերում դեկտեմբեր–հունվար ամիսներին ավելի ցուրտ էր լինում, մինչև 15 աստիճան, երբեմն ավելի, մինչդեռ բարձր, անմիջապես լեռների լանջերին ընկած գյուղերում համեմատաբար ավելի տաք:

Ցրտաշունչ օրերին թուլացել է քաղաքի առօրյա աշխույժը, աշխատանքային եռուզեռը, չաբաթներով փակվել են դպրոցները, խանութները: Մարդիկ նստած իրենց տներում, զբաղվել են ընթերցանությամբ, կազմակերպել են ուրախ ժամանցներ, սպասել օրերի տաքանալուն:

Զնհալը սովորաբար սկսվել է բարեկենդանին և մինչև Մեծ պասի կեսերը քաղաքը գրեթե մաքրվել է ձյունից, որը օրեցօր քաշելով փեշերը, բարձրացել է դեպի սարերը, իսկ ամռան ամիսներին խպառ չքացել է: Պատահել է, որ մարտ ամսին ձյան սավանը նորից է ծածկել քաղաքը, բայց արդեն անուժ և ժամանակավոր, իսկ ապրիլ ամսին իրեն լիովին զգացնել է տվել բնության զարթոնքը, ծաղկել են ծառերը, զարդարվել մարգագետինները գույնզգույն ծաղիկներով,

ստեղծելով հմայիչ համայնապատկեր, որն իրեն է գրավել մարդկանց, ջերմացրել 3–4 ամիս սառած նրանց մարմինները:

Որքան սաստիկ է եղել ձմեռը, նույնքան անտանելի ամռան չոգը: Այդ ամիսներին քաղաքի բնակիչները գիշերները քնել են տների հարթ տանիքներին, ուր անհամեմատ զով է եղել, քան տան ներսում:

Ուխտագնացության լայն ծավալն էլ մասամբ պայմանավորված էր քաղաքի տաք կլիմայով: Թուրք հարուստները ամռան ամիսներին մեկնել են բարձրադիր գյուղերը, իրենց պապենական յայլաները, իսկ հայերը դուրս են եկել հեռավոր ուխտագնացության: Անահտական տոնակատարությունները դարերից շարունակվել են անխափան:

Բաց բնության ծոցում գեթ մի քանի շաբաթ, անգամ մի քանի օր անցկացնելը գերագույն հաճույք է եղել տոթից փախած ժողովրդի համար: Հետագա էջերում մենք առիթ ենք ունենալու ավելի հանգամանորեն խոսելու ուխտագնացությունների մասին, որոնք հաճախ ձգվել են մինչև հեռավոր Երուսաղեմ:

Երզնկան ցրտաշունչ ձմռան և չոգ ամռան կողքին ունեցել է հաճելի գարուն և աշուն, մանավանդ աշունը, աշխատանքի արդյունք բարիքները հավաքելու, ամբարները լցնելու այդ եղանակը եղել է քաղաքի բնակչության կենսուրախության շրջանը, եթե քաղաքական պայմանները թույլ են տվել նման երջանկություն, եթե պարտատերերը, հարկահավաքները չեն քամել, ավուր հացի կարոտ թողել մասնավորապես աշխատավոր խավին:

4. ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Շատ հարուստ էր Երզնկայի բուսական աշխարհը: Բնությունն այդ դաշտավայրը օժտել է պեսպես ծաղիկներով, համեղ մրգերով ու բանջարեղեններով:

Կլիմային հատուկ բազմապիսի բույսեր գոյություն են ունեցել խոր անցյալում: Ցորենի, գարու, կորեկի մշակությունը ծանոթ է եղել դեռևս ուրարտական շրջանում, գուցե նրանից էլ առաջ. մրգերի, բանջարեղենների որոշ տեսակներ հնարավոր է որ աճեցրած լինեն հետագա դարերում:

Ալթըն թեփեի պեղումների ժամանակ, որոնց անդրադառնալու ենք հետագա էջերում, մառաններից դուրս են եկել կարասներ, որոնց մեջ, ըստ երևույթին, պահված են եղել ցորենի տարբեր տեսակներ, գարի, գինի և այլն, հարևնման Կարմիր բլուրից հայտնաբերված կարասների պարունակության: Ամենայն հավանականությամբ գարե-

ջրի մշակությունն էլ հայտնի է եղել երզնկացիներին՝ հենց այդ դարերից: Քսենոփոնի վկայությամբ մ. թ. ա. 5-րդ դարում այն լայնորեն տարածված էր Հայաստանում: Բացառություն չէր կարող կազմել ցորենի, գարու ամենաընտիր տեսակներն արտադրող Եկեղյաց գավառը:

Ընդեղեններից ու բանջարեղեններից ամենից շատ օգտագործվել են լոբին, սիսեռը, ոսպը, ոլոռը, սոխը, սխտորը, դդումը, պղպեղը, ճակնդեղը, ստեպղինը: «Գալով խաղողին,- գրում է Սյուրմենյանը,- բազմաթիվ տեսակներ կգտնվին Եկեղյաց գավառին մեջ և առատորեն»: Եփրատի ձախ ափին մշակվում էր խաղողի մի տեսակ, որն ուներ սալորի պես խոշոր ու սևորակ քաղցրահամ հատիկներ:

Երզնկան հարուստ էր նաև այլ մրգերով ու պտուղներով՝ տանձ, բալ, դեղձ, սալոր, կեռաս, ալոճ, խնձոր, ընկույզ, կաղին: Հատկապես հռչակված էին Երզնկայի ձմերուկն ու սեխը, թութն ու ծիրանը: Սրանցից բացի կային տեսակ-տեսակ բույսեր, որոնք օգտագործվում էին բընակչության կողմից. հիշենք մի քանիսը. էշխին՝ թթվաշ ու երկարավուն մի բույս, որի կեղևը հանելուց հետո ուտվում է և ունի ախորժելի համ, թթոհմ, որի թթու տերևներից պատրաստում են կերակուրներ, կանկառ և այլն:

5. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Երզնկան ուներ վայրի ու ընտանի բազմաթիվ կենդանիներ. այծյամ, վարազ, արջ, գայլ, աղվես, նապաստակ, եղջերու: Ամենից շատ գայլերն են իրենց զգացնել տվել: Նրանք ցուրտ ձմռանը ոհմակներով իջել են դաշտ, հարձակվել հարթավայրի գյուղերի վրա, հափշտակել ոչխարներ, վնասել մարդկանց: Երբեմն սովալլուկ գայլերը հասել են մինչև քաղաքի դռները:

Եկեղյաց գավառը հարուստ էր ընտանի կենդանիներով, որոնց մեծ մասը ժողովրդի աշխատանքի ու կյանքի ընկերներն էին, ինչպես գոմեշը, որ իր հուժկու ուժով մեծապես թեթևացնում է գյուղացու աշխատանքը: Գոմեշի յուղալի կաթից պատրաստել են ընտիր մածուն, համեղ կաթնասեր. հայտնի էր մանավանդ Երզնկայի չոր կաթնասերը, որ վաճառքի էին հանում քաղաքում:

Երզնկայում ձիաբուծությունն առհասարակ զարգացած չի եղել, թեև ձի ունեցողներ եղել են: Պետք է նկատի ունենալ, որ մինչև 1840-ական թվականները հայերը Թուրքիայում, համարվելով ռայաներ, առհասարակ իրավունք չեն ունեցել թամբած ձի նստելու: Ձիուն

տրված պատիվը այստեղ տրվել է էշին ու ջորիին, որոնք օգտագործվել են փոխադրությունների համար:

Շունն ու կատուն մասնավորապես գյուղական ընտանիքների անբաժան անդամներն էին:

Երզնկացիները զբաղվել են նաև մեղվաբուծությամբ: Լայնարձակ դաշտերի, սարալանջերի պեսպես ծաղիկների գորգը նպաստել է դրան: Որոշ ընտանիքների ապրուստի հիմնական միջոցը եղել է մեղվաբուծությունը: Ոմանք երկրից դուրս գալուց հետո էլ զբաղվել են իրենց պապենական գործով Ռուսաստանում, Հայաստանում: Վարդենիսի շրջանում ապրում էր երզնկացի Հայրունին, որը համարվում էր այդ շրջանի լավագույն մեղվապահներից մեկը: Այժմ էլ, նրա որդիները, բարձրագույն կրթություն ստացած լինելով հանդերձ, շարունակում են իրենց հոր զբաղմունքը:

Թե մեղվաբուծությունը որքան էր զարգացած եղել Երզնկայում, ցույց է տալիս այն փաստը, որ 1895 թ. Երզնկան ունեցել է 30.000 փեթակ, որից ստացվող մեղրը և մեղրամոմը լայնորեն օգտագործվել է ոչ միայն Երզնկայում, այլև այդ գավառից դուրս:

Մեղրի այս առատությունը հնարավորություն է տվել երզնկացիներին զարգացնելու մեղրամոմի արտադրությունը: Դա շատ պարզ ու տնայնագործական ձևով կատարվող զբաղմունք էր: Հալած մեղրամոմի միջով անցկացնելով դերձանը մի քանի անգամ, նայած թե ինչ հաստություն է ցանկացել պատրաստողը, ստանում էր երկու կարգի մեղրամոմ. մեկը կարճ՝ 25–30 սմ երկարությամբ, եկեղեցիներում և այլ վայրերում օգտագործելու համար, մյուսը դարձյալ նույն սկզբունքով, բայց մեղրամոմի կծիկներ, երբեմն մինչև տասնյակ մետրը երկարությամբ:

Մեզ հասել են վիճակագրական որոշ տվյալներ Երզնկայի ընտանի կենդանիների ընդհանուր քանակի մասին: Համաձայն այդ վիճակագրության՝ 1890-ական թվականներին Երզնկան ունեցել է 35.000 կով, 7850 գոմեշ, 2350 ցուլ, 19.500 հորթ, 2638 ձի, 2735 մատակ ձի, 1685 մտրուկ, 13.000 էշ, 7125 ջորի, 171.700 ոչխար, 9141 խոյ, 55.594 գառ, 160.840 այծ:

Այս թվերի մեջ ուշադրություն է գրավում կովերի, ոչխարների ու ջորիների առատությունը: Գրեթե ամեն տուն, մասնավորապես գյուղերում, ունեցել է այդ կենդանիներից, առաջին երկուսն առօրյա սննդի համար, մյուսը՝ փոխադրության:

Միսն ուտվող թռչուններից Սյուրմենյանը հիշում է Թոյ գուչուն (մեծ մարմնով ու համեղ մսով թռչուն է) վայրի աքաղաղ. նման է

աքաղաղի, ունի սև փետուրներ, կարմիր կտուց և կարմիր ոտներ՝ սնվում է գետափերին, ունի յուղոտ միս: Դաշտերում երամներով շրջում են վայրի աղավնիները:

Կային նաև այլ թռչուններ՝ հոպոպ, տիվտիկ, սարյակ, բմբուլ և այլն, որոնց բոլորի միսն էլ ուտվում էր և երիտասարդների սիրած զբաղմունքներից էր դրանց որսը:

Միսը չուտվող թռչուններից էին ճայեկը, փայտփորիկը, կռակռան: Գիշատիչ թռչուններից էին՝ ուրուրը, անգղը, ագռավը, կաչաղակը. «Այս թռչունը որպես լրաբեր ճանչցված էր. ան երբ մեր կտուրներուն վրա կենար ու իր ձայնը հաներ՝ «Լուր, նամակ պիտի գա, կավետեինք իրարու»»:

Երգող թռչուններից Երզնկան ուներ սոխակ, դեղձանիկ, քանարիկ, սարյակ, արտույտ, չվող թռչուններից՝ կռունկ, ծիծեռնակ, արագիլ:

Վերջինս երզնկացիների սիրած ու հուսադրող թռչունն էր, ժամանում էր ամեն տարի մարտի 6-ին. տեղավորվում էր բարձր ծառերի կամ կտուրների վրա իր չինած բնի մեջ: Նախընտրում էր ծառը: Հարս ու աղջիկ, երեխաներ հրճվանքով ու ցնծությամբ էին դիմավորել արագիլին, քանի որ գարնան չունչն ու թարմությունն էր իր հետ բերել, ազդարարել երկարատև ու տաղտկալի ձմռան նահանջը: «Ամեն տարի հետը բան մը կբերեր,- գրում է Սյուրմենյանը,- ժողովուրդը անոր բերածեն հետևցնելով այդ տարվան մեջ պատահելիքներու մասին գուշակություններ կըներ: Օրինակ՝ եթե անոր բերածը ցորենի հասկ մըն է, կնշանակե՝ այդ տարի առատություն պիտի ըլլա, իսկ եթե, տերը մի արասցե, բերանը արյունոտ չոր մըն է, ուրեմն այդ տարին պատերազմի ու արյունահեղության տարի մը պիտի ըլլա, կըսեին»[1]:

Այս բացատրությունը չունի գիտական հիմք. հիշատակեցինք պարզապես ցույց տալու համար, թե արագիլի նկատմամբ ինչպիսի հետաքրքրություն է եղել Երզնկայում:

Թե՛ քաղաքում և թե՛ մանավանդ գյուղերում ամեն տուն ունեցել է աքլոր, բադ, սագ, հնդկահավ. վերջինս համեմատաբար քիչ:

Ինչպես Երզնկայում, այնպես էլ գյուղերում շատ ընտանիքներ ունեցել են աղավնատներ և աճեցրել ու պահել են աղավնիներ, որը նույնպես երիտասարդների սիրած զբաղմունքներից մեկն է եղել: Որոշ ընտանիքներ այնքան են ընդարձակել այդ գործը, որ դարձրել են եկամտի աղբյուր, հիմնական զբաղմունք և կոչվել են Ղուչչոնք, այսինքն՝ թռչուն պահողներ:

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 447:*

6. ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԸ

Եկեղյաց գավառը հարուստ էր բազմապիսի հանքերով ու հանքային ջրերով, որոնք մինչև Առաջին համաշխարհային պատերազմի տարիները ամենևին ուսումնասիրված չէին: Հայտնի են Երզնկայի աղի և քարածխի հարուստ հանքերը: Գավառում հանդիպում էին նաև պղնձի, ոսկու, արծաթի, քլորի, ծծմբի հանքեր, որոշ վայրերում՝ նավթ:

Կային մի քանի տեսակ ջրեր, որոնք իրենց գույնով, հոտով, համով ու տարբեր ջերմություններով մատնում էին հանքային բաղադրություններ ունենալու հատկությունը: Ժողովուրդը դարերի ընթացքում չարունակ օգտագործել է դրանք տարբեր հիվանդությունների բուժման համար:

Գրավոր աղբյուրներից հայտնի է, որ Գերթաղ գյուղի մոտակայքում, ընդամենը մեկ ժամ հեռավորության վրա բխում էին մի քանի տեսակ ջրեր: Մեկը շատ տաք էր, մյուսը՝ սառը, մեկի հոսքը հանդարտ էր, մյուսինը՝ շատրվանող: Կային դառը, նաև՝ թթու ջրեր: Սրանցից իր առատությամբ և բուժիչ հատկություններով ամենից հայտնին էր թթու ջուրը. օգտագործել են թե՛ տեղում և թե՛ շշերով բերել են քաղաք ու վաճառել:

Օտար ճանապարհորդներին զարմանք է պատճառել այդքան տարբեր բաղադրություններ ունեցող ջրերի առկայությունը գրեթե նույն վայրում, իրար մոտ:

Խալիլ աղայի խան կոչվող վայրի և համանուն ձորի մոտ եղել է հանքային մի ջուր, որի արձակած հոտը կես կիլոմետրի վրա իրեն զգացնել է տվել: Հենց այդ հոտի պատճառով Թուրքերը կոչել են Ղոխմիշլեր, այսինքն՝ նեխած տեղ, առանց հասկանալու թե ինչպիսի հարստություն պիտի պարգևեր բնակչությանը այդ գարշահոտությունը, եթե այն գնահատելու կարողություն ունենային տեղական իշխանությունները:

Վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոն, որ այդ քաղաքով անցել է 13-րդ դարի վերջերին և անշուշտ ծանոթ է եղել Եվրոպայում հռչակված շատ հանքային ջրերի, Երզնկայի ջրերը համարել է դրանցից շատ գերազանց. «բնական աղբյուրներից լավագույնը»[1]:

Մարկո Պոլոյի հիշատակած ջրերը պետք է որ եղած լինեին այժմյան Զագրմանի և Քելերիջի մոտակայքի ջրերը, որոնք հետագա դարերում մասամբ կորցրել են իրենց ջերմությունը:

---

[1] **Հովհ. Հակոբյան,** *Ուղեգրություններ, հատ. Ա (ԺԳ–ԺԶ դար), Երևան, 1932, էջ 48:*

«Առաջինը, որ ջերմուկ կը կոչվեր, Թուրքերեն իլիջե,- կը գտնվեր քաղաքի արևելյան-հյուսիսային կողմը, 9–10 քիլոմետր հեռավորության վրա, Պողոս-Պետրոս վանքին տակը: Հոդացավի, ջղացավի համար լավ է կըսեին, բայց տեղը հեռու, ջուրին տաքության աստիճանն ալ պակաս ըլլալուն, բժշկվելու նպատակով անկե օգտվողներ չկային: Ամառները քիչեր միայն,- միջոց ունեցողները, հաճույքի համար հոն կայցելեին»,- գրում է Սյուրմենյանը:

Որ անցյալում այդ ջերմուկից օգտվողները ավելի շատ են եղել և Մարկո Պոլոն էլ իրավացի էր իր գնահատման մեջ, երևում է այն փաստից, որ ունեցել է հատուկ լողավազան, վրան էլ չենք: Այս շինությունները հետագայում ավերվել են:

Վերևում հիշատակված թթու ջրից 20–30 մետր հեռու, դեպի հարավ եղել է ծծմբային ջուր, որը կոչվել է Հորհոր: Այս առատ ու աղմկոտ ջուրն էլ օգտագործվել է հոդացավի և այլ հիվանդությունների համար:

Ավելորդ չենք համարում մեջ բերել Թարգի Խաչիկ Տեր-Ստեփանյանի՝ ականատեսի, գրավոր վկայությունները: Նա մանկուց իր հոր հետ շրջագայել է այդ վայրերում, եղել է հայկական և քրդական, Թուրքական բոլոր գյուղերում, իսկ համաշխարհային պատերազմի տարիներին բավական երկար ժամանակ ապրել է սարերում: «Քաղաքից 15 կիլոմետր դաշտային ճանապարհով, հասնում ենք Քեչիչ դաղ սարի ստորոտները, որտեղ կա մի ջերմուկ, ունի փոքրիկ երկու սենյակ. օժտված առատ տաք ջրով: 100 մետր նույն ուղղությամբ գնալով, ճանապարհի ներքևում, հանդիպում ենք մի շատրվանի, որը փրփրած ու կատաղած վեր է նետում ջուրը, գոյացնում փոքրիկ լիճ, ապա գնում խառնվում է այլ ջրերի: Այս ջուրը թթու է և Արզնիի ջրից ավելի գաղ է պարունակում, ամռան ամիսներին բերում են քաղաք, վաճառում որպես զովացուցիչ ջուր, չիչը 10 փարայով: Նույն ուղղությամբ մի քիչ էլ գնալուց հետո հանդիպում ենք գետնից դուրս ժայթքող մի այլ ջրի, որը դեղնավուն-կանաչ գույն ունի, միաժամանակ անտանելի հոտ: Նրա շրջապատում բուսականություն չի աճում: Էրզրումի խճուղով մի քիչ էլ առաջ գնալուց հետո մեզ դիմավորում է մի մեծ աղբյուր, որը բխում է գետնի տակից, սառը, մաքուր ջուր է և ունի անուշ համ: ... Դերջանում էլ, Բուլք գյուղի մոտակայքում գտնվող բլրի լանջին, բավական բարձրության վրա, կա մի լիճ, որի վրա փայլում է նավթի շերտը. շրջակա գյուղերի բնակիչները ամռան ամիսներին գնում լճի վրայի այդ շերտը վերցնում բերում են և օգտագործում թե՛ վառելու և թե՛ ռևմատիկ ցավերի համար: Հանդի-

պակաց կողմը գտնվող մի այլ սարի լանջին կա փոքր լիճ, որի ջուրն այնքան առատ է, որ կարող է ոռոգել արտերը, բայց արի տես որ... հազիվ սարի ստորոտներին մոտեցած՝ քարանում է... Հայերը, Թուրքերը և քրդերը ուխտի են գնում այդ տարօրինակ լիճը, լողանում և չատ հիվանդություններից բուժվում են առանց գաղափար ունենալու նրա քիմիական բաղադրության մասին»[1]:

Գ. Սյուրմենյանն էլ անդրադարձել է այս հանքային ջրին, գրելով. «Ճենճիկե գյուղի մոտերեն անցնող Գոմու ջուրը քարանալու հատկություն ունի կըսեին: Գյուղացիները փոսեր փորելով՝ այդ ջուրեն կլեցնեին, ժամանակ մը հետո անոր չոգիանալիք մասը ցնդելով մնացածը կքարանար: Սկիզբները ան կակուղ կըլլա և դյուրավ կսղոցվի, բայց վերջը բոլորովին կկարծրանա: Կըսվեր թե Ծաթ գեղի եկեղեցին այդ ջուրեն պատրաստված քարերով չինված է»[2]:

Դեպի Կարին ձգվող նույն այդ ճամփի վրա կար քրդական մի գյուղ. կոչվում էր Քյուքյուրդլու, այսինքն՝ ծծմբային: Ճամփորդները հեռվից առնում էին ծծմբի սուր հոտը. չրջապատում բուսականություն բոլորովին չկար: Եվրոպացի գիտնականներն, ուսումնասիրելով այդ վայրերը գտել են, որ այնտեղ կան ծծմբի հարուստ հանքեր, նաև ծծմբաջուր, հայտնել են տեղական իշխանություններին, սակայն վերջիններս կարևորություն չեն տվել:

Դերջանի արևմտյան կողմում կար բարձր մի սար, որի մյուս երեսը նայում էր Երզնկային: Այս սարը նույնպես ուներ զարմանալի հատկություն: Գագաթը կոչվում էր Յուզուկ թաչ, որ նշանակում էր մատանու ակ: Քրդերը սարը դարձրել էին յայլաղ. ամռան ամիսներին այնտեղ էին բերում իրենց անասուններին: Սարի գագաթին ցցված հսկա ապառաժը հեռվից փայլփլում էր տարբեր գույներով: Ապառաժի մեջ կար քարայր, մոտ երկու կիլոմետր երկարությամբ: Թարգի Խաչիկը այցելել է այդ քարայրը և այսպես է նկարագրում:

«Մի անգամ ես ու հայրս տեղանքին ծանոթ քրդերի հետ մտանք այդ քարայրը: Հայրս իր հետ վերցրել էր լապտեր, որպեսզի խորքը լուսավորվի: Մուտքի մասը բավական լայն էր, նույնիսկ ձիով հնարավոր էր առաջ գնալ, սակայն հետզհետե փոքրացավ անցքը և մթնեց: Լապտերի աղոտ լույսի տակ փայլում էին զանազան գույնի քարերը, ապակու պես կարծր: Որքան առաջանում էինք, այնքան խորհրդավոր ու կախարդական էր դառնում, միաժամանակ երկյու-

---

[1] **Թարգի Խաչիկ,** *Հիշողություններ, տետր 1-ին, էջ 15-20:*

[2] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 440:*

դալի. կարծեք քարերը ավելի ու ավելի էին փայլում: Քրդերը մեծ դժվարությամբ կարողացան պոկել մի քանի կտոր ու նվիրել հորս: Գնալն ու վերադառնալը տևեց մոտ մեկ ժամ: Ընդհանրապես քարայրները լինում են խոնավ, մինչդեռ Ուզուկթաշի քարայրը զարմանալիորեն չոր էր: Վերևից ոչ մի կաթիլ ջուր չէր ծորում: Քրդերը պատմեցին թե այդ քարայրի քարերն օգտագործել են թե՛ զարդեր պատրաստելու համար, թե՛ դրանցից շինել են մատանիներ, թևի, վզի զարդեր, համրիչներ: Ուշագրավն այն էր, որ քարի կտորներն ունեին տարբեր գույներ»[1]:

Բազմատեսակ հանքերով հարուստ Երզնկայի հովիտը, սակայն, աղքատ է եղել քարհանքերով: Այդ է պատճառը, որ ուրարտական օրերից մինչև մեր ժամանակներն իբրև շինանյութ քարը շատ քիչ է օգտագործվել: Հիմնականում հում աղյուսն է փոխարինել քարին: Ոչ միայն գյուղական, այլև քաղաքի բնակարանների մեծ մասը կառուցվել է սովորական ցեխի մեջ դարման խառնելով պատրաստված աղյուսներով:

Քարի պակասով պետք է բացատրել նաև այն փաստը, որ Երզնկայի հովտում գրեթե չի մնացել հազարամյակների վկա հնություններ որևէ հետք, բացի արդեն հիշատակված Արչակա կամուրջի հետքերից:

Բայց եթե Երզնկայի դաշտավայրում ամեն ինչ կործանվել է, հողին հավասարեցվել տևական երկրաշարժերի, բարբարոսական հարձակումների հետևանքով, ապա քաղաքը շրջապատող բլուրները պահում են շատ հնություններ իրենց ընդերքում, ինչպես այդ ցույց տվեց Ալթըն թեփեի հայտնությունը: Սեպուհ լեռան լանջերին կառուցված հայկական հնագույն վանքերից մի քանիսի հիմնահատակ կործանումը նույնպես եղել է անհնար՝ իրենց անմատչելի դիրքերի շնորհիվ:

---

[1] **Թարզի Խաչիկ,** *Հիշողություններ, տետր 1-ին, էջ 23-26:*

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԵՐԶՆԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՅԱՍԱՅԻ

Կլիմայական, բուսական այն պայմանները, որոնք նկարագրեցինք նախորդ գլխում, երաշխիք էին այն բանի, որ ամենավաղ դարերից Երզնկայի հովիտը պիտի լիներ մարդկության բնակության վայր: Այդ են վկայում Եկեղյաց գավառում հայտնաբերված նյութական կուլտուրայի մնացորդները և խեթական արձանագրություններում պահպանվող հիշատակությունները:

Գիտությունը տարեցտարի չերտ առ չերտ բաց է արել ժամանակի վարագույրը և յուրաքանչյուր անգամ մի աստիճանով մեզ ավելի ետ է տարել դեպի խոր անցյալը: Ընդամենը մեկ դար առաջ վավերական էր համարվում Երզնկայի պատմության հեթանոսական, այսպես կոչված, Անահտական շրջանը: Հետագայում ուսումնասիրվեց Ուրարտական շրջանը, որ այդ պատմությունը հինգ հարյուր տարով ավելի ետ տարավ, հասցրեց մինչև մ. թ. ա. 9-րդ դարը: Խեթական արձանագրությունների հետևողական ուսումնասիրությունը, կատարված հայ, ռուս և այլ գիտնականների կողմից, պարզեցին Հայասա երկրի և Հայաստանի նույնությունը:

*Արևելագետներ Կ. Ռոթը, Պ. Կրեչմերը և ուրիշներ հայտնել են այն կարծիքը, թե **Հայասան** նույն **Հայաստան** անունն է, քանի որ **-սա** փոքրասիական մասնիկը համազոր է պարսկական **-ստան** ա-ծանցին, իսկ դա ցույց է տալիս ցեղերի, ժողովուրդների բնակավայր, ուրեմն ինչպես այժմ Հայաստանը, այնպես էլ հնում **Հայասան** նշանակել է հայաների, այսինքն՝ հայերի երկիր:*

Բայց քանի որ խեթական արձանագրություններում Հայասայի հետ հաճախ հիշատակվում է նաև Ազի երկիրը, դարձյալ էթնիկական միավորման իմաստով, ուստի գիտնականները հակված են կարծելու, թե այդ վայրերում բնակվել են երկու տարբեր ցեղեր, որոնք հետագայում միանալով կազմել են ցեղային միություն, որտեղ գերակշռո-

դը եղել են հայերը, քանի որ նրանք են չարունակել պատմության ընթացքը, հիմնականում տեղավորված լինելով Հայկական բարձրավանդակում:

Խեթերենի ուսումնասիրման, հայ-խեթական հարաբերությունների, հարակցությունների պարզաբանման ուղղությամբ խոշոր աշխատանք է կատարել մեր ուսուցիչ ակադեմիկոս Գր. Ղափանցյանը, որի «Խեթո–Արմենիակա», «Հայասան հայերի բնօրրան» աշխատությունները համոզիչ փաստարկումներով ապացուցել են ոչ միայն Հայասա–Հայաստան երկրի նույնությունը, այլև որոշել, որ Հայասայի կենտրոնը եղել է Եկեղյաց գավառը, այսինքն՝ Երզնկայի հովիտը:

Հայ ժողովրդի էթնիկական կազմավորման հետ սերտորեն կապված այս հարցի շուրջ ստեղծվել է վիթխարի գրականություն: Ավելորդ ենք համարում մտնել մանրամասների մեջ և ծանոթացնել տարբեր գիտնականների փաստարկումները, հանել եզրակացություններ, մի բան, որ արվել է պատմաբանների կողմից: Ուստի բավարարվում ենք մեջ բերելով այդ պատմաբանների ընդհանուր եզրակացությունը.

«Մեզ հետաքրքրող երկիրը խեթական արձանագրություններում անվանվում է կամ Հայասա (Խայասա) քաղաքի երկիր», կամ «Ազզի քաղաքի երկիր». այստեղից կարելի է եզրակացնել, որ երկիրը կոչվել է իր քաղաքային կենտրոնների անունով: Թիլ–Հայասա (կամ Թիլ–Խայասա) քաղաքը տեղադրվում է հավանաբար հին հայկական Թիլ ավանի տեղում: Նախաքրիստոնեական դարաշրջանում այստեղ գտնվում էր Նանե դիցուհու տաճարը: Այս տեղորոշումը ցույց է տալիս, որ Հայասա երկրի կորիզը և նրա սկզբնական տարածքը եղել է հին հայկական Եկեղյաց գավառը՝ անտիկ դարաշրջանի Ակիլիսենեն և համապատասխանում է Երզնկայի դաշտին: Թիլ ավանը տեղադրվում է այդ դաշտի կենտրոն Երիզա կամ Արիզա քաղաքից ոչ հեռու, որի տեղում, հավանորեն, գտնվելիս է եղել Հայասա կամ Խայասա երկրի մյուս կենտրոնը՝ Ազզի քաղաքը: Նախաքրիստոնեական դարաշրջանում այստեղ էր գտնվում Անահիտ դիցուհու պաշտամունքի վայրը»[1]:

Հայասա-Ազզի ցեղային միության մյուս քաղաքներն էլ հիմնականում գտնվել են Փոքր Հայքի տարածքի վրա, մասամբ միայն Մեծ Հայքում: Թիլի կողքին Հայասայի գլխավոր քաղաքներից են եղել Կումախան (այժմյան Կամախը), Ուրան, որ եղել է Հայասա երկրի գլխավոր ամրոցը:

---

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, Գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան, 1971, էջ 191:

«Բուն Հայասա–Ազզին (Եկեղյաց–Ակիլիսենեն) հյուսիսում սահմանակից էր Բալա (Պալա, Գայլ գետի վերին հոսանքի շրջանը) և Դումաննա (անտիկ Դոմանայի, այժմ՝ Թումնա գյուղի շրջանը, Բաբերդից արևմուտք, Ճորոխ գետի հովտում) ցեղերի երկրներին»[1]:

Հայասացիները հիմնականում զբաղվել են անասնապահությամբ և երկրագործությամբ, որի համար այնքան բարենպաստ էր Բարձր Հայքի տարածքը, այդ թվում՝ Եկեղյաց գավառը: Պեղումներից դուրս եկած իրերը վկայում են, որ նրանց մոտ բավականաչափ զարգացած է եղել նաև մետաղամշակությունը:

Հայասայում պաշտվել են տարբեր աստվածություններ, խեթական արձանագրություններում հիշատակվում են Հայասայի 14 քաղաքների աստվածներ:

Փոքրասիական ժողովուրդների մոտ մեծ տեղ է բռնել լեռների պաշտամունքը: Ըստ Գարստանդի՝ «Ուրուշա (Urussa) լեռը, որ գտնվում է Երզնկայի մոտ, մեծ սրբություն է եղել մ. թ. ա. 14-րդ դարում:

Ա. Խաչատրյանը միանգամայն իրավացիորեն այդ լեռը նույնացնում է Երզնկայի մոտակայքի համբավավոր Սեպուհ լեռան հետ[2]:

Խեթական պետության անկումից հետո (մոտավորապես մ. թ. ա. 1200–1190) Հայասա-Ազզի անունը այլևս չի հիշատակվում: Ոմանք գտնում են, որ Երզնկայի դաշտի կենտրոնում գտնվող Թիլ–Հայասա և Ազզի քաղաքները տևական պատերազմների հետևանքով ավերվել են և առաջացել են այլ կենտրոններ, ինչպես Բիթաոիգան (այժմյան Բթաոիճը), ավելի ուշ՝ Դարանաղյաց գավառի կենտրոն Կամախը, երկուսն էլ դարձյալ Երզնկայի մոտ:

Եթե պատմաբաններն ու հնագետները հաստատում են Հայասայի ու Հայաստանի նույնությունը, ապա ժամանակակից լեզվաբանությունն ընդունում է, որ հայասացիների լեզուն պատկանել է հընդեվրոպական լեզվախմբին և մասնավորապես տեղանունները շատ ընդհանրություններ ունեն ուրարտական և հայկական տեղանունների հետ: Հայասացիների լեզուն համարվում է «ձևավորվող հայերեն լեզվի հնագույն շերտերից մեկը, բայց ոչ նրա հիմքը, որովհետև... հայոց լեզվի հիմքը դարձավ արիմ-արմենների լեզուն»[3]:

Բանն այն է, որ նախահայկական ցեղերից արմենների հիմնական կենտրոններից մեկն էլ եղել է Եկեղյաց գավառը:

---

[1] *«Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, էջ 193:*

[2] **Աստ. Խաչատրյան,** *Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 451:*

[3] *«Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, էջ 194:*

Արմենների ծագման մասին գոյություն ունի երկու վարկած: Մեկի համաձայն՝ նրանք նախապես ապրելիս են եղել Արգեոսի ստորոտներում (Կեսարիա): Փոյուգացիների կողմից հալածվելով՝ շարժվել են դեպի Հալիս գետի վերին հոսանքի շրջանը, դարձել հայասացիների հարևան:

Երկրորդ վարկածը Ստրաբոնի հաղորդածն է: Ըստ Ստրաբոնի՝ արմենները առաջ ապրելիս են եղել Թեսսալիայում (Կենտրոնական Հունաստան) և այնտեղից են եկել: Նա այդ բանն էլ կապում է արգոնավորդների առասպելի հետ: Ասում է, թե Յասոնը Թեսալացի Արմենոսի հետ դեպի կոլխերի երկիրը նավարկելիս՝ հասնում է մինչև Կասպից ծովը:

Ստրաբոնը վկայում է, որ Արմենոսի ուղեկիցներից ոմանք գրավել են Ակիլիսենեն, իսկ մյուսները բնակություն են հաստատել Սյուսպիրիտիսում մինչև Կալաքեն և Ադիաբեն, Արմենիայի սահմաններից դուրս:

«Հայ ժողովրդի պատմության» առաջին հատորում կարդում ենք. «Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը, Գր. Ղափանցյանը ուշադրություն են դարձրել այս վերջին վկայության վրա, որը ճիշտ է արտացոլում պատմական իրականությունը: Ակիլիսենեն (Երզնկայի դաշտը)՝ հյուսիս-արևմուտքում և Սյուսպիրիտիսը (Շուպրիտիսը), Կալաքենն ու Ադիաբենը հարավ-արևելքում այն շրջողակն էր, որի սահմաններում ուրարտական պետության կազմավորումից դեռ շատ առաջ տեղի էր ունենում արմենական ցեղերի տեղաշարժը Փոքր Ասիայից դեպի Հայկական լեռնաշխարհը: Ինչպես տեսանք, հայերի ծագման Ստրաբոնի ընդունած վարկածում ևս Ակիլիսենեն (այսինքն՝ Հայասայի կենտրոնական մասը) հանդես է գալիս որպես հայերի նախնիների բնակության սկզբնական վայր»[1]:

Երզնկայի հետագա մի քանի դարերի պատմության վերաբերյալ քիչ տվյալներ ունենք: Անշուշտ արմեններն ու Հայասայի բնակիչները ապրել են միասին, մերթ մեկն է տիրապետող եղել, մերթ՝ մյուսը, մինչև որ ձուլվել են, դարձել մի ժողովուրդ, ձուլելով նաև այլ էթնիկական միավորումներ:

Կա կարծիք, որ Երզնկան ավելի քան երեք դար եղել է ուրարտական տիրապետության տակ, ուրարտական պահակակետ-ամրոց նրա արևմտյան սահմանին:

Ուրարտուի պետությունը հանդիսանում է նախահայկական պետություն, հայ ժողովուրդը անմիջապես նրա պատմության և մշա-

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, էջ 245:

կոյթի չարունակողն է: Այժմ կասկած չվերցնող իրողություն է, որ ուրարտական շատ բառեր ու տեղանուններ անցել են հայերենին: Գիտության համար կասկած չվերցնող իրողություն է, որ հայ ժողովրդի կազմավորման մեջ հայասներից ու արմեններից բացի որոշակի դեր են կատարել Ուրարտուի էթնիկական միավորումները:

Բայց իսկապե՞ս Երզնկան եղել է ուրարտական քաղաք, այնտեղ ապրել են ուրարտացիներ, թե՞ եղել է նվաճված քաղաք, որտեղ ուրարտացիներն ունեցել են իրենց փոխարքաները՝ ներկայացուցիչները, որոնք հետևել են տուրքերի գանձմանը, զինվորների հավաքմանը և այլ պարտադրանքների իրականացմանը:

Պարզաբանման կարոտ հարց է:

Մի թռուցիկ ակնարկ գցենք Ուրարտուի պատմության վրա:

Մ. թ. ա. 13-րդ դարի ասորեստանյան աղբյուրները առաջին անգամ խոսել են Ուրարտուի մասին, տեղեկություններ տվել այդ երկրի վերաբերյալ: Ասորեստանի թագավոր Սալմանասար I-ի (1274–1245) մի արձանագրության մեջ հիշատակվում է նրա անունը որպես այն երկրների միության կենտրոն, որոնց դեմ Ասորեստանի թագավորը կռվել է: Այդ արձանագրությունից երևում է, որ ակնարկված երկրների միության կենտրոնը եղել է Վանա լճից հարավ-արևելք ընկած լեռնոտ վայրում: Սալմանասարը հետագայում արշավել է նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասերի վրա: Ասորեստանյան արձանագրություններից երևում է, որ նրանց թագավորները գերի են վերցրել Ուրարտուի մի քանի ցեղապետերի: Հենց այդ առիթով առաջին անգամ հանդիպում ենք Նաիրի տեղանունին, որպես Հայկական լեռնաշխարհի ընդհանուր անվանում:

Այս բոլորով հանդերձ, բուն Ուրարտական պետության վավերական սկզբնավորումը գիտնականները հաշվում են մ. թ. ա. 9-րդ դարից, երբ արձանագրությունների մեջ հիշատակվում է արդեն Ուրարտական թագավորություն հասկացողությունը:

Ուրարտուն Առաջավոր Ասիայի հզոր պետություն է դարձել Մենուա թագավորի (810–786) և նրա որդի Արգիշտի I-ի (786–764) օրոք, երբ հյուսիսում նրա սահմանը հասնում էր մինչև Սևանա լճի ափերը, Արևմուտքում՝ մինչև Եփրատի ստորին ափերը, մինչև Մելիտինե (Մալաթիա):

«Եվ իրոք, Ուրարտուն դարձել էր իսկական մի պետություն, քաղաքական-տնտեսական իսկական առումով: Նա արևելյան հին բրոնակալ կիսաստրկատիրական-կիսացեղատիրական մի մեծ բռնակալություն (դեսպոտիա) դարձավ, սկսած Տիգրիսից հարավում և վեր-

ջացնելով Զալդր-Սևան լճերի գիծը՝ հյուսիսում, ինչպես և արևմտյան Եփրատից մինչև այժմյան պարսկա-տաճկական սահմանը, թեպետ որոշ տեղեր այդ գծերն էլ էին անցել»[1]:

2. ԱԼԹԸՆ ԹԵՓԵԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ

Մինչև վերջին տասնամյակները պատմությանը հայտնի էր միայն, որ Եկեղյաց գավառը խոր անցյալում եղել է քաղաքական կենտրոն, Հայասա-Ազզի էթնիկական միավորների բնակավայրը, հետագայում կազմել է Ուրարտական թագավորության մասը: Բայց թե ինչ դեր է կատարել այդ գավառը Ուրարտական գրավումից առաջ և հենց ուրարտական տիրապետության երեք դարերի ընթացքում, ինչ իրադարձությունների թատերաբեմ է եղել, ինչպիսի մշակութային արժեքներ է ստեղծել, ինչ մշակույթի կրող է եղել, ոչինչ հայտնի չէր:

Անտիկ մատենագիրների աղոտ հիշատակությունները, Երզնկայի հովտում պատահմամբ գտնված և մամուլում արձանագրված նյութական մշակույթի որոշ նմուշները՝ հին նիզակներ, երկրագործական իրեր, անգամ մեկ երկու սեպագիր արձանագրություններ, որոնք այնպես էլ մնացել էին անվերծանելի, չէին կարողացել ժամանակի վարագույրը բաց անել և տալ վերոհիշյալ հարցերի պատասխանը:

Եվ ահա պատահմամբ, 1956 թ. Երզնկայից հազիվ 20 կիլոմետր արևելք գտնվող Ալթըն Թեփե բլուրի պեղումների ընթացքում հայտնաբերվեց ուրարտական չրջանի մի ամրոց, որն իր ճարտարապետական, քանդակագործական չլացուցիչ արվեստով, գտածոների պերճանքով գերազանցեց ամեն ակնկալություն:

Հենց այն հանգամանքը, որ ժողովուրդը Ալթըն Թեփե է կոչել այդ բլուրը, ինքնին չատ բան պիտի հուչեր հնագետներին: Ըստ երևույթին տեղացի բնակիչները հաճախ են բլրի վրա կամ նրա ստորոտում գտել ոսկյա իրեր, որ Ոսկե բլուր անունն են տվել նրան: Դեռևս 1930-ական թթ. Ալթըն Թեփեում բացվել է մի դամբարան, որից դուրս եկած արժեքավոր իրերը տեղափոխվել են Անկարայի ազգային թանգարան:

Բայց այդ ահազանգից հետո էլ թուրքերը գարմանալիորեն չեն հետաքրքրվել Ալթըն Թեփեով մինչև 1956 թ., երբ բացվել է մի նոր և ավելի հարուստ դամբարան և գիտնականների ուչադրությունը բևեռել հողաչերտերի տակ գարմանահրաչ մի աչխարհ թաքցրած բլուրի վրա: Մարդիկ համոզվել են, որ տեսական պեղումները վար-

[1] **Գր. Ղափանցյան,** *Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 131:*

ձատրելու են իրենց լիուլի, կանգնեցնելու են մեծ անակնկալների առաջ, պատմելու են գաղտնիքներ, որոնք անծանոթ են գիտական աշխարհին:

Այդպես էլ եղավ: Ուրարտական ոչ մի ամրոց՝ լինի դա կենտրոն Բիայնիլիի տարածքում, թե արևելյան սահմանի՝ Էրեբունիում կամ Կարմիր բլուրում, չեն տվել այն հարստությունը, որ տվեց Երզնկայի Ոսկե բլուրը՝ Ալթըն Թեփեն և դա այն պատճառով, որ մինչդեռ ուրարտական թագավորության հիշված կենտրոնների շինությունները՝ պալատները, ամրոցները ենթարկվել են հրկիզման ու թալանի, Ալթըն Թեփեն մնացել է անաղարտ: Գիտնականները այն կարծիքին են, թե այնտեղ հրդեհ չի եղել, այլապես հում աղյուսների գեթ մի մասը կթրծվեր, ինչպես այդ նկատում ենք Կարմիր բլուրում:

Մյուս կողմից ամեն ինչից երևում է, որ ամրոցի տերերը այն լքել են խաղաղ պայմաններում, իրենց հետ տանելով միայն պաշտամունքի առարկա իրերը, առաջին հերթին Խալդի աստծու հետ կապված արձանները, պալատական հարստությունը, բայց նույնությամբ թողել են դամբարանային հարստությունը, իսկ նրանք դամբարանները կառուցել են այնպիսի խորամանկ հմտությամբ, որ հազարամյակների ընթացքում ավարի սովոր ցեղերից և ոչ մեկը չի կարողացել թափանցել այդ գաղտնարանները:

Թուրքական երկու թանգարանների (պատմության և հնագիտության) համատեղ ջանքերով 1959 թ. սկսված պեղումները անընդմեջ շարունակվել են, հատկապես ամռան ամիսներին: Պեղումները ղեկավարել է հնագետ Թահսին Էոզգյուչը, որը դասախոսում է Անկարայի համալսարանում: Նա ամերիկյան հնագիտական, գիտական հանդեսներում և Թուրքական մամուլում ու առանձին գրքույկներով ծանոթացրել է իր ղեկավարած պեղումների արդյունքներին, սկսած 1960-ական թվականների սկզբներից:

Ութ տարվա պեղումների շնորհիվ հողի թանձր շերտի տակից դուրս եկած շինություններն ու իրերը հետևյալներն են՝ գավիթով տաճար, բացօթյա աղոթատեղի, երեք դամբարաններ, ընդունելության դահլիճ, մթերանոցներ, մառաններ, միջնաբերդ, բնակելի տներ՝ պալատականների և պալատում աշխատողների համար: Այս բոլորը շրջապատված է եղել 36 ոտք լայնության բարձր պարիսպով, որն ունեցել է աշտարակներ: Տաճարի հիմքերը երեք շարք սրբատաշ քարով է շինված եղել, մնացած մասը՝ հում աղյուսով: Ներսում՝ խորանի առաջամասում եղել է քարե պատվանդան, որ ենթադրել է տալիս, թե նրա վրա դրված պիտի լիներ թանկարժեք մի արձան:

Հետաքրքիր կառուցվածք են ունեցել դամբարանները: Յուրաքանչյուրը իրենից ներկայացրել է փոքրացված մի բնակարան: Պատերն ունեցել են խորշեր, որտեղ դրվել են հանգուցյալին վերաբերող իրեր: Մի սենյակից մյուսը տանող մուտքերը փակված են եղել սալ քարերով: Դրանցից բացի ամեն մի դամբարանի մուտքը ծածկված՝ տոննաներով խճաքարով: Դամբարանի կտուրը նույնպես, կառուցված մեծ քարերով, պատած է եղել խճաքարի հաստ շերտով, որի վրա՝ հում աղյուսի շերտ է դրվել: Այս բոլորը վկայում է, որ դամբարանները պատրաստողները ամեն ինչ արել են, որպեսզի հանգուցյալների նինջը վրդովողներ չլինեն, ինչպես այդ անում էին եգիպտական փարավոնների դամբարանները պատրաստողները, թեև միանգամայն տարբեր սկզբունքով:

Դամբարաններից յուրաքանչյուրում թաղված է եղել մեկական ննջեցյալ, դրված քարից կամ փայտից չինված չքեղ դագաղում: Մի քանի դամբարանում խախտված է այդ սկզբունքը. հայտնաբերվել են կնոջ և տղամարդու աճյունները միասին:

Հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում պեղումների ղեկավար Թ. Էոզգյուչը թաղված մարդկանց իրերի ու հագուստների մասին. «Ննջեցյալը,- գրում է նա,- հագնվել է ճաչակով: Կնոջ դամբարանում գտնվել է ոչ միայն կանացի զգեստ, զարդարված ոսկե մեծ կոճակներով, այլև ոսկուց, արծաթից ու թանկարժեք քարերից պատրաստված զարդեր: Տղամարդու հետ սովորաբար դրել են բրոնզե և երկաթե զենքեր: Դամբարանները կահավորված են եղել ոսկեպատ և արծաթապատ աթոռներով, գահավորակներով, սեղաններով, որոնց ոտքերը բրոնզից են և պատկերում են ցուլի կճղակներ կամ առյուծի թաթեր: Կահույքի ոտքերը հաճախ ամրացված են խաչաձև փայտե ձողերով զարդարված բրոնզե պարույրների: Բացի կահույքից, սենյակներում եղել են բրոնզե կաթսաներ, դրված եռոտանու վրա և զարդարված ցուլի գլուխներով: Գտնվել են նաև ոսկուց, արծաթից, երկաթից, քարից, կավից և փղոսկրից պատրաստված այլ իրեր»[1]:

Սենյակներից մեկում հայտաբերվել է մի մարտակառք, լրիվ ձիասարքով, ձիերի աչքակալներով, բրոնզե սանձերով, դնչակալերով, բոլորի ծայրերը զարդարված ցուլերի, ձիերի և արծիվների գլուխներով:

Վերջապես դամբարաններում գտնվել են սկավառակներ, բրոնզե գոտիներ, զարդարված երկրաչափական նախշերով կամ կենդանիների, մարդկանց և աստվածների նկարներով:

---

[1] «Archaeology», 1969, october, v. 22, № 4, էջ 256-263:

Ուրարտական արվեստի եզակի նմուշ է 8,75 սմ տրամագծով բրոնզե սկավառակը, որի վրա պատկերված է թևավոր ձիու վրա նստած, երկար պատմուճան հագած մի աստված: Գոտիներից մի քանիսի վրա պատկերված են թևավոր ձիեր:

Այժմ դուրս գանք դամբարաններից և մտնենք երկու ընդարձակ սրահները, որոնք եղել են ամրոցի պահեստները և որոնցում, կողք կողքի, կիսով չափ գետնին թաղված, զույգ շարքով դրված են մեծ կարասներ, հար և նման մեր Կարմիր բլուրի մառաններին: Ինչպես Կարմիր բլուրի որոշ կարասների, Ալթըն թեփեի կարասներից մի քանիսի վրա էլ կան սեպագիր դրոշմներ՝ կարասների տարողությունը ցույց տվող:

Էոզգյուչն ասում է, թե այդ դրոշմները դեռևս չեն վերծանված, հնարավոր է, որ դրանք լույս սփռեն ամրոցի կառուցման թվականի վրա, թեև կարծում է, որ կառուցվել է Արգիշտի I-ի օրոք:

Ինչպես Կարմիր բլուրի կարասների, սրանց մեջ էլ հավանաբար լցված են եղել ցորեն, գարի, քնջութ, ոլոռն, ձեթ, գինի և այլն: Հյուսիսային տեղամասում բացված պահեստարանում եղել է այդպիսի 90 կարաս, որոնց ընդհանուր տարողությունը կազմում է 159.000 լիտր գինի:

Ալթըն թեփեի ամրոցի ներսում գտնվող շինություններից մեկը պալատ-տաճար է, բաղկացած երկու մասից, մի մասում զետեղված են եղել վարչական շենքերը և մի մեծ դահլիճ, մյուս մասը 35,5 քառակուսի մետր տարածությամբ բակ է, որտեղ եղել է ներքին տաճարը: Տաճարի բաց բակը շրջապատված է եղել ծածկված սյունասրահով:

Բակի պեղումների ընթացքում հայտնաբերվել են հղկված քարի քսան խարիսխներ, որոնք որպես պատվանդան են ծառայել տաճարի բակը շրջապատող սյունասրահի ծածկը պահող և չորսուկես մետր բարձրություն ունեցող փայտե սյունաշարի համար:

Տաճարը 14 քառակուսի մետր է, պատերի հիմքը 90 սանտիմետր բարձրությամբ 8 շարք քար է, իսկ դրա վրա շարվել են հում աղյուսներ:

Տաճարի ներսում գտնվել է քարե պատվանդան, որի վրա դրված են եղել Խալդի աստծու գահավորակն ու արձանը, հավանաբար թանկարժեք մետաղից ու փղոսկրից պատրաստված: Դրանք սակայն կորել են կամ տարվել՝ ամրոցը լքելիս: Նույն այդ վայրում գտնվել են բազմաթիվ խեցանոթներ, բրոնզից ու երկաթից պատրաստված մականներ, նետասարքեր, գեղարդներ: Գեղարդն առհասարակ եղել է Խալդիի խորհրդանիշը:

Ենթադրվում է, որ տաճարի բեկորների մեջ գտնված այդ իրերը, զարդերը նվիրաբերված են եղել Խալդի աստծուն:

Նվերների շատ ավելի մեծ հավաքածո է գտնվել տաճարի մուտքի սյունասրահի մոտ: Դրանց մեջ կան բրոնզե վահաններ, որոնք ըստ երևույթին կախված են եղել տաճարի պատերից: Հայտնաբերվել են փղոսկրից պատրաստված արձանիկներ, որոնք, էոզգյուչի կարծիքով եղել են Խալդիի կահույքը զարդարող մասեր:

Ուրարտական արվեստի մի այլ գլուխգործոց է նստած առյուծը, չինված փղոսկրից: Առյուծի վզի և կրծքի մազերը պատրաստված են եղել ոսկե թերթիկներից, որոնց հետքերն են միայն մնացել: Հոնքերի, աչքերի և քթի շուրջ նկատվող ծալքերը վկայում են, որ պատրաստող արվեստագետը գազանին տվել է մոլեգնածի արտահայտություն:

Բարձրաքանդակ երկու փղոսկրե կերպարներ պատկերում են մարդու մարմնով, բայց արծվի գլխով ու թևերով գերբնական էակներ, կարճ հագուստներով, «որոնց վրայից կրում են երկար տունիկաներ: Թևերը և տունիկաների եզրերը զարդարված են ոսկե թերթիկներով: ... Նրանք ցույց են տալիս ուրարտական և երկրի հարավում՝ ասորեստանյան արվեստագետների միջև եղած կապը»:

Ալթըն թեփեի պեղումներից դուրս եկած նյութերի, քանդակների մեջ բացառիկ արժեք է ներկայացնում և դիտողին հիացմունք պատճառում փղոսկրե եղջերուի բարձրաքանդակը: Եղջերուն գլուխը շրջած նայում է ծառին: Կենդանու փղոսկրե մարմնի վրա կան փոսիկներ, որոնց մեջ, ըստ հնագետների, նախապես զետեղված են եղել ոսկու կամ թանկարժեք քարերի հատիկներ:

Պեղումների ղեկավարի վկայությամբ, պալատ-տաճարի արտաքինը եղել է փառահեղ, բայց զուսպ, իսկ ներքին մասը՝ վայելչագեղ սյուներով, զվարթ սրահներով ու խճանկարներով միանգամայն այլ տրամադրություն է արտահայտել:

Ենթադրվում է, որ պալատը չի ավերվել, սակայն մ. թ. ա. 7-րդ դարում քանդել են՝ այլ շենքեր կառուցելու նպատակով:

Աչխարհիկ այս մեծ շենքի ծածկը պահել են 18 սյուներ, դասավորված երեք շարքով: Ընդունարանի պատերը ամբողջովին ծածկված են եղել գույնզգույն որմնանկարներով: Պատերը կառուցված լինելով հում աղյուսից, դարերի ընթացքում, մասամբ էլ պեղումների ժամանակ քանդվել են, մեծապես վնասելով որմնանկարներին: Քանդվելու ժամանակ աղյուսների մի մասը այնպիսի դիրքով է թափվել հատակին, որ որմնանկարներից բավականաչափ պատառիկներ մնացել են անաղարտ: Այդպիսի 50 բեկորներով հնարավոր է դարձել որոշ չա-

փով վերականգնել որմնանկարներից հատվածներ, ճիշտ այնպես, ինչպես Էրեբունի ամրոցի պեղումների ժամանակ կատարվեց:

Ենթադրվում է, որ պալատը զարդարող արվեստագետները հետևել են շենքի կառուցման աշխատանքներին: Սպասել են, որ աղյուսները լրիվ չորանան, ապա կապույտ են ներկել ամբողջ մակերեսը, թողնելով որոշ հատվածներ: Այնուհետև նրանք նկարել են երկրաչափական, բուսական, կենդանական կամ սրբազան պատկերների ուրվագծերը սև գույնով, իսկ մանրամասնությունները լրացրել են կարմիր, կապույտ, բաց սրճագույն և կանաչ գույներով:

Երկրաչափական նկարների համար օգտագործել են քանոն և կարկին: «Պատերի դրվագների մեծ մասը,- ասում է Էոզգյուչը,- վարդաձև զարդերը, արմավենու տերևները, գոգավոր ուղղանկյունները, սֆինքսները, ծնկաչոք ցուլերը և թևավոր գերմարդկային կերպարները ուրարտացի նկարիչները փոխ են առել իրենց ասորեստանյան հարևաններից: Վերականգնված բեկորներից երկուսը, սակայն, տիպիկ ուրարտական են: Նրանցից մեկում առյուծը ծածուկ նայում է եղջերուին, մյուսում առյուծը երախի մեջ պահում է եղջերուի ձագի անզոր մարմինը: Երկու պատկերներն էլ կատարված են կենդանի ոճով, որ խստորեն հակադրվում է կատարման ասորեստանյան համարյա անկենդան ոճին»[1]*:*

Ընդունարանն իր ճարտարապետական ոճով ավելի ուշագրավ է, քան որմնանկարներով: «Ընդունասրահը հնադարյան Պարսկաստանի արքայական պալատների հիմնական մասը կազմող ճեմասրահի նախատիպն է: Պատմությանը հայտնի ամենաչքեղ ճեմասրահները Պարսկաստանի Աքեմենյան թագավորների կողմից մ. թ. ա. 559–330 թվերին Պերսեպոլսում և Բազարգադում կառուցված ճեմասրահներն են: Պարզորոշ երևում է, որ պարսիկներն առաջին անգամ Ուրարտուի ճարտարապետներից սովորեցին փառահեղ ընդունարաններ կառուցելը»:

Խորհրդային գիտնականները, անշուշտ հենվելով Էոզգյուչի եզրակացությունների վրա, գտնում են, որ Ալթըն թեփեի ամրոցը ուրարտական մշակույթ է: Հայկական սովետական հանրագիտարանը նկարագրող մի ամբողջ էջ է հատկացրել այդ նյութին և կառույցը համարել «Ուրարտական քաղաք-ամրոց», որը հիմնադրվել է Արգիշտի II-ի (714–685) օրոք, որպես Ուրարտական պետության արևմտյան սահմանային մարզի կենտրոն»: Նկարագրելով Ալթըն թեփեում հայտնաբերված տաճարը, հոդվածի հեղինակը գտնում է, որ

---

[1] «Archaeology», 1969, october, v. 22, № 4, *էջ 256-263.*

«նման տաճարները որոշակիորեն տարբերվում էին ասորական և հեթիթական տաճարներից և յուրահատուկ էին միայն ուրարտացիներին: Ալթըն Թեփեում ուրարտական արձանագրություններ առայժմ չեն հայտնաբերվել, որը սակայն չի ժխտում նրա ուրարտական ամրոց լինելու փաստը: Մասնագետները (Բ. Պիոտրովսկի, Մ. Իսրայելյան, Կ. Հովհաննիսյան) գտնում են, որ Ալթըն Թեփեն իր կառույցների ճարտարապետական ոճով (պալատական շենքը), որմնանկարների զարդանախշերով, դրանց հերթականությամբ, գույներով նման է ուրարտական այլ ամրոցների, հատկապես՝ Էրեբունուն»[1]:

Գիտնականներն այս եզրակացությանը հանգել են հիմնականում Թ. Էոզգյուչի նկարագրությունների և տպագրված նկարների հիման վրա: Բայց վաղ չէ՞ այդքան ավարտուն եզրակացության հանգել մի մշակույթի գնահատման հարցում, որով գիտությունը դեռ նոր պիտի զբաղվի և առայժմ միայն պեղումները ղեկավարողի կարծիքներն են թափանցում մի հոդվածից մյուսը, առանց լսելու ականավոր որևէ այլ հնագետի կարծիքը, մինչդեռ կան բազմաթիվ հարցեր, որոնք կարոտ են առավել հիմնավոր պարզաբանման:

3. ԱՅԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ ԱԼԹԸՆ ԹԵՓԵԻ ՄԱՍԻՆ

Ալթըն Թեփեի պեղումների արդյունքներով շատ է հետաքրքրվել ամերիկաբնակ Արշակ Ալճյանը՝ «Երզնկայի հայրենակցական միության» վարչության նախկին անդամներից:

Ա. Ալճյանը մասնագիտությամբ ոչ պատմաբան է և ոչ էլ հնագետ: Բայց նա այս նյութը ուսումնասիրել է երկար տարիներ, բազմակողմանիորեն, ծանոթացել ոչ միայն թուրք և եվրոպացի արևելագետների գրածներին, այդ թվում Թ. Էոզգյուչի բոլոր հոդվածներին ու գրքույկներին, այլև ասորական, պարսկական, ուրարտական մշակույթներին վերաբերող հարուստ գրականության, նաև խորհրդային հնագետների կարծիքներին:

Այս բոլորից հետո գրել է իր դիտողությունները, բազմացրել և մեկ օրինակ էլ ուղարկել է մեզ՝ օգտագործելու «Երզնկա» գրքում:

Ալճյանի բարձրացրած հարցերը չեն կարող չհետաքրքրել մեր հնագետներին, որքան էլ որ պարունակեն մի քանի վիճելի կետեր: Քանի որ դրանք անմիջապես առնչվում են Երզնկայի պատմությանը, ավելորդ չենք համարում ընդհանուր գծերով ծանոթացնել ընթերցողներին:

---

[1] *«Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 1, Երևան, 1974, էջ 163: Նաև* **Մ. Իսրայելյան,** *Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971, էջ 63:*

Ալճյանի հիմնական եզրակացությունն այն է, որ ուրարտացիները Երզնկայի դաշտը երբեք չեն գրավել: Այդ բանը հաստատող ոչ մի հավաստի փաստ չկա: Ապացույց՝ ուրարտական թագավորների տասնյակ տարեգրական արձանագրությունները, որոնցում դրանք արձանագրել տվող թագավորները թվարկում են իրենց գրաված ամենաաննշան բնակավայրերն անգամ, չենք հանդիպում Երզնկայի շրջակայքը հիշեցնող որևէ տեղանունի: Մոռացության չէր կարող տրվել մի այնպիսի կենտրոն, որտեղ ստեղծվել էր Ալթըն Թեփեի պեղումներից դուրս եկած փարթամ մշակույթ:

Երկրորդ՝ հենց Ալթըն Թեփեում չի հայտնաբերվել որևէ արձանագրություն՝ ուրարտական լեզվով, մինչդեռ ուրարտացիները սովոր էին իրենց կառուցած տաճարներում, ամրոցներում թողնել մեկից ավելի սեպագիր արձանագրություններ, ինչպես այդ տեսնում ենք Կարմիր բլուրում, Արին բերդում, Վանում:

Հաթերն են, որ սովորություն չեն ունեցել արձանագրություններ թողնել, ինչպես հաստատում է հաթերի մշակույթի խոշոր մասնագետ Կուրտ Բիտտելը: Հայասա-արմենները, գտնվելով հաթերին սահմանակից և կրելով նրանց ազդեցությունը, նույնպես չեն սիրել արձանագրություններ թողնել շինությունների վրա: Իսկ եթե երբեմն թողել են որոշ դրոշմներ, դրանք եղել են հաթերեն:

Այս տեսակետի հիմնավորման փաստարկ կարող է ծառայել այն, որ Թ. Էոզգյուչը, նշելով թե մառաններում հայտնաբերված կարասներից մի քանիսի վրա դրոշմված են նրանց տարողության չափը ցույց տվող գրություններ, ասում է թե դրանք ոչ թե ուրարտերեն են, այլ՝ հաթերեն: Եթե ուրարտացիներն էին կառուցել ամրոցը, ինչու կարասների վրա հաթերեն պիտի դրոշմեին և ոչ ուրարտերեն, ինչպես արել են Կարմիր բլուրի կարասների, նույնիսկ գինու թասերի վրա:

Հնարավոր է, որ մի քանի առարկաների վրա լինեին ուրարտերեն արձանագրություններ: Դա չի փոխում իրողությունը: Այդպիսի իրեր, զարդեր չարժական էին և առևտրի ճանապարհով անցնում էին մի քաղաքից, երկրից մյուսը:

Ալթըն Թեփեի ամրոցի՝ ուրարտացիների կողմից կառուցվելու փաստարկ չէ նաև այն, թե նրա պունազարդ սրահները, որմնանկարները, այդ նկարների կատարման տեխնիկան հիշեցնում են ուրարտական համանուն շինություններն ու որմնանկարները, ասենք հենց Էրեբունիի որմնանկարները:

Էրեբունիի սյունազարդ դահլիճը Ուրարտուի կործանումից հետո է չինվել, Աքեմենյանների տիրապետության շրջանում: Դա առհասարակ ուրարտական ոճ չի եղել: Եվ վերջապես հենց ուրարտական ճարտարապետությունը ազդվել է Հայասա-Ազզիի ճարտարապետությունից, մի բան, որ ժամանակագրական կարգով ավելի վաղ էր:

Այս փաստը ընդունում են նաև հայ հնագետ-պատմաբանները: Օրինակ՝ Կ. Հովհաննիսյանը ընդունում է, որ ուրարտական շինություններում Աքեմենյան վերակառուցումներ են սյունազարդ դահլիճները, ինչպես նաև պաշտամունքի շենքերը, կրակի տաճարները[1]:

Ավելի ուշագրավ է նույն գիտնականի հետևյալ վկայությունը. «Խեթական շինարարական արվեստի շատ ավանդներ, հավանաբար Հայասա–Ազզիի միջոցով իրենց արտահայտությունը գտան ուրարտական ճարտարապետության հուշարձաններում»[2]:

Ուրեմն, եզրակացնում է Ալճյանը, Ալթրն Թեփեի ամրոցի կառուցումը պետք է կապել ոչ թե ուրարտացիների, այլ՝ Խեթական պետության մայրաքաղաք Խաթուսասի մեջ գտնված հուշարձանների հետ, բայց կառուցված Հայասա-արմենների կողմից:

Կուրտ Բիտտելը 1957 թ. Խաթուսասի և նրա գլխավոր ամրոց Բեոյուկ Կալեի պեղումների ընթացքում հայտնաբերել է հինգ տաճարներ և սյունազարդ մի դահլիճ, որոնք շատ նման են Ալթրն Թեփեի տաճարին ու սյունազարդ դահլիճին: Հետևաբար առաջին անգամ հաթերն են չինել սյունազարդ դահլիճներ, դրանից հետո է, որ Հայասա-արմենները կառուցել են Ալթրն Թեփեն, իսկ սյունազարդ դահլիճների կառուցումը չքեղության գագաթնակետին է հասել Աքեմենյանների օրոք, այդ բանի լավագույն նմուշն է Պերսեպոլիսի հրուշակավոր սյունազարդ դահլիճը:

Իսկ որ Երիզայում ուրարտացիներից շատ դարեր առաջ եղել են կրոնական պաշտամունքի կենտրոններ, ցույց է տալիս եգիպտական փարավոն Ռամզես II-ի և Հաթերի Մովաթալես թագավորի միջև մ. թ. ա. 1296 թ. կնքված դաշնագիրը, որտեղ որպես վկա ստորագրող մեհյաններից ու աստվածություններից մեկը՝ 17-րդը, կոչվել է Ուրուսա, որը ըստ գիտնականների, Երիզան է:

Անշուշտ հայ ժողովուրդը ժառանգորդն է թե՛ ուրարտական մշակույթի, թե՛ Հայասա-արմենների, բայց մինչդեռ ուրարտական շրջանը ուսումնասիրված է հանգամանորեն, նրա մասին ստեղծվել է վիթխարի գրականություն, Հայասայի վերաբերյալ աղոտ տեղեկությունը-

---

[1] **Կ. Հովհաննիսյան**, *Էրեբունի, Երևան, 1968, էջ 22:*

[2] *Նույն տեղում:*

ներ միայն ունենք: Եվ եթե ապագայում հնագետներն ու պատմաբանները հաստատեն, որ Ալթրն Թեփեի գտածոները նախաուրարտական՝ հայասացիների մշակույթն է, դա մի փայլուն ու վավերական էջ կարող է գրել խոր անցյալի մեր պատմության մեջ:

Այդքան ընդարձակորեն խոսելով Ալթրն Թեփեի հայտնության մասին, մեր նպատակն էր ամենից առաջ ապացուցել, որ Երզնկան դեռևս 3000 տարի առաջ ոչ միայն եղել է կրոնական կենտրոն, այլև բարձր զարգացման աստիճանի վրա կանգնած բնակավայր, մի իրողություն, որն իր հերթին պիտի բացատրի թե ինչու Երզնկայում հետագա դարերում այնքան զարգացած է եղել ոսկերչությունը, պղնձագործությունը, քանդակագործությունը, մանրանկարչությունը, փայտափորագրությունը և այլ արվեստներ ու արհեստներ:

Ովքե՞ր են կառուցել Ալթրն Թեփեի ամրոցը և նրա մասնաշենքերը, ովքե՞ր են կահավորել այդ բոլոր սրահներն ու սենյակներն այնքան նուրբ քանդակներով, ոսկեզրվագներով, որմնանկարներով, գեղատեսիլ իրերով, օգտագործելով փղոսկր, ոսկի, արծաթ, պղինձ և այլ նյութեր: Դրանց ո՞ր մասն է պատրաստվել տեղում, որ մասը՝ հարևան երկրներում կամ այդ երկրներից հրավիրված արհեստավորների կողմից: Եթե նույնիսկ ընդունենք, որ իրերի մի մասը բերվել են այլ վայրերից, ինչ որ շատ բնական է, և Հայասայից էլ կարող էին տարվել այդ երկրները, ապա միամտություն պիտի լիներ կարծել, թե Ալթրն Թեփեի ամբողջ մշակույթը բերովի է:

Այս գրքի հետագա գլուխներում պիտի տեսնենք, որ վերոհիշյալ արհեստների, արվեստների մեծ մասը երզնկացիներին ուղեկցել են Ալթրն Թեփեից հետո գրեթե ամեն դար, մինչև մեր օրերը: Անշուշտ, եղած պիտի լինեին նաև Ալթրն Թեփեից էլ առաջ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԶՈՐԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ԵՐԶՆԿԱՆ ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ալթըն Թեփեի պեղումները ղեկավարող Թուրք հնագետի կարծիքով ամրոցն իր գոյությունը պահել է մինչև ուրարտացիների քաղաքական ասպարեզից հեռանալը, այսինքն՝ մ. թ. ա. 6-րդ դարի սկիզբը:

Հնարավոր է, որ հետագայում էլ կանգուն եղած լինի, բայց եթե նույնիսկ ճիշտ է Թ. Էոզգյուչի ենթադրությունը, փաստը մեզ համար շատ կարևոր է: Անկախ այն հանգամանքից, թե Երզնկան այդ ժամանակ Ուրարտական պետության էր ենթարկվում, թե մի այլ իշխանության, վավերական իրողություն է, որ մ. թ. ա. 6-րդ դարը համարվում է հայ ժողովրդի որպես էթնիկական ամբողջության կազմավորման սկիզբը:

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը գրում է. «7/6–3-րդ դարերը մեր թվականությունից առաջ հայ ժողովրդի պատմական անցյալում կազմում են մի շատ կարևոր շրջան: Այս ժամանակներում հետզհետե կազմավորվել է հայ ցեղը և ստեղծվել է նախկին Ուրարտական թագավորության երկրամասերում պատմական հին Հայաստանը... Արդեն անվիճելի կերպով պարզաբանված է, որ այժմյան հայերի նախահայրերը հնդեվրոպական արմեններն են, որոնք Փոքր Ասիայից գաղթել են Հայաստան, հավանորեն յոթերորդ դարում կամ վեցերորդ դարի սկզբներում մեր թվականությունից առաջ»[1]:

Հ. Մանանդյանը, նկարագրելով Ուրարտուի անկումը, ասում է թե 8–7-րդ դարերում Ուրարտուն ենթարկվեց հյուսիսից եկող կիմմերների արշավանքներին, որոնք «տակնուվրա արին Ուրարտուն, Ասորեստանը և ամբողջ Փոքր Ասիան»: Այդ արշավանքներին 7-րդ դարում հետևել են սկյութների հարձակումները:

---

[1] **Հ. Մանանդյան,** *Երկեր, հատ. Ա, Երևան, 1977, էջ 13:*

Այս երկու արշավանքների հետևանքը եղել է այն, որ Անդրկովկասում և Փոքր Ասիայում տեղի են ունեցել զանազան ցեղերի տեղաշարժեր, վերախմբավորումներ: Ասորեստանի, Բաբելոնի և Ուրարտուի փոխարեն ասպարեզ են եկել նոր միություններ՝ նախ Մարաստանը (Մեդիա), ապա՝ Պարսկաստանը:

«Ահա այս մեծ անցքերի ու տեղաշարժումների ժամանակ,- շարունակում է Հ. Մանանդյանը,- յոթերորդ դարում կամ վեցերորդ դարի սկզբներում (նախքան մեր թվ.), կարելի է ենթադրել հայերի հնդեվրոպական նախնիքների՝ արմենների գաղթը Հայաստան, որոնք, հաստատվելով Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան դաշտերում ու լեռնահովիտներում՝ հետզհետե տեր դարձան Ուրարտուի երկրներին»[1]:

Ժամանակակից պատմագրությունը հակված է կարծելու, որ հայ ժողովուրդը ձևավորվել է հայասցիների, արմենների, ուրարտացիների կամ Ուրարտու երկրում ապրող ժողովուրդների միավորումից: Օտարները մեզ կոչել են արմեններ, սոմեխներ, մենք՝ հայեր: Դա ոչ թե ժխտում է վերոհիշյալ կարծիքը, այլ հաստատում, քանի որ այդ բոլոր ցեղերի, էթնիկական միավորումների ազդեցությունը առկա է մեր լեզվի վրա:

Քանի որ օտար աղբյուրները հայերին կոչել են արմեններ, կանգ առնենք դրանցից մի քանիսի վրա, մանավանդ որ ընդունված է այն տեսակետը, թե արմենների նախնական բնակավայրերից մեկը եղել է Եկեղյաց գավառը:

Հույն ականավոր պատմագիր Հերոդոտոսը (484–425) գրում է, որ արմենները Հայաստան են եկել Փոյուգիայից (Արևմտյան Փոքր Ասիա):

Մ. թ. ա. 4-րդ դարի աշխարհագիր Եվդոքսոս Կնիդացին նույնպես գտնում է, որ արմենները ծագումով Փոյուգիայից են և նրանց լեզվում շատ բառեր փոյուգերեն են: Նույնը հաստատում է Դիոնիսիոս Հալիկարնասցին (մ. թ. ա. 1-ին դ.), որը արմեններին և փոյուգիացիներին համարում է համալեզու:

Արմեներեն և փոյուգերեն լեզուների ազգակցությունը ընդունում են գերմանացի արևելագետ Պ. Կրեչմերը, Յո. Մարկվարտը, Ն. Յա. Մառը և ուրիշներ:

Բայց մեզ այստեղ հետաքրքրում է արմենների գաղթը Երզնկայի հովիտը և Երզնկայի տեղը արմենների իշխանության մեջ:

Ստրաբոնը ոչ միայն գրել է թե Արմենոսի ուղեկիցները գրավեցին Ակիլիսենեն, այլև հետաքրքիր տեղեկություններ է տալիս Ակիլիսե-

---

[1] **Հ. Մանանդյան,** *նույն տեղում, էջ 15:*

նեի տեղագրության մասին: Խոսելով Եփրատ և Տիգրիս գետերի մասին, նա շարունակում է . «Այս երկուսից մեծագույնն է Եփրատը, որ անցնում է երկրի մեծ մասով՝ ոլորապտույտ հոսանքով, սկիզբ առնելով Տավրոսի հյուսիսային մասում, հոսելով դեպի Արևմուտք՝ Մեծ կոչված Հայաստանի միջով՝ մինչև Փոքր Հայք, աջում ունենալով այս երկիրը, իսկ ձախում՝ Եկեղիքը: Այստեղից դառնում է դեպի հարավ, և այս պտույտի ժամանակ հասնում է Կապադովկիայի սահմանները. աջում թողնելով Կապադովկիայի և Կոմմագենի սահմանները, ձախում՝ Մեծ Հայաստանի Եկեղիքը, Ծոփքը, առաջանում է դեպի Ասորիք և նոր պտույտով հասնում Բաբելոն և Պարսից ծոց»[1]:

Հ. Մանանդյանը, խոսելով արմենների գրված տարածությունների մասին, կանգ է առնում այդ վայրերի թե՛ առևտրական և թե՛ ռազմաստրատեգիական կարևորության վրա: Նա ասում է, թե Եկեղյաց գավառի միջով կամ մոտով էին անցնում Պոնտոսից Բարձր Հայք տանող ճանապարհները: Ծոփքը և Աղձնիքը իշխում էին Պարսից ծոցից Փոքր Ասիա ընկած արքայական ճանապարհի վրա, իսկ Կալաքենը ռազմական մեծ նշանակություն ուներ: Նրա մոտով էին անցնում Ուրարտուից Ասորեստան, Բաբելոն և Մեդիա գնացող ճանապարհները:

6-րդ դարի առաջին կեսում քաղաքական ասպարեզում իշխող պետություն էր Մեդիան: Արմենները եղել են այդ պետության դաշնակիցը և վերոհիշյալ վայրերը գրավել են նրա համաձայնությամբ:

Քսենոփոնն էլ «Կյուրոպեդիա» երկում վկայում է, որ Արմենիան այդ ժամանակ եղել է անկախ պետություն, դաշնակից մեդիացիներին և պարսիկներին: Նա անգամ տալիս է արմենների թագավորի երկու որդիների անունները՝ Տիգրան և Սաբարիս. Մանանդյանը վերջին անունը համարում է Շավարշ: Քսենոփոնը նաև ասում է, թե արմեններն ունեցել են 40.000 հետևակ զինվոր, 8.000 հեծելազոր:

«Որքան էլ կասկածանքով վերաբերվենք վերոհիշյալ վկայությունների մանրամասնություններին,- գրում է Հ. Մանանդյանը,- ստույգ ու պատմական կարող ենք համարել այն, որ վեցերորդ դարի սկզբներին արմենները, որոնք դաշնակից էին և հպատակ մեդացիների թագավորին՝ արդեն անցած են եղել Եփրատ գետը և գտնվել են պատմական Հայաստանի հարավ արևմուտքում: Կարելի է նմանապես ենթադրել, որ նրանք արդեն միացած են եղել և ունեցել են իրենց ցեղապետ առաջնորդը, որին Քսենոփոնը անվանում է թագավոր»[2]:

---

[1] **Ստրաբոն,** *Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 43:*

[2] **Հ. Մանանդյան,** *նույն տեղում, էջ 45-46:*

Կնչանակի Երզնկայի հովիտն այդ ժամանակ, չնայած գտնվել է մեդացիների տիրապետության տակ, հիմնականում ղեկավարվել է արմենների կողմից, քանի որ արմենները, ինչպես և խալդայները ունեցել են ներքին ինքնավարություն: Այդ մասին վկայություն ունի Քսենոփոնը: Նա ասում է թե Կյուրոսը ցանկացել է արմենների և խալդայների միջև բարեկամություն հաստատել: Նա զրույց է ունեցել այդ երկու ցեղերի պետերի հետ, առաջարկել է բարեկամանալ:

«Արմենների և խալդայների խաղաղ համակեցության հետևանքն այն եղավ,- գրում է Մանանդյանը,- որ խալդայները և տեղական այլ ժողովուրդները հետզհետե միաձուլվեցին եկվոր արմենների հետ և հետագա դարերի ընթացքում գոյացավ այժմյան հայ ժողովուրդը»[1]:

Քաղաքական ասպարեզ են գալիս նոր տիրակալներ: Պարսկաստանում Կյուրոս Մեծին հաջորդում է Կամբյուսեսը (529–522), սրան էլ հաջորդում է Գաումատա մոգը, ապա նոր թագավոր է դառնում Դարեհ I-ը (522–486):

Դարեհի գահակալության տարիներին է, որ, ի թիվս այլ ժողովուրդների, ապստամբվել են նաև արմենները, ցանկանալով լինել կատարյալ ազատ:

Դարեհի կողմից Բեհիստունի ապառաժի վրա քանդակված արձանագրություններում մանրամասն նկարագրված են այն պատերազմները, որ Դարեհի զորավարները մղել են արմենների դեմ, նրանց հնազանդեցնելու համար: Մ. թ. ա. 521 թ. գրված այդ արձանագրություններում առաջին անգամ հիշատակվում է **Արմենիա** (Արմինա) անունը: Դարեհը հոխորտանքով լի բառերով պատմելով իր հաղթանակները, ասում է. «Ապստամբները երրորդ անգամ հավաքվեցին և դուրս եկան Դադարշիշի դեմ պատերազմի: Արմինայի մեջ Ուհյամա անունով մի բերդ կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Արամազդն ինձ օգնեց: Շնորհիվ Արամազդի՝ իմ բանակը չատ մարդ կոտորեց թշնամի բանակից: ... Հետո՝ Դադարշիշը, հնազանդվելով իմ հրամանին, մնաց Արմինայում, մինչդեռ ես իմ նիզակը ուղղում էի դեպի Մեդիա: Դարեհ թագավորն ասում է.- այնուհետև Արմինա ուղարկեցի Վահումիսա անունով մի պարսիկի, իմ ծառային և այսպես պատվիրեցի.- Գնա՛, նվաճե այդ ապստամբ զորքը, որ ինձ չի հնազանդվում: Վահումիսան գնաց Արմինան նվաճելու: Ապստամբները հավաքվեցին և դուրս եկան Վահումիսայի դեմ պատերազմի»[2]:

Այս նոր պատերազմում, շնորհիվ Արամազդի, իբր թե հաղթել է Դարեհի զորքը և արմենները 2024 սպանված են թողել կռվի դաշ-

---

[1] **Հ. Մանանդյան,** նույն տեղում, էջ 48:

[2] Նույնը, էջ 55-56:

տում: Թվում է թե պետք է, որ ավարտված լիներ կռիվը և հնազանդեցված լինեին հայերը, սակայն Դարեհի արձանագրության շարունակությունից երևում է, որ նույն Վահումիսան հարկադրված է եղել նոր արշավանք կազմակերպել այս անգամ Հայաստանի մի այլ գավառում:

Արմենների տևական ապստամբությունները պարսիկները վերջնականապես ճնշել են մ. թ. ա. 520 թ.:

Արմենիան դրանից հետո դարձել է պարսկական սատրապություն և նրա կառավարումը հանձնվել է կամ պարսիկ բարձրաստիճան ազնվականների, կամ թագավորի ազգականներից մեկնումեկին:

Դարեհը ստեղծել է կենտրոնաձիգ ուժեղ կայսրություն, այն բաժանելով 20 մեծ շրջանների, որոնցից 13-րդի մեջ է մտել Արմենիան և Պարսկաստանին տվել մեծ հարկեր: Բացի դրամական վիթխարի տուրքից՝ տվել է տարեկան 20.000 ձիու քուռակ: Հայերը պարտավորված են եղել մասնակցել Պարսկաստանի մղած բոլոր պատերազմներին: Օրինակ՝ հույների դեմ մղած կռիվների ժամանակ Քսերքսեսի բանակում եղել են հայկական զորամասեր:

Այս շրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի մասին ունենք հավաստի մի աղբյուր, որից հստակ գաղափար կարելի է կազմել հայ ժողովրդի ապրելակերպի, կենցաղի, ինչ լեզվով խոսելու, ինչպիսի բնակարաններում ապրելու և այլ հարցերի մասին:

Դա Քսենոփոնի վկայությունն է: Քսենոփոնը եղել է հունական 10.000-անոց բանակի հետ, որը մ. թ. ա. 401 թ. նահանջել է Հայաստանով: Նա ականատեսի ճշգրտությամբ պատմում է Հայաստանից իր ստացած տպավորությունները, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Քսենոփոնը Երզնկայում չի եղել: Հունական բանակի նահանջի ուղին ընկել է Մուշ–Մանազկերտ–Բագավան, ապա թեքվել հարավ, նորից դարձել դեպի Արևելք, հասել Արաքսի ափերը, իսկ այստեղից շարժվել Տրապիզոն: Սակայն, դրանով հանդերձ, այն, ինչ որ նկարագրում է Քսենոփոնը, և նկարագրում է մանրամասնորեն, նույնությամբ վերաբերում է Երզնկայի հովտին, քանի որ նրա նկարագրություններից երևում է, որ Արմենիայի ամբողջ տարածության վրա հայերը ապրել են նույն կենցաղով, նույնպիսի տներում, խոսել են միևնույն լեզվով:

Քսենոփոնը Արմենիան համարում է ընդարձակ երկիր, որի սատրապն է եղել այդ ժամանակ Օրոնտասը՝ Դարեհին խնամիացած մի հայ ազնվական: Հույն պատմիչը հիշում է նաև մի այլ անուն՝ Տիրի-

բաղին՝ որպես Տավրոսյան լեռների հյուսիսակողմում գտնվող արմենական չրջանների կառավարիչ: Ենթադրվում է, որ նա եղել է Օրոնտասի օգնականը և ոչ առանձին սատրապ:

Քսենոփոնի ժամանակ Հայաստանը բաժանված է եղել երկու վարչական միավորների՝ Արմենիա և Արևմտյան Արմենիա: Մանանդյանի կարծիքով Արմենիան ընկած պետք է լինի Տավրոսյան լեռների ու Վանա լճի հարավային կողմում, իսկ Արևմտյան Արմենիան՝ Արածանիի հովիտն ու Մշո դաշտը, մինչև Փոքր Հայք ու Սև ծով:

Քսենոփոնի նկարագրություններից երևում է, որ հունական զորքի անցած ճանապարհի երկայնքով այդ ժամանակ ապրելիս են եղել տասնյակ այլ ցեղեր, ազատ՝ Աքեմենյաններին տուրք տալու հարկադրանքից:

Հույն պատմիչին ամենից ավելի գրավել է արմենների բարեկեցիկ վիճակը, հակառակ Պարսկաստանի կողմից գանձվող մեծ տուրքերի: Հույները արմենների գյուղերը չթալանելու խոստումով վերցրել են պաշար, որքան անհրաժեշտ է եղել իրենց զորքի համար: Այն հավաստիացումից, թե ամեն տեղ հույներն արժանացել են բացառիկ հյուրասիրության, վայելել են առատ սեղաններ, չպետք է ենթադրել, թե այդ բոլորը եղել է ինքնաբուխ. վիթխարի թիվ կազմող մի բանակի հետ չէր հյուրընկալել, կերակրել, որքան էլ որ հայերը լինեին հյուրասեր, սրտաբաց, առատաձեռն ու մարդասեր:

Հենց Քսենոփոնը նկարագրում է թե ինչպես են խուժել մի հայկական գյուղ, ձերբակալել բոլոր գյուղացիներին, գյուղապետին, գրավել են 17 մտրուկ, որոնց մեծացնում էին որպես տուրք թագավորին: Գերել են գյուղապետի աղջկան, որն ընդամենը մեկ շաբաթ առաջ էր ամուսնացած եղել. ամուսինը՝ որսի գնացած լինելով՝ ազատվել էր այդ հարձակումից:

Նման արարքներից հետո, անշուշտ, բարի աչքով չէին կարող դիտվել անկոչ հյուրերը:

Քսենոփոնը հայերի տներն այսպես է նկարագրում. «Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր (հողի մեջ), մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եղներ, հավեր և սրանց ձագերը: Բոլոր անասունները ներսում կերակրվում էին խոտով: Այնտեղ կար նաև ցորեն և գարի և ընդեղեն և կրատերների մեջ գարուց պատրաստված գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ, կրատերների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկի: Ծարավելու դեպ-

քում մարդ պետք է այդ եղեգի ծայրը բերանին դներ ու ծծեր: Եվ այն չատ թունդ էր, եթե ջուր չխառնեին, իսկ սովոր մարդու համար չատ ախորժելի ըմպելիք էր»[1]:

Հույները յոթ օր մնացել են այդ գյուղում: «Զկար մի տեղ,- գրում է Քսենոփոնը,- ուր չդնեին սեղանին միաժամանակ գառան, ուլի, խոզի, հորթի և հավի միս, մեծ քանակությամբ ցորենի ու գարու հացի հետ: Ու եթե որևէ մեկը մտերմաբար ցանկանում էր խմել մյուսի կենացը, ապա նրան քարշ էր տալիս կրատերի մոտ և կռանալով՝ այնտեղից պետք է խմեր եզան նման ծծելով: Եվ գեղջավագին թույլ տվեցին վերցնելու այն, ինչ ցանկանում էր: Բայց նա ոչինչ չէր վերցնում, այլ երբ որևէ տեղ տեսնում էր իր տոհմակիցներից մեկն ու մեկին, նրան միշտ վերցնում էր իր հետ: Երբ եկան Խեյրիսոփոսի մոտ, սրանց ևս գտան խնջույքի մեջ, պսակված չոր խոտե պսակներով. նրանց սպասավորություն էին անում արմենների երեխաները՝ բարբարոսական զգեստներ հագած, իսկ երեխաներին նրանք նշաններով ցույց էին տալիս, ինչպես մունջերի, թե ինչ անել: Խեյրիսոփոսն ու Քսենոփոնը փոխադարձաբար իրար ողջունելուց հետո սկսեցին միասին հարցուփորձել գեղջավագին պարսկերեն խոսող թարգմանի միջոցով, թե այդ ի՞նչ երկիր էր: Նա ասաց թե Արմենիան է»[2]:

Քսենոփոնն հիշատակում է մի քանի տեսակ յուղ, որոնց թվում՝ քնջութ, դառն նշի և բևեկնի յուղ ու սրանցից պատրաստված անուշահոտ յուղ:

Յուրաքանչյուր գյուղ ունեցել է իր գյուղապետը:

Բնորոշ է, որ Քսենոփոնն իր ճանապարհին հանդիպել է միայն գյուղական վայրերի, չի եղել քաղաքներում: Դրանից էլ գիտնականները ենթադրում են, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանում դեռ չէին զարգացել քաղաքները, մանավանդ, որ սատրապն անգամ նստել է ոչ թե քաղաքում, այլ՝ մեծ գյուղում:

Արմենների տոհմապետները հենց այդ ժամանակներից դարձել են տոհմական իշխաններ, ինչպես նկատում է Մանանդյանը: Նա գրում է.

«Ընդունելով որ արմենների հասարակարգի հիմքը Աքեմենյան տիրապետության ժամանակ կազմում էր տոհմական կենցաղը, որի մեջ սկսվել էր արդեն որոշ բեկում, և, ի նկատի առնելով աղբյուրների տվյալներն արմենների բասիլևս-արքայի, ռազմաառաջնորդների և մեծաթիվ ու ընդհանուր աշխարհազորի մասին՝ կարելի է ըստ

---

[1] **Քսենոփոն,** *Անաբասիս, Երևան, 1970, էջ 97:*

[2] *Նույն տեղում, էջ 98:*

իս եզրակացնել, որ հին արմենները, ինչպես և 6–7-րդ դ. (մեր թ. հ.) հին սլավոնները, գտնվել են «ռազմական դեմոկրատիայի ընթացքում»[1]:

Ալթրն թեփեի պեղումների արդյունքները, մասնավորապես մառաններում պահված կարասների պարունակությունները ցույց են տալիս, որ Քսենոփոնի նկարագրած կենցաղը, առօրյա ապրուստը նույնն է եղել նաև Երզնկայում: Անգամ տներն իրենց գետնափոր կառուցվածքով հիշեցնում են Ալթրն թեփեի դամբարանների պատրաստման եղանակը:

* * *

Մ. թ. ա. 4-րդ դ. Աքեմենյան կայսրությունը աստիճանաբար թուլանում է: Սատրապներից յուրաքանչյուրը գլուխ է բարձրացնում և դառնում ինքնիշխան տեր իր ղեկավարած երկրամասի: Կենտրոնական իշխանությունը նույնիսկ հարկադրված է լինում պատերազմներ մղել նրանց դեմ:

Հույները, որ վաղուց ծրագրեր էին մշակել նվաճելու Աքեմենյան Պարսկաստանը, այն կարողացան իրագործել Ալեքսանդր Մակեդոնացու օրոք: Մակեդոնացին երեք մեծ ճակատամարտերից հետո, մղված 334–331 թթ., վերջնականապես հաղթում է Պարսկաստանին, քայքայում Դարեհ III-ի հզոր պետությունը:

Պարսկական տիրապետությունը փոխարինվում է հունական-մակեդոնական տիրապետությամբ: Այդ պետության կենտրոնը դառնում է Բաբելոնը:

Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո (մ. թ. ա. 323 թ.) նրա աշխարհակալական գրավումների Ասիական մասը ժառանգեց Սելևկոս զորավարը, որը դարձավ Սելևկյան պետության հիմնադիրը:

Ալեքսանդր Մակեդոնացու և սելևկյանների տիրապետությունը նկատելիորեն փոխեց Առաջավոր Ասիայի երկրների սոցիալ-տնտեսական պատկերը, առիթ տվեց տնտեսական և մշակութային արագ վերելքի: Այս շրջանում է, որ հելլենիստական քաղաքային մշակույթը արագորեն ներթափանցում է Արևելք, այդ թվում՝ Հայաստան, որտեղ տարածվում են հունական լեզուն, գրականությունը, գիտությունը, փիլիսոփայությունը, հետագայում նաև թատրոնը:

«Տեղական կուլտուրան այստեղ, որն ուներ հաբեթական-արմենական արմատներ և կրել էր նաև իրանական կուլտուրայի ազդեցությունը՝ արդեն այս հնագույն շրջանում սկսել էր ենթարկվել հելլե-

---

[1] **Հ. Մանանդյան,** *Երկեր, հատ. Ա, էջ 88:*

նիզմի ազդեցությանը, որն ավելի ու ավելի զորեղացավ հետագա դարերում: Հելլենական ազդեցությունը մեծ էր այստեղ, ամենից առաջ, տեղական իշխանավորների և բնակչության բարձր խավերի վրա: Փոքր Հայքի և Ծոփքի գահակալները հելլենացած էին իրենց կրթությամբ, գլխավորապես շնորհիվ սելևկյանների հետ ունեցած խնամիական կապերի: ... Հունարենն ամենուրեք սկսել էր գործածվել որպես պաշտոնական լեզու»[1]:

Այս գնահատականը նույնությամբ վերաբերում է Սատաղ–Երզնկա–Դերջան երկրամասերին, որոնք եղել են կրոնական, մշակութային ճանաչված կենտրոններ և այդ դերը պահել են հետագայում:

Եթե սրա վրա ավելացնենք նաև այն, որ սելևկյանների իշխանությունը Հայաստանում ավելի անվանական է եղել, քան տիրակալական և թե Մեծ Հայքը և թե Ծոփքը պահպանել էին իրենց ներքին ինքնավարությունը, ղեկավարվել տեղական իշխաններով, ապա պարզ կարող է դառնալ, թե անկախության համար ինչպիսի նախապայմաններ են գոյություն ունեցել սելևկյանների իշխանության թուլացման շրջանում, որը սկիզբ էր դնելու Արտաշեսյան հզոր դինաստիայի առաջացմանը:

Մ. թ. ա. 3-րդ դարի վերջերին աստիճանաբար տկարանում է սելևկյան իշխանությունը, նրա տիրապետության տակ գտնվող շատ երկրամասեր դառնում են ինքնիշխան: Սելևկյանները կորցնում են իրենց հնդկական նահանգները, ապա՝ ուրիշ տարածքներ:

Սելևկյանների դեմ դուրս են գալիս Պարթև Արշակունիները և Հռոմը, որոնք հետզհետե յուրացնում են այդ պետությունը:

Մագնեսիայի մոտ Անտիոքոս Մեծի պարտությունից հետո (մ. թ. ա. 190 թ.) հիմնադրվում են Արտաշեսյան և Զարեհյան հայկական թագավորությունները: Երկուսն էլ եղել են Անտիոքոսի զորավարները: Սրանցից առավել նշանավորը Արտաշեսի թագավորությունն էր Մեծ Հայքում, որը գնալով հզորացավ և դարձավ իր կամքը թելադրող պետություն:

Զարեհի տիրակալությունը տարածվել է հիմնականում Եկեղյաց գավառի վրա, այսինքն՝ Դերջան, Երզնկա, Կամախ շրջանում, կենտրոն ունենալով Երզնկան: Նրա տիրապետության տակ են եղել նաև Անտիտավրոսի կողմերի երկրամասերը:

«Փոքր Հայքը,- գրում է Ստրաբոնը,- բավական բերրի երկիր է: Ծոփաց նման, սա էլ ունեցել է միշտ իր բնիկ իշխանները, որոնք մերթ Մեծ Հայոց բարեկամ էին և մերթ ինքնագլուխ: Իրենց հնագանդ

---

[1] **Հ. Մանանդյան,** *Երկեր, հատ. Ա, էջ 114:*

էին Խաղտիք և Տիբարենները, այնպես որ իրենց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փառնակիա»[1]:

Սակայն հիմնական ուժը Արտաշեսյան Հայաստանն էր՝ Հյուսիսային Միջագետքից մինչև Կուր գետը և Ատրպատականից մինչև Ծոփք ու Փոքր Հայք: Մանանդյանը Արտաշեսյան անկախ և հզոր Հայաստանի կազմակերպումը համարում է սկիզբ Հին Հայաստանի պատմության նոր դարաշրջանի:

Իզուր չէ, որ մեզ հասած հայկական հնագույն էպոսի բեկորները վերաբերում են Արտաշեսյան շրջանի իրադարձություններին:

Մ. թ. ա. 2-րդ դ. Արտաշեսը հիմնել է Արտաշատ մայրաքաղաքը, որը հռոմեացիները համարել են «մեծ և խիստ գեղեցիկ քաղաք»:

Արտաշատի հիմնումը Արարատյան դաշտում,- ասում է Հ. Մանանդյանը,- կարելի է համարել Արտաշես I-ի կարևորագույն գործերից մեկը: Այս դաշտն այնուհետև դառավ Հայաստանի քաղաքական ու կուլտուրական միավորման կենտրոնը:

Հայաստանը աշխարհակալ հզոր պետություն դարձավ անչուշտ Տիգրան II-ի թագավորության շրջանում, սակայն դրա համար մեծ նախադրյալներ էր ստեղծել Արտաշեսյան դինաստիայի հիմնադիր Արտաշես I թագավորը: Երզնկան ծովածավալ Հայաստանի կրոնական կենտրոն պիտի դառնար Տիգրան II-ի օրոք, իր հռչակավոր մեհյաններով, որոնց թագն ու պսակն էր կազմում Անահիտ աստվածուհու տաճարի գերիշխան դիրքը:

2. ԵՐԶՆԿԱՆ ՏԻԳՐԱՆ II-Ի ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայոց թագավորներից ոչ մեկի անվան չուրջ այնքան լայն հետաքրքրություն չի ստեղծվել, այնքան շատ չի գրվել, որքան Տիգրան II-ի մասին:

Դա շատ բնական է: Տիգրանն իր աշխարհակալական նվաճումներով, տևական պատերազմներով, Հռոմեական հանրապետության հետ չափվելու համարձակությամբ Հայաստանը բարձրացրեց համաշխարհային ճանաչման, իր երկրին տվեց միջազգային կշիռ, որի հետ հաշվի էին նստում աշխարհի ամենահզոր պետությունները:

Նրա թագավորության շրջանը համարվում է հայ ժողովրդի պատմության ամենափայլուն էջը: Նրա անձով, կյանքի փառավոր և ողբերգական դրվագներով, նրա վարած պատերազմներով զբաղվել են հայ և օտար հարյուրավոր պատմաբաններ, գրողներ, երգահաններ, դրամատուրգներ, արվեստագետներ:

[1] **Ստրաբոն,** էջ 75:

Սույն գրքի ծրագրից դուրս է թե՛ այդ գրականության ծանոթացումը և թե՛ Տիգրան II-ի թագավորության պատմության թեկուզ համառոտ չարադրումը:

Բայց որովհետև Տիգրան Մեծի ներդրած հելլենիստական մշակույթն իր ոլորտի մեջ էր առել առաջին հերթին նաև Եկեղյաց գավառը Երիզա կենտրոնով, հեթանոսական մեհյանների ցանցով, այդ գավառին տվել այնպիսի կչիռ, որի նմանը չէր ունեցել անգամ մայրաքաղաք Տիգրանակերտը, հարկադրված ենք կանգ առնել Տիգրան II-ի գործունեության այն կողմերի վրա, որոնք կապված էին հելլենիստական մշակույթի Հայաստան ներթափանցելու հետ: Դրանք են, որ ապահովեցին Անահտական շրջանի փառքը, երբ Անահիտ աստվածուհու Երզնկայում կանգնեցված ոսկեձույլ ու չքեղ արձանն իր արծվային դիտարկման տակ էր պահում ամբողջ պատմական Հայաստանը և ամեն տարի Նավասարդյան տոների օրերին իրեն էր գրավում բազմահազար ուխտավորների կայսրության բոլոր ծայրերից, գրավում էր թագավորների, նախարարների, իշխանների, չինականների:

Տիգրան Մեծը գահ է բարձրացել մ. թ. ա. 95 թ.: Նրա առաջին գործերից մեկը եղել է Ծոփքի միացումը Մեծ Հայքին: Ապա միացրել է Եկեղյաց և Դարանաղյաց գավառները: Դրանից հետո վերագրավել է այն 70 հովիտները, որոնք զիջել էր պարթևներին՝ պատանդությունից ազատվելու համար:

Այնուհետև Հայաստանին է միացրել Ատրպատականը (Մարաստանը), Կորդուքը:

87 թ. կնքված հայ-պարթևական հաշտության դաշնագրով պարթևները հրաժարվել են Տիգրանի նվաճած երկրներից, ընդունել նրա գերիշխանությունը: Պարթև թագավորները հրաժարվել են «Արքայից արքա» տիտղոսից, որը դրանից հետո կրելու էր Տիգրանը, ապա կրելու էին նրա հաջորդները:

Տիգրան II-ի գրաված երկրները տարածվում էին Կասպից ծովից և Կուր գետից մինչև Եգիպտոսի սահմանները, Մարաստանի լեռներից մինչև Արևմտյան Եփրատի ափերը:

Այդ երկիրն այնքան լայնարձակ էր, որ Արտաշատ մայրաքաղաքն այլևս չէր կարող կենտրոն դառնալ ամբողջ կայսրության: Եվ նա մ. թ. ա. 80–70 թթ. կառուցում է Տիգրանակերտը, որը եղել է ժամանակի ամենից մեծ ու փարթամ մայրաքաղաքներից մեկը: Քաղաքն ունեցել է 300.000 բնակիչ, ամրակուռ պարիսպներ, չքեղ պալատներ, օժտված հարուստ պերճանքով, ոսկեձույլ քանդակներով, արձաններով: Ունեցել է թատրոն, աղոթատեղիներ:

Տիգրանն իր նվաճած երկրների ամբողջ հարստությունը օգտագործել է Հայաստանի կենտրոնական քաղաքների, մասնավորապես Տիգրանակերտի պերճանքին:

Բայց նա միայն նյութական հարստություն, գանձեր չի բերել: Բերել է տարբեր ազգությունների պատկանող արվեստագետներ, հմուտ վարպետներ, որոնք աշխատել են նրա կառույցների վրա՝ որպես ճարտարապետներ, նկարիչներ, քանդակագործներ:

Այս բոլորից բացի՝ կատարել է էթնիկական միավորումների ուժեղ և մեծ տեղաշարժեր: Տիգրանակերտ է բերել հույներ, նրանց տվել պաշտոններ: Իր պալատում պահել է հույն փիլիսոփաներ, գրողներ, պատմաբաններ, հռետորներ, որոնցից մի քանիսի անուններն անգամ հիշատակված ենք գտնում Պլուտարքոսի մոտ:

Նշված մարդիկ անշուշտ իրենց հետ Հայաստան էին բերելու հունական մշակույթ, ավանդույթներ, գիտություն, նաև՝ հունարեն լեզուն:

Եթե երկրի բնակչության բացարձակ մեծամասնությունը անհաղորդ էր գիտությանն ու գրականությանը, առհասարակ հունական մշակույթին, լեզվին, ապա իշխող դասը, պալատական խավը աստիճանաբար ընդգրկվում էր հելլենիստական մշակույթի տարբեր ոլորտներում, կարդում էր, հասկանում, ազդվում, գուցե և փորձում զարգացնել տեղական գրականություն՝ հունականի ազդեցությամբ:

Պլուտարքոսն հաղորդում է, որ Տիգրանակերտն ունեցել է թատրոն, որտեղ ներկայացումներ են տրվել հունարեն և դերասաններն էլ եղել են հույներ: Թատրոն է ունեցել նաև Արտավազդ II-ը՝ Արտաշատում: Պլուտարքոսը հիշատակում է Էվրիպիդեսի «Բաքոսուհիների» բեմադրությունը նրա այդ թատրոնում, դարձյալ հույն դերասանների կողմից: Վերջապես ինքը՝ Արտավազդն, էլ գրել է պիեսներ հունարեն լեզվով, սակայն դրանք մեզ չեն հասել[1]:

«Բոլոր այս փաստական տեղեկություններից,- գրում է Հ. Մանանդյանը,- որ վերաբերվում են Տիգրան II-ի վերանորոգչական գործունեությանը, կարելի է հետևցնել, որ ոչ միայն Կապադովկիայում և Պոնտոսում, այլև սրանց հարևան Հայաստանում հակադիր հոսանք էր սկսվել ընդդեմ տիրող իրանիզմի և հիմք էր դրվել հին կենցաղի հելլենականացման»[2]:

Հելլենականացման այս պրոցեսը չէր կարող իր ոլորտից դուրս թողնել վերնաշենքային այնպիսի մի բնագավառ, ինչպիսին հեթանո-

---

[1] **Г. Гоян,** Театр древней Армении, т. 1, Москва, 1952, стр. 79.

[2] **Հ. Մանանդյան,** *Երկեր, հատ. Ա, էջ 466:*

սական աստվածություններն էին, ստրկատիրական հասարակարգի պահպանման հենարանն ու բռունցքը:

Մշակութային մերձեցման հետ շաղկապված սկսվել է կրոնների մերձեցման շարժումը, հայ հեթանոսական աստվածների միաձուլումը հունական աստվածությունների հետ: Արամազդը համապատասխան է համարվել Զևսին, Միհրը՝ Հեփեստոսին, Անահիտը՝ Արտեմիսին, Նանեն՝ Աթենասին, Աստղիկը՝ Ափրոդիտեին, Տիրը՝ Ապոլոնին և Վահագնը՝ Հերակլեսին:

«Կրոնական այս ազդեցությունն այնքան զորեղ էր,- գրում է Մանանդյանը,- որ Տիգրան II-ի ժամանակ, ... հայկական մեհյաններում էին գետեղվել Հունաստանից և Փոքր Ասիայից բերված հունական աստվածների արձանները»[1]: Մովսես Խորենացու համաձայն, Երիզայում կանգնեցվել է Արտեմիսի արձանը[2]:

Անշուշտ հելլենիզմն սկսվել էր Տիգրանից առաջ, Արտաշեսյան դինաստիայի հիմնադիր Արտաշեսի օրոք և այդ ազդեցությունը կրողներից առաջիններն էին եղել Ծոփաց աշխարհը, Եկեղյաց գավառը, սակայն հելլենիզմը Հայաստանում ամուր արմատ գցեց Տիգրան II-ի օրոք:

Ե՞րբ են հունական աստվածների արձանները տեղափոխվել Հայաստան, ո՞վ է եղել դրանք տեղափոխողը: Այս հարցը մինչև այժմ էլ հստակ լուսաբանություն չի ստացել հայ ժողովրդի պատմությամբ զբաղվողների երկերում: Շատերը միմյանցից վերցնելով կրկնել են Խորենացու այն հավաստիացումը, թե Արտաշեսն է արձանները բերել Հայաստան, սակայն տեղ չհասած վախճանվել է, իսկ Տիգրանը դրանք կանգնեցրել է Հայաստանի տարբեր քաղաքներում: Բայց որովհետև Խորենացու մոտ միմյանց հետ չփոթվել են թե՛ Արտաշեսները և թե՛ Տիգրանները, Պատմահոր վկայությունը հիմնական աղբյուրը չի կարող հանդիսանալ:

Իրականն այն է, որ Անահիտ աստվածուհու համար ամենից հարմար վայր համարվել է Եկեղյաց գավառի կենտրոնը՝ Երզնկան, որտեղ էլ աստվածուհու համար կառուցվել է չքեղ տաճար:

Ավանդաբար պատմվում է, որ հեթանոսական մեհյաններից մի քանիսի կառուցումը Եկեղյաց գավառում և Դերջանում, կապված է եղել արձանները Հունաստանից Հայաստան բերող հույն քրմերի խորամանկ մի քայլի հետ: Նրանք, հասնելով Երզնկայի հովիտը, հիացել են նրա բնական դիրքով, բուսական և կենդանական աշխարհով,

---

[1] **Հ. Մանանդյան,** *նույն տեղում, էջ 175:*

[2] **Մովսես Խորենացի,** *Պատմություն Հայոց, Երևան, 1981, էջ 147, համմտ. էջ 229:*

կլիմայով, միաժամանակ սարսափած անծանոթ մի երկրի խորքերը թափանցելու երկյուղից, որոշել են մնալ այնտեղ և թագավորին խաբել են, թե աստվածներն են իրենց թելադրել այդ բանը:

Կարող է և իրական հիմք ունենալ այդ ավանդությունը, սակայն Տիգրան II-ի նման մի քաղաքագետի և ռազմագետի հեշտ չէր համոզել նման պատճառաբանություններով, եթե նա այդ վայրը ընտրելու համար չունենար ավելի հիմնավոր շարժառիթներ, որոնցից առաջինը Եկեղյաց գավառի պաշտամունքային կենտրոն լինելու փաստն էր հնագույն դարերից մինչև իր օրերը: Իսկ այդ մենաշնորհը պետք է բացատրել Եկեղյաց գավառի աշխարհագրական, բնական դիրքով, նաև սերնդից սերունդ եկող ավանդույթների դժվարհաղթահարելի զորությամբ:

Մեր աշխատության առաջին գլխում հիշատակել ենք, որ Երզնկայի ու նրա շրջակայքի բնակիչները հնագույն դարերից պաշտել են քաղաքի մոտակայքում գտնվող Սեպուհ լեռը, Երզնկայի մոտից հոսող Եփրատը և այլ գետեր: Դեռևս Հեթիթների օրոք Երզնկայում եղել է հեթանոսական տաճար: Ալթըն Թեփեի պեղումները ցույց տվեցին, որ Հայասայի կամ ուրարտացիների շրջանում ևս Երզնկայում գոյություն է ունեցել կրոնական տաճար, պաշտվել են աստվածներ, լինի դա Խալդի աստվածը, թե մի ուրիշը, որի պատվանդանը կանգուն է մնացել մինչև մեր օրերը:

Կար նաև մի այլ հանգամանք: Արձանները Հայաստան բերող հույն քրմերը պարտավոր էին հաշվի առնել ոչ միայն վերևում նշված նկատառումները, որոշել հեթանոսական տաճարների կառուցման տեղը նախկին աղոթատեղիների վայրում, այլև պարտավոր էին նկատի ունենալ հայերի կրոնական պաշտամունքի հետ կապված սովորությունները, ծեսերը, որոնց կենտրոններից մեկը նույնպես Եկեղյաց գավառն էր: Նրանք Արամազդի փոխարեն Զևսի արձանը կանգնեցնելով Հայաստանի որևէ վայրում, չէին կարող տեղական ժողովրդին պարտադրել պաշտամունքի այն բոլոր ձևերը, որոնք ընդունելի էին հույների մոտ:

Այս փաստի վրա ուշադրություն է դարձրել նաև Ղ. Ալիշանը, գրելով. «Ստրաբոն վկայե թե ինչ որ Պարսք կու պաշտեին՝ զնույն և Մարք և Հայք. իսկ երբ հունական կուռքերն ալ մտան ի Հայս, մերոնք ոչ իբրև նոր աստվածներ ընդունեցան, այլ իրենց ճանչցածներուն հարմարցուցին... վասնզի յուրաքանչյուր ազգ իր առանձին հայրենի կարծիքն և ախորժակը ուներ»[1]:

---

[1] **Ղ. Ալիշան,** *Հին հավատք կամ հեթանոսական կրոնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 353-354:*

Եվ այսպես, Տիգրան II-ը Անահիտի պաշտամունքի կենտրոնը դարձրել է Երզնկան, նրա համար կառուցված տաճարում կանգնեցրել ոսկեձույլ արձանը: Կա կարծիք, թե ինքն էլ որոշ ժամանակ վարել է քրմապետի պաշտոնը, որն ավելի մեծ շուք ու կշիռ պիտի տար սրբատեղիին:

Եկեղյաց գավառը և Դերջանը եղել են նաև այլ աստվածությունների կենտրոն: Նանե աստվածուհու տաճարը կառուցված է եղել պատմական Թիլ ավանում, Վահագնինը՝ Դերջանում:

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ԱՆԱՀՏԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆԸ ԱՆԱՀԻՏԻՑ ԱՌԱՋ

Անահտական պաշտամունքի 400 տարիները եղել են Երզնկայի փառքի շրջանը: Ոչ դրանից առաջ, ոչ դրանից հետո Երզնկան չի վայելել այն համընդհանուր ճանաչումը, որ վայելել է այդ դարերի ընթացքում, այսինքն՝ Տիգրան Մեծի գահակալության առաջին տարիներից մինչև հայերի քրիստոնեության ընդունումը:

Այդ ամբողջ ժամանակաշրջանում, ապրելով հանդերձ քաղաքական տարուբերումների, տևական պատերազմների ու սարսափի շրջաններ, մասնավորապես հռոմեական լեգեոնների արշավանքների ընթացքում, Երզնկան մնացել է հեթանոս Հայաստանի մտավոր ու կրոնական կենտրոնը:

Ոչ մի այլ աստվածություն, ոչ մի այլ հեթանոսական տաճար չի ունեցել այն հմայքը, որ ունեցել է Երզնկայի սրտում բազմած Անահիտ աստվածուհու ոսկյա արձանը ու նրա հովանավորած Անահտական տաճարը: Այդ հեղինակությունն այնքան է մեծ եղել, որ որոշ ժամանակ ամբողջ Եկեղյաց գավառը կոչվել է Անահտական գավառ:

Անահիտը համընդհանուր ճանաչման է արժանացել Մերձավոր Արևելքում: Նրա մասին իմացել են Արևմուտքում: Հռոմեական արշավանքների ժամանակ Անահիտի տաճարը պաշտպանելու համար Տիգրանի զորքին են միացել հարևան երկրների բանակները:

Այժմ տեսնենք, թե ինչ է ներկայացրել իրենից հայկական պանթեոնը Անահիտից առաջ, ինչպիսի աստվածություններ են պաշտել հայերը խոր անցյալում և մինչև Արտաշեսյան դինաստիայի հաստատումը:

Այս մասին լույս են տեսել տասնյակ գրքեր ու հոդվածներ ոչ միայն հայ հեղինակների, այլև օտարների կողմից գրված: Հիշենք

Ղ. Ալիշանի, Կ. Կոստանյանցի, Ն. Տաղավարյանի, Հ. Գելցերի, Ա. Կարիերի, Կ. Վ. Մելիք-Փաշայանի և այլոց ուսումնասիրությունները[1]:

Ի՞նչ են պաշտել հայերը հնագույն դարերում: Ինչպես Արևելքի շատ ժողովուրդներ, հայերի նախնիներն էլ խոր անցյալում պաշտել են բնության երևույթները՝ լեռները, գետերը, կրակը, կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներին: Հատկապես հայերի մոտ ուժեղ է եղել եզան պաշտամունքը: Հայերը եզը դիտել են որպես երկրագործական աշխատանքի խորհրդանիշ և նրա ուժի մեջ են տեսել իրենց դաշտային աշխատանքի հաջողությունների երաշխիքը: Այդ է պատճառը, որ քրիստոնեական դարերում անգամ՝ մինչև մեր օրերը, շատ տների դռան վերևի մասում ամրացված է եղել եզան գլուխ:

Բնության երևույթները, աշխատանքը, հերոսությունը մարմնավորող տարբեր աստվածություններ են ստեղծվել, նրանց համար կառուցվել տաճարներ:

Ակադեմիկոս Գր. Ղափանցյանը մի ամբողջ աշխատություն է գրել խեթական և հայկական աստվածությունների մասին, որտեղ ցույց է տալիս, թե խեթական որ աստվածություններն են անցել հայերին:

Տիրապետող պետությունները փորձել են իրենց կրոնը պարտադրել նաև հպատակ ժողովուրդներին: Պարսիկները կրակապաշտությունը պարտադրել են հայերին, այն էլ հրով ու սրով: Սակայն, դրանով հանդերձ, խոր անցյալում կրոնը այնպիսի գործոն չի եղել, ինչպես քրիստոնեության առաջին դարերում: Ուժեղ պետություններին առաջին հերթին հետաքրքրում էր հպատակ ժողովրդից վերցնել տուրք, զինվոր: Նրանք համաձայնվում էին անգամ, որ հպատակ պետություններն ունենան ձևական անկախություն, միայն թե ժամանակին վճարեն սահմանված բազմապիսի տուրքերը: Ուստի տարօրինակ պիտի չլիներ, որ ամեն մի երկրի ներսում նույնպես պաշտամունքի պարտադրանքը չենթարկվեր խստագույն օրենքների: Ասենք ուրարտացին Խալդի աստծուն պաշտելուն զուգընթաց՝ պաշտեր եզներ կամ ցուլեր, մանավանդ որ հազարավոր գյուղեր, մասնավորապես լեռնային շրջաններում, ապրում էին մեկուսացած պայմաններում, իշխող խավերի հետ գործ էին ունենում տուրքերի հավաքման, գանձման ժամանակ միայն:

---

[1] **Ղ. Ալիշան,** *Հին հավատք կամ հեթանոսական կրոնք Հայոց, Վենետիկ, 1895, 1910:* **Կ. Կոստանյանց,** *Հայոց հեթանոսական կրոնը, Վաղարշապատ, 1879:* **Ն. Տաղավարյան,** *Հայոց հին կրոնները, Կ. Պոլիս, 1909:* **Հ. Գելցեր,** *Հետազոտություն հայ դիցաբանության, Վենետիկ, 1897:* **Ա. Կարիեր,** *Հեթանոս Հայաստանի ութ մեհյաններն Ագաթանգեղոսի և Մովսիսի Խորենացվո համեմատ, Վիեննա, 1899:* **Կ. Վ. Մելիք-Փաշայան,** *Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963:*

Եթե անգամ ուշ քրիստոնեության դարերում Հայաստանում եղել են հեթանոսական հավատքին հետևողներ, ապա ինչ պիտի ասել հնագույն դարերի մասին:

Ուրարտուի թագավորության կործանումից հետո Աքեմենյան տիրապետության շրջանում հայերը մասամբ սկսում են պաշտել նույն այն աստվածներին, որոնք պաշտվել են պարսիկների կողմից: Այդ են վկայում Հայաստանի տարբեր վայրերում ատրուշանների գոյության, դրանց մի մասի հետքերի մինչև մեր օրերը հայտնաբերվելու, նաև մատենագրական փաստերը:

Հետագայում հելլենիզմի ազդեցությամբ է, որ հունական աստվածությունները փոխարինեցին հայկականին:

Բայց կրկնում ենք, ժողովուրդը միշտ էլ ազատ է զգացել պաշտելու ինչ որ ինքը ցանկացել է: Հետագա էջերում տեսնելու ենք, որ անգամ հեթանոսական, կրակապաշտական, ջրապաշտական շատ ծիսակատարություններ անցնելով քրիստոնեական հետապնդումների խստագույն դարերից, եկել հասել են մինչև մեր օրերը՝ բարեկենդանի, տյառնընդառաջի և այլ ժողովրդական սովորությունների միջոցով:

Մնացել են նաև Անահտական պաշտամունքի հետքեր:

2. ԱՆԱՀԻՏԻ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Որտեղի՞ց է եկել այս աստվածությունը Հայաստան, ինչպե՞ս է մեկնաբանվում Անահիտ անունը:

Ղ. Ալիշանը անդրադառնալով այս հարցերին, գրում է.

«Այլ ուստի» կամ «որ ազգե ծագումն, անհայտ. միայն հայտնի է, որ ամեն ազգե ավելի հայք էին անահտապաշտք, և ըստ Քրայցեր հմուտ դիցաբանի, հայոց Անահիտն է նախատիպ ամենայն Անահտաց, մինչ պարսից Նահիտն սոսկ ազատաց (իզետ) դասեն էր և ոչ աստված»[1]*:*

Բուն բառի ծագման մասին Հր. Աճառյանը գրում է. «ԱՆԱՀԻՏ, իգ. զնդ. Anahita, *հպրս.* Anahita, *պհլ.* Anahit, *պազ.* Anahit *ներ - կայացնում էր իգական մի աստվածություն... բուն նշանակությունն է «անբիծ», «անարատ» և կազմված է* an-*բացասականով՝* ahita *«պիղծ» «կեղտոտ» բառից*[2]*:*

---

[1] **Ղ. Ալիշան**, *Հին հավատք, էջ 265-266:*

[2] **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Երևան, 1942, էջ 146:*

Անկախ ստուգաբանական այս համեմատություններից, ինչպես վերևում էլ տեսանք, Անահիտը հայկական աստվածություն է, այնքան սիրված ու հարգված հայերի մոտ, որ հետագայում Անահիտի տաճարներ են կառուցվել պատմական Հայաստանի շատ գավառներում, միշտ Երզնկային վերապահելով իր գերակշիռ տեղը:

Ավելին. եթե առաջ լայն տարածում են ունեցել նաև մյուս աստվածությունները, ապա աստիճանաբար Անահիտը գրավել է մի մասի տեղը, փոխարինել նրանց: Գուցե միայն Աստղիկն է, որ որպես սիրո աստվածուհի, հայկական Ափրոդիտե, պահել է կախարդական ուժը մասնավորապես Մուշ ու Տարոն գավառներում, մինչ Վահագնի, Տիրի և այլ աստվածությունների ուժը վերագրվել է Անահիտին:

Հայերի կողմից Անահիտին տրված տիտղոսներն են՝ «Մեծն Անահիտ տիկին, ծնունդ մեծին արին Արամազդա, մայր ամենայն զգաստության», «Բարերար ամենայն մարդկան բնության», «փառք ազգիս մերո» և այլն:

Անահիտը համարվել է պտղաբերության, արգասավորության, բնության մարդկային ծիլարձակման ու զարթոնքի սկզբնաղբյուրը:

Ալիշանը, խոսելով Անահիտի մյուս արժանիքների մասին, գրում է. «Այս չնորհաց վրա կավելանան և խնամակալությունն, բարերարությունն և միով բանիվ կյանք և կեցուցիչ ըլլալն ազգին և երկրին»[1]:

Անահիտից մարդիկ խնդրել են առողջություն: Հայ թագավորները հիվանդանալիս հատուկ մարդ են ուղարկել Երզնկա՝ Անահիտից ապաքինում հայցելու:

Վերջապես՝ Անահիտը համարվել է զենքի ուժ տվող: Գրիգոր Տաթևացին գրում է, թե հայոց թագավոր Տրդատը նվերներ էր մատուցում այդ աստվածուհուն, որպեսզի հաղթի թշնամուն:

Անահիտի ռազմական ուժի ու կարողության արտահայտություններից մեկը պետք է համարել այն, որ փոքրասիական դրամների վրա նա պատկերված է նետ ու աղեղը ձեռքին, իսկ հայկական դրամներում՝ սաղավարտը գլխին[2]:

Անահիտը եղել է իրավունքի պաշտպան: Նրանից են մարդիկ հայցել արդարություն, անկողմնակալ վերաբերմունք:

Գուցե ոչ մի այլ աստծու չի տրվել այսքան պատիվ ու կարողություն:

Հայաստանում եղել են Անահտական աղբյուրներ, որոնց վերագրվել է բուժիչ զորություն: Ալիշանի վկայությամբ նման մի աղբյուր գոյություն է ունեցել Այրարատ նահանգում:

---

[1] **Ղ. Ալիշան**, *Հին հավատք, էջ 261:*

[2] **Կ. Վ. Մելիք-Փաշայան,** *Անահիտ դիցուհու պաշտամունքը, էջ 121:*

Հասարակական կյանքի վրա այսքան տիրակալորեն իշխող, արքաների, իշխանների համար անգամ հույս ու ապավեն դարձած մի աստվածուհի ունենալու էր անչուշտ իրեն արժանի շքեղ ու պերճ տաճարը, սպասավորների կազմը:

Թե ճարտարապետական ինչ ոճով է կառուցված եղել այդ տաճարը, որքան է ներդաշնակել տեղանքին, ինչ մեծություն ու մասնաշենքեր է ունեցել՝ հայտնի չէ, քանի որ հիմնահատակ կործանվել է և նրա տեղը քրիստոնեական սրբատեղիներ են կառուցվել:

Ագաթանգեղոսի մի հիշատակությունից իմանում ենք, որ տաճարն ունեցել է բարձր պարիսպներ, ինչպես ունեցել են նախաուրարտական և ուրարտական նման տաճարներն ու աշխարհիկ կառույցները: Ագաթանգեղոսը մեծ խանդավառությամբ նկարագրում է թե ինչպես Գրիգոր Լուսավորչի մարդիկ կատաղի պայքար մղելով տաճարը պաշտպանողների դեմ, կարողացել են բարձրաբերձ պարիսպները հողին հավասարեցնել:

Անահիտի բազմաթիվ արձաններից և ոչ մեկը մեզ չի հասել. և այդ՝ առաջին հերթին այն պատճառով, որ դրանք եղել են ոսկուց կամ ոսկեջրած և գրավել են ագահ հափշտակիչներին:

Երզնկայի մոտակայքում, Սատաղում գտնված արձանի գլուխը, որն այժմ պահվում է Բրիտանական թանգարանում, անչուշտ հեթանոսական աստվածություններից մեկի կիսանդրին է, գուցե Անահիտի, պատրաստված բրոնզից, սակայն այն չի կարող պատկերացում տալ Երզնկայի Անահտական մեհյանում կանգնեցված ոսկյա արձանի մասին:

Անահիտ աստվածուհու ոսկեձույլ արձանը ոչ թե եղել է կիսանդրի, ինչպես Սատաղում գտնվածն է, այլ ամբողջ հասակով կանգնած այնպիսի մի արձան, ինչպիսին հունական Ափրոդիտեի և Արտեմիսի արձաններն են: Դրա օգտին է խոսում հետևյալ փաստը: Երբ Անահիտի արձանը քանդող հռոմեացի զինվորներից մեկին, որը ի պատիվ Օգոստոս կայսեր խնջույք էր կազմակերպել, հարցնում են, թե ճի՞շտ է, որ Անահիտի վրա առաջինը ձեռք բարձրացնողը տեղն ու տեղը պատժվել է աստվածուհու կողմից, զինվորը ծիծաղել է և ասել, թե այդպիսի բան չի եղել, թե ինքն է առաջինը քանդել արձանը և նրա սրունքի ոսկուց է, որ պատրաստել է այդ ճաշկերույթը[1]:

Անկախ այն բանից, որ սա ավանդություն է, պետք է հաշվի առնել, որ ամեն մի ավանդություն ունի իրական հիմք: Երբ խոսվում է

---

[1] *«Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հատ. 1, Երևան, 1981, էջ 421-422:*

Անահիտի արձանի սրունքների մասին, պարզ է որ ամբողջ հասակով մեկ կանգնեցված կոթող է եղել, որը միայն կարող էր լեռնային այդ տեղանքում հնչել վեհորեն և շրջապատի վրա տպավորություն թողնել. էլ չենք ասում, որ պետք է նաև անհրաժեշտ մեծություն ունենար:

Այլ բան է, որ Անահիտի արձանի դիմագծային հատկանիշները կարող էին նման լինել Սատաղում գտնված արձանին, որի մասին խոսել են, գրել շատերը:

Ոմանց կարծիքով արձանի գլխավերևը պատած կլոր շրջանակը վկայում է, որ այն զարդարված պիտի լիներ հատուկ թագով: Գանգուր մազերից մի փունջ իջել է ճակատին, երկու կողմից կազմել կիսալուսնային կլոր գծեր: Աչքերի տեղ տեսնվում են փոսիկներ, որոնք վկայում են, որ առաջ այդ խոռոչներում եղել են թանկագին քարեր, սակայն գողացվել են: Որ մարդկային չարագործ ձեռքը դիպել է կիսանդրիին, ցույց են տալիս մուրճի հարվածի տեղերը, որոնք նկատվում են գլխամասում:

Այսպես թե այնպես Սատաղում գտնված արձանը արժանի է հատուկ հետաքրքրության և արդեն մի տեսակ սիմվոլ է դարձել խոր անցյալի հայ արձանագործական արվեստի: Նրա տուփե տարբերակն այժմ գետեղված է Նոր Երզնկայի աղբյուր-հուշարձանի գլխամասում:

Անահիտի հեթանոսական տաճարն ունեցել է մեծ թվով ծառայողներ՝ քրմեր, քրմապետներ, ծիսակատարությունները կազմակերպողներ ու ղեկավարներ, ներքինացված բազմաթիվ ծառայողներ, արհեստավորներ, ձեռքի աշխատողներ և այլն:

Արդ՝ ի՞նչ եկամուտ է ունեցել տաճարը, ում հաշվին են ապրել բազմահազար այդ մարդիկ: Հիմնականը տաճարի սեփականությունը եղող կալվածների եկամուտներն էին անչուշտ, կալվածներ, որոնցում աշխատել են մեծ թվով ստրուկներ: Հենց այն հանգամանքը, որ ամբողջ գավառը կոչվել է Անահտական, պետք է ենթադրել, որ Եկեղյաց գավառի հիմնական մասը, գոնե Երզնկայի հովիտը գտնվել է կրոնական այդ հաստատության իրավասության տակ և ամբողջ եկամուտը լցվել է տաճարի մառանները:

Նվազ եկամուտ չեն բերել նվիրատվությունները: Դա սովորական նվիրատվություն չի եղել, բարեգործական օգնության բնույթ չի կրել, այլ եղել է յուրահատուկ տուրք այն աստվածուհուն, որին երկրպագել են ամբողջ Հայաստանում, որին պարտական էին համարում իրենց հաջողությունները երկրի թագավորները, իշխանները, զորա-

հրամանատարները: Ամեն մի բերքահավաքից, պատերազմից հետո Անահիտ աստվածուհին ստացել է իր բաժինը:

Բազմահազար մարդիկ, այս կամ այն առիթով դիմելով Անահիտի օգնությանը, հաջողության, հիվանդության բուժման համար իրենց չնորհակալություններն հայտնում էին նվիրատվություններով: Հնարավոր է, որ նույնիսկ նրանից գոհացում չստացողները նվերներ տային, չնորհակալություն հայտնեին, ինչպես այդ տեսնում ենք հունական աստվածություններում:

Հարգանքի, սիրո հետ միասին եղել է աստվածներից պատժվելու սարսափը: Դրա արտահայտություններից մեկը պիտի համարել այն, որ Երզնկայի հովտում ազատ, համարձակ արածելիս են եղել Անահիտի տաճարի սեփականությունը համարվող երինջները, որոնց ճակատին դրոշմված է եղել աստվածուհուն խորհրդանշող դրոշմը: Մարդիկ ձեռք չեն տվել այդ երինջներին ոչ միայն վախենալով բռնվելուց ու պատժվելուց, այլև այն բանից, որ անասունները համարվել են սուրբ, հետևաբար՝ հանցագործություն է համարվել նաև նրանց ձեռք տալը:

Հիշյալ երինջները տոնախմբությունների օրերին զոհաբերվել են աստվածուհուն: Անչուշտ առատորեն վայելել են նաև քրմական դասին պատկանող մարդիկ և տաճարական մյուս պաշտոնյաները:

Նախապաշարումների այդ դարաշրջաններում ժողովուրդը հավատացել է ամեն բանի, վախեցել քրմերի ցասումից, աստվածուհու պատուհասումից:

Մեզ հասել է հռոմեական արշավանքների օրերից երկու ավանդություն: Քանի որ երկուսն էլ վերաբերում են Երզնկայի հովտին, ավելորդ չենք համարում հիշել:

Պատմվում է, որ Հայաստան արշավող հռոմեացի զորավար Պոմպեոսը երբ հասել է Երզնկա, ոչ միայն չի վնասել աստվածուհու տաճարին, այլև նվերներ է մատուցել նրան, որպեսզի գործը հաջող ընթանա: Իսկ Պոմպեոսի բանակը երբ հասել է Եփրատի ափին, գետը այդ օրը վարարած է եղել. գիշերել է գետափին: Հաջորդ օրը նկատվել է ջրի բնական իջեցում: Միամիտ ու սնոտիապաշտ ժողովրդին համոզել են, թե սրբազան գետը նույնպես համաձայն է հռոմեական բանակի արշավանքին և խոնարհվելով նրա առաջ՝ ճանապարհ է տալիս՝ ջրերի իջեցումով:

Մի ավանդություն էլ կապված է Լուկուլլոսի հետ: Երբ նրա բանակները եկել են Երզնկայի հովիտը, և ցանկացել են մատաղ անել աստվածներին, նկատել են քարաժայռին կանգնած մի երինջ, որն իբր թե գլուխը խոնարհեցրել է ցած:

Լուկուլլոսի մարդիկ այդ բացատրել են հետևյալ կերպ. երինջը գլուխ է խոնարհեցրել Լուկուլլոսի առաջ և հայտնել պատրաստակամությունը՝ զոհաբերվելու հաղթող Հռոմին: Հասկանալի է, որ դա պիտի հանդիսանար ազդանշան՝ ազատորեն մորթելու հարյուրավոր երինջներ:

3. ԱՆԱՀԻՏԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մի պահ երևակայությամբ տեղափոխվենք երկու հազար տարի առաջվա Երզնկայի հովիտը, և տեսնենք թե ինչպես էին կատարվում Անահտական տոնակատարությունները, կրոնական ու աշխարհիկ ծիսակատարությունները, ովքեր էին մասնակցում հանդեսներին, ինչպիսի ընդգրկում ունեին դրանք:

Մատենագրական տեղեկությունները չատ ժլատ են, բայց քանի որ նման տոնակատարություններ կատարվում էին նաև Հունաստանում, իսկ դրանց բավականաչափ մանրամասն նկարագրությունները հասել են մեզ, մյուս կողմից, քանի որ այդ ծիսակատարությունների մի մասը հայ ժողովուրդը իր հետ բերել հասցրել է մինչև մեր օրերը, որոշ գաղափար կարող ենք տալ:

Արարողությունների առանցքը եղել է քրմապետը, ժամանակի հոգևոր պետը, աստվածուհու պատգամախոսը: Նրա ամեն մի խոսքը ընկալվել է որպես աստվածուհու պատգամը:

Պատմությունից հայտնի է, թե քրմերն ու քրմապետները ինչպիսի մեծ դեր են կատարել հին Եգիպտոսում, Ասորեստանում, հաճախ իրենց ձեռքը վերցնելով երկրի ճակատագիրը: Աստվածների անունից պատգամող քրմերը երկրի ղեկը հանձնել են ցանկացած մարդկանց, իրենց հակառակորդներին զոհ դարձրել պալատական սադրանքների, խլել նրանց կյանքը: Նրանք ունեցել են մեծ հարստություն, անսահման կալվածներ, վայելել են առաջին գիշերվա իրավունքը: Նրանց ձեռքին է եղել ժամանակի գիտության, մումիաների պատրաստման լուծույթների բաղադրության որոշման գաղտնիքը, երկրաչափական, թվաբանական գիտությունների ուսմունքը:

Նրանք իմացել են արևի խավարման ժամանակը, այն օգտագործել ժողովրդի վրա իրենց ազդեցությունն ուժեղացնելու համար:

Փարավոնները, թագավորները, հաճախ հանձին քրմերի տեսնելով լուրջ մրցորդներ, աշխատել են չեզոքացնել նրանց ազդեցությունը. դրա միջոցներից մեկն են համարել իրենց տոհմից մեկնումեկին քրմ-

մապետ դարձնելը, հաճախ էլ իրենք՝ թագավորներն են վարել քրմապետի պաշտոնը, այսպիսով պահելով բացարձակ գերիշխանություն երկրի վրա: Կա վկայություն, որ Տիգրան II-ը նույնպես վարել է քրմապետի պաշտոն: Նույնն ասվում է նաև Տրդատ I թագավորի մասին:

Անահիտի տաճարում կատարված ծիսակատարությունների մասին ստեղծվել է մեծ գրականություն, բայց այդ գրականությունը շատ ավելի բանավիճային բնույթ ունի. ասենք այն, թե խրախճանքները կրե՞լ են անբարոյական բնույթ թե ոչ, քան տրվում է հանդեսների իրական պատկերը:

Ղ. Ալիշանը գրում է Անահիտի տաճարում կատարված տոնակատարությունների մասին. «Քրմապետն՝ թագավորակերպ հագված՝ խույր ի գլուխ, կառաջնորդեր քրմաց և բազմաթիվ ուխտավորաց, Անահտա կուռքը վերցնելով՝ թափորակերպ մեհենին շուրջը պտրտեին, աղոթանման երգելով. հետո աշխարհական հանդեսք պարք՝ ամենայն սարովք կատարվեին, զգեստնին ալ փոխելով ի ձև սակաց, անխտիր տյարք և ծառայք և երբ կերուխումն այլ հաջորդեր, ի հարկե հեթանոսական անկարգությունք ալ կլլային»[1]:

Ալիշանը զուսպ է արտահայտվում, չի օգտագործում լկտիություն, պոռնկություն բառերը, որի համար քննադատվել է մի այլ մխիթարյանի՝ Ա. Մատիկյանի կողմից: Վերջինս հենվելով Ստրաբոնի վկայության վրա, ծիսակատարությունները համարում է անպարկեշտ, լկտի:

Բայց քանի որ Անահտական տաճարի տոնակատարությունների առաջին նկարագրությունը թողել է Ստրաբոնը, ծանոթանանք նրա վկայությանը.

«Պարսից բոլոր աստվածությունները պաշտվում են նաև Մարաց և հայոց կողմից. բայց Անահիտի պաշտամունքը հայոց մեջ գերազանցում է բոլորից. զանազան տեղեր նրա անվան տաճարներն են կանգնեցրած և հատկապես Եկեղիքում: Նշանակել են այդ տեղերում ստրուկներ և ստրկուհիներ. այս բոլորը զարմանալի չէ, այլ այն, որ ժողովրդի ամենանշանավոր մարդիկը իրենց կույս աղջիկներին նվիրաբերում են աստվածուհուն և նրանք ըստ օրինի երկար ժամանակ պոռնկում են աստվածուհու համար, որից հետո ամուսնանում են, և ոչ ոք անվայել չի համարում կենակցել նրանց հետ»[2]:

---

[1] **Ղ. Ալիշան,** *Հին հավատք, էջ 269-270:*

[2] **Ստրաբոն,** *էջ 67:*

Քրիստոնեական եկեղեցին հեթանոսական կրոնի դեմ մղած պայքարի մոլեգնության մեջ աշխատել է ամեն կերպ փոխել Ստրաբոնի վկայության բովանդակությունը, կույսերի այդ անձնատվությունը ներկայացնել որպես անբարոյականություն, մինչդեռ պատկերը միանգամայն հակառակն է եղել: Հենց այդ սեռական մերձեցումը եղել է բարոյականության, ամուսնական հավատարմության, ընտանիքի կապի, հասարակության համար պիտանի անհատներ պատրաստելու խորհրդանիշ: Այլապես շատ տարօրինակ պիտի լիներ այն գնահատականը, որ Տրդատ III թագավորը տվել է Անահիտին, նրան համարելով «մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան, և ծնունդ է մեծին արին Արամազդայ»[1]:

Ուրեմն՝ ոչ թե անբարոյականության, այլ զգաստության, մաքրության գաղափարն է մարմնավորել Անահիտ աստվածուհին, այլապես նա այդքան մեծ ազդեցություն չէր կարող թողնել թե ամբողջ Հայաստանի և թե հարևան երկրների վրա և անգամ Հռոմեական կայսրության մայրաքաղաքում նրա մասին չէին խոսի նրա ուժի գիտակցությամբ, ինչպես տեսանք նախորդ էջերում:

Ստրաբոնի վկայության ուշադիր քննումն էլ ցույց է տալիս, որ Անահիտի տաճարում կատարված երկու սեռերի փոխադարձ մերձեցումը տարբեր է եղել սովորական սիրաբանությունից ու սանձարձակությունից: Նախ՝ Ստրաբոնն ասում է, թե աղջիկներն ազատ են եղել ընտրելու իրենց սիրածին, որոնց անգամ նվերներ են տվել, հետո այդ մերձեցումը եղել է նրանց բարձրաստիճան ծնողների համաձայնությամբ: Կնշանակի, այդ աղջիկների ծնողները նրանց մինչ այդ պահել են կույս վիճակում, հսկողության տակ, և ամուսնացրել միայն Անահիտի տաճարում հանդիսավոր ծիսակատարությունից հետո, սրբագործված ամուսնական մի կապ, որից հետո զույգերը ոչ թե շարունակելու էին ազատ վարքը, այլ կապված պիտի մնային ամուսնական կյանքով: Անգամ Ալիշանը, որ իր վարդապետական կոչումին տուրք տալով «անկարգություն» է որակել Անահիտի տաճարի շրջապատում կատարվածը, գրում է. «Եւ զայս սրբազան իմն համարելով՝ հետո կու հարսնացնեին զանոնք... թեպետև հետո, կըսեն, շատ պարկեշտությամբ կապրեին այդ նվիրյալք»:

Տարակույսից վեր է, որ արբունքի հասած աղջիկների այդ անձնատվությունը իրենց նախընտրած տղամարդկանց, նշանավորել է բազմակնությունից դեպի միամուսնությունը անցման մի շրջան, երբ

[1] «Ագաթանգեղեայ պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, էջ 31:

կինը ազատ է եղել սիրային կապերով կապվելու մեկի հետ և ոչ թե հլու կամակատարությամբ ենթարկվելու պատահած տղամարդուն:

Ահա թե ինչ է գրում Ֆ. Էնգելսը Անահտական այդ մերձեցումների մասին. «Առաջավոր Ասիայի ուրիշ ժողովուրդներն իրենց աղջիկներին տարիներ շարունակ Անահիտի տաճարն էին ուղարկում, որտեղ նրանք պետք է նախքան ամուսնանալու իրավունք ձեռք բերելը, իրենց ընտրած սիրեկանների հետ ազատ սեր վայելեին»[1]:

Միանգամայն իրավացի է Կ. Մելիք-Փաշայանը, երբ գտնում է, որ Անահիտի տաճարում կատավող երկու սեռերի այդ մերձեցումները բխում էին «Անահիտի որպես պտղաբերության, արգասավորության աստվածուհու պաշտամունքի ներքին էությունից»[2]:

Անահիտի տոնակատարությունները կատարվել են տարվա մեջ երկու անգամ, ապրիլի 6-ին և օգոստոսի 15-ին: Վերջինս, որ Նավասարդյան հայտնի տոնակատարությունն է, կատարվել է մեծ շուքով և կրել է համաժողովրդական բնույթ:

Նավասարդյան տոնակատարությունները, բացի կրոնագովաբանական բաժնից, որի մասին խոսվեց վերևում, ունեցել է ժողովրդական խաղերի, զվարճությունների ճոխ բաժին: Կատարվել են թատերականացված կրոնապաշտամունքային, մնջկատակային խաղեր, երգեր ու արտասանություններ, դյուցազնական վիպերգությունների կատարումներ, լարախաղացային ցուցադրություններ, վարձակների պարեր, մարմնամարզական մրցույթներ, որոնցում հաղթողները ստացել են նվերներ, արժանացել են դափնեպսակների:

Հայ մանրանկարչական արվեստում և պեղումներից հայտնաբերված նյութական մշակույթի նմուշների մեջ հանդիպում ենք նկատելի թվով արվեստի գործերի, որոնք վերաբերում են հեթանոսական այդ պաշտամունքներին, մասնավորապես Անահիտի տաճարում կատարված զվարճություններին: Դրանցից են պարուհիների՝ վարձակների կերպարները միջնադարյան հայ մանրանկարչության մեջ, մնջկատակի վարպետների արձանիկները և այլն, որոնցից բազմաթիվ նըմուշներ տպագրված են Գ. Գոյանի «Հին Հայաստանի թատրոնը» ռուսերեն գրքում:

Այդ խաղերի, ծիսակատարությունների զգալի մասը նույնությամբ պահպանվել է ժողովրդի մոտ մինչև մեր օրերը, ինչպես պիտի տեսնենք ստորև:

---

[1] **Ֆ. Էնգելս,** *Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1940, էջ 63:*

[2] **Կ. Վ. Մելիք-Փաշայան,** *նշվ. աշխ., էջ 54:*

4. ԱՆԱՀԻՏԻ ՏԱՃԱՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Նկարագրեցինք Երզնկայի փառքի շրջանը՝ կապված Անահիտի պաշտամունքի հետ: Անչուշտ չորս դարերի երկար այդ ժամանակաշրջանը չի եղել հաշտ ու խաղաղ տարիների մի շղթա: Տևական պատերազմները, մասնավորապես հռոմեական լեգեոնների միմյանց հաջորդող արշավանքները հաճախ են մթագնել Երզնկայի պայծառ հորիզոնը և նրա պաշտպան աստվածուհու դեմքը:

Հռոմեական զորավարներից մի քանիսի արշավանքի ուղու մեջ չի մտել Եկեղյաց գավառի ճանապարհը: Մյուսներն անցել են Երզնկայով, ինչպես Լուկուլլոսը, Պոմպեոսը, Մարկոս Անտոնիոսը, բայց միևնույնն է, ամեն մի արշավանքի տնտեսական ու քաղաքական հետևանքներն իրենց զգացնել են տվել Երզնկայում:

Լուկուլլոսը, Պոմպեոսը թալանել են երկիրը, վերցրել են ինչ որ հարկավոր է եղել իրենց զորքի ու փառքի համար, իսկ Մարկոս Անտոնիոսը ամենավայրագ միջոցներով քարուքանդ է արել այդ հոյակապ տաճարը:

Մ. թ. ա. 34 թ. գարնանը Անտոնիոսը Փոքր Հայքի վրայով ներխուժել է Հայաստան: Ձերբակալել է Տիգրանի որդի Արտավազդ II-ին: Նվաճել է Հայաստանը, անխնա կողոպտել ինչ որ հանդիպել է: Իսկ ինչը կարող էր ամենից ավելի գրգռել ագահ և գոռոզ զորավարի ախորժակը, քան Անահիտի տաճարի անթիվ գանձերը և հենց Անահիտ աստվածուհու ոսկեձույլ հսկա արձանը: Եվ նա հրամայել է քանդել այդ արձանը, ոսկին հանձնել իրեն: Նա այդ ոսկու որոշ մասը բաժանել է իր զորավարներին, մնացածը վերցրած հետը՝ տարել է Եգիպտոս: Տարել է նաև Արտավազդին, նրա կնոջը, որդիներին՝ Տիգրանին ու կրտսեր Արտավազդին:

Անտոնիոսը ի պատիվ Հայաստանում տարած հաղթանակի՝ Ալեքսանդրիայում կազմակերպել է մեծ չքահանդես: Շքերթի ընթացքում Կլեոպատրան, որի պատվին էր կազմակերպվել չքերթը, նստած ոսկեհուռ գահավորակի վրա, դիտել է ոսկե շղթաների մեջ առնված Արտավազդի անցնելը:

Ասվում է, թե Արտավազդին և նրա ընտանիքի անդամներին խոստացվել է ազատություն, եթե նրանք Կլեոպատրայի առջևից անցնելիս նրան անվանեին «թագուհի թագուհյաց», սակայն Արտավազդը գերադասելով մահը ստրկությունից մերժել է այդ առաջարկը և անցել է հպարտ ու արհամարհական արտահայտությամբ:

«Հայերը,- գրել է Դիոն Կասսիոսը,- ցույց տվեցին իրենց հոգու վեհությունը և փառավոր անվան արժանացան»:

Անտոնիոսը կտրել է տվել նաև դրամներ, որոնց վրա դրոշմված են եղել իր ու Կլեոպատրայի պատկերները՝ «Հայաստանը նվաճված» մակագրությամբ: 31 թ. սեպտեմբերին Կլեոպատրայի հրամանով Արտավազդը ենթարկվել է մահապատժի, իսկ նրա կնոջն ու որդիներին Օկտավիանոսը տարել է Հռոմ: Հետագա մի քանի տարիների պատերազմներն խապառ թուլացրել են Արտաշեսյան թագավորությունը: Տիգրան III-ի թագավոր նշանակվելը Հռոմի կողմից անցել է ապարդյուն: Նրան էլ հաջորդել է Տիգրան IV-ը: Բայց նա էլ սպանվել է կովկասյան լեռնականների դեմ մղված պատերազմներում: Դրանով էլ, որ տեղի է ունեցել մ. թ. 1 թ., ավարտվում է Արտաշեսյան դինաստիան:

Անահիտի տաճարը, սակայն, չի վերացել Երզնկայի հովտից: Հայերը կրկին նույնպիսի ոսկյա արձան են կանգնեցրել իրենց սիրելի աստվածուհուն, շարունակել են Նավասարդյան տոները այնքան ժամանակ, մինչև որ Գրիգոր Լուսավորիչը քանդել է Անահիտ աստվածուհու հոյակապ տաճարը:

Հեչտ չի կատարվել այս ամենը: Ագաթանգեղոսի և այլ մատենագիրների վկայություններից երևում է, որ Անահիտի տաճարի պաշտպանները արյան գնով աշխատել են փրկել իրենց ունեցվածքը: Գրիգոր Լուսավորչի կողմնակիցները մի ամբողջ տեսություն են հրապարակ հանել՝ այդ վերափոխումն արդարացնելու համար: Նրանք դիմադրություն ցույց տվողներին համարել են սատանաների ներկայացուցիչներ, չարի պաշտոնյաներ:

Քրիստոնեության առաջին դարերում ստեղծվել է այն ավանդությունը, թե Գրիգոր Լուսավորիչը իբր թե այդ սատանաներին բռնել է, լցրել քարայրների մեջ, փակել դռները, մի մասին էլ թափել է Եփրատ գետը:

Բարեբախտաբար մեր մատենագիրները մեջ են բերել նաև հեթանոսական կրոնի պաշտպանների փաստարկումները: Ուշագրավ է Տրդատի և Գրիգոր Լուսավորչի երկխոսությունը, որ մեջ է բերում Ագաթանգեղոսը: Տրդատը ամեն կերպ փաստարկում է հեթանոսական կրոնի, Անահիտ աստվածուհու բարեմասնությունները, նրան համարում հայ ազգի փառքը, մի աստվածուհի, որին պատվում են բոլորը, մանավանդ Հռոմի թագավորը, Անահիտին, «որ է մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան»[1]:

---

[1] **Ագաթանգեղոս,** էջ 31:

Մեր կատարած վերջին մեջբերումից երևում է, որ սատանա ներկայացված անձնավորությունը եղել է Անահիտի տաճարի քրմապետը կամ քրմերից մեկնումեկը, քանի որ ասել է, թե եթե Գրիգորի կողմնակիցները երկրպագեն Անահիտին, նա կխնդրի նրա ներողամտությունը:

Ուրեմն այդ օրերին զուգահեռ հանդես են եկել մի կողմից հեթանոսական կրոնի պաշտոնյաներն իրենց փաստարկումներով, մյուս կողմից՝ քրիստոնեություն քարոզողները:

Եվ եթե գաղափարական այդ պայքարում հաղթողներ են դուրս բերված հեթանոսության դեմ մարտնչողները, ապա դրանում պետք է որոնել սոցիալական այն ուժեղ հակամարտությունները, որոնք գոյություն են ունեցել երկրում:

Զպետք է կարծել, թե Անահիտի տաճարը և նրա աստվածության գաղափարը պաշտպանողները հասարակ մարդիկ էին: Պաշտպանում էր իշխող խավը՝ քրմական դասը, որ դրանով պաշտպանում էր իր կալվածները, հարստությունը, կուտակված բազմահազար ստրուկների ծանր աշխատանքի արդյունքով:

Քրիստոնեություն քարոզողները հանդես էին գալիս ճնշվածների, տուժածների անունից, քարոզում էին հավասարություն: Ինչպես Հռոմում, այստեղ էլ ստրուկների մի ամբողջ բանակ դուրս էր գալու հեթանոսության դեմ այն հույսով, որ հետագայում էլ այլևս իրեն չահագործողներ պիտի չլինեն:

5. ԱՆԱՀՏԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ ՀԵՏԱԳԱ ԴԱՐԵՐՈՒՄ

Քանդվեցին հեթանոսական տաճարները, այդ թվում՝ Անահիտի տաճարը, բայց հեշտ չէր հազարամյակների ընթացքում մարդկանց հոգու խորքում կառուցված պաշտամունքի տաճարները քանդել: Անգամ շատ դարեր անց Անահիտի տոնից որոշ տարրեր պահպանվել են:

Հին կրոնն ուներ մարդկանց գրավելու շատ կողմեր: Դա ամենից առաջ արտահայտվում էր աշխարհիկ զգացողության անկաշկանդ ազատությամբ: Քրիստոնեությունը բնության, արևի, լույսի, մարմնի գովաբանությանը հակադրում էր հոգու փրկությունը, ապառնի, նույնիսկ որոշ առումով անըմբռնելի մի խոստում, որն այնքան էլ հասկանալի չէր, մանավանդ որ նորի անցումը կատարվելու էր մարմնական ամեն մի զրկանքի հաշվին: Այդ անցումը դժվար էր նաև

իշխող խավի համար, որը սովոր էր վայելել ամեն բարիք, իր օրերն անցկացնել զվարճությունների մեջ:

Դժվար էր նաև բնության ծոցում մեծացած, նրա հետ ձուլված, նրանից ապրուստի միջոցներ ստացող աշխատավոր ժողովրդի համար:

Դա էլ բանալին է այն իրողության, որ չնայած 1500 տարի է անցել այն օրերից, երբ Գրիգոր Լուսավորիչը կանգնած Անահիտի մեհյանի առաջ հրամայում էր քարուքանդ անել այդ և նման մյուս տաճարները, դրանց տեղը կառուցել քրիստոնեական եկեղեցիներ, վանքեր, աղոթատեղիներ, մինչև մեր օրերը մարդիկ պահել են հեթանոսական ծիսակատարություններից շատ բան:

Ծանոթանանք դրանցից մի քանիսին:

Այժմ բոլոր բանասերները համաձայն են այն բանում, որ Վարդավառի տոնը զուտ հեթանոսական ժամանակներից մնացած երևույթ է և կապ չունի քրիստոնեական միստիցիզմի հետ:

Ինչպես Անահիտին նվիրված Նավասարդյան տոնը, Վարդավառն էլ կատարվել է ամռանը, բերքահավաքի օրերին, երբ մի քանի օր մարդիկ նշել են Աստծո, հին հասկացողությամբ աստվածների կողմից իրենց տրված բարիքների տոնը՝ հատուկ ծիսակատարություններով:

Վարդավառը նշվել է և այժմ էլ նշվում է Հայաստանի բոլոր գավառներում, սակայն մինչև Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը հատուկ շուքով է նշվել Երզնկայի, Մուշի, Տարոնի վանքերի շրջապատում: Հայաստանի շատ կողմերից սայլերով, գրաստներով, ձիերով դիմել են դեպի այդ վայրերը, մի քանի օր վայելել բնության մեջ լինելու ազատությունը:

«Մատաղներ կը զոհեն,- կարդում ենք Վարդավառի նկարագրություններից մեկում,- մաքի, երինջ, գառնուկ և աղավնի: Մատաղցուներու պարանոցեն կը կախեն բոժոժներ, եղջյուրները կզարդարեն ոսկեգույն թուղթերով ու անոնց ծայրերը կտնկեն մեյ մեկ մոմ, վրանին ալ կնետեն մեյ մեկ շուրջառ: Քահանան կօրհնե, զոհ կզենուն շաբաթեն կիրակի լուսնալիք գիշերվան կիսուն: Անկե առաջ զոհված պիղծ է»:

Դաշտերի բարիքներից բերել շարել են սեղանների վրա... «Մինչև Վարդավառը խնձոր չեն ուտեր, ինչպես վերափոխումեն առաջ խաղող չեն ուտեր: Ամեն ուխտավոր պատարագեն առաջ՝ փունջ մը կարմիր վարդ կամ անթառամ, գիներբուկ, շուշան, նունուֆար ծաղիկ՝ դալար ճյուղի մը հետ կնվիրե սեղանին ու սուրբ գերեզմանին,

ուր կդնե նաև վչտավոր իր արցունքն ու կարոտը: Հոն կդնե աչուղն իր չունգուրը, լարախաղացն իր մականը, ու շնորհ ու ձիրք կխնդրեն մուրատատուր սուրբեն»:

Ուխտավորները պարտավոր էին լողանալ վանքի մոտակա գետերի մեջ: Երիտասարդները զբաղվել են ըմբշամարտությամբ, ջիրիտ են խաղացել, վազքի մրցումներ են կազմակերպել:

«Կնիկներն ու աղջիկները, երիտասարդներ ու ծերունիներ, թեև իրարու անծանոթ, համայնական պար կբռնեն և թմբուկի ու փողի ձայնով մեջքակոտոր, ծնկածալիկ, գլխաշարժիկ, ոտնատրոփ, բայց միօրինակ ու միանվագ կպարեն, կկայթեն, կժպտեն ու կերգեն»:

Խաղերի, մրցումների մեջ առաջնություն գրավողները ծափահարվել են ժողովրդի կողմից, նրանց նախչուն արախչիների չուրջ վարդե պսակներ են հյուսել: Մրցանակի արժանացածներին հանդիսավորությամբ և նվագով ման են ածել հանդիսականների մեջ:

«Առանց երկար սիրահարություններու չատ մը մանչ ու աղջիկներ իրարու կնչանվին: Այս օրվա նչանվածներու կյանքը սիրազեղ ու անվրդով կըլլա պտուղն ալ առատ ու բարի: Նույնպես իմաստուն ու չնորհալի կըլլա այս օրվան ծնած երեխան»:

Սխալված չենք լինի, եթե ասենք որ այս ամբողջ նկարագրությունը նույնությամբ վերաբերում է Անահիտի տաճարի շրջապատում կատարված ծիսակատարություններին:

Վարդավառի բուն առանցքը կազմող ջրասրսկումը նույնպես գալիս է հեթանոսական դարերից: Կա վկայություն, որ Անահտական, Նավասարդյան ժողովրդական տոնակատարությունների օրերին սովորություն է եղել ջրասրսկումը. քրմապետը վերցրել է մի բուռ արյուն, լցրել փայտակույտի վրա, որը հատկացված է եղել զոհախարույկին. ապա արդեն Եփրատի սուրբ ջրից սրսկել է ուխտավորների վրա, որից հետո մարդիկ լողացել են գետում, քավելու համար իրենց մեղքերը:

Ուխտավորները սովորություն են ունեցել դալար ճյուղեր, ոստեր, ծաղիկներ դնել սրբազան սեղանի առաջ: Այդ նույն բանը հաստատում է Ագաթանգեղոսը, գրելով թե Տրդատը առաջարկել է Գրիգորին՝ դալար ոստեր մատուցել Անահիտին:

Վերևում մեր մեջ բերած նկարագրությունների մեջ չատ ուշագրավ է երիտասարդ աղջիկների ու տղաների ազատորեն պարելը միմյանց հետ. առանց սիրային երկար վիճակ ապրելու ամուսնանալը, այդ ամուսնությունը սրբագործված համարելը, ինչպես եղել է Անահիտի տոների օրերին: Ուրեմն քրիստոնեության շրջանում էլ

մարդիկ այդ ազատ մերձեցումը, ամուսնությունը համարել են սրբագործված, իսկ նման ամուսնությունից ծնված երեխաներին՝ խելոք և պիտանի:

Մենք խոսեցինք Վարդավառի մասին: Բայց միայն Վարդավառը չէ: Գարնան զարթոնքին զուգադիպող զատկական տոները, կարմիր ձու ներկելը, զատկին նախորդող կիրակիի ծառզարդարի տոնը և այլ բազմաթիվ տոներ իրենց մեջ պահել են հեթանոսականի տարրեր: Նույնը պիտի ասել Տյառնընդառաջի մասին, որի ժամանակ հարսների ու աղջիկների կրակի վրայից ցատկելով երջանկություն խնդրելը, անշուշտ, նույնպես հեթանոսական երևույթ է, հնի մնացորդ:

Առհասարակ քրիստոնեական եկեղեցին դիմել է հնարամիտ միջոցի՝ հեթանոսական սովորությունները չկարողանալով արմատախիլ անել՝ նրանցից առավել արմատացածներին տվել է քրիստոնեական երանգ: Աշխատել է քրիստոնեական տոները, ուխտագնացությունների օրերը հարմարեցնել հեթանոսականին:

Աստվածածնի տոնը նույնպես կատարվում է ամռան ամսին, ինչպես կատարվում էին Նավասարդյան տոները:

Քրիստոնեական եկեղեցին ծրագրված աշխատանք է կատարել աղոթատեղիները հեթանոսական տաճարների վայրերում կառուցելու ուղղությամբ, հաշվի առնելով, որ ժողովուրդը սովոր է ուխտագնացություններով լինել այդ վայրերում, այդ վայրերի հետ կապելով հրաշապատում ավանդություններ: Այդ մասին բազմաթիվ վկայություններ են պահպանված մեր մատենագիրների մոտ, հատկապես Ագաթանգեղոսի:

Վերջին տասնամյակներում Էջմիածնի Մայր տաճարի խորանի ներքևի մասի պեղումներից հեթանոսական, կրակապաշտական աղոթատեղիի, անգամ դարեր առաջ վառված կրակի մոխիրի ի հայտ գալը լավագույնս հաստատեց Ագաթանգեղոսի և այլ մատենագիրների այն վկայությունները, թե Գրիգոր Լուսավորիչը եկեղեցիները կառուցել է բագինների տեղում: Անշուշտ Էջմիածնի նման պիտի վարվեին նաև Անահիտի տաճարի հետ: Նրա տեղում էլ կառուցվել է Մարիամ Աստվածածնին նվիրված եկեղեցին:

Մեր աստվածուհիներին նվիրված բոլոր տաճարների տեղերում կառուցված եկեղեցիները կոչվել են Աստվածամոր անունով: Սա էլ ունի իր հիմնավոր պատճառը: Լուսավորիչը և նրա հետևորդները պարզապես Անահիտին ու Աստղիկին փորձել են փոխարինել Աստվածամորով, նրան վերագրելով այն զորությունները, բուժական ու իմացական կարողությունները, որ ժողովուրդը կապած է եղել Անա-

հիտի հետ: Մեր բանասիրական գրականության մեջ կան բազմաթիվ փաստեր, թե ինչպես Հայաստանի տարբեր գավառներում մարդիկ դիմել են Աստվածամոր տաճարները՝ խնդրել նրանից գործի հաջողություն՝ այս կամ այն հիվանդությունից բուժում, զենքի հաջողություն, անգամ երեխա ունենալու երջանկություն: Ավելորդ ենք համարում ծանրանալ դրանց վրա: Բանասերները դիտել են որ Տիրամոր նվիրված եկեղեցիներ ավելի շատ են կառուցվել, քան որևէ սրբի և անգամ Հիսուսին նվիրված եկեղեցիները:

Անահտական և Նավասարդյան այդ տոնակատարությունների ժամանակ ժողովրդական երգիչները բամբիռի վրա նվագելով երգել են հայ դյուցազունների քաջագործությունները, թագավորների սրխրանքները, աստվածների գովքը: Այդ են վկայում Խորենացու մոտ պահպանված ժողովրդական երգերի բեկորները Վահագնի ծնունդի, Արտաշես թագավորի և այլոց մասին: Խորենացին իր գրքում չէր կարող տեղ տալ աստվածների գովքին, և չի տվել, բայց նույնիսկ այդ զգուշության պայմաններում մի քանի տողեր սպրդել են, որոնցից ուշագրավ են Գրիգոր Մագիստրոսի մոտ պահպանված Արտաշեսի մահվան օրերի մտայնություն արտահայտող այն տողերը, որտեղ հայոց թագավորը աչքերը փակել է հիշելով Անահտական օրերը, Նավասարդյան տոնակատարությունները, երբ ասել է.

Ո՜ տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւօտն Նավասարդի,
Զվազելն եղանց և զվազելն եղջերուաց.
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք[1]*:*

6. ԱՆԱՀԻՏԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ ՔՐԴԵՐԻ ՄՈՏ

Դերսիմի քրդերի մոտ, որոնք ամենից շատ են պահել անահտական կուլտի հետքերը, ազգագրական հարուստ նյութ կա կապված հեթանոսական սովորությունների հետ:

Ոմանք, խոսելով քրդական ծիսակատարություններում պահպանված հեթանոսական տարրի մասին, գտնում են, որ Դերսիմի քրդերը անցյալում եղել են հայեր, դրա համար պահել են այդ սովորությունները: Դրա մեջ անչուշտ կա ճշմարտություն: Քանի որ քրդերը, ավելի ազատ էին պահելու պապենական ավանդույթներ, քան քրիստոնեական կրոնի ու եկեղեցու խիստ հսկողության տակ գտնվող հայերը:

[1] **Գրիգոր Մագիստրոս,** *Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 87:*

Անահիտի պաշտամունքի տարրերն էլ նրանց մոտ կարող էին անկաշկանդ շարունակվել:

Սակայն ինչո՞ւ նկատի չունենալ նաև այն իրողությունը, որ Անահիտի պաշտամունքը հատուկ չէր միայն հայերին, այլ Մերձավոր Արևելքի շատ ժողովուրդների, հետևաբար և կարող էր հարազատ լինել նաև քրդերին, գուցե և լեռնաբնակ այլ ժողովուրդների, որոնց բանահյուսությանը ծանոթ չենք:

Հայերի և քրդերի կրոնական ծիսակատարությունների մեջ կան շատ ընդհանրություններ: Այդ մասին շատ է գրվել բանասերների կողմից: Դերսիմի ազգագրությամբ զբաղվող մարդիկ գրել են, որ այդ վայրի քրդերը խոր անցյալում պաշտել են այն ամենը, ինչ հայերի մոտ էլ եղել է պաշտամունքի առարկա: Պաշտել են սարեր, համարելով դրանք Աստծո ամենից ավելի մոտ վայրեր: Հավատացել են դարավոր հսկա կաղնիների, որոնց տակից ջուր է բխում: Հավատացել են արևի, լուսնի զորությանը:

Դերսիմի քրդերն ունեցել են սովորություններ, որոնք ճիշտ ու ճիշտ համապատասխանում են Ստրաբոնի հաղորդած վկայություններին՝ Անահիտի տաճարում երկու սեռերի մերձեցման մասին:

Թարգի Խաչիկ Տեր-Ստեփանյանը, որ երկար տարիներ եղել է քրդերի միջավայրում, ապրել Դերսիմում ու տեսել նրանց բոլոր ծիսակատարությունները, իր գրավոր հիշատակարանում հետևյալն է պատմում, «Քրդերը տարվա մեջ ունեն մի օր, երբ հավաքվում են գյուղի մեծերից մեկի տանը, մորթում են անասուններ, ուտում առանց խմիչքի: Ապա բռնում են չուրջպար, 45 տարեկանից փոքր մարդիկ, հաճախ մինչև 60–100 մարդ, սկսում են պարել դհոլ զուռնայի նվագի տակ. պարում են մինչև հավախոս: Հենց որ հավը խոսում է, ձեթի ճրագները մարում են փչելով: Տունը մթնում է: Այդ միջոցին ջահելները գտնում են կանխօրոք իրենց որոշած աղջիկներին, նրանց հետ առանձնանում են որևէ անկյուն և սեռական հարաբերություն են ունենում: Երբեմն հենց պարելիս, միմյանց ձեռքը բռնած՝ համաձայնվում են, սպասում մինչև ճրագի մարելը, երբեմն էլ իրար ձայնից են ճանաչում միմյանց»:

Անահիտի պաշտամունքի հետ կապված հետաքրքիր փաստեր ենք գտնում Գ. Հալաջյանի ընդարձակ հիշողություններում և ազգագրական նյութերում: Հալաջյանը, նույնպես ապրել է Դերսիմում, մոտիկից ուսումնասիրել քրդերի սովորությունները, կենցաղը, նրանց կրոնական հավատալիքները, միաժամանակ քաջ իմացել է քրդերեն լեզուն:

Հալաջյանի վկայությունների մեջ հետաքրքիր է մասնավորապես Անահիտի կերպարի աստվածային ընկալման հետ կապված ծիսակատարությունների նկարագրությունը:

Նա ասում է, թե Մնձուր և Մերջան լեռներից բխող աղբյուրները, որոնք իրենց արագահոսության և ուժգնության պատճառով քարերի տակից դուրս գալու վայրերում ունեն կաթնագույն տեսք, քրդերը համարում են Անահիտի կրծքերից դուրս ժայթքող կենարար կաթը, որով սնվում են շրջապատի գյուղերը և որոնց հետ ժողովուրդը կապում է բուժիչ ուժ:

Այդ ջրերը օգտագործվում են նաև տարբեր ցեղերի հաշտեցման համար: Քրդական այն ցեղերը, որոնք այս կամ այն պատճառով գժտվում են միմյանց հետ և այդ հակառակությունը, թշնամությունը կարող է միայն արյան փոխվրեժով վերջանալ կամ չարունակվել երկար տարիներ, հաշտվում են հիշյալ կաթնաղբյուրի մոտ:

Հաշտությունը կատարվում է այսպիսի արարողությամբ: Զույգ ցեղերի ցեղապետները (բիրերը) մի երրորդ ցեղապետի կամ խաղաղարար անձի միջնորդությամբ գալիս են Անահիտի կաթնաղբյուրների մոտ:

Նախապես այնտեղ եկած է լինում և երկու կողմերի համար էլ հեղինակություն համարվող կրոնավոր սեիդը: Նրան են մոտենում հակառակորդ ցեղապետները, համբուրում նրա փեչերը: Կրոնավորի մի ակնարկի վրա թշնամիները անխոս մոտենում են միմյանց, ողջագուրվում են:

Մնձուրի լեռները թնդում են հրացանի որոտից: Լսվում է դհոլ-զուռնայի նվագը: Սկսվում է ուրախ խրախճանքը, երիտասարդների մրցումները:

Հալաջյանը, որ 1913 թ. մասնակցել է նման մի հանդիսության, որտեղ պահպանիչ է ասել նաև Տեր Օհան անունով մի հայ քահանա, մանրամասն նկարագրելով տեսածները, ամփոփում է հետևյալ տողերով.

«Նորից փառաբանվեց Անահիտի կաթնաղբյուրների սրբությունը, նորից վերակոչվեց մեր նախնիների անցյալ հզորությունը, ... Մնձուրը թնդում էր հրաձգության որոտից: Աղջիկների խումբը երգում էր.

Տոյէ Տուժիկ, տըշման Թըրքան
Քոյէ Մունզուր, քոյէ փիլան,
Շըթէ Անա, չըթէ մա-ա
Քամ օ պուրէ պենա պըրա:

(Տուժիկ լեռը դուշման է Թուրքերի
Իսկ Մնձուրը սուրն է հզորության
Կաթն Անահտա, կաթ է մայրական,
Ով որ խմի՝ կլինի եղբայր):

Քուրդ բանասեր Նուրի Դերսիմին նույնպես ունի ուշագրավ վկայություն: Նա իր «Քրդստանի պատմությունը» գրքում, գրում է. «Մեր պապերի ավանդական հավատալիքների համաձայն, Մնձուրի ակնաղբյուրները բխում են մեր մեծ նախամոր՝ աստվածուհի Անահիտի կրծքերից: Հավատում են թե Անահիտի ծծերից բխող այդ կաթնաղբյուրների ջրերը մեր մեծ մոր ստինքների կաթն է, և այդ է պատճառը, որ աշիրեթների մեջ տեղի ունեցած բոլոր թշնամությունները, մարտերի հետևանքով ծագած վեճերը և տարիներ շարունակվող ոխն ու ատելությունը եղբայրական հաշտարար լուծում են գտնում կաթնաղբյուրների ուխտագնացությամբ և Անահիտի կաթից խմելու արարողությամբ»[1]:

Մի հետաքրքիր ավանդություն էլ ենք գտնում Գ. Հալաջյանի մոտ. նա գրում է. «Պատմում են, թե տեսնողներ են եղել, որ Եփրատի և Արածանիի միացյալ ջրերի շառաչից օդը բարձրացած ջրացայտ կաթիլներից մաղվող անձրևի տակ, ապառաժի կատարին հաճախ նըստած է լինում, լայնանիստ ճակատով, երկար վարսերով, կամար և թավ հոնքերով, խիտ և երկար արտևանունքներով, նշաձև աչքերով, շամամի նման կլոր ծծերով, չնաչխարհիկ մի գեղեցկուհի, որ իր նուրբ և երկար մատներով ծամերն է սանրում, գցում ուսերին ու կրծքին, և ասում են, թե այդ գեղեցկուհին, որ մեջքից վար ձուկ է, մեջքից վեր՝ կին, մեր մայր Անահիտն է:

Պնդողներ կան, թե մեր օրերին էլ տեսնողներ եղել են, նույն տեսիլը նույն կերպարը, նույն ժայռի վրա, նույնիսկ ճշտում են տեսիլի հայտնության ժամանակաշրջանը և հայտնության ու անհայտանալու պահը»[2]:

Նախորդ գլխում մեր առաջ քաշած այն տեսակետը, թե Անահիտը աստիճանաբար խլել էր մյուս աստվածությունների, մասնավորապես Աստղիկի նկատմամբ եղած պաշտամունքը, լավագույնս ապացուցում է Հալաջյանի հիշատակած այս վերջին ավանդությունը:

---

[1] **Nuri Dersimi,** Kirdistan. Tarihinde Dersim. Halep, 1952, *էջ 10:*

[2] **Գ. Հալաջյան**, *Դերսիմի հայերի ազգագրությունը, մասն Ա, տե՛ս «Հայ ազգագրություն և բանահյուսություն», պրակ 5, Երևան, 1973, էջ 258:*

* * *

Քրիստոնեությունն անչուշտ մի քայլ առաջ էր հեթանոսական կրոնից, սակայն իր համակերպման, չարին չդիմադրելու, մարդկանց հանդերձյալ կյանքի ապառնի երազներով օրորելու գաղափարախոսությամբ ոչ մի ժողովրդի այնքան չվնասեց, որքան հայ ժողովրդին, մասնավորապես նրա պետականազուրկ հինգ հարյուր տարիների ընթացքում: Եվ այդ նաև մեր երկրի աշխարհագրական դիրքի, այլակրոն թշնամիներով շրջապատված լինելու պատճառով:

Ահա թե ինչու 1860-ական թվականներից սկիզբ առած ազգային զարթոնքի շրջանում եկեղեցու ուժը նկատելի չափով թուլացավ, անցյալի հերոսական դրվագները, ձերբազատվեցին կրոնական քողից և ներկայացվեցին որպես համաժողովրդական պայքարի դրվագներ՝ հանուն ազգային ազատության ու անկախության, ինչպես Վարդանանց պատերազմը:

Գրականության մեջ առաջ եկած այս մտայնությունը նոր բովանդակություն ստացավ 1910-ական թվականներից, այսպես կոչված օսմանյան սահմանադրության ժամանակավոր ազատության տարիներին, երբ առաջ եկավ գրական մի ամբողջ հոսանք, որի նշանաբանն էր հոգու փրկության փոխարինումը ժողովրդի փրկության գաղափարով: Դա դեպի հեթանոսական դարերի խորքը արշավելու, այնտեղից կենսանյութ ստանալով ժամանակի ամլության, ուծացման դեմ պայքարելու կոչ էր, որի արտահայտիչներն էին Լ. Շանթն իր «Հին աստվածներով», Դ. Վարուժանն իր «Հեթանոս երգերով», Սիամանթոն Նավասարդյան ոտանավորներով, Հ. Ճ. Սիրունին նույն գաղափարները պաշտպանող բանաստեղծությունների ժողովածուով, Մ. Պարսամյանը և ուրիշներ:

Ամենևին պատահական չէ, որ Դ. Վարուժանը 1914 թ. ձեռնարկելով տարեգիրք հրատարակելու գործը, ընտրեց «Նավասարդ» անունը և առաջին տարվա գրքում առանցքային թեման հեթանոսականի գովքն էր:

Տրամաբանական կլինի Անահիտ աստվածուհու պաշտամունքին նվիրված այս գլուխը փակել Վարուժանի և Սիամանթոյի բանաստեղծություններից մի քանի հատվածներով:

Հանճա՛րդ Հայկյան, Նավասարդյան սա տոներուն Արևափառ՝
Ա՛լ վերածնե փլատակներեն, և փառագոչ քնարդ ա՛ռ։
Հանո՛ւն ույժին, հանուն գեղին, մրտիր մեհյանն Աստվածներուն,

Ջահը ձեռքիդ՝ բազնե բազին համասփռե հուր ու արյուն։
Եվ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր բաժակը դ Նուռ,
Հետո զոհվող քերթողներուն սիրտին վերա, լեցո՛ւր, լեցո՛ւր։
Զի մենք, հանուն Սերին, Սերմին, քու հին ցեղիդ մարմարեն կույս,
Մե՛նք, զավակներդ օգոստափառ, պիտի կերտենք նո՛ր Արշալույս[1]*։*

Ահա և Սիամանթոն՝

Ով Դիցուհի, ես մեղկության կրոններեն ահա՛ իմ խիղճս լվացի,
Ու պերճորեն դեպի զքեզ կը քալեմ։ Հողաթափներս դեռ սուրբ են։
Բա՛ց մարմար դուռը մեհյանիդ, անոր դիմաց ես ճակատս թո՛ղ արյունեմ...
Բա՛ց բազինը դ, և տո՛ւր ինծի չեկ զորությունը Արտաշիսյան նախնիքներուս...։

Լսե՛ ինծի, Ոսկեղեն մայր, քո՛ւյր արգավանդ, քո՛ւյր բարության,
Առատության պարգևիչ և Տիրուհիդ հին Հայոց,
Նավասարդի առավոտով քու նախկին ցեղդ ահավասիկ կցնծա՜...
Թո՛ւյլ տուր, որ ես ծնրադիր ձևիդ առջև աղոթեմ...։

... Քսան դարու Քու վրեժդ թո՛ղ որ այսօր ես լուծեմ,
Ով Աստվածուհիդ Անահիտ։ Ահավասիկ քու բազինիդ կրակներուն մեջ նետեցի
Իմ խորտակված խաչափայտիս երկու թևերը թունավոր,
Եվ ցնծա դուն, ո՜վ Ոսկեմայր, Լուսավորչի կողերեն, ժանտ ոսկոր մը
քեզ կը ծխեմ...[2]*։*

---

[1] *«Նավասարդ», գրական և գեղարվեստական տարեգիրք, Ա տարի, Կ. Պոլիս, 1914, էջ 4։*
[2] *Նույն տեղում, էջ 5։*

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ԵՐԶՆԿԱՆ ԹԱՏԵՐԱԲԵՄ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ

Անահտական տաճարների գոյության չնորհիվ Երզնկայի կլիմը այնքան էր մեծացել ամբողջ Հայաստանում ու նրանից դուրս, որ քրիստոնեությունը պաշտոնական կրոն ընդունվելուց հետո էլ դեռ երկար ժամանակ պահեց այդ ուժը, պահեց մինչև 387 թվականը, այսինքն՝ Հայաստանի բաժանումը Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև, որից հետո կորցրեց մենաշնորհը, բայց մնաց Արևմտյան Հայաստանի նշանավոր կենտրոնը, իսկ միաժամանակ դարձավ այդ մասի մայրաքաղաքը:

Երզնկան եղել է թատերաբեմ քրիստոնեության և հեթանոսության պայքարի առաջին արտահայտությունը հանդիսացող Տրդատ–Գրիգոր Լուսավորիչ հայտնի վեճի օրերին, որը հանդիսանում է առհասարակ քրիստոնեական կրոնի պատմության ամենաուշագրավ էջերից մեկը:

Նախքան այդ վեճի մանրամասներին անդրադառնալը, հիշատակենք քաղաքական այն իրադարձությունները, որոնք տեղի ունեցան դրան նախորդող ժամանակաշրջանում:

Քրիստոնեությունը Հայաստանում էլ ունեցավ իր պաշտպաններին ու հետևորդներին այդ կրոնը քարոզվելու առաջին տարիներից:

Ե՞րբ է այս նոր վարդապետությունը մուտք գործել Հայաստան, ի՞նչ ճանապարհով, ո՞ւմ միջոցով: Այս հարցերը երկար ժամանակ զբաղեցրել են հայ և օտար բանասերներին և արտահայտվել են տարբեր կարծիքներ:

Ավանդական պատմագրությունը, այսինքն մեր քրիստոնեական մատենագրությունը՝ հրաշապատում դրվագների մեջ պարուրած, այդ պատիվը տալիս է Հիսուսի աշակերտներից Թադևոսին ու Բարդուղիմեոսին, որ նրանք եկել են Հայաստան, քարոզել Հիսուսի գաղափարները և նահատակվել: Այս ավանդությունը ցույց է տալիս,

որ Գրիգոր Լուսավորչից շատ առաջ այդ նոր գաղափարները պիտի թափանցած լինեին Հայաստան: Այս տեսակետն այժմ ուսումնասիրողները կասկածից վեր են համարում, մանավանդ որ մատենագրական որոշ փաստեր էլ կովան են դառնում այդ տեսակետի:

Ըստ նորագույն հետազոտությունների, քրիստոնեությունը հարավային Հայաստանում սկսվել է քարոզվել դեռևս 2-րդ դարի վերջերից: 3-րդ դարի սկզբներին այդ նպատակով Հայաստան էր եկել ասորի քարոզիչ, պատմագիր Բարդածանը: Նույն դարի կեսերին նոր կրոնը լայնորեն տարածվել էր Կապադովկիայում և Փոքր Հայքում: Քրիստոնեական կենտրոններ են եղել Կեսարիան և Մելիտինեն (Մալաթիան):

Դրանից հետո է, որ 3-րդ դարի վերջերին Հռոմից փախչում են քրիստոնեական գաղափարների համար Դիոկղետիանոս կայսեր կողմից հալածված կույսերը՝ Գայանեն, Հռիփսիմեն ու նրանց ընկերուհիները, որոնք ենթարկվում են հալածանքների: Վերջապես այս շրջանին է զուգադիպում Գրիգոր Լուսավորչի քարոզչությունը:

Ըստ Ագաթանգեղոսի, որին ենք պարտական հայոց դարձի, այսինքն՝ քրիստոնեություն ընդունելու պատմության գրառումը և ավանդումը հետագա սերունդներին, հայոց Տրդատ III թագավորը շատ քաջագործություններ կատարելուց, Հռոմի կայսեր համակրանքին արժանանալուց, նրա կողմից հայոց թագավոր հռչակվելուց հետո, իր շքախմբով հասնում է Հայաստան մեծ ծրագրերով, որոնց մեջ գլխավոր տեղ էին բռնում հեթանոսական նոր տաճարների կառուցումը, հների բարեկարգումը, արվեստի կոթողների ստեղծումը և այլն:

Այս բոլորի կենսագործման համար լավ երաշխիք էր այն, որ 298 թվականին կնքվել էր խաղաղության դաշնագիր Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև: Տրդատը Հայաստանի գահի վրա էր բազմում Հռոմի ոչ միայն համաձայնությամբ, այլև պաշտպանությամբ:

«Այն ժամանակ,- պատմում է Ագաթանգեղոսը,- թագավորը խիստ բարձրացրեց Տրդատիոսին և տվեց նրան մեծամեծ պարգևներ. նա թագ դրեց նրա գլխին և, ծիրանի զգեստով զարդարելով՝ բարձրացրեց նրան և, կայսերական զարդերով շքեղցնելով՝ մեծարեց: Հավաքեց ու նրա ձեռքը հանձնեց մեծ զորք, որպեսզի նրան օգնեն, արձակեց հայոց աշխարհը սեփական: Եվ հաղթության մարտի քաջություններից հետո, որ արել էր՝ վերադարձավ Մեծ Հայաստանի Տրդատ արքան Հունաց կողմերից. թագավորը ճանապարհ ընկավ, գնաց Հայաստանի կողմերը և եկավ գտավ այնտեղ պարսից շատ

զորքեր, որովհետև սրանք այն աշխարհը գրավել էին ու հպատակեցրել էին իրենց: Նա կոտորեց չատերին, չատերին էլ փախուստի մատնեց և քշեց պարսից կողմերը. և հայրենի տերությունը նա ինքը նվաճեց ու զորացավ նրա սահմանների մեջ»:

Տրդատը դեպի Հայաստան ճանապարհին, իր մեծ շքախմբով ու զորամիավորումով գալիս հասնում է Եկեղյաց գավառը, իջևանում Երիզա ավանում, ամենից առաջ իր գոհունակությունը, շնորհակալությունը հայտնելու համար Անահիտ աստվածուհուն: Նա զոհեր է մատուցում, կրոնական ծիսակատարություններից հետո յուրայիններով իջնում է Գայլ գետի ափը զվարճանալու:

Այստեղ է, որ սկսվում է բուռն պայքարը՝ քրիստոնեական և հեթանոսական գաղափարախոսությունների միջև. առաջինի կրողը եղել է ապագա Գրիգոր Լուսավորիչը, երկրորդի պաշտպանը՝ Տրդատ թագավորը:

Տրդատը առաջարկում է Գրիգորին ծաղկեպսակ և դալար ոստեր մատուցել Անահիտ դիցուհուն: Գրիգորը մերժում է, ասում թե չի հավատում կուռքերին, հավատում է Աստուծո որդի Քրիստոսին:

Բանավեճը, որ շարունակվել է բավական երկար, ըստ էության սովորական վեճ չէ: Ագաթանգեղոսը դրանով ցանկացել է քրիստոնեության էական սկզբունքները պաշտպանել ընդդեմ հեթանոսական կրոնի: Վեճի սկզբում, Տրդատը կարծեք բարի է տրամադրված իր հավատարիմ ծառայի նկատմամբ, փորձում է համոզել նրան, որ հրաժարվի մոլոր գաղափարներից, երկրպագի աստվածներին, բայց երբ Գրիգորը ոչ միայն մերժում է, այլ վիրավորական նախադասություններ է գործածում թագավորի հասցեին, վերջինս սպառնում է պատժել:

Մեր եկեղեցական գրականության մեջ այնքան էլ մեծ ուշադրություն չեն դարձրել այդ վեճի ու մանավանդ պատիժների մանրամասնություններին, մինչդեռ դրանք կարևոր են ոչ միայն գաղափարաբանական պայքարի էությունը, այլև՝ հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի որոշ կողմերը հասկանալու համար:

Երբ Գրիգորը մերժում է երկրպագել Անահիտի արձանին ու նվերներ մատուցել, Տրդատը նրան ասում է.

«Այսքան տարի ես քեզ ճանաչել եմ, և դու քո ամբողջ էությամբ հավատարմորեն ծառայել ես ինձ, և ես զոհ էի քո աշխատանքից ու մտադիր էի ապրեցնել քեզ: Ինչու՞ չես կատարում իմ կամքը»[1]:

---

[1] **Ագաթանգեղոս,** *Պատմություն Հայոց, Երևան, 1977, էջ 40:*

Գրիգորը պատասխանում է, թե ծառաները պարտավոր են իրենց աշխարհիկ տերերին ծառայել հնազանդ, բայց պարտավոր են երկրպագել միայն Աստծուն:

Թագավորը ափսոսանք է հայտնում, և ասում է թե նրա ծառայությունները արժանի էին պատվի ու փառքի, բայց քանի որ այժմ անհնազանդ է գտնվում, ինքը հարկադրված է պատժել նրան, գցել բանտը, անգամ սպանել, եթե հանձն չառնի աստվածներին երկրպագել, այսինքն՝ Անահիտ աստվածուհուն նվերներ տալ:

Գրիգորը ասում է, թե պատաստ է կրելու ամեն տանջանք, իրեն տրվելիք պատիժների համար գոհ է լինելու, քանի որ այդ տանջանքները կրելու է հանուն Քրիստոսի, որը կրկին գալու է և վարձատրելու է իր նմաններին:

«Իսկ որ դու կոչում ես մեծ Տիկին Անահիտ՝ գուցե եղել է այդպիսի մեկը երբեմնի ժամանակներում: Քանզի դիցապաշտ կախարդությամբ և դևերի տեսակ-տեսակ ցնորքներով համոզել են այն ժամանակվա մարդկանց, որ մեհյաններ չինեն, կուռքեր կանգնեցնեն և երկրպագեն: ... Եվ փոխանակ Աստուծո, որի բարիքներն եք վայելում, պաշտում եք փայտեղենն ու քարեղենը, ոսկեղենն ու արծաթեղենը, որ Աստված է կարգել մարդկանց ծառայության, պետքերի ու փառավորության համար»[1]:

Մենք պաշտում ենք այն էակին, որը կենդանություն է տալիս մեզ, ասում է Գրիգորը,- թեև մեռնում ենք մարմնով, բայց կենդանի ենք հոգով, ինչպես որ Որդին Աստծո նույնպես մեռավ և իր հարությամբ օրինակ տվեց մեզ:

Տրդատին համբերությունից հանում է Գրիգորի հետևյալ խոսքերը, վերցված Սաղմոսից. «Արդարև նման եք ձիերին ու ջորիներին, որովհետև նրանք չունեն իմաստություն և նույնիսկ մտքով եղից ու էշից էլ պակասամիտ գտնվեցիք, քանի որ չճանաչեցիք ձեր ստեղծողին, որը երբ ժամանակը գա, սանձով կճմլի ձեր կզակները այն բանի համար, որ չկարողացաք մերձենալ նրան»[2]:

Տրդատը հրամայում է Գրիգորին ենթարկել մարմնական պատիժների: Այնուհետև նրան գցում են Խոր վիրապ, ուր սովորաբար նետելիս են եղել մահապարտներին, որոնք չդիմանալով սովահարությանը, օձերի խայթոցներին՝ մահացել են միառժամանակից:

Գրիգորը, սակայն, դիմացել է 14 տարի:

Ինչպես տեսանք, Տրդատ III-ը Հայաստան վերադառնալիս՝ առաջինը եղել էր Երզնկայում, երկրպագել Անահիտի արձանին և Գայլ

---

[1] **Ագաթանգեղոս**, էջ 42:

[2] Նույն տեղում, էջ 44:

գետի ափին էլ ունեցել էր պատմական հակաճառությունը Գրիգորի հետ: Ուստի դժվար չէ ենթադրել, որ իր վերաշինական ծրագրերն էլ սկսելու էր Անահտական մեհյանից:

Ինչպիսի կառուցումներ է ունեցել նա Եկեղյաց գավառում, ինչ արձաններ է կանգնեցրել, մեզ հայտնի չէ, բայց Արևելյան Հայաստանում նրա կատարած նման աշխատանքները կասկած չեն թողնում, որ Երզնկայի հովտում նույնպես կառուցել է հեթանոսական տաճարներ, գուցե և աշխարհիկ շենքեր: Մեծ փոփոխություններ է մտցրել պետական ու տնտեսական կյանքում: Ագաթանգեղոսը վկայում է, որ հիմնովին վերակառուցվել են նախարարական տների և իշխանների իրավասությունները, վերաբաշխել է կալվածները ըստ նախարարների գրված դիրքի: Նա թողել է հունարեն արձանագրություններ նման փոփոխությունների մասին: Իր իրավասությունները, վերաբերմունքը դեպի հպատակները օրինականացրել է ոչ միայն գրավոր հրովարտակներով, այլև Տիգրանակերտի պարիսպների վրա թողած չատ ընդարձակ արձանագրություններով, որոնք դժբախտաբար բավականաչափ եղծվել են ժամանակի ընթացքում: Նա չինարարական որոշ աշխատանքի հետ կապված հունարեն արձանագրություններ է թողել նաև Արմավիրում:

Ենթադրելի է, որ Գառնիի հեթանոսական տաճարն էլ կառուցել է Տրդատ III-ը՝ Հռոմից Հայաստան գալու հենց առաջին տարիներին: Խորենացու անձամբ կարդացած հունարեն արձանագրությունը, որ երկար ժամանակ կասկածի տակ էր առնվում և որը պատահաբար հայտնաբերվեց 1945 թ., պատկանում է նույն Տրդատին: Նա այդ տաճարը կառուցել է ոչ թե որպես ամառանոց իր քրոջ համար, ինչպես գրել է Մովսես Խորենացին, այլ որպես հեթանոսական տաճարաղոթատեղի, և որ այնտեղ եղել է Միհրի արձանը՝ ցուլի հետ մարտընչելիս:

2. ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՃԱՐՆԵՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Տրդատ III-ը հաճախ է եղել Երզնկայում, ամենայն հավանականությամբ Անահիտ աստվածուհուց ուժ ու հաղթանակի ակնկալություն աղերսելու համար, ինչպես այդ անում էին չատ թագավորներ թե՛ Արևմուտքում և թե՛ Արևելքում:

Տրդատը ոչ միայն մասնակցել է Անահիտի տաճարի վերակառուցմանը, այլև հետագայում նրա կործանմանն ու տեղում քրիստոնեական եկեղեցու հիմնադրման աշխատանքներին:

Արշակունի արքաների վերջին հանգրվանը, այսինքն՝ նրանց դամբարանային հանգստավայր եղել են Եկեղյաց և Դարանաղյաց գավառները: Կա վկայություն, որ Տրդատի մահը տեղի է ունեցել Երզնկայում, որսի ժամանակ: Նրան նետահարելով վիրավորել են Սյունյաց աշխարհի իշխանները: Ծանրորեն վիրավորվել է, բայց չի մեռել և նույն իշխանների սադրանքով Տրդատի պալատական ծառան թունավորել և սպանել է իր տիրոջը:

Թե որտեղ է թաղվել Տրդատը՝ հայտնի չէ:

«Տրդատ Գ-ի թագավորությունը,- գրում է Մանանդյանը,- Հայաստանի կուլտուրական կյանքի համար ունեցավ հեղաշրջող նշանակություն: Նրա ժամանակ մերժվեց հեթանոսական նախկին կրոնը և իբրև պետական կրոն հաստատվեց քրիստոնեությունը»[1]:

Բայց ինչպե՞ս հաստատվեց: Անչուշտ հեքիաթապատում ավանդություններ են Ագաթանգեղոսի պատմածները, թե այդ բոլորը կատարվեց հրաշքների ճանապարհով, թե Տրդատը խելագարվեց, դարձավ խոզ, ի վերջո զղջաց, բուժվեց և հասկացավ քրիստոնեական կրոնի ճշմարտացիությունը և վեհությունը:

Իրականում քրիստոնեությունը ապրել էր որոշ էվոլյուցիա: Այժմ այն քարոզվում էր որոշ չտկումներով: Գտնում էր, որ պետք է հնազանդ լինել տերերին: Նույնիսկ Տրդատի և Գրիգորի հայտնի բանավեճի ընթացքում վերջինս ընդունում էր, որ մարդիկ պարտավոր են հավատարմորեն ծառայել իրենց մարմնավոր տերերին: Մյուս կողմից՝ նոր կրոնն արդեն տարածվել էր Հայաստանում, գաղտնի պաշտվում էր ամենուր: Տրդատը եղավ միայն երևույթի օրինականացնողը:

Քրիստոնեության տարածողները դիմել են ամեն միջոցի՝ զանգվածներին իրենց կողմը գրավելու համար: Ագաթանգեղոսի մի վկայությունից երևում է, որ Գրիգորը հեթանոսական տաճարներից գրավված անթիվ հարստությունից բաժին է հանել այդ տաճարները քանդողներին, քրիստոնեության համար կռվողներին: «Եվ ամբարված գանձերը աղքատներին, տառապածներին ու չքավորներին բաժանեցին»,- գրում է պատմիչը:

Այսպիսի չահագրգռող միջոցներով է, որ Տրդատն ու Գրիգորը նախ մեկնում են Արտաշատ, քանդում այնտեղի Անահիտի տաճարը: Քանդել են և հրդեհել այնպիսի վայրագությամբ, որ «ծուխը ծառացած մինչև ամպերը հասավ»[2]:

---

[1] **Հ. Մանանդյան**, *Երկեր, հատ. Բ, Երևան, 1978, էջ 126-127:*

[2] **Ագաթանգեղոս,** *էջ 121:*

Արտաշատից հետո արքունի զորքով Տրդատը արշավել է Դարանաղյաց գավառը, քանդել այնտեղի հեթանոսական տաճարները ևս: Հետո անցել է Թորդան, քանդել Բարշամինա աստծու մեհյանը, միշտ ավարից բաժին հանելով աղքատներին. «և բոլոր գանձերը, ոսկին ու արծաթը ավարի մատնեցին ու աղքատներին բաշխեցին»[1]:

Վերջապես՝ արքունի զորքը հասնում է Եկեղյաց գավառը, կանգնում Անահիտի հոյակապ արձանի առաջ, այն աստվածուհու, որի ոտների տակ Տրդատը հաճախ զոհաբերություններ էր մատուցել:

Ինչ զգացումներ է ունեցել Տրդատ արքան այդ տաճարի քանդումը հրահանգելիս: Դժվար չէ գուշակել, որ դա իր սրտովը չէր: Ավանդույթները չատ ուժեղ են: Եթե Անահիտի պաշտամունքը երկու հազար տարի անց իր հետքերն է թողել հայերի կրոնական ծիսակատարությունների վրա, կարո՞ղ էր այդքան հեշտ, ընդամենը մի քանի տարում մոռացվել:

Տրդատը պարզապես կատարել է դիվանագիտական քայլ, քանի որ, ինչպես ասացինք, այդ էր պահանջում երկրի շահը:

Ագաթանգեղոսի նկարագրություններից երևում է, որ ոչ մի մեհյան այնքան մեծ դիմադրություն ցույց չի տվել, որքան Երզնկայում գտնվող Անահտական տաճարը: Նրա քուրմերը, տաճարի սպասավորները պայքարել են անձնվիրաբար:

Ամբակուռ բերդի գրավման տպավորություն է թողնում Անահիտի տաճարի ավերումն ու գրավումը: Ահա թե ինչպես է նկարագրում Ագաթանգեղոսը դեպքը. «Դրանից հետո իսկույն ելան սահմանակից Եկեղյաց գավառը, և այնտեղ երևացին զևերը Հայոց թագավորների մեծ և բուն մեհյաններում, պաշտամունքի վայրերում, Երեզ ավանի Անահիտի մեհյանում, ուր զևերը վահանավոր զորքի նմանությամբ հավաքված մարտնչում էին և մեծագոչ աղաղակով լեռները թնդացնում: Նրանք փախստական դարձան, և նրանց փախչելու ժամանակ բարձրաբերձ պարիսպները կործանվեցին, հարթվեցին: Դարձի եկած զորքերով այնտեղ հասածները, սուրբ Գրիգորը, թագավորով հանդերձ, փչրեցին Անահիտ դիցուհու ոսկի արձանը, ամբողջ վայրը քանդեցին, փչացրին, ոսկին ու արծաթը ավարի տվին: Այնտեղից Գայլ գետի վրայով այն կողմ անցան ու քանդեցին Արամազդի դստեր՝ Նանեի մեհյանը Թիլ ավանում: Երկու մեհյանների գանձերը ավարելով՝ Աստծու սուրբ եկեղեցու ծառայությանը նվեր թողեցին տեղերով հանդերձ»[2]:

---

[1] **Ագաթանգեղոս,** *էջ 123:*

[2] *Նույն տեղում:*

Ուրեմն հեթանոսական կրոնի պաշտպանները կռվել են զինված վահաններով, զենք ու աղեղով: Այս յուրահատուկ ճակատամարտի մասին հետաքրքիր տեղեկություններ ենք գտնում նաև «Վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն» երկում, որից երևում է, որ ինչպես քրիստոնյաները, հեթանոսական կրոնի կողմնակիցներն էլ ունեցել են իրենց մոլեռանդ քարոզիչները, որոնք դիմել են ժողովրդին այսպիսի խոսքերով. «Ի՞նչ էր պակասում ձեզ, որ թողեցիք «զմեծ աստվածն Անահիտ», ... և մոլորվելով մի հրեա մարդու կողմից, որը սովորեցրեց ձեզ նոր ուսումը, խաբեց և ձեր միտքը կորստի մատնեց. եկեք, դարձի, երկրպագեցեք Անահիտին և ես կաղաչեմ ամենակալ աստծուն որ թողություն տա ձեզ»[1]:

Գրիգորը փորձել է սիրաշահել ոչ միայն ընչազուրկներին, աղքատներին, այլև՝ քրմերին: Նա պաշտոններ խոստանալով նրանցից առավել հեղինակավորներին, գրավել է իր կողմը: Բայց մեծ մասը, չկարողանալով դիմադրել քրիստոնյաներին, թողել փախել է սարերը: Վերջապես՝ Գրիգորը քրմերի երեխաներին տալով քրիստոնեական դաստիարակություն, նրանցից պատրաստել է եկեղեցու պաշտոնյաներ, իր կողմը գրավելով նրանց ծնողներին:

Անահիտի տաճարների քարուքանդ արվելուց հետո էլ Երզնկան չի կորցրել իր կչիռը պատմական Հայաստանում: Փոխվել են անունները, ըմբռնումները, մեկնաբանությունները, բայց ծիսակատարությունները չարունակվել են հաջորդ դարերում, ինչպես տեսանք նախորդ գլխում:

Ոչ միայն Տրդատ III թագավորի վերջին օրերն են անցել Եկեղյաց գավառում, այլև՝ Գրիգոր Լուսավորչի: Մովսես Խորենացին մանրամասնորեն պատմում է Լուսավորչի և նրա որդու՝ Արիստակեսի մահվան պատմությունը: Նա ասում է, թե Գրիգորը իր քարոզչական գործունեությունն ավարտելուց հետո քաշվեց Դարանաղյաց գավառի Մանյա այրը: Մանյան եղել է Հռիփսիմեի, Նունեի ընկերուհիներից: Ապրել է այդ քարայրում:

Ավանդության համաձայն, Լուսավորիչը մեռել է նույն քարայրում:

Գրիգոր Լուսավորչի տոհմի պապենական կալվածն էլ գտնվել է Եկեղյաց գավառում: Ուշագրավ է, որ երբ Արիստակեսը սպանվել է Զորրորդ Հայքի կառավարիչ Արքեղայոսի կողմից, դիակը տեղափոխվել է Երզնկա, Գրիգորի տոհմական այդ կալվածը և թաղվել է Թիլ ավանում:

---

[1] «Սոփերք հայկականք», հատ. Ը, Վենետիկ, 1853:

3. ԵՐԶՆԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Քրիստոնեական կրոնն ընդունելուց հետո Երզնկան դարձավ նոր մշակույթի առաջին կրողներից մեկը հին Հայաստանում:

Դրան նպաստում էին մի կողմից սահմանային քաղաք լինելու հանգամանքը, մյուս կողմից՝ Հայաստանի արևմտյան մասի կենտրոնը լինելու փաստը: Թողնենք որ մինչև Հայաստանի բաժանումը Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև (387) Երզընկան նաև կրոնական կենտրոն էր, քանի որ այնտեղ էին նստում Հայոց հոգևոր պետերը:

Անահտական մեհյանների ամբողջ կալվածները, ըստ էության մնացին Գրիգոր Լուսավորչի տոհմին: Այդ բանը օրինականացվեց Տրդատի հատուկ հրովարտակով: Ավելին՝ չուտով Լուսավորչի տոհմի սեփականությունը դարձավ համարյա ամբողջ գավառը, անչուշտ թագավորներին վերապահելով որոշ կալվածներ, ինչպես պիտի տեսնենք ստորև:

Բայց միայն Լուսավորչի տոհմը չէր, որ ապահովվել էր նման կալվածներով ու նրանցում աշխատող ձեռքերով: Հոգևորականությունն ամբողջությամբ վերցրած դարձավ Հայաստանի ամենից արտոնյալ դասը, ինչպես քրմերի դասը՝ հեթանոսական շրջանում: Յուրաքանչյուր գավառում հարյուրավոր հոգևորականներ ապրում էին իշխանական կյանքով: Անգամ նրանց ազգականներն օգտվում էին բազմապիսի արտոնություններից, ստանում բաժին՝ եկեղեցու ստացած տասանորդ տուրքից:

Հոգևորականները, նրանց մերձավոր ազգականներն ազատված էին ֆիզիկական ծանր աշխատանքներից, զինվորական ծառայությունից, արտոնություններ, որոնք մասամբ վերացվեցին Պապ թագավորի գահակալության կարճատև շրջանում:

Հայ կղերականության կողքին, նրանից ավելի կենսունակ պայմաններում աճեց օտար հոգևորականների մի դաս: Քանի դեռ չկար հայերեն գիր ու գրականություն և Քրիստոսի Ավետարանը քարոզվում էր հունարեն ու ասորերեն լեզուներով, Հայաստանը ողողել էին ասորի և հույն հոգևորականները, որոնք իրենց կամքն էին թելադրում շատ հարցերում, իրենց ցանկությունները ներկայացնելով որպես Աստծո պատգամներ:

Եկեղյաց գավառում ավելի ուժեղ էր հունական ազդեցությունը: Հեթանոսական շրջանից մնացած քրմերի ժառանգները, դաստիարակվելով քրիստոնեական կրոնի ոգով, հիմա էլ իրենց ձեռքն էին վերցրել հայկական քրիստոնեական եկեղեցին:

Շատ բան չէր փոխվել հեթանոսական ծիսակատարություններից: Նույն զոհաբերությունները, նույն նվիրատվությունները պարտադրվում էին քրիստոնեության անունից: Նավասարդյան տոները կատարվում էին նույնպիսի շուքով, առանց Անահիտի կամ Աստղիկի արձանի երկրպագության:

«Խոսրով III-ի ժամանակ,- գրում է ակադեմիկոս Մանանդյանը,- ինչպես երևում է Փավստոսի վկայություններից, հին հեթանոսական կրոնը դեռ ուներ Հայաստանում բազմաթիվ հետևողներ: Քրիստոնեության մուտքը Հայաստան այնպես արագ տեղի չէր ունեցել, ինչպես այդ նկարագրված է Ագաթանգեղոսի պատմության մեջ: Փավստոսը հաղորդում է, որ քրմական կուսակցությունը Տարոնում, Խոսրով III-ի կնոջ սադրանքով, ուզեցել էր սպանել Վրթանես քահանայապետին Աշտիշատի եկեղեցում: Դավադրությանը, Փավստոսի ասելով, մասնակից են եղել մոտ երկու հազար մարդ: Սակայն սպանության փորձը հաջողություն չէ ունեցել[1]:

Այստեղ էականն այն չէ, թե ինչ են ցանկացել հեթանոսական կրոնի պաշտպան մարդիկ, այլ այն, որ քրիստոնեական կրոնի պաշտոնյաներն այնքան էլ բարոյական հեղինակություն չէին վայելում ժողովրդի մեջ և դա առաջին հերթին իրենց աշխարհիկ կենցաղի ու հարստացման տենչի պատճառով: Երզնկան, երկար ժամանակ լինելով ամբողջ Հայաստանի կրոնական կենտրոնը, ամենից ավելի է ենթարկվել եկեղեցու գերիշխանությանը:

Քաղաքական իրադարձություններն էլ նպաստել են, որ Երզնկան միաժամանակ պահի նաև մտավոր կենտրոնի իր դերը:

Հայտնի է, որ 298 թ. Հռոմի ու Պարսկաստանի միջև կնքված դաշնադրությունից հետո սկսվել էր քաղաքական մի շրջան, որը Տրդատ III-ի թագավորության ամբողջ տևողության ընթացքում չարունակվեց, այսինքն՝ մինչև 330 թ.: Այս ամբողջ ժամանակաընթացքում Երզնկան պահեց իր գերակշիռ դիրքը, առաջին 15 տարիներին որպես հեթանոսական կրոնի, Անահիտի տաճարի հմայքով, երկրորդ տասնամյակում Գրիգոր Լուսավորչի տոհմի գերիշխանությամբ:

371 թ. պարսկական զորքը ներխուժում է Հայաստան: Հռոմայեցիները և հայերը հաղթում են պարսիկներին Բագավանում տեղի ունեցած ճակատամարտում:

Խաղաղություն է կնքվում Հռոմի ու Պարսկաստանի միջև: Իր գահին տիրացած երիտասարդ Պապ թագավորը հնարավորություն է ստանում անցնելու խաղաղ ու չինարար աշխատանքի: Բայց երկի-

---

[1] **Հ. Մանանդյան,** *Երկեր, հատ. Բ, էջ 144:*

ը այնպես էր ավերված ու աղքատացած, որ վերականգնման համար կարիք ուներ մեծ զոհողությունների, աշխատող ձեռքերի, մինչդեռ Եկեղյաց գավառում բուն դրած հոգևոր իշխանություններն ամբողջ երկիրը ողողել էին ձրիակեր, հանրօգուտ աշխատանքից հեռու կանգնած պորտաբույծներով:

Պապը սահմանափակում է կրոնական հիմնարկների թիվը, փակում բարեգործական հաստատությունների մի մասը, որոնց, ինչպես նկատում է ակադեմիկոս Մանանդյանը. «Անհանդուրժելի էին համարվել սնանկացած երկրի համար նաև եկեղեցական աճող կալվածատիրությունը և պտղի, տասանորդի ու եկեղեցական մյուս եկամուտները»[1]:

Տրդատի կողմից գյուղական հոգևորականությանը տրված յոթը հողաբաժիններից հինգը գրավում է հօգուտ արքունիքի: Այդ համեմատությամբ էլ սահմանափակում է յուրաքանչյուր գյուղի հոգևոր պաշտոնյաների թիվը: Ամեն մի գյուղում թողնում է մի երեց և մի սարկավագ, իսկ սրանց եղբայրներին ու որդիներին, որոնք նույնպես գյուղերում վայելում էին արտոնություններ, վերցվել են արքունական սպասարկության: Պապը վերացրել է այդ խավի զինվորական ծառայությունից ազատ լինելու վերաբերյալ օրենքը, փակել է կուսանոցները, հրամայել կույսերին ամուսնանալ:

Պապի բարենորոգչական այս միջոցառումները իր դեմ են հանել հոգևորականությանը, որը փորձել է թագավորին մեղադրել հեթանոսական կրոնի նկատմամբ հաչտ վերաբերմունք ունենալու մեջ: Եկեղեցականության նկատմամբ ժխտական վերաբերմունքով պիտի բացատրել այն, որ Փավստոս Բուզանդն էլ Պապի մասին խոսելիս չատ բացասական գույներով է ներկայացրել նրան, նույնպես համարելով հանդուրժող հեթանոսության նկատմամբ:

Փավստոսը, Պապին վարկաբեկելու համար ասում է, թե նա է թունավորել Ներսես կաթողիկոսին, մի փաստ, որ չի հաստատվում այլ աղբյուրներով:

Բայց քանի որ դեպքը անմիջապես առնչվում է Երզնկայի հետ, ավելորդ չենք համարում այդ հատվածը մեջ բերել ամբողջությամբ.

«Իսկ Պապ թագավորը,- գրում է Փավստոսը,- չարունակ թշնամի էր մեծ քահանայապետին՝ իր չար գործերի և մեղքերի հանդիմանության պատճառով, որովհետև Ներսեսը՝ Աստծու մարդը, միչտ նրան հանդիմանում էր: Նա չէր կամենում զգաստանալ, ուղղվել, չէր էլ կարող դիմանալ հանդիմանողի մչտական նախատինքներին, ուստի

[1] **Հ. Մանանդյան,** *նույն տեղում, էջ 214:*

մտադրվեց Աստծու մեծ քահանայապետ Ներսեսին սպանել: Բայց որովհետև այս բանը հայտնապես անել անկարելի էր, ուստի կեղծավորաբար այնպես ձևացրեց, իբր թե ուղղվել է և աղաչում էր Աստծու քահանայապետին, որ իրեն ապաշխարեցնի: Նրան հրավիրեց իր ապարանքը՝ Եկեղյաց գավառի Խախ ավանում. նրա համար ընթրիք պատրաստեց, Աստծու մարդուն աղաչեց, որ արքունական գահույքին բազմի, իբր թե սրանով նա իր չար գործերից կմաքրվի և այնուհետև կսկսի ապաշխարել:

Երբ նրան առաջին տեղում բազմեցրեց, ինքը՝ թագավորը, վրայի պատմուճանը հանած, մեջտեղում ոտքի կանգնած, ընթրիքի ժամանակ անապակ գինի էր մատուցում Աստուծո մարդուն՝ Ներսեսին, և ըմպելիքի մեջ մահվան դեղ խառնելով՝ նրան մատուցեց»[1]:

Ներսեսը իմանալով, որ թունավորված է, ասել է թագավորին, թե նա կարող էր իրեն սպանել տալ ուղղակի, առանց այս միջոցներին դիմելու, թե աղոթել է Աստծուն, ներել մարդասպան թագավորին, պատմագիրը մանրամասն նկարագրելով Ներսեսի մահը, շարունակում է: «Եվ Աստծու մարդու՝ սուրբ Ներսեսի, մարմինը վերցրին եկեղեցու սպասավորները և Փավստոս եպիսկոպոսը, պաչտոնյանների գլխավոր Տրդատը և Հայոց Մուշեղ սպարապետը ու Հայր մարդպետը և արքունական բանակի ամբողջ ազնվականների գունդը: Մարմինը վերցրին Խախ ավանից, որտեղ սպանությունը կատարվեց, և տարան իր գյուղը՝ Թիլ ավանը: Սրբին հուղարկավորեցին սաղմոսներով, օրհնություններով, վառված կանթեղներով, հանդիսավոր պաշտամունքով և շատ հիշատակություններով: Բայց մինչ սրբի մարմինը դեռ չէր թաղված, ինքը՝ Պապ թագավորը, եկավ մարմինը պատեց և մարտիրոսական դամբարանում թաղեց: Նա անմեղ և անգետ էր ձևանում, իբր թե ինքը չի գործել այդ գործը»[2]:

Իր գրքի հաջորդ գլխում Փավստոսը նկարագրում է, թե ինչպես Անահիտի տաճարի տեղում մենակյացի կյանքով ապրող մի հույն և Արծիվ սարի վրա բնակվող մի ասորի տեսել են, թե ինչպես հրեշտակները Ներսեսին տարել են երկինք:

Ակադեմիկոս Մանանդյանը հիմնավոր փաստարկումներով ցույց է տվել, որ Փավստոսի նկարագրած դեպքը պատմական հիմք չունի: Մեզ այստեղ դա չէ, որ զբաղեցնում է. փաստ է, որ Ներսեսը մեռել է Եկեղյաց գավառում և թաղվել Թիլ ավանում: Մեզ ավելի շատ հետաքրքրում է այն իրողությունը, որ Եկեղյաց գավառում էր գտնվում

---

[1] **Փավստոս Բուզանդ,** *Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 257:*

[2] *Նույն տեղում, էջ 259:*

ոչ միայն քահանայապետական աթոռը, այնտեղ էր նստում ասենք Ներսեսը, այլև այն, որ թագավորներն էլ Եկեղիքում ունեին իրենց հատուկ ապարանքները: Ավելին, նույնիսկ սպարապետն ու Հայր մարդպետը, որ ըստ երևույթին ուղեկցում էին թագավորին, հաճախ էին լինում այնտեղ, գուցե նրանք էլ ունեին իրենց ապարանքները:

Հետաքրքրական է նաև Փավստոսի վկայությունը Անահտական տաճարի տեղերում հույն հոգևորականների առկայության մասին, որոնք այնքան էլ կրավորական դեր չէին կատարում: Աստծու աղոթելու դիմակի տակ ծառայում էին Հռոմին և հաճախ միջամտում երկրի ներքին գործերին, իրենց ցանկությունները ներկայացնելով Աստծու կողմից եկող պատգամներ, թե իբր Աստված երևալով այդ սուրբերից մեկնումեկի աչքին, հայտնել է այս կամ այն ցանկությունը:

387 թ. դաշնագրությունից հետո հայ Արշակունիները Պարսկական Հայաստանում թագավորել են ավելի քան քառասուն տարի (387–428), իսկ հունական մասում Արշակ III-ը թագավորել է մինչև 390 թվականը: Նրա մահից հետո Թեոդոսիոս I կայսրը այլևս նոր թագավոր չի նշանակել: Հայաստանի այդ մասը այնուհետև կառավարել են բյուզանդացիների կողմից նշանակված կուսակալները: Դրանք հանդիսացել են կայսեր փոխանորդները:

Եվ այսպես, մինչև 390 թ. Արևմտյան Հայաստանը ղեկավարել է Արշակ III-ը: Նրա կառավարման կենտրոնը եղել է Երզնկան:

Շինարարական ինչպիսի աշխատանքներ է կատարել Արշակը այդ կարճ ժամանակամիջոցում: Հայտնի չէ: Մեր պատմագիրները կցկտուր տեղեկություններ են միայն տվել այդ թագավորի մասին: Բայց կասկածից վեր է, որ նա լինելով հունական մշակույթի հաղորդակից, պիտի փորձեր որոշ բան կիրառել իր երկրում:

Մեր կարծիքով նրա կառուցած կամուրջի հետքն է, որ մնացել է և հասել մեր օրերը՝ Եփրատի հին հունի վրա: Այդ կամուրջի ավերակույտը ներկայացնում է լայնանիստ երեք կամար, սակայն այն տեսնողները վկայում են, որ դա կամուրջի շատ փոքր մասն է միայն: Հայերը կոչել են Արշակա կամուրջ, Թուրքերը՝ աղավաղելով բառերը՝ ***Էշեկ քեոփրուսու:***

Անշուշտ քիչ բան չէ Եփրատի նման խոշոր մի գետի վրա բազմակամար նման մի կամուրջ գցելը՝ այն էլ 4-րդ դարի վերջերը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՏԻՐԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԵՐԶՆԿԱՆ ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հինգերորդ դարում Երզնկան գտնվում էր Հայաստանի հունական մասում, ենթակա՝ բյուզանդական իշխանությանը: Գոյություն չուներ հայկական պետականություն, գավառը ղեկավարում էր հույն կառավարիչը, թեև հայկական նախարարությունները պահում էին և երկար ժամանակ չարունակեցին պահել իրենց իրավունքներն ու արտոնությունները, մնալով հարկատու բյուզանդացիներին: Կրոնական կենտրոնն էլ Երզնկայից տեղափոխվել էր Այրարատյան նահանգը:

Չնայած վարչական այդ վիճակին՝ Հայաստանի Արևելյան և Արևմտյան մասերը պահում էին կապը միմյանց հետ: Նման կապի դեմ չէր հատկապես Պարսկաստանը: Նա ավելի չահագրգռված էր հարկերի գանձումով, քան գաղափարական ազդեցության տարածմամբ, թեև չուտով նա էլ պիտի սկսեր հայերին պարտադրել իր կրոնը:

387 թ. Հայաստանի բաժանումից հետո պարսկական բաժնում իշխում էր Խոսրով IV-ը, որ թագավորել է չատ կարճ ժամանակ: Նրան հաջորդել է եղբայրը՝ Վռամչապուհը (389–414):

Վռամչապուհ թագավորի անվան հետ է կապվում հայոց գրերի գյուտի մեծ ու բախտորոշ իրադարձությունը:

Գրերի գյուտը ոչ միայն մշակութային հեղաշրջում էր, այլև ազգային ինքնորոշման, սեփական գիր ու գրականությամբ օտար ազդեցությունը թուլացնելու գործոն: Նրա հիմնական նպատակներից մեկն էր պատվար կանգնել հունական և ասորական՝ գնալով մեծացող գաղափարական ազդեցության առաջ: Հայաստանը ողողված էր հույն և ասորի հոգևորականներով, եկեղեցական պաչտոնյաներով: Նրանք էին ղեկավարում եկեղեցական արարողությունները, իրենց լեզվով քարոզներ կարդում, Ավետարանի գաղափարները տարածում, որից ոչինչ չէր հասկանում ոչ միայն չարքային մարդը, այլև ազնվական դասը: Հենց դա էլ դուռ էր բաց անում հեթանոսության

վերապրուկների աչխուժացման, նչանակում է աչխարհիկ գաղափարների տարածման համար: Իչխանական տներում կատարվող խրախճանքները դրա փայլուն վկայություններն էին:

Հայոց եկեղեցու պաչտոնյաներին, առաջին հերթին Սահակ կաթողիկոսին թվում էր թե եթե սեփական գիր ու գրականությամբ, մայրենի լեզվով քարոզվի քրիստոնեական կրոնը, մարդիկ կհասկանան այն և հեռու կմնան թե՛ հեթանոսական սովորություններից և թե՛ օտարացման վտանգից:

Մյուս կողմից՝ գրերի գյուտով հիմք էր դրվելու հայ ժողովրդի քրիստոնեական հոգևոր մչակույթին, որ մինչ այդ կատարվում էր միայն բանավոր:

Եվ արդարև գրերի գյուտից հետո կարճ ժամանակում ստեղծվեց մայրենի մի այնպիսի գրականություն, որն այժմ զարմանք է պատճառում աչխարհին իր բնագավառների բազմազանությամբ՝ պատմագրություն, փիլիսոփայություն, աչխարհագրություն, տիեզերագիտություն, թարգմանական գրականություն և այլն: Այդ գրականությունը զարմանք է պատճառում նաև իմացական խորությամբ, պատմական մեծ արժեքով, վերջապես հղկված, մչակված դասական լեզվով:

«Եվ խիստ ուչագրավ է, որ,– գրում է Հ. Մանանդյանը,– Հայաստանի բաժանումից անմիջապես հետո, երբ կազմալուծված ու ցաքուցրիվ արված հայությանը սպառնում էր հուսալքման ու այլասերման վտանգը՝ Սահակ կաթողիկոսը և Մեսրոպ Մաչտոց վարդապետը Վռամչապուհ թագավորի աջակցությամբ, գտան հայ ժողովրդի պահպանման ու ինքնուրույն զարգացման համար հզոր ու անհաղթելի մի զենք և ստեղծեցին հայկական գիրն ու գրականությունը: ... Ակներև է սակայն, որ այդ գյուտն ունեցավ նաև քաղաքական մեծ նչանակություն, որովհետև սեփական հայ գրի ու գրականության ստեղծումը մտցրեց հայությունը հին կուլտուրական ժողովուրդների չարքը և, զարթեցնելով նրա ազգային ինքնագիտակցությունը՝ արգելք եղավ հայ ժողովրդի ապազգայնացման ու միաձուլման քաղաքականության, որ հինգերորդ ու վեցերորդ դարերում վարում էին Հայաստանում Սասանյան Պարսկաստանը և Բյուզանդական կայսրությունը: ... Եթե մենք, ասում է Մարկվարտը, նկատի առնենք պատմական այն բացառիկ ծանր իրադրությունը, որի մեջ Մաչտոցը կարողացավ զարթնեցնել հայ ժողովրդի ազգային գիտակցությունը, և նրա այդ գործը համեմատենք Պիպինի և նրա զինակիր Վինֆրիդի

գործունեության հետ՝ այս վերջինները «Խեղճ թզուկներ կերևան» համեմատությամբ մտքի այդ հսկայի»[1]:

Վրացիների և աղվանների համար տառեր հորինող Մաշտոցը չէր կարող հաշվի չառնել, որ Հայաստանի մի մասը գտնվում էր բյուզանդական տիրապետության տակ և նույնքան կարիք ուներ գիր ու գրականության, որքան Արևելյան Հայաստանը: Ավելին՝ այնտեղ ձուլման վտանգն ավելի մեծ էր, քանի որ քրիստոնյա մի պետության ազդեցության տակ լինելով, հեշտությամբ կարող էր ենթարկվել նրան, մինչդեռ Արևելյան Հայաստանը ուներ կրոնական պատնեշ՝ ընդդեմ զրադաշտական Պարսկաստանի:

Բայց հենց այդ նկատառումներն էլ դժվարացնում էին Մաշտոցի գործունեությունը Հայաստանի Արևմուտքում: Բյուզանդիոնը ամենևին չահագրգռված չէր, որ հունարենի փոխարեն հայերն իրենց տառերն ունենային և զարկ տային սեփական մշակույթի, գրականության:

Գուցե դա է պատճառը, որ նորաստեղծ հայերեն տառերը բավականաչափ ուշ մուտք գործեցին Արևմտյան գավառները, երբ Արևելյան Հայաստանում կատարված էր բավականաչափ աշխատանք՝ այդ տառերը դպրոցներում սովորեցնելու, աշակերտներ պատրաստելու, թարգմանություններ կատարելու ուղղությամբ:

Ոմանք դա բացատրում են Սահակի և Մեսրոպի քաղաքական հեռատեսությամբ, որ Պարսկաստանը չունենա որևէ կասկած թե հայերը ուզում են մերձենալ Բյուզանդիային, ընդհակառակը այն տպավորությունը թողնվեր, թե հայերեն տառերի գյուտը ավելի ևս պիտի նախապայմաններ ստեղծի բյուզանդական ազդեցությունից երես դարձնելու:

Բայց և այնպես անհրաժեշտ էր, որ Հայաստանի այդ մասում նույնպես դպրոցներ բացվեին ու զարկ տրվեր կրթական աշխատանքին: Դրա համար ամենից առաջ պետք էր ստանալ Թեոդոս II կայսեր համաձայնությունը: Եվ արդարև կայսրը սկզբում դժվարություններ է հարուցել, բայց Մաշտոցի անվհատ աշխատանքը հաղթահարել է դժվարությունները:

Ենթադրվում է, թե Մաշտոցը Բյուզանդական Հայաստանում գործել է 419–425 թվականներին:

Բայց լսենք հենց Մաշտոցի վարքը գրի առնող, նրա առաջին աշակերտներից Կորյունի վկայությունը.

---

[1] **Հ. Մանանդյան**, *Երկեր, հատ. Բ, էջ 252:*

«Եվ երբ բոլոր տեղերն այնպես լիացրեց Տիրոջ սուրբ Ավետարանով և ամենքին զգուշացրեց, որ կյանքի ճանապարհով ընթանան, այնուհետև մտածեց Հայոց կես ազգի համար, որ Հռոմների թագավորի իշխանության տակ էր: Եվ չտապեց, չատ աշակերտների հետ գնաց հունական կողմերն անցնելու: Եվ իր բարի գործերի մեծ համբավի համար, որ առաջուց այնտեղ նրա մասին հռչակված էր հյուսիսային կողմերից, նա այնտեղ մտնելու ճանապարհի հենց սկզբից մեծ մտերմությամբ ընտաներար պատիվ ստացավ աշխարհի եպիսկոպոսներից և իշխաններից ու գավառացիներից, մանավանդ աշխարհի սպարապետից, որ անվանվում էր Անատոլիս: Սա (Մաշտոցի) մտադրած բանը գրով հայտնեց կայսրին, որի անունը Թեոդոս էր կոչվում, Արկադ կայսրի որդին, որից և հրաման դուրս եկավ որ վայել մեծարանքով Ակումիտ անունով կոչեն սրբին»[1]:

Ուրեմն՝ ըստ Կորյունի հունաց կայսրը արժանի հարգանքով է ընդունել Մաշտոցին և կարգադրել է Ակումիտ կոչել նրան, այսինքն՝ տքնող, անքուն հսկող:

Բայց Խորենացին գրում է թե հույները սկզբում համաձայն չեն եղել Արևմտյան Հայաստանում հայկական դպրոցներ բաց անելու ծրագրին և հունարենի փոխարեն հայերեն տառերը գործածելու գաղափարին: Անշուշտ Խորենացու ձեռքի տակ որոշ փաստ եղել է, որ նման բաներ է գրել և եթե, այնուամենայնիվ հունաց կայսրը համաձայնվել է Մաշտոցի առաջարկներին, դա եղած պիտի լինի քաղաքական նկատառումներով: Միանգամայն իրավացի է Մանանդյանը, երբ կարծում է թե հույներին երբեք չէր կարող հաճելի լինել որ հունարենն իր տեղը զիջեր հայերենին, ինչպես եկեղեցական արարողությունների ժամանակ, այնպես էլ դպրոցներում:

«Կայսրության եկեղեցական գործունեությունը, անկասկած սերտ կերպով կապված էր նրա քաղաքական գործունեության հետ: Ամենուրեք, ուր ամրապնդվում էր բյուզանդական քրիստոնեությունը և հաստատվում Բյուզանդիայի քաղաքական գերիշխանությունը. նրա քաղաքական ազդեցությունը... Սակայն Բյուզանդիան այդ շրջանում չէր կարող հարձակողական քաղաքականություն վարել Արևելքում, քանի որ 4-րդ դարի վերջից սկսած, հյուսիս-արևմուտքից նրան սպառնում էր լուրջ վտանգ՝ քոչվոր հոները: Թեոդոս II-ի բարյացակամ վերաբերմունքը դեպի Մեսրոպ Մաշտոցի խնդիրքը, իմ կարծիքով բացատրվում է... արտաքին քաղաքական այն իրադրությամբ, որի մեջ գտնվում էր կայսրությունը հինգերորդ դարում»[2]:

---

[1] **Կորյուն**, *Վարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 113:*

[2] **Հ. Մանանդյան**, *Երկեր, հատ. Բ, էջ 476:*

Ստանալով բյուզանդական կայսեր համաձայնությունը՝ Մաշտոցն ու նրա աշակերտները մեծ եռանդով հայկական գիրն ու գրականությունը տարածել են Արևմտյան Հայաստանում, բաց են արել դպրոցներ՝ ըստ երևույթին հիմնականում վանքերին կից:

Մեզ հասել են փաստեր, որ երգնկացիները, կամ Եկեղյաց գավառում ծնված մտավորական գործիչները շատ մոտիկ մասնակցություն են ունեցել նաև թարգմանչական աշխատանքին: Դա շատ հասկանալի է, քանի որ հունարեն լեզուն ավելի տարածված պիտի լիներ Արևմտյան Հայաստանում, քան Արևելյան:

Հայտնի է, որ հայերեն գրերի ստեղծման առաջին տարիներից՝ բացի Աստվածաշնչից և եկեղեցական այլ գրքերից՝ թարգմանվել են նաև պատմական երկեր՝ դեռևս Մաշտոցի կենդանության օրոք: Դրանցից է Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունը», «Ժամանակագրությունը», որոնք նկատելի չափով նպաստել են հայ պատմագիտական գրականության զարգացմանը: Կորյունը, պատմելով թե Մեսրոպը Եդեսիայում հայոց տառերը հնարելուց հետո իսկույն ձեռնարկել է թարգմանությունների, ասում է, թե նա այդ բանը կատարել է իր երկու աշակերտների հետ, «որոնց առաջինի անունը Հովհան էր, Եկեղյաց գավառից»[1]:

Ուրեմն, սակավաթիվ այն մարդկանց մեջ, որոնք 5-րդ դարում, գրերի գյուտից անմիջապես հետո, հիմք դրին մեր հոգևոր մշակույթին, եղել է մի երգնկացի, որ ինքնին վկայում է այդ քաղաքի մտավոր կյանքի մասին քրիստոնեության արշալույսին:

Դժբախտաբար Կորյունը այլ տեղեկություններ չի տալիս Հովհանի մասին և մենք չգիտենք թե ինչ գործունեություն է ունեցել նա: Ըստ երևույթին մասնակցել է նաև Աստվածաշնչի առաջին թարգմանությանը:

Նույն Կորյունի վկայությամբ կրթական, մանկավարժական այդ աշխատանքներին մասնակցել է նաև Դերջանի եպիսկոպոս Գինթը, որն իր կրթությունն ստացել է Բյուզանդիոնում, վերադարձել Հայաստան, գործել այնտեղ:

Մովսես Խորենացին, վերապատմելով այս դեպքերը, ասում է թե Սահակ Պարթևը հատուկ նամակով խնդրել է հունաց կողմի զորավար Անատոլիոսին՝ օժանդակել Մեսրոպին և իր թոռ Վարդանին՝ մեկնելու Բյուզանդիոն: «Անատոլիոսն այս տեսնելով,- շարունակում է Պատմահայրը,- միանգամայն հիշելով Մեսրոպի առաքինության համբավը, որ առաջուց տարածված էր նրա մասին, ոչ փոքր ընդունելություն ցույց տվեց նրանց, մինչև որ փոխնիփոխ սուրհանդակների միջոցով կայսրին զեկուցեց և նրանից հրաման ստացավ՝

[1] **Կորյուն,** *Վարք Մաշտոցի, էջ 99:*

արժանավորապես չուտով ուղարկել: Ուստի Մելիտինե քաղաքում Ակակ եպիսկոպոսի մոտ պահում է աշակերտների բազմությունը, որոնց (Մեսրոպը) տարել էր իր հետ, նրանց գլխավորի՝ Ղևոնդի հետ, իսկ ինքը Մեսրոպին ու Վարդանին առնելով հանձնում է Դերջանի Գինթ եպիսկոպոսին և փառավորապես ճանապարհ է գցում: Այսպես նրանք մտան Բյուզանդիոն, ներկայացան մեծ թագավորին, ստացան ինչ որ կհուսային և ինչ որ չէին հուսա, և վերադարձան»[1]:

Պարզվում է, որ Դերջանի Գինթ եպիսկոպոսը նկատելի դեր է կատարել Մեսրոպին հունական արքունիք տանելու, կայսեր շնորհներին արժանացնելու գործում: Ուրեմն նա սովորական մի հոգևորական չէր, այլ ծանոթ հունական բարձր շրջաններում: Ըստ երևույթին կաթողիկոսական գահը Արևելյան Հայաստան տեղափոխվելուց հետո, Դերջանն է դարձել կրոնական կենտրոն և Գինթն էլ որպես այնտեղի եպիսկոպոս է գործել:

Խորենացին, խոսելով Մեսրոպի կրթական գործունեության մասին, ասում է թե Մեսրոպը ոչ թե լոկ սովորեցնում էր, այլ աշակերտներին հոգի էր ներշնչում իբրև առաքյալ: «Սրանից հետո,- շարունակում է Պատմահայրը,- այնտեղ իր աշակերտներից վերակացուներ թողնելով՝ Սպերում Ղևոնդին և Ենովքին, Դերջանում նրանց Գինթ եպիսկոպոսին, իսկ Եկեղյաց գավառում՝ Դանանին, ինքը գալիս է Այրարատ և գնում Գողթն, իր առաջին բնակության գավառը»[2]:

Ուրեմն այդ Դանանն ու Գինթն են եղել, որ Եկեղյաց և Դերջանի գավառներում տարածել են հայերեն առաջին գիրն ու գրականությունը: Խորենացին նաև ասում է, թե նրանք եղել են Մաշտոցի առաջին աշակերտներից: Անշուշտ ուրիշներ նույնպես լծված են եղել սուրբ գործին, որոնց անունները մեզ չեն հասել:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 5–7-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Հայ ժողովրդի պատմության 5–7-րդ դարերի իրադարձությունները, արձանագրված մեր մատենագրության մեջ, շատ ավելի վերաբերում են Արևելյան Հայաստանին, այսինքն՝ Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող մասին, քան Բյուզանդականին:

387 թ. դաշնագրից հետո, որով Հայաստանը բաժանվել էր երկու մասի, Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հատվածը եղել էր տևական պայքարի մեջ: Պարսիկները նախկին հանդուրժողականությունը չեն ցուցաբերել և ամեն կերպ աշխատել են հայերին կրոնով էլ ենթարկել իրենց:

---

[1] **Մովսես Խորենացի,** *էջ 415-417:*

[2] *Նույն տեղում, էջ 423:*

Արտաքուստ այլ վիճակ է տիրել Արևմտյան հատվածում, որտեղ քրիստոնյաների և զրադաշտականների պայքար գոյություն չի ունեցել: Բայց դա միայն արտաքին կաղապարով, խորքում այստեղ էլ եղել է դավանաբանական պայքար, հունական եկեղեցու ծեսերը հայերին պարտադրելու ճնշում, որն ուղեկցել է հայ ժողովրդի պատմությանը նրա ամբողջ ընթացքում: Այս պայքարին մասնակցել են Հայաստանի երկու հատվածներն էլ, նպատակ ունենալով պահել Հայաստանյայց եկեղեցու ինքնուրույնությունը, որը սերտորեն կապված էր նրա քաղաքական գոյության հետ:

Ինչպես տեսանք նախորդ էջերում, հակառակ տարբեր պետությունների ենթակա լինելու փաստին, Հայաստանի Արևմտյան հատվածը կտրված չէր Արևելյանից: Մերձեցմանը ավելի էր նպաստել հայոց գրերի գյուտը, մատենագրության, դպրոցական ցանցի աշխուժացումը, վանքերը կրթական, գրչագրական կենտրոններ դարձնելու ձգտումը, որ առկա էր երկու հատվածներում հավասարապես և հաճախ էր պատահում, որ մի հատվածում ապրողները ուսումնառության համար մեկնում էին մյուս հատվածը, կամ գործում այնտեղ:

Հրով ու սրով երկու մասի բաժանված Հայաստանը շատ հարցերում միասնական էր: Դրա փայլուն ապացույցը հանդիսացավ 451 թ. համաժողովրդական մեծ պատերազմը պարսիկների դեմ, որին մասնակցեցին ոչ միայն հայ ժողովրդի բոլոր հատվածները, խմբավորումները, այլև քրիստոնյա այլ ժողովուրդներ: Վարդանանց պատերազմի վավերական աղբյուրը հանդիսացող Եղիշեն չի անդրադարձել Եկեղյաց գավառի մասնակցությանը: Եթե Ղազար Փարպեցու պատմության մեջ չգտնեինք որոշ փաստեր, այնպես էլ պիտի չիմանայինք, թե Երզնկան որևէ մասնակցություն ունեցե՞լ է այդ հերոսամարտին:

Փարպեցին, նկարագրելով պատերազմի նախապատրաստական աշխատանքները, ասում է թե ստեղծվել է մի մեծ պատգամավորություն, որը գնալու էր հունաց կայսեր մոտ այդ հարցով, ըստ երևույթին ոչ միայն ապահովվելու համար Հայաստանի արևմտյան հատվածի մասնակցությունը հանուն քրիստոնեական կրոնի մղվելիք պատերազմին, այլև Բյուզանդիայի: Բացի այդ պատգամավորությունից, հատուկ գրություններ են ուղարկվել բոլոր նախարարություններին, իշխաններին, կուսակալներին, որոնց թվում՝ Եկեղիք: «Եվ այս բոլոր թղթերը,- գրում է Փարպեցին,- նախ ինքը՝ Սյունյաց Վասակ իշխանն էր կնքում իր մատանիով, ապա հայոց մյուս բոլոր տանուտերները: Հունաստան ճանապարհվելու համար պատրաստվեցին. Ամատունյաց տան իշխան Վահանը՝ որպես խելամիտ ու խոհական

մարդ, սուրբ Հմայակ սեպուհը՝ Հայոց երանելի զորավար Վարդանի եղբայրը՝ Մամիկոնյան տոհմից, և սուրբ Աղանի եղբայր երանելի Մերհուժանը՝ Արծրունյաց տոհմից: Սյունյաց իշխան Վասակն ու Հայոց աշխարհի բոլոր նախարարները, նամականին նրանց ձեռքը տալով՝ ճանապարհեցին կայսրի ու վերը հիշված Հայոց բոլոր մեծամեծների մոտ»[1]:

Եկեղյաց գավառի հետ կապված մի վկայություն էլ ունի վրացական մատենագիր Արսեն Սափարացին, որ ապրել է 9-րդ դարում և իր պատմության մեջ անդրադարձել է հայերին: Նրա ասելով՝ Բյուզանդիայի Արկադիոս կայսրը, որ եղել է Թեոդոսի որդին, անուշադիր է գտնվել հայերի նկատմամբ, դրա համար պարսիկները հաղթել են հայերին ու քշել իրենց երկրից: Փախստականները Եկեղյաց գավառից անցել են հարևան երկրներ և աղաչել Արկադիոսին, որպեսզի վերջինս օժանդակի հայերին՝ իրենց երկիրը վերագրավելու, սակայն Արկադիոսը չի ընդառաջել[2]:

Պատմաբան Հ. Քյուրտյանը, ենթադրելով թե Արսեն Սափարացու ակնարկը վերաբերում է Վարդանանց պատերազմին, գտնում է, որ վրաց պատմիչի մոտ կա անունների չփոթություն. ոչ թե պետք է լինի Արկադիոսը, այլ՝ Մարկիանոսը, որի իշխանության տարիներն են 450–457 թվականները, իսկ դա համընկնում է Ավարայրի ճակատամարտի ժամանակին: Քյուրտյանի դիտողությունը մեզ հավանական է թվում, քանի որ Սափարացին ապրելով շատ ուշ ժամանակներում, կարող էր թագավորների անունները չփոթել միմյանց հետ:

Վավերական փաստ է սակայն, որ 451 թ. Քաղկեդոնի ժողովին մասնակցել են Եկեղյաց գավառի հոգևորական պետերը: Այդ ժողովին մասնակից 600 եպիսկոպոսների մեջ Եկեղյաց գավառի ներկայացուցիչը առանձին է հիշատակվում (Կիրակոս եպիսկոպոս), Երզնկայինը՝ Պապը, առանձին:

Հինգերորդ դարի վերջերին Եկեղյաց գավառի հոգևոր իշխանությունները քրիստոնեական գաղափարախոսության ամրապնդման համար մեջտեղ են բերել մի հարց. թե Թորդանում հայտնաբերվել է Հայաստանում քրիստոնեական կրոնի տարածման համար նահատակված Թադևոս առաքյալի աճյունը, նաև Սանդուխտ կույսի և Գրիգոր Լուսավորչի[3]:

---

[1] **Ղազար Փարպեցի,** *Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 149:*

[2] *Տե՛ս* **Լ. Մելիքսեթ-Բեկ,** *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Երևան, 1934, էջ 35:*

[3] *«Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 82:*

3. ԵԿԵՂՅԱՑ ԳԱՎԱՌԸ ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ Ի-Ի ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Բյուզանդական կայսր Հուստինիանոս Ի-ը գահ բարձրանալու առաջին տարիներից (527) լայն ճակատով պայքար է սկսել մի կողմից հեթանոսական կրոնի մնացորդների դեմ, որի արտահայտություններից մեկն էր Աթենքի պլատոնական ճեմարանի փակումը, այնտեղ դասախոսող փիլիսոփաների փախուստը Պարսկաստան, մյուս կողմից քրիստոնեական աղանդների՝ արիոսականների, նեստորականների, միաբնակների դաժան հետապնդումը, միաբնակների կենտրոն Անտիոքի ավերումը, նպատակ ունենալով քրիստոնեական ուղղափառ կրոնի հաստատումով կենտրոնաձիգ ուժեղ մի պետության ստեղծումը:

Սկզբնական շրջանում Հուստինիանոսի հալածանքները Հայաստանում թույլ արձագանք գտան: Քրիստոնեությունը վաղուց պետական կրոն ընդունած հայերը դիմադրություն ցույց չէին տալիս, քաղկեդոնականությունը կիրառվում էր հեշտությամբ: Հայերին կարծեք ավելի շատ հետաքրքրում էր իրենց ազգային գոյավիճակի պահպանումը, մտավոր զարգացման գործը, քան դավանաբանական դատարկ թվացող վեճերը, որոնք այնքան սաստկորեն մոլեգնում էին կայսրության մայրաքաղաք Բյուզանդիոնում, առիթ տալով պալատական տևական դավադրությունների ու ոճիրների:

Արշակ III-ի մահից հետո Արևմտյան Հայաստանում այլևս հայկական պետականությունը չպահպանվեց, կային միայն նախարարություններ, որոնք պահպանում էին իրենց որոշ իրավունքները, այն էլ ոչ թե կոչվելով տոհմական անուններով, այլ տվյալ գավառի անունով, ասենք Եկեղյաց գավառի իշխան, Դերջանի, Կարնո իշխան և այլն:

Սահմանափակ արտոնություններով և իրավունքներով գործող այդ իշխանները հանդիսանում էին Բյուզանդական կայսրության հենարանները երկրում, կիրառում էին նրա քաղաքականությունը, իրենց զինվորական միավորումներով մասնակցում էին ընդհանուր թշնամու դեմ մղվող կռիվներին:

Հուստինիանոսը աստիճանաբար ավելի է սահմանափակել նրանց իրավունքները, կիրառելով զգույշ քաղաքականություն: Թուլացնելու համար նրանց ներքին ուժը, ոմանց գրավել է դեպի մայրաքաղաք, բաց արել պետական ու զինվորական պաշտոնների դռները: Շատ հայեր իրենց ձեռքն են վերցրել կայսրության զինվորական ուժի

նկատելի մասը: Հենց Հուստինիանոսի ամենանշանավոր զորավարներից մեկը եղել է հայազգի Ներսեսը, որը մասնակցել է նրա մղած բազմաթիվ կռիվներին և աչքի ընկել իր քաջագործություններով: Ձեռներեց, կարող նման մարդկանցից ոմանք ձգտել են մինչև կայսերական գահը և գրավել այն:

Հուստինիանոսի ժամանակ Եկեղյաց գավառը ընդարձակվել է ի հաշիվ նրան սահմանակից այլ գավառների, իսկ կենտրոնը դարձել է ոչ թե Երզնկան, այլ՝ Լեոնտոպոլիսը, վերանվանվելով Հուստինիանոպոլիս: Ոմանց կարծիքով այդ քաղաքը գտնվել է Երզնկայից երկու օրվա ճանապարհ հեռու, ուրիշների կարծիքով՝ ընդամենը 16 կիլոմետր դեպի հարավ, այժմյան Ջիմինի մոտակայքում:

Հնարավոր է, որ երկրաշարժից կամ որևէ պատերազմի հետևանքով ավերված լինելով՝ Երզնկան միաժամանակ իր տեղը զիջել է Հուստինիանոպոլիսին, հնարավոր է նաև, որ զուգընթաց ծաղկել է այս նոր քաղաքը, որը եղել է եպիսկոպոսանիստ և հաճախ է հիշատակվել կրոնական ժողովների առիթով:

Ղազար Փարպեցու, Սեբեոսի և այլ պատմագիրների վկայություններից երևում է, որ Եկեղյաց գավառը այդ դարում ղեկավարել են հայ իշխաններ՝ հարկատու և ենթակա Բյուզանդիոնին:

Հուստինիանոսը բոլոր հայկական երկրամասերը վերցրել է մեկ զինվորական հրամանատարության տակ, հրամանատարին տվել մագիստրոս կամ ստրատեգոս տիտղոսը: Նրան էին ենթարկվում քաղաքական իշխանությունները, որ ինքնին նշանակում էր նախարարական տների իրավասության նվազում:

Բանակային կենտրոնն էլ, որ առաջ գտնվում էր Մելիտենե քաղաքում (այժմ՝ Մալաթիա), տեղափոխվել է սահմանային Կարին քաղաքը, որտեղ կառուցել է տվել վիթխարի ամրություններ, պարըսպապատ բերդեր:

Նման բերդեր են կառուցվել նաև Եկեղյաց գավառում: Հիշենք հենց վերևում հիշատակված Հուստինիանոպոլիսը Երզնկայից ոչ շատ հեռու: Շինարարական այս աշխատանքը փոխել է երկրի պատկերը, նրան տվել ուրույն գեղեցկություն, որի մասին խոսում է Պրոկոպիոսը:

Դրանք, սակայն, պահանջում էին նյութական մեծ զոհողություններ, որոնք անհնար էր ապահովել առանց տուրքերի մեծացման և առանց օրինական կարգ ու կանոնի խստացման: Բանն այն է, որ Բյուզանդական կայսրությունն ապրում էր ներքին յուրահատուկ քայքայում: Կաշառակերությունն իր ձեռքն էր վերցրել երկրի ղե-

կավարման ամբողջ մեքենան: Ամենացածրից մինչև ամենաբարձր պաշտոնն առուծախի առարկա էր դարձել. չկար ոչ մի հանցագործություն, որի կատարողը չկարողանար արդարանալ կաշառքով: Անհնար էր ստեղծել կենտրոնաձիգ ուժ՝ առանց այս բոլորը վերացնելու:

535–536 թթ. ռեֆորմներով Հուստինիանոսը պայքար սկսեց այս վիճակի դեմ: Այդ ռեֆորմներն իրենց ուրույն կիրառումն ունեցան Հայաստանում, որի մի մասն էր Երզնկան: Կայսրը հայտարարեց, որ հայերը լիովին պետք է ենթարկվեն նոր օրենքներին, իսկ դա նշանակում էր վերացնել այն արտոնությունները, որոնք դեռևս վայելում էին հայերը, շատ հարցեր տնօրինելով սեփական ցանկությամբ, հաշվի առնելով ներքին ուրույն պայմաններն ու հնարավորությունները:

Նոր օրենքներով կայսրը Բյուզանդիոնին պատկանող հայկական երկրամասում ստեղծեց չորս Հայաստան, դրանք կոչելով՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք և Չորրորդ Հայք:

Առաջինի մեջ էր մտնում Եկեղյաց գավառը և Դերջանը:

Եթե զինվորական ղեկավարության կենտրոնացումը նպաստում էր երկրի ապահովության պահպանմանը, ապա քաղաքացիական այս բաժանումը թուլացնում էր հայերի կենտրոնաձիգ ուժը, միասնությունը: Արտաքուստ անգամ առաջադիմական թվացող ռեֆորմները խորքում հետապնդում էին հայերի ինքնաղեկավարման թուլացման նպատակ և դա չէր կարող չնկատվել տեղական հայ իշխանավորների կողմից, որոնց չուն դեպի մայրաքաղաք, գնալով ավելի ու ավելի էր քաջալերվում:

Կայսեր սահմանած նոր օրենքներով վերացվում էր մինչ այդ գոյություն ունեցող այն վիճակը, ըստ որի կինը զրկվում էր ժառանգական իրավունքից: Հուստինիանոսը դա համարեց խտրականություն, կնոջ իրավունքի բռնաբարում, «կարծեք կանանց Աստված չի ստեղծել», ասել է նա: Թվում է թե միանգամայն առաջադիմական մոտեցում է:

Բայց իրականում այդ օրենքն էլ հետապնդում էր քաղաքական շատ որոշակի նպատակ: Պետք է հաշվի առնել, որ ժառանգական նախկին իրավունքը վերաբերում էր առաջին հերթին հողատեր նախարարական, իշխանական դասին և նպաստում էր ֆեոդալական, կալվածատիրական խավի հարստության պահպանմանը՝ տվյալ տոհմի ներսում, սերնդից սերունդ: Նոր օրենքով հնարավորություններ էին ստեղծվում, որ այդ վաղեմի կալվածները կտրատվեն, մասնատվեն ամեն մի ամուսնության դեպքում և բաժանվեն մանր մասերի, այլ խոսքով՝ թուլանան նաև նախարարական տները:

Մյուս կողմից՝ նյութական միջոցներ ձեռք բերելու համար կայսրը սկսեց դաժանորեն չահագործել աշխատավոր խավին: Նա հայերի վրա դրեց ծանր հարկեր, առիթ տալով լուրջ դիմադրության, որը ղեկավարեց Հովհաննես Արչակունի իշխանը, նեցուկ ունենալով իր երիտասարդ որդուն՝ Արտավանին:

Սրանք սպանում են բյուզանդական պրոկոնսուլ Ակակիոսին, անցնում են Պարսկական Հայաստան, ապա, կրկին վերադառնալով իրենց երկիրը, ղեկավարում են բորբոքված ապստամբությունը, սպանում նաև Ակակիոսին փոխարինողին, լուրջ մտահոգություն պատճառելով Բյուզանդիոնին: Հուստինիանոսը նրանց դեմ ուղարկում է Սիտտաս զորավարին, որին նույնպես հաղթել են հայերը և սպանել: Սակայն, Հովհաննես Արչակունին, ընդունելով իր մտերիմ բարեկամ Բուզես իշխանի խնջույքի հրավերը, գնում է նրա մոտ և դավաճանությամբ սպանվում, թեև դրանով չեն դադարում Արևմտյան Հայաստանում ծայր առած հուզումները:

Այս բոլոր դեպքերը կատարվել են Եկեղյաց գավառում, դիմադրությունը ծրագրվել է Երզնկայում, կամ նրա մոտակա Հուստինիանոպոլսում:

Հովհաննես Արչակունու մահից հետո հայերը դիմել են պարսից Խոսրով I թագավորին և օգնություն խնդրել: Խոսրովը, որ արդեն պատրաստվում էր պատերազմի բյուզանդացիների դեմ, հասնում է մինչև Անտիոքի դռները, սակայն հայերին ոչ միայն չի օգնում, այլ վերադարձին, Արևմտյան Հայաստանից անցնելով, իր հետ Պարսկաստան է տանում տասնյակ հազարավոր հայ գերիների, որոնցից շատերին, բոլորն էլ կույս աղջիկներ, նվիրում է դաշնակից Թուրքերի թագավորին՝ խաքանին: Աղջիկները, չցանկանալով ընկնել հարեմը, ճանապարհին իրենց գցել են գետը և խեղդամահ եղել:

Այս անհաջող ապստամբությունից հետո հայ նախարարներից շատերը թողել են Հայաստանը և մեկնել Բյուզանդիոն, որտեղ նրանք ոչ միայն չեն պատժվել, այլև արժանացել են պատիվների ու բարձր պաշտոնների:

Հայերը ոչ միայն Բյուզանդական կայսրության մեջ են պետական բարձր պաշտոնների արժանացել, այլև թափանցել են բալկանյան այլ երկրներ, իշխող դիրքեր գրավել: Այս տեսակետից բնորոշ է 997 թվականին Բուլղարիայի գահի վրա մի դերջանցի հայի՝ Սամուել (Սամուիլ) Կոմսաձագի բազմելը, որի մասին խոսում է Ասողիկ պատմիչը, իսկ 1898 թ. Մակեդոնիայի Գերման գյուղում հայտնաբերվել է այդ թագավորի դամբարանը՝ ընդարձակ տապանագրով, որտեղ

տեղեկություններ ենք գտնում անգամ Սամուելի հարազատների, այդ թվում կնոջ՝ Հռիփսիմեի մասին[1]:

4. ԵՐԶՆԿԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԳՐԱՎՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Զնայած արաբական արշավանքների և Հայաստանում նրանց ունեցած գերիշխանության մասին գոյություն ունի հարուստ գրականություն, թե՛ հայկական և թե՛ օտար (արաբական, ասորական, հունական) աղբյուրներում, շատ հարցեր մնում են դեռ անորոշ, մասնավորապես արաբական առաջին արշավանքների տարեթվերին վերաբերող:

Արաբների առաջին մեծ արշավանքի մասին Հովհան Մամիկոնյանը գրում է թե Հերակլ կայսրը Խոսրովին սպանելուց հետո մեկնել է Կոստանդնուպոլիս, իսկ դրանից ութը տարի անց մեծ զորքով Հայաստան է եկել Մահմեդի քեռորդի Աբդռահիմը, հայերից հարկեր է պահանջել: Հայերը մերժել են և զինված դիմադրություն ցույց տվել: Աբդռահիմի զորքերը մտել են Հայաստան, զինված ուժերով գանձել հարկերը՝ վերադարձել: Ասելով թե նա եղել է Հայքում, Բասենում, Վրաստանում, Ջավախքում, Վանանդում, Մամիկոնյանը շարունակում է. «ի սոյն ամի քակի եկեղեցին, որ յԱչտից վանսն՝ հիմնարկեալ ի սրբոյն Գրիգորէ, և Կարապետն, որ յԻննակնեանսն, և կաթողիկեն, որ ի Թիլն»[2]:

Հ. Մանանդյանն այս արշավանքի թվականը համարում է ոչ թե 636-ը, ինչպես ընդունում է Մ. Զամչյանը և նրան կրկնել են հետագա բոլոր պատմաբանները, այլ՝ 640-ը:

Բայց մեզ թվականը չէ, որ հետաքրքրում է, այլ այն փաստը, որ, ինչպես վերևում մեջ բերված վկայությունից էլ երևում է, արաբներն իրենց հենց առաջին արշավանքի օրերին եղել են Եկեղյաց գավառում և ավերել են Թիլ ավանի պատմական վանքը:

Անշուշտ ուրիշ Թիլեր էլ եղել են պատմական Հայաստանում, սակայն դրանք փոքր գյուղեր են: Որ խոսքը վերաբերում է Երզնկայի մոտ գտնվող Հայտնի Թիլ ավանին, ընդունում են բոլորը: Օրինակ «Բնաշխարհիկ բառարանում» Թիլ ավանին նվիրված հոդվածում կարդում ենք. «Ավանիս եկեղեցիներուն մեջ հռչակված է Կաթուղիկե

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Յար Սամուելի հայկական ծագման խնդիրը, տե՛ս «Հայրենիք», ամսագիր, 1934, դեկտեմբեր, էջ 133 և հտ.: Հմմտ. նաև* **Կ. Քացարով,** *Պատմական կապեր Պուլկարիո և Հայաստանի միջև, տե՛ս «Մասիս», տարեգիրք, Սոֆիա, 1934, էջ 243:*

[2] **Հովհան Մամիկոնյան,** *Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 286:*

կոչվածը, զոր հիմնարկած էր ս. Գրիգոր և չինած ավարտած Մեծն Ներսես՝ որուն մեջ ալ թաղվեցավ իր մարմինը, Խախ գյուղեն բերելով: Այս հռչակավոր եկեղեցին և մերձակա վանքը, 639 թվին Ապտուռահիմ Մահմեդ II-ի քեռորդին Հայաստան արշաված միջոցին կործանեց և սպանեց եկեղեցվույն և վանաց սպասավորները, որով անչքացավ տեղը»[1]:

Հայտնի է, որ արաբները սկզբում հարձակվել են Պարսկաստանի վրա, և 637 թ. գրավել Պարսկաստանի մայրաքաղաք Տիզբոնը, իսկ 642 թ. Նեհավենդի ճակատամարտը վերջ է տվել Սասանյան դինաստիայի դարավոր տիրապետությանը: Դրանից հետո ավելի ևս հեշտացել է Հայաստանի մյուս մասերի գրավումը:

Պարսկաստանի նման հզոր մի կայսրության այդպիսի արագ կործանումը, արաբական ուժի օրեցօր հզորացումը նկատելի փոփոխություններ են մտցրել Հայաստանի ղեկավար շրջաններում:

Ավելի է սրվել հայ նախարարների, իշխանների միջև գոյություն ունեցող հակամարտությունը: Աշխարհիկ և հոգևոր ղեկավարներն ըստ էության բաժանվել են երկու տարբեր ուղղությունների: Մեկը՝ Ներսես Գ կաթողիկոսի գլխավորությամբ, պաշտպանել է Բյուզանդիային՝ հաշվի առնելով նրա քրիստոնեական կրոնը, բարձր մշակույթը, սահմանակից լինելը և այլ հանգամանքներ: Մյուս հոսանքը, որի գլխավորողն է եղել հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունին, նեցուկ ունենալով բնակչության մեծ մասին, ունեցել է արաբական կողմնորոշում, նրանցից սպասելով քաղաքական թեկուզ սահմանափակ ինքնուրույնություն: Թեոդորոս Ռշտունին հաշվի էր առնում նաև հարևան երկրների՝ Վրաստանի և Աղվանից աշխարհի դիրքորոշումը դեպի արաբները և դաշնակցելը հայերի հետ:

Դվինի 648 թ. հայտնի ժողովում հայերի վճռական դիրքորոշումը ընդդեմ քաղկեդոնականության և հունական եկեղեցու գերիշխանության, ըստ էության Թեոդորոս Ռշտունու և նրա կողմնակիցների հաղթանակն էր ընդդեմ հունասերների:

Որ Արաբական խալիֆաթի հետ հաշտ քաղաքականություն վարելը այդ թվականներին ձեռնտու էր քայքայված, հյուծված, մասնատված Հայաստանի համար, երևում է 652 թ. Դամասկոսում արաբների հետ կնքված դաշնագրից, որի մեջ հատկանշական են եղել հետևյալ կետերը. ա) Հայաստանն ընդունում է Արաբական խալիֆայության գերիշխանությունը, բ) հայերը երեք տարի ազատվում են հարկային պարտականություններից, իսկ երեք տարին անցնելուց

---

[1] **Ս. Էփրիկյան,** *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատ. Բ, Վենետիկ, 1907, էջ 37:*

հետո տրվելիք հարկի չափը պետք է որոշվեր իրենց՝ հայերի կողմից, գ) Հայաստանին իրավունք էր տրվում ունենալու 15.000 հոգուց բաղկացած հեծելազոր, որի ծախսը հոգալու էր խալիֆայությունը: Հայկական այդ հեծյալ ուժերը պաշտպանելու էին Հայաստանի և Անդրկովկասի սահմանները, դ) Արաբական խալիֆայությունը պարտավորվում էր պահպանել Հայաստանի ներքին ինքնուրույնությունը: Արաբները չպետք է գրավեին Հայաստանի բերդերն ու ամրությունները և չպետք է այնտեղ տեղավորեին զինվորներ ու զինվորականներ, ե) օտար տերությունների և Բյուզանդիայի հարձակումների ժամանակ Արաբական խալիֆայությունը պարտավորվում էր օգնել հայերին[1]:

Ինչպես տեսնում ենք, պայմանագիրը կարծեք ոչ թե հաղթող և պարտվող երկու պետությունների է վերաբերում, այլ հավասար պետությունների, անգամ հետագայում տրվելիք տուրքի քանակը որոշելու էին հայերը:

Անչուշտ արաբները կնքելով նման դաշնագիր, հետապնդում էին քաղաքական որոշակի նպատակներ և դա ամենևին էլ չէր բխում նրանց հայասիրական վերաբերմունքից: Որ դա այդպես էր, ցույց տվեց մոտ ապագան:

Նույն 652 թ. Կոստանդ II կայսրը մեծ զորքով ներխուժում է Հայաստանի խորքերը, հասնում Դվին, Ներսես կաթողիկոսի և նրա համախոհների կողմից ընդունվում պատիվներով, Դվինում հունական ծեսով մատուցում է պատարագ:

Այս խրախճանքն էլ կարճ է տևում: Թեոդորոս Ռշտունին և նրան օգնության եկած արաբական զորամասերը ստիպում են բյուզանդացիներին նահանջել:

Արաբները բյուզանդացիների այս նոր պարտությունից հետո փոխում են իրենց քաղաքականությունը: Պատրվակ բռնելով այն, թե հայ նախարարները գործում են ինքնագլուխ, 654 թ. նրանք Հաբիբ Իբն Մասլամայի գլխավորությամբ հարձակվում են Հայաստանի վրա և սուգ ու ավեր սփռում ամբողջ երկրով մեկ: Իբն Մասլաման Արաբիա է վերադառնում մեծ ռազմավարով, հայ մեծամեծներին ու նրանց ընտանիքի անդամներին գերի վերցրած:

Արդ՝ ի՞նչ վիճակում է ապրել Երզնկան դրամատիկական դեպքերով լի այս ժամանակաշրջանում: Անչուշտ ավելի մոտ գտնվելով սահմանակից Բյուզանդիային, հունասեր տարրն այնտեղ ավելի ուժեղ է եղել, քան Արևելյան Հայաստանում:

---

[1] *«Հայ ժողովրդի պատմություն» (բուհական դասագիրք), Երևան, 1975, էջ 350-351:*

Մ. Օրմանյանը, անդրադառնալով հիշյալ դեպքերին, գրում է. «Երբ Կոստանդին կայսրը 652 թ. յուր բանակով մինչև Դերջան հառաջացավ և արաբացի զորավարը չկրցավ զայն արգելել, նորեն հայոց զգացումները փոխվեցան: Հույները սկսան զորավոր երևալ, և Արաբացիք տեղի տալու կերպարան առին: Ասոր վրա անոնք, որ գրեթե բռնադատյալ միացեր էին Թեոդորոսի կազմած արաբական դաշնագիրին, կամաց կամաց կայսեր կողմը անցան: Պատմությունը հանվանե կհիշե Ծոփաց, Սպերի, Բագրատունյաց, Մանանաղվո, Եկեղյաց, Կարնո, Տայոց, Բասենի, Վանանդա, Շիրակա, Խորխոռունյաց, Մամիկոնեից, Առավեղյանց, Առանյանց, Վարաժնունյաց, Գնթունյաց և Սպանդունյաց նախարարները, որ իրենց գունդերով կայսեր հպատակություն հայտնեցին, հորդորվելով և քաջալերվելով կաթողիկոսեն և եպիսկոպոսներեն: Իսկ Թեոդորոս Ռշտունի հաստատուն մնաց ուրիշ 40 գլխավոր իշխաններով»[1]:

Կնշանակի բյուզանդական և հակաբյուզանդական պայքարի օրերին Եկեղյաց գավառը կողմ է եղել Կոստանդին կայսեր հովանավորությանը:

Թեոդորոս Ռշտունու մահից հետո (654) հակաբյուզանդական քաղաքականությունը շարունակել է նրա որդին՝ Վարդ Պատրիկը: Նա հայտնել է արաբներին, որ եթե նրանք հարձակվեն հունական Հայաստանի վրա, ապա ինքը կօժանդակի նրանց:

Շապուհ Բագրատունուն վերագրվող Պատմության մեջ գրված է. «Եւ երդումն արարին միմեանց ճշմարտութեամբ: Եւ ապա ժողովեաց ըզզաւրս բազումս Սահակ որդին Հուրմիզտա արքային Պարսից եւ եկն էհաս ի երկիրն Հոռոմոց և աւար էհար զԹեոդոպալիս, որ է Կարնոյ քաղաք, և Դերջան և Եկեղեաց և եկեալ հասեալ ի Կոլանիայ և բնակեցաւ յեզր գետոյն»[2]:

Բայց չատ բան է փոխվում Հուստինիանոս II-ի գահ բարձրանալուց հետո (685): Նա վերսկսում է պատերազմը արաբների դեմ, Բյուզանդիային պատկանող նախկին հողերը ետ վերցնելու ծրագրով, հայերին էլ դիտելով որպես բյուզանդացիների թշնամիներ: 689 թ. Հայաստան է ուղարկում բյուզանդական մեծ բանակ Լեոնտիոս զորավարի հրամանատարությամբ, նրան տալով հայերի նկատմամբ անողոք լինելու հրահանգ:

Բյուզանդական զորքը, մտնելով Հայաստան, անխնա կոտորել է բնակչությանը, կողոպտել նրա ունեցվածքը, ավերել բնակավայրեր,

---

[1] **Մ. Օրմանյան,** *Ազգապատում, հատ Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 123:*

[2] **Շապուհ Բագրատունի,** *Պատմութիւն, էջմիածին, 1921, էջ 31:*

այդ թվում ճարտարապետական հուշարձաններ: Ղևոնդ պատմիչը այսպես է նկարագրում Հուստինիանոսի զորքի վայրագությունները.

«Եւ յերկրորդում յամի թագաւորութեանն Յուստինիանոսի կայսեր, և յիշխանութեանն Աշոտի պատրիկի առաքէ զօր բազում ի վերայ աշխարհիս Հայոց. որք եկեալ աւերեցին զաշխարհիս աւարառութեամբ և զբազում գեղեցկայարմար շինուածս հրձիգ արարին յաւեր դարձուցանելով, և ինքեանք դառնային յաշխարհն իւրեանց»[1]:

Նույն բանը վկայում է Ասողիկը, գրելով. «Իսկ Յուստիանոս ի յերրորդ ամի թագաւորութեանն իւրոյ զօր սաստիկ առաքեաց ի Հայս. և հրով և գերութեամբ քանդեցին զաւառս ԻԷ, ԸՌ երդ գերեալ վաճառեցին»[2]:

Ուրեմն քրիստոնյա հույները, որոնք եկեղեցիներում քարոզում էին անհիշաչարություն և մարդասիրություն, Հայաստանում ավերել են 25 գավառ, գերի տարել 8000 մարդ:

* * *

Նոր դարը ավելի աղետավոր եղավ հայ ժողովրդի համար:

696 թ. արաբական մի մեծ բանակ ներխուժում է Հայաստան: 2–3 տարվա համառ կռիվներից հետո արաբները նվաճում են ոչ միայն Հայաստանը, այլև ամբողջ Անդրկովկասը, ներառյալ Վրաստանն ու Աղվանից աշխարհը: 700 թ. սկսած այդ ամբողջ տարածքը ենթարկվում է Արաբական խալիֆայությանը:

Թե արաբները ինչպիսի ահռելի տուրքեր էին դրել դժբախտ հայ ժողովրդի վրա, այդ հարկերը գանձելու ինչ վայրագ եղանակներ էին կիրառում, հայ ժողովրդի ազգային ու կրոնական սրբությունները ինչպես էին ոտնահարում, ստիպում հայերին դիմելու զանգվածային արտագաղթի, այս մասին շատ է գրվել: Դրանք իրենց արտացոլումն են գտել նաև հայ ժողովրդի անմահ էպոսում՝ «Սասնա ծռերում»:

Մեր ծրագրից դուրս է մանրամասնությունների մեջ մտնելը:

Կանգ առնենք Արևմտյան Հայաստանում տիրող դրության վրա, այսինքն՝ հայկական այն նահանգների, որոնք գտնվում էին Բյուզանդական կայսրության ազդեցության տակ, որոնց մեջ էր Երզնկան:

Արդեն տեսանք, թե քրիստոնյա Բյուզանդիան ինչպես էր կեղեքում քրիստոնյա հայ ժողովրդին՝ Հուստինիանոսի թագավորության տարիներին: Այդ նույն քաղաքականությունը անփոփոխ կիրառվեց նաև հետագայում:

---

[1] «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց», Պետերբուրգ, 1887, էջ 17:

[2] **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ**, էջ 100:

Հայաստանի արևմտյան նահանգներում տիրում էր հողատիրության ֆեոդալական այն կարգը, որ կար Բյուզանդիայում: Բյուզանդիայի կայսր Լևոն III Իսավրացու հրատարակած օրենքներով Հայաստանում ոչնչացվեցին գյուղական ազատ համայնքները. «Համայնքի սկզբունքներով կազմված առանձին տնտեսությունների մեջ աշխատող գյուղացիներն աստիճանաբար կախման մեջ էին ընկնում աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներից: ... Արևմտյան Հայաստանում կիրառվում էր նաև ստրուկի աշխատանքը: Ստրուկներն աշխատում էին հիմնականում ֆեոդալների տներում, եկեղեցիներում և վանքերում»[1]:

Հայտնի է, որ Բյուզանդիայում եկեղեցիները, վանքերը ապահովված են եղել մեծ տարածություններ ընդգրկող կալվածներով, ճորտերով: Միմյանց հաջորդող բոլոր կայսրերը իրար հետ մրցել են եկեղեցապատկան կալվածները ընդարձակելու, վանքերում ընդգրկված հոգևորականների թիվը մեծացնելու հարցում: 7-րդ դարում մայրաքաղաք Կ. Պոլիսն ունեցել է 80 վանք, եղել են վանքեր, որտեղ ապրել են 2000-ից ավելի հոգևորականներ, նույնքան էլ կույսեր: Եկեղեցին ըստ էության իր ձեռն էր վերցրել երկրի մշակովի հողերի մեկ երրորդից էլ ավելին:

Նույն վիճակն է տիրել նաև Արևմտյան Հայաստանում 7–9-րդ դարերում:

Քիչ փաստեր ունենք Եկեղյաց գավառում այդ դարերին գործող եկեղեցիների և վանքերի մասին, բայց որ Հայաստանում նույնպես, հետևելով Բյուզանդիայի օրինակին, եկեղեցին բացառիկ ուշադրության է արժանացել, կասկածից վեր է:

Գործել են մի քանի տասնյակ հայտնի վանքեր, որոնք հետագա դարերում ավելի են ուշադրություն գրավել իրենց կրթա-մանկավարժական և մատենագրական գործունեությամբ: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ այդ վանքերը քրիստոնյա Բյուզանդիայի ազդեցության տակ ավելի քիչ հնարավորություն են ունեցել զբաղվելու մատենագրությամբ, քան հետագա մի քանի դարերում: 7–9-րդ դարերում Երզնկայի վանքերում ապրող հոգևորականների մեջ հատ ու կենտ անուններ ենք հանդիպում, որոնք գրական-թարգմանչական աշխատանքով են զբաղվել: 919 թ. մատենագիր և կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին այցելել է Եկեղյաց գավառը, շրջագայել վանքերն ու ճգնավորների քարայրները, այդ թվում Մանյա քարայրը, որտեղ ըստ ավանդության անց է կացրել իր կյանքի վեր-

[1] «Հայ ժողովրդի պատմություն» (բուհական դասագիրք), էջ 370-371:

ջին տարիները Գրիգոր Լուսավորիչը: «Տեսի անդ,- գրում է Հովհաննես Կաթողիկոսը,- փոքր ինչ փորուած այր ի ծործորս քարանձաւի միոյ դժուարամուտ դրամբք և անհամբոյր առ ի բնակել սակս քարաժեռ խոշորութեանն, յորում և տէրունական սեղան ի նմա կանգնեալ միշտ Քրիստոսի բնակելոցն ի նմա նուիրականաց պատարագաց: Զկնի ապա ահիւ սրտի չոգայ կացի ընդ քարաժեռ վիմին, յորում և լուսաւորութեանս մերոյ առիթն՝ երկօրեայ ի նմա առկացեալ սպասէր կատարման սրբոյն Մանեայ... Տեսի անդ ի ծործորս և յամուրս քարանձաւաց բնակեալ արս կուսակրօնս խարազնազգեացս գետնախչտիս, բոկագնացս խոշորաճաչակս, մշտամոունչ յաղօթս և յաղերսալի պաղատանս աչակերտք արդար վաստակոց և ծնունդք առաքինութեան: Եւ սոքա ոչ թերևս միախուռն ի միասին բնակեալք, այլ ցանուցիր առ ստորոտով լերինն կալեալ կայանս. որք և բազմաչխատ քրտամբք երկոց իւրաքանչիւր ոք զհարկաւոր պէտս մարմնոցն վճարէին»[1]:

Այլ փաստեր էլ կան, թե Երզնկայի շրջակայքի, մասնավորապես Սեպուհ լեռան լանջերի քարանձավներում որքան շատ նման ճգնավորներ են ապրել:

Պահլավունյաց տոհմից Վահրամ իշխանը Մարմաշենի եկեղեցու վրա թողել է ընդարձակ արձանագրություն, որից պարզվում է, որ ի թիվս այլ վայրերի, նա 986 թ. մի եկեղեցի է կառուցել Եկեղյաց գավառում:

Ամփոփելով 7–9-րդ դարերի Երզնկայի մասին մեր ասելիքը, նշենք, որ հակառակ Հ. Քյուրտյանի այն ընդհանուր բնութագրմանը, թե Երզնկան եղել է մշտավառ ջահ և լուսատու կենտրոնական փարոս, որ «դարերու մեջեն ջամբած է կրոնական, գրական, գեղարվեստական ներշնչում, լույս, կյանք, ջերմություն հանուր հայության, հեթանոս թե քրիստոնյա, ազատ թե գերի դարերու ամբողջ ընթացքին», գեթ չի վերաբերում այն դարերին, որի մասին խոսեցինք: Այդ բնութագրումը կարող է վերաբերվել հաջորդ մի քանի դարերին:

---

[1] **Հովհաննես Դրասխանակերտցի**, *Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 286–288:*

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ԱՂԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

1. ԱՂԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աղանդավորական շարժումները հայ ժողովրդի պատմության ուշագրավ էջերից են: Դրանք արտացոլում են դասակարգային այն խոր ներհակությունները, որոնք ուղեկցել են մեր ժողովրդին խոր անցյալից մինչև մեր ժամանակները:

Ընդունելով հանդերձ, որ աղանդավորական շարժումների սոցիալական արմատները խորապես դասակարգային են, չենք կարող անտեսել նաև այն իրողությունը, որ իշխաններ, իշխանուհիներ, անգամ հոգևորական բարձրաստիճան գործիչներ մասնակցել են շարժմանը կամ աչք են փակել նրա դեմ մղվող պայքարին: Բայց դա ամենևին չի փոխում շարժման գաղափարախոսության սոցիալական էությունը, այն որ նրանում ընդգրկված են եղել հիմնականում աշխատավոր խավերը, որոնք հավասարապես դժգոհ են եղել թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ շահագործողներից:

Պավլիկյան շարժումն սկիզբ առնելով Հայաստանում արագորեն տարածվել է նրանից դուրս, թափանցել Բյուզանդական կայսրություն, այնտեղից՝ Բուլղարիա, հարևան այլ երկրներ, մյուս կողմից՝ մխրճվել դեպի Արևմուտք, հասել մինչև Ֆրանսիա և այլուր:

Նախքան պավլիկյան շարժման մասին ըստ էության խոսելը, շատ ընդհանուր գծերով ծանոթացնենք աղանդավորական այն խմորումները, որոնք նախորդել են պավլիկյանությանը և ծնել այդ հուժկու շարժումը:

Աղանդավորական գաղափարներ տարածվել են Հայաստանում քրիստոնեական կրոնի ընդունումից անմիջապես հետո, որպես այդ կրոնի ընդդիմադիր գաղափարախոսություն: Եվ որովհետև հեթանոսության դեմ մղվող պայքարը շատ սուր է եղել, մարդիկ իրենց գաղափարները քարոզել են քրիստոնեության չղարշի տակ թաքցրած:

Այդպիսի աղանդավորական գաղափարախոսություններ են պաշտպանել մանիքեականները, բորբորիտները և մծղնեականները, երեքն էլ օտարամուտ վարդապետություններ, որոնք Հայաստանում պարարտ հող են գտել քրիստոնեական դոգմաներից դժգոհ ժողովրդի մեջ:

Սրանք բոլորն էլ այս կամ այն կողմից հակադրվում էին քրիստոնեական կրոնի հիմնական սկզբունքներին:

Մանիքեականությունը, օրինակ, ընդունում էր չար և բարի արարիչների գոյությունը. իբր թե չարն ու բարին են ստեղծել տիեզերքը: Չարն ու բարին անսկիզբ են, գոյություն են ունեցել միմյանցից անկախ և միշտ պայքարի մեջ են եղել միմյանց դեմ: Ըստ այդմ էլ մարդ արարածը կազմված է երկու տարրերից՝ հոգուց, որը բարու արտահայտությունն է, մարմնից, որը չարի կողմն է: Չարը միշտ աշխատում է հոգին պահել իր ազդեցության տակ: Մարդկանց չարի ճիրաններից ազատելու համար լույսի թագավորության կողմից աշխարհ են ուղարկվել մարգարեները՝ Բուդդան, Հիսուսը և ուրիշներ:

Մինչև այստեղ քիչ բան կա քրիստոնեության դեմ, քանի որ այդ կրոնն էլ կարևորություն էր տալիս հոգուն և աշխատում էր այն փրկել մարմնական վայելքի չարիքներից:

Մանիքեականությունը, սակայն բացեիբաց ժխտում էր քրիստոնեական կրոնի հիմքը կազմող մի քանի գաղափարներ, ինչպես մեռելների հարության գաղափարը, որ նշանակում էր մերժել հենց Քրիստոսի հարությունը: Քարոզում էր ուղղակի երկրպագել արեգակին, ընդունելով, որ Հիսուսի և այլ մարգարեների հոգիները պարփակված են արեգակի մեջ:

Իսկ դա զրադաշտական դրսևորումն էր նոր կաղապարի տակ:

Մանիքեականության ամենից համարձակ գաղափարը Մարիամ Աստվածածնի անարատ հղիության ավանդության ժխտումն էր:

Բորբորիտների աղանդի դեմ մղված պայքարը նույնքան և գուցե ավելի խիստ է եղել, մի բան, որ բացատրվում է նրա հետևորդների թվի մեծ լինելով: Սրանք համարվել են անբարոյականներ, անիշխանականներ, որոնք ո՛չ օրենքի են ենթարկվել, ո՛չ կրոնքի:

Այս աղանդին հետևողներն ավելի աշխույժ են եղել Արևմտյան Հայաստանում: Հունաց պատրիարք Ատրիկոսը առաջարկել է խրստագույնս պատժել նրանց, արմատախիլ անել բորբորիտների աղանդը: Գործադրվել են պատժի սարսռազդեցիկ միջոցներ՝ հատուկ գործիքներով մարդկանց տանջել, խանձել նրանց մարմինը՝ խարաններ դրոշմելով, վերջապես սպանել: Կան փաստեր, որ նման պատիժներ են կիրառվել բորբորիտների դեմ Դերջանում, Սպերում և այլ վայրերում:

Ինչու՞ է այսքան դաժան վարվել քրիստոնեական եկեղեցին այս աղանդին հետևողների դեմ: Պարզվում է, որ բորբորիտների ուսմունքը հատման կետեր է ունեցել հեթանոսական կրոնի հետ: Հունական և հայկական եկեղեցիները հանձին բորբորիտների՝ տեսել են հին աստվածներին վերադառնալու միտում: Բորբորիտները քարոզել են ազատ կենակցություն երկու սեռերի, եկեղեցական ամուսնական օրենքների մերժում:

Հինգերորդ դարի առաջին կեսից Հայաստանում տարածվել է նաև մծղնեականությունը: Սա էլ այնքան երկյուղ է պատճառել հայոց եկեղեցուն, որ 443 թ. Շահապիվանի ժողովում հատուկ օրենք է ընդունվել նրա դեմ: Այդ օրենքից երևում է, որ մծղնեականությունը տարածված է եղել նաև հոգևորականության մեջ: Արգելվել է հոգևորականներին իրենց տներում կին ծառայողներ պահել: Զանցառուները կարող էին պատժվել ամենախիստ կերպով, ընդհուպ նրանց ճակատներին աղվեսադրոշմ խարանելով, մարմնի ջղերը կտրելով և անդամալույծ դարձնելով:

Ուսումնասիրողներն այն կարծիքն են հայտնել, թե վերոհիշյալ երեք աղանդները նախապատրաստել են պավլիկյան շարժումը: Ինչ խոսք այդքան լայն տարածում գտած և հոգևորականությանը այդքան մտահոգող հերձվածային համարվող գաղափարները հեշտությամբ չէին կարող արմատախիլ արվել հայ ժողովրդի մեջ և իրենց արտահայտությունները պիտի գտնեին քրիստոնեական եկեղեցուն ընդդիմադիր ամեն մի շարժման մեջ, սակայն, դրանով հանդերձ, հակված ենք կարծելու, որ առանց դրանց էլ՝ սոցիալ-տնտեսական և քաղաքական այն խստագույն պայմանները, որ տիրում էին Հայաստանում, ծնունդ կարող էին տալ պավլիկյան շարժման նման գաղափարախոսությունների և տվել են:

Մեր հիշատակած աղանդների քարոզած մտքերից մի քանիսի առկայությունը պավլիկյանների մոտ, այդ բանի էությունը չի փոխում:

2. ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵԿԵՂՅԱՑ ԳԱՎԱՌՈՒՄ

Պավլիկյան շարժման մասին հայ և օտար լեզուներով ստեղծվել է վիթխարի գրականություն: Նախախորհրդային հայ պատմագրությունը, ստեղծված մեծ մասամբ հոգևորականների կողմից, շարժումը գնահատել է ավանդական գաղափարախոսության դիրքերից (Բ. Սարգիսյան, Մ. Օրմանյան և ուրիշներ): Պավլիկյանների մասին

հատուկ ուսումնասիրություն և տեղեկատու նյութեր է հրատարակել Կ. Տեր-Մկրտչյանը[1], իսկ հատուկ հետազոտություն ունի պատմաբան Ստ. Մելիք-Բախչյանը[2]:

Մենք այս հարցի վրա կանգ ենք առնելու ոչ միայն այն պատճառով, որ չարժման տարողությունը դուրս է եկել հայկական շրջանակներից և ստացել է համաշխարհային նշանակություն, ավելի քան երկու հարյուր տարի, իրենով զբաղեցնելով շատ պետությունների, այլև այն պատճառով, որ պավլիկյանների գործունեության հիմնական կենտրոնը Հայաստանում եղել է Եկեղյաց գավառը:

Ստ. Մելիք-Բախչյանն իր գրքում տպագրել է ուշագրավ մի քարտեզ, որտեղ ցույց են տրված աղանդի կենտրոնները Արևմտյան Հայաստանում: Բավական է մի ակնարկ գցել այդ քարտեզի վրա, համոզվելու համար թե իսկապես Եկեղյաց գավառը եղել է պավլիկյան չարժման կենտրոնը:

Մյուս կողմից՝ այդ քարտեզին նայողը հեշտությամբ կարող է համոզվել, թե ինչու նման մի աղանդ պիտի սկզբնավորվեր հենց այն վայրերում, որտեղ ժամանակին ամենից ավելի ուժեղ էր հեթանոսական կրոնը, որտեղ գտնվում էին Անահիտի, Արամազդի և այլ աստվածությունների տաճարները:

Թե երբ է առաջացել պավլիկյան չարժումը, այս մասին կան տարբեր կարծիքներ: Ամենից հավանականն այն է, որ պահպանվել է բյուզանդական սկզբնաղբյուրներում: Ըստ այդ վկայության, չարժումը սկզբնավորվել է 5-րդ դարի վերջերին կամ 6-րդ դարի սկզբներին:

Մանիքեական ուսմունքին հետևող սամոսատցի Կալինիկե անունով մի կնոջ որդու՝ Պողոսի անվան հետ է կապվում չարժումը[3]:

Ծագումով հայ այս Պողոսը ապրել է 5-րդ դարի վերջերին և 6-րդ դարի սկզբներին: Նա է հիմնադրել աղանդը, նրա գործը շարունակել են ուրիշները:

Պավլիկյանների անունը առաջին անգամ մեր մատենագրության մեջ հիշատակվել է 6-րդ դարի կեսերին: 554 թ. Դվինում գումարված եկեղեցական ժողովում ընդունված «Ուխտ միաբանության Հայոց աշխարհիս» փաստաթղթում դատապարտվելով նեստորականությունը, ասվում է թե այդ աղանդն իր գաղափարները վերցրել է պավլիկյաններից:

---

[1] **Կ. Տեր-Մկրտչյան,** *Պավղիկյանք Բյուզանդական կայսրության մեջ և մերձավոր հերձվածային երևույթներ Հայաստանի մեջ, Երուսաղեմ, 1938:*

[2] **Ստ. Մելիք-Բախչյան,** *Պավլիկյան չարժումը Հայաստանում, Երևան, 1953:*

[3] *Նույն տեղում, էջ 135:*

Բայց դրանից հետո ավելի քան մեկ դար Արևելյան Հայաստանում այլևս չի հիշատակվում հիշյալ աղանդի անունը: Մեկ էլ Հովհան Օձնեցու նախաձեռնությամբ 719 թ. Դվինում հրավիրված ժողովում է, որ ոչ միայն հիշատակվել է, այլ ժողովի ընդունած կանոններից 32-րդն ամբողջությամբ վերաբերում է պավլիկյաններին: Այստեղ հավատացյալներին հրահանգ է տրվում՝ օթևան չտալ նրանց, հաղորդակցություն չունենալ, նրանց համարել «սատանայի որդիներ»: Առաջարկվում է անհնազանդներին ենթարկել մարմնական խոշտանգումների:

Արևմտյան Հայաստանում պավլիկյան շարժման առաջնորդն է եղել հայազգի Կոստանդին-Սիլվանը, որը ծնվել է Երզնկային անմիջապես մոտ գտնվող Մանանաղի ավանում: Գործել է 654 թվականից: Իրեն հայտարարել է Պողոս առաքյալի կողմից ուղարկված: Կարճ ժամանակում շարժումը տարածվել է ոչ միայն Եկեղյաց գավառում, այլև Պոնտոսում, Կապադովկիայում և այլ վայրերում:

Բյուզանդական կայսր Կոնստանդին IV-ը պավլիկյաններին ճնշելու համար Արևմտյան Հայաստան է ուղարկել Սիմեոն զորավարին, որին հաջողվել է սպանել տալ 27 տարի այդ աղանդը ղեկավարող Սիլվանին: Բայց հենց ինքն էլ, խանդավառվելով նոր գաղափարներով, անցել է պավլիկյանների կողմը, դարձել նրանց ղեկավարը: Կայսրը նրան հրավիրել է մայրաքաղաք և այրել խարույկի վրա:

Սիմեոնից հետո պավլիկյանների առաջնորդն է դարձել «Պողոս հայի» որդի Գենեսիոս-Տիմոթեոսը, որը գործել է 7-րդ դարի վերջերին և 8-րդ դարի սկզբներին: Այս մարդը նույնպես կանչվել է Կ. Պոլիս և ենթարկվել հարցաքննության, սակայն, խորամանկ ու երկիմաստ պատասխաններ տալով կեղծել է, իրեն ներկայացրել հավատարիմ քրիստոնեական բոլոր օրենքներին: Պարզվում է, որ պավլիկյանների կարգախոսներից մեկն է եղել «Երդվիր, երդմնազանց եղիր, բայց գաղտնիքդ մի հայտնիր»:

Պավլիկյան շարժումը շատ ավելի մեծ ծավալ է ստացել Բյուզանդական կայսրուհի Իրենեի տարիներին՝ 797–802 թթ., երբ շարժման առաջնորդն է եղել Սերգիոս Տյուքիկոսը:

«Սերգիոսը,- գրում է բյուզանդական պատմիչներից մեկը,- Քրիստոսի խաչի թշնամին է, անաստվածության քարոզիչ, Աստվածամորը և բոլոր սրբերին հայհոյող, առաքյալներին թշնամի, մարգարեներին ատող, աստվածային սուրբ գրքերը խեղաթյուրող, դրանք առակների և հեքիաթների վերածող»[1]:

---

[1] **Ստ. Մելիք-Բախչյան,** *նշվ. աշխ., էջ 150-208:*

Այս վկայությունից կարելի է ենթադրել, որ Սերգիոսը գուցե և իր գաղափարները չարադրել է որևէ գրքում: Փաստն այն է, որ նրա օրով պավլիկյան շարժման հետևորդների թիվը հասել է հարյուր հազարների, որոնց մեջ եղել են բազմաթիվ հոգևորականներ, միանձնուհիներ, զինվորականներ:

Իրենե կայսրուհին հայ աղանդավորների դեմ կիրառել է այնպիսի պատիժներ, որոնք համեմատվել են միջնադարյան ինկվիզիցիայի պատիժների հետ: Բյուզանդական գործակալներին հաջողվել է ի վերջո անտառում սպանել տալ Սերգիոսին՝ փայտ կտրելիս: Սպանել են հենց իր կացինով:

Բայց շարժումը չի ճնշվել: Թե պավլիկյանները ինչպիսի հզոր ուժ են հանդիսացել, ցույց է տալիս այն փաստը, որ Արաբական խալիֆայությունը օգտագործել է նրանց զինվորական միավորումներին՝ Բյուզանդիայի դեմ մղած մարտերում:

Բյուզանդական արքունիքը ուղղակի պատերազմական գործողություններ է ծավալել աղանդավորների դեմ: Այս անգամ էլ պայքարը գլխավորել է Թեոփիլոս կայսեր կինը՝ Թեոդորան, որը սերած է եղել Մամիկոնյան իշխանական տնից: 843–844 թթ. նա կանոնավոր բանակներով հարձակվել է պավլիկյանների վրա, նպատակ ունենալով արմատախիլ անել նրանց: Հույները ոչնչացրել են շարժման մասնակից ավելի քան 100.000 մարդ, նրանց ունեցվածքը գրավել:

Ասպարեզ է եկել Կարբեաս անուն մի սպա, որը պավլիկյան 5000 զինվորներով պայքարել է Բյուզանդական զորքի դեմ, ստանալով արաբների աջակցությունը:

Հույն պատմիչի վկայությամբ Կարբեասը ունեցել է այնքան մեծ թվով հետևորդներ, որ տեղ չգտնելով, հարկադրված է եղել Երզնկայի մոտ կառուցել Տևրիկ քաղաքը, որը շուտով դարձել է պավլիկյանների հիմնական և խոշոր կենտրոնը: 9-րդ դարի կեսերին բյուզանդացիները քանիցս հարձակվել են Տևրիկի վրա և միշտ մատնվել են անհաջողության, ինչ որ վկայում է այդ ավանի ստրատեգիական ամուր պաշտպանական հնարավորության մասին:

863 թ. տեղի է ունեցել Պոսոնի հայտնի ճակատամարտը բյուզանդացիների և արաբների միջև: Հաղթել են հույները: Պարտվել են նաև պավլիկյան զորամասերը: Սպանվել է շարժման այդ օրերի խիզախ առաջնորդ Կարբեասը: Մի քանի տարի անց՝ 872 թվականին էլ ընկել է Տևրիկը:

Սրանից հետո է, որ Բյուզանդական կայսրությունը պավլիկյաններին վերջնականապես արմատախիլ անելու համար զանգվածային

գաղթով նրանց տեղափոխել է Թրակիա և Մակեդոնիա, առանց հաշվի առնելու, թե ինչպիսի փորձանք պիտի դառնային՝ հունական եկեղեցու գլխին՝ հենց երկրի ներսում:

Եկեղյաց գավառից և այլ վայրերից դեպի Արևմուտք են շարժվել հայերը նաև 10-րդ դարի կեսերին: Արդեն նրանց հետ էին նաև պավլիկյանների հետևորդները՝ թոնդրակեցիները: 970 թ. հայազգի կայսր Հովհաննես Զմշկիկը Բալկանների հյուսիսային սահմաններն ամրացնելու նպատակով Փոքր Ասիայից Թրակիա է գաղթեցրել մեծ թվով պավլիկյանների և նրանց ընդգրկել է սլավոնների դեմ մղվող կռիվներում:

Հենց այս հախուռն տեղաշարժերի հետևանքով պավլիկյանների գաղափարները մուտք են գործել Բալկանյան ժողովուրդների մեջ, գտել համակիրների լայն շրջանակ:

Պավլիկյանների որոշակի ազդեցությամբ է, որ 10-րդ դարում Բուլղարիայում առաջացել է բոգոմիլների աղանդավորական շարժումը, որն արագորեն տարածվել է այդ երկրով մեկ, այս անգամ էլ մտահոգություն պատճառելով տեղի ֆեոդալական կարգերին:

Միաժամանակ, շարժումը, ծավալվել է դեպի Արևմուտք, հասել Շվեյցարիա, Ֆրանսիա և այլուր, անհանգստացնելով կաթոլիկական դավանանքի կենտրոն Հռոմին: Իննոկենտիոս Գ պապը հարկադրված է եղել դաժան հաշվեհարդար տեսնել Արևելքից եկող այս ըմբոստ հոսանքի հետ:

Հետագայում, 14-րդ դարում, առավել մեծ խստություններ է կիրառել պավլիկյանների դեմ Ֆրանսիայի Ֆրանսուա I թագավորը[1]:

Ինչպես տեսնում ենք, պավլիկյան շարժումը, սկիզբ առնելով Հայաստանից, հասունացում ապրելով Եկեղյաց գավառում, տարեցտարի մեծացել է, դարձել քրիստոնեական դոգմաները ժխտող հզոր մի շարժում, որն իր ոլորտի մեջ է առել բազմաթիվ տերություններ:

Բայց ի՞նչ գաղափարներ էին քարոզում պավլիկյանները որ այդքան մեծ քանակությամբ մարդիկ, տարբեր ազգությունների պատկանող, գայթակղվում էին և միանում նրանց:

Մեզ այստեղ չի զբաղեցնում պավլիկյանների գաղափարախոսության փիլիսոփայական կողմը, այն, թե նրանք ընդունում էին բարու և չարի գոյությունը, թե բարությունը պայմանավորում էին հանդերձյալ կյանքում տրվելիք վարձատրությամբ: Անշուշտ քրիստոնեական կրոնի հիմնական սկզբունքները հերքող մի ուսմունք թեկուզ

---

[1] **Ստ. Մելիք-Բախչյան,** *նշվ. աշխ., էջ 205-206:*

արտաքին կաղապարով հատման կետեր պիտի ունենար նույն այդ կրոնի հետ:

Կարևորը պավլիկյանների գաղափարախոսության սոցիալական հիմքն էր, որով էլ հենց արագորեն խանդավառվում էր կեղեքվող, հալածվող ժողովուրդը: Այդ ուսմունքը խորապես դասակարգային էր և ուներ տնտեսական ու քաղաքական չատ հստակ դիրքորոշում: Պավլիկյանները դեմ էին ամեն կարգի անհավասարության, դասական արտոնություններին, որ վայելում էին արքայական, իշխանական տները, հոգևոր իշխանությունները, առհասարակ եկեղեցական պաշտոնյաները: Քաջ գիտակցում էին, որ իրենց չարքաշ աշխատանքի արդյունքն են վայելում պորտաբույծ այդ տարրերը:

Այս բոլորը նրանք կատարում էին քրիստոնեական եկեղեցու չատ օրենքները ժխտելով:

Օրինակ նրանք հերքում էին անդրշիրիմյան կյանքի գոյությունը, որ առաջ էր քաչում քրիստոնեական եկեղեցին, բայց նրա պաշտոնյաները առաջնությունը տալիս էին աշխարհիկ վայելքներին, ապրում էին փարթամ ու ճոխ կերպով: Ուստի, ասում էին պավլիկյանները, չպետք է խաբվել հանդերձյալ կյանքի ապառնի խոստումներով և վայելել այս աշխարհում, տեր կանգնել իրենց իսկ ստեղծած բարիքներին:

Նրանք խաբեություն էին համարում Ավետարանի այն հավաստիացումը, թե Քրիստոսը ծնվել է կույս Մարիամից: Հենց դրանով էլ դեմ էին Աստվածամոր պաշտամունքին, որ քրիստոնեական եկեղեցին պարտադրել էր հավատացյալներին:

Ժխտում էին Քրիստոսի մարդեղության գաղափարը, համարում նրան աստվածային երևույթ և հենց դրանով էլ մերժում այն բոլոր ծիսակատարությունները, որոնք կապվում էին Քրիստոսի խաչելության, հարության, մկրտության հետ: Առհասարակ դեմ էին եկեղեցու միջնորդ դերին, ասում էին թե յուրաքանչյուր ոք կարող է ուղղակի հաղորդակցել Աստուծո հետ:

Միաժամանակ ուզում էին վերականգնել հեթանոսական կրոնի որոչ կողմերը՝ արևի, լույսի պաշտամունքը: Վերջապես քարոզում էին ազատ սեր և ոչ թե անբարոյականություն, ինչպես նրանց վերագրում էին քրիստոնյա եկեղեցու պետերը:

Բայց այս բոլորի ընդունումը՝ նշանակում էր քրիստոնեական կրոնի հիմնական սկզբունքների ժխտում, առհասարակ հոգևորական գերիշխանության վերացում, քանի որ մեր նկարագրած ծեսերի միջոցով էին ապրում բազմահազար հոգևորականները՝ վարձատրվե-

լով խաչհամբույրից, մկրտությունից, հաղորդությունից, պսակից ու այլ ծիսակատարություններից:

Ահա թե ինչու քրիստոնյա եկեղեցին հանձին պավլիկյան շարժման տեսավ իր վտանգավոր հակառակորդին:

Պավլիկյանները եթե չսպառնային քրիստոնեությանը այն հիմքից կործանելու ծրագրով, Բյուզանդական կայսրերն ու կայսրուհիները, Հռոմի պապն ու եվրոպական թագավորները չէին դիմի ինկվիզատորական միջոցների՝ այն խեղդելու, ճնշելու համար:

Պավլիկյանների գաղափարախոսության հոսքը դեպի Արևմուտք, ստիպեց քրիստոնյա քարոզիչներին՝ շարժումը վարկաբեկելու համար դիմել խեղաթյուրումների: Օրինակ՝ բյուզանդական եկեղեցին անհրաժեշտ համարեց հավատացնել ժողովրդին, թե չատ հիվանդությունների, դժբախտությունների պատճառը պավլիկյանների կերպարանքով եկող չարքերն են, դևերը, սատանաները: Եվ որովհետև պավլիկյան գաղափարները Բյուզանդիա բերողները հայերն էին, ուրեմն այդ բոլորը պետք էր կապել հայերի հետ, հային համարել չարիք, դժբախտություն, և դրանով էլ աշխատել ժողովրդին հեռու պահել առհասարակ վտանգավոր հայերից:

Այս տեսակետից չափազանց բնորոշ է Բյուզանդիայի մի շարք գավառների (Թրակիա, Մակեդոնիա, Սերեզ, Քիոս կղզի և այլն) բանահյուսությունում մինչև մեր օրերը պահպանված և հայերի հետ առնչվող սնոտիապաշտական հրահանգավորումը:

*Օրինակ՝ Թրակիայի շրջանում պահպանվել է այն հավատալիքը, թե եղել են **արմենիտես** անունով չար ոգիներ, որոնք վնասում են հատկապես ծննդկաններին և նորածիններին: Ծննդաբերության օրերին նկատվող մի շարք հիվանդություններ վերագրվել են **արմենիտեսներին**, և ընդհանուր առմամբ կոչվել են **արմենիազմա**, այսինքն՝ արմենահարություն: Անգամ երեխաների հիվանդությունները վերագրում են **արմենիտես** դևերին, չար ոգիներին:*

Հունաստանի արևելյան Ռումելի, Գավաքլը գավառներում երբ ծննդաբերողը գիշերով տնից դուրս է գալիս վառված ածուխ են գցում գետինը, որպեսզի արմենահար չլինի:

*Սերեզի հույների եկեղեցիներից մեկում պահվում է մի հին մագաղաթյա ձեռագիր, որն օգտագործվում է բժշկության համար: Այն պարունակում է նաև Աստվածամոր նկարը՝ այսպիսի մակագրությամբ՝ **Պանագիա արմենոկրատուսա**, այսինքն՝ Արմենախափան Աստվածամայր:*

Արմենիս, Արմենիտես դևերի, սատանաների գոյությունը ընդունում են նաև Քիոս կղզում:

Արմենահարության դեմ օգտագործվող բույսերն էլ, սնոտիապաշտական միջոցներն էլ դարձյալ կապվում են հայ բառի հետ: Օրինակ՝ արմենահար եղածներին բուժելու համար խունկ և երիցուկ են վառում, իսկ երիցուկը կոչում են **արմենիա**: Տարբեր հիվանդություններ բուժում են **արմենապետրաններով** (արմենաքարեր), **արմենապորտայով** (արմենադուռ), **արմենաքսիլոններով** (արմենափայտեր), Արմենազուսպ Աստվածածինի նկարներով:

Նույնպիսի հավատալիքներ պահպանվել են Արևելյան Բուլղարիայում, որտեղ նույնպես ծննդաբերության օրերի համար սովորական հիվանդությունները կոչվում են **արմենիքի** կամ **էրմենիքի**:

Ուշագրավ է հույների մոտ տարածված այն հավատալիքը, թե պանդուխտ հույներն էլ չեն վերադառնում իրենց կանանց մոտ՝ արմենահար լինելով հայուհիներից: Հունական բանահյուսության մեջ պահպանվել է շատ գեղեցիկ մի երգ, որից ավելորդ չենք համարում հատվածներ մեջ բերել:

Անապատի իմ սև ծիծեռնակներ
Եվ սպիտակ աղավնիներ իմ ափերի,
Որ այնքան բարձրից գնում եք դեպ իմ հայրենիք
Մի խնձորենի ունեմ իմ տան բակում, այնտեղ թառեցեք
Եվ ասացեք իմ բարի կնոջը,
Ուզում է՝ թող մայրապետ լինի, ուզում է՝ թող ամուսնանա,
Ուզում է՝ թող զգեստները ներկի ու սևեր հագնի.
Թող չսպասի ինձ, թող չհամբերի:
Ինձ այստեղ՝ Հայաստանում ամուսնացրել են
Մի հայուհու՝ կախարդուհու աղջկա հետ,
Որը կախարդում է աստղերն ու երկինքը.
Կախարդում է թռչուններին՝ ու չեն թռչում.
Կախարդում է գետերին՝ ու չեն հոսում.
Կախարդում է ծովը՝ ու չի ալեկոծում.
Կախարդում է նավերը՝ ու չեն նավարկում.
Կախարդում է և ինձ, ու չեմ կարողանում վերադառնալ,
Ճանապարհ եմ ընկնում, ձյուն է գալիս,
Ետ եմ դառնում, աստղեր են փայլում, արև ծագում,
Թամբում եմ ձիս՝ թամբը ցած է ընկնում:
Կապում եմ սուրս, քանդվում, ընկնում է մեջքիցս,
Նստում եմ որ նամակ գրեմ, սրբվում է գրածս[1]*:*

---

[1] **Մկ. Բարթիկյան**, *Հայ աղանդավորների հետքերը Հյուսիսային Հունաստանում, տե՛ս «Տեղեկագիր», ԳԱ հասարակական գիտ., 1956, № 3, էջ 81:*

3. ԹՈՆԴՐԱԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵԿԵՂՅԱՑ ԳԱՎԱՌՈՒՄ

Թոնդրակեցիների աղանդավորական շարժումը իրավամբ համարվում է միջնադարյան Հայաստանի սոցիալական ընդվզումներից ամենածավալունն ու ուժգինը, քաղաքական ակտիվ պայքարի նույնպիսի ծրագրով, ինչ պավլիկյաններինն էր: Առաջացել է նախորդի ուժեղ ազդեցությամբ և կազմում է նրա շարունակությունը:

Այս նոր շարժման հիմնադիրը եղել է Սմբատ Զարեհավանցին: Նա ծնվել է Ծաղկոտն գավառի Զարեհավան գյուղում: Գալով Ապահունիք, գործել է Թոնդրակ գյուղում, այնտեղ քարոզել իր գաղափարները, որի պատճառով շարժումը կոչվել է Թոնդրակյան:

Եթե պավլիկյան շարժման մասին մեզ հասել են գերազանցապես բյուզանդական սկզբնաղբյուրների վկայությունները, դրա համար էլ նրա ղեկավարների անունների մի մասը օտար ձևով են արձանագրված՝ Սիլվանոս, Սերգիոս և այլն, ապա Թոնդրակյան շարժման մասին մեր մատենագրության մեջ պահպանվել են բավականաչափ փաստեր, իսկ Անանիա Նարեկացին գրել է հատուկ աշխատություն:

Մենք Թոնդրակյան շարժման մասին խոսելու ենք՝ հիմնականում կանգ առնելով նրա դրսևորումների վրա՝ Եկեղյաց գավառում:

Շարժման ղեկավար Սմբատ Զարեհավանցին անձամբ եղել է Եկեղյաց գավառում, պավլիկյանների կենտրոն Տևրիկում, ըստ երևույթին Սերգիոսի մոտ, նրա ազդեցությամբ կանգնել է քրիստոնեական դոգմաները մերժողների դիրքերում, աստիճանաբար դարձել նոր աղանդի առաջնորդը, բայց գործել է ոչ թե Տևրիկում, այլ Թոնդրակում:

Սմբատն ունեցել է մեծ թվով աշակերտներ, հետևորդներ, որոնք սերնդեսերունդ շարունակել են այդ աղանդի գաղափարները երկրի ներսում և նրանից դուրս:

Շարժումն առաջացել է 9-րդ դարի առաջին կեսին, մոտավորապես 820–830-ական թթ. արագորեն ծավալվել է, լրջորեն մտահոգելով իշխող կարգերին: Բայց ի վերջո Մանազկերտի արաբ ամիրա Աբդուլ-Բարդին հաջողվել է սպանել տալ Սմբատին. նա ասել է. «Դու քեզ Քրիստոս ես համարում. Քրիստոսը հարություն առավ. ես քեզ կսպանեմ, կթաղեմ, եթե երեք օրից հարություն առնես, նոր կհավատամ որ իսկապես Քրիստոս ես»:

Բայց Սմբատ Զարեհավանցու մահով Թոնդրակյան շարժումը ոչ միայն վերջ չի գտել, այլ ավելի է բորբոքվել, ծավալվել: Հայոց եկեղեցին հարկադրված է եղել խստագույն հալածանքների ենթարկել

աղանդավորներին, ստեղծել է հակաթոնդրակյան գրականություն, որտեղ նրանք ներկայացվել են որպես հերետիկոսներ, անբարոյականներ:

Անանիա Նարեկացու աշխատությունը մեզ չի հասել, սակայն Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի և այլոց գրություններում պահպանված վկայությունները բավականաչափ գաղափար տալիս են թոնդրակեցիների շարժման էության մասին:

Չնայած այս մատենագիրները, ելնելով Հայոց եկեղեցու պաշտոնական դիրքորոշումից, փորձել են թոնդրակեցիներին վերագրել միայն բացասական գծեր, արարքներ, պարզվում է, որ նրանց ծրագիրը տարբեր չի եղել պավլիկյաններից, իսկ որոշ հարցերում եղել է ավելի հստակ ու կտրուկ ընդդեմ քրիստոնեական եկեղեցու օրենքների:

Օրինակ՝ թոնդրակեցիները մերժել են եկեղեցական աստիճանակարգությունը՝ ձեռնադրություն, հաղորդություն, ծնրադրություն՝ որպես Աստծո հետ հաղորդակցվելու միջոցներ, մերժել են մկրտության խորհուրդը, անմահության գաղափարը, խաչի երկրպագությունը, եկեղեցական պսակը, քարոզել են ազատ սեր, մերժել են նաև ամեն կարգի զոհաբերություն՝ մատաղ, եկեղեցական նվիրատվություն, զատիկ, պաս պահել և այլն:

Ինչպես տեսնում ենք, սրանց մեծ մասը համընկնում է պավլիկյանների դավանած գաղափարներին:

Գրիգոր Մագիստրոսը նրանց համարել է չնական կյանքով ապրող մարդիկ, որոնք, իբր թե չընդունելով ամուսնական սուրբ պսակը, կանանց բազմությունների հետ ապրում են չնավաններում և ամեն տեսակի սեռական սանձարձակություններ են կատարում[1]: Անչուշտ սա հորինված կեղծիք է թոնդրակեցիներին վարկաբեկելու համար: Իրականում նրանք քարոզել են ազատ սեր, առանց եկեղեցու միջնորդության ու կաչկանդումների: Առկա կցկտուր փաստերից երևում է, որ ապրել են համայնական կյանքով, որտեղ տիրել է կարգ ու կանոնը, զուսպ կենցաղը:

Թոնդրակեցիները Քրիստոսին չեն ճանաչել որպես մարգարե կամ աստված: «Մենք թլպատված աստված չենք պաշտում»,- ասել են նրանք:

Հայ մատենագիրները նրանց մերթ համեմատել են մանիքեականների, մերթ մծղնեականների, մերթ՝ պավլիկյանների հետ: Իրականում թոնդրակյան շարժման գաղափարախոսությունը իր մեջ ընդ-

[1] **Գրիգոր Մագիստրոս,** *Թղթեր, էջ 152-160:*

գրկում էր այդ բոլոր աղանդների պաշտպանած սկզբունքների էական կողմերը, որոնք ունեն խորապես սոցիալական բովանդակություն և ծառայում էին աշխատավորական խավի շահերին:

Կա մի էական տարբերություն նախորդ աղանդների և այս մեկի միջև: Մինչդեռ մանիքեականությունը, մծղնեությունը, պավլիկյան շարժումը ազգային հատկանիշների վրա չեչտ չեն դրել, թոնդրակյան շարժման գաղափարախոսները իրենց համարել են արամյան տոհմից սերածներ, այսինքն՝ բուն հայ ցեղի զավակներ: Դա շատ կարևոր իրողություն է՝ թելադրված օտարերկրյա տիրապետողների դեմ դուրս գալու, մայրենի ավանդույթները, լեզուն պահպանելու անհրաժեշտությունից, քանի որ թե՛ Արաբական խալիֆայությունը և թե՛ Բյուզանդական կայսրությունը լուրջ սպառնալիքներ էին ազգապահպանման համար:

Այսպիսով՝ նրանք կարողացել են հմտորեն զուգակցել ներքին դասակարգային սոցիալական պայքարը արտաքին ճնշողների դեմ մղվող պայքարի հետ, որը խորքում դարձյալ սոցիալական էր, քանի որ օտարերկրյա նվաճողները նույնպես իրենց բազմապիսի հարկերով արյունաքամ էին անում ժողովրդին:

Հայ եկեղեցին բուռն պայքար է մղել թոնդրակյան շարժման դեմ 9–10-րդ դարերում: Չնայած դրան՝ շարժումը նոր թափ է ստացել 10-րդ դարի վերջերին և հաջորդ դարի սկզբներին: Հերետիկոսություն համարվող գաղափարները մուտք են գործել որոշ վանքերի պարիսպներից ներս:

Կճավա վանքի միաբաններից Մուշեղը Անանիա Նարեկացու աշխատությունը թոնդրակեցիների դեմ՝ համարել է զրպարտություն, գտնելով թե չպետք է հալածել այդ գաղափարները տարածողներին:

Հակոբոս եպիսկոպոսը նույնպես (11-րդ դար) կողմնակից է եղել եկեղեցական ծիսակատարությունների սահմանափակման ու պարզեցման: Նա էլ մերժել է մատաղը և ըստ էության դարձել է թոնդրակեցիների շարժման եռանդուն գործիչներից: Ուշագրավ է մատաղի մերժման առիթով նրա ասած սրամիտ միտքը: Հանցանք գործող մարդը մատաղ է անում, որ Աստված թողություն տա իր մեղքերին, իսկ անմեղ ոչխարը ինչու պիտի զոհվի նրա համար: Նա խոսքը ուղղելով ոչխարին, ասել է «Այ տառապյալ չորքոտանի, ասենք նա իր ժամանակին մեղքեր գործեց և մեռավ, դո՞ւ ինչ մեղք ես գործել, որ նրա հետ պիտի մեռնես»:

Ինչպես պավլիկյան աղանդը, այնպես էլ թոնդրակյանը լայն տարածում է գտել Մանանաղիում և Եկեղյաց գավառում: Այս մասին

ընդարձակ տեղեկություններ է տալիս Արիստակես Լաստիվերցին. իր «Պատմության» մեջ այդ հարցին նվիրված հատվածը վերնագրելով՝ «Թե ինչպես բորբոքվեց այն մոլորության հրդեհը նաև Մանանաղիի սահմաններում»:

«Շիրնի կոչված բերդաքաղաքի մոտ,- գրում է Լաստիվերցին,- որի անունով մինչև այսօր էլ ագարակն է կոչվում, ապրում էր Կունծիկ չնանուն մի աբեղա, որը ծերացած լինելով՝ իր մեջ պահում էր պղծության խմորը. սա սովորել էր մի չնաբարո աբեղայից, որն իր մասին տարածել էր թե Աղվանքից է: Բայց նա սատանայի անդրանիկն էր ու նրա գաղափարների շտեմարանը, ուստի նրա բերանից գեհենի մշտաբորբ հոնցի ծուխ էր դուրս գալիս, որից շատեր թունավորվելով՝ չարամահ եղան: Այս Կունծիկը սատանայի ժիր մշակը լինելով՝ որսաց Հրանույշ անունով մի կնոջ, որը նշանավոր ու պատվական ազգից էր, ագարակների տեր ու նրան էլ սահմանակից: Երբ Հրանույշը նրա մահաչունչ թույնից վարակվեց, չբավականացավ միայն իր կորստյամբ, այլ շատերին էլ իրենց մոլորության գործակից պատրաստեց և առաջին հերթին իրեն տոհմակից երկու կանանց, որոնցից մեկի անունը Ախնի էր, իսկ մյուսինը՝ Կամարա, որն արդարև սատանայի կամարարն էր, սրանք երկուսն էլ հարազատ քույրեր էին, պոռնկական մոլեգին ախտով, որը հատուկ է նրանց փարախին, և կախարդական հնարանքներով եղան սատանայի վարդապետներ, որոնց գերիշխեց բոլոր չարիքների հայրը: Սրանք «Սուսերի պես սրեցին իրենց լեզուները,- ինչպես ասված է սաղմոսական երգում,- և լարեցին իրենց աղեղները՝ չար գործերի համար» և նետեր արձակելով ազնվասիրտ մարդկանց վրա՝ կարևեր ու մահացու վիրավորեցին շատ անմեղ հոգիներ: Որովհետև իրենց հայրենի ժառանգությունից ունեին երկու գյուղ, դրանք դարձրին կամակոր վիշապ օձի որջ ու ապահով հանգրվան, որտեղ բույն դնելով նա սաստկապես դուրս թափեց իր մաղձը, իսկ իրենք մատովակելով ու խմել տալով իրենց չուրջ բնակվողներին՝ մատնեցին կորստյան»[1]:

Ապա Լաստիվերցին նշում է թե Վրվեռ անունով մի իշխան էլ միացել է այդ կանանց, դարձել նրանց կամակատարը, թե այդ Վրվեռը առաջ եղել է ուղղափառ քրիստոնյա, իր կալվածում հիմնել է մենաստան, բարեկեցիկ կյանք ստեղծել այնտեղ ապրող ճգնավորների համար, և ամեն տարի մեծ պահքին այցելել է այդ մենաստանը, մնացել մինչև զատկական տոները, բայց, ընկնելով վերոհիշյալ քույրերի թակարդը, մոլորվել է, անբարոյական կյանք վարել նրանց հետ,

---

[1] **Արիստակես Լաստիվերցի,** *Պատմություն, Երևան, 1971, էջ 91-93:*

դարձել Աստուծո ու նրա սրբերի թշնամին, մոռացել է իր հիմնած կրոնավոր ուխտը: «Այն տեղը,- չարունակում է Լաստիվերցին,- որ երբեմն կրոնավորների օթևան էր, որն ինքն էր չինել մեծամեծ ծախսերով ու չարչարանքներով, ուր սաղմոսասացների ու եկեղեցականների խմբերը երկնավորների ձայնակցությամբ քաղցրաձայն երգերով փառաբանում էին Աստծուն, այժմ լուռ է, ավեր ու ամայի: Իսկ հետո ի՞նչ: Այդ թշվառականը գնալով միաբանվեց այն չարադև կանանց հետ: Նրանց սեփական այն երկու ագարակները, որոնց մասին առաջ մի փոքր հիշեցինք, կոչվում էին Կաչե և Աղյուսո. սրբանք իրենց միաբանեցրին նաև այդ ագարակների բոլոր բնակիչներին. հետո դիվային կատաղությամբ մոլեգնած՝ ավերեցին այն եկեղեցիները, որ վաղուց ի վեր կառուցված էին իրենց օձաբնակ տեղերում: Եվ գյուղերում, ուր որ հարմար ժամանակ էին գտնում, իրենց հոր՝ սատանայի համար վրեժխնդիր լինելով՝ ջարդում էին մեր փրկության նշանն ու տերունական հաղթության զենքը, որով խորտակվեց մահվան հաղթանակը և մեզանից վերացան կամակոր թշնամու փորձությունները»[1], այսինքն՝ խաչը:

Այնուհետև Լաստիվերցին նկարագրում է իրական մի դեպք՝ թե ինչպես թոնդրակեցիները ավերել են մի սրբատեղի: Պախրա լեռան մոտակայքում եղել է Բազմաղբյուր անունով մի ավան, որտեղ կանգնած է եղել մի մեծ խաչ, որի անունով էլ գյուղը կոչվել է Խաչ: Պենտակոսեի օրը «սատանայի կամակոր մշակները», այսինքն՝ թոնդրակյան աղանդի մարդիկ, գիշերով գալով այնտեղ, մուրճով ջարդել են ու մանրատել այդ խաչը և թաքուն գնացել են իրենց օձաբնակ որջերը: Երբ առավոտ քահանան գնում է որ խաչի մոտ աղոթի, տեսնում է զարհուրելի տեսարանը. պատառոտում է հանդերձները, ողբում ու ժողովրդին հավաքում իր գլխին: «Նրանք, տեսնելով այդ ապշեցուցիչ գործը՝ ողբ ու ճիչերով կրծքները ծեծելով վերադարձան. բոլորն անխտիր՝ տղամարդ ու կին, ծեր ու երեխա, միաձայն ողբում էին»[2]:

Բայց, ասում է պատմիչը, այդ գիշեր շատ ձյուն տեղացած լինելով, մարդիկ ոտնահետքերով գտել են թոնդրակեցիների տեղը, հայտնել իրենց հոգևոր պետին՝ Սամվել եպիսկոպոսին, որը, հավաքելով քահանաների, վանականների, հավատացյալների, այրել ու ոչնչացրել է այդ կենտրոնատեղին:

Սամվելը աղանդավորների գլխավորներից վեցին վերցնելով բերել է գյուղաքաղաքը և հրամայել է նրանց դեմքին խարանել աղվեսա-

---

[1] **Արիստակես Լաստիվերցի**, էջ 93-94:

[2] Նույն տեղում:

պատկեր, որպեսզի դա լինի նրանց համար ամոթի ու հանցագործության հավիտենական խարան, «որպեսզի ոչ ոք անգիտակցաբար չհաղորդակցի նրանց հետ, և նրանք որպես չար գազաններ հալածվեն բոլոր մարդկանց կողմից»:

Հետաքրքիր է նաև այս պատմության չարունակությունը: Լաստիվերցին ասում է թե ամռանը այդ երկրի գործերը կարգավորելու համար բյուզանդական կայսեր կողմից որպես դատավոր ուղարկվել է Եղիա անունով մի մարդ, որը երբ հասել է Եկեղյաց գավառը, դիմավորվել է Վրվեռի կողմից: Վերջինս բողոքել է Սամվել եպիսկոպոսի ու նրա հետ եղող մյուս հոգևորականների դեմ, ասելով թե նրանք կողոպտել են իր տունը և հրկիզելով ոչնչացրել են: Դատավորը եպիսկոպոսներին հրավիրել է իր մոտ՝ Կոթեր գյուղը: Սամվելի գլխավորությամբ հարյուրավոր մարդիկ եկել են Եփրատի ափին գտնվող Կոթեր գյուղը, նրանք համոզել են, թե Վրվեռը քրիստոնեության դեմ է գործել: Իբր թե Վրվեռը, տեսնելով որ փրկություն չկա՝ որոշել է հոռոմ լինել, այսինքն՝ բյուզանդական դավանանքն ընդունել և ազատվել: Բայց նրա համախոհները խստորեն պատժվել են:

Ի՞նչ ընդհանուր եզրակացության կարող ենք հանգել Լաստիվերցու այս ընդարձակ նկարագրություններից:

Նախ երևում է, որ թոնդրակյան շարժման մեջ ընդգրկված են եղել ամբողջ գյուղեր ու ավաններ: Երկրորդ՝ այդ աղանդը իր ազդեցության տակ է առել ժողովրդի տարբեր խավերին, այդ թվում ազնվականությանը, քանի որ Հրանույշը սերած է եղել իշխանական ընտանիքից և ունեցել է իր կալվածները, որոնք տրամադրել է թոնդրակեցիներին: Շարժմանը հարողների մեջ տեսնում ենք նաև հոգևորականների, ըստ երևույթին այն մարդկանց, որոնք դժգոհ էին եկեղեցական խստություններից, հակում ունեին դեպի աշխարհիկ կյանքը:

Ուշագրավ է նաև թոնդրակեցիների գործունեության ձևը. նրանք ուրեմն ավերել են եկեղեցիներ, սրբատեղիներ, հրաժարվել եկեղեցական ծիսակատարություններից:

Երևում է, որ աղանդավորական այս շարժման եռանդուն ներկայացուցիչներից Վրվեռը ապրել է Եկեղյաց գավառում, այն էլ եղել է իշխան: Նա է դիմավորել կայսեր կողմից ուղարկված դատավորին:

Պատմիչի վկայություններից երևում է նաև, թե եկեղեցին ինչպիսի ուժ է եղել և ինչպիսի իշխանություն է ունեցել: Նա կարող էր որոշել մարդկանց բախտը, նրանց դեմքերին աղվեսապատկեր խարանել՝ առանց դատ դատաստանի, առանց աշխարհիկ որևէ մարմնի լուրջ քննության: Իսկ կենտրոնից՝ Բյուզանդիայից եկած դատավորին

էլ հեշտությամբ հնարավոր է եղել բավարարել կամ կաշառքով կամ դավանափոխությամբ, որն էլ, ի վերջո, կաշառքի յուրահատուկ մի ձևն էր, քանի որ այդ մարդը վերադառնալով մայրաքաղաք, արժանանալու էր հունական եկեղեցու պաշտոնյաների գնահատմանը, գուցե և նյութական վարձատրությանը:

Ենթադրվում է, որ նկարագրված դեպքերը տեղի են ունեցել 1011 թվականի գարնանը: Բայց հիշատակված հաշվեհարդարը վերաբերում էր թոնդրակյան շարժման միայն մի դրվագին: Շարժումը գնալով լայն ծավալ է ընդունել: Ակադեմիական հրատարակության «Հայ ժողովրդի պատմության» մեջ կարդում ենք.

«Թոնդրակյան շարժումը 11-րդ դարի առաջին կեսում հասավ իր զարգացման և ծավալման բարձրակետին, ընդգրկելով համարյա ամբողջ Հայկական լեռնաշխարհը անցնելով նաև Բյուզանդական կայսրության ենթակա գավառները: Միջագետք, իսկ Արևելքում նաև Հայոց Աղվանքի գավառները, ուստի նրանց դեմ պայքարի էին ելել ոչ միայն Հայաստանի թագավորներն ու եկեղեցին, այլև Աղվանքի կաթողիկոսները և Բյուզանդական պետությունը»[1]:

Մենք շատ ընդհանուր գծերով ներկայացրինք համաժողովրդական այս շարժումը, հիմնականում կանգ առնելով Եկեղյաց գավառի հետ կապված դեպքերի վրա առանց ժամանակագրական կարգով խոսելու ուշագրավ բազմաթիվ իրադարձությունների մասին, առանց ծանոթացնելու թոնդրակեցիների առաջնորդներին մեկ առ մեկ, մի բան, որ դուրս է մեր ծրագրից:

Ըստ Գրիգոր Մագիստրոսի՝ թոնդրակյան շարժումը ունեցել է միմյանց հաջորդող բազմաթիվ առաջնորդներ, որոնցից են՝ Սմբատ Զարեհավանցու մահից հետո ասպարեզ եկած Թոդրոսը, Անանեսը, Արքան, Սարգիսը, Կյուրեղը, Հեսուն, Ղազարը և այլն, որոնք այդ աղանդը ղեկավարել են 170 տարի:

Պարզվում է նաև, որ այդ մարդիկ տարբեր գավառներում ունեցել են իրենց ներկայացուցիչները, նրանց հետ պահպանել են գրավոր կապ, տվել հրահանգներ:

Դրանց մասին ակնարկներ կան մեր մատենագրության մեջ:

---

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հատ. III, Գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան, 1976, էջ 296:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Մինչև 12-րդ դարի կեսերը Երզնկան դեռևս գտնվում էր Բյուզանդական կայսրության տիրապետության տակ, բայց գտնվում էր ձևականորեն: Այդ կայսրությունն այնքան էր թուլացել, երկրի ներսում խճճվել պատերազմներով, պալատական դավադրություններով, կրոնական վեճերով, որ երեսի վրա էր թողել Հայաստանը:

Ահա այդ ժամանակաշրջանին է զուգադիպում Սելջուկյան Թուրքերի միմյանց հաջորդող արշավանքների շղթան:

Համաշխարհային ասպարեզ մտնող այս նոր ուժը կարճ ժամանակամիջոցում իրեն զգալ էր տալու ամբողջ Արևելքում, սարսափի մատնելով մեծ ու փոքր տասնյակ երկրների, ժողովուրդների:

Քանի որ հայ ժողովրդի ճակատագիրն էլ այդ շրջանից կապվում է մի ցեղախմբի հետ, որը մոտ ինը դար իշխելու էր նրա վրա և հասցնելու էր աննկարագրելի տառապանքներ և ի վերջո այդ ցեղերի ժառանգներից հանդիսացող օսմանցիների հետ է կապվում մեր տառապած ազգի վերջնական բնաջնջման ծրագրի կենսագործումը 1915 թվականին, ուստի շատ համառոտակի ծանոթանանք սելջուկներին, որոնք երևացին Արևելքում, և մորեխի նման հարձակվեցին դեպի Արևմուտք, հյուսիս, հարավ, ամենուր սփռելով ահ ու սարսափ, մահ ու ոճիր, սնվեցին միլիոնավոր մարդկանց արյունով, իրենց ալիքի տակ վերցնելով Ասիա ցամաքամասի լայն տարածքը, ցասման ամբողջ ուժը թափելով սակայն Արևելքի ամենից հին ու մշակույթով հարուստ հայ ժողովրդի գլխին:

Սելջուկյան Թուրքերի ցեղախմբերի նախահայրենիքը եղել է Չինաստանի հյուսիսում ընկած տարածքը, որտեղ նրանք հիմնականում զբաղվել են խաշնարածությամբ, բայց և աչքի են ընկել մարտունակությամբ, թալանի, կողոպուտի, սպանության բնազդով, հատկանիշներ, որոնք ուղեկցել են նրանց մինչև մեր օրերը՝ այդ ցեղերի օրինական ժառանգների միջոցով:

Թուրքական վերոհիշյալ ցեղերի առաջին միավորումը տեղի է ունեցել դեռևս 5-րդ դարում և մեր պատմագրության մեջ հիշատակվում են հոներ անունով:

Չինացիները, թուրքական այդ ցեղերի մի մասին ենթարկելով իրենց, անվանել են ույղուրներ, որոնք ավելի նստակյաց կյանք են վարել, ստեղծել են իրենց գիրն ու գրականությունը և այժմ էլ թուրքերը նրանց ստեղծած մշակույթը, գրականությունը համարում են իրենց հարստությունը:

Մյուս ցեղերը նախընտրել են ասպատակությունը, ինչպես սելջուկները: Սելջուկների արշավանքները զուգադիպում են մի կողմից Արաբական խալիֆաթի, մյուս կողմից՝ Բյուզանդական կայսրության թուլացման շրջանին:

Արաբական խալիֆաթը, որ 7-րդ դարից ուժեղանալով, աստիճանաբար համաշխարհային տիրակալության էր ձգտել, 10-րդ դարի սկզբներից արդեն տկարացել էր: Դրան նպաստել էր առաջին հերթին ներքին կենտրոնախույս ուժերի և նվաճված ժողովուրդների պարբերական ապստամբությունների շղթան:

Արաբները աշխատել են օգտագործել Միջին Ասիայից եկող ռազմատենչ այս ցեղերի ուժը՝ իրենց խարխլված իշխանությունը վերականգնելու համար: Սելջուկներից կազմել են զորագնդեր, դրանք հանձնել աչքի ընկնող ցեղապետների, նրանց տալով էմիր տիտղոսը:

Սկզբնական շրջանում նրանք արդարացրել են խալիֆաների հույսերը, գործելով ոչ միայն մայրաքաղաք Բաղդատում, այլև Եգիպտոսում, Փոքր Ասիայում, Ասորիքում: Իններորդ դարի կեսերին Հայաստան արշավող Բուղան այդ զորավարներից էր, որ նվաճեց երկրի զգալի մասը:

Սակայն, թուրքական ցեղեր հետզհետե ուժեղանալով, իրենք են դառնում պատուհաս Արաբական խալիֆաթի համար: Նրանք ստեղծում են փոքր պետություններ, մերթ ընդ մերթ իրենց զենքը դարձնելով արաբների դեմ:

10-րդ դարում թուրքական մի ցեղ հիմնում է Ղազնևիների սուլթանությունը Խորասանում, սակայն լուծվում է պարսիկների մեջ: Այդ դարի երկրորդ կեսին Թուրքեստանում առաջացել է մի նոր շարժում, որից հենց պիտի ծնվեր Սելջուկյան թուրքերի կայսրությունը: Շարժումը սելջուկյան է կոչվել նրա հիմնադիր Սելջուկի անունով, որի գործը շարունակել են որդիներն ու թոռները: Սրանց նախնիները թուրքական օղուզական Քընըք ցեղի առաջնորդներն են եղել, որոնք, համախմբվելով Սելջուկի շուրջը, ստեղծել են ռազմական վիթխարի

ուժ:

Շուտով, սակայն, սկսվել է ներքին պառակտումը: Սելջուկյան առաջնորդները թողել են իրենց բնակավայրերը և 10-րդ դարի 60-ական թվականներից հաստատվել են Սամարղանդում ու Բուխարայում: Հենց այդ ժամանակ էլ ընդունել են իսլամական կրոնը:

Սելջուկի որդիներից Արսլանը 1025 թ. իշխել է Բուխարայի սելջուկյան պետությանը, կռվելով դաշնևիների դեմ, պարտվել է:

Սելջուկի թոռներից Տուղրիլը և Չակիրը 1040 թ. հաղթել են դաշնևիներին, ետ մղել նրանց, և սկսել աշխարհակալական հարձակումների մի շրջան՝ արշավել դեպի Իրան, Իրաք, Անդրկովկաս, Փոքր Ասիա:

Հայ ժողովրդի համար կատարյալ աղետ է եղել ռազմատենչ ու վայրագ այդ ցեղերի հարձակումը Հայաստանի վրա:

Մատթեոս Ուռհայեցին ասում է թե սելջուկ զինվորներն ունեցել են երկար մազեր՝ կանանց նման: Զինված են եղել նետ ու աղեղով, աչքի են ընկել դաժանությամբ, անողոքությամբ: Ոչ ալեհերի հարգանք են ճանաչել, ոչ գութ՝ մանուկների նկատմամբ: Նրանք ունեին արյունարբու գազանների բնավորություն, սարսափելի էին իրենց տեսքով, նրանց դեմքի արտահայտությունը տեսնողները ահաբեկվում էին ու զարհուրանքի մատնվում[1]:

1029 թ. սելջուկները ներխուժել են Հայաստան, հրի ու սրի մատնել երկիրը, ավերել, թալանել, գերի վերցրել կանանց ու երիտասարդների, որոնց դարձրել են ոչ միայն աշխատող ուժ, այլև իրենց անասնական հաճույքի առարկան: Արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրը վկայում է, որ նրանք Հայաստանում շատ մարդ սպանելուց, մեծ ավար ու բազմաթիվ գերիներ վերցնելուց հետո վերադարձել են իրենց կենտրոնատեղին՝ Ուրմիա և Համադան:

Սելջուկյան թուրքերի մի այլ խումբ Հայաստան է ներխուժել 1037 թվականին և կատարել է նույնպիսի կոտորած ու թալան: Վերջապես նրանք մի արշավանք էլ կազմակերպել են 1042 թվականին, 50.000 զորքով հարձակվել են Վասպուրականի վրա, վերադարձել մեծ կողոպուտով:

1043–1044 թվականներին օղուզ թուրքերն իրենց հերթական հարձակումների ընթացքում այնքան շատ են թալանել հայերին, այնքան գերիներ վերցրել, որ Մերձավոր Արևելքի գերեվաճառության շուկաներում հայ աղջիկների գինը էժանանալով՝ իջել է 5 դինարի, իսկ տղաներին մարդիկ ձրի են վերցրել: Այդ անմեղ ու դեռահաս

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 31:*

երիտասարդները վաճառվում կամ նվեր էին տրվում՝ բարբարոսների սեռական բնազդին հագուրդ տալու համար:

Թուլացած, խեղճացած բյուզանդական կայազորները չէին կարողանում պաշտպանել հայերին և տրամադիր էլ չեն եղել: Պարզապես թողել են բախտի քմահաճույքին: Ավելին՝ կա վկայություն, որ իրենք էլ մասնակցել են ավարառություններին, անգամ այրել, ոչնչացրել են հայկական վանքերի ձեռագրերը:

Նման պայմաններում սանձարձակ ազատությամբ կարող էին գործել ասպատակող ցեղերը: Այս տարիներին,- գրում է Արիստակես Լաստիվերցին,- երկնքի բարկության դուռը բացվեց մեր աշխարհի վրա. և մեր դեմ շարժվեց Թուրքեստանից բազում զորք, որոնց ձիերն արագընթաց էին, ինչպես արծիվները, իսկ նրանց սմբակները հաստատուն էին ապառաժի նման: Նրանց աղեղները ձիգ քաշված էին և նետերը սուր էին. նրանք կտրիճի պես գոտևորված էին և նրանց կոշիկների կապերը պինդ ամրացված էին: Գալով Վասպուրականի գավառը՝ քաղցած գայլերի նման, որոնք չեն կշտանում ուտելուց՝ հարձակվեցին քրիստոնյաների վրա: Եկան մինչև Բասեն գավառը, մինչև մեծ դաստակերտը, որ կոչվում է Վաղարշավան և քանդեցին ու ավերեցին սրով, հրով ու գերեվարությամբ քսան և չորս գավառ[1]:

Բյուզանդական կայսրության հետ կնքված պայմանագրի համաձայն, 1049–1053 թթ. սելջուկները դադարեցրել են արշավանքները դեպի Հայաստան: Նրանք այդ տարիներին զբաղված են եղել Բաղդատը գրավելու ծրագրով, սակայն 1054 թ. մեծ բանակով նորից են հարձակվել, կողոպտել են Տարոնը, հասել մինչև Երզնկա:

Այս նոր արշավանքը ղեկավարողը եղել է Տուղրիլ բեգը: 1058 թ. Բաղդատի խալիֆը Տուղրիլին շնորհել է սուլթանի կոչում: Տուղրիլը հիմքն է դրել Սելջուկյան մեծ պետության, շարունակելով մահ ու ավեր տարածել ամեն կողմ, մասնավորապես Հայաստանում: Դիարբեքիրի և Ամիդի գերեվաճառական շուկաները կրկին լեցվել են հայ աղջիկներով ու պատանիներով, որոնց մեջ անչուշտ պիտի լինեին մեծ թվով երզնկացիներ:

«Այսպիսով,- կարդում ենք «Հայ ժողովրդի պատմության» 3-րդ հատորում,- թեև Տուղրիլ բեգի ժամանակ՝ 1025–1063 թթ. կատարվող սելջուկյան արշավանքները չհանգեցրին Հայաստանի նվաճմանը, սակայն ամայացնելով Հայաստանը և թուլացնելով Բյուզանդիայի արևելյան սահմանների պաշտպանական գծերը, հող նախապատրաստեցին ոչ միայն ամբողջ Հայաստանի, այլև Բյուզանդական կայս-

---

[1] **Արիստակես Լաստիվերցի,** *էջ 38:*

ության Փոքր Ասիայի արևմտյան նահանգների նվաճման համար»[1]:

Տուղրիլի հաջորդը՝ Ալփասլանը գրավել է Անին, Սեբաստիան, իսկ վերջինիս հաջորդ Մելիքշահի իշխանության շրջանում (1072–1092) ամբողջ Հայաստանն արդեն գտնվում էր սելջուկների տիրապետության ներքո: Այս տիրակալի օրոք Սելջուկյան պետությունը հասել էր իր հզորության գագաթնակետին, գրավել Եգիպտոսը, Ասորիքը, Փոքր Ասիան, Արևելքից էլ մինչև Բուխարան, Սամարղանդը, Քաշկարի պետությունը:

Եթե նախընթաց շրջանում սելջուկների քաղաքականությունը եղել է գրավված երկրները ամայացնելու, թալանելու, մարդկանց անխնա կոտորելու ծրագիրը, ապա Մելիքշահի իշխանության տարիներին, սելջուկները վարել են իրենց գրաված երկրներում տիրապետությունը ամրապնդելու, Հայաստանում թուրքեր բնակեցնելու, երկրի ազգային դիմագիծը փոխելով՝ վերջնականապես այն որպես տարածք նվաճելու քաղաքականություն:

Մելիքշահի մահից հետո, 1092 թվականից սելջուկների հզոր պետությունը աստիճանաբար մասնատվում է, թուլանում: Ստեղծվում են փոքր սուլթանություններ, աթաբեկություններ:

Հենց Հայաստանի մեծ մասը գտնվում էր նման սուլթանությունների իշխանության տակ, թեև որոշ գավառներ ունեին իրենց սահմանափակ իրավասություններով հայ իշխաններ:

2. ԵՐԶՆԿԱՆ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԳՐԱՎՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Որ Երզնկան եղել է թատերաբեմ վերևում նկարագրված կռիվների, ալան-թալանի ու կոտորածների, կասկածից վեր է: Քաղաքը մի հորդայի ձեռքից անցել է մյուսին, ամեն մի հարվածից լինելով ավելի ու ավելի արնաքամ, տալով մեծ քանակությամբ զոհեր:

Ըստ երևույթին սելջուկյան արշավանքների առաջին շրջանում Երզնկան ունեցել է Բյուզանդական կայսրությանը հարկատու տեղական հայ իշխաններ: Բայց այդ իշխանների իրավասությունը հարկեր հավաքելուց և տեղ հասցնելուց այն կողմ չէր կարող անցնել: Նրանք ոչինչ չէին կարող անել սելջուկյան հորդաների դեմ ժողովրդին պաշտպանելու ուղղությամբ: Բաղդատի գերեվաճառական չուկաներում կարող էին լինել նաև Երզնկայի հայ իշխանների աղջիկներն ու տղաները: Լաստիվերցին նկարագրելով սելջուկների հերթական արշավանքներից մեկը, ասում է, թե երբ նրանք մտել են

[1] *«Հայ ժողովրդի պատմություն», հատ. III, էջ 454:*

Մելիտինե, հույների փոքրաթիվ խումբը գիշերով կռվի է բռնվել թշնամու հետ, բայց ոչինչ չի կարողացել անել, դիմել է փախուստի: «Իսկ քաղաքում բռնվածներին բոլորին սրակոտոր արին և տասներկու օր մնալով այնտեղ, քաղաքն ու նրա շրջակա դաստակերտները հիմնահատակ ավերվեցին: ... Բայց Եկեղյաց գավառից ներքև ընկած գավառները, որով անցան գիշերը, երբ իմացան Մելիտինեին հասած աղետները, աղեղնավոր զորքերի մեծ բազմություն հավաքեցին և բռնեցին ճանապարհի կիրճերը»[1]:

Լաստիվերցին ցնցող տողերով է նկարագրել 1054 թ. աղետավոր արշավանքի սարսափները՝ Երզնկայի մոտակայքի գավառներում: Նա գրում է. «Այն աղետները, որ այն ժամանակ նրանք հասցրին, ո՞վ կարող է գրի առնել և կամ ու՞մ միտքը կգորի թվել. որովհետև ամբողջ երկիրը լցված էր դիակներով. չեներն ու անչեն վայրերը, ճանապարհներն ու անապատ տեղերը, քարանձավներն ու առապարները, անտառախիտ ու ապառաժոտ վայրերը, բոլոր չինանիստ տեղերում հրկիզելով ավերեցին տներն ու եկեղեցիները, որոնց կրակի բոցը ավելի էր բարձրանում, քան Բաբելոնի հնոցինը: ... Այս աղետները կրելով՝ երկիրը սուգ հագավ ու կործանվեց, որովհետև ոչնչացան նրա բնակիչները. ամբողջ աշխարհից խպառ վերացավ ուրախությունը, ամեն տեղ միայն ողբ ու հառաչանք, բոլոր տեղերում միայն լաց ու կոծ, ո՛չ մի տեղ չեն լսվում քահանաների երգերն ու Աստծու փառաբանության ձայնը, ո՛չ մի տեղ չեն բացվում գրքերը՝ լսողներին խրատելու և մխիթարելու համար, որովհետև ընթերցողները սրամահ եղան հրապարակներում, իսկ լսողները՝ այրվեցին ու մոխրացան: Ո՛չ մի տեղ չի լսվում հարսանիքի ձայն, ոչ էլ նորածին մանկան ավետիք, ... արոտներում չի խմբվում նախիր, ոչ էլ գառներն են դաշտում խայտում, էլ ո՛չ հնձվորն է դիզում խրձերը և ո՛չ էլ լսում է անցնող մարդկանցից գովեստի խոսքեր, չեն լցվում կալերն այլևս ցորենով, և հնձաններում չի ճողփում գինին. ո՛չ այգեկութի ժամանակ ուրախ ձայներ են լսվում, ո՛չ ծանրանում են պահարանները կուժ-սափորներով: Այս բոլորն ահա վերացան-կորան ու չեն երևում:

Ո՞ր Երեմիան պիտի ողբա մեր այս կործանումը, ճանապարհներից ու լեռներից միշտ ողբեր երգելով... Վա՜յ ինձ, որ ես եմ վիպերգում սրանք... Իսկ այն կոտորածը, որ եղավ Դերջան ու Եկեղյաց գավառներում և նրանց միջասահմաններում, ոչ ոք չի կարող նկարագրել, բայց դու պատմածներովս չափի՛ր այն»[1]:

---

[1] **Արիստակես Լաստիվերցի,** *էջ 84:*

Լաստիվերցին այստեղ խնայում է ընթերցողին ու չի նկարագրում Երզնկայի ողբերգությունը, բայց նկարագրում է մի այլ էջում, 1057 թ. արշավանքի առիթով: Նա գրում է.

«Բայց որովհետև տեսան երկիրը անտերունչ է և առանց պահապանի, այդ պատճառով էլ չարի արբանյակները նորից վերադարձան և մտնելով Մանանաղի գավառը՝ բաժանվեցին երկուսի. մի մասը գնաց Եկեղյաց գավառ և գիշերով հարձակվեց այնտեղ եղած քաղաքի վրա. անօրենները քաղաքը գտան անպատրաստ և անփույթ: Այնտեղ կատարված աղետավոր ու ողորմագին չարիքները ես անկարող եմ գրի առնել, քանզի երբ որ առավոտ լուսացավ, այնքան լալագին ու խռովահույզ մի տեսարան էր այնտեղ երևում, որ և՛ քարերին, և՛ բոլոր անչունչ արարածներին անգամ, հառաչել, ողբալ էր տալիս. այդ ո՞ր տեսնողը չէր դողա ցավից, այդ որի՞ սիրտը չէր կտրատվելու, որի՞ աչքերը չէին խավարի՝ միգով մթամած, հրապարակները, տներն ու ընդարձակ սրահները, նրբափողոցներն ու այգիները լի էին դիակներով. քաղաքի գրեթե ամբողջ սահմանը ներկված էր կոտորվածների արյամբ. կային չատերը, որոնք դեռ հոգին չէին ավանդել. կտրված ձայնով ծանր էին շնչում. ոմանց չարաչար, անողոքաբար վիրավորելով՝ փորոտիքն էին դուրս թափել գետին, լյարդը հանելով՝ բերանը դրել և նույնիսկ ուտել էին ստիպում դեռևս կենդանի մնացածներին:

... Քաղաքը և նրա շրջակա գյուղերն ու ագարակները պաչարեցին այնքան, մինչև որ մարդկանցից ոչ ոք կենդանի չմնաց, բացի բերդերում եղածներից: Իսկ անօրենները, ավարով լիացած ու հագեցած, քաղաքն այրեցին և վերցնելով գավառի գերիներին ու կողոպուտը՝ կրկին ետ դարձան»:

Ապա, խոսքն ուղղելով դժբախտ Երզնկային, Լաստիվերցին ողբում է այսպես. «Այս է վշտամբեր քո պատմությունը, ո՜վ քաղա՛ք, այլևս ոչ թե բնակիչներիդ համար ապաստանելու քաղաք, այլ կորբստյան խորխորատ. քո բազմատեսակ աղետներից մենք դեռ միայն մի փոքրը հիշատակեցինք»[2]:

Ինչպես ասացինք, այս բոլորը կատարվում էր այն տարիներին, երբ Երզնկան դեռ ձևականորեն գտնվում էր Բյուզանդական կայսրության տիրապետության տակ: Սելջուկներն այդ քաղաքը գրավել են 1071 թվականին: Երկրի տերը դառնում է Մանկուճակ Թյուրքմեն ամիրան՝ Ալփասլանի զորավարներից մեկը, նրա նման արյունարբու

---

[1] **Արիստակես Լաստիվերցի,** *էջ 56-58:*

[2] *Նույնը, էջ 76:*

մի բռնակալ:

1097–1165 թվականներին Երզնկան գտնվում էր Դանիշմանյան-ների տիրակալության տակ: Նրանց ձեռքում էին նաև Կեսարիան, Սեբաստիան և Մելիտինեն: Այս ամիրայական տան հիմնադիր Տիլու Դանիշմենդը ենթադրվում է, որ եղել է մահմեդականություն ընդունած հայ՝ Հրահատ Լիպարիտյանը: Բայց դա չի խանգարել, որ ամենամոլեգին քաղաքականություն վարի իրեն ծնող ժողովրդի դեմ, կոտորի, տանջի:

«Երեք ահեղ բռնակալք,- գրում է Ղ. Ալիշանը,- որք Պոնտոսի ափունքեն մինչև ի Միջերկրականն և մինչև Արաբիա տիրապետեին, շատ հեղ քրիստոնեից, երբեմն ալ իրարու վախ ձգելով, մեջերնին քրիստոնեից ամենեն ահարկուն և ատողը Տենիշմենտն էր,- մեկալներուն ասպատակութենեն քիչ վերջը ինքն ալ ասպատակեց Երզնկա և Կամախա կողմերը և շատ ավարով դարձավ ի Սեբաստիա»[1]:

Այս բոլորով հանդերձ՝ սելջուկյան ազդեցության երկրորդ շրջանը որոշ չափով տարբեր էր առաջինից: Եթե առաջինում նվաճողները հարձակվում էին հայկական գավառների վրա, կողոպտում և հեռանում էին, իրենց ետևում թողնելով մահ ու ավեր, իսկ քրիստոնյաների բնաջնջումը միայն ուրախություն էր պատճառում, ապա երկրորդ շրջանում, ինչպես ասացինք նախորդ էջերում, Մելիքշահի օրոք վարում էին այլ քաղաքականություն: Անհրաժեշտ էր ունենալ երկիրը մշակող, չենցնող ժողովուրդ, նաև արհեստավորներ, առևտրով զբաղվողներ: Քարուքանդ քաղաքներն ու գյուղերը ոչինչ չէին կարող տալ նրանց: Ահա թե ինչու մեր մատենագիրները Մելիքշահի մասին խոսում են ավելի բարյացակամորեն, քան Տուղրիլի, Ալփասլանի մասին:

Ֆիզիկական բնաջնջման վտանգի մասնակի նվազումը չէր նշանակում Երզնկայի հայերի ապահովություն ու հանգիստ կյանք: Ժողովուրդն իր աշխատանքի ամբողջ արդյունքը հանձնում էր տիրապետողներին, իրենց մոտ թողնելով այնքան, որքան անհրաժեշտ էր սովամահ չլինելու համար, հաջորդ տարի կրկին վար ու ցան անելու համար:

Իսկ դա նշանակում էր, որ ժողովուրդը հնարավորություն չուներ զարկ տալու հոգևոր զարգացմանը, ստեղծելու մշակութային արժեքներ:

Այդ երկու դարերի վերաբերյալ աննշան փաստեր են մեզ հասել, կապված մշակութային երևույթների հետ:

---

[1] **Ղ. Ալիշան,** *Շնորհալի և պարագա յուր, Վենետիկ, 1873, էջ 224:*

Կա փաստ, թե 1183 թ. երզնկացի երկու կանայք՝ Գոհարն ու Խոսրովիդուխտը վերանորոգել են տվել մի Ավետարան և նվիրել են Երզնկայի ս. Աստվածածին եկեղեցուն[1]: 1131 թ. էլ Անիից մի պատանի մեկնել է Երզնկա, Գրիգոր Լուսավորչի վանքում կրթություն ստանալու:

Ուրիշ նման փաստեր էլ կան, սակայն, դրանով հանդերձ, դրանք ամենևին վկայություններ չեն Երզնկայի մտավոր աշխուժացման:

Չի եղել նաև հասարակական, քաղաքական կյանք: Ժողովուրդը ապրել է տևական սարսափների տակ, տնտեսական ծանր պայմաններում:

Բոլոր նվաճողներն էլ, լինեն դրանք բյուզանդացիներ, արաբներ կամ սելջուկներ, պիտի որ Հայաստանում ունենային տեղական լեզվին, բարքերին ծանոթ հենարաններ, վասալ իշխաններ, որոնք հարկատու լինեին տերերին: Բայց այդ մարդիկ նույնպես, կիսաիշխանական կյանքով ապրելու համար իրենց հերթին պիտի ճնշեին ժողովրդին, լրացուցիչ հարկեր վերցնեին: Նման իշխանների մեջ եղել են մարդիկ, որոնք տարված կերուխումով, հարստանալու տենչով ամենևին չեն մտածել ժողովրդի մասին, բայց եղել են և հոգևոր ու քաղաքական պետեր, որոնք դարկ են տվել կրթական, մատենագրական աշխատանքին, վանքերին կից հիմնել են դպրոցներ, գրչագրական կենտրոններ, քաջալերել են մատենագրությամբ զբաղվողներին, ինչպես պիտի տեսնենք հաջորդ գլուխներում:

---

[1] **Գարեգին Հովսեփյան,** *Հիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 493-494:*

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 12–13-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Սելջուկյան տիրապետության առաջին շրջանից մեզ է հասել մի ավատատիրոջ անուն, որը հայ մատենագրության մեջ կոչվում է Վահրամշահ, օտար աղբյուրներում՝ Բահրամշահ: Թե ինչ ազգության է պատկանել և անմիջապես ում հարկատուն է եղել, որոշակի չգիտենք:

Միքայել Ասորին գրում է, թե 1178 թ. Խլիճ Ասլանի որդին զորք հավաքեց, որպեսզի պատերազմ մղի իր հոր դեմ. «զի Հասան զօրապետն սուլտանայ զայրացուցեալ էր զսուլտանն ի վերայ որդւոյն. և յորժամ կամէին դիպիլ միմեանց պատերազմաւ, Վահրամշահն՝ փեսա սուլտանին, տէրն Եզնկային, անցաւ ի մէջ և արար խաղաղութիւն»[1]:

Այլ աղբյուրներ մի քիչ ավելի են լուսաբանում Վահրամշահի իշխանության պատկերը: Արաբական աղբյուրներում, որտեղ նա կոչվում է Մենկուչիկ Ֆահր էդ-Դին, ասվում է թե այդ մարդը Երզնկայի տերն է եղել 1189 թվականին, թե դրանից առաջ որքան է իշխած եղել՝ հայտնի չէ. եթե ընդունենք Միքայել Ասորու հավաստիացումը, առնվազն մեկ տասնամյակով առաջ պիտի գնանք: Մահվան թվականը շատ ավելի որոշակի է՝ 1225 թվականը:

Կա նաև վկայություն, որ Վահրամշահին հաջորդել է նրա որդին՝ Մելիք Ալա էդ-Դին Դաուդշահը: Եվ որովհետև Վահրամշահը իր պաշտոնը ստացել է ժառանգական իրավունքով, ուրեմն ավելի քան կես դար Վահրամշահի գերդաստանին է պատկանել Երզնկան: Պատկանել ենք ասում, որովհետև այդ իշխանները ոչ թե որպես պետական պաշտոնյաներ են ղեկավարել երկրամասը, այլ որպես ֆեոդալական կալվածատերեր: Նրանցն էր եկամտի մեծ մասը, իրենց հերթին նրանք էլ հարկատու էին սուլթանին:

---

[1] *«Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի», Երուսաղեմ, 1871, էջ 497:*

Միջանկյալ ասենք, որ այդ շրջանում Հայաստանը սելջուկյան մի մեծ տոհմի ձեռքին է եղել, տասը եղբայրների իրավասության տակ, որոնցից յուրաքանչյուրը նստել է մի մեծ քաղաքում, մերթ սատար կանգնելով մյուս եղբայրներին, մերթ պատերազմի դուրս գալով մեկ-նումեկի դեմ:

Վահրամշահի օրով է, որ հռչակավոր բանաստեղծ Մելվանա Ջելալ էդ-Դին Ռումին փոքր հասակում հոր հետ անցել է Երզնկայից՝ Կոնիա մեկնելիս:

Սելջուկների պատմաբան Իբն Բիբին իր «Սելջուկնամե» գրքում ընդարձակորեն խոսել է այդ տարիների Երզնկայի մասին. «Երզնկա երկիրներուն ամենագեղեցիկն է և ամենահաճելի շրջանը, որուն քո-վեն կանցնի Եփրատ, արևելյան հովերուն շունչը կը զգվե մանու-շակները և լեռնային ծաղիկները»[1]:

Վահրամշահի որդի Ալա էդ-Դին Դաուդշահը եղել է մեծամիտ, չվայտ կյանք վարող մարդ, շարունակ կերուխումեր, խնջույքներ է կազմակերպել՝ հորից ժառանգած Երզնկայի ամենաշքեղ ապարանք-ներում:

Այդ տարիներին միաժամանակ Երզնկայում, նրա պալատում է ապրել արաբ գիտնական բժիշկ Աբդուլ Լաթիֆը, որը նույնպես գրի է առել ժամանակի քաղաքական դեպքերից որոշ դրվագներ: Նա պատմում է, որ Դաուդշահը եղել է զարգացած մարդ, աստղաբաշխ, մաթեմատիկոս, բանաստեղծ, սակայն ունեցել է հակառակորդներ: Իկոնիայի սելջուկյան սուլթան Քեյ-Կուբադը նրան ուղարկել է Ագ-շեհիր, 1227 թ. Երզնկան վերցրել է իր գերիշխանության տակ, ապա հանձնել է Մելիք Ղիա էդ-Դին Քեյ-Խոսրովին:

Հիշյալ սուլթանը ունեցել է շինարարական նկատելի գործունեու-թյուն: Վերակառուցել է բերդեր, ամրություններ, Երզնկայի և Դեր-ջանի գավառներում կառուցել աղոթատեղիներ: Դրանցից մի քանիսի հետքերը կամ ամբողջական կառույցները պահպանվել են մինչև մեր օրերը, ինչպես Մամախաթունի հայտնի թյուլբեն:

Պարզվում է, որ Ալա էդ-Դին Դաուդշահի հեռացումով փաստորեն վերջ է դրել Մենկուչիկների գերդաստանի տիրակալությունը Երզն-կայում: Դրանից հետո այնտեղ իշխել են սելջուկ տարբեր իշխաններ, որոնք երբեմն կոչվել են նաև թագավորներ:

1243 թ. Երզնկան գրավել են մոնղոլ-թաթարները: Առաջացել է վարչատնտեսական և իրավական նոր գոյավիճակ:

Երզնկացիները լուրջ դիմադրություն են ցույց տվել նրանց: Կի-րակոս Գանձակեցին նկարագրելով մոնղոլների այդ արշավանքը,

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 96:*

գրում է. «Եւ եկին պաշարեցին զԵզնկայն և բազում մարտիւք մարտեան ընդ նմա. և բնակիչք քաղաքին բազում հարուածս հասուցեալ ի վերայ զօրացն Թաթարին: Ապա սկսան խաբէութեամբ արտաքս կոչել՝ սիրոյ աղագաւ, և նոցա հաւանեալ եկին, քանզի ոչ ունէին ուստեք օգնական: Որոց սուր ի վերայ եղեալ, կոտորեցին առհասարակ զարս և զկանայս, և սակաւ մանկունս և աղջկունս ապրեցուցեալ՝ վարեցին ի գերութիւն և ի ստրկութիւն»[1]:

Ապա նույն պատմիչն ասում է թե մոնղոլ-թաթարների բանակում ծառայող հայերը փրկել են ազգակիցներից չատերին, ոմանց հայտնի, ոմանց թաքուն կերպով, փրկել են քահանաների, իշխանների: Նա նույնիսկ հիշատակում է փրկվածներից մի քանիսի անունները:

Այս բոլորով հանդերձ՝ մոնղոլ-թաթարական գրավման շրջանն անհամեմատ քիչ ողբալի է եղել Երզնկայի համար, քան դրան հաջորդող օսմանյան Թուրքերի տիրապետության շրջանը:

Մոնղոլները լուրջ դիմադրության հանդիպելով հանդերձ՝ գրավել են քաղաքը, սակայն փորձ չեն արել ավերելու այն. նրանք այնտեղ թողել են իրենց կառավարչին ու շարունակել արշավանքները:

1248 թ. Երզնկայում նորից են հայտնվել սելջուկները, սակայն կարճ է տևել նրանց իշխանությունը: 1256 թ. մոնղոլները վերագրավել են քաղաքը:

Սկսվել է Երզնկայի պատմության ուշագրավ շրջաններից մեկը, երբ երկար ժամանակ քաղաքը ղեկավարել են հայ իշխանները, անշուշտ հարկատու՝ մոնղոլ-թաթարներին:

Բայց նախքան այդ չատ հետաքրքիր շրջանի մասին մանրամասն խոսելը՝ ծանոթանանք խորհրդավոր ու քաղաքական թաքուն նպատակներ հետապնդող մի իրադարձության, որ տեղի է ունեցել Երզընկան սելջուկներից մոնղոլներին, մոնղոլներից կրկին սելջուկներին անցնելու կարճատև շրջանում:

2. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՆԿԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Երզնկան կրկին սելջուկների տիրապետության տակ անցնելու շրջանում է, որ ծպտված, Երզնկա է այցելել Կիլիկիայի հայոց թագավոր Հեթում I-ը, այնտեղից մոնղոլների մեծ խանի մոտ բանակցության գնալու համար:

Այս մասին արժեքավոր տեղեկություններ է թողել Աբուլ Ֆարաջը, գրելով.

[1] **Կիրակոս Գանձակեցի,** *Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 283-284:*

«Եվ ան անցավ Հոռոմոց աշխարհի բոլոր քաղաքներեն, և ոչ մեկ մարդ զինքը ճանչցավ, սակայն Երզնկայի շուկայի մեջ մարդ մը զինքը ճանչցավ և ըսավ. «Ասիկա Հեթում Թագավորն է»: Եվ երբ դեսպանը իմացավ ասիկա, դարձավ Թագավորին, մինչ անիկա ձին կառաջնորդեր, թեթև ապտակեց և զինքը ծաղրեց, ըսելով. «Այո՛, ո՞վ հիմար, արդ դուն Թագավոր մը պետք է ըլլաս, և անոնք ալ քեզ Թագավորի մը նմանցնեն», և այսպիսով մարդուն կասկածը փարատեցաւ: Եվ Թագավորը շարունակեց գյուղացու իր ծպտումը, մինչև որ հասավ վրաց սահմանը»[1]:

Աբուլ Ֆարաջի վերոհիշյալ վկայությունը տեղի է տալիս լուրջ մտորումների: Խոսքն այստեղ վերաբերում է պատմական այն ճանապարհորդությանը, որ կատարել է Հեթում Ի-ը 1254 թ.՝ այցելելու համար մոնղոլ-թաթարների Մանգու խանին և կնքելու բարեկամության դաշինք: Թագավորին ուղեկցել է մոնղոլ դեսպանը, որն էլ փրկել է նրան սելջուկների մոլեգնությունից:

Որ Հեթումը Երզնկայով, այսինքն՝ մոնղոլների հետ կռիվների մեջ գտնվող սելջուկներին ենթակա մի քաղաքից անցնելիս պետք է ծպտված լիներ, բնական է: Որ թաթար դեսպանն էլ, որին ըստ երևույթին վստահված էր Հայոց Թագավորի կյանքը, պիտի փրկեր նրան՝ նույնպես բնական է: Մտքեր հուզող հարցն այն է, թե արդյո՞ք Հեթումն այդ վայրերով անցնում էր պարզապես նկատի ունենալով իր ճանապարհի վրա գտնվելը, թե՞ ուներ գաղտնի ծրագրեր, որոնց կարող էր ծանոթ չլինել մոնղոլ ուղեկիցը, թեև կարող էր և լինել, քանի որ նրանք այժմ որպես ապագա դաշնակիցներ էին ճանապարհորդում:

Բյուզանդական տիրապետություն ազատվելուց հետո Երզնկան կռվախնձոր էր դարձել մահմեդական ամիրայությունների ձեռքին: Եկել գրավել էին արաբները, ապա սելջուկները, եկան և թաթարները:

Կիլիկիայի հայ Թագավորները մոտիկից հետևում էին Հայաստանի այդ հատվածում զարգացող դեպքերին: Նրանք ձգտում էին որևէ պետության հետ դաշինք կնքելով՝ Երզնկան ենթարկել իրենց:

Բարոյական, կրոնագաղափարական ազդեցություն Կիլիկիան արդեն ուներ Երզնկայի վրա: Մարդիկ Երզնկայի վանքերից գնում էին Կիլիկիա, շարունակում իրենց ուսումը, այնտեղից հոգևորականներ էին գալիս Երզնկա, իրենց հետ բերում ոչ միայն գրքեր, այլև մտքեր, պետականության խոր գիտակցություն: Երզնկան արդեն Կիլիկիայի

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 114:*

թագավորներին հիշում էր որպես համազգային արքաներ: Տարբեր վանքերում արտագրված ձեռագրերի հիշատակարաններում սովորական էր «ի թագաւորութեան Հեթմոյ» արտահայտությունը:

Այս բոլորից հետո ամենևին տարօրինակ պիտի չլինի ենթադրելը, թե Երզնկայով անցնելիս Հեթումի նպատակներից մեկն էլ եղել է տեղական հայ իշխանների հետ մտքերի փոխանակություն ունենալը, ծրագրեր կազմելը՝ Կիլիկիայի և Երզնկայի հարաբերությունների մերձեցման ուղղությամբ:

Մեր պատմագրության մեջ էլ կարծիք կա, թե Հեթումը մոնղոլների հետ բանակցելիս չոչափել է բուն Հայաստանին հետաքրքրող հարցեր: Թե ինչ չափով են բարձրացել այդ հարցերը, կապված Կիլիկիայի և մոնղոլների երկուստեք շահերին, չգիտենք, սակայն կասկածից վեր է, որ երկրի ներսում ապրող, վաղուց պետականությունը կորցրած Երզնկայի հայերը պիտի որ հետաքրքրվեին Կիլիկյան պետության գեթ մասնակի հովանավորության տակ ընկնելու գաղափարով:

Չգիտենք նաև, թե չոչափելի ինչ արդյունք է տվել Հեթումի և Մանգու խանի տեսակցությունը: Երզնկայում նկատված որոշ տեղաշարժեր ենթադրաբար հնարավոր է կապել այդ բանակցությունների արդյունքի հետ: Այդ տեղաշարժերը հասկանալու համար պետք է կանգ առնել սելջուկյան գրավումների շրջանի Երզնկայի վիճակի վրա: Այն տարիներին, երբ Երզնկայի գավառում տեղական իշխանությունները դրված էին սելջուկների վրա, հայերի վիճակը շատ ծանր էր: 1255 թ. օրինակ, ահռելի հարկեր են դրվել Եկեղյաց գավառի վրա: Միմյանց են հետևել ապօրինի պարտավորությունները, բռնագրավումները, որոնց հետևանքով «տառապեցաւ ամենայն երկիր»՝ գրում է Կիրակոս Գանձակեցին: Նույն պատմիչը հետևյալ տեղեկություններն է տալիս գանձվող հարկերի մասին.

«Եղաւ հրաման ի Հուլաւուէն պահանջման հարկի, զոր Թաղարն ասեն, յամենայն գլխոյ, որ մտեալ էր ի գիրն արքունի, պահանջէին հարիւր լիտր ցորեան, յիսուն լիտր գինի, երկու լիտր բրինձ և ծնծատ, երեք տոպրակ, երկու չուան, մի սպիտակ, մի նէտ, մի նալ՝ թող զայլ կաշառսն. և ի քսան անասնոյն՝ մի անասուն և քսան սպիտակ. և ոյր ոչ գոյր, զուստերս և զդստերս առնուին ընդ պահանջմանն»[1]:

Այդ թվերին հարկերն այնքան ծանր են եղել, որ Երզնկայի սելջուկ տիրակալը չկարողանալով դրանք գանձել հայերից, ապստամբվել է մոնղոլների դեմ, սակայն պարտվել է: Մոնղոլները սրի են քաշել անզեն ժողովրդին:

---

[1] **Կիրակոս Գանձակեցի,** *էջ 374-375:*

Այս նոր հաղթանակներից հետո Հուլավու խանը իր Եշմուտ որդուն Դիարբեքիրից բերել է տվել Բարձր Հայք, նշանակել Երզնկայի կառավարիչ: Մոնղոլների այս նոր արշավանքին մասնակցել է նաև Կիլիկիայի հայոց թագավոր Հեթումը: Հուլավուն դրանից հետո չէր կարող դրական որոշ վերաբերմունք չունենալ հայերի նկատմամբ:

«Հավանաբար,- գրում է Հ. Քյուրտյանը,- չնորհիվ հայ թագավորին և իշխաններուն գրավված երկիրներուն հայերը՝ մասամբ մը գոնե զերծ մնացին այն սրածություններեն, որոնց մատնեցին թաթարները այս արշավանքի միջոցին գրավված երկիրներու մահմեդական բնակիչները»[1]:

Այս տեսանկյունից պետք է քննության առնել հետագա մի շարք իրադարձությունները. այն, որ, օրինակ, Երզնկան այդ շրջանում դարձել է մոնղոլ-թաթարների ամենագլխավոր էմիրություններից մեկը:

Մոնղոլների օրոք Եկեղյաց գավառի գրչագրական և մատենագրական դպրոցը ապրում է բուռն զարգացում. բանն այն է, որ Երզընկան այս փայլուն շրջանն ապրել է այն տարիներին, երբ մոնղոլները, գուցե Հեթումի հետ բարեկամանալուց հետո, Երզնկայի ղեկավարությունն հանձնել էին հայ իշխաններին, մասամբ էլ բարձրացրել եկեղեցու գերիշխանությունը:

Այս տեսակետը ճիշտ կերպով պաշտպանում է պատմաբան Է. Բաղդասարյանը, գրելով. «Երզնկայի մահմեդական տերերին փոխարինելով քրիստոնյա հայ իշխաններով, մոնղոլները ոչ միայն արմատական վերափոխություն էին կատարում իշխանության հարցում, այլև հետապնդում էին որոշակի նպատակներ: Մեր կարծիքով այն առավելապես կապված էր Մերձավոր Արևելքում և Փոքր Ասիայում մոնղոլների նոր ստրատեգիական պլանի հետ և մասամբ արդյունք էր հայ-մոնղոլական ռազմա-քաղաքական դաշինքի»[2]:

Այո, ճիշտ է ասված, մասամբ արդյունք էր Հեթումի ջանքերի:

Կա նաև վկայություն, որ Հեթումի և Մանգու խանի դաշինքի մեջ եղել են կետեր, որոնք վերաբերում են հայերի վրա դրված հարկերի թեթևացմանը Հայաստանում, իսկ դա չէր կարող տեղի ունենալ, առանց Հեթումի և Հայաստանի իշխանների նախօրոք մշակած ծրագրի, առանց հայոց իշխանների խնդիրքի:

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 117:*

[2] **Է. Բաղդասարյան,** *Երզնկայի հայկական իշխանությունը 13-15-րդ դարերում, տե՛ս «Լրաբեր», ԳԱ հասարակական գիտ., 1970, № 2, էջ 37:*

Անշուշտ այդ պայմանագրերը, խոստումները գրոշ չէին արժենալու, եթե մոնղոլների ռազմական հետագա ծրագրերը չպահանջեին երկրի ներսում հուսալի թիկունք, տվյալ դեպքում հանձին կիսանկախ վիճակում ապրող հայերի:

Իշխանության հանձնումը հայ ավատատերերին, հարկերի գանձման պատասխանատվության վստահումը այդ մարդկանց, ունեցել է դրական նշանակություն ժողովրդի թե՛ տնտեսական կյանքում և թե՛ մանավանդ մշակութային, հոգևոր: Այս շրջանում մոնղոլներին հետաքրքրել է հիմնականում հարկերի գանձումը, իրենց տնտեսական վիճակի հավասարակշռումը: Նրանք այնքան էլ չեն զբաղվել հայերի կրոնական և մշակութային գործերով:

Հենց դա էլ հնարավորություն է տվել մտավոր մի զարթոնքի, որի նմանը հազվադեպ ենք տեսնում այդ դարերում, առհասարակ Հայաստանում: Մարդիկ իրենց զգացել են պետականության գիտակցության մթնոլորտում:

3. ՍԱՐԳԻՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ

Ե՞րբ է սկսվել Երզնկայի այս կիսանկախ վիճակը: Հավանաբար 1260-ական թվականների սկզբներից: Վավերական փաստ է, որ 1266 թվականին Երզնկայի առաջին հոգևոր և քաղաքական առաջնորդ՝ Սարգիս արքեպիսկոպոսը որպես նշանավոր անձ, եղել է այն պատգամավորության կազմում, որ մեկնել է Բյուզանդիա, Հուլավուի համար այնտեղից կին բերելու Միքայել Պալեոլոգ կայսեր դուստր Դեսպինա Մարիամին: Մինչև աղջկա ժամանելը Հուլավուն մահանում է, իսկ Դեսպինային կնության է առնում Աբաղա խանը:

Մեր ուսումնասիրողներին շատ է զբաղեցրել Սարգսի դերը այդ պատգամավորության կազմում: Դեռևս Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Սարգիսը մեկնել է Բյուզանդիա Դեսպինային բերելու և բերել է[1]: Մ. Օրմանյանը և Հ. Քյուրտյանը կասկածի տակ են առել Կիրակոս Գանձակեցու վկայությունը: Քյուրտյանը, մեջ բերելով Աբուլ Ֆարաջի այն հավաստիացումը, թե Անտիոքի պատրիարքն է մեկնել և Դեսպինային բերել, ընդունում է այդ վարկածը: Է. Բաղդասարյանը իրավացիորեն գտնում է, թե Աբուլ Ֆարաջի գրածը ամենևին չի հակասում Գանձակեցուն, կայսրը իր հերթին չէր կարող «քաղաքական նկատառումներով իր աղջկան կնության տալիս նրա հետ չուղարկեր հոգևոր և աշխարհիկ նշանավոր մարդիկ»[2]:

---

[1] **Կիրակոս Գանձակեցի,** *էջ 399:*

[2] **Է. Բաղդասարյան,** *նշվ. աշխ., էջ 38, ծան. 6:*

Այստեղ մեզ զբաղեցնողը ոչ թե Դեսպինայի ինչ չքախմբով Բյուզանդիայից բերվելն է, այլ այն, որ այդ շրջանում մոնղոլները հայ հոգևորականությանը բավականաչափ նշանակություն են տվել, որ նման մի հանձնարարության մասնակից են դարձրել Սարգիս արքեպիսկոպոսին:

Եկեղեցու դիրքի բարձրացմամբ պիտի բացատրել մշակութային այն վերելքը, որի մասին խոսեցինք վերևում:

Քանի որ մտավոր վերելքը առաջին հերթին կապվում է Սարգիս արքեպիսկոպոսի անվան հետ, մասամբ էլ նրա որդու՝ Հովհաննես իշխանի, ծանոթանանք այդ մարդկանց:

Թե ինչպես է կոչվել նրանց գերդաստանը Երզնկայում, որոշակի չգիտենք, բայց այդ գերդաստանն իր կազմում ունեցել է երկու Սարգիս: Առաջին Սարգիս Երզնկացու անունը հիշատակվում է 1200-ական թվականների սկզբներին: Նրա անվան հետ մեծ գործեր չեն կապվում: Եղել է Երզնկայի հոգևոր առաջնորդը մի ժամանակաշրջանում, երբ իշխանությունը հայերի ձեռքին չէր, այլ օտար կառավարիչների:

1250-ական թվականներից հանդես է եկել Սարգիս արքեպիսկոպոսը: Ս. Էփրիկյանը «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարանում» նրա կառավարման տարիները համարում է 1250–1279 թվականները: Այլ աղբյուրներ պատմական փաստերով ապացուցում են, որ 1250-ական թվականների սկզբներին Սարգիսը հոգևոր գործունեություն է ունեցել, բայց 1265 թվականից է, որ Երզնկան ղեկավարվել է նրանց տոհմի կողմից, և այդ իշխանությունը շարունակվել է մինչև դարի վերջը, գուցե մինչև հաջորդ դարի սկիզբները, թեև ոչ նույն ուժով:

Մեր մատենագրության մեջ նրա անունն առաջին անգամ հիշատակվում է 1266 թվականին տեղի ունեցած մի դեպքի առիթով, երբ որդին՝ պարոն Հովհաննեսն էլ քաղաքի իշխանն էր:

Բայց որ Սարգիս արքեպիսկոպոսը 1260-ական թվականներից իշխող դեմք է եղել Եկեղյաց գավառում, այդ երևում է ոչ միայն Բյուզանդիա գործուղվելու պարագայից, այլև այդ տասնամյակներում Երզնկայի տարբեր վանքերում գրված տասնյակ ձեռագրերի հիշատակարաններից, որոնց բոլորի մեջ հիշատակվում է նրա անունը: Օրինակ՝ 1266 թ. արտագրված մի ճառընտիրում ասվում է, թե «Գրեցաւ սա ի քաղաքիս որ կոչի յԵկեղեց գաւառս՝ մականուն Եղնկայ, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս... ի հայրապետութեանն տեառն Կոստանդեայ և յարհիեպիսկոպոսութեան տեառն Սարգսի Մար-

հասիայի մեծի, և ի քրիստոսապսակ իշխանին մերոյ պարոն Յոհանիսի Տեառն ծառայի»[1]:

Այս հիշատակարանից երևում է, որ Սարգիսն էլ սերել է իշխանական տնից:

Ձեռագրերից մի քանիսում Սարգիս արքեպիսկոպոսը կոչվում է նաև Հայրապետ, որ ենթադրել է տալիս Հայաստանի այս մասի նաև կրոնական անկախությանը:

Եկեղյաց գավառի քաղաքական իշխանությունն էլ եղել է նույն հոգևորականի որդու՝ պարոն Հովհաննեսի ձեռքին: Հայտնի է, որ պարոն տիտղոսը հայ իրականություն է մուտք գործել հենց այդ դարերում՝ Կիլիկյան թագավորության շրջանում: Արդ, Հովհաննեսի պարոն կոչվելը իշխանական տիտղո՞ս է եղել, թե հասարակ անուն, որը տեսնում ենք նաև ուրիշների մոտ, ասենք Գրիգոր Դարանաղցու ուսուցիչ Պարոն Ճգնավորը, նաև Իշխան անվան տարածման փաստի մեջ հայ իրականությունում:

Հակված ենք կարծելու, որ տիտղոս է, մանավանդ որ հիշատակարաններում իշխան տիտղոսն էլ տրվել է նրան: Ըստ երևույթին Երզնկայի ղեկավարությունն իր ձեռքը վերցրած այդ գերդաստանը օգտագործել է Կիլիկյան թագավորական տների որոշ սովորությունները:

Ենթադրելի է, որ պարոն Հովհաննեսի քաղաքական իրավունքները անհամեմատ ավելի սահմանափակ են եղել, քան հոր իրավունքները և դուրս չեն եկել Երզնկա քաղաքի կառավարումից, թեև ինքն էլ, հայրն էլ ձգտել են ընդլայնել իրենց իշխանության սահմանները: Գուցե այդ նկրտումներն է, որ հետագայում պատճառ դարձան երկուսի էլ ողբերգական մահվան:

Տիրապետող տարրը, տվյալ դեպքում թե՛ սելջուկները, թե՛ մոնղոլները, նրանցից էլ առաջ բյուզանդական կայսրերը, արաբ էմիրները ձգտել են ստեղծել ոչ թե կենտրոնաձիգ տեղական իշխանություններ, որոնք կարող էին բռունցք դառնալ իրենց դեմ, այլ բաժան-բաժան արված մանր իշխանություններ, դրանց էլ հակադրել միմյանց:

Այդպիսի մանր իշխանություններ կային նաև Հայաստանի այլ մասերում ևս, սակայն Երզնկայի տարբերությունն այն էր, որ մոտիկից կապված էր հայկական մի պետության՝ Կիլիկյան իշխանության հետ, նրանից ստանում էր թե՛ հոգևոր և թե՛ քաղաքական հրահանգներ:

---

[1] **Ա. Մաթևոսյան,** *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, Երևան, 1984, էջ 340:*

Որ Սարգիս արքեպիսկոպոսը իսկապես ձգտել է դուրս գալ տեղական նեղ շրջանակներից, Երզնկան դարձնել գեթ Արևմտյան Հայաստանի կենտրոն, այդ մենք կտեսնենք ստորև նկարագրվելիք դեպքերից:

Սարգիս արքեպիսկոպոսի անվան հետ են կապվում մշակութային, կրթական, շինարարական բազմաթիվ միջոցառումներ:

Նրան է վերագրվում Երզնկայի ս. Փրկիչ եկեղեցու շինությունը կամ արմատական վերանորոգումը: Ղ. Ալիշանի կարծիքով՝ այդ եկեղեցին կառուցվել է 1269 թ.: Այլ աղբյուրներ վկայում են, որ եկեղեցին 1265 թ. արդեն կար և որ 1269 թվականին վերանորոգվել է:

Նկատի ունենալով երկրաշարժերի հաճախակի լինելը Երզնկայում, հնարավոր է ենթադրել, որ երկրաշարժից այնպես է վնասվել, որ վերանորոգումը հավասարազոր է եղել նորը կառուցելուն և այդպես էլ արձանագրվել է մեր մատենագրության մեջ:

Նույն այդ տարում (1269) գրվել է գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող մի Աստվածաշունչ՝ «Հրամանաւ եւ արդեամբք տեառն Սարգսի սրբասէր եւ արհիական եպիսկոպոսի»[1]:

Վերոհիշյալ հիշատակարանում Սարգսի մասին նաև ասվում է «զվերատեսուչ մեծի վիճակիս Եկեղեաց գաւառիս եւ մեծահռչակ քաղաքիս Երզնկայիս զտէր՝ Սարգիս»[2]:

1270 թ. գրված մի Շարակնոցի հիշատակարանում էլ կարդում ենք. «Ի թագաւորութեան Հեթմոյ և ի հայրապետութեանն տեառն Յակովբայ, եւ յառաջնորդութեան արքեպիսկոպոսին մերոյ տէր Սարգսի՝ մայրաքաղաքիս Եղնկայի»[3]:

Այս շրջանում գրված բոլոր ձեռագրերի հիշատակարաններում Երզնկային տրվում են նման փայլուն մակդիրներ՝ «մեծահռչակ», «մայրաքաղաք» և այլն, որոնք ամենևին էլ հայրենասիրական սնափառության դրսևորումներ չեն և վկայում են այդ քաղաքի ձեռք բերած հեղինակության մասին:

Շատ հետաքրքիր ենթադրությունների տեղի կարող է տալ 1272 թվականին գրված մի հիշատակարան, որտեղ կարդում ենք. «Կատարեցի զսուրբ Աւետարանս ի թուականիս հայոց ՉԻԱ (1272)..., սա ի գաւառս Երիզա, որ յորջորջի Եկեղեաց գաւառ. ի հայրապետութեան տէր Սարգսի, իշխանակալութեան որդւոյ նորա պարոն Յոհանիսի, որ է ժամանակս սոցա խաղաղութիւն քրիստոնէից, զորս Քրիստոս Աստուած երկարակեացս արասցէ, ամէն»[4]:

---

[1] **Ա. Մաթևոսյան,** նշվ. աշխ., էջ 376:

[2] Նույն տեղում, էջ 377:

[3] Նույն տեղում, էջ 392:

[4] Նույն տեղում, էջ 426:

Արդեն ասացինք, որ հայրապետություն արտահայտության տակ հնարավոր է հասկանալ առհասարակ Արևմտյան Հայաստանի նկատելի մասը, Սարգսի որդու համար ասված «իշխանակալութիւն» արտահայտությունն էլ պետք է հասկանալ նրա տիրակալությունը Եկեղյաց գավառի վրա, մանավանդ որ այդ շրջանում բյուզանդական տիրապետությունը գրեթե վերացել էր, իսկ թաթարական հորդաներն էլ դեռևս վերջնականապես չէին նվաճել երկիրը: Ավելի նշանակալից է այն միտքը, թե այդ գերդաստանի օրոք եղել է «խաղաղութիւն քրիստոնէից»:

4. ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԴԱՌՆԱԼՈՒ ՆԿՐՏՈՒՄՆԵՐ

Ուզում ենք որոշ տեղեկություններ տալ Սարգսի որդու՝ պարոն Հովհաննեսի մասին, քանի որ, ինչպես տեսանք բերված փաստերից, ըստ էության նա է եղել երկրի քաղաքական ու տնտեսական կյանքի ղեկավարը, անչուշտ հենարան ունենալով հոր ազդեցությունն ու հեղինակությունը:

Հովհաննեսի ծննդյան թվականը հայտնի չէ: Ակնարկներ կան, որ սպանվել է 30–35 տարեկան հասակում: Նշանակում է պետք է ծնված լինի 1230-ական թվականների կեսերին: Եղել է գրասեր իշխան: Հովհաննես Երզնկացի Պլուզն իր «Մեկնութիւն քերականի» երկի նախաբանում գովում է նրան:

Հովհաննեսի և նրա հոր մեկենասությամբ գրված և այժմ Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքում պահվող նկարազարդ մի ձեռագրի մասին բանասերները խոսում են մեծ հիացմունքով, ինչ որ վկայում է այդ ձեռագրի գեղարվեստական արժեքի մասին:

Պարոն Հովհաննեսն ունեցել է երկու որդի՝ Ներսես և Գրիգորիս, որոնք ժառանգական իրավունքով շարունակել են իշխել Երզնկային, սակայն ավելի սահմանափակ իրավունքով:

Մեկից ավելի փաստեր վկայում են, որ Սարգիս արքեպիսկոպոսն ու նրա որդին կատարել են այնպիսի գործեր, որոնց նպատակն է եղել բորբոքել ժողովրդի կրոնական զգացումները և դրանք ծառայեցնել եկեղեցու իշխանության ամրապնդմանը. Երզնկան ծանոթացնել բոլոր հայերին, նրա շուրջ ստեղծել լայն հետաքրքրություն, այն դիտել Արևմտյան Հայաստանի ապագա կենտրոնը:

Այդպիսի միջոցառումներից է եղել Ներսես Ա Մեծ Հայրապետի նշխարների գյուտի շուրջ հարուցված աղմուկը, հեթանոսական դարերի հանդիսությունները հիշեցնող պերճ ծիսակատարություններով:

Քանի որ սա կրոնական քողի տակ կատարված, բայց խորքում համաժողովրդական, համահայկական միջոցառում է եղել, ծանոթանանք այդ իրադարձությանը, հետևելով Հովհաննես Երզնկացուն, որը գրի է առել գյուտի ընդարձակ պատմությունը:

Ահա իրադարձության հիմքը կազմող ավանդությունը:

Թիլ ավանի Հայրապետաց եկեղեցու սարկավագներից Պատվականը 1273 թ. հունվար ամսին երազ է տեսնում. մի ծերունի՝ քահանայի զգեստով, նստած ջորու վրա, մտնում է վանքի դռնից ներս և ասում Պատվականին. «Եղբայր, ո՞րտեղ է հանգած այն եկեղեցին, որի տեղն այստեղ է եղել»: Սարկավագը բռնում է նրա ջորու սանձից, տանում է մի տեղ և ասում. «Ահա հանգած եկեղեցու տեղը»: Անծանոթը ասում է նրան. «Այստեղ է սուրբ Ներսեսի գերեզմանը» և ձեռքի գավազանով նշան է անում տեղը, միաժամանակ ավելացնում, թե շատ խորն է թաղված Հայրապետը:

Հաջորդ օրը Պատվականը նորից է երազ տեսնում. այս անգամ նրան ներկայանում է նույն մարդը արդեն զինվորական համազգեստով և երիտասարդի արտաքինով: Նա հարցնում է սարկավագին, թե ս. Ներսեսի նշխարները հանե՞լ են: – Ոչ,- պատասխանում է Պատվականը: Խորհրդավոր երիտասարդը իր մատի կնիքով դրոշմում է մի տեղ և ասում է. «Սա է գերեզմանի տեղը»: Ասում է ու իսկույն անհետանում:

Պատվականը երրորդ, չորրորդ անգամ էլ է տեսնում նույնպիսի երազներ: Անծանոթ ու խորհրդավոր երիտասարդը սաստում է նրան, թե ինչու անտարբեր են գտնվում և չեն հանում սրբազան նշխարները:

Լուրը տարածվում է ամենուր: Լսում են Երզնկայի հոգևոր և աշխարհիկ պետերը, հետաքրքրվում են երազի մանրամասներով, որոշում են փորել մատնանշված տեղը և տեսնել թե իսկապե՞ս այնտեղ գերեզման կա:

Հովհաննես Երզնկացին գրում է. «Ապա վաղվաղակի վարդապետն Ներսէս, առաջնորդ տեղւոյն՝ ի քաղաքն հասանէր առ մեծապատիւ արքեպիսկոպոսն տէր Սարգիս և պատմեր նմա զհանգամանս տեսլեանն և աւետիս տայր և փրկութեան լինել նշան գերեւումն սրբոյն Ներսէսի, որ յաւուրս նորա առաջնորդութեան յայտնեցաւ»[1]:

Հաջորդ օրը Սարգիս արքեպիսկոպոսի կարգադրությամբ քանդում են մատնանշված տեղը և... հասնում գերեզմանին:

«Աստուածապատիւ արքեպիսկոպոս» Տեր Սարգիսը և «բարեսէր իշխան պարոն Հովհաննեսը» իրենց հետ վերցնելով քաղաքի հոգևոր

---

[1] *«Սոփերք հայկականք», հատ. Է, Վենետիկ, 1853, էջ 50-51:*

և քաղաքական ղեկավարներին, նաև մեծ քանակությամբ ժողովուրդ, գնացել են դեպքի վայրը «իբրև զեղջերուս ծարաւի ի ջուր փափագեալ, զի վկայէր ի միտս ամենեցուն, մեծի և փոքու, թէ եհաս ժամանակ փրկութեան և ազատութեան Հայաստանեայց»[1]:

Ինչպես տեսնում ենք, իրադարձությունը մեկնաբանել են որպես ամբողջ Հայաստանի փրկության երկնային նշան:

Այս բոլորից կարելի է ենթադրել, որ ամեն ինչ սարքված է եղել հիանալի և կանխորոշված ծրագրով, որի մեջ ամենից ավելի ուշադրություն է գրավում Տեր Սարգսի և նրա որդու հեղինակության բարձրացումը ժողովրդի աչքում, և այն գուշակությունը, թե նրանց միջոցով ազատվելու է Հայաստանը:

Երբ ժողովուրդը տեղ է հասել, վանքի միաբաններն արդեն հանած են եղել ս. Ներսեսի նշխարները: Անշուշտ, այս բոլորը չէր կարող կատարվել առանց Սարգիս արքեպիսկոպոսի գիտության: Երևույթի հրաշապատում կաղապարը պահելու համար ըստ երևույթին չեն ցանկացել, որ ժողովուրդը իմանա մանրամասնություններ, այլ իմանա այն, ինչ հարմար են դատել եկեղեցու պետերը:

Հովհաննես Երզնկացին նկարագրում է երեք կանգուն երկարություն, մեկ կանգուն լայնություն ունեցող գերեզմանը, կառուցված կրաշաղախ քարերով: Գերեզմանի արևմտյան կողմին է եղել Ներսեսի կմախքը, նստած աթոռի վրա, անաղարտ պահպանված է եղել ամբողջ կմախքը գլխից մինչև ոտները: «Եւ էին առաջի նորա ի մէջ գերեզմանին այլ նշխարք, ոչ բովանդակ մարմին՝ այլ մասն ինչ եղեալ ի մեծամեծ անդամոցն, և սակաւ ինչ հողով ծածկեալ էին սուրբ նշխարքն. և ապա՝ ի վերոյ երեք կրկին կամարք կապեալ ի կրոյ և ի քարանց ի վերայ գերեզմանին»[2]:

Այնուհետև Հովհաննես Երզնկացին նկարագրում է թե ինչպես Սարգիս արքեպիսկոպոսը նշխարները դրել է սպիտակ կտավի մեջ, զետեղել երկու մեծ արկղներում, կնքել է իր մատանիով, կարգադրել մի մասը պահել, մյուս մասը ցուցադրել ժողովրդին, որից հետո ինքը մեկնել է Երզնկա:

Նշխարների գյուտի լուրը տարածվել է Հայաստանով մեկ, ամենուր առաջացնելով մեծ հետաքրքրություն և խանդավառություն, բոլորի ուշադրությունը բևեռվել է Երզնկայի վրա: Ամեն կողմից ուխտավորների խմբեր են եկել՝ տեղում սեփական աչքերով տեսնելու Ներսես Հայրապետի ոսկորները:

---

[1] *«Սոփերք հայկականք», հատ. է, էջ 51-52:*

[2] *Նույն տեղում, էջ 52-53:*

Կատարվել է այն, ինչին ձգտել էր Տեր Սարգիսը:

Բայց տիրապետող թշնամին քնած չէր: Տաճիկները, տեսնելով հայերի այս բացառիկ աշխուժացումն ու համաժողովրդական ցնծությունը, դա համարել են իրենց տիրապետության դեմ ուղղված ընդվզում: Որոշել են գիշերով գնալ, հափշտակել և ոչնչացնել նշխարները:

Չի հաջողվել:

Սարգիսը շարունակել է գործը ավելի խանդավառելով շրջապատի մարդկանց, ավելի ևս մեծացնելով հետաքրքրությունը Երզնկայի նկատմամբ:

Նա գործի է դրել քաղաքի հայ ոսկերիչներին, նկարիչներին, դաջողներին ու այլ արվեստագետների, որպեսզի գտնված այդ նշխարներին ավելի շքեղ տեսք տա: Լսենք պատմիչին.

«Իսկ պատուեալն ի Տեառնէ արքեպիսկոպոսն Տէր Սարգիս զաջն և զմիւս բազուկն տայր յօրինել իմաստուն ոսկեգործաց, և զմանր մասունս մատանց առ միմեանս միաբանեալ յարծաթոյ և յոսկւոյ պատեալ մանրամասն յօրինուածով տեղի երևման ի ցոյց տեսլեան արարեալ պահպանիչ աջոյն և բազկին շնորհաբաշխ: Նոյնպէս և տայր յօրինել գլուխ արծաթեղէն յարմար մեծահասակ անձինն պահարան գլխոյն նշխարաց և ի բաց առնելով զդիրս երեսացն և զբերանոյն և յերիս տեղիս հանդէպ ճակատոյն խաչաձև հատուածս արարեալ արծաթոյն, որում երևէին նշխարքն փառաւոր: Եւ զայլ բովանդակ նշխարս սուրբ ոսկերացն՝ լուանայր զհողն մածեալ՝ անապակ և անուշահամ գինով յանուշահոտ ծաղկանց խառնելով, և օծեալ խնկահոտ իւղով կազմեալ արուէստաւորապէս»[1]:

Այս նկարագրությունը ոչ միայն ցույց է տալիս գյուտի արժեքի ընկալումը, այլև Երզնկայի արվեստագործական մտքի զարգացման աստիճանը: Գյուտը շքեղորեն ցուցադրելու աշխատանքներին մասնակցել են ոսկերիչներ, ատաղձագործներ, փայտափորագրողներ, ծաղիկներից անուշահոտ օծանելիքներ պատրաստողներ, որոնք ամենայն հավանականությամբ օգտագործվելիս են եղել մեծահարուստների ընտանիքներում, գուցե և Հովհաննես իշխանի ընտանիքում:

Ու այսպես երկյուղածությամբ ու խնամքով պահել են մասունքները, մինչև որ դրանց հայտնաբերված տեղում կառուցել են եկեղեցի, այնտեղ ամփոփել դրանք:

---

[1] *«Սոփերք հայկականք», հատ. Է, էջ 62–63, նաև՝* **Ղ. Ալիշան,** *Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 478–480:*

Տեր Սարգիսը թանկագին նշխարներն օգտագործել է շատ խելամտորեն: Նա Ներսեսի մի բազուկը հատուկ տուփի մեջ ամփոփած տեղափոխել է Երզնկա, իր ծախքով չքեղորեն վերակառուցված եկեղեցին «ի զարդ և ի պահպանութիւն սրբոյն տաճարին», իսկ մյուս բազուկն էլ բաժին է հանել սրբազան Եփրատի մյուս ափին գտնվող Տիրաշենի վանքին «զի զերկոսեան բազուկսն և ձեռն առատաձիր չնորհիվ լցեալ սրբոյն Ներսէսի զերկրորդ մեր լուսաւորչին, սահմանէր յերկուս կողմանս գետոյն, որպէս թէ տարածեալ ունենալով զթեւսն հովանի և զբազուկսն աղաչող բարեխօս առ բարձրեալն, և զձեռն յառնուլ յաննուազ բարեաց և բաշխել եկեղեցւոյ մանկանց, ի փարթամութիւն փառաց հայրենի գանձիւք, և տայր հաւաքել նիւթ չինուածոյ եկեղեցւոյն»[1]:

Որքա՞ն է վավերական այս բոլորը: Որ հրաշապատում կաղապարը պետք է դեն գցել նկարագրությունից, հասկանալի է:

Բայց որ Երզնկայի «Գյուտ նշխարացին» կարող էր առիթ տված լինել իրական մի դեպք՝ հնարավոր է:

Իսկ ի՞նչը կարող էր հիմք ծառայել բավականաչափ լավ հյուսված հրաշապատում ավանդության: Պարզապես թաղման կամ որևէ աշխատանքի պահին մի հին գերեզմանի հայտնաբերումը, լինի դա քրիստոնեական գերեզմանի, թե հեթանոսական: Եվ որովհետև Թիլը հեթանոսական դարերից եղել է պաշտամունքի կենտրոն, հնարավոր է, որ հայտնաբերված գերեզմանը լիներ հեթանոսական շրջանից, ինչ որ Սարգիս արքեպիսկոպոսին ամենևին ձեռնտու չէր: Հովհաննես Երզնկացու նկարագրությունն էլ շատ ավելի հիշեցնում է հեթանոսական թաղում, քան քրիստոնեական: Հնարավոր է նաև, որ պեղումներ կատարողները եկեղեցական իշխանությունների կարգադրությամբ չտարածեին այն, ինչ տեսել են, գուցե և որոշ գտածոներ թաքցրած լինեին: Այս ենթադրությունը հավանական է թվում այն տեսակետից, որ պեղումները գրեթե գաղտնի են կատարվել: Ժողովուրդը հայտնաբերման վայրում եղել է այն ժամանակ, երբ արդեն ամեն ինչ ավարտված է եղել:

Մասունքների մի մասը Եփրատի մի կողմում, մյուս մասն էլ հանդիպակաց կողմում պահելու փաստը եթե ուներ քաղաքական նկատառում, որը Հովհաննես Երզնկացին նմանեցնում է ս. Ներսեսի հովանու տարածմանը սրբազան Եփրատի երկու ափերի վրա, ապա ուներ նաև տնտեսական նկատառում: Ուխտագնացությունների հոսքը մեկից ավելի վանքեր ուղղելու նկատառումը: Ուխտագնացու-

[1] Ղ. Ալիշան, *Հայապատում, էջ 478-480:*

թյունների օգուտը միայն մատաղները, աղջամբույրները, հաղորդություն ստանալը չէր, հեռավոր վայրերից եկող մարդիկ, հատկապես ունևորները, մի քանի օր մնալով այս վայրերում, մեծ ծախսեր էին անում, նվերներ էին տալիս վանքերին, վանահայրերին: Երբեմն էլ՝ սրբերից հաջողություն, բուժում խնդրող հարուստ ուխտավորներ մեծագումար նյութական միջոցներով վերանորոգում էին վանքեր, եկեղեցիներ, կառուցում աղբյուրներ, գցում այգիներ եկեղեցապատկան կալվածներում:

Ուրեմն Երզնկան համընդհանուր ճանաչում գտնող կենտրոն դառնալով ոչ միայն քաղաքական կշիռն էր բարձրացնում, այլև հարբստանում էր տնտեսապես:

Առանց այս բոլորի, դժվար պիտի լինի պատկերացնել մշակութային այն բուռն զարգացումը, որ ապրել է Երզնկան այդ երկու դարերի ընթացքում:

Ինչ ճակատագիր ունեցան այդքան փարթամ ու իշխանական կյանքով ապրող Տեր Սարգիսն ու նրա որդին՝ պարոն Հովհաննեսը, որոնք պատմական Հայաստանի այս գեղատեսիլ անկյունում ստեղծել էին յուրահատուկ անկախ կենտրոն:

Տեր Սարգիսը, որ վայելում էր մոնղոլ խանի հովանավորությունը, արդեն իրեն բարձր էր համարում մոտակա վայրերի մուսուլման իշխողներից: Աբուլ Ֆարաջը պատմում է, որ Խարբերդի ամրոցի զորագնդի պետ Բիչարը՝ արյունարբու մի մարդ, չի հանդուրժել Սարգիսի և նրա որդու կիսանկախ դիրքը Երզնկայում և ծրագրել է դավադրությամբ նրանց մեջտեղից վերացնել:

Նա իր մարդկանցով մեկնել է Երզնկա՝ մտադրությունը կենսագործելու համար: Իմացել է, որ Տեր Սարգիսը մոտակա վանքերից մեկում զբաղված է ծաղկազարդի տոներով:

Դարանակալ սպասել է վերադարձին: Սարգիսը վանքից դուրս գալով ճանապարհ է ընկել դեպի քաղաք՝ որդու ուղեկցությամբ: Ճանապարհին իշխան Հովհաննեսը բաժանվել է հորից և ինչ որ գործով մեկնել է մոտակա գյուղը՝ հեծյալ ուղեկիցներով:

Հազիվ բավական ճանապարհ կտրած՝ Բիչարի մարդիկ հարձակվել են Սարգիս արքեպիսկոպոսի վրա, կտրել գլուխը, և այն վերցնելով իրենց հետ՝ շարժվել են դեպի Հովհաննեսի գտնված գյուղը:

Իշխանը, իմանալով փորձանքի մասին, թաքնվել է ցորենի դեզի տակ, սակայն գտել են, ցույց տվել հոր կտրված գլուխը, ապա գազանաբար խոշտանգել են նաև որդուն:

Արդյո՞ք սա միայն Բիչարի անձնական վրեժխնդրության արդյունքն է եղել, թե դրանում հեռվից հեռու մասնակցություն է ունեցել մոնղոլների խանը: Տեր Սարգսի և նրա որդու այդքան կենտրոնախույս պահվածքը չէր կարող հաշտ աչքով դիտվել հենց խանի կողմից, որքան էլ որ նա հանդես գար հովանավորողի դերում: Ըստ երևույթին հենց խանն է որոշել վերջ տալ Երզնկայի կիսանկախ վիճակին և իշխանությունը կրկին հանձնել իր մարդկանց: Որ դա այդպես է, ցույց է տալիս այն փաստը, որ զազրելի այդ ոճրագործությունից հետո քաղաքական իշխանությունը այլևս հայերի ձեռքին չի եղել: Շարունակվել է կրոնականը, այն էլ ոչ նախկին լիազորություններով ու ազատությամբ:

Փոփոխություններ են տեղի ունեցել նաև տիրապետող ղեկավարության շարքերում: Աբուլ Ֆարաջը վկայում է, որ 1283 թ. Իկոնիայի սուլթան Ղիյաղ էդ-Դինը ճանապարհ է ընկել իր եղբորորդուն՝ սուլթան Մասուդին դիմավորելու. «Երբ ան Երզնկա քաղաքը հասավ, ազնվականներն իրեն մահացու դեղ մը տվին և զինքը մեռցուցին»[1]:

Այս սպանությունը կազմակերպողն է եղել իլխան Արղունը: Դրանից հետո ամբողջ իշխանությունը հանձնվել է Խնաս ադ-Դին Մասուդին (1283):

1308 թ. արդեն Երզնկայի տեր է հիշվում Էմիր Հասանը, որին հետագայում Կամախում բանտարկել է տվել Աբու Սաիդ իլխանը:

5. ԵՐԶՆԿԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Անշուշտ այս շրջանում նույնպես մոնղոլները նշանակել են ձևական հայ իշխաններ, որոնց միջոցով գանձել են հարկերը, սակայն քաղաքի վիճակը ամենևին չի հիշեցրել նախորդ փառքի շրջանը:

Կրոնական իշխանությունները շարունակել են իրենց գործունեությունը բավական երկար ժամանակ, այն էլ Սարգիս արքեպիսկոպոսի գերդաստանի ավանդական հաջորդականությամբ:

Հենց Հովհաննես իշխանի որդու՝ Ներսեսի կրոնական գործունեությունը ուղղակի շարունակությունն է եղել իր պապի՝ Տեր Սարգիս արքեպիսկոպոսի պաշտոնի:

Ներսեսը ծնված պիտի լինի 1250-ական թվականներին, անշուշտ Երզնկայում և երևի պաշտոնի անցած՝ պապի սպանությունից հետո: Այդ տարիներին գրված ձեռագրեր մեզ չեն հասել: Նրա անվան հիշատակությանը առաջին անգամ հանդիպում ենք 1289 թվականին

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 138:*

գրված «Սարգիս» գրքում. հիշատակվում է որպես Երզնկայի առաջնորդ՝ «յեպիսկոպոսութեան մերոյ տեր Ներսիսի» արտահայտությամբ:

Առկա ժլատ փաստերից երևում է, որ նա էլ, պապի նման աշխատել է Եկեղյաց գավառի հեղինակությունը բարձր պահել, օգտագործելով Ներսես Հայրապետի նշխարների այնտեղ գտնվելու փաստը: 1291 թ. նա պատրաստել է տվել մի նոր մասնատուփ այդ նշխարների համար և վրան փորագրել՝ ընդարձակ մակագրություն, որտեղ պատմվում է մասունքի հայտնաբերվելը Սարգիս արքեպիսկոպոսի իշխանության օրոք: Ապա անդրադառնալով իրեն՝ գրել է տվել. «Նաև ես մեղուցեալ արքեպիսկոպոս Տեր Ներսէս չինեցի զսա. և զլուսաւոր նշխարքս եդի ի սմա, բարեխաւս առ Քրիստոս Աստուած ի թողութիւն յանցանաց իմոց և ի զարդ ս. ուխտին Տիրաշէնի առաքելական աթոռոյն»[1]: Թվականն է 1291:

Ոսկերչական արվեստի մի գլուխգործոց է եղել այս մասնատուփը, որ նույնպես զոհ է գնացել թուրքական բարբարոսություններին: Ս. Ամատյանը, որ տեսել է այն 1870-ական թվականներին, այսպես է նկարագրում.

«Թևերուն մեջտեղ փոսիկ մը կա, ուր ապակիի ներքև կպահպանվի Թանկագին մասունքը: Թևերուն և իրանին վրա քանդակված են խաչաձև զարդեր՝ բարձրաքանդակ, որոնց քովը և բոլորտիքը նշանագրված են քանի մը սուրբերու անուններ, և ստորոտը՝ «Եւ կազմողս սորա Խոսրովն յիշեսջիք ի Քրիստոս»[2]:

Ամատյանի նկարագրած հատվածում հիշատակված Խոսրովը, ինչպես ճիշտ կերպով նկատել է նաև Քյուրտյանը, մասնատուփը պատրաստող ոսկերիչ արվեստագետն է: Այսպիսով մեզ հասել է հին Երզնկայի ոսկերչական արվեստի հմուտ վարպետներից մեկի անունը:

1304 թ. գրված մի Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «յարժանապատիւ եպիսկոպոսութեան սրբասէր եւ աստուածամեծար արքեպիսկոպոսիս մերոյ Տեր Ներսիսի: Գրեցաւ սա ի գաւառիս Եկեղեաց, ի մայրաքաղաքիս Եղնկայ, ձեռամբ նուաստ եւ անպիտան գրչի Աւետեացս քահանայի»[3]: Գրվել է ս. Կիրակոսի վանքում:

Եթե Ներսեսի ծննդյան թվականն անորոշ է, ապա շատ որոշակի է մահվան տարին: Մեռել է 1305 թվին: 1304–1305 թթ. գրված մի

---

[1] **Գ. Սրվանձտյանց,** *Թորոս աղբար, մասն Բ, Կ. Պոլիս, 1879, էջ 293:*

[2] *Տե՛ս «Բյուզանդիոն», օրաթերթ, Կ. Պոլիս, № 1446:*

[3] **Լ. Ս. Խաչիկյան,** *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 29:*

ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Ի թուականիս հայոց ՉԾԴ (1305). և ի վերադիտողութեան մայրաքաղաքիս Եղնկայի Տէր Ներսէս եպիսկոպոսի, որ վախճանեցաւ ի սմին ամի: Որոյ ողորմեսցի Քրիստոս Աստուած որ է տէր ամենայնի: Եվ թողցէ զյանցանս սորա՝ զգաղտնի և զհայտնի»[1]:

Տեր Ներսեսին հաջորդել է Տեր Սարգիսը, ըստ երևույթին Ներսեսի ազգականը, ուրեմն Սարգիս արքեպիսկոպոսի թոռան որդին: Գործել է 14-րդ դարի առաջին տասնամյակում:

Այս բոլորը հիմք են տալիս ենթադրելու, որ եկեղեցական իշխանությունը Եկեղյաց գավառում երկար ժամանակ ժառանգաբար մնացել է միևնույն գերդաստանի ձեռքին:

Իսկ աշխարհական իշխանությո՞ւնը:

Է. Բաղդասարյանը «Երզնկայի հայկական իշխանությունը 13–15-րդ դարերում» շահեկան հոդվածում փորձում է ապացուցել, թե Երզնկայում հայկական իշխանությունը գոյատևել է մինչև 15-րդ դարը:

Տարակուսելի է այս հարցադրումը:

Նա բերում է Թորոս Տարոնացու կողմից գրված հետևյալ վկայությունը. «Պարոնն զիւր քաղաքն ձգեց, մինչ ի Բաբերդ գնաց չափառ» և դրանից եզրակացնում է. «Հասկանալի է, որ այստեղ ակնարկվող Պարոնը չէր կարող Երզնկայի սովորական երևելիներից մեկը լինել, այլապես կնշվեր նրա անունը, այնինչ տաղի հեղինակի համար դրա անհրաժեշտությունը չի եղել, որովհետև նա ակնարկում է Եկեղյաց իշխանին, որի ով լինելը առանց անունը տալու էլ պարզ է եղել ժամանակակիցների համար»[2]:

Բանն այն է, որ ակնարկվող Պարոնը ոչ միայն կարող էր Երզնկայի սովորական երևելիներից մեկը լիներ, այլ երևելի էլ չլինել, լիներ Թորոս Տարոնացու բարեկամներից մեկը, քանի որ հենց այդ տարիներին Պարոնը գործածվում էր նաև որպես սովորական անուն: Հր. Աճառյանի մոտ Պարոն անձնանվան մոտ կարդում ենք. «Իբրև անձնանուն ամենահին հիշատակությունը ԺԳ դարից է»[3]:

Է. Բաղդասարյանը բերում է չափածո մի այլ հիշատակարան, որի մեջ Երզնկայի երևելիներից մեկը՝ Խութլուշահը կոչվում է իշխան: Գրիչն այս մարդուն տալիս է արդեն այնպիսի տիտղոսներ, որ կասկած չեն թողնում թե նա եղել է իշխան. խնդրում է հիշել «Զիշխանն

---

[1] Նույնը, էջ 31-32:

[2] **Է. Բաղդասարյան,** նշվ. աշխ., էջ 39:

[3] **Հ. Աճառյան,** Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, Երևան, 1946, էջ 233:

գլուխ բարեպաշտից զՀայկազնի զարմ մեծից, զԽութլուշահ ծնունդ հրաշից, որ ետ պատուել զԱւետարանս՝ հալալ յընչից, ի յիշատակ իւր ծնօղաց՝ այլև զարմից»[1]:

Նման մի քանի այլ փաստեր էլ կան, որոնք ցույց են տալիս թե իսկապես Երզնկայում 14-րդ դարի վերջերին ապրել են մարդիկ, մեծահարուստներ, որոնց տրվել է իշխան տիտղոսը:

Բայց ո՞վ է տվել: Տվել են Երզնկայի հայ հոգևորականության ներկայացուցիչները, որոնց մտայնությունն էին արտահայտում գրիչները: Այդ իշխանների լիազորությունները հեռու չեն գնացել հարկեր հավաքելուց, ժողովրդի հուզումները չափավորելուց, նրանց կարգ ու կանոնի մեջ պահելուց, առաջադրանքներ, որոնց համար նրանք անշուշտ վարձատրվել են բուն իշխողների կողմից: Հեռու ենք այն մտքից, որ նրանք գործել են իրենց ժողովրդի դեմ, բայց երբեք էլ չեն կարողացել կատարել այն, ինչ անում էին Տեր Սարգիսն ու պարոն Հովհաննեսը:

Ի վերջո՝ նման լիազորություններ, արտոնություններ հայերին տրվել են օսմանյան տիրակալության ամբողջ շրջանում էլ, ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջերին, այն տարբերությամբ, որ արտոնություններ ունեցողները կոչվել են ոչ թե իշխաններ, այլ՝ ամիրաներ: Բայց կարո՞ղ ենք ասել, որ Ակնա հարստության զգալի մասն իրենց ձեռքը վերցրած, Կ. Պոլսում նույնպես վիթխարի կապիտալների տեր դարձած ամիրաները քաղաքական իրավունքներով օժտված մարդիկ են եղել:

14-րդ դարի կեսերից Երզնկայում հիշատակված հայ իշխանների լիազորությունները հարկեր հավաքելու աստիճանից այն կողմ չեն անցել: Ապացույց՝ որ պարոն Հովհաննեսի և Տեր Սարգսի սպանությունից առաջ բոլոր հիշատակարաններում ձեռագրեր արտագրողները հոգևոր պետի կողքին հիշատակել են նաև աշխարհիկ իշխանավորին, տվյալ դեպքում՝ Հովհաննես իշխանին, նրան վերագրելով հաճախ ոչ միայն Երզնկայի փառքը, այլև համարելով «Փրկիչ քրիստոնեից»:

---

[1] **Է. Բաղդասարյան,** *նշվ. աշխ., էջ 41:*

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԸ

1. ԵՐԶՆԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Երզնկայի վանքերի մասին ստեղծվել է հարուստ գրականություն:

ա) Արևմտահայ մամուլում տպագրվել են մի քանի տասնյակ հոդվածներ: Դրանցից առավել փաստալիցներն ու արժեքավորներն են Դ. Հակոբյանի «Վանորայք Երզնկայի» հոդվածաշարը «Բյուզանդիոն» թերթի 1897 թ. համարներում, Տ. Պալյանի հոդվածաշարքը այդ նույն թերթի 1902–1904 թթ. մի շարք համարներում, Ս. Ամատյանի «Եկեղյաց գավառ. Վանորայք» հոդվածաշարքը «Արևելյան մամուլ» ամսագրի 1890 թ. համարներում և այլն: Առանձին հոդվածներ են տպագրվել նաև «Բյուրակն», «Մասիս», «Ծաղիկ» և այլ պարբերականներում:

բ) Երզնկայի վանքերի մասին առատ տվյալներ ենք գտնում ձեռագրերի հիշատակարաններում: Հիշատակենք Հ. Տաշյանի «Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա» ստվարածավալ աշխատասիրությունը (Վիեննա, 1895), Լ. Խաչիկյանի հրատարակած ԺԴ և ԺԵ դարերի հիշատակարանների մի քանի հատորները (Երևան, 1950, 1955, 1958, 1967), Վ. Հակոբյանի և Ա. Հովհաննիսյանի «ԺԷ դարի հիշատակարաններ» (Երևան, 1974, 1978, 1984), ինչպես նաև Երուսաղեմի, Վենետիկի, Զմմառի վանքերի և այլ վայրերի ձեռագրերի նկարագրություններն ու հիշատակարանները պարունակող մեկ տասնյակից ավելի հատորներ:

գ) Երզնկայի վանքերի մասին իրենց աշխատություններում հիշատակում են առանձին պատմաբաններ, ճանապարհորդներ, բանահավաքներ, երբեմն թռուցիկ տողերով, երբեմն հանգամանորեն: Հիշենք Գ. Սրվանձտյանցի «Թորոս աղբարը», Պ. Նաթանյանի «Արտոսր Հայաստանին», Կ. Ղազանճյանի «Խառն նամակները», Գ. Տեր-Վարդանյանի «Երզնկա-Կամախ գավառաբարբառը և ազգագրական հուշեր», Հ. Քյուրտյանի «Երիզա և Եկեղյաց գավառ» գրքերը և այլն:

դ) Գրվել են ամփոփ հետազոտություններ, որոնց մեջ ամենից ծավալունն ու փաստալիցը Հ. Ոսկյանի «Բարձր Հայքի վանքերը» աշխատության Երզնկային նվիրված գլուխն է: Գ. Սյուրմենյանն էլ իր «Երզնկա» գրքում նկարագրել է 14 վանք, յուրաքանչյուրի մասին խոսելով շատ համառոտ:

Սրանցից մի քանիսի վկայությունները բացառիկ արժեք են ներկայացնում, քանի որ հեղինակներն անձամբ շրջագայել են վանքերում, տեսել, գրի առել ընորոշ տվյալները, անգամ ձեռագրերից արտագրել որոշ հիշատակարաններ: Այդպիսի հավաստի տեղեկատվություններ են հաղորդում Տ. Պալյանը, Ս. Ամատյանը, Գ. Սյուրմենյանը: Մյուսները հիմնականում օգտվել են տպագիր գրականությունից:

Շատ հարցեր, կապված Երզնկայի վանքերի հիմնադրման ժամանակաշրջանի, միաբանների քանակի, վանքերի մշակութային դերի մասին, այնուամենայնիվ սպառիչ պատասխան չեն ստացել մինչև օրս:

Մեզ համար էլ դժվար պիտի լինի այդ հարցերի պատասխանը տալը: Փորձելու ենք առկա նյութի սահմանում ծանոթացնել Երզնկայի վանքերը ըստ նրանց կատարած կրթական, մատենագրական դերի, հասարակական կյանքում ունեցած կշռի: Ուսումնասիրողների մեծ մասը հայկական վանքերի մասին գրելիս անտեսել են նրանց հասարակական, քաղաքական դերը ժողովրդի գոյատևման համար մղված պայքարում, մինչդեռ հայ եկեղեցին պետականազուրկ մեր ժողովրդի կյանքում կատարել է խոշոր դեր ոչ միայն նրա մտավոր զարգացման, այլև քաղաքական կյանքի ղեկավարման գործում: Մեր կաթողիկոսները, պատրիարքները, հոգևոր առաջնորդները հաճախ են ուղղություն տվել օտար նվաճումների դեմ մղվող պայքարին: Հիշենք Ներսես Աշտարակեցուն, Ֆոնուզի Բարդուղիմեոս վարդապետին և ուրիշների: Նրանք կոչ են արել զինված պայքարի, իրենք էլ մասնակցել են կռիվներին:

Երզնկայի վանքերից մի քանիսը նույնպես, դժվարին պայմաններում դարձել են յուրահատուկ ամրոցներ և չնորհիվ իրենց անառիկ դիրքի՝ փրկել են հազարավոր մարդկանց կյանքը:

Վերջապես հայ լուսավորչական եկեղեցին մեծ դեր է կատարել օտարամուտ այն գաղափարախոսությունների դեմ մղվող պայքարում, որոնց նպատակն է եղել դավանաբանական հակամարտություններով բաժան-բաժան անել հայերին և թուլացնել նրանց պաշտպանական ուժը, ենթարկել օտար պետություններին, ինչպես արել են երկար դարերի ընթացքում Հռոմի գործակալները:

Երզնկայի վանքերի մասին խոսելիս՝ չենք կարող անտեսել նման կարևոր հարցեր:

Վանքերը մի ուրիշ պատճառով էլ ժողովրդին կապել են իրենց հետ: Մարդիկ ոչ միայն աղոթել են իրենց հոգու փրկության համար, այլև վանահայրերից, վարդապետներից խնդրել առողջություն տալ, բուժել զանազան հիվանդություններից:

Հայտնի է, որ այդ դարերում պատմական Հայաստանի ամբողջ տարածքում չի եղել աշխարհական մարմինների հսկողությանը ենթակա որևէ հիվանդանոց: Հիվանդությունների բուժման միակ եղանակը եղել է տնային բժշկությունը: Հեքիմներին, ժողովրդական բուժակներին է վստահվել բժշկի դերը: Մեկ էլ հույսը դրվել է վանքերի վրա:

Այստեղ էլ, անշուշտ, մեծ դեր է կատարել ոչ միայն Ավետարաններ կարդալը, սաղմոսներ ասելը, այլև ուխտագնացությունների օդափոխության օգուտը, բուսական դեղերի օգտագործումը, որոնց հմուտ են եղել շատ վարդապետներ:

Երզնկայի վանքերից մի քանիսը խոր անցյալում ունեցել են հիվանդանոցային հարկաբաժիններ, որտեղ բուժվել են մարդիկ հենց բուսական դեղերի քսուկների միջոցով: Վանքերից մի քանիսի անուններն էլ վկայում են, որ եղել են բուժական կենտրոններ, ինչպես «Անարծաթ բժշկաց վանքը», «Ակնջի վանքը» և այլն: Երզնկայի վանքերի անցյալում ունեցած բուժական դերին անդրադարձել է Կ. Ղազանճյանը մոտ 100 տարի առաջ հրատարակած գրքում, ասելով. «Կանգուն մնացած վանքերն ալ չեղած են իրենց նպատակեն և եղած են լոկ ուխտատեղիներ. կամ ավելի ճիշտ ըսելով՝ զբոսավայրեր: Ո՞ւր մնաց վանորեից մեջի հիվանդանոցները, ո՞ւր մնաց անկելանոցները»[1]:

Գոյություն են ունեցել ոչ միայն վանքեր, որտեղ վանականներն ապրել են յուրահատուկ համայնական կյանքով, այլև քարայրներ, որտեղ աղոթել են կյանքից «խռոված» մարդիկ՝ ճգնավորներ, որոնց թիվն էլ բավականաչափ մեծ է եղել Եկեղյաց գավառում:

Նրանք հիմնականում սնվել են բուսականությամբ և չրջակա գյուղերից բարեպաշտ մարդկանց բերած համեստ ուտելիքով, որոնք հաճախ ընդունել են առանց բերողներին երևալու, որպեսզի չմեղանչեն իրենց աչքերով:

Որոշ ճգնավորներ ունեցել են կրթական, մշակութային գործունեություն, աճեցրել են աշակերտներ, իրենց համար զբաղմունք դարձրել ձեռագրեր արտագրելը:

---

[1] **Կ. Ս. Ղազանճյան,** *Խառն նամակներ, Կ. Պոլիս, 1887, էջ 21:*

Մեր մատենագրության մեջ հիշվում է Գառնիկ ճգնավորը, որի անունով հետագայում գործել է համանուն վանքը, Տաճրակ և ճղնի գյուղերի արանքում: Գրիգոր Դարանաղցին վկայում է, որ Սեպուհ լեռան ստորոտի քարայրներում ապրել են նման ճգնավորներ, որոնցից մեկը՝ Պարոնը, եղել է իր ուսուցիչը:

Հ. Ոսկյանը Երզնկայի վանքերի թիվը հասցնում է 34-ի: Անշուշտ իրականում այդ թիվը շատ ավելի մեծ է եղել: Ժամանակի ամենակուլ ժանիքը սրբել տարել է շատ վանքեր, եկեղեցիներ, փլատակների տակ թողել ուրիշներ, որոնց հետքերը պահպանվել են մինչև մեր օրերը:

Այդ ավերներին նպաստել է Երզնկայի աշխարհագրական դիրքը՝ քարի պակասը, որի պատճառով շենքերը շատ հաճախ չինվել են փայտից կամ հում աղյուսից: Իսկ եթե եղել են քարաշեն, ապա դրանք քանդել են քրդերն ու թուրքերը, քարերը տարել, օգտագործել են իրենց տների, մարագների համար:

Բայց այն, ինչ մնացել էր մինչև 19-րդ դարի վերջերը, ինքնին բավական նյութ կարող է տալ հետազոտողներին և մղել նրանց հանելու ուշագրավ եզրակացություններ: Եվ դա պետք է կատարվի, քանի որ դարավերջին եղածն էլ, որի մասին գրավոր տեղեկություններ են պահպանվել, քանդվել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ու նրանից հետո, երբ Թուրքիայում պետական քաղաքականություն դարձավ հայկական մշակույթի հետքերի խպառ բնաջնջումը: Այդ քաղաքականությունը այժմ էլ տարվում է ամենայն խստությամբ և հետևողականությամբ: Ապացույց՝ Էրզրումի մասին թուրքերեն լեզվով լույս տեսած մի գիրք, որը թերթողը չի կարող իմանալ, թե Էրզրումում առհասարակ հայեր ապրե՞լ են[1]: Նույնը պիտի լինի Երզնկայի դեպքում:

Վերջապես բնությունն էլ դաժան է վարվել մեր վանքերի հետ: Այն ինչ չի կարողացել կատարել օտար ասպատակողը՝ արել է երկրաշարժը, որը տևական բնույթ է կրել Եկեղյաց գավառում, ինչպես պիտի տեսնենք հետագա էջերում:

Եթե ունենք վկայություններ, թե եղել են այնպիսի երկրաշարժեր, որոնք մի քանի ժամում, հաճախ մի քանի րոպեում հողին են հավասարեցրել մեծ բնակավայրեր, խլել մինչև 30.000 մարդու կյանք, անշուշտ նման երկրաշարժերը պիտի երկրագնդի երեսից սրբեին նաև վանքեր, եկեղեցիներ, դրանք առնեին երկրաշարժից բացված խորխորատների մեջ ու փակեին ընդմիշտ մարդկության աչքից:

Անցնենք վանքերին:

---

[1] Erzrum Tarihi, Anitlari, Kitabeleri, Istanbul, 1936.

2. ԱՎԱԳ ՎԱՆՔ

Երզնկայի տասնյակ վանքերի մեջ իր մշակութային գործունեության կշռով բացառիկ տեղ է գրավում Ավագ վանքը, որ կոչվել է նաև ս. Թադեի, ըստ երևույթին նրան խոր հնություն վերագրելու հասկանալի նպատակով, քանի որ հին ձեռագրերի հիշատակարաններում այդ անվանը չենք հանդիպում: Վանքն ունեցել է «քարուկիր երկու սքանչելի, վեհաշուք տաճարներ՝ հանուն ս. Աստվածածնի և ս. Առաքելոց»[1]:

Այսպես թե այնպես Ավագ վանքը մոտ հազար տարվա հնություն ունեցող մի կենտրոն է եղել: Խոր անցյալից եկել հասել է մինչև Առաջին համաշխարհային պատերազմի տարիները:

Այդ ամբողջ ժամանակաշրջանում միշտ նույն կշիռը չի ունեցել. մերթ եղել է սովորական աղոթատեղի, մերթ կրթական, գրչագրական կենտրոն, մինչև անգամ արժանանալով «համալսարան» հորջորջման: Մերթ հեռու վայրերից մարդիկ այնտեղ են գնացել ուսում ստանալու, մերթ տեղի միաբաններն են ամեն ինչ թողել, կամ մի քանի ձեռագիր վերցրած՝ փախել ուրիշ վայրեր, ազատվելու համար բարբարոսական հարձակումներից, կոտորածներից:

Ավագ վանքը կառուցված է եղել Սեպուհ լեռան լանջերին, Երզնկայից յոթ ժամ հեռավորության վրա, գեղատեսիլ ու հովասուն վայրում, շրջապատված ծառ ու ծաղիկով, սաղարթախիտ անտառներով, օժտված սառնորակ աղբյուրներով ու գլգլան առվակներով, առավելություններ, որոնց շնորհիվ դարեր շարունակ պահել է սիրված ուխտատեղի լինելու առավելությունը:

Գ. Սյուրմենյանն իր գրքում գետեղել է մի նկար, կատարված 1906 թվականին մի ուխտագնացության ժամանակ: Հարյուրավոր մարդկանց ներկայությունն այդ լուսանկարում, այն էլ համիդյան բռնապետության ամենախստագույն տարիներին, երբ հայերի համախմբումը որևէ վայրում դիտվում էր քաղաքական խմորումների արտահայտություն, ցույց է տալիս այն մեծ հետաքրքրությունը, որ եղել է այս ուխտատեղիի նկատմամբ:

Ե՞րբ է կառուցվել: Ս. Էփրիկյանն անգամ փորձել է հիմնադրման թվականը որոշել և համարում է մեր թվարկության 35-րդ տարին, կապելով Թադեոս առաքյալի քարոզչության հետ: Իհարկե սա գիտական հիմք չունի: Նրա հնությունը մինչև առաջին դարերը տա-

---

[1] **Դ. Հակոբյանց,** *Սեպուհ լեռան սրբավայրերը, տե՛ս «Արարատ», ամսագիր, Վաղարշապատ, 1901, № 7-8, էջ 364:*

նելու համար վանահայրերը որոնել ու գտել են նույնքան միամիտ մի ապացույց էլ: Դա Ավագ վանքի սեփականությունը եղող նշանավոր Դեղթափն է, որի շուրջ անգամ մամուլում աղմուկ է բարձրացվել, նկարն էլ տպագրվել է պոլսահայ տարեցույցներից մեկում:

«Դեղթափը փոքր ձեռքի մը մեծությամբ, գոգաձև, բոլորակ, հակինթյա երկնագույն քար մըն էր,- գրում է Գ. Սյուրմենյանը,- որուն վրա նկարված էին Հռոմի կայսեր ու կայսրուհիի նկարները... Ավանդաբար կպատմվեր, թե Տրդատ Թագավոր քրիստոնեությունն ընդունելեն վերջ Հռովմա կայսեր տված իր այցելության առթիվ Կոստանդիանոս կայսեր կողմե նվեր ստացած է դայն: Անոր վրա, նկարներուն տակը գտնված կայսեր ստորագրությունը կհաստատե այդ պարագան: Ան որպես մասունք կպահվեր մասնավոր թաքքստոցի մը մեջ: ... Այդ քարը Թեղթափ կկոչվեր անոր համար, որ բուժիչ հանգամանք ուներ»[1]:

Որ Դեղթափը հնագիտական արժեք է ներկայացրել՝ կասկածից վեր է, բայց ամենևին չի կարող որոշել վանքի հիմնադրման ժամանակը: Ի վերջո կարող էր Կ. Պոլսից բերված լինել շատ ուշ ժամանակներում:

Ուստի դուրս գանք ավանդությունների արահետներից ու դիմենք գիտական, վավերական փաստերին: Այդպիսի փաստեր մեզ կարող են տալ վիմական արձանագրություններն ու մատենագրական հիշատակությունները:

Ավագ վանքի հնագույն արձանագրությունը 15-րդ դարից ետ չի գնում՝ երկրաշարժերի պատճառով հաճախ հիմնահատակ կործանված լինելով: Նրա մատուռներից մեկի վրա կա մի քար, որը կրում է ՋԹ (1459) թվականը և կառուցող վարպետի անունը՝ Հովհաննես:

Բարեբախտաբար ձեռագիր մատյանները մեզ ետ են տանում մինչև 12-րդ դարի կեսերը:

Հնագույն վկայությունը, որին հանդիպում ենք, վերաբերում է 1200 թվականին: Այդ տարում Ավագ վանքում գրվել է երկու ձեռագիր: Երկուսի գրիչներն էլ կոչվում են Վարդան: Հնարավոր է, որ տարբեր մարդիկ լինեն:

Ձեռագրերից մեկը մի Ավետարան է, որի հիշատակարանում ժամանակի հոգևոր առաջնորդ է հիշվում Տեր Սարգիսը: Հ. Քյուրտյանը ենթադրում է, թե պետք է լինի հետագայում հռչակված Տեր Սարգիս արքեպիսկոպոսի պապը:

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երդնկա, էջ 86:*

Մյուս ձեռագիրը այն նշանավոր «Ճառընտիրն» է, որ գիտական աշխարհին հայտնի է «Մշո ճառընտիր» անունով և հանդիսանում է հայ գրչագրական արվեստի փառքերից մեկը, աշխարհում պահվող բազմահազար հայ ձեռագրերից ամենամեծը: Գրիչն է Վարդան Կարնեցին, ծաղկողը՝ Ստեփանոսը: Օգտագործված նյութը՝ մագաղաթը, պատրաստվել է 600 արջառի և երինջի կաշվից: Արտագրման աշխատանքը տևել է երեք տարի:

Այս «Ճառընտիրը» բացառիկ արժեք է ներկայացնում նաև բովանդակությամբ: Պարունակում է ավելի քան 300 միավոր նյութ՝ ճառեր, վարքեր, վկայություններ, պատմական երկեր, ներբողներ, որոնցից մի քանիսին հանդիպում ենք միայն այդ ձեռագրում: Նյութեր կան Գրիգոր Լուսավորչից, Սահակ Պարթևից, Եղիշեից, Մովսես Խորենացուց, Դավիթ փիլիսոփայից, Սեբեոսից և ուրիշներից:

«Ճառընտիր»-ը աչքի է ընկնում մանրանկարչական արվեստով. ունի բազմաթիվ գլխազարդեր, լուսանցազարդեր, տերունական նրկարներ:

Ինչո՞ւ է կոչվում «Մշո ճառընտիր», քանի որ գրվել է Երզնկայում:

Բանն այն է, որ այդ նշանավոր ձեռագրին վիճակվել է ծանր ճակատագիր՝ նման հայ ժողովրդի ճակատագրին:

Հազիվ ավարտված ընդօրինակումը՝ Սեբաստիայի մահմեդական տիրակալը արշավել է դեպի Կարին: Ձեռագրի պատվիրատու Բաբերդի ռես Աստվածատուրը մատյանն անկազմ վիճակում հասցրել է Բաբերդ, բայց այնտեղ Աստվածատուրն սպանվել է Թուրքերի կողմից: Ճառընտիրը բաժին է ընկել Թուրք դատավորին, որը այն տարել թաքցրել է Խլաթում: Երկու տարի անց՝ 4000 արծաթ դրամով վաճառել է Մշո Առաքելոց վանքին, որը դարձել է ձեռագրի սեփականատերը մինչև Մեծ եղեռնի օրերը, այսինքն՝ 710 տարի:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ն. Յա. Մառի հանձնարարությամբ ստեղծվել է հատուկ հանձնաժողով, որի նպատակն է եղել Թուրք բարբարոսների վայրագություններից փրկել հայկական հնություններն ու ձեռագրերը: Այդ հանձնաժողովը ձեռք է բերել Մշո Առաքելոց վանքի փայտյա նշանավոր դուռը, որն այժմ պահվում է Հայաստանի պետական պատմական թանգարանում, և վերոհիշյալ «Ճառընտիր»-ի մի մասը: Ձեռք է բերել Բիթլիսում, տեղափոխել Բաքու, Թիֆլիս: Հետագայում՝ երկու մշեցի հայուհիներ ներկայացել են համապատասխան մարմիններին և հանձնել նաև ձեռագրի մյուս կեսը՝ սակայն պակասավոր էջերով:

Ի վերջո բազմաչարչար «Ճառընտիր»-ը տեղափոխվել է Երևան և այժմ հատուկ ցուցափեղկի մեջ վերջնական հանգրվանն է գտել Մաշտոցի անվան Մատենադարանում: Տարիների ընթացքում ձեռք են բերվել նաև պակասավոր էջերից մի քանիսը:

Մեզ այստեղ հետաքրքրում է մի այլ հարց: 600 արջառի ու երինջի կաշվից պատրաստված նման մի հսկա ձեռագիր կարո՞ղ էր գրվել ու նկարազարդվել մի վանքում, որն առնվազն կես դարի գրչագրական փորձ ու մասնագետներ չունենար, չունենար նաև ճոխ գրադարան, տարբեր մասնագիտության տեր վանականներ:

Անշուշտ չէր կարող: Ուստի Ավագ վանքի գրչագրական գործունեության սկիզբը ամենևին էլ չենք կարող համարել 1200 թվականը:

Շարունակենք: Հաջորդ տարի, այսինքն՝ 1201 թվականին, Ավագ վանքում ավարտվել է մի այլ Ավետարանի արտագրությունը, որի գրիչն է Ղազարը: Նույն թվին մի Ավետարան էլ արտագրել է Ստեփանոսը:

1227 թ. գրված «Հարանց վարքի» հիշատակարանից երևում է, որ այդ տասնամյակներում Ավագ վանքը եղել է մտավոր կարևորագույն կենտրոն՝ ամբողջ Եկեղյաց գավառում: Այդ հիշատակարանում հանդիպում ենք մի շարք անունների, որոնցից Ստեփանոսը, Պողոսը, Հովհանը համարվում են «առաջնորդք սուրբ ուխտիս Աւագ վանացս», Կարապետը, Ղազարը, Ներսեսը՝ ձեռագիր արտագրողներ: Վանքն էլ կոչվում է «գերադրական սուրբ մենաստան, զարդարեալ գեղեցկաշէն սրբանաւք և սպասիւք պատուականօք»[1]:

Մատենագրական հետագա վկայությունները ցույց են տալիս, որ Ավագ վանքը կրթական, մշակութային առաջատար դերը պահել է ավելի քան 300 տարի, մինչև 15-րդ դարի վերջին տասնամյակը:

Երզնկայի նշանավոր մարդկանցից առաջինը, որը սովորել է Ավագ վանքում, իսկ հետագայում եղել նրա առաջնորդը և մեծապես նըպաստել վանքի բարգավաճմանը, Մովսես Երզնկացին է: Քահանա է օծվել այնտեղ, 1293–1295 թթ. եղել է վանքի գործուն միաբաններից: Նա մեկնել է Կիլիկիա, կատարելագործել ուսումը Գևորգ Լամբրոնացու մոտ: Վերջինիս մահից հետո՝ 1301 թվին, իր հետ վերցրած գեղագիր մի Ավետարան, նաև իր արտագրած Աստվածաչունչը և այլ ձեռագրեր, վերադարձել է Ավագ վանք՝ վերանորոգչական լուրջ ծրագրերով, ըստ երևույթին կազմված Կիլիկիայում արքայական ընտանիքի օժանդակությամբ: Հնարավոր է ենթադրել, որ նրա Կիլիկիա մեկնումը եղել է Երզնկայի հոգևոր իշխանությունների հանձնարարությամբ ու նյութական միջոցներով:

---

[1] «Տաթև», տարեցույց, Հալեպ, 1930, էջ 198:

Մովսեսը հետագայում, 1307 թ. կրկին մեկնել է Կիլիկիա, վերադարձից հետո կարգի բերել Ավագ վանքը, կառուցել նոր մասնաբաժիններ, աղոթատեղիներ, տաղավարներ, «Հաստահեղուս վիմօք կառոյց ի յանապատս Մօրն լուսոյ ի դուռն ս. Աստուածածնին և ս. Կարապետին, և այլոց պիտոյից հարկաւորաց ի հանգիստ և ի վայելս ժառանգաւորաց սրբոյն եկեղեցւոյ և այսոցիկ մենաստանաց»[1]:

Այս աշխատանքների շնորհիվ նրա համբավը դուրս է եկել վանքի շրջանակից. «տարածեցաւ ընդ տիեզերս, յորս բազմութիւն ժողովեալ միանձանց կրոնաւորաց և սրբազան կուսակրօն քահանայից և սիրոդաց ուսմանց աստուածայնոց վարժից վարդապետութեանց և լցաւ վայրս այս արամբ աստուածայնովք՝ ի փառս և ի պատիւ համայնիցս մեր լուսաւորչի և հօր, և յուրախութիւն և ցնծութիւն Հայաստանեայցս սեռի, յորում տեղւոջ իբր ի նաւահանգիստ դիմեալք ամենեցունց՝ ի զանազանից ծփելոց ալեաց խաղաղանան և ոմանք ի ցաւոց պէսպէս ախտակրելոց իբրև առ հանուրց բժիշկ և առողջարար եկեալ անժամայն հանդիպէին բժշկութեան»[2]:

1330-ական թվականների կեսերից վանքի առաջնորդն է եղել Կիրակոս վարդապետը: Նրա անունը որպես առաջնորդ հիշվում է մինչև 1372 թվականը: Կամ այն է, որ վանքում այդ տասնամյակներում գործել են երկու Կիրակոսներ, կամ՝ այս մեկը պաշտոնավարել է երկար տարիներ:

Կիրակոս վարդապետին հաջորդել է Գևորգ Երզնկացին, որ նույնպես ունեցել է բեղուն գործունեություն:

1374 թ. Երզնկա են եկել Հովհան Որոտնեցին և նրա հավատարիմ աշակերտ Գրիգոր Տաթևացին:

Կա կարծիք, որ Որոտնեցին ու Տաթևացին նկատելի աշխուժություն են մտցրել վանքի մտավոր կյանքում, դաստիարակել են Հայաստանի տարբեր վայրերից եկած աշակերտների, զարկ տվել ձեռագրերի արտագրության գործին:

1386 թ. Որոտնեցին մեկնել է իր հայրենիքը՝ Սյունիք և այնտեղ էլ վախճանվել: Գրիգոր Տաթևացին 1373 թ. գրած մի հիշատակարանում Որոտնեցուն՝ իր ուսուցչին, տալիս է այնպիսի բնութագրումներ, որոնք կասկած չեն թողնում վայելած մեծ հեղինակության մասին՝ աշակերտների շրջանում: Նա Որոտնեցուն համարում է «ժրաջան և տիեզերալույս մեծ բարունապետ ... որ եղև լուսաւորիչ

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 257:*

[2] **Ղ. Ալիշան,** *Հայապատում, էջ 509:*

երկրորդ հայկազեան ազգիս և որպէս զքաջ ... կրթեալ երկամբք ի մամուլս գիտութեան»[1]:

Հ. Քյուրտյանը գրում է թե Որոտնեցին և Տաթևացին Երուսաղեմից դառնալուց հետո Ավագ վանքում հաստատել են իրենց «մեծահամբավ և արդյունավոր համալսարանը»:

Հովհաննես Որոտնեցու մեկնումից հետո նրա գործը չարունակել է Գրիգոր Տաթևացին: Դասակից աշակերտների թվում են եղել Գևորգ Երզնկացին, Սարգիս և Հակոբ Ղրիմեցիները, որոնք բոլորն էլ ունեցել են մատենագրական և կրթական լայն գործունեություն: Սարգիսն ու Հակոբը նաև զբաղվել են գրչագրությամբ, մինչդեռ Գևորգ Երզնկացին աչքի ընկնող դեմք է եղել վանքում որպես մանկավարժ և մատենագիր: Եղել է «քաջ հռետոր», պայքարել հերետիկոսության դեմ: Եղել է վանքի համալսարանի տնօրենը: Նա Ավագ վանքում գործել է մինչև 1412 թվականը, կարճ ժամանակ Կապոսի վանքում պաշտոնավարելուց հետո:

Այդ տարիներին Ավագ վանքում աշխատող բեղմնավոր գրիչներից Արիստակեսը 1408 թ. «Մանրուսմունք»-ի հիշատակարանում հետևյալ ուշագրավ տողերն է թողել. «Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Մանրուսումն ի լաւ և յընտիր օրինակէ, որ էր հարմարած առաջին երաժշտապետացն սուրբ ուխտին Արքայազնոյն, զոր էր բազում աշխատութեամբ օրըստօրէ աւուրն դասն գրած, լի ամենայն արհեստիւ, զոր առեալ զնոյն օրինակեցի ձեռամբ իմոյ՝ անիմաստ գրչի և յոյժ մեղապարտի Արիստակիսի, ի մեծափառ և ի հռչակաւոր անապատիս որ կոչի Աւագ վանք, ընդ հովանեաւ սրբուհոյ Աստուածածնին, և սրբոյ Կարապետին և սրբոց Առաքելոցն, և ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս գերիմաստ քաջ հռետորին և տիեզերալոյս վարդապետին մեծին Գէորգեա բազմերախտ սուրբ հաւրն իմոյ և վարժապետին: Զոր... Պարծանք հայոց ազգիս եղև»[2]:

Նույն Արիստակես գրիչը 1412 թ. արտագրել է մի ձեռագիր «ի մեծափառ անապատին, որ կոչի Աւագ վանք», Խաչատուր գրիչը՝ 1415 թ.՝ մի «Հարանց վարք», Մարգարեն՝ 1432-ին՝ Ավետարան, Սիմոն աբեղան՝ 1439-ին՝ մեծ «Հայսմավուրք» և այլն: Վերջինիս հիշատակարանից իմանում ենք, որ այդ տարիներին վանքի առաջնորդն է եղել Մարտիրոս վարդապետը, որ նույնպես ունեցել է մեծ թվով աշակերտներ, ինչպես՝ Գրիգոր աբեղան, որ եղել է «դասագլուխ», Մկրտիչ աբեղան, «որ չատ աշխատեցաւ յրդորդելն», Մարտիրոս և Ներսես աբեղաները, նաև մի այլ Մարտիրոս, մի Հակոբ և այլն:

---

[1] **Լ. Ս. Խաչիկյան,** *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, Երևան, 1955, էջ 508:*

[2] *Նույն տեղում, էջ 88:*

Այսպիսով Ավագ վանքի կրթական, մանկավարժական գործունեությունը մենք հասցրինք մինչև 15-րդ դարի կեսերը, երբ վանքը մի նոր փայլուն շրջան է սկսել շնորհիվ Հովհաննես Համշենցու առաջնորդության:

Ստեփանոս գրիչը թողել է չափածո ընդարձակ մի հիշատակարան, որից լրիվ գաղափար ենք կազմում Ավագ վանքի այս նոր շրջանի մասին, որն իսկապես ունեցել է միջնադարյան Հայաստանի համալսարաններին հատուկ համբավ:

Ստեփանոսն իր հիշատակարանի հենց սկզբում Համշենցու ղեկավարած կրթական հաստատությունը կոչում է լսարան, այսինքն՝ համալսարան, իսկ նրա ղեկավարին՝ «քաջ բարունի», «պարծանք հայ ազգի»:

Նա տալիս է քսանից ավելի անդամների անունները, մի քանիսի զբաղեցրած պաշտոնը, նրանց որտեղացի լինելը և այլն: Այդ թվարկումներից իմանում ենք թե մասնագիտությունների, արհեստների անունները և թե պատմական Հայաստանի այն տարածքը, որտեղից աշակերտներ է ունեցել Համշենցին:

Բերենք մի քանի հատված Ստեփանոս գրիչի հիշատակարանից: Առաջարկում է, աղերսում հիշել հետևյալներին.

«Եւ զվարդապետն զովելի, զԱստուածատուրն Ջերմացի,
Որ ջերմեռանդ սիրով վառի, ի չինութիւն այս սուրբ ուխտի,
Զեպիսկոպոսս մեր արհի, զտէր Սարգիսն ցանկալի,
Վերադիտող Եղնկայի, և Եկեղեացն զաւառի,
Եւ ընդ նմին համակարգի, զտէր Գրիգորս բաղձալի...
Զտէր Աբրահամ հեզ և բարի, Զտէր Մարգարեն առաքինի,
Եւ զփակակալս առաքինի, Զտէր Յակոբ քաջ և արի...
Զտէր Առաքել Եզընկացի, և Զտէր Ներսէս Բաղիշեցի,
Ոմանք ի սպաս սրբոյ բանի, և այլք ի վարումն երաժշտի...
Նախ զԳրիգոր Կաֆայեցի, զսպասաւոր տեառն բանի,
Այլև զծաղկող այս մատենի, Տէրն տացէ իւր վարձ բարի,
Այլև զեղբայրս իմ ցանկալի՝ զտէր Կարապետ սիրող բարի,
Ի Տիւրիկոյ քաղաքացի մեզ օգտակար և կարելի...
Զտէր Մատթէոս Սեբաստացի՝ վարս ստացեալ երկնաւորի...
Այլև զՆերսէսն Հաղբատացի, զՆիկողայոսն Պոնտացի...
Եւ զԱնդրեասն Պոնտացի, և զԽաչատուրն Եղնկացի,
Զփոքրիկ Ներսէս Տիւրիկեցի, և զՅոհանէս նոյն զաւառի...»[1]:

---

[1] **Լ. Ս. Խաչիկյան,** *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ, Երևան, 1958, էջ 207-209:*

Եվ այսպես բաղում այլ անուններ, մարդիկ, որոնք Ավագ վանքում աշխատել են տասնյակ տարիներ: Ուշագրավ է հիշատակագրի հեղինակի հետևյալ ընդհանուր բնութագիրը.

> ***Ի սոցանէ որ թուեցի, ոմանք արև են և արփի,***
> ***Ոմանք լուսինք, պարք աստեղի[1]:***

Իր ազգականներին նույնպես մեկ առ մեկ թվարկելուց հետո հիշատակարանն ավարտում է՝ խնդրելով, որ իր համար էլ մարդիկ աղոթեն: Թվականն է ՋԺԳ (1464):

Ստեփանոս գրչի հիշատակարանը լուրջ խորհրդածությունների տեղի տվող փաստաթուղթ է, որ մեզ մի պահ տեղափոխում է 15-րդ դարի հայկական վանքերից մեկը և մեկ առ մեկ բաց անելով խցերի դռները, ցույց է տալիս նրա միաբանների մեղվաջան աշխատանքը:

Ստեփանոսի հիշատակած անուններից ու փաստերից երևում է, որ այդ տարիներին Ավագ վանքում աշխատող մարդկանց թիվն անցնում էր հարյուրից: Նա խոստովանում է, որ շատ աբեղաների չի թվարկում, մի քանիսին էլ հիշում է ըստ նրանց պաշտոնի, ինչպես «զտնտեսն ծերունի», «զգործաւորքն որ կան աստի» և այլն:

Ուշադրություն գրավող երևույթներից մեկն էլ այն է, որ տասից ավելի քաղաքներից եկած և այնտեղ աշխատող կամ սովորող մարդկանց մեջ երգնկացիները մեծ թիվ չեն կազմում. ավելի քիչ են, քան տիվրիկցիները, տրապիզոնցիները:

Դարձյալ Ստեփանոս գրիչից իմանում ենք, որ «տիրոջ բանը» քարոզողներից Գրիգոր Կաֆայեցին նաև եղել է ծաղկող և Ստեփանոսի արտագրած ձեռագիրն էլ է ծաղկել:

Պիտի ափսոսալ, որ հիշատակագիրը շատ ավելի խոսել է «տիրոջ բանը» քարոզողների, այսինքն՝ կրոնական առարկաներ դասավանդողների մասին, քան այլ առարկաներ, բայց հենց այն հանգամանքը, որ նա այդ վանքում հիշում է ծաղկողների, կազմողների, երաժիշտների, ցույց է տալիս վանքի ուսումնական ծրագրի լայն ընդգրկումը:

1480-ական թվականներին այնտեղ եռուն գործունեություն է ունեցել Առաքել գրիչը: Նրա ընդօրինակած մի «Մաշտոցը» (1481) այժմ պահվում է Երևանի Մաշտոցյան Մատենադարանում: Նույն տարում նրա ընդօրինակած «Շարակնոցն» էլ գտնվում է Զմմառի վանքում: 1483 թվին ընդօրինակել է մի այլ «Շարակնոց», 1484 թվին՝ մի Ավետարան:

---

[1] **Լ. Ս. Խաչիկյան,** *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ, էջ 209:*

Ուշագրավ է նույն Առաքելի 1487 թ. Ավագ վանքում արտագրած «Շարակնոց»-ի հիշատակարանի բովանդակությունը: Այստեղ Առաքելը ոչ այնքան հոգացել է վարդապետների, միաբանների, նաև իր հոգու փրկության, մաքրության մասին, որքան իր արտագրած ձեռագիրը խնամքով պահելու:

Ի միջի այլոց նա գրում է. «Աղաչեմ զձեզ՝ քահանայք և սարկաւագ և ըռայիս և ամենայն ժողովուրդք՝ մեծ և փոքր, լաւ պահեցէք ի կաթիլքէ, ի յաղոյ և ի գողէ: Դարձեալ աղաչեմ զձեզ՝ մի ոք իշխեսցէ գրաւ դնել կամ ծախել կամ գողանալ, կամ ով յանդգնի՝ զխաչհանուացն առցէ և զմասն Ուղայի. և ամենայն սրբոց անիծեալ լինի, ով որ խնամ չտանի»[1]:

Առաքել գրիչը մի «Շարակնոց» էլ արտագրել է 1488 թվին նույն վանքում, հիշելով վանքի առաջնորդ Հովհաննեսին և բարունապետ Հովհաննեսին:

Վերջապես՝ այս նույն Առաքելը մի այլ Ավետարան արտագրել է 1491 թվականին, որի հիշատակարանից երևում է, որ բավականաչափ ծերացել է, աչքերը տկարացել են, ինչպես երևում է հետևյալ տողերից. «Եւ այլ աղաչեմ անմեղադիր լինել խոչորութեան և սխալանաց, զի կար մեր այս էր»[2]:

Դրանից երեք տարի հետո Ավագ վանքում արտագրված Ավետարանի հիշատակարանում որպես գրիչ արդեն հանդիպում ենք ուրիշ անվան՝ Գրիգորին:

Այդ տարիներին Ավագ վանքում գործել են նաև այլ գրիչներ, որոնցից երկուսը՝ Հովհաննեսն ու Հայրապետը արտագրել են մի «Շարակնոց»: Սկսել է Հովհաննեսը, հասցրել մինչև «Խաչին կարգը», վախճանվել է: Սրա գործը շարունակել է Հայրապետը, ձեռագիրն ավարտել 1496 թվականին:

Կա կարծիք, թե 1489 թ. վանքի միաբանները տեղափոխվել են Կապոսի վանքը և այնտեղ են շարունակել իրենց կրթական ու մատենագրական աշխատանքը: Բայց վերևում մեր բերած փաստերը ցույց են տալիս, որ դրանից հետո առնվազն մեկ տասնամյակ շարունակվել է Ավագ վանքի գործունեությունը, կամ հիշյալ տեղափոխությունը տեղի է ունեցել 1490-ական թվականների վերջերին: Գուցե և միաբանների մի մասը մնացել է: Իրական փաստ է, որ հաջորդ՝ 16-րդ դարում գրեթե դադարել է Ավագ վանքի մտավոր բեղուն գործու-

---

[1] **Լ. Ս. Խաչիկյան,** *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ, Երևան, 1967, էջ 104:*

[2] *Նույն տեղում, էջ 179:*

նեությունը: Դա մոտավորապես զուգադիպել է Հովհաննես Համշենցու մահվան տարվան՝ 1497 թվականին:

Դրանից հետո Ավագ վանքում գրված ձեռագրերի հաղվադեպ ենք հանդիպում: Միակ վավերական փաստը հաջորդ 16-րդ դարից այն է, որ Մաղաքիա Դերջանցին է հաղորդում: Դերջանի Փողձա գյուղում ծնված, Գրիգոր Մշեցու մոտ ուսած այս մարդը 16-րդ դարի առաջին կեսին նկատելի գործունեություն է ունեցել Երզնկայում, մասնավորապես Ավագ վանքում: Նրա գրած ընդարձակ մի հիշատակարանից երևում է, որ 1530-ական թվականներին եղել է Ավագ վանքի վանահայրը: Ավելորդ չենք համարում մեջ բերել այդ հիշատակարանի այն տողերը, որոնք վերաբերում են Ավագ վանքին: Թվարկելով այլ վայրերում կատարած իր շինարարական աշխատանքները, Մաղաքիա Դերջանցին գրում է. «Եւ ապա զԱւագ վանաց հարավային ժամատունն սրբաքարեր և վերի սեղանատեղն և Աչարտախ և երկու խուց և քարեա ամբարն և երկու էգի»:

Մաղաքիա Դերջանեցին մի այլ ավելի կարևոր գործ էլ է կատարել: Նա «ի թուին ՋՀԹ (1530) մեկնել է Կ. Պոլիս, տեղի հայ հոգևորական պետերի աջակցությամբ ներկայացել է սուլթան Սուլեյման I Կանունիին և հաջողացրել Կամախի և Ավագ վանքի եպիսկոպոսության հարկը 12.000 ոսկուց իջեցնել 6000-ի:

Դերջանցին չի աշխատել գլուխ գովել, շատ բան չի գրել, գրածի համար էլ ներողություն է խնդրել, որ «հպարտացել է», բայց փաստ է նաև այն, որ սուլթանին չի ներկայացել միայն հարկերը թեթևացնելու խնդրանքով, այլ ունեցել է ավելի կարևոր ծրագիր: Նա կարողացել է սուլթանի հատուկ հրովարտակով դադարեցնել տալ մանկաժողովը Դերջանից և Բաբերդից: Հ. Աճառյանն ասում է թե նա այդ բանը կատարել է 1545 թվին[1]: Մենք կարծում ենք, որ կատարել է «ի թուին ՋՀԹ-ին», այսինքն՝ 1530 թվին:

Մաղաքիա Դերջանցին թվարկում է նաև իր աշակերտներին՝ Կարապետ, Մեսրոպ, Եղիա, Սարգիս և Թադեոս, մի բան, որ ցույց է տալիս անշուշտ նաև նրա կրթական, մանկավարժական գործունեությունը: Մեզ հայտնի չէ թե Մաղաքիա Դերջանցին մինչև երբ է գործել Ավագ վանքում:

Քիչ տեղեկություններ ունենք նաև 17-րդ դարի վերաբերյալ: Ինչ որ գիտենք, այն էլ հիմնականում պարտական ենք Գրիգոր Դարանաղցուն, որը 17-րդ դարի առաջին քառորդում, այսինքն՝ ջալալիների ասպատակությունների տարիներին եղել է Կ. Պոլսում, բայց այցելել է Երզնկա և բավականաչափ տեղեկություններ է տալիս:

---

[1] **Հ. Աճառյան,** *Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1946, էջ 175:*

Կամախեցին ողբալի վիճակում է տեսել Երզնկայի աղոթատեղիները. Սեպուհ լեռան լանջերին և ստորոտներում գտնվող վանքերը դադարած են եղել կրթական, գրչագրական կենտրոններ լինելուց: Վերածվել էին ծուլանոցների, փախստականների կացարանների: Անշուշտ, Ավագ վանքը բացառություն չէր կարող կազմել:

Դարանաղցու վկայությամբ՝ 1610-ական թվականներին Ավագ վանքի վանահայրն է եղել Վարդան եպիսկոպոսը: Այնտեղ գործել է նաև Հակոբ Ճգնիկը, հայտնի Պարոն Ճգնավորի աշակերտը:

Վերջապես Դարանաղցին պատմում է, որ իր ժամանակներում Կ. Պոլսից Ոսկան անունով մի աբեղա, որ հետո դարձել է վարդապետ, գնացել է Ավագ վանքը, որտեղ առաջնորդ Վարդան եպիսկոպոսը շատ էժան գնով նրան է վաճառել մի Աստվածաշունչ: Հասկացող մի հոգևորական Կամախ քաղաքից, տեսել է այդ ձեռագիրը նրա մոտ և հայտնել բոլորին, որոնց օժանդակությամբ վերադարձվել է աբեղայի վճարած 35 ղուրուշը ու Աստվածաշունչը պահել են քաղաքում[1]:

Ավագ վանքի հետագա՝ մասնավորապես 18-րդ դարի, ճակատագրի մասին գրեթե ոչինչ չգիտենք: Ամենայն հավանականությամբ զբաղվել է հիմնականում կրթական աշխատանքով: Գրիգոր Դարանաղցին ասում է թե այնտեղ 17-րդ դարի սկզբներին եղել է հարուստ գրադարան: 19-րդ դարի կեսերին այդ վանքը նկարագրողները նույնն են հաստատում: Վերջապես մինչև 1915 թ. աղետավոր Տաճին վանքի ամենից թանկագին հարստությունը կազմող համբավավոր Դեղթափի առկայությունն էլ այնտեղ՝ վկայում է միաբանության գոյությունը:

«Ավագ վանքը,- գրում է Հ. Ոսկյանը,- մինչև Մեծ եղեռնը կանգուն էր, թեև ժամանակին հարվածներուն ենթարկված և վնասված: Ունեցած է մատենադարան, ընդարձակ հողեր, մրգեղենի պարտեզ, լայնատարած անտառ և տասը գյուղ»[2]:

Իսկ որ նշանավոր Դեղթափ քարը մինչև Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը եղել է վանքում, վկայում է 1914 թ. տպագրված մի տարեցույց, որտեղ այդ քարի նկարի տակ կարդում ենք. «Այս հնությունը կգտնվի հիմա Ավագ վանքի վանապետ Պրոխորոնյանց գերդաստանի ձեռքը»[3]:

---

[1] **Գրիգոր Դարանաղցի,** *Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1915, էջ 433:*

[2] **Հ. Ոսկյան,** *Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 24:*

[3] *«Տարեցույց. 1914», Ազգային ուսանողներու միության խնամակալություն, Կ. Պոլիս, 1914, էջ 215:*

Մի այլ աղբյուրից էլ գիտենք, որ «Երկար ատեն այս վանքին վանահայրությունն ու պաշտպանությունը ստանձնած է Պրոխորոնյան ընտանիքը»[1]:

Իսկ թե Պրոխորոնյան ընտանիքը ինչ է եղել, ուր է տարվել կամ վաճառվել այն մասունքը, որը դարերի ընթացքում եղել էր հարյուր հազարավոր ուխտավորների պաշտամունքի առարկան, պատմությունը դժվար թե կարողանա արձանագրել:

3. ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՄ ՀԱՅՐԱՊԵՏ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՎԱՆՔ

Երզնկայի գավառում Գրիգոր Լուսավորչի անունով մի քանի վանքեր կան, որոնց հետ հիշատակվող «Հայրապետի», «Զարչարանաց» կամ «Տատասկի» անունները հաճախ առիթ են տվել չփոթելու դրանք միմյանց հետ:

Փորձելու ենք հիշյալ վանքերի մասին խոսել՝ հիմնականում իրազեկ աղբյուրների վրա հենվելով:

Ավելի քան հարյուր տարի առաջ Լուսավորչի կամ Հայրապետի վանքը այցելած Կ. Ղազանճյանը գրել է. «Հայրապետ ս. Լուսավորչի վանք, համանուն գյուղեն մեկ մղոն հեռու, յարևմուտս քաղաքին, ունի մի փոքր մատուռ, չինյալ 561 թվականին, կես ավերակ և վերջին տարիներս նորոգյալ սակավ ինչ. ուխտատեղի հայոց և եկեղեցի՝ Հայրապետի գյուղի հայ բնակչաց»[2]:

Ապա Ղազանճյանը պատմում է վանքի հիմնադրման հետ կապված մի ավանդություն, որի համաձայն՝ Նիկիայում գումարված Տիեզերական ժողովի օրերին՝ Գրիգոր Լուսավորիչը ծերացած լինելով, չի մասնակցել և իր կողմից որպես ներկայացուցիչ ուղարկել է որդիներին՝ Վրթանեսին և Արիստակեսին, որոնք «Հավատո հանգանակը» իրենց հետ բերել են Հայաստան և Լուսավորչին գտել են հիշյալ վայրում, հանձնել նրան: Գրիգոր Լուսավորիչը կարդացել է և հաստատել: Դրանից հետո է որ այն ընդունվել է Հայոց եկեղեցու կողմից:

«Պատկերազարդ բնաշխարհիկ բառարանը» վանքի տեղագրության մասին գրում է. «Կամախի (Բարձր Հայք) մեջ, Ավագ վանքեն կամ Ս. Լուսավորչա անապատեն երեք ժամ հեռու, արևմտյան հյուսիս, Սեպուհ լեռան գրեթե արգանդի մեջ չինված: Ս. Գրիգոր Լուսա-

---

[1] *«Սիոն», ամսագիր, 1927, էջ 213:*

[2] **Կ. Ս. Ղազանճյան,** *Խառն նամակներ, էջ 26:*

վորչի մարմինն այստեղ թաղված ըլլալուն, կկոչվի նաև Հանգիստ Լուսավորչա վանք, ինչպես նաև Մանյա այր Սեպհո: Վանքս ունի սեփական անտառ մը գրեթե կես ժամու չրջապատով, հինգ կամ վեց գյուղեր, իբրև թեմ»[1]:

Գ. Սյուրմենյանը, որ նույնպես անձամբ եղել է Երզնկայի վանքերում ուխտագնացությամբ, հետևյալ տեղեկություններն է տալիս ս. Լուսավորչի վանքի մասին. «Այս ալ կգտնվեր Սեպուհի ստորոտը և վեհ ու բարձր դիրք մը ուներ: Վանքին տակը ավերակներ կային, զոր Տրդատա բերդ կանվանեին: Ան ատենոք Տրդատ թագավորի ճգնարանը եղած է: Այդ վայրին մեջ կգտնվեր վանքին Լուսաղբյուրը, ուրկե կսկսեր ու դեպի հեռուները կտարածվեր հսկայածավալ անտառ մը: Լուսաղբյուրեն քիչ մը վար, մեջտեղեն երկուքի բաժնված ահագին ժայռ մը կար, ըստ ավանդության՝ որպես թե Տրդատ թագավոր սուրի մեկ հարվածով կիսած է զայն: Վանքին հարավ-արևելյան ժայռերու գլխուն Հռիփսիմե և Մարիամ քար ըսված երկու նվիրական այրեր կային: Առաջինը Հռիփսիմե կույսին ճգնարանն է եղած, ուր հավատացյալները մոմ կվառեին, ուխտ կընեին: Իսկ երկրորդը խոռոչ մըն էր, որուն առաստաղը խոնավ ըլլալով՝ ջուրը կհավաքվեր ու կաթիլ կաթիլ վար կթափվեր: Այդ կաթիլներեն որու գլխուն որ իյնար, ան բախտավոր կհամարվեր. «մուրազին պիտի հասնի» կըսվեր: ... Եկեղեցիին ճիչտ քովը, հյուսիսային կողմին վրա չատ անուշ ու չատ առատ ջուր մը կար, որ Բարեհամ կկոչվեր: Ըստ Ներսես Շնորհալիի վկայության՝ այս ջուրը Լուսավորչի հրաչքով բխած է»[2]:

«Միայն այնքանը կարելի է ստուգապես ըսել,- գրում է Հ. Ոսկյանը,- թե ԺԲ դարուն արդեն չինված էր և ԺԳ-ԺԴ դարերուն իր փթթումի չրջանը կբոլորեր»: Հայտնի է 1201 թ. այնտեղ գրված մի ձեռագիր, որի գրիչն է Ղազար վարդապետը[3]:

Ամենայն հավանականությամբ Ավագ և Լուսավորչի վանքերը գրչագրական կենտրոններ դառնալուց հետո մրցել են միմյանց հետ, սակայն միչտ առավելությունը պահել է Ավագ վանքը:

Անկախ այն բանից, թե որքան է վավերական Կ. Ղազանճյանի հիչատակած 561 թվականը, Լուսավորչի անունը կրող մի սրբատեղի հնագույն դարերից կարող էր իրեն գրավել բազմահազար երիզացի ուխտավորների: Հին չինությունները կարող էին քանդվել, նորերը կառուցվել, սակայն տեղը պիտի մնար սրբագործված:

---

[1] **Ս. Էփրիկյան,** *Պատկերազարդ բնաչխարհիկ բառարան, հատ. Բ, էջ 113:*
[2] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 88:*
[3] **Ա. Ս. Մաթևոսյան,** *նչվ. աշխ., էջ 18-19:*

Մատենագրական առաջին հիշատակությունը ս. Լուսավորչի վանքի մասին, վերաբերում է 1201 թվականին, երբ այնտեղ գրվել է մի Ավետարան Ղազար գրիչի ձեռքով: Ուրեմն պետք է որ գրչագրական արվեստը հիշյալ վանքում զարգացած լիներ առնվազն մի քանի տասնյակ տարի առաջ, այսինքն՝ 12-րդ դարի վերջերից:

13–14-րդ դարերը եղել են ս. Լուսավորիչ վանքի ծաղկման շրջանը: Այդ դարերից մեզ հասած ձեռագրերի թվի քիչ լինելը հակառակը չի կարող ապացուցել, քանի որ հետագա դարերի բնական աղետները, քաղաքական իրադարձությունները հազարավոր ձեռագրեր են սրբել-տարել, անհետ կորցրել:

Թվարկենք վավերական փաստերից մի քանիսը:

Լուսավորչի վանքում մի Ավետարան արտագրվել է 1207 թվին, մեկն էլ 1224 թվին: Առաջինի գրիչ Հովհաննեսը «հիշեսջիք»-ների մեջ թվարկում է տասնյակ անուններ՝ Բարսեղ, Մարտիրոս, Մխիթար, Հովհաննես, Ներսես և այլն: Մի քանի նոր անուններ էլ հանդիպում ենք երկրորդ ձեռագրի հիշատակարանում՝ Պետրոս, Սարգիս և այլն: Դժբախտաբար գրիչները չեն հիշատակում այդ մարդկանց պաշտոնները, հաճախ նաև կոչումները, սակայն տարակույսից վեր է, որ նրանց մեծ մասը եղել են վանքի միաբանները:

Ինչպես Ավագ վանքում, այստեղ էլ մատենագրական աշխատանքը թուլացել է 1240–1270-ական թվականներին, աշխուժացել հաջորդ տասնամյակում, երբ Կիլիկիայի հայկական թագավորության հետաքրքրությունը մեծացել էր Եկեղյաց գավառի նկատմամբ:

Բայց 1291 թ. Լուսավորչի վանքը ենթարկվել է հարձակման. միաբանները թողել փախել են տարբեր վայրեր, հասել մինչև Արևելյան Հայաստան, մինչև Անի:

1291 թ. Ահարոն Գրիգոր վարդապետի համար գրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք.

«Ի թուին ՉԽ (1291), ի հայրապետութեան տեառն Ստեփաննոսի եւ ի թագաւորութեան բարեպաշտին Հեթմոյ եղեւ կատարումն գրոյս ի դուռն Սուրբ Լուսաւորչիս գերեզմանին: ... Նուաստ եւ անարժան սպասաւորս բանի Ահարոն մականուն Գրիգոր կոչեցեալ, ստացայ զգիրքս զայս, որ է Քերական և արուեստ գրադարձի եւ համառաւտ կանոնք, երկու դիտաւորութեամբ, մի՝ զի ընթերցեալ աւգտեցայց ի սմանէ, վասն որոյ եւ խոչորագիծ ետու գրել ի ծերութեան ժամանակի, եւ երկրորդ զի յիշելոյ պատճառ լիցի մեզ ի մարմնաւոր կենացս»[1]:

---

[1] **Ս. Ս. Մաթևոսյան,** *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 664:*

Բայց ահա մի այլ վկայություն, որից պարզվում է թե նույն վանքում, նույն Ահարոնի համար գրված «Մեկնութիւն Ղուկասու» երկի ընդօրինակությունն սկսվել է այնտեղ, ավարտվել Անիում՝ ս. Լուսավորիչ վանքի վրա կատարված հարձակման հետևանքով. «Սկիզբն եղեւ գրոյս այս այսմիկ ի յԵկեղեաց գաւառն եւ ի Դարանաղեաց լեռն ի յերկնահանգոյն անապատն, որ յանուն ս. Լուսաւորչին ս. Գրիգոր կոչի... Եւ այլ գրեցաւ ի մայրաքաղաքն Եղնկա, բայց կատարումն ոչ ել, զի այլազգիք մահմետականք ասպատակեցին ի գաւառն ի քառասնորդաց պահոցն երկրորդ չաբաթուն եւ բազում քրիստոնեայս՝ եկեղեցականս եւ աշխարհականս նահատակեցին եւ յանխնայ եւ անողորմ սրակոտոր արարին եւ զայլսն գերի վարեցին եւ սաստիկ եւ անհնարին ահ եւ երկիւղ եւ տագնապ եւ խռովութիւն եղև բնակչաց քաղաքին եւ որպէս յոլովք ցրուեցան ի քաղաքացեացն ընդ ամենայն կողմանք, նոյնպէս եւ մեք մաղապուրծ եղեալ բազում տառապանաւք եւ աշխատութեամբ դիմեալ յարևելից կողմն եւ խրնամք ողորմութեանն Աստուծոյ առաջնորդեալ հասոյց զմեզ յԱնի քաղաքս եւ աստ եղև կատարումն գրոցս չնորաւք եւ աւգնականութեամբ Աստուծոյ, ի թուականիս Հայոց ՉԽԱ (1292) ի Մարերի Ժ եւ ի Հոկտեմբերի ԺԳ, ձեռամբ մեղապարտ եւ անարժան վարդապետի Ահարոնի՝ մականուն Գրիգոր կոչեցեալ, ոչ բովանդակ գիրքս, այլ սակաւ թղթերն ի վերջքն...»[1]:

Հ. Քյուրտյանն այն կարծիքն է հայտնել, թե հիշատակարանում նշված հարձակումը «հավանաբար տեղական-ավատական հանգամանք ունեցած է»[2], *և ոչ քաղաքական լուրջ իրադարձություն, բայց նման դեպքերում վանքերի միաբանները սովորաբար թաքնվել են որևէ ապահով տեղ և փորձանքն անցնելուց հետո իսկույն վերադարձել են, մինչդեռ ներկա դեպքում մարդիկ մինչև Անի են հասել: Դրանով հանդերձ կան վավերական փաստեր, որ Լուսավորչի վանքն այդ ասպատակությունից հետո չի դադարեցրել իր գործունեությունը երկար ժամանակով: Միաբանների գեթ մի մասը հաջորդ տարիներին վերադարձել են, շարունակել մատենագրական աշխատանքը: Այսպես, 1295 թ. Ստեփաննոս քահանան այնտեղ գրել է մի Պատարագի մեկնություն, «Ի մէջ երկուց գաւառաց Եկեղեաց և Դարանաղեաց, ի հռչակաւոր մենաստանս որ ս. Գրիգոր կոչեցեալ, առ դամբարանի սրբոյն Լուսաւորչին մերոյ»*[3]: *Նշանակալից է նաև վանքին տրված*

---

[1] **Ա. Ս. Մաթևոսյան,** *նշվ. աշխ., էջ 672:*
[2] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 144-145:*
[3] **Ա. Ս. Մաթևոսյան,** *նշվ. աշխ., էջ 763:*

«Հռչակաւոր մենաստան» գնահատականը, որ անչուշտ վկայում է նրա ծաղկուն վիճակում լինելը:

Դրանից 15 տարի հետո, այն է 1310 թ. այնտեղ գրվել է մի Ավետարան:

Վերջապես՝ 1291 թվին Երիզայից Անի փախած, ձեռագրի շարունակությունն այնտեղ գրել տվող Ահարոնն էլ ոչ թե վախճանվել է Անիում, այլ Լուսավորչի վանքում, 1316 թվին, ինչպես երևում է հետևյալ հիշատակարանից. «Ի թուին ՉԿԵ (1316) յաւգոստոս ԺԸ... յայսմ աւուր եղև վախճան Ահարոն վարդապետին և եղաւ ի լերինն Սեպուհ ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչին մերձ ի Մանէ այրն...»[1]:

Հետագայում ս. Լուսավորչի վանքը շարունակել է կրթական և գրչագրական գործունեությունը, արտագրվել են կամ գրվել են բազմաթիվ ձեռագրեր: Հիշվում են Գրիգոր, Հովհաննես, Ղազար, Սարգիս և այլ գրիչների անունները: Այսպես՝ 1373 թվին գրվել է մի Ավետարան Հովհաննես Որոտնեցու հրամանով, 1381 թվին՝ Եսայի և Պողոսի թղթերը, 1383 թվին՝ մի Նոր Կտակարան:

Դժբախտաբար առաջին դարերի առաջնորդների անունները մեզ չեն հասել: 1442 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ այդ ժամանակ Լուսավորչի վանքի առաջնորդն է եղել Բարսեղ եպիսկոպոսը, որն ունեցել է բավականաչափ մեծ թվով միաբաններ:

Դրանից երեք տարի հետո գրված մի Ավետարանի հիշատակարանում էլ կարդում ենք. «Գրեցաւ ... և ոսկով զարդարեցաւ սուրբ Աւետարանս... ձեռամբ սուտանուն աբեղայի Յովհաննիսի ի մէջ երկուց գաւառաց Եկեղեաց և Դարանաղեաց, առ դամբարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչիս և սուրբ Փրկչիս, ի լեառն Սեպհոյ, յառաջնորդութեան սուրբ ուխտիս Բարսղի և ի վարդապետութեան քաջ բարունոյն Յովհաննէսի և գրոց աչակերտաց նորին տէր Աբրահամին և Մարտիրոսին և Աստուածատրին և Աւետիքին և գալեօք պատեալ ծերունին զտէր Թորոսն և զՅովհաննէս փակակալն, զՍարգիս Ապահունեցին, զԳիրգոր Համշէնցին և զՀայրապետն և զայլ միաբան սուրբ ուխտիս՝ զմեծ և զփոքր յիշեսջիք»[2]:

Գիտենք նաև, որ Բարսեղին հաջորդել է Մատթեոս կրոնավորը, որի առաջնորդության շրջանում 15-րդ դարի կեսերին, մշակութային կյանքը նոր թափ է ստացել վանքում: Ձեռագրերում արդեն հորջորջ-

---

[1] «Հանդես ամսօրյա», ամսագիր, Վիեննա, 1948, էջ 549:

[2] Լ. Ս. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 589:

վում է «ի հռչակավոր անապատն Սուրբ Լուսաւորչին», ինչ որ ենթադրել է տալիս, թե մրցել է Ավագ վանքի հետ:

Մի գրիչ 1464 թվին վանքի առաջնորդ է հիշում ոչ թե Մատթեոսին, այլ Ստեփանոսին: Նշանակում է Մատթեոսը հազիվ մեկ տասնամյակ է ղեկավարել վանքը: Այդ շրջանում արտագրված ձեռագրերի մեջ տեսնում ենք մի քանի Ավետարան, Աստվածաշունչ, «Ճաշոց», «Մաշտոց», «Շարակնոց», «Գանձարան», «Մանրուսմունք» և այլն:

Բարձր դասի կանանց ու տղամարդկանց կողմից վանքին տրված նվերներն էլ վկայում են Լուսավորչի անապատի հեղինակության մեծացումը այդ տասնամյակներում: Օրինակ Գամալ խաթունը նվիրել է մի թանջիրա (կաթսա), տիկին Գոհարը՝ մի արտ, մի ուրիշը՝ արծաթ դրամ և այլն:

16-րդ դարից պահպանվել են մի քանի ձեռագրեր, որոնք պարունակում են արժեքավոր տեղեկություններ Լուսավորչի վանքի գրչագրական գործունեության մասին, նաև այն դժվարությունների, պայմանների մասին, որոնց մատնված են եղել միաբանները:

1512 թ. գրված մի «Շարակնոցի» հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ եղանակաւոր տառս որ կոչի Շարակնոց, ձեռամբ մեղապարտ և անիմաստ փծուն գրչի Յովանէս եպիսկոպոսի ի գաւառս Դարանաղեաց որ ասի Կամախ, ի յոտս Սեպուհ լեառն՝ մերձ առ սուրբ գերեզմանին մեր Լուսաւորչին և այլ ամենայն սրբոց որ աստ կան հաւաքեալ, ի թուաբերութեանս հայկազեան տումարի ՋԿԱ (1512) ի մարտ ամսոյ ի Ժ. եղև աւարտ գրոյս այսմիկ: Արդ, յերեսս անկեալ աղաչեմ զդասս սրբասնեալ քահանայիցդ, որք տեսանէք զսա, յիշեսջիք յաղաւթս ձեր զտէր Ներսէսն՝ զուսուցիչն իմ, և զՅովանէս վարդապետն և զԱբրահամ վարդապետն, այլ և զգրիս ծանուցողն զԱւետիք վարդապետն և զիս զմեղաւք լցեալս և յուղիղ ճանապարհէ հեռացեալս, զծրող սորա, և զԽաչատուր աբեղան, որ զմեր պէտքն և զկարիքն հոգայր անձանձիր և զսարկաւագն մեր զՂարիպճան որ բազում աշխատութեամբ սպասաւորէր մեզ...»[1]:

Մեր բերած փաստերը վերաբերում էին Լուսավորչի վանքի գրչագրական աշխատանքին: Տարակույսից վեր է, որ ունեցել է նաև կրթական, մանկավարժական գործունեություն:

Մովսես Երզնկացու, Կիրակոս վարդապետի, Գրիգոր Դարանաղցու և Պարոն Ճգնավորի ուսուցչական աշխատանքը այնտեղ՝ վկայում է որ նրանք ունեցել են շատ աշակերտներ, ուսուցանել են տարբեր առարկաներ:

---

[1] «Հանդես ամսօրյա», 1948, էջ 553:

Նշանակալից է Գրիգոր Դարանաղցու կապը այս վանքի հետ: Նա այնտեղ աշակերտել է Պարոն Ճգնավորին, ապա՝ բաբերդցի Սրապիոնին: Այնտեղ է ավարտել վանահոր՝ Հակոբ եպիսկոպոսի համար իր սկսած Կանոնագրքի արտագրությունը: Ցանկացել է հեռանալ վանքից, սակայն այնքան սիրված է եղել վանահոր և մի քանի միաբանների կողմից, որ չեն թողել, թեև չի լսել և ի վերջո մեկնել է Բաբերդ՝ «արտասուքը աչքերին»: Պարզվում է, որ վանքում եղել են նաև արկածախնդիր, տգետ հոգևորականներ, որոնց հետ աշխատելը հաճելի չի եղել Դարանաղցուն: Այդպիսի մարդկանցից է եղել Տիգրանակերտցի Մելիքսեղեկ Հերիսան, որ չի խմացել եկեղեցական պատմություն, բայց սնամեջ քարոզներ է կարդացել ու ծիծաղելի վիճակի մեջ ընկել[1]:

18-րդ դարի վերջերին ս. Լուսավորչի վանքի վանահայրն է եղել Կարապետ վարդապետը, որը կոչվել է Ճոռճոռ:

Ինչպես Ավագ վանքը, ս. Լուսավորչի անապատն էլ իր գոյությունը չարունակել է մինչև Առաջին համաշխարհային պատերազմը:

4. ԹԻԼԻ ԿԱՄ ՋՈՒԽՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ՎԱՆՔ

Երզնկայի հնագույն վանքերից է: Գտնվում է քաղաքից արևմուտք, երեք մղոն հեռավորության վրա:

Թիլ անվան ծագման մասին կան տարբեր կարծիքներ, որոնք գիտական հիմք չունեն, պարզ ենթադրություններ են: Այդ անունով ավաններ, գյուղեր կան Հայաստանի տարբեր կողմերում, ինչպես Բալուի, Տիգրանակերտի, Զարսանջակի, Կիլիկիայի տարածքներում: Հ. Հյուբշմանը, անդրադառնալով Թիլ բառի ծագմանը և հիշատակելով մի քանի Թիլեր, այն էլ պատմական Հայաստանի միմյանցից շատ հեռու վայրերում, ասում է թե հնարավոր էր այդ բառը կապել ասորերեն tell*-բլուր բառի հետ, եթե Հայաստանի այդքան տարբեր վայրերում չհանդիպեինք Թիլ տեղանվան: «Հավանական չէ որ,- գրում է նա,- Արևմտյան Հայաստանի մեջ այսպես տարածված անուն մը ասորական ծագում ունենա»[2]: Հյուբշմանը նաև ասում է թե ասորերեն* tell *բառը հայերենում պիտի տար ոչ թե Թիլ, այլ Թիղ:*

Հր. Աճառյանը Թիլ բառը կապում է արաբերեն tall*-բլուր, հողա -բլուր բառի հետ, վերցված սեմականից: Տարբեր վայրերում գտնվող վերոհիշյալ Թիլ ավանների գտնվելը բլուրների, հողաթումբերի վրա,*

---

[1] **Գրիգոր Դարանաղցի,** *Ժամանակագրություն, էջ 419-421:*

[2] **Հ. Հյուբշման,** *Հին հայոց տեղվո անունները, էջ 349:*

համենայնդեպս ամենից հավանականը այս ստուգաբանությունն են դարձնում: Ուստի մյուսներին չենք անդրադառնում:

Նախորդ գլուխներում առիթ ունեցել ենք ասելու, թե Երզնկայի Թիլ ավանը եղել է պաշտամունքի հնագույն կենտրոններից: Ենթադրվում է, թե կառուցվել է Տիգրան Մեծից էլ առաջ: Տիգրանը նույն տեղում կառուցել է մեհյան, չինել բագին՝ Աթենասի համար, երբ հունական աստվածությունները մուտք գործեցին Հայաստան: Մովսես Խորենացին, խոսելով այս մասին, գրում է «Տիգրանը... Ոլիմպիական Դիոսի արձանը կանգնեցնում է Անիում, Աթենասինը Թիլում, Արտեմիդի մյուս արձանը Երիզայում...»[1]: Այդ նույն արձանը Ագաթանգեղոսը կոչում է Նանեական և խոսելով Լուսավորչի կողմից նրա կործանման մասին, ասում է. «Քանդէին զՆանեական պատկերն դստեր Արամազդա ի Թիլն ավանի, և զգանձս երկուց մեհենիցն աւար ժողովեաց ի նուէրս սպասու եկեղեցւոյն Թողին տեղօքն»[2]:

Այս բոլորը վկայում է, որ Թիլի հեթանոսական տաճարը Անահիտի մեհյանից հետո եղել է ամենից ճոխն ու հայտնին:

Հասկանալի է, որ լայն ժողովրդականություն վայելող պաշտամունքային նման մի կառույց պետք է օգտագործվեր քրիստոնեական եկեղեցու կողմից և նույն տեղում կանգնեցվեր որևէ եկեղեցի կամ վանք, մանավանդ որ կար նաև քանդվածի չինանյութը օգտագործելու տնտեսական նկատառումն էլ:

Մովսես Խորենացին, Բուզանդը և այլ պատմիչներ վկայում են, որ ոչ միայն կառուցվել է նման աղոթատեղի Թիլի հեթանոսական տաճարի տեղում, այլև նրան տրվել է բացառիկ կարևորություն: 4-րդ դարում Թիլը դարձավ կաթողիկոսական նստավայր: Այնտեղ են ամփոփվել Արիստակես Ա և Ներսես Մեծ կաթողիկոսների և Պապ թագավորի աճյունները:

Այդ վայրում կառուցված եկեղեցիների մեջ ամենահայտնին եղել է Կաթողիկեն, որը, ըստ ավանդության, հիմնել է Գրիգոր Լուսավորիչը, բայց ավարտել է Ներսես Մեծը:

Քրիստոնեական այս վանքը ունեցե՞լ է կրթական, մանկավարժական և մատենագրական գործունեություն՝ քիչ բան գիտենք: Բայց որ մինչև 7-րդ դարի սկիզբները գործել է և կործանվել է միայն 639 թ. արաբ զորավար Աբդուլ Ռահիմի արշավանքների օրերին, վավերական փաստ է: Փաստ է նաև այն, որ Աբդուլ Ռահիմը ոչ միայն կործանել է Թիլի վանքը, այլև սրի քաշել միաբաններին: Ս. Էփրիկյանի

---

[1] **Մովսես Խորենացի,** *Հայոց պատմություն, էջ 147:*

[2] **Ագաթանգեղոս,** *էջ 591:*

բառարանում կարդում ենք. «Այնուհետև ազգիս սովորության համեմատ՝ եկեղեցվույն ավերակները կոչված են Հանգուցյալ կամ Հանկած եկեղեցի»[1]:

Այսպես են կոչվել այն վանքերը, որոնք իսպառ ավերվել են և ծառայել են միայն ուխտագնացության:

Հետագայում Հանկած եկեղեցու տեղում կառուցվեց Թիլի վանքը:

1275 թ. Ներսես կաթողիկոսի նշխարներն այնտեղ հայտնաբերվեց և տեղափոխվեց Երզնկայի Տիրաշեն վանքը: Այդ ժամանակ հիշատակվում է վանքի վանահայրը, որի անունը նույնպես եղել է Ներսես: Այդ գյուտի առիթով Թիլը կրկին դարձել է ուշադրության կենտրոն, Կիլիկիայի Լևոն III թագավորը նվերներ է ուղարկել վանքին:

Ըստ երևույթին Թիլի վանքը դադարել է գործելուց, երբ նույն վայրում հիմնադրվել է Ջուխտակ Հայրապետի վանքը: Բայց նույնիսկ որպես վանք դադարելուց հետո ամեն տարի Թիլը Երզնկայի և Եկեղյաց գավառի շատ կողմերից իրեն է գրավել բազմահազար ուխտավորներ: «Արևելյան մամուլ» ամսագրում տպագրված մի հոդվածից իմանում ենք, որ 19-րդ դարավերջին դեռ գոյություն են ունեցել պատմական այդ նշանավոր վանքի փլատակները, որոնք դարձել էին սիրված ուխտատեղի: «Այս հնագույն և ըստ ամենայն հավանականության՝ ճոխագույն մենաստանեն,- կարդում ենք այդ հոդվածում,- ոչ այլ ինչ կմնա զարդիս, բայց միայն կամարակապ և քարուկիր փոքրիկ մատրան մը կիսափուլ որմերն՝ երկու երեք կանգուն բարձրությամբ: ... Մատրան որմերը խիստ ամրակուռ և անթափանցելի կերպիվ հյուսված են, այնպես որ ժամանակին ամենակեր ձեռքը, որ աննշմարելի ու անհետ ջնջած է այս մեծ ու համբավավոր մենաստանին բոլոր մասերն, չպիտի կարենար վնասել բուն մատրան, եթե մարդոց ձեռքերը հետզհետե չկորզեին նորա քարերը»[2]:

5. ՏԻՐԱՇԵՆԻ ԿԱՄ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ

Տիրաշենի վանքը նույնպես ունեցել է փառավոր անցյալ և նրա մասին էլ հնարավոր է գրել ընդարձակ:

Մասնավորապես «Նշխարաց գյուտից» հետո Տիրաշենը դարձել է ոչ միայն Եկեղեաց գավառի, Դերջանի, այլև պատմական Հայաստանի հեռավոր վայրերի, անգամ Արևելյան Հայաստանի համար սիրված ուխտատեղի: Սխալված չենք լինի, եթե ասենք որ Մշո ս. Կարապետի

---

[1] **Ս. Էփրիկյան,** *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատ. Բ, էջ 37:*

[2] *«Արևելյան մամուլ», ամսագիր, Զմյուռնիա, 1889, էջ 311:*

հռչակավոր վանքից հետո ամենից շատ ուխտավորներ գրավող սրբավայրերից մեկն է եղել ամբողջ Հայաստանում:

Վանքը հին դարերում կոչվել է Տիրաշեն՝ իբր Տիրան Թագավորի կողմից կառուցված լինելու պատճառով: Հետագայում, երբ 1273 թ. հայտնաբերվել և այնտեղ է տեղափոխվել ս. Ներսես Հայրապետի աճյունի մի մասը, անունն էլ դարձել է ս. Ներսես Հայրապետի վանք, թեև ժողովուրդը երկար դարեր հավասարաչափ օգտագործել է նաև Տիրաշեն անունը:

Հենց այն փաստը, որ 13-րդ դարում որոշել են ս. Ներսեսի նշխարների մի մասը տեղափոխել այստեղ, վկայում է սրբավայրի մեծ կշիռը մյուս վանքերի շարքում և հեղինակությունն ամբողջ երկրում:

Տիրաշենի վանքը գտնվել է Երզնկայից երկու ժամ հեռու, քաղաքի հարավակողմում, Մնձուր լեռան ստորոտում, մի լայն ձորի ափին, սարահարթի վրա: Շրջապատված է եղել հաստ ու ամուր պարիսպներով:

Կրթական գործիչ, բանասեր Ս. Ամատյանը 1870-ական թվականներին այցելել է այդ վանքը և թողել հետևյալ վկայությունը. «Բարձրաթև թանձր պարիսպներն, ընդարձակ բակերն, ժամատունն կամ արտաքին եկեղեցին և բուն տաճարն՝ յուր փոքրիկ այլ կարի վայելուչ շինությամբ, կոթողիկեի և վերջապես գեղեցիկ ճարտարությամբ ու դրվագոք որ ի նմա, կհիշեցնեն թե վաղեմի ու բուն հայկական տիպ կրող շենք մ է և այցելուն կկարծե գտնվիլ ի խորս Հայաստանի ի Վարագ կամ յԱրագածոտն... Ունի բազմաթիվ հարկեր, ինչպես ամառվան և ձմեռվան հյուրատուններ, մառաններ, խոհանոց, գոմեր, ախոռներ ու երկրագործության հարմարավոր շինությունք: Տաճարին հարավակողման պատին մեջ կերևի դուռ մը, որ կառաջնորդե անձկագույն մթին ու գիջին անց մը, որ կանվանի Գերեզման ս. Ներսեսի: Արդարև հոն կա, ի ձախակողմն՝ պատին միջև զետեղված՝ տապան մը, որ ունի գրեթե անընթեռնելի արձանագիր, ծածկյալ է շուրջառով և կանթեղ լուցյալ ի վերա»[1]:

Այդ նույն տարիներին վանքն ունեցել է եկեղեցական ծիսակատարության համար օգտագործվող կամ որպես զարդ պահվող թանկարժեք իրեր, որոնցից մեկը՝ քանդակազարդ և ոսկեզօծ մի սկիհ, կրել է ՌՃԿԸ թվականը, որ հավասար է 1720 թվականի: Ունեցել է արծաթյա խաչեր, հին ձեռագրեր, բազմաթիվ անոթներ և այլն: «Իբրև միակ ու կարևոր հնություն արժանի է հիշատակել ժամատան փայտե զարմանագործ դուռն, որ ունի ճարտարաշեն քանդակներ,

[1] «Արևելյան մամուլ», 1887, էջ 430:

կրոնական նկարուց փորագրություններ և երկաթագիր դժվարալույծ արձանագրություն. գործ՝ արժանի ուսումնասիրության՝ վասն քրնասեր հնագիտաց»[1]:

Վանքն ունեցել է սրբատաշ քարերով կառուցված եկեղեցի, մեծ ու փոքր մի քանի գմբեթներով: Ըստ Գրիգոր Օշականցու, որ անձամբ այցելել է այնտեղ, տաճարի մեջ, «ի ծոց սուրբ սեղանոյն, ընդ աջմէ նորա», արձանագրված է եղել այսպես. «Հիւսեալ պսակդ վարդենի, եղեալ ի գլուխ մերոյ ազգի» (ՌՄԽԶ), այսինքն՝ 1797»:

«Բուն տաճարը,- գրում է Գ. Այուրմենյանը,- կգտնվեր խորը, ներքին մասին մեջ, բոլորովին զատված արտաքին մասեն: ... Տաճարին ներքևը կգտնվեր ստորերկրյա նկուղ մը, որուն մեջ կպահվեին թանկագին անոթներ ու հնություններ: Պատերը զարդարված էին հին սրբազան յուղանկարներով, մոմլաթի վրա գծված, որոնց մեջ նշանակալի էր սրբույն Ներսեսի մեծադիր պատկերը, որ դրված էր ավագ սեղանին մեջտեղը, ինչպես նաև փորված հիշատակարան քար մը, պատերեն մեկուն մեջ զետեղված: Տաճարին մեջ պահված կմնային սուրբին և ուրիշներու մասունքները»[2]:

Պատմության համար չատ անհրաժեշտ են նման մանրամասները, քանի որ այլևս ո՛չ Երզնկան կա, ո՛չ էլ Տիրաշենի կամ մի այլ վանք:

13-րդ դարում, երբ Տիրաշենի վանքը դարձել է մտավոր խոշոր կենտրոն, կառուցվել են մասնաշենքեր, հարկաբաժիններ, տնտեսական կառույցներ: Այնտեղ կենտրոնացվել են բազմաթիվ ձեռագրեր, տեղում արտագրվել են նոր մատյաններ, «Հայսմավուրքներ», «Ավետարաններ», «Ժամագրքեր» և այլն, մասնավորապես Սարգիս արքեպիսկոպոսի իշխանության շրջանում:

1302 թ. Կարապետ կրոնավորը Ղուկաս քահանայի խնդրանքով արտագրել է մի Ավետարան:

Մի քանի տարի անց՝ 1310 թ. «Գրեցաւ գանձատետրս ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս և կենսակիր Սուրբ Նշանիս ի Տիրաշէնն, ձեռամբ Կարապետի»[3]:

Մի Գանձարան էլ արտագրվել է 1366 թ. Ներսես քահանայի համար, իսկ 1386 թ.՝ մի ժողովածու:

Աստվածատուրը 1465 թ. նույն վանքում օրինակել է մի Մաշտոց:

Թվարկեցինք մի քանի փաստ միայն, այն էլ 14–15-րդ դարերից: Դրանք ցույց են տալիս, որ Տիրաշենը ունեցել է գրչագրական բե-

---

[1] **Գ. Այուրմենյան,** *Երզնկա, էջ 92-93:*

[2] *Նույն տեղում:*

[3] **Լ. Ս. Խաչիկյան,** *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 73-74:*

դուն գործունեություն, մանավանդ որ մեզ հասածի տասնապատիկը մատնվել է կորուստի, ինչպես եղել է առհասարակ մեր հարուստ մատենագրության համար:

Գ. Սյուրմենյանի նկարագրությունից երևում է, որ այնտեղ եղել են նաև բավականաչափ յուղաներկ նկարներ: Թե որ դարի գործեր են եղել, ում վրձինին պատկանել, տեղում են պատրաստվել, թե դրսից են բերվել, չգիտենք: Անշուշտ շատ հին գործեր չպետք է լինեին, բայց որ այդ վանքում գրչագրության կողքին ծաղկել է նաև մանրանկարչությունը, կասկածից վեր է: Այդ է վկայում այն փաստը, որ վանքն ունեցել է քանդակազարդ փորագրություններով դռներ:

Արձանագրությունների մեջ նկարագրված է եղել Հայրապետի մասունքների Թիլ ավանից այնտեղ տեղափոխվելու պատմությունը, որի արտագրության մեկ օրինակը 19-րդ դարի վերջերին ուղարկված է եղել Կ. Պոլսի պատրիարքին ու մի քանի թերթերի խմբագրություններ՝ Հմայակ եպիսկոպոս Դիմաքսյանի բացատրական խոսքով: Վերջինս մի օրինակ էլ ուղարկել է Էջմիածնի կաթողիկոսին:

Սակավ տեղեկություններ են հասել մեզ Տիրաշենի վանքի կրթական գործունեության, նրա միաբանների կատարած աշխատանքի մասին:

Կրթություն ստացած, քահանայացած բոլոր մարդիկ չեն որ նշանավոր դեմքեր են եղել, գրական-մանկավարժական հետքեր են թողել: Բայց այն մի քանի անուններն էլ, որ ավանդվել են ու փոխանցվել հետագա սերունդներին, ցույց են տալիս, թե այս վանքն ինչպիսի մեծ տեղ է գրավել Եկեղյաց գավառի մտավոր կրթական կյանքում: Այնտեղ են սովորել Մխիթար և Կոստանդին Երզնկացիները:

Տիրաշենի վանքում ուսած Գրիգոր Երզնկացին գրում է. «Եւ զի ծննդեամբ է ի յերկրէն Խարբերդոյ, ի գաւառէն Ցաղման կոչեցեալ և մայրական գրկօք եկեալ ի գաւառն Եկեղեաց, և անդ սնեալ ի մեծահռչակ վանքն Տիրաշէն, և այդ ուսեալ որպէս ասացի և կրօնաւորեալ. իսկ յետոյ ի գալ վարդապետին Մովսիսի ի Կիլիկիոյ՝ բազում գրենօք, յորդորեալ և առեալ զմեզ բնակեցաք ի Դարանաղեաց գաւառն՝ ի լեառն Սուրբ մեծ Լուսաւորչին մերոյ՝ յամս վեց»[1]:

Ահա մի այլ վկայություն.

«Ես Յովհաննէս կոչեցայ յաստիճան քահանայութեան և ձեռնադրեցա ի տէր Գրիգորէ յարհիեպիսկոպոսէ՝ վերադիտողի Եկեղեաց գաւառի, յորդւոյ պարոն Պեկթամուրին, զոր Տէր Աստուած պահեսցէ զնա, և զհարազատ եղբայրն իւր զպարոն Յովաննէս և զպարոն Պեկ-

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 263:*

թամուրն դաստուածապարգև դաւակն իւր. . ի թվ. ՊԽ (1391) ի Նաւասարդի ԺԴ և դեկտեմբերի ԻԶ, ի տանի մեծ մարգարէին Դաւթի և սուրբ Առաքելոյն Յակոբայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Կարապետին և սուրբ Ստեփանոս Նախավկային և նշխարաց սրբոյն Ներսէսի: Եղև ձեռնադրութիւնս մեր ի վանքս Տիրաշէն կոչեցեալ»[1]:

Գրիգոր Դարանաղցին բացառիկ ոգևորությամբ է խոսում Պետրոս Կարկառեցու մասին, որը որպես Երզնկայի առաջնորդ երկու տարի նստել է Տիրաշենի վանքում «որ դուլից կատաղութեան ժամանակին էր, որ զայն կողմանց վանօրայք թալանեցին և զամենայն սրբութիւնքն՝ զխաչերն, զչուրջառնին և զամենայն կահք սրբութեանցն»[2]:

Կասկածից վեր է, որ Տիրաշենի վանքն իր մշակութային, կրթական կենտրոնի և սրբատեղիի դերը պահել է երկար դարեր, մինչև Առաջին համաշխարհային պատերազմի տարիները:

1880-ական թվականներին Երզնկայի հոգևոր առաջնորդն է եղել Հմայակ եպիսկոպոս Դիմաքսյանը: Նա Տիրաշենում հիմնել է գիշերօթիկ վարժարան, որի համար կառուցվել է հատուկ շենք՝ վանքի արևելյան կողմին:

«Դպրոցն ուներ երկար նրբանցք մը 25–30 մահճակալնոց ննջարան մը, սերտարան, դասարաններ և այլն»:

Ինչպես նշանավոր նման շատ վանքեր, Տիրաշենն էլ ունեցել է գիշերային կացարաններ՝ ուխտավորների համար, կառուցված պարբսպի երկայնքով: Անչուշտ ուխտագնացությունները կատարվելով գերազանցապես ամառային ամիսներին, ժողովուրդը մեծ մասամբ ապրել է պարսպից դուրս, վրանների տակ, սակայն, դրանով հանդերձ, փակ կացարանները միշտ էլ լիքն են եղել, ինչպես պատմում են այդ ուխտագնացություններին մասնակցած մարդիկ: Կացարանները եղել են դեպի բակը նայող երկհարկանի հարմարավետ խցիկներ: Դրանց կողքին էլ եղել է վանատունն իր ստորաբաժանումներով:

«Եկեղեցվո ու վանատան միջև և արտաքին մեծ դրան դիմաց քարուկիր մեծ ավազան մը կար,- գրում է Սյուրմենյանը,- եկեղեցվո ետևի կողմը և անոր կից կգտնվեին մառան, մթերանոց, չտեմարաններ: Վանքը ուներ ընդարձակ գավիթ մը»[3]:

---

[1] **Լ. Ս. Խաչիկյան,** *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 593-594:*
[2] **Գրիգոր Դարանաղցի,** *էջ 352:*
[3] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 93:*

Թե Տիրաչենի վանքն ինչպիսի հեղինակություն է ունեցել անգամ 19-րդ դարի կեսերին, երևում է այն փաստից, որ եղել է Կ. Պոլսի պատրիարքարանի ուշադրության առարկան: Ներսես պատրիարք Վարժապետյանը, որ մեծ հույսեր է փայփայել 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին՝ ապագա Հայաստանի ինքնավարության համար, և ծրագրեր էր կազմում Երզնկան, էրզրումը կենտրոններ դարձնելու, 1883 թ. 150 օսմանյան ոսկի է նվիրել Երզնկայի այս վանքում նոր շենքեր կառուցելու համար:

Վանքը հիմնական եկամուտն ստացել է ուխտավորներից և այցելու հավատացյալների նվիրատվություններից, բայց սեփական եկամտից էլ զուրկ չի եղել: Պարսպից դուրս, ձորի երկայնքով ձգված է եղել մի մեծ պարտեզ՝ լի պտղատու ծառերով: Վանքից ոչ շատ հեռու, սարահարթի վրա, եղել է նաև մի այլ պտղատու այգի, որը նույնպես պատկանել է Տիրաչենին և տվել առատ ու ընտիր ծիրան, դեղձ և այլ մրգեր:

Վերջապես՝ սրբատեղին ունեցել է սեփական կալվածներ այլ վայրերում, որ տվել է կապալով:

Վանահայրը տնօրինողն է եղել այս ամբողջ եկամտի և իր հերթին որոշ տուրք է տվել Երզնկայի կրոնական իշխանություններին:

Եղել է ժամանակ, որ այնտեղ է նստել Երզնկայի հայոց հոգևոր առաջնորդը:

Պատմվում է, որ Տիրաչենի վանքի վերջին ներկայացուցիչ միաբանները դեռևս կոտորածներից շատ առաջ մեծ քանակությամբ ձեռագրեր են թաքցրել լեռների ծերպերում, որպեսզի երբ անցնի փոթորիկը, բերեն վանք. փոթորիկը, սակայն, այս անգամ չի անցել...

6. ԶԱՐԶԱՐԱՆԱՅ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԿԱՄ ՏԱՏԱՍԿԻ ՎԱՆՔ

Այն համարվում է Երզնկայի վանքերից ամենամեծը, նաև՝ հնագույններից: Կառուցված է եղել քրիստոնեության արշալույսին, Տուժիկ լեռների ստորոտում, Մերջան գետի վտակի ափին, դրա համար էլ կոչվել է նաև Մերջնա վանք: Գտնվել է քաղաքից 4–5 ժամ հեռավորության վրա:

«Շինված էր հարթ ու տափարակ դաշտագետնի մը վրա,- գրում է Գ. Սյուրմենյանը,- Հողաղյուսե բարձր, թանձր ու հաստատուն պարիսպներու մեջ առնված էր վանքը, որ կրովանդակեր վանականներու բնակության համար տուն, խոհանոց, ճաշարան, մառան, իսկ կենդանիներու համար՝ ախոռ, գոմ, մարագ, մեղվանոց և այլն: Շեն-

քին հարավային մասին վրա կառուցված էր եկեղեցին՝ գեղեցիկ մատուռատաճարիկ մը, որուն մեջ կգտնվեր ս. Գրիգոր Լուսավորչի աջը, արծաթապատ և ոսկեզօծ, ինչպես նաև երկաթյա փոքր տատասկներ, որոնց վրա, ըստ Ագաթանգեղոսի, դրած ու չարչարած են սուրբը և որոնց ճիշտ տեղը չինված է այս վանքը, այդ պատճառով կոչված է Տատասկի վանք»[1]:

Շենքի հարավային մասի անկյուններում եղել են սենյակներ, իսկ հյուսիսային կողմի անկյունների վրա՝ դիտարաններ, «թշնամին հեռուն տեսնելու և կանխապատրաստվելու համար»: Տաճարի ներսում, դռան մոտ, եղել է այսպիսի արձանագրություն. «Լոյս համասփիւռ ճառագայթեալ յԱրևելից փառօք ծագեալ»:

Վանքի մուտքի մոտ փված է եղել ընդարձակ մարգագետինը, եղերված հսկա թթենիներով: Մի մեծ ու քարքարոտ ձոր վանքը բաժանել է դիմացի սարալանջից, որտեղ եղել է բավականաչափ վարելահող, սեփականություն վանքի:

Բերված փաստերից երևում է, որ Զարչարանաց ս. Լուսավորչի վանքը ունեցել է բնական հարմար դիրք, լայն տարածություն, վանքապատկան կալվածներ, հողամասեր, որոնք հաճախ տրվել են կապալով: Վանքը մասամբ ապահովված է եղել նաև պաշտպանության միջոցներով օժտված աշխարհիկ ամրոցներին հատուկ հարմարանքներով, պարիսպների վրա կառուցված դիտակետերով: Եթե ունեցել է թշնամուն հետախուզելու հնարավորություն, կնշանակի ունեցել է նաև զենք և կովող ուժեր:

Կան վկայություններ, որ Երզնկայի վանքերից շատերն ունեցել են ինքնապաշտպանության համար անհրաժեշտ զենք, որն օգտագործվել է ոչ միայն վանականների կյանքը փրկելու համար, այլև՝ հարևան գյուղերի: Ճակատագրական հարձակումների օրերին նրանք ապաստանել են վանքերում և կազմակերպել դիմադրություն: Այն վանքերը, որ ունեցել են նման հնարավորություններ, ավելի ազատ են մնացել թշնամու խժդժություններից ու վայրագություններից:

Գուցե դրանով պիտի բացատրել, որ մինչդեռ այլ վանքեր դարերի ընթացքում քանդվել են, կործանվել, միաբանությունների անդամները սպանվել, Տատասկի վանքը գոյությունը պահել է մինչև Առաջին համաշխարհային պատերազմի տարիները:

Այժմ՝ նրա կրթական, մշակութային դերի մասին:

Այնպիսի մի վանք, որի հիմնադրման թվականը հասնում էր մինչև վաղ քրիստոնեության դարերը, և որտեղ հավատացյալներին ցույց

---

[1] **Գ. Այուրմենյան,** *Երզնկա, էջ 95:*

էին տրվում երկաթյա այն տատասկները, որոնցով չարչարել էին Գրիգոր Լուսավորիչին, չէր կարող իրեն չգրավել հոծ թվով մարդկանց: Հենց նրանց օժանդակությամբ ու նյութական նվիրատվություններով էլ պիտի բարգավաճեր ու ծավալեր մշակութային գործունեությունն:

Զարմանալի զուգադիպությամբ՝ այստեղ նույնպես մատենագրական աշխատանքը սկսվել է 13-րդ դարի հենց սկզբին: Ինչպես Ավագ վանքում, այստեղ գրված ձեռագրերից հնագույնը, որի մասին կա հիշատակություն, կրում է 1201 թվականը: Այդ տարում Տատասկ կամ ս. Լուսավորչի վանքում գրվել է մի Ավետարան, որի գրիչը եղել է Ղազարը, իսկ Ստեփանոս կրոնավորը նույն տարում, նույն վանքում գրել է մի այլ Ավետարան: Հենց մի տարում, միևնույն վայրում երկու Ավետարան արտագրվելու փաստը ինքնին ապացույց է 13-րդ դարի արշալույսին վանքի ապրած կենսունակության, գրչագրական եռուն գործունեության մասին:

Ունենք վկայություններ նաև հետագա տասնամյակների մասին, մասնավորապես դարավերջի տարիների:

Ե՞րբ է վերջնականապես հանգել վանքը, ի՞նչ պայմաններում:

Ասենք որ Մնձուրի լանջերին հաստատված վանքերը առհասարակ ենթակա են եղել մոտակա քրդական գյուղերի պարբերական հարձակումներին: Առավել ևս այդ բախտին պիտի արժանանար Տատասկի վանքը նյութական հարստությամբ գայթակղեցնելով կողոպուտի սովոր ցեղերին: «Գյուղեն հեռու ըլլալուն,- գրում է Գ. Սյուրեմենյանը,- մինչև գյուղացիներու օգնության գալը՝ քյուրտերն իրենց գործը տեսած, դարձած կըլլային: Անոնք գիշերները լեռներեն վար իջնելով՝ գոռում գոչյունով կմոտենային վանքին: Հոն գտնվողներն ալ պատուհաններեն հաց, դրամ, ծխախոտ վար կնետեին՝ այդ պատուհասեն ազատելու համար: Կպատահեր, որ անոնք այսքանով կբավականանային ու ետ կդառնային»[1]:

Բայց հաճախ էլ դրանով չեն գոհացել, գործը հասել է զինված ընդհարումների, համատարած կողոպուտի և սպանությունների:

Ահա այս պայմաններում վանքը չարունակել է իր գոյությունը երկար դարեր: 1895 թ. այն գտնվել է Տեր Ղևոնդ քահանայի իրավասության տակ: Նա վանքը ժառանգած է եղել հորից, համարվել է նրա պապենական կալվածը: Այդ մարդը եղել է պարթև հասակով, կայտառ ու ճարպիկ, իմացել է թե ում հետ ինչպես պիտի վարվի: Բարեկամներ, ծանոթներ է ունեցել թե՛ ազգային իշխանությունն-

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երգնկա, էջ 96:*

ռում, թե՛ թուրք բարձրաստիճան պաշտոնյաների չարքերում և թե՛ քուրդ ցեղապետներից:

Հայտնի է, որ դեթ վերջին դարերում վանահայրերը մեծ մասամբ լինում էին կուսակրոն հոգևորականներ, այսինքն՝ վարդապետներ, եպիսկոպոսներ, որոնք ամուսնանալու, սերնդագործելու իրավունք, հետևաբար իրենց հարստությունը որդիներին թողնելու հնարավորություն չունեին: Ինչպես է Տեր Ղևոնդը ժառանգել այդ ամբողջ հարստությունը, մեզ հայտնի չէ: Ամենայն հավանականությամբ պետական որևէ հրամանագրով, տալով համապատասխան կաշառք, մի բան, որ օրինականացած երևույթ էր: Մեր այս ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ առաջին տարիներին Ղևոնդ քահանան այնքան ազատ է զգացել իրեն, որ հաշվի չի առել եկեղեցական մարմինների գոյությունը: Զգիտենք նաև թե վանքը Տեր Ղևոնդ քահանայի իրավասության տակ գտնվելու տարիներին ունեցե՞լ է մշակութային գործունեություն, թե՞ միայն ուխտատեղի է եղել:

Համենայնդեպս հայերը գոհ են մնացել Տեր Ղևոնդից, որ կարողացել է վանքը երկար ժամանակ ապահով պահել:

1895 թ. ընդհանուր ջարդերի օրերին, Տատասկի վանքը ենթարկվել է բարբարոսական հարձակման: Տեր Ղևոնդն իր փոքրաթիվ մարդկանցով օրհասական պայքար է մղել թշնամու դեմ, սակայն պարտվել է: Թուրքերը խուժել են պարիսպներից ներս, գաղանաբար խոշտանգել քաջարի Ղևոնդ քահանային ու նրա ընտանիքի բոլոր անդամներին:

7. ԿԱՅԻՓՈՍԻ ԿԱՄ ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ՄԾԲՆԱ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ

Կայիփոսի վանքի հնությունն էլ, ըստ ավանդության, հասնում է մինչև քրիստոնեության առաջին դարը, Տրդատի օրերը: Հնարավոր է, որ այդ ավանդությունը հիմքից զուրկ լինի, սակայն վավերական փաստ է առնվազն 600 տարվա նրա մատենագրական, կրթական գործունեությունը:

Կայիփոսի մասին գրել են շատերը: Ոմանք, ինչպես Ս. Ամատյանը, Գ. Սյուրմենյանը և ուրիշներ, գրել են ականատեսի տպավորություններով, գրառումներով, ուրիշներ՝ օգտվելով առկա գրականությունից, ինչպես Հ. Ոսկյանը: Եվ որովհետև վաղուց պատմության գիրկն անցած, «հանգած» այդ վանքի մասին դժվար թե գրվի ամփոփ մի գրություն, ուզում ենք մի քիչ հանգամանորեն խոսել այստեղ:

Գ. Սյուրմենյանը գրում է. «Երզնկայեն 4–5 ժամ հեռավորության վրա, երկար ու հոգնեցուցիչ զառիվերե մը վերջ՝ լայնանիստ լեռնաղաչտի մը խորը կգտնվեր այս վանքը: Ձորի մը բարձունքը, սարահարթի մը կողքին կբարձրանար վանքին փառավոր շենքը, վեհ ու պատկառելի դիրքով, ամուր ու քարաշեն պարիսպներով շրջապատված: Ուներ ընդարձակ գավիթ մը և արտաքին մեծ դռան դիմացը, գետնեն բարձր, հոյակապ եկեղեցի մը, իր փոքրիկ զանգակատունով: Քովը վանատուն ու մյուս կողքին երկհարկ մաքուր սենյակներ կային ուխտավորներուն համար: Վանքին չուրջը կար լայնատարած մարգագետին մը: Այս վանքը ամենաբարձր դիրք ունեցողն էր Երզնկայի բոլոր վանքերուն մեջ: Կլիման խիստ, և օդը ընդհանրապես պաղ ըլլալուն, բերք չէր հասներ հոն: Ոչ ծառ, ոչ պտուղ և ոչ ալ բանջարեղեն ուներ: Վանապետին գործը միայն արջառ պահել էր. հազիվ քանի մը կտոր արտեր կային հեռուները, ցած տեղեր, անոնք ալ անջրդի ըլլալուն՝ մեծ բերք մը չէին տար»[1]:

Լավ օդ, ջինջ ու պայծառ երկինք է ունեցել Կայփոսը: Գտնվելով գյուղերից, բնակավայրերից շատ հեռու, նմանվել է կատարյալ մենաստանի: Ուխտագնացությունների բազմությունն էլ շատ մեծ չի եղել: Հաճախ ենթարկվելով կողոպուտի՝ վերջին տարիներին դարձել է գրեթե ամայի մի վայր:

Ս. Ամատյանի նկարագրությունը վանքի աշխարհագրական դիրքի, կլիմայի մասին, հաստատում է Սյուրմենյանի գրածը, բայց այնքան էլ անհրապույր չէ: Ճիշտ է՝ Սյուրմենյանը գրել է Ամատյանից 60 տարի հետո, գուցե որոշ ծաղկատեսակներ չքացել են, սակայն դրանով հանդերձ՝ ուշագրավ է նաև 1880-ական թվականների Կայփոսի պատկերը:

«Լեռնատափն, ուր կանգնյալ է ս. Հակոբա վանքն, Եկեղյաց դաշտեն խիստ բարձր դերք ունի, որում չեն հասնիր բնավ գավառին մյուս բարձրադիր վանորեից բարձրությունք, և զոր չուրջանակի կպատեն ծաղկազարդ, դալարագեղ ու ակնապարար բլուրներ: Իսկ հովիտն առատությամբ, բազմազանությամբ ու գեղեցկությամբ, բուսոց ու ծաղկանց՝ մշտադալար պարտիզի կնմանի»:

Ե՞րբ է կառուցվել վանքը: «Բնաշխարհիկ բառարանը» այդ մասին ոչինչ չի գրում: Այլ աղբյուրներ հակասական կարծիքներ են հայտնում կառուցման ժամանակի մասին:

Ե. Բորեն, որ 19-րդ դարի առաջին կեսին այցելել է այնտեղ, գրում է թե ըստ իրեն տրված բացատրությունների՝ պետք է որ «Տրդատի դարուն հասնող չինություն մը ըլլա»:

---

[1] **Գ. Սյուրմենյան, Երզնկա,** *էջ 97:*

Նույն այցելուն ասում է, թե թեև այս վանքը չունի Անիի եկեղեցիների չքեղությունը, սակայն օժտված է հին ոճով. «Որուն ձևերն և նկարագիրը շատ գեղեցիկ չափակցությամբ Բագրատունիներու մայրաքաղաքին մեջ ալ կգտնենք: Եկեղեցվո նավը, գմբեթը վեր կբռնեն չորս սյուներ, որոնց վրա բավական հին թվական կրող արձանագրություն մը գտանք»[1]:

Նման մի արձանագրության մասին խոսել է նաև բանասեր Խաչատրյանը, «Արևելք» թերթում տպագրած հոդվածում: Նա ասում է թե ինքն այցելել է այդ վանքը, բայց չինության թվականի մասին որոշակի գաղափար չի կարողացել կազմել: Միայն դռան ճակատին նկատել է ՋԹ թվականը: Հ. Ոսկյանը, մեջ բերելով այդ վկայությունը, ասում է, թե ՋԹ-ն, այսինքն՝ 1460 թիվը ինքնին հնությունից հեռու է:

Նույն Ոսկյանը բերում է փաստեր, որոնք մեզ տանում են խոր անցյալը: Բայց դա չէ էականը, այլ այն կարծիքը, թե Կայիփոսի վանքի ճարտարապետությունը հիշեցնում է Բագրատունիների ճարտարապետական ոճը:

«Եկեղեցվո գավիթին հարավային կողմն է այն փոսը,- կարդում ենք մի նկարագրության մեջ,- ուր ճգնած է սուրբ Հակոբ, ուսկից առած է վանքս զյուր անունը՝ Կա-ի փոս: Կպատմվի թե սույն փոսեն մինչև Ջուղտակ Հայրապետ ժամանակով ներքուղի մը կա եղեր, բայց այժմ գոյություն չունի: Վանական եկեղեցույն տաճարին երկու կողմերը քանդակված են եզան և առյուծի վիմապատկերներ»[2]:

Այս նկարագրության առաջին մասը մեզ քիչ կարող է հետաքրքրել, ուր ժողովրդական իմաստավորումով բացատրվում է Կապոս բառը՝ որպես կա ի փոս, բայց երկրորդ մասը, որտեղ խոսվում է քանդակապատկերների մասին, շատ կարևոր է:

Եզրակացնենք՝ Կապոսի վանքը Երզնկայի վանքերից հնագույններից է, սակայն այն դարերի ընթացքում ենթարկվել է ավերումների ու վերանորոգումների: Նման ավերումներից մեկը պատահել է 1416 թվին՝ ըստ Տ. Պալյանի, իսկ ըստ այլ բանասերների՝ 1406 թվին: Կործանվել է մի ահավոր հրդեհից, բայց կարճ ժամանակից վերանորոգվել է, պահել փառքը: Մի վերանորոգում էլ ունեցել է այն տարիներին, երբ վանահայրն է եղել հայտնի Ավետիք Եվդոկացին (հետագայում՝ պատրիարք):

---

[1] **Հ. Ոսկյան,** *նշվ. աշխ., էջ 68:*

[2] *Նույն տեղը:*

Ծանոթացնենք Կապոսի վանքի կրթական, մատենագրական գործունեությանը, հենվելով մեզ հասած կցկտուր փաստերի վրա:

Հնագույն վկայությունը, որ ունենք վանքի մատենագրական գործունեության մասին, վերաբերում է 1224 թվականին, երբ Վարդան մանրանկարիչը այնտեղ ծաղկել է մի ճառընտիր, հայր Կոստանդինի համար: Կնչանակի 13-րդ դարի սկզբներից, գուցե 12-րդի վերջերից ունեցել է ստվար միաբանություն:

1230 թ. Իշոխա գյուղացի Վարդան քահանան Սարգիս քահանայի հետ Կապոսի վանքում Մխիթար գրչին գրել են տվել մի ճաշոց և մի Տոնական: Երկու ձեռագիր մի տարում, այն էլ մեզ հասածները, քիչ չէ վանքի գրչական արվեստի զարգացումը ցույց տալու համար:

1255 թ. Սամուել առաջնորդը օրինակել է տվել ոմն Գրիգորի՝ ս. Աթանասի գործերից հատվածներ: 1343 թ. Ներսես սարկավագը արտագրել է տվել մի Շարակնոց «ընդ հովանեաւ սրբոյն Յակոբայ Կապոսի»:

Այդ դարի վերջերին Կապոսի վանքի առաջնորդն է եղել Գևորգ Երզնկացին, որն ունեցել է գրական, մանկավարժական բեղուն գործունեություն, աճեցրել է աշակերտներ, որոնցից հիշվածներից է Հակոբ Ղրիմեցին: Գևորգ Երզնկացին այնպիսի մեծ հեղինակություն է ունեցել քաղաքում, որ հոգևոր պետերն առաջարկել են նրան ներկայանալ Լենկթեմուրին և խնդրել խնայել իրենց վանքերին: Գնացել է, բայց սարսափահար և ապարդյուն վերադարձել է, ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին:

Ըստ Հ. Քյուրտյանի՝ Գևորգ Երզնկացին Կապոսի վանքը ղեկավարել է մոտ քսան տարի՝ 1389–1397 և 1411-ից մինչև մահվան տարին՝ 1417 թ.:

Այդ ժամանակաշրջանում Կապոսի վանքում գրված ձեռագրերի հիշատակարաններում Գևորգ Երզնկացու մասին գտնում ենք դրվատական տողեր: Գրիգոր գրիչը, օրինակ, 1416 թվին գրած հիշատակարանում ասում է. «Գրեցաւ սա ի սուրբ մենաստանիս, որ յորջորջեալ կոչի Կափոսի, ընդ հովանեաւ սրբոյն Յակոբայ սքանչելագործ հայրապետին Մծբնա, ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս եռամեծի և քաջ փիլիսոփայի՝ բազմերախտ հօրս մերոյ և վարժապետի Գէորգեա՝ արի և քաջ բարունապետի»[1]:

Գևորգ Երզնկացին վախճանվել է 1417 թվին և թաղվել է նույն վանքում: Այդ փաստն արձանագրող գրիչն էլ նրան համարել է «Հռչակելի բարունապետ»:

---

[1] **Լ. Ս. Խաչիկյան,** *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հատ. Ա, էջ 186:*

Գևորգ Երզնկացին դեռ Կապոսի վանքում ծավալել է մանկավարժական բեղուն գործունեություն, աճեցրել մի քանի տասնյակ աշակերտներ, որոնցից են Արիստակես Սեբաստացին, Գրիգոր գրիչը, Ավետիք Երզնկացին, Հակոբ Ղրիմեցին, Սարգիս Ղրիմեցին, Աբրահամ աբեղան, Հովհաննես Երզնկացին, Ղազար Երզնկացին և ուրիշներ: Սրանց մի մասը եղել են բեղմնավոր գրիչներ, մյուսները՝ նաև մատենագիրներ, ինչպես Հակոբ Ղրիմեցին, որը 1412 թ. գրել է «Հարցումն Գէորգայ բաբունապետի և ծառայաբար կատարումն Յակոբայ աշակերտի... Զհրաման հարկի բաբունայդ իմոյ հրաչալի, և զվարդապետաց պէտի, քաջ փաղերայի Գէորգ վարժապետի, Թորգոմեան տոհմի և Հայկազեան սեռի, մանաւանդ Եկեղեաց գաւառի և Դարանաղեաց նահանգի, ընկալայ սիրով, հնազանդ ծառայս և աշակերտս Յակոբս Ղրիմեցի»[1]:

Ենթադրվում է, որ Կապոսի վանքում Գևորգ Երզնկացուն հաջորդել է վերևում բերված հիշատակարանի հեղինակ Ավետիք Դարանաղցին: Նրա հիշատակած մի քանի փաստերը՝ վանքի վերանորոգման, նախկինից ավելի փայլ ստանալու վերաբերյալ, հաստատում են այդ բանը:

Սակայն սրա վանահայրության շրջանից մեզ ոչինչ չի հասել, թեև կասկածից վեր է, որ շարունակել է ուսուցչի գործը, մանավանդ որ այդ տարիներին վանքում էին աշխատում Գևորգ Երզնկացու աճեցրած վերոհիշյալ գրիչներն ու մատենագիրները:

Հաջորդ վանահայրը, որ Կապոսի վանքի կչիռը կրկին բարձրացրել է, ականավոր կրթական գործիչ Հովհաննես Համշենցին է: Նույնպես վանահայր է եղել թե՛ Ավագ վանքում, թե՛ Կապոսում: Այստեղ նա մանկավարժական բեղուն գործունեություն է ունեցել 1480-ական թվականներին:

Նրանով հիացողներից մեկը, Գրիգոր Տարոնեցին մի հիշատակարանում պատմում է, որ ինքը սովորել է Գլակա վանքում, բայց լսելով Հովհաննես Համշենցի «քաջ բաբունապետի համբավը» և իմանալով որ «Նստեալ կայ ի գաւառն Եկեղեաց, ի դրունս սուրբ Յակոբին և ունի աշակերտք բազում և ուսուցանէ հանգոյն նախկին վարդապետացն»[2], եկել է և ընդունվել նրա համալսարանը «Մտի ի համալսարանս նորա, և նստա ի յունկնդրութիւն աստուածային իմաստութեան, զոր աւրըստաւրէ պատմէր հոգովն սրբով և տպաւորէր ի

---

[1] **Ղ. Փիրղալեմյան,** *Նոտարք հայոց, Կ. Պոլիս, 1888, էջ 79-80:*

[2] **Լ. Ս. Խաչիկյան,** *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հատ. Գ, էջ 142:*

միտս աշակերտացն»[1]: Ապա ասում է, թե ինքը մեկ տարուց այնքան բան է սովորել, որ սկսել է գրել Դիոնիսիոսի երկերի լուծումը:

Այս հիշատակարանը գրված է 1489 թվականին:

Որ Հովհաննես Համշենցու առաջնորդության և տեսչության շրջանում Կապոսի վանքը հռչակվել է և կոչվել համալսարան, վկայում են նաև այլ ձեռագրեր: 1496 թ. Կապոսում գրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Ի գաւառն Եկեղեաց, որ Եզընկայ կոչի, ընդ հովանեաւ սրբոյն Յակոբայ և սուրբ Սիոնի, որ մականուամբ Կայիփոս վանք կոչի, ... ի համալսարանս երիցս երջանկի և տիեզերալոյս Յովհաննէս քաջ հռետորի, որ է աշխարհաւ Համշէնցի՝ ի ցեղէ Թագաւորական...»[2]:

Դրանից մեկ տարի առաջ, 1495 թ. Խաչատուր աբեղան այնտեղ արտագրել է մի Ոսկեփորիկ, իսկ ավելի վաղ՝ 1490 թ. գրվել է մի Մանրուսմունք և Տոնացույց «ձեռամբ մեղապարտ և անիմաստ Գրիգորիս Տարաւնացւոյ ի վանուցն Ամլորդւոյն ի գաւառս Եկեղեաց որ ասի Եզնկայ, ի դրունս ս. Յակոբին որ Կայիփոս վանք կոչի»:

Կապոսի միաբաններից բաբերդցի Մաղաքիան էլ եղել է Հովհաննես Համշեցու մանկավարժական, գիտական վաստակը բարձր գնահատողներից և իր արտագրած երկու ձեռագրերի հիշատակարաններում արտահայտել է ուշագրավ մտքեր:

1494 թ. գրած հիշատակարանում նա հիացմունքով խոսելով Կապոսի համալսարանի մասին, գնահատում է «մեծ բարունոյն Յովհանիսի, ի ժամանակիս, որ անբարի, սա լոյս ծագի մէջ աշխարհի. լուսաւորող սա համայնի՝ Հայոցս տառապեալ ազգի...»[3]:

Հովհաննես Համշենցին վախճանվել է 1497 թվականին. «Զերիցս երանելին զՅովանէս բարուն արին... յայսմ ամի հանգեաւ ի Քրիստոս Յիսուս: Աւա՜ղ, աւա՜ղ»[4]:

Համշենցու հետ միասին Կապոսի վանքում բեղուն գործունեություն են ունեցել Ցրնեցին, Աստվածատուրը, Հայրապետը, Պետրոս Պիչուրը: Դարանաղցին հիշում է նաև մի անարժան ու անառակ վարդապետի՝ Որոգայթ անունով:

Համշենցու մահից հետո Կապոսի վանքը կրթական կենտրոնի դերը միաժամանակ էլ պահել է Ստեփանոս վարդապետի վանահայրության շրջանում: Այդ տարիներին արտագրվել, նկարազարդվել

---

[1] **Լ. Ս. Խաչիկյան,** *նշվ. աշխ., էջ 142:*
[2] *Նույն տեղում, էջ 232:*
[3] *Նույն տեղում, էջ 205:*
[4] *Նույն տեղում, էջ 253:*

են մի քանի ձեռագրեր, որոնց հիշատակարաններում հանդիպում ենք «մեծահռչակ վանք Կայիփոսի» գնահատականը:

Ենթադրվում է, որ վանքի առաջնորդ Ստեփանոսին հաջորդել է Մկրտիչ Պարոնտերը, որի առաջնորդության շրջանում 1534 թ. Սրապիոն Մոկացին Կապոսում ունեցել է կրթական ու գիտական գործունեություն: Այդ նույն տարիներին այնտեղ Ալեքսիանոսը գրել է մի Քարոզգիրք, իսկ Ղուկաս քարտուղարը՝ մի Շարակնոց:

1633 թ. Միքայել եպիսկոպոսը արտագրել է մի Աղոթամատույց «Ի յերկիրն Եղնկու, ի հռչակաւոր անապատս Կայիփոսու, ուր կայ սուրբ Յակոբայ կղակն և սուրբ Կարապետի ճկոյթն, ի հայրապետութեան տէր Եղիայի»[1]:

Կապոսի վանքը մեկ էլ աշխուժության շրջան է ապրել 17-րդ դարի վերջերին հայտնի Ավետիք Եվդոկացու առաջնորդության տարիներին: Ավետիքը 1684 թ. հիմնովին վերանորոգել է վանքը, ուժեղացրել միաբանությունը, զարկ տվել կրթական աշխատանքին: Այնտեղ կրթություն ստացած մարդիկ գործել են Հայաստանի տարբեր վայրերում ու քաղաքներում: Սիմեոն Լեհացին ասում է թե Արմաշում հանդիպել է Կապոսի վանքի եպիսկոպոսներից մեկին:

Վանքի մշակութային դիմագիծն սկսել է աղոտանալ 18-րդ դարի սկզբներից, հավանաբար ենիչերիական ասպատակությունների ուժեղացման և հաճախադեպ դառնալու պատճառով, իսկ 19-րդ դարի կեսերին գրեթե անչուք վիճակում է եղել: Ե. Բորեն գրում է, թե 1840-ական թվականներին այնտեղ ապրում էին երկու քահանաներ, որպես վանքի պահապան:

Ս. Ամատյանը, որ այցելել է այնտեղ 1870-ական թվականներին, այսինքն՝ Բորեից մոտ 30 տարի հետո, հուսադրող որոշ տողեր է գրել, ասելով թե վանքի խնամատարությունը հանձնված է եղել Դարանաղյաց գավառի առաջնորդական փոխանորդ Վարդան քահանայի եղբորը՝ Խաչատուր աղային:

Ինչ որ մեծահարուստ Խաչատուրի նյութական օժանդակությունը, անշուշտ, կարող էր օգտակար լինել, բայց երբեք չէր կարող վանքին կենդանություն տալ:

Այսպիսով, Երզնկայի Կապոսի վանքը 600 տարի կրթական, մշակութային կենտրոն լինելուց հետո հանգել է 19-րդ դարի վերջերին[2]:

---

[1] **Հ. Ոսկյան,** *Բարձր Հայքի վանքերը, էջ 81:*

[2] *Երզնկայի Հայոց առաջնորդ Դանիել վարդապետ Հակոբյանը որպես ականատես գրում է, թե 1901 թ. քրդերը վանքը վերածել էին «անասնոց ախոռի» («Արարատ», 1901, № 7-8, էջ 364-365):*

8. ԵՐԿԱՆԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ՎԱՆՔ

Եղել է Երզնկայի հնագույն վանքերից և գոյությունն անընդմեջ պահել է մինչև 19-րդ դարի վերջերը:

Ականատեսի վավերականությամբ այս վանքի մասին գրել են Ս. Ամատյանը, Գ. Սյուրմենյանը, Կ. Ղազանճյանը, Տ. Պալյանը և ուրիշներ, սակայն նրանցից ոչ մեկը չի կարողացել արձանագրել ուշագրավ փաստեր նրա կրթական, մատենագրական գործունեության մասին, թեև այդպիսի դեր կատարել է գեթ որոշ դարերում, ինչպես երևում է ձեռագրերում պահպանված հատուկենտ հիշատակարաններից:

Վանքի արտաքին և ներքին նկարագրի մասին որոշ տեղեկություններ հաղորդում է Տ. Պալյանը: Նրանից իմանում ենք, որ սրբբատեղին ունեցել է 15–20 սենյակներ՝ բարձրադիր և հովասուն, ունեցել է սառնորակ աղբյուրներ, մի «լուսաղբյուր, որուն ջուրեն հավատացյալք կլվացվին և կխմեն ի բժկություն»[1]: Վանքի սեփականություն է եղել 50 արտավարի չափ մշակելի հող և մի մրրգատու այգի:

Տ. Պալյանն ասում է թե մոտակայքում կան հին վանքերի, եկեղեցիների ու գերեզմանատների ավերակներ: Ըստ երևույթին բուն ս. Գևորգ վանքը եղել է դրանցից մեկնումեկի տեղում, հետագայում երկրաշարժի կամ այլ որևէ աղետի պատճառով քանդվել է և կառուցվել նորը՝ ավելի անչուք:

Ս. Ամատյանն այնտեղ տեսել է մի Հայսմավուրք, որի հիշատակարանից այն եզրակացության է հանգել, թե Երկանի ս. Գևորգ վանքը «երբեմն մեծ ու նշանավոր մենաստան է եղեր ի գավառին» և ունեցել է «բազմություն միայնակեցած, աբեղայից և վարդապետաց, որոց թիվն, պաշտոնն ու անվանք հիշատակյալ են անդ»[2]:

Դժբախտաբար նա չի արտագրել այդ արժեքավոր հիշատակարանը, անգամ չի ասում, թե որ թվին է գրված եղել:

Երկանի ս. Գևորգ վանքի վերաբերյալ հնագույն հիշատակությունները հասնում են 13-րդ դարի վերջերին և 14-րդ դարի սկզբներին, այսինքն՝ զուգադիպում են Երզնկայի մտավոր զարթոնքի շրջանին:

Այնտեղ ուսում են ստացել, գործել են մի քանի տասնյակ վարդապետներ, որոնցից քչերի անուններն են մեզ հասել: Մի ընդարձակ հիշատակարանից իմանում ենք, որ այդ վանքում գործել է մեծ և

---

[1] *«Բյուզանդիոն», 1902, № 1614:*

[2] *«Արևելյան մամուլ», 1887, էջ 435-438:*

հռչակավոր վարդապետ Կիրակոսը, այսինքն՝ Կիրակոս Երզնկացին, որը 1320-ական թվականների վերջերին է գործել այնտեղ:

Նույն վանքի միաբաններից է եղել հայտնի գրիչ Մխիթար Երզնկացին, որի թողած հիշատակարանները հետաքրքիր տեղեկություններ են պարունակում ժամանակաշրջանի, առհասարակ Երզնկայի տնտեսական և մտավոր կյանքի մասին: Նրա՝ 1327 թ. գրած մի հիշատակարանում խոսվում է Աստվածաշնչի նման ծավալուն մի ձեռագրի արտագրման մասին, 14-րդ դարի սկզբներին, ինչ որ վկայում է վանքում ոչ միայն գրչի, այլև ծաղկողի, թուղթ կոկողի և այլ մասնագետների առկայության մասին[1]:

Երկանի վանքում գործող վարդապետներից է եղել շատ անհանգիստ, թափառական կյանքի սիրահար Վրթանեսը: Նա այնտեղ է ստացել նախնական կրթությունը, դարձել աբեղա, գործել միաժամանակ, ապա մեկնել է Դերջան, սովորել Մաղաքիա վարդապետի մոտ: Հետագայում եղել է Քղիում և այլուր: Ուղիղ տասը տարի թափառելուց հետո, վերադարձել է Երկանի վանքը:

Ըստ երևույթին վերադարձել է բավականաչափ հարստացած, քանի որ կարողացել է վճարել վանքի պարտքը, կառուցել չենքի վերին և ներքին պարիսպները և այլ մասնաշենքեր:

Վրթանես վարդապետի վերոհիշյալ հիշատակարանը ցույց է տալիս, որ այդ տարիներին վանքն ունեցել է բավականաչափ հնարավորություններ գիտական և կրթական գործունեություն ծավալելու: Միաբանների թիվն էլ մեծ է եղել, որոնց ղեկավարը եղել է Վրթանեսը:

Այդ երևում է նաև Գրիգոր Դարանաղցու այն վկայությունից, թե ընդամենը մեկ ամիս այնտեղ մնալիս՝ միայն մի գավթում 24 վարդապետի գերեզման է տեսել, «ուր թեև կրակ կիյնա, սակայն գերեզմաններն անեղծ կմնան»[2]:

Պիտի ափսոսալ, որ մեզ չի հասել ոչ այդ չիրիմներում հանգստացողների անունները և ոչ էլ նրանց գործը: Բայց, դրանով հանդերձ, 24 գերեզման միայն մի գավիթում, ցույց է տալիս, թե որքան մարդիկ կապված են եղել այս վանքի հետ և իրենց կյանքը անց են կացրել այնտեղ:

Ձեռագրական այդ հավաքածոյի մի մասը եթե գոյացել է նվիրատվությունների ճանապարհով, մի բան, որ շատ ընդունված էր միջնադարյան Հայաստանում, ապա մի մասն էլ գրված կամ ստեղծված պիտի լինեին հենց այնտեղ:

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 266-273:*

[2] **Գրիգոր Դարանաղցի,** *էջ 403:*

9. ԵՐԻԶԱՅԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ

Սեպուհ լեռան լանջերին Հ. Ոսկյանը հիշում է չորս վանք՝ ս. Աստվածածին անունով: Դրանցից մեկը կոչում է ս. Աստվածածնի կամ Զարխափան, երկրորդը Երիզայի ս. Աստվածածնի վանք, երրորդը՝ Խնդրակատար ս. Աստվածածնի, վերջինը՝ Շողակաթ ս. Աստվածածնի վանք:

Նա սրանցից Զարխափանն ու Խնդրակատարը միայն հիշում-անցնում է, առանց մանրամասնություններ տալու, մի քիչ ավելի լայն ծանոթացնում է Երիզայի ս. Աստվածածինը, իսկ համեմատաբար ընդարձակ՝ Շողակաթի մասին:

Սյուրմենյանը և Ամատյանը խոսում են միայն Շողակաթի մասին, իսկ Տ. Պալյանը հիշում է Շողակաթը և Զարխափանը:

Քրիստոնեության արշալույսին Եկեղյաց գավառում Աստվածածնի անունով մի քանի վանքեր են եղել:

Սակայն դարերի ընթացքում վերոհիշյալ չորս Աստվածածիններից երկուսի տիրակալությունը աստիճանաբար նվազել է: Նրանց անունը կրող վանքերը կամ ավերվել ու քանդվել են բնական աղետների ու բարբարոսական հարձակումների հետևանքով, կամ էլ մոտակա մյուս վանքերը մրցելով դրանց հետ՝ պարզապես թուլացրել են և մատնել անգործության: Հնարավոր է նաև, որ վերոհիշյալ Զարխափան և Խնդրակատար վանքերն էլ ունեցել են մշակութային գործունեություն, բայց փաստեր չեն հասել մեզ:

Այսպես թե այնպես մենք հնարավորություն ունենք խոսելու միայն Երիզայի ս. Աստվածածնի և Շողակաթ ս. Աստվածածնի վանքերի մասին:

Երիզայի ս. Աստվածածնի վանքի կառուցման ճիշտ ժամանակը հայտնի չէ: Ենթադրվում է, թե նրա հնությունը նույնպես հասնում է մինչև հեթանոսական դարերը: Ըստ մի Հայսմավուրքի՝ վանքը կառուցվել է «զտեղի կոոցն Անահտա»[1], թե կառուցողն էլ եղել է հենց Գրիգոր Լուսավորիչը:

Հնարավոր է, որ այս հավաստիացումը ստեղծված լինի պարզապես վանքը հին ներկայացնելու միտումով, բայց որ եղել է Երգնկայի վաղ շրջանի վանքերից, կասկածից վեր է:

Թե քրիստոնեության արշալույսից մինչև 13-րդ դարը ինչ գործունեություն է ունեցել այդ վանքը, հայտնի չէ: Հնագույն վկայությունը վերաբերում է 1272 թվականին, որ ինքնին ցույց է տալիս

[1] **Հ. Ոսկյան,** *Բարձր Հայքի վանքերը, էջ 60, ծան. 2:*

պատկառելի տարիք: Այդ տարում գրված մի հիշատակարանից իմանում ենք, որ ոմն Գրիգոր գրիչ արտագրել է մի Ավետարան: Նա հաղորդում է նաև առաջին առաջնորդի անունը, գրելով. «յառաջնորդութեան և ի հայրութեան Գորգա»[1]:

Դրանից մի քանի տարի անց 1295 թ. Բանարգեսն օրինակել է մի Մանրուսմունք «Ի յանապատիս Երեզ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և Սրբոյն Գրիգորի Հայաստանեայց Լուսաւորչին չարչարանաց տեղիս»[2]:

1431 թ. Երիզայի ս. Աստուածածին վանքում գրվել է մի Ոսկեփորիկ, որի հիշատակարանից պարզվում է, որ 15-րդ դարի առաջին կեսում հիշյալ վանքի վանահայրն է եղել Ստեփանոս վարդապետը և ունեցել է միաբաններ, որն ինքնին վկայում է վանքի մտավոր կենտրոն լինելու մասին[3]:

Գրիգոր Օչականցին, որ այցելել է այնտեղ ավելի ուշ, վկայում է, որ տաճարի ներսում, արևելյան կողմը, որմերից մեկի վրա եղել է այսպիսի մակագրություն. «Արփիազգեստ ճառագայթեալ, այգ արեգական չողչողեալ»:

Այս է մեր ամբողջ իմացածը վերոհիշյալ վանքի մասին: Պետք է ենթադրել, որ մասնավորապես վերջին դարերում եղել է միայն ուխտագնացությունների վայր, գուցե և կատարել է կրթական որոշ աշխատանք:

10. ՇՈՂԱԿԱԹ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

Շողակաթ ս. Աստվածածին վանքի մասին անհամեմատ ավելի չատ վկայություններ են հասել:

Ս. Ամատյանը, որ վանքը տեսել է ավելի քան հարյուր տարի առաջ, 1870-ական թվականների վերջերին, տալիս է հետևյալ տեղեկությունները: Վանքը գտնվում է Երզնկայի Գոհանամ լեռան ստորին լանջերում, քաղաքի արևմտյան կողմը, նրանից երկու ժամ հեռավորության վրա, գեղատեսիլ վայրում: Տեղանքը հարուստ է առատ բուսականությամբ, սառն աղբյուրներով, առավելություններ, որոնք մեծ թվով ուխտավորների և այցելուների են գրավել այդ վայրը և նրանց պարգևել կատարյալ վայելք:

---

[1] **Հ. Ոսկյան,** *Բարձր Հայքի վանքերը, էջ 60:*

[2] *Նույն տեղում:*

[3] **Լ. Ս. Խաչիկյան,** *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, էջ 408:*

Դրան մասամբ էլ նպաստել է քաղաքին մոտիկ լինելը, ճանապարհների համեմատաբար բարեկարգ վիճակը: Շրջապատում ամեն կողմ ընկած են եղել փարթամ մարգագետիններ, այգիներ, պարտեզներ, ծառաստաններ, դալարագեղ բլուրներ, բուսառատ ձորեր: Թթենիների երկու այգի վանքը եղերել են արևմուտքից և արևելքից: Ունեցել է ծիրանի այգի, մեծ ու փոքր երկու ջրավազաններ, շրջապատված վարսագեղ ուռենիներով, սլացիկ բարդիներով:

Այս բոլորը դրախտային տեսք են տվել վանքին:

Գ. Սյուրմենյանն ասում է թե այս չքնաղ անկյունը ավազակային հարձակումներից համեմատաբար ազատ է մնացել շնորհիվ այն բանի, որ քրդական և թուրքական գյուղերը հեռու են եղել, Ամատյանը, սակայն ցույց է տալիս որ շրջապատում եղել են թուրքական և քրդական տասնյակ գյուղեր: Եվ որովհետև նրա նկարագրությունը մեր պատմաբաններին հարուստ նյութ կարող է տալ ոչ միայն վանքի տեղագրության, այլև զուտ հայկական այդ տարածքի արդեն ազգային դիմագիծը կորցրած, թուրքաբնակ ու քրդաբնակ դարձած լինելու մասին, ավելորդ չենք համարում մեջ բերել ընդարձակ մի հատված, մանավանդ որ մեր պարբերական մամուլի էջերում մնացած այդ հոդվածները քչերին է մատչելի մեր օրերում, և անգամ չեն օգտագործվել Գ. Սյուրմենյանի նման բարեխիղճ մի հեղինակի կողմից.

«Դեպի հարավ, ի սպառված դաշտին և ի ստորոտ բազմակոհակ լերին, որո առաջին աստիճանաց վերա կեցած կդիտեմ, մի ժամու տարածությամբ կտեսնեմ Սեյյուքե թուրքաբնակ գյուղը: ... Ավելի հեռի, դեպի հարավ և սակավ ինչ յարևելս, քանզի դաշտին շրջագիծը բոլորակ է աստ, դարձյալ ի ստորև նույն լեռնակոհակաց, կա Էգրեկ քրդաբնակ գյուղը, և անդրագույնս ևս, միշտ հարավասառն արևելյան ուղղությամբ, մերձ ի կիրճն որ կառաջնորդե ի Դարանաղյաց գավառն, կա Բրաստիկ՝ դարձյալ քրդաբնակ գյուղը: ... Անմիջապես առջիս, եթե յարևելս կույս դարձած եմ, ի ստորոտ բլրույն, կա Շոխա թուրքաբնակ գյուղը՝ ի մուտս հեղեղատին, որ ծագում կառնու Սեպհո առատաջուր ստինքներեն, և քերելով Շողակաթու վանուց անդաստանն ու պարտեզներն, կիջնե ի դաշտ: Ավելի հեռուն, դարձյալ յարևելս, կա թուրքաբնակ Թիլ գյուղը՝ առ ափն գետակին, որ գարդիս կկոչվի Թիլու կամ Զարդախլը գետ (Գայլ գետ՝ ի հնումն): ... Կանգ կառնում անդ և կդիտեմ դաշտը, որ առջիս է դեպի հյուսիս. աջ կողմս՝ դեպի արևելս՝ ի ստորոտ միշտ միևնույն լերին, կա Խոզնսի՝ ոչ հեռի ի Թիլե, և նույնպես յեզր նախահիշյալ գետակին, գյուղ թուրքաբնակ, որու հայ բնակչությունն և ս. Աստվածածին ու ս. Կարապետ եկե-

ղեցիքն կհիշվին ի ՄՂԹ (1550) թվականին՝ ի ձեռագիր Գանձարանի՝ որ ի վանս Շողակաթու. ուղղակի դեպի հյուսիս՝ դեմ հանդիման կտեսնեմ ի սպառված դաշտին՝ ջուխտակ ծառազարդ ու գվարճալի գյուղեր՝ Սլպուս ու Խաբ, երկոքին թրքաբնակ և ջրաշատ, բերրի և հուռթի անդաստանով, մերձ ի մուտս մեծագույն ձորույն կամ հեղեղատին, զոր կարձակե Գոհանամ յարևելս կույս... Ավելի ցածագույն դրիվք կա Զերմե թուրքաբնակ գյուղը, Զրմես ավան՝ հիշատակյալն ի Խորենացվույն, ուր Տիրան Ա արքա ուներ ամարանոց: Այս գյուղը կգտնվի Թիլու գետին ու Գոհանամի կողերուն միջև. ունի ակունք և ավազան համբավյալ առատության ու սառնության համար»[1]:

Այս նկարագրությունից իմանում ենք, որ Հայաստանի տարածքի այն մասում, որտեղ երկու հազար տարի առաջ բացառապես հայեր են ապրել, և տեղանունների մեծ մասը հիշատակված են Մովսես Խորենացու կամ այլ մատենագիրների մոտ, իսկ մի մասն էլ հայերեն բառերի աղավաղումներից են ստացվել, ինչպես Ագարակ – Էգրեկ, 19-րդ դարի կեսերին արդեն դարձել էին զուտ թուրքաբնակ կամ քրդաբնակ և Շողակաթ ս. Աստվածածին գեղեցիկ վանքը հայկական մի կղզյակ է եղել մոլեռանդ չրջապատում:

Ամատյանն ասում է թե ընդամենը քառորդ դար առաջ վերոհիշյալ վայրերը բնակեցված են եղել հայերով և այժմ էլ կան եկեղեցիների ու վանքերի մնացորդներ թուրքական և քրդական վերոհիշյալ գյուղերում, վերածված հարդանոցների, մարագների: Փոխվել են, աղավաղվել անունները Ագարակը դարձել է Էգրեկ, Սուրբլուսը Սլբուս, Շողակաթը՝ Շոխա և այլն:

Ամատյանը ոգեկոչում է արդեն անհայտացած մի ամբողջ մշակույթ, որի հետքերը գեթ այդ տարիներին տեսանելի են եղել: Հիմա այդ մնացորդներն էլ չկան:

Շողակաթ ս. Աստվածածին վանքի կառուցման ժամանակի մասին որոշակի տվյալ չկա: Ինչպես մյուս, սրա մասին նույնպես հյուսվել են ավանդություններ, որոնցից մեկի համաձայն՝ կառուցվել է Թադեոս Առաքյալի, վերանորոգվել Ներսես Մեծի կողմից: Այն, որ վանքը կառուցվել է քրիստոնեության առաջին դարերում, գուցե և հեթանոսական տաճարների տեղում, անհավանական չէ: Այդ է վկայում չրջապատի վայրերի անունների հիշատակումը Խորենացու, Ագաթանգեղոսի և այլ մատենագիրների կողմից, Տիրան Թագավորի ամառանոցն այնտեղ լինելը: Հենց Շողակաթ անունն էլ հուշում է այդ բանը:

---

[1] *«Արևելյան մամուլ», 1889, սեպտեմբեր, էջ 171-173:*

Այսպես թե այնպես՝ մյուս վանքերի նման, Շողակաթա վանքն էլ իր ծաղկման շրջանն ապրել է 12–13-րդ դարերում, Երզնկայի մտավոր վերելքի շրջանում: Այդ տարիներից գրեթե հիշատակություն չունենք: Կան մեկ-երկու մանր փաստեր, որոնք կարող են ենթադրել տալ, թե տվյալ ձեռագրերը գրվել են Շողակաթ վանքում, թեև կարող են գրված լինել նաև մյուս Աստվածածին վանքերից մեկնումեկում:

Դրա համար զանց ենք առնում դրանք հիշել այստեղ:

Վավերականն այն է, որ վանքը հիմնովին վերանորոգվել է 1684 թվականին Ավետիք Եվդոկացու ջանքերով, որը եղել է առաջնորդը և չինարարական մեծ աշխատանքներ է կատարել:

Ենթադրվում է թե դրանից հետո, մասնավորապես 18-րդ դարում վանքը ապրել է ծաղկման կարճատև մի շրջան, Առաքել Ակնեցու առաջնորդության տարիներին: Հովհաննես Սեբաստացին ասում է, թե Առաքել Ակնեցին այնքան սիրված է եղել Երզնկայում, որ երբ հրավեր է ստացել պաշտոնավարելու Սեբաստիայում, դժվարությամբ է համաձայնվել գնալ: Եվ երբ ի վերջո համաձայնվել է, Շողա վանքից բաժանվել է հուզումով. վանքի ամբողջ հարստությունը հանձնելով իրեն փոխարինողներին ու սիրելի մի դպիրի հետ 1722 թ. մեկնել է Սեբաստիա: Սեբաստացիներն էլ այնքան անհամբերությամբ են սպասելիս եղել նրան, որ լսելով գալը՝ «գրոհ տուեալ միմեանց եկին ի տեսութիւն նորեկ առաջնորդին և մեծաւ սիրով ընկալան զնա իբրև զառաքեալ Աստուծոյ»[1]:

Շողա վանքի մասին հիացմունքով է խոսում նաև Գրիգոր Դարանաղցին:

19-րդ դարի սկզբներից ըստ երևույթին վանքը հանձնվել է աշխարհական խնամակալների, որոնցից մեզ հայտնի է Տեր-Ստեփանյանների գերդաստանի խնամակալության շրջանը: Այդ մասին Ամատյանը գրում է. «Շողակաթու վանուց աշխարհական տնտեսներու կարգին մեջ հիշատակության արժանի է հանգուցյալ Նշան էֆենդի Տեր-Ստեփանյան, որ իբրև ուղիղ ու պարկեշտ մշակ՝ հավատարմությամբ ու ժրաջանությամբ ծառայած է մենաստանին: ... Յուր որդին Սարգիս էֆենդի Տեր-Ստեփանյան ոչ միայն ժառանգած է հորը բարեմասնությունքն, այլ և գերազանցած է զայն և այսօր խիստ պատվավոր դիրք մը ունի առևտրական ասպարեզին մեջ: ... Այս վանուց վերա խնամք ունեցող հոգեբարձություններեն ալ կարող եմ հիշել Մ. Միքայելյան, Մ. Ավետիս և Առաքել Դանիելյան էֆենդիներու և ընկերաց հոգաբարձությունն, որու օրով վանքն ոչ

[1] **Հովհաննես Սեբաստացի,** *Պատմութիւն Սեբաստիոյ, Երևան, 1974, էջ 81:*

միայն քայքայման վտանգեն ազատած է, այլև մեծ պայծառության ու բարեկարգության հասած»[1]:

Ըստ երևույթին այդ խնամակալությունն ավելի չի եղել, քան վանքը փլուզումից ու վերջնական թալանից զերծ պահելը գեթ միառժամանակ:

11. ՍՈՒՐԲ ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՆՔ

Այս վանքի մասին ունենք բավականաչափ տվյալներ: Այնտեղ գրված տասնյակ ձեռագրերի հասնելը մինչև մեր օրերը, վանքին ու նրա միաբաններին տրված բարձր գնահատականները, թե վանքը եղել է «պատեալ հզոր պարսպով», տասնյակ գրիչների, մատենագիրների կրթություն ստանալն այնտեղ, այս բոլորը մեզ բերում են այն համոզման, որ ս. Կիրակոսի վանքը անցյալում կատարել է գրեթե այնպիսի դեր, ինչպիսին կատարել են Կապոսի և մի քանի այլ վանքեր:

Տեղագրության, աշխարհագրական դիրքի մասին Ս. Ամատյանը գրում է. «Դաշտին հարավակողմը, Մնձուրի մեկ օղակը կազմող, ուրույն ու անջատ բարձրացող հպարտ Ղազան-Ղայա լեռին ստորոտը և սորա ողնաշարներեն ձևացյալ խորախիտ ու անձուկ ձորի մը մեջ, քաղաքեն մեկ ժամ հեռավորությամբ և գրեթե ի հանդիպս նորա, պուրակներով շրջապատյալ դիրք մը ունի այս մենաստանն, որ թեև ճոխ ու շեն չէ մյուսոց նման, այլ մերձավորության պատճառով ունի հաճախորդաց ու այցելուաց բազմություն: ... Ս. Կիրակոսի ուխտավորք ամրան վերջերին քաղաքեն ուղիղ գծով մը կերթևեկեին անդ Եփրատի հունեն անցնելով, բայց ուրիշ ժամանակներ ստիպյալ են Եփրատի միակ կամրջեն անցնելով երկար շրջան մը ընելու, որ մեկ ժամ ավելի կերկարցնե ուղույն տևողությունը: Վանքը, ինչպես ըսինք, անձուկ ու անդնդախոր ձորի մը կողքին վերա գտնվելուն, երեք կողմեն տեսարան չունի, այլ միայն դեպի հյուսիս կդիտե քաղաքին և այս ուղղությամբ գտնված բնակավայրից վերա, որու հորիզոնը կգծե բարձրաբերձն Սրբրքոր (ըստ բազմաց՝ Ս. Գրիգոր), բքաչատ ու վտանգավոր գագաթը՝ ընդ մեջ Եկեղյաց ու Քելքիտա, այլ բանուկ անցք ճանապարհին Տրապիզոնի: Վանքը չունի պարիսպ, կանոնավոր չինությունք բնակության, ճոխություն գույից ու կալվածոց, այլ խղճուկ տաճար մը, երկու հովանոց և մի քանի փոքր սենյակներ՝ ամրան հարմար: Լուսաղբյուր ջուրն՝ թեև կարի ցուրտ, այլ

[1] «Արևելյան մամուլ», 1888, փետրվար, էջ 53:

աղտաղտին, իսկ մածունն խիստ համբավյալ է՝ չրջակա պարարտ արոտավայրից պատճառավ: Վանուց երեք նորաշեն սենյակք կառուցյալ են արդյամբ ու ծախիվք Մ. Հովհաննես աղայի Դանիելյան, որու առատ ձեռնտվության ու բարեպաշտության գովելի հիշատակներն կտեսնվին Եկեղյաց գավառի կրոնական ու կրթական շատ մը հաստատության մեջ: Այս մենաստանին խնամքը հանձնված է քաղաքին արհեստավորներեն բաղկացյալ հոգաբարձության մը, որ փույթ կտանի շենցնել ու զարգացնել վանքն տակավ»[1]:

Ենթադրվում է թե ս. Կիրակոսի վանքը հիմնադրվել է 12-րդ կամ 13-րդ դարերում: Այսպես թե այնպես՝ 12-րդ դարից մինչև մեր ժամանակները գործել է անխափան, բազմաթիվ մարդկանց տվել կըրթություն, այնտեղ գրվել կամ արտագրվել են մեծ քանակությամբ ձեռագրեր:

Ոմն Պետրոս քահանա 1289 թ. Եկեղյաց գավառում օրինակել է մի Ավետարան, որը 1298 թ. նվիրել է Ս. Կիրակոս վանքին: Վանահայր Ստեփան վարդապետն այդ առիթով բարերարի համար պատարագ է մատուցել:

1304 թվականին այնտեղ գրվել է մի այլ Ավետարան, որի գրիչն է Ավետիս քահանան: Մի Ավետարան էլ գրվել է 1316 թ., որի հիշատակարանում կարդում ենք «... Գրեցաւ տառս Աստուածային... Աւետարանս... ի վանս կոչեցեալ Ս. Կիրակոսի և մաւր նորին Յուղիդայ: Ի հայրապետութեան տեառն Լեւոնի... Աղաչեմ խնամով և զգուշութեամբ պահել, և զստացողք սորա զՄխիթար քահանայ և զորդի սորին զՍիմեոն քահանայ, և զհարազատ եղբարքս զՅովհաննէս և զԳրիգորիս և զՏաւնիկս, այլև զդեռաբողբոջ մանկունս զԱհարոն դպիր և զՄովսէս, և զազգայինսն մեր զամենայնսն որ այժմս կան և զգնացեալսն առ Քրիստոս՝ յիշել նաև զեղկելի ոգիս զհետնեալս զՆերսէս գրագիրս, որ բազում աշխատանաւք և ջանիւք գրեցի զսա ի ստոյգ և յընտիր աւրինակէ որ ի Կիլիկիա յերկիրն, Արքայեղբայր անուն կոչեցեալ Յովհանէս եպիսկոպոս, որ իւրովք ձեռաւք էր գրեալ լաւ և ընտիր աւրինակէ...»[2]:

Դրանից յոթը տարի անց՝ 1332 թ. գրված մի Ավետարանի հիշատակարանում ս. Կիրակոսի վանքը կոչվում է «Հռչակավոր»:

Ոմն Ներսես Կելընցի նույն վանքում 1339 թ. գրել է մի Ավետարան:

---

[1] «Արևելյան մամուլ», 1888, փետրվար, էջ 55-57:

[2] **Գ. Սրվանձտյանց,** Թորոս աղբար, մասն Բ, էջ 295:

1351 թ. Սիմեոն քահանան ս. Կիրակոսի վանքում գրել է մի Ավետարան, 1354 թ. ավարտել է մի ժողովածու, ինչպես իմանում ենք Հ. Տաչյանի «Ցուցակ ձեռագրացից»: Եվ այսպես՝ հետագա տարիներին գրվել են բազմաթիվ ձեռագրեր:

Ս. Կիրակոսի վանքը մերթ ապրել է բուռն ծաղկման, մերթ՝ անկման շրջաններ, սարսափի ու անդորր տարիներ, ենթարկվել կողոպուտի ու թալանի, բայց ոտքի կանգնել:

Եթե այսքան ձեռագրեր հասել են մեզ, ապա քանի տասնյակ ձեռագրեր կամ ոչնչացվել են, կամ անհետ կորել՝ դարերի հոլովույթին չդիմանալով: Բայց բերված փաստերն էլ լիովին իրավունք են տալիս մեզ ասելու, թե մի քանի հարյուր տարի շարունակ Կիրակոսի վանքը եղել է մշակութային խոշոր կենտրոն:

Մեզ հասել են վանքի եռանդուն վանահայրերից մի քանիսի անունները, ինչպես երկու Ստեփաննոսներ, երկու Հովհաննեսներ, մի Մարտիրոս և այլն, որոնք ղեկավարել են վանքը տարբեր տարիներ և հիշատակվում են որպես նշանավոր հոգևորականներ:

Հասել են նաև ս. Կիրակոսի վանքի միաբանության անդամներից մոտ քսանի անունները՝ Մխիթար, Դավիթ, Կարապետ, Կոստանդին, Հովհաննես, Ստեփան, Մարտիրոս, Վահան և այլն:

1446 թ. ս. Կիրակոսի վանքում գրված Հայսմավուրքը պարունակում է ընդարձակ մի հիշատակարան, որը ուշագրավ տեղեկություններ է տալիս թե՛ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների, թե՛ վանքի աշխատանքների մասին: Նա մանրամասն թվարկում է, թե որ գրիչը քանի տետր է արտագրել. «Դարձեալ, աղաչեմ յիշել ի Տէր զգրողք գրոցս զՄինաս սարկաւագն, որ զառաջքն գրեաց ԺԶ տետր, և զԵրեմիայ աբեղայն՝ որ Ժ տետր գրեաց և զտէր Խաչատուր վարպետն, որ Ը տետր գրեաց, և զՅովհաննէս վարդապետն որ Ա տետր գրեաց և զիւր աշակերտքն՝ զԱստուածատուր աբեղայն, որ Զ տետր գրեաց, և զԱւետիք աբեղայն՝ որ Դ տետր գրեաց: Եւ ես՝ բազմամեղ և անիմաստ Սարգիս, որ զԴ տետրակ ի վերջք գրոցս գրեցի՝ և զցանկն ի յառաջքն, նաև զՄարկոս աբեղայն՝ որ Դ տետր գրեաց և Ներսէս աբեղայն, որ Ա տետր գրեաց»[1]:

Մաշտոցի անվան Մատենադարանում կամ այլ վայրերի մատենադարաններում կան ձեռագրեր, որոնց արտագրման վրա աշխատել են բազմաթիվ մարդիկ. մի բան, որ հեշտությամբ նկատվում է ձեռագրերի տարբերությամբ, սակայն հաճախ նրանցից մի քանիսն են

---

[1] **Լ. Ս. Խաչիկյան,** *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, էջ 601:*

հիշատակվում հիշատակարաններում, իսկ այստեղ բերվել են բոլորի անունները, այն էլ թե յուրաքանչյուրը քանի տետր, այսինքն՝ մեր այժմյան լեզվով ասած՝ քանի մամուլ է արտագրել:

Վերջին մասերն արտագրող «անիմաստ Սարգիսը բացատրում է, թե» ինչու են այդքան մարդիկ աշխատել հիշյալ Հայսմավուրքի արտագրման վրա: Դրա հիմնական պատճառը համարում է ժամանակի սղությունը, այսինքն՝ թե քիչ ժամանակ է տրվել իրենց, քանի որ նույն ձեռագիրը ուրիշների կողմից էլ արտագրվելու էր: Դրա համար էլ, ասում է, ձեռագիրը բաժանել են մասերի «հատեալ եղև» և բաժանել իրար մեջ:

Այստեղ մեզ հետաքրքրողն այն է, որ ս. Կիրակոսի վանքն ունեցել է այդքան գրիչներ: Անշուշտ նրանցից մի քանիսը կարող էին միաբանության անդամ չլինել, սակայն մեծ մասը եղել է: Ղ. Փիրղալեմյանը, «Նոտարքում» տեղ տալով այդ հիշատակարանին, անդրադառնում է արտագրողներից Ավետիք և Աստուր աբեղաներին, Հովհաննես վարդապետին և ասում, թե նրանք երեքն էլ ս. Կիրակոսի միաբաններից են եղել: Հետո՝ նույն ժամանակամիջոցում հնարավոր է, որ մի քանի գրիչներ էլ զբաղված լինեին այլ ձեռագրեր արտագրելով:

1480-ական թվականներին այս վանքում հիշատակվում է հայտնի Մարտիրոս Երզնկացին:

Վանքի հետագա մեկ դարի պատմության վերաբերյալ քիչ բան գիտենք, որոշակի է սակայն, որ անխափան գործել է: Դա երևում է մի քանի ձեռագրերի հիշատակարաններից:

«Սուրբ Կիրակոսի վանքը,- գրում է ուսումնասիրողներից մեկը,- մինչև վերջերս իր գոյությունը պահած էր, ... Հոն կնստեր սովորաբար Երզընկայի առաջնորդը: Սիրված ուխտատեղի էր: Ուներ ձեռագիրներ (ապա գողցված»[1]:

Երզնկայի առաջնորդի այստեղ նստելը ցույց է տալիս վանքի կշիռը, իսկ ինչ վերաբերում է ձեռագրերի գողցվելուն ապա դա կատարվել է 1890-ական թվականներին՝ անարժան, արծաթամոլ հոգևորականների ձեռքով: Այդ մասին գրվել է պոլսահայ մամուլում և մեծ աղմուկ բարձրացել, սակայն ձեռագրերը արդեն հասած են եղել Եվրոպա ... Վաճառված այդ ձեռագրերի մեջ է եղել նաև Կոթեր գյուղի հայտնի Հայսմավուրքը, որի հնությունը, ըստ ականատեսների վկայության, հասնում էր մինչև Բյուզանդական տիրապետության շրջանը: Վաճառվել է շատ էժան գնով և տարվել Անգլիա:

---

[1] **Հ. Ոսկյան,** *Բարձր Հայքի վանքերը, էջ 89:*

12. ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍԻ ՎԱՆՔ

Ս. Թադեոսի վանքը նույնպես դասվում է Երզնկայի հնագույն վանքերի շարքը, թեև նրա մասին մեզ հասած փաստերը շատ սահմանափակ են: Ո՛չ կառուցման ժամանակն է հայտնի, ո՛չ էլ նրա գրական-մշակութային գործունեությունը: Ըստ երևույթին՝ նրան հնություն տալու միտումով՝ կապել են Թադեոս առաքյալի անվան հետ և հիմնականում էլ ծառայել է ուխտագնացության:

Վանքը գտնվել է Երզնկայի հարավ-արևելյան կողմում, Բոլոմեր Տանձիկ կամ Տածիկ գյուղի մոտ:

Այն փաստը, որ վանքը հնագույն դարերից եկել հասել է մինչև մեր օրերը, ինքնին ցույց է տալիս, որ երզնկացիների համար սիրված ուխտատեղի է եղել: Եվ արդեն այս վանքի մասին խոսողները շատ ավելի կանգ են առնում ուխտագնացությունների վրա, նկարագրում թե ինչպես հարյուրավոր ընտանիքներ՝ քարավան կազմած ուխտի են գնացել ս. Թադեոսի վանքը և վայելել նրա առողջարար կլիման, քան խոսում նրա մշակութային դերի մասին:

Անշուշտ կրթական գործունեություն էլ ունեցած պիտի լինի, սակայն այնտեղ ուսում ստացած նշանավոր մարդկանց անունների չենք հանդիպում:

18-րդ դարի վերջերին վանքի մատակարարն է եղել Տեր Հարությունն քահանան, կենսուրախ, կատակասեր, սրամիտ մի հոգևորական, որ իմացել է ուխտավորներին ամեն կերպ սիրաշահելու գաղտնիքը:

19-րդ դարի կեսերին վանքն ամայացել է: 1895 թ. ոմն Վարդան վարդապետ ցանկացել է վերանորոգել, գործի դնել, սակայն նույն տարում սկսած հայկական ջարդերի օրերին կառավարական զորքերը կողոպտել են ս. Թադեոսի վանքը, վերջնականապես ամայացրել, սակայն ուխտավորները շարունակել են ամեն տարի գնալ այնտեղ[1]:

13. ՍԲՐԲԽԼԸ ՍՈՒՐԲ ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔ

Այս վանքի անցյալի մասին քիչ բան գիտենք, սակայն վերջին դարերի վերաբերյալ բավականաչափ տվյալներ հասել են: Ծանոթացնենք այն փաստերը, որ գրի է առել Կ. Պոլսի պատրիարքներից Զավեն Եղիայանը և ուղարկել է Գ. Սյուրմենյանին:

---

[1] *«Հանդես ամսօրյա», 1949, հունվար-մարտ, էջ 26:*

Սբրբխլը ս. Թորոսի վանքը գտնվել է Երզնկայի դաշտը Դերջանից բաժանող լեռների լանջերին: Ըստ ավանդության՝ հիմնադրվել է 4-րդ դարում, ի հիշատակ Հայաստանի Սալահունյաց գավառի իշխան Սուրենի որդու՝ Թորոսի, որը 3-րդ դարի վերջերին քրիստոնեությունն ընդունելու համար նահատակվել է հոր կողմից: Վանքի մեջ եղել են սրբացած այդ Թորոսի և նրան քրիստոնյա դարձնող Դասիոս քահանայի գերեզմանները[1]:

Վանքը վարչականորեն ընկել է Երզնկայի սանջակի մեջ, բայց սահմանակից լինելով Դերջանին, ավելի շատ ծառայել է դերջանցիներին:

Զավեն Եղիայանը ս. Թորոսի վանքը այցելել է 1880-ական թվականներին: Նա գրում է. «Երբ ես այդ վանքը այցելեցի, տաճարը չեն էր, որուն շուրջը կգտնվեին քանի մը տուներ, ուր կբնակեին 9 տուն հայեր, ընդամենը 76 անձ: Ասոնք ամենը մեկ գերդաստանի կվերաբերեին, որոնց նախահայրը հոն հաստատված էր ԺԸ դարու կեսին ատենները: Այդ ժամանակ երկրաշարժե և ասպատակություններե վանքը ավերակ դարձած է եղեր և շրջակա հայությունը ամբողջովին ցրված, իր գյուղերն ու կալվածները քյուրտերուն թողելով: Երզնկայի դաշտեն Մեղուցիկ գյուղեն հայ մը, Ասլան օղլու գերդաստանեն, իր ընտանիքով հոն կերթա կհաստատվի, իր վարպետ եղբոր հետ: Ասոնք ս. Թորոսի մասունքը քյուրտ պեկի մը քովեն կազատեն դրամական վարձատրության մը փոխարեն և վանքը մասամբ կշենցընեն»[2]:

Այդ մարդը եղել է Տեր Վահանը, հայտնի՝ առասպելական ուժով: Նրա ընտանիքն է, որ հետզհետե ճյուղավորվել է, մեծացել ապրուստի հիմնական միջոց ունենալով վանքի կալվածների, պարտեզների եկամուտը և ուխտավորների նվիրատվությունները:

Վանքի ուխտի օրը եղել է զատկի հաջորդ կիրակի օրը, երբ շրջակա տասնյակ գյուղերից, մեծ մասամբ Դերջանից, սայլերով, գրաստներով հոծ բազմություն հավաքվել է այնտեղ, զվարճացել: Այդ օրը վանքի ավանդական ձողը (սբրբխ) հանել են, տնկել բակում: Վանականներից մեկը մագլցել է նրա վրա, զանազան խաղեր ցուցադրել: Դրանից էլ առաջացել է վանքի անունը՝ Սբրբխլը Թորոս: Բայց թե երբվանից է եղել այդ սովորությունը, ինչ է նշանակել սբրբխի արարողությունը, ոչ ոք չի հիշատակել:

---

[1] **Գ. Տեր-Վարդանյան,** *Երզնկա–Կամախ գավառաբարբառը և ազգագրական հուշեր, Երևան, 1968, էջ 162:*

[2] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 100-101:*

Հիշյալ վերանորոգությունից հետո վանքը միշտ ունեցել է իր վանահայրը: Նախ այդ պաշտոնը վարել է Մարկոս վարդապետը, որն իր կրթությունն ստացել է Երզնկայի վանքերից մեկում և եղել է շատ գրասեր, փորձել է վանքը դարձնել կրթական կենտրոն, սակայն շրջապատի մուսուլման մոլեռանդ տարրը հնարավորություն չի տվել իրագործելու այդ ծրագիրը:

Մարկոսը մեռել է 1855 թվականին, վանքը ժառանգ թողնելով Տեր Սարգիսին: Սա երկար ժամանակ վարել է վանահայրության պաշտոնը, վախճանվել 1878 թվականին: Նրան էլ հաջորդել է Տեր Պողոսը, վերջինիս մահից հետո՝ 1889 թ.՝ Տեր Վահանը:

Սերնդեսերունդ անցած այս ժառանգության սկիզբը համարվում է 1814 թվականը, մի բան, որ հաստատվում է վերոհիշյալ Մարկոս վարդապետի մի կոնդակով, գրված նույն տարում:

Վանքի միակ արձանագրությունը վերաբերվել է 17-րդ դարին: Դա էլ հիմք է տալիս հավատալու, որ ջալալիների ասպատակությունների ժամանակ, ինչպես ենթադրում են որոշ ուսումնասիրողներ, ս. Թորոսի վանքը հիմնահատակ կործանվել է, հետագայում վերանորոգվել:

Ս. Թորոսցի Սուքիասը 1925 թ. գրի առած հուշերում գրում է, թե վանքի բնակչությունը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին բաղկացած է եղել 85 անձից՝ այր, կին, երեխա: Պահել են մի քուրդ հովիվ, որը լավ իմացել է հայերեն: Իրենք հիմնականում զբաղվել են անասնապահությամբ և մեղվապահությամբ: Ունեցել են պտղատու այգի, որն սպասարկել է թե բնակչությանը և թե ուխտավորներին:

«Վանքը ամբողջ պարսպապատ էր,- գրում է Սուքիասը,- միայն մի երկաթե դուռ ուներ, որը երեկոները կփակեին և ամբողջ բնակչությունը կմնար պարիսպն ներս»:

Սուքիասի հուշերում կա շատ ուշագրավ մի փաստ: Ասելով թե ս. Թորոս ուխտի են եկել անգամ Կեսարիայից և այլ հեռավոր վայրերից, հիշատակում է Թեքիրդաղը, իսկ այդ քաղաքը՝ Ռոդոստոն, գտնվում է Կ. Պոլսի մոտակայքում: Որտեղից որտեղ ռոդոստոցիներ են եկել և ինչո՞ւ: Կա պատմական վկայություն, որ Ռոդոստոյի հայերի մի մասը ջալալիների ասպատակությունների շրջանում գաղթել է Երզնկայից, այս մասին հաճախ էր խոսում նաև մեր խընկելի ուսուցչապետը՝ Հր. Առաքյանը, որի ծնողները ռոդոստոցի են եղել: Նա կատակով իրեն համարում էր երզնկացի:

Այս սքանչելի վանքն էլ արժանացել է նույն ողբերգական ճակատագրին, ինչ մյուսները: Մեծ եղեռնի օրերին Թուրքերը թալանել, ամայացրել են սրբատեղին: Ռուսական գրավումից հետո սարերն ապաստանած Թորոսցիները վերադարձել են, փորձել վերականգնել վանքը, սակայն մեկկակես տարի անց՝ ռուսական զորքի նահանջի օրերին՝ Թողել են ամեն ինչ ու փախել դեպի ռուսական հողը:

Շրջակա գյուղերից մեկի չեյխը եկել քանդել է չինությունը, փայտերը տեղափոխել իր գյուղը, գրավել է նաև վանքի հողերը, անտառները:

«Այսօր հողակույտի մը վերածված է հարյուրավոր տարիներու ժրաջան աշխատանքով պահված այդ սրբավայրը,- գրում է Թորոսցի Սուքիասը՝ վերջին ներկայացուցիչը հնամենի մի փառքի:

14. ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՎԱՆՔ

Գտնվում է Երզնկայի արևելյան կողմում, Քեչիչ և Սարը-Ղայա լեռների ստորոտում, ոչ շատ հեռու պատմական Բթառիճ գյուղից: Վանքի հարավակողմին Բթառիճն է, արևելյան կողմը՝ Քելերիճը, հեթանոսական դարերից մնացած երկու գյուղեր:

Ունեցել է առողջ կլիմա, հիանալի համայնապատկեր: Ուսումնասիրողներից մեկը գրում է թե արտաքինով վանքը պարզ է երևում, սակայն ներքնամասերում «հին ճարտարարվեստի գլուխ գործոցներ կցուցադրե իր զանազան մասերուն մեջ»: Ունեցել է գեղեցիկ եկեղեցի, պարտեզ, շրջապատված՝ բարձրադիր հողապատնեշներով: Ապահովված է եղել արտաքին մեծ դռնով, չինված հաստ ու մշակված երկաթից, «զոր գոցելու և բանալու համար հարկ է որ երեք չորս վանականներ քովե քով գան և գործածեն փայտե ձողեր: Այս դուռը ունի նաև ահագին նիգափակ մը, որ երեք չորս բանալիով կբացվի»[1]:

Ե՞րբ է հիմնվել ս. Նիկողայոսի վանքը, ստույգ հայտնի չէ: Ունեցել է ընդամենը մի արձանագրություն 1797 թվից, որ անչուշտ որևէ վերանորոգման թվականն է հուշում:

«Հին վանք եղած կթվի»,- գրում է Հ. Ոսկյանը,- առանց որևէ ենթադրություն անելու:

Հին լինելու օգտին են խոսում այն մի քանի մանր տվյալները, որ հասել են մեզ: Եկեղեցու գմբեթը նման է եղել էջմիածնի կաթողիկեին: «Խորանները նախնի ճարտարարվեստի ամեն նրբությունները կներկայացնեն իրենց գեղակերտ և նրբահյուս քանդակ-հանգույց-

[1] **Հ. Ոսկյան,** *նշվ. աշխ., էջ 97:*

ները մարդուս խելքեն գերիվեր կթվին, որոնց վրա տաչված և իրենց բնական գույներով նկարված նրբերանգ ծաղիկները զիրենք գործող արվեստագետին ճարտարությունը կներկայացնեն»[1]:

Ս. Նիկողայոսի վանքը խոր անցյալում ունեցել է կրթական, մատենագրական գործունեություն, մեծ թվով միաբաններ, զարգացած վանահայրեր, Գրիգոր Դարանաղցու վկայությամբ այնտեղ գործել է Մկրտիչ տաղասաց վարդապետը: Սակայն գրեթե ոչինչ չի հասել մեզ՝ վանքի մշակութային գործունեությունը ներկայացնող: Պատճառը ամենից ավելի կողոպուտի ու թալանի ենթարկված լինելու փաստն է:

«Այս սրբավայրն ալ,- գրում է Ս. Ամատյանը,- Զախրմանու վանուց նման առարկա եղած է մինչև վերջին ժամանակներս մերձակա քրդաց ասպատակությանց և այս իսկ աղագավ անչուք ու անինչ մնացած է: ... Այժմու վանահայրն է Մեղուցիկ գյուղեն Տեր Գաբրիել քահանա Մարուքյան, որ թեև ոչ այնքան աչխուժ ու ճարպիկ, այլ խիստ բարեսիրտ ու հեզահամբույր է և թողլով յուր ժողովուրդն ու հայրենական կալվածներն երեսի վրա, ս. Նիկողայոսի կծառայե և կջանա չինել ու բարեկարգել զայն, եթե Բթառիճու տգետ ու կոչտ գլխավորաց նախանձ ու հակառակությունն, ինչպես նաև Գավառական վարչության պահանջկոտությունն չվհատեցնեն զինքը»[2]:

Մեզ հասած վերջին և հավաստի վկայությունն է սա, որ վերաբերում է ս. Նիկողայոսի վանքի հարյուր տարի առաջվա վիճակին: Ի՞նչ փորձանքներ են եկել դրանից հետո վանքի գլխին: Հայտնի է միայն, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի տարիները պահել է իր գոյությունը:

15. ՃԼԵՄՈՆԻ ՎԱՆՔ

Հ. Ոսկյանը Երզնկայի վանքերի շարքում հիշատակում է երկու վանք էլ, մեկը՝ Ճլեմոնի, մյուսը՝ Հերմոնի, բայց հայտնում է նաև այն կարծիքը, թե դրանք կարող են նույնը լինել: Շատ հավանական է, քանի որ Հերմոնի վանքի մասին չեն խոսում ոչ Ս. Ամատյանը և ոչ էլ Գ. Սյուրմենյանն իրենց չատ հավաստի գրություններում, իսկ Տ. Պալյանն էլ, որ հիշատակում է այդ անունը, ասում է թե երզնկացիները նման վանքի տեղն անգամ չգիտեն: Հենց այդ փաստն էլ վկայում է, որ գոյություն չի ունեցել:

---

[1] **Հ. Ոսկյան,** *նշվ. աշխ., էջ 98:*
[2] *«Արևելյան մամուլ», 1887, էջ 380:*

Իսկ որտեղի՞ց է առաջացել թյուրիմացությունը: Քանի որ Հերմոնի վանքի հիշատակությունը կա միայն Թովմա Մեծոփեցու մոտ, սխալած չենք լինի, եթե ասենք, որ ըստ երևույթին, այդ պատմիչի երկասիրության գրիչներից որևէ մեկը Ճլեմոնը Հերմոն է արտագրել Ճ-ի և Հ-ի սովորական մի չփոթությամբ:

Եվ քանի որ Հերմոնի մասին ոչինչ չկա տպագրված, մենք խոսելու ենք միայն Ճլեմոնի մասին:

Մեզ հասել է ընդամենը երկու հիշատակարան, որոնք գրված են Ճլեմոնի վանքում: Մեկը տպագրված է Գ. Սրվանձտյանցի «Թորոս աղբար» գրքի 2-րդ հատորում և առանձնապես մեծ արժեք չի ներկայացնում, թվականն էլ անհայտ է, սակայն պարունակում է անուններ, որոնք ենթադրել են տալիս թե գրված պիտի լինի ուշ դարերում[1]: Վանքը գործել է գեթ մի քանի դար, քանի որ մյուս ընդարձակ հիշատակարանը վերաբերում է 1332 թվականին: Այս հիշատակարանը պարունակում է բավականաչափ տեղեկություններ վանքի ու առհասարակ Երզնկայի մտավոր կյանքի մասին: Նախ այնտեղ հանդիպում ենք մեծ թվով երզնկացիների անունների, բազմաթիվ աբեղաներ, քահանաներ, աշխարհական մարդիկ, անգամ արհեստավորներ: Եթե ընդունենք որ հոգևորականների մի զգալի մասը կապված է եղել Ճլեմոնի վանքի հետ, պարզ կարող է դառնալ նրա կշիռը այդ ժամանակաշրջանում:

Գրված լինելով Կիլիկյան թագավորության այն տարիներին, երբ այդ պետությունը նկատելի հետաքրքրություն էր ցուցաբերում Արևմտահայաստանի նկատմամբ, հիշատակարանի գրիչ Հովհաննես աբեղան սկզբում հիշում է. «Ի թագաւորութեան հայոց Լևոնի որդւոյ Աւշնի և ի հայրապետութեան տեառն Յակոբայ և յեպիսկոպոսութեան մերոյ տէր Սարգսի»:

Հովհաննես աբեղան մանրամասն թվարկում է Ավետարանի արտագրման և իր հետ կապված մարդկանց անունները: Նկատի ունենալով այս հիշատակարանի շահեկանությունը, բերում ենք որոշ հատվածներ, որոնք վերաբերվում են անմիջապես ձեռագրի ստեղծմանը. «Արդ, գրեցաւ սա ի յեկեղեց գաւառս, ի յեղնկայս, և վասն դառնութեան ժամանակիս ի հինգ տեղիս փոխեցեալ եղաք ի գրել սորա, զի (սկիզբն) սորա ի Տի(ա՞)ին եղև և աւարտումն սորա Ճլեմոնիս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Գէորգայ զօրաւարին և սուրբ կաթողիկէիս և այլ սրբոցս: Եւ արդ յիշեսջիք և զեղբայրն իմ զդեռաբոյս աբեղայ զՍարգիս, որ զթուղթս կոկեց և

[1] **Գ. Սրվանձտյանց,** *Թորոս աղբար, մասն Բ, էջ 329:*

սպասաւոր էր գրողիս: Ընդ նմին յիշեսցիք և զհայր վանիցս Ճլեմոնոյս զԳրիգորէս աբեղայ և զայլ միաբանքս, զՍոսթենէս ծերունի աբեղայ և զՍէթ աբեղայ և զՅովհաննէս աբեղա, զԿարապետ աբեղա և զՍարգիս աբեղա և զՅովհաննէս սուտանուն աբեղա զգրող սորա: Եւ արդ, յիշեսջիք և զքահանայս զգեղ Խարաթչոյ՝ զՅովհաննէս քահանայ և զԴաւիթ քահանայ և զՆերսէս քահանայ և զՍտեփանոս քահանայ և զաւագ տանուտէրքս՝ զՍողոմոն և զՖէրսն և զայլ պաղի զմեծ և զփոքր... ամէն: Խոչորութեան գրոցս և սխալանաց մի մեղադրեք, զի ի դառն և ի նեղ ժամանակի գրեցաւ, զի յայսմ ամին որ Տամուրտաչն յայտնեցաւ և եկն ի վերայ աստուածապահ քաղաքիս Երզնկայիս և ժողովեց զամենայն չուրջակայիցս զՔուրթ և զԹաթար և պաշարեաց զքաղաքս և նստաւ ի վերայ սորա ամիսս դ. և ի դառն նեղութիւն հասոյց, բայց քաղաքին ոչինչ կարաց վնասել, զի Աստուծոյ զօրութիւն պահէր զնա»:

Այս ընդարձակ հիշատակարանի լուսանցքում էլ կարդում ենք. «Եւ զԿիրակոս միակեցն յիշեցեք, որ զգրողիս մուշտակն կարեց»[1]:

Դերձակ Կիրակոսի «հիշեսցեքով» էլ ավարտվում է այս հիշատակարանը, որը լրիվ գաղափար է տալիս Ճլեմոնի վանքի գործունեության, նրա միաբանների, ժամանակի քաղաքական դեպքերի մասին:

Այս հիշատակարանը գրված է 14-րդ դարի սկզբներին, Գ. Սըրվանձտյանցի բերածը՝ դրանից առնվազն մեկ դար հետո: Անշուշտ վանքը գործել է նաև հետագա դարերում, բայց դժբախտաբար չի պահպանվել որևէ փաստ: Ճլեմոնի վանքի մասին չեն խոսում ո՛չ Ս. Ամատյանը, ո՛չ Գ. Սյուրմենյանը, ո՛չ Տ. Պալյանը: Կամ այն է, որ մի ուժեղ երկրաշարժ հիմնահատակ կործանել է այն, կամ դարձել մի աննշան ուխտատեղի:

16. ՄԻԱՎՈՐ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ

Սա էլ համարվում է Երզնկայի հնագույն վանքերից: Ըստ ավանդության՝ կառուցվել է Գրիգոր Լուսավորչի կողմից, որն իբր թե այնտեղ ամփոփել է ս. Կարապետի մասունքները:

Իհարկե սա սովորական հնարանք է, վանքը հնագույն դարերը տանելու նկատառումով ստեղծված: Բայց որ այն եկել է խոր անցյալից՝ կասկածից վեր է:

Ս. Կարապետի վանքը գտնվել է Երզնկայից երեք ժամ հեռավորության վրա, Աղտաղ կոչվող լեռան ստորոտում, Յալընըզ պաղ

[1] **Հ. Ոսկյան,** *Բարձր Հայքի վանքերը, էջ 94:*

գյուղի մոտակայքում: Երևի այս վերջին Յալընըզ (մենակ) թուրքերեն անունն էլ առաջացել է վանքի Միավոր անունից:

Հակոբ Կարնեցին իր «Տեղագիր Վերին Հայոց» աշխատության մեջ այսպես է ներկայացնում նրա աշխարհագրական վայրը. «Եւ կայ ի վերայ ճանապարհին (Երզնկայի) վանք մի հռչակաւոր, որ Միաւորի ս. Կարապետ անուն, առ ստորոտով լեառն մեծի որ Զարտախլու կոչեն, որ գնացեալ սինօռն հասանէ, մինչև ի Շիպ Ղարահիսարն, որ է Կողոնիայ»[1]:

Մեզ այստեղ հետաքրքրում է Կարնեցու գործածած «հռչակավոր» բնութագիրը, անկախ այն բանից, որ նման գերադրական մակդիրներ տալը վանքերին և նրանց միաբաններից ոմանց, սովորական էր: Դժվար թե վանքը ժողովրդի մեջ լայն հետաքրքրություն չարժած չլիներ, կրթական-մշակութային դեր չկատարեր և մարդիկ այն համարեին հռչակավոր:

Կա վկայություն, որ վանքն ունեցել է ուխտավորների հովանոց, այսինքն՝ կացարաններ, սենյակներ, անասունների համար ախոռներ, մարագներ:

Այս բոլորով հանդերձ, մեզ չեն հասել ո՛չ այնտեղ գրված ձեռագրեր, ո՛չ էլ հիշատակություններ նրա կրթական, մտավոր գործունեության մասին: 18-րդ դարի վերջերին վանքը արդեն ավերակ վիճակում է եղել: Ըստ Ղ. Ինճիճյանի, «առհասարակ կործանեցաւ ի վերջին երկրաշարժութեան Երզնկայի»[2]:

Ահա և Ս. Ամատյանի վկայությունը. «Քաղաքեն երեք ժամու հեռավորությամբ հիմնված է դաշտին արևմտյան հյուսիսային կողմն՝ լերան ստորին զառիթափին վրա. շինվածքն հնացյալ ու խարխլյալ, տաճարն՝ թեև բարձրադիր ու ընդարձակ, այլ կիսավեր. ունի հանդեպ արտաքին դռան անչուք մարգագետին ու ծառաստան և ի հյուսիսակողմն պարսպին՝ խոպանացյալ մրգաստան, ազազուն ջրոյ ուրդ մի կը հոսի բակին մեջ և չզորեր ոռոգելու գեթ մրգաստանն ու մարգավայրն: Այս վանք, որ աղքատության մասին երկրորդն է, կորուսած է յուր բազմաթիվ արտերեն մեծագույն մասն, և մի փոքր մասն, զոր ունի այժմ արդյունավոր չէ առ ի չգոյե ջրո, բայց յուր օդն, ջուրն, տեսարանն ու դիրքն գովելի են, վասնզի կը տիրե Եկեղյաց դաշտին արևմտյան մասին, ... Վանահայրն է հայ ընտանիք մը, որ վերջին մնացորդն է հիշյալ գյուղի հայ բնակության»[3]:

---

[1] Տե՛ս **Վ. Ա. Հակոբյան,** *Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հատ. II, Երևան, 1956, էջ 551:*

[2] **Ղ. Ինճիճյան,** *Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 100:*

[3] *«Արևելյան մամուլ», 1887, էջ 52:*

Վանքի անվան Միավոր կոչվելու մասին Երզնկայում պատմվել է մի ավանդություն, որը մեջ է բերել Տ. Պալյանը: Այնքան էլ հիմնավոր չէ, բայց քանի որ Երզնկայի գավառի նման ավանդությունները տեղ չեն գտել անգամ Ա. Ղանալանյանի արժեքավոր «Ավանդապատում» գրքում, ավելորդ չենք համարում մեջ բերել այստեղ. «Այս վանքի հիմնարկության ժամանակի մասին,- գրում է Պալյանը,- ժողովրդական ավանդությունը կըսե թե երբ ս. Գրիգոր Լուսավորիչ Կեսարիայեն ս. Կարապետի մասունքը կբերեր ջորիով, կհասնի Երզնկայի Ջուխտակ Հայրապետի վանքի մոտն ի Թիլն ավան, ուր ժողովրդյան հետ խոսքի բռնված պահուն, ջորին վրայի մասունքով կկորսվի: Անմիջապես փնտրելու կելնեն և կգտնեն այս վանքին տեղվույն վրա մենավոր պառկած: Այս դեպքին վրա Լուսավորիչը կհրամայե չինել այս վանքը, և կանվանե զայն Միավոր ս. Կարապետ: Սրբույն մասունքի կտոր մ՚ալ հոն կդնե, ուր կմնա, կըսեն, մինչև ցարդ»[1]:

Տ. Պալյանը որոշ տեղեկություններ էլ տալիս է վանքի ընդհանուր վիճակի մասին: Նա գրում է. «Վանքի տաճարը փոքր և քարուկիր չինված պարզ չենք մ՚ է, առանց թվականի և արձանագրության, վանքի մյուս շենքերն ալ խարխուլ վիճակ մը ունին: Դուրսն ունի նաև սեփական պարտեզ մը և 12 արտավարի չափ ալ մշակելի հողեր: Վանուց մատակարարությունը և արտորեից մշակությունը ժամանակին աշխարհական հոգաբարձուի մը հանձնված էր, իսկ այժմ ինչպես կմատակարարվի՝ որոշ տեղեկություն մը չունիմ»[2]:

Այլ աղբյուրներից էլ իմանում ենք, որ 19-րդ դարի ընթացքում ս. Կիրակոսի վանքը պատկանել է Երզնկացի Թորոսյանների ընտանիքին, որը որդուց որդի ժառանգել է, թեև մեծ արդյունք չի բերել:

Այս է մեր իմացածը ս. Կարապետի վանքի մասին: Սխալված չենք լինի, եթե ասենք որ իսկապես գործ ունենք շատ հին մի սրբատեղիի հետ, որը շատ դարեր առաջ հիմնովին կործանվել է և մարդիկ նրա տեղը կառուցել են նոր վանք, պարզապես բազմահազար ուխտավորներին իրենց հետ կապելու, նյութապես օգտվելու համար:

17. ՍԱՂԻ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՎԱՆՔ

Այս վանքից մեզ հասել է ընդամենը մեկ հիշատակարան, որի հիման վրա Հ. Ոսկյանն այն մտցրել է Երզնկայի վանքերի շարքը: Ճիշտ է վարվել բանասերը, քանի որ այդ հիշատակարանում խոսվում է

[1] «Բյուզանդիոն», 1902, № 1614:
[2] Նույն տեղում:

ոչ միայն վանքի գոյության մասին, այն էլ դեռևս 14-րդ դարի վերջերին և 15-րդ դարի սկզբներին, այլև ցույց է տրվում որ վանքը եղել է մշակութային կենտրոն: Ակնարկված հիշատակարանը, որ գրված 1413 թվին, սկսվում է այսպես.

«Արդ, գրեցաւ... ձեռամբ Սամուէլի ... գրչի, ի գաւառիս Եկեղեաց, ի սուրբ ուխտս որ կոչի Սաղի սուրբ Ստեփաննոս, ընդ հովանեաւ սուրբ Նախավկայիս... հրամանաւ Մարգարէի աստուածասիրի՝ առաջնորդի անապատիս, ծախիւք և արդեամբք Ոնոփրիոսի աւագ սարկաւագի, և Պետրոսի կուսակրօն աբեղ[այ]ի և Յակոբ կրօնաւորի...: Արդ... գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՊԿԲ (1413) ի հայրապետութեան տեառն տէր Գրիգորի արքեպիսկոպոսի...: Արդ յիշեցէք ... (զստացող տառիս) զՈնոփրիոս աւագ սարկաւագն զհայր վանացս, եղ ի դուռն սուրբ Կարապետիս յիշատակ անջինջ...: Արդ յիշեցէք յաղօթս ձեր զհայր Ոնոփրիոս և զեղբայրն իւր զՏիրատուր աբեղան և զհայրն իւր զԴաւիթ զհանգուցեալսն ի Քրիստոս և զմայրն իւր զՍիրմայն... յիշեցէք և զՊետրոս աբեղան, որ օգնական եղև ի գրոցս գրելէն Գձ դրամ...: Յիշեցէք և զՅակոբ աբեղան զփակակալն... ընդ նմին յիշեսցէք... զառաջնորդ սուրբ անապատիս զսուրբ Ստեփաննոսու Նախավկայիս զհայր Մարգարէ, որ բազում երախտիք ունի առ մեզ և յորդորեաց ի բանս յայսմիկ և հանգոյց... և զամենայն եղբայրութիւնս առ հասարակ: զՅովհաննէս կրօնաւորն՝ զհոգևոր հայրն մեր, որ բազում աշխատութեամբ սնոյց և ուսոյց զիս և նա եղև պատճառ այսմիկ և զօրինակն շնորհեաց և զծնօղսն... և զքուերորդիսն Շահրիարն որ զգիրքս գլխաւորեաց և զԿարապետն»[1] *և այլն:*

Հիշատակարանից երևում է, որ Սաղի ս. Ստեփաննոսի վանքը ունեցել է մեծ թվով միաբաններ, նաև կարող մի վանահայր, որին, այսինքն՝ Մարգարեին, հիշելիս ասվում է թե նա մեծ ծառայություններ է մատուցել վանքին և միաբանությանը, հորդորել է գրել այդ ձեռագիրը, թե նրան շատ բան է պարտական «զամենայն եղբայրութիւնս առհասարակ», ինչ որ ցույց է տալիս միաբանության անդամների նկատմամբ նրա հոգատարությունը:

Նույն այս հիշատակարանից իմանում ենք, որ գրիչ Սամուելի քեռորդին էլ ըստ երևույթին եղել է ծաղկող և գրել է ձեռագրի սկզբնատառերը:

Բայց ե՞րբ է պատմության ասպարեզից անհետացել նման մի վանք, որ իր ժամանակին ունեցել է այդքան համբավ: Այդ ի՞նչ ուժ է

---

[1] **Լ. Ս. Խաչիկյան,** *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, էջ 154-155:*

եղել, որ երկրի երեսից ջնջել, իսպառ մոռացության է մատնել մի սրբատեղի, որ մարդիկ չեն էլ իմացել, թե նման մի վանք գոյություն է ունեցել:

Երզնկայի վանքերի մասին գրողներից ոչ մեկը՝ ո՛չ Կ. Ղազանճյանը, ո՛չ Ս. Ամատյանը և ո՛չ էլ Գ. Սյուրմենյանը այն չեն հիշում անգամ հանգած վանքերի շարքում:

Այդպիսի ավեր չէր կարող գործել մարդ արարածը, որքան էլ լիներ դաժան, գազանաբարո բնազդի տեր: Ամենայն հավանականությամբ մեծ երկրաշարժերից մեկի ժամանակ է, որ հիմնահատակ կործանվել է՝ գուցե «վասն մեղաց» նրա միաբանների այնքան օգտակար աշխատանքի:

Այս առիթով ուզում ենք անել մի ենթադրություն. Երզնկայի վանքերից մի քանիսը ունեցել են երկու, երբեմն երեք անուն: Հնարավոր է, Սաղի ս. Ստեփաննոսի վանքի գործունեության մի մասը հիշատակված լինի մեր մատենագրության մեջ որևէ այլ վանքի առիթով:

18. ԶԱԳՐՄԱՆԻ ՍՈՒՐԲ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ՎԱՆՔ

Գտնվել է Զագրման գյուղի մերձակայքում, Քեչիչ Դաղ լեռան լանջերին, փոսի մեջ, Երզնկայի հյուսիս-արևելյան կողմը: Քարաշեն և փոքր եկեղեցի է եղել, ունեցել է առողջ օդ, սառը ջրեր:

Ս. Ամատյանը այս վանքի մասին գրում է. «Զախբրմանը կը համարիմ Զարխափան բառին աղավաղությունն. վանքին մոտիկ փոքրիկ՝ իսկ ավելի վարը բավական մեծկակ՝ երկու թուրքաբնակ գյուղեր սույն անվամբ կկոչվին, մեծ Զախբրմանու մեջ կա ս. Աստուածածնի անվամբ հին եկեղեցյակ՝ որ ի մարագ փոխարկյալ է: Այս վանքը կը գտնվի դաշտին ճիշտ հյուսիսակողմն, Քեչիչ բարձրաբերձ գագաթին առջև, սարահարթի կամ լեռնատափի վերա, որ ուղղաձիգ, բարձրացած է դաշտեն և ունի խիստ դժվար վերելք: Օդն, տեսարանն ու դիրքն աննման, քանի որ խիստ բարձր է և կը տիրե դաշտին ամբողջ միջավայրին, ուր սփռված են ցրիվ բազմաթիվ գյուղեր, և հանդիպակաց լերանց (Մերճան, Ղազան Ղայա) և նոցա օժանդակ սարերու և լեռնակոհակներու և որ ի նոսա տարածյալ գյուղերու և Վանուց: ... Հանդեպ գյուղին, արևելյան կողն և հինգ վայրկյան հեռավորությամբ կը գտնվի փոքրիկ, քարաշեն ու կամարակապ այլ կիսակործան մատուռ մի և նմին կից դարակավոր ածուններ, դերբուկ և ավերակաց մնացորդք: Մի քանի տարի առաջ այս մատուռն իբրև գոմ կը ծառայեր և վանուց սակավաթիվ արտերն հանձնված էին թուրք

վանապահի մը և այնինչ վանուց անունն ալ պիտի մոռցվեր, երբ Հմայակ եպիսկոպոսի առաջնորդության օրով վանուց օթարանն և արտերն հայ վանապահի հանձնվեցան, գրավյալ արտորեից մի մասն հետս առնվեցան, վանուց կարասիքն ու սպասներն, որք ի պահ դրված էին՝ հավաքվեցան, հանգանակությամբ ուրիշ կարևոր պիտույք ձեռք բերվեցան, և այսօր վանքն՝ եթե ոչ կատարյալ վիճակ՝ գեթ նորա ստվերն ունի: Եկեղյաց գավառի ճոխ վանքերեն մին էր երբեմն այս, որ ամենե ավելի առարկա եղած է հարձակմանց և հափշտակությանց, Դերջանա ու Բաբերդու միջև որջացյալ քրդաց մոտ և ի լեռնավայրի գտնվելուն համար»[1]:

Սրանք են մեր ունեցած տվյալները Զագրմանի ս. Պողոս-Պետրոս վանքի մասին:

Հ. Ոսկյանի հիշատակած 34 վանքերից քննության առանք 17-ը, առավել վավերական գործունեություն ունեցողները: Մնացածների վերաբերյալ մեր տեղեկությունները սակավ են և հակասական, եթե չասենք մի քանիսը նաև ոչ իրական: Դրանց մի մասի ոչ հիմնադրման ժամանակն է հայտնի, ոչ էլ կրթական, մշակութային դերը: Պարզապես հիշատակվել են ուսումնասիրողների կողմից որպես Երզնկայի վանքեր, հենվելով տեղանունների կամ ավերակների վրա:

Մի քանիսն էլ պարզապես թյուրիմացությամբ են արձանագրված Հ. Ոսկյանի մոտ: Օրինակ՝ Իշողի վանքը: Հենց Ոսկյանն էլ է կասկածում, որ դա նույն Շողա վանքն է, բայց դրանով հանդերձ հատուկ թվարկումով դասել է Երզնկայի վանքերի շարքը: Կամ՝ Հերմոնի վանքը, որ Ճլեմոնի վանքն է, բայց հիշատակված է առանձին:

Քանի որ մի քանի վանքեր իսկապես անցյալում գործել են, բայց հետագայում ավերվել կամ ամայացել, իսկ մեծ մասի տեղերն էլ որոշակի են, ավելորդ չենք համարում շատ հակիրճ տողերով հիշատակել նաև այդ վանքերը:

19. ԱԿԸՆՋԻ ՎԱՆՔ

Այս վանքի անունը մեզ հասել է միայն մի հիշատակարանից, գրված 1599 թվին: Ահա այդ հիշատակարանը. «Զվերջին կազմող Աստուածաշունչ գրքիս զտէր Կիրակոս աբեղայս և Յակոբ գրոց աշակերտս... Կազմեցաւ գիրքս ի դառն և ի նուրբ ժամանակիս վասն անօրէն տաճկացն, անողորմ կողոպտէին զքրիստոնեայքս, օրն անգամ մի ի յայրս և ի ծերպս վիմաց փախաք, հազիւ կարացաք հանել

[1] *«Արևելյան մամուլ», 1887, էջ 52:*

գգիրքս, թվ. ՌԽԸ (1599) յեկեղեաց գաւառն ի յԱկընջին վանքն, ի տէր Կիրակոս հարպետին և այլ միաբանիցն. ամէն»[1]:

Ուրեմն վանքն ունեցել է միաբանություն, մարդիկ զբաղվել են գրչագրությամբ, այն էլ 16-րդ դարի վերջերին և 17-րդ դարի սկզբներին:

20. ԱՆԱՐԾԱԹ ԲԺՇԿԱՑ ՎԱՆՔ

Հիշատակում են մի շարք ուսումնասիրողներ՝ Երզնկայի մյուս վանքերի շարքում, առանց որևէ ճշգրիտ տեղեկություն տալու: Կ. Ղազանճյանը տեսել է նրա ավերակները, ինչ որ վկայում է, թե անցյալում իրոք այդպիսի վանք գոյություն ունեցել է: Բուժական նպատակով մարդիկ ուխտի են գնացել այնտեղ մինչև Մեծ եղեռնի տարին:

21. ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԿԱՄ ՁԱՐԽԱՓԱՆԻ ՎԱՆՔ

Գտնվել է Երզնկայից երկու ժամ հեռու, Զախըրման գյուղի մոտ: Հիշատակվում է Պ. Նաթանյանի «Արտոսր Հայաստանի» և Գ. Սյուրմենյանի «Երզնկա» գրքերում, որպես հանգած վանք, ուխտատեղի:

22. ԳԱՌՆԻԿ ՃԳՆԱՎՈՐԻ ՎԱՆՔ

Գտնվել է Երզնկայի Տաճրակ և Ճըզնի գյուղերի մոտակայքում: Գառնիկ Ճգնավորի մասին գրել են մի շարք հայ պատմիչներ (Մովսես Խորենացի, Սամուել Անեցի և այլն): Ըստ ավանդության ապրել է 4-րդ դարում: Հետևաբար նրա անունը կրող վանքն էլ պիտի որ շատ հին լիներ, սակայն ժամանակի ընթացքում կործանվել է: Ժողովուրդը ցույց է տվել նրա ավերակները, որոնք հավատացյալների համար եղել են ուխտատեղի:

23. ՍՈՒՐԲ ԵՂԻԱՅԻ ՎԱՆՔԵՐ

Այս անունով Երզնկան ունեցել է երեք վանք, մեկը՝ Կեղզուտ գյուղում, մեկը՝ Հանդիսում, երրորդը՝ Երկան գյուղի ս. Գևորգ վանքի մոտակայքում: Երեքն էլ վաղուց դադարել են գործելուց և մեր մատենագրության մեջ էլ չեն հիշատակվում:

---

[1] **Հ. Ոսկյան,** *Բարձր Հայքի վանքերը, էջ 55:*

24. ԽԱՉԿԱ ՎԱՆՔ

Կոչվել է նաև Տիրաշեն, բայց բոլոր բանասերներն էլ գտնում են, որ չպետք է շփոթել Տիրաշեն ս. Ներսես վանքի հետ: Տ. Պալյանը գրել է. «Մենք ինքնին համոզում մը գոյացուցինք, թե ասոնք առանձին վանքեր պիտի ըլլան»[1]:

25. ԽՆԴՐԱԿԱՏԱՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ

Գտնվել է Մարեք գյուղի մոտ. կոչվել է նաև Խանեկատուր ս. Աստվածածին: Վանքի ամայացումից հետո նրա հողերն օգտագործել են Մարեք գյուղի բնակիչները:

26. ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԵԻ ՎԱՆՔ

Երզնկայի ամայացած վանքերից է. գտնվել է քաղաքից երեք ժամ հեռու. Սբկաթող գյուղի մոտ, որի անունն էլ անշուշտ առաջացել է ս. Կաթողիկե բառերի աղավաղումից: Մի հիշատակարանի ժլատ տվյալներից երևում է, որ այս վանքը անցյալում եղել է շեն և մշակութային կենտրոն, որտեղ գրվել են ձեռագրեր «ի մայրաքաղաքս յԵրզնկայս, ընդ հովանեաւ սուրբ Կաթուղիկէիս աստուածաբնակ տաճարիս»:

27. ՍՈՒՐԲ ՄԻՆԱՍԻ ՎԱՆՔ

Այս վանքի հիշատակությունը գտնում ենք բազմաթիվ ուսումնասիրողների մոտ՝ Ղազանճյան, Ամատյան, Ալիշան, նաև պատմիչ Գրիգոր Դարանաղցի և ուրիշներ, սակայն ոչ մեկը որոշակի ոչինչ չի ասում նրա անցյալի մասին: Ասում են միայն, թե գտնվում է Երզնկայի արևմտյան կողմում, Կապոսի վանքի մոտերքը, Սեպուհ լեռան լանջերին, թե այս վանքում, 13-րդ դարում սովորել է Հովհաննես Երզնկացին: Եթե ճիշտ է վերջին փաստը, նշանակում է ս. Մինասի վանքը մասնակցել է Երզնկայի մտավոր գարթոնքին՝ 12–13-րդ դարերում: Տ. Պալյանը գրում է. «Այս վանքն ալ ի վաղուց անցած է ի շարս շաբաթացյալ հայ վանորեից և այժմ բեկորները կնչմարվին»: Անշուշտ հիմա այդ բեկորներն էլ չկան:

---

[1] *«Բյուզանդիոն», 1902, № 1614:*

28. ՍՈՒՐԲ ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔ

Ոմանց կարծիքով եղել է Երզնկայի հնագույն վանքերից: Գտնվել է քաղաքի հյուսիսային կողմում, Ախորճբեգ գյուղի մոտ: Կոչվել է նաև Պաղ ապուրի վանք, «վասնզի մեծ պահոց առաջին յոթնեկին չաբաթ օրը հոս կայցելեին ուխտավորները և միմիայն պաղ ապուրով կգոհանային»[1]: Նշանակում է եղել է սիրված ուխտատեղի: Զպետք է չփոթել Սրբրխլը ս. Թորոսի վանքի հետ: Կան որոշ հիշատակություններ, որոնց համաձայն 14-րդ դարում ունեցել է գրչագրական գործունեություն:

29. ՓՈՐՁԱՎԱՆՔ

Գտնվել է Երզնկայի Ղուլիջան կամ Գուզուլջան գյուղում: Հնուց քանդվել է և դարձել ուխտատեղի:

30. ՔԱՌԱՍՈՒՆ ԽԱՉԵՐԻ ՎԱՆՔ

Գտնվել է Սբնգոր (Սուրբ Գրիգոր) լեռան ստորոտում, դեպի Տրապիզոն տանող ճամփին: Վաղուց քանդված է եղել, թեև մինչև 19-րդ դարի վերջերին նշմարվել են ավերակները:

31. ՍՈՒՐԲ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՎԱՆՔ

Գտնվել է Երզնկայի և Տաճրակի միջև: Անցյալում եղել է քարաշեն ու կամարակապ գեղեցիկ վանք, որ քանդվել է վաղուց և քարերը օգտագործվել են Եփրատի վրա ձգված կամուրջի համար: Տ. Պայանը այս վանքի մասին գրում է. «Տաճրակ անուն գյուղեն կես ժամու չափ հեռի, Պրաստիկ անուն գյուղի հարավ-արևմտյան կողմն է և անցած է ի չարս չաբաթացյալ հայ վանքերու, թեև ասկից 40 տարի առաջ վանքին և իր միջի քարաշեն ու կամարակապ տաճարին կանգուն ըլլալը գիտցողներ կան»:

32. ՍՈՒՐԲ ՕԳՍԵՆՏԻ ՎԱՆՔ

Գտնվել է Երզնկայից երեք կամ չորս ժամ հեռու, Կարմրի անուն գյուղի մոտակայքում: Տեղացիների հավաստիացմամբ անցյալում կոչվել է Օգսենտի վանք: 19-րդ դարի վերջերին դեռ ավերակները պահպանված են եղել:

---

[1] *«Արևելյան մամուլ», 1890, փետրվար, էջ 77:*

* * *

Մենք մանրամասնորեն խոսեցինք Երզնկայի վանքերում կատարված մշակութային աշխատանքի մասին: Հիշատակվեցին բազմաթիվ գրիչներ, ծաղկողներ, մանրանկարիչներ: Չխոսեցինք միայն այդ վանքերի ճարտարապետական արժեքի մասին:

Երզնկան այս բնագավառում պարծենալու քիչ բան ունի: Ճարտարապետական այնպիսի կոթողների, ինչպիսիք են Զվարթնոցը, Հռիփսիմեն, Աղթամարը, Հաղբատը, Սանահինը, Անիի Առաքելոց եկեղեցին, Երզնկայում չենք հանդիպում:

Անշուշտ դա պիտի բացատրել առաջին հերթին չինանյութի հնարավորությամբ: Արևելյան Հայաստանի տուֆը, ընտիր բազալտը մեծապես օգնել են հայ ճարտարապետներին ստեղծելու այնպիսի կոթողներ, որոնցով հիացել են բոլորը, որոնք զարմանք են պատճառել Արևմուտքին:

Երզնկայի շրջակայքը չի ունեցել առհասարակ քարի որևէ շտեմարան, այն պատած է եղել համատարած բուսահողով, որի միջով հոսել է Եփրատը: Անգամ այն վանքերը, որոնք չինված են հեռու վայրերից բերված քարերով, չունեն այն վեհությունը, որ ունեն Արևելյան Հայաստանի վանքերը:

Կա վկայություն, որ հենց Գրիգոր Լուսավորիչի օրերին կառուցված եկեղեցիների մի մասը փայտաշեն են եղել:

Շինանյութի պակասին պիտի վերագրել այն փաստը, որ Երզնկայում ոչ միայն հեթանոսական կրոնից քրիստոնեության անցնելու շրջանում է նկատվում հնի տեղում նոր վանքերի, եկեղեցիների կառուցումը, մի բան, որ ընդհանուր էր նաև Արևելյան Հայաստանում, այլ հենց միջին դարերում էլ մարդիկ հազվադեպ են նոր վայրերում աղոթատեղիներ կառուցել: Հնի տեղում են կառուցել, օգտագործելով քանդված հին չինանյութը, առաջին հերթին քարը:

Քարի պակասի թելադրանք է եղել նաև այն, որ չնայած մուսուլման տիրապետողները սրբատեղիների նկատմամբ որոշ հանդուրժողականություն են ունեցել, արդյունք նախապաշարումների, սակայն կառավարական շատ շինությունների, կամուրջների համար օգտագործել են մեր հին վանքերի փլատակներից հանված սրբատաշ, նաև անտաշ քարերը: Երբեմն էլ քանդել են անգամ կանգուն եկեղեցիներ կամ վանքեր: Եվ եթե այնուամենայնիվ որոշ վանքերի փլատակները մնացել են մինչև մեր օրերը, ապա դրանք եղել են այնպիսի անմատչելի վայրերում, որտեղից քարեր տանելը դժվար կամ անհնարին է եղել:

Ուսումնասիրողները վկայում են, որ իրենք թուրքական ոչ միայն նման կառույցների վրա, այլև սովորական բնակարանների, անգամ գոմերի պատերին տեսել են հայերեն հին արձանագրություններ ունեցող սրբատաշ քարեր, հավանաբար սայլով բերված որևէ հայկական վանքի ավերակներից:

Քանի՞ վանք է ունեցել Եկեղյաց գավառը: Անհնար է այս հարցին ճշգրիտ պատասխան տալ, բայց որ անհամեմատ մեծ թիվ պիտի լինի, քան մեզ հայտնին է, կասկածից վեր է: Երզնկայի շրջակայքում կան բազմաթիվ անուններ, որոնք ինքնին հուշում են անցյալում սրբատեղիներ լինելը, ինչպես Սբնգոր, Տաճրակ, և այլն: Ս. Ամատյանը գրում է, որ գյուղական սովորական շինարարությունների, անգամ վարուցանի ժամանակ դուրս են եկել հնում կառուցված տաճարների հետքեր, գերեզմանաքարեր, արձանագրություններ, այն էլ այնպիսի վայրերում, որտեղ բացառապես ապրելիս են եղել թուրքեր կամ քրդեր[1]:

Որոշ հին վանքեր էլ, մոտակա գյուղերի բռնի թուրքացման կամ թուրքերով վերաբնակեցման պատճառով դարձել են մահմեդական սրբատեղիներ, անգամ արաբերեն արձանագրություններ են գրվել: Այդպիսի մի մատուռ կա Դերջանի Մամախաթուն կենտրոնում, կա Անի Կամախում, այդպիսին է դարձել Գառնիկ Ճգնավորի վանքը, որը 19-րդ դարի սկզբներից եղել է թուրքական սրբատեղի և կոչվել սուլթան Սեիդ...

Ս. Ամատյանը պատմում է թե ինչպես թուրքերը հորինել են մի ամբողջ ավանդություն վերոհիշյալ թուրք սուրբի մասին և պատմում են սրբատեղիի պահակները: «Զի գիտցվիր թե,- գրում է Ամատյանը հումորով,- Գառնիկ Ճգնավորի և Սեիդ սուլթանի միանգամայն վերաբերյալ այս քնարանին մեջ ո՞ ի սոցանե կննջե արդյոք»:

Գուցե ոչ մեկը, բայց որ սրբատեղին եղել է քրիստոնեական, հայկական և Գառնիկ Ճգնավորի մասին էլ խոսում է Մովսես Խորենացին, փաստ է:

Այն վանքերը, որոնք կառուցված են եղել անմատչելի վայրերում, կամ առհասարակ մարդկային բնակավայրերից հեռու, քարաժայռերի վրա, անդնդախոր ձորերի լանջերին, համեմատաբար զերծ են մնացել ավազակային հարձակումներից, քանդումներից: Դրանք չեն կարողացել դիմանալ միայն տարերային աղետներին, առաջին հերթին երկրաշարժերին, իսկ այն վանքերը, որոնք կառուցված են եղել մեծ ճանապարհների մոտ, օսմանյան տիրապետության շրջանում աստիճանաբար օղակվել են թուրքերով, կուլ գնացել իրենց հավատացյալ ծխերով:

---

[1] «Արևելյան մամուլ», 1890, փետրվար, էջ 74:

33. ԵՐԶՆԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՇԻՋՈՒՄԸ

Օսմանյան կայսրության գոյության 500 տարիների ընթացքում մեր վանքերն աստիճանաբար փոխել են իրենց կոչումն ու նկարագիրը: Կրթական, գրչագրական գործունեության նվազեցման զուգընթաց՝ մեծացել է ուխտագնացության հոսանքը, կապված խորապես հոգեբանական գործոնների հետ, որի հիմքում ընկած էր աղերսանքը սրբերից՝ իրենց փրկելու, օտար բռնակալների ձեռքից ազատելու համար, մյուս կողմից՝ առհասարակ հավատի նվազումը հենց վանքերում:

Վանահայրերը, միաբանությունների անդամները գրական, կրթական աշխատանքի փոխարեն մղվել են դեպի աշխարհիկ կյանքը, ուխտավորների ճոխ սեղաններից օգտվելը:

Յուրահատուկ այս շեղմանը, բարոյական նահանջին մասամբ էլ նպաստել է կնոջ ներթափանցումը վանքերի պարիսպներից ներս, դարձյալ կապված տնտեսական և քաղաքական հանգամանքների հետ, երբ իրենց ամուսիններին պանդուխտ ուղարկած կամ այրիացած շատ հարսեր, ապաստան են գտել վանքերում: Ոմանք ապրել են սև աշխատանքով, ոմանք ընդգրկվել են կուսանոցներում, երկու դեպքում էլ երբեմն ենթակա՝ ամուրի հոգևորականների բարոյական ճնշման:

Գրիգոր Դարանաղցին ակնհայտնի վրդովմունքով խոսելով Սեպուհ լեռան լանջերին գտնվող վանքերի մասին, գրում է. «Որ և այսօր տակաւին դեռ այնպէս են մեր վանքերը յԱրզրումէն ի վայր, կանանց տունք և քրտատունք են, ո՛չ մշտնջենաւոր ժամանակագրութիւն, ո՛չ պատարագ, ո՛չ կարգ, ո՛չ կրօնք և ո՛չ սաղմոսերգութիւնք»[1]:

Գրիգոր Դարանաղցին իր գրքի մի այլ էջում, ընդհանրացնելով հարցը, գտնում է, որ ո՛չ վարդապետներն են կանգնած իրենց կոչման բարձրության վրա, ո՛չ քահանաները: Երզնկայի քահանաները, ասում է նա, աշխարհական մեծամեծների հետ սեղան են նստում և իրենց տալիս են կերուխումի: Նրանք ո՛չ պաս են ճանաչում, ո՛չ ուտես, «անխտիր ուտէին զձեթ և արբեցութիւն գործէին ի պաս աւուրն և մեծ աղուհացիցն ոչ կիրակի էր յայտ, ոչ լուր աւուրքն, ի գինարբեցութիւնսն ընդ այր և ընդ օտարականի խառնիխուռն նըստելով՝ անառակութիւն գործէին»[2]:

---

[1] **Գրիգոր Դարանաղցի,** *էջ 73:*

[2] *Նույնը, էջ 510:*

Հենց վանքերում, ասում է Գրիգոր Դարանաղցին, մարդիկ ավագ ուրբաթ օրը ինչ ասես ուտում են՝ կատակելով թե Քրիստոսն այդ օրը խաչի վրա լինելով՝ չի տեսնի իրենց արարքները, «զի տէրն լինելով ի խաչին»:

Գրիգոր Դարանաղցին ափսոսանքով է հիշում այն երանելի ժամանակները, երբ ժողովուրդի մոտ ընդհանուր հարգանք ու հավատք կար Սեպուհ լեռան վանքերի ու նրանցում գտնվող վանականների նկատմամբ: Գովում է Ավագ, Կապոսի և Երկանի վանքերը: Վերջինում,- ասում է,- բազմաթիվ վարդապետների գերեզմաններ կան և «բազում գրեանք ի յԵրկանի վանս և Կայիփոսին, այլ նմանապես և յԱւագ վանքն այլ առաւելապես»[1]:

Հասկանալի է, որ Գրիգոր Դարանաղցուն հաջորդող դարը ավելի պիտի խորացներ վիճակը, վանքերը տաներ դեպի լիակատար քայքայում, թե տնտեսական և թե բարոյական տեսակետից, ենթակա տևական սարսափների, որի պայմաններում այրվել, ոչնչացվել են բազմաթիվ ձեռագրեր, եկեղեցական մասունքներ, իսկ միաբանությունները աստիճանաբար քայքայվել են, ձուլվել, փոքրացել, վանքերի ձեռքից խլվել են նրանց պատկանած կալվածները, հետևաբար միաբանությունը սնող միջոցները, մանավանդ որ այդ շրջանում զանգվածային ուխտագնացություններն էլ հազվադեպ են եղել:

Մղկտում է Կ. Ղազանճյանը, տեսնելով վանքերի այդ տխուր վիճակը:

«Հիմա ինչ է և ինչ նպատակի կծառայեն վանքերը. եթե իբրև հնություն պիտի մնան, պետք է քայքայվածներուն և ավերակներուն տեր ըլլալ, նորոգել և կանգուն եղածները քայքայումե խնայել: Եթե իբրև ազգային կալված կպահվի, պետք է անոնց եկամուտները չատցնելու կամ գեթ չկորցնելու հոգ տանել. եթե իբրև ուխտատեղի և կրոնական զգացմանց վառարան պիտի համարենք, պետք է մի այնպիսի ձև տալ որպեսզի ժողովուրդի ջերմեռանդությունը չի խանգարի և ս. Ավետարանի ճշմարտությունը քարոզվի. եթե իբրև զբոսավայր, պետք է գոնե կանոնավորության մը ենթարկել և ժողովրդյան բարուց և վարուց վերաշինության օգտակար ընել»[2]:

Այսպիսով, 19-րդ դարի կեսերին Երզնկայի վանքերը հասել էին այնպիսի մի աստիճանի, երբ Կ. Պոլսի պատրիարքարանի առաջ կանգնած էր երկու ելք՝ կամ հաշտվել գավառի հարյուրավոր վանքերի աստիճանական քայքայման, կալվածների հափշտակման ու

---

[1] **Գրիգոր Դարանաղցի,** *էջ 510:*

[2] **Կ. Ղազանճյան,** *Խառն նամակներ, էջ 22-23:*

խպառ վերացման փաստի հետ, կամ մտածել գեթ վանքերի ու նրանց կալվածներից մի մասի պահպանման մասին:

Անշուշտ նախընտրելին երկրորդն էր:

Որոշվում է վանքերը հանձնել ոչ թե վանահայրերի խնամակալությանը, այլ՝ վանապահների ***պահպանությանը,*** *այն էլ բացառապես ամուսնացած մարդկանց՝ այսինքն՝ կամ քահանաների կամ աշխարհական մարդկանց, որոնք այն պիտի ժառանգեին միմյանցից և օգտագործեին:*

Այս նոր կարգադրության հիմնական նպատակը վանքի ապահով պահպանումն էր ավազակային հարձակումներից: Եթե վանքը դեռևս բավականաչափ կալվածներ ուներ, վանապահն էլ ի վիճակի էր այն շահագործման դնել: Դրանից կարող էր օգտվել թե՛ վանապահը և թե՛ ազգը, իսկ եթե այնպիսի վիճակումն էր, որ հազիվ ինքնաբավ կարող էր համարվել, նրանից ազգը ոչինչ չէր սպասում, իսկ եթե ավելի ծանր վիճակի մեջ էր, և նույնիսկ վտանգ կար որ վանապահը չկարողանալով տոկալ կարող է թողնել և հեռանալ, այդ դեպքում կարող էր ստանալ որոշ նպաստ:

Այստեղ կար նաև ավելի հեռատարած ծրագիր ժողովուրդին ուխտագնացությունների միջոցով դեռևս Հայոց եկեղեցու, հետևաբար քրիստոնեության հետ կապելու ծրագիրը, երբ աստիճանական թուրքացումը սպառնում էր Հայաստանյայց եկեղեցու գոյությանը:

Առանձին վանքերի մասին խոսելիս մենք ծանոթացանք նման վանապահներից մի քանիսին, տեսանք, որ նրանք միաժամանակ ֆիզիկապես ուժեղ, ի պահանջել հարկին թշնամուն զենքով դիմադրելու կարող մարդիկ էին:

Որպես ուշագրավ վավերագիր այստեղ մեջ ենք բերում Երզնկայի վանքերից մեկի հոգաբարձության և վանապահ-վարդապետի միջև կնքված պայմանագիրը նույնությամբ:

34. Ս. ՆԵՐՍԵՍ ՎԱՆՔԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՆԱՊԱՀ-ՎԱՐՁԱԿԱԼԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1. Վանուց այնպես պիտի խնամ տանիմ, ինչպես իմ սեփական կալվածքին. պարտական եմ կատարել ի նմա այն ամեն չինություն ու նորոգություն, որո ծախսը ավելի չէ քան հարյուր դահեկան. պարտավոր եմ նույնպես ի գարնան վանուց շրջակային մեջ տնկել երեք հարյուրի չափ ուռի ու բարտի ծառատունկեր:

2. Վանքապատկան բոլոր գույքերն, գորս հոգաբարձությունն համրելով ու տոմարավ ինձ կհանձնե, թվականես մեկ տարի վերջ իրեն պիտի դարձնեմ՝ հինցածներն նորոգելով:

3. Էոլմեզընա ինձ հանձնված լինելով ութ ոչխար, յոթ այծ, հինգ կով ու երեք հորթ, մեկ տարի վերջ Հոգաբարձության պիտի վերադարձնեմ գայնս նույնությամբ. պատրաստ եմ, ըստ հնավանդ սովորության, ամեն առավոտ այցելուաց բաշխել մածուն, կաթ և այլն:

4. Եկեղեցական մասունքի, գանձանակի հասույթը և իմ ծառայությանցս համար ստացած դրամական պարգևներս ինձ կպատկանին:

5. Վանքապատկան բոլոր հողային կալվածոց էմլաքի տուրքը ես պիտի վճարեմ, վերջը փոխարեն՝ յարդեն վանքի բաժինն ես պիտի վերցնեմ:

6. Վանքապատկան կալվածոց, ինչպես են՝ այգի, պարտեզ և արոտայրք, հողային բերքն պիտի բաժնվի, ըստ օրինաց մշակության, իմ ու Հոգաբարձությանց միջև. պարտական եմ այգվույն թերի մասն ամբողջացնել:

7. Պարտեզին քարե ցանկապատը, որ ավերածներ ունի, հառաջիկա գարնան պիտի նորոգեմ և պատին այժմու բարձրության վրա հինգ աղյուս ևս պարտավոր եմ չարել:

8. Սահմանյալ տարեկան յոթն ու կես օսմանյան ոսկվո վարձքը կամավ ու հոժարությամբ պիտի վճարեմ, կես ոսկին թվականես երկու ամիս վերջ և մնացյալն հառաջիկա 84 տարվո հուլիս 25-ին հատուցանելով:

9. Վանուց անասնոց աղբը միմիայն վանքապատկան արտորեից ի պարարտություն պիտի գործածեմ:

10. Հանուն ս. վանուցս նվիրելի կենդանիք, անոթք, իրեղենք ազգին կվերաբերին:

11. Վանուց ծառերը չպիտի կտրեմ, ջուրը չպիտի ծախեմ:

Վերոգրյալ պայմաններով և մեկ տարի պայմանաժամով կըստանձնեմ ս. Ներսեսի վանուց վանապահությունը, որո ի հաստատություն կստորագրեմ:

Խաչատուր Տ. Պողոսյան

3 օգոստոս, 1883

ի վանս ս. Ներսեսի Եկեղյաց

(Վկայք)»[1]:

---

[1] «Արևելյան մամուլ», 1888, փետրվար, էջ 54-55:

Այս պայմանագրի ընթերցումից դժվար չէ կռահել, որ հոգաբարձության միակ նպատակն է եղել տվյալ վանքի պահպանումը, ծառերի բազմացումը և այլն: Երևում է նաև, որ վանապահին շատ էլ բան չի մնում: Գուցե դա է եղել պատճառը, որ որոշ վանքերի վանապահները հրաժարվել են նման ծանր պատասխանատվությունից և թողել հեռացել են:

Բայց եղել են նաև գերդաստաններ, ինչպես Սրբոյ Թորոս վանքի հոգսն իր վրա վերցնող վանապահները, որոնք սերնդեսերունդ մոտ մեկ դար պահել են վանքը և բերել հասցրել են մինչև 1916 թվականը, ռուսական բանակի գրավման օրերը:

Վանքերի անվթար պահպանման համար պատրիարքարանը ուրիշ միջոցների էլ է դիմել: Այդ միջոցներից է եղել դրանք հայ ամիրաներից մեկնումեկի խնամակալությանը հանձնելը: Այսպես Պայլան ամիրաները, որ հայտնի են եղել իրենց ազգանվեր գործունեությամբ, վերցրել են Երզնկայի գավառի որոշ վանքերի խնամատարությունը: Կան նյութական միջոցներ հայթայթելու տվյալներ: Ամատյանը բերում է նման փաստեր:

Բայց, ըստ երևույթին, Կ. Պոլսում 1840–1850-ական թվականներին ամիրաների և էսնաֆ դասի, այսինքն՝ արհեստավորության միջև բորբոքված բուռն պայքարը, որ իր բարձրակետին հասավ Սկյուտարի ճեմարանի խնամակալությունն ստանձնելու հարցում, իր ազդեցությունն է ունեցել նաև գավառում, այդ թվում՝ Երզնկայում:

Ս. Ամատյանի նկարագրություններից տեսանք, որ Երզնկայի վանքերից մի քանիսի պահպանման հոգսը իրենց վրա են վերցրել ոչ թե Կ. Պոլսում ապրող ու գործող ամիրաները, այլ հենց Երզնկա քաղաքի արհեստավորական դասը: Օրինակ, պղնձագործներն իրենց հովանավորության տակ են առել Երկանի ս. Գևորգ վանքը:

Որպես վերջաբան Երզնկայի վանքերին նվիրված այս գլխի, ուզում ենք մեջ բերել գերմանացի Ամանդ Ֆրեհի՝ 1840-ական թվականների տպավորություններից մի քանի տող.

«Սեպուհ լերան ամբողջ զանգվածը քանի անգամներ սասանություններ կրած է, ապառաժներ ապակիի պես կոտրած և իրենց մեջ ահագին անդունդներ բացած են, ուսկից ճամփաները այժմ կտանին հայկական սրբավայրերը: Այս բարձանց վրա ոչ մի բուսականություն իրարու վրա դիզված քարաժայռերու ահավոր պատկերը չմեղմացներ: Միայն տեղ-տեղ ժայռերու գագաթանց վրայեն կախված են վայրի չոճիներ և զարհուրելի անդնդոց վրա անհուն բարձրությանց մեջ կճախրեն արծիվներ: Ամբողջ օրվան մի ճամփա կտանի այսպես

տանթեական դժողաց մեջ, ուսկից Տուժիկի ավազակ քրդերն անգամ ահաբեկ խույս կուտան: Արդարև հափշտակելու ալ ոչինչ չէ կարելի գտնել այստեղ: Անառիկ բերդերու նման երեք առանձնացյալ վանքեր կան մի անկյուն թագուցած, ուր ո՛չ բարբարոսության ճիրանը և ո՛չ ալ քաղաքակրթության նշույլը կրնան թափանցիլ: Վարդապետները, որոնք վանքը կապրին և Գրիգոր Լուսավորչի հիշատակը բթամիտ հիացմամբ կպահպանեն, կոպիտ ու տգետ են: Իրենց ամբողջ կյանքին ոչինչ չեն լսեր և իմանար բացի ջրերու խոխոջեն, արծիվներու ճիչեն և երբեմն ալ ստորերկրյա դղրդմանց որոտումեն, որ խուլ մռնչմամբ կթնդացնեն Եփրատա եզերքը, Տրդատա բարձունքեն վար, որոտալով և ոռնալով... Լեռանց խոռոչներուն մեջ կգտնվին նաև բնական գավիթներ, հայ թագավորաց դամբաններ, որոնց վեհափառ դիակներն ու աճյունները ժամանակի փոթորիկները ամեն կողմ ցրված են»[1]:

[1] *«Արևելյան մամուլ», 1878, նոյեմբեր, էջ 26:*

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԶՆԿԱՅԻ ԴՊՐՈՑԸ

Մեր աշխատության նախորդ գլխում մանրամասն խոսեցինք Երզնկայի վանքերի մասին, հիմնականում կանգ առնելով նրանց կրթական, գրչագրական գործունեության վրա:

Այս գլխում ծանոթացնելու ենք մատենագրական այն հարուստ ժառանգությանը, որ ստեղծվել է այդ վանքերում և որը կազմում է հայ միջնադարյան գրականության փառքը:

Մասնավորապես 12–14-րդ դարերում Երզնկան մատենագրական և մանրանկարչական այնպիսի գարթոնք է ապրել, որ գարմանք է պատճառել հայ և օտար տասնյակ հետազոտողների: Երզնկացիները տվել են նշանավոր մատենագիրներ, տաղերգուներ, փիլիսոփաներ, ճշգրիտ գիտություններով զբաղվողներ, թարգմանիչներ:

Մի քանի տասնյակի կարող են հասնել Երզնկայի մատենագրական դպրոցի ներկայացուցիչները: Անդրադառնալու ենք առավել հայտնիներին, որոնք են՝

1. *Կոստանդին Երզնկացի,*
2. *Հովհաննես Երզնկացի Պլուզ,*
3. *Հովհաննես Երզնկացի Ծործորեցի,*
4. *Կիրակոս Երզնկացի,*
5. *Մովսես Երզնկացի,*
6. *Գրիգորիս Երզնկացի,*
7. *Մխիթար Երզնկացի,*
8. *Գևորգ Երզնկացի:*

Սրանք տարբեր աստիճանի ու կարողության տեր մատենագիրներ են. մի քանիսը հայկական չրջանակներից դուրս եկած, համընդհանուր ճանաչման արժանացած, մյուսները՝ ավելի համեստ անուններ, սակայն միևնույնն է, Երզնկայի մատենագրական դպրոցում ունեն իրենց արժանի տեղը:

1. ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ

Կոստանդին Երզնկացին մեր միջնադարյան տաղերգության ամենապայծառ դեմքերից է, հայկական վերածնության ականավոր ներկայացուցիչներից, հայ աշխարհիկ քնարերգության հիմնադիրը: Նա բնության, սիրո մեծ երգիչն է, որ իր գրական հուժկու տաղանդով, լեզվամտածողության ինքնատիպությամբ, փիլիսոփայական խորությամբ, ներշնչանքը ժողովրդից ստանալու բացառիկ ուժով, համեմատության եզրեր ունի համաշխարհային խոշորագույն գրողների հետ: «Տողեր ունի Կոստանդին Երզնկացին իր քերթվածոց մեջ,- գրում է Ա. Զոպանյանը,- որոնց նմանը Վիյեոնի, Դանթեի, Լեոբարտիի, Պետրարկայի, Լամարտինի և ուրիշ նշանավոր բանաստեղծներու գործոց մեջ մատնանիշ կըլլվին»[1]:

Կենսագրական հավաստի տվյալներ քիչ կան այս նշանավոր ու պայծառ մտածողի վերաբերյալ: Նա իր մասին գրել է.

Թէ խընդիր լինիք անուանս արժանի,
Կոստանդին անուն՝ կոչի Եզընկացի:

Երզնկա քաղաքո՞ւմ է ծնվել, թե՞ գյուղերից մեկում: Չգիտենք: Երկու դեպքում էլ կարող էր կոչվել Երզնկացի:

Ծննդյան թվականը ևս անորոշ է: Ըստ պատմաբան Հ. Քյուրտյանի՝ ծնված պիտի լինի մոտավորապես 1250–1260-ական թվականներին: Բանասեր Արմենուհի Սրապյանն էլ, որ լույս է ընծայել Կոստանդին Երզնկացու բանաստեղծությունների գիտական տեքստը ընդարձակ առաջաբանով, գտնում է որ ծնված պիտի լինի 1250-ական թվականներին:

Կրթությունն ստացել է Երզնկայի վանքերից մեկում, բայց թե ո՞ր վանքում՝ դարձյալ անորոշ է: Ոմանք փորձել են լուծել այդ հարցը կողմնակի տվյալներով, սակայն հստակ եզրակացության չեն եկել: Ըստ Հ. Քյուրտյանի՝ սովորած պիտի լինի կամ ս. Կիրակոսի կամ Եփրատ գետի մյուս ափին գտնվող Տիրաշենի վանքում, որոնք եղել են ժամանակի ամենածաղկուն կրթական կենտրոնները:

Տաղերից մեկում ակնարկություն կա, որ 15 տարեկանում արդեն սովորում էր վանքում: Այն փաստը, որ հակառակորդները մեղադրել են նրան թե նա վարդապետների չի աշակերտել՝ ոմանց հիմք է տվել կարծելու թե վանքերում երկար չի մնացել, պարզապես գրաճանաչ է

---

[1] **Ա. Զոպանյան,** *Կոստանդին Երզնկացի, տե՛ս «Անահիտ», ամսագիր, Փարիզ, 1905, մայիս, էջ 93:*

դարձել, յուրացրել որոշ գիտելիքներ, թողել հեռացել է, ինքնազարգացմամբ ու իր բնածին ձիրքի շնորհիվ ապրել է մտավոր բացառիկ հասունացում:

Մենք էլ համամիտ ենք այս ենթադրությանը, հաշվի առնելով այն իրողությունը, որ նա գրեթե զերծ է մնացել քրիստոնեական միստիցիզմից, ինչ որ շատ դժվար պիտի լիներ վանքերում հասունացած մարդու համար, որքան էլ նա մղում ունենար դեպի աշխարհիկը:

Ինքը՝ Կոստանդինն էլ ասում է թե գրելու շնորհքը ոչ թե այս կամ այն ուսուցչից է ստացել, այլ ի վերուստ, թե որոշ գիտելիքներ ձեռք բերելուց հետո զարմանքով է նկատել, որ բանաստեղծ է.

Այնպէս, որ ես ի յիմ
Խօսից չարելն զարմացայ:
Սիրով ու մեծ յուսով
Ես այս բանիս ի փորձ մըտա[1]*:*

Վերոհիշյալ բանաստեղծության մեջ նա վանքում լինելու մասին խոսում է անցյալ եղանակով՝ «մինչ ի վանք կայի», որից Ա. Սրապյանն իրավացիորեն եզրակացնում է, թե հետագայում վանքում չի եղել: Այստեղից էլ հնարավոր է այն եզրակացությունն անել, թե նա բանաստեղծական արվեստը սովորել է դրսում՝ ժողովրդական երգիչներից ու բանասացներից, քանի որ, ինչպես նկատում է Հ. Քյուրտյանը, այդ ժամանակ Հայաստանում չկար մի այնպիսի բանաստեղծ, որից կարողանար սովորել:

Կարող ենք չհամաձայնվել այս կարծիքին և ասել, թե գուցե ունեցել է մի բանաստեղծ ուսուցիչ, որի գրածներից նմուշներ մեզ չեն հասել, սակայն դրանով հանդերձ՝ բավական հիմնավոր է Քյուրտյանի ենթադրությունը, մանավանդ որ Կոստանդին Երզնկացու արվեստը ոչ թե միտում է դեպի անհատական դրոշմ ունեցող մի գրականություն, այլ գնում է դեպի ժողովրդական մտածողության, բառ ու բանի վրա խարսխված գրականությունը, աշխարհընկալումը:

Ուսումնասիրողներին զբաղեցրել է նաև այն հարցը, թե Կոստանդին Երզնկացին աշխարհակա՞ն է եղել, թե՞ հոգևորական, մանավանդ որ աշխարհական մատենագիր հազվադեպ ենք հանդիպում միջնադարում:

Ա. Զոպանյանը գտնում է, որ եղել է աշխարհական: Քյուրտյանը ենթադրում է թե սկզբում եղել է կրոնավոր, հետագայում հրաժարվել է:

---

[1] **Կոստանդին Երզնկացի,** *Տաղեր, աշխատասիրությամբ Արմենուհի Սրապյանի, Երևան, 1962, էջ 190:*

Ստեղծագործության գաղափարական միտումը ավելի Քյուրտյանի կարծիքն է հաստատում, թեև նրա ամենավաղ հասակում գրած բանաստեղծություններն էլ աննշան չափով են տուրք տալիս կրոնական գաղափարախոսության:

Կոստանդին Երզնկացին հալածվել է հետադեմ հոգևորականության կողմից: Այդ մասին ինքը գրել է հատուկ բանաստեղծություն: Սակայն, ըստ երևույթին եղել է նաև մի խավ, որը գնահատել է նրա ստեղծագործության աշխարհիկ բովանդակությունը և քաջալերել է:

Բանաստեղծություններից մեկում Կոստանդինը գրում է.

Եղբարք մի կան հետ մեզ սիրով,
Աշխարհի բան ուզեն զբրով.
Նա ես վասն այն յայտնի ձայնով.
Սիրու բաներս ասացի յոլով[1]:

Ուրեմն Երզնկայում այդ ժամանակներում եղել են «աշխարհիկ բանը», այսինքն՝ սիրային բանաստեղծությունները գնահատողներ, խնդրել են Կոստանդինին գրել այդպիսի երկեր: Դրանք կրոնական միապաղաղ աղոթքներից, շարականներից հոգնած մարդիկ էին:

Բնականաբար հակառակորդների շրջանակը ավելի մեծ է եղել և Կոստանդին Երզնկացին գուցե խեղդվեր խավարամոլների այդ ճահիճում, եթե չլիներ նախախնամական մի բարեկամություն, եթե նրան ձեռք չմեկներ հեռավոր Պարսկաստանում ապրող մի բարեկամ՝ Ամիր Փոլինը:

Ո՞վ է եղել առեղծվածային այս անձնավորությունը, ի՞նչ ազգության է պատկանել, քանի որ ոչ անունն է հայկական, ոչ ազգանունը, ո՞րտեղ է ծանոթացել Երզնկացուն, ինչպիսի կապ է եղել նրանց մտերմությունը, զուտ գաղափարակա՞ն, թե հիմնված գործնական որևէ խնդրի վրա: Մեր ուսումնասիրողներին այնքան էլ չի զբաղեցրել այս հարցը:

Փաստ է այն, որ Կոստանդինն իր բանաստեղծություններն ուղարկել է կամ անձամբ հանձնել է այդ մարդուն: Ամիր Փոլինը դրանք ամփոփել է մի գրքի մեջ և պահել: Հնարավոր է, որ Փոլինը անձամբ եղած լինի Երզնկայում և ստացած լինի ձեռագրերը: Եթե չլիներ Ամիր Փոլինը, չլիներ ինչ որ թաքուն պայմանավորվածություն նրանց միջև, դժվար թե Երզնկայում կազմված որևէ տաղարան կամ գանձարան տեղ տար այդքան աշխարհիկ բովանդակություն ունեցող գործերի:

[1] **Կոստանդին Երզնկացի,** *էջ 165:*

Հ. Քյուրտյանը իրավացիորեն գրում է. «ականջներուն խորթ էին վարդի և պյուլպյուլի իր սիրային մրմունջները, այդ իսկ պատճառով վարկաբեկ եղավ՝ Երզնկացին Կոստանդին: Զարտագրվեցան իր գործերը ուրիշ տաղարաններու մեջ, և չհիշատակվեցան իր շրջանին կրոնավորներուն հիշատակարաններուն մեջ, մեկ խոսքով գուցե ան ենթարկվեցավ «պոյքոթ»-ի մը, որուն հավանաբար կպարտինք Երզընկացվո անհայտ մնալը»[1]:

Այս ճիշտ գնահատականը տալուց հետո Քյուրտյանը հիշում է երկու Կոստանդին՝ տարբեր հիշատակարաններում, որոնցից մեկը ապրել է Տիրաշենի վանքում և ասում է թե Կոստանդին Երզնկացին գուցե 1314 թ., այսինքն՝ կյանքի վերջին տարիներին ապրել է հիշյալ վանքում:

Ա. Սրապյանն էլ Հայկական սովետական հանրագիտարանում գրած հոդվածում միանում է այդ կարծիքին, ընդունում Տիրաշենում լինելը[2]:

Անհավանական ենք համարում այս ենթադրությունը: Ճիշտ է, որ երիտասարդ տարիքում աշխարհիկ մեղանչումներ ունեցող մարդիկ իրենց ծերությանը փորձել են վանքերում քավել մարդկային թուլության իրենց արարքները, իրենց համար տեղ ապահովել հանդերձյալ կյանքում, երբեմն էլ այդ բանը պարտադրվել է նրանց, ինչպես հետագայում՝ Սայաթ Նովային, սակայն այլ է պարագան Կոստանդինի դեպքում: Նրա նկատմամբ եղած թշնամությունը այնքան խորն է եղել, որ եթե նա վերադարձել է վանք, պիտի պարտադրվեր գրել տաղեր արդեն կրոնական բովանդակությամբ, իսկ նման տաղերը հաճույքով պիտի հիշատակվեին Կոստանդինի աշխարհիկ գործերը մերժող հոգևորականների կողմից, մինչդեռ մեզ չի հասել այդպիսի և ոչ մի բանաստեղծություն: Նույնիսկ վաղ շրջանում գրված և կրոնական երանգ ունեցող մեկ երկու բանաստեղծությունները շատ հեռու են միստիցիզմից, իսկ հայտնի «Մեկնութիւն վարդին համառօտ: Վասն անգիտաց չինեցի» երկը մեղանչման որևէ երանգ չունի: Այնտեղ ամենևին չենք գտնում հոգու և մարմնի պայքար. յուրահատուկ հումորով բացատրում է իր տգետ հակառակորդներին, թե վարդ ասելով հասկացել է Հիսուսին, ծաղկունքը՝ քահանաներն են, թե բլբուլի երգը «ի վերա վարդին» «Այն փողն էր յարութեան, զոր և կոչեաց յառաւօտին» և այլն:

Քրիստոնեական եկեղեցին ինքն է դիմել նման պարզունակ բացատրությունների՝ Աստվածաշնչի ազատ նկարագրություններից

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 157:*

[2] *«Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 5, Երևան, 1979, էջ 614:*

մարդկանց հոգին ազատ պահելու համար: Հիշենք «Երգ երգոցը», որի գերազանցապես աշխարհիկ, սիրային բացատրությունները ներկայացվել են որպես Հիսուսի և Երուսաղեմի երկխոսություն...

Նույնը չի՞ կատարվել Վերածննդի նկարչության մեջ, որտեղ իրական կինը իր մարմնական հրապույրներով ներկայացվել է որպես Տիրամոր կերպար, նկարիչներն էլ, եկեղեցին էլ քաջ գիտակցելով հանդերձ թե այդ հոյակապ գործերը դիտողներն առաջին հերթին հիանում են դրանց մարմնեղեն բարեմասնություններով և ոչ վերացական որևէ գաղափարով, ընդունել են:

Կոստանդին Երզնկացին էլ կարողացե՞լ է համոզել իր տգետ ու մոլեռանդ հակառակորդներին, թե՞ մարդիկ՝ գիտակցելով հանդերձ բացատրության անհամոզիչ լինելը հանդուրժել են: Հնարավոր է:

Մինչև այստեղ մենք խոսեցինք Կոստանդին Երզնկացու կենսագրության և հարակից հարցերի մասին, այժմ ծանոթանանք նրա ստեղծագործություններին, որոնք այնքան գրաղեցրել են հայ և օտար տասնյակ բանասերների, թարգմանիչների:

Կոստանդին Երզնկացուց մեզ հասել է ընդամենը մեկ ձեռագիր երգարան, բաղկացած 182 էջից, գրված թղթի վրա, 1336 թվին: Գրիչն ու ստացողը եղել է Ամիր Փոլինը: Վայրը՝ Դավրեժ:

Այս ձեռագիրն ունեցել է ուշագրավ ճակատագիր, երկրից երկիր թափառելուց հետո 1759 թ. ընկել է Կ. Պոլիս: Նույն տարում տարվել է Վենետիկ՝ Մխիթարյանների վանքը, որտեղ էլ պահվում է մինչև այժմ:

Ձեռագրի սկզբում զետեղված է «Յաղագս միաբանութեան եղբարց, բանք սակաւ և պիտանիք» երկը, ապա՝ 57-րդ էջից արդեն բանաստեղծություններն են, որոնց ընդհանուր թիվն է 22: Ունի հետևյալ հիշատակարանը. «Գրեցաւ սայ ի Թավրէժ, ի Դառվազայի սնջայռանս, չնորհիւ և ողորմութեամբ ամէնօրհնեալ Տիրամօր սուրբ Աստուածածնին, ձեռամբ մեղապարտ և դատապարտեալ ոգոյ՝ նուաստ գրչի Ամիրիս՝ մականուն Փօլին Քալայմաչ ի Յուսափայ որդուս Միթոոի Թոոն, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգոյ իւրոյ և ծնօղացն իւրոյ: Տէր Յիսուս Քրիստոս Աստուածն բոլորից ողորմեսցի մեզ և ձեզ կարդացողին և լսողին և այնոցիկ որք հաւատով զմեզ ի Քրիստոս յիշեն, Քրիստոս զիւրեանքն յիշէ յիւր արքայութիւնն, ի թվիս ՉՁԵ (1336) ի Նաւասարդի գրեցաւ այս գիրս, ամէն»[1]:

Բացի այս հիմնական ձեռագրից, Կոստանդին Երզնկացու տաղերից մի քանիսն էլ վերցվելով տարբեր ձեռագրերից՝ տպագրվել են

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 162:*

երգարաններում և մամուլում: Նրան վերագրվող մի քանի երգ լույս է տեսել «Բազմավեպի» 1848 և 1866, «Անահիտի» 1902, 1905 թվերի տարբեր համարներում:

Այսպիսով՝ վավերականորեն Կոստանդին Երզնկացուն պատկանող տաղերի թիվը 25-ից չի անցնում:

Դրանք առանձին հրատարակելու առաջին փորձը կատարել է Մ. Պոտուրյանը[1]: Առավել ամբողջական և գիտական հրատարակությունը պատրաստել է բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Սրապյանը, որը ներածական ընդարձակ հետազոտությամբ այն տպագրել է 1962 թվականին, Երևանում:

Կոստանդին Երզնկացու բանաստեղծություններից նմուշներ թարգմանվել են ռուսերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով:

Ո՞րն էր այն նորը, որ բերում էր Կոստանդին Երզնկացին հայ հին քնարերգության մեջ:

Մեր միջնադարյան գեղարվեստական գրականությունը, ստեղծված լինելով բացառապես վանքերի պատերից ներս, հոգևորական սքեմի տակ աշխարհից կտրված մարդկանց կողմից, մոմի, խունկի, աղոթքի թմրեցնող մթնոլորտում, կրել է այդ բոլորի կաշկանդիչ ազդեցությունը, ենթակա հոգևոր պետերի և հենց իրենց՝ հեղինակների յուրահատուկ «գրաքննությանը»: Քրիստոնեական գաղափարախոսության դեմ մեղանչելու սարսափը դամոկլյան սրի նման կախված է եղել մտքի մարդկանց գլխին, անգամ սովորական գրիչների, որոնք ինքնաձաղկման ինչպիսի արտահայտություններ ասեք որ չեն գործածում իրենց հասցեին՝ կատարած կամ չկատարած մեղքերի թողության համար:

Ճնշիչ, կաշկանդիչ այդ մտայնությունը չէր կարող իր կնիքը չդնել անգամ ամենից պայծառ անհատականությունների, ականավոր մտածողների ստեղծագործությունների վրա:

Այս երևույթի վրա հատուկ ուշադրություն են դարձրել Ա. Զոպանյանը, Մ. Աբեղյանը, Հ. Քյուրտյանը և այլ ուսումնասիրողներ: Ա. Զոպանյանը, օրինակ, գտնելով որ Գրիգոր Նարեկացին «անձնական հոգիի մը մեջ գալարվող փոթորիկ մը կարտահայտե ամենաբուռն, ամենակենդանի, ամենահզոր ոճով մը, բայց ատ ալ մեղքին մղձավանջեն մտալկված, հավիտենական պատիժներուն սարսափեն հալածված միջնադարյան վանականին ջլախտավոր հոգիին ողբերգու-

---

[1] **Մ. Պոտուրյան,** *Կոստանդին Երզնկացի. ԺԴ դարու ժողովրդական բանաստեղծ և յուր քերթվածները, Վենետիկ, 1905:*

թյունն է, և ոչ բնականոն ու հավիտենական մարդ էակին անհատական էությունը դղրդող տոամներեն մեկը»[1]:

Մ. Աբեղյանը նույն միտքն է զարգացնում, գրելով թե Կոստանդին Երզնկացին «յուրացրել է Գրիգոր Նարեկացու այն տաղասացությունը, որ հոգևոր խմաստով անձնական չեչտերով երգում է ուրախ, լուսավառ բնությունը: Կոստանդնի այս կարգի քերթվածները չատ ավելի մաքուր ու ջինջ են, ուստի և ավելի գեղեցիկ են, քան իր վարպետ Գրիգոր Նարեկացու Ծննդյան ու Վարդավառի տաղերն իրենց մթությամբ և բառախաղերով»[2]:

Ահա մարդկային հոգու ազատագրումն է, որ բերել է մեր չափածո հին գրականության մեջ Կոստանդին Երզնկացին, բերել է նյութի բազմազանությամբ գեղարվեստական մշակման բարձր արվեստով: Քրիստոնեական եկեղեցու հազար տարվա գաղափարական պարտադրանքի դեմ ըմբոստացման յուրահատուկ արտահայտություն է Երզնկացու ջինջ ու վտիտ, կենսախինդ ու խորապես մարդկային պոեզիան:

Մյուս կողմից իր խորքում այդ գրականությունն ունի դեպի հեթանոսականը միտելու չեչտ, ոչ թե ոստյուն դեպի նախաքրիստոնեականը, այլ ընկալումը, ձուլումը այն ամենի, որ հակառակ քրիստոնեական դարավոր պարտադրանքին, ուղեկցել էր հայ ժողովրդին անցած հազարամյակի ընթացքում: Արևը, լույսը, բնության պաշտամունքը մարդ արարածի գոյության խթանն է եղել և չէր կարող մարդս հրաժարվել դրանցից, որքան էլ վարպետներն ու քահանաները փորձեին առաջնությունը տալ հոգուն, աչխատեին ճզմել, թուլացնել մարմնականի պահանջը:

Կոստանդին Երզնկացու մեծությունը կյանքի այդ զարկերակը ճանաչել և երգելն էր:

Ինչ որ կատարել են մեր օրերում Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, նույնը կատարել է Կոստանդին Երզնկացին 13-րդ դարում, վերցրել է ժողովրդից, վերադարձրել նրան:

Մ. Աբեղյանը մանրամասն վերլուծելով Կոստանդին Երզնկացու «Արեգակի, գարնան և լուսու բանքերը», ասում է թե ամենից առաջ այդ երգերում է երևում «կյանքի ու բնության սիրահար չնորհալի բանաստեղծը». «Նա բնությունից առնում է ընդհանրապես մեղմ ու

---

[1] **Ա. Զոպանյան,** *Հայրեններուն բուրաստանը, Փարիզ, 1940, էջ 26:*

[2] **Մ. Աբեղյան,** *Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 311:*

քնքուշ տեսարանները, արեգակի ծագումը, լուսով ու գույնով, գարնանային կյանքով ու բուրմունքով լցված: Այս տեսակի երկերի մեջ է ահա ամենից ավելի փայլում Կոստանդնի բանաստեղծական տաղանդը... Նրա երգերի մեջ լույսն ու սերը դարձել են մի տեսակ պաշտամունքի առարկա. նա ներբողում է արեգակի ծագում, գարնան գալուստ, լույս ու սեր, հորինելով մեկը մյուսից գեղեցիկ քերթվածներ»[1]*:*

Միջնադարյան հայ քնարերգության չողչողուն գոհարներից է Կոստանդին Երզնկացու «Զարթիք ի յերազուտ» տողով սկսվող բանաստեղծությունը, որտեղ երգում է երևի ծագումը, բնության զարթոնքը.

Զարթիք ի յերազուտ, բացեք զաչերդ, ով կայք ի քուն.
Տեսեք մէջ գիչերիս չատք՝ որ պահ մի չեն լել ի քուն...
Զարթայ ես ի քընոյս, ելայ կացի պահ մի արթուն.
Երբ էանց գիչերն յերկար՝ նըչան եղեւ առաւօտուն.
Տեսի լուսին պայծառ, բազում աստեղք ի յիր սպասուն,
Զերկինքն են զարդարել ւ են արարածքք իմաստնոյն:
Մի աստղ ելաւ պայծառ առջև Արուսեկին լուսոյն,
Ուներ լոյս գեղեցիկ, քան զաստեղացն՝ այլ զերազոյն.
Ետես ըզնա լուսին և հրաման տայ աստեղնոյն.
Հաւասար ի մայր մըտան, նուազեցան յիրենց լուսոյն...
Քաղցր է ծընունդ լուսոյն, երանի տամ ես այն մարդոյն,
Որ բաժին ինքն ունենայ՝ ի յայն լուսոյն առաւօտուն:
Թէ դուռըն կայ երկնից՝ պարգեւատու մի Աստուծուն,
Ի ծագել արեգականն ի մեզ բացվի դուռըն բարոյն...
Թէ անուշ հոտ կայ բուրել ւ ի կեանք փոխէ զդուռըն մահուն,
Են չատոց հոգի հարբած՝ յանուշ հոտոյն յառաւօտուն.
Թէ անմահական սէր կայ, որ հոգի տայ հոգեստնուն,
Իմ բաժին սէրն ու հոգին խառնել ի սէրն առաւօտուն:
Թէ ինձ կեանք կամ խընդութիւն բաժին կայ ի դուռն ի սիրուն,
Մէկ պահու սէրն ի սըրտէ թող՝ լինի ինձ յառաւօտուն.
Թէ հոգի տալ կու պիտի, կամ թէ հոգի հանել մարդուն,
Նա յօժար եմ ես հոգով՝ զհոգիս փոխան տալ իմ սիրուն:
Ով կամի սիրով լինիլ ինքն յարութեան որդի լուսոյն,
Թող խընդրէ ի յայն սիրոյն, որ ինք յարեաւ առաւօտուն.

---

[1] **Մ. Աբեղյան,** *նշվ. աշխ., նույն տեղում:*

Ի սիրուն սէր յաւելու, սիրով զընալ տունն ի սիրուն,
Ի ով սիրոյն ինք հետևի՝ հասնի սիրովն առաւօտուն...
Ես յետին և անպիտան, որ Կոստանդին կոչի անուն,
Խընդրեմ ի քէն, տուր ինձ սէր՝ ի սիրուն առաւօտուն[1]*:*

Այս բանաստեղծությունն ընթերցելիս դժվար չէ նկատել, թե որն է Կոստանդին Երզնկացու ներշնչման հիմնական աղբյուրը՝ արև, լույս, առավոտ, ըստ որում առավոտը նրա համար ամենօրյա վերադարթման, յուրահատուկ հարության, կրկին կյանք մտնելու սիմվոլ է:

Հայտնի է, որ մեր ժողովրդական հավատալիքների մեջ արշալույսը դիտվել է ամենօրյա հարություն: Ահա թե ինչու Երզնկացին նախընտրում է որ իր հետ կատարվելիք բոլոր դեպքերը կատարվեն առավոտյան, լուսաբացին, նշանակում է արևածագին:

Եթե առավոտը մեռած գիշերվան հաջորդող հարությունն է, ապա գարունը Երզնկացին դիտում է որպես բնության հարությունը, գարթոնքը.

Գարունն լինի ուրախութիւն և ցընծութիւն երկրածընաց...
Ծառքն ծաղիկս ի վեր փրչեն, թէ կան դալար ու չեն մրսած...
Բուրաստանքն զարդարին, վարդն փրոէ տերև չարած.
Վասն այնոր ինք թագաւոր, որ համբերէ ի մէջ փրչաց:
Զի որ տրված ի հողն ի պահ բոյսք ու սերմանք կայ սերմանած՝
Վրճարեն ըզսերմանողն և տան տէրանց չատ յաւելած...
Ահա եղև յորդոր գարուն, յայտնեցաւ զինչ կայ պահած
Ու զինչ ծածուկ գործք ու սերմանք զիրենք ցուցին յամէն ցեղաց[1]*:*

Նույնքան ուշագրավ է և աշխարհիկ զգացողությամբ առլցված՝ «Տաղ գարնան եւ ուրախութեան» երգը, որտեղ բանաստեղծը, բնության գովքը, գարնան կախարդանքը զուգորդում է սիրո զգացմանը:

Ահա հոտըն գար գարնան, իւր տեսն երևէր խնդման,
Զինչ պարտէզ և այգեստան, ծաղկունք գոյնզգոյն բացուան...
Եկայք մտնունք ի բաղչայն, խօսիմ ես հազար դաստան,
Որտեղ որ սիրու տէր կան, ամէնն մեղի մօտ թող գան:
Այսօր եմ հուքմով իշխան. հաւսար ծաղկունք՝ զինչ որ կան
Հրաման ունին և ֆարման, վարդին երևան թող գան:

---

[1] **Կոստանդին Երզնկացի,** *Տաղեր, էջ 124-127:*
[2] *Նույն տեղում, էջ 150-151:*

Վարդն էր ի թախտին փոման, բարձր էր նստեր զերդ զխան,
Մաղկունքդ ամէն ժողվեցան, բոլոր վարդենոյն նստան։
Ունիմ չատ սիրոյ դարման, վարդն տեսայ ի փոման,
Կարմիր տերևն ի վառման, զերթ զակունք են ի շարման։
Մէճլիս զուգեմ ի սայրան, բլբուլն է ներս ի մաստան,
Սաղի լուսեղէն մեծ տան, կանգնին ու գինի մեզ տան։
Սաղի՛, լի՛ց ու տո՛ւր զկթղայն, իմ սիրտս է սիրուդ հաւան,
Որ ես խմեմ զայն կթղայն, որ մէջն է գինով յորդան։
Մըտրուպ դու սաղէ՛ զչաչթայն, որ մորճըն խաղայ մոյտան.
Մէյ մորճ ու բարակ ւ երկայն, քո տեսն ի լուսին նըման։
Աչերդ է ի ծով նըման, ուներ՝ աղեղան լարման
Կանգնել սուրաթիղ փասպան, վախեմ թէ խոցես մահուան։
Շրթունքն բերէ զփարդան, ւ իւր լեզուն խօսի լարման,
Քաղցր է ու չիրին իւր ձայն, այն որ մեզ չաքրի համ տան։
Այսօր է մեզ օր խընդման, հաւսար սիրելեացդ որ կան,
Զինչ սիրտ որ սիրով բացւան, այսօր միատեղ նըստան։
Սաղի է մեզի զօրհան, վարդն է մեզ հարիֆ սուլթան,
Մտրուպ բլբուլնի չատ կան, խօսին ի սիրու չատ բան[1]։

Անդրադառնալով Վարդ ու սոխակի սիրավեպին, Մ. Աբեղյանը գրում է, թե առաջին անգամ Կոստանդին Երզնկացին է օգտագործել այդ թեման միջնադարյան հայ գրականության մեջ, մի սիրավեպ, որի «այլաբանության տակից պարզ ցոլանում է զգայարանական հեշտավետ սերը»։

Աբեղյանը զուգահեռներ է անցկացնում նույն սիրավեպի արևմտաեվրոպական մշակումների հետ։ Գտնելով, որ նրա լավագույն մշակումներից մեկն է Տորկվատո Տասսոյինը, գրում է.

«Ահա մեր Կոստանդնի սիրավեպի նյութը, որ էապես նույնն է, ինչ որ նրանից ավելի քան 250 տարի հետո հորինող իտալացի հռչակավոր բանաստեղծինը։ Մեր քերթվածի մեջ սերը նույնիսկ ավելի վեհ ու վսեմ է, զի դա հեշտանք չէ փափկության դրախտում, այլ ըստ կրոնական հայացքի, բխելով Սեր աստծուց՝ դարձած է հավերժ կենդանության աղբյուր, մի աստվածային ստեղծագործ կենդանարար ու գեղեցկացնող զորություն ամբողջ բնության համար»[2]։

Ինչ է նկարագրում Կոստանդին Երզնկացին իր այդ չքնաղ երկում՝ բնության զարթոնքն ազդարարող մի ամբողջ սիմֆոնիա, որին մաս-

---

[1] **Կոստանդին Երզնկացի,** *Տաղեր, էջ 153-157։*
[2] **Մ. Աբեղյան,** *նշվ. աշխ., էջ 311։*

նակցում են բուսական և թռչունների աշխարհը, յուրաքանչյուրը բացահայտելով իր նկարագիրը: Դրանք ի վերջո այլաբանորեն ներկայացնում են մարդկային փոխհարաբերությունները, հիմքում ունենալով անաղարտ ու մաքուր սերը:

Նա նկարագրում է նախ գարնան հոյակապ զարթոնքը, ծիլ ու ծաղիկ բողբոջում են, զգեստավորվում պեսպես գույներով, զարդարում սար ու ձոր, «զլեռն, զդաշտն ու զբաղչանին»: Գեղգեղում են տեսակ տեսակ թռչունները, որոնք «ի սիրու են ստեղծված, սէր կա յիրենք որ կու խօսին»: Ծաղիկները բոլորը ցնծում են, միայն վարդը դեռ չի բացվել: Ծաղիկներն ուրախ են դրա համար, չեն ուզում, որ բացվի ու իր գեղեցկությամբ ուշադրություն գրավի, իրենց վրա ուշադրություն դարձնող չլինի: Մանուշակը, ձնծաղիկը, շուշանը, նունուֆարը, նարգիզը, մասրենին, սուսամբարը հավաքվում են, խորհուրդ անում կտրել վարդի թուփը...

Բայց սոխակը հանկարծ իր երգով հայտնում է, թե վարդն արդեն զարթնել է քնից...

Վարդն լըսեց զձայն պլպուլին, էբաց ըզդուռըն վրանին,
Ու էհան զկանաչ կապայն՝ հագաւ զաթլասն և զխրմզին:
Լուր ծաղկունք թառամեցան, կէաք մի զտերևըն թափեցին,
Կէաք մի այլ զփախուստ առին՝ բարձր ւ ի դժար լերունքն ելին.
Կէաք մի այլ յամօթուն կապուտ հազան ւ ի սուգ մըտին...
Նա վարդըն զարդարեց ըզբուրաստանքն ու զբաղչանին,
Ու շարժեց տերև հազար, կարմիր՝ նրման նրռան հատին.
Նա պլպուլն երեկ նըստաւ ու հարբեցաւ յանուշ հոտին,
Ու ասէր զօրն ու զգիշերն ինքն անդադար ի դէմ վարդին.
Թէ՝ Սէր է ծառն ու սէր ծաղիկն, ու սէր հաւուն ձայնն ի ծառին,
Սէր է վարդն ու սէր պլպուլն՝ սիրով նըստել ի վրայ վարդին.
Սիրով են զոյն ու զոյն ու գեղեցիկ այն ծաղկընին,
Վասըն սիրոյ փոքրիկ հաւերն ի ծաղկընուն վերայ նըստին[1]:

Բլբուլն ուրախանում է, թառում վարդի թփի վրա: Վարդը դեմքը դարձնում է դեպի սիրած բլբուլը և բացատրում իր բուռն սերը, ասում է թե սերն է, որ իրեն պահում է փչոտ թփերի միջին, սերն է իրեն կենդանի պահում, իր թերթիկները սիրուց են բացվում, հենց որ սերը հեռանա իրենից՝ քամին կառնի կտանի իրեն.

---

[1] **Կոստանդին Երզնկացի,** *Տաղեր, էջ 140-141:*

Ահա կամ ես զարդարած, իմ տերևնին զերդ հուր վառին,
Ու բացել եմ զիմ սըրտիս մէջըն ի դիմացդ, որ է դեղին.
Բա՛ց զիմ սիրտս ու համբուրէ և կըշտացիր սիրովդ հին,
Ահա զան և զիս քաղեն ւ այլ ոչ զըտնուս ի բաղչանին:
Պլպո՛ւլ, մի՛ դու զարմանար զպայծառ վարդիս զեղ պատկերին,
Զի ով որ սէր չունենայ՝ առ ինք չըկայ զեղեցկութիւն:
Ջուրըն սիրով յիս վերանայ, որ յարմատոյս առ իս քամին,
Ի ի լուսոյ արեգականն ես ժողովեմ զգեղեցկութիւն[1]*:*

Կոստանդին Երզնկացու «Բանք վարդի» բանաստեղծությունը արժանացել է հիացական գնահատումների հայ և օտար բազմաթիվ բանասերների, գրողների կողմից: Իր խոսքի կշիռն իմացող, գնահատումների մեջ զուսպ ակադեմիկոս Մ. Աբեղյանը, ի տես գրական այս գոհարի, մտքի պերճանքի ու զվարթ խայտանքի, ոգևորված գրել է թե սիրո այս գովքը 13–14-րդ դարերի «մեր հին բանաստեղծության մի աննման, մի փարթամ փթթած ծաղիկն է, որ թեև այլաբանությամբ, բայց այնպես գունագեղ ու վճիտ է հորինված, և այնպես պատշաճ է հարմարեցրած իրական կյանքին, որ պարզապես հասկացվում է աշխարհիկ բովանդակությունը: ... Այս սիրավեպի մեջ նորանոր կողմերից լրացվում է գարնան գեղազարդ պատկերը: Դա ջերմին, լուսաճաճանչ ու հրճվալից մի հարսանիք է մայր երկրի համար ձմեռային մռայլ մթությունից և սառած քարացած մեռելությունից հետո, երբ հարավային հողմի փչելով վերանում է ամեն տրտմություն և կենդանացած չարժվում, ծաղկում է բնությունը»[2]*:*

Ներկա աշխատության ծրագրից դուրս է Կոստանդին Երզնկացու ստեղծագործությունների հանգամանալից վերլուծությունը, որ կատարել են Ա. Զոպանյանը, Մ. Աբեղյանը, Ա. Սրապյանը և ուրիշներ: Փորձեցինք ցույց տալ այն նորը, որ բերեց նա միջնադարյան հայ քնարերգության մեջ և դրանով էլ դարձավ հիմնադիրը գրական մի հոսանքի, որ շարունակեցին նրանից հետո տարբեր տաղերգուներ:

Կոստանդին Երզնկացին նորարար էր նաև լեզվի հարցում: Առաջինը նա էր, որ հրաժարվեց եկեղեցու մենաշնորհը դարձած դասական գրաբարից, օգտագործեց ժողովրդական հասկանալի լեզուն, նրա հյութեղ ոճերն ու բառ ու բանը, կենդանի պատկերները, տալով դրանց բանաստեղծական չունչ ու գունագեղություն:

---

[1] **Կոստանդին Երզնկացի,** *Տաղեր, էջ 142-143:*
[2] **Մ. Աբեղյան,** *նշվ. աշխ., էջ 327:*

Այս բոլորը նկատի ունենալով է, որ Ա. Զոպանյանը նրան գերազանց է համարել Հովհաննես Թլկուրանցուց, Գրիգորիս Աղթամարցուց, Մկրտիչ Նաղաշից: Նրան համեմատել է նաև եվրոպական դասական գրողների հետ, ցույց տվել Երզնկացու առավելությունը մի քանի գրողներից: Ա. Զոպանյանը գրում է. «Եթե ձևի վերջնական կատարելության տեսակետով վար կմնա Պելլոյի երգեն, կգերազանցե զայն՝ հրճվանքի ավելի հորդ ու լայն զորությամբ մը, պատկերներու հարստությամբ և այլազանությամբ, և հոգեկան խորունկ չունչով մը, որ Պելլոյի մեջ կպակսի»[1]:

Վ. Բրյուսովը Կոստանդին Երզնկացու «Գարուն» ստեղծագործության մասին գրում է. «Զափածոյի ու լեզվի ուժով և ավյունով՝ այս պոեմը պատիվ կբերեր այդ դարի Արևմտյան Եվրոպայի ամեն մի գրականության, իսկ Եվրոպան նույնիսկ ոչինչ չունի դրան հակադրելու: Իսկ պոեմի համակող ոգին իր բոլոր մասնիկներով պատկանում է Վերածնության վեհ շնչին, երբ դա այն ժամանակ հազիվ էր ծագում Արևմուտքի առաջավոր երկրներում և անհայտ ուղիներով տարածվել էր Հայաստանի հեռավոր լեռները»[2]:

2. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ ՊԼՈՒԶ

Հովհաննես Երզնկացիով նույնքան հպարտանում է հայ գրականությունը, որքան Կոստանդին Երզնկացիով, նրա մասին նույնքան շատ է գրվել, որքան առաջինի:

Հովհաննես Երզնկացին միջնադարի համար բացառիկ երևույթ է իր բազմակողմանի զարգացմամբ, լայն գիտելիքներով, լեզուների իմացությամբ, չոչափած բնագավառների բազմազանությամբ: Եղել է բանաստեղծ, հռետոր, գիտնական, թարգմանիչ, հոգևորական, հասարակական-քաղաքական գործիչ:

Հովհաննես Երզնկացու մասին լույս են տեսել բազմաթիվ հոդվածներ, առանձին հետազոտություններ: Այս բոլորով հանդերձ՝ նրա հետ կապված որոշ հարցեր դեռ կարոտ են լուսաբանման: Ի զուր են նրա մասին գրողներից ոմանք չեչտը դրել գլխավորապես բանաստեղծ Հովհաննես Երզնկացու վրա: Այդ բնագավառում չէ նրա մնայուն տեղը, համեմատության եզրեր չունի Կոստանդինի հետ: Այն մի քանի ոտանավորները, որոնք վերագրվել են նրան և ուղի համարվել դեպի Պառնասի գագաթը, վավերական չեն, ինչպես պիտի փորձենք

---

[1] **Ա. Զոպանյան,** *Կոստանդին Երզնկացի, տե՛ս «Անահիտ», 1905, էջ 94:*

[2] **Վ. Բրյուսով,** *Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1967, էջ 86:*

ցույց տալ: Իսկ այն, ինչ վավերականորեն նրա գրչին են պատկանում, թե՛ իրենց կատարման վարպետությամբ և թե՛ գաղափարախոսությամբ դուրս չեն կարող գալ այդ դարերում վանքերի պատերից ներս ստեղծված կրոնական գրականության սահմաններից:

Հովհաննես Պլուզ Երզնկացին վարդապետ է այս բառի լայն առումով, հավատարիմ՝ եկեղեցական օրենքներին, քրիստոնեական պատգամներին: Պալատական և եկեղեցական բարձր շրջանների հետ կապված մտածող է, նրանց ականավոր տեսաբանը, բարձր հեղինակություն՝ կաթողիկոսների, իշխանների, անգամ թագավորների մոտ:

Բայց, լինելով ժամանակի ամենազարգացած մարդկանցից, շատ բարձր է կանգնած շրջապատի տգետ, նեղմիտ հոգևորականներից, նախապաշարումներից: Իր երկերում թողնում է խոհուն, բանիմաց մտածողի երևույթները փիլիսոփայորեն գնահատողի տպավորություն, գնահատումներ, սակայն, որոնք չեն մեղանչում Հայաստանյայց եկեղեցու դավանանքին:

Խավար միջավայրում նրա ունեցած բացառիկության ապացույցներից է Երզնկացու համբավի դուրս գալը Եկեղյաց գավառի շրջանակներից և տարածումը ամբողջ Հայաստանով մեկ և Կիլիկյան Հայաստանում:

Հովհաննես Երզնկացու կենսագրությունից ավելի շատ փաստեր են հասել, քան Կոստանդին Երզնկացուց:

Ծնվել է Երզնկայի Աբկա գյուղում, 1245 թվականին: Հետագայում նրա մասին գրողները կոչել են Հովհաննես Երզնկացի Պլուզ, Ծործորեցի, նաև Մաչածին: Այժմ հայ բանասիրության համար արդեն լուծված հարց է, թե Հովհաննես Երզնկացի Պլուզն ու Հովհաննես Երզնկացի Ծործորեցին տարբեր գործիչներ են: Հ. Քյուրտյանը տվել է դրա սպառիչ բացատրությունը, ուստի ավելորդ ենք համարում մտնել մանրամասնությունների մեջ, մանավանդ որ մեր աշխատության բնույթն էլ այդ չի թելադրում: Հովհաննես Երզնկացի Ծործորեցուն անդրադառնալու ենք առանձին:

Կրթությունն ստացել է նախ Սեպուհ լեռան մոտակայքում գտնըվող ս. Մինաս վանքում: Ինքը այդ մասին գրել է, ասել թե սովորել է «ի լեառն հանգստեան Սուրբ Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, յԱնապատն որ ընդ հովանեաւ նորին, յորում ի մանկական հասակին էաք վարժեալ յուսումն դպրութեան, յԱնապատն որ յանուն Սուրբ Մինասին»[1]:

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիգա, էջ 174:*

1266 թ. նա արդեն եղել է սարկավագ Երզնկայի ս. Փրկիչ եկեղեցում: Այնտեղ, նույն տարում, հազիվ 21 տարեկան, արտագրել է «Գրիգորի Աստուածաբանի առ նաւարկութիւն» երկը, դրան կցելով ընդարձակ մի հիշատակարան, որտեղ բավականաչափ տեղեկություններ տալիս է իր մասին: Այդ հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ ձեռամբ իմով, նուաստ և անարժան և մեղապարտ անձին իմոյ սուտանուն Յովհաննիսի, վատ սարկաւագի, բայց գրեցաւ ի քաղաքիս, որ կոչի Եկեղեաց գաւառս, մականունն Եղնկայ, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս, ի թուականութեանս հայոց ԷՃ ու ի ԺԵ (1266), ի հայրապետութեանն տեառն Կոստանդեայ, և ի յարհիեպիսկոպոսութեանն տեառն Սարգսի Մարհասիայի մեծի, և ի Քրիստոսապսակ իշխանի մերոյ պարոն Յովհաննիսի Տեառն ծառայի իւրաժամանակ կենացն յերկարասցի, ամէն: Արդ աղաչեմ և բազմամեղ և անարժան գրողս զսրբազնեալ քահանայդ զհայր (...) յիշեայ զհոգևոր հայր իմ զուսուցիչն և զվարդապետն զտէր Յովհաննէս, ի մաքուր և յանբիծ յաղաւթս քո, որ սպանեալ եղև յանաւրինաց սրով զենեալ. ոհ դառն տրտմութեան և անմխիթար սգոյ, ընդ նմին յիշեայ զառաջին զուսուցիչն իմ զհայր Յակոբ, և զպատուական հայրն իմ զՇիրին, և զհանգուցեալ մայրն իմ զՍափիրա, և զեղբարքս իմ զԱւետչահ և զՇահնչահ, և զհոգևոր եղբայր իմ և զուսումնակիցն զՍարգիս և զհանգուցեալ մայրն իւր... և մեղաց թողութիւն խնդրեայ ի Տէր, այլ աղաչեմ զքեզ հայր անմեղադիր լինել քեզ ինձ, եթէ սխալանք ինչ կայ ի դմայ, կամ խոչորութեան գրոյս թողութիւն արա ինձ, զի դեռ առաջին գիրն այս է, զի գրեալ է թողէք և թողցի ձեզ»[1]:

Բավական բան իմացանք. մոր անունը եղել է Սափիրա, հոր անունը՝ Շիրին, եղբայրներինը՝ Ավետչահ և Շահնչահ, մայրն այդ ժամանակ արդեն վախճանված է եղել, հայրը՝ ողջ: Ս. Մինաս վանքում աշակերտել է Հակոբ վարդապետին: Առաջին ձեռագիրն է եղել, որ արտագրել է:

Ս. Մինասի վանքից հետո ուսումը շարունակել է Արևելյան Հայաստանում, Հաղբատ և Սանահին վանքերի մոտակայքում գտնվող Կայենո ձորի վանքում: Այնտեղ էլ աշակերտել է ականավոր մատենագիր Վարդան Արևելցուն: Ենթադրվում է, թե նա այդ վանքում մնացել է մինչև Վարդանի մահը՝ 1271 թ., ապա՝ հաջորդ տարի վերադարձել է Երզնկա, այն օրերին, երբ այստեղ եղել է ս. Ներսեսի նշխարների հայտնի գյուտը (1273), որին ներկա է եղել, և ամենայն հավանականությամբ, Սարգիս արքեպիսկոպոսի հանձնարարությամբ գրել է այդ գյուտի պատմությունը:

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 174-175:*

Որ իսկապես Հովհաննես Երզնկացին այդ տարիներին ուշադրության կենտրոնում է եղել, որպես գիտուն և զարգացած մարդ, երևում է մի այլ պատասխանատու գործի նրան հանձնարարվելուց՝ դարձյալ Սարգիս արքեպիսկոպոսի կամ նրա որդու՝ Հովհաննես իշխանի կողմից:

Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն III-ը, իմանալով ս. Ներսեսի նշխարների գյուտի լուրը, հրամայել է ի պատիվ այդ իրադարձության կառուցել եկեղեցի: Կառուցվել է եկեղեցին և տեղի է ունեցել հանդիսավոր օծումը:

Ահա այդ հանդիսավոր օրվա համար հատուկ չարական է գրել ոչ այլ ոք, քան Հովհաննես Երզնկացին: Շարականը առաջին անգամ երգվել է եկեղեցու օծման առիթով: Դա չատ վերամբարձ, միաժամանակ օրվա վեհությունը խորհրդանշող երկ է, որն սկսվում է բանաստեղծական հետևյալ տողերով.

«Որ զլոյս անճառ չնորհեաց աստուածային քո գիտութեանդ, ծագեցեր յաշխարհս Հայաստանեայց, զբթած հայր երկնաւոր, զբթա ի մեղացեալքս: Որ ընտրեցեր յորովայնէ զմաքրեալն հոգւով սուրբն Ներսէս՝ ժառանգեաւ զվիճակն հայրենի, հովուեալ արդարութեամբ և իրաւամբք...»[1]:

Բոլոր հիմքերը կան ենթադրելու, թե Երզնկայում նա եղել է Սարգիս արքեպիսկոպոսի մոտիկ մարդկանցից և վայելել է մեծ հարգանք: Սարգսի ողբերգական մահից հետո էլ (1276) դեռ միառժամանակ գործել է Երզնկայում: Այդ տարիներին է, որ ս. Գրիգոր Լուսավորիչ վանքի միաբանները խնդրել են նրան կանոններ գրել իրենց միաբանության համար: Գրել է «Կանոնք և սահմանք միաբանութեան եղբարց, որ աստուածային սիրով միաբանեցան յեղբայրութիւն միմեանց յԵրզնկա» երկը:

1281 թ. մեկնել է Երուսաղեմ, նպատակ ունենալով այնտեղից անցնել Կիլիկիա, որտեղ արդեն նրան գիտեին և հնարավոր է որ նամակագրական կապ էլ ունենար:

Նա Կիլիկիայում մնացել է բավական երկար և արժանացել է պալատական մեծ պատիվների: Հակված ենք կարծելու, որ Սարգսի չարանենգ սպանությունից ընդամենը մի քանի տարի հետո կատարված այս ուղևորությունը հետապնդում էր քաղաքական նպատակներ: Գուցե և Կիլիկիա էր մեկնել Սարգսի հաջորդի՝ Ներսեսի հատուկ հանձնարարությամբ, խնդրելու հայոց Լևոն թագավորից՝ զբաղվելու իրենց ճակատագրով, մահմեդական տիրակալների հետ բանակցելիս:

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 178:*

Կիլիկիայում Հակոբ Ա Կլայեցի կաթողիկոսը նրան նշանակել է Սիս քաղաքում իր հիմնած ուսումնարանի վերակացու, իսկ Լևոն III թագավորը նրան մասնակից է դարձրել երկու որդիների՝ Հեթումի և Թորոսի ասպետական աստիճան ստանալու ճոխ հանդիսություններին, հանձնարարել արտասանել հավուր պատշաճի ճառ: Այդ ճառը նույնպես պահպանվել է և հասել մեզ: Նրա հետ մտերիմ կապեր է պահպանել գահաժառանգ Հեթումը[1]:

Կիլիկիայից վերադառնալուց հետո Երզնկայում չի ապրել, թե ի՞նչն է եղել դրա պատճառը՝ հայտնի չէ:

Այսպես թե այնպես Հովհաննես Երզնկացուն կյանքի վերջին տարիներին տեսնում ենք Վասպուրականի Արտազ գավառի ս. Աստվածածնի կամ ս. Թադեի վանքում, որտեղ շատ համերաշխ գործակցել է վանահայր Զաքարիայի հետ:

Տարիներ անց, երբ Կիլիկիայի Օշին թագավորի հրամանով 1317 թ. գումարվել է Ադանայի ժողովը, Հովհաննես Երզնկացին հրավեր է ստացել մասնակցելու այդ ժողովին: Ընդունած առաջացած տարիքին՝ մեկնել է Կիլիկիա:

Վերադառնալով Հայաստան, շարունակել է ապրել Արտազում: Դա այն շրջանն էր, երբ լատին քարոզիչներ, թափանցելով հայ իրականություն, գործում էին քողարկված ձևով: Երզնկացին որևէ անպատեհություն չի տեսել նրանց մոտենալու, նրանցից լատիներեն սովորելու մեջ: Այնքան է հմտացել այդ լեզվին, որ թարգմանել է Թովմաս Աքվինացու «Աստվածաբանության» մի մասը:

Հ. Քյուրտյանը չի ընդունում, որ Հովհաննես Երզնկացին է թարգմանել այդ գիրքը, քանի որ ուներ առաջացած տարիք, ութսունն անց պիտի լիներ[2]: Անշուշտ, սա հիմնավոր փաստարկ չէ: Հայագետներ Ղ. Ալիշանը, Ե. Շահազիզը և ուրիշներ բանասիրական աշխատանքով են զբաղվել 80 տարեկանից հետո նույնպես: Իսկ լատիներենը նա մասամբ էլ կարող էր սովորած լինել Կիլիկիայում ապրելու տարիներին:

Նրա կյանքի այդ տարիներին է, որ մի մեծ երկրաշարժից կործանվել է ս. Թադեի վանքը: Այնտեղ էլ, հավանորեն խոր ծերության հասակում 1326 թվին վախճանվել է Հովհաննես Երզնկացին:

Հովհաննես Երզնկացի Պլուզն ունեցել է ճոխ գրադարան, որը ցանկացել է նվիրել Կիլիկիայի կաթողիկոսարանին, նկատի ունենալով Հռոմկլայի վանքի անառիկ դիրքը, բայց խոր վշտով լսել է վանքի անկումը ու նրա հարստության առևանգումը:

---

[1] **Ղ. Ալիշան,** *Հուշիկք հայրենյաց հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1870, էջ 475–476:*

[2] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 171:*

Ինչպես տեսանք, Հովհաննես Երզնկացին ունեցել է իմաստավորված կյանք, որը, սակայն, անցել է բացառապես վանքերի պատերից ներս, հոգևոր և աշխարհիկ բարձր շրջաններում:

Ունեցել է ստեղծագործական բեղուն գործունեություն, գրել է բազմաթիվ երկեր: Դրանց մեջ բացառիկ տեղ է գրավում «Մեկնութիւն քերականին» գործը, որն ունի մտահղացման ու կատարման ուշագրավ պատմություն: Այդ մասին ինքը տվել է բավականաչափ տեղեկություն:

Մեծ գովեստներ չռայլելով Հայոց Հակոբ Ա կաթողիկոսին, ասում է թե նա է իրեն հրամայել՝ աշակերտների հետ պատրաստել մի Քերականություն: Եվ որովհետև կաթողիկոսի այդ առաջարկությունը հաճելի է եղել իր համար, համաձայնվել է: Կաթողիկոսը խնդրել է նաև, որ Երզնկացին գրի քերականության մեկնությունը, լրացնի, բացատրի իրենից առաջ նույն բանը կատարած մարդկանց թերի թողածը: Ասում է, թե այդ գործը իրենից առաջ կատարել էր Գրիգոր Մագիստրոսը, որի մեկնությամբ է, որ դասավանդել էին մինչ այդ, ինքն էլ դրանով էր սովորել:

«Այժմ ասեմ թե ինչ էր պակասում նախորդ մեկնություններում և ինչ ավելացրինք մենք, նաև ուզում եմ մի քանի խորհուրդներ տալ ուսումնասերներին, որովհետև իմաստության հմուտ Մագիստրոս իշխանը աշխատել էր այդ բանի վրա, միմյանց միացնելով խոսքերը հետևյալ երեք մեկնիչների՝ Դավիթ Փիլիսոփայի, Մովսես Քերթողի և մի ուրիշ իմաստունի, որի անունը չի հիշատակում... Բայց նա միմյանց չէր խառնել մեկնիչների խոսքերը, և ոչ էլ յուրաքանչյուր մեկնության հարմար ու ճիշտ բառեր էր գրել: ... Ուստի այն հարցերը, որոնց հստակ լուծումը չէր տրված, առիթ էին տալիս մտքերի շփոթության, իսկ այն բաները, որոնք կրկնվում էին, դառնում էին ձանձրալի: Նախադասությունն ու ստորադասությունը տեղին չլինելով՝ դրանց օգտագործումը դառնում էր հոգնեցուցիչ: Մենք ժամանակ հատկացնելով՝ աշխատել էինք հավաքել քերականության մեկնությունները, գտել էինք յուրաքանչյուրի աշխատությունը, առանձին կատարված կամ համախմբված մի գրքի մեջ, որի հին օրինակները ուսումնասեր Պարոն Հովհաննեսը՝ մեծապատիվ տեր Սարգսի որդին, գտել էր Երզնկա մայրաքաղաքի ինչ որ տեղում: Դրանց մեջ էին մեկնությունները Դավիթ Փիլիսոփայի, Մովսես Քերթողի, և երեք այլ մեկնիչների, որոնց անունը չի հիշված. այնտեղ էր նաև Բարսեղի մեկնությունը: Դերջանի վանքում էլ գտա Համամ Արևելցի վարդապետի պատմությունը: Որոշ նյութեր էլ քաղեցի Ըռըստակեսի դա-

սագրքից: Այս մեկնիչների գրքերից, դեսից դենից խոսքի լուծումով գրաղված մեր իմաստուններից, երբեմն էլ այլ իմաստասիրական գրքերից անհրաժեշտ նյութեր քաղելով, իրենց համագոր խոսքի մոտը դրինք ու այս բոլորից կազմեցինք սույն մեկնությունը... Եվ այսպես, ավարտելով մեր նպատակադրած աշխատանքը, այն ընծայեցինք մեր մորը՝ սուրբ եկեղեցուն, հնարավորություն ստեղծեցինք որ ուսանող պատանիները օգտվեն նրանից»[1]:

Այս ընդարձակ բացատրությունը ուշագրավ է շատ կողմերից: Նախ՝ աչքի է ընկնում Երզնկացու գիտական պատասխանատվության խոր զգացողությունը: Ինչպես Պատմահայր Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» սկզբում մեծ բարեխղճությամբ ծանոթացնում է, թե իրենից առաջ ինչ է կատարվել և ինչ աղբյուրներ է օգտագործել, Երզնկացին էլ մանրամասնորեն թվարկում է ոչ միայն իր օգտագործած գրականությունը, այլև ցույց է տալիս նրանց թերությունները, նշում այն նորը, որ իրենն է: Նրա թվարկումից երևում է, թե որքան շատ աղբյուրներ է օգտագործել, գուցե և օտար լեզուներով, մի բան, որ բացառիկ երևույթ էր այդ դարերում:

Դարձյալ պատասխանատվության գիտակցությամբ պիտի բացատրել այն փաստը, որ հաշվի առնելով տարբեր դասի աշակերտների կրթական մակարդակը, տրամադրելի ժամանակը, նա իր մեկնությունը կազմել է երկու տարբերակով, մեկը ընդարձակ, մյուսը՝ համառոտ: Առաջինը նա շարադրել է Սեպուհ լեռան վանքում, իր աշակերտներին սովորեցնելու համար: Ապա նա կրկին անդրադարձել է այդ նյութին Կիլիկիայում: Գրել է ավելի ընդարձակ տարբերակը, որի առաջաբանում ի միջի այլոց ուշագրավ տողեր է նվիրել Հեթում II թագավորին. «Հայոց աստվածասեր Հեթում թագավորը, որդին բարեպաշտ Լևոնի, որդին՝ իմաստուն Հեթում արքայի և սուրբ թագուհի Զաբելի, որն էլ դուստրն էր առաջավոր պսակավոր Լևոնի, Ստեփանի որդու, Լևոնի որդու, Կոստանդինի որդու, սա էլ Ռուբեն մեծ իշխանի որդու, սերած երկու թագավորական ցեղերից՝ Բագրատունիներից և Արծրունիներից...»[2]:

Կիլիկյան թագավորության ամբողջ տոհմագրությունը այսպես թվարկելուց հետո Հովհաննես Երզնկացին վերամբարձ մակդիրներով հյուսում է Հեթումի գովքը, նրան համարում «բարեպաշտության բողբոջ», «գարնանային ծաղիկ», «սպեղանի և դեղ ամոքիչ», «ուս-

---

[1] **Н. Адонц,** Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. LXXXVII—XC.

[2] *Մաշտոցի անվ. Մատենադարան, Ձեռագիր № 2266, էջ 195 բ–196 ա:*

յալ մարդկանց հարգող ու գնահատող», «ավետաբեր աստղ»: Դրա համար էլ, եզրակացնում է Հովհաննես Երզնկացին, իր այդ գիրքը ձոնում է «Բիւր բարեաց պարտականս, խոհեմամիտ և իմաստութեան պտուղ արքային»[1]:

Ընդարձակ ներկայացրեցինք Հովհաննես Երզնկացու լեզվաբանական աշխատության ստեղծագործական պատմությունը, որովհետև այդ աշխատությունը համարվում է անկյունաքար հայ լեզվաբանության և ունեցել է համազգային նշանակություն: Զենք խոսելու աշխատության լեզվաբանական արժանիքների մասին, դուրս համարելով մեր նպատակից, բավականանանք այն գնահատականով, որ տալիս է Երզնկացու այս նշանավոր գրքին ակադեմիկոս Է. Աղայանը. «Այսպիսով, ահա, նրա գործը դառնում է իսկապես իրենից առաջ եղած բոլոր քերականական գործերի հանրագումարը և, միաժամանակ, հետագայի այդ կարգի աշխատությունների հիմնական աղբյուրը հանդիսանում. սակայն Երզնկացու աշխատությունն արժեքավոր է ոչ միայն դրանով, այլև այն բանով, որ նա գրեթե միակ վստահելի աղբյուրն է իր օգտագործած աղբյուրների՝ մեզ հասած ձեռագրերի սրբագրման համար, մանավանդ Մագիստրոսի մեկնության համեմատական օգտագործմամբ. նրա վկայությունները վստահելի և կողմնորոշիչ են դառնում հենց այն բանով, որ յուրաքանչյուր վկայության դիմաց հիշված է հեղինակը. իսկ այդ չափազանց մեծ արժեք է տալիս նրա գործին նաև բանասիրական տեսակետից»[2]:

Հովհաննես Երզնկացու «Հավաքումն մեկնութեան քերականին» նշանավոր աշխատությունը միայն լեզվաբանական, քերականական հարցեր չէ, որ չոչափում է: Այնտեղ խոսվում է գրականագիտական, գեղագիտական, երաժշտական և այլ խնդիրների մասին: Տրվում են սահմանումներ, թե ինչ բան է տաղերգությունը, ողբերգությունը, դյուցազներգությունը, կատակերգությունը, և գրական այլ ժանրեր, այս բոլորի համար բերելով օրինակներ անտիկ հեղինակներից, նաև Հոմերոսի «Իլիականից» ու «Ոդիսականից»:

Երզնկացին բացատրում է երաժշտության թողած ազդեցությունը մարդու հոգու և մարմնի վրա, խոսում միջնադարյան Հայաստանում երաժշտությամբ հիվանդություններ բուժելու փորձի մասին: Նա երաժշտությունը բաժանում է երկու կարգի՝ «աստվածային», որ կատարվում է սրբատեղիներում, եկեղեցիներում, «մարդկային», որ կատարվում է «ուրախական» հանդեսներում, խնջույքներում:

---

[1] *Մաշտոցի անվ. Մատենադարան, Ձեռագիր № 2266, էջ 196 բ:*

[2] **Է. Աղայան,** *Հայ լեզվաբանության պատմություն, հատ. 1, Երևան, 1958, էջ 84:*

Երզնկացին մի ամբողջ ուսմունք է ստեղծել երաժշտի գիտակցության մեջ ծագող «անմարմին» ելևէջների (ինտոնացիաների) ու կատարման ընթացքում մարմնավորող «մեծ և փոքր», «ծանր ու թեթև», «սուր և բութ», «սուղ և երկար» և այլ ձայների մասին[1]:

Նա միայն երաժշտական տեսաբան չի եղել, այլև ստեղծագործող և կատարող: Գրել է կրոնական, աշխարհիկ բովանդակության տաղեր, քառյակներ, ողբեր, շարականներ, հորինել դրանց եղանակները: Շարականներ է գրել Գրիգոր Լուսավորչի, Ներսես Մեծի հիշատակին:

Նրա հորինած շարականները միայն սովորական աղոթքներ, Աստծու փառաբանություններ չեն, այլ արտահայտում են հայրենասիրական գաղափարներ, մարդու ներաշխարհի հույզերը արտահայտող գեղեցիկ պատկերներ, հեռու են խրթնաբանությունից, դժվարընկալելի համեմատություններից, պարզ են իրենց լեզվով, արտահայտչամիջոցներով:

Երզնկացուն վերագրվել են արձակ և չափածո մի շարք երկեր, խրատական տաղեր, մեկնություններ: Դրանց մանրամասն անդրադառնալը դուրս է մեր ծրագրից, մանավանդ որ այդ բանը կատարել են Ա. Սրապյանը, Հովհաննես Երզնկացուն նվիրված մենագրական հետազոտությունում[2] և Է. Բաղդասարյանը՝ Երզնկացու խրատական գործերի հրատարակությամբ[3] ներածական ընդարձակ հոդվածներով:

Ուզում ենք անդրադառնալ մի կարևոր հարցի՝ Երզնկացուն վերաբերվող սիրային տաղերին, մասնավորապես «Այս ինչ կրակ էր» սկզբնատողով սկսվող գործին:

Մեզնից առաջ Հ. Քյուրտյանը պաշտպանել է այն ճիշտ տեսակետը, թե Հովհաննես Երզնկացին (Պլուզը) սիրային բանաստեղծություններ չի գրել: «Այդպիսի վերագրում այս զուտ կրոնավոր հայ գիտնականին, ըստ իս բացառիկ երևակայության արդյունք կրնա ըլլալ»[4]:

Հ. Քյուրտյանը ուշադրություն է դարձնում թե գաղափարական՝ սիրային կողմի վրա, թե լեզվական ատաղձի:

Բանասերի առաջին նկատառումը կարող ենք վերապահությամբ ընդունել, բայց երկրորդը՝ անվարան:

---

[1] «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 6, Երևան, 1980, էջ 560:

[2] **Ա. Սրապյան,** Հովհաննես Երզնկացի. ուսումնասիրություն և բնագրեր, Երևան, 1958:

[3] **Է. Բաղդասարյան,** Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1977:

[4] **Հ. Քյուրտյան, Երիզա,** էջ 223:

Խոսենք «Այս ինչ կրակ էր» չքնաղ բանաստեղծության մասին:

Ա. Սրապյանը «Հովհաննես Երզնկացի» գրքում ոչ միայն տեքստային բաժնում է զետեղել այդ բանաստեղծությունը, այլև ներածական հոդվածում գրել է. «Այս տաղը, որ միջնադարյան հայ բանաստեղծության մեջ մեզ հայտնի առաջին սիրային քերթվածն է, առաջին անգամն էլ մեր պոեզիայում ցույց է տալիս սիրո ամենազոր, անհաղթելի ուժը: Սերը հաղթահարում է ամեն մի արգելք, ամեն խոչընդոտ, նույնիսկ կրոն, հավատ ու ազգություն: ... Տաղը միաժամանակ երևան է բերում հեղինակի մեծ վարպետությունը, պատմելու բարձր արվեստը, նկարագրելու չնորհքն ու աչխույժ, ռիթմիկ ոճը»[1]:

Արդարև այդ գործը բացառիկ երևույթ է մեր միջնադարյան չափածո գրականության մեջ, և եթե խկապես ապացուցվի, որ գրվել է 13-րդ դարում, կարելի է համարել այդ դարի մարգարիտը: Բայց արդյո՞ք հնարավոր պիտի լինի այդ բանն ապացուցել:

Մենք համամիտ ենք Քյուրտյանի այն կարծիքին, թե այդ երգը Հովհաննես Երզնկացի Պլուզինը չէ, այլ մի այլ Հովհաննես Երզնկացու: Կարծում ենք նաև, որ չի կարող ավելի վաղ գրված լինել, քան 15-րդ դարը, գուցե և 16-րդ դարը:

Փաստարկենք մեր տեսակետը, չկրկնելով Քյուրտյանին:

Բանաստեղծությունը մեզ հասել է չորս տարբեր ձեռագրերում, որոնցից ամենահինը արտագրված է 1695 թվականին: Կնչանակի 17-րդ դարի վերջերին, ընդհուպ 18-րդ դարի չեմին: Մյուս երեքը ավելի ուշ չրջանի արտագրություններ են: Ուրեմն մոտ 400 տարվա մի ժամանակաչրջան է բաժանում Հովհաննես Երզնկացու ապրած օրերից:

Եթե անգամ Երզնկացի Պլուզը գրած լիներ, այդ չորս հարյուր տարիների ընթացքում պետք է որ գործը կրած լիներ մեծ փոփոխություններ, մանավանդ որ այն երգվել է, և երգողներից յուրաքանչյուրը կարող էր ըստ իր ճաչակի փոխել բառեր, նախադասություններ, անգամ անուններ: Բայց ինչո՞ւ մտածել թե Հովհաննես Պլուզ Երզնկացին է գրել ու փոփոխությունների է ենթարկվել և չմտածել թե չորս հարյուր տարիների ընթացքում կարող էր մի ուրիչ Հովհաննես Երզնկացի հանդես գար, մանավանդ որ Հովհաննես անունը ամենից չատ տարածված անուններից է: Իսկ արտագրողները հեշտությամբ կարող էին սխալմամբ այն վերագրել նչանավոր Հովհաննես Երզնկացուն:

---

[1] **Ա. Սրապյան,** *Հովհաննես Երզնկացի, էջ 114-115:*

Միջնադարյան տաղերգուների մասին գրողներից և ոչ մեկը՝ Ղ. Ալիշան, Գ. Զարպհանալյան, մեր օրերում Ա. Զոպանյան, Մ. Աբեղյան այդ բանաստեղծությունը չեն վերագրել Հովհաննես Երզնկացուն, մանավանդ, որ Աբեղյանը քննության է առել Երզնկացու չատ ավելի երկրորդական գործերը և չէր կարող մոռացության տալ նման մի գոհար:

Առաջինը պրոֆ. Մ. Մկրյանն է, որ 1938 թ. հրատարակած «13–18-րդ դարերի հայ աշխարհիկ գրականություն» ժողովածուում բանաստեղծությունը վերագրել է Հովհաննես Երզնկացուն, հետևելով Կ. Կոստանյանցի սխալին, մինչդեռ հայտնի է, որ Կոստանյանցի ժողովածուները գիտական նպատակ չեն հետապնդել և նման թյուրիմացություններ որքան ասեք՝ պարունակում են:

Մենք ուզում ենք այդ բանաստեղծությունը Հովհաննես Պլուզ Երզնկացունը չլինելը փաստարկել այլ տեսանկյունից, որի վրա մեր բանասերները զարմանալիորեն ուշադրություն չեն դարձրել: Մեզ զբաղեցնելու է հիշյալ երկի թուրքերեն նախադասությունների լեզուն:

Նախ ասենք, որ 13-րդ դարում թուրքերենի ազդեցություն չի նկատվում հայ մատենագրության մեջ: Նկատվում է, այն էլ բավականաչափ ուժեղ, պարսկերենի, արաբերենի ազդեցությունը: Այդ երկու լեզուներն էլ հետագա դարերում է, որ ազդեցին թուրքերենի վրա, աստիճանաբար անճանաչելի դարձնելով բուն թուրք-թաթարական միջուկը: Այժմ օսմաներեն կոչվող թուրքերենը ամբողջովին առլցված էր արաբերենով:

Կոստանդին Երզնկացու 24 բանաստեղծություններում գտնում ենք հարյուրից ավելի արաբերեն և պարսկերեն բառեր, բայց և ոչ մեկ թուրքերեն բառ: Մինչդեռ մեզ զբաղեցնող բանաստեղծությունում կան ամբողջական նախադասություններ, տողեր, այն էլ ոչ թե 13-րդ և 14-րդ դարերի թաթարերենով գրված, այլ՝ 17–18-րդ դարերի ժողովրդական թուրքերենով, որն անհամեմատ զերծ էր արաբական ազդեցությունից: Օրինակ՝ հայ տղան ասում է մոլլայի աղջկան.

Մէն միւսիւրման, մոլլայ ղըզի,
Պէն Յովհաննէս քէշիշ օղլի,
Խընձորդ ի յիս ի՞նչ բան ունի:

Թուրք աղջիկը պատասխանում է

Եօրու, եօրու, կեաւուր օղլի,
Կէօթիւր պիզտէն մուհալ սօզի,
Մէն Յովհաննէս, քէշիշ օղլի,
Պէն միսիւրման մոլլա ղրզի,
Զիրար սիրենք խօշ կու լինի[1]:

Սրանք ամենապարզ թուրքերենով, այն էլ ժողովրդական լեզվով գրված նախադասություններ են, հասկանալի բոլորին, նաև այժմ: Հետո ուշադրություն է գրավում զուտ թուրքերեն բառերի առատությունն ամբողջ բանաստեղծության մեջ, մի բան, որ պակասում է Հովհաննես Երզնկացու չափածո մյուս գործերում, անգամ աշխարհիկ բովանդակություն ունեցողներում:

Բացառված է այն կարծիքը, թե այս ստեղծագործությունը Հովհաննես Երզնկացունն է:

Ոմանք էլ այն վերագրել են Հովհաննես Թլկուրանցուն, որը նույնպես թուրքերեն բանաստեղծություններ է գրել: Նախ ասենք որ Թլկուրանցին ապրել է 15-րդ դարում, մոտ 200 տարի Երզնկացուց հետո, ուրեմն նրա թուրքերենը ավելի մոտ պիտի լիներ օսմաներենին, մինչդեռ միանգամայն հակառակն է: Ահա մի քառյակ՝

Ղարատիր դաշլարի խումար.
Իւզու կուլուստանլու ղէմէր:
Այ զոնճա կուլլէրինկ կէնճի.
Էյլէտինկ պենի զարընճի[2]:

Ով թուրքերեն լեզվի տարրական ծանոթությունն ունի, իսկույն կնկատի, որ Թլկուրանցու և Երզնկացու թուրքերենների մեջ սար ու ձոր կա: Թլկուրանցունը թաթարերեն է, Երզնկացունը նոր, հասկանալի օսմաներեն: Թուրքերեն բառերն էլ Թլկուրանցու մոտ օգտագործված են հին թուրքերենի առոգանությամբ:

Բայց այս չի նշանակում, թե Երզնկացին չափածո երկեր, այն էլ աշխարհիկ բովանդակությամբ, չի գրել: Գրել է: Մեր կարծիքով դրանց թիվը 15-ից չի անցնում: Հիշենք մի քանիսը՝ առաջին տողերով. «Օրհնեալ է Աստուծոյ անունն», «Յամենայն մեղաց ի զատ», «Ադամայ որդիք ամեն», «Մեր Տէրն ի դրախտն երեկ» և այլն:

---

[1] **Ա. Սրապյան,** *Հովհաննես Երզնկացի, էջ 164-165:*
[2] **Հովհաննես Թլկուրանցի,** *Տաղեր, Երևան, 1960, էջ 219:*

Ոչ մի կասկած չկա, որ սրանք Հովհաննես Երզնկացի Պլուզինն են. այդ բանը երևում է թե՛ նրանց բարձրացրած խրատական գաղափարախոսությամբ և թե՛ լեզվով, որ շատ է տարբեր «Այս ինչ կրակ էր» հայտնի գործից:

«Այս ինչ կրակ է» երկը ուրիշի գործ է: Այդ ոտանավորը հատուկ քննության նյութ է դարձրել նաև Ա. Մնացականյանը և ցույց տվել նրա բազմաթիվ տարբերակները արտագրված վերջին մի քանի հարյուր տարիների ընթացքում:

Մինչև այստեղ մենք խոսեցինք Հովհաննես Երզնկացու լեզվաբանական, գեղարվեստական երկերի մասին, բայց նա զբաղվել է նաև ճշգրիտ գիտություններով՝ տիեզերագիտություն, բժշկություն, դեղագործություն, որոնցում առավել հստակ հանդես է եկել նրա փիլիսոփայական գաղափարախոսությունը, աշխարհընկալման միտումը:

Նրա երկերի մեջ կարևոր տեղ է գրավում «Բանք յաղագս երկնային շարժմանց» ճառը: Գրել է Կիլիկիայից վերադառնալուց հետո, Թիֆլիսում: Դարձյալ Թիֆլիսում գրել է 1000 տողանոց չափածո մի երկ նույն նյութի շուրջ: Այս երկու երկերը միասին լույս են տեսել 1792 թվականին, ընդարձակ մի վերնագրով, որտեղ խոսվում է նաև դրանք գրի առնելու հանգամանքների մասին[1]:

Թե այս աշխատությունում և թե մեր արդեն քննության առած Քերականությունում ու այլ գործերում նա զարգացրել է իր փիլիսոփայական հայացքները աշխարհի ստեղծման, մարդու և տիեզերքի կապի, հոգևոր և մարմնական գոյի ու բազմաթիվ այլ հարցերի մասին:

Նա միանգամյան գիտական բացատրություններ է տվել երկնային մարմինների, բնական երևույթների, Արկտիկայի, բևեռի, օր ու գիշերվա վեցամսյա տևողության և այլ հարցերի մասին, այդ թվում՝ մարդու և բնության փոխհարաբերության:

Նա, օրինակ, մարդու ուղեղը համարում է մտածողության և զգացողության կենտրոնը, հոգեկան երևույթները բացատրում է մարմնում կատարվող նյութական փոփոխություններով, արտաքին ազդեցություններով:

Ըստ նրա նյութը երբեք չի ոչնչանում, փոխում է միայն իր գոյաձևը, տեսակը: Մահը ոչ թե հոգու բացակայությունն է մարմնից, այլ մարմնի նյութի քայքայումը: Նա գտնում է, որ կյանքի և գոյու-

---

[1] **Հովհաննես Երզնկացի,** *Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժմանէ, Նոր Նախիջևան, 1792:*

թյան հիմքը չարժումն է, միտքը խոպան հողի է նման «որ ինչ սերմանես՝ դայն պտղաբերե»[1]:

«Հովհաննես Երզնկացին հայ միջնադարյան գրականության գարթոնքի, գիտության և արվեստների վերածնության արտահայտությունն է»,- իրավամբ ասված է «Հայկական սովետական հանրագիտարանում»:

3. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Մինչև վերջին տասնամյակներն այս նշանավոր գործիչը չփոթվել էր Հովհաննես Երզնկացի Պլուզի հետ: Թյուրիմացությունը գալիս էր 17-րդ դարից: Նրանց ստեղծագործությունների գրիչները սխալմամբ միացրել են այդ երկու անունները այն պարզ պատճառով, որ երկուսն էլ եղել են Արտազի Ծործոր վանքում, երկուսն էլ երզնկացի են, երկուսն էլ տաղեր են հորինել:

Կասկածողներ, թե Պլուզն ու Ծործորեցին կարող էին տարբեր անձնավորություններ լինել՝ նշմարվել են 19-րդ դարի վերջերից: Ղ. Ալիշանը թեև նրանց համարել է նույն անձնավորությունը, սակայն հայտնել է տարակուսանք:

Առաջինը այդ խնդիրը մանրակրկիտ քննության է ենթարկել Հ. Քյուրտյանը «Երիզա» աշխատության մեջ և անառարկելի փաստերով ապացուցել է թե դրանք տարբեր մարդիկ են, տարբեր թե՛ ոճով, գրելակերպով, գրական նախասիրություններով և թե՛ զարգացման աստիճանով[2]:

Հ. Քյուրտյանին հետևել է Ա. Սրապյանը:

Արդ՝ ո՞վ է այս Հովհաննեսը, որ եղել է փիլիսոփա, մեկնիչ, թարգմանիչ, գրող: Ծնված պետք է լինի Երզնկայում կամ նրա գյուղերից մեկում, մոտավորապես 1270-ական թվականներին: Եղբորորդին է Կիրակոս Երզնկացու: Նախնական կրթությունն ստացել է Եկեղյաց գավառի վանքերից մեկում, ապա ուսումը շարունակել է Գլաձորի համալսարանում: Գլաձորից էլ մեկնել է Արտազ, գործել Ծործորի վանքում, որի համար էլ, ըստ երևույթին, կոչվել է Ծործորեցի: Աշակերտել է Եսայի Նչեցուն:

Ենթադրվում է, որ թաղվել է Հաղբատի վանքում:

---

[1] *Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքների մասին մանրամասն տե՛ս* **Գ. Գրիգորյան,** *Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները, Երևան, 1962:*

[2] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 236 և հտ.:*

Նրա անվան հիշատակությանը առաջին անգամ հանդիպում ենք 1302 թ. Թեղենյաց վանքում Եսայի Նչեցու համար արտագրված Ներսես Լամբրոնացու «Սաղմոսաց մեկնութեան» հիշատակարանում, որտեղ ասված է. «Յովհաննէս անուն, որ էր ի հռչակաւոր քաղաքէն Եղնկայ կոչեցեալ»[1]: Այդ ձեռագրի կեսը ինքն է գրել, կեսը՝ Վարդան գրիչը:

Գլաձորի վանքում էր նա 1302 թվից: Կան փաստեր, որ նա 1312 թվին Արտազում զբաղվել է գրչությամբ և կրթական գործածությամբ: Քյուրտյանը նրան է վերագրում Ղ. Ալիշանի հիշատակած մի ճառը, որի խորագիրն է «Յովհաննէս վարդապետի Ծործորեցոյն արարեալ ի բանէ Եսայեայ որ ասէ Հոգի տեառն ի վերայ իմ»[2]:

Ունեցել է հասարակական, քաղաքական եռուն գործունեություն: Նպաստել է կաթոլիկության տարածմանը Հայաստանում, մասնակցել է 1317 թ. Աղանայում գումարված միարարական ժողովին:

Գրել է մեկնություններ, քարոզներ, չափածո երկեր, փիլիսոփայական թղթեր: Հորինել է «Համառօտ տեսութիւն քերականին» խորագրով մի երկ, հավանաբար որպես ուսումնական ձեռնարկ:

Նրա գրած Մատթեոսի Ավետարանի մեկնության հիշատակարանում կարդում ենք. «Ապիկար ոգիս Յովհաննէս Եղնկայեցի, սպասաւոր բանի, բնակեալ ի վիճակ սուրբ Առաքելոյն Թադէոսի ի վանս Ծործորու կոչեցեալ... եղև գրութիւն սորա ի թիւ մարդեղութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ՌՅԺԶ (1316)»[3]:

Նույն այդ տարում նա գրի է առել Մխիթար Գոչի 28 առակները:

1318 թվականին էլ արտագրել է մի Աստուածաշունչ՝ Նչեցու համար: Հ. Քյուրտյանը նրան է վերագրում Թովմա Աքվինացու «Աստվածաբանութեան» թարգմանությունը:

Քյուրտյանը կասկածում է, թե նրա արտագրած վերոհիշյալ առակները պատկանում են Մխիթար Գոչին: Հնարավոր է, որ ինքը գրի առած լինի՝ ըստ իր լսածների, մանավանդ որ Ծործորեցին իր ժողովածուի ոչ սկզբում և ոչ էլ վերջում չի հիշատակում Մխիթար Գոչի անունը, մի բան, որ պարտադիր կերպով կիրառվում էր նման դեպքերում:

Վենետիկի Մխիթարյաններն էլ, լույս ընծայելով Գոչի առակները, դրանք չեն մտցրել իրենց ժողովածուի մեջ և առաջին անգամ Ն. Մառն է որ Գոչին է վերագրել հիշյալ առակները: Մառին հետևել

---

[1] **Լ. Ս. Խաչիկյան,** *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 6:*

[2] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 240:*

[3] *Նույն տեղում, էջ 238–239:*

է Մ. Աբեղյանը, որին չի զբաղեցրել առակների հեղինակային պատկանելության հարցը:

Երզնկացու արտագրած ժողովածուի հիշատակարանի որոշ մըտքերը ավելի են խորացնում կասկածը: Այնտեղ ոչ միայն Գոչի անունը չի հիշատակվում, որպես առակների հեղինակ, այլ ուղղակի ասված է. «Եւ այս առակք ***ստեղծականք*** *աւարտեցան ի փառս Քրիստոսի... զվերջացեալ ի բարի գործոց զտարտամ գրիչս զՅովհաննէս ծանօթ բանի և տեղեաւ Եզնկացի, իսկ այժմ Ծործորեցի, աղաչեմ չմոռանալ ի բարիս զիս և զիմն ամենայն, ի թուին փրկչին ՌՅԺԶ (1316)»[1]:*

Եթե հաստատվի, որ Հովհաննես Երզնկացի Ծործորեցու կազմած ժողովածուի առակները Գոչինը չեն, ապա միջնադարյան հայ առակագիրների թիվը բարձրանում է երեքի՝ Վարդան Այգեկցի, Մխիթար Գոչ, Հովհաննես Երզնկացի Ծործորեցի:

Այստեղից կարող ենք համարձակ մի քայլ անել և Ծործորեցուն վերագրել սիրային այն բանաստեղծությունները, որոնք սխալմամբ վերագրվել են Հովհաննես Երզնկացի Պլուզին: Խոսքը չի վերաբերում միայն «Այս ինչ կրակ էր» բառերով սկսվող գործին, որը գրված է հետագայում:

Այդպիսի բանաստեղծություն ենք համարում, օրինակ, «Երկուսն ի մեկ տեղ բերած» բառերով սկսվող գործը, որը պարզապես նըվիրված է հոգու և մարմնի պայքարին, մարմնականի, այսինքն՝ աշխարհիկի այնքան ակնհայտնի նախապատվությամբ, որ երբեք չէր կարող նման բան գրել հայ եկեղեցու բարձրաստիճան մի պաշտոնյա:

Հրաշալի այս բանաստեղծությունը բերում ենք ամբողջությամբ, որպեսզի ընթերցողը գաղափար կազմի նրանում արտահայտված աշխարհիկի խոր զգացողության մասին:

Երկուսն ի մէկ տեղ բերած, զերթ ընկեր կասեն թե պահէ,
Ու չորս բընութիւն օտար հետ իրաց կասեն թէ սազէ.
Հինգ դուռն է ի բաց թողած, զայդ ամուր կասեն թէ փակէ,
Զիս հոգան ի յայսոց միջին, զերթ կըրակ ըզմոմն կու հալէ:
Զերկուսս ընկեր ո՞նց պահեմ, մեկըս՝ հող, մէկըս հոգի է.
Հոգիս թէ ի վեր քարշէ, հողըս ծանր ի վայր կու հակէ,
Վախեմ թէ հողոյս լըսեմ նա հոգոյս լոյսն պակասէ,
Ու հետ հոգոյն ո՞վ թըռչի, երբ նորա տունըն հեռի է:
Զայս չորս յիրար ո՞նց սազեմ. ամէն մէկ յինքըն կու քաշէ,
Զոր հողըս խուչկիկ առնէ, ջուրըս գէջ կու ցըրտացնէ,

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 239:*

Քամին զիս յերերք ունի, կըրակին բոցըն կու վառէ.
Ընցգուն սիրելի չարկամ մէկտեղ ո՞վ իսկի տեսել է:
Հինգ դուռն է ի բաց թողած, թէ՝ փակէ, որ գող չըմտնէ,
Այս բերդս է զանձով ի լի ու հազար չարկամ կու մըտնէ,
Զչարկամս ես ի յիս ունիմ, որ զդրուիս զամէն կու քակէ,
Զթագաւորս որ ի ներս նըստիլ, նա սա այլ գողըն կու խարէ:
Խելօքին հարցուկս եղան, թե զպատճառն ո՞վ իսկի գիտէ,
Աստուած է՞ր հոգի ստեղծել ւ ի հողոյ մարմին կապել է,
Կարծեմ վասն այնոր արար, թէ ի վեր քարշել զնա կարէ,
Կամ զհոգին ի մէջ մարմնոյն քան զխալաս ոսկի նա զուգէ[1]*:*

Այս երգի յուրաքանչյուր տողը ըմբոստացում է գիտնական Հով-հաննես Երզնկացու (Պլուզի) գաղափարների ու նրա որդեգրած ոճի դեմ: Նա այդպիսի ոտանավոր չէր կարող գրել ո՛չ երիտասարդ հա-սակում և ո՛չ էլ ծերության:

Այսպես թե այնպես Հովհաննես Երզնկացի Ծործորեցին դեռ ա-մենից քիչ ուսումնասիրված հեղինակներից է և ապագա հետազո-տողները կարող են բացահայտել նրա ստեղծագործական կյանքի մութ էջերը, ամբողջացնելով նաև նրա կենսագրությունը:

Ի դեպ՝ բնութագրական է, որ իր գրեթե բոլոր հիշատակարան-ներում Հովհաննես Երզնկացի Ծործորեցին ի տարբերություն Պլուզի, շարունակ հիշեցնում է, թե հետագայում են նրան Ծործորեցի կոչել, «Զոր այժմ Ծործորեցի գրեն» նախադասությամբ:

4. ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ

Այս Երզնկացին չունի նախորդների կշիռը և նրա տեղն էլ Երզն-կայի մտավոր զարթոնքի մեջ ավելի համեստ է: Այդ է պատճառը, որ անունը քիչ է հոլովվել մեր բանասիրության մեջ:

Կիրակոս Երզնկացին եղել է հիմնականում կրթական գործիչ, գրիչ: Մատենագրական վաստակը նշանակալից չէ, թեև գրել է մեկ-նություններ, շարականներ, խրատական գործեր, զբաղվել է երա-ժշտությամբ, հորինել շարականների եղանակներ:

Միջնադարի մշակութային կյանքում կրթական գործիչները նվազ դեր չեն կատարել մատենագիրներից: Մանավանդ որ նա չի եղել սովորական դաստիարակ, այլ ականավոր մանկավարժ, ստեղծել է ուսուցման իր ուրույն մեթոդները, որոնք շարադրել է խրատական

[1] **Ա. Սրապյան,** *Հովհաննես Երզնկացի, էջ 161-162:*

ճառերում և իր պատրաստած փիլիսոփայական, գրականագիտական, մանկավարժական ձեռնարկներում: Ամեցրել է բազմաթիվ աշակերտներ, որոնք ունեցել են գրչագրական, կրթական գործունեություն:

Նրա ականավոր մանկավարժ լինելու փաստը երևում է Թորոս Ծաղկողի կողմից 14-րդ դարում հորինված գեղեցիկ նկարից, որտեղ տեսնում ենք Կիրակոս Երզնկացուն՝ ուսուցանողի գահի վրա հանդիսավոր նստած, առաջևը՝ նրա աշակերտները, որոնցից մեկը, բաց արած գիրքը՝ ընթերցում է դասը:

Ծնված պետք է լինի Հովհաննես Երզնկացիներից ավելի ուշ, բայց նույն դարում, հավանաբար 1270-ական թվականներին, Երզնկայի գյուղերից Ագրակում:

Որտե՞ղ է սովորել՝ որոշակի չգիտենք: Ենթադրվում է, որ նախնական կրթությունն ստացել է Եկեղյաց գավառի վանքերից մեկում, ապա սովորել Գլաձորի համալսարանում, Ծործորեցու հետ միասին:

Կիրակոս Երզնկացու անունը առաջին անգամ հիշատակված ենք գտնում 1310 թ. մի ձեռագրում որպես ձեռագրի ստացող և գրիչ վարդապետ: Ուրեմն պետք է որ երեսուն տարեկանին մոտ մարդ լիներ:

1324 թ. եղել է Երզնկայում:

Դիոնիսիոս Արիսպագացու ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Զերջանիկ բաբունին զԿիրակոս զստացող գրոցս յիշեսջիք ի Տէր և զծնաւղսն իւր, և զբազմամեղ գրաւղս հանդերձ իմով... ի վանքս որ Կայիփոսի կոչի և խիստ անչափ ձիւն կու կուտի, բազում որոտալով քամի, կուտա քան զծով ու ալի, ձեզ է խիստ յայտնի»[1]:

Ուրեմն այդ տարիներին Կիրակոս Երզնկացին Կայիփոսի վանքում ունեցել է կրթական գործունեություն: Երևի այնտեղ էլ սովորել է և դարձել վարդապետ: Հնարավոր է նաև, որ այլ վանքում ստանար կրթությունը, հետո գար Կայիփոս: Այսպես թե այնպես համարվել է բաբունապետ, որ տրվում էր կրթական երկարամյա գործունեություն ունեցողներին:

Իսկ որ նա իսկապես Երզնկայի վանքերում աչքի ընկնող վարդապետ, կրթական գործիչ է եղել, երևում է այն փաստից, որ դրանից ընդամենը մի քանի տարի անց 1328 թվին նրան գտնում ենք Երկանի վանքում, ինչպես երևում է Մխիթար Երզնկացու արտագրած Աստվածաշնչի հիշատակարանից: Այստեղ արդեն համարվում է «հռչակավոր վարդապետ», «արժանաւորն ամենայն գովեստի և յիշման»:

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 229:*

Միայն հարգանքի սովորական արտահայտություն համարել այդ մակդիրները՝ ճիշտ չի լինի: Ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ Կիրակոս Երզնկացին մասնավորապես 14-րդ դարի առաջին տասնամյակներում Երզնկայի գավառում, եղել է ճանաչված կրթական գործիչ և ըստ երևույթին ժամանակի ամենից հռչակված վանքերը, ինչպիսիք էին Կայիփոսն ու Երկանի վանքերը, միմյանց ձեռքից են խլել նրան՝ իրենց կրթական կշիռը բարձրացնելու ազնիվ ձգտումով:

Այժմ Սպահանում պահվող մի ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ Կիրակոս Երզնկացին 1330 թ. գտնվել է Պարսկաստանում: Թե ինչ գործով է մեկնել այնտեղ, որքան է մնացել, հայտնի չէ: 1334 թ. կրկին Երզնկայում է եղել:

Նրա անվան հիշատակությանը հանդիպում ենք մինչև 1355 թ. գրված ձեռագրերում: Որոշակի է, որ հաջորդ տարի՝ 1355 թվականին վախճանվել է: Թաղվել է Երզնկայի ս. Սարգիս եկեղեցում:

Այժմ ծանոթանանք Կիրակոս Երզնկացու մատենագրական վաստակին:

Հեղինակն է համարվում «Անձինք Աստուածածնին» չարականի, որը տեղ է գտել բոլոր «Շարականոցներում»:

Գրել է տաղեր, որոնցից նմուշներ պահվել են տարբեր տաղաբաններում: Հեղինակել է խրատներ, քարոզներ: Խրատներից մի քանիսը, ինչպես «Խրատ վասն խոստովանութեանը» զուտ եկեղեցական հարցեր են շոշափում, սակայն ավելի մեծ թիվ են կազմում այն քարոզներն ու խրատները, որոնք շոշափում են գործնական խնդիրներ, կապված ժողովրդի առօրյա աշխատանքի հետ: Այդպիսին է, «Քարոզ վասն ոռոգմանց, սերմանց և հնձոցը»: Ըստ երևույթին Կիրակոսը հմտացած է եղել երկրագործական աշխատանքին և գիտական բացատրություններ է տվել վարուցանքի, հնձի մասին:

Հ. Քյուրտյանը ասում է, թե Կիրակոսի լավագույն երկերը գտնըվում են Վենետիկի Մխիթարյանների վանքում պահվող մի Ոսկեփորիկում, գրված 1495 թվականին, այսինքն՝ հեղինակի ստեղծագործելու ժամանակից մոտ մեկ դար հետո:

Կիրակոսը գրել է առաջաբան՝ իր այդ խրատ-քարոզների: Ուշագրավ են համարվում նրա հետևյալ ութը ճառերը՝ «Յաղագս պոռնկութեան», «Յաղագս սպանութեան», «Յաղագս արծաթասիրութեան», «Յաղագս տրտմութեան», «Յաղագս բարկութեան», «Յաղագս ձանձրութեան», «Յաղագս սնափառութեան», «Յաղագս անբարտավանութեան»:

Կիրակոսը խոսում է այս բոլոր մոլորությունների և թերությունների մասին առանձին-առանձին և անում է շատ ուշագրավ դիտողություններ, որոնք վկայում են, որ դրանք սովորական բարոյախոսական քարոզներ չեն, ունեն գիտական, ճանաչողական արժեք: Հեղինակը հանդես է գալիս որպես լուրջ իմաստասեր, մանկավարժ, անգամ մարդաբանության ու բժշկության վերաբերյալ լայն գիտելիքների տեր անձնավորություն, օգտակար խորհրդատու: Օրինակ նա շատ հետաքրքիր բացատրություններ է տալիս բարկության և ձանձրույթի մասին, գրելով.

«Բարկութիւն է՝ եռանդն չուրջ զսրտիւն արեանն՝ առ ի տենչումն փոխարէն տրտմեցուցանելոյ»: Իսկ ձանձրույթի մասին գրում է. «Ձանձրութեան դեւն քան զամենայն դեւսն ծանրագոյն է, որ և միջօրեայն կոչի, զի այլ դեւքն ծագելոյ կամ մտանելոյ արեգական նմանին, զի ի միոջէ կողմանէ բուռն հարկանեն զհոգւոյն»[1]:

Ուրիշ տեղեկություններ չունենք այս գործչի մասին: Նրա ստեղծագործությունների գլխավոր արժանիքներից մեկն էլ համարվել է աշխարհաբարախառն ընտիր լեզուն:

5. ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ

Մովսես Երզնկացին մատենագիր է. թողել է մի շարք թղթեր, մեկնություններ, ճառեր, աղոթքներ:

Մեզ հասել է նրա բավականաչափ մանրամասն կենսագրությունը, որ տպագրված է Ղ. Ալիշանի «Հայապատում» գրքում[2]: Կենսագիր Գրիգորիս Երզնկացին Մովսեսին համարում է «տիեզերաքարող վարդապետ»:

Մեր միջնադարյան հեղինակներն ու գրիչները որքան խտացրած գույներով նսեմացնում են, ձաղկում իրենց անձը, համարում «ապիկար», «եղկելի», «մեղքերով լի» և այլն, այնքան գերադրական որակումներով փառաբանում են այն մարդկանց, որոնց մասին գրում են, մանավանդ իրենց ուսուցիչների, տվյալ վանքի վանահայրերի:

Գրիգորիսի այս բնութագրումն էլ կարող է չափազանցություն լինել, բայց և այնպես վկայում է, որ Մովսեսը մեծ հեղինակություն է վայելել շրջապատում, աշակերտների, իր քարոզների ունկնդիրների մոտ: Իսկ դա էլ վկայում է նրա աստվածաբանական, մատենագրական, փիլիսոփայական լայն գիտելիքների մասին:

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 235:*

[2] **Ղ. Ալիշան,** *Հայապատում, էջ 507-509:*

Ծնվել է Դարանաղյաց Անի (Կամախ) ամրոցում, Ներսես քահանայի ընտանիքում: Կրթությունն ստացել է Երզնկայի Ավագ վանքում, այնտեղ էլ ընդունել է հոգևոր կոչում, ձեռնադրվել քահանա: 1293–1295 թթ. գործել է Երզնկայում, կրկին Ավագ վանքում: Ապա նրան գտնում ենք Կիլիկիայում, որտեղ աշակերտել է Գևորգ Լամբրոնացուն կամ Սկևռացուն: Կիլիկիայում արտագրել է մի Աստվածաշունչ և հետը բերել Երզնկա: Ծննդավայր է վերադարձել իր ուսուցչի մահից հետո՝ 1301 թվականին:

Մովսեսը ուշագրավ խորհրդածություններ է անում հիշյալ Աստվածաշնչի հիշատակարանում՝ ձեռագրերը օգտագործելիս մաքուր պահելու վերաբերյալ, անիծում է այն մարդկանց, որոնք վանքերում օգտակար ձեռագրերը պահում են փակի տակ: Նա ասում է, թե վանքերը դպրոցներ են, մարդիկ պետք է հնարավորություն ունենան օգտվելու ամեն մի ձեռագրից, «զի զէնն զինաւորինն է և կատարողքն աւրհնեալ, ամէն»[1]:

Նրա կենսագրության հետ կապված որոշ փաստեր գտնում ենք 1295 թ. Երզնկայի ս. Գրիգոր Լուսավորիչ վանքում գրված Ստեփանոս Երկայնի «Մեկնութիւն պատարագի» երկի հիշատակարանում: Աշխարհական և հոգևոր պետերին արժանի հարգանքը տալուց, Հեթումին էլ «բարեպաշտ և աստվածասեր» բնութագրելուց հետո Մովսեսը ասում է. «Մովսէս մեղաւք մեռեալ ոգի, կամեցայ հաւաքումն առնել համառօտաբար մեկնութեան սրբոյ պատարագիս, զոր սուրբ հարքն Խոսրով Անձևացեաց եպիսկոպոս և Ներսես Տարսոնի յառաջագոյն ընդ երկար քննեալ էին: Նաև զոր յայլոց սրբոց հարց ևս կարացաք բանագտակ լինել յանձն իւր տեղւոջ եդաք առ ի զբօսանս մանկանց Սիոնի: Եւ զայս ոչ թէ միայն յանձէ կամ սիրով խիզախեցաք, այլ յորդորեալ առաւել յիմաստուն բարունապետէն Յովհաննու, որ և ի սոյն ամի փոխեցաւ ի Քրիստոս»[2]:

Ուրեմն «Մեկնութիւն պատարագին» երկը նա խմբագրել է 1293 թվին, իսկ Ստեփանոս Երկայնն ընդօրինակել է 1295 թվականին, Երզնկայի ս. Գրիգոր Լուսավորիչ վանքում:

Մովսես Երզնկացին գործել է մի ժամանակաշրջանում, երբ Հայաստանում բուռն պայքար էր մղվում հայ լուսավորչական եկեղեցուն հավատարիմ մարդկանց և կաթոլիկ եկեղեցու հետ մերձենալու կողմնակիցների միջև: Վերջինիս հետևորդները, հրահանգներն ստանալով Հռոմից, օրեցօր ուժեղացնում էին իրենց դիրքերը, սպառնալով Հայաստանյայց եկեղեցու ինքնուրույնությունը:

---

[1] *«Տաթև», տարեգիրք գրականության և արվեստի, Հալեպ, 1930, էջ 198:*

[2] **Ա. Ս. Մաթևոսյան,** *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 762:*

Կաթոլիկ եկեղեցու դեմ մղվող պայքարի առաջին շարքերում տեսնում ենք Մովսես Երզնկացուն: Նույն դիրքերում կանգնած են եղել նաև Ստեփանոս Սյունեցին, Հովհաննես Երզնկացի Պլուզը:

Պայքարն ավելի է բորբոքվել Հովհաննես Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, Գևորգ Երզնկացու ժամանակ, որոնք նույնպես գործել են Մովսես Երզնկացու վերակառուցած Ավագ վանքում:

Արտաքուստ կարող է թվալ հակասություն, քանի որ ասացինք թե Սսի կաթողիկոսությունը կողմ է եղել Հռոմի հետ մերձենալու գաղափարին, իսկ Հովհաննես Երզնկացին և Մովսես Երզնկացին կապված են եղել Կիլիկիայի հետ, այնտեղից ստացել հրահանգներ: Պետք է նկատի ունենալ, որ Կիլիկիայի հայ թագավորները և հոգևոր պետերը կողմ չեն եղել արմատական փոփոխությունների՝ որոնք կարող էին Հայոց եկեղեցու ինքնավարությունը ենթարկել Հռոմին: Քաղաքական նկատառումներով նրանք համաձայնվել են եկեղեցական որոշ ծիսակատարությունների նմանեցմանն ու մանր զիջումների:

Մեզ թվում է, որ կենսագրի կողմից Մովսես Երզնկացուն չռայլված վերամբարձ մակդիրների տակ պետք է որոնել ոչ այնքան մատենագիր վարդապետի արժանիքները, որքան քաղաքական գործիչ վարդապետի:

Մովսես Երզնկացուց մեզ հասած երկերը հետևյալներն են՝ 1. «Մեկնութիւն աղօթից և ժամակարգութեան», որ համառոտված է Խոսրով Անձևացու և այլոց երկերից[1]: Հնագույն օրինակը պետք է լինի 1293 թվականից հետո: 2. «Թուղթ ի Տրապիզոն, առ Գրիգոր երեց Հոռոմացեալ», որը մեզ հասել է մի քանի արտագրությամբ: 3. «Խրատ կանոնականք..»: 4. Աղոթքներ և այլն:

Խմբագրել է մի Ոսկեփորիկ, որտեղ զետեղված են թե ճառեր, և թե սրբերի վարքագրություններ: Դրանց մի մասը ինքն է գրել, մի մասը՝ խմբագրել: Այդ Ոսկեփորիկից մի ընտիր օրինակ ունեցել է Հ. Քյուրտյանն իր ձեռագրերի ճոխ հավաքածուում: Գրված է եղել 1551 թ.: Մխիթար Երզնկացին այս Ոսկեփորիկի մասին գրել է. «Երիցս երանեալ և սուրբ վարդապետ Մովսէս Երզնկացի ի յամենայն սուրբ գրոց ժողովեալ զլաւն և զգեղեցիկն ի միում տփի եղեալ: Եւ կոչի անուն սուրբ գրոցս Ոսկեփոր, վասնզի քան զամենայն ոսկի, և արծաթ և ականս պատուական է և գեղեցիկ սա»[2]:

---

[1] «Գիրք որ կոչի Մեկնութիւն աղօթից», Կ. Պոլիս, 1730:

[2] **Բ. Սարգիսյան,** *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հատ. Բ, Վենետիկ, 1924, էջ 793:*

6. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՐԶՆԿԱՑԻ

Գրիգորիս Երզնկացին նույնպես ապրել է 13-րդ դարի վերջերի ու 14-րդ դարի սկզբների մշակութային վերելքի շրջանում, գրեթե ժամանակակից է նախորդներին: Եթե զույգ Հովհաննեսները, Կիրակոսը, Մովսեսը աչքի են ընկել որպես մատենագիրներ, տաղերգուներ, կրթական գործիչներ, ապա այս անձի անվան հետ կապվում է մի ուրիշ բնագավառ՝ երաժշտությունը: Համարվել է «երջանիկ երաժշտապետն մեր»:

Անշուշտ մեզ շատ պիտի հետաքրքրեր հենց այդ բնագավառում նրա ծավալած գործունեությունը, սակայն հիշյալ գեղեցիկ հորջորջումից բացի ուրիշ բան չի պահպանվել նրա երաժշտական գործունեության մասին: Բայց քանի որ նա այդ հորջորջմանն արժանացել է Ավագ վանքում գործելու շրջանում, իսկ նրա այդ վանքում լինելու տարիները զուգադիպում են Երզնկայի մտավոր վերելքին, կասկածից վեր է, որ պետք է եղած լինի երաժշտության ուսուցիչ, դպրապետ այդ կամ այլ վանքերում, հետևաբար պատրաստած երաժիշտ աշակերտներ, ինչ որ արդարացնում է «երաժշտապետ» հորջորջումը: Գուցե և հորինել, եղանակավորել է շարականներ:

Երկու դեպքում էլ հետաքրքիր մի բնագավառի ներկայացուցիչն է Գրիգորիս Երզնկացին, մանավանդ, որ մատենագրությամբ, գրչագրությամբ, մանրանկարչությամբ զբաղվողների ավելի անուններ են հասել մեզ, քան երաժիշտների:

Գրիգորիս Երզնկացին ծնվել է Խարբերդում, դրա համար էլ ոմանք նրան կոչել են Խարբերդցի:

Փոքր հասակից եկել է Երզնկա, որտեղ ստացել է կրթությունը, սովորել Տիրաշենի վանքում: Գործել է Երզնկայի տարբեր վանքերում: Տիրաշենի վանքում աշակերտել է Կոստանդին Երզնկացուն, ապա սովորել Մովսես Երզնկացու մոտ: 1301 թ. վերջինիս հետ տեղափոխվել է Ավագ վանք, գործել այս վանքի ծաղկման տարիներին:

Այնտեղ մնացել է մինչև 1307 թվականը, այսինքն՝ Մովսեսի Կիլիկիա մեկնելը: Դրանից հետո շարունակել է գործել նույն Ավագ վանքում, թե մեկնել է մի այլ վայր, հայտնի չէ: Մեկ էլ 1314 թվականին, նրան հանդիպում ենք Գլաձորի հայտնի վանքում, այն վանքում, որը երզնկացիների համար եղել է ուսումնառության ավելի բարձր մի աստիճան: Շատերն են նախնական կրթությունն ստանալուց հետո մեկնել այնտեղ, շարունակել կրթությունը:

Գլաձորում գտնվելու փաստը իմանում ենք Մխիթար Երզնկացու կողմից գրված մի ձեռագրի հետևյալ հիշատակարանից. «Քաղցր

Քրիստոս, թող, թող զյանցանս Մխիթարայ և զծնողաց իւրոց և զվարդապետին իւրոյ զԳրիգորիսի: Հասոյց ի յաւարտս ձեռնարկութեանս այս ի թուիս ՉԿԳ (1314), հայկազեան տումարիս: Բայց գրեցաւ գիրքս այս առ ոտս մեծ վարդապետիս Եսայեայ, ի տեղիս, որ կոչի Գլաձոր, ընդ հովանեաւ Ս. Ստեփանոսիս, հրամանաւ մեծ և երանեալ վարդապետիս իմոյ Գրիգորիսի Երզնկայեցոյ, բանի սպասաւորի, ի վարժումն անձին իւրոյ և ամենայն բանասիրաց: Արդ աղաչեմ զամենեսեան որք հանդիպիք այսմ խրթնայայտ կտակիս, յիշեսջիկ զառաջ ասացեալ ուսուցիչն իմ զԳրիգորիս և զծնօղսն իւր, ընդ նմին և զհոգևոր հայրն իւր զԿոստանդին միայնակեաց»[1]:

Մի այլ հիշատակարանում մի քանի անգամ հիշել իր ուսուցիչ Գրիգորիսին, ողորմիս խնդրել ոչ միայն նրա, այլև նրա ծնողների, անգամ նրա ուսուցիչ Կոստանդին միայնակյացի համար, ինքնին վկայում է թե Գրիգորիսը որքան ճանաչված ու սիրված վարդապետ, կրթական գործիչ է եղել:

Մխիթարն այստեղ նրա ուսուցիչ Կոստանդինին համարում է միայնակյաց, արդյո՞ք սա մեզ ծանոթ տաղերգու Կոստանդին Երզնկացին է, թե մի այլ անձնավորություն. հակված ենք կարծելու երկրորդը:

Թե որքան ժամանակ է մնացել Գլաձորում, հայտնի չէ. մեկ էլ նրա անվան հիշատակությանը հանդիպում ենք 1322 թ. ինչ-որ անապատում, հավանորեն Երզնկայի ս. Լուսավորիչ անապատում, գրված Հովհաննես Պլուզ Երզնկացու «Քերականության» հիշատակարանում: Այստեղ է, որ նա համարվում է «երջանիկ երաժշտապետ»:

1325 թ. եղել է Երզնկայի Երկանի վանքում:

Հ. Քյուրտյանը գրում է. «Ինչպես իր գործունեության վերջին տարիները, վայրը, նաև մահվան թվականն ու տեղը կը մնան անծանոթ: Մխիթար Երզնկացի՝ իր աշակերտը, որ 1327–1328-են Երկանի վանքը գրչություն ունի, չի հիշեր իր ուսուցիչը Գրիգորիս Երզնկացին: Գուցե ան արդեն մեռած էր»[2]:

Ենթադրում է, որ վախճանվել է Երկանի վանքում, 1327–1328 թվականներին:

Երկերն են՝ «Խրատ մկրտութեան. երջանիկ բաբունապետի և քաջ հռետորի մեծի Գրիգորի վարժապետի Եզընկեցոյ ի մի վայր հաւաքեալ զխրատ վասն սուրբ մկրտութեան»: Այս բացատրությունից

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 263-264:*

[2] *Նույն տեղում, էջ 264:*

պարզվում է, որ այդ խրատները ոչ թե ինքն է գրել, այլ «ի մի վայր հավաքեալ», այսինքն՝ ամփոփել է մի ժողովածուի մեջ:

Ուրիշ երկեր էլ թողե՞լ է թե ոչ՝ հայտնի չէ: Կա ենթադրություն, թե զբաղվել է նաև գրչագրությամբ, քանի որ այդ տարիներին Երզնկայի վանքերում հիշատակվում են մի քանի գրիչ Գրիգորիսներ, որոնցից մեկը կարող է նա լինել:

7. ՄԽԻԹԱՐ ԵՐԶՆԿԱՑԻ

Հետաքրքիր մի անձնավորություն էլ սա է՝ Մխիթար Երզնկացին: Շատ ավելի հայտնի է որպես գրիչ, քան որպես մատենագիր: Ծնվել է կամ Երզնկա քաղաքում, կամ շրջակա գյուղերից մեկում, իսկ կրթությունը ստացած պիտի լինի Տիրաշենի վանքում:

Կա կարծիք, թե առհասարակ հոգևորական չի եղել, հնարավոր է ենթադրել, թե հոգևորական կրթություն ստացել է, գուցե և կոչում ունեցել, բայց առաջնորդվելով Հիսուսի այն մտքով, թե «հոգիս հոժար է, մարմինս տկար», հնազանդվել է ոչ թե հոգու թելադրանքին, այլ մարմնի, ցանկացել է վայելել աշխարհիկ կյանքի բարիքները:

Այս կարծիքին հիմք են տալիս նրա գրած հիշատակարաններից մեկում իրեն մեղադրում է իբրև՝ «դրժող կրոնավորության». հազվադեպ բնութագիր նույնիսկ այն մարդկանց մոտ, որոնք այնքան անխնա կերպով ձաղկում են իրենց՝ կատարած կամ չկատարած մեղանչումների համար:

Բայց ապրել է վանական միջավայրում: Ամուսնացել է, ունեցել է Բարսեղ անունով որդի: Հիմնականում զբաղվել է գրչագրությամբ և հայտնի է եղել որպես վարժ գրիչ: Արտագրել է մի շարք ձեռագրեր, դրանք օժտելով շատ ուշագրավ հիշատակարաններով:

Մինչև 1300 թ. մնացել է Տիրաշենի վանքում:

Թե դրանից հետո որտեղ է ապրել, դժվար է ասել: 1314 թ. իր ուսուցչի՝ Գրիգորիսի հետ եղել է Գլաձորում, որտեղ ընդօրինակել է «Լուծմանց գիրքը», այն օժտելով դարձյալ մի արժեքավոր հիշատակարանով:

Եթե գրական ոչ մի այլ ստեղծագործություն էլ չունենար Մխիթար Երզնկացին, միայն այդ հիշատակարաններն էլ բավական էին հաստատորեն ասելու, որ մենք գործ ունենք ոչ թե սովորական գրչի հետ, այլ գրական տաղանդով օժտված մարդու: Միաժամանակ նա օժտված է եղել կատակաբանի, երգիծողի նկատելի տաղանդով. սրամիտ է, աչխույժ զրուցակից, պատրաստաբան, տեղ-տեղ կսմթող,

տեղ-տեղ խայթող, բայց միշտ զվարթ ու կենսուրախ, բնավորության գծեր, որոնք անշուշտ նրան պիտի դարձնեին վանքերի պատերից դուրս սիրելի ու փնտրված անձնավորություն:

Նրա հիշատակարանները գրված են ժողովրդական հյութեղ լեզվով, ունեն սրամիտ կառուցվածք, երբեմն կիսաչափածո, աշուղական ազատ չարադրությամբ, առօրյա կյանքի շատ ուժեղ անդրադարձով: Դրանք վկայում են, որ նա ի վիճակի էր գրել աշխարհիկ տաղեր: Գրե՞լ է, թե ոչ՝ դժվար է ասել. հնարավոր է, որ գրել է, անգամ հասել են դրանք մեր օրերը, բայց վերագրվել են ուրիշ հեղինակների, մի բան, որ այնքան շատ է պատահել:

Վերոհիշյալ հիշատակարաններից մեկը բավականաչափ տեղեկություններ է տալիս նրա հայրենակից ու ժամանակակից մարդկանց մասին, հաղորդում փաստեր, որոնց չենք հանդիպում այլ աղբյուրներում:

Մխիթար Երզնկացու ծննդյան թվականը հայտնի չէ: 1323 թ. գրված մի ձեռագրում հիշատակում է Բարսեղ որդուն որպես աբեղա, ուրեմն վերջինս պետք է որ այդ ժամանակ լիներ մոտավորապես 20–21 տարեկան: Եթե ընդունենք, որ անգամ երիտասարդ հասակում է կրոնական սքեմը թողել ու ամուսնացել, կնչանակի ծնված պիտի լինի 1275–1280-ական թվականներին: Իր ծնողների ու հարազատների մասին տալիս է հետևյալ տեղեկությունները. «Նաև յիշման արժանի արարեք զծնողսն իմ զՊաւղոս և զՏիրանց, և զհարազատսն իմ զՄատթէոս և զՄարտիրոս զկրօնաւորեալսն և զքերսն՝ նոցին հետևել՝ զՄինայ և զՄարթայ և զորդեակն իմ զԲարսեղ աբեղայ և զամենայն երախտաւորսն իմ կրկին կենաց»[1]:

Այժմ որոշ գաղափար տանք նրա հիշատակարանների մասին: Ահա Գլաձորի վանքում արտագրած ձեռագրերից մեկի հիշատակարանը. «Գրեցաւ գիրքս այս առ ոտս մեծ վարդապետիս Եսայեայ, ի տեղիս որ կոչի Գլաձոր, ընդ Հովանեաւ Ս. Ստեփանոսիս, հրամանաւ մեծ և երանեալ վարդապետիս իմոյ Գրիգորիսի Եզնկայեցոյ՝ բանի սպասաւորի, ի վարժումն անձին իւրոյ և ամենայն բանասիրաց...»[2]:

Այս ընդհանուր կարգախոսից հետո Մխիթար Երզնկացին շարունակում է.

---

[1] **Բ. Սարգիսյան,** *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հատ. 1, Վենետիկ, 1914, էջ 60:*

[2] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 267:*

Որք ընթերցմամբ հայիք ի սա
Եւ հանդիպիք զանձու սորա,
Տես թէ քանի աշխատեցայ
Ես Մխիթար գրիչ սորա.
Թուղթս անկոկ ու գրիչ չկայ,
Աւուրքս ցուրտ ու պարզկա,
Զարտախս բարձր ու կրակ չկայ.
Դռներս չոր ու սպաս չկայ,
Եւ այս Գլաձորն ո՞վ գիտենայ
Ես յոյժ նեղած ու ճար չկայ.
Եւ ես պանդուխտ ու վեղար չկայ.
Ինձ հատուցումն յիշման արա
Վասըն փրցուն գլրի սորա[1]*:*

Նույն հիշատակարանում պատմում է թե Գլաձորի վանքն է եկել Եսայի Նչեցու մոտ ուսանելու, թե այստեղ իր ուսուցիչ Գրիգորիս Երզնկացին առաջարկել է նրան այդ գիրքն արտագրել... Կատարել է սիրով, մանավանդ որ Տարոնից ուսանելու եկած Թորոսն էլ, իրեն շատ սիրելուց, օգնել է և ծաղկել ձեռագիրը:

Այս բացատրությունից հետո Մխիթարը դարձյալ շարունակել է չափածո և հայտնել, թե ձեռագիրը արտագրել է 1314 թ.:

Հ. Քյուրտյանը Մխիթար Երզնկացու մասին տալիս է հետևյալ լրացուցիչ տեղեկությունները, քաղելով տարբեր ձեռագրերի հիշատակարաններից.

«Մխիթար Երզնկացի 1314 թվին արդեն վարդապետ էր: Թե ե՞րբ և ո՞ւր առավ ան իր վարդապետական գավազանը՝ չեմ կրնար ըսել: ... Ըստ իս Երզնկայի մեջ վարդապետացավ, ինչու որ Մխիթար Գլաձորի մեջ չատ չմնաց, 1318 թվին ան Ծործորի վանքը կգտնվեր... 1323 թվին Մխիթար Երզնկացի Երզնկայի և Սեպուհի վանքերը կգտնվեր: ... 1327 թվին Մխիթար Երզնկայի Երկանի վանքը կըգտնվեր»[2]*:*

Մխիթար Երզնկացու ստեղծագործություններից մեզ չատ բան չի հասել: Բայց բոլոր հիմքերն ունենք պնդելու, որ եղել է ծանր կշիռ ունեցող կրթական գործիչներից և պետք է որ գրած լիներ ավելի մեծ քանակությամբ երկեր, քան հասել են մեզ:

Գրել է հետևյալ ողբ-տաղը՝ «Մխիթարայ Երզնկացւոյ Ողբանք հայցեալ Կոստանդեայ Երզնկացւոյ», որի սկզբնատառերը տալիս են՝

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 267-268:*

[2] *Նույն տեղում, էջ 269-270:*

«Կոստանդեա Ասացեալ Եղնկացո Ողբամք»: Այս տաղը հրատարակել է Ն. Ակինյանը[1]:

Նրան վերագրվել են նաև այլ տաղեր ու գրվածքներ, սակայն դրանց վավերականությունը կասկածելի է:

8. ԳԵՎՈՐԳ ԵՐԶՆԿԱՑԻ

Երզնկայում և Երզնկայից դուրս կրթական, գրչագրական և մատենագրական նկատելի գործունեություն է ունեցել Գևորգ Երզնկացին: Եղել է Հովհաննես Երզնկացու և Գրիգոր Տաթևացու սաներից, իր հերթին աճեցրել է տասնյակ աշակերտներ, որոնք իրենց արտագրած ձեռագրերի հիշատակարաններում նրան համարում են «մեծ ռաբունի», «քաջ հռետոր», «տիեզերալույս վարդապետ», «գերիմաստ հռետոր», «պետ վարդապետաց», «քաջ փաղերա» և այլն:

Այս բնութագրումներից ո՞րն է իրականը, որը՝ չափազանցություն, չենք կարող ասել, բայց որ Գևորգ Երզնկացին եղել է իրոք նշանավոր կրթական գործիչ և Երզնկայի Ավագ ու Կայիփոսի (Կապոսի) վանքերը նրա առաջնորդության տարիներին ապրել են ծաղկման շրջան, կասկածից վեր է: Եվ, ըստ երևույթին, մեծ հռչակ է ձեռք բերել ոչ այնքան որպես մատենագիր, որքան մանկավարժ, վանքերի առաջնորդ, քարոզիչ, քանի որ «քաջ հռետոր» ածականն էլ միշտ ուղեկցել է նրա անվանը յուրաքանչյուր դեպքում:

Կենսագրական սակավ տեղեկություններ ունենք Գևորգ Երզնկացու մասին: Ծնվել է Երզնկայում, մոտավորապես 1350-ական թվականներին: Չգիտենք նրա ծնողների անունները: Հայտնի է միայն, որ ունեցել է մի եղբայր: Ուսումնառության և կրթական-մանկավարժական գործունեության լայն շրջան է ապրել Կապոսի և Ավագ վանքերում: Ենթադրվում է, որ նախ ուսանել է Կապոսում, ապա՝ Ավագ վանքում. համենայնդեպս 1383 թվին արդեն Ավագ վանքում էր, իր ուսուցիչ Հովհաննես Որոտնեցու մոտ: Այստեղ է ավարտել ուսման շրջանը և անցել մանկավարժական աշխատանքի:

Արիստակես Սեբաստացին 1383 թ. Ավագ վանքում արտագրել է մի Ավետարան, որի հիշատակարանում հանդիպում ենք «զերջանիկ ռաբունի» Գևորգին: Կնչանակի 1370-ական թվականների վերջերից այնտեղ ուսուցիչ էր:

Դրանից հետո նա հաճախ է հիշատակվում որպես այդ վանքի միաբան, առաջնորդ: Բայց արդեն 1389 թվին նրան գտնում ենք

---

[1] **Ն. Ակինյան,** *Մխիթար Երզնկացի, տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1915, էջ 67-69:*

Կապոսի վանքում, ինչպես երևում է Հակոբ Ղրիմեցու կողմից նույն այդ տարում արտագրված ձեռագրի հիշատակարանից:

Մի քանի տարուց նորից է մեկնել Ավագ վանք, այս անգամ արդեն որպես վանքի համալսարանի բաբունապետ: Այս շրջանից է սկսվել նրա մանկավարժական, հասարակական բեղուն գործունեությունը, աստիճանաբար դարձել ոչ միայն Ավագ վանքի ականավոր առաջնորդն ու նրա կրթական գործի ղեկավարը, այլև կենտրոնական դեմք՝ առհասարակ Երզնկայի հասարակական, քաղաքական կյանքում:

Այդ է վկայում այն փաստը, որ երբ 1402 թ. Լենկթեմուրը եկել է Երզնկա, աջ ու ձախ ավեր ու արյուն սփռել, քանդել բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր, Գևորգ Երզնկացուն է հանձնարարվել անձամբ ներկայանալ մեծ բռնապետին և գթություն հայցել հայ ժողովրդի համար, խնդրել, որ չքանդեն սրբատեղիները:

Գևորգը մեկնել է նրա մոտ, բայց սարսափահար ետ է վերադարձել առանց որևէ արդյունքի:

Մինչև 1412 թ. գործել է Ավագ վանքում: 1405 թ. այնտեղ գրված մի Խազգրքում Արիստակես Սեբաստացին ասում է թե այն գրվել է նույն վանքում, «յառաջնորդութեան սուրբ ուխտիս քաջ հռետորին և տիեզերալոյս վարդապետին մեծին Գէորգայ բազմերախտին իմոյ և ուսուցչին»[1]:

1409 թ. Ղազար գրիչը մի հիշատակարանում գրել է. «Գրեցաւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս մեծ վարժապետիս մերոյ Գէորգեայ ի գաւառէս Դարանաղեաց, որ և առաջնորդ է սուրբ վանիցս Աւագ կոչեցեալ ընդ չքով Տիրամօր սուրբ Աստուածածնիս և սուրբ Առաքելոցս, և սուրբ Կարապետիս»[2]:

1411 թ. գրված մի ձեռագիր էլ հիշատակում է Գևորգ Երզնկացուն որպես Ավագ վանքի առաջնորդ, նրան կոչելով «մեծ բաբունապետ», իսկ հաջորդ տարի գրված մի ձեռագրում Արիստակես Սեբաստացին գրում է. «Եւ եղև զրաւ սորա ի մեծափառ անապատիս որ կոչի Աւագ վանք և ի յառաջնորդութիւն նոյն տեառն իմոյ... մեծի վարժապետին Գէորգէոս փաղերայի»: Մի Ոսկեփորիկ էլ գրվել է 1412 թվին «Ի գերահռչակ անապատս Աւագ վանք... և ի յառաջնորդութեան նորին հարազատի Գէորգէոս փաղերայի»[3]:

Գևորգ Երզնկացու գործունեությունը Ավագ վանքում սրանով էլ վերջանում է: Նույն տարվա վերջերին կամ հաջորդ տարվա սկզբներին կրկին անցել է Կապոսի վանքը:

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 305:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, էջ 306:*

Մոտ հինգ տարի էլ գործել է այստեղ, ըստ երևույթին դարձյալ որպես առաջնորդ: Այդ տարիներին էլ Կապոսի վանքում գրված ձեռագրերի հիշատակարաններում են նրան պատվել նույնպիսի պատվավոր մակդիրներով: Այսպես, 1416 թ. գրված մի ձեռագրի գրիչը ասում է թե աշխատանքը կատարել է «Ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս եռամեծի և քաջ փիլիսոփայի բազմերախտ հօրս մերոյ և վարժապետի Գէորգեայ առի քաջ բաբունապետին»[1]:

Գևորգ Երզնկացին վախճանվել է 1417 թվին Կապոսի վանքում և այնտեղ էլ թաղվել է: Այդ փաստը արձանագրված է մի հիշատակարանում, որտեղ կարդում ենք «Ի նոյն ամի (1417) յորում փոխեցաւ առ Քրիստոս, հռչակելի բաբունապետն մեր Գէորգ, եկն տէրն Ամթայ ի վերա Երզնկիս»[2]:

Հ. Քյուրտյանը նրա կենսագրությունների չղթան ավարտում է գրելով. «Այսպես կվերջանա բազմավաստակ Գևորգ Երզնկացվո կյանքն ու գործունեությունը: Սիրված և հարգված դաստիարակ-մատենագիր մը եղած է ան: ... Իր աշակերտներուն շարքին մենք կգտնենք Արիստակես Սեբաստացին՝ բազմեռանդն և բազմարդյուն գրիչ, Գրիգոր գրիչ, որ ինքզինք կկոչե «բանի սպասավոր», և գրած է 1416 թվի վերոհիշյալ ձեռագիրը, Ավետիք Երզնկացի՝ նույնպես արդյունավոր գրիչ, Հակոբ Ղրիմեցի՝ հեղինակ և գրիչ, որ 1412 թվին կգրե «Հարցումն Գէորգայ բաբունապետի և ծառայաբար կատարումն Յակոբայ աշակերտի»: ... Հավանաբար Գևորգի աշակերտն էր նաև Սարգիս Ղրիմեցի, որդի Հաքիմի: Գևորգի աշակերտն էին նաև Աբրահամ աբեղա, Հովհաննես Երզնկացի... Ղազար և ուրիշներ»[3]:

Այդքան լայն գիտելիքների տեր մի վարդապետ մանկավարժական աշխատանքին զուգընթաց պետք է որ զբաղվեր նաև մատենագրությամբ: Զբաղվել է: Ահա նրանից մեզ հասած գործերը. «Խրատ մկրտութեան պարզաբանօրէն գրեալ վասն դիւրահաս լինելոյ տգէտ քահանայից»: Այս երկից 4–5 արտագրություն պահվում են Երուսաղեմի վանքում և Վիեննայի Մխիթարյանների մոտ: Սրա համառոտությունը տպագրվել է Երուսաղեմում, 1843 թ.[4]:

Հավաքել և գրի է առել Հովհան Որոտնեցու «Համառօտ լուծմունք» գիրքը, ինչպես երևում է այդ գրքի հետևյալ խորագրից. «Համառօտ Լուծմունք Աստուածաբանին ի լուսաւոր բանից ար-

---

[1] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 307:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, էջ 308:*

[4] *«Մաշտոց կանոնով մկրտութեան...», Երուսաղեմ, 1843:*

դիւնական վարդապետի Յովհաննու Որոտնեցոյ մականուն Կախեալ (=Կախիկ) ի սէրն Աստուծոյ, հաւաքեալ աշխատասիրութեամբ ա-չակերտի Նորին Գէորգեայ Երզնկացու»[1]: Նրա քարոզներն էլ ամ-փոփված են «Քարոզք Գէորգ Երզնկացւոյ» ժողովածուում:

Նրան են վերագրվում բազմաթիվ ճառեր, հանելուկներ, ողբեր և այլն, որոնց մեծ մասի հեղինակային պատկանելության հարցը վիճելի է:

Մենք Երզնկայի մատենագրական դպրոցից և կրթական գործիչ-ներից մի քանիսի՝ առավել հայտնիների մասին միայն խոսեցինք: Անչուշտ դրանց թիվը շատ ավելի մեծ է եղել: Վերոհիշյալ մարդկանց կյանքը և գործը ծանոթացնելիս հիշատակեցինք մի քանի տասնյակ գրիչների անուններ: Ավելի քան երկու հարյուր տարվա մատենա-գրական կյանքին մասնակից գրիչների թիվը պիտի որ հասած լինի մի քանի հարյուրի: Հ. Քյուրտյանն իր «Երիզա» արժեքավոր աշ-խատության մեջ 20–25 էջ հատկացրել է մտքի այդ նվիրյալներին, որոնց մեջ կան շատ հայտնի դեմքեր:

Ավելորդ ենք համարում անդրադառնալ նաև նրանց, քանի որ դա մեզնից պիտի խլեր բավականաչափ էջեր:

Ուզում ենք խոսել Երզնկայի հայ կանանց մասնակցության մա-սին՝ մտավոր այդ շարժմանը:

Մեր ձեռագրերում պահպանված հիշատակարաններում հան-դիպում ենք մի քանի տասնյակ կանանց, որոնց մեկենասությամբ գրքեր են արտագրվել, նվեր տրվել Երզնկայի վանքերից մեկնու-մեկին: Դրանց մի մասը յականե անվանե հիշատակվում են նաև Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում»:

Ավելի ուշագրավ է գրչուհիների բավականաչափ լայն գործու-նեությունը Երզնկայում: Օրինակ, Հռիփսիմե գրչուհին, դուստր Առա-քել քահանայի, 1391 թ. Երզնկայում օրինակել է մի ճաշոց, ինչ որ վկայում է նրա ոչ միայն գրագետ լինելու, այլև գեղագիր լինելու մասին:

Մի այլ երզնկուհի՝ Մամախաթունը, կինը Վարդան քահանայի, 1397 թ. գրել է տվել մի Ավետարան:

Մինա կրոնավորուհին, դուստր Պողոսի, քույր Մխիթար գրչի, Երկանի վանքում օրինակել է Հին Կտակարանը, 1327 թ. և այլն:

---

[1] **Հ. Տաշյան,** *Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, 1895, էջ 455:*

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ԹՈՒՐՔ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մեր աշխատության այս գլուխն ընդգրկում է մոտ հինգ հարյուր տարվա մի ժամանակաշրջան, լի տագնապալի, ծանր իրադարձություններով, ողբերգական դրվագներով, երկիրը հիմքից սասանող քաղաքական դեպքերով, տևական պատերազմներով, ջարդերով, թալանով ու կողոպուտով: Դրանց վրա ավելացել են բնական աղետները՝ տևական երկրաշարժերը, որոնք ուղեկցել են դժբախտ Երզնկային նրա պատմության ամբողջ ընթացքում և որոնց պատճառած մարդկային զոհերի թիվը անցնում է հարյուր հազարներից:

Այս ժամանակաշրջանին է զուգադիպում Լենկթեմուրի արշավանքները դեպի Հայաստան և պատմության մեջ աննախադեպ ու հրեշային ոճիրների այն շարքը, որ գործել են այդ մարդահրեշի զորքերն իրենց անցած ամբողջ տարածությունը մատնելով հրի ու սրի:

Այս շրջանին են վերաբերում Ջալալիների տարերային ու ահեղ ասպատակությունները՝ միմյանց հաջորդող ալիքներով, նրանց հրոսակախմբերի վայրագություններն ու կոտորածները:

Այն, ինչ որ դարերի ընթացքում ստեղծել էր հայ ժողովուրդը, քանդում, սրբում տանում էին անաչխատունակ, ավարի ու թալանի սովոր հորդաները: Թալանում էին ինչքը, ճղակտոր անում ծառերը, այգիները, հրո ճարակ դարձնում հանդերը, սպանում բնակիչներին, գերի տանում սիրունատես աղջիկներին ու տղաներին, իրենց ետևում թողնելով մահ ու ավեր, սուգ ու շիվան, քարուքանդ բնակավայրեր, անթաղ մեռելներ: Միառժամանակ ծուխ չէր բարձրանում տներից, դադարում էին ճոճվելուց օրորոցները, չէին երևում տուն վերադարձող նախիրներ, ոչխարի հոտեր, որոնք քշվել տարվել էին բորենիների կողմից:

Նման համատարած սարսափից հետո չատերը թողնում հեռանում էին իրենց պապենական տուն ու տեղից, հայրենիքից, բռնում էին պանդխտության ճամփան, առանց իմանալու թե ուր են գնում, ինչ բախտի են արժանանալու: Գնում էին կարավաններով, տասնյակ գյուղերով, գնում էին թախիծը սրտներում, գուցե կրկին վերադառնալու հույսով: Հենց այդ միտքն էլ դառնում էր խթան, ապավեն՝ ապրելու, կուլ չգնալու, չձուլվելու:

Ոմանք, չդիմանալով անծանոթ երկրների կլիմաներին, սովոր չլինելով բարքերին, աշխատանքի պայմաններին, սուզվեցին մարդկային օվկիանոսում, բայց եղան մարդիկ, խմբեր, որոնք հարմարվեցին, սովորեցին լեզուներ և իրենց ժրաջանությամբ, աշխատասիրությամբ, արևելյան տոկունությամբ դիմացան ամեն կարգի փորձությունների, անգամ հասան բարձր դիրքերի, հարստության, փառքի, բայց դրա փոխարեն վճարեցին ամենաթանկագինը՝ սեփական ազգության կորուստը: Փայլեցին որպես օտարներ, կտրված մայր ժողովրդից, նրա լեզվից, ավանդույթներից:

Ու գնում էին երզնկացիները, գնում դեպի հյուսիս, հարավ, արևվելք, արևմուտք, կարծեք հետևելով ոչ թե մտքի թելադրանքին, որոշակի մի ծրագրի, այլ հենց այնպես, տարերայնորեն, կիսաբնազդով, հուսադրված այս կամ այն մարդու պատմածից, հեռավոր մի երկրից ստացված ինչ որ նամակից, լուրից, մեծ մասամբ չիմանալով անգամ, թե որտեղ են գտնվում այդ քաղաքները, այդ երկրները, ինչպիսի ժողովուրդներ են ապրում այնտեղ:

Գնում էին: Մեկ էլ նրանք երևում էին հեռավոր Հալեպում, Բաղդատում, Ղրիմում, Ռուսաստանի տարբեր վայրերում: Հաճախ էլ, չկարողանալով չատ հեռուները գնալ, մնում էին Օսմանյան կայսրության մայրաքաղաքի մոտակա վայրերում:

Քանի՞ հազար մարդ է գաղթել Երզնկայից. ոչ ոք չի արձանագրել և չէր էլ կարող արձանագրել: Գաղթել են, ապրել ու մեռել նոր միջավայրում, հաճախ չունենալով ոչ չիրիմներ, ոչ չիրմաքարի արձանագրություններ:

Հայտնի են երզնկացիներով հոծ բնակեցված վայրեր՝ Թուրքիայի տարբեր քաղաքներում, ինչպես Ռոդոստոյում, նաև Արևելյան Հայաստանում՝ Հաղբատ, Ախալքալաք:

Եղել են երզնկացիներ, արդեն 19-րդ դարի գաղթականներից, որոնք իրենց ծննդավայրի հիշատակը պահելու համար օգտագործել են Երզնկյան ազգանունը՝ սերնդից սերունդ: Հետագայում մենք առիթ ենք ունենալու խոսելու նման տոհմերի մասին:

Խոսեցինք ջարդերին, երկրաշարժերին զոհ գնացածների, արտագաղթողների մասին, չխոսեցինք այն հարյուր հազարավոր հայերի մասին, որոնք չկարողանալով տոկալ դահիճների անլուր տանջանքներին՝ լեզու կտրել, աչքեր փորել, ողջ ողջ այրել և այլն, հարկադրված ընդունում էին մահմեդական կրոնը, դառնում Թուրք կամ քուրդ: Ջալալիների և ենիչերիների սարսափների տակ բռնի կրոնափոխ դարձած հայերի թիվը կարող է անցնել տասնյակ հազարների: Երզնկայի գավառում և Դերջանում բազմաթիվ գյուղեր հարկադրված դարձել են կրոնափոխ՝ իրենց քահանաներով, տանուտերերով հանդերձ: Դրանց նույնպես անդրադառնալու ենք հետագա էջերում:

Իսկ հիմա կրկին վերադառնանք ետ, դեպի դարերի խորքը և տեսնենք թե չարաղետ այդ 500 տարիների ընթացքում ինչ դեպքեր են կատարվել Եկեղյաց գավառում:

2. ԵՐԶՆԿԱՆ ԼԵՆԿԹԵՄՈՒՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Նախորդ գլուխներում քաղաքական դեպքերը հասցրինք մինչև 13-րդ դարի կեսերը, այսինքն՝ մինչև սելջուկների և թաթարների գրավումների շրջանը, որը միաժամանակ զուգադիպում էր Երզնկայի մտավոր վերելքին, քանի որ յուրահատուկ կիսանկախ վիճակի մեջ էր ապրում Եկեղյաց գավառը:

Միանգամայն այլ իրադրություն ստեղծվեց օսմանյան Թուրքերի ասպարեզ գալուց հետո:

Օսմանցիներն առաջին անգամ Երզնկայում հայտնվել են 13-րդ դարի սկզբներին:

Ըստ որոշ պատմաբանների՝ Զինգիզ խանի կողմից Խորեզմի պետության վերացումից հետո օսմանյան Թուրքերի նախահայրերից Կեոկ խանի սերնդից Սուլեյման շահն իր յուրայիններով, որոնց թիվը հասել է հիսուն հազարի, Խորասանի Մահան գավառից դուրս գալով՝ շարժվել է դեպի Հայաստան, և «բնակութիւն կալաւ ի կողմանս Երզնկայ ի գաւառին Եկեղեաց մինչև ի Խլաթ»[1]:

Երբ մեռել է Զինգիզ խանը, Սուլեյմանն իր զորքով նորից ցանկացել է վերադառնալ Մահան, սակայն Եփրատ գետից անցնելիս՝ ձիուց ընկնելով խեղդամահ է եղել:

---

[1] **Գ. Այվազովսկի,** *Պատմութիւն Օսմանեան պետութեան, հատ. Ա, Վենետիկ, 1841, էջ 5:*

Թե Սուլեյմանը որքան ժամանակ է մնացել Երզնկայում, կամ ինչ իրադրություններ են կապված նրա անվան հետ, հայտնի չէ:

Սուլեյմանի մահից հետո նրա չորս որդիներից երկուսը վերադարձել են Խորասան, իսկ երկուսը՝ Դունդարն ու Էրթողրուլը (որից էլ առաջացել է օսմանյան դինաստիան), մեկնել են Բարձր Հայք, հասել Բասենի հովիտը, սելջուկների սահմանը, որոնց սուլթանն այն ժամանակ Ալա էդ-Դին I-ն էր[1]: Սա էլ, երկու եղբայրներին հող տալով, մասնակից է դարձրել թաթարների և հույների դեմ մղվող կռիվներին:

Մեր նշած դեպքերը տեղի են ունեցել 1331 թվականին:

Որոշ ժամանակ անց Մերձավոր Արևելք և Հայաստան են արշավում Լենկթեմուրի զորքերը: «Անողորմ, անգութ, անագորույն, լցեալ ամենայն չարությամբ, պղծութեամբ և հնարիւք բանսարկուին սատանայի»: Այսպես է բնութագրել Լենկթեմուրին՝ նրա արշավանքների պատմությունը շարադրող Թովմա Մեծոփեցին[2]:

Որտեղով որ անցել է նրա զորքը, քարուքանդ են եղել շեն քաղաքները, ամայացել բնակավայրերը, կոտորվել, սրախողխող եղել տասնյակ հազարավոր մարդիկ, թալանվել նրանց հարստությունը մինչև վերջին բեկորը: Հուր է ժայթքել նրա հրոսակախմբերի երախից, արյուն հոսել յաթաղաններից:

Լենկթեմուրի հարվածի ոչնչացնող ուժը իրենց վրա են կրել մարդիկ՝ առանց ազգության ու կրոնի խտրության, բայց ամենից ահարկու կոտորածներին ենթարկվել է աշխատասեր ու անօգնական հայ ժողովուրդը:

Լենկթեմուրը ծնվել է 1336 թվականին, այսինքն՝ հենց այն տարիներին, երբ Երզնկայի հովտում երևացել էին օսմանցի թուրքերը: Լենկ նշանակում է կաղ, ուստի նրա անունն էլ բացատրվում է կաղ Թեմուր: Արտաքինով եղել է բարձրահասակ, հաղթանդամ, մեծ գլխով, լայն ճակատով, երկար մազերով մարդ:

Ասում են, որ նրա գլխի մազերը ծնած օրվանից ձյան նման սպիտակ են եղել, մի բան, որ չարագուշակ նշան է համարվել նախապաշարված մարդկանց կողմից: Սերվում էր մոնղոլական բարլաս ցեղից, որն այդ շրջանում արդեն թուրքացվել էր: «Լենկթեմուրի մայրենի լեզուն թուրքերեն՝ չաղայթայերեն էր»,- գրում է Հ. Մանանդյանը[3]:

---

[1] **Գ. Այվազովսկի,** *էջ 5-6:*

[2] **Թովմա Մեծոփեցի,** *Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 9:*

[3] **Հ. Մանանդյան,** *Երկեր, հատ. Գ, Երևան, 1977, էջ 357:*

1360-ական թվականների կեսերից իր շուրջը հավաքելով բազմաթիվ թաթար հրոսակների, ասպատակել է աջ ու ձախ, նվաճել քաղաք քաղաքի ետևից:

1370 թ. աթոռանիստ կենտրոն է դարձրել Սամարղանդ քաղաքը և շարունակել պատերազմները: Նախ շարժվել է դեպի Ոսկե Հորդա և Ռուսիա, ապա անցել է Հնդկաստան, Իրան, այնտեղից՝ Անդրկովկաս, Փոքր Ասիա:

Նրա առաջին լուրջ բախումը տեղի է ունեցել 1385 թ. Ջելայիրյան պետության ուժերի հետ, երբ Իրանի հարավից հարձակվել է Ատրպատականի վրա և գրավել Սուլթանիե քաղաքը, հաջորդ տարի՝ Թավրիզը:

Այնուհետև, անցնելով Արաքս գետը, ասպատակել է Սյունիքը, գրավել Նախիջևանը, հասել Կարբի, Բջնի, Գառնի, Կողբ:

Այս ամբողջ տարածությունն անցել է գրեթե առանց դիմադրության, այնքան սարսափազդու է եղել նրա անունը, այնքան խուճապի է մատնվել ժողովուրդը:

Լենկթեմուրի սովորությունն է եղել մինչև վերջին չունչ սպանել դիմադրողներին, չխնայել ո՛չ կանանց, ո՛չ ծերունիներին, ո՛չ էլ երեխաներին: Քանդել է բերդերի պարիսպները, հողին հավասարեցրել հարյուրավոր բնակավայրեր:

1386 թ. Լենկթեմուրի զորքի վայրագություններին զոհ է դարձել Վրաստանը, կենտրոն ունենալով Տփղիսը: Այդ քաղաքը գրավելուց հետո բարբարոսական հորդաները ձմեռել են Մուղնում: 1387 թ. գարնանը նրանք շարունակել են ասպատակությունները Հայաստանի հարավային և արևմտյան մասերում: Նրանք մտել են Քաջբերունիք, Վաղարշապատ (Ալաշկերտ), հասել Կարին: Այդ նույն տարում Երզնկայում գրված ճաշոցի գրիչ Գևորգը արձանագրել է. «Յայսմ ժամանակի, յորում էր թուական հայոց ՊԼԶ (1387) ելաւ ազգն խուժադուժ յարևելից ի կողմանց հիւսիսոյ, որ կոչէր Լանգթամուր, և եկն մինչև յԱրզրում, և բազում ոճիրս գործեաց... զոր յետս դարձոյց Աստուած, և աղօթք սուրբ Լուսաւորչին պահեաց զքաղաքս Եղնկայ և զգաւառս իւր, որք են առ մեզ բոլորակայ»[1]:

Լենկթեմուրը վերադարձին պաշարել է Վանա բերդը, որը դիմադրել է 26 օր, սակայն ի վերջո անձնատուր եղել: Ըստ Սամուել Անեցու շարունակողի՝ բերդից ցած գցված հայերի թիվը հասել է 7000-ի, իսկ գերի տարվածների թիվը՝ անհաշիվ[2]:

---

1 **Լ. Ս. Խաչիկյան,** *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 570:*

2 **Սամուել Անեցի,** *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 171:*

Վանի այս մեծ կոտորածը համարվում է Լենկթեմուրի դեպի Հայաստան կատարած առաջին արշավանքի ամենացնցող էջը, միաժամանակ հայ ժողովրդի պատմության ամենասարսռազդու դրվագներից մեկը:

Երկու տարի Հայաստանում մահ սփռելուց հետո՝ նույն 1387 թ. աշնանը վերադարձել է Սամարղանդ:

1388–1393 թթ. Լենկթեմուրի զորքը զբաղված է եղել Հարավային Ռուսիայի տափաստաններում, կռվել է Ոսկե Հորդայի խան Թողթամիշի դեմ, ապա հարձակվել է Իրաքի ու Պարսկաստանի վրա:

1394 թ. լուր է տարածվել, թե Լենկթեմուրը պատրաստվում է նոր արշավանքի՝ Հայաստանի դեմ: Ժողովուրդը մատնվել է ահ ու սարսափի, համատարած խուճապի:

«Վայ աւուրս և ժամուս, թէ որպէս չար համբաւ առաք,– գրված է մի հիշատակարանում,– ձեռս թուլացաւ, միտս կուրացաւ և ամենայն անդամօքս դողամ, զի անօրէն Լանգթամուրն գա, ասեն, սպանողն և արիւնարբու գազանն»[1]:

Եվ արդարև, Լենկթեմուրի զորքը Հյուսիսային Միջագետքից մտնում է Արևմտյան Հայաստան, գրավում բազմաթիվ քաղաքներ, այդ թվում՝ Երզնկան, որտեղ իշխում էր Թախրաթանը: Երզնկան անձնատուր է եղել կամավոր կերպով, չունենալով դիմադրող ուժ: Միայն մեկ երկու վանքերում են դիմադրություն ցույց տվել, ենթարկվել բարբարոսական ջարդի ու ավերի:

Այս ներխուժման ժամանակ Երզնկան ու նրա գյուղերը ինչ զոհեր են տվել, ինչպիսի ավերածություններ են կատարվել, քիչ բան գիտենք: Միակ հավաստի վկայությունը հետևյալն է. «Լանգթամուրն էառ զԱմիթ քաղաք և զամենայն սահմանս նորա... էառ և զՄէրտին, նոյնպէս էառ և զԵզնկայ. և զեկեղեցիս նորա կործանեաց... Եւ մինչդեռ յԵզնկայ էր Լանգթամուրն՝ գնաց առ նա Գէորգ վարդապետ Եզնկացի վասն աղաչելոյ զնա՝ խնայել յեկեղեցիս...»:

Ապա մատենագիրը ասում է թե Գևորգ Երզնկացին որևէ արդյունքի չի հասել, «տեսնելով բռնապետի դաժան դեմքը, վախից շրթները ճաքճքել են»[2]:

Թեև համառոտ, բայց այս վկայությունը որոշ գաղափար տալիս է Երզնկայում Լենկթեմուրի կատարած բարբարոսությունների մասին: Նախ ցույց է տալիս, թե քաղաքի բնակչությունը ինչպիսի տագնապի

---

[1] *«Հայ ժողովրդի պատմություն», հատ. IV, Գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան, 1972, էջ 28:*

[2] **Թովմա Մեծոփեցի,** *էջ 45:*

մեջ է եղել և ինչպես մարդիկ այդ բռնակալին ընդունել են որպես ահավոր հրեշ, պատուհաս, որի երեսը տեսնողը լեղաճաք է եղել:

Ամենայն հավանականությամբ քանդվել են այն եկեղեցիները, որոնցում ապաստանած մարդիկ փորձել են դիմադրություն ցույց տալ: Անչուշտ անլուր վրեժխնդրության հանդիպելուց հետո է, որ երզնկացիները որոշել են Գևորգ Երզնկացուն պատգամավոր ուղարկել և աղաչել բռնապետին՝ խնայել գեթ իրենց աղոթատեղիները:

Երզնկայից հետո Լենկթեմուրի զորքերը գրավել են Բասենը, Ավնիկ ամրոցը, որտեղ նույնպես եղել է թույլ դիմադրություն և հարյուրից ավելի կռվող հայեր բերդից ցած են գցվել: Այնուհետև նրանց հարձակումներին են ենթարկվել Կարսը, Սուրմալուն, Կողբը, Բագարանը: Այդ բոլորից հետո նոր միայն Լենկթեմուրը թողել է Հայաստանը, դիմել դեպի Աղվանք՝ իր ուժերը չափելու համար Շիրվան ներխուժած Թոդթամիշի զորքերի հետ:

1395 թ. ապրիլ ամսին Թերեք գետի ափին հաղթել է Թոդթամիշին, գրավել է Աստրախան ու Սարայ քաղաքները, որոնք կողոպտելուց հետո հիմնովին ավերել է:

Հաջորդ տարվա գարնանը կրկին վերադարձել է Անդրկովկաս, իր որդուն՝ Միրանշահին նշանակել է կուսակալ Իրանի, Իրաքի, Հայաստանի ու այլ վայրերի:

1399 թ. Լենկթեմուրը, դուրս գալով Սամարղանդից՝ շարժվել է դեպի Անդրկովկաս, այնտեղից՝ Միջագետք, Ասորիք ու Փոքր Ասիա և կռվել այնտեղ իշխող օսմանյան թուրքերի դեմ:

Հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական էջերից մեկն է Սեբաստիա քաղաքում Լենկթեմուրի զորքերի կազմակերպած մեծ նախճիրը:

Նա առաջարկել է Սեբաստիայի բերդի հայ պաշտպաններին՝ առանց կռվի անձնատուր լինել՝ խոստանալով չթափել ոչ մի կաթիլ արյուն: Մարդիկ հավատացել են, զենքը ցած դրել, բաց են արել քաղաքի դռները: Բայց ահա տրվել է անողոք հրամանը՝ հավաքել բոլորին, կապել ձեռները, 4000 մարդու կենդանի-կենդանի թաղել՝ նրանց վրա թափելով ջուր և մոխիր, այսպիսով հավատարիմ մնալով արյուն չթափելու իր խոստմանը: Մնացած բնակչությանը ենթարկել են ահռելի տանջանքների: Կանանց կապել են ձիերի պոչից և տանջամահ արել, իսկ նրանց անմեղ երեխաներին հավաքել են մի դաշտում ճզմել ձիերի սմբակների տակ «իբրև զորայս կամնասայլից կոխել զնոսա անողորմութեամբ»[1]:

[1] **Թովմա Մեծոփեցի,** *էջ 65:*

«Նրանց աղաղակը երկինք էր բարձրանում,- գրում է Թովմա Մեծոփեցին,- ո՞վ կարող է նկարագրել այն դառն տանջանքները, որ գործադրեց նեռի առաջնորդը, անողորմ բռնավորը»[1]:

Սեբաստիայից հետո գրավելով նաև հայաբնակ այլ քաղաքներ, որոնց թվում Երզնկան, Լենկթեմուրը 1401–1402 թթ. ձմեռը անց է կացրել Դամասկոսում:

Այսպիսով, Երզնկան փոխնիփոխ 3–4 անգամ ենթակա է եղել Լենկթեմուրի հարձակումներին: Դրանով հանդերձ՝ Երզնկայի վանքերից մի քանիսը կարողացել են չարունակել իրենց մատենագրական և կրթական գործունեությունը: Լենկթեմուրի առաջին և հիմնական նպատակն էր թալանն ու գերեվարությունը, կոտորածը:

Ըստ երևույթին Երզնկայում նա ավերել ու քանդել է այն վանքերն ու եկեղեցիները, որոնք եղել են ինքնապաշտպանական ամրություններ: Մյուսները, որոնք ավարի ու թալանի հեռանկար էլ չեն տվել նվաճողին, մնացել են ազատ: Մասամբ էլ այստեղ դեր է կատարել այդ վանքերի բնական անառիկ դիրքն ու նվաճելու դժվարությունը:

Դառնալով ամբողջ Անդրկովկասի, Փոքր Ասիայի, Միջագետքի ու Սիրիայի միահեծան տերը, իրեն ենթարկելով նաև Եգիպտոսի սուլթանին, Լենկթեմուրը 1404 թ. վերադարձել է Սամարղանդ, մեռել 1405 թ.: «Մեռավ Թամուր ղանը,- կարդում ենք մի հիշատակարանում,- որ 21 ամ իբրև զբաժակ բարկութեան առեալ էր զնա Աստուած ի ձեռն, և ում կամէր արբուցաներ, զի յԱրևելից մինչև ի մուտս արևու զամենեսին հասարակ գերեաց զհաւատացեալսն և զանհաւատս զամենեսեան սրախողխող արար»[2]:

Այժմ տեսնենք թե ինչ բերեց նոր՝ 15-րդ դարը, Հայաստանին առհասարակ, Երզնկայի գավառին՝ մասնավորապես:

3. ԵՐԶՆԿԱՆ 15-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Այս նոր հարյուրամյակում Հայաստանի ամբողջ տարածությունը մնաց թատերաբեմ թուրք-թաթարական ցեղախմբերի զինված հակամարտությունների:

Դրանք կիսավայրենի ցեղեր էին, անհաղորդ գիտության, քաղաքակրթության նչույլին, առաջնորդվում էին միայն տիրելու, թալանելու, կողոպտելու, վայելելու մոլուցքով:

---

[1] **Թովմա Մեծոփեցի,** *էջ 65:*

[2] **Լ. Խաչիկյան,** *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, էջ 53:*

Միմյանց դեմ տևական պայքարի մեջ էին ոչ միայն նույն կրոնին պատկանող տարբեր ցեղեր, ասենք օսմանցի Թուրքերն ու մոնղոլական ծագում ունեցող Թեմուրյանները, այլև հայրերն իրենց որդիների, եղբայրներն իրար ու իրենց հայրերի դեմ:

1410–1453 ԹԹ., այսինքն՝ ուղիղ կես դար, Հայաստանը եղել է կովախնձոր Թուրքմենական ազգակից երկու ցեղախմբերի՝ Կարա-կոյունլուների և Ակ-կոյունլուների միջև: Այդ ժամանակաշրջանում նրանք չարունակ բախվել են միմյանց հետ (1410, 1419, 1421, 1425, 1427, 1435, 1453 Թվականներին և այլն):

Պատմական Հայաստանի զգալի մասը գտնվել է Կարա-կոյունլուների տիրապետության տակ: Կարա-կոյունլու Կարա Յուսուֆի կենտրոնատեղին եղել է Վաղարշակերտը (Ալաշկերտ), որտեղ բնակչության ճնշող մասը նստակյաց հայեր էին, կային նաև քրդական քոչվոր ցեղեր:

Համեմատած Լենկթեմուրի հետ, Կարա Յուսուֆի տիրապետության տարիները եղել են քիչ թե շատ տանելի: Թովմա Մեծոփեցին վկայում է, որ մարդիկ կրկին սկսել են վերաշինել իրենց ավերված տները, հնձել արտերը, թե այլևս ավերակների մեջ ապրողներ չեն եղել, «այլ ի չէնս բնակէին, և թեպէտ հարկապահանջութիւն բազում էր, սակայն խաղաղութիւնն առանց խռովութեան էր»[1]:

Գրիգոր Խլաթեցի Ծերենցն էլ վկայում է, որ Կարա Յուսուֆը

Արար բազում խաղաղութիւն
Եւ յաջողումն մարդկային.
Էր էմնութիւն և էժնութիւն,
Ամենևին անգողութիւն[2]:

Դժբախտաբար մասնակի այս խաղաղությունը կարճ է տևել: 1419 Թվականին Ակ-կոյունլու Թուրքմենները հարձակվել են Կարա Յուսուֆի վրա, հաջորդ տարի սպանել նրան պատերազմում: Գրավել են Երզնկան:

Կարա Յուսուֆի մահից հետո նրա Իսքանդար որդին ստեղծել է մի քանի հազարանոց բանակ և հարձակվել է իր հորը պարտության մատնող Ակ-կոյունլու Օսմանի վրա, հաղթել է նրան 1421 Թվին: Բայց չուտով ինքն էլ պարտվել է և փախել Մուսուլի կողմերը:

Օսմանը գրավել է շատ քաղաքներ, այդ Թվում Երզնկան՝ 1425 Թվին:

---

[1] **Թովմա Մեծոփեցի,** էջ 78:

[2] **Գրիգոր Խլաթեցի,** Յիշատակարան աղէտից, Վաղարշապատ, 1897, էջ 14–15:

Վերջապես սկսել են միմյանց դեմ նիզակ ճոճել Կարա Յուսուֆի երկու որդիները՝ Իսքանդարն ու Սպանդիարը: Վերջինս պարտվել է եղբորից:

1435 թ. տեղի ունեցած մի ճակատամարտում Իսքանդարը սպանել է Կարա Յուլուք Օսմանին, արշավել Սեբաստիայի, Թոխաթի, Խարբերդի, Երզնկայի վրա, կազմակերպել է բռնագաղթ դեպի Այրարատյան նահանգը, պատճառ դառնալով վերոհիշյալ քաղաքների հայ բնակչության նոսրացման:

1437 թվին Իսկանդարին հաղթել է Ջահանշահը, որն իշխել է մինչև 1467 թվականը, երբ սպանվել է Ակ-կոյունլու Ուզուն Հասանի կողմից:

Այնուհետև Հայաստանը երկար ժամանակ մնացել է թուրքմենական Ակ-կոյունլուների տիրապետության տակ: Բայց դա այն ժամանակաշրջանն էր, երբ համաշխարհային քաղաքական հորիզոնում փայլատակում էր թուրքական ամենահաղթ սուրը:

Միմյանց հաջորդող օսմանյան սուլթանները գրավել էին վիթխարի տարածքներ: 1444 և 1448 թթ. ընկճելով եվրոպական երկրների զինված ուժերի դիմադրությունը՝ թուրքերը գրավեցին համարյա ամբողջ Բալկանյան թերակղզին[1]: Եվրոպան կանգնել էր անակնկալի առաջ: Սակայն չուտով տեղի ունեցավ ամենասարսափելին՝ սուլթան Մուհամմեդ II ֆաթիհը 1453 թ. մայիսի 29-ին գրավեց Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը:

Ընդամենը մի քանի տասնամյակի ընթացքում թուրքերի ձեռքն անցան Սև ու Միջերկրական ծովերի հիմնական նավահանգիստները, որոնք որպես առևտրական խոշոր նշանակություն ունեցող կետեր՝ կենսական էին ինչպես ակ-կոյունլուների, այնպես էլ եվրոպական պետությունների, հատկապես Վենետիկի համար:

Ահա թե ինչու Հայաստանը գրաված Ուզուն Հասանը 1472 թ. 100.000-անոց բանակով դուրս եկավ օսմանցիների դեմ: Նա Դերջանի և Երզնկայի վրայով հասավ Թոխաթ, գրավեց այն, սակայն 1472 թ. օգոստոսին պարտվեց: Նրա երեք որդիներն էլ սպանվեցին այդ կռիվներում:

Օսմանցիներն ու ակ-կոյունլուները երկրորդ անգամ միմյանց դեմ պատերազմեցին հենց Երզնկայի մոտակայքում, Դերջանի դաշտում, 1473 թվականին. հաղթեցին օսմանցիները:

Թուրքերի գրավումներից հետո էլ դեռ Հայաստանում իշխում էին ակ-կոյունլուները: Ուզուն Հասանի մահից հետո (1478) միմյանց դեմ

[1] **А. Миллер,** Краткая история Турции, М., 1948, стр. 12.

դուրս եկան նրա ողջ մնացած հինգ որդիները: Կռվել են, սպանել միմյանց մինչև Սեֆյան դինաստիայի ասպարեզ գալը:

Ուրեմն՝ Երզնկան 15-րդ դարի առաջին կեսին ապրել է կարա-կոյունլու Թուրքմեն Կարա Յուսուֆի և նրա որդի Իսքանդարի ու վերջինիս հաղթող Ջահանշահի տիրակալության տակ:

Ո՞վ է անմիջապես իշխել Եկեղյաց գավառին: Ցաքուցրիվ փաստեր միայն կան, որոնք սակայն որոշ գաղափար կարող են տալ երկրի ու ժողովրդի ընդհանուր վիճակի մասին:

1420-ական թվականների կեսերին Երզնկայի հայերի վերակացուն է եղել հայազգի Յաղուբ աղան՝ հորեղբորորդին Խաթլուշ և Սուլեյման պարոնների, երկուսն էլ հայ իշխաններ:

Նշանակում է այդ տարիներին նույնպես իշխող խավերը փորձել են պահել հայկական մասնակի իրավասություններ: Եվ դա միանգամայն բնական էր: Նրանք կարիք ունեին տեղական պայմաններին, ժողովրդի կյանքին, եկամտի հնարավորություններին ծանոթ մարդկանց, որոնց միջոցով միայն պիտի կարողանային գանձել անհրաժեշտ հարկերը և միաժամանակ ստեղծել աշխատանքային պայմաններ, հաջորդ տարիների բերքահավաքներից մթերքներ ստանալու երաշխիքներ, այն էլ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ Լենկ-թեմուրի արշավանքների հետևանքով արյունաքամ էր եղել ժողովուրդը, նոսրացել էր հողի աշխատավորության թիվը:

Հայերի փոխարեն Երզնկայի դաշտն էին իջել քոչվորական ցեղեր, այդ թվում՝ քրդեր, որոնք ամենևին հողագործության միտում չունեին, ձմռան ամիսներին ապրում էին հայերից դատարկված գյուղերում, ամռանը իրենց անասունների հետ քաշվում սարերը:

Կարա-կոյունլուների համար նրանք երբեք էլ հարկատու վստահելի տարրեր չէին կարող դառնալ, մինչդեռ դարերի ընթացքում իր հողի ու երկրի հետ կապված հայերը միշտ էլ հակամետ էին նստակյաց կյանքի և հողագործական աշխատանքի, արհեստների, թեկուզ ենթակա բազմապիսի հարկերի և տուրքերի: «Իսքանդար կարա-կոյունլուն,- կարդում ենք «Հայ ժողովրդի պատմության» IV հատորում,- զգալի չափով հայ էթնիկական տարրի վրա էր հենվում՝ կենտրոնաձիգ ուժեղ պետություն ստեղծելու իր ծրագիրն իրականացնելիս»[1]:

Իսքանդարը պետական պաշտոնների է կոչել բազմաթիվ հայերի, գերազանցապես իշխանների, հայերին օգտագործել է նաև բանակում: Ընդհակառակը, չի քաջալերել պետությանը օգուտ չտվող քոչվորներին, կենտրոնախույս տարրերին, պորտաբույծ ամիրանե-

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հատ. IV, էջ 35:

ին, որոնցից մի քանիսին, այդ թվում իր փեսա Շամս ադ-Դինին սպանել է:

Այսպես թե այնպես 15-րդ դարում Երզնկայում բացարձակ հայկական իշխանություն գոյություն չունենալով հանդերձ՝ հայկական տոհմիկ հավաքական կյանքը դեռևս չարունակվել է: Դրա արտահայտություններից մեկը պիտի համարել այն, որ 1460–1490-ական թվականներին Երզնկայի վանքերից մեկում բարձրագույն դպրոց է հիմնել Հովհաննես Համշենցին:

Անշուշտ, սա չի վերաբերվել միայն Երզնկային: Մուշի, Սասունի գավառներում տեղական հայերն ավելի ինքնիշխան են եղել, քան Երզնկայում, անշուշտ բոլորն էլ հարկատու տիրապետող մուսուլման իշխանություններին:

Այն էլ ինչպիսի ծանր հարկեր են վճարել հպատակ ժողովուրդները: Թվարկենք 15-րդ դարում Երզնկայում գանձվող հարկերը.

1. Պետական ռենտա – գանձվել է եկամտի մեկ հինգերորդի չափով, եթե այն ստացվել է պետական հողից, մեկ տասներորդի չափով, եթե վերաբերվել է սեփական կալվածներին:

2. Կալվածատիրական ռենտա – գանձվել է բերքի մեկ տասներորդի չափով: Այս հարկը գանձել են նաև վանքերն ու առանձին կալվածատերերը, իրենց հողերի վրա աշխատողներից:

3. Գլխահարկ (խարաջ) – գանձվել է հիմնականում ոչ մուսուլման չափահաս արական հպատակներից: Այս հարկը եղել է ամենածանրը և աստիճանաբար բարձրացվելով՝ դարավերջին գրեթե կրկնապատկվել, մարդգլուխ հասնելով 28 փութ ցորենի:

4. Մավաշի (անասուն) և մարայի (արոտավայր) – հարկեր, որոնք գանձվել են արոտավայրերից անասունների օգտվելու դիմաց:

5. Թամղա – այս հարկը գանձվել է արհեստավորներից:

6. Բաժ – գանձվել է վաճառականներից, առևտրականներից, անգամ խանութպաններից: Քրիստոնյաներից գանձվել է կրկնակի չափով ավելի, քան մահմեդականներից, այսինքն՝ եկամտի մեկ տասներորդի չափով: Օրինակ՝ Երզնկայում մետաքսի բեռի յուրաքանչյուր բաթմանից 81 սև ակչե բաժ են գանձել:

7. Զերիք – գանձվել է միայն ոչ մահմեդական հպատակներից, զինվորական ծառայության դիմաց:

8. Իսրաջաթ – բառացի նշանակում է արտակարգ ծախս. գանձվել է զինվորական, վարչական պաշտոնյաներին վճարելու համար:

9. Շիգար ու բիգար – այսպես է կոչվել բերդերի, ճանապարհների, ջրանցքների շինարարության ժամանակ հպատակների կողմից կատարված անվճար աշխատանքը:

10. Ռամս կամ Ռուսումաթ – կոչվել են այն տուրքերը, որոնք գանձվել են որպես հավելյալ ռոճիկ՝ պետական պաշտոնյաների:

Այս տասը տեսակ տուրքերից բացի՝ կային պաշտոնական և անպաշտոն բազմաթիվ ու բազմապիսի այլ հարկեր, որոնք գանձվել են պարբերաբար՝ յուրաքանչյուր դեպքում տալով քմահաճ որևէ բացատրություն:

Կային և եկեղեցական տուրքեր՝ պտղի, սրբադրամ, մատաղներ, խոստովանադրամ, հաղորդադրամ, տուգանքներ՝ չհաս ամուսնությունների և այլ դեպքերի համար:

Այս բոլորից հետո ի՞նչ է մնացել դժբախտ ժողովրդի ձեռքին: Եվ արդյո՞ք մնացել է: Ու եթե որոշ բան մնացել է, ապա դա եղել է այնքան, որ գոյատևի հայ գյուղացին մինչև հաջորդ գարունը, կրկին վարուցան անի, պետական ամբարները լցնի:

4. ԵՐԶՆԿԱՆ 16–17-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

16-րդ դարի սկզբներից մինչև հաջորդ դարի երեսնական թվականները որոշ ընդմիջումներով Հայաստանը փոխնիփոխ գտնվել է Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի գերիշխանության տակ:

Սեֆյան շեյխերի գերդաստանը, որ 14-րդ դարի վերջերից տիրում էր Արդաբիլի շրջանին, ասպարեզ էր եկել որպես շիա կրոնական աղանդի դերվիշական հոգևոր առաջնորդների մի գերդաստան:

Սրանք, օգտագործելով կըզըլբաշ կոչվող ցեղերին, նրանց տոգորելով կրոնական մոլեռանդ գաղափարներով, պատերազմի էին դուրս բերում տարբեր երկրների ու ժողովուրդների դեմ:

1502 թ. երկու տարբեր ճակատամարտերում կըզըլբաշները պարտության են մատնել ակ-կոյունլուներին, գրավել նրանց մայրաքաղաք Թավրիզը և հիմք են դրել կըզըլբաշների Սեֆյան պետությանը, որն ավելի քան երկու դար քաղաքական ասպարեզի վրա մնաց որպես տիրակալ ուժ և օսմանյան Թուրքերին սարսափ պատճառող չարիք:

Տոգորված կրոնական ատելությամբ դեպի քրիստոնյաները, նվաճված յուրաքանչյուր երկրում իշխանությունը վստահում էին բացառապես կըզըլբաշներին հավատարիմ մուսուլման տարրին՝ Թուրքախոս վաչկատուն ցեղերի առաջնորդներին:

Պաշտոնական կրոն հայտարարելով շիիզմը, պայքարում էին նաև մահմեդական սունիների դեմ, իսկ օսմանցիների պետական կրոնը սունիզմն էր: Եվ որովհետև կըզըլբաշների այդ աղանդը առաջացել

էր սոցիալական դժգոհության հողի վրա, ուստի հայերի համակրությունը սկզբում նրանց կողմն էր: Անգամ թուրք գյուղացիության համակրանքը եղել է նրանց հետ, մի բան, որ նպաստել է կըզըլբաշների հաղթանակներին:

Ինչպես նախորդ չատ նվաճողների առաջին զոհերը եղել էին երզնկացիները, այս անգամ էլ կատարվել է նույնը: Կըզըլբաշներին նվիրված հենց առաջին հիչատակություններում հանդիպում ենք Երզնկայի անվան:

1501 թ. կամախեցի մի գրիչ՝ Վրթանեսը ասում է. «Վասն աւերման չարին Սաւփոյ, որ անբաւ արար զաշխարհն մեր յազգէ մարդոյ, զգաւառն ասացեալ Եկեղեաց և այժմ Եղնկայ կոչելոյ»[1]:

Կըզըլբաշների առաջնորդ չահ Իսմայիլ I-ը մինչև 1507 թ. նվաճել է Հայաստանի զգալի մասը, հաջորդ տարի Բաղդատը, իչխել ամբողջ Իրաքին, ապա՝ Իրանին:

1512 թ. օսմանցիների սուլթան Սելիմ Ահեղը հարձակվել է նրանց վրա, 1514 թվին գրավել Թավրիզը, սակայն հարկադրված է եղել նահանջել:

Այնուհետև հաղթանակը մերթ մեկին է անցել, մերթ մյուսին, ահուսարսափի մեջ պահելով դժբախտ հայ ժողովրդին: Կըզըլբաշները 1575 թվականին պաչարել են Վանը, անխնա կոտորել հայերին: Ըստ որոչ տվյալների, այդ կռիվներում հայ զոհերի թիվը հասել է 16.000-ի: Ոմանք այս խժդժությունները համեմատել են Լենկթեմուրի վայրագությունների հետ:

Այժմ՝ Երզնկայի մասին:

1533–1535 թվականներին օսմանյան թուրքերը և Սեֆյան Իրանի միջև մղված պատերազմից հետո Երզնկան, Դերջանը, Կարինը և Կարսը անցել են թուրքերին, Հայաստանի մնացած մասը՝ Իրանին:

«Հայ ժողովրդի պատմության» IV-րդ հատորում կարդում ենք. «Ժամանակակիցները նկարագրում են Խորասանից մինչև Էրզրում ընկած տարածության ամայությունը: Կըզըլբաշները սուր ու տապար առած հատում էին Խլաթի և Արծկեի այգեստանները, ոչնչացնում անտառները և հրի ճարակ դարձնում արտորայքը... Շահ Թահմազը իր հիչատակարանում նկարագրում է Բասենի, Խնուսի, Էրզրումի, Բաբերդի, Երզնկայի, Դերջանի, Մուչի, Խլաթի, Արծկեի, Արճեչի, Վանի ավերումը, պատմում է հայ երեխաների գերեվարության և բնակչության կողմից իրենց նախկին բնակավայրերը լքելու ու զանգվածային գաղթի մասին»[2]:

---

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հատ. IV, էջ 82:

[2] Նույն տեղում, էջ 84:

Թե Թուրքերն այդ կռիվների ընթացքում ինչպիսի վայրագություններ են գործել, երևում է Թուրք պատմագիր Փեչևիի վկայությունից, թե «Հաղթական բանակի սարսափից քաղաքներն ու գյուղերը, տներն ու բնակավայրերը այն աստիճան ամայացել, ավերվել ու բուերի ու ագռավների բնակավայր էին դարձել, որ տեսնողին սարսափ էին պատճառում»:

Խոսելով Թուրքական բանակի վերցրած ռազմավարի մասին, Փեչևին զզվանք առաջացնող լկտիությամբ նկարագրում է, թե ինչպիսի մեծ քանակությամբ գեղեցիկ տղաներ ու աղջիկներ են վերցրել և դարձրել զինվորների հաճույքի առարկան: «Զկար մի վրան,- ասում է նա,- որի մեջ գտնվող արծաթի նման մարմին ունեցող նորաբողբոջ տղաների և վարդանման երես ունեցող քնքուշ ու մատղաշ աղջիկների թիվը երեքից պակաս լիներ. հնգից, տասից ավելի ունեցող վրաններ անթիվ էին»[1]:

Կարծեք քիչ էր այս բոլորը, 16-րդ դարում մի ահավոր, հակամարդկային հարկ էլ ավելացնում են Թուրքերը, դեվշիրմեն՝ պարբերաբար կրկնվող տղահավաքների տուրքը, որ մեր գրականության մեջ հայտնի է «մանկաժողով» անունով:

Երեք դար չարունակված այս ահռելի հավաքների ընթացքում մոտ կես միլիոն քրիստոնյա արական երեխաներ են հավաքվել, թլփատվել և նրանցից պատրաստվել են Թուրքական մոլեռանդ ենիչերիական զորագնդեր, որոնց մասին խոսելու ենք հետագա էջերում:

Թուրքերը ոչ մուսուլման տարրի, այսինքն՝ հիմնականում հայերի համար սահմանել էին ստորացուցիչ օրենքներ: Հայ և հրեա տղամարդիկ սպիտակ փակեղի փոխարեն պարտավոր էին կրել սև գդակ: Հետագայում, արդեն հատուկ հրովարտակներով սահմանված օրենքների համաձայն հայերը իրավունք չունեին թամբած ձի նստելու, մի մուսուլմանի հանդիպելիս՝ բարձրագլուխ քայլելու: Հայերը դատարաններում ձայնի իրավունք չունեին, ապրում էին կատարյալ ստորացված վիճակում: Քրիստոնյաների դեմ օրենքով սահմանված այս խստությունների հետևանքով արագորեն վերացան նաև այն մասնակի արտոնությունները, որ գոյություն ունեին նախորդ դարում:

16–17-րդ դարերում միայն Հայաստանի լեռնային որոշ գոտիներում տեղ-տեղ պահպանվել են հայկական փոքր իշխանությունների հետքեր: Ամենուր իշխանությունը գտնվում էր մուսուլման տարրի

[1] «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», կազմեց Ա. Սաֆրաստյան, հատ. Ա, Երևան, 1961, էջ 34-35:

ձեռքին, որն ամեն կերպ աշխատում էր հայերին պարտադրել կրոնափոխություն, խոստանալով նրանց ազատել անիրավահավասար վիճակից:

Կրոնափոխ են դարձել հազարներով հենց Երզնկայում ու նրա շրջակա գյուղերում: Հետագայում մենք խոսելու ենք նույնպես այս մեծ չարիքի մասին:

5. ԵՐԶՆԿԱՆ ՋԱԼԱԼԻՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1598 թվականին սկսվել է ջալալիների ապստամբությունը, հետևաբար նրանց աննախադեպ ոճիրների ու գազանությունների շարանը, ամենաբարբարոսականն ու զարհուրելին, որ մեր ժողովուրդը տեսել է մինչև 1915 թվականը:

Ջալալիների շարժումը ըստ էության եղել է անիշխանական մի ընդվզում տիրապետող կարգերի դեմ, և սկզբնական շրջանում ունեցել է սոցիալական բովանդակություն, անգամ հայ պատմիչներն ընդունել են այդ փաստը, գրել թե շարժմանը նախորդող շրջանում վերացել էր «դատաստանական իրավունքը, զրկվածների իրավունքի պաշտպանությունը»:

Ջալալի՝ հենց նշանակում է ապստամբ: Շարժումն սկսվել է 1598 թվին և գնալով ընդլայնվել է, իր մեջ ընդգրկել բազմաթիվ ջոկատներ: Ապստամբությանը միացել են անգամ փաչաներ, կուսակալներ, դարձրել այնպիսի հզոր ուժ, որը ամբողջ երկիրը պահել է սարսափի մեջ՝ Կիլիկիայից մինչև Կասպից ծով:

Ըստ Առաքել Դավրիժեցու՝ 1598 թ. ապստամբվել է Կարա Յազըճին, հաջորդ տարի՝ Հուսեյին փաչան և Քոսա Սաֆարը, 1601 թվին Ահմեդ փաչան, 1604 թվին՝ Ինջաղան, 1605 թվին՝ Հուլարղստրինը[1]:

Սրանցից ամենից դաժանն ու զորավորը եղել է Աբդուլ Հալիմ Կարա Յազըճին, որը նախապես եղել էր ենիչերիական խմբերի հրամանատար: Նա, հավաքելով իր շուրջը հունգարական պատերազմի դաշտից փախած քրդերին և թուրքերին՝ կատաղի մարտեր մղել կառավարական զորքերի դեմ, ամրանալով Ուռհայի բերդում, սակայն երկու տարուց պարտվել է, ապաստանել Ջանիկի լեռներում, որտեղ էլ մեռել է: Իրեն հաջորդել է եղբայրը՝ Դելի Հասանը:

Կարա Յազըճիի բանակում եղել է 36.000 զորք:

Այս երկու եղբայրները նվաճել են Եդեսիան, Զորումը, Ամասիան, Մարզվանը, Թոխաթը, Կեսարիան, Սեբաստիան:

---

[1] **Առաքել Դավրիժեցի,** *Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 632-633:*

Կա փաստ, որ սուլթանին հավատարիմ փաչաներից ոմանք, ինչպես Սեբաստիայի փաչան, ջալալիների դեմ կռվելիս՝ Թուրքերի հետ հայերին էլ են զենք տվել, մասնակից դարձրել դիմադրություններին:

Անչուշտ նման համատարած կռիվների ժամանակ ջալալիների սրի տակ պիտի ընկնեին նաև Թուրքեր, սակայն կրոնական մոլեռանդությունը չէր կարող իր դերը չկատարել: Ջալալիների ցասումը հիմնականում թափվել է անզեն ու անօգնական քրիստոնյաների վրա, առաջին հերթին՝ հայերի, քանի որ հայերով խիտ բնակեցված քաղաքներ էին Արևմտյան Հայաստանում մեր թվարկած բոլոր քաղաքները:

Ջալալիների հարյուր հազարների հասնող զորքը առաջին հերթին կարիք ուներ սնվելու և զգեստավորվելու, որ պիտի կատարվեր տեղական բնակչության հաշվին: Եվ դա կատարվել է թե կազմակերպված միջոցներով և թե անկազմակերպ ավարառության, թալանի ու կողոպուտի միջոցով, որոնց միշտ էլ ուղեկցել են սպանությունները, խոշտանգումներն ու բռնաբարությունները:

Թոխաթի հայերի վիճակը այսպես է նկարագրել Ստեփանոս Թոխաթցին.

Քաղաքացիքն հազար բարվոք զտունն և ըզտեղն ձրգեցին,
Ելեալ փախան, ոմն՝ ի բերդին, ոմանք՝ լերին, շատք՝ ի սարին...
Երեք ամիս նըստան տեղին, զգեղ ու զքաղաք Թալանեցին,
Ո՛չ հոր Թողին և ո՛չ պահունի, զամէնն հանին նըման նեռին:
Ցետո հրով բորբոքեցին, զոսկով նախշած ըզչարտըխնին,
Այրեցին զտուն և ըզտեղի, զմանուկ տղայքն արին գերի,
զՈսկի, արծաթ և զղումաչնի՝ զայն Թալանեցին անյագելի:
Ըզչուրջառներն և զըզեստնի և զծածկոյթ սուրբ սեղանի
Ձիոց ծածկոյթ արին յայտնի, և զայլս հագուստըս ճիվանի...
Եւ զըսպանեալքն ի փողոցին՝ չունք և գազանք զայն ուտէին:
Աւերեցին և քանդեցին՝ զայն չէն բոլոր ըզքաղքընին[1]:

Հակոբ Երեցը նույն ջարդը նկարագրելով ասում է.

Այն լուսատիպ կոյս աղջկներն
Որ արեգակըն չէին տեսեր
Երես ի բաց, բոկ ի նորերն
Ի յընտանեաց էր մոլորեր:

---

[1] **Պ. Մ. Խաչատրյան,** *Հայ միջնադարյան պատմական ողբեր, Երևան, 1969, էջ 252-254:*

Անչուշտ տառացիորեն նույնն էր կատարվել Երզնկայում:

1602 թ. Արևելքում գտնվող օսմանյան զորքը ուղարկվում է Դելի Հասանի դեմ կռվելու, բայց այդ 50.000 զինվորները, փոխանակ ապստամբների դեմ դուրս գալու, «Նստան ի վերայ վչտատես և տառապեալ ողորմելի Երզնկոյն և յաւարի առին և անասելի նեղութիւնք ու վիչտք հասուցին: Եւ երկու ամիս և կէս նստան և այնքան բորբոքեցան և կատաղեցան, որ ըմբռնէին մարդիկ և զերկորիան (ամորձիք) բանային, դաստառակ արկանէին ի վերայ և ծամէին ատամամբ, որ եօթն մարդոյ այնպէս առնելով մեռան, զոր տեսնողքն պատմեցին մեզ զամենայն որպէս եղեալն: Եւ իւրեանքն աւերելով զբազում տեղիս՝ զԵրզնկան, զԿամախ, զՏիւրիկի և զայլ մերձակայ գաւառսն, և ուր որ պատահեցան զամենեսեան յաւարի առին և դարձան յետս գնալով ի տեղի իւրեանց ուստից եկեալ էին»[1]:

Դժբախտ Երզնկան, հազիվ ազատված այս բարբարոսություններից, ենթարկվել է ջալալիների մի նոր խմբի ասպատակություններին:

1607 թ. Երզնկայի վրա է հարձակվել Ալի փաչա Ջանփոլատ Օղլին: Նա 20.000 զորքով գրավել է ամբողջ Կիլիկիան, Փոքր Ասիան, հասել մինչև Կարս: Ճանապարհի ամբողջ երկայնքով մահ ու ավեր սերմանող այս բռնակալը հասել է նաև Եկեղյաց գավառը, որտեղ «Բազում աւեր էած երկիցս և երիցս, որ և սովորեալ էր պիղծ արիւնարբուն, որ թոյլ ետ աստուած վասն ծովացեալ մեղաց մերոց»[2]:

Սուլթան Ահմեդ I-ը 1608 թվականին ոչնչացրել է Ջանփոլատի զորքին, ապա իր հարվածն ուղղել է այլ խմբերի դեմ, որոնց բոլորի մարտունակ ուժերի թիվը անցել է հարյուր հազարից:

1610 թ. ճնշվել է ջալալիների ահռելի չարժումը[3]:

Ձպետք է ենթադրել, թե ջալալիներին հետաքրքրել է միայն ավարառությունն ու կողոպուտը, թալանն ու զանգվածային ոչնչացումը, ինչպես մենք այդ տեսանք Լենկթեմուրի ժամանակ:

Ջալալիներն ունեցել են ցեղային ու կրոնական մոլեռանդությունից բխող մի այլ՝ ավելի վայրագ ծրագիր՝ ամեն գնով բնաջնջել, քչացնել հայերի թիվն ամենուր:

Նրանք հատուկ ուշադրություն են դարձրել արական սեռի բնաջնջման վրա: Թվում է թե չսպանելով կանանց ու աղջիկներին, նրանց պիտի ծառայեցնեին իրենց անասնական կրքերին, սակայն որքան էլ

---

[1] **Գրիգոր Դարանաղցի,** *էջ 37-38:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Ջալալիների չարժման մասին մանրամասն տե՛ս* **Մ. Զուլալյան,** *Ջալալիների չարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966:*

տարօրինակ թվա, ջալալիների չարժման առաջնորդներից մեկը մահվան սպառնալիքով արգելել է իր զինվորներին՝ մերձենալ հայ կանանց ու չափահաս աղջիկներին, իսկ իրենց կրքերին բավարարություն տալ օգտագործելով՝ մանկամարդ տղաներին ու անչափահաս, արբունքի չհասած աղջիկներին, երեխաներին: Այս հրամանի նպատակն էր միայն մի բան՝ կասեցնել հայերի հետագա աճը:

Արական սեռի ծրագրված ոչնչացման, հարկադիր պանդխտության ու գաղթականության հետևանքով Երզնկայի գյուղերում և հենց քաղաքում տղամարդկանց թիվն իջել է նվազագույնի, գրեթե կասեցվել է սերնդագործությունը:

Այս աղետալի երևույթը գեթ մասամբ թուլացնելու նպատակ է հետապնդել այն հակամիջոցը, որին հարկադրված են եղել դիմել հայ լուսավորչական եկեղեցու որոշ առաջնորդներ՝ արտոնելով տղամարդկանց՝ կենակցելու մեկից ավելի հայ կանանց հետ:

Մեզ մանրամասնություններ չեն հասել հայ եկեղեցու դարավոր ավանդույթներին հակասող այս արտոնության մասին, չգիտենք թե ինչ աստիճանի է հասել այդ և որքան է տևել: Բայց, որ այն չէր կարող Ղուրանի կողմից արտոնված բազմակնության նման մի բան լինել, կասկածից վեր է: Իսկ որ արտոնությունը հետապնդել է միայն հայ ազգաբնակչության աճը գեթ մասամբ ապահովելու նպատակը, կասկածից վեր է:

Ըստ բանավոր զրույցների, բերնե բերան մեր օրերն հասած տվյալների արտոնվել են ոչ արենակցական կապ ունեցող կենակցությունները, հատկապես այն այրի կանանց հետ, որոնց ամուսինները զոհվել են թուրքերի կողմից կամ պանդխտության մեկնելով այլևս չեն վերադարձել և իրենց կապերը խզել են ընտանիքների հետ:

Այսպես թե այնպես, երևույթը խորթ ու արտառոց է թվացել ավանդապաշտ հայ հոգևորական պետերին: Գրիգոր Դարանաղցին ասում է, թե երբ ինքը կրկին վերադարձել է Երզնկա, արգելել է հիշյալ սովորությունը: Հենց դա էլ վկայում է, որ նման արտոնություն տրվել է Երզնկայի հոգևոր նախկին առաջնորդների կողմից:

Ջալալիների ավերածություններին զոհ են գնացել ոչ միայն բազմահազար երզնկացիներ, այլև քանդվել են մի քանի վանքեր, ինչպես վկայում է Դարանաղցին:

Ջալալիների հորդաների Հայաստան ներխուժելու երկրորդ տարում Երզնկայի չրջանում արդեն ո՛չ ցանք է կատարվել, ո՛չ հունձք: 1600 թ. ծայր է առել սաստիկ սովը, որը հնձել է ջարդերից ու կոտորածներից ողջ մնացածների մեծ մասին. «Բազումք մեռանէին,-

գրում է Գրիգոր Դարանաղցին,- ... և անկեալ լինէին դիակունք նոցա թէ ի գիւղս թէ ի քաղաք և թէ յանցս ճանապարհաց, և ոչ ոք էր որ թաղէր զնոսա»[1]:

Երզնկացի մի քահանա, Շողա գյուղից, մինչև Էրզրում հասնելը ճանապարհներին 30 դիակ է տեսել:

Սովը շարունակվել է նաև հաջորդ տարիներին՝ 1605, 1606 թվականներին: Մարդիկ սկսել են դիակներ ուտել: Մարդակերությունը դարձել է սովորական երևույթ: Պատմագիրը վկայում է, որ գողացվել են փոքր երեխաներ, մորթվել են, եփվել ու կերվել... Իսկ գայլերը ազատ-համարձակ մտել են գյուղերը, տները, հոչոտել ուժասպառ, պաշտպանվելու անկարող մարդկանց:

Բնակչության կուտակած ու թաքցրած սննդի վերջին պաշարները խլվել են Երզնկայում կենտրոնացված Ջալալիական զորքի կողմից, որոնց ղեկավարն էր արյունարբու Ղարաբաչ անուն ապստամբապետը:

Երբ մարդիկ այլևս ոչինչ չեն գտել ուտելու, սովամահների թիվը գնալով մեծացել է ու երկիրը ամայացել մարդկային կենդանի չնչից, իսկ Երիզայի գեղատեսիլ դաշտերը ողողված են եղել ոչ թե ցորենի հասկերով, այլ դժբախտ հայերի դիակներով: 1603 թ. Ղարաբաչն իր զորքով լքել է Երզնկան, քանի որ այնտեղ ո՛չ թալանելու մթերք է մնացել, ո՛չ սպանելու կենդանի չունչ, բացի լեռների ծերպերում, անմատչելի վանքերի խցերում թաքնված փոքրաթիվ հայերից: Նա հարձակվել է Բաբերդին ու Գյումյուշխանեին տիրող Ջալալիների վրա: Այդպես են գաղանները, երբ որս չեն ճարում, միմյանց են հոչոտում:

Հիշատակեցինք Եվդոկիայի կոտորածը, Երզնկայի կրած տառապանքը: Նույնպիսի փաստեր կարելի է բերել Սեբաստիա և այլ քաղաքների մասին:

1608–1610 թթ. Ջալալիների նոր շարժումը ղեկավարել է նույն Ջանփոլադ Օղլին: 1622–1628 թթ. ծավալվել է Էրզրումի Աբազա փաշայի ղեկավարած ապստամբությունը:

Պետք է պատկերացնել հայ ժողովրդի վիճակը ալիք առ ալիք միմյանց հաջորդող այս պատերազմների ընթացքում: Տղամարդիկ օգտագործվում էին նաև ճանապարհաշինարարության, պետական կառույցների համար: Կան փաստեր, որ հայերը թուրքական բանակի կողմից օգտագործվել են անգամ որպես գրաստ՝ մթերքներ և այլ իրեր մի տեղից մյուսը տեղափոխելու համար:

---

[1] **Գրիգոր Դարանաղցի,** *էջ 35-36:*

Ջալալիների ասպատակությունների ամենից մեծ չարիքը եղավ գանգվածային այն արտագաղթը, որ ծայր առավ ամբողջ Հայաստանում: Հայ ժողովուրդն իր անտանելի վիճակից դուրս գալու միակ ելքը համարում էր երկրից փախչելը:

Ոմանք նախընտրել են կրոնափոխ լինել և մնալ իրենց պապենական երկրում: Մենք դեռ խոսելու ենք նաև այդ չարիքի մասին, սակայն մեծ մասը, դժվարանալով թողնել քրիստոնեական կրոնը, իրենց հայրերի ու պապերի ավանդները, որոշել է բռնել արտագաղթի ճամփան՝ իրենց չարժական ինչքից ինչ որ մնացել էր, իրենց հետ վերցնելով: Վերցնելով նաև սրբություններ դարձած եկեղեցական անոթներ, զգեստներ, ձեռագրեր և այլն:

Գաղթականության հոսանքը մեծ մասամբ Երզնկայից, Կամախից, Ակնից, Տիվրիկից չարժվել է դեպի Կ. Պոլիս ու շրջակաները, եվրոպական Թուրքիայի վրայով հասել մինչև Լեհաստան, Ղրիմ և այլն: Գաղթն սկսվել է 1599 թվականին և շարունակվել է հաջորդ 1–2 տարիների ընթացքում: Գրիգոր Դարանաղցին, տալով ժամանակակցի հավաստի տեղեկություններ այդ գաղթի մասին, ասում է թե ինքը, երբ 1602 թ. Էջմիածնի կողմից որպես նվիրակ ուղարկվել է Հին Ջուղա, այնտեղից մեկնել Կ. Պոլիս, մայրաքաղաքում զարմանալի տեսարան է պարզվել իր աչքի առաջ: Կարծեք իրեն զգացել է Երզնկայում կամ Կամախում, քանի որ այդ քաղաքների ու նրանց շրջակա գյուղերի ողջ հայությունը թափված է տեսել այնտեղ, ինչպես և Ռոդոստո և այլ մոտակա վայրեր:

Մարդիկ փնտրում ու գտնում էին իրենց հարազատներից շատերին, ապրուստի, աշխատանքի միջոցներ որոնում, օգնում միմյանց, մխիթարում իրար: Հենց ինքը Դարանաղցին Կ. Պոլսում հանդիպել է իր պատանեկության և երիտասարդական տարիների ընկերներին, որոնք մերկ ու բոկոտն հազիվ էին փախել Ջալալիների ստեղծած դժոխքից: Նա այնտեղ գտել է իր խորթ եղբորը, հանդիպել Սեպուհ լեռան լանջերի քարանձավներից մեկում ճգնող Պարոնին, որին աշակերտած էր եղել Երզնկայում և որն այժմ վերադառնալիս է եղել Հռոմից ու Իսպանիայից:

Ջալալիների խժդժությունների հետևանքներն ավելի աղետաբեր պիտի լինեին և Երզնկան էլ գուցե վերջնականապես կորցներ հայկական դեմքն ու նկարագիրը, եթե սուլթանական կառավարությունը վայրագ չարժման ճնշումից հետո (1610) հատուկ հրովարտակով չպարտադրեր գաղթականներին վերադառնալ հայրենիք և զբաղվել իրենց աշխատանքով, տալով նրանց երեք ամիս ժամանակ, այլապես

սպառնալով բռնի հեռացնել մայրաքաղաքից ու նրա շրջակայքից: Այստեղ չպետք է որոնել մարդասիրական որևէ նկատառում: Այդ կարգադրությունն ուներ տնտեսական լուրջ պատճառներ:

Նախ՝ արդեն մի քանի տարի էր, որ աշխատող ուժեր չլինելու պատճառով Արևմտյան Հայաստանի նկատելի մասում ցանք չէր կատարվում: Հողից բարիք կորզող աշխատասեր ժողովուրդն ոչնչացել էր, կամ լքել երկիրը: Նրա ճակատի քրտինքով վաստակվածը խլվում էր անաշխատունակ մուսուլման տարրի կողմից, լցվում նաև պետական ամբարները, սնում պորտաբույծ թուրքական մի ամբողջ խավ: Հիմա Հայաստանի հողի վիթխարի մասն անմշակ էր, փուչ ու տատասկ էր բուսնում փարթամ արոտավայրերում, ցորենի արտերում ու հանդերում: Հայկական եկեղեցիները վերածվել էին մզկիթների, ախոռների: Սկսված սովը սպառնում էր նաև տիրապետող ցեղերին: Քրիստոնյաների կողքին, հենց ճանապարհներին թափված էին նաև թուրքերի, քրդերի դիակներ: Սովը ազգի, կրոնի խտրություն չէր դնում: Հնձում էր անխնա, հավասարապես, թիկունք ունենալով տարափոխիկ հիվանդություններից ծագող համաճարակները:

Աղետալի այս վիճակի առաջն առնելու միակ ելքը ողջ մնացած հայ գաղթականներին Կ. Պոլսի շրջակայքից ետ վերադարձնելը, աշխատանքի լծելն էր, անգամ սիրաշահելու, խոստումներ տալու ճանապարհով:

Կար մի այլ նկատառում էլ: Երզնկայից, Կամախից և Հայաստանի այլ քաղաքներից Կ. Պոլիս ու նրա շրջակայքը թափված հայ գաղթականները լրջորեն մտահոգում էին տեղական թուրք տարրին: Գաղթական հայերը մեծ մասամբ, եթե չասենք ամբողջությամբ, ճգնում էին ապրել քաղաքներում, զբաղվել առևտրով և արհեստներով, լուրջ մրցակից դառնալով այդ բնագավառներն իրենց ձեռքը պահող թուրք և հույն տարրի համար:

Գաղթական հայերը, չնորհիվ իրենց աշխատասիրության ու ձեռներեցության, կարճ ժամանակում հասել էին նյութական բարեկեցիկ վիճակի, թուրքերից, հույներից գնել էին նրանց տները, խանութները, ստեղծել յուրահատուկ համաքաղաքացիական համայնքներ, ինչպես Կ. Պոլսի որոշ թաղերում, այնպես էլ Ռոդոստոյում:

Երզնկայի գաղթականների նկատելի մասն ապրում էր Ռոդոստոյում և գոհ էր իր վիճակից, ամենևին տրամադիր չէր նորից ընկնելու գավառի դժոխք, որտեղ կյանքը դարձել էր անտանելի: Այստեղ, մայրաքաղաքին անմիջապես մոտ, կային աշխատանքի պայմաններ, որոշ կարգ ու կանոն:

Գավառից եկած հայ գաղթականների թվի մեծացումը անհանգստացնում էր անգամ մայրաքաղաքի հոգևոր իշխանություններին, առաջին հերթին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին, որի քահանաներն այժմ մրցում էին գաղթական քահանաների հետ՝ ծխեր պահելու համար:

Գաղթականները գավառից իրենց հետ բերել էին համաքաղաքացի կամ համագյուղացի կրոնավորների, որոնք ավելի հարազատ էին իրենց, խոսում էին երկրի բարբառով, սովոր էին կենցաղին, ծիսակատարություններին, երբեմն անգամ ազգակցական կապերով կապված էին միմյանց հետ:

Գավառացիները շատ ավելի ենթարկվում էին իրենց հայ խոջաներին, քան պատրիարքին, իսկ դա թուլացնում էր առհասարակ պատրիարքի իրավասությունն ու հեղինակությունը մայրաքաղաքում:

Գաղթականական միջավայրում գործող հեղինակավոր նման խոջաներից էին օրինակ, երզնկացի Խոջա Հովսեփը, Խոջա Դավիթը, նրա որդի Գրիգորը, որոնք ոչ միայն ընտելացել էին տեղական պայմաններին, կապեր հաստատել թուրք բարձրաստիճան գործիչների հետ, այլև ըստ երևույթին հենց նրանց օժանդակությամբ ձեռք էին բերել նկատելի հարստություն:

«1650-ական թվականներին արդեն նման խոջաների ազդեցության տակ էր Ղալաթիայի առևտրական թաղամասը՝ ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիով, որի մեծաշուք իշխաններն ու երեսփոխաններն էին Խոջա Դանիելը, Խոջա Մկրտիչը, Խոջա Եղիան և ուրիշներ»[1]:

Ուրեմն Պոլսի պատրիարքն էլ, օգտագործելով իր ազդեցությունն ու հնարավորությունները դրդում էր կառավարական պաշտոնյաներին, միջոցներ որոնել հայ գաղթականներին իրենց հայրենիքը վերադարձնելու:

Գրիգոր Դարանաղցին մանրամասնորեն խոսելով այս հարցերի մասին, ակնարկ անգամ չի անում, թե Կ. Պոլսի պատրիարքարանը ունեցե՞լ է ազգապահպանման, գավառի հայության համախմբման ծրագիր, ինչպիսին, օրինակ ունեցան 19-րդ դարի պատրիարքները, մասնավորապես Մկրտիչ Խրիմյանն իր պաշտոնավարության տարիներին:

Վերադարձի պետական հրամանագրի մեջ խոստում էր տրվում երեք տարի հարկ չգանձել տեղափոխվող հայերից: Դժվար է ասել, թե որքան է պահել իր խոստումը կառավարությունը, փաստ է մի

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հատ. IV, էջ 305-306:

բան, որ այդ հրամանագրով երզնկացիները պարտավոր էին վերադառնալ հայրենիք և վերադարձան, նորից կենդանություն տալով Եկեղյաց գավառի գրեթե ամայացած վայրերին:

Ներգաղթի այդ պատասխանատու գործը ղեկավարել է Հենց Գրիգոր Դարանաղցին: 1610 թ. գարնանը, նա 7000 գաղթականների գլուխը անցած Սկյուտարից ճանապարհ է ընկել, հասել Մարզվան, Նիքսար, որտեղ մնացել են գաղթականների մի մասը, իսկ մեծ մասը՝ բոլորն էլ երզնկացիներ և կամախեցիներ, չարունակել են ճանապարհը, հասել մի քանի տարի առաջ թողած ավերված կամ կիսավեր իրենց բնակավայրերը:

Կ. Պոլսից դուրս գալու ժամանակ գաղթականներն ունեցել են բավականաչափ հարստություն: Ոմանք իրենց ունեցվածքը բարձել են երեք ջորիի, ոմանք՝ 5, ամենից աղքատը գոնե մեկ ջորի ունեցել է, նաև հնչուն դրամ՝ 100–500 ոսկու սահմանում, յուրաքանչյուր ընտանիքի կամ անհատի համար[1]:

Բայց մինչև երկիր հասնելը այնքան դժվարություններ են կրել, այնքան ծախսեր արել, որ ոմանք տեղ են հասել մուրացկան վիճակում: Իսկ Երզնկայում դեռ չարունակվելիս է եղել սովը, աղքատությունը: Ո՛չ չտեմարաններում է ցորեն եղել, ո՛չ մառաններում՝ սննդեղեն, ո՛չ ախոռներում՝ անասուն:

Դարանաղցու վկայությամբ Երզնկայում դրությունը համեմատաբար ավելի տանելի է եղել, քան Կամախում, որտեղ բացարձակապես մթերք չի եղել. «զկորեկն յԵրզնկու կու կրեին բեռնակրով և ով ոք բեռնակիրք չունէին, շալակաւ կու բերէին»:

«Յորժամ յԵրզնկան գացաք,– պատմում է Դարանաղցին,– և անդ այլ զայտ արարաք զյամրերն յառաջին ամին յաղցից պահոցն և քարոզ, և դաս ասաք, նա ժողովուրդք վանօրէիցն համար և մեզ կերակրի երեսուն սոմար, որ տեղացս չորս քիլան է, կորեկ ժողվեցի, թէ որչափ աղաղակեցի՝ մեկ չարեկ ցորեն չգտնուաւ, ասացին՝ մեք զապրցուն ի կորեկէն և ի գարուն կու չինեմք: Ահա այսպէս չքաւորութիւն էր յաչխարհին, մեկ փողոյ վաստակի դուռն չկայր»[2]:

Եղել են մարդիկ, որոնք, չդիմանալով այդ ծանր պայմաններին, հաջորդ տարվա գարնանը կրկին բռնել են Կ. Պոլսի ճամփան:

Դարանաղցին այցելել է Կամախ, Երզնկա, Ակն, Տիվրիկ, ամենուր դատարաններում արձանագրել է տվել իր բերած հրամանագրերը, որպեսզի տեղական իշխանությունները կատարեն սուլթանի հրամանը:

---

[1] **Գրիգոր Դարանաղցի**, էջ 159:

[2] Նույն տեղում:

Երզնկացիների այն մասը, որ Կ. Պոլսում և Ռոդոստոյում իրենց համար ստեղծել էին ապրուստի պայմաններ, հարմարվել էին միջավայրին ու ծանոթություն էին հաստատել տեղական իշխանությունների հետ և վայելում էին նրանց հովանավորությունը, հակառակ արքայական հրամանագրերին, չեն վերադարձել[1]:

6. ԵՐԶՆԿԱՆ ԵՆԻՉԵՐԻՆԵՐԻ ՍԱՐՍԱՓԻ ՆԵՐՔՈ

Ենիչերությունը, այսինքն՝ քրիստոնյա հպատակների երեխաներին բռնի կրոնափոխ անելով՝ նրանցից մարտունակ ուժեր ստեղծելով նույն քրիստոնյաների դեմ օգտագործելը նոր չէր, սակայն առաջ ենիչերիները գտնվում էին կառավարության ուժեղ հսկողության տակ:

Աստիճանաբար նրանք սկսեցին գործել ինքնիշխան, չենթարկվել կենտրոնական կառավարության հրամաններին, իսկ 17-րդ դարի քսանական թվականներին արդեն սպառնալից ուժ դարձան, լրջորեն մտահոգելով սուլթաններին: Իշխանությունը հետզհետե անցնում էր նրանց ձեռքը, իրենք էին փոխում գավառապետներին, պետական որոշ պաշտոնյաների, փոխում անգամ մեծ վեզիրներին՝ եթե դուր չէին գալիս ենիչերի աղաներին: Ենիչերիներից էին նշանակվում ոչ միայն նահանգապետներ ու գավառապետներ, այլև զինվորական հրամանատարները:

1622 թ. ենիչերիները սպառնալից վիճակ են ստեղծում մայրաքաղաքում, ապստամբում են սուլթանի դեմ, գրավում պալատը և սպանում սուլթան Օսմանին:

Էրզրումի ենիչերիական կայազորը, հետևելով Կ. Պոլսի իրենց եղբայրների օրինակին, նույնպես չի ենթարկվում պետական կարգադրություններին, սկսում է գործել ինքնիշխան, կատարել սանձարձակ վայրագություններ, ահ ու սարսափի մատնելով նահանգի բնակչությանը:

Սրանց դեմ է դուրս գալիս նահանգապետ Աբազա փաշան, որի հիշողության մեջ դեռ թարմ էին ջալալիների ասպատակությունների տխուր հետևանքները, երկրի ամայացումն ու կործանման եզրին հասնելը: Նույնը պիտի կրկնվեր այժմ, եթե չկանխվեր: Ուստի նա, իրեն հավատարիմ զորքերով շրջապատում է ենիչերիների կենտրոնատեղին և անխնա ջարդում նրանց:

---

[1] Ռոդոստոյում մնացած Երզնկայի հայության հետագա ճակատագրի մասին մանրամասն տե՛ս **Ս. Փաչաճյանի** «Հուշամատյան Ռոտոսթոյի հայերուն» (1606–1922) արժեքավոր գրքում (Բեյրութ, 1971):

Բայց որովհետև մայրաքաղաքում իշխանությունը ենիչերիների կողմից նշանակված մարդկանց ձեռքին էր, Աբազային կանչում են Կ. Պոլիս, որպեսզի հանձնեն ենիչերիների դատաստանին: Աբազան չի ենթարկվում հրահանգին, պատերազմական գործողություններ է ծավալում Էրզրումից դուրս, արշավում դեպի Արևմուտք, գրավում Կամախը, Երզնկան, Սեբաստիան, հասնում մինչև Էնկյուրի, ամենուր ոչնչացնելով ենիչերիներին: Սրա գորքի սարսափը այնքան մեծ է եղել, որ իրենց կաչին փրկելու համար որոշ ենիչերիներ առերես ձևացրել են թե հայ են, օգտագործել են անգամ հայկական անուններ՝ Թորոս, Խաչատուր և այլն:

Սակայն երբ գահ է բարձրանում սուլթան Մուրադ IV-ը, նա Աբազայի դեմ կանոնավոր պատերազմ է սկսում, հանձին նրա տեսնելով ենիչերության ամենաոխերիմ թշնամուն: Պարտվում է Աբազան: Սուլթանը խնայում է նրա կյանքը նոր խլրտումների տեղի չտալու համար:

Այսպիսով ենիչերությունը շարունակում է սպառնալիք մնալ թուրքական պետությանը մինչև 19-րդ դարի քսանական թվականները, այդ ամբողջ ժամանակաընթացքում երկրում կատարելով անկարագրելի ասպատակություններ, կամայականություններ: Նրանց էր ենթարկվում և՛ օրենքը և՛ կառավարությունը: Ինչքի բռնագրավում, ծեծ, խոշտանգում, ծրագրված ջարդեր, բռնաբարություններ, սովորական երևույթ էին ինչպես ջալալիների, այնպես էլ ենիչերական տիրակալության երկու հարյուր տարիների ընթացքում: Ինչպիսի տուրքեր ասեք որ չէին դնում ու գանձում նրանք: «Եւ թէ տասն որդի ունիցի ոք,- գրում է Սիմեոն Լեհացին,- ամէնէն խարաճ առնուն, և թէ հեռանայ, դարձեալ առնուն... զի ամէն տեղ հարամիք էին, սօխթանի, ամէն տեղ թալան և եաղմայ և զուլում»[1]:

Հատկապես ձմռան ամիսներին, երբ ենիչերիները լցվում էին գյուղերը, անհնար էր փողոց դուրս գալը: Աչնանից որոշ պաշար կուտակելով՝ հայ գյուղացին հարկադրված էր 3–4 ամիս փակված մնալ գետնափոր, հաճախ աննշմարելի տնակներում, որոնք կառուցվում էին այն հաշվով, որ փողոցներին նայող լուսամուտ չունենան, երեկոները որևէ լույս չթափանցի դուրս:

Պարբերական երևույթ էր սուլթանի և պալատական փաշաների համար սիրունատես աղջիկներ հավաքելը: Գեղեցիկ օրիորդները թուրք իշխանավորների ձեռքին եղել են առուծախի, նվիրատվության

---

[1] **Սիմեոն Լեհացի,** *Ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք, Վիեննա, 1936, էջ 194:*

առարկա: Նրանք սուլթանական հարեմներում որոշ ժամանակ պահվելուց հետո նվեր են տրվել փաշաներին, իսկ վերջիններս էլ նվիրել են ավելի ստորադաս պաշտոնյաների:

Հայերը, հատկապես որոշ վայրերում, ինչպես Կեսարիայում, Յոզղատում, Բուրսայում, Անկարայում, իրավունք չեն ունեցել իրենց մայրենի լեզուն օգտագործելու: Կտրել են այն մարդկանց լեզուները, ովքեր հայերեն են խոսել[1]:

Նրանք ենթակա էին նաև իրավական կաշկանդումների: Քրիստոնյա հպատակներն իրավունք չունեին թամբած ձի նստելու, դեղին մուճակներ հագնելու, կարմիր գլխարկներ կրելու: Այդ բոլորը արգելված էր համապատասխան հրովարտակներով:

Անգամ հանգուցյալին թաղելու համար թուրք մոլլայի կողմից հայ քահանային տրված արտոնագրի մեջ, որից նմուշներ հասել են մեզ և վերաբերում են Կեսարիայի շրջանին, ամենավարկաբեկող ու անարգող բառերով է տրվել այդ «չնորհը». թեև հանգուցյալի «սրբապիղծ մարմինը հողեն ընդունելի չէ, բայց քանի որ իր սոսկալի գարշահոտությունը հանրության վնասակար պիտի ըլլա» թույլատրվում է թաղել՝ «այդ զզվելի գարշահոտությունը մեջտեղից վերացնելու համար», պայմանով, որ «անարգ այդ լեշը քաղաքից դուրս մի փոսի մեջ գցվի»[2]:

Բարեբախտաբար նման ծայրահեղություններ չեն եղել բուն Հայաստանում, հետևաբար և Երզնկայում, որտեղ մարդիկ գեթ իրենց մեռյալներին կարողացել են թաղել ըստ պապենական սովորության:

Մեր բերած փաստերը վկայում են, որ Թուրքիայում պաշտոնական ճորտատիրություն գոյություն չունենալով հանդերձ՝ քրիստոնյա հպատակները ենթակա են եղել առուծախի: Վանի ու այլ քաղաքների շրջաններում հաճախ է պատահել, որ թուրք վաշխառուն չկարողանալով գանձել այս կամ այն հային պարտք տված իր փողի ահռելի տոկոսները, դրա դիմաց վերցրել է նրա կնոջը կամ աղջկան:

Այս ընդհանուր տեղեկություններից հետո՝ այժմ տեսնենք թե ինչ վիճակում է եղել Երզնկան՝ ենիչերիական սարսափի տարիներին:

Երզնկայի վերաբերյալ ուշագրավ փաստեր է հաղորդում Ավետիք եպիսկոպոս Եվդոկացին, որը 1702 թ. դարձել է Կ. Պոլսի պատրիարք և ունեցել շատ արկածալից կյանք: Նա շատ կողմերից ուշագրավ իր ինքնակենսագրականում մեզ զբաղեցնող հարցի մասին գրում է.

---

[1] «Տաթև», տարեգիրք, Հալեպ, 1929, էջ 6-7:

[2] Հ. Մորկընթաու, Ամերիկյան դեսպանի հիշատակները և հայկական եղեռնին գաղտնիքները, Կ. Պոլիս, 1919, էջ 242:

առարկա: Նրանք սուլթանական հարեմներում որոշ ժամանակ պահ-վելուց հետո նվեր են տրվել փաշաներին, իսկ վերջիններս էլ նվիրել են ավելի ստորադաս պաշտոնյաների:

Հայերը, հատկապես որոշ վայրերում, ինչպես Կեսարիայում, Յոզղատում, Բուրսայում, Անկարայում, իրավունք չեն ունեցել իրենց մայրենի լեզուն օգտագործելու: Կտրել են այն մարդկանց լեզուները, ովքեր հայերեն են խոսել[1]:

Նրանք ենթակա էին նաև իրավական կաշկանդումների: Քրիստոնյա հպատակներն իրավունք չունեին թամբած ձի նստելու, դեղին մուճակներ հագնելու, կարմիր գլխարկներ կրելու: Այդ բոլորը արգելված էր համապատասխան հրովարտակներով:

Անգամ հանգուցյալին թաղելու համար թուրք մոլլայի կողմից հայ քահանային տրված արտոնագրի մեջ, որից նմուշներ հասել են մեզ և վերաբերում են Կեսարիայի շրջանին, ամենավարկաբեկող ու անարգող բառերով է տրվել այդ «չնորհը». Թեև հանգուցյալի «սրբապիղծ մարմինը հողեն ընդունելի չէ, բայց քանի որ իր սոսկալի գարշահոտությունը հանրության վնասակար պիտի ըլլա» թույլատրվում է թաղել՝ «այդ զզվելի գարշահոտությունը մեջտեղից վերացնելու համար», պայմանով, որ «անարգ այդ լեշը քաղաքից դուրս մի փոսի մեջ գցվի»[2]:

Բարեբախտաբար նման ծայրահեղություններ չեն եղել բուն Հայաստանում, հետևաբար և Երզնկայում, որտեղ մարդիկ գեթ իրենց մեռյալներին կարողացել են թաղել ըստ պապենական սովորության:

Մեր բերած փաստերը վկայում են, որ Թուրքիայում պաշտոնական ճորտատիրություն գոյություն չունենալով հանդերձ՝ քրիստոնյա հպատակները ենթակա են եղել առուծախի: Վանի ու այլ քաղաքների շրջաններում հաճախ է պատահել, որ թուրք վաշխառուն չկարողանալով գանձել այս կամ այն հային պարտք տված իր փողի ահռելի տոկոսները, դրա դիմաց վերցրել է նրա կնոջը կամ աղջկան:

Այս ընդհանուր տեղեկություններից հետո՝ այժմ տեսնենք թե ինչ վիճակում է եղել Երզնկան՝ ենիչերիական սարսափի տարիներին:

Երզնկայի վերաբերյալ ուշագրավ փաստեր է հաղորդում Ավետիք եպիսկոպոս Եվդոկացին, որը 1702 թ. դարձել է Կ. Պոլսի պատրիարք և ունեցել շատ արկածալից կյանք: Նա շատ կողմերից ուշագրավ իր ինքնակենսագրականում մեզ զբաղեցնող հարցի մասին գրում է.

---

[1] *«Տաթև», տարեգիրք, Հալեպ, 1929, էջ 6-7:*

[2] **Հ. Մորկընթաու,** *Ամերիկյան դեսպանի հիշատակները և հայկական եղեռնին գաղտնիքները, Կ. Պոլիս, 1919, էջ 242:*

«Եւ Երզնկու գաւառ առին Թուրքն ազգին յենիչերիք. յոյժ եարամազ էին, քրիստոնէից զտղայքն յափշտակեալ կու պղծէին և զկանայքն կու պղծէին, իբրև զՍոդոմ Գոմոր եղև, և այլև աւազակութիւն առնէին, զվանքերն ու եկեղեցիք կողոպտէին, արբեալ ի գինւոյ զմարդիկ բազում սպանին և զիս այլ երկու տեղաց խանչարով խոցոտեցին, բազում արիւն հեղաւ, մինչ մեկ ժամ անչնչացա»[1]: Ապա Ավետիք եպիսկոպոսը պատմում է թե ինչ դժվարություններով ընկել է Կ. Պոլիս, բողոքել ենիչերիների վայրագությունների դեմ, թույլտվություն է ձեռք բերել Երզնկայում եկեղեցի կառուցելու, սակայն երբ վերադարձել է, հայտնել է իր մտադրությունը, տեղական Թուրքերը, հաշվի չառնելով պետական թույլտվությունը, արգելքներ են հարուցել, խոչտանգումների ենթարկել նրան: Դատելու համար Երզնկայից տարել են Էրզրում, տանջել. ահա թե ինչպես է նկարագրում նա Էրզրումում իրեն տրված պատիժները. «Եկեղեցի եմ չիներ տեի՝ բանտ էարկ և սաստիկ կոճեղս եդ ի յոտս իմ մինչ Գ օր անսուաղ յետ երից աւուր տարաւ յատեան, զոր Խելիլ փաշա խօսէր սաստիկ սպառնալեօք, վասն է՞ր չինեցիր զեկեղեցին Երզնկոյ. և ես լալագին դիմօք պատասխանեցի թէ հրամանաւ Թուրքին մեծաւորին և ձեր Ղուրան գրքին, հրաման Ֆեթվային և Երզնկու դատաւորին գիտութեամբն չինեցի. կամք քո ինչ է դու գիտես այլ առաւել սպառնայր և կրկին ի բանտ և ի կոճեղս էարկ»[2]:

Հետաքրքիր է նաև այս պատմության շարունակությունը: Ավետիքին հայտնում են, թե իբր իրենք կարդալ չգիտեն, որպեսզի իմանան թե իսկապես սուլթանը թույլ է տվել Երզնկայում հայկական եկեղեցի կառուցելու: Ավետիքը գտնում է արաբկիրցի մի հայ վաճառական և կարդալ է տվել:

Համոզվել են, սակայն, այնուամենայնիվ 600 ղուրուշ կաշառք առնելուց հետո նոր միայն թույլ են տվել, որ շարունակի եկեղեցու շինությունը: Բայց Երզնկայում շարունակվել է արգելքը: Սուրը ձեռքին նրա մոտ է եկել Երզնկայի մուֆթին, ասել է. «Այդ եկեղեցին է՞ր կու չինես: Մի՞թե մենք գյավուրներ ենք, որ թույլ տանք չինել զեկեղեցի»:

Եվ այսպես անվերջ տառապանքներ:

---

[1] «Մասիս», օրաթերթ, Կ. Պոլիս, 1874, № 1490–1500:
[2] Նույն տեղում:

7. ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՁԱՐԻՔԸ

Ձկարողանալով տոկալ ահավոր տուրքերին, տևական թալանին ու ջարդերին, կանանց ու պատանիների նկատմամբ կատարված անարգանքներին, հազարավոր հայ ընտանիքներ, հաճախ ամբողջ գյուղեր ու գյուղախմբեր իրենց քահանաներով հանդերձ ընդունել են մահմեդական կրոնը, փոխել ազգությունը, որպեսզի ազատ չունչ քաշեն:

Ա. Ալպոյաճյանն իր «Պատմություն հայ Կեսարիո» գրքում հիշատակում է Կեսարիայի շրջանում մի շարք գյուղեր, որոնք առաջ եղել են զուտ հայաբնակ, հայախոս, ունեցել եկեղեցիներ, վանքեր, անգամ մշակութային կենտրոններ, սակայն հետագայում բռնի թուրքացվել են[1]:

Նույնը կատարվել է նաև այլ քաղաքներում և գավառներում:

Օսմանցիներին որքան մտահոգել է հայերի վաստակը հափշտակելու մոլուցքը, նույնքան՝ նրանց թվական գերակշռության փոքրացումը: Սկզբնական շրջանում, ինչպես գրել են մեր մատենագիրները, Արևմտյան Հայաստանի ընդհանուր բնակչության տասից մեկն էր մահմեդական, մնացածը հայ, իսկ ընդամենը երկու դար անց՝ շատ վայրերում արդեն հակառակն է եղել:

Բռնի իսլամացումը շատ ավելի նպաստավոր էր թուրքերի համար, քան բնաջնջումը: Նախ փոխվում էր թվական հարաբերականությունը՝ հօգուտ իսլամների, մյուս կողմից չէր պակասում աշխատող ձեռքը, քանի որ աշխատասեր հայ ժողովուրդը կրոնափոխությունից հետո էլ շարունակում էր զբաղվել հողագործությամբ, արհեստներով:

Օսմանցի թուրքերը Անատոլիայի արևմտյան գավառների հույներին շատ ավելի վաղ էին կրոնափոխ արել, քան հայերին:

Արևմտյան Հայաստանի հայերի բռնի իսլամացումը լայն թափ է ստացել 16-րդ դարից, երբ կրոնափոխ դարձնելու ծրագրի համար կիրառվեցին վերևում հիշատակված հալածանքները:

Կան փաստեր, որ քրիստոնեական կրոնին համառորեն հավատարիմ մնալ ցանկացող տղամարդկանց Երզնկայում ևս խոշտանգել են հրապարակով, ամորձատել են, կտրել նրանց ձեռներն ու ոտները, ապա միայն սպանել: Ինչպես Կեսարիայի շրջանում, Երզնկայի, Դերսիմի, Կամախի գավառներում հարյուրից ավելի հայաբնակ գյուղեր ջալալիների և ենիչերիների սարսափների օրերին բռնի թուրքացվել են: Գ. Հալաջյանը, որ երկար տարիներ ապրել է այդ վայրերում,

[1] **Ա. Ալպոյաճյան,** *Պատմություն հայ Կեսարիո, հատ. Ա, Կահիրե, 1937, էջ 639:*

գրում է. «Այսպես, ասվում է թե Քեչիշդաղի ստորոտից մինչև Սբընգոր և Զարդախլիի ստորոտների հայ գյուղերը նախընտրում են կրոնափոխ լինել, բայց հայրենիքից չհեռանալ: Այդ գյուղերից են՝ Փչկրթաղ, Գալաուիճ, Քյարթաղ, Սբընգոր, Էսեսի, Սրկաթաղ, Զորմես, Խախ, Սլպուս, Հանդեսի, Թիլ, Վարդան-Շահ, Խաչխալի, Մելիք-թաղ, Խորան-թաղ, Վերի թաղ, Վարի թաղ, Թրլխաս, Նորգեղ, Քյոչիկներ, Մեքեզինկեր, Կապրիչի, Վասկարիլ, Համտեսի, Զորխաս և այլն»[1]:

Սրանք, սակայն, թուրքացած այն գյուղերն են, որոնք պահել են իրենց հայկական անունները թեկուզ աղավաղված, ինչպես Սուրբ Գրիգորը՝ Սբընգոր, Քարթաղը՝ Քյարթաղ, Զորմեջը՝ Զորմես, Սուրբ Լույսը՝ Սլպուս և այլն: Համարյա այս բոլոր գյուղերում եղել են հայկական եկեղեցիների ավերակներ, անգամ կանգուն չենքեր, մինչև 1890-ական թվականները: Երզնկայի դաշտի հայկական գյուղերը հիմնականում թուրքացել են:

Այդ տեսակետից շատ ուշագրավ է Ջիմինի պատմությունը, որն ինքնին ազգային մի ողբերգություն է: Ջիմինը եղել է Երզնկայի գավառի ամենամեծ ու զուտ հայաբնակ գյուղը: Ունեցել է հազար ընտանիք, իսկ դա նշանակում է հազար տնից ծուխ է բարձրացել, հարյուրավոր օրորոցներ են ճոճվել, մեջները հայ մանկիկներ: Գյուղն ունեցել է եկեղեցիներ, մեծ ու շատ հին մի գերեզմանատուն, որտեղ եղել են հայերեն բազմաթիվ արձանագրություններ:

Բայց... մեր օրերում Ջիմինը եղել է ամենամոլեռանդ մուսուլմանական գյուղը, ոչ մի այլ վայրի թուրքեր այնքան մոլեգնորեն հայ չեն կոտորել ու թալանել, որքան հայ նախահայրեր ունեցող այդ թուրքերը:

Ե՞րբ է պատահել այս մեծ ու փարթամ հայկական ավանի բարբարոսական ողբերգությունը, այսինքն՝ մոտ 10.000 հայերի բռնի թուրքացումը: Պատմությունը չի արձանագրել, բայց բերնեբերան հասած ավանդությունների համաձայն կատարվել է մոտ 200 տարի առաջ, հավանաբար ջալալիների կամ ենիչերիների ասպատակությունների տարիներին:

Ավանը գտնվում է Երզնկայից 20 կիլոմետր հեռու, Կարնո ճանապարհի վրա, Քեչիշ դաղի ստորոտում, շրջապատված հայկական վանքերով, հնություններով, սրբատեղիներով: Դիրքը շատ առողջարար է: Գյուղի միջից անցնում է արագահոս ու սառնորակ, քաղցրահամ մի մեծ գետ, որի ձայնը լսվում է մի քանի կիլոմետր հեռվից:

---

[1] **Գ. Հալաջյան,** *Դերսիմի հայերի ազգագրությունը, մասն Ա, էջ 249:*

Գետակի վրա կառուցված կամարակապ կամուրջը գյուղը բաժանում է երկու մասի:

Ջիմինցիների հիմնական զբաղմունքը հնում եղել է այգեգործությունը: Հարուստ է թթի, խաղողի և այլ մրգատու ծառերի այգիներով: Զբաղվել են նաև ջորեպանությամբ: Երզնկայից Կարին, Կարինից Երզնկա նրանք տեղափոխել են ապրանքներ, մրգեր, մարդկանց:

Ավանդությունն ասում է, թե Ջիմինցիները եղել են նվիրյալ քրիստոնյա հայեր և հեչտությամբ կրոնափոխ չեն դարձել: Դիմադրել են, բայց պարտվել են:

Ենիչերիների մոլեռանդ կրոնապետները Ղուրանից հատվածներ կարդալով գրգռել են մուսուլման տարրին՝ չխնայել գյավուրներին, կոտորել պիղծ անհավատներին:

Հայ քահանաներին ամորձատել են, այրել նրանց միրուքները, միաժամանակ հայտարարել, թե, եթե Քրիստոսը Մուհամեդից ավելի ուժեղ է, թող ազատի զոհերին: Դրանից հետո է, որ յաթաղանի սպառնալիքի տակ սկսվել է թլփատման դիվային արարողությունը՝ թմբուկների աղմուկ աղաղակի, զոհերի ճիչերի համանվագի տակ: Որքան ժամանակ է տևել այս մոլեռանդ ծիսակատարությունը, եղե՞լ են դիմադրողներ, բախումներ՝ չգիտենք: Բայց Ջիմինը թուրքացել է... քահանաներին փոխարինել են մոլլաները, որոնք քարոզել են տրամագծորեն հակառակ գաղափարներ, քան մինչ այդ լսել էին Ջիմինցի հայերը՝ եկեղեցիներում: Քրիստոնեական համակերպման քարոզի փոխարեն լսել են «ակն ընդ ականի» պատգամը, թշնամուն, անհավատներին ոչնչացնելու խորհուրդներ: Լսել են ու կատարել: Ու Ջիմինցիները տասնամյակների ընթացքում դարձել են ամենից մոլեռանդ, ամենից դաժան մուսուլմանները, իրենց նախկին կրոնակից, ազգակից հայերի մոլեգին թշնամիները:

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը դեռ կիսակործան մնում էին Ջիմինի մեծ եկեղեցին ու մի քանի մատուռներ, որոնց երբեմն ուխտի էին գնում մուրազ հայցող Ջիմինցի թուրք կանայք:

Մնացել էին և գերեզմանատան տասնյակ չիրիմաքարերը, հայերեն արձանագրություններով, իսկ որոշ տներում, ինչպես պատմում են երզնկացիները, պահպանված են եղել անգամ մագաղաթյա ձեռագրեր, Աստվածամոր նկարներ, որոնք օգտագործվել են բուժական նկատառումով... կանանց կողմից:

Պահվել էին որոշ գերդաստանների հայկական անունները՝ Թաթօղլուներ, Մաթօղլուներ, Օհանօղլուներ, Անդիկօղլուներ, գերդաս-

տաններ, որոնց պատկանող մարդիկ չէին էլ կարող պատկերացնել, թե իրենց նախնիները եղել են գյավուրներ ...

Ջիմինցիներն իրենց հակահայկական կիրքը մոլեգնությամբ արտահայտել են թե՛ 1895–1896 թթ. հայկական կոտորածների օրերին և թե՛ Մեծ եղեռնի:

1916 թ. ավանի բնակիչների մեծ մասը թողել հեռացել է: Դրանց փոխարեն՝ գաղթի օրերին Դերսիմի սարերը փախած հայերից 2–3 հազարը ռուսական բանակի գրավման շրջանում իջել են ցած, ապրել Ջիմինում:

Ջիմինցի մի քանի կանայք ամուսնացել են հայերի հետ, եկել են Կովկաս, ապա բնակվել Խորհրդային Հայաստանում: Ապրել են որպես հայեր, հայկական անուններով: Նրանցից մեկը բնակվում էր Կոնդում, այս գրքի հեղինակի հարևանն էր, անունը դարձրած Նազիկ: Գիտեր որ Ջիմինցի էր, բայց ոչինչ չգիտեր Ջիմինի անցյալի տխուր պատմության մասին:

Ջիմինի պատմությունը ընդհանուր է եղել դաշտային Երզնկայի թուրքացած մյուս գյուղերի համար: Ավելորդ ենք համարում դրանց էլ անդրադառնալ:

Միանգամայն այլ ճակատագիր են ունեցել Երզնկայի այն գյուղերը, որոնք գտնվել են Դերսիմի սարերում և որոնք նույնպես կրոնափոխ են եղել, բայց քրդացել են:

Այդպիսի հայկական գյուղերից են եղել Պաղրիի, Մնձուրի, Ավզերտի, Ղազանդաղի, Սուրբլույսի, Սիմի, Տուժիկի լանջերին ընկած մի քանի տասնյակ գյուղերն ու ավանները:

Ըստ ավանդության՝ ջալալիների չարժման տարիներին այս լեռնաշխարհի հայերի առաջ կանգնած է եղել երկու ուղի՝ մահմեդականություն ընդունելով կա՛մ թուրքանալ, կա՛մ էլ քրդանալ: Շրջանի հոգևոր առաջնորդ Տեր Սիմոնը մեկնած է եղել ինչ որ ժողովի, որի նպատակն էր միջոցներ որոնել ժողովրդի փրկության համար:

Տեր Սիմոնը վերադառնալով խկույն ժողովի է հրավիրել հայաբնակ գյուղերի կրոնական ու աշխարհիկ պետերին, բացատրել է դրության լրջությունը և առաջարկել կրոնափոխ լինել, բայց ոչ թե ընդունել թուրքական ազգությունը, այլ իրենց հարևան քուրդ ալևիների դավանանքը, որը շատ կողմերով մոտ էր հայերի ընկալումներին հեթանոսական դարերից եկող սովորություններով և հակաթուրք մտայնությամբ:

Ժողովի մասնակիցներն ընդունում են Տեր Սիմոնի առաջարկը: Տեր Սիմոնը դառնում է իր համայնքի ալևի հոգևոր պետը և իրեն

անվանում Սեիդ-Ալի: Նա դառնում է Քուրեչաների օջախի փիրը, այսինքն՝ կրոնական պետը: Հետագայում հայ և քուրդ կրոնապետների որոշումով կոչվում է փիրեփիրան, այսինքն՝ փիրերի մեծ:

Ըստ նույն ավանդության, որ մեջ է բերում Գ. Հալաջյանն իր «Դերսիմի հայերի ազգագրությունը» գրքում, վերոհիշյալ պատմական ժողովի որոշման արձանագրությունը, գրված հայերեն լեզվով, մագաղաթի վրա, գտնվել է Տեր Սիմոնի մոտ, սերնդեսերունդ խիստ գաղտնի պահվելու պատվիրան, որ սրբությամբ հարգվել է մինչև մեր օրերը:

Այդ արձանագրության պարունակությունն իմացել են միայն իրար հաջորդող փիրերը, իմացել են, որ իրենք հայեր են, բայց նույնպես գաղտնի պահել փաստը:

Ահա այդ օրվանից, ենթադրվում է թե 1604–1606 թվականներին, նախկին պատմական Մանանաղիքը և Քարիան կոչվել են Տեր-Սիմ՝ Տեր Սիմոնի անունով, որը արևելահայերը տառադարձել են Դերսիմ:

Որ այս ավանդությունը շատ մոտ է իրականության և գուցե ամբողջովին վավերական է, երևում է այն փաստից, որ 17-րդ դարից առաջ ոչ մի ձեռագրում չենք հանդիպում Դերսիմ անվան:

Բայց սա դեռ ավանդությունն է: Կանգ առնենք քրդացած հայերի ու այդ վայրերում ապրող քրիստոնյա հայերի փոխհարաբերության, ծիսակատարությունների, սովորությունների ընդհանրության վրա, որը միանգամայն հաստատում է հիշյալ ավանդության ճշտությունը:

Դերսիմի հայերի մասին գրել են տասնյակ ուսումնասիրողներ: Գրել է Անդրանիկը մի ամբողջ գիրք, կան մամուլում հոդվածներ, գրել է և Թարգի Խաչիկը, սակայն ամենից հավաստին ու գիտականը համարում ենք Հալաջյանի վկայությունները, ուստի վերոհիշյալ հարցերին անդրադառնանք ըստ նրա գրքի:

Հալաջյանը բերում է փաստեր, որոնցից հնարավոր է ենթադրել, թե տեր Սիմոնի գերդաստանում պահպանված արձանագրությունը պարունակել է կետեր՝ հայկական որոշ ավանդությունների պահպանման, իրենց նախնիների սրբությունները հարգելու մասին:

Դրանց մեջ, անշուշտ, առաջին տեղը պիտի բռնեին հայկական վանքերի հարստությունը կազմող հին ձեռագրերի, եկեղեցական անոթների պահպանումը, վանքերն ու եկեղեցիները գեթ որպես ուխտատեղիներ պահելու և օգտագործելու պատվերները՝ որ կատարել են դերսիմցի քրդերը մինչև վերջ:

Ալևական դավանանքը թույլ է տվել կապված մնալ այդ վանքերի հետ ուխտագնացություններով, մատաղներով, բժշկական նկատա-

ռումով սրբերին, անգամ քրիստոնյա քահանաների աղոթքին դիմելով:

Ավելի ուշագրավ է քրիստոնեական մյուս արժեքների՝ մագաղաթյա ձեռագրերի նկատմամբ այս քրդերի ունեցած երկյուղած հարգանքն ու սերը:

Քրդացած հայերն իրենց ձեռագիր գրքերը պահել են մեծագույն խնամքով, որոշ գրքեր գտնվել են փիրերի, այսինքն՝ կրոնական պետերի մոտ, օգտագործվել են բժշկության համար էլ: Բայց ըստ երևույթին մագաղաթյա այդ գանձերի թիվն այնքան մեծ է եղել, որ շատ գրքեր պահվել են քարայրների մեջ: Ամեն մի գիրք առանձին փաթաթված է եղել սեկի մեջ, իսկ այդ սեկապատ ծրարները դրված են եղել այծի կաշուց պատրաստված տիկերի մեջ և տեղավորված կաղնի փայտից չինված սնտուկներում:

Հայերեն այդ գրքերի ճակատագրի մասին շատ հետաքրքրական փաստեր ենք գտնում Հալաջյանի մոտ: Հալաջյանը ուշագրավ զրույց է ունեցել ալևի Աղուջանների օջախի փիր Սեիդ Ջաֆերի հետ և նրանից ստացել արժեքավոր տեղեկություններ:

Սեիդ Ջաֆերը եղել է կարդացած մարդ. իմացել է հայերեն: Նա ասել է թե կարդում է և՛ հայերեն և՛ հայատառ քրդերեն. դա հասկանալի է, քանի որ քրդերեն կրոնական գրքեր, այդ թվում Աստվածաշունչը, տպագրվել էին հայերեն տառերով:

Երբ Հալաջյանը այս կրթված մարդուն հարցրել է, թե ճի՞շտ է որ նրա հովված քրդերի մեծ մասը նախկին հայեր են, նա պատասխանել է. «Ձեմ ուզում պատասխանել այդ հարցումիդ»:

«Զրույցի չարունակությունից զգացի, որ Սեիդ Ջաֆերը դողում է հուզմունքից, ուստի փոխելու համար խոսակցության նյութը, հարցրի.

– Գիտե՞ս փիրո, որ մի շարք տեղեր հայերեն գրքեր կան թաքցրած և ասում են, թե այդ գրքերը իրենց նախնիների գրքերն են, այսինքն՝ քրդերեն տառերով և քրդերեն լեզվով գրված մագաղաթներ, և թույլ չեն տալիս որ տեսնենք ու կարդանք:

Սեիդ Ջաֆերը պատասխանել է.

– Այո, տեղյակ եմ, և դրանք բոլորն էլ մեր գրքերն են, ինչո՞ւ եք հետաքրքրվում այդ գրքերով, կամ մագաղաթներով, ինչո՞ւ եք կասկած ներշնչում մեր ժողովրդին ձեր այդ պրպտումներով: Եթե չեմ սխալվում, Կաղնուտի քարայրներից մեկում տեսել ես մի գրապահեստ, սակայն թույլ չեն տվել, որ ձեռք տաս գրքերին, այլ գոհացնելու համար հետաքրքրությունդ, հակառակ ավանդական կարգա-

պահության, ցույց են տվել քարայրի տեղը և մուտքի դռները միայն: Դա մեծ սխալ էր, թե քո և թե նրանց կողմից, ովքեր համարձակվել են դրժել իրենց խոստումը: ... Մեր նախնիները շատ խելացի են եղել, երբ մտածել են կրոնի անունով կորստից փրկել գրքերն ու թղթերը, երդումով գաղտնի պահել դրանց գոյությունը, այլապես կարո՞ղ էին խոսք հասկացնել ռամիկին, որ չայրեր և չոչնչացներ դրանք: Աստուծո, Հազրեթի Խզրի, Հազրեթի Ալիի, Իման Հյուսեինի, Խտըր Էլիասի անուններով և նրանցից պատժվելու երկյուղով նախազգուշացրել ենք մեր ժողովրդին, ասելով թե այդ գրքերը մերն են, մեր նախնիներից ժառանգություն մնացած, ... մեր գրքերը, բացի օջախի փիրից, ռեյպերից, սեիտից, ոչ ոք իրավունք չունի պահելու իր մոտ, այլապես կայծակնահար կլինի այն մարդը, ով կրոնապետից թաքցնում է դրանք: Բացի կրոնապետների անդրանիկ որդիներից, ոչ ոք իրավունք չունի տեղեկանալու գրքերի գոյության մասին: Բացարձակապես արգելվում է մեր պապենական սովորությունների տեղը, թաքստոցը ցույց տալ օտարականներին, ի մասնավորի թուրքերին, նույնիսկ մեր բարեկամ հայերին: ... Փոքր չեղում, անտեղի մի հետաքրքրություն կարող է աղետաբեր լինել բոլորի համար: Ո՞ւմն են այդ գրքերը, ի՞նչ լեզվով են գրված, ես չգիտեմ, և լավ է, որ դուք էլ չգիտենաք, մինչև որ ժամանակը գա և հայտնությունը տեղի ունենա»[1]:

Գուցե այդ ձեռագրերը ավանդապահ այս քրդերի կողմից ավելի ապահով են պահպանվել, քան կարող էին պահպանվել միշտ էլ մուսուլմանական հարձակումներին ենթակա հայկական վանքերում: Գուցե: Քանի-քանի տասնյակ հազար մագաղաթներ հրո ճարակ են դարձել բարբարոսների կողմից կամ ոչնչացվել են այլ ձևերով:

Ու այսպես այդ ձեռագրերը հասել էին մինչև մեր օրերը, ընդհուպ մինչև 1920-ական թվականների սկզբները, թուրքական հանրապետության հռչակումը: Իսկ ա՞յժմ. այժմ էլ այդ փիրերը նույնքան հավատարիմ են իրենց հայ նախահայրերի ավանդներին ու երդումներին: Արդյոք այժմ էլ քարայրներում մնո՞ւմ են ձեռագրական հավաքածուներ: Դժվար է ասել: Գուցե նրանք էլ աստիճանաբար դարձան մոլեռանդ ու վաճառեցին այդ գանձերը: Ով գիտի:

Գ. Հալաջյանը ընդարձակորեն խոսում է Դերսիմի ցեղերից Միրազյանների մասին, որոնց ներկայացուցիչների թիվը հասնում է մի քանի հազարի, և որոնք սփռված են աշխարհով մեկ, ապրում են նաև Խորհրդային Հայաստանում: Պարզվում է, որ մի քանի հարյուր

---

[1] **Գ. Հալաջյան,** *նշվ. աշխ., էջ 250-252:*

տարվա անցյալը ձգվող այս տոհմի մի մասը ընդունել է ալևի դավանանքը, ունեցել են իրենց փիրերը, և այլևս չօգտագործելով հայկական Միրագյան տոհմանունը, կոչվել են Միրոներ: Նրանց քրդացած փիրերից մեկն ասել է, թե իրենց նախահայրերից մեկը կոչվել է Տեր Օհան և ապրելիս է եղել Տիրամոր վանքում: Ուրեմն սա էլ Տեր Սիմոնի ժամանակ քրդական դավանանքը ընդունած մարդկանցից մեկն է եղել:

Զխոսեցինք քրդացած այս հոծ բազմության կապի մասին՝ հայկական սովորությունների, ծիսակատարությունների հետ: Նրանք Վարդավառի տոնը տոնում են հայերի հետ, նույն կերպ, որը գալիս է անչուշտ ավելի վաղ շրջանից՝ հեթանոսական դարերից: Ինչպես Ջիմինում, այստեղ էլ քուրդ կանայք խմոր հունցելիս խաչակնքում են խմորը, այցելում, ուխտի գնում հայկական վանքերը: Իսկ այդպիսի վանքեր եղել են մոտակայքում: Անչուշտ, դրանց մեծ մասը հետագայում քանդվել է:

Գ. Հալաջյանը գրում է. «Շեն և Հագս գյուղերի միջև ընկած տարածությունում գտնվում էին հարյուր մեծ ու փոքր եկեղեցիների փլատակներ, որոնք հավանաբար մտել են հինավուրց Եկեղյաց գավառի մեջ, որը համընկնում է Երզնկայի շրջանին: Իրար վրա կուտակված սրբատաշ քարեր, այստեղ ու այնտեղ ընկած խոյակներ, ոչ մի տող գրավոր արձանագրություն, ոչ մի կտոր մագաղաթ, բացի ժողովրդի մեջ պահպանված հակասական ավանդություններից և առասպելներից: Մի կողմը կործանված Հագսն էր. մինչև Շեն երկարող տարածության վրա, որպես պատմական կոթողներ անցյալի հզորության, թողել էր եկեղեցիների ավերակները, մյուս կողմը՝ այն մանրանկար Հագսը, որը կործանված ավանի բնիկներն էին հիմնել Խութաց ձորի արևելյան ափին: ... Թեև ջնջվել էին այդ կոթողները կառուցողների հայկական անունները, բայց զգացվում էր նրանց ներկայությունը, տեսնվում, չոչափվում նրանց ձեռակերտը՝ վեմ քար, կործանված տաճար, գեղակերտ խաչքար, որոնք կան ու կմնան որպես անխորտակելի կենդանի վկաներ անցյալի պատմության»[1]:

Գ. Հալաջյանը մեջ է բերում հայերեն մի քանի արձանագրություն՝ վերցված չիրմաքարերից: Դրանցից հնագույնը վերաբերում է հայկական թվարկության 572 թվականին (1123), ամենանորը՝ 1319 թվականին: Անչուշտ դրանից հետո էլ գրված պիտի լինեն արձանագրություններ, որոնք ժամանակի ընթացքում անհայտացել են կամ չի տեսել Հալաջյանը:

---

[1] **Գ. Հալաջյան,** *նշվ. աշխ., էջ 262:*

Գ. Հալաջյանը նկարագրում է ամենայն հավանականությամբ հեթանոսական դարերից մնացած Արև աղբյուրը, որը գտնվում է անառիկ ու անմատչելի վայրերում: «Շենի արևելյան բարձրավանդակի ողորկված մի ապառաժի վրա երևում էր խորը փորագրված արևի մի մեծ սկավառակի ճաճանչավոր կերպարը մի քանի տարբեր նշաններով,- կարդում ենք այդ նկարագրությունում,- դրանք փորագրված էին գետնից ավելի քան ութսուն մետր բարձրության վրա... ժայռը միակտուր էր, բոլորաձև ծակերից վեր տարածությունը շատ ավելի, քան վարից վեր, ոչ կողքերից և ոչ էլ վերևից հնարավոր չէր մոտենալ արեգակնային կերպարին և կամ համահավասար մեծության կլոր ծակերին: Ժայռի ստորոտից դուրս ժայթքում էր սառնորակ մի աղբյուր, որին հայերը Արեգ-աղբյուր, իսկ քրդերը՝ Գանիե-Շեմս էին անվանում: Այս աղբյուրը սրբատեղի էր, մատաղներ էին մորթում թշնամու դեմ մարտերից հաղթական վերադառնալիս»[1]:

Եվ այսպես, ամեն քայլափոխում հնագույն դարերից մնացած հայկական հետքեր, որոնք հասել են մինչև մեր օրերը:

Հայ-քրդական հարաբերությունների, ավանդությունների մասին մենք դեռ առիթ պիտի ունենանք խոսելու այս գրքի հետագա գլուխներում:

18-րդ դարը բարիք չբերեց Երզնկայի հայերին, առհասարակ գավառի հայությանը: Միակ նկատելի իրողությունն այն էր, որ ենիչերիները, այլևս Թալանի ու գեխ կյանքի հնարավորություններ չգտնելով գավառական կենտրոններում, աստիճանաբար կենտրոնանում էին մայրաքաղաքում ու նրա մոտակա վայրերում, լուրջ մտահոգություն պատճառելով երկրի իշխանություններին, չնայած այդ իշխանություններն էլ արդեն գտնվում էին նրանց ազդեցության տակ: Հիմա արդեն պետական շատ պաշտոններ նշանակվում էին ուղղակի ենիչերի աղաների համաձայնությամբ, որոնց ազդեցության տակ էին նաև կրոնական բարձրաստիճան պետերը՝ Շեյխուլիսլամները: Ենիչերիները պարտադրում էին նրանց ֆեթվա արձակել այս կամ այն սուլթանի դեմ, եթե վերջինս հաճելի չէր իրենց: Իսկ դա նշանակում էր գահընկեց անել սուլթանին: Ամենուր տիրում էր կատարյալ անիշխանություն, թշվառություն:

Բայց լավ կլինի լսենք հենց թուրք պատմաբան Ջևդեթ փաշային.

«Որոշ ժամանակից ի վեր,- գրում է Ջևդեթը,- բռնությունների ու անիրավությունների ամեն սահմանը անցել էր Օսմանյան կայսրության մեջ: Ռայաները մեծ թշվառության էին մատնվել, իրենց

[1] **Գ. Հալաջյան,** *նշվ. աշխ., էջ 262:*

երկիրն ու հայրենիքը թողնելով՝ ցիր ու ցան եղել: Դրանով երկիրն ավերվել, ագռավների ու բուերի բնի էր վերածվել: Այդ պատճառով՝ օսմանյան կառավարությունը անկարող էր դարձել պատերազմներ մղել. զրկվել էր հաղթանակներից»[1]: Ապա նա ասում է թե կառավարական պաշտոնյաներն իրենց ծախքերը հոգալու համար աղքատների ձեռքից խլում էին նրանց վերջին ունեցվածքը, վաճառել տալիս անասունները, հովանավորում ավազակներին: Հասկանալի է, որ այս բոլորի առաջին զոհերը հայերն էին, որոնք տուն ու տեղ թողած փախչում էին: Միայն Մանազկերտի շրջանում 350 հայկական գյուղերից մնացել էր հարյուր գյուղ, այն էլ կիսաքանդ ու թշվառ:

8. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՆԳ ԴԱՐԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Երզնկայի այս հինգ հարյուր տարիների մշակույթը թե քանակով ու բնույթով և թե գիտական ու գեղարվեստական նշանակությամբ շատ է տարբեր նախընթաց երկու հարյուր տարիների, այսինքն՝ 12–13-րդ դարերի մշակույթից, որի մատենագրական հատվածը համահայկական չափանիշով նշանակալից երևույթ էր:

Թուրքական տիրապետության ժամանակաշրջանում Երզնկայի հայերի մտավոր զարգացումը ապրել է տևական վայրէջք, հասնելով նվազագույնի 19-րդ դարի առաջին քառորդում:

Այս նոր ժամանակաշրջանի առաջին հատկանիշը տեղական տոհմիկ գույնի թուլացումն է՝ «Երզնկայի դպրոց» հորջորջման արժանի որակների բացակայությամբ, նաև մատենագրության վրա թուրքերեն լեզվի նկատելի ազդեցությամբ:

Բնութագրական է նաև մշակութային արժեքների հանդես գալը երկու ճյուղավորումով՝ բուն Երզնկայում և նրա վանքերում և Երզնկայից դուրս՝ տարբեր երկրներում:

Այո, այդ հինգ դարերի ընթացքում էլ գրվել և նկարագրվել են ձեռագրեր, բայց բավական է աչքի անցկացնել դրանց հիշատակարանները, տեսնելու համար թե որքան տարբեր են եղել ձեռագրերը գրող մարդկանց հոգեվիճակը, տրամադրությունները 12–13-րդ դարերի գրիչներից:

Մինչդեռ թուրքական տիրապետությունից առաջ գրվածների հիշատակարաններում կա համարյա պետականության տեր մարդու

---

[1] *«Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հատ. Ա, էջ 277:*

հոգեկան բավականություն, գովք իշխանների ու հոգևոր պետերի, մաղթանքներ Կիլիկյան Հայաստանի թագավորների, այս նոր շրջանում գրվածները տոգորված են ողբով, լացուկոծով, հուսահատությամբ:

Հայ ժողովրդի ընդհանուր վիշտը, տառապանքը հանգիստ չեն տվել մեր գրիչներին, կարծեք մի աներևույթ ձեռք բռնել է նրանց եղեգնյա գրչի ծայրը և մղել դեպի օրվա վիճակի գրառումը, որպեսզի ապագայի մարդիկ տեսնեն թե ինչպիսի դառն օրերում են գրվել այդ ձեռագրերը:

Բայց միայն հիշատակարանները չէ, որ արտահայտել են ժողովրդի ճակատագրի հետ կապված տրամադրությունները, մեր միջնադարյան տաղերգուների ստեղծագործությունները նույնպես տոգորված են նույն ոգով:

Բերենք մի քանի տող Հովասափ Սեբաստացուց, որին հուզել է նաև Երզնկայի հայության ողբալի վիճակը: Նա 16-րդ դարի կեսերին գրել է.

Ի մէջ վչտաց ենք տագնապու,
Սարսեալ դողայ երկիր նորու.
Լսենք զաւերն Ըսպերու,
Խնուզ, Բասեն, յԱրզրումու:
Դերջան, Բաբերդ և զՄշու,
Բաղէշ, Կեղի, Երզնկանու.
Անպարտ արյուն բազում հեղու...
Վիշտն էր բազում Ցովասափու...[1]

Եթե Երզնկայի մտավոր վերելքի ու փառքի շրջանում, մասնավորապես 12–13-րդ դարերում մարդիկ թե՛ իրենց ստեղծագործությունները և թե՛ հիշատակարանները գրել են ընտիր գրաբարով, երբեմն տուրք տալով ժողովրդական խոսվածքին, ապա 14–18-րդ դարերում արտագրված գրքերում նկատելի է թուրքերեն լեզվի ազդեցությունը մանավանդ տաղերգուների, գուսանների ստեղծագործություններում:

16–17-րդ դարերի տաղերգուներից վերցնենք Ղուլ-օղլի Երզնկացուն, որը շատ ավելի գրել է թուրքերեն տաղեր, քան հայերեն: Նրա թուրքերեն տաղերից նմուշներ («Ամեփ նետիր դերդին», «Յարևելից

---

[1] **Հովասափ Սեբաստացի,** *Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ՝ Վ. Պ. Գևորգյանի, Երևան, 1964, էջ 85-86:*

բերիյազ» և այլն) պահվում են Մաշտոցյան Մատենադարանի № 7709 ձեռագրում:

Կենսագրական տեղեկություններ չունենք այս մարդու մասին, անվանը կցված Երզնկացի մակդիրը կասկած չի թողնում, որ ծնվել է կա՛մ Երզնկա քաղաքում, կա՛մ նրա գյուղերից մեկն ու մեկում: Բայց այն փաստը, որ գրել է թուրքերեն տաղեր, պետք է ենթադրել տա, որ սիրված աչուղ է եղել նաև Երզնկայից դուրս, հայ և թուրք բնակչության մոտ:

Այդ դարերում հոգևոր կյանքը համարյա թե դադարել էր Երզընկայում: Հայ բնակչության գրեթե կեսը, եթե ոչ ավելին, գաղթել էր տարբեր երկրներ՝ Ղրիմից մինչև Եգիպտոս, Վրաստանից մինչև Հունգարիա, Բուլղարիա, էլ չենք խոսում Թուրքիայի մայրաքաղաք Կ. Պոլսի, Իզմիր նավահանգստի և այլ քաղաքների մասին:

Ճիշտ է՝ նրանց մեծ մասը զբաղվել է ֆիզիկական աշխատանքով, առևտրով, արհեստներով, սակայն եղել են երզնկացիներ, որոնք երկրում լինելով մտքի մշակներ, նոր բնակավայրերում աշխատել են կապվել վանքերի ու եկեղեցիների հետ, շարունակել գրչագրական գործը կամ հենց նոր բնակավայրերում հմուտ ուսուցիչների ձեռքի տակ մղվել են դեպի մատենագրությունը, մշակույթը:

Հանդիպում ենք երզնկացի բազմաթիվ գրիչների, որոնք գործել են Եկեղյաց գավառից դուրս: Բարեբախտաբար այդ մարդիկ, ուր էլ որ գնացել են, ինչ պայմանների տակ էլ որ ապրել են, ծննդավայր Երզնկայի կարոտը պահել են իրենց սրտում, հիշատակել են իրենց Երզնկացի լինելը:

Բերենք Երզնկայից դուրս գրված նման հիշատակարաններից մի քանի նմուշ: 1330 թ. գրված մի Ավետարանի հիշատակարանում կարդում ենք.

«Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս հայկազեան տումարիս ՉՀԹ (1330)ի հայրապետութեան տեառն Յակոբայ, և ի թագավորութեան Հայոց Լևոնի, և վրաց Գէորգայ և ի դանութեան Պաւսայիտի յանապատիս Ջղաւնա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և աստուածակիր սուրբ նշանաց: Ձեռամբ ամենամեղ և անարժան ծառայի Աստուծոյ Կիրակոսի՝ Պիտականուն վարդապետի Եզնկայեցւոյ Նժդեհի»[1]:

1655 թ. մի երզնկացու գտնում ենք Հալեպում, անունը՝ Սահակ: Անչուշտ ծնողների հետ Երզնկայից գաղթած պիտի լինի 1601–1605

[1] **Ս. Տեր-Ավետիսյան,** Յուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հատ. Ա, Վիեննա, 1970, էջ 179:

թվականներին, այսինքն՝ ջալալիների սարսափի օրերին: Թե նրանց ընտանիքը ուղղակի որտեղ է գաղթել, հայտնի չէ, գիտենք, որ ինքը Հալեպում գործել է որպես տիրացու, իր համար կազմել և նորոգել է տվել մի Շարակնոց, ինչ որ երևում է հետևյալ հիշատակարանից. «Նորոգեցաւ Շարակնոցս ի մայրաքաղաքն Հալապ, ի թուին հայոց ՌՃԴ (1655) ամին, ի վայելումն Եղնկացի տիրացու Սահակին, յիշատակ իւր և ծնօղաց իւրոց և ամենայն արեան մերձաւորացն, Աստուած ողորմի ասացէք. ամէն»[1]:

Մի ուրիշին՝ գրիչ Միքայել Երզնկացուն գտնում ենք Տրապիզոնում, 1650-ական թվականների կեսերին: Նա այնտեղ գրել է մի Տոնացույց, մի Խազտետր և մի Պարզատումար, ինչպես նաև երգեր:

Ահա նրա մի ընդարձակ հիշատակարանը, որ պարունակում է ուշագրավ տվյալներ.

> «Մինչ ի գալուստ Քրիստոսի, որք ընթեռնուք սիրով սրտի,
> Ցիշման առնէք ըզմեզ արժանի, զՄիքայել երէցս Եզընկացի
> Մարմնով՝ ցաւօք մեղօք ի լի, որ ես յիշման չեմ արժանի:

Որ ետ կարողութիւն նուաստ և տառապեալ անձին իմոյ Միքայել երէց գրչի Եղնկացոյ հասանեալ ի յաւարտ Տօնացոյցս և Խազտետրիս և Պարզատումարիս և այլ քաղցրաբարբառ երգոցս. ի լաւ և յընտիր օրինակէ ի թուականութեան հայոց հազար և ՃՀ և Ը (ՌՃԸ–1659) ամին, ի հայրապետութեան հայոց Տեառն Յակոբ սրբազան կաթողիկոսի և թագաւորութեան տաճկաց սուլթան Մահմատին և առաջնորդութեան քաղաքին Յովհաննէս վարդապետի և դիտապէտի: Արդ գրեցաւ գիրս ձեռամբ Միքայել անարժան երիցու ի թագաւորանիստ քաղաքս Պոնտոս որ Տրապէս յորջորջի»[2]:

Եկեղյաց գավառից դուրս գործող մատենագիրներից խոսելու ենք Մարտիրոս Երզնկացու և Գրիգոր Դարանաղցու մասին: Վերջինս Երզնկայում չի ծնվել, սակայն նրա գործունեությունը սերտ կերպով կապված է Երզնկայի վանքերի հետ, իսկ գրած «Ժամանակագրութիւնը» ամենահավաստի աղբյուրն է ջալալիների արշավանքների օրերի Երզնկայի տնտեսական, քաղաքական և հոգևոր կյանքի, նաև երզնկացիների զանգվածային արտագաղթի մասին:

---

[1] **Ն. Ակինյան, Հ. Ոսկյան,** *Յուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի Մատենադարանին, հատ. Ա, Վիեննա, 1971, էջ 95:*

[2] *Նույն տեղում, էջ 91:*

Նախ խոսենք Մարտիրոս Երզնկացու աշխատության մասին: Նրա փոքրածավալ երկը կոչվում է «Այս է պատմութիւն Ֆրանկաց երկրին, զոր տեսեալ է Եզընկացի Մարտիրոս եպիսկոպոսն»[1]: Ինքնաձեռագիր օրինակը պահվում է Փարիզի Ազգային գրադարանում, որից արտագրված օրինակներ կան Վենետիկի Մխիթարյանների մոտ, Երևանի Մատենադարանում և այլուր:

Մարտիրոս Երզնկացու ճանապարհորդական տպավորություններն ուշագրավ են մի քանի տեսակետից: Նախ՝ նյութի բնույթով: Երզնկայի վանքերում գրվել են հարյուրավոր մատենագրական երկեր՝ գեղարվեստական, պատմագրական, փիլիսոփայական, ճշգրիտ գիտությունների վերաբերող, թարգմանական և այլն, սակայն դրանց մեջ չկան աշխարհագրական, ուղեգրական տպավորություններ եվրոպական երկրների մասին, մինչդեռ խնդրո առարկա երկասիրությունը ականատեսի իրազեկությամբ և ընկալումներով խոսում է եվրոպական տասնյակ քաղաքների, բնակավայրերի մասին, որոնք 15-րդ դարում աչքի են ընկել որպես մշակույթով հարուստ և առևտրաշահ քաղաքներ: Ճիշտ է, նրա նկարագրելու ոճը շատ է լակոնիկ, անցողիկ, սակայն զարմանալիորեն փաստալից է, պարունակում է այնպիսի տվյալներ, որոնք կարող են հետաքրքրել նաև օտար ուսումնասիրողներին:

Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Մարտիրոս եպիսկոպոսը ոչ թե հետագայում է միտք հղացել գրի առնելու իր ճանապարհորդական տպավորությունները, այլ յուրաքանչյուր քաղաք այցելելիս տեղնուտեղը կատարել է նշումներ: Հնարավոր է, որ մի քանի փաստեր, թվեր վերցրած լինի տպագիր աղբյուրներից, սակայն այն հանգամանքը, որ ամեն մի քաղաք այցելելիս՝ առաջին հերթին հետաքրքրվել է տեղի տեսարժան վայրերով, և տպավորությունները գրի առնելիս ամենևին կարևորություն չի տվել երկրորդական դեպքերի, ցույց է տալիս Մարտիրոսի հասկացողության չափը՝ արվեստի գործերի նկատմամբ: Ճիշտ է, նա տեղեկություններ է տալիս նաև քաղաքների բնակչության, տների թվի, մարդկանց զբաղմունքների և այլ հարցերի մասին, սակայն միշտ ուշադրության կենտրոնում պահում է տվյալ քաղաքի առավել հիշարժան կառույցները, արվեստի կոթողները: Եվ որովհետև դրանք մեծ մասամբ գտնվել են եկեղեցիների, վանքերի շրջափակում, հանգամանորեն ծանոթացնում է:

---

[1] **Վ. Հակոբյան,** *Մարտիրոս Երզնկացու ճանապարհորդական նոթերը, տե՛ս «Տեղեկագիր», ԳԱ հասարակական գիտ., 1957, № 6, էջ 103-110:*

Նրա նկարագրություններից երևում է, որ ինքը սովորական զբոսաշրջիկ չի եղել, որ նայել է, դիտել ու անցել, այլ հետաքրքրվել է, հարցեր տվել, մանրամասնություններ իմացել, գուցե և տեղում գրի առել: Այսպես, նկարագրելով գերմանական Քյոլն քաղաքը, նրա ս. Աստվածածին եկեղեցին, ասում է թե իրեն զարմանք են պատճառել Տիրամոր արձանի թանկարժեք զարդերը: Հարցրել է, իմացել, որ այդ զարդերն արժեն 215.000 ֆլորին: Նույն եկեղեցու հսկա զանգը հնչեցնելու վրա աշխատել են 28 հոգի:

Մարտիրոսը 1492 թ. դեկտեմբերին հասել է Փարիզ, այցելել շատ եկեղեցիներ, բայց ամենից ավելի տպավորվել է Փարիզի Աստվածամոր հոչակավոր տաճարով, նրա նկարազարդումներով, որոնց հատկացրել է բավականաչափ տեղ:

Մարտիրոսը իր ուղեգրական երկը գրել է ժամանակի ժողովրդական հասկանալի լեզվով, հեռու գրաբարի խրթնաբանություններից, տեղ-տեղ ուղղակի աշխարհաբար:

Որպեսզի գաղափար տանք նրա լեզվի մասին, տեսնենք թե ինչպես է նկարագրում Վենետիկ այցելելը. «Թվ. ՉԼԹ (1491) յուլիսի ԺԱ ի յՍտամպօլու ելաք, մտաք ի նաւ մի ֆրանգի. և հոկտ. Ա ելաք ի Վենեժ քաղաքն, որ է Վենետիք. մեծ և փառաւոր քաղաք. և ինքն է ի մէջ ծովու չինած. ՀՌԴ (74.000) տուն է. և խիստ փառաւոր և հարուստ քաղաք է. և մեծ եկեղեցի կայ ի մէջ քաղաքին, որ ԺՌ (10.000) մարդ կու մտնէ ի մէջն. խիստ զարդարած է ոսկով: Ս. Մարկոս յաւետարանչին եկեղեցին է. և երկու երգեհոն կայ ի մէջն. և երկու թեւաւոր առիւծ է չինած ի մէջն, և այլ շատ եկեղեցիք կայ ի քաղաքն, շատ վանօրայք կայ ի բոլոր քաղաքին. ամէն՝ մէջ ծով է չինած: Եւ մեծ մաւիտան (մէյտան, հրապարակ) մի կայ առաջև եկեղեցին Ս. Մարկոսի. ի դրանն շատ ի վեր չորս դեղին պղնձէ ձի մի չինած և կանգնեցուցած մեծ մեծ, և զմէկ ոտքին ի վեր են կալեալ: Եւ ի հարաւային կողմ ծովու դեհն՝ հանց ծախողներն է (փոքր հրապարակին մէջ), և երկու մեծ սիւնէ կանգնեցուցած. մէկին վրայ թեւաւոր առիւծ մի, մէկալին Ս. Գէորգ է կանգնել: Եւ թագաւորին դարպասին պարիսպն ամէնն յոսկով զարդարած: Եւ այլ ազգի ազգի շատ բաներ. ո՞վ կարէ պատմել զքաղաքին զաղէկութիւն»[1]:

Մարտիրոս Երզնկացին միակն է Երզնկայի մատենագիրների մեջ, որ չնորհիվ այդ երկարատև ճանապարհորդության, տարբեր երկրների կյանքին, կենցաղին, գրականությանն ու արվեստին ծանոթանալուն, ձեռք է բերել լայն գիտելիքներ: Պետք է որ իմացած լիներ

[1] **Ղ. Ալիշան,** *Հայ-Վենետ, էջ 195-196:*

առնվազն իտալերեն, ֆրանսերեն և իսպաներեն, կարդար այդ լեզուներով գրված գրքեր, մտերմական կապերի մեջ լիներ ականավոր մտածողների հետ, գեթ հոգևորականների շրջանում: Նրա կյանքի վերջին տարիների մասին ոչինչ չգիտենք: Չգիտենք նաև թե ե՞րբ է վախճանվել: Ըստ երևույթին վերստին գործել է Երզնկայի ս. Կիրակոսի վանքում:

Այժմ՝ Գրիգոր Դարանաղցու մասին:

Ծնվել է Երզնկային շատ մոտ գտնվող Կամախ քաղաքում՝ 1576 թվականին, դրա համար էլ կոչվել է Կամախեցի: Փոքր հասակից զրկվել է ծնողներից, դարձել Սեպուհ լեռան լանջերին գտնվող մի վանքի հովիվը: Այնտեղ էլ նա աշակերտել է նույն լեռան քարայրներում ճգնող Պարոնին, որը նրան մղել է դեպի գիր ու գրականությունը, խորհուրդ տվել հովվական մահակը փոխարինել գրիչով: Դարանաղցին նրա մասին խոսում է բացառիկ հարգանքով ու հիացմունքով:

Մինչև 1597 թ. վանքում մնալուց հետո մեկնել է Բաբերդ, աշակերտել Սրապիոն Ուռհայեցուն: Ջալալիների արշավանքից հետո, 1600 թ. բազմահազար հայերի հետ հեռացել է ծննդավայրից, տեղափոխվել Արևելյան Հայաստան՝ երեք տարի մնացել Սաղմոսավանքում: Նորից մեկնել է Բաբերդ, ձեռնադրվել վարդապետ:

Ջալալիների նոր արշավանքի ժամանակ փախել է Տրապիզոն, այնտեղից՝ Ղրիմ, ապա՝ Կ. Պոլիս, Կիպրոս, Երուսաղեմ, Եգիպտոս և այլն: Երկար տարիներ որպես առաջնորդ պաշտոնավարել է Ռոդոստոյում, որտեղ ապրելիս են եղել հիմնականում Երզնկայից այնտեղ գաղթած հայեր: Ռոդոստոյում պաշտոնավարելիս գրել է մի «Ժամանակագրութիւն»[1]:

Աշխատությունը բաժանված է երկու մասի: Առաջին մասում տրվում է 1018–1592 թթ. Թուրք-թաթարական արշավանքների ժամանակագրությունը, ապա առավել ընդարձակ նկարագրվում են հետագա տարիների իրադարձությունները: Երկրորդ մասում հեղինակը նկարագրում է 16–17-րդ դարերի Էջմիածնի և Սսի կաթողիկոսությունների պատմությունը, հարակից դեպքերի զուգորդությամբ: Դարանաղցին իր այս աշխատությունում լայն տեղ է հատկացրել հայ ժողովրդի առօրյա կյանքին, կենցաղին, քաղաքական դեպքերին:

Մեր գրեթե բոլոր մատենագիրները, սկսած Մովսես Խորենացուց մինչև 18-րդ դարը, այս կամ այն առիթով անդրադարձել են Երզնկային կամ Եկեղյաց գավառին, բայց նրանցից ոչ մեկն այնքան շատ փաստեր չի հաղորդել այդ գավառի ու քաղաքի մասին, որքան հա-

---

[1] *Տե՛ս «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», հրատարակեց Մեսրոպ վարդապետ Նշանյան, Երուսաղեմ, 1915:*

ղորդել է Դարանաղցին: Նա իր գրքի տասնյակ էջերում խոսել է Երզնկայում պատահած հիշարժան դեպքերի մասին, հաղորդել այնպիսի փաստեր, որոնց հանդիպում ենք միայն նրա մոտ:

Դարանաղցու մոտ է, որ, օրինակ, գտնում ենք Ռոդոստոյի հայ համայնքի կազմավորման մանրամասն պատմությունը, մի համայնք, որի կորիզը կազմել են Երզնկայից և Կամախից այնտեղ գաղթած հայերը: Թե «Ժամանակագրութիւնը» ինչպիսի անփոխարինելի աղբյուր է համարվել այդ իրադարձության համար, երևում է հետևյալ փաստից: Դարանաղցու գիրքը մինչև 19-րդ դարի սկիզբը Ռոդոստոյում սրբությամբ պահպանվելուց հետո, հանկարծ անհայտացել է, ռոդոստոցիներին պատճառելով մեծ ցավ, որն իր արտահայտությունը գտել է անգամ մամուլում: «Բյուզանդիոն» օրաթերթում տպագրված մի հոդվածում, օրինակ, խոսելով Ռոդոստոյի գաղութի կազմավորման մասին, ասվում է թե այդ իրադրության վերաբերյալ «չնաչխարհիկ աղբյուր մը պիտի ըլլար ձեռագիր երկասիրությունը Կամախեցի Գրիգոր վարդապետի, ուր ամփոփ կգտնվեր այդ գաղութին պատմությունը, որ այժմ կորսված է անհետ, ապարդյուն թողլով զայն վերագտնելու ամեն ճիգ, հորդոր ու ջանք»[1]:

Բարեբախտաբար Դարանաղցու ձեռքով գրված օրինակը հայտնաբերվել է Երուսաղեմի հայոց վանքի մատենադարանում:

Դարանաղցու գիրքը ուշագրավ փաստեր է պարունակում նաև Կ. Պոլսի պատրիարքարանի հետ կապված հարցերի մասին, ճշտում եկեղեցիների կառուցման հետ կապված շատ դեպքեր:

9. ՄԱՐՏԻՐՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ

Խոսեցինք թուրքական տիրապետության հինգ հարյուր տարիների ողբերգական դրվագների մասին միայն, բերեցինք անթիվ փաստեր հայերի հետ պատահած տառապանքներից, առանց հիշատակելու թեկուզ մի դեպք, երբ Երզնկայի հայերը կազմակերպված դիմադրություն ցույց տված լինեին:

Մենք իր տեղում տեսանք, որ Կիլիկիայի Հայկական թագավորության վերջին հարյուրամյակում Երզնկայի հայերի աչքը հառած է եղել դեպի Կիլիկիան: Արդ՝ Կիլիկյան իշխանության անկումից հետո, այսինքն՝ 15-րդ և հաջորդ դարերում, եղե՞լ են մեր ժողովրդի ճակատագրի հետ կապված ծրագրեր, որոնց մասնակցել են երզնկացիները, կամ հենց Երզնկայի հոգևոր իշխանությունները կազմե՞լ են

[1] **Գրիգոր Դարանաղցի,** *էջ ԿԴ–ԿԵ:*

նման ծրագրեր: Փորձենք քննության առնել այդ հարցը հենց նեղ՝ գեթ ծրագրերի սահմանում:

Ուզում ենք նման մի ծրագրի հետ կապել Մարտիրոս Երզնկացու գործունեությունն ու արդեն մեզ հայտնի նրա ճանապարհորդությունը Եվրոպա: Մարտիրոսը ծնվել է Երզնկայի Նորգեղ գյուղում, հավանաբար 15-րդ դարի կեսերին: Կրթությունն ստացել է ս. Կիրակոսի վանքում: Քանի որ եղել է եպիսկոպոս, ուստի հավանական է, որ եղել է նույն վանքի վանահայրը: Ենթադրելի է, որ ծավալել է կրթական գործունեություն:

Ըստ Հր. Աճառյանի, նա՝ լսելով որ Քրիստափոր Կոլումբոսը գտել է Ամերիկան, «ինքն էլ ուզեց նոր աշխարհներ գտնել»[1]:

1489 թ. հոկտեմբերի 29-ին դուրս է եկել Երզնկայից, ոտքով կտրել անցել է բավական ճանապարհ, հասել Կ. Պոլիս, որը դրանից ընդամենը քառորդ դար առաջ գրավվել էր սուլթան Մուհամմեդ II Ֆաթիհի կողմից, դարձել Օսմանյան կայսրության մայրաքաղաքը:

Այնտեղ միառժամանակ մնալուց հետո Մարտիրոս եպիսկոպոսը նավով մեկնել է Իտալիա, 1490 թ. հոկտեմբերի 1-ին հասել է Վենետիկ: Մեկ ամիս ապրել է այնտեղ, ապա անցել Հռոմ: Երեք անգամ տեսակցել է կաթոլիկական եկեղեցու հովվապետ պապի հետ: Այնտեղից մեկնել է Գերմանիա, ճանապարհորդել Հռենոսի հոսանքն ի վար, եղել Բազելում, Ֆրանկֆուրտում, Քյոլնում, Աախենում, ապա անցել Ֆլանդրիա, այնտեղից՝ Ֆրանսիա, հասել Փարիզ: Այնուհետև շարունակել է ճանապարհը դեպի Պիրենեյան լեռնաշղթան՝ դուրս եկել Իսպանիայի սահմանը:

Այս ճանապարհորդությունը տևել է մի քանի տարի: Սան Սեբաստիանում սպառվել է նրա փողը: Տեղական բնակիչները նյութական միջոցներ են հավաքել, ճանապարհ գցել Ատլանտյան օվկիանոսի ափերով:

1493 թ. հասել է Պիրենեյ:

Մինչև այստեղ առասպել չկա, կա միայն մի հարց՝ թե մի հասարակ հայ հոգևորական ինչպես է կարողացել անցնել այնպիսի երկար տարածություն, որն անգամ այժմյան տեխնիկայի ու փոխադրական միջոցների առատության պայմաններում պիտի պահանջեր մեծ գումարներ:

Այնուհետև ասվում է թե նա 70 օր էլ ճանապարհորդել է «համատարած անծայրածիր ծովում», թե իբր ենթարկվել է փոթորկի, ետ վերադարձել Իսպանիա:

---

[1] **Հ. Աճառյան,** *Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, էջ 285:*

Արդ ի՞նչ նպատակով է ճանապարհորդել մեր երգնկացի հոգևորականը, ո՞ւր էր գնալու: Ունեցե՞լ է որևէ ծրագիր, թե իրեն հանձնել է բախտի քմահաճույքին ու քամու հոսանքին:

Եվ որովհետև նրա նավարկության տարին ու օրը համընկնում է Կոլումբոսի երկրորդ ուղևորության տարվան և օրվան, այստեղից ուսումնասիրողները եկել են այն եզրակացության, թե նա ճանապարհորդել է երկիր գտնելու հույսով, թե հասել է մինչև Կուբայի ափերը, ետ վերադարձել:

Այս միտքը առաջինը հայտնել է ֆրանսիացի հայագետ Ա. Սեն-Մարտենը, որին կրկնել են Հր. Աճառյանը և ուրիշներ, թեև եղել են վերապահ մարդիկ, գտել, որ նրան տանող նավը ոչ թե 70, այլ 100 օրում կարող էր հասնել Կուբայի ափերը և վերադառնալ:

Երկիր գտնելու նպատակով ճանապարհորդելու վարկածի օգտին խոսող փաստ է համարվել նաև այն, որ Մարտիրոսին տանող նավի նավապետը ասել է, թե իր նավը առևտրական նավ չէ, թե ողջ անձնակազմը նավի ծառայողներն են: Կնչանակի՝ իսկապես արշավախմբային նավ է եղել:

Կա մի այլ փաստարկ: Հայտնի է, որ Կոլումբոսը երկրորդ ճանապարհորդության ընթացքում իր նավերից մեկը ետ է ուղարկել, նամակներ և նվերներ տանելու Իսպանիայի թագավոր Ֆերդինանդ II-ին և Իզաբել թագուհուն: Նավապետ Անտոնիո դե Թորեսը Կոլումբոսի հանձնարարությունը կատարել է նույնությամբ, արքայական ամոլին հանդիպելով Սևիլիայում:

Եվ ահա... ո՞վ զարմանք, մեր Մարտիրոսը նույնպես իր երկար ճանապարհորդությունից հետո հայտնվում է Սևիլիայում, նույնպես ընդունվում Իզաբել թագուհու կողմից:

Ի՞նչ գործ ուներ Սևիլիայում, մանավանդ ի՞նչ գործ ուներ թագուհու հետ: Որ նա Անտոնիո նավապետի հետ է եղել Սևիլիայում և նրա ուղեկցությամբ էլ ներկայացել է թագուհուն, կասկածից վեր է: Ուրեմն՝ իսկապես ճանապարհորդել է «համատարած անծայրածիր ծովում»: 70 օր է մնացել ծովում թե 100 օր՝ էական չէ: Հնարավոր է, որ նավը ոչ թե Կուբայից է ետ դարձել, այլ ավելի մոտ մի վայրից:

Մինչև այստեղ, ուրեմն, ամեն ինչ կարգին է և մենք էլ որևէ հարց չունենք Մարտիրոսին տալու: Ի վերջո նա կարող էր խնդրել նավապետին, որ իրեն էլ վերցնի հետը՝ թագուհուն ներկայանալիս: Մեր կասկածը վերաբերում է նրա ճանապարհորդության նպատակին: Իսկապե՞ս նրան զբաղեցրել է նոր երկիր գտնելու միտքը: Մեզնից

առաջ ուրիշներ էլ կարծել են, որ նա կարող էր դեպի անծայրածիր ծովերը տանող նավը նստել՝ պարզապես մտածելով թե դա գնում է Հնդկաստան և ինքը Հնդկաստանի ճանապարհով կարող է հասնել Երզնկա:

Նախքան մեր ենթադրություններին անցնելը՝ չարադրենք մի շարք հարցեր, որոնք չեն զբաղեցրել բանասերներին:

1. Մինչև Կ. Պոլիս ոտով գնացող եպիսկոպոսը, որ ակներևաբար փող չի ունեցել, ի՞նչպես Կ. Պոլսում փող ձեռք բերեց և նավարկեց դեպի Վենետիկ: Ո՞վ ձեռք մեկնեց նրան: Անկե՞ղծ ձեռք էր դա, թե ուներ հետին նպատակ:

2. Ի՞նչն է ստիպել Երզնկացի ճանապարհորդին՝ Վենետիկում իջևանել ոչ թե հայերի կենտրոնը հանդիսացող հյուրանոց-տանը կամ եկեղեցում, այլ՝ ըստ երևույթին ավելի ճոխ մի հյուրանոցում, մանավանդ որ Ալիշանն էլ ենթադրել է թե նա հայոց տունը չի իջևանել՝ այն «ավելի պանդխտոց և աղքատաց համար ըլլալով»[1]:

Բայց մի՞թե իսկական պանդուխտ չէր Մարտիրոսը:

3. Առեղծվածային մյուս հարցը Մարտիրոսի հանդիպումն է Հռոմի պապին, այն էլ երեք անգամ: Կարծեք պետական երկու ղեկավարների հանդիպում լիներ, որ մի օրում չի վերջացել, շարունակվել է երկրորդ և երրորդ անգամ: Ի՞նչ գործ ուներ լուսավորչական մի եպիսկոպոս կաթոլիկների հովվապետի հետ, այն էլ այնքան երկար զրուցելու համար: Բ. Մկրտչյանը հայտնել է այն կարծիքը, թե «Հռոմի պապը մեծ ուշադրությամբ պետք է ունկնդրեր մի մարդու պատմություններին, որ ծայրե ծայր կտրել անցել էր օսմանցիների երկիրը», թե նրա համար հետաքրքրական էր զրուցել եպիսկոպոսի հետ նաև Հայաստանի մասին, որի ժողովուրդն այնքան ձեռներեց է և որը առաջինը քրիստոնեությունը ընդունեց իբրև պետական կրոն»[2]:

Սրանք միամիտ փաստարկներ են: Նախ Մարտիրոսն ամբողջ օսմանյան կայսրությունը չէր կտրել անցել. նա Երզնկայից եկել էր Կ. Պոլիս՝ ընդամենը անցնելով մի քանի հարյուր կիլոմետր ճանապարհ: Միաժամանակ պապին ամենևին չէր կարող զբաղեցնել ո՛չ հայ ժողովրդի պատմական անցյալը, ո՛չ էլ այն թե հայերը առաջինը քրիստոնեությունը ընդունել են պետական կրոն: Այդ բոլորի մասին պապը ավելի չատ բան գիտեր՝ Արևելքում գործող իր հարյուրավոր քարոզիչների միջոցով, քան հենց Մարտիրոս եպիսկոպոսը: Նման

---

[1] **Ղ. Ալիշան,** *Հայ-Վենետ, էջ 197:*

[2] **Բ. Մկրտչյան,** *Մարտիրոս Երզնկացու ոդիսականը, տե՛ս «Գիտություն և տեխնիկա», ամսագիր, Երևան, 1969, № 11, էջ 23-30:*

բաների համար պապը Մարտիրոսին ունկնդրություն չէր տա, այն էլ երեք անգամ հանդիպելու համաձայնությամբ, եթե չլինեին չատ ավելի լուրջ, Հռոմի շահերի հետ կապված կրոնաքաղաքական հարցեր:

4. Զարմանալի չէ՞ նաև այն փաստը, որ իբրև պատվավոր հյուր Հռոմ մտած Մարտիրոսը այնտեղից դուրս է եկել բավականաչափ խեղճացած, փողի կարոտ, գրեթե անտեսված:

5. Եվ վերջապես՝ զարմանալի չէ՞ այն, որ այդքան անտեսված մի մարդ հիմա էլ փորձ աներ ճանապարհորդել՝ նոր ցամաքամասեր գտնելու ծրագրով: Կոլումբոսի թիկունքում կանգնած էր իսպանական կառավարությունը, իսկ ապրուստի համար օտարներ փող էին հավաքել:

Թողնենք որ այդ մութ դարում, քաղաքական թոհուբոհով լի տարիներին դժվար թե Մարտիրոսը Երզնկայի մի խուլ վանքում լսած լիներ Կոլումբոսի գյուտի մասին և ինքն էլ որոշեր հետևել նրան:

Ուրեմն՝ կտրականապես մերժելով Ա. Սեն-Մարտենի, Հր. Աճառյանի և այլոց տեսակետները, թե աշխարհ գտնելու կամ ճանապարհորդելու համար է երկրից դուրս եկել Մարտիրոս Երզնկացին, որոնենք ավելի հիմնավոր պատճառներ՝ հայ հոգևորականի Հռոմ այցելելը բացատրելու համար, նկատի ունենալով ժամանակի հասարակական-քաղաքական պայմանների թելադրանք ծրագրերը:

Մեր կարծիքով, Մարտիրոսը քաղաքական առաքելությամբ է Երզնկայից մեկնել Կ. Պոլիս, բայց միմյանց հաջորդող դեպքերը այլ ընթացք են տվել նրա ծրագրին և միանգամայն այլ վախճանի հասցրել:

Մարտիրոսը Երզնկայից մեկնել է 1489 թ.: Այդ այն տասնամյակներն էին, երբ սուլթան Մուհամմեդ II Ֆաթիհը նոր էր գրավել Կ. Պոլիսը: Սուլթանը այնտեղ հաստատել էր հայոց պատրիարքությունը և ամեն կերպ քաջալերում էր ձեռներեց հայերի, մասնավորապես արհեստավորների արտագաղթը գավառից դեպի մայրաքաղաք, տալով նրանց արտոնություններ, իսկ պատրիարքին՝ նկատելի լիազորություններ:

Նորաստեղծ պատրիարքարանը սկսել էր կապեր հաստատել գավառի հայերի հետ, որոնք հանձին նրա ուզում էին տեսնել վերջապես իրենց վիճակով զբաղվող մի ուժ:

Շատեր էին ձգտում հանդիպել պատրիարքի հետ, խոսել իրենց ցավերի մասին, նրա միջնորդությամբ դիմումներ կատարել սուլթանին:

Հնարավոր է, որ այսպիսի մի ծրագրով է Մարտիրոսը մեկնել Կ. Պոլիս: Բայց ինչո՞ւ Մարտիրոսը և ոչ մի ուրիշը:

Մարտիրոսն այդ ճանապարհորդությունից 25 տարի առաջ արդեն եպիսկոպոս էր Երզնկայում, «սպասաւոր ս. Լուսավորչի ս. գերեզմանին», մասնակցում էր հասարակական-քաղաքական գործերին որպես վանքերից մեկի առաջնորդ: Երբ Ջահանչահի զորքերը գերի էին վերցրել Դերջանցի Ամիրխների երկու աղջիկներին, ի թիվս այլ առաջնորդների, Մարտիրոս եպիսկոպոսն էլ վկայական է տվել Ամիրխներին, որպեսզի վերջինս փող հավաքի, փրկագին վճարի և ազատի աղջիկներին: Կնշանակի դեռևս այդ տարիներին Մարտիրոս Երզնկացին հեղինակություն է եղել Եկեղյաց գավառում:

Բայց Կ. Պոլսում, ամենայն հավանականությամբ, նա ընկել է Հռոմի պապի գործակալների ծուղակը, գործակալներ, որոնք տենդագին աշխատանք էին կատարում Օսմանյան կայսրության մայրաքաղաքում և ծովեզերյա այլ քաղաքներում, օգտվելով այն բանից, որ Կ. Պոլսի գրավումից, հույների զանգվածային հեռացումից հետո թուլացել էր հունական եկեղեցու ազդեցությունն այնտեղ: Կաթոլիկների համար պարարտ հող էր հայ իրականությունը: Հռոմը հայերին ոչ միայն չէր մոտենում որպես առաջին քրիստոնյա պետության ներկայացուցիչների, այլ՝ որպես հերձվածողների, որոնց պետք էր ուղիղ ճանապարհի բերել, այսինքն՝ ենթարկել Հռոմին:

Հռոմն իր ազդեցությունը Արևելքում տարածելու համար օգտագործում էր թե՛ նյութական չահագրգռվածությունը, և թե՛ քաղաքական ազատության խոստումները: Հայտնի է, որ քաղաքական նման ազատության խոստումներ նրանք տալիս էին հայերին Կիլիկյան թագավորության օրերից մինչև Նապոլեոն III-ի ժամանակները, միշտ պայման դնելով կաթոլիկական դավանանքի ընդունումը:

Նման ծրագրերի կենսագործմանը Հռոմը մասնակից էր դարձրել տասնյակ հայ հոգևորական պետերի թե Մարտիրոսից առաջ, թե նրանից հետո:

Ի՞նչ խոստումներ են տվել կաթոլիկ քարոզիչները երզնկացի եպիսկոպոսին, ի՞նչ խոստումներ է տվել անձամբ պապը՝ չգիտենք: Բայց որ Մարտիրոսի և Հռոմի պապի գրույցների առանցքը նման լուրջ հարցեր են եղել, կասկածից վեր է:

Դրա օգտին են խոսում այն փաստերը, որ մինչև Կ. Պոլիս հետիոտն գնացող եպիսկոպոսն այնտեղ միանգամից կերպարանափոխվել է և «Աստուծո ողորմածությամբ» նավով Վենետիկ է ճանապարհորդել, այն էլ հետը մի ուղեկից՝ Վրթանես սարկավագը:

Կասկածից վեր է, որ Վրթանեսը լատիներեն խմացող, Իտալիայի ծանոթ անձնավորություն է եղել, որի պաշտոնն էր օգնել Մարտիրոսին՝ Վենետիկում և Հռոմում, նրա ունենալիք հանդիպումների ժամանակ:

Բայց ո՞վ էր հոգում Մարտիրոսի և Վրթանեսի ծախսերը: Հետո ինչո՞ւ էր հայ հոգևորականը Իտալիա գնում, եթե Կ. Պոլսում արդեն ընկած չլիներ կաթոլիկական շրջանակի մեջ:

Ուշագրավ է, որ Հռոմի պապի մոտ լինելուց հետո Գերմանիայում, Հոլանդիայում, Ֆրանսիայում արդեն Վրթանեսին չենք տեսնում Մարտիրոսի հետ: Ըստ երևույթին նրա պարտականությունն ավարտված է եղել:

Բոլոր փաստերը կան ենթադրելու, թե Մարտիրոսի և Հռոմի պապի բանակցություններն անցել են ապարդյուն և հայ եպիսկոպոսը թողնվել է բախտի քմահաճույքին: Դրանից հետո է, որ սկսվել է նրա բուն թափառական կյանքը: Փոխանակ իսկույն հայրենիք վերադառնալու, եղել է եվրոպական մի չարք քաղաքներում, հասել մինչև Իսպանիա: Ինչո՞ւ Երզնկա չվերադարձավ այն ճանապարհով, որով եկել էր: Պատճառը պարզ է: Ո՛չ փող ուներ, ո՛չ օգնական: Պետք էր ընտրել ավելի կարճ ու քիչ ծախս պահանջող ճանապարհ: Լավագույնը համարվել է նավարկելը... Դեպի ո՞ւր. Ամերիկա՞: Ո՛չ, դեպի Հնդկաստան. որքան էլ որ տարօրինակ թվա, քանի որ 50–60 օրում անցնելով, հենց Կոլումբոսի կարծիքն այն է եղել, թե իրենք անծայրածիր այդ տարածությունը նավարկելով հասնելու են Հընդկաստան: Իսկ այստեղից Մարտիրոսը կարող էր անցնել Պարսկաստան, ապա՝ Երզնկա, մինչդեռ նա մինչև Իսպանիա էր հասել չորս տարում:

Այս ենթադրությունը մերը չէ, բայց համարում ենք հավանական: Սակայն բախտը չի ժպտացել Մարտիրոսին: Նրան տանող նավը կրկին վերադարձել է Իսպանիա: Եվ... այս անգամ էլ նրան տեսնում ենք Իզաբել թագուհու մոտ..., մի բան, որ առեղծվածներով լեցուն մի կյանքի վերջին առեղծվածն էր: Ի՞նչ գործ ուներ նա իսպանական արքունիքում, եթե արդեն Հռոմի պապից օգուտ չէր տեսել: Գուցե հենց այնպես՝ իր հետ մտերմացած նավապետը հաջողեցրել է, որ արևելքցի եպիսկոպոսը տեսնի թագուհուն: Անհավանական չէ: Բայց հնարավոր է ենթադրել նաև, որ Մարտիրոսն այս անգամ էլ իրեն հուզող հարցերը ցանկացել է ներկայացնել իսպանական գահին:

Վավերական փաստ է, որ Սևիլիայից ուղղակի վերադարձել է Իտալիա, որտեղ արդեն ո՛չ Հռոմի պապին է ներկայացել, ո՛չ էլ այլ

նշանավոր մարդկանց, թեև եղել է Հռոմում: Անկոնիա նավահանգստից չվել է դեպի Կ. Պոլիս, ապա՝ Երզնկա...

Այսպիսով, 1489–1496 թվականներին այս չատ զարմանալի, ուշագրավ անձնավորությունը ուղևորություն է կատարել Արևմտյան Եվրոպայի երկրներում, անցնելով չուրջ 13.000 կմ ճանապարհ:

10. ԵՐԶՆԿԱՆ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԶՈՀ

Բնական աղետներ ընդհանուր հորջորջման տակ խոսելու ենք բացառապես երկրաշարժերի մասին, որոնց տեսականորեն զոհ են դարձել Երզնկան և շրջակա գյուղերը՝ ավելի, քան որևէ այլ քաղաք՝ պատմական Հայաստանի ամբողջ տարածքում, արդյունք նրա աշխարհագրական դիրքի, ցնցումների առիթ տվող երկրաբանական տատանումների:

Զկա մի պատմիչ, որ անդրադարձած չլինի Երզնկայի երկրաշարժերին, չփորձի դրանք բացատրել աստվածային բարկությամբ կամ զայրույթով:

Մեր մատենագիրները թողել են ահասարսուռ նկարագրություններ՝ տարբեր դարերում կատարված երկրաշարժերի մասին: Այդ երկրաշարժերը կարծեք եղել են ոչ թե երկրի մակերեսի սովորական ցնցումներ, տատանումներ, այլ բարձրաբերձ սարերի խելացնոր բախումներ միմյանց, որոնց ընթացքում իրար են բախվել սլացիկ լեռները, հողով ու քարերով լեցվել են անդնդախոր ձորերը, սարալանջերին նոր ձորեր են առաջացել, անհայտացել են ջրի ակեր, գետերը փոխել են իրենց հունը, երևացել են նոր գետակներ: Քանիցս փոխել է իր սահանքի գիծը մայր Եփրատը, իր տեղն է փոխել հենց Երզնկա քաղաքը... Քանի-քանի գյուղեր ամբողջովին անցել են գետնի տակ, չթողնելով որևէ հիշատակություն իրենց մասին:

Հենց այն փաստը, որ Երզնկայի գավառում ավանդություններ են պահպանվել, թե մարդիկ հողի տակից դարեր հետո էլ իբր թե լսել են կործանված բնակավայրերի մարդկանց ձայնը, անգամ իբր բաղնիքներում լոգանք ընդունողների պղնձյա թասերի ձայնը, ցույց է տալիս, թե ինչպես որոշ բնակավայրեր անցել են երկրի կեղևի չատ խորքը և մակերեսում չեն պահել որևէ հետք: Թվացել է, թե ինչպես մի օր Արտավազդը կարող է դուրս գալ անդունդից, այնպես էլ մարդիկ պիտի երևան գան իրենց նախկին բնակավայրերում: Գուցե դուրս գան՝ եթե ապագայում պեղումներ կատարվեն Երզնկայի լայնարձակ տարածքում: Այժմ ծանոթանանք այն երկրաշարժերին, որոնց վերաբերյալ տվյալներ են հասել մեզ:

Պատմության կողմից արձանագրված առաջին երկրաշարժը Երզընկայում տեղի է ունեցել 1012 թվականին, ամենավերջինը՝ 1939 թվականին: Անկասկած 1012 թվականից առաջ էլ երկրաշարժեր տեղի ունեցել են, որոնք չեն արձանագրվել պատմիչների կողմից: Անշուշտ, վերջին հազարամյակի ընթացքում էլ պիտի լինեին երկրաշարժեր, որոնց մասին նույնպես չի գրվել:

Իսկ արձանագրված երկրաշարժերի պատճառած մարդկային զոհերի թիվը հաշվել են 150.000:

Ս. Էփրիկյանի «Բնաշխարհիկ բառարանը» մոտ 900 տարիների ընթացքում Երզնկայում պատահած երկրաշարժերի թիվը հասցնում է քսանի: Մենք այդ թիվը երեսունի հասցնելու հնարավորություն ունենք, որը ինչ խոսք, դարձյալ պիտի համարել թերի[1]:

1. Մեր մատենագիրների կողմից արձանագրված առաջին երկրաշարժը տեղի է ունեցել 1012 թվականին:

Այժմ հերթականությամբ, ըստ տարիների, հիշատակենք մյուս երկրաշարժերը, ապա կանգ առնենք դրանցից առավել հայտնիների վրա:

2. Մի երկրաշարժ էլ տեղի է ունեցել 1039 թ.: Դրա մասին գրել է պատմիչ Միքայել Ասորին հետևյալ տողերով. «Ընկղմեցաւ Եղնկայ քաղաքն Հայոց՝ և մնաց միայն տուն մի հաւատացեալ և ողորմած առն, որում անունն էր Կիրակոս և հոգետուն մի»[2]:

Աբուլ Ֆարաջն էլ, ակնարկելով այս նույն երկրաշարժին, գրել է. «Երզնկա քաղաքը ողողեցավ և միայն Կիրակոսի որդվոց վանքը, որ ցեղով սյուրիացիներ են, փրկվեցավ, թեև ջրի լիճով մը բոլորովին շրջապատված էր»[3]:

Պատմաբան Հ. Քյուրտյանը ենթադրում է թե խոսքը վերաբերում է ոչ թե ոմն Կիրակոսի, ինչպես Միքայել Ասորու խոսքերից կարելի է ենթադրել, այլ՝ ս. Կիրակոս վանքին:

Երկու վկայություններից էլ պարզվում է, որ Երզնկայի այդ երկրաշարժը առիթ է տվել մեծ հեղեղումների, այնպիսի ընդարձակ տարածությամբ, որ լճի մեջ են մնացել շատ բնակավայրեր, իսկ հիշյալ վանքը կղզու տեսք է ստացել համատարած հեղեղի մեջ:

3. Մի ահռելի երկրաշարժ տեղի է ունեցել 1045 թվականին, որի մասին ընդարձակ տեղեկություններ են հասել մեզ և խոսելու ենք առանձին:

---

[1] *Ավելի մանրամասն տե՛ս* **Վ. Ա. Ստեփանյան,** *Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում և նրա մերձակայքում, Երևան, 1964:*

[2] **Միքայել Ասորի,** *Ժամանակագրութիւն, էջ 394:*

[3] **Հ. Քյուրտյան,** *Երիզա, էջ 81:*

4. Ըստ «Բնաչխարհիկ բառարանի»՝ 1066 թվականին նույնպես Երզնկան ցնցվել է: Նաև երկու տարի անց՝ 1068 թվականին: Առաջինի համար որպես աղբյուր նշվում է Մաղաքիա դպիրը, իսկ երկրորդի համար՝ Վարդան պատմիչը: Մեզ թվում է խոսքը նույն երկրաշարժի մասին է, որ տեղի է ունեցել 1068 թվականին:

5. Երզնկայի երկրաշարժերից հաջորդը՝ որ հիշատակվում է մեր մատենագրության մեջ՝ առանց մանրամասնությունների, պատահել է 1151 թվականին: Նյութական և մարդկային մեծ զոհեր չի խլել:

6. Ըստ Գրիգոր Դարանաղցու՝ «ի թուականին ՈԺԵ (1166) ահագին շարժ եղև յԵրզնկան»[1]:

7. 1236 թվականի երկրաշարժը ավելի զորեղ է եղել: Քանդվել է մի եկեղեցի:

8. «Տասը տարի վերջը 1246 թվականին, դարձեալ շարժ եղավ և փլավ ս. Գրիգոր եկեղեցին»[2]:

Այս երկու երկրաշարժերի ժամանակ եթե քանդվել են եկեղեցիներ, կասկածից վեր է, որ տասնյակ գյուղեր վնաս կրած պիտի լինեին, որոնք չեն արձանագրվել որևէ տեղ:

9. 1254 թվականի երկրաշարժի մասին ունենք մեկից ավելի վկայություններ, թեև բոլորն էլ ժլատ տողերով: Ասվում է թե այդ տարում, մի կիրակի օր, հանկարծ ցնցվել է Երզնկան. քանդվել են նաև չրջակա տասնյակ գյուղեր: Ըստ Գրիգոր Դարանաղցու 16.000 մարդ զոհ է գնացել[3]:

Սա շատ մեծ թիվ է. հնարավոր է, որ կա որոշ չափազանցություն, բայց քանի որ հեռավոր գյուղեր հիմնահատակ կործանվել են. այդ դեպքում զոհերի թիվը կարող է անգամ ավելի լինել: Պետք է նկատի ունենալ, որ այդ դարերում Եկեղյաց գավառը զուտ հայաբնակ էր և հոգևորական իշխանությունները կատարում էին հաշվառումներ:

Դարանաղցին փաստը արձանագրել է դեպքից չորս հարյուր տարի հետո, անշուշտ օգտագործելով գրավոր որևէ աղբյուր: Ավելի հավաստի պիտի համարել Վիլյամ Ռաբրուկի վկայությունը, մի մարդ, որն այդ վայրերով անցել է 1255 թվականին, այսինքն՝ երկրաշարժից մեկ տարի անց: Նա ասում է, թե մեկ տարի առաջ այդ վայրերում այնպիսի ուժեղ երկրաշարժ էր եղել, որ «Երզնկա կոչված քաղաքում տասը հազար անունով հայտնի մարդիկ կորած էին, ի բացառյալ աղ-

---

[1] **Գրիգոր Դարանաղցի,** *էջ 4:*

[2] **Ս. Էփրիկյան,** *Պատկերազարդ բնաչխարհիկ բառարան, հատ. Ա, Վենետիկ, 1903-1905, էջ 657:*

[3] **Գրիգոր Դարանաղցի,** *էջ 5:*

քատներից, որոնց մասին արձանագրություն չկար: Երեք օրվա ճամփորդության ընթացքում տեսանք գետնի մի պատռվածք, որ առաջ էր եկել սասանումից»[1]:

10. Մի ահռելի երկրաշարժ ցնցել է Երզնկան 1268 թվականին և ըստ Առաքել Դավրիժեցու «ԺԵՌ (15.000) մարդիկ մեռան»[2]:

11. 1281 թ. երկրաշարժի ժամանակ «Աստված պահել է» երզնկացիներին, մարդկային զոհեր չեն եղել:

12. 1287 թ. երկրաշարժը այնքան ուժգին է եղել, այնքան շատ կյանքեր է խլել, որ զոհերի բուն թիվը, ասում է արձանագրողը, հայտնի կարող է լինել միայն Աստծուն:

13. 1345 թ.՝ «Շարժ եղև Եղնկայն. շատ օր երերաց զերթ զնաւն ի մէջ ծովուն: Աստուած պահեաց՝ ոչ փլաւ»:

14. 1356 թ. Երզնկայում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ, կրկնվել է մի քանի օր, այն էլ օրական 7–8 անգամ:

15. 1374 թ. դեկտեմբերի 9-ին տեղի է ունեցել երկրաշարժ: Երզնկա քաղաքում ու շրջակա գյուղերում քանդվել են բազմաթիվ տներ: Շարժը կրկնվել է այնքան ուժգնությամբ, որ քաղաքի պարիսպները քանդվել են:

16. 1433 թ. արձանագրվել է մի մեծ երկրաշարժ, որը կրկնվել է յոթ անգամ, տարբեր ուժգնությամբ: Մի գրիչ ասում է, թե մարդկանց թվացել է աշխարհի վերջն է եկել:

17. 1258 թ. պատահած երկրաշարժը քիչ թվով մարդկային զոհեր է խլել: «Փլավ Երզնկան պարիսպն ի շարժէն»[3], գրում է Դարանաղցին: Եթե քաղաքի պարիսպը քանդվել է, բնականաբար հարյուրավոր խարխուլ տներ վնասված պիտի լինեին:

18. 1462 թ. երկրաշարժը համարվել է ուժեղագույններից: Քանդվել է Երզնկայի մեծ մասը, բազմաթիվ գյուղեր՝ հիմնահատակ: 1471 թվականին Երզնկայով անցնող Ջոզեֆա Բարբարոն քաղաքը գտել է ավերակ: Հաջորդ տարի գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Եւ արդ գրեցաւ սա ի դառն և ի նեղ ժամանակիս, զի վասն ծովացեալ մեղաց մերոյ Երզնկա քաղաք տապալեցաւ և ԺԸՌ (18.000) հոգի ի ներքև հողոյ մնաց և այլ ոչ մնաց մի կենդանի և տաճկունք փակեցին զՍքանչելագործն: Բայց յայս ուրախ ամք զի կրակ անկաւ և երեց զԲուրայն ԺԲ մընեռա ի հետ և վեց հազար հոգի»:

---

[1] **Հովհ. Հակոբյան,** *Ուղեգրություններ, հատ. Ա, էջ 24:*

[2] **Առաքել Դավրիժեցի,** *էջ 624:*

[3] **Գրիգոր Դարանաղցի,** *էջ 5:*

Ուրեմն՝ կարծեք բնական աղետը քիչ է եղել, Թուրքերն էլ քանդել են ս. Սքանչելագործ վանքը: Հիշատակարանում գրողը գոհունակություն է հայտնում, որ Թուրքերն էլ են ունեցել վնասներ՝ հրդեհը ոչնչացրել է նրանց մեջիդը և մի քանի մինարեթներ... 1462 թ. երկրաշարժի ժամանակ զոհվել են «ԼՌ (30.000) մարդ»[1]՝ Երզնկայից և շրջակա գյուղերից:

19. 1482 թվականին պատահած երկրաշարժը Երզնկայի պատմության մեջ աննախադեպ աղետ է եղել, որին անդրադառնալու ենք առանձին:

20. Մի մեծ երկրաշարժ տեղի է ունեցել 1576 թվականին: Պատահել է նոյեմբերի հինգին, գիշերով: Դավրիժեցին ասում է, թե այս երկրաշարժի վնասներն այնքան ծանր են եղել, որ երզնկացիները չորս ամիս չեն կարողացել պառկել իրենց տներում: Ավերվել են տասնյակ գյուղեր[2]:

21. Բավականաչափ ուժեղ մի երկրաշարժ պատահել է 1583 թվականին: Գրիգոր Դարանաղցին այդ ժամանակ եղել է Ծնանառիճի վանքում, յոթ տարեկան: Արդեն ականատեսի իրազեկությամբ նա գրում է, թե պատահել է Լուսավորչի պահոց երկուշաբթի օրը[3]:

22. Մի երկրաշարժ էլ հիշվում է հաջորդ տարի՝ 1584 թ., սակայն Դարանաղցին նրա մասին բերում է այնպիսի տվյալներ, որոնք հար և նման են նախորդ տարվա երկրաշարժին: Միայն տալիս է մի քանի մանրամասնություն, թե քսան գյուղ կործանվել է, 5000 հոգի մեռել են:

Սրանից հետո մոտ 80 տարի այլևս Երզնկայում ուժեղ երկրաշարժեր չեն եղել, համենայնդեպս ոչինչ չենք գտնում մատենագիրների մոտ:

23. Բայց ահա 1667 թ. նոյեմբերի 14-ին, չորեքշաբթի, ժամը 9-ին հանկարծ քաղաքը ցնցվել է և քանդվել են բազմաթիվ շենքեր: «Յառաջ ի խորոց անդնդոց գոռալոյ ձայն եկն, ապա յանկարծակի ի թարթել ական շարժ եղև, բազում շինուածք տուն և մաչիթներ և եկեղեցիք և բաղանիքներ և փութկաներ, և քաղաքի պարիսպն և այլ շինուածք փլան, և բազում մարդիկ սպանին, զորոց որքանութիւնն Աստուած միայն գիտե»[4]:

---

[1] **Վ. Ա. Հակոբյան,** *Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հատ. II, էջ 355:*

[2] **Առաքել Դավրիժեցի,** *էջ 631:*

[3] **Գրիգոր Դարանաղցի,** *էջ 8:*

[4] **Առաքել Դավրիժեցի,** *էջ 665:*

24. Մի հիշատակարան այս նույն երկրաշարժը վերագրում է հաջորդ տարվա, այսինքն՝ 1668 թվականին, գրելով. «Տեառն հրամանաց երկիրս սարսեաց... Շամախ և ի Շիրուան բազում մարդք մեռան, այսքան թիւ արկան համարով ութսուն հազարեան: Այլ և Եզընկան, տունք տապալեցան, մզկիթներ ու խան և ժամերն յոյժ քայքայեցան: ... Այս բանք գործեցան թուին հազարեան, հարիւր և տասեան և յօթից յարարդեցան»[1]:

25. 1784 թ. հուլիսի 30-ին տեղի է ունեցել մի այլ ավելի ահռելի երկրաշարժ, որի ուժգնության մասին գրել են անհավատալի բաներ, առանց կոնկրետ փաստերի: Ասվում է, օրինակ, թե այդ երկրաշարժի ժամանակ հիմնահատակ կործանվել է Երզնկա քաղաքը և դարձել է իր բնակիչների հավերժական գերեզմանը: Ասվում է նաև թե նույն բախտին են արժանացել մոտակա գյուղերից երեքը: Ղ. Ինճիճյանն էլ երկրաշարժի մասին գրել է. «Երկրաշարժութիւն սաստիկ յոյժ և զօրաւոր որով մեծ մասն քաղաքին հանդերձ բնակչօք խորասոյզ եղեալ. ի 8000 տանց անտի հազիւ մնացին 5 կամ 600 տունք: Այլև երեք մերձակայ գիւրօրէք առհասարակ հանդերձ բնակչօք իւրեանց անհետ եղեն»[2]:

Ինճիճյանի վկայության մեջ ուշագրավ են նրա բերած թվերը: Ուրեմն Երզնկան 18-րդ դարի վերջերին ունեցել է 8000 տուն բնակչություն, որից անվնաս է մնացել վեց հարյուր տունը: Դժբախտաբար Ինճիճյանը չի գրում բնակչության ազգային պատկանելության մասին: Սակայն այդ դարում հայերի թիվը այնքան էր քչացել, որ հազիվ թե կեսը կազմեր:

Մի քիչ ավելի հանգամանորեն խոսենք Երզնկայում պատահած երկրաշարժերից երկուսի մասին, որոնց վերաբերյալ բավականաչափ վկայություններ են հասել մեզ:

Դրանցից առաջինը 1045 թվականի ահռելի երկրաշարժն է, որի մասին գրել են մեկից ավելի մատենագիրներ: Ծանոթանանք Մատթեոս Ուռհայեցու վկայություններին: Նա ասում է, թե այդ թվականին եղել է «մեծասաստ բարկութիւնը Աստուծոյ» ահռելի երկրաշարժով, այնքան ուժգին, այնքան ցնցող, որ «դողացաւ ամենայն տիեզերք առհասարակ... շարժեցաւ ամենայն արարածք և բազում եկեղեցիք խախտեալ փլաւ ի հիմանց ի յեկեղեաց գաւառին, և քաղաքն, որ յԵրզնկան կոչի՝ փլաւ առհասարակ»: Ապա նկարագրում

---

[1] **Հ. Ոսկյան,** *Յուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, հատ. Բ, Վիեննա, 1963, էջ 164:*

[2] **Ղ. Ինճիճյան,** *Նոր Հայաստան, էջ 98-99:*

է աղետի պատկերը հետևյալ փաստերը հաղորդելով. ասում է թե պատառոտել է երկիրը, տղամարդիկ ու կանայք ընկղմել են անդունդի մեջ և թե դեպքից հետո բազմաթիվ օրեր անդնդի խորքերից դեռ լսվում էր այդ դժբախտ մարդկանց աղաղակի ձայնը[1]:

Երկրաշարժը տեղի է ունեցել ամառ ժամանակ. մի քանի օր շարունակ կրկնվել են ցնցումները: Տարերային աղետի պատճառած փոչուց, ասում է Ուռհայեցին, ցերեկով խավար ու մութ տեսք է ընդունել Երզնկա քաղաքը, կանգ է առել կյանքը, արևն ու լուսինը արյան գույն են ստացել, միայն հորիզոնի վրա բարձրանալիս երևացել են իրենց պայծառ տեսքով:

Մի այլ պատմիչ նույն երկրաշարժի մասին խոսելով՝ ասում է, թե առհասարակ Երզնկա քաղաքը ընկղմվել է գետնի տակ և թե օրեր շարունակ քաղաքը ճոճվել է ու ցնցվել, խլելով նորանոր զոհեր ու քանդելով կանգուն մնացած շենքերը: 1045 թ. երկրաշարժի մասին ընդարձակորեն խոսում է նաև Առաքել Դավրիժեցին: Նա նույնպես ասում է, թե արևն ու լուսինը արյան գույն են ստացել, թե «փոխեցաւ գոյն լուսաւորաց ի կարմրութիւն, մառախուղն պատեալ էր զերեսս երկրի»[2]:

Մի բան ակնբախ է՝ 1045 թ. երկրաշարժից Երզնկան կործանվել է Ամենայն հավանականությամբ հետագայում կառուցվել է նորը՝ մերձակա վայրում:

Դժբախտաբար այս մեծ աղետի պատճառած զոհերի մասին չի գրվել: Ի վերջո՝ ո՞վ կարող էր հաշվել զոհերի թիվը մի աղետի, որից երկրի երեսից ջնջվել են քաղաքներ ու բազմաթիվ գյուղեր և որը մարդիկ համեմատել են Սոդոմ Գոմորի կործանման հետ:

Այսպիսի մի մեծ երկրաշարժ էլ տեղի է ունեցել 1482 թ., որը խլել է 30.000 մարդու կյանք: Դարձյալ ասվում է, թե Երզնկան կործանվել է, քար ու քանդ եղել, 20 գյուղեր իրենց բնակիչներով ու անասուններով մնացել են հողի տակ: Այդ մասին Գրիգոր Դարանաղցին գրում է. «Շարժ եղաւ յԵրզնկան և երեսուն հազար հոգի ի ներքև հողին մնացին»[3]:

Այս երկրաշարժի մասին մեզ հասել է Մըսկին Երեց Անուշպակցու մի ողբը, որ ավելորդ չենք համարում մեջ բերել ամբողջությամբ:

---

[1] **Մատթեոս Ուռհայեցի**, *էջ 65:*
[2] **Առաքել Դավրիժեցի**, *էջ 622:*
[3] **Գրիգոր Դարանաղցի**, *էջ 5:*

Տաղ մայրաքաղաքին Եզընկու, որ չարժ ելաւ և կործանեցաւ

Ցինն հարիւր Հայոց Թըւական,
Երեսուն և մէկ Թիւն ի լրման (1482),
Զարմանալի բան մի եղաւ,
Մայրաքաղաքն ի յԵզընկան։
Ցանկարծակի մահու դիպան,
Պատուհասի հանդիպեցան,
Սողոմացոց նման եղան,
Ներքև հողին զընտանեցան։
Ցորժամ քաղաքն ի Թունտ ելաւ,
Եւ մանր ու մեծ ի դող ելաւ,
Թէ վայլէ մեզ հազար բերան,
Մեք չը կեցանք ի պատուիրան...
Տէրըն յառաջ արար զայս բան,
ՄԻԹԷ ըզմեղքըն մոռանան,
Եւս առաւել պոռնըկեցան,
Պոռնկութեամբ նոքա կորեան։
Ցիշոցքն արար ըզ զԵզընկան,
Որ յԱստուծոյ աչացն ելան,
Քահանայիւքըն միաբան,
Ներքև հողին զընտանեցան։
Կին մի կանչեց, Թէ սուրբ Նըչան
Ըմ դու պահէ զիմ մէկ տըղան,
Աստուած լըսեց նորա ձայնին,
Որ փըրկեցան մայրն ու տըղան։
Եւ տասն ու հինգ օրն ի լրման,
Ապա գըտան զայն մէկ տըղան,
Լալով կերԹար դէպ ի չուկան,
Թ' իմ հայրն ու մայրն ինչպէս եղան...
Զայն զեղեցիկ սարկաւագ երն,
Որ չէ տեսեր աչքք մարդկան
ԲեԹլէէմի մանկանց նման,
Ներքև զետին զընտանեցան։
Զայն զեղեցիկ աղջըկունքն և կին,
Վայրի եղունքն էին նման,
Գարնանաբեր ծաղկանց նման,
Ներքև հողին Թարշամեցան։

Ո՞վ է տեսեր այնպէս խեղճ բան,
Որ ճանաչէց հայրն ըզտըղան,
Նոր պըսակած հարսն ու փեսան,
Ի մէկ մէկէ բաժանեցան։
Հազար աւաղ ըզԵզընկան,
Մէջ աշխարհիս է Հայաստան,
Վարպետաց է բնակարան,
Վաճառականաց էր օթևան։
Հազար աւաղ զան ճոխ մանկտիքն,
Որ միաբան կոտորեցան,
Ամէնն մընաց հողաբերան,
Ներքև հողին զընտանեցան։
Աստուծոյ խնամքն վերացան,
Տես թ ինչ արար ըզ զԵզընկան,
Որ ոչ ի ծերըն խընայեց,
Ի՛ ոչ ի մանուկն ւ՛ ոչ երեխան։
Քահանայիցըն չը խըղճաց,
Ոչ ժողովուրդն էր միաբան,
Զեկեղեցիքն կործանեց,
Եղուկ է մեզ հազար բերան։
Բոլոր քաղաքն աւերեցաւ,
Ի յանդընդոց երկիր չարժաւ,
Երկու տարպայ հինգ հազարաւ,
Ներքև հողոյն զընտանեցաւ։
Մըսկին երէց Անուշպակցի,
Մեղօք ի լի և անարժան,
Այդ հերիք է զինչ գործեցիր,
Դարձից և լեր դու փօշիման։
Ես աղաչեմ զձեզ միաբան,
Որ չը կըտրէք զՏէր մեղան,
Մեղքըն քակեց ըզ զԵզընկան,
Այս աշխարհիս է մեծ նըշան[1]*։*

---

[1] **Տ. Պալյան,** *Հայ աշուղներ, հատ. 1, Կ. Պոլիս, 1911, էջ 108–110։*

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԵՐԶՆԿԱՆ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵՐԶՆԿԱՆ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ

1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Թուրքերը քաղաքական հորիզոնում երևալու առաջին տարիներից ի վեր իրենց դրսևորել էին որպես ռազմատենչ, մարտունակ ժողովուրդ:

13-րդ դարի կեսերից սկսած նրանք արագորեն նվաճեցին համարյա բոլոր այն երկրները, որոնք իրենցից առաջ գրավել էին արաբները:

Արաբական հզոր Աբասյան խալիֆայության ավերակների վրա այժմ տակավ առ տակավ երևում էր օսմանցի թուրքը:

Թուրքերը 14-րդ դարում խուժեցին Եվրոպա, 15-րդ դարում՝ նախկին Բյուզանդական կայսրության տարածքում, հաստատեցին հզոր պետություն՝ իրենց անցած ճանապարհին ոչնչացնելով նախընթաց հազարամյակում քրիստոնյաների ստեղծած մշակույթի նկատելի մասը:

Թուրքերի աշխարհակալական նվաճումները, որ սկիզբ էին առել սուլթան Մուրադ I-ի օրով, 14-րդ դարի կեսերից, երբ այդ սուլթանը գրավեց Ադրիանապոլիսը, Սալոնիկը, Շումլեն և այլ քաղաքներ, սրընթաց արագությամբ շարունակվեցին հաջորդ սուլթաններ Բայազիդ I-ի, Մեհմեդ I Չելեբիի, Մուրադ II-ի օրոք, և իրենց գագաթնակետին հասան Մուհամմեդ II Ֆաթիհի ժամանակ, որն իր գահակալությունից ընդամենը երկու տարի անց՝ 1453 թ., գրավեց Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը՝ անակընկալի առաջ կանգնեցնելով քրիստոնյա աշխարհին:

Հետագա սուլթանները, շարունակեցին իրենց ասպատակությունները: Նրանք ընդարձակեցին Ֆաթիհի գրված տարածությունները՝

ընդգրկելով Բալկանյան ամբողջ թերակղզին, Արևմտյան Ասիայից հասնելով մինչև Եգիպտոս: Նրանք մտան Ավստրիա, մի քանի անգամ պաշարեցին Վիեննան:

Բավական է վերցնել Թուրքիայի պատմության որևէ դասագիրք և թերթել այդ մի քանի դարերին վերաբերող էջերը՝ բոլորն էլ զարդարված պոռոտ նկարներով՝ հաղթական յաթաղանը ձեռքներին, սպիտակ ձիերի վրա նստած սրընթաց արշավող սուլթաններ, զինվորներ, գրավված երկրները հրի ու ծխի մեջ կորած ներկայացնող համայնապատկերներ, բերդերի, ամրոցների վրա ծածանվող թուրքական դրոշներ՝ զարդարված մահիկով ու աստղով:

Այս բոլորն իրական էին: Բայց նույն այդ Վիեննայի տակ, 1683 թ. թուրքական բանակի կրած խոշոր պարտությունից հետո բախտը երես թեքեց թուրքերից, Օսմանյան կայսրության աստղը սկսեց աղոտանալ, մահիկը սեղմվեց, փոքրացրեց իր կլափի մեջ վերցրած տարածությունը: Կանգ առավ առաջխաղացման թափը, որ սուլթաններին թվացել էր նախախնամության տնօրինությունը:

Իսկ 18-րդ դարում թուրքական բանակների անպարտելիության առասպելը տեղի տվեց, երբ դեմ առ դեմ կանգնեցին Ռուսաստանի հետ:

Սկսվեց պարտությունների մի շարան, որի առաջին ամփոփումը եղավ 1699 թ. Կարլովիցի պայմանագիրը: Թուրքերը Ավստրիային զիջեցին Հունգարիան, Ռուսաստանին՝ Ազովյան երկրամասը, իսկ Վենետիկի դքսությանը՝ Պելեպոնեսը:

1774 թ. Քյուչուկ-Կայնարջիի հաշտությամբ Թուրքիան հարկադրված եղավ Ռուսաստանին զիջել Սև ծովի հյուսիսային ափամերձ որոշ տարածքներ, ներառյալ Ղրիմը:

Հիմա Թուրքիան հարձակողական վիճակից անցել էր պաշտպանողականի. պաշտպանություն մի կողմից արտաքին թշնամի պետություններից, մյուս կողմից՝ իր տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների ներքին ապստամբություններից, ժողովուրդներ, որոնք ժամանակը հասած էին համարում թոթափելու իրենց վզից թուրքական բռնապետության դարավոր լուծը:

Խնդիրը բարդ կերպարանք էր ստանում նրանով, որ վերջիններիս պաշտպանությամբը հանդես էին գալիս երկու հզոր պետություններ՝ Ռուսաստանն ու Ավստրիան:

1804 թ. սկսվում է սերբերի ապստամբությունը, 1821 թ.՝ հույների: 1829 թ. Ադրիանապոլսի հաշտությամբ Հունաստանը ստանում է ինքնավարություն, իսկ Սերբիան՝ կիսանկախ վիճակ:

Դարասկզբին ռուսական արծիվն արդեն սավառնում էր դեպի հարավ, իր թևերի տակ առնում Կովկասի մի մասը, գրավում Վրաստանը, իսկ 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմով Արևելյան Հայաստանի զգալի մասն ազատագրվում է պարսկական դաժան տիրակալությունից, և մտնում Ռուսաստանի կազմի մեջ՝ մեծ հույսեր ներշնչելով արևմտահայությանը:

Թուրքիայի աշխարհագրական քարտեզի վրա կատարված վերոհիշյալ փոփոխությունները չէին կարող իրենց անդրադարձը չունենալ ներքին կյանքի վրա, մասնավորապես հպատակ հայ ժողովրդի, որը դեռ շարունակում էր տնքալ բազմապիսի հարկերի, կոտորածի ու թալանի սարսափի տակ: Հայ գյուղացին աշխատում էր օրնիբուն, արդյունքը հանձնում տիրապետողներին:

Քաղաքներում արհեստները հիմնականում հայերի ձեռքին էին: Անհատ արհեստավորների՝ դերձակների, ատաղձագործների, երկաթագործների, պղնձագործների, ոսկերիչների կողքին՝ Կարինում, Երզընկայում, Կեսարիայում, Արաբկիրում առաջ էին եկել տնայնագործական արհեստանոցներ, որոնց պատրաստած գործվածքեղենը, պղնձամանները, ոսկերչական իրերը ոչ միայն գնահատվել են երկրի ներսում, այլև արտահանվել արտասահման:

Երզնկայում արհեստների մեծ մասի հայերի ձեռքին գտնվելն է ցույց տալիս մասնագիտությունների, տարբեր արհեստների հետ կապված ազգանունների լայն տարածումը՝ Ղալայջոնք, Թերզոնք, Ղույումճոնք, Ղազանջոնք և այլն:

Իսկ առևտո՞ւրը: Այդ մասին Կ. Մարքսը գրել է. «Ովքե՞ր են Թուրքիայի առևտրականները. համենայնդեպս ոչ թուրքերը: Երբ դեռ սրանք նախնական նոմատների կենցաղով էին ապրում, առևտուր անելու նրանց եղանակը քարվան կտրելն էր, հիմա այնտեղ, որտեղ փոքր ինչ քաղաքակրթվել են, նրանց առևտրի եղանակը կամայական ու ճնշիչ հարկահանությունն է: Ծովային մեծ նավահանգիստներում տեղավորված հույները, հայերը, սլավոններն ու ֆրանկները իրենց ձեռքն էին հավաքել ամբողջ առևտուրը»[1]:

Խճճված արտաքին պատերազմների մեջ, միմյանց հաջորդող պարտություններից գլուխը կորցրած պետությունն ի վիճակի չէր սեփական երկիրը ղեկավարել կենտրոնաձիգ ուժով: 18-րդ դարի վերջերից ինքնիշխան գործում էին թուրք և քուրդ դերեբեյները, որոնք իրենց ձեռքն էին վերցրել տեղական իշխանությունների լիազորությունները: Նրանք էին ժողովրդից գանձում հարկերը, տալիս

---

[1] **Կ. Маркс** и **Ф. Энгельс,** Сочинения, т. IX, стр. 391-392.

պետության բաժինը, մեծ մասը պահում իրենց, վայելում դեպ ու սանձարձակ կյանք:

Սուլթան Մահմուդ II-ին հաջողվել էր 1826 թվականին վերջապես երկիրը ազատել ենիչերիների տիրակալությունից, արմատախիլ անել համաժողովրդական և պետական այդ չարիքը, սակայն շատ բան չէր փոխվել: Գավառում ենիչերիներին փոխարինել էին դերեբեյները:

Զգիմանալով դերեբեյների կամայականություններին, գավառի հայ իշխողների վերջին ներկայացուցիչները՝ ամիրաները, որոնց միջոցով էր կառավարությունը հարկերը գանձում, իրենց գործունեության ասպարեզը տեղափոխել էին մայրաքաղաք:

2. ԿՅԱՆՔԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՎԱՌՈՒՄ

Հայ ժողովուրդը Թուրքական բարբարոսական լծի տակ ապրելու ամբողջ ժամանակաընթացքում թվական տեսակետից տասնապատիկ փոքրացել էր: 50.000–100.000 հայ բնակչություն ունեցող գավառներում այժմ հազիվ մի քանի հազար հայեր էին ապրում: Ամենուր հայերի տներին, դարավոր սեփականությունը եղող հողերին տիրացել էին Թուրքերն ու քրդերը, որոնց բնական աճն էլ, իսլամական կրոնի քաջալերանքով, մրցանչային էր աշխարհում:

Թուրքիայի հայաբնակ նահանգները, այսինքն՝ Արևմտյան Հայաստանը, 19-րդ դարի սկզբներին բաժանված էին փաշայությունների՝ Էրզրումի, Բայազետի, Կարսի, Ախալցխայի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Աղանայի և այլն:

Դերջանը, Երզնկան, Կամախը ընկնում էին Էրզրումի փաշայության սահմանի մեջ: Այս բոլոր սանջակները կառավարող սերասեկեր փաշայի կենտրոնատեղին Էրզրումն էր (Կարին): Երզնկան առանձնակի դեր և նշանակություն ձեռք բերեց հատկապես այն ժամանակ, երբ 1885 թվականից ի վեր դարձավ Թուրքական 4-րդ բանակի կենտրոնատեղին: Այստեղ էին տեղակայված բանակի գլխավոր հրամանատարի զորակայանը, սպայակույտը, հետևազորի, հրետանավորների և հեծելազորայինների զորանոցները, զինապահեստները, զինվորական միջնակարգ դպրոցը և այլն:

Մեր աշխատության նախորդ գլուխներից մեկում խոսել ենք հայերից գանձվող օրինական և ապօրինի հարկերի մասին: Այդ հարկերը գնալով ավելի ու ավելի անտանելի չափերի էին հասել 19-րդ դարի սկզբներին: Օրինակ, կրկնապատկվել էր աշարը, որ գանձվում էր հողից ստացվող եկամտի դիմաց: Առաջ գանձվում էր եկամտի տասը

տոկոսը, իսկ այժմ՝ քսան: Զնայած քրիստոնյաները աչարը տալիս էին կրկնակի անգամ ավելի, քան մուսուլմանները, նրանք վճարում էին նաև հատուկ հարկ այն բանի համար, որ քրիստոնյա էին... Այս հարկը սկզբում գանձվել է ըստ ամեն մի գերդաստանի, տնի, սակայն հետագայում՝ ըստ ամեն մի չափահաս արական անձի: Տարբեր փաշայություններում տարբեր չափեր էին սահմանված գլխահարկ կոչվող այս տուրքի համար, որ ընդհանուր առմամբ գանձվում էր հնչուն փողով: Տարեցտարի բարձրացվում էր վճարվելիք գումարի չափը: Այսպես, եթե 1815 թ. ամեն մի արական չնչից գանձվել է 16 ղուրուշ, 1834 թվականին այն հասել է 60 ղուրուշի:

Շարունակվում էր դեռ տուրքերից ամենասարսափելին՝ մանկաժողովը: 18-րդ դարում մասամբ վերացել էր բարբարոսական այդ օրենքը, բայց ահա սուլթան Մահմուդ II-ը, որին հաջողվել էր վերացնել ենիչերիությունը, վերակենդանացրել է մանկաժողովի հարկը, նրան տալով ուրիշ բովանդակություն: Եթե առաջ մանուկներ էին ժողովում և նրանց տալով կրոնական մոլեռանդ դաստիարակություն, պատրաստում էին ենիչերիական զորագնդեր, ապա այժմ մանկաժողովով հավաքում էին բազմահազար պատանիների, նրանց տեղափոխում էին մայրաքաղաք, ստրկական պայմաններում աշխատեցնում Իփլիկ խան կոչվող նավաշինարանում:

Մանկահավաքը կատարվել է անհամեմատ ավելի դժվարություններով, քանի որ շատերը նախընտրել են իրենց կյանքի գնով թաքցնել երեխաներին, չհանձնել: Դրա համար էլ այդ հավաքին հաճախ մասնակցել են հարյուրավոր զինվորներ, անհնազանդներին, չենթարկվողներին պատժել սպանությամբ:

1832 թ. Կարինից, Սեբաստիայից, Երզնկայից և մյուս վայրերից հավաքել են 6000 հայ պատանիների և ուղարկել են Իփլիկ խան՝ աշխատելու: Թե այնտեղ նրանք ինչպիսի պայմաններում են եղել, երևում է հետևյալ փաստից: Երկու տարի անց՝ 1834 թվականին նրանց $^{2}/_{3}$-ը զոհ է գնացել նավային աղետների կամ տարափոխիկ հիվանդությունների, իսկ մի փոքր մասն էլ փախել, ազատվել է:

Զենք խոսում հարկերի հավաքման ժամանակ կիրառվող խրստությունների, թալանի ու սպանությունների, ավարառությունների մասին, որոնցից այնպես էլ չկարողացավ ազատվել հայ ժողովուրդը Թուրքերի գերիշխանության տակ ապրելու ամբողջ ընթացքում: Նա շարունակում էր մնալ նաև իրավազուրկ ռայայի վիճակում:

1808 թ. Յուսուֆ փաշայի կողմից հրապարակված մի ֆերման թարմացնում, նոր բովանդակություն էր տալիս Խալիֆ Օմարի հրո-

չակած օրենքներին՝ քրիստոնյաների և մահմեդականների փոխհարաբերության մասին:

Նոր օրենքով քրիստոնյաներին և հրեաներին արգելվում էր աղոթատեղիներ կառուցել, չքեղ տներ ունենալ, սովորել սրբազան արաբերեն լեզուն և կարդալ Ղուրանը, որպեսզի չսրբապղծվեր մահմեդական աստվածատուր լեզուն: Որևէ մահմեդականի երևալուն պես՝ այլահավատները պարտավոր էին ոտքի կանգնել, ճանապարհ տալ՝ գլուխ խոնարհելով: Հրեաներն ու քրիստոնյաները իրավունք չունեին չքեղ հագնել, թամբած ձի նստել, սուր կրել, լայն գոտիներ կապել, տնային ծառայողներ պահել և այլն:

Օրենքով սահմանված կարգ էր, որ ամեն մի քրիստոնյա ընտանիք տարվա մեջ պարտավոր էր երեք օր հյուրընկալել մահմեդական ճանապարհորդներին, պետական պաշտոնյաներին, կատարելով նրանց բոլոր պահանջները, հանդուրժելով նրանց քմահաճույքներին: Նման դեպքերում հայ ընտանիքներից հեռացվում էին հարս ու աղջիկները, սիրունատես երիտասարդները: Հյուրընկալվող թուրքը մեկնելիս՝ փոխանակ շնորհակալություն հայտնելու, պահանջում էր «դիշ քիրասի», այսինքն՝ ատամնավարձ, որ բարեհաճել է մահմեդականի սրբազան ատամներով ծամել գյավուրի հացը: Դիշ քիրասին տրվում էր որպես նվեր՝ սովորաբար հնչուն դրամով:

Կար նաև հայ եկեղեցու կողմից գանձվող տուրքը, դարձյալ արդյունք՝ թուրքական ճնշումների: 1800 թվականին տրված սուլթանական մի հրամանագրով քրիստոնեական վանքերն ու եկեղեցիները պարտավոր էին նույնպես տուրք վճարել՝ ըստ իրենց կալվածների ու եկամտի: Ուշագրավ էր Կ. Պոլսի հայոց պատրիարքի վրա դրված հարկը: Պատրիարք ընտրվողը այդ ընտրությունը հաստատող պետական արտոնագիրը ստանալիս պարտավոր էր վճարել 140.000 ակչե հարկ: Ամեն մի նոր վեզիրի իշխանության գլուխ անցնելիս՝ պատրիարքը պարտավոր էր շնորհավորական այցի ժամանակ 500 դուրուշ նվիրել նրան, 250 դուրուշ՝ վեզիր քեհասիին, 200 դուրուշ՝ չաուշ բաշիին և այլն:

Հասկանալի է, որ այդ բոլոր գումարները, պատրիարքարանի ծախսերը գանձվելու էր եկեղեցիներից ու վանքերից, իսկ վերջիններս էլ իրենց ծխերից: Ու այդ բոլոր գանձումներն էլ կատարվում էին ոչ թե կամավոր սկզբունքով, ըստ հավատացյալի հնարավորության, այլ որպես եկեղեցական տուրք:

Գավառի աշխատավոր գյուղացու դժբախտ վիճակը ցնցող պատկերներով է նկարագրել Ս. Տեր-Սարգսենցը (Տեկանց) «Շահենն ի Սիպիր» վեպում:

«Տվեք, տվեք, հա տվեք... ի՞նչ տանք, ախպեր, կտոր մը կորեկ հաց ունինք, այն էլ մեր բերանը չի հասած՝ արտի մեջ կերեն մնաձուր կդարձնեն, միևնույն պահուն՝ թրով թվանքով մարդիկ կուգան հոգ-վույդ վրա կկանգնին, տուրք կուգեն, տուգանք կուգեն... Ախ, եթե միայն տասանորդ լիներ, այլ՝ հարյուրին հիսուն պետք է տալ. բայց դու ստակ չունիս, ջուխտ մը եզ ունիս, որով վար ու ցանք կանես, անոնք քո հույս ապավենն են, հարկահանը ծեծով տուգանքով կառնե կտանի գանոնք... քիչ մը թթու խոսելուդ պես՝ կտանի գքեզ բռնա-տուն կթալե և այնտեղ կմնաս մինչև ոսկորներդ փտտի... պարտքըն-տերը յուր ոտք չեմքեն դուրս չի ձգած՝ քիթ բերնի վրա վազելով կու գա սևավոր մարդ մը, ծոցեն խաչ մը կհանե, համբուրե, կըսե, խաչ-համբույր կուգե, ժամ կգնա, երկու դժոխի արքայության վրա սարեն ձորեն գլխից դուրս կուտա, փարա տուր, գավազանապտուղ տուր... Երթանք մեր ոտքով գերեզման մտնենք, ազատինք այս զուլումնե-րեն»[1]:

Այսպես էր կյանքը թուրքական բռնապետության լծի տակ տա-ռապող բոլոր գավառներում: Այդպես էր կյանքը նաև Երզնկայում և ամբողջ Եկեղյաց գավառում:

* * *

Երզնկայի հայությունն ահա ապրում էր Թուրքիա կոչված այս իրական դժոխքում, ենթակա տիրապետող մոլեռանդ տարրի ամեն տեսակի կամայականություններին: Ինչ որ նկարագրեցինք նախորդ էջերում, ամբողջովին վերաբերում էր նաև Երզնկային:

Զուտ հայաբնակ, հայկական ավանդույթներով ապրող այս գա-վառը 19-րդ դարը ոտակոխել էր ազգային, կրոնական դիմագիծը դեռևս պահած, սակայն շատ բան էլ կորցրած, իսկ քաղաքի բնակ-չության մեծ մասը արդեն թուրքեր էին, հայերը կենտրոնացել էին հին եկեղեցիների շրջափակի թաղամասերում, ապրում էին տևական սարսափի մեջ:

Ղ. Ինճիճյանի 1806 թ. տպագրած աշխատությունում կարդում ենք, թե Երզնկայի գավառը անցյալում ունեցել է զուտ հայերից բնակեցված 250 գյուղ: «Այլ այժմ,- գրում է Ինճիճյանը,- ի պատ-ճառս կեղեքելոյ իշխանաց, բազում գիւղօրէք նորա լքեալ կան և անմարդաբնակ, և գիւղօրէք ինչ կործանեալ, կամ ըստ կիսոյն քայ-քայեալք»[2]:

---

[1] **Ս. Տեր-Սարգսենց,** *Շահենն ի Սիպիր կամ Գաղթական հայը, Կ. Պոլիս, 1877, էջ 160-161:*

[2] **Ղ. Ինճիճյան,** *Նոր Հայաստան, էջ 98:*

Եվ այսպես, պատմական Եկեղյաց գավառը 1800-ական թվականների առաջին տասնամյակներում ապրել է իր ամենաողբալի վիճակը, միշտ ենթակա ավարի, թալանի, հարստահարության: Շարունակվել է արտագաղթը ոչ միայն դեպի Կ. Պոլիս, այլև դեպի Ռուսաստան, որքան որ այդ հնարավոր է եղել: Հաճախ մարդիկ ոտով հազարից ավելի կիլոմետր ճանապարհ են անցել, մի ապահով անկյուն հասնելու համար:

Բայց Թուրքիայի ներքին և արտաքին վիճակը այնպիսին էր, որ այլևս չարունակել նույն բռնությունները՝ անհնարին էր: Հպատակ ժողովուրդներից մի քանիսի անկախության տիրանալը, մյուսների կիսանկախ դառնալը, օտար պետությունների ակտիվ միջամտությունը թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական կյանքին, դեռևս ստրկական վիճակում գտնվող մի քանի ժողովուրդների ընդվզումները, Ռուսաստանից կամ այլ պետություններից աջակցություն սպասելը, այս բոլորը ստիպում են Աբդուլ Մեջիդ սուլթանին՝ դիմել ներքին ռեֆորմների: Մեջիդին դեպի այդպիսի ռեֆորմներ էր մղում մեծ վեզիր Մուստաֆա Ռեշիդ փաշան, որը մոտիկից ծանոթ էր եվրոպական մշակույթին, առևտրին, պետության պարտքերին:

Հենց այդ վեզիրն էլ Եվրոպայից Կ. Պոլիս վերադառնալուց հետո համոզեց սուլթանին՝ իսկույն հռչակել ռեֆորմները:

3. ԱԲԴՈՒԼ ՄԵՋԻԴ ՍՈՒԼԹԱՆԻ ՌԵՖՈՐՄՆԵՐԸ

1839 թ. նոյեմբերի 3-ին սուլթան Մեջիդը ստորագրեց բարենորոգումների մի ծրագիր, որը հանդիսավոր արարողությամբ նոյեմբերի 7-ին ընթերցվեց սադրազամ Ռեշիդ փաշայի կողմից:

Թանզիմաթ ընդհանուր հորջորջումով հայտնի այդ ռեֆորմներով ըստ էության առաջին անգամ Թուրքիան բաց էր անում լուսամուտները դեպի Եվրոպա, տրվում էին առևտրական, տնտեսական, մշակութային ազատություններ, հպատակ ժողովուրդներին կյանքի և գույքի ապահովության խոստումներ, փոփոխություններ էին մտցրվում գանձվող հարկերի մեջ, քրիստոնյաներն իրավունք էին ստանում ծառայել բանակում[1]:

Սրանք բոլորը գայթակղեցնող խոստումներ էին, հույսեր ներշնչող՝ ձեռներեց հայ բուրժուազիայի համար: Մայրաքաղաքում բացվում էր գործունեության լայն ասպարեզ:

---

[1] *Թանզիմաթի մասին մանրամասն տե՛ս* **А. Д. Новичев,** История Турции, т. III, часть II, Ленинград, 1973, стр. 109-198.

Սակայն Թնդանոթի 101 հարվածներով աշխարհին ազդարարված այդ ռեֆորմների մեծ մասը մնաց թղթի վրա: Թուրքիայի նման մի հետամնաց երկրում հեշտ չէր որևէ բարենորոգում անցկացնելը: Դրանք առաջին հերթին հակասում էին թուրք և քուրդ հողատերերի, մոլեռանդ կրոնական պաշտոնյաների շահերին, իսկ այդ խավը նկատելի ուժ էր ներկայացնում երկրում, թեև նույնքան մտահոգիչ էր ներքին գավառներում խմորվող ժողովրդական շարժումների ալիքը, որի ոլորտում հիմա ընդգրկված էին նաև թուրք աշխատավորները:

1856 թ. Ղրիմի պատերազմից հետո, երբ թե՛ գավառում և թե՛ մանավանդ մայրաքաղաքում ծայր էին առել լուրջ հուզումներ, նախապատրաստվում էին ապստամբական ելույթներ, սուլթան Մեջիդը հրապարակում է նոր ռեֆորմներ, ավելի ճիշտ՝ նախկին խոստումները ներկայացնում է ժողովրդին՝ նոր խմբագրումներով: Նորում ավելի համարձակորեն էր ընդունում Թուրքիայի եվրոպականացման անհրաժեշտությունը: Իսկ դա միակ ելքն էր տնտեսական ճգնաժամից դուրս գալու, պարտքերից թեթևանալու:

Տարբեր լեզուներով, մասնավորապես թուրքերեն և ֆրանսերեն տասնյակ գրքեր են լույս տեսել Թանզիմաթի ռեֆորմների մասին: Դա միանգամայն բնական է: Թանզիմաթը չրջադարձային պատմափուլ էր Թուրքիայի նման ռազմաֆեոդալական հետամնաց երկրի համար, միջոց՝ տնտեսական ընատիրական փակ վիճակից, համատարած տգիտությունից, անիշխանությունից դուրս գալու:

Այս ամբողջ վերափոխումները կատարվելու էին քրիստոնյա աշխարհի հետ մերձենալու, առևտուրը ընդարձակելու միջոցով, մի բան, որ առաջացնելու էր ավանդապաշտ մոլեռանդ տարրի ուժեղ ընդդիմությունը, որը մեծապես խոչընդոտեց բարենորոգումների ծրագրերի կենսագործումը:

Առևտուրը, տնտեսական գործարքները, տևական շփումը քրիստոնյա աշխարհի հետ՝ բերում էր վերնաշենքային երևույթներ՝ եվրոպական կենցաղ, ճաշակ, առաջավոր գաղափարներ, որոնք հեղաշրջող դեր պիտի կատարեին և կատարեցին մասնավորապես մտավոր կյանքում, թուրքական նոր գրականության, արվեստի, առհասարակ մշակույթի զարգացման գործում, հակառակ կրոնամոլ մոլլաների և պետական տգետ գործիչների ընդդիմությանը:

Սկսվել էր նոր դարագլուխ Թուրքիայի տնտեսական ու մտավոր կյանքում, որի բերած բարիքները դժվար պիտի լինի թերագնահատել: Դա կյանքի թելադրանքն էր, անխուսափելի անհրաժեշտություն:

Մեր ծրագրից դուրս է մտնել մանրամասնությունների մեջ և ցույց տալ թե ինչ բերեց Թանզիմաթը Թուրքիային, ինչ բերեց բազմաչարչար հայ ժողովրդին և ինչ դեր կատարեցին եվրոպական լեզուներին ու կենցաղին, բարքերին ծանոթ, ձեռներեց հայերը՝ Թանզիմաթի ընձեռած հնարավորությունները կյանքում կիրառելու գործում:

Բավական է միայն հիշել, որ առևտրի զգալի մասը հայերի և հույների ձեռքին մնաց: Թեկուզ տնայնագործական առաջին արհեստանոցները, գործարանները հիմնադրողները եղան հայերը: Ճեզայիրլյան, Տատյան ամիրաները հիմնեցին գործվածքեղենի, մետաքսագործության արհեստանոցներ, գործարաններ:

Պալատական ճարտարապետությունն ամբողջ երկու դար, այսինքն՝ մինչև 1890-ական թվականների վերջերը, մնաց Պալյան տոհմի մենաշնորհը: Գրիգոր, Կարապետ, Նիկողոս, Հակոբ, Սարգիս Պալյանների նախագծերով Բոսֆորի երկու ափերին կառուցված չքեղ պալատները, դղյակները, զբոսավայրերը, իրենց հազարավոր մասնաբաժիններով, եվրոպական ոճով զարդարված սալոններով ու ներքին հարդարանքի պերճանքով մնացին մայրաքաղաքի զարդը և մինչև այսօր էլ դեպի իրենց են գրավում բազմահազար զբոսաշրջիկներ աշխարհի չորս կողմերից: Պալյանների այդ հրաշակերտ կառույցների մասին տպագրվել են բազմաթիվ աշխատություններ, որոնցից ամենածավալունն ու ծանրակշիռն է Բարս Թուղլաճիի (Բարսեղ Թուղլաճյան) «Թուրքական ճարտարապետության եվրոպականացումը և Պալյան գերդաստանը» նկարագրող ուսումնասիրությունը[1]:

Թուրքական դրամատիկ և երաժշտական թատրոնն ստեղծողները եղել են հայերը[2]: Այդ արվեստը սկզբնավորման շրջանից (1850-ական թվականներ) մինչև 1920-ական թվականները եղել է հայերի մենաշնորհը և դա խոստովանում են իրենք՝ թուրքերը:

Թուրք թատրոնի պատմաբան Ռեֆիկ Ահմեդը, օրինակ, խոսելով թուրքական թատրոնին ամենից շատ ծառայած Հակոբ Վարդովյանի, Թ. Ֆասուլաճյանի և Մարտիրոս Մնակյանի մասին, գրում է. «Թուրք թատրոնի պատմության մի ամբողջ շրջափուլը իր անվան հետ կապող Հակոբ Վարդովյանը մեր բեմին անկեղծորեն ծառայած հայրենակից է»: «Ֆասուլաճյանի ծառայությունները թուրք թատրոնին՝ սկսվում է դրանից հետո: Երբ Հակոբ Վարդովյանը հեռանում է բե-

---

[1] **Pars Tuğlaci,** Osmanli mimarliginda Bati, liláma döþnemi ve Balyan ailesi, Istanbul, 1981.

[2] *Մանրամասն տե՛ս մեր՝ «Հայերի դերը թուրք թատրոնի զարգացման գործում. ըստ թրքական աղբյուրների» (Բեյրութ, 1987) գրքում:*

մական ասպարեզից, Ֆասուլաճյանն իր ստեղծած թատերախմբով մեկնում է Բուրսա, տալիս թուրքերեն ներկայացումներ»: «Մեր թատրոնի պատմության մեջ Կետիկ փաչայի (այսինքն՝ Վարդովյանի) և Բուրսայի շրջաններից հետո ուշադրության արժանի է Մնակյանի ղեկավարած «Օսմանյան կոմեդի և դրամատիկ» թատերախմբի գործունեությունը (1885–1908): Մարտիրոս Մնակյանը մինչև սահմանադրության հռչակումը մոտ քառորդ դար մեն-մենակ իշխել է բեմին, հանդես գալով թե՛ որպես դերասան, թե՛ որպես ռեժիսոր, միաժամանակ 200 պիես է թարգմանել թուրքերենի»[1]:

Բերենք մի քանի վկայություն էլ թուրք թատրոնի պատմաբան և Անկարայի համալսարանի թատերագիտական ֆակուլտետի պրոֆեսոր Մեթին Անդից, որը ծավալուն աշխատություններ է գրել թուրք թատրոնի մասին, իսկ առանձին ընդարձակ մենագրություն՝ Հ. Վարդովյանի «Օսմանյան թատրոնի» մասին:

Նա, ըստ արժանվույն գնահատելով հայերի դերը թուրքական թատրոնի զարգացման գործում, գրում է. «Թուրքերեն լեզվով տրրված ներկայացումներով թուրք թատրոնի զարգացմանը նպաստելու անկեղծ ջանքերի համար հայ արվեստագետներին ինչպիսի շնորհակալություն էլ որ հայտնենք՝ քիչ է»[2]:

Ավելին՝ Մեթին Անդը իրավացիորեն զարգացնում է այն տեսակետը, թե եթե չլիներ թուրքերեն լեզվով ներկայացումներ տվող Վարդովյանի թատրոնը, գուցե և չզարգանար թուրք դասական դրամատուրգիան, քանի որ ամեն մի դրամատուրգիայի զարգացումը առաջին հերթին պայմանավորված է թատրոնով և հանդիսատեսով, իսկ այդ երկուսն ապահովել է Վարդովյանը: Նա գրում է.

«Հակոբ Վարդովյանի «Օսմանյան թատրոնը» եթե չլիներ՝ գուցե և Նամկ Քեմալը, Ահմեդ Միդհատը, Ալի բեյը և կամ Շեմսեդդին Սամին դրամատուրգներ չլինեին»[3]: Իսկ այս անունները կազմում են թուրք նոր դասական գրականության փառքը:

Թատերաերաժշտական նույնպիսի եռուն կյանքով էին ապրում հայերը: Կ. Պոլսում գործում էին մեկից ավելի թատերախմբեր: Անգամ Վարդովյանի «Օսմանյան թատրոնը», չնայած գործում էր պետական մենաշնորհով, հավասար չափով ներկայացումներ էր տալիս հայերեն, այն էլ ցուցադրելով տասնյակ պատմական ողբերգություններ, որոնց մեջ հանդես էին գալիս հայոց թագավորներ, իշխաններ,

---

[1] **Refik Ahmet,** Türk Tiyatrosu Tarihi, Istanbul, *1934, էջ 44-50.*

[2] **Metin And,** Tanzimat ve Istibdat döneminde Türk tiyatrosu, Ankara, *1972, էջ 450.*

[3] *Նույն տեղում, էջ 449:*

նախարարներ, սպարապետներ, աննկարագրելի ոգևորություն առաջացնելով հայ երիտասարդության մեջ:

Այս բոլորը թանզիմաթի բարիքներն էին և առանց դրանք իմանալու, անհնար պիտի լինի պատկերացնել մտավոր այն ծաղկումը, որ նկատվեց նաև գավառում, այդ թվում՝ Երզնկայում:

Ի վերջո՝ նույն պոլսահայ մտավորականներն էին, որ մեկնում էին գավառ և զարկ տալիս կրթական, թատերական, առհասարակ մտավոր կյանքին, իսկ մյուս կողմից՝ ինչպես որ Կուտինայի համբավավոր հախճապակուց պատրաստված իրերն էին զարդարում Պալյանների ստեղծած պալատների հարկաբաժինները, այնպես էլ երզնկացի համբավավոր ոսկերիչների, պղնձագործների հրաշալի իրերն էին տեղ գտնում նույն այդ պալատների սրահներում, աչխատանքի մեջ ներգրավելով հարյուրավոր արհեստավորների և արվեստագետների:

Խոսեցինք հիմնականում մտավոր զարթոնքի մասին, որից օգտրվում էին հայերը: Սակայն սուլթան Մեջիդը խոստումներ էր տվել նաև հպատակ ժողովուրդների իրավահավասարության, երկրում օրինականության ամրապնդման մասին: Նա բառացի հայտարարել էր. «Տերությանս մեջ իմ պաչտպանողական վահանիս տակը ընակյալ ամեն քրիստոնյա հասարակությանց և ուրիչ մահմեդական չեղող կրոնից, իմ նախնիքներես հինուց ի վեր և ետքերը չնորհված ամեն հոգևոր արտոնությունները ու ազատությունները պիտի վերահաստատվին ու անխախտ պահվին»[1]:

Համաձայն այս խոստման՝ հայերին իրավունք տրվեց ունենալու իրենց ներքին ազգային, կրոնական, կրթական կյանքը տնօրինող կանոնադրություն:

4. ԻՆՉ ՏՎԵՑ ԹԱՆԶԻՄԱԹԸ ՀԱՅԵՐԻՆ

Բուռն վեճերի ընթացքում մչակվում է Թուրքիայի հայերի եկեղեցական-ազգային գործերի կառավարման այդ կանոնադրությունը, որը հետագայում մկրտվեց «Ազգային սահմանադրություն» մեծադղորդ և հեռանկարային իմաստ ունեցող բառերով:

Անկախ այն բանից, թե որքան էր հավակնոտ «Սահմանադրություն» հորջորջումը, այն նչանակալից դեր կատարեց արևմտահայերի ազգային քաղաքական զարթոնքի գործում:

---

[1] *«Ընդարձակ տարեցույց ս. Փրկչյան ազգային հիվանդանոցի», Կ. Պոլիս, 1910, էջ 297:*

Այդ սահմանադրությամբ առաջին անգամ Թուրքիայի պատմության մեջ ստեղծվում էր ներկայացուցչական մի մարմին, որն իր ձեռքն էր վերցնում արևմտահայերի կրոնական, կրթական, հասարակական գործունեության ղեկավարությունը: Ճիշտ է գավառը ներկայացված էր ավելի փոքր թվով պատգամավորներով, և դրանք մեծ մասամբ ընտրվում էին Կ. Պոլսում ու նրա մերձակայքում ապրող հայերից, սակայն դրանով հանդերձ ստեղծվում էր բավականաչափ սերտ կապ պատրիարքարանի և գավառի միջև[1]:

Սահմանադրությունը մեծ ոգևորություն առաջացրեց ազատաբաղձ հայ ժողովրդի, մասնավորապես երիտասարդության մեջ: Ամենուր բացվեցին նոր դպրոցներ, հիմնադրվեցին պարբերականներ, որոնք տարբեր հոսանքների՝ պահպանողականների, ազատամիտների, արմատական դեմոկրատների գաղափարներն էին պաշտպանում: Անգամ երևացին զուտ մասնագիտական պարբերականներ՝ «Մուսայք Մասյացը»՝ թատերական, «Քնար արևելյանը»՝ երաժշտական և այլն: Ստեղծվեցին բարեգործական, կրթական, մշակութային տասնյակ ընկերություններ, միություններ:

Հայերն ականատես էին լինում երևույթների, որոնք երկու տասնամյակ առաջ երազել անգամ չէին կարող: Թատերաբեմերից լսում էին հայ թագավորների, իշխանների, նախարարների հայրենասիրական ճառերը, կոչերը հանուն միասնության, հանուն մայրենի լեզուն ու կրոնը պահելու: Տարօրինակն այն է, որ այդ բոլոր հոխորտանքներն արտասանվում էին իսլամական կրոնին պատկանող մի ժողովրդի ու նրա տիրակալների դեմ՝ Պարսկաստանի ու պարսիկների: Թուրքերը ոչ միայն չէին արգելում, այլև հաճախ իրենք էլ ծափահարում էին, ոգևորվում, քանի որ ատելություն ունեին պարսիկների դեմ: Բայց աստիճանաբար հասկացան, ընկալեցին, որ այդ բոլորի տակ խլրտում էր հայ ժողովրդի ինքնատիրապետման, ազգային հավաքականության, ազատագրության ոգին: Նույնիսկ դրանից հետո էլ դեռ, երկար ժամանակ, մինչև 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի վերջը, հայերը փայփայեցին ազատագրական գաղափարները:

Այո, դա արևմտահայության ազգային զարթոնքի, մտավոր վերելքի շրջանն էր: Մթնոլորտը լիցքավորած էր լուսավորական գաղափարներով, դարավոր ստրկությունից ձերբազատվելու ծանր երկուն-

---

[1] *«Ազգային սահմանադրության» տեքստի թուրքերեն բնագիրը և հայերեն թարգմանությունը տե՛ս* **Ա. Սարուխան,** *Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, հատ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 1–105 (որպես այդ գրքի հավելվածը):*

քով: Դեպի անէացում, թմրություն տանող, հնազանդություն պատգամող եկեղեցական զանգերի ղողանջներին հիմա փոխարինում էին ազգային ինքնագիտակցության բարձրացման չեփորահարումները, որոնք այնքան ուժեղ էին, այնքան անկեղծ և հուսատու, որ լսվում էին մինչև հեռավոր գավառներում:

Ռոմանտիկական էր մթնոլորտը, աղցված գործելու պաթոսով, ամենուր համախմբումներ, ճառեր, հուսադրություններ, խոստումներ, հավատ՝ ապագայի նկատմամբ, նզովք մինչ այդ իրենց քնի մեջ պահող կրավորական համակերպման դեմ:

Հայրենասիրական պոռթկումների թարմ զեփյուռը փակում էր Ավետարանի էջերը, բաց անում Եղիշեի «Վարդանանց պատերազմի» դրվագները: Հիմա մարդիկ արտագրում էին, անգիր անում, երգում Մ. Նալբանդյանի «Ազատություն»-ը, Ռ. Պատկանյանի հայրենասիրական երգերը: Ա. Արփիարյանը վկայում է, որ երիտասարդության բարձի տակ էր Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր աշխատությունը: Գեթսեմանին փոխարինել էր Ավարայրի ճակատամարտը, որից էր կենսանյութ ստանում խանդավառ երիտասարդությունը:

Այս նոր գաղափարների համար հատկապես երիտասարդությունը պայքարում էր մի կողմից իր դիրքերը դժվարությամբ զիջող հայ ամիրայական դասի, լուսավորչական եկեղեցու դեմ, մյուս կողմից՝ կաթոլիկական պրոպագանդայի, որի նպատակն էր ջլատել հայ ժողովրդի միասնականությունը, ենթարկել Հռոմի պապի գերիշխանությանը: Այդ վտանգը ուղեկցել էր հայ ժողովրդին միջին դարերից, հիմա էլ մնում էր վտանգավոր: Բայց ժամանակը գործում էր հօգուտ նոր գաղափարների: Հիմա քչերն էին հավատում, թե դրախտ գնալու ճանապարհը Հռոմով է անցնում: Նախ պետք էր երկրային հանգստի ու ազատության մասին մտածել, իսկ դրա ճամփան զենքով պայքարի դուրս գալն էր, մի բան, որ քարոզում էին Միքայել Նալբանդյանը, նրա գաղափարակից Հարություն Սվաճյանը և այլ առաջավոր մտածողներ:

1860-ական թվականների սկզբներին Կ. Պոլսում ստեղծվեց հեղափոխական գաղտնի խմբակ, որի առաջնահերթ խնդիրներից մեկն էր մայրաքաղաքի երիտասարդությանն իր ոլորտի մեջ առած ազատագրական գաղափարների հոսանքը տանել Թուրքիայի հայաշատ կենտրոնները: Այդ ծանր պարտականությունն իր վրա վերցրեց Նալբանդյանի զինակից Հ. Սվաճյանը:

1862 թ. ամռանը Սվաճյանը «Մեղու» երգիծաթերթի խմբագրությունը հանձնել է իր գաղափարակից ընկերներին և, վերցրած խորհրդավոր մի ճամպրուկ, լցված Նալբանդյանի գրքերով, գաղտնի պայմաններում հեռացել է Կ. Պոլսից, առանց իր թերթի ընթերցողներին հայտնելու, թե ուր է գնում և որքան ժամանակով:

Նա Կ. Պոլսից բացակայել է ուղիղ մեկ տարի. այդ ամբողջ ժամանակաընթացքում նրա առաքելության մասին ոչինչ չի գրվել «Մեղվում»: Միայն վերադարձից հետո տպագրված երգիծական մի հոդվածում ասվում է, թե Մեչուխեչան, այսինքն՝ Սվաճյանը, եղել է բազմաթիվ քաղաքներում՝ Վանում, Մուշում, Սեբաստիայում, Մարզվանում և այլն: Այդ հոդվածում Երզնկայի անունը չենք գտնում, սակայն շատ մոտիկ գտնվող վայրերում եղած Սվաճյանը հնարավոր է որ այցելել է նաև Երզնկա, Արևմտյան Հայաստանի ամենից ինքնատիպ, հայկական դրոշմը պահած, հայախոս այդ քաղաքը չէր կարող նրա տեսադաշտից դուրս մնալ, մանավանդ որ նա յուրաքանչյուր քաղաքում եղել է մի քանի օր կամ շաբաթ, իսկ թվարկված անունները ընդամենը մի քանիսն են: Բայց եթե անգամ առիթ չի ունեցել Երզնկայում լինելու, այնտեղ հասած պիտի լինեին ազատագրական գաղափարները հենց Կ. Պոլսից, «Մեղու», «Ծաղիկ» առաջադիմական պարբերականների միջոցով, որոնք գավառում լայն սպառում են ունեցել:

Փաստերի սակավ լինելը հակառակը չի կարող ապացուցել:

Վավերականն այն է, որ Սվաճյանը արևմտահայ գավառում ունեցել է հասարակական-քաղաքական եռուն գործունեություն[1]: Եղել է պոլսահայ առաջին հասարակական գործիչը, որ հատուկ ծրագրով այցելել է գավառական կենտրոնները: Պոլսահայ մամուլը չէր կարող գրել նրա քաղաքական գործունեության մասին: Բայց Ֆրանսիայում լույս տեսնող «Փարիզ» առաջադիմական թերթի էջերը թափանցած որոշ նյութեր կասկած չեն թողնում, որ այդ մեկ տարվա ընթացքում, մի շարք քաղաքներում ստեղծել է մշակութային միություններ, ընկերություններ, որոնք բոլորն էլ խանդավառված են եղել քաղաքական ազատության հարցով, տոգորված նալբանդյանական գաղափարներով:

«Փարիզում» տպագրված հոդվածներից մեկում ասված է, թե Ակնում ստեղծված ընկերության անդամները եղել են հիմնականում արհեստավորներ, այսինքն՝ այն խավը, որ Կ. Պոլսում պայքարի էր դուրս եկել ամիրաների դեմ և հաղթանակ տարել: Նույն հոդվածում

[1] **Գ. Գասպարյան,** *Հարություն Սվաճյան, Երևան, 1958:*

ասվում է, թե ընկերությունն ունեցել է կանոններ, «որոնց մասին գրելը երկար կուգա»:

«Երկար կուգա» նախադասությունը պարզապես միջոց է հասկացնելու համար թե վախենում է գրել այդ մասին:

Բայց կա ավելի պերճախոս մի փաստ: Կեսարիայում հիմնված ընկերությունն էլ հայտնել է, թե նպատակն է պայքարել հետադիմականների դեմ, նշանաբան ունենալով Նալբանդյանի «Երկու տող» գրքի ճակատին դրված խոսքերը՝ «Թող որոտա իմ գլխին...», այսինքն՝ «Ազատություն» բանաստեղծության ամենամարտական տողերը:

Գավառից ուղարկված մի թղթակցության մեջ կարդում ենք. «Մեղուն» ալ կստանանք, բայց ինտոր կցավինք Նալբանդյանի վրա», այսինքն՝ նրա ձերբակալության համար:

Պետք է նկատի ունենալ, որ այս բոլորը կատարվում էր այն օրերին, երբ բռնկվել էր 1862 թ. Զեյթունի ապստամբությունը և ազատության վառոդի հոտը տարածել ամբողջ հայ իրականությունում, իր վրա հրավիրելով նաև եվրոպական մամուլի ուշադրությունը:

5. ԵՐԶՆԿԱՆ ԹԱՆԶԻՄԱԹԻՆ ՀԱՋՈՐԴՈՂ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Հայաբնակ յուրաքանչյուր քաղաք, հետևաբար և Երզնկան, ուներ Ազգային սահմանադրության սկզբունքներով գործող վարչական մարմիններ: Գավառի հոգևոր պետը՝ առաջնորդը նստում էր Երզնկայում և ղեկավարում էր ոչ միայն Երզնկայի գավառի հայերին, այլև Կամախի:

Ազգային սահմանադրությունը բավականաչափ լայն իրավասություններ էր տվել հայ եկեղեցուն: Փաստորեն թուրքական կառավարության վրա մնացել էր ծանր պատիժների տնօրինումը, զինվորական տուրքի գանձումը, հարկահավաքման ամբողջ աշխատանքը, քաղաքական հարցերի վերահսկողությունը և այլն:

Հիմա էլ տեղի էին ունենում կամայականություններ, հայերը այնպես էլ չդարձան լիիրավ քաղաքացիներ, չհավասարվեցին իսլամ տարրին, սակայն հայերին էր հանձնված իրենց ներքին կյանքի ղեկավարման գործը՝ ամուսնություն, ամուսնալուծում, ժառանգական հարցեր, կրթական, մշակութային միջոցառումներ:

Հայերն ամեն կերպ աշխատում էին իրենց վեճերն ու դատարանական գործերը լուծել ներքին շրջանակում, չհասցնել մինչև կառավարական մարմիններին, քաջ գիտակցելով, որ կողմերից երկուսի

համար էլ դա օգտակար չէ: Թուրք պաշտոնյաներն ամեն կերպ աշխատելու էին հարցը բարդ ցույց տալ և երկու կողմից էլ կաշառք պոկել, իսկ պատիժներ տալու դեպքում վճռել ամենից ծանր պատիժներ: Հազվադեպ էր պատահում, որ կողմերից մեկնումեկը առաջնորդարանի որոշումներից դժգոհ՝ ժառանգական կամ ավելի բարդ մի հարց հասցնում էր Թուրքական իշխանություններին:

Իսկ հայ և թուրք վեճերը, երբ հասնում էին Թուրքական դատարան, տուժողը միշտ էլ հայն էր լինում, անկախ այն բանից թե իրավունքը ումն էր: Հայի վկայությունը չէր ընդունվում Թուրքական դատարանում: Անհրաժեշտ էր թուրք վկաներ ճարել, որ կապված էր կաշառքի հետ:

Երզնկայի առաջնորդարանը հայ համայնքի գործերը վարում էր կրոնական և քաղաքական ժողովների միջոցով, երկուսն էլ ընտրովի: Կենտրոնական իշխանությունը հանդիսանում էր Քաղաքական ժողովը, տնտեսական և կրթական գործերը վարում էին Քաղաքական ժողովի կողմից նշանակված Տնտեսական և Ուսումնական խորհուրդները:

Առաջնորդը, որ ղեկավարում էր այս բոլորը, ընտրվում էր Ազգային երեսփոխանական ժողովի կողմից և վավերացվում էր Կ. Պոլսի պատրիարքի կողմից: Գավառում նա էր հայ համայնքի ներկայացուցիչը կառավարության մոտ: Նայած թե ինչ հեղինակություն էր վայելում թուրք բարձրաստիճան պաշտոնյաների մոտ, ըստ այդմ էլ կարողանում էր լուծել հայերի շահերը շոշափող հարցերը:

Յուրաքանչյուր եկեղեցի ուներ թաղական խորհուրդ, որն ընտրվում էր թաղի բնակչության կողմից: Փաստորեն այս խորհուրդն էր տնօրինում թաղի ամբողջ գործը՝ եկեղեցու և դպրոցի բարեկարգում, նյութական միջոցների հայթայթում և այլն: Դպրոցներն էլ իրենց հերթին ղեկավարվում էին կամ թաղականների կողմից, կամ հոգաբարձուների:

Ուրեմն, ավելի քան կես դար Երզնկայի հայերի ճակատագիրը տնօրինել են հոգևոր առաջնորդները: Տեսնենք թե ովքեր են եղել նրանք, ինչ զարգացման, արժանիքի տեր, նրանց անունների հետ ինչպիսի նախաձեռնություններ, միջոցառումներ են կապված:

1860–1914 թթ. Երզնկան ունեցել է ավելի քան 10 հոգևոր առաջնորդ: Մի քանիսը պաշտոնավարել են կարճ ժամանակ և նրանց գործունեությունը հետք չի թողել Երզնկայի գավառի հայ կյանքում:

Խոսենք առավել հայտնի մի քանի առաջնորդների մասին:

Սրանցից առաջինը Գրիգորիս վարդապետ Ալեաթճյանն է: Նա Երզնկայի առաջնորդն է եղել 1875 թվականից: Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը, զբաղվել ուսուցչությամբ, միաժամանակ ունեցել է հրապարակախոսական բեղուն գործունեություն: 1863–1866 թթ. Կ. Պոլսում հրատարակել է «Թռչնիկ պեգասյան» պարբերականը, որը, անվանափոխելով «Պեգասյան թռչնիկի», շարունակել է մինչև 1868 թ.: 1870-ական թվականներից վարել է առաջնորդական պաշտոններ նախ Խարբերդում, ապա՝ Երզնկայում: Երզնկա գալով այն օրերին, երբ առաջադեմ տարրերի ու պահպանողականների միջև մղվում էր բուռն պայքար, նկատելի դեր է կատարել կրթական աշխատանքների բարելավման, սահմանադրական իրավունքների պահպանման ուղղությամբ: Երզնկան նրան է պարտական առաջին իգական դպրոցն ունենալու պատիվը: Հենց պաշտոնավարության առաջին տարում հիմնվել է Քրիստինյան աղջկանց վարժարանը, այդ դպրոցի ծրագրի մեջ մտցրել է օգտակար այնպիսի առարկաներ, ինչպիսիք են կարուձևը, գորգագործությունը, ասեղնագործությունը, նաև երաժշտությունն և հանրակրթական առարկաներ, հանդիպելով պահպանողական տարրերի խիստ դիմադրությանը, որոնք նրան վարկաբեկելու համար դիմել են ամեն միջոցի, անգամ խծբծել նրա բարոյական նկարագիրը: Այդ առիթով նրա դեմ սկված պայքարը հարկադրել է նրան՝ թողնել Երզնկան և պաշտոնավարել Մուշում: «Ան մեծ դիրք ու համբավ շահած ըլլալով՝ ի վերջո Կիլիկիո Տան կաթողիկոս ընտրվեցավ,- գրում է Գ. Սյուրմենյանը,- սակայն սուլթան Աբդուլ Համիդ իրեն հակառակ ըլլալով՝ վավերացումը ձգձգեց ու Ալեաթճյան եպիսկոպոս կաթողիկոսական գահը չբարձրացած՝ վախճանեցավ»[1]:

Գ. Ալեաթճյանին հաջորդել է նույնքան պատրաստված և ձեռներեց մի այլ առաջնորդ՝ Հմայակ եպիսկոպոս Դիմաքսյանը: Ծնվել է Կ. Պոլսում, կրթությունն ստացել Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում, ապա վերադարձել է Կ. Պոլիս, ունեցել է գրական-խմբագրական գործունեություն: 1867–1878 թթ. հրատարակել է կրոնաբարոյախոսական մի քանի գրքույկներ: 1874–1875 թթ. խմբագրել է «Լույս» կրոնական հանդեսը: Եղել է զարգացած, լեզուների գիտակ հոգևորական: Երզնկայում պաշտոնավարելու տարիներին ստեղծել է համակիրների լայն շրջանակ ոչ միայն հայերի մոտ, այլև թուրք պետական պաշտոնյաների ու զինվորականության: Հայ համայնքը հուզող շատ հարցեր նա կարողացել է լուծել չնորհիվ բարեկամական

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 153:*

նման կապերի: «Անոր օրով,- գրում է ժամանակակիցներից մեկը,- բոլոր ազգային վարժարանները բարեկարգության չավդին մեջ մըտան, ի մասնավորի Քրիստինյան աղջկանց և ս. Երրորդության եկեղեցվո ս. Լուսավորիչ վարժարանը, որ Կեդրոնականի վերածվեցավ: Ինքն էր, որ հիմնեց ս. Ներսես Հայրապետի գիշերօթիկ վարժարանը, չինել տվավ առաջնորդարանը և հայոց գերեզմանատունը: Դարձյալ իր քաջալերության շնորհիվ էր, որ խումբ մը երիտասարդներ հաջողեցան հիմնել քաղաքային առաջին թատրոնը: Ան հաճախ կայցելեր վարժարանները, դասախոսություններուն, քննություններուն ներկա կըլլար, մրցանակաբաշխության հանդեսներուն, դպրոցական լսարաններուն բանախոսություններուն կնախագահեր ու գործնապես կխրախուսեր ուսուցիչներն ու աշակերտները... Հայ գյուղացիք կպաշտեին զինքը, իր ներկայությունը մեծ հրճվանք ու խանդավառություն կպատճառեր բոլորին: Երիզացին գիտցավ գնահատել Դիմաքսյանը. մեկ քանի տարի վերջը ժողովուրդի միահամուռ ցանկությամբ ու պատրիարքարանի հաճությամբ ան գնաց Էջմիածին և Գևորգ Դ կաթողիկոսի կողմե եպիսկոպոս օծվելով՝ իր հովվական աթոռը վերադարձավ: ... Քաղաքին գլուխը հաղթական կամար կանգնեցավ և ամբողջ հայ համայնքը դիմավորեց զինքը: ... Երզնկայի ազգային տարեգրության մեջ նոր դարաշրջան մը բացված էր, ոչ ոք կհամարձակեր անոր ոևէ մեկ արարքը քննադատել ու խծբծել. ... պաշտոնական շրջանակներու մեջ անոր դիրքը այնքան բարձրացավ, որ մինչև իսկ միջնորդի դեր կկատարեր կառավարության ու գավառական քյուրդ ցեղապետներու միջև ծագած վեճերը կարգադրելու համար»[1]:

Դիմաքսյանը 6–7 տարի Երզնկայում պաշտոնավարելուց հետո մեկնել է Կ. Պոլիս, դարձել Բերա թաղամասի քարոզիչ:

Նրան հաջորդել է Բարդուղիմեոս վարդապետ Պալճյանը՝ 1887 թվականից: Սա չի ունեցել նախորդի հմայքը, ոչ էլ նրա չափ օգտակար գործեր է կատարել: Պատճառն այն էր, որ նրա պաշտոնավարության շրջանը զուգադիպել է Աբդուլ Համիդի քաղաքական խստություններին, երբ դպրոցներն անգամ խիստ հսկողության տակ էին, արգելված էին ազգային առարկաները: Դրա համար էլ հազիվ երկու տարի աշխատած՝ թողել հեռացել է:

Մոտ հինգ տարի էլ Երզնկայի առաջնորդ է եղել Վարդան քահանա Զաքարյանը, մինչև որ 1897 թ. այդ պաշտոնով Երզնկա է հասել Դանիել վարդապետ Հակոբյանը: Նրա անվան հետ կապված

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 154:*

միակ միջոցառումը թաղային վարժարանների միացյալ միության ստեղծումն էր, սակայն Հակոբյանն էլ մի քանի տարի աշխատելուց հետո նույն պաշտոնով տեղափոխվել է Զմյուռնիա:

Նրանից հետո որպես առաջնորդ Երզնկայում աշխատել են Արտավազդ վարդապետ Գալենտերյանը, ապա՝ Էմանուել վարդապետ Պալյանը: Վերջինիս անվան հետ են կապվում երկու ուշագրավ միջոցառում: Նա 1906 թ., այսինքն՝ համիդյան ամենամռայլ տարիներից մեկում, երբ հայերի միմյանց մոտ համախմբումն անգամ ամենաանմեղ մի զվարճության, տոնակատարության համար դիտվում էր հակակառավարական ցույց, կազմակերպել է յուրահատուկ ուխտագնացություն դեպի Լուսավորչի վանքը: «Հսկա բազմություն մը թե՛ քաղաքեն և թե՛ գյուղեն մասնակցեցավ այդ ուխտագնացությանը»,- գրել է ժամանակակիցներից մեկը: Պալյանի կատարած մյուս գործը հայերի համար բաղնիք կառուցելու նպատակով փող հավաքել և կառուցելն է, որը մեծ ուրախություն է պատճառել երզնկացիներին, ազատել մեծ հոգսից:

Երզնկայի հոգևոր առաջնորդների մեջ ամենաերջանիկը եղել է Երվանդ վարդապետ Փերտահճյանը: Այս անձնավորությունը Երզնկա է հասել 1908 թ. հուլիսին. հասնելու հաջորդ օրը հայտարարվել է օսմանյան սահմանադրությունը և սկսվել է հայ և թուրք եղբայրության այնպիսի մի շրջան, որի մասին ոչ ոք չէր կարող երազել: Ազատասիրական ճառեր, սրտառուչ ողջագուրումներ, հավատարմության խոստումներ: «Երվանդ վարդապետ երիտասարդ Թուրքերու ուսերուն վրա պտրտեցավ ի նշան եղբայրության՝ բեմերու վրա իսլամ մոլլաներու հետ համբուրվեցավ»:

Այդ այն խաբուսիկ օրերն էին, երբ դեռ երիտասարդ Թուրքերի քաղաքականության ներքին՝ հակահայկական կողմը աննշմարելի էր շատերին:

Երզնկայի վերջին առաջնորդը եղել է Սահակ վարդապետ Օտապաշյանը, սակայն սրա պաշտոնն էլ անվանական է եղել: Դեռ պաշտոնի գլուխ չանցած՝ Երզնկա գալու ճանապարհին, Սեբաստիայի մոտերքը 1914 թ. սպանել են Թուրքերը[1]՝ կատարելով հայերի հետ եղբայր մնալու իրենց ուխտը...

Վերոհիշյալ առաջնորդների օրերին են կատարվել Երզնկայի հայերի տնտեսական և հոգևոր կյանքի այն լուրջ փոփոխությունները, տեղաշարժերը, որոնց մասին խոսելու ենք այս աշխատության հաջորդ մի քանի գլուխներում: Այդ փոփոխությունները հեշտ չեն կա-

[1] **Ս. Ծոցիկյան,** *Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947, էջ 164:*

տարվել. դրանց ուղեկցել են տևական գզվռտոցները, թշնամական ելույթները, որոնք երբեմն հասել են անգամ մատնությունների: Առաջնորդներից ամենաարժանավորներն անգամ, ինչպիսին Հմայակ Դիմաքսյանը, ունեցել են հակառակորդներ, խանգարողներ[1]:

Պատճառը չպետք է որոնել հոգևորականների անձնական թերություններում և ոչ էլ ժողովրդի կովասիրության մեջ, ինչպես ներկայացրել են ժամանակի թերթերից մի քանիսը: Պատճառը պետք է որոնել ժողովրդի՝ մի իրավիճակից մյուսին անցնելու հետ կապված դժվարությունների մեջ:

Նախկին հլու հնազանդության շրջանը տեղի էր տվել հասարակական ակտիվացման ոգու: Մարդիկ հիմա սկսել էին դատել, տրամաբանել, կարծիքներ հայտնել, մասնակցել համայնքային վեճերի, միջոցառումների:

Այս բոլորը քաղաքական ինքնագիտակցության բարձրացման արտահայտություններ էին և ողջունելի: Զափազանցություններ, անտեղի պոռթկումներ եղել են, որոնք վնասել են անգամ հայերի ընդհանուր շահերին, սակայն դրանք անխուսափելի էին նման ժամանակաշրջանում: Քաղաքական վերազարթնումը սարերից հոսող հեղեղի նման է, ոչ պատնեշ է ճանաչում, ոչ որևէ արգելք, ինքն է իր համար ստեղծում հունը և սահում առաջ:

Իզուր են մարդիկ կարծել, թե նման հակամարտությունները հատուկ են եղել միայն երզնկացիներին: Վանը պակաս թատերաբեմ չեղավ նման երևույթների: Հայտնի է Պողոսյան ապողոսյան վեճը, որ շարունակվեց տասնամյակներ, էականն այն չէ, թե մեղադրանքներից որն էր ճիշտ, որը չափազանցված, այլ այն, թե նույն հավատացյալ ժողովուրդը ընդամենը մի քանի տասնամյակ առաջ կարո՞ղ էր այդպիսի ծառացումներ ունենալ իր հոգևոր պետերի դեմ: Սահմանադրական ոգին էր բաց արել թե՛ վանեցիների, կարնեցիների և թե՛ երզնկացիների բերանները:

Այլ քաղաքներում, ինչպես Եվդոկիայում և այլուր, իրենց ծխերի հետ կռվի մեջ գտնվող հոգևորականները դիմել են դատապարտելի միջոցի՝ ապավինել են կառավարական պաշտոնյաների, նրանց հետ դաշնակցած՝ հաշիվ են տեսել հակառակորդների հետ, պայքարել են առաջադեմ գաղափարներով տարված երիտասարդության դեմ, Երզնկայում նման բան չենք նկատում և դա պատիվ է բերում նրան:

Քաղաքական զարթոնքի արտահայտություններից մեկը հանդիսացող քննական ոգին, ազգային գործերին միջամտելու յուրաքանչյուրի ձգտումը ոչ միայն բնական էր, այլև օգտակար:

---

[1] **Գ. Այուրմենյան,** *Երզնկա, էջ 157:*

Այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ մարդիկ բեմերից տեսնում էին հայ թագավորների սխրանքը, ոգևորվում ու պատրաստվում ծափողջունելու ինքնավար Հայաստանը, այդպիսի ժամանակ չէին կարող լսել քրիստոնեական հնազանդության քարոզ:

Դժվար էր մանավանդ քահանաների գործը: Երիտասարդությունը այլևս չէր լսում նրանց: Այն քահանաները, վարդապետները, որոնք իրենց քարոզների մեջ հայրենասիրական հարցերի մասին էին խոսում, զենքի կոչում մարդկանց, նրանց էին միայն լսում: Դրա համար էլ քահանայի պաշտոնը հիմա սահմանափակված էր կրոնական ծիսակատարություններով՝ ծնունդ, ամուսնություն, մեռել, հաղորդություն և այլն:

Մեր ասածները վերաբերում էին հատկապես 1850–1870-ական թվականներին, 1880 թվականից համիդյան խստությունները կասեցրին այդ ամբողջ ոգևորությունը: Արգելվեց այն ամենը, ինչ կապված էր հայրենիքի, ազատության գաղափարների հետ: Հիմա հոգևորական պետերը, առաջին հերթին առաջնորդը, պարտականություն ունեին չափի տակ պահելու երիտասարդների ոգևորությունը, կանխելու համար անխոհեմ պոռթկումները, որոնք կարող էին աղետաբեր լինել երզնկացիների համար:

Այսպիսի բարդ ու հակասական պայմաններում են աշխատել վերոհիշյալ տասը առաջնորդները՝ մի կողմից ձգտելով հեռու մնալ քաղաքական բնույթ ունեցող դեպքերից, մյուս կողմից ծառայել համայնքի կրթական-մշակութային առաջընթացին:

Այժմ տեսնենք թե 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Երզնկայի գավառի հայությունը ժողովրդագրական ինչ պատկեր է ունեցել:

6. ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

19-րդ դարի վերջերին Երզնկայի գավառը (սանջակ) բաղկացած էր չորս գավառակներից (կազա): Գավառակներն էին՝ Երզնկա, Կամախ, Կերճանիս, Գուրուչա: Երզնկայի գավառակի գյուղերը բաժանվում էին ինը գյուղախմբերի (նահիե), որոնց կենտրոններն էին՝ Ճիմին, Քելերիճը, Մեղուցիկը, Քինը, Խոզնսին (Խոսնսեկ), Ճենճիկեն, Էսեսին, Ղարատիկինը և Վասկերտը (Վասակակերտ): Դեռևս 19-րդ դարի սկզբներին, ըստ ճշմարտախոս և արժանահավատ պատմագիր Ղ. Ինճիճյանի, Երզնկայի գավառակն ուներ զուտ հայերից բաղկա-

ցած 250 գյուղ[1]: Տևական կոտորածների, բռնի մահմեդականացման ու զանգվածային արտագաղթերի հետևանքով այդ թիվը կրճատվել է 5–6 անգամ: Այսպես, եթե 1878 թվականին Երզնկայի գավառակն ուներ 76 հազար հայ բնակչություն, 1909 թվականին՝ 35 հազար, ապա Մեծ դեպքերի նախօրեին այն կազմում էր ընդամենը 26 հազար: Ընդ որում Երզնկա քաղաքն ուներ չուրջ 14 հազար հայ բնակիչ (ավելի քան 2000 տուն): Այսպիսով, 19-րդ դարի սկզբների 250 հայկական գյուղերից 20-րդ դարի սկզբներին միայն 11-ն էին մնացել հայաբնակ, չուրջ 20 գյուղ էլ՝ Թուրքերի հետ խառն: Զուտ Թուրքական գյուղերի թիվը հասնում էր մոտ հարյուրի, մի քանի տասնյակ էլ քրդական գյուղեր կային: Ուրեմն՝ Երզնկայի հայկական գյուղերի թիվը անցած հարյուր տարվա ընթացքում նվազել էր $^{4}/_{5}$-րդով: Գավառակը փոխել էր հայկական դիմագիծը:

Պատկերն ավելի ամբողջական դարձնելու համար մտնենք որոշ մանրամասնությունների մեջ:

1914 թ., ըստ Կարինի Հայոց առաջնորդարանի վիճակագրական տվյալների, Երզնկայի գավառակի հայաբնակ գյուղերն ունեին բնակչության հետևյալ պատկերը՝

ա. **Զուտ հայաբնակ գյուղեր**

1. Մթննի – 130 տուն
2. Երկան (Էրկան) – 100 տուն
3. Ղարատիկին – 70 տուն
4. Կելենցիկ (Կյոլընցիկ) – 60 տուն
5. Վերի Ագրակ (Զիֆլիկ) – 60 տուն
6. Գյուլլիջե – 60 տուն
7. Մահմուտցիք – 60 տուն
8. Կարմրի – 50 տուն
9. Վարի Ագրակ (Զիֆլիկ) – 40 տուն
10. Տաճրակ – 40 տուն
11. Սրպիհան (Սուրբ Օհան) – 40 տուն

բ. **Խառը (հայ, Թուրք, քուրդ) բնակչություն ունեցող գյուղերի հայերի թվաքանակը**

1. Մեղուցիկ (Մեղվրցիկ) – 304 տուն (ավելի քան 1800 բնակիչ)
2. Մեծագրակ – 85 տուն

[1] **Ղ. Ինճիճյան,** Նոր Հայաստան, էջ 98:

3. Ծաթգեղ – 78 տուն
4. Բզվան – 70 տուն
5. Բթառիճ (Փթառիճ) – 68 տուն
6. Ղարաքիլիսա – 45 տուն
7. Ղարաթուչ – 42 տուն
8. Մոլլագեղ – 40 տուն
9. Խնձորեկ (Խնձորի) – 40 տուն
10. Հոռոմագրակ – 36 տուն
11. Շխլի (Շխնի) – 25 տուն
12. Աղջաքենդ – 15 տուն
13. Հարապետի (Հայրապետ) – 15 տուն
14. Ուռեկ – 15 տուն
15. Ծաթեր – 15 տուն
16. Բալանկա (Փալամղա) – 15 տուն
17. Քրդգեղ – 10 տուն
18. Շոխա – 10 տուն
19. Ախոռջուղ (Ախոռիկ) – 5 տուն
20. Բալաբան – 5 տուն:

Փոքրաթիվ հայեր էին ապրում նաև Գոմեր, Կամարիկ, Հանդիս, Բրաստիք խան (Պրաստիկ), Լուսնհոնք, Յալընըզբաղ, Մարեք, Ջրանոս, Խանճյան Մզրե, Ղազանճյան Մզրե, Տնկետեկ և այլ գյուղերում ու ագարակներում: Այսպիսով, Երզնկայի գավառակի (կազա) գյուղական հայ բնակչությունը կազմում էր չուրջ 12 հազար մարդ: Իսկ կրոնափոխ դարձած, լեզվով ու ոգով թուրքացած հայերի թիվը անցնում էր 40 հազարից: Տասնյակ թուրքաբնակ գյուղեր կրում էին կամ զուտ հայկական, կամ աղավաղված հայկական անուններ, ինչպես օրինակ՝ Սբնգոր (Ս. Գրիգոր), Փչկաթաղ (Ս. Փրկչի թաղ), Մազաջուր (Մեղրաջուր), Վասկերտ (Վասակակերտ), Նոր գեղ, Վարդանչահ, ՃԵնճիկե, Թիլ, Զրմես, Խտիկ, Վաղավեր, Գեր թաղ (Վերի թաղ) և այլն: Դժվար չէ կռահել, որ սրանք նախապես եղել են հայկական գյուղեր, իսկ բնակիչներն էլ՝ հայեր[1]:

Երզնկայի 26 հազար հայերից քչերին էր վիճակված վերապրելու: 1915–1916 սև տարիներին նրանց չուրջ 90 %-ը զոհ գնաց թուրքական յաթաղանին՝ գլխավորապես Կամախի և Սանսա կիրճերում, չատերն էլ ջրամույն եղան Եփրատի ոլորաններում:

[1] Երզնկա քաղաքի ու գավառակի (կազա) վերաբերյալ վիճակագրական հավաստի տվյալները տե՛ս **Թեոդիկ**, Գողգոթա հայ հոգևորականության և յուր հոտին 1915 աղետալի տարին, Բոստոն, 1980, էջ 240-248:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1. ԱՌԱՋԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Ճիշտ է նկատված, որ երզնկացիները կրթական տեսակետից միշտ էլ բարձր են կանգնած եղել Հայաստանի մյուս գավառների հայերից: Երզնկացիները ոչ մի ջանք չեն խնայել իրենց դպրոցները կանգուն և բարեկարգ պահելու համար: 19-րդ դարի վերջերին – 20-րդ դարի սկզբներին քաղաքում քիչ կարելի էր հանդիպել որևէ հայի (երկու սեռից էլ), որ գրաճանաչ չլիներ: Ժամանակակից ըմբռնումով առաջին կանոնավոր դպրոցը Երզնկայում հիմնադրվել է 1870 թվականին: Կոչվել է նախ Լուսավորչաց, հետագայում՝ Կեդրոնական վարժարան:

Կառուցված է եղել Ս. Երրորդություն եկեղեցու շրջակայքում, առաջնորդարանին մոտ: Երկհարկանի ու փայտաշեն չենքի առաջին հարկում եղել է ընդարձակ սրահ, որտեղ մանկապարտեզի երեխաներն են սովորել: Այդ սրահը ծառայել է նաև հանդիսությունների, թատերական ներկայացումների համար: Դարձյալ առաջին հարկում գտնվող մի քանի սենյակ տրամադրվել է նախակրթարանին:

Նույնքան տարածություն ունեցող երկրորդ հարկն արդեն նախատեսված բարձր դասարանների աշակերտների համար:

Վարժարանն ապահովված է եղել կարող ուժերով, մի մասը Կ. Պոլսում կրթություն ստացած երզնկացի երիտասարդներ:

Այնտեղ են սովորել հետագայում Երզնկայի մշակութային և հասարակական կյանքում դեր կատարած բազմաթիվ մտավորականներ, այդ թվում Ոսկան Մարտիկյանը, որը հետագայում հասել է մինչև Օսմանյան կայսրության Փոստի և Հեռագրատների նախարարի պաշտոնին:

Երզնկայի կրթական կյանքում նշանակալից դեր է կատարել Եզնիկյան վարժարանը, հիմնադրված 1870-ական թվականների վերջերին: Սա էլ գտնվել է Ս. Նշան եկեղեցու շրջապատում: «Ան Երզընկայի մեջ միակ վարժարանն էր,- գրում է Գ. Սյուրմենյանը,- որ

կառուցված էր դասարանական նոր դրությամբ ու հարմարություններով: Առաջին հարկը գետնեն բարձր ու տախտակամած էր, ուներ չենքի երկարությամբ սրահ մը, չուրջը՝ դասարաններով: Վերևի հարկն ալ գրեթե նույն ձևը ուներ, միայն մեկ երկու դասարան ավելի»[1]:

Դպրոցը կառուցված է եղել քաղաքի մեծահարուստներից Սարգիս Տեր-Ստեփանյանի, Լեփյանների և Ղազարոսյանների նյութական աջակցությամբ:

Դպրոցը գործել է 4–5 տարի և փակվել 1895 թ. դեպքերի օրերին, ուսուցչական կազմի դեմ սկսված քաղաքական հալածանքների պատճառով: Աչքի ընկնող ուսուցիչներից Փողարյանը ու խնամակալներից Լեփյանն ու Ղազարոսյանը բանտարկվել են, իսկ Սարգիս Տեր-Ստեփանյանը փախել է Հունաստան:

Հետագայում մի խումբ անձնազոհ ուսուցիչների ջանքերով դպրոցը նորից է բացվել և ունեցել այնպիսի բարգավաճ վիճակ, որ մրցել է քաղաքի լավագույն դպրոցի՝ Կեդրոնական վարժարանի հետ:

Անհամեմատ փոքր տարողություն է ունեցել Ս. Սարգիս եկեղեցուն կից գործող և նույն թաղի նախակրթարանը հանդիսացող Արամյան վարժարանը: Այն գործել է մի քանի տարի միայն: Ունեցել է 150 աշակերտ:

Երզնկան ունեցել է մի վարժարան էլ, որը կոչվել է Նարեկյան: Սա էլ ս. Փրկչի եկեղեցու թաղամասի նախակրթարանն է եղել, եռահարկ «հսկա ու փառավոր շենք մըն էր,- գրում է Սյուրմենյանը, հին քաղաքին մեջ միակը՝ իր գեղեցկությամբ ու մեծությամբ»[2]:

Առաջին հարկում գետեղված է եղել ճաշարանն ու մթերանոցը: Երկրորդ հարկն ունեցել է նեղ սրահ ու մի քանի դասարաններ: Երրորդ հարկում եղել է ուսուցչանոցը, սերտարանը, որն օգտագործվել է դպրոցական հանդեսների, զեկուցումների համար:

Աշակերտների թվի քչության պատճառով (100–150 երեխա) երրորդ հարկը միշտ էլ դատարկ է մնացել, հաճախ օգտագործվել է Ընկերական վարժարանի բարձր դասարանների համար: Չնայած չռայլ այս հնարավորությանը, նշված թաղամասում անհամեմատ թույլ է եղել կրթական վիճակը:

«Այս թաղը,- պատմում է Գ. Սյուրմենյանը,- ուսման ու կրթության տեսակետեն ամենահետամնացն էր, հոգեպես թույլ ու այլա-

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 140:*

[2] *Նույն տեղում, էջ 142:*

մերժ բնակչություն մը ուներ: Ավանդամոլ, նորություններե խորշող, ժամանակի պահանջը անդոսնող, իրենց պապենական սովորություններուն կառչած մնացած էին, կարծես տարբեր քաղաքացիներ եղած ըլլային: ... Եթե ասոնք կանուխեն ուսյալ քահանաներ ունենային, գուցե այս վերջինները հաջողեին հեղաշրջել զիրենք, քանզի կրոնամոլ ըլլալով՝ կղերեն դյուրավ կազդվեին»[1]:

Երզնկան ունեցել է նաև աղջկանց վարժարան՝ Քրիստինյան կոչված: Հիմնադրվել է 1875 թ. Գր. Ալեթճյանի ջանքերով: Դպրոցը եղել է երկհարկանի, փայտաշեն: Առաջին հարկը օգտագործվել է տարրական դասարանների համար, երկրորդը՝ նախակրթարանի համար: Բյուջեն գոյացել է աշակերտներից գանձվող թոշակներից, նվիրատվություններից և հանդեսներից ստացած եկամուտներից:

Դպրոցի հոգաբարձությունը հատուկ ուշադրություն է դարձրել աշակերտուհիներին օգտակար գիտելիքներ տալուն: Առաջին հարկում ունեցել են գորգի արհեստանոց, որտեղ աշակերտուհիները սովորել են գորգագործություն: Ունեցել են նաև կարուձևի սենյակ: Հանրակրթական առարկաներից ընտրվել են հայոց լեզու, թվաբանություն, աշխարհագրություն: Այս դպրոցին օգնելու համար ստեղծվել է Երզնկայի հարուստ ընտանիքների կանանցից կազմված մի հանձնաժողով, որը հսկել է դպրոցի բարոյական վարքագծին և նյութական օգնություն է ցույց տվել հոգաբարձությանը:

Քրիստինյան վարժարանը նկատելի դեր է կատարել Երզնկայի իգական սեռի դաստիարակության, նրանց մտավոր վերելքի գործում: Դրա շնորհիվ Երզնկայի հայ ընտանիքներում միշտ էլ եղել են մեկ երկու գրագետ կանայք: Մամուլում տպագրված մի հոդվածից իմանում ենք, որ 1883 թվականին այս վարժարանում սովորել են 250 աշակերտուհիներ, պաշտոնավարել երկու ուսուցիչ, մեկ ուսուցչուհի: Թե ով է եղել Երզնկայի կրթական աշխատանքի մեջ ներգրավված այդ առաջին հայուհին, դժբախտաբար չգիտենք:

Քաղաքում գործել է նաև Հայկազյան մասնավոր վարժարանը, 80 աշակերտով:

Երզնկայի կրթական կյանքում ամենից մեծ դեր կատարած հոգևոր առաջնորդներից Հմայակ եպիսկոպոս Դիմաքսյանը նախաձեռնել է նաև քաղաքից դուրս դպրոց հիմնելուն, «գյուղական դպրոցաց վարժապետ հասցնելու նպատակով»: Նա այդ գործը գլուխ է բերել մեծ դժվարություններ հաղթահարելով, բնակչությունից հանգանակություն անելով, Կ. Պոլսից նյութական օգնություն ստանալով:

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 142-143:*

Դպրոցը հիմնել է ս. Ներսես վանքում, կոչել «Ներսիսյան վարժարան գիշերօթիկ»: Ահա թե ինչ ենք կարդում մոտ հարյուր տարի առաջ տպագրված մի հոդվածում այս դպրոցի մասին:

«Առաջին տարին՝ որովհետև ուսանողք սակավ, գործը նոր և ժողովուրդը եռանդված ու հուսալից էր, ամենայն ինչ լավ ընթացավ: Քաղաքային մի քանի կարող ազգայինք գոհացուցիչ տարեթոշակներով կպաշտպանեին մեկ մեկ սան, մեն մի գյուղ՝ յուր տված աշակերտին համար կվճարեր ցորյան, լուբիա, հարդ, փայտ, բանջարեղեն և այլն միանգամայն: Սակայն հետզհետե բեռին ծանրությունը զգալի եղավ»:

Լոբիով, ցորենով, դարմանով դպրոց պահելը հեշտ չէր: Կարճ ժամանակից փակվել է 40 աշակերտ և 10 ծառայող ունեցող այդ դպրոցը, թեև այն մի քանի տարիների ընթացքում, որ գործել է, հասցրել է մի քանի ուսուցիչներ՝ գյուղական դպրոցների համար:

Մենք խոսեցինք Երզնկայի տարրական և յոթնամյա դպրոցների մասին:

Գավառի կրթական կյանքին օգնող ընկերությունները, որոնք հիմնադրվել էին Կ. Պոլսում 1870-ական թվականների կեսերին, ծրագրել էին կենտրոնական քաղաքներում ստեղծել միջնակարգ դրպրոցներ, որոնք պատրաստեին ուսուցիչներ տեղացի երիտասարդներից: Դրանք կարող էին աշխատել ոչ միայն տվյալ գավառում, այլև՝ մոտակա հայաշատ վայրերում: Դա անհրաժեշտ էր, քանի որ Կ. Պոլսում կրթություն ստացած երիտասարդներից քչերն էին համաձայնվում գավառ մեկնել՝ ուսուցչական աշխատանքի: Զէին մեկնում անգամ գավառից եկած և պոլսական կյանքին ընտելացածները: Գավառի ընդհանուր հետամնացությունը, կյանքի անապահովությունը, պահպանողական, տգետ մարդկանց հետ տևական պայքարի մեջ լինելու երկյուղը, այս բոլորը հեռու էին պահում զարգացած մարդկանց, որքան էլ որ Կ. Պոլսի դպրոցներում նրանց ուսուցիչները սերմանած լինեին հայրենասիրական գաղափարներ, Հայաստանի մտավոր վերելքին օգնելու անհրաժեշտությունը:

Տեղերում ուսուցչական ուժեր պատրաստելը անհրաժեշտ էր նաև մի այլ նկատառումով: Օտար վայրերից եկած մարդիկ դժվար էին հարմարվում տվյալ գավառի կյանքին ու սովորություններին, հաճախ անգամ չէին հասկանում բարբառը: Մինչդեռ այնտեղ ծնված ու մեծացած երիտասարդը, մոտիկից ծանոթ ծննդավայրի մարդկանց հոգեբանությանը, սովորություններին, պահանջներին, կարող էր ավելի հեշտ լեզու գտնել թե՛ աշակերտների ու նրանց ծնողների, թե՛ հոգաբարձությունների հետ:

Ահա այս բոլորը հաշվի առնելով, 1870-ական թվականների վերջերից մի շարք քաղաքներում սկսում են թաղային վարժարաններին զուգընթաց հիմնել երկրորդական դպրոցներ: Վանում հիմնադրվում է Վարժապետանոցը, 1881 թվականին Կարինում՝ Սանասարյան վարժարանը, Խարբերդում՝ Ամերիկյան միսիոներների Արմենիա կոլեջը, որը հետագայում՝ համիդյան խստությունների շրջանում վերանվանվեց Եփրատ կոլեջ: Սեբաստիայում նույնպես ստեղծվել է նման դպրոց:

2. ԵՐԶՆԿԱՅԻ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Այդպիսի կենտրոնական վարժարան է եղել Երզնկայի Ընկերական վարժարանը, որի մասին ավելի ընդարձակ ենք խոսելու, քանի որ խոշոր դեր է կատարել առհասարակ գավառի կրթական, մշակութային կյանքում: Հետաքրքիր է, որ Ս. Ծոցիկյանը այն անվանում է Ուսումնարան կամ Ընկերական կրթատուն[1]:

Բարեբախտ պայմաններում է գործել այս դպրոցը այն առումով, որ Երզնկայում օտարերկրյա միսիոներական կազմակերպությունները խարիսխ չէին գցել. կրթական գործը միշտ էլ գտնվել է հայ ազգային մարմինների ձեռքին, անշուշտ եկեղեցու ազդեցության տակ:

Բացատրության կարիք չունի այն իրողությունը, որ նման դպրոցների հիմնադրումը զուգադիպում էր ռուս-թուրքական պատերազմի ու նրան անմիջապես նախորդող հուսատու օրերին, երբ օրակարգի հարց էր համարվում ապագա Հայաստանի ինքնավարությունը, Կարինն էլ նկատի էր առնվում մայրաքաղաք, իսկ Կ. Պոլսում կազմվում էին վառ երազներ: Անգամ ռուսահայ մտքի այնպիսի մի ականավոր ներկայացուցիչ, ինչպիսին Գրիգոր Արծրունին էր, առաջարկում էր Կ. Պոլսի պատրիարքարանը տեղափոխել Կարին...

Երզնկայի Ընկերական վարժարանի հիմնադրման մեջ մեծ դեր է կատարել Կ. Պոլսում կրթություն ստացած, արևմտահայերի սահմանադրական շարժման տարիների գինովությամբ արբեցած մի պատանի՝ Հակոբ-Շավարշ Քենտերյանը: Այս երիտասարդի անունը կապված է ոչ միայն կրթական կյանքի, այլև Երզնկայի թատերական շարժման հետ:

Քենտերյանին համագործակցել են Երզնկայի հայտնի Դանիելյան մեծահարուստ գերդաստանի անդամներից մահտեսի Մկրտիչ Դա-

---

[1] **Ս. Ծոցիկյան,** *նշվ. աշխ., էջ 163:*

նիելյանը, Հովհաննես Դանիելյանը, Հակոբ Պետրոսյանը, Փ. Պոյաճյանը:

Այս մարդկանցից ստեղծված հանձնաժողովն է, որ 1878 թ. աշնանից անցել է լարված աշխատանքի, կատարել հանգանակություն, որոշել են ուսուցչական կազմը, լուծել շենքի հարցը:

Տնօրեն և ավագ ուսուցիչ է նշանակվել Խաչիկ Հավնունին:

Հոգաբարձությունը մեկ-մեկ շրջագայել է տները, աշակերտներ հավաքագրել, նախապատրաստական բոլոր աշխատանքներն ավարտել և 1879 թ. հունվարի սկզբին մեծ հանդիսավորությամբ կատարվել է դպրոցի պաշտոնական բացումը:

Սակայն դեռ մի ամիս չանցած՝ ծանր հիվանդացել է ու վախճանվել Խ. Հավնունին, որի հետ մեծ հույսեր էին կապել Երզնկայի հայերը, քանի որ բնիկ Տիվրիկցի այդ մարդը աշխատել է Երզնկայում որպես ուսուցիչ և գիտեին բոլորը: «Ձերմ ազգասիրությամբ, ծայրագույն ճշտապահությամբ և մանավանդ քաղցր բնավորությամբ դաստիարակի մը ընտիր տիպար էր տիար Հավնունի, զոր ավաղ, երկինք կարի վաղ հափշտակեց Ընկերական սաներեն»[1]:

Հոգաբարձությունը որոշել է նրա փոխարեն Արաբկիրից հրավիրել պատրաստված մանկավարժ Սարգիս Ամատյանին, որը մեծ դեր պիտի կատարեր հետագայում առհասարակ Երզնկայի մշակութային կյանքում:

Երեք ամիս է տևել Ամատյանին տեղափոխելու աշխատանքը: Այդ ժամանակամիջոցում դպրոցի տնօրենի պաշտոնը ժամանակավորապես կատարել է Մկրտիչ Թորոսենցը: Նա հնարավորություն չի ունեցել շարունակելու պարապմունքները: Զբաղվել է դպրոցի համար հիմնական շենք վարձելու և այլ աշխատանքներով:

Եկել է Ամատյանը, վերջնականապես լուծել շենքի հարցը և 1879 թ. հուլիսի 1-ին պաշտոնապես վերսկսել է պարապմունքները՝ քաղաքի ս. Փրկիչ թաղամասում գտնվող նոր ու հարմարավետ շենքում:

Նախ գործել են նախակրթարանի երեք դասարանները՝ 50 աշակերտներով: 1880 թ. հունվարին աշակերտների թիվը հասել է 70-ի, իսկ մեկ տարի անց՝ 130-ի: Նախակրթարանային երեք դասարանների վրա ավելացել են միջնակարգի չորս դասարանները՝ «եթե չըսենք Պոլսո դպրոցներու ծրագրեն բարձր, գոնե անոնց հավասար ծրագրով»:

---

[1] «Ընկերական վարժարան Եկեղյաց», Ա տեղեկագիր երկամյա, 1879-1881, Կ. Պոլիս, 1881, էջ 4:

Աշակերտներին ընդունել են ուսման վարձով: Կարիքավոր ընտանիքի երեխաները սովորել են ձրի կամ հարուստներից մեկնումեկի կողմից սահմանված կրթաթոշակով և համարվել են նրանց որդեգիրը:

Ընկերական վարժարանի երկամյա Տեղեկագրից իմանում ենք, որ 116 աշակերտներից 90-ը սովորել են ուսման վարձ վճարելով, 8-ը՝ որպես մեծահարուստների որդեգիրներ, իսկ 18-ը՝ ձրի:

Դպրոցն ունեցել է յոթը դասարան, որոնցից առաջին տարում վեցն են ապահովված եղել աշակերտներով: Վեցերորդ բարձրագույն դասարանն իր առաջին շրջանավարտները տվել է 1882 թ. հուլիս ամսին:

Մեզ հասել են նաև այն մեծահարուստների անունները, որոնց նյութական օժանդակությամբ սովորել են վերոհիշյալ մի քանի աշակերտները և որոնք պարբերաբար օժանդակել են դպրոցին՝ կարիքի դեպքում: Այդ մեծահարուստներն են եղել Նշան Տեր-Ստեփանյանը, Գրիգոր Մսրյանը, Մարկոսյան եղբայրները, Ջիվան և Առաքել Դանիելյան եղբայրները, Գաբրիել Ղազարոսյանը, Գաբրիել Փափազյանը:

Ընկերական վարժարանը հենց առաջին տարում Երզնկայում ձեռք է բերել մեծ հեղինակություն, մասնավորապես Ս. Փրկիչ Թաղամասի բնակիչների շրջանում, որոնք նյութական և բարոյական ոչ մի զոհողության առաջ կանգ չեն առել Թաղամասի պատիվը բարձր պահող վարժարանի կարիքները բավարարելու համար:

Դպրոցի գտած հաջողությունը պայմանավորված էր մի քանի գործոններով:

*1. **Ապահովված էր բազմակողմանի զարգացման տեր ուսուցիչներով,** որոնք կարող էին մրցել Կ. Պոլսի լավագույն ուսուցիչների հետ՝ իրենց լայն գիտելիքներով և լեզուների իմացությամբ:*

Զհաշված այցելու ուսուցիչներին, մնայուն ուսուցիչների թիվը եղել է հինգ: Դրանք են Սարգիս Ամատյան-տնօրեն, դասախոս ֆրանսերենի, թուրքերենի, պատմության և աշխարհագրության: Այս առարկաների սոսկական թվարկումն էլ ցույց է տալիս Ամատյանի լայն զարգացումը: Նա երկար տարիներ աշխատակցել է «Արևելյան մամուլ», «Բյուզանդիոն», «Մասիս» և այլ պարբերականների՝ հիմնականում գավառի կրթական կյանքը ներկայացնող հոդվածներով: Վայելել է մեծ հարգանք այն բոլոր քաղաքներում, որտեղ պաշտոնավարել է հետագայում (Արաբկիր, Տրապիզոն, Զմյուռնիա, Հալեպ):

Ընկերական վարժարանի լավագույն ուսուցիչներից է եղել Պետրոս Փողարյանը, որ ավանդել է հայկաբանություն, կրոնագիտություն, բնագիտություն, թվաբանություն, ձայնագրություն և գծագրություն: Ուրեմն նա ունեցել է և՛ երաժշտական և՛ նկարչական գիտելիքներ:

Մկրտիչ Թորոսենցը դասավանդել է թվագիտություն և տոմարագիտություն, Ժիրայր Վասակունին՝ թվաբանություն, մարդակազմություն, մարմնամարզություն: Նշան Գնդունին էլ եղել է օգնական ուսուցիչ և գեղագիր:

2. **Դասավանդվող առարկաների բազմազանությունը:** Ի տարբերություն մինչ այդ գործող թաղային վարժարանների՝ Ընկերական վարժարանում լայն տեղ է տրվել գործնական օգտագործություն ունեցող առարկաներին: Կրոնի հետ կապված առարկաները, որոնց թիվը հասնում էր 3–4-ի թաղային վարժարաններում, իջեցվել է մեկի՝ կրոնագիտության: Վարժարանի 1881 թ. Տեղեկագրում գտնում ենք ուշագրավ մանրամասնություններ ավանդվող առարկաների մասին: Պարզվում է որ, օրինակ, ազգային պատմության առարկան նախակրթարանի երկրորդ դասարանում անցել են հայոց պատմության նշանավոր դեմքերի կյանքը անգիր անելով, իսկ հետագա դասարաններում՝ «սկիզբեն ցվերջ», այսինքն՝ ընդարձակ: Այդ առարկայի դասագիրքը եղել է Մ. Մուրադյանի «Պատմութիւն Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցւոյ» գիրքը, որը, ի դեպ, Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանում նույնպես օգտագործվել է որպես հայոց պատմության դասագիրք, ինչպես վկայում է իր արժեքավոր հիշողություններում ակադեմիկոս Հ. Աճառյանը: Դա եղել է քողարկման միջոց, քանի որ հայոց պատմությունը պաշտոնապես արգելված էր համիդյան կառավարության կողմից, իսկ եկեղեցական պատմությունը՝ ոչ:

Վերջին դասարաններում աշակերտներն արդեն սովորել են Արևելքի հին ազգերի պատմությունը, Միջին դարի պատմությունը, հասնելով մինչև նորագույն ժամանակները:

Աշխարհագրության ծրագիրը կազմված է եղել հետևյալ սկզբունքով. նախակրթարանի երկրորդ դասարանում անցել են Երիզա քաղաքի ու նրա շրջակայքի աշխարհագրությունը, տեղագրությունը, կլիման: 3-րդ դասարանում՝ «Հայաստանի աշխարհ (ըստ նոր և նախնի աշխարհագրաց, գծելով)»: Հաջորդ դասարանում սովորել են Թուրքիայի ընդարձակ աշխարհագրությունը, նաև ծանոթացել են Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի աշխարհագրությանը:

Ավելի բարձր դասարաններում անցել են բնական և ուսումնական աշխարհագրություն:

Աշակերտները թվաբանությունը անցել են աստիճանական զարգացումով, չորս գործողությունից հասնելով մինչև տոմարակալության ու գրահաշվի:

Նախակրթարանում երեխաները սովորել են միայն մեկ լեզու՝ հայերենը, Ուսումնարանում նաև ֆրանսերեն և թուրքերեն, բարձր դասարաններում հասնելով այդ երկու լեզուներով չարադրություն գրելու աստիճանին, մի բան, որ քիչ չէր այդպիսի մի ժամանակաշրջանում և կարող էր համեմատվել Կ. Պոլսի լավագույն երկրորդական վարժարանների մակարդակի հետ, անգամ հայտնի Կեդրոնական վարժարանի:

Դպրոցի ծրագրում՝ նախակրթարանի երկրորդ դասարանից սկսած՝ հանդիպում ենք երկու ուշագրավ առարկաների, որոնք շարունակվել են ուսումնարանային բաժնում: Այդ առարկաներն են՝ գեղարվեստ և գիտություն: Գեղարվեստ առարկայի դիմաց որպես բացատրություն կարդում ենք՝ «գծագրություն և ազգային երգ»: Սա՝ նախակրթարանի առաջին և երկրորդ դասարաններում: Հետագայում այդ առարկան եղել է գծագրություն, հայկական ձայնագրություն, գեղագրություն, իսկ վերջին դասարանում՝ մանրանկարչություն:

Նշանակում է վարժարանի ծրագիրը կազմողները հաշվի են առել, որ կլինեն մարդիկ, որոնք կցանկանան զբաղվել երաժշտությամբ ու մանրանկարչությամբ, գրչագրությամբ, այլ խոսքով մասնագիտություններ, որոնք վաղ միջնադարից սկսած այնքան բուռն ծաղկում էին ունեցել Երզնկայում և ցանկալի է համարվել շարունակել այդ ավանդույթը:

Գիտություն առարկայի տակ էլ հասկացել են բնագիտություն, մարդակազմություն, ուսումնառության վերջին դասարանում արդեն՝ քիմիա և ֆիզիկա: Վերջինիս համար ուսուցիչ չլինելու պատճառով որոշ տարիներ չի ավանդվել:

Այս ծրագիրը հետագայում կրել է որոշ փոփոխություն, երբ արգելվել է ոչ միայն հայոց պատմությունն ու Հայաստանի աշխարհագրությունը, այլև ազգային երգը: Դրանով հանդերձ, պետք է ասել, որ խստությունները մայրաքաղաքում ավելի չեչտված են կիրառել, քան երկրի հեռավոր անկյուններում, որտեղ թույլ է եղել լրտեսների հսկողությունը, եթե չասենք հազվադեպ է պատահել, որ լինեն մատնություններ:

*3. **Դասավանդման մեթոդը:** Առաջին բանը, որ գրավում է ուշադրություն, դասավանդման սխոլաստիկ մեթոդի փոխարինումն է գիտակցական, տրամաբանական ուսուցման մեթոդով: «Ընկերական վարժարանի» Տեղեկագրում այդ մասին կարդում ենք. «Դասախոսական եղանակը գլխավորաբար հետևյալ երկու սկզբնաց վերա հիմնյալ են. 1. Ամեն ուսումն (յուրաքանչյուր դպրոցական շրջանի մեջ) ուսանողաց՝ իրենց հասակին կարողության և ֆիզիկական ու մտավոր զարգացման չափովը ավանդել. 2. ուսումն ավանդել պարզ, ամփոփ, դյուրըմբռնելի և միանգամայն զբոսեցուցիչ եղանակավ»:*

Հին դպրոցի պատժական մեթոդների վերացումը Ընկերական վարժարանում, ֆալախկայի փոխարինումը համոզչական պատիժներով, հետապնդել է մի նպատակ՝ աշակերտությանը պատվաստել անհատական արժանապատվության գիտակցություն:

*Ինչպես հետագայում Կարնո Սանասարյան վարժարանում, ավելի ուշ՝ Կ. Պոլսի Կեդրոնականում, Ընկերական վարժարանում ուսուցիչներն աշակերտներին դիմել են **պարոն** բառով: Սա սովորական չոյանք չի եղել, այլ նպատակ է ունեցել ամրացնել աշակերտի մեջ այն գիտակցությունը, գաղափարը, թե նա արդեն պատրաստվում է հասարակությանը օգտակար քաղաքացի դառնալու, դուրս է եկել երեխայության տարիքից:*

«Դասախոսք,- կարդում ենք Տեղեկագրում,- իբրև ճշմարիտ բարեկամ և ընկեր ուսանողաց, մեծ հարգանոք և քաղցրությամբ կվարվին նոցա հետ և որոց սրտի մեջ կջանան պատվո և վեհանձնության զգացմունք զարթուցանել: Բռնություն, գանակոծություն և այլ նըմանօրինակ փտած խիստ միջոցներ խպառ արտաքսված են վարժարանես»[1]:

Կանոնադրության մեջ կան կետեր, որոնք վերաբերում են դպրոցի ներքին կարգուկանոնին, աշակերտների ժամանակին դպրոց գալուն ու վերադարձին, ճաշերի ժամերին, փոխադարձ հարգանքին, զգեստների մաքրությանը և այլն: Ուշագրավ է այդ կանոնադրության մեջ «ամեն պարագայի մեջ մաքուր հայերեն խոսիլ» արտահայտությունը:

Ընկերական վարժարանում ամեն ամիս գումարվել են ծնողական ժողովներ, որտեղ ոչ միայն տեղեկություններ են տրվել աշակերտների առաջադիմության, ետ մնացողների վիճակի մասին, այլև լսվել են զեկուցումներ, ճառեր, տրամախոսություններ հենց աշակերտների կողմից արտասանված: Նման հանդիպումներ աղջիկների համար կազմակերպվել են երկու ամիսը մեկ անգամ:

---

[1] *«Ընկերական վարժարան Եկեղյաց», էջ 16:*

Վարժարանին կից գործել է Սանուց միությունը, որը ստեղծել է գրադարան, աշխատել ճոխացնել այն նոր գրքերով: Կիրակի օրերը հավաքվել են բարձր դասարանի աշակերտները և զբաղվել են ընթերցանությամբ կամ գրական նյութերի շուրջ վիճաբանություններ ունենալով:

Մի ընկերություն էլ ստեղծվել է մանկավարժական աշխատանքներին օժանդակելու համար: Այդ ընկերության պարտականություններից մեկն է եղել ծնողների կապի ուժեղացումը դպրոցի հետ, միաժամանակ աշխատել վերացնել ուսուցչի և աշակերտի միջև գոյություն ունեցող անջրպետը, մտերմացնել նրանց, վերացնել «ծառայական երկյուղն» և աշակերտներին վարժեցնել «ազատության և համարձակության», ինչպես կարդում ենք Կանոնադրության մեջ:

Թե երգնկացիները որքան են գնահատել Ընկերական վարժարանի հենց առաջին տարվա աշխատանքները, երևում է այն համախոսականից, որ նրանք ուղղել են դպրոցի հիմնադիրներին 1881 թ. հունվարի 18-ին:

Որպես պատմական ուշագրավ վավերագիր մեջ ենք բերում այդ ուղերձը նույնությամբ.

«Պատվարժան տյարք Հիմնադիրք Ընկերական վարժարանի Եկեղյաց:

Վարժարանիդ աշակերտաց ծնողք սրբազան պարտավորություն մը կհամարին իրենց խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը այսու մատուցանել պատվարժան հիմնադիր տյարցդ, որ հայրենասիրական ոգվով բարոյապես և նյութապես այնչափ գոհողություն հանձն առած եք ազգային մանկտվույն կրթության խընդիրն քաջապես առաջ վարելու և հայրենյաց օգտակար և ճշմարիտ զավակներ պատրաստելու, որո մի մեծ ապացույցն է Վարժարանիդ աշակերտաց ամենասուղ միջոցի մեջ ունեցած հառաջադեմ վիճակը, որ հաստատված է թե՛ տարեկան քննությանց միջոցին քննիչ մեծապատիվ տյարց տված վկայությամբ, թե՛ մեր ծնողացս առօրյա քննություններովն: Մասնավորապես երախտապարտ եմք Վարժարանիդ պատվարժան ուսուցչաց, որոց անձնվեր ջանից և կատարյալ հմտության արգասիք են ընկերական սանուց ստացած սրտի և մտքի այն ամեն կրթություններն, որք ճշմարիտ դաստիարակության հիմունք են և հայ ազգին ու ներկա դարուս պիտույից իրապես կհամապատասխանեն:

Ուստի, մեծապատիվ տյարք, մեր անհուն գոհունակության իբր դուզնաքյա նվեր՝ հաճեցեք սույն պարզ ու անկեղծ ուղերձն ընդունիլ

և հրատարակել տալ Վարժարանիդ տարեկան Տեղեկագրույն հետ ի մխիթարություն հայերենյաց և ի պարծանս Երիզայի: 18 հունվար, 1881, Երիզա: Ստորագրությունք»[1]:

Ընկերական վարժարանի համբավը կարճ ժամանակում այնքան է մեծացել, որ ոչ միայն Երզնկա քաղաքից, մոտակա գյուղերից, այլև Հայաստանի այլևայլ շրջաններից աշակերտներ են ուղարկվել այնտեղ սովորելու. աշակերտների մեջ եղել են կարնեցիներ, բայբուրդցիներ, տրապիզոնցիներ:

Մամուլում տպագրված մի հոդվածից իմանում ենք, որ Երզնկայի դպրոցների առաջադիմությունը արձագանք է գտել անգամ փարիզյան մամուլում[2]:

Հիմնադրումից չորս տարի հետո վարժարանը տվել է իր առաջին շրջանավարտները, որոնցից մի քանիսը իսկույն աշխատանքի են անցել Երզնկայում, մի քանիսն էլ ուղարկվել են Կ. Պոլիս՝ կատարելագործվելու: Շրջանավարտներից երեքն էլ, որոնք եղել են ամենից բարձր ցուցանիշներով աշակերտները, պահվել են Ընկերական վարժարանում՝ ուսուցչի պաշտոնով:

Հետագայում ավելի է մեծացել շրջանավարտների թիվը, որոնք նկատելի դեր են կատարել Երզնկայի, Կամախի, Դերջանի մտավորական կյանքում:

Տարեցտարի, սակայն, համիդյան խստությունների սաստման զուգընթաց՝ ծանրացել է վարժարանի վիճակը: Հարուստները, առ ի զգուշություն, թուլացրել են իրենց կապը դպրոցի հետ: Խախտվել է բյուջեն:

Ընկերական վարժարանը 1884 թ. կանգնել է նյութական նկատելի դժվարության առաջ: Հարկ է եղել դպրոցի վիճակը ներկայացնել մամուլում և օժանդակություն խնդրել: Զմյուռնիայի «Արևելյան մամուլը» տպագրելով վարժարանի կողմից ուղարկված մի գրություն, անում է ուշագրավ եզրակացություններ:

«Ցավալի լուրեր կհասնին մեզ Երիզայի Ընկերական վարժարանի արդի վիճակին վրա, որ նյութական տագնապի մեջ կգտնվի: Արդեն հայտնի է, որ այս վարժարանը Հայաստանի առաջին վարժարաններեն մին է, ըստ վկայության հայազգի և օտարազգի ականավոր անձանց: Անչուշտ կրթության դատն զգալի հարված մը պիտի կրե, եթե երբեք այդ կրթարանը քայքայի:

---

[1] «Ընկերական վարժարան եկեղյաց», էջ 8:
[2] «Արևելյան մամուլ», հունիս, 1884, էջ 27–30:

Խմբագրությունս պարտ կհամարի կրթասեր ազգայնոց և կրթական ընկերությանց ուշադրությունը հրավիրել Ընկերական վարժարանի այդ անկայուն վիճակին վրա, որ փութան կարևոր աջակցությունն ընձեռելու ի սեր կրթության Հայաստանի մանկտվույն բարօրության: Քանի որ Ընկերական վարժարանի արտադրած օգուտները Հայաստանի զանազան կողմեր կրնան փոխ, ազգասիրության պարտ մը կատարած պիտի լինին անոնք որ դրամական նպաստներ պիտի հայթայթեն այդ վարժարանին: Տարակույս չունինք, որ Հայոց Միացյալ ընկերությունք պիտի չարունակեն իրենց նպաստն և չպիտի թողուն որ Ընկերական վարժարանը կործանի»:

Հետաքրքիր է, որ երգնկացիներն ակնկալել են նաև ռուսահայերից օգնություն ստանալու հանգամանքը. «Ռուսական Հայաստանի և արտաքո բնակյալ մերազնյայք, եթե լավ տեղեկություն ունենան Ընկերական վարժարանի վերաբերյալ և զայն ճանաչեն ինչպես որ է, պիտի փութան իրենց նպաստով քաջալերել, ինչպես քաջալերել են արդեն մի չարք կրթական հաստատություններ»[1]:

Ընկերական վարժարանի վարչությունը դիմել է Կ. Պոլիս և Միացյալ ընկերությունից նյութական օգնություն խնդրել: Ստացել է որոշ բան, սակայն դրանով դրությունը չի փոխվել:

Տեսուչ Ս. Ամատյանը, չկարողանալով տոկալ տևական դժվարություններին, հրաժարվել է իր պաշտոնից և մեկնել է ծննդավայրը՝ Արաբկիր:

«Ընկերականի աստղը այսպես մարելու վրա՝ վերջին ճիգ մըն ալ ի գործ կը դրվի: Դպրոցի տնօրենության կհրավիրվի Միհրան Խորթումճյան, որ զորավոր նկարագրի և կամքի տեր, լուրջ ու հեղինակավոր, վերջին ծայր կարգապահ ու խստապահանջ մեկը ըլլալով՝ կը հաջողի վարժարանը ներքնապես բարեկարգել, բայց հիմնադիր անդամները այլևս չկրնալով կուրծք տալ ու դիմագրավել դժվարությանց, մանավանդ դրամական տագնապին, դպրոցը կը փակվի վերջնականապես, որպես շողշողուն աստղ 6–7 տարի Երզընկայի կրթական ասպարեզին վրա փայլելե հետո»[2]:

Ընկերական վարժարանի տնօրինությունը սովորություն է ունեցել պահելու հատուկ մատյան, որտեղ իրենց տպավորություններն են գրել դպրոցն այցելած ականավոր մարդիկ: Հետագա քաղաքական փոթորիկները ուր են նետել այդ արժեքավոր մատյանը, հայտնի չէ: Բարեբախտաբար 1881 թ. լույս տեսած երկամյա Տեղեկագրում մեջ

---

[1] *«Արևելյան մամուլ», 1884, հունիս, էջ 30:*

[2] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 132:*

են բերված այցելուներից մի քանիսի տպավորությունները, որոնք այնքան կարևոր են Ընկերական վարժարանի կշիռը հասկանալու տեսակետից:

Հայտնի բանահավաք Գ. Սրվանձտյանցը, որ 1879 թ. այցելել է Երզնկա և իր «Թորոս աղբար» արժեքավոր գրքում համառոտակի նկարագրել ճանապարհորդությունը, Ընկերական վարժարանի տպավորությունների մասյանում թողել է հետևյալ գրությունը, «1879 մայիս 14. Երիզայի հայոց Ընկերական վարժարանին այցելություն ընելով թե կանոնադրությունը, թե օրագրությունք և թե դասերու մեթոդները ուշադրության առնելով, մեծ հույս ունեցա թե սույն նորահաստատ վարժարանը օր ըստ օրե արագ արագ պիտի հառաջադիմե փութաջանությամբ դաստատուաց և խնամակալությամբ հիմնադրաց, որոց ի քաջալերս գոհություն և օրհնություն կը նվիրեմ սրտագին»[1]:

Խարբերդի առաջնորդ Կարապետ ծ. վ. Բագրատունին, Կ. Պոլիս մեկնելիս այցելել է Երզնկա, ներկա գտնվել Ընկերական վարժարանի ավարտական քննություններին և տպավորությունների մատյանում գրել է, թե ինքը շատ գոհ է մնացել աշակերտների առաջադիմությունից: «Կը քաջալերեմ թե հիմնադիր խորհրդո մեծ. անդամք և ուսուցիչք և աշակերտք, զի առավել ևս աշխատությամբ քայք և լույս տան դպրոցին և Երիզայի փառքը բարձրացունեն, զի փառք Երիզայի ընդհանուր ազգության կվերաբերի. և նախանձելի լինին այլևայլ գավառաց դպրոցներուն և հայ ժողովրդյան»[2]:

Կարնո անգլիական հյուպատոս Հենրի Թրոթերը հետևյալն է գրել. «Պատիվ ունեցա Երիզայի Ընկերական վարժարանը այցելելու. ուրախ եմ աստ արձանագրելու, թե աշակերտք լեզվագիտության և աշխարհագրության մեջ գոհացուցիչ հառաջադիմություն մի ըրած են խնամոք յուրյանց փութաջան դաստիարակաց: Դպրոցին մեջ տեսնված կարգ ու կանոնը և աշակերտաց համարձակությունը պայծառ ապագա մը կը խոստանան»[3]:

Կարնո ռուսական դերհյուպատոս Կ. Կամսարականի կարծիքը. «Շատ ուրախ եմ, որ Երիզայի մեջ մի այսպիսի բարեկարգ վարժարան տեսա, որ իրավամբ դպրոց կոչվելու արժանի է, և ավելի ուրախ եմ, որ սա Հայաստանի մեջ տեսած ամեն վարժարաններեն լավագույնն է ամենայն կերպով: 25 սեպտ. 1880, Երիզա»:

---

[1] «Ընկերական վարժարան եկեղյաց», էջ 25:
[2] Նույն տեղում, էջ 27:
[3] Նույն տեղում, էջ 29–30:

Դպրոցի ազգային ոգու մասին բնութագրական է Սրապիոն Սևայանի կարծիքը. «Հայրենասիրական եռանդը, որ կը ներշնչվի աշակերտաց,- գրում է նա,- միանալով բարոյականին և խոհուն ուսման, որոնք կավանդվին տղայոց, զիրենք անտարակույս ապագային կարող, հմուտ, հայրենասեր մեկ մեկ անհատներ պիտի չինեն»[1]:

Նման բարձր կարծիք հայտնողներից մեկն էլ, Զարեհ Թորոսյանը ասել է. «Խղճի հանդարտությամբ կվկայեմ, թե անհամեմատ բարձր է Հայաստանի բազմաթիվ քաղաքաց ամենեն լավ դպրոցներեն»:

Մեզ հասել են Ընկերական վարժարանի առաջին երկու տարիների աշակերտների անունները, ուսման առաջադիմության ցուցանիշներով: Այդ տախտակից երևում է, որ վերջին դասարանների աշակերտներն անհամեմատ ավելի բարձր թվանշաններ են ստացել, ինչ որ վկայում է նրանց բացարձակ հասունության մասին: Այսպես՝ 5-րդ դասարանի ինը աշակերտներից հինգը բացարձակ գերազանցիկներ են, որոնցից երկուսը պաշտոնական ուսանող, այսինքն՝ վճարովի, երկուսը՝ թոշակավոր, մեկը՝ ձրի: Մյուսներն ունեն 5 և 4 թվանշաններ:

* * *

Ուշագրավ է այդ երկու տասնամյակներում Երզնկայի դպրոցներում սովորող աշակերտների թվական աճը: 1886 թվականին Երզընկայի վեց դպրոցներում սովորող աշակերտների թիվն անցել է 1000-ից, որից 700-ը տղաներ, 300-ը՝ աղջիկներ: Եթե նկատի ունենանք, որ այդ տարիներին չատ գյուղեր ունեին իրենց դպրոցները, ապա միայն քաղաքի համար փոքր թիվ չէր 1000 աշակերտը: Ուսուցիչների թիվն էլ հասել է 40-ի:

Իսկ ինչ նյութական միջոցներով են գործել դպրոցները:

«Դպրոցներու պյուտճեն կգոյանար առհասարակ թոշակներե, հանդեսներու հասույթեն և նվիրատվություններե,- գրում է Գ. Սյուրմենյանը,- պակաս մնացածը թաղի եկեղեցվո սնտուկեն կլրացվեր: Երզնկացիք միշտ ջանացած են տեղական միջոցներով հոգալ իրենց դպրոցներու ծախսերը: Քանի մը տարի միայն Կ. Պոլսո Միացյալ ընկերությունը՝ Հիսուն և Փարիզի Հայուհյացը երեսուն ոսկիով նըպաստած են Ընկերական վարժարանին»[2]:

Ինչպես Կ. Պոլսում, Երզնկայում էլ դպրոցների վրա ուժեղ է եղել մեծահարուստների ազդեցությունը, քանի որ նրանք նույնպես նյութական օժանդակություն են ցույց տվել այս կամ այն դպրոցին:

---

[1] «Ընկերական վարժարան Եկեղյաց», էջ 31:

[2] **Գ. Սյուրմենյան,** Երզնկա, էջ 145:

Տոն օրերին որպես կանոն բարձր դասարանների աշակերտները այցելել են նրանց տները, երգել ուսուցիչների սովորեցրած ազգային երգերը կամ չարականներ: Մննդի, հարսանիքի ծիսակատարությունների ժամանակ նույնպես դպրոցական երգչախմբերը փայլ են տվել հարուստների տների հավաքներին, ինչպես այդ կատարվել է Ջիվան էֆենդի Դանիելյանի եղբոր ամուսնության հանդեսին, որին ներկա է եղել նաև Թուրքական չորրորդ զորաբանակի հրամանատար Զեքի փաշան:

Երզնկայի մատաղ սերնդի դաստիարակության գործում նվազ դեր չեն կատարել մանկապարտեզները:

Մինչև 1890-ական թվականների սկզբները Երզնկայում չի եղել մանկապարտեզ այժմյան ըմբռնումով: Ամեն մի թաղ ունեցել է իր «Մաղկոցը», որտեղ թաղի երեխաներին սովորեցրել են խաղեր, երբեմն նաև ոտանավորներ, կամ գրաճանաչ դարձրել:

Հետագայում, Քրիստինյան օրիորդաց վարժարանին օժանդակող կանանց միության ջանքերով ստեղծվել է մանկապարտեզ, ապահովվել ընդարձակ սրահով, որտեղ «մոտ 250–300 մանուկներ մանկավարժական նոր մեթոդներով կկրթվեին: Հաճախ լսարաններ տեղի կունենային հոն ու ժողովուրդը խուռներամ կերթար իր փոքրիկներու խաղն ու պարը տեսնելու, անոնց զվարթ երգն ու արտասանությունները լսելու»[1]:

Մյուս թաղերում էլ ստեղծվել են նման մանկապարտեզներ, այնպես որ դարավերջին Երզնկայի հայերի գրեթե բոլոր երեխաները ընդգրկված են եղել բարեկարգ ու մաքուր մանկապարտեզներում:

Ավարտելուց առաջ Երզնկայի կրթական կյանքին նվիրված այս գլուխը, ուզում ենք հիշատակել այն մարդկանց անունները, որոնք ունեցել են կրթական, մանկավարժական երկարամյա գործունեություն, աշխատել են դպրոցներում որպես ուսուցիչ կամ տեսուչ: Դրանց մի մասը տեղացիներ են եղել, մի քանիսը՝ դրսեցիներ:

Ահա մի քանի անուններ. Մկրտիչ Հայկունի՝ աշխարհագրության ուսուցիչ. Թաղեոս Բագրատունի՝ հայկաբան, Մարգար Շավարշ, Գրիգոր Մամիկոնյան, Պետրոս Փողարյան, Մարտիրոս Թորոսյան, Օհան Սյուրմենյան, Նշան Փթիկյան, Զարմայր Ճերմակյան, Միհրան Խորթումճյան, Հովհաննես Տեր-Կարապետյան, Նշան Ոսկերիչյան, Խաչիկ Տյուրկերյան, Տիգրան Պաղտիկյան, Սողոմոն Ռեհանյան, Մանուկ Պալոյան, Տիգրան Կարմիրյան, Մերուժան Օզանյան, Պետրոս Սրապյան, Գարեգին Մարտիկյան, Հայկ Սրապյան, Գուրգեն Փա-

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 144:*

փաղյան, Կարապետ և Գրիգոր Նարնջյան եղբայրներ և այլն, մեծ մասամբ ուսուցիչներ տարբեր առարկաների:

Սրանցից Պետրոս Սրապյանը երկար տարիներ եղել է Եղնիկյան վարժարանի տնօրենը և վայելել է նույնպիսի հարգանք, ինչպիսին վայելել է Ընկերական վարժարանի տնօրեն Ս. Ամատյանը[1]:

Քրիստինյան վարժարանի երկարամյա տեսուչն է եղել Սարգիս Ահարոնյանը, նույնքան վաստակաշատ մի մանկավարժ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Երզնկայի հայկական դպրոցները ներկայացրել են հետևյալ պատկերը.

Կեդրոնական վարժարան. ունեցել է 300–350 աշակերտ, 10 ուսուցիչ:

Եղնիկյան վարժարան. ունեցել է 250–300 աշակերտ, 8 ուսուցիչ:

Արամյան վարժարան. ունեցել է 150–200 աշակերտ, 6 ուսուցիչ:

Ս. Փրկչյան վարժարան. ունեցել է 100–150 աշակերտ, 4 ուսուցիչ:

Քրիստինյան աղջկանց վարժարան. ունեցել է 350–400 աշակերտուհի, 7 ուսուցիչ:

Մանկապարտեզ՝ 150–200 երեխա, 3 ուսուցիչ-դաստիարակ:

Ուրեմն՝ բոլոր դպրոցները միասին վերցրած ունեցել են մոտ 1500 աշակերտ, 38 ուսուցիչ:

Խոսեցինք միայն քաղաքի մասին: Հայկական գրեթե բոլոր մեծ գյուղերն ունեցել են գեթ նախակրթարան, անգամ մանկապարտեզ: Նման գյուղեր են եղել Արմտանը, Մթննին, Երկանը և այլն: Ս. Ամատյանը 1887 թ. տպագրած մի հոդվածում Երկան գյուղի դպրոցի մասին հետևյալն է գրում. «Ս. Գևորգա քովն է Երկան գյուղն, որ հայաշատ, այգեվետ, դրախտաշատ գյուղ մ' է: Հայք շատ լուրջ և ճարպիկ են ի գյուղականս: Ունին երկու դպրոց, մին անհատական, մյուսն ազգային: Անհատական վարժարանին ուսուցիչն է պ. Շավարշ Զիլասդյան, ուշիմ ու ծանրաբարո երիտասարդ մը, քաղաքին Ընկերական վարժարանին ուսումնավարտներեն»[2]: Բավականին բարձր կրթական մակարդակ է ունեցել Ղարատիկին գյուղի դպրոցը, որտեղ դասավանդել են Երզնկայի Ընկերական վարժարանի շրջանավարտները: 1914 թ. դպրոցն ուներ շուրջ 30 սաներ:

Երզնկայի մտավոր կյանքում հայկական դպրոցների դերը դժվար պիտի լինի հասկանալ, առանց նկատի ունենալու տիրապետող թուրք ժողովրդի ուսման մակարդակը: Համարձակ կարող ենք ասել, որ Ընկերականի, Եղնկյանի նման վարժարաններ Երզնկայի թուրքերը

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 144:*

[2] *«Արևելյան մամուլ», 1887, էջ 438:*

ունեցան հայերից ավելի քան կես դար հետո, 1920-ական թվական-ների վերջերին:

1870–1880 թթ. Երզնկայում գործել են միայն մեջիդներին կից կրոնական տարրական դպրոցներ, որտեղ մոլլա դառնալու կոչում ունեցող երիտասարդները սովորել են արաբերեն տառերը կարդալ, Ղուրանից հատվածներ անել, առանց հասկանալու անգիր արված այդ հատվածների իմաստը, որը չէին հասկանում նաև սովորեցնող մոլլաները, արդարանալով այն իմաստուն պատճառաբանությամբ, թե դա Աստուծո լեզուն է, ամեն մարդ չի կարող հասկանալ:

Իսկ երզնկացի թուրք աղջիկները գրաճանաչ դարձան միայն այն տարիներին, երբ Մուստաֆա Քեմալը հրաժարվեց թուրք ժողովրդին տգիտության մեջ պահող «աստվածային լեզվի» տառերից և ընդու-նեց լատիներենը, այսինքն՝ 1928 թ. դեկտեմբերից հետո:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԵՐԶՆԿԱՅՈՒՄ

1. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Խոր անցյալից սկսած՝ երզնկացիների զվարճության հիմնական միջոցներն են եղել ժողովրդական խաղերը, թատերական բնույթ ունեցող ցուցադրությունները:

Այդ խաղերի մի մասն ընդհանուր էին եղել թե՛ հայերի և թե՛ թուրքերի համար, մի մասը՝ հատուկ միայն հայերին և ունեին ազգային բնույթ, պաշտամունքային հենք:

Ընդհանուր խաղերից են՝ դարագյոզը, օրթա օյունուն: Առաջինը մեծ մասամբ ցուցադրվել է սրճարաններում և հանդիսատես ունեցել միայն տղամարդկանց, այն էլ փոքր թվով, որքան որ տեղավորել է սրճարանը: Երկրորդը կրել է ավելի մասսայական բնույթ, ցուցադրվել է հրապարակներում և գեթ լուսամուտներից կամ հեռուներից դիտվել է նաև փարաջաների մեջ փաթաթված թրքուհիների կամ հայուհիների կողմից:

Թե՛ դարագյոզ խաղացողների և թե՛ օրթաօյունջիների մեջ եղել են հայեր, սակայն լեզուն երկու դեպքում էլ մնացել է թուրքերենը, որը ընդհանուր էր բոլորի համար և հասկանալի թե՛ տիրապետող և թե՛ հպատակ բոլոր ժողովուրդների համար:

Ընդհանուր ժողովրդականի և ազգային ժողովրդականի միջին տեղն է բռնել լարախաղացությունը: Ցուցադրողներն ընդհանուր առմամբ եղել են հայեր, իրենց համարել Մշո ս. Կարապետ վանքի ղուլեր, այսինքն՝ որդեգրեր, միշտ հայտնել են թե ոչ միայն այնտեղ են սովորել, այլև ս. Կարապետն է ուժ ու հնարամտություն տվել իրենց:

Զնայած ազգային, կրոնական այս երանգին, նաև այն փաստին, որ լարախաղացները հայկական կենտրոններում են կատարել իրենց ցուցադրությունները, ունեցել են նաև թուրք հանդիսականներ:

Օրեր առաջ մունետիկը հայտարարել է Մշո ս. Կարապետի ղուլերի գալու և ելույթներ ունենալու օրը, տեղը, հաճախ նաև կատարողների անունները, եթե դրանք հռչակված, հայտնի անուններ են եղել:

Կատարվել է նախապատրաստական աշխատանք, հայտարարված տեղում կանգնեցվել են ձողերը, ամրացվել պարանը:

Մի նոր մունետիկ հայտարարել է խաղի սկսվելը: Խոնված բազմության ներկայությամբ՝ լարախաղացը ոգեկոչելով ս. Կարապետին և աղերսելով նրա օգնությունը, բարձրացել է լարի վրա, սկսել է քայլել: Առաջին քայլերն անելիս ունեցել է դիտմամբ կատարված տատանումներ, սարսափ պատճառելով հանդիսականներին, թե որտեղ որ է կընկնի, ապա արդեն լիովին տիրապետած ձեռքի հավասարակշռիչ ձողին՝ սկսել է պարել պարանի վրա, դհոլ-զուռնայի ներդաշնակ հնչյունների տակ, կատարելով մերթընդմերթ վտանգավոր, երկյուղ ազդող շարժումներ:

Մինչ լարախաղացը զբաղված է եղել իր վարպետության ցուցադրումով, օգնականը ֆեսը բաց արած շրջագայել է ժողովրդի մեջ և դրամ հավաքել: Տվել են՝ ով որքան ցանկանա:

Հրապարակային նման ցուցադրությունների ժամանակ երբեմն հանդես են եկել Կ. Պոլսից կամ այլ քաղաքներից եկած կրկեսային վարպետներ, կատարել են աճպարարական փորձեր սնտուկների մեջ մտած՝ սղոցով կտրել են տվել սնտուկը լայնքով իրենց մարմնի զբաղեցրած մասով, ապա՝ դուրս եկել ողջ... հրաշքով: Կամ հանդիսականներից մեկնումեկից վերցրել են ինչ որ իր, բոլորի ներկայությամբ կոտրել են, թաչկինակ գցել վրան, տակից հանել անվնաս... հրաշքով:

Կատարվել են նաև հիպնոզի փորձեր:

Հայերը, սակայն, ունեին ազգային խաղեր, որոնք կազմակերպվում էին մասնավորապես Բարեկենդանի և Վարդավառի տոնակատարությունների օրերին: Սովորություն էր հավաքվել մեկնումեկի տունը Բարեկենդանի գիշերներին և կազմակերպել զանազան խաղեր, զվարճանալ մինչև ուշ գիշեր: Պատահում էր, որ ծպտված այցելում էին տունե-տուն, նախօրոք մշակված, բայց հիմնականում հանպատրաստի երկխոսություններով քննադատում, զրախոսում էին կամ հյուրընկալ տան մարդկանց, կամ քաղաքի երևելիներից մեկնումեկին, հաճախ հենց նրանց տներում, առանց որևէ անախորժության տեղի տալու, քանի որ Բարեկենդանի կատակները միշտ էլ ներողամտության են հանդիպել:

Եթե Բարեկանդանի խաղերը հիմնականում չորս պատերից ներս են կատարվել ձմռանը, ապա Վարդավառը նշվել է բաց դաշտերում, հաճախ կալերում ու հանդերում, ամբողջ գյուղի մասնակցությամբ: Երգնկացիներն այդ օրը նշել են քաղաքից դուրս կամ ուխտագնացություններով, կամ մոտակա զով վայրերում բաց անելով իրենց սեղանները:

Վարդավառի տոնակատարությունների ժամանակ կատարվել են ժողովրդական այնպիսի խաղեր, որոնք ունեցել են թատերական երանգ: Երբեմն ցուցադրվել են որոշակի սյուժեի վրա կառուցված խրատական կամ դաստիարակչական, նաև քննադատական պատկերներ: Ծաղրվել են անբանները, ծույլերը, վաշխառուները: Կատարող դերակատարները ոչ միայն հագուստով են ծպտվել, այլև ունեցել են յուրահատուկ դիմահարդարում, ածուխով բեղեր, մազերից, բրդից միրուքներ են պատրաստել, կեղծել են իրենց ձայնը և այլն:

Ընտանիքներում կամ սրճարաններում զվարճության սիրված միջոցներից է եղել աչուղական մրցումներն ու նրանց երգերը առհասարակ:

Երգնկացիները հաճախ են լսել տարբեր քաղաքներից եկած աչուղների, այդ թվում կովկասցիների, որոնք կատարել են արևելյան սիրավեպեր, ինչպես «Աչուղ Ղարիբ», «Ասլի Քյարամ», «Շահ Իսմայիլ»:

Պատահել է, որ աչուղը դրանք կատարել է դերասանական նկատելի վարպետությամբ, օգտագործելով դիմախաղ, ձայնի երանգավորման հարուստ գունավորում:

2. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՐԶՆԿԱՅՈՒՄ

Թատերական կյանքը Կ. Պոլսում աշխուժացում ապրեց Ղրիմի պատերազմից անմիջապես հետո, 1850-ական թվականների կեսերից, երբ Օրթագյուղ, Խասգյուղ, Բերա թաղամասերում սկսեցին գործել հայկական թատերախմբեր: Այդ խմբերում նկատելի հաստնացում ապրած դերասան-դերասանուհիներն էին որ դարձան 1861 թ. դեկտեմբերին հիմնադրված հայ առաջին պրոֆեսիոնալ թատերախմբի՝ «Արևելյան թատրոնի» կորիզը:

Կ. Պոլսում հանդես եկան հայկական մի քանի թատերախմբեր, որոնք հայերեն ներկայացումներ տվեցին մինչև ռուս-թուրքական պատերազմի վերջը, երբ 1879 թ. սուլթանական կառավարությունը արգելեց հայերեն ներկայացումները:

Մեր ծրագրից դուրս է պոլսահայ թատրոնի գործունեությունը ներկայացնելը: Մենք դրան անդրադարձել ենք մեր եռահատոր աշխատությունում[1]:

---

[1] **Գ. Ստեփանյան,** *Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատ. Ա–Գ, Երևան, 1962, 1965, 1975:*

Այստեղ նշենք միայն, որ գավառական թատրոնը ծնունդն էր պոլսահայ թատերական շարժման, գործեց նրա ավանդներին հավատարիմ, նույնպիսի նպատակադրումով, այսինքն՝ ազգային-ազատագրական գաղափարների շեփորահարում թատերաբեմից: Կարող ենք ասել, որ այդ դերը կատարեց լավագույնս, գավառական երիտասարդությանը տոգորելով վառ հայրենասիրության ոգով:

Մեր հաշվումներով հարյուրից անցնում է այն քաղաքների, վայրերի թիվը, որտեղ հայերը թատերական ներկայացումներ են տվել, հիմնականում սիրողական ուժերով: Այդ քաղաքներից են՝ Կարինը, Վանը, Երզնկան, Սեբաստիան, Տրապիզոնը, Ակնը, Խարբերդը, Եվդոկիան, Մալաթիան և այլն:

Ո՞ր թվականի, ո՞ր ամսին է տրվել թատերական առաջին ներկայացումը Երզնկայում՝ դժվարանում ենք ասել. անշուշտ դպրոցներում բարոյախոսական պատկերներ ցուցադրված պիտի լինեն՝ աշակերտների ուժերով, ինչպես այդ կատարվում էր բոլոր վայրերում: Դրանք ներկայացումներ չէին բառիս այժմյան հասկացողությամբ, թեկուզ սիրողական մակարդակի ներկայացումներ: Կատարվում էին մեծ մասամբ երկխոսությունների ձևով: Հանդիսատեսներն էլ եղել են դպրոցներում սովորող աշակերտների ծնողները, նաև քաղաքի երևելիներից ոմանք, եթե հանդեսները կատարվել են ուսանողական տարվա փակման, մրցանակաբաշխությունների օրերին: Այսպիսի աշակերտական ներկայացուցիչներ տրվել են թե՛ Ընկերական և թե՛ Կեդրոնական վարժարաններում: Դրանով հանդերձ՝ նման հանդեսների ժամանակ բարձր դասարանների աշակերտները հաճախ ի հայտ են բերել ոչ միայն արտասանական, այլև դերասանական տվյալներ, որոնք քաջալերվել են ուսուցիչների կողմից:

Բայց նույն այդ դպրոցական ներկայացումները աստիճանաբար փոխել են իրենց բնույթը՝ կապված ժամանակաշրջանի քաղաքական մտայնության հետ: Աստվածաշնչային պատկերներին փոխարինել են հայոց պատմությունից վերցված հայրենասիրական դրվագները: Կ. Պոլսում կրթություն ստացած, հայ ժողովրդի անցյալին ծանոթ մարդիկ, ուսուցչական աշխատանքի անցնելով Երզնկայում, իրենց հետ բերել են ոչ միայն նոր գաղափարներ, այլև թատրոնի ճաշակ, դրանց մասնակից են դարձրել տեղի երիտասարդությանը, կազմակերպել են թատերական փոքրիկ ներկայացումներ, որոնց մասնակցել են 2–3, երբեմն ավելի աշակերտներ: Թարգի Խաչիկ Տեր-Ստեփանյանը, օրինակ, վկայում էր, որ Ընկերական վարժարանում, որտեղ նա սովորել է 1880-ական թվականների կեսերին, ներկայաց-

րել են Արշակ Թագավորի և Շապուհի հանդիպման հետ կապված մի պատկեր, որը հանդիսականների կողմից ընդունվել է ջերմությամբ: Արշակի դերակատար երիտասարդն էլ խավաքարտից պատրաստված թագ է ունեցել, հագել ծիրանի զգեստ:

Երզնկայի թատերական շարժման սկզբնավորումը կապվում է Հակոբ Շավարշի և Մ. Կ. Գույումճյանի անունների հետ, երկուսն էլ Կ. Պոլսում կրթություն ստացած, պոլսահայ թատրոնով խանդավառված, նույնիսկ բեմում երևացած երիտասարդներ, որոնք վերադառնալով իրենց ծննդավայրը՝ Երզնկա, մեծ դեր են կատարել թե՛ կրթական կյանքում, աշխատելով որպես ուսուցիչ, և թե՛ թատերական արվեստը գավառ բերելու գործում:

Նրանց մոտիկ մասնակցությամբ 1871 թ. Երզնկայում հիմնադրվել է աշակերտական թատերախումբ, տրվել են ներկայացումներ:

Քաջալերված գնահատումից՝ մի խումբ հայրենասեր երիտասարդներ 1877 թ. դեկտեմբերին հիմնադրել են Ուսումնասիրաց ընկերությունը, նպատակ ունենալով օգնել թե՛ դպրոցներին, թե՛ թատերական շարժման ծավալմանը: Ահա այս միությունն է, որ ծրագրել է կառուցել թատերական շենք: Բայց լսենք, թե ինչ է պատմում անմիջապես աշխատանքներին մասնակցողներից մեկը՝ Ծերունի Բառնաբաս ծածկանունով 1880 թ. մամուլում տպագրած արժեքավոր հոդվածում:

«Ընկերությունը դեռ երկու ամսվան կազմված էր, երբ այս շինության ձեռնարկեց. սորա անդամները 15-են մինչև 20 տարու պատանիներ են, և այս հանդուգն գործին ձեռնարկեցին որպեսզի գոյացած հասույթը ազգային դպրոցներուն տան: Ամենեն առաջ որոշվեցավ մեն մի ընկեր 4 ոսկի վճարել (ընկերության անդամները 365 հոգիե կը բաղկանա): Հիշյալ գումարը թեև իրենց կարողութենեն վեր էր, բայց ազգային եռանդը ամեն բանի կհաղթե. անմիջապես 4 ոսկի զոհողությամբ, բայց սիրով տվին, թատրոնի շենքը սկսվեցավ, բոլոր երիզացվոց զարմանք պատճառելով այսպիսի բարձր գործ մը, գետինը ս. Երրորդության թաղեն առնվեցավ ձրի, բայց յոթը տարիեն վերջը թատրոնը ամբողջ թաղին տալու պայմանավ»[1]*:*

Պարզվում է, որ անփորձ երիտասարդներն իրենց ուժերից բարձր գործ են բռնել: Նրանք ցանկացել են կառուցել Կ. Պոլսի Կետիկ փաշա թաղամասի հայկական թատրոնի շենքի նման շենք... հաշվի չառնելով Կ. Պոլսի և Երզնկայի տարբերությունը: Պատանեկան միամիտ խանդավառությունը շուտով փոխարինվել է հիասթափության: Շենքը դեռ կես չեղած՝ գումարն սպառվել է, կանգնել է աշխատանքը:

[1] *«Մասիս», 1880, նոյեմբեր, 24-25:*

Երիտասարդները չեն հուսահատվել, կատարել են նոր հանգանակություն, միաժամանակ որոշել գիշեր-ցերեկ աշխատել շինարարության վրա. «Կորոշվի ամենը մեկանց գիշերները մինչև լույս աշխատիլ, այնպիսի աշխատություն մը, որ բնավ տեսնված չէր», գրում է նույն Ծերունի Բառնաբասը, իսկ ժամանակակիցներից մի ուրիշն էլ հետևյալն է պատմում. «Ժողովուրդը սիրահոժար, ամեն մեկը իր կարողության չափով կմասնակցեր շենքի կառուցման գործին: ... Թատրոնի շենքը բարձրացած էր, վրան ալ ծածկված, կմնար տախտակամածը. վարպետները պարապ կեցած էին՝ տախտակ չըլլալուն համար: Խումբ մը երիտասարդներ տեղե մը 20 տախտակ բերին, քիչ վերջը տերը վրա հասավ և սկսավ բարկանալ: - Եղբայր, աս ինչ խայտառակություն է, տվածս հերիք չէր՝ ատո՞նք ալ գտաք բերիք: Հոն ներկա էր Գազանճյան Կիրակոս էֆենդին, քաղաքի հարուստներեն, դառնալով մարդուն ըսավ. - Դե ինչ ես իրար անցեր, ասիկա ազգային գործ է, եթե հիմա իմ գերաններս ալ բերեն՝ ինչ կրնամ ըսել: Մարդուն խոսքը բերանն էր, իր գերաններն ալ բերին ու տարին սղոցներուն տակ, ափ ի բերան թողլով երկուքն ալ»[1]:

Շատ ուշագրավ է այս մանրադեպը, որը ցույց է տալիս թե համաքաղաքային ինչպիսի ոգևորության պայմաններում է կառուցվել Երզնկայի թատրոնի շենքը:

Վերջապես կառուցվել է: «Դերասանաց խումբը անմիջապես կկազմվի պ. Մ. Կ. Գույումճյանի տնօրինությամբ,- շարունակում է Բառնաբասը,- և կպատրաստվին առաջին անգամ պ. Գույումճյանի գրած թատերգությունը և զավեշտը ներկայացնել, տպյալ հայտարարությունները կցրվին, տոմսակները կծախվին, ամեն մարդ կսպասե նորակառույց թատրոնին մեջ ներկայացում տեսնելու: 1877 և դեկտեմբեր 22 շաբաթ գիշեր է. հանդիսականները կսկսին գալ. և ահա կառավարության կողմեն անակալ՝ հարյուրապետի մը առաջնորդությամբ 4–5 ոստիկան կուգան թատրոն և կհայտարարեն որ արգիլյալ է ներկայացում տալ, պետք է ժողովուրդը ցրվելով՝ դուրը գոցվի: Տխուր հրաման: Պահ մը առաջ, որ հանդիսականները վարագույրին բացվելուն կսպասեին՝ այս հրամանին հնազանդելով՝ տրտում տխուր կմեկնին... Իսկ ընկերությունը՝ թող ընթերցողը երևակայե թե ինչ հուսահատության մեջ կը թաղվի... ամեն բան տակնուվրա կըլլա. կփճանա նաև պ. Գույումճյանի հեղինակած աշխատությունները, որ նույն իրիկուն պիտի ներկայացվեր առաջի ժողովրդյան...»[2]:

---

[1] **Գ. Այումճեանյան,** *Երզնկա, էջ 229:*

[2] *«Մասիս», 1880, նոյեմբեր, 24–25:*

Ապա հոդվածագիրը մանրամասն պատմում է այն տառապանքները, որին ենթարկվել են թատրոնի գործի նախաձեռնողները: Դիմել են էրզրումի վալիին, որը ասել է թե առայժմ թող փակ մնա թատրոնը: «Նամակներ, հեռագիրներ կերթան, դարձյալ ոչինչ»:

Սրանով հանդերձ՝ Երզնկան ունեցել է իր ազգային թատրոնը և երզնկացիները դիտել են մի քանի պատմական ողբերգություն: Ունեցել է անգամ իր նվագախումբը:

Բեմադրել են նախ «Վարդան Մամիկոնյան» ողբերգությունը: Ահա թե ինչպես է նկարագրել այդ հանդիսավոր երեկոն ժամանակակիցներից մեկը. «Թատրոնը կտքա հորդահոս բազմությամբ, ժողովուրդը անձկանոք կսպասե վարագույրի բացվելուն: Անհամբեր սպասում: Վերջապես վարագույրը կբացվի. Քաջն Վարդան՝ բեմին վրա...: Ժողովուրդի ցնծության չափ ու սահման չկա. ուրախության հորդառատ արցունքներ և գոհունակության ժպիտ՝ բոլորի երեսին: Ներկայացումը կոգևորե բոլորն ալ: Նոր երազներ կհյուսվին, նոր ծրագիրներ կմշակվին: Գույումճյան, միշտ գնահատվելով ու քաջալերվելով կշարունակե իր ներկայացումները»[1]:

«Վարդան Մամիկոնյանից» հետո ներկայացվել են «Գայլ Վահանը», «Արշակ Բ-ն», «Արտաշես Մեծը», «Տրդատ Թագավորը», «Սև հողեր» և այլն:

Ինչպես տեսնում ենք, բոլորն էլ պատմական ողբերգություններ են, բոլորն էլ ողբերգական և հերոսական դրգավներով լի, հպարտ Արտաշես աշխարհակալից մինչև Լենկթեմուրի խժդժությունները, այլ խոսքով հայոց պատմության մի դասընթաց՝ բեմից, այն էլ Երզընկայի նման մի հեռավոր անկյունում:

Բայց ե՞րբ են ցուցադրվել վերոհիշյալ հայրենասիրական պիեսները: Գ. Սյուրմենյանի մոտ կա ժամանակաշրջանի, տարեթվի որոշակի սխալ: Նա գրում է. «Իննսունական թվականներն է. զարթոնքի օրեր են: Վերակենդանության շունչ մը կփչե մայրաքաղաքեն դեպի գավառները ու խանդավառ երզնկացիք այդ օրերուն կմտածեն ունենալ թատրոնի իրենց մասնավոր շենքը»[2]:

«Իննսունական թվականներ» նախադասությունը պարզ թյուրիմացություն է: Այդ տասնամյակը ոչ միայն չի եղել «զարթոնքի, վերակենդանության» շրջան, այլ համիդյան բռնապետության ամենամռայլ ու դաժան տարիները, երբ Վարդան Մամիկոնյանի, Արտաշես կամ որևէ այլ հայ թագավորի անունն անգամ հնարավոր չէր

---

[1] **Գ. Ստեփանյան,** *Երզնկա, էջ 229:*

[2] *Նույն տեղում:*

տալ: Այդ օրենքները պաշտոնապես ընդունվել էին 1880-ական թվականների սկզբներից և հանձնվել գրաքննիչներին:

Զարթոնքի ու վերակենդանության տարիները 1850–1870-ական թվականներին էին, ավելի որոշակի ասենք մինչև 1879 թվականի վերջը, երբ «Արա Գեղեցիկ» պատմական ողբերգությունից հետո Կ. Պոլսում արգելվեց ոչ միայն պատմական ողբերգությունների ցուցադրությունը, այլև առհասարակ հայերեն լեզվով ամեն մի ներկայացում:

Նույն Սյուրմենյանն իր արժեքավոր գրքի շատ էջերում խոսել է այդ մասին, խոսել հենց Երզնկայի դպրոցներին նվիրված գլխում, որտեղ լայնորեն օգտագործված է Ընկերական վարժարանի 1881 թվականին տպագրված Տեղեկագիրը:

Ուրեմն անառարկելիորեն կարող ենք ասել, որ «իննսնական թվականներ» արտահայտությունը վրիպում է, պետք է լինի յոթանասունական թվականներ: Բայց դա էլ չի լուծում հարցը: Ե՞րբ է ներկայացվել «Վարդան Մամիկոնյանը», որով մի փայլուն թատերաշրջան է սկսել Երզնկայի հայկական թատրոնը, դերասան, ռեժիսոր, դրամատուրգ մահտեսի Կարապետ Գույումճյանի ղեկավարությամբ:

Մեր կարծիքով դա պետք է լինի 1876–1877 թթ. թատերաշրջանը, քանի որ 1880-ական թվականների սկզբներից անհնար էր նման մի բան, իսկ 1880 թ. երզնկացիները մամուլում ողբում էին իրենց թատրոնի փակումը: Ծերունի Բառնաբասը նախընթաց շրջանի մասին չի խոսել, որովհետև «Մասիսը» կամ մի այլ թերթ արդեն գրել են այդ մասին: Նա ասում է, թե «Մասիսը» հաճախ է անդրադարձել Երզնկայի թատրոնին: Եթե ներկայացումներ տրված չլինեին՝ ինչո՞ւ պիտի անդրադառնային: Բառնաբասի խոսքը վերաբերում է երկրորդ թատերաշրջանի նախապատրաստական աշխատանքներին: Որ դա այդպես է՝ երևում է նաև Բառնաբասի հոդվածի հետևյալ տողերից. «Ահա թատրոնին վախճանը: Մի՞թե այս էր տարվան մը աշխատության բարոյական և նյութական զոհողության վարձքը: Այսպե՞ս պիտի քաջալերվեին Երիզայի դեռափթիթ պատանյակները: Ո՞չ ապաքեն նոցա մատաղ սրտերուն ազգային եռանդը մարելով՝ ապագային կենդանի դիակներ պիտի դառնան»[1]:

Ուշագրավ է այստեղ «տարվան մը աշխատություն» նախադասությունը: Ի՞նչպես կարող էր Բառնաբասը խոսել նախընթացի մասին և մեկ տարի հաշվել, երբ հոդվածի սկզբում գրել է ոչ միայն որոշակի տարեթիվ, այլև ամիս և օր՝ «Այս թատրոնը 1877 և հունիսի

[1] «Մասիս», 1880, նոյեմբեր, 24-25:

24-ին հիմնարկեցավ» խոսքերով, իսկ հետագայում էլ գրել է թե 1877 թ. դեկտեմբերի 22-ի գիշերն է խափանվել թատրոնը: Այս բոլորը նկատի ունենալով՝ մենք ընդունել ենք Երզնկայի թատրոնի բացումը ռուս-թուրքական պատերազմի հուսատու օրերին[1]:

Ժամանակակիցները գրել են միայն պատմական ողբերգությունների ցուցադրության մասին, նշել դրանց անունները: Բայց ինչպես Կ. Պոլսում, Երզնկայում էլ ողբերգություններից հետո ցուցադրվել են կատակերգություններ, զավեշտներ: Այդ մասին գրվել է, բայց չի ասվել, թե ինչ են ցուցադրվել: Եվ որովհետև մահտեսի Գույումճյանը գրել է ոչ միայն ողբերգություններ, այլև կատակերգություններ, այն էլ երզնկացիների թերությունները քննադատող գործեր, հնարավոր է որ նրա գրածները բեմադրված լինեին: Ունենք գրավոր վկայություն, որ նրա մի զավեշտը հենց Երզնկայի ջոջերի կենցաղային այլանդակությունները ցուցադրող, ներկայացվել է, սակայն անունը մեզ հայտնի չէ: Կա փաստ, որ վերոհիշյալ զավեշտից հետո Գույումճյանի չուրջ ստեղծվել է աննպաստ մթնոլորտ:

Ի՞նչ ճակատագիր է ունեցել այդքան տառապանքներով ու զրկանքներով կառուցված թատրոնի շենքը:

«Երզնկայի հայության պարծանք եղող թատրոնի հոյակապ շենքը քանի մը տարի գոց կմնա, ատեն մը հարդանոցի կվերածվի»: Ու մի օր էլ, 1885 թվականին, իբր թե արկածով այրվել է, հենց այն տարում, երբ, զարմանալի զուգադիպությամբ մի գիշերվա մեջ Համիդի հրամանով հիմնահատակ քանդվեց Հ. Վարդովյանի Կետիկ փաչայի թատրոնը:

Ուզում ենք, որ Երզնկայի պատմությանը նվիրված մեր այս աշխատության էջերում արձանագրվեն այն մարդկանց անունները, որոնք ամենից առավել ջանքեր են թափել թատրոնի ստեղծման գործում:

Դրանցից մեկի՝ Կարապետ Գույումճյանի մասին որոշ բան ասվեց: Ծնվել է Երզնկայում, որտեղ ստացել է նախնական կրթությունն ու աշխատել միաժամանակ: Ապա մեկնել է Կ. Պոլիս, շարունակել ուսումը: Այնտեղ էլ խանդավառվել է թատրոնով, տեսել Պ. Ադամյանի, Մ. Մնակյանի, Ս. Պենկլյանի խաղը, սովորել է նրանցից: Վարդովյանի թույլտվությամբ մասնակցել է մի քանի ներկայացումների, ներկա եղել այդ մեծ խմբի փորձերին: Լայն ծրագրերով վերադարձել է Երզնկա, նվիրվել ուսուցչության, ձեռք բերել հեղինակություն

[1] **Գ. Ստեփանյան,** *Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատ. Գ, էջ 219-225:*

մասնավորապես արհեստավորական խավերում: Պոլսահայ մամուլում արդեն «քաջ դերասան» գնահատմանը արժանացած Գույումճյանը որոշել է Երզնկայում զարկ տալ թատերական արվեստին: Գրել է պիեսներ, մեծ մասը՝ կատակերգություններ և զավեշտներ, վերցված Երզնկայի մեծահարուստների կյանքից: Դրանցից ոչ մեկը մեզ չի հասել, ուստի չգիտենք, թե գեղարվեստական ինչ արժեք են ներկայացրել: Կան վկայություններ, որ այդ զավեշտներից մեկը բեմադրվել է, մի քանիսն էլ ընթերցվել են գրական հավաքույթներում և տեղի երևելիներից ոմանք թափանցիկ ակնարկներ են տեսել իրենց հասցեին, տեսել են իրենց բարոյական մեղանչումները և դրա համար թույլ չեն տվել, որ ներկայացվեն: Գուցե մասամբ էլ այդ մեծահարուստների մատն է խառն եղել թատրոնի փակման գործին:

Գույումճյանից բացի՝ Երզնկայի թատերական շարժմանը մեծապես օժանդակել են Համբարձում Սյուրմենյանը, Նշան Քաջյանը: Սրանք երկուսն էլ հետագայում զոհ են գնացել Մեծ եղեռնին: Հիշատակվում են նաև այլ անուններ, ինչպես Միքայել Թադյան, Սարգիս Տեր-Ստեփանյան, Մկրտիչ Ապտալյան, Ավետիս Քաջբերունի և ուրիշներ: Բոլորն էլ եղել են վերոհիշյալ Ուսումնասիրաց միության գործուն անդամներից և մասնակցել են թատերական շարժմանը:

1880-ական թվականներից մինչև 1908 թ. օսմանյան սահմանադրության հռչակումը Երզնկայում տրվել են միայն աշակերտական ներկայացումներ, ցուցադրելով բացառապես բարոյախոսական պատկերներ և զավեշտներ, մեծ մասամբ թարգմանական:

Մեկ էլ օսմանյան սահմանադրության հռչակումից հետո է, որ ինչպես գավառական մյուս քաղաքներում ու հենց մայրաքաղաքում, Երզնկայում էլ ստեղծվել են հնարավորություններ՝ թատերական ընդհատված կյանքը վերսկսելու: Հիմնադրվել են մշակութային, բարեգործական և այլ բնույթի մի քանի ընկերություններ, որոնց մասին խոսելու ենք հետագա էջերում:

«Կրթասիրացը» և «Եկեղյացը» միացել են և կազմել «Եկեղյաց կրթասեր միությունը», որն ունեցել է լսարան-ակումբ:

Հենց վերոհիշյալ միությունն էլ ստեղծել է թատերախումբ, կազմված տեղական սիրողական ուժերից:

Նկատի ունենալով, որ թատրոնի նոր շենք կառուցելը երկար ժամանակ և նյութական մեծ զոհողություններ էր պահանջելու, Միությունը վարձել է մի մեծ տուն, դարձրել թե իր համար կենտրոնատեղի և թե գրադարան-ընթերցարան: Իսկ այդ շենքի մեծ սրահը օգտագործվել է դասախոսությունների և ներկայացումների համար:

«Որպես առաջին գործ,- գրում է թատերախումբը և ներկայացումները կազմակերպողներից Դերենիկ Ճիզմեճյանը,- սկսանք պատրաստել «Ռուզանը»՝ հայոց պատմութենեն առնված խաղ մը: Ամսվան մը տքնաջան աշխատանքե հետո վերջապես կրցանք թատրոնի բացման լուրը տալ հասարակության: Ու ահա հանկարծ հարց մը ցցվեցավ մեր առջև: Միության ժողովին մեջ խնդիր հարուցվեցավ թե կիներն ալ պիտի կրնայի՞ն տղամարդոց հետ թատրոն գալ: Ոմանք կառաջարկեին կանանց համար առանձին ներկայացնել, որուն թատերական խումբը կհակառակեր: Ժողովը ի նպաստ խումբին որոշում տվավ»[1]:

«Ռուզանը» աննկարագրելի խանդավառություն է առաջացրել երգնկացիների մեջ: «Համիդյան օրերու կաշկանդումներեն հետո ազատության այս փոքրիկ նշույլը կշլացներ քաղաքացիները»:

«Ռուզանից» հետո թատերախումբը բեմադրել է Ա. Ահարոնյանի «Արցունքի հովիտը», որը նույն տպավորությունը չի գործել հանդիսականների վրա իր այլաբանական, սենտիմենտալ բովանդակության պատճառով:

Երգնկայի այս ներկայացումները դիտողների մեջ եղել են մեծ թվով թուրքեր՝ բարձրաստիճան զինվորականներ, պետական պաշտոնյաներ, հարուստ առևտրականներ: Եթե նրանցից մի քանիսը հայկական ներկայացումները դիտել են պարզապես հետաքրքրությունից դրդված, ապա ոմանք առաջադրանք են ունեցել հետևելու, թե հայերը ինչպես էին օգտագործում օսմանյան սահմանադրության ընձեռած ազատությունը:

Թուրքերը առաջարկել են հայկական թատերախմբին՝ թուրքերեն լեզվով բեմադրել Նամըկ Քեմալի «Սիլիստրա կամ Հայրենիք» դրաման, որը Կ. Պոլսում, Հ. Վարդովյանի թատրոնում բացառիկ հաջողություն էր ունեցել 1870-ական թվականների կեսերին և պատճառ էր դարձել հեղինակի բանտարկությանն ու աքսորին: Հիմա Կ. Պոլսում ամենից փնտրված հեղինակներից էր Նամըկ Քեմալը:

Թատերախումբը ընդունել է առաջարկը և նախապատրաստական մեծ աշխատանքից հետո բեմադրել այդ պիեսը, ունեցել հաջողություն թուրքերի մոտ: Դիտել են միայն թուրք տղամարդիկ և հայերը, քանի որ հարեմական կաշկանդումները թուրք կնոջը վանդակի մեջ պահեցին մինչև հանրապետության հռչակումը:

Նամըկ Քեմալի «Հայրենիք» պիեսի ներկայացումը դիտողների մեջ եղել է թուրքական 4-րդ զորաբանակի հրամանատար Զեքի

---

[1] **Գ. Ստեփանյան,** *նշվ. աշխ., էջ 232:*

փաչան, բարձրաստիճան այլ զինվորականների հետ: Նրանք հայտնել են իրենց գոհունակությունը և նյութապես օգնել թատրոնին:

1909 թ. փետրվարին էլ, Վարդանանց տոնի առթիվ խումբը ներկայացրել է «Վարդան Մամիկոնյան» պիեսը:

Այս բոլորը կատարվել է սահմանադրության առաջին տարում, այսինքն՝ 1908–1909 թատերաշրջանում:

Հաջորդ երկու տարիներին ներկայացումներն ավելի կազմակերպված բնույթ են կրել: Թատերական եղանակի ամիսներին գրեթե ամեն ամիս, երբեմն ամիսը երկու անգամ ներկայացումներ են տրվել:

«Հարուստ թե աղքատ, այր թե կին կվազեին թատրոն,- կարդում ենք ժամանակակիցներից մեկի հուշերում,- ու ժողովուրդի հոգին թունդ կելներ, անցյալի իր հիշատակներով և գտած ազատությունով կապրեր: Տեղ կար՝ կուլար, տեղ կար՝ կհրճվեր, կհպարտանար իր անցյալի փառքերով»[1]:

Սկզբում թատերախումբը բաղկացած է եղել միայն տղամարդկանցից: Կանացի դերերը կատարել են փոքրահասակ տղաները: Հետագայում, երբ Կովկասից ուսուցչական պաշտոնով Երզնկա են եկել Լիպարիտ և Անահիտ Ավետիսյան ամուսինները, կանացի դերերը կատարել է Անահիտը, համարձակություն ներշնչելով նաև երզնկացի մեկ երկու օրիորդների:

Վերոհիշյալ զույգի գալուց հետո խումբը դարձել է ավելի ուժեղ, ի վիճակի ավելի բարդ պիեսներ ներկայացնելու:

Բեմադրել են Աբելյան–Արմենյան թատերախմբի խաղացանկից տասից ավելի գործեր՝ Ալ. Շիրվանզադեի «Պատվի համարը», «Կործանվածը», «Նամուսը», «Զար ոգին», «Եվգինեն», թարգմանական պիեսներից Ջիոկոմետիի «Ոճրագործի ընտանիքը», Մոլիերի «Բոնի ամուսնությունը», «Ակամա բժիշկը», նաև Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները», Լ. Շանթի «Ճամբուն վրա» և այլն:

Այսպիսի խաղացանկ ունեցել են միայն Թիֆլիսի և Կ. Պոլսի այդ տարիների կայուն թատերախմբերը: Դժբախտաբար Երզնկայի այդ տարիների թատերական ներկայացումները թույլ արձագանք են գտել մամուլում և մենք չգիտենք թե ովքեր են կատարել Էլիզբարովի, Բարխուդարի, Կորրադոյի նման բարդ դերերը:

Թատերախմբի մակարդակի մասին է վկայում այն իրողությունը, որ ներկայացումներ է տրվել նաև Երզնկայի գյուղերում: Մեծ Ագարակում տրված ներկայացումը դիտելու են եկել մոտակա գյուղերից սայլերով եկած գյուղացիներ: Վկայություն կա նաև Ղարատիկին գյուղի դպրոցական թատերախմբի մասին:

---

[1] **Գ. Ստեփանյան,** *նշվ. աշխ., էջ 233:*

«Մահմուտցիք ու Մեղուցիկ գյուղերն իրենց բեմը ունեին, ուր պարբերաբար ազգաչունչ կտորներ կբեմադրվեին: Մթնի գյուղը նույնպես իր բեմը ուներ, ուր խաղցվեցավ «Ավարայրի արծիվը», «Արցունքի հովիտը», «Ջար ոգի» ու այլ ազգային ու պատմական խաղեր»:

Կարևորն այն չէ, թե ինչ բեմեր են եղել դրանք, ովքեր են կազմակերպել ներկայացումները, ովքեր ինչ դերեր են կատարել: Վարդան Մամիկոնյանը և Արտաշես Թագավորը գուցե հաճախ մարագներում, խարխուլ տախտակամածների վրա են երևացել. էականն այն խանդավառությունը, ոգևորությունն է, որ ծայր առնելով մայրաքաղաքից, տարածվել էր ամենուր, իր շրջապտույտի մեջ առնելով մտավորականին էլ, վաճառականին էլ, արհեստավորին էլ ու գյուղացուն էլ:

Երզնկայի հայերեն ներկայացումները շարունակվել են մինչև Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը:

3. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՐԶՆԿԱՅՈՒՄ

Մինչև 1860-ական թվականների ազգային զարթոնքի տարիները Երզնկայում իշխողը եղել է եկեղեցական երաժշտությունը: Խոր անցյալից երաժշտության ուսուցումն էլ մնացել է հոգևորականների մենաշնորհը՝ վանքերում և եկեղեցիներում: Մեր դպրապետները ոչ միայն եկեղեցու շրջանակում երգչախումբ են ղեկավարել, շարականներ սովորեցրել, այդ երգչախմբերով մասնակցել արարողություններին, չունչ ու գույն տվել պատարագին, այլև իրենք մասնակցել են տոնախմբությունների, երեկույթների: Համատարած խավարի տարիներին նման ելույթները այժմյան հասկացողությամբ յուրահատուկ համերգներ էին, մանավանդ որ քաղաքական թույլատու պայմաններում երբեմն իրենց ծրագրերում ունեցել են շարականներից բացի՝ աշխարհիկ երգեր:

Դպրապետներից առավել հայտնիները, որոնք եղել են հմուտ ոչ միայն հայկական նոտագրությանը, այլև եվրոպական, երաժշտության դասեր են տվել հարուստ ընտանիքների երեխաներին, այդ թվում՝ աղջիկներին: Սրանք էլ իրենց հերթին սովորեցրել են ուրիշներին:

1860–1870-ական թվականներին Երզնկայում ճանաչված դպրապետի համբավ է վայելել Նոթաջի Տեր Հարությունը: Օժտված գեղեցիկ ձայնով և երաժշտական լայն գիտելիքներով, եղել է ամբողջ

քաղաքի սիրելի երաժիշտը, մեծահարուստների սեղանների զարդը, միաժամանակ ունեցել է կրթական, մանկավարժական լայն գործունեություն: Աճեցրել է տասնյակ երաժիշտներ, ղեկավարել եկեղեցական երգչախմբեր:

Նույնքան փնտրված դպրապետ է եղել Խաչիկ Տյուրկերյանը՝ Մեղուցիկ գյուղից: Նա երաժշտական կրթությունն ստացած է եղել Կ. Պոլսում, Համբարձում Լիմոնճյանի, Արիս Հովհաննիսյանի մոտ: Միաձայնամանակ որպես երաժշտության ուսուցիչ Կ. Պոլսում աշխատելուց հետո վերադարձել է Երզնկա, նվիրվել ձայնագրության ուսուցմանը թե՛ որպես եկեղեցու դպրապետ և թե՛ որպես երգեցողության ու ձայնագրության ուսուցիչ դպրոցներում: Թե ինչպիսի խոշոր դեր է կատարել այս մարդը Երզնկայի երաժշտական կյանքում, երևում է ժամանակակիցներից մեկի հետևյալ վկայությունից. «Ան հիմնովին բարեփոխեց ու բարեկարգեց եկեղեցվո բոլոր երգեցողությունները, անոնց մեջ կատարյալ հեղաշրջում հառաջ բերելով: Մկրտության, հարսանեկան, թաղման և մասնավորապես պատարագի արարողությունները ամենքն ալ էջմիածնա եղանակին դարձուց: ... Ան որ թաղին մեջ որ պաշտոնավարեր, անոր եկեղեցին առանձին թռիչք ու փայլ կառներ. ժողովուրդը խուռներամ կդիմեր այն եկեղեցին, ուր Տյուրկերյանի խումբը կերգեր»[1]:

Երզնկայի եկեղեցիներն ու դպրոցները միմյանց ձեռքից խլել են նրան: Աշխատել է ս. Նշան թաղային վարժարանում, ապա՝ ս. Ներսես Հայրապետի գիշերօթիկում, ավելի ուշ քաղաքի Կեդրոնական վարժարանում, անչուշտ միշտ կապված եկեղեցական երգչախմբերի հետ:

Այս երկուսից բացի՝ որպես հայտնի երաժշտագետներ հիշվում են նաև Օհան Սյուրմենյանը, Ստեփան Ավագյանը, Ներսես Տեիրմենճյանը, Սիսակ Կապուտիկյանը, Կարապետ Նարնջյանը, Արշակ Մատթեոսյանը և ուրիշներ:

Աշխարհիկ բովանդակությամբ երգերը, արևելյան սիրավեպերը («Աշուղ Ղարիբ», «Ասլի Քյարամ», «Շահ Իսմայիլ» և այլն), հիմնականում կատարվել են աշուղների կողմից, սրճարաններում, և դուրս գալով սրճարանների պատերից, թափանցել են տները, կատարվել գեղեցիկ ձայնով օժտված մարդկանց կողմից: Կատարվել են հաճախ ամբողջ սիրավեպերը, անչուշտ մեծ մասամբ թուրքերեն, հազվադեպ՝ հայերեն:

Առհասարակ թուրքական երգը տարածված է եղել հայերի մեջ, անչուշտ փաստ է նաև այն, որ այդ երգերն ստեղծողների մեջ մեծ

---

[1] **Գ. Ստեփանյան,** *նշվ. աշխ., էջ 161:*

թիվ են կազմել հայերը: Բովանդակություններն էլ, լինելով սիրային կամ կենցաղային, հարազատ է եղել բոլորին, անկախ ազգությունից:

1860-ական թվականների ազգային զարթոնքի առաջին տարիներից թուրքերեն երգը աստիճանաբար իր տեղը զիջել է ազգային հայրենասիրականին: Լայնորեն տարածված են եղել Ղ. Ալիշանի, Միք. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Մ. Պեչիկթաշլյանի, Ն. Ռուսինյանի հայրենասիրական երգերը՝ «Բա՜մ. փորոտան», «Կիլիկիա», «Ազատություն», «Ի բյուր ձայնից», «Թե հայրենյաց պսակադիր» և այլն, որոնք կատարվել են մինչև համիդյան բռնապետական կաշկանդումների սաստկացումը, արգելվել են, մեկ էլ կրկին լսվել օսմանյան սահմանադրության հռչակումից հետո, երբ վերոհիշյալ երգերի վրա ավելացել են հայ քաղաքական կուսակցությունների սխրանքները գովերգող երգերը՝ «Դարձյալ փայլեց», «Տալվորիկ», «Հեռավոր երկիր», «Իբրև արծիվ», «Ահա կերթամ սիրելի մայր» և այլն:

Խոսեցինք եկեղեցական, ընդհանուր աշխարհիկ թուրքերեն և հայ հայրենասիրական երգերի մասին: Բայց հայ ժողովուրդը դարերի խորքից իր հետ բերել էր ժողովրդական երգի հարուստ պաշար, որոնք սակայն, հիմնականում կատարվում էին ծիսական տոնախմբությունների օրերին, ինչպես Բարեկենդանի, Վարդավառի, Տյառնընդառաջի, նաև ընտանեկան հավաքույթներում, խնջույքներում:

Վերջապես կար օրորոցային երգը: Բնորոշ է, որ հայ մայրը Երզնկայում երբեք թուրքերեն երգով չի քնացրել իր մանկիկին: Ունեցել է օրորոցային հրաչալի երգեր, որոնցից ամենից տարածվածներից է եղել «Ես քուն չունիմ անգութ մայրիկ» հրաչալի երգը, որը երգվել է նաև այս գրքի հեղինակի պապի՝ Մարտիրոսի, հոր՝ Խաչիկի, իր և որդիների ու թոռների օրորոցների մոտ, ավելի քան մեկ դարուց ի վեր:

Հայ երգերը տոնախմբությունների, ընտանեկան հավաքույթների շրջանակից դուրս գալով համաժողովրդական տեսք ստացան օսմանյան սահմանադրության տարիներին, երբ վերոհիշյալ երգերի վրա ավելացան նաև ժողովրդական երգերի կոմիտասյան մշակումներն ու չահմուրադյանական կատարումները: Դրանք խկույն անցան երգչախմբերի երգացանկերի մեջ, մտան ընտանիքները և կատարվում էին ազատորեն ամենուր: Հիմա հայ երգը կարող էր լսվել փողոցներում, աշխատանքի վայրերում, ամենուր:

Երզնկայում պարեղանակները երգվել են թե՛ հայերեն և թե՛ թուրքերեն, ինչպես հայտնի «Թամզարա» պարը, որը եղել է երզն-

կացիների սիրած պարերից, «Երզնկայի պոլկայից» հետո: Երզնկայի պոլկան նկատելիորեն տարբեր է Վանի «Ֆորկաֆորկայից» և նազանքը ավելի չեչտված, ավելի արտահայտիչ: Շատ սիրված պարերից է եղել «Նազպարը», (Զէ, չէ, չեմ կրնար խաղալ): Այս սքանչելի պարը, որը մինչև մեր օրերում պահել է հմայքը և հայկական պարի ոգին է խտացնում իր մեջ մասնավորապես դանդաղ ռիթմով ու նազանքի բազմագույն շարժումներով, ծնունդ է առել Կարինում, և այնտեղից տարածվել է ամենուր:

Օսմանյան սահմանադրության տարիներին, ինչպես Կ. Պոլսում, գավառում էլ փորձեր են արվել մինչ այդ Թուրքերենով տարածված որոշ երգեր կատարել հայերեն թարգմանությամբ: Այսպես, Կ. Պոլսի օրինակին հետևելով, Երզնկայում հայտնի «Յուրու յուրու» երգը կատարվել է «Քալե մանչս քալե, առյուծ մանչս քալե...» բառերով:

Վերոհիշյալ երգը նման կատարմամբ առաջին անգամ հնչել է Կ. Պոլսում, Համիդյան բռնապետական ռեժիմի վերջին տարիներին, մի հայ երգչուհու՝ Փիրուզ հանրմի կողմից, որը խստորեն պատժվել է այն պատճառաբանությամբ, թե «առյուծ մանչս քալե» բառերը ապստամբության կոչեր են...

Երզնկայում գործել են հատուկ նվագախմբեր, բաղկացած հիմնականում դափից, դուդուկից, ջութակից: Քաղաքն ունեցել է և սիրող և պրոֆեսիոնալ նվագախմբեր, որոնց ապրուստի միջոցը եղել է նվագելը: Զալղրջը ընդհանուր անունով կոչվող այդ նվագախմբերը հրավիրվել են հարսանեկան հանդեսների, ծնունդ-մկրտություն կոչունքների, ուխտագնացության օրերի խնջույքների: Նվագել են նաև թատերական ներկայացումների ժամանակ:

Բացի տեղում ստեղծված, աճած այս նվագախմբերից, եղել են և այլ քաղաքներից, մասնավորապես Կարինից եկած խմբեր, որոնք նվագել են հատկապես Բարեկենդանի օրերին:

Թուրքերը նման նվագախմբեր չեն ունեցել, հայերն են սպասարկել նրանց, եթե առիթը ներկայացել է: Սակայն նրանք էլ ունեցել են պետական փողային նվագախումբ՝ 4-րդ զորաբանակի կայազորին կից, բաղկացած 50 հոգուց: Այդ նվագախումբը կատարել է ոչ միայն պետական քայլերգեր, Թուրքական հայրենասիրական երգեր, այլև եվրոպական օպերաներից հատվածներ, մի բան, որ վկայում է նվագախմբի կարողության, եվրոպական նոտաներին տեղյակ լինելու մասին:

Եվրոպական նոտաներ հայկական դպրոցներում սովորեցրել են 1880-ական թվականների սկզբներից:

Երզնկայում 1880-ական թվականներին եղել է 3 դաշնամուր. մեկը գործել է Ընկերական վարժարանում, մեկը՝ Կեդրոնական, երրորդը՝ Քրիստինյան աղջկանց վարժարանում: Սրանք ընկերակցել են աշակերտական երգչախմբերի ելույթներին: Հարուստ ընտանիքներից որոշ աղջիկներ այդ դպրոցներում հետևել են դաշնամուրի՝ դպրոցական պարապմունքներից դուրս: Քաղաքի ս. Սարգիս եկեղեցին էլ ունեցել է երգեհոն, որը «Պատարագի արարողության հետ կը նվագեր»:

Ժողովրդական ավանդական դհոլ-զուռնան միշտ էլ սիրված նվագ է եղել ոչ միայն գյուղական վայրերում, այլև քաղաքում, մասնավորապես հրապարակային հանդեսների, լարախաղացական ցուցադրությունների, հարսանեկան ուրախությունների ժամանակ:

Սահմանադրության տարիներին գավառ թափանցեց նաև գրամաֆոնը, որ այն ժամանակ կոչվում էր ֆոնոգրաֆ: Հարուստ ընտանիքներում հնարավոր էր տեսնել այդ տարօրինակ, խորհրդավոր, ոմանց համար սատանայական գործիքը, որի միջից մարդիկ երգում էին առանց երևալու: Մենք երեխաներս մեր գլուխները մտցնում էինք հսկա բացված խողովակի մեջ՝ տեսնելու համար, թե որտեղ է նստել երգողը...

4. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ

Արվեստի մյուս ճյուղերը անհամեմատ թույլ են զարգացել Երզընկայում: Նախ՝ իսլամական կրոնը երբեք չի քաջալերել նկարչությունը, մասնավորապես դիմանկարչությունը, որ համարվել է Աստուծո գծած մարդկային կերպարի աղավաղում ու կեղծում: Դրանով պետք է բացատրել, որ թուրքական ազգային նկարչություն առհասարակ չի զարգացել:

Հայերն ունեցել են հայտնի Մանասների գերդաստանը, որը գործել է Կ. Պոլսում, սակայն շատ ավելի կապված է եղել եվրոպական դեսպանատների հետ, քան տեղական հայկական կամ թուրքական շրջանակների: Մանասները եղել են կաթոլիկներ, կաթոլիկ եկեղեցիների համար պատրաստել են սրբանկարներ, ինչպես և մի քանի թուրք սուլթանների դիմանկարները[1]:

Քանդակագործությունը զարգացման ամենևին հող չուներ գավառում: Գերեզմանատներում, հետևելով մեր նախնիների սովորությանը, մարդիկ հասարակ չիրմաքարերով բավարարվում էին, ա-

[1] **Y. Cark,** Türk dövleti hizmetiode Ermeniler, Istanbul, *1954, էջ 135-145:*

ռանց չռայլ քանդակազարդումների: Երզնկայի գերեզմանատների չիրմաքարերի վրա հայերը քանդակել են մի քանի խաչեր, որոնք արվեստի գործեր են եղել:

Փայտափորագրության և ոսկերչության հետևողների թիվը ավելի մեծ է եղել: Երզնկացիները, խոր անցյալից իմացել են փայտյա կաղապարների վրա քանդակել նուրբ զարդեր, որոնք օգտագործել են մանուսագործության մեջ, այսինքն՝ տպածո կտավեղենի: Նման կտորներ, ինչպես և ոսկերչական նուրբ գործվածքներ, ծխատուփեր, կանացի զարդատուփեր և այլն, այնքան մեծ արվեստով են պատրաստվել, որ տարբեր երկրների ցուցահանդեսներում արժանացել են համաշխարհային մրցանակների:

Հայերը Թուրքերի համար պատրաստել են նուրբ զարդեր պարունակող մատուցարաններ, պղնձի վրա հյուսելով գեղեցիկ նախշեր, արաբական տառերի նրբահյուս զուգորդումներ:

Մի քանի խոսք էլ ասենք Երզնկայի ընկերությունների մասին:

Վաթսունական թվականների ընկերությունների մասին առիթ ունեցանք խոսելու կրթական կյանքին նվիրված գլխում:

Սահմանադրության հռչակումից անմիջապես հետո կազմակերպվել է Հայկական բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղը, տեղի հոգևոր առաջնորդ Երվանդ վարդապետի ջանքերով: 1906 թվականին Պողոս Նուպար փաշայի նախաձեռնությամբ Եգիպտոսում հիմնադրված Բարեգործականը այդ տարիներին մասնաճյուղեր ուներ շատ քաղաքներում՝ նաև Երզնկայում: Այդ ընկերության ատենապետն է եղել Հարություն Լեփյանը, ատենադպիրը՝ Տիգրան Փափազյանը, գանձապահը՝ Գրիգոր Լեփյանը: Գործուն անդամներից են եղել Ղազարոս Մոմջյանը, Գիսակ Սյուրմենյանը, Խաչիկ Ալթունյանը և ուրիշներ:

Բարեգործականի մասնաճյուղին մեծ մասամբ հարուստներն են անդամակցել:

«Կրթասիրաց» և «Եկեղյաց» միություններն ավելի մեծ գործ են կատարել, սակայն չեն կարողացել դառնալ հայ համայնքի վրա ազդող կենտրոնաձիգ ուժեր: «Կրթասիրացի» հիմնական խնդիրներից մեկն է եղել ստեղծել հարուստ գրադարան, երիտասարդությանը կապել գրքերի աշխարհի հետ: Ընկերության անդամներից Սեպուհ Խանջյանը, Ռուբեն Անդիկյանը և ուրիշներ մեծ դժվարություններով և նյութական զոհողություններով ձեռք են բերել մի քանի հարյուր կտոր գիրք՝ հիմնականում Վենետիկում, Կ. Պոլսում, Թիֆլիսում տպագրված, որոնց թվում Ա. Արասխանյանի «Մուրճ» ամսագրի մի քանի տարվա հավաքածուները:

Գրքերն ընթերցողներին տրամադրվել են ձրի կամ չնչին վճարով, հետևելով անկորուստ և մաքուր վիճակում վերադարձվելուն: Երիտասարդությունը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել հակաբռնապետական գրքերի նկատմամբ, որոնց թվում՝ Ռաֆֆու, Ե. Օտյանի, Ա. Շիտանյանի, Ս. Բյուրատի ստվար վեպերի: Դրանք կարդացվել են հաճախ գիշերները լուսացվելով, խմբակային ընթերցումներով, այսինքն՝ երբ մեկը հոգնել է, շարունակել է կարդալ մյուսը և այս բոլորը՝ հաճախ մոմի լույսի տակ, գյուղական վայրերում՝ անգամ ձեթի ճրագի կամ մարխի լույսի: ... Երանելի օրեր, երբ ազգային ոգին ուժ է ներշնչել մարդկանց, մղել ամեն սխրանքի, դժվարության հաղթահարման:

Օսմանյան սահմանադրությունից հետո ստեղծված «Եկեղյաց միության» նախաձեռնողներն ու գործուն անդամներն են եղել Գաբրիել Նագաշյանը, Միհրան Լեփյանը, Մամիկոն Վարժապետյանը: Այս ընկերությունն էլ աշխատել է գրադարան ստեղծել, թատերական ներկայացումներ կազմակերպել, սակայն երկու միությունների մրցումը դառնալով անիմաստ, միացել է Կրթասիրացին և ստեղծվել է «Եկեղյաց կրթասեր» միությունը, որն ունեցել է 400–500 անդամ և նկատելի դեր է կատարել քաղաքի մշակութային կյանքում:

«Այս միության շուրջ,– գրում է Արմենակ Մելիքյանը,– սկզբնական շրջանին համախմբվեցան հարուստ թե աղքատ, մտավորական թե արհեստավոր անխտիր, սակայն հարուստները կամաց կամաց քաշվելով՝ հավաքվեցան Հ. Բ. Ը. Միության շուրջը և ասպարեզը ձգեցին նորահաս մտավորական սերունդին: Այդ սերունդը, պատիվ իրեն, ահագին զարկ տվավ Միության հառաջադիմության և անոր միջոցով՝ շրջանի կրթական ու մշակութային գործին: «Եկեղյաց կրթասեր» միությունը իր նպատակներու իրագործման համար ստեղծած էր Գրադարանային, Լսարանային ու Թատերական հանձնախումբեր, որոնք կընտրվեին տարեկան ընդհանուր ժողովի կողմե և կգործեին հսկիչ մարմնի մը հսկողության ներքև: Գրադարանի հանձնախումբը ուներ քանի մը հազար կտոր գրքեր, առավելապես հայերեն, գնված կամ որպես նվեր հավաքված: Այդ գիրքերը ամսական չնչին գումարի մը փոխարեն կտրամադրվեին հանրության՝ ընթերցումի համար: Միությունը ուներ նաև ընթերցասրահ մը, ուր կգտնվեին այն ատենվան բոլոր կարևոր թերթերն ու պարբերականները»[1]:

Գուրգեն Փափազյանը պատմում է. «Գրեթե ամեն կիրակի դասախոսություն կար և ժողովուրդը եկեղեցիեն հետո խուռներամ

[1] **Գ. Այուրմենյան,** *Երգնկա, էջ 231:*

կվազեր լսարան՝ միության հատուկ ժողովասրահը, օրվան դասախոսը լսելու համար: Դասախոսները առհասարակ տեղական համեստ ուժեր էին՝ ուսուցիչներ կամ նորահաս մտավորականներ, որոնք իրենց կարողության չափով կՁանային լուսաբանել հանրային բնույթ կրող խնդիրներ»[1]:

Երզնկայի երիտասարդության մտավոր կյանքում կատարված տեղաշարժերը լավագույնս երևում է հիշյալ լսարան-ակումբում կարդացված դասախոսությունների նյութերից՝ «Հողի համայնացումը», «Կրոնի ծագումը», «Օսմանյան սահմանադրությունը», «Բալկանյան ժողովուրդների ազատագրումը», Մարքսի «Կապիտալը» և այլն:

Գաղափարական ինչպիսի՜ հեղաշրջում՝ նոր սերնդի մոտ, նախասիրությունների, հետաքրքրությունների շրջանակի ինչպիսի՜ ընդլայնում, դեպի սոցիալական, քաղաքական հարցերը մղվելու ձգտում: Կրոնաբարոյախոսական թեմաների իսպառ անտեսումը հիշյալ դասախոսությունների ցանկում, ցույց է տալիս ինքնագիտակցության զարթում, միաժամանակ հոգևորական իշխանությունների ուժի թուլացում:

Ափսոս, որ չգիտենք թե Մարքսի «Կապիտալի», «Հողի համայնացման» և այլ նման բարդ հարցերի մասին ովքեր են զեկուցել և ինչ պաշարով: Պետք է ենթադրել, որ նման թեմաներով զեկուցողները եղել են հնչակյանները, որոնք 1890-ական թվականների կեսերից իրենց մամուլում խոսում էին սոցիալիզմի մասին, իսկ օսմանյան սահմանադրության տարիներին Կ. Պոլսում հրատարակում «Կայծ» տեսական պարբերականը և նրա էջերից արևմտահայ ընթերցողներին ծանոթացնում մարքսիստական գաղափարների հետ, իսկ նման պարբերականներ այդ տարիներին անարգել թափանցում էին գավառ և ընթերցվում հետաքրքրությամբ:

Զարմանալի է, բայց Երզնկայում մամուլը չոչափելի զարգացում չի ունեցել: Այստեղ կարող ենք արձանագրել միայն մեզ ծանոթ երկու օրգաններ, որ լույս տեսան օսմանյան սահմանադրությունից հետո: Առաջինը «Արդի» շաբաթաթերթն է (1909–1911), իսկ երկրորդը՝ «Արոր» ամսաթերթը (1910–1911): Վերջինս նախապես լույս էր տեսնում խմորատիպ, ապա՝ կանոնավոր շարվածքով, խմբագիրն էր Արմենակ Մելիքյանը (Մելիք-Շահ)[2]:

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 231:*

[2] **Մ. Բաբլոյան,** *Հայ պարբերական մամուլը (1794-1980), Երևան, 1986, էջ 75, 81:*

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1. ԵՐԶՆԿԱՅԻՆԵՐԻ ԱՌՕՐՅԱ ԿԵՆՑԱՂԸ, ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԸ

Երզնկայում հայերն ապրում էին առանձին թաղերում, Թուրքերը՝ առանձին: Հայերի թաղերը ընդհանուր առմամբ կոչվում էին նույն թաղում գործող եկեղեցիների անուններով:

Կանանց կյանքը հիմնականում անցնում էր տանը և թաղում, որտեղից դուրս գալու առիթ հազվադեպ էին ունենում: Մինչև հայկական թաղամասում բաղնիք կառուցելը հայերը հարկադրված են եղել օգտվելու Թուրքական բաղնիքից: Կանայք բաղնիք են գնացել Թրքուհիների նման ծածկած իրենց ամբողջ երեսն ու մարմինը չարսաֆով:

Զնայած այդ ապահովական միջոցներին՝ Թուրք տղամարդիկ հաճախ իմացել են, որ նրանք հայուհիներ են, առիթ են տվել անախորժություններ: Պատահել է, որ հարձակվել են հայ կանանց վրա, առևանգել:

Նման դեպքերից խուսափելու համար սովորաբար տղամարդիկ ուղեկցել են կանանց՝ Թե՛ բաղնիք գնալիս և Թե՛ վերադառնալիս: Այդպես չարունակվել է, մինչև որ հայերն էլ իրենց Թաղամասում կառուցել են բաղնիք:

Ցեղային նկարագիրը – *Ուսումնասիրողներն անդրադառնալով երզընկացիների կենցաղին ու նկարագրին, չեչտում են, որ նրանք գրեթե բոլորն էլ ունեցել են բարեկեցիկ կյանք: Եղել են ծայրաստիճան աշխատասեր: Զկար աչքի ընկնող աղքատություն:*

Երզնկացիներն ընդհանրապես հյուրամեծար են, վեհանձն, առատաձեռն, սիրում են ուրախությունն ու հյուրասիրությունը: Նրանց տոհմային բարքերը տիպար աստիճանի մաքուր են: Նրանք պատվախնդիր են, ջերմեռանդ եկեղեցասեր: Երզնկացի տղամարդը ընտանիքի կատարյալ հայր է, իսկ կինը՝ ընտանիքի իսկական մայր ու տանտիկին:

Երզնկացի տղամարդը միջահասակ է, քաջառողջ ու երկարակյաց, վայելուչ, արթուն, բարեկիրթ, հայրենանվեր, ազգային իրավունքների համար նախանձահույզ և զոհաբերվող: Երզնկացի կանայք հայտնի են իրենց գեղեցկությամբ. նրանք միջահասակ են, նրբակազմ, բարեձև, սպիտակամորթ, սև աչքերով ու կամար հոնքերով, ազնվացեղ, մաքրակենցաղ, պատվազգաց ու կատարյալ տանտիկին:

Շնորհիվ ազգային ու տոհմային դաստիարակությանը՝ Երզնկան ուներ ուժեղ նկարագրի տեր, զոհաբերվող, հայրենասեր ու ազատագրական գաղափարներով տոգորված աննման երիտասարդություն[1]:

Տները – *Երզնկայի տները ընդհանուր առմամբ միահարկ էին, կառուցված հում աղյուսից: Դրա համար էլ երկրաշարժերի ժամանակ դրանք հիմնահատակ կործանվել են: Որոշ տներ կառուցվել են քանդված ծի տեղը, պահպանելու համար ավանդական օջախը: Եղել են հայկական տներ, որոնցում նույնիսկ հեթանոսական մշակույթի մնացորդներ են հայտնաբերվել, գերազանցապես օջախի վայրում:*

Հայրս՝ Խաչիկ Տեր-Ստեփանյանն իր գրավոր հիշողություններում պատմում է, որ Եփրանենք կոչվող իրենց գերդաստանի տան օջախի տեղը եղել է շատ հին, ամեն անգամ, որ քանդվել է տունը, նորը կառուցել են այնպես, որ օջախը նույնությամբ օգտագործելի լինի: Նրա ասելով այդ օջախի վերին մասում եղել է քանդակազարդ սրբատաշ քար, որ հազվադեպ բան է առհասարակ Երզնկայում:

Քարուկիր շենքեր Երզնկայում այդ օրերում հազվադեպ էին: Պետական, զինվորական մի քանի շինություններ, զորանոցներ, հասարակաց օգտագործման շենքեր՝ բաղնիք, մեջիդ, եկեղեցիներ, նաև մատների վրա հաշվվող մեծահարուստների տներ, ինչպես Դանիելյանների, Մոմջյանների, Տեր-Ստեփանյանների և այլն:

«Հին տունները,- գրում է Սյուրմենյանը,- կբաղկանային գլխավորապես երկու մասե. առաջին՝ բակի մասը, ուր կգտնվեին փայտանոցը, արտաքնոցը, ոմանց մեջ նաև ախոռ ու հարդանոց՝ կով, հավ պահելու համար: Երկրորդը բնակարանի մասն էր, վրան ծածկված 1–2 հարյուր քառ. մետր տարածություն մը, որուն մեջ դրան կողքին կգտնվեր սենյակ մը հյուրի և ձմռան համար, խորքը՝ մառան մը: Որպես բաժանմունք՝ այսքան: Մնացած ընդարձակ տարածության մեկ կողմին վրա կգտնվեր թոնիրը: Պատին մեկը բռնած կըլլար փայտյա հսկա դարակ մը՝ բազմաթիվ աչքերով ու գեղազարդված. տանտիկինը անոր մեջ դասավորած կըլլար իր պղնձյա ամանեղենները: Տան զարդն էր այս դարակը: ... Շատ մը տուներու մեջ, տան

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 204-209:*

մեկ կողմին վրա կտեսնվեին «տոլապ» ու «ճաղ» կոչված երկու հիմնական գործիքներ՝ տեղական ճարտարարվեստի, մանուսայի վերաբերյալ, ինչպես նաև «հոր» մը՝ մանուսա գործելու համար: Տանը պատերեն մեկուն մեջ 80–100 սանտիմետր խորությամբ մեծկակ խոռոչ մը կգտնվեր, որ ծալք կկոչվեր: Տանը ամբողջ անկողինները այդ ծալքին մեջ կհավաքվեին: Եվ վերջապես մառանի ու տան սահմանին վրա կգտնվեր փայտյա մեծկակ ամբար մը՝ զանազան բաժանմունքներով, մեջը բնաղոն կոչված տարեկան ալյուր, հաճար և այլն ամբարելու համար»[1]:

Կերակուր, հագուստ-կապուստ – Ինչպես Հայաստանի շատ կողմերում, Երզնկայում էլ սովորություն է եղել աշնանից ձմռան պատրաստություններ տեսնել և մառանը, փայտանոցը լցնել անհրաժեշտ պաշարով: Պահել են ձավար, կորկոտ, սպիտակ լոբի, ոսպ, սիսեռ, չորացած մրգեր՝ ծիրանի չիր, չամիչ, ընկույզ, կաղին, յուղ, ղավուրմա, պանիր, չորթան և այլն, նաև փայտ, ածուխ: Ամբողջ տարվան բավարարելու չափ ցորեն են առել, աղացել, լցրել փայտյա հատուկ մեծ ամբարի մեջ, որի ներքևի մասն ունեցել է անցք և այնտեղից վերցրել են ալյուրը հացի կամ խմորեղենի համար: Միաժամանակ մեծ կարասների մեջ դրել են թթուներ, որոնք պետք են եկել հատկապես մեծ պասի յոթը շաբաթների ընթացքում: «Թթուներու գլխավոր տեսակներն էին՝ կանաչ պղպեղի, լոլիկի, կաղամբի, բազուկի և այլն թթուները, ինչպես նաև պողիկներու տեսակներ՝ պոժախ պողիկ, թաթիկ պողիկ, խենթ պողիկ և այլն»[2]:

Երզնկացիների սիրած կերակուրներն էին՝ դղմաճ ապուր, պաղապուր, թանապուր, կաթնապուր, էրիշտայով ու ղավուրմայով ապուր, փլավ մի քանի տեսակ. փլավ՝ ձավարով, բուլղուրով, հաճարով, բրնձով, քեչկեկ, որ ավանդական հարիսան էր, փաչա (խաշ), խավիծ, թանխաշ, քալաճոչ, սպիտակ լոբուց պատրաստված մի քանի տեսակ կերակուրներ, կանաչ լոբի՝ տապակած կամ բուլղուրով եփած, ղեսեֆե (յուղի մեջ տապակած ծիրանի չիր), սու բեոյրեկի և այլն:

Կերակուրներն ուտում էին թոնրատանը կամ տան որևէ այլ մասում, գետնին ծալապատիկ նստած, մեջտեղը փայտե կլոր խոնջան դրած: Ընտանիքի անդամները սովորաբար նստում էին խսիրների կամ մինտերների վրա, հյուրերին առաջարկվում էին փափուկ բազմոցներ:

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 111:*

[2] *Նույն տեղում:*

Կերակուրն ուտելուց առաջ և հետո փոքրահասակներն աղոթում էին: Ուտում էին խոնջայի կենտրոնում դրված ընդհանուր մեծ ամանից, փայտյա կամ նիկելե գդալներով. նոր նոր հարուստների տներում սկսել էր օգտագործվել նաև պատառաքաղը:

Բացի կերակրի ամաններից և հարակից պարագաներից, կային առօրյա օգտագործման իրեր՝ ջրի փարչ կամ պղնձե մեծ գյուգյում, որով աղբյուրից ջուր էին բերում, ջեզվե՝ սուրճ եփելու համար, թեյնիկ՝ թեյի համար, ինքնաեռ, բաժակներ և այլն:

Երզնկացի հարուստ հայերի տներում դարավերջին արդեն կային եվրոպական սպասքներ, թանկագին և նկարազարդ ափսեներ, բաժակներ, ոսկյա, արծաթյա գդալներ և այլն:

Անգամ արհեստավոր տղամարդկանց մեծ մասը հագնում էր եվրոպական կոստյում, իսկ մտավորականությունը նաև կապում էր փողկապ: Կանանց տարազը ավելի պահպանողական էր, հայկական հին զգեստները: Գ. Սյուրմենյանն ասում է թե կանայք «կհագնեին կամ լրիվ չրջազգեստ և կամ տակը փեչ, վրան պլուզ: Տարիքոտ կիները առջևնին գոգնոց, իսկ տան մեջ գլուխնին յաղմա կկապեին: Այն ատենները կանանց հագուստի ուսերն ու մազերու առաջամասը ուռույց (պոմպե) ընելը նորույթ էր: ... Տարիքոտները գծավոր կամ առանց գծի ծպավոր չալեր եռանկյուն ձևով գլուխնին կառնեին և կամ, մասնավորապես երիտասարդներն ու աղջիկները, վելո կոչված, ամառը մետաքսե, ձմեռը բուրդե նեղ ու երկար կտորով մը գլուխնին ու վիզերնին կփաթեին՝ երբ տունեն դուրս ելլեին երեսնին բաց»[1]:

Արհեստագործություն – *Երզնկայի հայերի զգալի մասը եղել են արհեստավորներ՝ դերձակներ, ատաղձագործներ, ոսկերիչներ, պըղընձագործներ, դարբիններ, կահագործներ: Ղազանջըլար կոչվող վայրում զետեղված են եղել պղնձագործների խանութները:*

Հայ ոսկերիչները պատրաստել են այնպիսի նուրբ զարդեր, որոնք գնահատվել են միջազգային ցուցահանդեսներում: Թուրք փաշաները, բարձրաստիճան պաշտոնյաները հայ ոսկերիչներին են պատվեր տվել կանացի զարդեր, գեղեցիկ իրեր՝ թե՛ իրենց հարեմների և թե՛ Կ. Պոլսի վերադասներին նվիրելու համար:

Ոսկերչությանը հավասար զարգացում է ապրել պղնձագործությունը, որոշ արհեստավորների մոտ վերածվելով արվեստի: Այս երկու զբաղմունքներն էլ երզնկացիներին ծանոթ են եղել հնագույն դարերից:

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 195:*

Մեր գրականության մեջ արտահայտված է այն կարծիքը, թե հեթանոսական դարերում Հայաստանի տարբեր վայրերում կանգնեցված ոսկյա և պղնձյա արձանները, պատրաստված կանացի զարդերը՝ ականջօղեր, ապարանջաններ, մանյակներ և այլն, արդյո՞ք Հայաստանում չեն պատրաստվել:

Գ. Լևոնյանը նման կարծիք հայտնել է նաև Արշակունի Տրդատ Ա Թագավորի կողմից Ներոնին նվեր տարված չորս նժույգների պղնձյա արձանների մասին խոսելիս, արձաններ, որոնք այժմ էլ զարդարում են Վենետիկի ս. Մարկոսի մայր տաճարի ճակատը[1]:

Վերջին տասնամյակներում Դվինում, Մեծամորում և այլուր կատարված պեղումները հիմնովին հաստատեցին այն կարծիքը, որ ոսկյա և պղնձյա նման իրեր, արձաններ կարող էին պատրաստվել Հայաստանում: Կարող էին պատրաստվել նաև Երզնկայում, որն ունեցել է պղնձի և ոսկու հանքեր, նուրբ արվեստագետներ:

14-րդ դարի արաբ պատմիչ Իբն-ի Բատուտան, ասելով թե Երզնկան ունի պղնձի հանքեր, վկայում է թե այդ քաղաքում պատրաստում են պղնձյա տարբեր ամաններ, իրեր, և «բայսուսներ», այսինքն՝ պղնձյա գեղազարդ աչտանակներ[2]:

Իբն-ի Բատուտայի վկայությունը հաստատող փաստ է 13-րդ դարում երզնկացի հայ ոսկերիչների ու պղնձագործների կողմից պատրաստված քանդակազարդ այն մասնատուփերը, որոնց մեջ ամփոփվել են ս. Ներսեսի նշխարները, մասնատուփեր, որոնց մանրամասն նկարագրությունն էլ հասել է մեզ:

Մեր օրերում էլ Երզնկայի հայերը ոսկյա վերոհիշյալ իրերի հետ միասին պատրաստել են պղնձյա կաթսաներ, ջրամաններ, յուղամաններ, աչտանակներ, գյուգյումներ, պնակներ, սինիներ, որոնք իրենց նուրբ կատարումով, գեղեցիկ դրվագումներով ու զարդերով հիացմունք են պատճառել անգամ օտար արվեստագետների, ցուցադրվելով Փարիզում, Վիեննայում, ԱՄՆ-ում: Դրանք գնվել և օգտագործվել են տեղական մեծահարուստների, մայրաքաղաքի փաշաների կողմից, մանավանդ պղնձյա զարդարուն կանթեղները, որոնք եկեղեցական բուրվառների տեսք են ունեցել և կախվել են չքեղ դահլիճների առաստաղներից:

Հայերը Երզնկայում զարգացրել էին արդյունաբերական որոշ ճյուղեր, անշուշտ տնայնագործական եղանակով: Դրանցից էր, օրինակ, յուղահանությունը, որ նույնպես խոր անցյալից եկած մասնագիտություն էր:

---

[1] *«Գեղարվեստ», ամսագիր, Թիֆլիս, 1913, № 5, էջ 153-159:*

[2] **Իբն-ի Բատուտա,** *Հայերի մասին, Երևան, 1940, էջ 31:*

Ունեցել են յուղ հանող փոքր գործարաններ, որոնք կոչվել են պեղիրխանաներ, քանի որ պեղիր թուրքերեն ձեթ է նշանակում: Նույնիսկ Կարինից, Կամախից, Արաբկիրից և այլ քաղաքներից մարդիկ եկել են Երզնկա և գնել կտավատի, քունջութի և այլ տեսակի ձեթեր:

Խոր հնություն ունի նաև հայերի կտավագործությունն ու մանուսագործությունը: Դեռևս 13-րդ դարում Երզնկայով անցնող Մարկո Պոլոն գրել է. «Երզնկայում հյուսում են աշխարհի լավագույն բեհեզները»[1]:

«Երզնկայի հայ բնակչության կարելի է ըսել կեսը այս գործով կապրեր,- գրում է Գ. Սյուրմենյանը,- որովհետև թելին մինչև մանուսա դառնալը տասնյակ մը ձեռքերե կանցներ... մանածի թրջելը, ներկելը, առէջ լեցնելը, մշտուդ հենելը, գործելը կար, որոնց համար բազմաթիվ մարդիկ կաշխատեին: Այս աշխատանքներուն մեծ մասը կանայք ու երեխաները կընեին, այսպիսով շատ մը աղքատ ու այրի ընտանիքներ իրենց օրապահիկը կհանեին»[2]:

Հայերը պատրաստել են երեսի ու բաղնիքի սրբիչներ, սավաններ, յաղմաներ (կանանց գլխաչորեր): Վերջինիս վրայի նախշերի համար՝ «գծագրության հմուտ արվեստագետներ, կարծր փայտի տախտակներու վրա գեղեցիկ բնանկարներ, փունջերու, թուփերու, թիթեռնիկներու գեղեցիկ նկարներ կգծեին ու քանդակագործի երկաթյա դուրով (դելեմ) կփորագրեին... Այս արհեստն ալ ամբողջությամբ հայերու ձեռքն էր, որուն գլխավոր վարպետներն էին Սեյիսյան, Ջիրիչկերյան, Տիլպերյան եղբայրները»[3]:

Վերջապես հայերի մենաշնորհն է եղել բրուտագործությունը, որը նույնպես որոշ վարպետների մոտ դարձել է արվեստ: Պատրաստել են յուղի, պանրի, դավուրմայի բղուկներ, գինու կարասներ, որոնք իրենց տարբեր նախշերով, զարդերով հիացմունք են պատճառել բոլորին:

Դեռևս 1870-ական թվականների վերջերին հայերը Երզնկայում հիմնել են լուցկու գործարան, արտադրել գեղեցիկ լուցկիներ, անունն էլ տուփերի վրա դրոշմել «Լուցկիք Հայաստանի»՝ հայերեն և թուրքերեն: Իշխանությունները մի գիշեր այրել, ոչնչացրել են գործարանը: Անշուշտ թուրքերին գրգռած պիտի լիներ նաև այն, որ հայերը վառոդի հետ գործ ունեին և կարող էին այդ պայթուցիկը օգտագործել հեղափոխական նպատակների համար:

---

[1] **Հովհ. Հակոբյան,** *Ուղեգրություններ, հատ. Ա, էջ 48:*

[2] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 177:*

[3] *Նույն տեղում:*

2. ԿՐՈՆԱԿԱՆ ՏՈՆԵՐ, ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետք է ասել, որ առհասարակ հայ եկեղեցին շատ ավելի աշխարհիկ է, ժողովրդական, քան քրիստոնեական այլ եկեղեցիներ. աշխարհիկ թե ճարտարապետական մտահղացումներով, ինչպես ամբողջովին արևով առլցված հոյակապ Զվարթնոցը, և թե բովանդակությամբ, հենց մեր չարականների խորապես աշխարհիկ բովանդակությամբ, ինչպիսին է «Առավոտ լուսո, արեգակն արդար, առ իս լույս ծագյալ» չարականը, որը փառաբանում է արևը, լույսը, առավոտը, կյանքը:

Նույնը պետք է ասել կրոնական տոնակատարությունների մասին, որոնց մեծ մասում քրիստոնեականը միայն արտաքին կաղապար է, խորքում ամբողջովին աշխարհիկ են, կյանքից եկող, կյանքը գովերգող, կյանքի վայելքի ձգտող, միաժամանակ բարոյական նորմերը սրբությամբ պահպանող:

Ծանոթանանք հայ եկեղեցու կողմից օրինականացված հիմնական տոներին:

Տյառնընդառաջ – *Քրիստոնեական եկեղեցին այս տոնին տվել է կրոնական իմաստավորում, բացատրելով, թե այդ օրը Քրիստոսը հանդիպել է Սիմեոն Ծերունուն: Իրականում զուտ կրակապաշտական այդ ծիսակատարությունը ոչնչով չի կապվում Սիմեոն Ծերունու հետ: Պարզապես բացատրությունն է տրվել, ընդունելի դարձնելու համար մի սովորություն, որը եկել է հազարամյակներից և այնքան լավ է իմաստավորվում ծանր ձմռանից հետո գարունը դիմավորող մարդկանց համար:*

Երզնկայում նույնպես, ինչպես այլ վայրերում, հարս ու աղջիկ անհամբերությամբ են սպասել Տյառնընդառաջի (Տերնտեսի) տոնին:

Այդ երեկո, սովորաբար եկեղեցական արարողությունները ուշ են վերջացել՝ մթնելու մոտ: Եկեղեցում եղող յուրաքանչյուր մարդ այնտեղ վառած մոմով վերադարձել է տուն՝ տան ճրագները սրբագործված այդ կրակով վառելու հպարտությամբ:

Բայց էականը սրբազան այդ կրակի տներից դուրս ճառագայթումն ու տարածումն է:

«Փողոցներու, բակերու մեջ, տանիքներու վրա կրակներ կվառվին, բոցեր կբարձրանային, որոնց վրայեն տղայք, մարդիկ, նույնիսկ կանայք կը ցատկեին»,- գրում է Գ. Սյուրմենյանը,- ավելացնելով թե կրակի վրայից ցատկող երեխաների սիրած նախադասություններից է եղել «Տերնտաս, մարդ ինծի կուտաս», մի նախադասություն, որ

աղոթքի հետ ոչ մի առնչություն չունի, Սիմեոն Ծերունու սրտով էլ չէր լինի և որը ամենևին չէր հանդիմանվում ոչ ոքի կողմից, որովհետև այդ արարողությունը, որպես ժողովրդական հանդես, կատարվել է միանգամայն աշխարհիկ ընկալումով, չի ունեցել աղոթելու որևէ երանգ, ընդհակառակը, առիթ է տվել երկու սեռերի հանդիպման, հարս ու աղջկա ուրախ խաղերի ու երգերի: Մինչ կրակը վառվել է, իր բոցերով լուսավորել շրջապատը, երիտասարդները ցատկել են, զվարճացել մինչև ուշ գիշեր, մինչև տարեց կանանց ահազանգը՝ «Աղջի եկեք, ուշ է, եկեք», իսկ աղջիկները, մանավանդ չամուսնացած օրիորդները ցատկել են ու ցատկել...

Բարեկենդան – *Նույնպիսի աշխարհիկ բովանդակություն ունի Բարեկենդանը: Այս տոնակատարությունը ամբողջ Հայաստանում կատարվել է նրան տալով խորապես թատերական երանգ՝ ծպտումներ, տնետուն այցելություններ, խաղեր և այլն: Շատ վայրերում, այդ թվում Երուսաղեմի հայոց վանքում այդ օրը հոգևորականները մասնակցել են տոնախմբությանը մոռանալով իրենց կրոնական սքեմն ու պարտականությունները, օրինականացնելով այնպիսի խաղեր, որոնք ըստ էության ծաղր են հենց եկեղեցական ծիսակատարությունների, ինչպես Աբեղաթոզի սովորությունը, որ այնքան մանրամասնորեն նկարագրված ենք գտնում Վահան վարդապետ Տեր-Մինասյանի «Անգիր դպրություն» ուշագրավ աշխատությունում[1]: Նրա այդ նկարագրությունից երևում է, թե աշխարհիկ կյանքից հեռու մնալու դատապարտված հոգևորականները տարվա մեջ գեթ մեկ օր, Բարեկենդանի օրը, մոռանալով վանական խստություններին ենթարկվելու պարտադրանքը, ապրել են կատարյալ աշխարհիկ կյանքով՝ կերուխում, երգ-պար, զվարճություն:*

Վ. Տեր-Մինասյանը նկարագրում է աբեղաների մի ամբողջ թատերականացված խաղ, որտեղ ըստ երևույթին ծաղրվում է եկեղեցական արարողությունը՝ պատարագի բառերի այլափոխումով ու նրանց զվարճալի բովանդակություն տալով, այդ խաղի ընթացքում գովերգվում են գինին ու աշխարհիկ զգացումները:

Երգնկայի Բարեկենդանի ծիսակատարությունն էլ ունեցել են եկեղեցական կաշկանդումների դեմ դուրս գալու որոշ երանգ:

«Բարեկենդանի ամբողջ շաբթուն,- գրում է Սյուրմենյանը,- տավուլ զուռնայի ձայնը անպակաս էր տանիքներեն: Երիտասարդները կբոլորվեին տավուլ զուռնայի շուրջը ու ժամերով կը պարեին: Կը

---

[1] **Վահան վարդապետ Տեր-Մինասյան,** *Անգիր դպրություն, Կ. Պոլիս, 1904, էջ 63-70:*

պարեին երկսեռ, կին, աղջիկ, տղա, խառն, իրարու ձեռք բռնած: Այդ շաբթուն ամեն տան մեջ խմիչքն ու ուտելիքը լիառատ էին, քեֆճիները տունե տուն կը մտնեին, կուտեին, կը խմեին ու քեֆ կընեին»[1]:

Ինչպես պատմական Հայաստանի շատ վայրերում, Երզնկայում էլ եղել է փողոցային զվարճությունների սովորությունը. մարդիկ հաճախ երկար փայտերի վրա կանգնած շարժվել են փողոցով ու հետաքրքվողների բազմություն հավաքել իրենց շուրջը: Ամենից տարածված խաղերից մեկը ծպտված՝ տներն այցելելն ու այնտեղ ծամածռություններ անելն է եղել: Ընդհանուր առմամբ տղամարդիկ հագել են կանացի զգեստներ, կանացի տեսք տվել իրենց արտաքինին և կնոջ տարազով իրենց ընկերների հետ այցելել են բարեկամների, ծանոթների տները, այնտեղ իրենց ներկայացնելով կին՝ խոսել են կանացի ծեքծեքումով, ձայնի փոփոխությամբ, կատակներ են արել, սրախոսություններով աչխույժ մթնոլորտ ստեղծել, հաճախ մինչև վերջն էլ ցույց չտալով թե ովքեր են իրենք: Երբեմն այսպիսի այցելությունների տրվել է թատերականացված կերպարանք. «Ընդհանրապես խումբեր կկազմեին երեք հոգիե բաղկացած. մեկը կնոջ հագուստ կը հագներ, որ «գոգոնա» կը կոչվեր, իսկ երկուքը տղամարդու, ասոնք մեկը «Զեյպեկ», մյուսը՝ «Փայլանչո» կանվանվեին: Ասոնք տունե տուն կը պտըտեին, կը նվագեին, կերգեին, ու կը պարեին»:

Բարեկենդանի ամբողջ շաբաթը այսպես շակունակվող ուրախությունը իր բարձրակետին է հասել հինգշաբթի ու կիրակի օրերը: Մանավանդ կիրակի օրը, երբ 7 շաբաթ մսեղենից զրկվելուց հետո առատ սեղանների շուրջ շարունակել են ուրախությունը մինչև ուշ գիշեր, անհագուրդ այդ կերուխումն էլ կոչելով «Փոր պատռումի գիշեր»:

Ինչպես Երուսաղեմում, Երզնկայում էլ Աբեղաթողի օրը Բարեկենդանի շաբաթ իրիկունը թույլ է տրվել որոշ անկարգություն եկեղեցուց ներս, ծաղրանքի ու հարձակման առարկա դարձնելով խեղճ քահանաներին: Լսենք Սյուրմենյանին. «Բարեկենդանի շաբաթ իրիկունը, գրում է նա, երբ եկեղեցիի խորանին վարագույրը գոցվեր՝ անգամ մըն ալ ծաղկազարդի իրիկվան բացվելու պայմանավ, եկեղեցին գտնվող ժողովուրդը բազմոցներով, փոստերով կը հարձակեր քահանաներուն վրա և տուր թե կուտաս, թե՝ «ինչո՞ւ, կը գոցեք վարագույրը» ըսելով լավ մը կը ծեծեին քահանաները: Ներված հանցանք մըն էր այս՝ բոլորին համար, ինչպես ապրիլ 1-ին սուտ խոսիլը:

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 212:*

Երևակայեցեք, որ ծերերն անգամ մեծ ցանկությամբ կը մասնակցեին այս արտոնյալ չարության: Քահանաներն ալ իրենց հերթին իրենց գլխի ճարը տեսած կըլլային, ոմանք ժամանակեն առաջ կծիկը կը դնեին, եթե ավանդատան դրան ետև դարանակալ սպասողներուն օձիքնին ձեռք չտային»[1]:

Աղոթելու հետ ամենևին առնչություն չունեցող այս զվարճալի խաղը կոչվել է «Տերտեր փոստել»:

Ամանորի տոնը – *Դարձյալ եկեղեցական, կրոնական բովանդակությունից շատ հեռու, զուտ աշխարհիկ մի ծիսակատարություն է եղել Նոր տարվա տոնակատարությունը, գուցե հազարամյակների խորքից եկող, սերնդեսերունդ փոխանցված, որ Հայաստանի շատ վայրերում նշվում է միանման:*

Բազմաչարչար, ամբողջ տարին դժվարությունների, հաճախ թալանի ու կոտորածի իրադարձությունների, բնական աղետների մեջ անցկացրած հայի համար Նոր տարին եղել է հույսի, ապավինման մի հանգրվան, խորհրդավոր մի պահ, լի ապագայի անակնկալների առեղծվածով:

Ինչպես էր կատարվում Նոր տարվա տոնակատարությունը Երզընկայում:

Արտակարգ ոգևորություն ու տրամադրություն է եղել բոլորի մոտ, մեծ թե փոքր: Մինչ տան տիկինը պատրաստել է ավանդական պահոց գաթան, տան երեխաներն սկսել են իրենց գիշերային սըխրագործությունները: Անչուշտ ամեն տուն էլ ունեցել է թե առատ սեղան և թե պեսպես մրգեր, սակայն տնետուն այցելելու սովորությունը պահվել է միշտ և կատարվել մեծ հաճույքով:

Խումբ-խումբ երեխաներ, իրենց հետ վերցրած մեկ-մեկ դամբյուղ կամ տոպրակ, բարձրացել են տանիքները և երդիկներից կախ տալով իրենց տոպրակը պահանջել Նոր տարվա նվերը:

«Դեկտեմբերի 31-ն է, ձմրան ամենացուրտ օրերը. գուցե ձյուն կուգա, փոթորիկ է դուրսը, բայց ո՞վ մտիկ կընե: Ձեռքերնին մեյմեկ տոպրակ առած՝ կիյնայինք տանիքները, տոպրակի ծայրին երկար թել մը կապած՝ կը կախեինք տուներու խաչկունքներեն վար, մենք ալ խաչկունքին վրա ինկած ու աչքերնիս տունին հառած՝ աղաչական ձևով տան տիկնոջ կը դիմեինք, ըսելով. «Մորքուր, մորքուր, տոպրակս բան լեցուր»: Երբ տան տիկնոջ ձեռքը տոպրակին դիպչեր, կարթը ձուկ ինկածի պես կսկսեինք հրճվիլ ու արագ-արագ տոպրակնիս վեր քաշել: Եթե տան տիկինը համով բաներ մը դրած էր,

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 213:*

ինչպես ընկույզ, չամիչ, չաքար, կաղին, նուշ կամ տանձ ու խնձոր, գոհունակությամբ կանցնեինք մյուս տունը: Կը պատահեր, որ տան տիկինը ստեպղին մը կամ բերաննուս համ չտվող աննշան պտուղ մը լեցներ տոպրակնուս մեջ, այն ատեն՝ «Պուտուկդ մուկ մը իյնա, թոփալ ճուռդ ալ հետը», պոռալով կհեռնայինք այդ տեղեն... Պահոց գաթա եփելու ատեն տան տիկինը մեծկակ գաթա մը նկատի կունենար ու անոր խմորին մեջ ոսկի կամ արծաթ փոքր դրամ մը կդներ: Նոր տարվան գիշերը ընտանիքի անդամները ընթրիքի սեղանին շուրջը հավաքվելու ատեն՝ նախ այդ գաթան մեջտեղ կուգար: Տանտիկինը դայն ընտանիքի անդամներուն թիվին համաձայն հավասար մասերու կբաժներ, բաժին մը խանութին, բաժին մըն ալ տանը և այլն կհաներ: Գաթան բաժնվելե հետո՝ ամեն ոք իր ստացած բաժինը կսկսեր արագ արագ ծամել, դրամը որու որ գար, այդ տարին ան ընտանիքին բախտավոր անդամը կհամարվիր»[1]:

Տան երեխաները սեղանի վրա իրենց արտասանությունները կատարելուց հետո քաշվել են անկողինները, քնել: Մեծահասակները չարունակել են զվարճանալ մինչև ուշ գիշեր:

Պահպանվում էր նաև դարերի խորքից եկած մի այլ սովորություն: Հավատալով այն ավանդության, թե Նոր տարվա գիշերը թաղի աղբյուրից մի բոպե ոսկի ջուր է հոսում, մասնավորապես հարս ու աղջիկ լուսաբացին շտապում էին աղբյուր, այնտեղ լվացվում, աղբյուրը կաղանդում, ապա հետները վերցրած ամաններով ջուր բերում տուն:

Նոր տարվա առավոտը փոքրերը մեծերի ձեռքերն համբուրելով ստանում էին իրենց նվերները, ապա այցելում ազգականների տները, նույնպես նվերներ ստանում, մեծ մասամբ չաքարեղեն ու միրգ, անխուսափելի չամիչ լաբլաբուն հետը:

Ծնունդ – *Քրիստոսի ծննդի տոնը նշվում է հունվարի 6-ին: Օրեր առաջ տանտիկինները պատրաստություններ են տեսնում: Նախորդ գիշերը կոչվում է Նավակատիկ և արգելված է մսեղեն ուտելը: Ծննդյան սեղանի ընդունելի կերակուրներն են՝ բլղուրով կամ բրնձով փլավ՝ դեսեֆեով, այսինքն՝ յուղի մեջ տապակած ծիրանի չիրը վրան, դդում, լոբի, կաթնապուր և այլն:*

Բարեկենդանի մեկ չաբաթվա ուրախությունից, կերուխումից հետո, դժվար էր անչուշտ միանգամից անցնել պասի: Ուստի մարդիկ որսացել էին նաև մի օր էլ, որ կոչում էին «օխտը ըրախի»: Դա մեծ պասի առաջին օրն էր: «Քեֆճիներուն այդ օրն ալ յոթը բաժակ օղի խմելու արտոնություն տված էին»:

---

[1] **Գ. Այուրմենյան,** *Երգնկա, էջ 210-211:*

Սկսվում է մեծ պասը՝ ձմռան կարճ օրերի, սառնամանիքների յոթը շաբաթը, որ անցնում է այնքան դանդաղ: Մարդիկ անհամբեր հաշվում են օրերը ու սպասում թե երբ պիտի վերջանա տաղտկալի ժուժկալության, տներում բանտարկված մնալու շրջանը: Կերուխումի սպասելուց ավելի հաճելի մի զգացում համակում է մարդկանց, վերջին օրերին. չէ՞ որ զատիկն իր հետ բերելու է գարնան չունչն ու թարմությունը:

Օրացույց չկար այդ ժամանակ: Յուրաքանչյուր տուն առաստաղից կախում էր մի մեծ գլուխ սոխ, վրան յոթը փետուր: Տան մեծն ամեն շաբաթ հանում էր փետուրներից մեկը, հաշվում թե քանիսը մնաց զատկին: Մանավանդ երեխաների հայացքը հառած էր մնում խորհրդավոր սոխին, որ այնքան դանդաղ էր փետրահան լինում... Բնորոշ է, որ մարդիկ նման օրացույց չեն օգտագործել տարվա ոչ մի ամսին, բացառությամբ մեծ պասի ձանձրալի շաբաթներին:

Երզնկայի պահուց ուտելիքներն են եղել պաղապուրը՝ սպիտակ լոբին ու կորկոտը միասին եփած ու տրորած, վրան՝ համեմունքներ, խաչած կարտոֆիլ, կորկոտե փլավ, որի մեջ յուղի փոխարեն օգտագործվել է ծեծած ընկույզ, խոշաֆ ոսպ, թահին հալվա, թոփիկ և այլն:

Ծաղկազարդ – *Ու այսպես՝ առաստաղից կախված սոխի վրա մնում է մեկ փետուր, որն ազդարարում է Ծաղկազարդի տոնը: Դա միաժամանակ ազդարարում է գարնան գալը: Ձարթնող բնության թարմ չունչը բաց դռներից խուժում է տները, դուրս վանում ձմռան ամիսներին կուտակված ծանր օդը: Ծաղկազարդին Երզնկայում վաղուց հալած է լինում ձյունը: Ամենուր՝ կանաչ մարգագետիններ, ծաղկած ծառեր: Հիմա մարդիկ սիրում են երկար կանգնել դրսում, արևի տակ, ջերմանալ թե մարմնով և թե հոգով, աստվածային մի անբացատրելի հաղորդակցությամբ ողջունելով բնության վերակենդանացումը:*

Ծաղկազարդի կիրակի օրերը, ընկալյալ սովորությամբ նորահարսները այցելել են իրենց մոր տունը: «Հարսի մարանց կողմե քանի մը կիներ կերթային խնամիին տունը ու աղջիկնին առած տուն կտանեին, զատիկը մարանցը տունը անցընելու համար: Թաղի կանանց համար մեծ հաճույք էր այս չքախումբին երթևեկը դիտել: Երբ լուր կունենային թե հարս կտանին, կիներ ու աղջիկներ իրենց ձեռքի գործը, ինչ որ ալ ըլլար, կձգեին ու կվազեին փողոցին դուռը: Նոր հարսը պարտավոր էր դռներուն առջև կեցած տարիքոտ կանանց

ձեռքը համբուրել, ատոր համար ալ չքախումբը օրորվելով, շորորվելով թաղին մեկ աջը, մեկ ձախը հանդիպելով կանցներ»[1]*:*

Սկսվում է Բարեկենդանի վերջին շաբաթվա ծիսակատարությունը. այստեղ արդեն եկեղեցին իր գերիշխանության տակ է պահում հավատացյալ ժողովրդին ամենից առաջ եկեղեցական ծիսակատարությունների չքեղությամբ, թատերայնությամբ, երգ ու նվագի հոգեպարար ներդաշնակությամբ և Քրիստոսի կյանքի ամենադրամատիկ դրվագների հուզիչ մատուցմամբ:

Եկեղեցին այդպիսի հանդիսավորությամբ է ցուցադրում Ոտնլվան, Խաչելությունը և այլն: Սրանք եղել են բեմական շատ հուզիչ, միաժամանակ շատ կենդանի պատկերներ:

Զատիկ – Խթման օրը *բոլորը թափվում են եկեղեցիները՝ հագած իրենց լավագույն զգեստները: Դա ճակատագրական այն պահն է, որ վերջապես քահանան հայտնելու է մեծ պասի ավարտը՝ «Առեք կերեք...» նախադասությամբ:*

Հաջորդ առավոտ արդեն զատիկն է: Լուսաբացից առաջ ժողովուրդը լցվում է եկեղեցիները՝ ուրախ, բարձր տրամադրությամբ: Հազար հինգ հարյուր տարի չարունակ կրկնված նախադասությունն է կարդացվում բոլորի դեմքին՝ «Քրիստոս հարյավ ի մեռելոց, օրհնյալ է հարությունը Քրիստոսի». բայց ժողովուրդը դրանով ազդարարում է նաև գարնան հարությունը, վերակենդանացումը, որը նրան ավելի է հասանելի, ավելի կապված նրա կյանքի հետ:

Այդ օրը նախաճաշից հետո՝ բարեկամներ, ազգականներ այցելում են միմյանց տուն, մեկ-մեկ բաժակ կոնյակով կամ գինիով չնորհավորում զատիկը: Նոր փեսաների համար այդ այցելությունները արդեն պարտադիր էին, մասնավորապես առաջին զատկի օրը:

Համբարձման տոն *– Հին-հին դարերից, գուցե Անահտական օրերից մնացած տոնակատարություն է Համբարձման տոնը:*

Համբարձման տոնի նախորդ օրվանից պատմական Հայաստանի ամբողջ տարածքում, լինի դա արևելյան հատվածը թե արևմտյան, հարս ու աղջիկ, դուրս են թափվում իրենց տներից, գնում այգիներն ու պարտեզները, հավաքելու յոթ տեսակ ծաղիկ, ջուր վերցնելու յոթ տարբեր աղբյուրներից: Հավաքված այդ գույնզգույն ծաղիկները, գետեղված ծղոտից կամ եղեգից պատրաստված կողովների մեջ, տանում էին եկեղեցի և օրհնել տալիս քահանաներին, ապա դնում էին յոթը աղբյուրներից վերցրած ջրի մեջ ու թաքուն պահում աստղազարդ երկնքի տակ, որպեսզի իրենց բախտը բացվի:

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երգնկա, էջ 215:*

Հաջորդ օրը, այսինքն՝ Համբարձման կիրակի առավոտյան, նրանք խումբ-խումբ դուրս էին գալիս և ուրախ տրամադրությամբ շարժվում էին նախօրոք իրենց որոշած դաշտավայրերից մեկը: Այնտեղ պատրաստում էին քարից օջախներ, կրակ անում ու կերակուրներ եփում:

Կերուխումն ավարտելուց հետո սկսվում էր զվարճությունը, ժողովրդական խաղերի շրջանը: Պարում էին, ուրախանում, երգում, ապա անցնում օրվա հիմնական ծիսակատարությանը՝ ջանգյուլումներին ու վիճակ հանելուն:

Փոքրիկ մի աղջնակ վիճակի ամանի միջից մեկ-մեկ դուրս է հանում խմբի աղջիկների կողմից նախորդ օրը ծաղկալից ջրի մեջ դրված տարբեր իրեր ու առարկաներ, յուրաքանչյուր դեպքում, նախքան հանելը ներկաներից մեկը վիճակ գուշակող մի քառյակ է ասում կամ երգում: Նայած թե ինչ պարունակություն ունի քառյակը՝ հանված իրի տերը ուրախանում է կամ տխրում: Անշուշտ հիմնական գուշակությունը վերաբերում է աղջիկների ամուսնական ապագային, թե արժանի պիտի լինե՞ն իրենց սիրած տղային, կամ երջանիկ ամուսնության հեռանկար կա՞, իսկ եթե արդեն նշանվել է՝ պիտի հասնի՞ վերջնական նպատակին:

Բերենք մի քանի նմուշ՝ Երզնկայի գավառում տարածված վիճակահանության երգերից:

Ծառին ճյուղը ծռեցի,
Թաշկինակս փռեցի,
Թարազցոց ինատին՝
Երզնկացոց սիրեցի:

Դոշակ փռեմ փոթ կուգա,
Ցար խապարդ Է՞փ կուգա:
Ղուրբան ըլլամ փառջանին,
Մըջեն խնկա հոտ կուգա:

Թութ չամիչը չոր կըլլա,
Էլին տղան յար կըլլա,
Եփո սիրես ու առնես,
Քընզ չեքերն անուշ կըլլա:

Էլլամ էրթիք ի՞նչ անիմ,
Վարդ ու մեխակ չորցնիմ։
Վարդ ու մեխակ ի՞նչ անիմ,
Էփիմ յարիս խմցնիմ։

Հայրս պատմել է, թե իր քույրերից մեկը ինչպիսի հուզում է ապրել, երբ նրա վիճակը լավ դուրս չի եկել։ Եղել է այսպիսի երկու տող.

Թըռչուն մէիր փախցուցին,
Պըզտիկ պըզտիկ մեռցուցին։

Այդ գուշակությամբ էլ տառապել է իմ էլիզա հորաքույրը և ունեցել արդարև դժբախտ ճակատագիր, փախցվել թուրքերի կողմից։

Վիճակի արարողությունից հետո, երեկոյան հարս ու աղջիկ տուն են վերադարձել տարբեր տրամադրությամբ, մի մասը ուրախ, մի մասը՝ թախիծը դեմքներին։

«Երեկոյան մայրամուտին,- գրում է Գ. Տեր-Վարդանյանը,- աղջիկներու այս խումբերը կվերադառնան գյուղ։ Գյուղին մոտ, բարձր դիրքերու վրա խմբված, անոնք կսկսին երգել իրենց վերջին երգերը, գյուղին լսելի ձայնով... պճնված խատուտիկ հանդերձանքով, նման թևեր առած հրեշտակներու, անոնք մեծ ոգևորություն կստեղծեին իրենց շուրջը։ Արտ ու արոտ, պարտեզ ու հանդ թույր ու բույր կըստանային այս քաղցրիկ հոգիներու ներկայությամբ»[1]։

Վարդավառ – *Եթե Համբարձման տոնը երիտասարդ աղջիկների ապագան գուշակելու, բարի մաղթանքների, հույսի, ապավինման օր է, անշուշտ նաև զվարճության, բնության ծոցում մի քանի ժամ անցկացնելու օր, ապա Վարդավառը բոլոր տեսակի երազների, ապագա կյանքի համար տրված խոստումների իրագործման օրն է, որ այս անգամ էլ կատարվում է մատաղ անելու սովորությամբ։*

Վարդավառի օրը ժողովուրդը, ամբողջ ընտանիքներով, իրենց հետ վերցրած մատաղացու անասունները՝ խոյ, ոչխար, գառ, հավ, աքաղաղ, գնում են մոտակա վանքերից մեկնումեկը, հաճախ անգամ ավերակ վանքերի մոտ, անում իրենց մատաղը, զվարճանում։

«Այդ օրը,- գրում է Գ. Տեր-Վարդանյանը,- փլատակ սրբավայրերը կյանք կստանային... Ժամ պատարագեն ետքը օճախներուն վրա եռացող կաթսաներուն մեջ արդեն պատրաստ կըլլար մատաղը։

---

[1] **Գ. Տեր-Վարդանյան,** *Երզնկա–Կամախ գավառաբարբառը և ազգագրական հուշեր, էջ 136։*

... Մատաղին հետ պլղուր փիլավը և այլ ուտելիքներ կշարվեին, իրենց մոտ պատրաստ ունենալով թութի պատվական օղին կամ խաղողի կարմիր գինին: ... Ճաշերեն ետքը կսկսեր ուրախությունը մարդոց, երիտասարդներու և ծերերու հավասարապես, երգով ու պարով, դավուլով ու զուռնայով: Տեղի կունենար գինախաղություն, հայրենասիրական ազատ պոռթկումներ այս հեռավոր վայրերուն մեջ, ուր չէին հասնիր բռնակալին ակնարկն ու ձեռքը»[1]:

Այդ բոլորից հետո սկսվում է օրվա խորհրդանիշը համարվող ջրցայտուքի, այսինքն՝ միմյանց վրա ջուր լցնելու ավանդական խաղը, ուրախ ճիչերի, աղաղակների զրնգուն ծիծաղի համանվագի տակ: Ջրով լի ամանները ձեռքներին՝ վազում են միմյանց ետևից, թրջում մասնավորապես սառը ջրից սարսափողներին:

Վարդավառի օրը, սրբավայրերի խուլ անկյուններում պատահում էին և գաղտնի հանդիպումներ, երիտասարդական սիրագեղումներ, փոխադարձ նվիրվածության հավաստիացումներ, գիրկընդխառնումներ, անչուչտ խիստ գաղտնի, պահելով հայկական տոհմիկ պատվախնդրության ու բարոյականության սրբությունները:

Աստվածածին – *Աստվածածնա տոնի հեթանոսական ծագման մասին ավելի շատ է գրվել: Այդ օրվա հետ կապված ծիսակատարությունները գերազանցապես գործնական բնույթ են կրել՝ ոչխարների լվացում, խաղողի օրհնում և այլն:*

Հատուկ կարևորություն է տրվել խաղողի օրհնենքին և դա բնական է, քանի որ խաղողագործությունը Արևմտյան Հայաստանի հայերի հիմնական զբաղմունքներից մեկն է եղել:

Խաղողը օրհնվել է եկեղեցում, հանդիսավոր պայմաններում, որից հետո յուրաքանչյուր ընտանիք, վերցնելով մի ողկույզ, տարել է տուն, միացրել իր խաղողին, դրանով էլ օրհնված է համարվել ընտանիքի այդ տարվա խաղողի բերքը: Մինչև այդ օրը արգելված է եղել խաղող ուտելը:

Աստվածածնի տոնի օրերին էլ մարդիկ դիմել են դաշտերը, հանգստացել ու զվարճացել հին վանքերի փլատակների մոտ: Գ. Տեր-Վարդանյանը վկայում է, որ Երզնկայի մոտակայքում եղել է Կաթընչենք կոչված ուխտավայրի ավերակներ, որտեղ հարյուրամյակների ընթացքում մարդիկ տոնել են Աստվածածնա օրը: Ահա Կաթընչենք կոչված ամայի այդ վայրերն են, որ Աստվածածնի տոնի օրը կենդանություն են ստացել. փլատակները «կզարդարվեին մայ-

---

[1] **Գ. Տեր-Վարդանյան,** *Երզնկա-Կամախ գավառաբարբառը և աղգագրական հուշեր, էջ 136-137:*

րերու վառած մոմերով, մայրեր, որոնք նեղություն ունին ստինքի և այլ մայրական հիվանդությանց: Հղի կիներն ալ ուխտի կերթան նույն սրբավայրերուն, որ առատ կաթ ունենան և մնան զերծ չար աչքե ու փորձանքե»[1]*:*

Ուխտագնացություններ – *Երզնկայի նման չոգ քաղաքի բնակիչները բնականաբար կարիք պիտի ունենային ամառային ամիսներին գեթ մի քանի օրով կամ շաբաթով դուրս գալու դաշտագնացության, զով օդում անցկացնելու իրենց օրերը, երեխաներին հեռու պահելու չոգի հետևանք համաճարակային հիվանդություններից, միաժամանակ հանգստանալու, ֆիզիկապես կազդուրվելու:*

Երզնկայում ուխտագնացությունները կատարվել են երեք տարբեր ուղղություններով. ա) ուխտագնացություններ անմիջապես քաղաքի մոտակա վանքերի շրջակայքում, որ քաջալերվել է կրոնական իշխանությունների կողմից՝ վանքերի նյութական վիճակը բարելավելու նկատառումով, բ) ուխտագնացություններ դեպի Հայաստանի հեռավոր վայրերի վանքերը, առաջին հերթին՝ Մշո ս. Կարապետի վանքը, գ) ուխտագնացություն դեպի Երուսաղեմ:

Ուխտագնացությունները կատարվել են խմբերով՝ թե՛ կյանքի ապահովության նկատառումով և թե՛ ամառանոցային այդ օրերն ավելի հաճելի անցկացնելու համար, քանի որ նրանք այդ վայրերում աղոթելուց ավելի զբաղվելու էին զվարճություններով, երգ ու պարով:

Գնում էին սովորաբար սայլերով, իրենց հետ վերցնելով գիշերելու համար անհրաժեշտ պարագաներ, վրաններ, վերմակներ, սնունդ, անխուսափելի ինքնաեռը և այլն:

Երզնկացիները խմիչք քիչ են օգտագործել, սակայն նման օրերին ունեցել են իրենց հետ գինու տկճորներ և սեղանների վրա տղամարդիկ սիրել են մի քանի բաժակ խմել, առանց հարբելու, մի բան, որ հազվադեպ է նկատվել:

Հեռավոր վայրերը կատարվող ուխտագնացությունները տեղի են ունեցել ավելի հանդիսավոր պայմաններում: Դրանց մեջ ամենից նշանակալիցը եղել է Մշո ս. Կարապետի ուխտագնացությունը: Ամռան ամիսներին այնտեղ անպակաս են եղել տարբեր վայրերից եկող ուխտավորները: Գցել են հարյուրավոր վրաններ: Ամեն կողմ կերուխում, զվարճություն, լարախաղացային ցուցադրություններ, դհոլզուռնայի նվագներ: Պատմում են, որ նման ուխտագնացություններից մեկի ժամանակ միայն վանեցիները վառել են 500-ից ավելի

[1] **Գ. Տեր-Վարդանյան,** *նշվ. աշխ., էջ 136-137:*

ինքնաեռ: Պետք է նկատի ունենալ, թե այլ վայրերից եկածներն էլ նկատի ունենալով՝ ինչպիսի եռուզեռ պիտի լիներ այնտեղ: Ու մատաղներ, տասնյակներով, հարյուրներով, նվիրատվություններ վանքին ու վանականներին, կնունքներ, պսակադրություններ:

Այլ բնույթ է ունեցել դեպի Երուսաղեմի ուխտագնացությունը: Կատարվել է դարձյալ խմբակային ձևով: Դեռևս ձմռանից մարդիկ որոշել են թե ովքեր են ուխտի գնալու, ինչ խմբերով, որ ամսին: Նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո, երբ հասել է մեկնելու օրը, հավաքվել են նշանակված վայրում՝ մեկնողների հետ նաև նրանց հարազատները, որոնք ուղեկցել են հաճախ մինչև 20–25 կիլոմետր, համբուրվել, աղոթել, բարի ճանապարհ մաղթել ու բաժանվել:

*Ուխտավորների վերադարձը ավելի տպավորիչ է եղել, չէ որ նրանք Երուսաղեմից գալիս էին մի մեծ պարտականություն կատարած, Հիսուս Քրիստոսի գերեզմանն ու սրբատեղիները աչքով տեսած, սրբացած: Գալիս էին կարծեք ավելի լրջացած, վերափոխված, **հաջի** դարձած:*

*Հաջին թուրքերեն բառ է: Բանն այն է, որ թուրքերն էլ գնում էին Մեքքա, վերադառնում հաջի դարձած: Հայերը սկզբում գործածել են **մահտեսի** կամ **մղդսի** բառը՝ Երուսաղեմ այցելողների համար, սակայն հետագայում ընդհանրացել էր **հաջին** թե՛ թուրքերի մոտ և թե՛ հայերի: Երզնկայում սովորական էր լսել Հաջի Կարապետ, Հաջի Մինաս, Հաջի Հարություն և այլ նման անուններ:*

Թուրքերը մասամբ հարգել են հայերի կրոնական զգացումները, հենվելով Ղուրանի ասույթների վրա, հանգիստ են թողել ուխտավորներին: Հազվադեպ է պատահել, որ հարձակումներ են եղել Երուսաղեմ կամ այլ վայրերը մեկնող հայերի վրա:

Հայրս իր գրավոր հիշողություններում մանրամասն պատմում է իր տատիկի Երուսաղեմ ուխտի գնալն ու վերադարձը: Ասում է թե անհրաժեշտ պաչարը վերցրած բավական երկար ճանապարհ ընդառաջ են գնացել Երուսաղեմից վերադարձողներին: Պայմանավորված օրը ուխտավորները չեն երևացել: Դիմավորողները հարկադրված գիշերն անց են կացրել բաց օդում, կերուխումով, զվարճություններով լուսացրել, վստահ, որ հաջորդ օրը երևալու է խումբը: Արդարև հաջորդ օրը եկել են ուխտավորները՝ հաջի դարձած և մեծ հանդիսավորությամբ սայլերով, ջորիներով ու ձիերով վերադարձել են Երզնկա:

Ինչպես Հայաստանի բոլոր վայրերում, Երզնկայում էլ մարդիկ ոչ թե նշել են իրենց ծննդյան օրը, այլ անվանակոչության, այսինքն՝ նայած թե ում անունը եկեղեցական որ տոնին է զուգադիպում: Եվ որովհետև մինչև 1860-ական թվականները քահանաները գերազանցապես քրիստոնեական անուններ են դրել, այսինքն՝ աստվածաշնչային կամ ավետարանական անուններ, ուստ մեծ մասի անունը կապվել է այս կամ այն տոնի հետ, ինչպես՝ Հարություն, Համբարձում, Հակոբ, Մկրտիչ, Գրիգոր, Սարգիս:

Այսպես, բոլոր Հարություններն իրենց ծնունդը նշել են զատկի տոնին, Համբարձումները՝ Համբարձման տոնին, Սարգիսները, Գրիգորները՝ այդ սրբերի օրերին:

Վաթսունական թվականների զարթոնքից հետո մուտք գործած անունները՝ Արշակ, Տիգրան, Հրայր, Ժիրայր, Գառնիկ և այլն, կապվել են Վարդանանց տոնի հետ, այն բացատրությամբ, թե Վարդանի հետ մարտնչած 66.000 հայ նահատակների մեջ եղել են բոլոր այդ անուններն ունեցողներ:

Անվանակոչության օրերին չնորհավորելու են գնացել սովորաբար մոտիկ բարեկամներն ու ազգականները, ծիսակատարությունն էլ եղել են շատ համեստ: Զեն սիրել մեծ հանդիսավորություն, պերճանք, ճոխ սեղաններ: «Նարնջի մը, խնձորի մը, երբեմն կատակի համար սոխի գլխի մը վրա մոմ մը վառած՝ կներկայացնեին անունի տիրոջ ու կչնորհավորեին զինքը «անունովդ ծերանաս» մաղթանքներով: Հյուրերը կհյուրասիրվեին խմիչքով՝ օղիով կամ գինիով»:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ ԵՐԶՆԿԱՅՈՒՄ

1. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

Մենք հարսանեկան ծիսակատարություններին հատկացնում ենք հատուկ գլուխ, որովհետև քիչ ժողովուրդներ կան, որոնց մոտ այդ արարողությունները լինեն այնքան ճոխ, բազմերանգ, հանդիսավոր, որքան հայերի մոտ: Մեր նախահայրերը ամուսնությունը չեն համարել սովորական մի կապ՝ երկու սեռերի պատկանող մարդկանց միջև: Համարել են մարդու կյանքում ամենախոշոր, անկրկնելի իրադարձությունը, դրա մեջ տեսել են սերունդների գոյատևման հիմքը, տվյալ գերդաստանի հարատևման երաշխիքը: Նրանց համար պսակը համարվել է սրբազան դաշինք, անքակտելի, անմերժելի զուգորդում:

Ահա թե ինչու ամուսնական ծիսակատարություններին մասնակցել են ոչ միայն երկու կողմի հարազատներն ու բարեկամները, հայ եկեղեցու պաշտոնական ներկայացուցիչները, այլ հաճախ ամբողջ գյուղը, անգամ հարևան գյուղերի ներկայացուցիչները: Դա ըստ ամենայնի ծավալուն, բազմաբովանդակ արարողություն է, որ կատարվել է մի քանի օրերի, հաճախ շաբաթների ընթացքում, տարբեր վայրերում, կողմերի բնակարաններում, եկեղեցում, մասամբ բացօթյա հրապարակներում:

Մասնակիցներից ոմանք եղել են սովորական հանդիսատեսներ՝ հավաքված հյուրասենյակներում, թոնրատներում, բակերում կամ կտուրների վրա: Նրանք իրենց ծափերով, աղմուկ-աղաղակներով, սրախոսություններով գույն ու փայլ են տվել հանդեսին:

Մյուսները եղել են ծիսակատարությունների անմիջական մասնակիցներ կամ որպես հիմնական գործող անձեր, ինչպես հարսը, փեսան, հարսի հայրն ու մայրը, քույրն ու եղբայրը, փեսայի հարազատները, քավորն ու քավորկինը, կամ ծիսակատարությունների հետ անմիջապես կապված մարդիկ՝ վարդապետ, քահանա, երաժիշտներ, պարողներ, խաղեր կազմակերպողներ: Վերջիններս բոլորն էլ ունեցել են իրենց որոշակի դերն ու տեղը:

Հայ և օտար մի քանի ուսումնասիրողներ իրավացիորեն հայկական հարսանիքը դիտել են որպես թատերական ներկայացում, անգամ փորձել են այն վերլուծել բեմական կառուցվածքով, ծիսակատարությունները բաժանելով գործողությունների, պատկերների:

Պատմական Հայաստանի տարբեր քաղաքներում (Վան, Մուշ, Կարին, Ակն, Երզնկա, Սեբաստիա, Եվդոկիա և այլն) մինչև Առաջին համաշխարհային պատերազմի մեծ աղետը պահել էին իրենց ազգային տոհմիկ սովորությունները, հարսանիքները կատարել են գունեղ, ինքնատիպ, խոր անցյալից եկող ավանդույթների պահպանմամբ, իսկ Հայաստանից հեռու՝ թուրքական կենտրոններ հանդիսացող հայաշատ քաղաքներում (Կեսարիա, Յոզղատ, Բուրսա և այլն) հայկական հարսանիքը մասամբ փոխել է ազգային բնույթը: Պահելով հանդերձ կրոնական կողմը, որն ի դեպ առհասարակ թույլ է եղել ծիսակատարությունների ընդհանուր շղթայի մեջ, հանդիսավոր մասում ստացել է թուրքական որոշ երանգ՝ առաջին հերթին կապված լեզվի հետ: Կատարվել են թուրքերեն երգեր, բարեմաղթություններ: Հարսանիքի ամբողջ տևողության ընթացքում տիրապետողը եղել է թուրքերենը, քանի որ այդ վայրերի հայերը թուրքախոս են եղե:

Հարսանեկան ծիսակատարությունների մեջ ուշագրավ է գլխավոր գործող անձերի՝ հարսի ու փեսայի շքեղ զգեստավորումը, նրանց ներկայացվելը որպես սոցիալական և իրավական ավելի բարձր խավի մարդիկ, հատկանիշներ, որոնք ի հայտ են եկել ոչ միայն զգեստավորման մեջ, այլև այն բանում, որ փեսան հարսանիքի ամբողջ տևողության ընթացքում կոչվել է թագվոր, այսինքն՝ թագավոր, իսկ հարսը՝ թագուհի:

Հայ գեղջուկն ու գեղջկուհին, որոնց առօրյա կյանքը շատ չարքաշ է եղել, զգեստը համեստ՝ իրենց դաշտային աշխատանքին ներդաշնակ, գեթ մի անգամ, հարսանիքի օրը, այսինքն՝ իրենց կյանքի երիտասարդական կիզակետի օրը, հագել են շքեղ զգեստներ, բեմականորեն մտել թագավորի և թագուհու կերպարի մեջ:

Մարդիկ, լինեն դրանք Կարինում թե Երզնկայում, Ակնում թե Սեբաստիայում, հարսի ու փեսայի զգեստները պատրաստել են ամիսների լարված աշխատանքով, այդ գործին մասնակից դարձնելով տվյալ վայրի լավագույն դերձակներին ու դերձակուհիների, զգեստները զարդարել են նուրբ ասեղնագործություններով:

Ահա թե այդ բանը ինչպես է երգել ակնցի գուսանը.

Ըմմենդ ի վերա եկեք,
Թագվորին կապան կարեցեք,
Լուսընկան աստառ արեք,
Արևն երես ձևեցեք,
Ան մոյ ու խոշոր աստղեր
Թևերուն կոճակ կարեցեք:

Թագավորի ու Թագուհու նկատմամբ բացառիկ վերաբերմունքը ցուցաբերվել է ոչ միայն զգեստավորման մեջ, Թագավոր ու Թագուհի կոչելու մեջ, այլև այն բանով, որ նրանք եղել են բոլորի գուրգուրանքի առարկան: Մի պահ գյուղի քյոխվան ու ռեսն անգամ զիջել են նրանց: Թագվորն ու Թագուհին ունեցել են իրենց Թիկնապահները, հանձին փեսաեղբայրների ու հարսնեղբայրների: Շատ վայրերում, այդ Թվում Երզնկայում, փեսայի գլխին դրել են Թագ կամ սաղավարտ, իսկ հարսը մինչև մեր օրերում էլ միշտ պճնազարդված է լինում որպես Թագուհի:

Թագավորի ու Թագուհու պատրանքը ավելի է ընդգծում կնքահայրը: Նա, մոռանալով քավորի պարտականության կրոնական կողմը, կատարում է գերազանցորեն աշխարհիկ դեր: Որոշ գավառներում քավորը փեսային ընկերացել է ոսկեզրվագ սուրը ձեռքին, որպես Թագավորի Թիկնապահը: Այդ նույն սուրը նա պսակադրության արարողության ժամանակ օգտագործել է որպես խաչ՝ «սուրը պատյանեն հանելով և սուրը, պատյանը խաչաձև բռնելով նորապսակ ամոլին գլուխներուն վրա», ինչպես վկայում է հետազոտողներից մեկը:

2. ՀԱՐՍԱՆԻՔԸ ԵՐԶՆԿԱՑԻՆԵՐԻ ՄՈՏ

Երզնկացիների հարսանիքում պահպանվել են վերոհիշյալ սովորությունների մեծ մասը և նույնքան ճոխ ու խորհրդավոր է եղել, որքան Արևմտյան Հայաստանի տոհմիկ մյուս գավառներում:

Ժողովրդական հեքիաթների մեջ «քառասուն օր, քառասուն գիշեր» հարսանիք անելու միտքը ամենևին էլ չափազանցություն չի եղել, մասնավորապես երզնկացի ունևոր ընտանիքների հարսանիքները հաճախ շարունակվել են շաբաթներով, փոխնիփոխ, մերթ տրդայի, մերթ աղջկա տանը, մերթ էլ քավորի:

Երզնկայում էլ, անշուշտ, հարսանեկան ծիսակատարություններում դարերի ընթացքում որոշ բան փոխվել է, բայց հիմնական սո-

վորությունները, մասնավորապես գյուղերում պահպանվել են խորապես ազգային դրոշմով: Կատարված փոփոխությունները վերաբերվել են տղայի ու աղջկա նախաամուսնական կապի ազատականացմանը: Եթե խոր անցյալում ամուսնացող զույգը միմյանց մոտիկից ճանաչել են միայն առագաստի գիշերը, նախընթաց ամբողջ գործարքը կատարել են երկու կողմերի ծնողներն ու բարեկամները, նաև որոշ միջնորդներ, ապա գեթ 19-րդ դարի կեսերից, մասնավորապես 20-րդ դարի սկզբներին տղան ու աղջիկը նախքան ամուսնությունը գեթ միմյանց մոտիկից տեսնելու, իրենց համաձայնությունը հայտնելու հնարավորություն ունեցել են:

Այդ հնարավորությունը ավելի շատ վերաբերում էր քաղաքին: Գյուղը միշտ էլ մնաց ավանդապահ: Այնուամենայնիվ, քաղաքում նույնպես տղան քիչ հնարավորություն ուներ ինքնուրույն կերպով ընտրելու կյանքի ապագա ընկերուհուն, հաճախ ավելի քիչ, քան գյուղում, որտեղ բոլոր տղաներն ու աղջիկները միմյանց գիտեին մանկուց, միասին էին մեծացել, հասունացել և հասունացումից հետո էլ հեռվից հեռու պատեհություն ունեին իրար տեսնելու, խոսելու, երբեմն անգամ գաղտնի սիրաբանելու, միշտ մնալով պատշաճության սահմանում:

Այդ բանը դժվար էր քաղաքում: Սահմանադրության տարիներին Կ. Պոլսում ապրած ու ապա Երզնկա վերադարձած որոշ ծնողներ համաձայնվում էին, որ գեթ եկեղեցու շրջապատում զույգերը միմյանց տեսնեն, բայց սրանով էլ սպառվում էր արտոնության սահմանը:

Կուսական անաղարտության պահպանումը խիստ հսկողության տակ էր: Դրա ամենամեծ ավանդապահը հենց ինքը աղջիկն էր, որ այդ հարստությունը համարում էր իր գոյության իմաստը: Հարսին հոր տուն ետ ուղարկելու տխուր ու ամոթաբեր փաստը մահվան համազոր էր նրա համար, կար նաև երկու բարեկամ գերդաստանների բարոյական սնանկության վտանգը: Գոնե մեր սերունդը նման գայթակղություն չի հիշում:

Երզնկայում երբ տղան դառնում էր հասուն երիտասարդ, ծնողներն ու բարեկամները սկսում էին հետաքրքրվել հարսնացու ճարելու հարցով: Եղել են մարդիկ, որ նախօրոք, տարիներ առաջ, նկատի են ունեցել իրենց ապագա հարսնացուին կամ փեսացուին, նույնիսկ կատարվել են պեչլիկ քերթմեներ, այսինքն՝ օրորոցանչումներ (օրորոցը խաղել), երբ երկու ընտանիքներ՝ դեռևս իրենց երեխաները օրորոցում, որոշել են խնամի դառնալ և իրենց պայմանավորվածությունը հաստատել են օրորոցի փայտի վրա նշան դնելով, սակայն

այդ պայմանավորվածությունը հաղվադեպ է կենսագործվել, քանի որ մինչև երեխաների ամուսնական տարիքը հասնելը շատ փոփոխություններ էին տեղի ունենում երկու ընտանիքների ու տղայի և աղջկա կյանքում:

Միջնորդի դերն էլ թե՛ քաղաքում և թե՛ մանավանդ գյուղերում շատ նվազ էր, քանի որ ընտանիքի չափահաս անդամները հեշտությամբ կարող էին հանդիպել միմյանց ու ճանաչել, ուսումնասիրել իրենց հարսնացուներին կամ փեսացուներին:

Աղջկա համար մտավոր զարգացումը մինչև դարավերջը երկրորդական էր, քանի որ իգական դաստիարակությունը դեռ պահանջ չէր դարձել, իսկ մանավանդ հոգևորական և պահպանողական խավը այնքան էլ կողմնակից չէր դրան: Ամուսնության դեպքում երբեմն ուսումը նույնիսկ կարող էր թերություն համարվել այն պարզ տրամաբանությամբ, թե զարգացած աղջիկները ազատամիտ են լինում, «լեզուները երկար», կեսուր-կեսրայրի հանդեպ չեն պահում անհրաժեշտ հարգանք, խուսափում են տնային գործերից, հաճախ հաշվի չեն առնում անգամ ամուսիններին:

Հարսնացու ընտրելիս՝ առաջին նախապայմանը աղջկա աշխատասիրությունն էր, նաև որևէ շնորհք ունենալը, այսինքն՝ ձեռագործ, կարուձև և այլն: Երբ ծնողները մեկին հավանում էին, ամեն կերպ աշխատում էին, որ աղջիկն ու տղան էլ տեսնեն միմյանց: Ինչպես ասացինք, սովորաբար դա կատարվում էր եկեղեցի գնալիս:

Կողմերի նախնական պայմանավորվածությունն ստանալուց հետո, սկսվում էր լուռ բանակցությունը, որին հաջորդում էր աղջիկտեսի արարողությունը: Տղայի ծնողները, քավորն ու քավորկինը, որոնք Երզնկայում, առհասարակ արևմտահայերի մոտ կոչվում են կնքահայր ու կնքամայր, անցնում էին գործի: Նրանք մեկ երկու մոտ հարազատների հետ գնում էին աղջկա ծնողների տունը՝ աղջիկ ուղելու: Աղջկա կողմը իրազեկ էր լինում այդ այցելությանը, անակընկալի չէր գալիս, աշխատում էին աղջկան ավելի գեղեցիկ շորեր հագցնել, քաղաքավարական որոշ բաներ բացատրել:

Չնայած այս այցելությունը կատարվում էր երկու կողմերի նախնական համաձայնությունից հետո, այնուամենայնիվ սովորություն էր, որ աղջկա ծնողները սկզբում կխամերժելու դիրք բռնեին: Նրանք ասում էին թե իրենց աղջիկը դեռ շատ փոքր է, այդպիսի բաների մասին չի մտածում, թե պետք է ժամանակ տալ՝ մտածելու, հարազատների, բարեկամների կարծիքը հարցնելու:

Անշուշտ տղայի կողմը դա մերժում չէր համարում, ասում էր թե Աստուծո կամքն է, Աստված ինչ որ ուզի՝ այն էլ կլինի:

Ապա, երբ միմյանց իմացնում էին կողմերի վերջնական համաձայնությունը, տեղի էր ունենում խոսքկապի արարողությունը, որը փաստորեն նախօրոք բանակցության ավարտն ու օրինականացումն էր:

Խոսքկապը տեղի էր ունենում աղջկա տանը: Կատարվում էին նվերների փոխանակություն և հյուրասիրություն՝ ըստ տվյալ ընտանիքի նյութական հնարավորության: Չէին ձգտում անտեղի ցուցամոլության և իրենց ուժերից բարձր ընդունելության:

Խոսքկապից հետո սկսվում էր նշանադրության նախապատրաստությունը:

Դեռևս աղջիկտեսի, աղջիկ ուզելու ժամանակ լուրը տարածվում էր թաղամասով կամ գյուղով մեկ, երբեմն ավելի լայն շրջանում, եթե հայտնի գերդաստաններ էին միմյանց խնամի դառնում:

Նշանտուքի արարողությունը նույնպես տեղի էր ունենում աղջկա տանը, երկու կողմերի ավելի մեծ թվով մարդկանց մասնակցությամբ, որոնց մեջ իշխող տեղ ու հարգանք ունեին ծնողներն ու քավոր-քավորկինը:

Այցելողներից յուրաքանչյուրը որևէ նվեր էր տանում հարսնացուին, քանի որ ըստ էության աղջիկը առաջին անգամ էր երևում տղայի կողմի մարդկանց: Նա երեսը դեռ քողով ծածկած էր ներկայանում ապագա ամուսնու հարազատներին ու բարեկամներին, համբուրում էր նրանց ձեռքը: Գյուղերում ավելի, քան քաղաքում, սկսվում էր կողմերի միջև նվիրատվության սակարկությունը: Տղայի ծնողները հանձն էին առնում տալ հետևյալ նվերները՝ «Ձի մը աղջկան հոր, Սարգիսով սահաթ մը աղբորը, լահոռի շալ մը մորը, ջուխտ մը դունտուռա հորաքրոջը, ջուխտ մը օղ մեծ քրոջը, ջուխտ մը պիլեզիկ պզտիկ քրոջը, ռովել մը պզտիկ աղբորը, թոփ մը մանուսա քեռուն, թեզպեհ մը պապուն, ֆես մը քեռուն տղուն և այլն: Ասոնցմե զատ՝ հարսին համար ալ հանձն կառնեն տալ երկու զաթ խաս լաթ, ջուխտ մը ոսկի օղ, ջուխտ մը ոսկի պիլեզիկ, քեմեր մը, արծաթե թեփելիկ մը, քիրմանի շալ մը և այլն»[1]:

Նվիրատվության հարցը այս ձևով կարգավորելուց հետո կողմերը պայմանավորվում են հարսանիքի օրվա մասին:

Քահանան օրհնում է նշանի մատանին, վզնոցը, կամ ապարանջանը, որից հետո փեսացուն դրանք հանձնում է իր նշանածին, ապագա հարսնացուին: Երբեմն արարողությունը վերջանում է համեստ

---

[1] **Գ. Տեր-Վարդանյան,** *Երզնկա-Կամախ գավառարարքառը և ազգագրական հուշեր, էջ 144-145:*

մի սեղանով, երբեմն շարունակվում է երկար ժամեր, ճոխ սեղանների շուրջ, կարմիր գինու զորությամբ ստեղծելով ջերմիկ մթնոլորտ:

Նշանտուքի այս արարողությունը իրավունք է տալիս փեսացուին երբեմն այցելելու իր նշանածին, զրուցելու նրա հետ՝ ծնողների, հարազատների ներկայությամբ: Սովորաբար տղան յուրաքանչյուր այցի ժամանակ շաքարեղեն, բոհրած կաղին կամ մի այլ ուտելիք է բերում նշանածի համար, թեև նշանածից ավելի՝ այն բաժին է ընկնում տան փոքրահասակներին:

Շատ ուշ միայն, 1910-ական թվականներին, այս սահմանափակ հանդիպումները սկսեցին դուրս գալ աղջկա տան չորս պատերից, և նշանված զույգեր երևացին դրսում, միշտ խուզարկու աչքերի հսկողության տակ:

Նշանտուքի ժամանակաշրջանը հաճախ երկար էր տևում, 1–2 տարի, պետք է պատկերացնել կողմերի հոգեկան տառապանքը, տևական հուզումները, անհամբերությունը՝ վերջապես միմյանց վայելելու համար: Այդ ժամանակամիջոցը սահմանվում էր ոչ միայն միմյանց լավ ճանաչելու համար, ինչ որ շատ բնական էր, այլև երկու կողմերի հարսանեկան նախապատրաստությունների համար: Երբեմն դեր էր կատարում տղայի աշխատանքի կարգավորման հետ կապված հարցերի ձգձգումը, մասնավորապես քաղաքում, քանի որ գյուղերում նման հարց գրեթե չկար:

Հարսանեկան առաջին ծիսակատարությունները սովորաբար տեղի են ունենում կնքահոր տանը:

«Հարսանյաց նախորդ ուրբաթ օրը,- գրում է Գ. Տեր-Վարդանյանը,- կնքամայրը կուգա հրավիրելու իր սանը: Նախ՝ իր ձեռքով կմաղե հարսանյաց գաթային այյուրը, հետո կարմիր շարը կկապե իր սանին վիզը և կառաջնորդե զինք կնքահոր տունը: Կնքահայրն իր կարգին նույն երեկոյին իր տունը կհրավիրե գյուղին ազապ (ամուրի) տղաքը, որոնք կունենան իրենց առաջնորդը՝ ազապպաշի անունով: Նույնպես հարսին կնքամայրն ալ իր տունը կտանի իր սանը և անոր ընկերակցելու կհրավիրե գյուղին ազապ աղջիկները: Այսպես հարսանիքի առաջին խրախճանքները տեղի կունենան կնքահայրերու տուները մինչև շաբաթ լույս: Շաբաթ կեսօրին փեսան ազապներու առաջնորդությամբ և ազապպաշիի ընկերակցությամբ կածիլվի և լոգանք կառնե: Շաբաթ գիշեր փեսա և հարս իրենց կնքահայրերու տուներուն մեջ կհինայվին»[1]:

---

[1] **Գ. Տեր-Վարդանյան,** *նշվ. աշխ., էջ 145:*

Թատերական ուրույն մի պատկեր է փեսայի զգեստավորման ու սափրվելու տեսարանը, որտեղ կա թե երգ, պար, և թե կատակ ու ծիծաղ: Եթե հարսի հանդերձավորումը կատարվում է հուզիչ, դրամատիկ պայմաններում, կապված ծնողից բաժանվելու հոգեվիճակի հետ, հուզիչ են երգերը, լուրջ է շրջապատը, ապա փեսայի հանդերձավորման և սափրման հետ կապված արարողությունը ունի կատակերգական երանգ: Մթնոլորտը մի պահ լրջանում է, փեսայի զգեստի օրհնենքի պահին:

«Հուզիչ է մասնավորապես փեսային հալավօրհնեքը,- գրում է Գ. Տեր-Վարդանյանը,- փեսան կկենա հագած չալվար ու վերնաշապիկը: Մնացյալ հագուստները ափսեի մը մեջ՝ դրված են սեղանի մը վրա: Քահանան հանդիսավորապես ոտքի կկանգնի չուրջառով և կօրհնե հալավը: ... Նախ կմոտենա փեսային հայրը, կհամբուրե քահանայի աջը, հետո արտասվալից աչքերով (ուրախության արցունքներ) կմոտենա ու կը համբուրե իր փեսացու զավակին ճակատը: Սա ալ կծռի և խոնարհաբար կհամբուրե իր հոր ձեռքը: Հետո հայրը կհագցնե անոր բաճկոնը, որուն գրպանը կդետեղե ժամացույցը: Նույն ձևով կմոտենա մայրը և կկոճկե բաճկոնին կոճակները: Քույրը կդետեղե թաչկինակ մը անոր գրպանը: Աղապպաչին կկապե կարմիր չարը անոր վզեն և վերջապես կնքահայրն ալ կդնե ֆեսը անոր գլխուն»[1]:

Ինչ երգեր են երգել երգնկացիները փեսայի զգեստավորման պահին: Ահա մի քանի նմուշ.

Օրհնա սալղըճ, օրհնե փեսան,
Օրհնե ամենքս ալ միաբան:
Երգնկայու Սավուղ տեսեն,
Օրհնե այս նոր թագավորը:
Ո՞ւր է ասոր հարն ու մարը,
Թող գան տեսնան բոյն ու բուսը:
Ո՞ւր է ասոր քուրն, աղբարը,
Թող գան տեսնան եղբոր չնորհքը:
Հանեցին հիները հագուցին նորերը,
Այս թագավորին, այս նոր մանուկին:
Հագուցին մինթան, հագուցին մինթան,
Այս թագավորին, այս նոր մանուկին
Լուսավորիչ հայոց հայրը,
Օրհնե այս մեր թագավորը:

[1] **Գ. Տեր-Վարդանյան,** *նշվ. աշխ., էջ 145-146:*

Հարսանեկան բուն արարողությունը կատարվում է կիրակի օր: Սկսվում է փեսայի տանը: Դհոլ-զուռնան դռնե դուռ շրջելով՝ մեկ մեկ կանգ է առնում այն տների առաջ, որոնք հրավիրվում են հարսանիքի: Նվագում են հրավերի եղանակը, որ ծանոթ է բոլորին: Միաժամանակ՝ ամեն տան բաժանվում է մի մեղրամոմ, որը համապատասխանում է հրավիրատոմսի:

Գյուղերում առհասարակ հարսանեկան հանդեսներին մասնակցում են բոլորը, առանց ազգության ու բարեկամության խտրության:

Երեկոյան կնքահայրն ու ազապները փեսին տանում են հոր տունը: Հարսն էլ կնքամոր ու ազապ աղջիկների ուղեկցությամբ տարվում է իր հոր տունը:

Ուշագրավ է, շատ հանդիսավոր և հուզիչ՝ հարսի զգեստավորման վեհ արարողությունը, երբ հասակակից աղջիկներն իրենց ընկերուհուն հագցնում են հարսանեկան զգեստները, պատրաստում նրան ամուսնական սուրբ սեղանին:

Հոգեպարար ու քնարական մեղեդիներով, հավուր պատշաճի երգերով նորահարսին զարդարում են ինչպես մի եթերային էակ, հրեշտակ, փոխնիփոխ գովերգելով հարսնացուի բարեմասնությունները, լինեն դրանք արտաքին գեղեցկության վերաբերող, թե բնավորության:

Ահա Երզնկա–Կամախ գավառների հարսանիքներում հարսի զգեստավորման ընթացքում երգվող երգերից նմուշներ.

Եկանք հարս մը տանինք, ալով ու լալով,
Գլոխը կապեցինք սինբիլի շալով,
Աչկերը սրբեցինք մենդիլին ալով:
Մի լար, անամ, մի լար, հարս կուգաս մեզի,
Աղվոր խնամտըվոր բերեր ինք քեզի:
Հագածդ ալ ըլլա, կապածդ դեղին,
Սրտիկդ տաք ըլլա մեր աղա տղին,
Ոտքդ ուղուր ըլլա մեր տուն ու տեղին...
Աղվոր, քեզ ո՞ր մարն է բերեր,
Ան թուխ աչեր մարն է բերեր:
Մարն է բերեր մեզի համար,
Մենք եկեր ենք քեզի համար,
Քեզ տի տանինք մեզի համար
Շալ ենք բերեր բոյիդ հարմար:
Հալավդ բերեր ենք, թևիկդ անցուր,
Հարսնառ եկեր ենք, մարիկդ լացցուր,
Աջահամբույրով կաթը հալալցուր:

Այս ամբողջ ծիսակատարության ժամանակ հարսը հուզված կանգնած է, տխուր, թախծոտ: Նա առաջին անգամ պիտի հեռանա հայրական տանից, որտեղ անցել են մանկության երջանիկ օրերը, հարազատ ու ջերմ մթնոլորտում: Հիմա պիտի գնա մի անծանոթ, խորհրդավոր աշխարհ, որի մասին ոչինչ չգիտի: Փոքր է, անփորձ, միամիտ: Ուզում է ամուսնանալ, բնության օրենքն է, այդպես են ցանկանում ծնողներն ու հարազատները, սակայն հեշտ չէ բաժանումը: Չի էլ կարող իր զգացումներն արտահայտել խոսքով կամ երգով: Նրա փոխարեն երգում են ընկերուհիները.

Մինչև կարմունջ եթամ, ետևես նայեցեք,
Կարմունջեն անդին ասնիմ՝ հույսերնիդ կտրեցեք.
Իմ կերած կերակուրս աղքատաց տվեք,
Իմ կերած հացս դուք հալալ ըրեք...

Մի ուրիշը երգում է.

Մի լար, աղվոր աղջիկ, աչվիդ կավրի,
Քեզի պզտիկ կարգողին տունը ավրվի...

Ավելի հուզիչ է դառնում տեսարանը, երբ աղջկան հայրական տնից դուրս են բերում: Լաց է լինում մայրը: Ամուսնացողի ընկերուհիները հարսի կողմից պատասխանում են.

Մի լար մայրիկ, մի լար, ես նորեն պի գամ,
Տասնըհինգ օր ետքը՝ էրիկովս տի գամ:

Փեսայի կողմի մարդիկ, սովորության համաձայն՝ բռնել են լաց եղող մորը, տարել նստեցրել են տան թոնիրի մոտ, «Թերևս անոր հանձնելով տան օջախի պահպանության հոգը»:

Ավելի տպավորիչ, հուզիչ է եղել հարսի բաժանումը մորից: Պատահել է, որ նա փաթաթվել է մորը, բարձրաձայն լաց եղել, չի ցանկացել հեռանալ հայրական օջախից:

Դրամատիկ այս երևույթի վրա ուշադրություն են դարձրել հայկական հարսանիքների ներկա եղող օտարները և կասկած հայտնել, թե արդյո՞ք իրական ապրումներ են տեսնում իրենք, թե հարսը պարզապես խաղում է...

Անշուշտ իրական են եղել, մանավանդ երբ աղջիկը ակամա է մտել ամուսնական լուծի տակ, սրտովը չի եղել փեսացուն:

Բաժանման այս տեսարանից հետո հարսին ուղեկցող թափորը դուրս է եկել աղջկա տանից և կրոնական ու աշխարհիկ երգերով հասել է եկեղեցի, որտեղ կատարվել է պսակի արարողությունը: Այստեղ հարսին տրվել է վերջին խոսքը. քահանայի «Տէ՞ր ես որդի», հարցին պատասխանել է դրական և ընդմիշտ կապվել կյանքի նոր ընկերոջ հետ:

Պսակից հետո օրինավոր ամուսինները տարվել են փեսայի տունը: Ճանապարհի զույգ կողմերին, ծանոթ ու անծանոթ մարդիկ, մասնավորապես աղգականները, բարեկամները, ի պատիվ ամուսնացյալների՝ իրենց դռների առաջ սեղաններ են բաց արել, սովորաբար մրգեր, խմիչքներ, աղանդերներ՝ զարդարված մոմերով, հայտնելու համար իրենց ուրախությունը:

Վերջապես հարսանեկան թափորը կանգ է առել փեսայի տան դռանը: Ի վիճակի եղողները տան շեմքի վրա մորթել են մոմերով լուսավորված խոյ՝ հարսի ու փեսի ոտների առաջ, որպեսզի նրանց մուտքը այդ տուն բախտավոր լինի: Հետո փեսայի հայրն ու մայրը իրենց թևերով կազմել են կամար՝ դռան ներսի կողմը, որի տակից անցել են հարսն ու փեսան: Այս ամբողջ ժամանակամիջոցում հարսի դեմքը ծածկված է եղել:

Սկսվել է հարսանիքի եզրափակիչ մասը՝ երգ ու պարով: Աղջիկների խումբը երգել է.

Թագվորի մեր դուրս արի,
Տես քեզ ինչ ենք բերեր,
Քեզ կարմիր վարդ ենք բերեր,
Քեզ մանուշակ ենք բերեր,
Քեզ տուն չինող ենք բերեր,
Քեզ օգնական ենք բերեր:

Մոր կողմից՝

Եկուր հարսս եկուր, մանտրտիկ եկուր,
Խալին փռեր եմ, վրայեն եկուր
Կեսրայրդ է պարողը, բարով եկուր:

Ճաշից հետո ավելի է տաքացել հարսանեկան ուրախությունը: Կատարվել են մենապարեր, երգեր: Նախ պարել են հարս ու փեսան, ապա՝ մասնակիցները: Նվագը բաղկացած է եղել ջութակից, ուտից,

սանթուրից և դափից: Նվագողները ընդհանրապես եղել են տեղացի հայեր, որոնք մասնակցել են նաև թուրքական հարսանիքների, խնջույքների, դրա համար էլ հատկապես օսմանյան սահմանադրության հռչակումից հետո իրենց ծրագրերում լայն տեղ են տվել նաև թուրքերեն երգերին, մեծ մասամբ հորինված իրենց կողմից, կամ այլ աչուղների:

Գյուղերում հիմնական նվագը եղել է դհոլ-զուռնան, մանավանդ եթե գյուղը եղել է զուտ հայկական:

Հարսանեկան ուրախությունից հետո կնքահայրը փեսին տարել է իր տունը, որտեղ մնացել է երեք օր, մինչև չորեքշաբթի երեկո, երբ դարձյալ կնքահոր ուղեկցությամբ վերադարձել է հոր տունը, առագաստ մտել:

Հարսանեկան այս ծիսակատարությունները, արտաքին չղարչով մնալով հանդերձ հայ եկեղեցու օրենքներին հնազանդ, իրենց էությամբ խորապես աշխարհիկ են եղել, ունեցել են ավելի շատ հեթանոսական դարերից եկող բնապաշտական տարրեր, քան հոգևոր, որին շատ քիչ ենք հանդիպում ամբողջ արարողության ընթացքում, հանդիպում ենք միայն պսակի կարճ օրհնենքի պահին: Անգամ քահանայի միջամտությունը, Մաշտոցից ընթերցվող հատվածը հեռու է անդրաշխարհիկ խոստումներ պարունակող աղոթք լինելուց և խարբսխված է աշխարհիկ կյանքի, մարդկային փոխհարաբերություններում անհրաժեշտ խորհուրդների վրա:

Հարսանիքի հաջորդ երկուշաբթի օժիտի օրն է, որ բերվում է փեսայի տուն: «Գեղեցիկ փայտե կամ մետաղե սնտուկի մը մեջ դետեղված հարսանեկան օժիտը բեռնակրի մը չալակը կդրվեր, և հարսին մոտավոր հարազատներուն (մայր, քույր, կնքամայր) ընկերակցությամբ կտարվեր փեսային տունը»:

Օժիտը բաց անելու արարողությանը ընդհանրապես մասնակցել են կանայք ու աղջիկներ: Օժիտի մեջ լինում էին աղջկա կողմից պատրաստված ձեռագործները, անձեռնոցներ, զգեստներ, ծնողների կողմից իրենց աղջկան նվեր տրված զարդեր, տնային առարկաներ:

Ամուսնության հաջորդ զատկին, ծաղկազարդի օրը, աղջիկը հատուկ մարդկանց ուղեկցությամբ վերադառնում էր մոր տունը: Դա լինում էր նրա առաջին այցը՝ տանից հեռանալուց հետո: Նա ընկնում էր հայրական միջավայրը, որտեղ ամեն ինչ հարազատ է, սիրելի, անգամ տան իրերը, ընտանի կենդանիները, սենյակները, թոնրատունը, ամեն, ամեն ինչ: Եվ՝ ամենից հարազատը՝ մայրը, որի հետ ամուսնությունից հետո առաջին անգամ պիտի զրուցի սրտաբաց, պատմի

բաներ, որոնք չի կարող պատմել ուրիշի: Ուրվագծելու է այն աշխարհը, որի մեջ ապրում է: Անկախ այն բանից, թե ինչ հրապուրիչ կողմեր ունի, որքան է սիրում երիտասարդ ամուսնուն և որքան է սիրվում նրա կողմից, աղջիկը հոգով կապված է մոր հետ, չի ուզում, որ այցելությունը շուտ վերջանա, շուտ վերադառնա իր նոր տունը, որտեղ բացի մեկից՝ մյուսները օտար են, այն չեն: Զգիտի նրանց հոգեկան աշխարհը, նրանք էլ իրենը չգիտեն՝ ոչ կեսուրը, ոչ կեսրայրը, առավել ևս տալերը: Նոր միջավայրի շատ մարդկանց հետ նա խոսելու իրավունք էլ չունի: Համր հարս է:

Այդ նույն առիթով փեսան էլ այցելում է աներանց տունը, չնորհավորելու զատիկը: Զոքանչը փեսայի գրպանն է դնում մետաքսե թաշկինակ և օղակաձև մի տեսակ գաթա, որ կոչվել է կառև:

Հարսանիքը եթե մեծահարուստների համար փառքի ցուցադրության առիթ էր, ապա չքավորների, աղքատ գյուղացիների համար ծանր բեռ էր, հաճախ պարտքերի դուռ բաց անող բեռ: Երբեմն եթե կողմերից մեկնումեկը հարուստ էր, մյուսը՝ չքավոր, վերջինս ակամա պիտի կատարեր նվազագույն ծիսակատարությունը, ամոթով չմնալու համար դուռ դրացիների, առաջին հերթին՝ իր խնամիների մոտ:

3. ՀԱՐՍԸ

Հայ նահապետական ընտանիքում հարսը ապրել է կիսաբանտարկված վիճակում, զուրկ՝ իրավական շատ կողմերից: Նոր միջավայրում նրա միակ հարազատը եղել է ամուսինը: Այն էլ կողմերից մեկնումեկը եթե ունեցել է նախաամուսնական թեկուզ լուռ սեր, հեռակա զգացում մի ուրիշի նկատմամբ այդ պլատոնական սերը տարիներ շարունակ մաշել է ենթակային, որոշ սառնություն մտցրել ամուսնական փոխհարաբերություններում, որքան էլ որ նրանք հավատարիմ են մնացել միմյանց:

Բայց եթե նույնիսկ զույգերը եղել են երջանիկ, դարձյալ նորահարսը իրեն զգացել է բանտարկված վիճակում, այն պարզ պատճառով, որ չրջապատի մարդկանց մեծ մասի հետ իրավունք չի ունեցել խոսելու որպես նորահարս:

Երգնկացիների մոտ խստությամբ պահպանվել է հարսնության սովորությունը, մանավանդ գյուղերում: Քաղաքում մասամբ թուլացել է 19-րդ դարի վերջերից, երբ պարզապես սեղմվել է այն մարդկանց չրջանակը, որոնց հետ հարսը պարտավոր էր չխոսել՝ առ ի հարգանս: Բայց մնացել էին՝ առաջին հերթին կեսուր-կեսրայրը, մա-

նավանդ վերջինս, տեգրերը, ընտանիքի անդամներից, առհասարակ Թաղի մարդկանցից տարեցները:

Հարգանքի տուրք համարվող այս սովորությունը հարսին պատճառել է վիշտ, հուզում, անգամ առիթ տվել ողբերգական դեպքերի:

Հայրս՝ Թարզի Խաչիկը, գրի է առել նահապետական այդ սովորության տխուր հետևանքները ցույց տվող ցնցող մի դեպք, որ պատահել է Երզնկայի հայկական գյուղերից մեկում, 1890-ական Թվականներին և երկար տարիներ պատմվել է քաղաքում:

Ամուսնանում է մի նորահարսի եղբայրը: Ծնողները խնդրում են կեսրայրից ու կեսրոջից, որ Թույլ տրվի քրոջը մասնակցելու եղբոր հարսանիքին: Համաձայնվում են խնամիները: Հարսին վեց ամսական երեխայի հետ ձիով տանում են եղբոր հարսանիքին: Մի քանի օրից կեսրայրը գնում է նրան ետ բերելու: Ձիու վրա նստում է հարսը՝ երեխան գրկին, իսկ կեսրայրը ոտով է գնում, ձիու սանձը բռնած: Երբ անցնում են խիտ անտառից, հանկարծ երեխայի պարուրը անցնում է ծառի ճյուղին, խլվում մոր գրկից: Մայրը բնազդորեն ճչում է, բայց կեսրայրը չի լսում: Ամաչում է ավելի բարձր ձայն հանել, իսկ խոսել՝ իրավունք չունի... չրջապատում էլ չկա փոքրահասակ երեխա, որպեսզի նրա միջոցով հայտնի պատահածը:

Երեխայի կորուստի ահավոր մրմուռը սրտում հասնում է գյուղ: Կեսրայրը նոր միայն նկատում է, որ երեխան մոր գրկում չէ: Հարցնում է, իսկ հարսը լաց է լինում. դեռ իրավունք չունի խոսելու: Կեսուրն է գալիս, հարցնում, վերջապես մի փոքրիկ երեխայի միջոցով հայտնում է պատահածը: Կեսրայրը նստում է ձի, սուրում դեպքի վայրը, սակայն տեսնում է, որ գայլերը հոշոտում են երեխային...

Հարսի համար նվազ ծանր չի եղել կեսրոջ տևական ազդեցությունը:

Հարս ու կեսրոջ փոխհարաբերությունների հարցը զբաղեցրել է շատ ուսումնասիրողների, գրվել են գրքեր: Ավելորդ ենք համարում մտնել մանրամասնությունների մեջ: Ասենք միայն, որ այդ փոխհարաբերության վնասը հարսը ավելի է կրել առաջին հերթին վերոհիշյալ իրավական սահմանափակման, խոսելու, իր իրավունքները պաշտպանելու, արդարանալու իրավունքից զուրկ լինելու պատճառով:

Երզնկայում տարածված մտայնություն է եղել այն, որ կեսուրները ավելի են պաշտպանել իրենց հարսների պատիվը, քան մայրերը: Այդ մասին անգամ ստեղծվել են պատմություններ: Դա էլ իրավունք է տվել որդիներին հավատ ընծայել իրենց մայրերին, վստահ, որ

նրանք առաջին հերթին չահագրգռված են ընտանեկան պատիվը բարձր պահելու ձրգտումով:

Հարսի վիճակի մեջ նկատելի փոփոխություն է մտել, երբ նա մայր է դարձել: Ամուսնության առաջին ամիսներից շրջապատի ուշադրությունը հարսի վրա է բևեռվում, ուզում են իմանալ, թե հղիության նշաններ կա՞ն: Գերդաստանի հետագա պահպանման հարցը հուզել է հայ ժողովրդին բոլոր դարերում, անգամ տնտեսական ու քաղաքական դժվարությունների շրջանում: Զբեր կինը միշտ էլ կորցրել է համակրանքն ու սերը ընտանիքում: Միջամտել են մարդիկ, քահանաները, ժողովրդական հեքիմները, խորհուրդներ տվել, բույսեր օգտագործել, աղոթել, սերունդ խնդրել Աստծուց, ավելի հաճախ դիմել են վանքերին: Եղել են դեպքեր, երբ կանայք ուշ են հասունացել և ծննդաբերությունն էլ ուշ է սկսվել:

Հղիության հենց առաջին ամիսներից Երզնկայում հարսներն արժանացել են բացառիկ գուրգուրանքի թե՛ ամուսնու և թե՛ կեսրոջ ու կեսրայրի կողմից: Ծանր աշխատանքներ չեն տվել նրանց, հետևել են սննդին, պատրաստություններ տեսել ապագա ժառանգի համար, ապահովել բարուրի շորերի հարցը, պատվիրել փայտյա օրորոց, վրան կախել կապույտ ուլունքներ, որպեսզի չարքերն աչքով չտան նորածինին:

Ծննդաբերությունը բացառապես կատարվել է տատմայրերի միջոցով թե՛ Երզնկա քաղաքում և թե՛ գյուղերում: Տատմայրերի պաշտոնն է եղել ոչ միայն երեխան ընդունելը, այլև մոր նախնական խնամքը՝ ծննդաբերության առաջին ամիսներին:

Եվ ահա երզնկացի հարսին տեսնում ենք օրորոցի մոտ: Ընդամենը մեկ երկու տարի առաջ անհոգ թռչկոտող, ճովողող աղջնակը հիմա մայր է: Օրորոցը յուրահատուկ թարմության չունչ է բերում ընտանիքին: Տան ամենամռայլ անդամներն անգամ, ի տես օրորոցում պառկած մանկիկին, փոխվում են հոգեպես, կարող ենք ասել բնավորությամբ: Ժպիտը ճառագայթում է բոլորի դեմքին: Օրորոցի մոտով ամեն անցնող մի ակնարկ է գցում շրջապատի եռուզեռին անտեղյակ մանկան վրա, որն աստիճանաբար սկսում է ինչ որ բան հասկանալ, հասկացնել, ձայներ հանել:

Ամենամեծ հեղաշրջումը կատարվում է հարսի հոգեկան աշխարհում: Նա հիմա մայր է, տանը ունի երկու հենարան, մեկը՝ ամուսինը, որ այժմ չատ ավելի հոգատար ու գուրգուրող է իր նկատմամբ, մյուսը՝ նորածինը, որն օրեցօր բացվում է ծաղկի նման, կենդանացնում իրեն: Հիմա չխոս հարսը պահեր է գտնում խոսելու նորածինի հետ, օրորներ ասելու նրան, հաղորդակից դարձնելու իր վշտերին ու

ապրումներին, ինչ փույթ թե մանկիկը չի հասկանում, չի պատասխանում իր հարցերին: Նրան թվում է թե նա և՛ հասկանում է և՛ պատասխանում: Մայր ու որդու զգացումները միայն բառերով չեն արտահայտվում, կա հոգեկան հաղորդակցության կապը: Ահա նա ժպտում է, թաթիկներով խաղում մոր խոպոպների հետ, ձայներ հանում, որոնք այնքան բազմիմաստ են, այնքան հարուստ հույզերով:

Գերբնական հաղորդակցության ներշնչանքներ են օրորոցային այն սքանչելի երգերը, որ երգել են նորահարս մայրերն՝ իրենց երեխաներին քնեցնելու համար: Դրանց մեծ մասը ստեղծվել են խկապես օրորոցի մոտ, ոչ մի երգահան չի կարող այնքան հույզ ու բազմերանգ զեղումներ հաղորդել օրորոցային երգերին, որքան մայրը: Նույնիսկ երգահանների կողմից մշակված նման երգերի ատաղձը, հոգեպարար չաղախը նախ մայրերն են հորինել:

Օրորոցային երգերի մեջ հազվադեպ ենք հանդիպում ուրախ տրամադրության, դրանք մեծ մասամբ թախծոտ են, վշտալի: Եվ դա միանգամայն հասկանալի է: Օրորոցային երգը ամենից առաջ արտահայտում է մենակության խոր զգացումը, իսկ հարսը մենակ է աշխարհում, քանի որ նա ամուսնուն անգամ գիշերներն է միայն տեսնում, իսկ քանի քանի վարդ աղջիկներ՝ օրորոցի մոտ նստելուց, հաղիվ երջանկության ճառագայթը թոնրատան առաստաղից ներս ընկած՝ ակամա մնացել են մենակ, երբ ամուսինը մեկնել է պանդխտության՝ փող վաստակելու: Պանդխտությունը հաճախ տևել է տարիներ, երբեմն եղել է ընդմիշտ բաժանման առիթ, երբ ամուսինը Կ. Պոլսում զոհ է գնացել որևէ հիվանդության կամ ամուսնացել է մի ուրիշի հետ, մոռանալով օրորոցի մոտ մորմոքվող, հոգեպես ու մարմնապես մաշվող նորահարսին:

Ու հիմա հարսի շրթներում օրորոցային երգին փոխարինել է պանդխտության թախծոտ երգը.

Տարին տասներկու ամիս,
Դուն ծովուն քովը կկենաս,
Ծովը մահանա կընես,
Ինձ քենե հասրաթ կու պահես:
Թևերս կարմունջ կապեմ
Ծովու վրայեն անցնիս գաս:
Մենտիլդ աղտոտ է,
Ղրկե լվանամ,
Դնեմ սև աչերուս,
Պառկիմ քնանամ:

Ու արցունքներ, արցունքներ օրորոցի փայտի վրա, լվացվող շորերի վրա, կերակրամանների վրա, արցունքներ՝ հայր աղերսող մանկան կողմից, ամուսին աղերսող հարսի կողմից, որդուն փնտրող մոր կողմից:

Ու այս բոլորի մեջ հարսի միակ սփոփանքը երեխան է, լինի նա օրորոցում, թե արդեն օրորոցից դուրս:

Ինչպիսի՞ օրորոցային երգեր են երգվել Երզնկայի գավառում ու գյուղերում: Ոչ ոք ժամանակին չի հավաքել դրանք, իսկ այժմ արդեն ուշ է, չկա ո՛չ Երզնկան, ո՛չ հին երզնկացին:

Անշուշտ հենց Երզնկայի գավառում ստեղծված պիտի լինեին օրորոցային երգեր, բայց երգվել են նաև այլ վայրերում տարածված-ները: Գեթ մեր գերդաստանում 150 տարուց ի վեր երգվել է «Անուշ քնիկ աչերն առեր» տողով սկսվող օրորոցային սքանչելի երգը, որի եղանակն էլ այնքան ներդաշնակ է բառերին: Գրված պիտի լինի 1830-ական թվականներին, տպագրված է 1852-ին՝ «Բուրաստան» հանդեսում, 1868 թվականին՝ Մ. Միանսարյանի «Քնար հայկակա-նում», այնուհետև արդեն տասնյակ երգարաններում: Հեղինակն է Հովսեփ Մալեզյանը, երաժշտությունն էլ հորինել է Արիստակես Հիսարյանը:

Նկատի ունենալով երգի հնությունը, Երզնկայի գավառում ու Դերջանում լայնորեն տարածված լինելու փաստը, բերում եմ այստեղ աննշան կրճատումով.

Անուշ քնիկ աչերն առեր,
Անուշ հովերն ալ տարուբեր,
Իմ տատրակիս քունն է եկեր
Անուշ երգով ըսեմ օրոր:
Ես քուն չունիմ, անգութ մայրիկ,
Հերիք աչերս կապես, հերիք,
Մեկ պահիկեն կընեմ պաճիկ
Ձիս արձակե, մըսեր օրոր:
Մինչև չիլան մատաղ մանկտիք,
Միծ չեն ի տար անոնց, Գառնիկ,
Դուն չլացած, իմ մեկ հատիկ,
Ես ծիծ կուտամ, կըսեմ օրոր:
Խղճուկ սրտով ձայն եմ ձգեր,
Կը ճըվճըվամ, դուն չես լըսեր,
Անուշ ձայնիդ ես զմայլեր,

Ես կուլամ, դուն չես լսեր։
Արցունքներդ մարգարտի պես
Երեսդ ի վար Ինչ կը թափես.
Մի լար ձագուկ, մի լար, մեղք ես
Ով կուզես ան ըսե օրոր։
Գիրկդ ինծի հանգստարան,
Միծերդ բերնիս անուշ ծորան,
Իրիկվան դեմ պառկիմ օրրան,
Աչքս գոցե, ըսե օրոր։
Քնացնեմ իմ աղավնիս
Մեծացնեմ սիրով որդիս
Կարմիր վարդի նման բացվիս,
Շուքդ նստիմ, ըսեմ օրոր[1]*։*

[1] **Մ. Մ. Միանսարյանց,** *Քնար հայկական, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 120–122։*

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՅԻ ԱՆԳԻՐ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

1. ԵՐԶՆԿԱՅԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Երզնկայի գավառում վերջին հինգ հարյուր տարիների ընթացքում կողք կողքի ապրել են երեք ժողովուրդներ: Դրանք են՝ երկրի բնիկներ հանդիսացող հայերը, 16–17-րդ դարերից լեռնային շրջաններում ապրող քրդերը և նվաճող, տիրապետող տարրը՝ թուրքերը:

Թուրքերը և քրդերը գրականությանը գրեթե անհաղորդ են մնացել: Քրդերի մոտ տիրել է բացարձակ տգիտությունն ու անգրագիտությունը, հետևաբար բացառվել է գիր ու գրականությունը: Քանի որ նրանք տառեր չեն ունեցել, անգամ օտար միսիոներները նրանց մեջ քրիստոնեություն տարածելու համար հարկադրված են եղել Աստվածաշունչն ու Ավետարանը թարգմանել քրդերեն և հրատարակել հայերեն տառերով: Կարևորը այն չէ, թե եվրոպացի այդ միսիոներները ինչ արդյունքի են հասել և քանի ընթերցող են ունեցել, կարևորն այն է, որ այդպիսի փորձ կատարվել է և հնարավորություն է տվել ամերիկյան Պորտ ընկերությանը՝ Ավետարանի թարգմանությունների թիվն ավելացնել ևս մեկ միավորով...

Թուրքերի մոտ ստեղծվել է արաբատառ գրականություն, որին միանգամայն անհաղորդ է եղել աշխատավոր ժողովուրդը:

Թե՛ քրդերի և թե՛ թուրքերի մոտ, բնականաբար պիտի զարգանար անգիր բանահյուսությունը՝ երգեր, հեքիաթներ, առակներ, առածներ:

Այդ բանահյուսությունն այնքան կենսունակ է եղել, որ ազդել է նաև Թուրքիայում ապրող մյուս ժողովուրդների, այդ թվում և հայերի վրա: Նրանց զգալի մասը, մասնավորապես քաղաքային ազգաբնակչությունը, երգել են թուրքերեն երգեր, պատմել հեքիաթներ, օգտագործել առածներ:

Ի տարբերություն Հայաստանի շատ գավառների, որոնց անգիր բանահյուսությունը հավաքել են ժամանակին, տպագրել տարբեր

ժողովածուներում, պարբերականներում, ամենից շատ Ե. Լալայանի «Ազգագրական հանդեսի» հատորներում, Երզնկայի անգիր բանահյուսությունը մնացել է անտեսված: Հատուկենտ հեքիաթներ, առածներ են տպագրվել բարբառային անաղարտությամբ: Մի քանի նմուշ տպագրվել է Կ. Պոլսի «Բյուրակն» ազգագրական պարբերականում, մեր օրերում էլ որոշ նշումներ գտնում ենք Գ. Սյուրմենյանի, Գ. Տեր-Վարդանյանի գրքերում:

Քսանից ավելի հեքիաթներ, բազմաթիվ առածներ գրի է առել հայրս՝ Թարգի Խաչիկ Տեր-Ստեփանյանը, սակայն ոչ թե բարբառով, այլ գրական լեզվով, բարբառի աննշան հատկանիշների պահպանումով:

Վերջապես՝ Դ. Ա. Կոստանդյանի «Երզնկայի բարբառը» աշխատության վերջում գտնում ենք Երզնկայի բանահյուսությունից նմուշներ բարբառային առանձնահատկությունների, լեզվական օրինաչափությունների պահպանմամբ: Դրանց մի մասը մեզ արդեն հայտնիներն են, տպագրված անցյալում, մի մասը գրի են առնված մեր օրերում, տարեց երզնկացիներից:

Կա մի ուշագրավ երևույթ: Մինչդեռ Երզնկայի գավառի գյուղերը բացառապես եղել են հայախոս և պատմվող հեքիաթները, ասվող առածները, կատարվող երգերն էլ հայերեն էին, բուն քաղաքում հայերի և թուրքերի չափումն այնքան մեծ է եղել, որ արդեն 19-րդ դարի սկիզբներից Երզնկայի հայկական ընտանիքներում օգտագործվել են թուրքերեն առածներ, մասնավորապես տղամարդկանց կողմից, որոնք չուկայում խոսել են գերազանցապես թուրքերեն:

Հայկական նույն հեքիաթը հաճախ պատմվել է թե՛ հայերեն և թե՛ թուրքերեն: Ըստ ունկնդիր միջավայրի, պատմվել է հեքիաթի հերոսների կամայական անվանափոխությամբ կամ ազգությունների փոփոխությամբ: Երբեմն բացասական հերոսները հայերի մոտ դարձել են թուրքեր, թուրքերի մոտ՝ հայեր: Հայրս, որ հայտնի հեքիաթասացող էր, հեքիաթները պատմում էր հայերեն, միջի առածները, երբեմն որոշ նախադասություններ՝ թուրքերեն:

Ինչպես առհասարակ բոլոր հեքիաթները, Երզնկայում ստեղծված կամ պատմվածներն էլ ունեցել են հրաշապատում բովանդակություն: Եվ դա միանգամայն հասկանալի է: Մարդ արարածն իր իղձերը, ցանկությունները, այսինքն՝ ինչ չի կարողանում ձեռք բերել կյանքում, ուզում է ձեռք բերված տեսնել հեքիաթի մեջ, որը մի տեսակ երազային երանգ ունի:

Բայց շատ հեքիաթներ կառուցված են եղել խորապես իրական, մարդկային փոխհարաբերությունների վրա, դրվագները միանգամայն բնական են, կենդանի, համոզիչ, նաև դաստիարակիչ:

Հեքիաթը, միաժամանակ ժողովրդական ստեղծագործությունների մեջ ամենից կենսունակը, տարածվածը, մի ժողովրդից մյուսին փոխանցվածն է:

Տարբեր վայրերում ստեղծված հեքիաթները բերնից բերան հեշտությամբ տարածվում են երկրեերկիր, պատմվում, յուրաքանչյուր դեպքում ենթարկվելով փոփոխության՝ ըստ պատմողի երևակայական թռիչքի, նաև նոր միջավայրի թելադրանքի: Փոխվում են գործող անձանց անունները, տեղանունները, հագվադեպ՝ նաև սյուժեն:

Ինչպիսի հեքիաթներ են պատմվել Երզնկայում: Քիչ բան գիտենք: Մեզ հասածների թիվը չի անցնում մի քանի տասնյակից, մինչդեռ պատմվել են հարյուրավոր հեքիաթներ:

Երզնկացի Արամ Ազնավուրյանն իր «Հեքիաթներ և զվարճալիքներ» գրքում մեջ է բերվել բավականաչափ հեքիաթներ, որոնք պատմվել են ԱՄՆ-ում ապրող երզնկացիների կողմից: Դրանք գրական լեզվով, երբեմն անգամ ամերիկյան կոլորիտով են գրված և բանահյուսական մեծ արժեք չեն կարող ներկայացնել, մանավանդ որ մեծ մասը ոչնչով չի կապվում Երզնկայի հետ:

Երզնկայում, Դերջանում պատմվող բազմաթիվ հեքիաթներ էլ գրի է առել Թարզի Խաչիկը արդեն հիշատակված ձեռագիր Դավթարում, որը պահվում է մեզ մոտ: Եվ որովհետև նա այդ բոլոր հեքիաթները լսել է անձամբ իր հորից՝ Մարտիրոսից, իսկ վերջինս Երզնկայում ճանաչված հեքիաթ ասացող է եղել, հետևաբար հեքիաթները պահել են տեղական բույրն ու առանձնահատկությունը, թեև դարձյալ բարբառով չէ, որ գրի են առնվել: Հետո՝ Թարզի Խաչիկը մեծ մասամբ գրի է առել ոչ այնքան հրաշապատում, երևակայություն գրգռող պատմություններ, որոնց մեջ վճռական տեղ են բռնում հրեշները, դևերը, կախարդները, այլ՝ բացառապես իրական հենք ունեցող պատմություններ, նույնիսկ ակնհայտորեն հեքիաթային սեռին պատկանողները արտահայտում են իրական կյանքի այնպիսի դրվագներ, որոնք անհավատալի չեն թվում: Դրանցում երևում է երկիրը, հողի աշխատավորը, խաբողն ու միամիտը, շահագործողն ու նրանից վրեժ լուծող հնարամիտ, ճարպիկ, ամեն փորձանքից դուրս գալու միջոցներ գտնող դրական հերոսը, որին սիրել է ժողովուրդը: Այդպիսի հեքիաթներ են «Քել օղլանների» շարքը: Քել օղլանը՝ արե-

վելահայերի մոտ Քաչալ տղան, ճարպիկ է, հնարամիտ, սրամիտ, գիտի չարերին պատժել, վնասել հանուն խաբվածների, տուժածների, բայց նա վրեժ է լուծում, երբ տեսնում է, որ զոհը թույլ է, տկար, խաբվել է, անուժ է և չի կարողանում իր դատը պաշտպանել:

Թարգի Խաչիկի գրի առած և այստեղ ներկայացվող «Քել օղլանների» շարքում ներառնված են նաև պատմություններ, որոնք արևելքում շատ տարածված «Աքլոր եղբայր»-ից են վերցվել, մի հեքիաթ, որը տպագրվել է քանիցս և որտեղ դեպքերը պատմվում են հայերեն, առածները՝ թուրքերեն:

Գրքի՞ց է անցել Թարգի Խաչիկին, թե բերներբերան պատմվածներն են եկել հասել նրան, էական չէ: Դրանք խորապես ժողովրդական և հաճելի պատմություններ են, իսկ հերոսը այնքան նման Քել օղլանին:

Այս գրքում մենք Երզնկայի բանահյուսությունը ներկայացնելու ենք երկու բաժինով. ա) Երզնկայի բարբառով գրված հեքիաթներ, առածներ, մանրադեպեր, առակներ, բ) Թարգի Խաչիկի ձեռագիր Դավթարից այն հեքիաթները, ավանդությունները, որոնք հայերի հետ կապված պատմական եղելությունների, դեպքերի անդրադարձ են, կամ կապված են տեղանունների ստուգաբանության հետ, թեկուզ ժողովրդական իմաստավորումով, երկու դեպքում էլ ըստ էության Երզնկայի ու նրա շրջակա վայրերի դարավոր պատմության այս կամ այն շրջանին վերաբերող հնագույն ավանդություններ են, մանավանդ որ Եկեղյաց գավառի հնությունների հետ կապված ավանդությունները ամենևին գրի չեն առնվել որևէ հետազոտողի կողմից և դրանցից ոչ մեկը չենք գտնում անգամ Ա. Ղանալանյանի «Ավանդապատում» հիանալի գրքում:

Տեղ ենք տվել նաև «Քել օղլանների» շարքին, քանի որ «Հայ ժողովրդական հեքիաթներ» բազմահատորյակում տեղ գտած «Քաչալ տղի» հեքիաթներից ոչ մեկը չի հիշեցնում Երզնկայի «Քել օղլանին»:

Վերջապես տեղ ենք տվել մի շարք ավանդությունների, մանրադեպերի, որոնք կապված են հայ-քրդական հարաբերությունների հետ: Այդ մանրադեպերում հայը հանդես է գալիս խորամանկ, երբեմն խաբող, բայց և խելացի, ճարպիկ, իսկ քուրդը՝ միամիտ, բայց և բարի, ամեն ինչի հավատացող: Ի վերջո դրանք նույնպես կապվում են Երզնկայի հայերի պատմության հետ, և կարող են նյութ տալ հետազոտողներին:

Վեց տարեկան հասակում հորից լսել եմ հետևյալ ոտանավորը՝

Լուսինկա
Լուսինեն ինկա,
Ծովուն վրա
Կանթեղ մը կար,
Առնիմ ըսի
Մեջը ինկա:
Սուրբ Սարգիս,
Բռնե գոտիս,
Ձելլե հոգիս:
Արդարներուն դուռը բաց է,
Մեղավորներուն՝ գոց:

Այս ոտանավորը նույնությամբ գտնում ենք Գ. Տեր-Վարդանյանի գրքում «Ձելլե հոգիս» տողի անիմաստ աղավաղումով, որ դարձել է «Ճոնե հոգիս»: Գրքի հեղինակը, գլխի չընկնելով, որ «Ճոնե» բառ չկա և պետք է աղավաղված լինի, ասում է, թե բառարանների մեջ նայել է և չի գտել այդ բառը, ուստի պետք է ենթադրել, որ աղավաղված է: Մեր հիշած տարբերակը պարզ է դարձնում իմաստը:

Գ. Տեր-Վարդանյանը բերում է մի քառյակ էլ, որ նույնպես լսել եմ հորիցս.

Արև կուգա, ձուն կուգա,
Տերտեր պապան տուն կուգա:
Փիլաֆ կեփիմ եղ չիկա,
Ղառղառներուն տեղ չիկա[1]:

Վերջին տունը ենթակա է փոփոխության, տարբեր անունների օգտագործման, ըստ օրվա խնջույքի մասնակիցների:

2. ՀԵՔԻԱԹՆԵՐ

Վարդապետն ու պառավը

Ժամանակին վարդապետ մը ընեն փոքրավոր մը ճամփա կելլան: Կուգան կը հասնին գեղ մը ու միսաֆիր կըլլան պառավի մը տունը:

Վարդապետը առտուն կանուխ ժամ պեթա: Ինք իր սահմթը մոռցեր է իր կեցած վանքը: Կը դառնա պառավին կը հարցնե քի դուն

[1] **Գ. Տեր-Վարդանյան,** *նշվ. աշխ., էջ 50:*

սահաթ չունի՞ս: Ան ա կըսե քի չէ: Է, հրպա մենք ո առտուն ժամ պեթանք նը, վո՞վ մեզի ձան պիտ տա. խորոզ ա չունիք ո ընոր ձանեն արթիննաք: Պառավը կըսե քի ես գիչերը իրեք հեղ դուս կեթամ. ո՞ր մեկուն ատենը կուզեք ո ձան տամ ձեզի: Վարդապետն է կը դառնա կըսե քի ձունը մեր գլուխն ո քու չեռդ մեզի գոչնակ պիլա:

Խոսող ձուկը

Վախտով էրիկ մը ու կնիկ մը կան աղեր: Էրիկը թենբել, կնիկը՝ էդեբսիզ. ամեն օր, առտու լուսցածին պես կնիկը էրկանը առջև երկու հաց կը նետե, «Դուս, աչգիս մ երևար», կըսե աղեր: Էրիկը կերթա ծովուն քենարը կը նստի: Մեկ հացը ինք կուտե, մեկալնա ծովուն ձկներուն կը նետե, կեսը առտուն, կեսն ա ճաչուն: Պզտիկ ձկները հացը տանելու չաբալանմիչ կըլլան ըմա, ամեն օր մեծ ձուկ մը կուգա, ընոնց ձառքեն կառնե, կը տանի աղեր: Ըսանկ կանե տարի մը ամեն օր: Ան իսե ըս ձուկը ըդ հացերը իրենց մեծավորին կը տանի աղեր: Մեծավորնին ընանկ հիվանդություն մը կունենա ո բոլոր հեքիմները չին կանա ըորդցներ: Էն ետքը կըսեն քի, եկեր տարի մը հաց ուտե նը կըորդնա: Տարիեն ետքը մեծավորը կըորդնա, իրեն հաց բերող ձուկը առջևը կը կանչե, կը հարցնե քի ըս հացերը տարի մ է ուսկե՞ կը բերես: Ան կըսե քի ծովուն քենարը մարդ մը նստեր ամեն օր ըդ հացերը ծովը կը նետե: Ես ա կառնիմ քեզի կը բերեմ: Ըն սրային մեծավորը հրաման կանե ո եթա ըն մարդը բերե ո մուրադ տա իրեն ըրած լավության տեղը: Ձուկը դաթ մը լիղապ կառնե հետը, կեթա ծովուն քենարը: Լզու կելլա, կըսե մարդուն քի տարի մ է ծովը նետած հացերդ ես կառնեի, մեր մեծավորին կը տանեի: Մեր մեծավորը քու հացերովդ ըորդցավ: Իմացավ ո ըն հացերը ջուրը նետողը դուն ես, կուզե քեզի մուրադ տալ: Ել, սը լիղապները հագիր ո եթանք: Մարդը կը հագնի լիղապները, կիյնա ձկան ետևը, կեթա: Ճամբան ձուկ կը կըսե ո մեր մեծավորը քեզի իչ մուրադ ո տալ ուզե մընդունիր: Ըսե քի կուզիմ ո մինակ լեզվիդ ծարը հանիս իմ լեզվիս դպցնիս: Ան քեզի բան տալ պի ուզե, մ ընդունիր:

Կեթան, կելլան մեծավորին առջևը: Մեծավորը ինչ ո տալ կուզե՝ մարդը չընդունիր: Շատ խոսքեն ետք մեծավորը մարդուն ըսածը կանե, ըմա պատվեր կուտա ո մարդու չըսե: Էկեր ըսե, կը մեռնի: Ճամփան մարդը կը նայի ո ձկները ինչ ո կըսեն՝ կը հասկնա: Կելլա ծովեն դուս: Օգնած ըլլալուն՝ ծառի մը տակ քիչ մը կը պառկի ո հագչի:

Ծառին վրա երկու թռչուն կուգան կը կայնին: Մեկը մեկալին կըսե քի սը մարդուն նայե անոթի փորը ջրդբրդ կանե, չիտե ո ելլա գլխուն տակը փորե, խալկին մը ոսկին հանե, տանի կուչտ մը ուտե դեռ մեռած օրը: Մարդը ըս խոսքը լսածին պես կելլա գլխուն տակը կը փորե, խալկին մը ոսկին կը գտնա, մըջեն տորպակ մը ոսկի կառնե, մնացածին վրա կը գոցե ու տուն կեթա, ոսկին կուտա կնկանը ո խարջե: Կնիկը կը հարցնե քի ըս ոսկիները ուսկե՞ առեր ես: Եփո էրիկը կըսե քի առած տեղը չի կռնա ըսեր, կնիկը կը բաչլե պոռալ կանչել ու ըսել քի գողցեր ես, դուսը պի խապար տամ: Էրիկը յալվար կըլլա. Կնիկ, մ անիր. մ ըլլար, չիմ կռնա ըսեր: Ըսիմ նը կը մեռնիմ: Կնիկը հեչ խոսք մտիկ չաներ: Ըն վախտը էրիկը կնկանը կըսե քի, կնիկ, երկու օր մեռհլեթ տուր, ընկե ետքը կըսիմ: Կնիկը երկու օր մեռհլեթ կուտա:

Մեկալ օրը մարդը բակը նստեր դյուչյունմիչ կըլլա քի ի՛չ պի ըսեր ո կնկանը ձեռքեն ազատիր: Դյուչյունմեեն երեսեն ճանճ մը իյնա հազար կտոր կըլլա: Տանը պզտի գաղառը քովը կը պտըտեր, խորոզն ա հավերը չորս բոլորը առած կեր կուտեր: Մեկ մ ա խորոզը թևերը չափ չափ զարկեց ու խոսեցավ: Շունը վազեց վրան, չոքեցավ ճտին ու ըսավ. Զե՞ս ամնչեր, անամոթ, հեզ մը մեր տիրուն երեսը նայե, ինչ ցավու մեջ է, դուն ելեր քեֆ կանես: Խորոզն ա ըսավ քի մեր տերը անխելք է, ես ինչ անիմ, դուն ինչ անես: Հեզ մը չորս բոլորս նայե: Քառասուն կնիկ հրամանիս տակ կը պահիմ մեկ կտուցովս: Ինք մեկ կնիկ չի կռնա պահել: Իրեն տեղը ըլլամ նը գիտեմ անելիքս: Քառասուն հատ թաց դեյնեզ կը դնիմ ջուրը, կնկանս կըսեմ քի, կնիկ, ըս քառասուն դեյնեգը զարնելով վրադ կոռիմ նը, կռնամ ոսկին ուսկե առնելս քեզի ըսեր: Դեյնեգները չի կոռած՝ յա կնիկը թեռբեի կուգա, յա կը մեռնի: Ես ա կազատիմ, ինք ա: Մարդը ըս խոսքերը մտիկ կանե, կերթա դեյնեգները կը դնե ջուրը: Երկու օրը լմննալեն ետքը կնկանը կըսե քի քառասուն դեյնեգ վրադ զարնելով կոռիմ նը ոսկիին ուսկե առնիլս կռնամ ըսեր քեզի: Կնիկը «լավ» կըսե: Էրիկը կը բաչլե զարնելը: Մեկ հատը դահա չի կոռած՝ կնիկը բայրլմիչ կըլլա, կիյնա, վրան կաս կապուտ կը կռի: Ամիս մը խելքը գլոխը չիգար: Ամիսեն ետքը քիչ քիչ կըոբղնա, կը խելոքնա, էրկանը կըսե քի, մարդ, ոսկին ուսկե բերեր ես, բեր, ինձի ի՛չ պետքություն ունի: Աս հատնի նը նորեն պի բերե՞ս, ան նայե:

Ընկե ետքը սիրով ապրեցան դեռ մեռած օրերնին:

Աղվեսն ու Ջաղասպանը

Կա աղեր, չի կա աղեր աղվես մը կա աղեր: Ըս աղվեսը ձմեռ ատեն շաբաթ մը անոթի կը մնա: Օր մ ա, ինդոր կըլլա նը՝ վերի ձորեն անցած ատեն նը ջաղաչք մը կը տեսնա: Լուս մը տեսածի պես կը վազե չիտակ ջաղաչքը: Կերթա ջաղասպանին կըսե իր ցավը.

– Շաբաթ մ է անոթի իմ, կը մեռնիմ: Աստծու սիրպուն պատառ մը հաց տուր ուտիմ:

Ջաղասպանը քիչ առաջ իրեն համար բաղաչ եփած է աղեր: Աղվեսին վրա մեղքանալով բաղաչին կեսը ընոր կուտա: Աղվեսը փորը կշտացնելե ետք կը դառնա ջաղասպանին կըսե. «Քանի ո իս անոթութենե ազատեցիր, ես ա քեզի մարդկություն մը պի անիմ, եկե խոսքս անես նը»: Ջաղասպանն ա կըսե քի էկե ղոլայ ըլլալիք բան է նը, կանիմ: Աղվեսը կըսե քի էկո ինձի մեջիդիյե մը տուր ո քեզի խոշոր բախտ մը բերիմ: Խեղճ մարդը քովը տասը փարա պիկե չունի աղեր:

Աղվեսը շատ յալվար յախար կըլլա նը մարդը դառնա կըսե քի մեջիդիյե մը չունիմ, ամմա ըսինք քի տեղաց մը գտնամ դե տամ, դուն ըդ մեջիդիյեն իչ պի անես: Քեզ թագավոր կանիմ, կը պատասխանե աղվեսը: Մարդը մըտքեն կը խնդա, ամմա էն սոնը չդիմանալով ընոր աղաչանքին, տեղե մը ճար ճարակ կանե ու մեջիդիյե մը կուտա աղվեսին:

Աղվես ախբարը փարան առածին պես չիտակ թագավորին դոնաղը կը վազե ու վեքիլխարջեն կոտը կուզե: Մարդը զարմացած կը հարցնե քի դուն կոտը ի՞չ ի անես: Թոզլու բեգին մեջիդիյեները պի չափինք, կը պատասխանե: Շատ չերկընցընինք, աղվեսը կառնե կոտը կերթա: Մեջիդիյեն կը խոթե կոտին ճեղքը ու ետ բերելով կը նետե վեքիլխարջին առջև: Նետածին պես փարան ճեղքեն դուս կը թռչի: Վեքիլխարջն է կը զարմանա քի ըս Թոզլու բեգը իչ ղդե զենգին մարդ է եղեր ո մեջիդիյեն կոտին ճեղքն է մնացել ու հեչ չէ նայեր:

Ասկե ետքը աղվեսը կերթա ջաղասպանեն ոսկի մը կուզե: Մարդը հերս կելա ու ձախավելը առնելով աղվեսին վրա կը վազե: Ծո, սևերես, ես ըն մեջիդիյեն դեվո գտա նը իչ հալ քաչեցի, հիմա եկեր ոսկի կուզես: Զքվե սը տեղեն, չէ նը խերդ կանիծիմ:

Աղվեսը ջաղասպանին ոտքը ձեռքը կիյնա ու էն սոնը ոսկի մ ա կը փրցընե: Ըս հեղ ա կերթա թագավորին ոսկիի կոտը կուզե: Առած ոսկին կոտին ճեղքը կը խոթե ու ետ կը բերե: Մարդիկը նորեն բերանաբաց կը մնան քի ըս Թոզլու բեգը իչ զենգին մարդ է եղեր ո ոսկին

կոտին ճեղքն է մնացեր ու հեչ չէ տեսեր: Ըս լուրը կը հասնի թագավորին ականջը: Թագավորն ա կը զարմանա քի ինդո կըլլա ո իր երկրին մեջ ըդանկ զենգին մարդ մը կա եղեր դե ինք հեչ խապար չէ ունեցեր:

Ժամանակ կասնի: Օր մ ա աղվես ախբարը կեթա թագավորին աղջիկը Թոզլու բեգին համար կուգե: Թագավորը սիրով կընդունի, ամմա, կըսե, քի մեյ մը Թող Թոզլու բեգը ղոնաղս գա ո տեսնանք քի իչ տեսակ մարդ է:

Աղվեսը կը վազե ջաղասպանին քով ու կըսե. Հիմա գործդ էղավ: Ել ո թագավորին սարայը էթանք: Ամմա էս ինչ ո ըսիմ ընանկ պի անես: Աղեկ կըսե մարդը, ի՞չ պի անիմ: Աղվեսը կը պատասխանե. Հիմա ես ու դուն կեթանք թագավորին քով ու ընոր աղջիկը քեզի կուգինք: Ջաղասպանը նորեն հերս կելլա ու կըսե. Ծո, հայվան, էս վով, թագավորին աղջիկը վով: Աղվեսը կըսե քի ախբար, քու իչ գործդ է, դու իմ հետս էկո, մնացածը ինձի թող: Էն սոնը կանե չաներ, կը համոզե ջաղասպանը ու ճամփա կիյնան:

Եփո թագավորին սարային կը մոտենան, աղվեսը կը դառնա կըսե քի, դու հոս կեցիր, էս էթամ ղոնաղը ամեն բան կարգի դնիմ, գամ: Ջաղասպանը չարն չար կսպասե:

Աղվեսը սարայ վազելով՝ չիտակ թագավորին կեթա ու ընոր ոտքը իյնալով կըսե. Աման, տեր, օգնություն: Հարամիները ճամփան մեր վրա հարձակեցան, թալլեցին, սպանեցին: Էս ու բեգս զորով ազատեցանք: Հիմա բեգս կիսամերկ կսպասե ճամփան իրեն հագնելիք տանիմ:

Ըսոր վրա թագավորը նոր լաթեր կուտա ու ձի ու զորք կը ղրկե ո Թոզլու բեգը սարայ բերին: Ճամփան աղվեսը կը խրատե ջաղասպանին, որ իրեն քովեն չի հեռանա ու ձգե ո ինք ջուղապ տա, եղած հարցումներուն:

Աղվեսը վարպետությամբ ամեն բան ընանկ մը կընե ո վերջը վերջը իր բարեկամը կը կարգի թագավորին աղջկան հետ: Հարսնիքեն ետքը թագավորը խել մը նվերներով, զոր ու զորքով, ձիու արապայով իր փեսան ընեն աղջիկը կը ճամփե:

Ճամփա կիյնան կեթան: Ջաղասպանը նստեր է զարդարված արապային մեջ, թագավորին աննման աղջիկն ա կուչտին: Կեթան ամմա, վախը սիրտն է, չյունքի ինքն ա չիտե քի ուր կերթան: Աղվես աղբարը կը մոտենա սրտադող բեգին ու ընոր ականջին կը փսփսա. Հեչ մի վախնար, դուն քեֆիդ նայե ու մնացածը ինձի ձգե: Աս կըսե ու առաջ կը նետվի: Ռաստ կուգա տավարի այուրիի մը: Ջորանները կեցած ահ ու դողով կը նային հեռուեն եկող բազմության:

– Ըդ ի՞չ դալարլդ է, աղվես ախբար, կը հարցնեն չոբանները:

– Զէ՞ք մի գիտեր, Թագավորն է կուգա իր բանակով: Էկե հարցնելու ըլլան քի որու՞ ին ըս օշխարները, ըսեք քի Թոզլու բեգին ին: Էկե ըսանկ ըսելու չըլլաք նը՝ ձեզ ամենքդ ա կը ջարդեն:

– Ըդկե դոլայ ինչ, կը պատասխանեն չոբանները:

Բեգին մարդիկը կը հասնին տավարին քով: Կը հարցնեն քի ըս օշխարները որո՞ւնն ին:

Թոզլու բեգին ին, կը պատասխանեն մեկ բերան:

Թոզլու բեգը կը լսե աչքերը լայն կը բանա, հավատալը չի գար: Ամմա կը բռնե ինքզինքը ու հպարտ բրյրխները կոլրե: Թագավորին աղջիկն ա ըսես նը, նստած տեղը մատ մատ եղ կը կապե:

Ըսպեսով իրարու ետևե կը հանդիպին նախիրի մը, ձիերու սյուրիի մը և ամեն տեղ չոբանները նույն ջուղարը կուտան. – Թոզլու բեգին ին:

Աղվեսը կը վազե առաջ, կը հասնի լեռներու մեջ չինված բերդի մը: Մի ըսեր՝ հարամիներու տեղն է եղեր, մեջն ա իլլուք ոսկի ու արծաթ: Ան կենդանիներն ա որ տեսանք, ըմմեն ա ըս գողերու մալերն են աղեր: Բեգջիները հեռվանց եկող դալարլիը տեսնելով՝ իրենց մեծավորին խաբար կուտան: Իրարանցում մ է որ կիյնա գողերուն մեջ: Ըդ սահաթին վրա կը հասնի աղվեսը ու կը պոռա.

– Հեյ, ի՞չ կեցեր եք, գլոխներուդ ճարը չի նայի՞ք: Եկողը Թագավորին բանակն է, հեմ դե ղլավուգները: Դհա մեծ մասը ետևն է: Մի կենաք, փախեք, հոգինիդ ազատեցեք: Դէ նը ականջնուդ քոթիկը պիլե չի մնար:

Ըս խոսքին վրա հարամիները փախող փախողի կըլլան, կծիկնին կը դնեն:

Աղվեսն է կը թոփե գողերուն խզմեթքերները, խրատներ կուտա անոնց քի եփո Թագավորին զորքերը գալու ըլլան, ըմենքդ մեկ գլոխ տվեք ու կանչեցեք.

– Կեցցե մեր տերը, Թոզլու բեգը:

Քիչ մը էտքը Թոզլու բեգը իր խումբով կը հասնի դրան առաջ:

Աղվեսը ծառաները ետին ձգած կը դիմավորե բեգը և կըսե.

– Համեցեք, համեցեք, տիրոջս՝ Թոզլու բեգին դոնաղը հազը է ձեզի համար:

Ջաղասպանը այիլ մայիլ եղած վար կիչնա արապայեն և կնկան ձեռքը բռնած՝ ներս կը մտնե իր տունեն՝ էրազ տեսածի պես, առանց հասկանալու քի ինդո՞ էղավ ըս հրաչքը:

Եփո կը տեղավորվին, աղվեսը ամմեն բան տեղընտեղոք կը հասկըցնե ջաղասպանին, խրատելով որ կնկան բան չըսե:

Իշտե ըս կերպով աղվեսին սայայեն ջաղասպանը դարձավ բեգ, թագավորի փեսա և մալ ու մյուլքի տեր, իր ըրած աղեկության տեղ հազարապատիկ առնելով:

Ջաղասպան բեգը, իր կնիկը ու աղվեսը երջանիկ ապրեցան ադ ղոնադին մեջ երկար տարիներ: Ընոնք հասան իրենց մուրադին, դուք ալ հասնիք ձեր մուրադին:

Փեհլիվանը

Ժամանակին գեղացիին մեկը մանչ մը կունենա: Այս մանչը շատ թույլ ու հիվանդ կըլլա: Իշ կանին՝ օգուտ մը չին գտնար: Էն սոնը էրիկ կնիկ կը մտածին ո մինակ ճարը տղան Աղեկոիջ ուխտի տանիլն է: Օրին մեկը էշը ախոռեն դուս կը հանին, պետք եղած ուտելիք և ուրիշ բաներ վրան կը բեռնան, տղան ալ կը հեծցընեն իշուն ու ճամփա կելլան դեպի Աղեկոիջ: Իրիկվան դեմ կը հասնին ուխտատեղին: Գիշերը հոն կանցնին: Հարն ու մարը սրտանց կաղոթեն ո սուրբը իրենց մինուճարին առողջություն տա ու փեհլիվանի մը չափ ուժով անե ան, ո մարդ չի կոնա ընոր դեմ կենալ: Առտուն խորոզ մը կը մորթին մատաղ կանին ու ախքատներուն կը բաժնին:

Իրենց ուխտը անելե ետք հանգիստ սրտով ճամփա կիյնան դեպի իրենց գեղը: Տահա ճամփա չինկած կուգին ո տղան իշուն վրա դնին, ամմա ան ետ կը հրե հարը ու կըսե քի ես իշուն վրա հեծնալու պետք չունիմ, թող մարս հեծնա ո չի օգնի: Էրիկ կնիկ կը զարմանան ու փառք կուտան Աստուծո ո իրենց ուխտը ընդունական արեր է: Քիչ մը կը քալին, ու կը նային քի էշը միշտ ետ կը մնա: Տղան իշուն ետևեն ձան կուտա, չու կըսե, կը մխթե ամմա օգուտ չաներ: Թեմբել հայվանը գիտես քի մախսուս ոտք փոխել չուզեր: Վերջը վերջը տղան ա հերս կելլա, էշը բեռով մեռով կը նետե ումուզին ու կը քալե: Հարն ու մարը բերաննին բաց կը նային, հավատալնին չի գար: Տեր Աստված, կըսին, աս ինչ ուժ է տվիր մեր տղուն, փեհլիվաններն ա գլուխ պի չի կոնան ելլալ իրեն հետ: Եփո գեղ կը մտնեն, գեղացիք կը զարմանան տեսնելով տղան ո էշը շալկած կը քալե. առաջուց բոլորն ա ուրախ կըլլան ո ան թուլ ու հիվանդոտ ուժով փեհլիվան է դարձեր: Ամմա քիչ չանցած կը տեսնան ո ըդ փեհլիվանը պատուհաս դարձեր է գեղին գլխուն: Որ տղայի հետ ո կովի, մեկ թոխա թով գլոխը կը թոցնե: Հիմա ըս ղեզապեն ինդո՞ր պի ազատին: Գեղին տղաները

ժողով կանին ու երկար մտածելե ետք կորոչին ո տղուն հարը տանի տղան օխտը լեռան ետին թողու ո կորսվի ու ալ ետ չի գա:

Տղուն հարն ու մարը տղաներուն աս որոչումը լսելով կուլան կողբան, ամմա իչ կոնան ընել: Իրենց տղան գեղին գլխուն փորձանք է դարձեր: Հարը կըսե տղուն.

– Զավակս վաղը առտու սը դիմացի լեռը եթանք դե քիչ մը փատ բերինք ո ձմեռը վառենք:

Մյուս առտու կանուխ ճամփա կելլան: Տղան կը շալկե իր հարը, պալթան ու պետք եղածին չափ ա ուտելիք ու կեթան դեմի լեռը: Եվո տեղ կը հասնին, հարը կըսե քի տղաս, մյուս լեռը ավելի փատ կա, հոն երթանք: Շատ չերկրցնենք, ասպեսով օխտը լեռը կասնին: Եվ տեղ կը հասնին, հարը կըսե.

– Տղաս շատ օգնեցանք, էկո, քիչ մը հանգչինք, բան մը ուտինք, քիչ մ ա քնանանք, ետքը պետք եղած փատը կը թոփինք ու կը տանինք:

Ադպես ա կանին: Հարը եվ կը տեսնա ո տղան խոր քունի մեջ է, ապան կը ձգե տղուն վրա ո չի պաղի, ինքը կը դառնա կեթա գեղը:

Տղան շատ կը քնանա, քիչ կը քնանա, կարթննա, կը տեսնա և նե հար կա, նե պալթա: Կը հասկնա ո գլխուն խաղ է խաղցեր իր հարը, ամմա կը մտածե քի, քանի ո իմ հարս ու մարս իս չին ուզեր, ես ա իմ գլխուս ճարը տեսնելու իմ: Ուրիշ ճամփա մը կը բռնե ու կեթա: Շատ կեթա, շատ կեթա կը հասնի գեղ մը, ծածկված սև ամպի ըլմանող շուքով մը: Կը հարցնե քի աս ինչ է, կը պատասխանեն քի տարի մըն է ո արևի երես չինք տեսած: Կը պատմեն ո ամեն առտու սև ղուշ մը կուգա արևելյան կողմի լեռան վրա կը նստի: Ընքան խոչոր է ո դանաղները կը բանա ու չի թողուր և գեղին վրա արև ծագի: Նե արտերը բերք կուտան, նե ա բաղջաները պտուղ: Տղան կը դառնա կըսե քի էկե դուք իմ ուզածս անեք՝ ես աղ ղուշը կտոր կտոր կանիմ: Կը հարցնեն քի ի՞նչ է ուզածդ: Կը պատասխանե քի ձեր քաղաքին բոլոր դեմիրջիները թող իրարու քով գան ու ինձի ընանկ խոչոր խլինջ մը չնեն ո ես ըդ ղուշին հախեն գամ: Գեղացիք իրարու քով կուգան և տղուն ուզած չափով խոչոր սուր մը կը չնին: Տղան ըդ խոչոր սուրը շալկած գիշերանց ճամփա կելլա և առտուն կանուխ կը հասնի թռչունին նստած տեղը: Բարձր քարի մը վրա կելլա ու անկե կը ցատկե ղուշին կոնակը: Եվ թռչունը փայլուն, խոչոր սուրը կը տեսնա՝ վախեն լեղին կը պատռի ու դառնալով տղուն կըսե.

– Աման երիտասարդ, իչ մուրպաղ ո կուզես կուտամ, թեքի խ մի սպաներ: Տղան գեղացիներեն լսած էր ո Պաղտատի մեջ ա մեծ

դև մը եկեր գետին առջև պառկեր է ու թող չի տար ո քաղաքը ջուր եթա, ամեն շաբաթ 18–20 տարեկան ախջիկ մը պի տան դևին ո ուտե և թող տա ո քաղաք 24 սահաթ ջուր ունենա: Հիմա կարգը եկեր է թագավորին աղջկան, ամմա թագավորը ըսոր վաղը ըսելով եռսուն օր է ո կը ձգձգե: Ըդ որն ա վերջին օրն է եղեր: Տղան դառնալով դուշին կըսե. Քեզի երկու պայման ունիմ, էկե ընես նը լավ, քեզ չիմ սատկեցներ, չէ նը վայ գլխուդ: Էն առաջ ըս լեռան վրա ալ պի չի նստիս, ո գեղացիք արև ունենան: Ետքն ա ինձի չուտ մը Պաղտատ պետք է տանիս: Ադկե ղոլայ ինչ, կըսե Թոչունը: Ալ աս լեռան վրա չիմ նստիր: Էկե կոնակիս ամուր փակիս, աչքդ բանաս գոցես՝ քեզի Պաղտատ կը հասցնեմ:

Իրավ ալ հազիվ աչքերը գոցեց ու բացավ՝ Պաղտատի մեջ էր: Եփ կը քալեր փողոցեն, տեսավ ո դաուլ գուռնայով մեծ բազմություն մը կուգա: Մոտեցավ ու հասկցավ ո թագավորին ախջիկն է կը տանին դևին տալու: Մեծ խլինջը ումուզին՝ վազեց, եկողներուն առաջը կռեց:

– Կեցեք, ըսավ, մի տանիք թագավորին ախջիկը: Ես հիմա պեթամ ըդ դևին մարիկը պի լացընեմ:

Ու սուրը քաշած նետվեցավ դևին վրա: Իրեք օր իրեք գիշեր կըռվեցան: Դևին լեշը կտոր կտոր ըրավ, արուննն ա գետի պես վազեց Պաղտատի փողոցներուն մեջ:

Եվ թագավորը լսեց ըդ տղուն ըրած քաջությունը, հրաման ըրավ ո իր պալատը բերեն տղան: Տղան պալատ գնաց իր խոշոր խլինջը դրավ թագավորին թախտին ոտքը ու պագավ անոր ձեռքը: Թագավորը գովեց անոր փեհլիվանի կոիճությունը: Իր ախջիկը տվավ անոր: Եռսուն օր, եռսուն գիշեր հարսնիք ըրավ: Զենկին, ախքատ, ամենքն ա կերան, խմեցին, ուրախացան ու գովեցին իրենց փեհլիվան փեսան:

Ընոնք հասան իրենց մուրադին, դուք ա հասնիք ձեր մուրադին:

3. ԵՐԶՆԿԱՅԻ ԳԱՎԱՌԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԵՔԻԱԹՆԵՐ

Խաբեբա չեյխը

Երզնկայում ապրելիս է եղել մի խաբեբա չեյխ, որը հավատացյալներին համոզել է, թե ինքը Մուհամեդ մարգարեի ընտրյալներից է: Ամեն ուրբաթ հրաչքով թռչում է Մեքքա, Մուհամեդի գերեզմանի մոտ աղոթում, ապա գիշերով վերադառնում է: Մարդիկ ամե-

նևին էլ չեն կասկածել, թե ձիով երեք ամիս տևող ճանապարհը ինչպես է կարողանում կտրել անցնել մի քանի ժամում: Ալլահի կամքն է, ասել են ու ամեն ինչ համարել բացատրված: Նրան սուրբ են համարել անգամ քաղաքապետը, դատին, այսինքն՝ դատավորը:

Կեղծ սրբի ուժը անչուշտ առաջին հերթին օգտագործվելու էր հայերի դեմ, որոնց նա անխնա չահագործել է: Ինչ ցանկացել արել է, ինչ ցանկացել է վերցրել է, չհնազանդվողներին ենթարկել մարմնական պատիժների, անգամ սպանել տվել:

Մի հայ ոսկերիչ՝ Ղուզումջի Կարապետը, որ եղել է կանացի զարդեր պատրաստող և հաճախ էր կողոպտվել չեյխի կողմից, որոշում է վրեժ լուծել նրանից և մերկացնել նրա խարդախությունը:

Նա պատրաստում է ոսկյա մի զույգ ապարանջան, զարդարված թանկագին քարերով: Մեկը պահում է իր դարակում, մյուսը վերցնում գնում է վալիի մոտ, ասում է թե նվեր է բերել նրա ամենասիրելի կնոջ համար:

Վալին հիանում է նվերով: Հարցնում է, թե ի՞նքն է պատրաստել:

Նվերի որտեղից գալը չեն հարցնի, փաշա,- ասում է Կարապետը:

Վալին նվերը տանում է տուն, հանձնում հարեմի՝ իր ամենասիրելի կնոջը, որը նայում է, հիանում, և ասում է թե նման ապարանջանները սովորաբար զույգ են լինում, որքան պիտի ուզեր, որ երկրորդն էլ ունենար:

Հաջորդ օրը վալին կանչում է Ղույումջի Կարապետին, հայտնում կնոջ ցանկությունը, խնդրում ապարանջանի երկրորդն էլ նվիրել:

- Փաշա,- պատասխանում է վարպետը,- եթե ես պատրաստած լինեի՝ մի՞թե մեկ հատ կբերեի. ձեր խանումը ճիշտ է նկատել, նման արժեքավոր զարդեր զույգ են լինում, բայց ես դա գնել եմ Շամում, երբ անցյալ տարի գործով այնտեղ էի գնացել: Զույգն էին ծախում, բայց իմ փողը քիչ էր, հազիվ մեկը կարողացա գնել: Մյուսը դեռ վարպետի մոտ կլինի: Որևէ մեկին ուղարկեցեք, թող բերի:

- Բայց երկու ամսվա ճամփա է, ում ուղարկեմ:

- Դրանից հետո գործ չկա: Այսօր հինգշաբթի է. ուրբաթ առավոտ մեր սուրբ չեյխը պիտի թռչի Մեքքա՝ աղոթելու. անցնելու է Շամից. թող հանդիպի ոսկերչին և վերցնի: Նույնիսկ կարող եմ փողը ես վճարել: Ես խանութի տեղը կբացատրեմ:

Կարապետի մեկնումից հետո վալին կանչում է չեյխին, պատմում ամեն ինչ և խնդրում, որ ուրբաթ օրը Մեքքա գնալիս՝ հանդիպի Շամ, ոսկերիչից գնի ապարանջանի մյուս հատը:

Շեյխը գլխի է ընկնում, որ դա խորամանկ հայ ոսկերչի խաղ է: Իրեն չի կորցնում, ասում է.

– Շատ լավ վալի փաչա, դժվար գործ չէ, կբերեմ:

Ասում է, բայց վալիի մոտից մեկնելուց հետո ընկնում է լուրջ մտատանջության մեջ: Եթե չկարողանա ձեռք բերել ապարանջանը՝ խայտառակվելու է ամբողջ քաղաքում որպես խաբեբա: Եթե գնա ուստա Կարապետի, այդ գյավուրի մոտ՝ անպատվաբեր է: Սակայն այլ ելք չի գտնում: Փոխում է շորերը, որպեսզի մարդիկ իրեն չճանաչեն, գնում է ոսկերչի խանութը:

– Ուստա Կարապետ,– ասում է,– գիտեմ, այս խաղը դու ես պատրաստել, ավելի լավ վրեժ չէիր կարող լուծել: Բայց պետք է ինձ էլ խնայես: Մուսուլման հոգևորականի պատիվս ու հեղինակությունս կարող է ոտի տակ գնալ: Փրկիր ինձ այս փորձանքից, տուր մյուս ապարանջանը, ինչ որ ուզես կտամ: Խոստանում եմ քեզ վարձատրել ոսկիներով, իսկ հայերին էլ այլևս հանգիստ թողնել: Գիտեմ, դու պատրաստել ես զույգ ապարանջաններ:

– Խաթերդ համար քեզ կփրկեմ խայտառակվելուց, սակայն պատրաստ չունեմ, առնվազն մեկ շաբաթ է պետք, որ պատրաստեմ:

– Սակայն վաղը խոստացել եմ:

– Ոչինչ, կասես թե Շամում հանդիպել ես ոսկերիչին, պատվիրել ես, նա էլ ասել է թե հաջորդ ուրբաթ պատրաստ կլինի:

Շեյխը համաձայնվում է: Ուրբաթ օրը թաքնվում է տանը, հաջորդ օրը ներկայանում է վալիին, ասում է թե գիշերը վերադարձել է, թե տեսել է ոսկերիչին, որը խոստացել է մյուս ուրբաթ հանձնել:

Շեյխի մեկնումից հետո վալիին է ներկայանում ուստա Կարապետը և հարցնում է, թե ստացե՞լ է ապարանջանը: Վալին ասում է թե հաջորդ շաբաթ է պատրաստ լինելու:

– Ոչ թե հաջորդ շաբաթ, այլ տասը տարի հետո էլ շեյխը չի կարող այդ ապարանջանը ձեզ բերել: Նա խաբեբա է, երբեք չի կարող մի գիշերվա մեջ Մեքքա գնալ և վերադառնալ: Զարմանում եմ, որ վալի փաչայի նման զարգացած մարդն էլ հավատացել է այդ խաբեբային:

– Բայց պետք է ապացուցես ասածներդ, այլապես քեզ կախել կտամ որպես մուսուլման սրբի վարկաբեկողի: Իսկ եթե ապացուցես, ես պատժել կտամ նրան որպես մուսուլմանի անունը անպատվողի:

– Լավ,– ասում է ուստա Կարապետը,– քանի որ նա առաջիկա ուրբաթ օր ոչ թե պետք է Մեքքա գնա, այլ ծպտված վիճակում իմ խանութը պիտի գա, դուք էլ եկեք և ձեզ համար ամեն ինչ պարզ կդառնա:

Պայմանավորված գիշերը վալին գնում է Կարապետի խանութը, թաքնվում մի անկյունում: Գալիս է շեյխը:

- Պատրաստեցի՞ր ապարանջանը,- հարցնում է շեյխը:

- Մի քանի օրվա գործ է մնացել:

- Բայց ես կարող է խայտառակվեմ. վալիին ասել եմ որ այս շաբաթ հանձնելու եմ իրեն, Շամից եմ բերելու:

- Իսկապե՞ս վալին հավատում է քո այդ ստերին,- հարցնում է Կարապետը:

- Հապա ի՞նչ է անում: Հիմարի մեկն է, կատարյալ հայվան, քթից բռնած՝ խաղացնում եմ: Տուր ապարանջանը, որքան ուզես՝ կվճարեմ և խոստումներս էլ կկատարեմ:

Շեյխը մի քսակ է հանձնում Կարապետին, ստանում ապարանջանը, գոհ սրտով մեկնում է:

Շաբաթ առավոտ նա, մորուսը սանտրած ու ներկած, հպարտ-հպարտ ներկայանում է վալիին, դիմավորվում սրտագին: Պատմում է չինծու մի պատմություն, թե ինչպես Մեքքա գնալիս հանդիպել է Շամ, տեսել ոսկերիչին, գլխին կանգնել պատրաստել է տվել ու բերել է, որ ժամանակին հանձնի սիրելի վալիին:

- Որը միամտաբար և հիմարաբար հավատացել է քո բոլոր ստերին,- վրա է բերել վալին ծիծաղելով:

Շեյխը այլայլվում է, հարցնում թե ով է իրեն զրպարտել այդպես:

- Ոչ ոք,- պատասխանել է վալին,- ես անձամբ եմ ներկա եղել քո և այդ հայ ոսկերչի զրույցին:

Վալին ժողովի է հրավիրել քաղաքի մեծամեծներին, հարկադրել է շեյխին բոլորի ներկայությամբ խոստովանել խարդախությունները: Կազմել են արձանագրություն, ուղարկել Կ. Պոլիս, մահմեդական հոգևորականության գերագույն պետ՝ շեյխուլիսլամին, որի կարգադրությամբ կեղծ սուրբը պաշտոնազրկվել է:

Էսպեվերեկցի Տեր Վարդանի վրեժը

Պատմության հերոսն է Դերջանի Էսպեվերեկ գյուղի հայ քահանա Տեր Վարդանը՝ համարձակ, ազնիվ նկարագրի տեր, իր հոտի շահերը պաշտպանելու համար ոչ մի զոհողության առաջ կանգ չառնող մի հոգևորական, միաժամանակ հողի աշխատավոր:

Տեր Վարդանը միշտ պայքարի մեջ է եղել գյուղի տիրակալ, հայերին ահ ու սարսափի մեջ պահող Մեմիշ աղայի հետ:

*Մի օր, կամայական հարկահավաքումների, գյուղացիներից նը-
րանց սննդի վերջին մնացորդների խլելու առիթով Տեր Վարդանը
բուռն վեճի է բռնվում աղայի հետ, որը գավազանի հարվածներով
ջարդել է տալիս խեղճ քահանայի գլուխը, փետել տալիս միրուքը:*

*Ձկարողանալով դիմանալ մանավանդ վերջին անպատվությանը,
հայ քահանան թողնում հեռանում է գյուղից ու 35 հոգուց բաղկացած
ընտանիքից: Գնում է Երզնկա, աշխատում ս. Նշան եկեղեցում: Ապ-
րում է հանգիստ, ընտանիքն էլ բերել է տալիս, որդիներին ամուս-
նացնում է և հետզհետե ձեռք բերում հեղինակություն:*

*Ավելի ուշ՝ նրան վստահվում է առաջնորդական փոխանորդի
պաշտոնը: Բայց միշտ սրտի խորքում պահում է միրուքի կսկիծը և
մտածում վրեժ լուծել Մեմիշ աղայից:*

*Մտերմական կապեր է հաստատում Երզնկայի երևելի հայերի
հետ, դառնում է հայտնի Դանիելյան ընտանիքի երեխաների դաս-
տիարակը և այդ առիթով ելումուտ է ունենում տունը: Շուտով՝ այս
ընտանիքի միջոցով կապեր է հաստատում նաև Թուրք բարձրաս-
տիճան պաշտոնյաների հետ, և բոլորի մոտ վայելում լայն հարգանք:*

*1895–1896 թթ. հայկական կոտորածներից հետո երբ կառավա-
րությունը Դանիելյաններից վերցրել է հայկական գյուղերի բերքը
հավաքելու մենաշնորհը, ցորենի այն մասը, որ դեռ տեղափոխված
չէր քաղաք, հափշտակվում է թուրքերի և քրդերի կողմից: Քսան ոս-
կու արժողությամբ ցորեն էլ խլում է Էսպեվերեկի տիրակալ Մեմիշ
աղան:*

*Հետագայում, երբ կարգը մասամբ վերահաստատվում է և նորից
Դանիելյանների իրավունքներն էլ կրկին պաշտպանվում են, Ջիվան
Դանիելյանը դատի է տալիս Մեմիշ աղային: Տեր Վարդանը նրան
հորդորում է պահանջել ոչ թե քսան ոսկի, այլ 200 ոսկի, հաշվի առ-
նելով նրա այլ կողոպուտները:*

*Գավառապետի միջնորդությամբ դատարանը կարգադրում է Մե-
միշ աղային՝ ներկայանալ հարցաքննության՝ 200 ոսկու գործով:*

*Մեմիշ աղան անակնկալի է գալիս թե՛ 200 ոսկու պահանջից և թե՛
դատարան ներկայանալու հրավերից: Մտածում է լեզու գտնել Դա-
նիելյանների հետ: Հանդիպում են, բայց Ջիվան էֆենդին չի զիջում,
ընդհակառակը, հիշեցնելով նրա այլ ապօրինությունները, սպառնում
է բանտարկել տալ, եթե ամբողջ գումարը չվճարի:*

*Այս անգամ էլ մարդիկ խորհուրդ են տալիս Մեմիշ աղային դիմել
Դանիելյանների տան ավագերեց Տեր Վարդանին:*

- Էսպեվերեկցի տերտերի՞ն,- հարցնում է Մեմիչը սարսափած: Բայց ես տասը տարի առաջ նրա միրուքը փետել եմ տվել:

Բայց դիմում է հայ քահանային և Տեր Վարդանի միջնորդությամբ 50 ոսկիով փակվում է հաշիվը:

1916 թ. երբ ռուսական զորքը գրավում է Երզնկան, և հայերը համեմատաբար ազատ են զգում իրենց, Տեր Վարդանի հարազատները և Էսպեվերեկցի այլ երիտասարդներ, սպանում են Մեմիչ աղային և լուծում հայ քահանայի վրեժը:

4. ՔԵԼ ՕՂԼԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ

Քել օղլանի հեքիաթի մեջ Թարզի Խաչիկը ներառնում էր հետևյալ չորս պատմությունները՝ «Քել օղլանն ու մոլլան», «Քել օղլանը և Հախվերմազը», «Քել օղլանն ու Թուրք աղան», «Քել օղլանը Թագավոր»:

Երզնկայում, Դերջանում, Կամախում և ավելի հեռավոր վայրերում չի եղել մի տուն, որտեղ չիմանան Քել օղլանի հեքիաթը: Թե հեքիաթասացողները և Թե ամեն մի տան տատիկ շարունակ պատմել են այդ տարօրինակ մարդու արկածները, պատմել են ու երեխաների մեջ սեր զարթեցրել հերոսի նկատմամբ:

Այդ չորս հեքիաթներից ներկայացնում ենք երկուսը:

Քել օղլանը և մոլլան – *Ժամանակին եղել է մի որբ տղա, ոչ հայր է ունեցել, ոչ մայր: Ապրել է քեռու տանը որպես հոտաղ: Քեռու կինը մահացած լինելով՝ քեռին կրկին ամուսնացել է իրենից փոքր մի աղջկա հետ, որը տարեկից էր քրոջ որբ տղային: Սրան կոչել են Քել օղլան՝ ճաղատ լինելուն համար:*

Քեռեկինը մեղսապարտ կապեր է հաստատում Թաղի մոլլայի հետ: Քել օղլանը նկատում է այդ բանը, հայտնում քեռուն: Որոշում են վրեժ լուծել:

Սովորաբար քեռին ու Քել օղլանը վաղ առավոտյան մեկնում են հանդերը աշխատանքի, իսկ այդ ժամերին քեռեկինը հանդիպում է մոլլայի հետ: Մի անգամ Քել օղլանը Թաքնված տեղից լսում է, որ քեռեկինը խորհուրդ է տալիս մոլլային աշխատել այսինչ վայրում, որպեսզի նրա համար ցերեկը լավ լավ կերակուրներ բերի:

Նա իսկույն դուրս է գալիս Թաքնված տեղից, վազում քեռու մոտ և առաջարկում փոխել այդ օրվա իրենց աշխատելու տեղը, լինել քեռեկնոջ որոշածի մոտ: Մոլլան էլ, նկատելով որ նրանք են զբաղեցրել այդ տեղը, չի երևում այնտեղ:

Ցերեկը քեռեկինը, կերակուրի մի քանի տեսակներ պատրաստած, չտապում է հանդերը, բայց զարմանքով նկատում է, որ մոլլայի փոխարեն այնտեղ աշխատում են ամուսինն ու Քել օղլանը: Ուզում է ետ դառնալ, բայց Քել օղլանը բարձր բղավում է.

– Քեռեկին այստեղ ենք, արի ուղիղ արտի մոտով:

Քեռեկնոջը մնում է կատարել հրահանգը: Այդ օրը քեռին ու Քել օղլանը պատվական ճաշ են անում՝ ուտում տապակած հավ, փլավ, մածուն:

Հաջորդ օրը Քել օղլանը դարձյալ լրտեսում է քեռեկնոջը և լսում, որ նա պայմանավորվում է մոլլայի հետ մի ուրիշ տեղ, այն էլ այնպես անել, որ մոլլայի եզան սպիտակ ոտը երևա հեռվից, որ ինքը չսը-խալվի:

Շտապելով քեռու մոտ, Քել օղլանը ամեն ինչ պատմում է նրան, առաջարկում իրենց եզան մի ոտին սպիտակ շոր կապել...

Այդ օրը նույնպես փառավոր կերակուրներ են ուտում, իսկ մոլլան մնում է սոված:

Երրորդ օրը լրտեսելիս՝ Քել օղլանը լսում է, որ քեռեկինը որոշել է դիմել Մուրատատուր սուրբ Պոպոզիկին և խնդրել իրենց ազատել Քել օղլանի փորձանքից:

Վազում է հիշյալ ուխտատեղին, թաքնվում է հաստ ծառի բնի մեջ: Գալիս է քեռեկինը, ծնկաչոք աղոթում է և ասում.

– Ով մուրատատուր սուրբ, դու որ պաշտպան ես միմյանց սիրող զույգերի, ազատիր մեզ այս Քել օղլանի փորձանքից:

Քել օղլանը, փոխելով ձայնը, ասում է.

– Ով կին, ուխտդ կատարվեց, Աստված լսեց քո ձայնը: Դու պետք է մատաղ անես կարմիր կովը, մսի մի մասը բաժանես աղքատներին, մյուսն էլ դավուրմա անես ու մեկ շաբաթ կերցնես ամուսնուդ և այդ Քել օղլանին: Ամեն անգամ որ նրանք ուտեն կարմրած միսը, աչքները քիչ քիչ պիտի վատ տեսնի, իսկ մեկ շաբաթից պիտի կու - բանան: Այն ժամանակ նրանք այլևս ոչինչ չեն կարող տեսնել, ինչ ուզեք՝ կարող եք անել:

Նույն օրը քեռեկինը մորթել է տալիս կարմիր կովը՝ պատճառա-բանելով թե թունավոր խոտ է կերել, եթե իսկույն չմորթեն՝ հետա-գայում միսը չեն կարող ուտել:

Քեռեկինը անցնում է գործի: Կաթսան դնում է կրակի վրա ու կարմրացնում միսը: Երբ քեռեկինը գյուգյումը վերցրած գնում է աղբյուրից ջուր բերելու, Քել օղլանը ամեն ինչ պատմում է քեռուն և ասում է թե եկել է ժամանակը՝ մոլլայից վրեժ լուծելու, միայն թե

ինչ որ ինքը ասի՝ պետք է կատարել: Ամեն անգամ որ մսից ուտեն, պետք է կեղծել թե սկսել են վատ տեսնել, աչքները թուլանում է:

Երբ միսը կարմրում է, քեռեկինը մի մեծ աման բերում դնում է ամուսնու ու Քել օղլանի առաջ և ասում է.

– Տաք-տաք կերեք, համով դավուրմա է:

Ուտում են: Քել օղլանը հանկարծ ասում է, թե իր աչքերը ոնց որ մի քիչ վատ են տեսնում: Նույնը հաստատում է քեռին, իսկ քեռեկինը ուրախանում է, որ սրբի ասածը լինում է:

Նույնը կրկնվում է հաջորդ օրը և հետագայում, իսկ մի շաբաթից Քել օղլանն ու քեռին պատերը բռնելով են դուրս գնում, խաբելով թե բոլորովին չեն տեսնում:

Համոզված որ քեռին ու Քել օղլանը այլևս չեն տեսնում, քեռեկինը նրանց ներկայությամբ սիրաբանում է մոլլայի հետ: Քեռին այժմ աչքով տեսնում ու համոզվում է, որ կինը դավաճանում է իրեն: Քրոջ որդուն հարցնում է թե ինչ կարող են անել:

– Այդ գործը իմ վրա թող,– ասում է Քել օղլանը:

Հաջորդ օրը, երբ սովորական ժամին մոլլան գալիս է քեռեկնոջ մոտ, սիրաբանում են, քեռեկինը առաջարկում է մոլլային հանգըստանալ, իսկ ինքը հալվա կեփի նրա համար: Մոլլան չոգից թմրած, կոնակի վրա պառկած քնում է:

Քեռեկինը յուղը տաքացնելուց հետո գնում է այլուր բերելու:

Քել օղլանը իսկույն տեղից վեր է կենում, գնում է, արագորեն վերցնում տաք յուղով լի թավան, բերում լցնում մոլլայի բաց բերանից ցած: Մոլլան հազիվ կարողանում է խռկալ ու տեղնուտեղը խեղդվում է: Այդ անելուց հետո Քել օղլանը թավան տանում դնում է կրակի մոտ, շուռ տված, իսկ ինքը գալիս սուսուփուս նստում է իր տեղում, քեռու մոտ:

Քեռեկինը, կարծելով, թե թավան կատուն է շուռ տվել, նոր յուղ է բերում, հալվան պատրաստում գալիս է մոլլի մոտ: Ինչ անում է մարդը չի զարթնում: Համոզվում է, որ մեռել է: Լացուկոծը դնում է:

– Ի՞նչ ես լաց լինում, քեռեկին, մեր աչքերի կուրանալու համա՞ր ես ողբում:

– Ձեր աչքերի կուրանալը քիչ փորձանք էր, հիմա էլ մոլլային մեռցրել ու բերել գցել են մեր տունը:

– Հապա հիմա ի՞նչ պիտի անենք: Մենք էլ չենք կարող քեզ օգնել: Իսկույն գնա մուրատատուր սրբին աղոթիր, որ մեր աչքերը լավանան և տեսնենք, թե ինչ ենք անելու:

Քեռեկինը գնում աղոթում ու վերադառնում է: Մի քանի րոպեից Քել օղլանն ասում է, թե ոնց որ աչքերը քիչ-քիչ սկսում են տեսնել: Նույնը հաստատում է քեռին:

Քել օղլանը քեռեկնոջ հետ զրուցում է առանձին և ամեն ինչ պատմում է, ասում է թե այդ բոլորը ինքն է սարքել: Հիմա էլ կազատի նրան բանտարկվելու փորձանքից, եթե քեռեկինը խոստանա այլևս հավատարիմ լինել իր քեռուն: Քեռեկինը խոստանում է:

Քել օղլանը չալակում է մոլլայի դիակը, մնաս բարով ասում քեռուն, դուրս է գալիս տանից: Գնում է ուղիղ մոլլայի տունը, խփում է դուռը:

Մոլլայի կինը ներսից ասում է.

- Մոլլա, բավական է քո արածը: Ամեն օր գնում ես սիրեկաննեերիդ մոտ և կես գիշերին ես տուն գալի: Չեմ բաց անելու դուռը:

- Բաց արա, այ կնիկ,- ասում է Քել օղլանը, կեղծելով ձայնը,- թե չէ կբարձրանամ տանիքից ինձ կգցեմ ներս:

Կինը բաց չի անում: Քել օղլանը մոլլային չալակում բարձրացնում է տանիքը, թոնրատան վերևի անցքից գլուխը կախում է ցած ու ասում.

- Բաց արա, թե չէ ինձ գցելու եմ ցած:

- Չեմ բաց անի:

- Ահա ընկա,- ասում է ու մոլլային հրում ցած:

Մոլլի կնիկը սկսում է վայնասունը: Քել օղլանը, իբր թե անտեղյակ կատարվածից, հեռվից սուլելով մոտենում է, խփում նրանց դուռը, հարցնում թե ինչ է պատահել:

- Մոլլան մեռավ,- ասում է կինը ու լաց լինում:

- Հանկարծ չմեռավ,- պատասխանում է,- ես լսում էի, խեղճ մարդը մի ժամ է, որ խնդրում էր դուռը բաց անել, դու չէիր բաց անում: Կարծում ես ես չլսեցի՞: Հենց որ լուսանա, քեզ բանտարկել եմ տալու:

- Աման, խնդրում եմ, մի տարածիր լուրը, ազատիր ինձ այս փորձանքից,- ասում է կինը:

- Տասը ոսկի կտաս, դիակը կտանեմ Եփրատ գետը կգցեմ, դու էլ հարցնողներին կասես, թե ուրիշ քաղաք է գնացել:

Տասը ոսկին առնում է, չալակում դիակը, գնում է: Շատ է գնում, քիչ է գնում, հոգնում է. դիակը կանգնեցնում է մի ծառի տակ, իսկ ինքը հեռվում նստում հանգստանում է:

- Այդ ո՞վ է կանգնել այդտեղ,- լսվում է անտառապահի ձայնը:

– Քո ինչ գործն է,– պատասխանում է թփերի տակ թաքնված Քել օղլանը, որին չի տեսնում անտառապահը և կարծում է, թե իր դեմ կանգնողն է խոսում:

– Ասա, ո՞վ ես:

– Ջեմ ասի: Ի՞նչ ես անելու: Ես քո էն...էն...էն... հայհոյում է Քել օղլանը:

Անտառապահը զայրացած փայտով խփում է կանգնած մարդուն, որ օրորվելով գլորվում է ցած:

Մինչ անտառապահը մոտենում է, որ տեսնի թե ով էր իր հետ վիճողը, Քել օղլանը դուրս է գալիս թփուտների տակից և ասում է.

– Մոլլային սպանեցիր, հա՞:

– Ինչ մոլլա, ինչ բան, փորձա՞նք ես, այ մարդ:

– Փորձանք չեմ, այլ՝ վկա, որ մարդուն սպառնացիր, թե կսպանես և խփեցիր ու սպանեցիր: Խեղճը միամիտ կանգնած հանգստանում էր, քեզ ինչ վնաս էր տալիս: Հենց վաղը քեզ հանձնելու եմ դատարան որպես մարդասպան: Անատառապահը աղաչում է, պաղատում խնայել իրեն, ասում է, թե չորս երեխայի հայր է, մեղք է:

– Լավ,– ասում է Քել օղլանը, քեզ կխնայեմ երեխաներիդ խաթեր: Երևում է, որ աղքատ ես, փող չես ունենա: Ինձ մի քանի օրվա ուտելու հաց տուր, գնամ: Մի լավություն էլ կանեմ քեզ: Կտանեմ մոլլայի դիակն էլ կգցեմ Եփրատ գետը:

Անտառապահը ուրախանում է, շնորհակալություն հայտնում, նստում միասին հաց են ուտում և մտերմանում են:

Քել օղլանը կրկին չալակում է իր ավարը ու ճանապարհ ընկնում: Շատ է գնում, քիչ է գնում, մոտենում է մի ջրաղացի: Մոլլի սառած դիակը կանգնեցնում է քարի մոտ, ինքը կտրում է ջրաղացի ջուրը: Լռում է ջրաղացի ձայնը: Դուրս է գալիս ջրաղացպանը և բղավում է.

– Այդ ո՞վ կտրեց ջուրը:

– Ես,– պատասխանում է Քել օղլանը թաքնված տեղից, այն տպավորությունը թողնելով թե քարի մոտ կանգնած մարդն է խոսողը:

– Ինչու՞ կտրեցիր:

– Լավ արեցի, աչքդ էլ հանեցի:

– Հիմա բահով կտամ չան սատակ կանեմ քեզ:

– Ապա մի փորձիր. կյանքիցդ ձեռ ես քաշել:

Ջրաղացպանը հաղիվ բահը բարձրացրած ու կպցրած մոլլային՝ դիակը գլորվում է ցած:

Հեռվից հայտնվում է Քել օղլանը սուլելով, ապա հարցնում է.

– Ինչու՞ սպանեցիր խեղճ մարդուն: Կարծում ես թե չտեսա և չլսեցի՞ քո սպառնալիքը: Խեղճ մարդը կանգնած հանգստանում էր, քեզ ինչ վնաս էր տալիս: Հենց որ լուսանա, հայտնելու եմ ոստիկանությանը: Դա մոտակա գյուղի մոլլան էր, հարգված բարի մարդ էր:

Ջրաղացպանը խեղճանում է, աղաչում է, պաղատում ազատել իրեն փորձանքից: Խոստանում է մի պարկ այլուր տալ:

Քել օղլանը խղճում է նրան, հաշտվում են: Ասում է, թե ինքը կազատի նրան այդ փորձանքից առանց որևէ վարձատրության: Մի պարկ այլուրը կարող է ավելի կարիքավորների տալ:

Ջրաղացպանը նրան տալիս է մի քանի բաղարջ, մի գաթա, մի քիչ էլ դավուրմա, խնդրում օգնել իրեն դիակը թաղելու:

– Ես քեզ կազատեմ նաև այդ աշխատանքից,– ասում է,– չալակում դիակը և հայդա դեպի Եփրատ գետը:

Քել օղլանն ու թուրք աղան – Քել օղլանի փողերը երբ հատնում են, մի հարուստ աղայի մոտ աշխատում է որպես հոտաղ: Պայմանն էր ոչխարներն արածացնել, երեկոները ջուր կրել և անասուններին էլ կերակրել: Դրա փոխարեն աղան նրան ապահովելու էր օրապահիկով, տալու էր իր հին շորերն ու տրեխներ, տարեկան երկու ոսկի էլ փող, որպեսզի հավաքի ու տուն–տեղ լինի:

Քել օղլանն աշխատում է անձնվիրաբար: Առաջին տարին, երբ վերջանում է, աղան կանչում է նրան իր մոտ, որպեսզի տարվա հաշիվը փակի:

– Առ այս մեկ ոսկին,– ասում է նա,– այս տարի ավելի լավ աշխատիր:

– Բայց աղա,– ասում է, Քել օղլանը,– չէ՞ որ մենք պայմանավորվել էինք տարեկան երկու ոսկի:

– Այո, բայց մեկ ոսկին հաշվվում եմ տված վնասիդ դիմաց:

– Ի՞նչ վնաս:

– Կորցրել ես մեկ գառ: Մեկ այծ էլ քո անուշադրության հետևանքով քարից ընկել է:

– Այծը մորթել ենք և դուք դրանով հյուրասիրություն եք կազմակերպել: Իսկ գառան արժեքը մի քանի դուրուշ է և ոչ մեկ ոսկի:

– Չէ, տղաս, դու դեռ հաշիվ չես սովորել,– պատասխանում է աղան,– գառը կարող էր մեծանալ, ոչխար դառնալ, նրա արժեքն էլ կմեծանար: Չէ որ նա երկար ժամանակ կաթ կարող էր տալ, բուրդ պիտի տար, վերջապես միսն էլ քառապատիկ կարող էր լինել: Այս բոլորը մի ոսկուց ավելի կանի:

– Աղա, մեղք եմ, հախս մի պահիր, տուր աշխատանքիս վարձը, տուն-տեղ եմ ուզում դառնալ:

Աղան կտրականապես մերժում է և ասում, թե եթե դժգոհ է, կարող է դատի տալ:

– Ո՞ւմ կարող եմ բողոքել, աղա, այս գյուղի տերը դու ես, ինչ ուզես, այն էլ կանես:

Բայց Քել օղլանը մտքում որոշում է վրեժը լուծել: Որոշում է հաջորդ տարի էլ աշխատել:

Երզնկայի գավառում սովորություն է եղել ոչխարը արածացնել օրական երկու անգամ: Օրվա չոգ ժամին բերում են գյուղ, երեկոյան կրկին տանում, այս անգամ սակայն ավելի մոտ տեղեր:

Մի օր, 150 ոչխար առաջը խառնած՝ Քել օղլանը գիշերով դուրս է գալիս ոչխարներն արածացնելու, մինչև առավոտ: Լուսաբացին ինչ որ գյուղում կանանց կթել է տալիս ոչխարները, հանգստանում, և վերցնելով օրվա ուտելիքը, շարունակում է ճանապարհը:

Աղան երբ գլխի է ընկնում, որ Քել օղլանը ոչխարները գողացել է ու տարել անծանոթ ուղղությամբ, սաստիկ զայրանում է. այս ու այն կողմ փնտրում է, բայց չի գտնում: Ում որ հարցնում է, հակառակ ուղղություններ են ցույց տալիս և ավելի ևս մոլորեցնում են, քանի որ ոչ ոք չի սիրել այդ վաշխառուին: Ի վերջո հույսը կտրում է նրստում տեղը: Քել օղլանը շարունակում է ճանապարհը շարաթներով, հասնում մի մեծ ու անծանոթ քաղաք: Այնտեղ վաճառում է ոչխարները, փողով մի փոքրիկ խանութ է բաց անում և զբաղվում է առևտրով, աստիճանաբար մեծացնում է գործը:

Անցնում է տասը տարի: Աղայի տղան մեծանում է: Ուզում են ամուսնացնել: Աղան ձի է նստում և գնում է հեռավոր մի քաղաք՝ հարսանեկան զգեստներ և կտորեղեն գնելու: Հետն էլ վերցնում է հիսուն ոսկի:

Անծանոթ քաղաքում հարցուփորձ է անում, թե ում խանութում ընտիր կերպասներ կան: Մարդիկ ցույց են տալիս մի խանութ, որը հենց Քել օղլանի խանութն է եղել, իսկ նա այժմ այդ տեղ հայտնի է եղել բոլորովին այլ անունով:

Աղան երբ մտնում է նրա խանութը, չի ճանաչում տասը տարի առաջվա իր հոտաղին, իսկ Քել օղլանը իսկույն ճանաչում է աղային: Առանց հայտնի անելու, թե ճանաչել է, քաղաքավարությամբ ընդունում է, հիսուն ոսկու առևտուր անում, սուրճ հրամցնում, ապա հարցնում է, թե գիշերը ո՞րտեղ է քնելու: Աղան ասում է, թե քաղաքի հին խաներից մեկում սենյակ է վարձել:

– Ձեզ նման պատվավոր աղա,– ասում է խանութի տերը,– հարմա՞ր է որ պանդոկում իջևանի, այն էլ երկրորդական պանդոկում: Դուք այսօր իմ հյուրն եք, եկեք մեր տունը:

Ապրանքներն էլ վերցնում են ու գնում Քել օղլանի տունը, որտեղ աղան հյուրասիրվում է ինչպես պետքն է: Նրա համար առանձնացնում են հատուկ սենյակ:

Կես գիշերին Քել օղլանը վեր է կենում, իր հետ վերցնում է մի պարան, մտնում է աղայի սենյակը, պարանը գցում է նրա վիզը, ոտներն էլ կապելուց հետո քաշում է պարանը: Աղան սարսափահար զարթնում է տեսնում, որ կապկպված վիճակում է.

– Ի՞նչ ես անում այ մարդ,– ճչում է:

– Կորցրածս գառան դիմաց ինձնից քո վերցրած արժեքն եմ ետ առնում, չճանաչեցի՞ր, ես քո նախկին հոտաղն եմ: Ոչխարի բրդի, կաշու, մսի համար վերցրածդ եմ ետ առնում: Այդ գումարը, եթե ես վաչխով տայի, հիմա հիսուն ոսկի կարող էր դառնալ... Դու իմ մեկ ոսկին կերար, հիմա իմ ձեռքն է թե քո կյանքը և թե հիսուն ոսկիդ: Կյանքդ բաշխում եմ, բայց հիսուն ոսկին ոչ: Հենց հիմա կնստես ձիդ, առանց ետ նայելու կգնաս քո երկիրը և այլևս չես շահագործի անմեղ մարդկանց: Ջփորձես այստեղ մնալ և ինձնից վրեժ լուծել: Կյանքովդ կհատուցես: Այս անգամ չեմ խնայի:

5. ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոթերա կամուրջը *– տեղանունների հետ կապված հեքիաթավանդությունների մեջ ամենից հետաքրքիրը Դերջանի Կոթեր գյուղի մոտ, Եփրատի վրա կառուցված կամուրջի չինության հետ կապված է: Այդ ավանդության նյութը վերցված է հավանաբար 13-րդ դարի հայ-բյուզանդական հարաբերությունների շրջանից:*

Ավանդությունը գրի է առնվել 17–18-րդ դարերում և զետեղվել Կոթեր գյուղի սեփականությունը հանդիսացող Հայսմավուրքում, որը հետագայում ըստ որոշ աղբյուրների, ընկել է անգլիացիների ձեռքը և տարվել Լոնդոն: Նույն ավանդությունը կարճ չարադրությամբ տպագրել է Ա. Արփիարյանը «Արևելք» օրաթերթում, 1887 թ.:

Կոթեր գյուղի մասին հիշատակություններ գտնում ենք մեր հին պատմիչների մոտ, մի բան, որ վկայում է գյուղի հնության և խոր անցյալում հայկական բնակավայր եղած լինելու մասին: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը պահպանվել էին Կոթերի հին եկեղեցին ու բազմաթիվ գերեզմանաքարեր՝ հայերեն արձանագրություններով:

Եղել է երկու Կոթեր. մեկը՝ ըստ երևույթին հեթանոսական դարերից մնացած, մյուսը՝ ավելի ուշ կառուցված և գտնվում է հին Կոթերից չորս կիլոմետր հեռու՝ Եփրատի հանդիպակաց ափին: Հին Կոթերից մնացել էր մի քարաբլուր, մոտին՝ ավերակները սրբատաշ և քանդակազարդ քարերով կառուցված եկեղեցու:

Ահա այստեղ է, որ կառուցվել է Եփրատի վրայի չքեղ կամուրջը: «Բնաշխարհիկ բառարանում» ասված է. «ավանդաբար կըսվի թե Կոթերցի հայ երկրագործ մը ԺԳ դարու մեջ չինած է այս կամուրջը: Կամրջի մոտ կա հին պանդոկի մը ավերակ, և վերը՝ ուխտական մատրան մը ավերակը»[1]:

Ուրեմն՝ ավանդությունը հայտնի է եղել նաև «Բնաշխարհիկ բառարանի» հեղինակին: Հայրս ասում էր, թե կամուրջի կամարների վրա եղել են հայերեն արձանագրություններ, որոնք հնարավոր է եղել կարդալ ամռան ամիսներին, երբ Եփրատի ջրերը իջած են լինում:

Ահա և ավանդությունը:

Հին Կոթերում ապրելիս է եղել Սարգիս անունով բարեպաշտ մի մարդ, որն ունեցել է երկու աղջիկ, մեկ տղա՝ Գևորգը: Սարգիսը սովորություն է ունեցել ամեն տարի մատաղ անել ծնողների հոգու համար: Երբ հասել է նրա մահվան ժամը, կանչել է Գևորգին, արել հետևյալ կտակը՝ շարունակել իր այդ սովորությունը, ամեն տարի մատաղ անել, ամեն օր մի բարի գործ կատարել, ապրել աշխատանքի արդյունքով, չվատնել իրենց ունեցվածքը:

Այս կտակը անելուց հետո՝ Սարգիսը մահացել է: Որդին մի քանի տարի կատարել է հոր ցանկությունը, ամեն տարի նրա համար մատաղ է արել, աշխատել է բարիք գործել, բայց աստիճանաբար վարել է ծույլ ու զվարճասեր կյանք, վատնել հոր ամբողջ հարստությունը, մոռացել է նաև հոր հիշատակը:

Նա որոշել է գնալ Կ. Պոլիս, փող վաստակել, վերադառնալ: Մի օր, չալակած ճանապարհորդական խուրջինը ընկել է ճանապարհ՝ դեպի Կ. Պոլիս:

Մի քանի ժամ քայլելուց հետո հոգնել է, հանգստացել մի սառնաղբյուրի մոտ: Այդ պահին ճանապարհի վրա հայտնվում է սպիտակամորուս մի ձիավոր, սիրալիր բարևում է ու հարցնում, թե ո՞ւր է գնում: Գևորգը պատմում է ամեն ինչ և ասում, թե ուզում է Կ. Պոլիս գնալ:

---

[1] **Ս. Էփրիկյան,** *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատ. Բ, էջ 445:*

Անծանոթը առաջարկում է միասին գնալ: Երիտասարդին նստեցնում է ձիու վրա, ասում.

– Փակիր աչքերդ:

Փակում է Գևորգը: Եվ երբ ծերունու հրամանով բաց է անում, իրեն գտնում է մայրաքաղաքում:

Անծանոթը, որ դու մի ասա՝ Սուրբ Սարգիսն է եղել, օրհնում է նրան, խրատում չմոռանալ ծնողներին, ինչպիսի բարձր պաշտոնների ու դիրքի էլ որ հասնի:

Գևորգը սկզբում կատարում է չարքաշ աշխատանքներ, սակայն աստիճանաբար բարձրանում է, դառնում կայսեր սենեկապետը, արժանանում նրա ուշադրությանը: Նա արևելյան գեղեցկությամբ, առնական արտաքինով ու բնավորության գծերով գրավում է կայսեր աղջկա սիրտը և վերջինիս համաձայնությամբ ամուսնանում նրա հետ:

Քառասուն օր քառասուն գիշեր հարսանիք են անում: Գևորգը դառնում է կայսեր փեսան և բարձր պաշտոններ գրավում պալատում:

Անցնում է 3–4 տարի: Կոթերցի հայ երիտասարդը աշխատում է ամեն կերպ գոհ թողնել կայսրին: Ունենում է մի արու զավակ, այդ առիթով մեծ հանդիսություններ է կատարվում պալատում և պալատից դուրս:

Սկզբում ամեն տարի մատաղ է անում ծնողների համար, մասնավորապես վախճանված հոր հիշատակին, սակայն աստիճանաբար մոռանում է, իրեն տալիս կերուխումի:

Մի օր էլ, երբ պալատից դուրս գալով՝ զբոսնում է, հայտնվում է իրեն Կ. Պոլիս բերող խորհրդավոր ծերունին, դաժան հայացքով նայում է Գևորգին և հիշեցնում, թե գիտի որ արդեն մոռացել է ծնողներին, որի համար աստված դժգոհ է նրանից:

Նույն գիշերը Գևորգը քնում է պալատում, կնոջ անկողնում, բայց զարթնում է Կոթեր գյուղի խրճիթում: Պալատից մնացած միակ հիշատակը լինում է արքայական գիշերանոցը:

Գևորգին թողնենք գյուղում, իր մոր մոտ, մենք վերադառնանք Կ. Պոլիս՝ կայսրի պալատը, որտեղ կատարյալ իրարանցում է սկսվել: Ո՞ւր է փախել ապերախտ հայը, ինչի՞ց էր դժգոհ, ինչպե՞ս պետք է գտնել նրան:

Ամեն կողմ փնտրում են ու չեն գտնում:

Ամենից հուզիչը, օրորոցի երեխայի տևական լացն էր սկսվել հոր տնից դուրս գալու պահից և չարունակվում էր անընդհատ:

Անցնում է մի ամբողջ տարի. ո՛չ պալատի հուզումն է անցնում, ո՛չ երեխայի լացը կտրվում:

Կայսրի աղջիկը՝ Մամախաթունը, խնդրում է հորից, որ թույլ տա գնալ Դերջան՝ փնտրել ամուսնուն:

Հայրը համաձայնվում է, ճանապարհի պատրաստություններ տեսնում: Աղջկա հետ դնում է խելահաս մարդիկ, նաև մեծ թվով աղախիններ, ծառայողներ, զինվորական պահակախումբ: Աղջկա խնամակալի մոտ էլ թողնում է մեծ գումար, որպեսզի անհրաժեշտության դեպքում ծախսի:

Մի քանի օրից կարավանը հասնում է Դերջան, կանգ առնում Կոթեր գյուղի մոտ, Եփրատի ափին: Աղջիկը տեսնում է, որ գետի այս մասում կենսական անհրաժեշտություն է մի լավ կամուրջ կառուցել: Գիտեր, որ ամուսինը այդ կողմերից է, բայց թե որ գյուղից՝ չի իմացել: Գտնում է մի հայ ճարտարապետ, անցնում գործի, հույս ունենալով, որ չփվելով տեղի գյուղերի ու գյուղացիների հետ, պիտի կարողանա գտնել երեխայի հորը: Շուտով սկսվում է շինարարությունը: Բազմաթիվ մարդիկ են աշխատել այնտեղ: Գևորգն էլ է աշխատել կամուրջի շինարարության վրա առանց իմանալու, որ այդ գործը կատարողը իր կինն է:

Մի օր Գևորգի մայրը ասում է.

– Որդի, մեր ինչին է պետք այս գեղեցիկ գիշերանոցը: Դա հարուստի վայել բան է. տանեմ այդ կամուրջը կառուցող մարդկանց տամ. գուցե մի բան կտան, կծախսենք:

Որդին համաձայնվում է: Մայրը վերցնում է գիշերանոցը, փաթաթում գլխաչորի մեջ, տանում է: Հարցուփորձ է անում, ասում են թե որն է ղեկավարի վրանը: Ներս է մտնում, տեսնում է որ մի երեխա լաց է լինում, իսկ վրանում մարդ չկա: Ամաչում է սրան-նրան ցույց տալ գիշերանոցը: Դնում է երեխի բարձի տակ և ուզում է դուրս գալ, երեխան ձայնը կտրում է:

Ներս է մտնում տղամարդու չորով մեկը և հարցնում.

– Ասա դու կախարդ ես, ի՞նչ արեցիր, որ երեխայի ձայնը կտրեցիր:

– Կախարդ չեմ, որդի,– ասում է խեղճ կինը,– մի գիշերանոց էի բերել, որ ձեզ տամ, այստեղ չէիք, երեխայի գլխի տակ դրի, նա էլ ձայնը կտրեց:

Երեխի մայրը նայում է բարձի տակ, վերցնում բաց է անում կապոցը և ինչ տեսնի ... ամուսնու գիշերազգեստը:

– Շուտ ասա,– ճչում է նա,– այս գիշերանոցը ո՞րտեղից է քո ձեռքը անցել:

– Գողության ապրանք չէ,– ասում է վախեցած կինը,– որդիս է բերել Կ. Պոլսից: Բայց մեր ինչին է պետք, բերեցի որ ձեզ տամ:

– Այժմ ո՞րտեղ է ձեր որդին,– հարցնում է աղջիկը ավելի հանգիստ:

– Աշխատում է քարհանքերում, ձեր կամուրջի համար քար է կտրում:

– Գնա և շուտ գտիր ու ինձ մոտ բեր: Մի վախենա, ես նրան ոչ թե պատժելու եմ, այլ բարձր պաշտոն պիտի տամ այս շինարարության վրա:

Երեկոյան երբ տղան աշխատանքից տուն է գալիս, մայրը պատմում է ամեն ինչ և ասում է թե առավոտ կանուխ միասին գնալու են կամուրջը կառուցողի մոտ:

Գևորգը երկյուղը սրտում առավոտ կանուխ գնում է:

Աղջիկը հենց որ տեսնում է նրան, ճանաչում է:

Վրանից հեռացնում է բոլոր ծառայողներին, անգամ երեխայի դայակին, իսկ Գևորգին ներս է հրավիրում:

– Այս գիշերանոցը ո՞րտեղից է անցել քո ձեռքը,– հարցնում է նրան:

– Այդ գաղտնիքը դեռ մայրս անգամ չգիտի, բայց կարծում եմ, որ դու գիտես ... դու իմ կինն ես, աչքերիցդ երևում է, չնայած տղամարդու շորեր ես հագել:

– Հապա ինչու՞ փախար, ապերախտ տղա,– հարցնում է կինը:

Տղան պատմում է ամբողջ պատմությունը այնպես, ինչպես եղել է: Կինը համոզվում է, որ բաժանումը եղել է անկախ նրա կամքից:

Կարգադրում է Գևորգին տանել բաղնիք, զգեստները փոխել, բերել: Հրամանը կատարվում է: Մի քանի ժամից պալատական վրանն է վերադառնում գեղեցկադեմ երիտասարդը: Մինչ այդ՝ ինքն էլ փոխել էր տղամարդու շորերը, հագել կանացի գեղեցիկ զգեստներ: Նա երեխային հոր գիրկն է դնում ու ասում,– ահա քո սիրելի որդին, ես էլ՝ քո կինը, աշխատիր սրանից հետո արժանի լինել երկուսին էլ:

Երբ երեկոյան մենակ են մնում, ասում է ամուսնուն.

– Գևորգ, վաղվանից ես հայտնվելու եմ իմ իսկական սեռով ու անունով, որպես կայսեր աղջիկ, իսկ դու էլ իմ ամուսինը: Դու պետք է ղեկավարես շինարարության գործը:

Հենց հաջորդ օրը նա սուրհանդակների միջոցով ուրախ լուրը հայտում է Բյուզանդիոն՝ հորը:

Կայսրը ողջունում է աղջկա հաջողությունը, ուղարկում մեծ գումար որպեսզի Դերջանում անհրաժեշտ կառուցումներ անեն: Գևորգը դառնում է այդ գործի ընդհանուր ղեկավարը:

Եփրատի վրայի ութ կամարանոց կամուրջն ավարելուց հետո Երզընկայի ու Կարինի ճանապարհի ուղիղ կենտրոնում կառուցում են քարաշեն մի մեծ իջևան, որը չունի իր նմանը առհասարակ Արևմտյան Հայաստանում: Կառուցված է քառակուսի, սրբատաշ քարերով առանց լուսամուտի: Լույսն ստանում է տանիքից: Դրսի պատերն ունեն միմյանցից 20 մետր հեռավորության վրա գտնվող սյուներ, որոնք տանիքից էլ մեկ մետր բարձր են: Հենց այդ սյուներն են պաշտպանում չենքը փլուզումից:

Իջևանի ներսի կողմում անասունների համար կան մեծ ախոռներ, դարձյալ կառուցված սրբատաշ քարերով: Ամեն մի ախոռում կարող են տեղավորվել հարյուրի չափ ուղտեր, ջորիներ, ձիեր: Ախոռների շարքում, ներսի կողմից բակում կան 40-ի չափ կամարակապ սենյակներ, որոնք ծառայել են որպես կացարաններ վաճառականների համար:

Բակում եղել է գմբեթավոր մի շատրվան:

Իջևանն ունեցել է հաստ տախտակից դռներ, ամրացված երկաթներով:

Դռներից մեկի վրա կա փոքր աշտարակ, որտեղից դիտում են ճանապարհը:

Դժբախտաբար իջևանը չունի ոչ մի արձանագրություն, որից իմացվի նրա կառուցման ժամանակը, կառուցող ճարտարապետի անունը: Միայն մի քանի քարերի վրա պահպանվել են չինարար վարպետների անունների հայերեն սկզբնատառերը և փոքր խաչեր:

Իջևանից 50 մետր հեռու, դարձյալ Մամախաթունում, կա մի այլ հոյակապ հուշարձան, չինված սրբատաշ քարերով, քանդակազարդ և 30 սանտիմ երկարություն ունեցող անծանոթ գրերով մի արձանագրություն: Ենթադրվում է, որ սա արդեն հայկական չինություն չէ, այլ՝ սելջուկյան: Կամ նախապես եղել է հայկական, ապա վերածվել է սելջուկյան աղոթատեղիի, ինչ որ ավելի հավանական է, մանավանդ որ ներսում կա մի փառահեղ մատուռ, հայկական գմբեթով: Այդ մատուռի մեջ պահվում էր մի գերեզման, թուրք մոլլանները այն ներկայացնում էին որպես մուսուլմանական սրբատեղի, սրբի գերեզմանով:

Մամախաթունի մոտակայքում եղել է մի բլուր, որը պեղելուց հետո երևան է եկել հին բաղնիք:

Կոթերի կամուրջի մասին մի շատ սրտառուչ ավանդություն էլ հիշում է Գ. Հալաջյանը «Դերսիմի հայերի ազգագրությունը» գրքում: Ըստ նրա ավանդությունը մեր օրերն է հասել գրավոր վավերագրով և գտնվել է վիժանցի Պուլիկ քեհյաի մոտ:

Այդ ավանդության համաձայն՝ սկզբում կամուրջի չինարարությունը հանդիպել է բնական դժվարությունների: Ամեն անգամ որ կառուցել են մի բան, Եփրատը վարարել է, շարված մասերը քանդելով տարել: Ճարտարապետի ձեռք առած բոլոր միջոցներն անցել են ապարդյուն:

Ահա այդ ժամանակ ճարտարապետի 16-ամյա դուստրը՝ Արեգնազանը, երազ է տեսնում. ջրերի սպիտակամորուս սուրբը գալիս է նրա մոտ և ասում է, թե կամուրջը կկառուցվի և կանգուն կմնա միայն այն ժամանակ, երբ մարդկային զոհ մատուցվի ջրերի աստծուն, թե 18 տարին չլրացրած, աչխարհ չտեսած մեկն է լինելու այդ զոհը: Հայտնում է հորը, որն ասում է, թե ինքն էլ նույնպիսի երազ է տեսել: Աղջիկը առաջարկում է զոհաբերել իր կյանքը, որպեսզի կառուցվի Կոթերա կամուրջը: Հայրը կտրականապես մերժում է, սակայն նրա դուստրը սպառնում է անձնասպան լինել, իրեն գցելով ջուրը, եթե մերժվի իր առաջարկը:

Ճարտարապետը ճարահատ տեղի է տալիս:

Երբ հիմքը կառուցվում է, աղջկան ուղղահայաց կանգնեցնում են կենտրոնական կամարի հյուսվածքի մեջ և սկսում են շարել պատը, իսկ Արեգնազանը երգում է.

Հայրիկ, ամ հայրիկ,
Շարեցին, շարեցին, մինչև ծնկներս շարեցին:
Թող շարեն արագ, թող կանգնի կամուրջը ծծերուս վրա:
Հայրիկ, ամ հայրիկ,
Շարեցին, շարեցին, մինչև ծծերս շարեցին:
Թող շարեն արագ, թող կանգնի կամուրջ մարդկության համար:
Հայրիկ, ամ հայրիկ,
Շարեցին, շարեցին, մինչև աչքերս շարեցին:
Թող շարեն արագ, չտեսնեմ աստղեր, լուսին, արեգակ:
Հայրիկ, ամ հայրիկ,
Շարեցին, շարեցին, մինչև պսակս շարեցին:
Թող շարեն արագ, փեսան դեռ չեկած՝ մտնեմ առագաստ:

Գ. Հալաջյանը, մեջ բերելով այս ավանդությունը, գրում է. «Ասվում է թե սգակիր հայրը, ի հիշատակ իր զավակի, կամուրջից մի քիչ վար, ճիշտ դեմ-հանդիման այն կամարին, ուր վարպետը հյուսել էր իր աղջկա մարմինը, սրբատաշ քարերով կառուցել է ստորերկրյա մեծ ավազան, որի միակ մուտքից ներս են խուժում Եփրատի կատաղի ալիքները, զարնվում պատերին, չող ու փրփուր բարձրացնում մինչև ձեղունը, ապա ետ դառնում ավազանի նույն մուտքի ձախ կողմից:

Ասվում է նույնպես, թե ստորջրյա այս ավազանը ջրից չատ բարձր ունի թաքստոցներ և կամարաձև տաճար, որի աջ կողմի պատի վրա քարից կոփված խոյի գլուխ կա: Թաքստոցները չինված են տաճարի խորության ձախ կողմում, ուր պահվում են գրչագիր մատյաններ և գանձեր: Վարժ լողորդները, տոնական օրերին և կիրակնամուտին, իրենց կյանքը վտանգելու գնով լողանալով մոտենում են տաճարին, բարձրանում վեր և ձեթ գնում մշտավառ կանթեղին, անմար պահելու համար Արեգնազանի զոհաբերության հիշատակը»[1]:

Կոթերա կամուրջը անվթար մնացել էր մինչև 1916 թվականը, երբ թուրքերը, ռուսական բանակի առաջխաղացման օրերին պայթեցրել են նրա մի քանի կամարները:

6. ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԵՐԶՆԿԱՅԻ ԵՐԳԵՐԻՑ ՈՒ ՊԱՐԵՐԻՑ

Լուսինկա, ինդո՞ր կեթաս,
Սորվեր ես, գիչեր կեթաս: (Կրկնել)
Իմ յարիս պագ մը ղրկիմ,
Զի մոռնաս, իրեն կուտա՞ս: (Կրկնել):

Լուսինկա, լուսդ չատնա,
Իմ յարին կյանքը մեծնա,
Աս գիչեր յարիս կեթամ,
Լուս տուր ո չիտակ եթամ:

Լուսին ես, թե արև ես,
Կնիկ ես, թե աղջիկ ես,
Աս գիչեր քեզի պի գամ,
Տանը դուն մինաճո՞ւկ ես[2]:

---

[1] **Գ. Հալաջյան,** *Դերսիմի հայերի ազգագրությունը, էջ 185:*
[2] **Գ. Տեր-Վարդանյան,** *նշվ. աշխ., էջ 62:*

Պարպաչին – Սխտոր ծեծեմ, օրո՞վ ծեծեմ:
Պարողներ – Սխտոր ծեծեմ, օրո՞վ ծեծեմ:
Պարպաչին – Կանաչն ու կարմիրն էրևա.
Պարողներ – Կանաչն ու կարմիրն էրևա:
Պարպաչին – Օտքով ծեծինք սեղնի սխտոր.
Պարողներ – Օտքով ծեծինք սեղնի սխտոր:
Պարպաչին – Սխտոր ծեծիմ, օրո՞վ ծեծիմ.
Պարողներ – Սխտոր ծեծիմ, օրո՞վ ծեծիմ:
Պարպաչին – Քթով ծեծինք սեղնի սխտոր
Պարողներ – Քթով ծեծինք, սեղնի սխտոր:
Պարպաչին – Սխտոր ծեծիմ, օրո՞վ ծեծիմ.
Պարողներ – Սխտոր ծեծիմ, օրո՞վ ծեծիմ:
Պարողներ – Ձեռքով ծեծինք սեղնի սխտոր,
Պարողներ – Ձեռքով ծեծինք, սեղնի սխտոր:
Պարպաչին – Սխտոր ծեծիմ, օրո՞վ ծեծիմ.
Պարողներ – Սխտոր ծեծիմ, օրո՞վ ծեծիմ:
Պարպաչին – Փորով ծեծինք, սեղնի սխտոր.
Պարողներ – Փորով ծեծինք սեղնի սխտոր:
Պարպաչին – Սխտոր ծեծիմ, օրո՞վ ծեծիմ.
Պարողներ – Սխտոր ծեծիմ, օրո՞վ ծեծիմ.
Պարպաչին – Ճակտով ծեծինք սեղնի սխտոր.
Պարողներ – Ճակտով ծեծինք սեղնի սխտոր:

Ես ո քեզմե յադ իմ եղեր,
Հեփ տուչման սեղնտեն տըր,
Եվ կամ պետք է խոստովանիմ,
Հեփ պենիմ կյունահըմտան տըր:
Երեսներդ խնձորի պես,
Էլմանըն թեժնտեն տըր,
Աչուկներդ ճրագի պես,
Քիլիսե մոմտան տըր:
Պոկներդ խիս բարակ ին,
Քիլիսե մասնտան տըր,
Ինձիկն թեճնտեն տըր:
Առկաներդ սետեֆի պես,
Պոյդ պոսդ չինարի պես,
Սելվինըն տալրտան տըր:
.....

Ախջի Մայրամ, մորդ յայլան ո՞ւրտեղ է.
Պաղ աղբյուրի, կանաչ քարին վրան է,
Մայրամ չատր զարկեց Ուռման լեռները,
Մեկդին սիրին կ արծեր, մեկդին գառները:
Մի լար Մայրամ, մի լար աչկդ կավրի,
Քեզ պզտիկ կարգողին տնակն ավրի:

Ջրհորեն ջուր կը քաչինք Թուլումներով,
Մայրամը հարս կուտանք զուլումներով:
Աղջի Մայրամ, հորդ յայլան ո՞ւրտեղ է.
Կանաչ կակաչ պաղ ախպուրի վրան է:
Մի լար Մայրամ, մի լար, աչկդ կավրի,
Քեզ պզտիկ կարգողին տնակն ավրի:

Էրկան իմ գացեր, զընգլո, հավող իմ կերեր, զընգլո.
Կարմիր մոմերով զընգլո, կանանչ մոմերով, զընգլո:
Էրկան իմ գացեր, զընգլո, գինի իմ խմեր, զընգլո.
Կարմիր մոմերով, զընգլո, դեղին մոմերով, զընգլո,
Էկան կը տանին, զընգլո, Ջատկին կը բերեն, զընգլո,
Կանաչ մոմերով, զընգլո, կարմիր մոմերով, զընգլո:

Արև՝ Աղանիկին, բախջան՝ Արմենակին.
Այ կռիճ, աղվոր տղա,
Երգե ո յարդ խաղա:
Արև՝ Աղանիկին, բախջան՝ Արմենակին.
Տերտերին դռան փեչքը,
Օրիորդին բարակ մեչկը:
Արև՝ Աղանիկի, բախջան՝ Արմենակին.
Ուր գացիր, ուր եկար,
Դուն իմ սրտին դուր եկար:
Արև՝ Աղանիկին, բախջան՝ Արմենակին,
Ես չալիմ յարս խաղա,
Խաղ ըսիմ, խանա խանա:
Արև՝ Աղանիկին, բախջան՝ Արմենակին.
Կանաչ արտը մի կոխեր,
Սիրած յարը մի փոխեր:
Արև՝ Աղանիկին, բախջան՝ Արմենակին:

Եկանք հարս մը տանինք, ալով ու լալով,
Գլոխը կապեցինք սինրիլի չալով,
Աչկերը սրբեցինք մենդիլին ալով:
Մի լար, անամ, մի լար, հարս կուգաս մեզի,
Աղվոր խնամտրվոր բերեք ինք քեզի:
Հագած ալ ըլլա, կապածդ դեղին,
Սրտիկդ տաք ըլլա մեր աղա տղին,
Ոտքդ ուղուր ըլլա մեր տան ու տեղին:
Մի լար, անամ, մի լար, հարս կուգաս մեզի,
Աղվոր հարսնևորներ բերեր ինք քեզի:

– Մինչև կարմունջ եթամ, ետևես նայեցեք,
Կարմունջեն անդին ասնիմ հույսներիդ կռեցեք.
Իմ կերած կերակուրս աղքատաց տվեք:

Հալավդ բերեր ինք, թևիկդ անցուր,
Հարսնառ եկեր ինք, մարիկդ լացցուր,
Աչահամբույրով կաթը հալալցուր:

ՈՒՍԿԵ՞ ԿՈՒԳԱՍ (Երզնկայի տարբերակ)

Ուսկե՞ կուգաս հուչիկ, մուչիկ,
Դուն բտլիկ, պագդ անուշիկ.
Ուսկե՞ կուգաս, վերի էգո՞ւն,
Պաչիկ մը տուր, պապուդ հոգուն:

Ուսկե՞ կուգաս, վերի վանա՞,
Պաչիկ մը տուր, մարդ չիմանա:
Ես դիվանա, դուն դիվանա,
Ասված մեզի դուռ մը բանա:

Տանձին տալը ծռեցի,
Ձեվրես տակը փռեցի,
Գնա կորիր, չան տղա,
Քենե լավը ճարեցի:

Կարկուտ կուգա լեռները,
Բաց թողուցեք դռները,

Քոնա մորս աչքերը
Յարս թողուց լեռները:

Աղջի անունդ Շուշան,
Էկո երթանք Սուրբ Նշան,
Մատնիս տամ քեզի նշան
Ըլլամ քու հորդ փեսան:
Սուրբ Նշանա դուռը փակ է,
Նստե, մազերդ քակե:

Կրսին դիմացիր, ինդո՞ր դիմանամ,
Թղթիկ մ՚ա չես գրեր, դերտերդ իմանամ:
Գիչերը բաց աչկիս, դուն է կերևաս,
Ցորեկը թաց աչկիս, դուն է կերևաս:
Կը կանչիմ, չես լսեր, ինդո՞ր դիմանամ,
Մոտդ գալ չին թողուր, ձանդ իմանամ:

Երզնկայի քաղաքային բնակչությունը, 19-րդ դարից արդեն հորինել և կատարել է նաև թուրքերեն բազմաթիվ երգեր, որոնց մի մասը տպագրվել է տարբեր ժողովածուներում, այդ թվում Մ. Թումանյանի «Հայրենի երգ ու բան» ժողովածուի առաջին հատորում:

Թուրքերեն երգերի մեջ ամենից տարածվածն է եղել «Էրզինջանտան քեմախտան, յար կելիր օյնամակտան» երգը, որ հաճախ է կատարվել խնջույքներում, ուրախ ժամանցներում և մինչև մեր օրերում էլ չի մոռացվել:

Ահա այդ երգը բնագրով և հայերեն թարգմանությամբ.

Էրզինջանտան Քեմախտան,
Յարը կելիր օյնամագտան,
Անամ պապամ Էրզինջան,
Սեն նե խոչսուն ըրագտան:

Տուրուր սիսլեր իչինտե
Էրզինջան թա ուզաքտան
Էթրաֆընը տաղլար տութմըշ,
Ֆարգը յոգտուր ճեննեթտեն:
Անամ պապամ Էրզինջան
Սեն նե խոչ սուն ըրագտան:

Պու յրլ ֆրաթ փեք ճոշմուշ,
Գրշրն չոգ գար յաղմագտան։
Անամ պապամ էրզինջան
Սեն նե խոշսուն ըրագտան
Տուրուր սիալեր իչինտե,
էրզինջան թա ըրահտան։

Թարգմանությունը

Երզնկայից Քեմախից
Յարն է գալիս պարելով
Հայրիկ մայրիկ Երզնկա,
Որքան լավն ես դու հեռվից։

Ծածկված է մշուշի մեջ
Երզնկան շատ հեռուներից
Զորս դին լեռներ պար բռնած
Չի տարբերվում դրախտից։
Հայրիկ, մայրիկ Երզնկա,
Որքան լավն ես դու հեռվից

Այս տարի վարարել է Եփրատը
Ձմռանը շատ ձյուն գալուց
Հայրիկ, մայրիկ Երզնկա,
Որքան լավն ես դու հեռվից
Ծածկված է մշուշի մեջ
Երզնկան շատ հեռուներից։

7. ԱՌԱԾՆԵՐ[1]

Անուշ լեզուն օձը ծակեն կը հանե։
Անուշ կեր, անուշ խորաթե։
Արև ա ըլլաս նը՝ մարդու վրա ծաթելիք չունիս։
Ապուրը դեռ դուռը՝ փիլաֆը տանի լեռը։
Աղջիկը չի ծեծողը ծունկը կը ծեծե։
Աղեկը լեռան ետևը, գեշը՝ դռան ետևը
Արզևին՝ հավերուն ջուր տվող շատ կըլլա։

[1] *Գրի է առնված՝ Գ. Պաղտիկյանից։*

Անցանքը ապրշում ըլլա՝ հագնող չըլլար:
Աղքատին մարխը առջի իրիկվընե մարեր է:
Ալեմով եղած բանը հարսնիք ու տոն է:
Աղվեսին դունչը հավողին չի հասավ՝ ըսավ քի թթու է:
Ամեն խորոզ իր աղբանոցին վրա զիլ կը կանչե:
Ամեն գլխե ձան մը կուգա:
Ամեն մարդ իր դերդը կուլա:
Ամեն մարդ իր էշը կը քշե:
Անամոթին երեսին թքին, ըսավ քի արզև կուգա:
Արզևեն ազատանք, կարկուտի բռնվանք:
Անջարը կուտե բանջարը:
Աչքե տես, բերնե կարոտ:
Աստծու պահած գառը գալը չի տանիր:
Ասված ո մեկուն տունը քանդել ուզե՝ առաջ ընոր խելքը կառնե:
Արունը արունով չին վլար:
Բախտը որ չի գա, ջեհդը (ջանք) ի՞նչ անե:
Բերանը փիլաֆեն է էրած, մածունը փչելով կուտե:
Բարիք ըրե ջուրը նետե, էկե մեկը չի գիննա, ձուկը կը գիննա:
Բերնե բերան կըլլա գերան:
Բարձր ծառին քար նետող շատ կըլլա:
Գալը կուգա սյուրիին, վայը կուգա մեկին:
Գեչ խոսքը, դալը փարան տիրոջը կը դառնան:
Գալի գլխուն Ավետարան ես կարդացեր:
Գող, սիրտը դող:
Գողը գողեն գողցավ, Ասված վերեն զարմացավ:
Գլորեցավ բղուկը, գնաց գտավ իր խուփը:
Գեղեն չին առներ պագ մ առած ին, դուսեն կը
բերին կեսը տարած ին:
Գդալով ժողվե, չերեփով բաժնե:
Դրացիին հավը դրացուն դաղ կերևնա:
Դրացին դրացուն մոխիրին հասրաթ:
Դահ եղին՝ դանակը վզին:
Դանակը իր կոթը չի տաշեր:
Դուսեն քահանա, ներսեն՝ սատանա:
Դուն քուն, բախտդ արթուն:
Երկար խոսքին կարճը սիրիմ:
Երեսին ճանճ մ իյնա՝ քառսուն փարչա կըլլա:
Եզան կոխած տեղը բերեքեթ կը բուսնի:

Երեսին կեորե չափլաղ կը զարնին:
Ես աղա դուն աղա, հրպա մեր աղուն վո՞վ պի աղա:
Երես տվինք, աստառ կուզե:
Զալըմը զուլում կը բերե:
Էշը իշուն քով ո կապեն՝ յա հառեն կառնե, յա փառեն:
Էշն ի՞չ գիտե նուշն ինչ է:
Էկե եղ ունիս՝ գլոխիդ քսե:
Էջելե անելով՝ մեյտան չառնվիր:
Էմմեն մարդ իրեն բախտեն կուտե:
Էմմեն մարդ իրեն կորեկն աղալ կուզե:
Ընողին գտնողին:
Իշուն հեզնելը մեկ ամոթ, իշնալը՝ երկու:
Ինքզինքին կյուվենմիշ չեղողը կոիճ չէ:
Ինչ ո ցանես ան կը քաղես:
Իշուն հարսնիք կանչեցին, ըսավ՝ յա ջուրն է պակաս, յա փատը:
Լեղի պատիճանին ղռավու չի զարներ:
Լեռը լեռան չի հասնիր՝ մարդը մարդու կը հասնի:
Լզու ըսվածը ոսկոր չունի:
Կաթունկ կաթունկ՝ կը դառնան լիճ խորունկ:
Կաթունկ եղիր, քարը մաշիր:
Կատվին ըսին աղբդ դեղ է, տարավ խորունկ մը թաղեց:
Հազը հազին հետ, դազը դազին հետ, քել խորոզն ա
քել հավին հետ:
Հեմ հանցավոր, հեմ ալ կյուճլի (դժվարահաճ):
Հեռավոր սուրբը զորավոր կըլլա:
Հարը մեկ որբ չէ կրցած պահել, մարը քառասուն է խնամեր:
Հարուստին սալը լեռներեն է անցել, ախքատինը
դաշտին վրա է անճրկեր:
Հեռու տեղին սոմունը խոշոր կըլլա:
Հաստ ու բարակ մեկ գին է, վայ բարակ մանողին:
Հարցնող եղիր քի գիտցող ըլլաս:
Հավն ո հավ է, ջուր խմած վախտը երկինք կը նայի:
Հեմ մխին է, հեմ նալին:
Ճերմակ փարան սև օրվան համար:
Ճրագը իրեն տակը լուս չի տար:
Մկան ասնիլը բան մը չէ, ճամփա կըլլա:
Մորը մանածը ներկող է:
Մուկը ծակը չի պարտկվեր, ձախավելն ա պոչն է կապեր:

Մարդիկ խոսելով, հայվաններն ա հոտվըտալով բարեկամ կըլլան:
Միսն առանց ոսկորի չըլլար:
Մեկ ձեռքին ի՞նչ կըլլա. երկուքին ձանը կելլա:
Մզրախը ճըվալը չի մններ:
Մարդ իչ կանե նը՝ իրեն կանե:
Մեղքը լալով, պարտքը տալով:
Մեկ ականջեն կը մտնա, մեկալեն կելլա:
Մեկ ծաղիկով գարուն չի գար:
Մեկ ձեռքով ծափ չըլլար:
Մորը նայե դե՝ ընանկ ուզե աղջիկը:
Մորուք չունիմ քի խոսքս ասնի:
Նեղ անինք ու տեղ անինք:
Նեքեզին ծախսը երկուք է:
Շանը ճիտեն ճիկեր ին կախեր:
Շան հանդիպելեն՝ չալուին էթրաֆը դառնալն է լավը:
Շունը հիչե, փատը քաչե:
Շանը սատկիլն ո մոտենա, ճամիին դուռը կաղտոտե:
Շունը չան միսը չուտեր:
Ուժը իչուն չի հասեր, փալանն է ծեծեր:
Ութ օրվան կյանքին՝ ինն օրվան ապրուստ է արկավոր:
Ուտողը չիյտեր՝ բրդողը գիտե:
Ուզան բերանը կթան կով մը կարժե:
Ուզողին մեկ երեսը սև, չի տվողին՝ երկու երեսը:
Ունևորին փարան, ախքատին չեյեն:
Ուղտին ըսին՝ ճիտդ ծուռ է, ըսավ ո՞րտեղս է չիտակ:
Ուրիչին չվանով հոր չին իչնար:
Ջիմ ուտեր, ջեպս դիր:
Ջուտողին մալը՝ ուտողին հալալ:
Պարապ չըվալին ձի չի գար:
Ջաղացքը ջուրն է տարեր, ինք ելեր չախչախը կը փնտրե:
Ջուրն ինկողը արգևեն չի վախնար:
Ջուրին բերածը ջուրն ա կը տանի:
Սատկած էշ կը փնտրե քի նալերը քակե:
Սուտ խենթ եղեր, վանքին հավերը կուտե:
Սոխին անուշը չըլլար:
Սոխ չիմ կերեր քի սիրտս մրմռա:
Սուրին յարեն բուժելի, խոսքինը՝ անբուժ:
Սևը սապոնն ինչ անե, խևը խրատն ինչ անե:

Վար թքնիմ մորուքս, վեր թքնիմ՝ հալիքս:
Վագուն ջուրը աղտ չի վերցներ:
Տանձին լավը արջերն ին կերեր:
Տասը չափե, մեկ կռե:
Տնտես՝ ամենքը հավասար տես:
Քել գլոխին չիմչիր սառ:

8. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Ես ուր՝ ան հետս: Ցորեկը փեչս ի վար, գիշերն ա ու՞ր կորավ: ***Շուք, չվաք:***
Պատին վրա փիլա մը խոտ: ***Հոնք:***
Երկու առու ջուր կը վազի, հինգ ախպար դեմ կը վազին: ***Քիթ, ձեռք:***
Անծակ մարգրիտ, անոլոր դերձան: Ասված կը չարե, մարդը կը քակե: ***Խաղող:***
Վրան կապուտ օվանոց, տակն ա չարժուն օրորոց: ***Երկինք ու երկիր:***
Երկու ձեռքեր չորս աղբուրե ջուր կառնին: ***Կով կթել:***
Նեղ ու մութ տուն, սատանան մեջը քուն: ***Սուր ու պատյան:***
Կիշնե դաշտը, կառնե պաշարը, կելլա լեռը, կը թափե սիսեռը: ***Ամպ ու կարկուտ:***
Ինք մեկ հատիկ, մեջը հազար գնդիկ: ***Նուռ:***
Տեղին կուտամ, տեղեն կառնիմ, մեկ կը տանիմ, հազար բերիմ: ***Ցորեն:***
Տեղ մ՝ ունիմ թաց մաղարա, մեջը կարմիր գերան խաղա: ***Բերան և լեզու:***
Քեռթ քեռթ մինարե, մոլլան վրան կը քալե: ***Կշեռք:***

9. ՔՐԴԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԱՆՐԱԴԵՊԵՐ

Երզնկայի և Դերջանի գավառներում շատ տարածված էին քըրդերի հետ կապված մանրադեպերը: Ինչպես ամբողջ Արևելքում սիրված հերոս է եղել Մոլլա Նասրեդդինը և ամենուր մարդիկ պատմել են նրա հետ պատահած անեկդոտները, դրանք սկսելով «մի օր Մոլլա Նասրեդդինը», կամ «մի օր Հոջա Նասրեդդինը» նախադասութիյուններով, այնպես էլ այս գավառներում մոլլայի անեկդոտներին հավասար հաճույքով պատմվել են այն մանրադեպերը, որոնք սկսվել են «Մի օր մի քուրդ» նախադասութիյամբ:

Այդ մանրադեպերը բոլորն էլ վերաբերել են Դերսիմի քրդերին: Դերսիմը (պատմական Մանանաղի գավառը) մինչև Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը ապրում էր ներամփոփ, բնատիրական կյանքով, առևտուրն էլ կատարում էր մթերքների փոխանակությամբ միայն: Փողի մասին գրեթե գաղափար չի ունեցել: Քրդերն իրենց ոչխարները, բուրդը, յուղն ու պանիրը բերում էին Երզնկա, Մամախաթուն, փոխանակում անհրաժեշտ ապրանքների հետ, հիմնականում շոր, կտորեղեն և այլն: Քաղաքի մանր առևտրականները, արհեստավորներն էլ թափանցում էին Դերսիմի լեռները, տեղում փոխանակում ապրանքներ, քրդերի համար կարում շորեր:

Դերսիմի քրդերի մոտ տիրում էր բացարձակ անգրագիտություն, տասնյակ գյուղեր կարելի էր գնալ՝ առանց մի գրաճանաչ մարդու հանդիպելու: Քաղաք տեսածների թիվն էլ շատ սահմանափակ էր, իսկ կանայք ամենևին գործ չունեին քաղաքի հետ:

Ամեն ինչ կատարվում էր անգիր ձևով: Ոչ միայն ժողովրդական բանահյուսությունը, երգ ու հեքիաթն էր անգիր տարածվում, այլև կրոնական ծիսակատարությունները: Անգրագետ էին կրոնական պաշտոնյաները, որոնք ծիսակատարությունների ժամանակ արտասանում էին աղավաղված աղոթքներ առանց բան հասկանալու:

Անհաղորդ մնալով քաղաքային եռուն կյանքին, փողի վրա խարբսխված առևտրի նենգ գործարքներին, բարոյական մեղանչումների առիթ տվող հանդիպումների, դեպքերի, Դերսիմի քրդերը մնացել էին պարզամիտ, դյուրահավատ, միամիտ, ընտանեկան սրբությունների հավատարիմ մարդիկ:

Նրանք շատ ավելի անկեղծ, բարեկամական հարաբերությունների մեջ են եղել հայերի հետ, քան տիրապետող Թուրք տարրի: Միայն 1890-ական թվականների կեսերից համիդյան նենգ քաղաքականության հետևանքով քրդերը մասնակցեցին հայկական ջարդերին, թալանին, քաջալերվելով Թուրքական կառավարության կողմից: Բայց նույնիսկ հայ ժողովրդի համար ամենաողբերգական և ճակատագրական նշանակություն ունեցող 1915 թ. Մեծ եղեռնի օրերին, եթե եղան վայրագություններ քրդերի կողմից, ապա եղան նաև մարդասիրական դեպքեր: Երզնկայի և Դերջանի հայերից հարյուրավոր մարդիկ կոտորածից ազատվեցին ապաստանելով Դերսիմի քրդերի մոտ: Եվ դա բնական էր: Այլուր ասել ենք, որ Դերսիմի քրդերը և հայերը միմյանց հետ կապված են եղել դարավոր ավանդություններով:

Դերսիմում շատ տարածված է եղել քրդերեն մի երգ, որ կատարվել է սազի նվագակցությամբ, և որն իմացել են չափահաս գրեթե

բոլոր քրդերը: Էպիկական այդ գործի գլխավոր հերոսը մի հայ քահանա է, որ զոհաբերելով իր յոթ որդիներին՝ փրկել է մի քուրդ կրոնապետի կյանքը: Մեջ ենք բերում այդ երգից մի քանի հատված՝ որպես հայ և քուրդ ժողովուրդների դարավոր բարեկամության շատ բնորոշ արտահայտություն: Երգը վերցրել ենք Թարգի Խաչիկի գրի առած տարբերակից, և հաճախ ենք լսել նրա կատարմամբ 1930-ական թվականներին, Կոնդում:

Տեսեք տեսեք Աստուծո գործը՝
հայ քահանան զոհաբերեց իր
յոթ որդիներին, որոնց
կորուստն եմ ահա ես ողբում:

Անհավատներն ուզում էին
Սպանել իմամ Հյուսեինին,
հայ քահանան զոհեց որդիներին,
Որ ազատի մեր իմամին:

Լաց եղավ իմամը, լաց եղան
երկնքի հրեշտակները:
Ողբաց նաև երկիրն ամբողջ
Արձագանք դցեց սար ու ձոր:

Աստված վարձատրեց քահանային,
որ թաքցրեց մեր իմամին,
նրա փոխարեն հոժարակամ՝
զոհաբերեց որդիներին:

Երգի հետագա տողերից իմանում ենք, որ հայ քահանան իմամին փրկելու համար զոհաբերել է յոթը որդիներին, բայց քահանային բանտարկել են, ենթարկել անլուր տանջանքների: Իմամը գաղտնապես մտել է բանտը, համբուրվել քահանայի հետ, նրա օրհնությունը առել:

Քրդերը իրենց կրոնական դավանանքով բավականաչափ տարբեր են միմյանցից: Սյուննի չափեր քրդերը, որ ավելի մեծամասնություն են կազմում, մոլեռանդ մուսուլմաններ են: Նրանք կանոնավոր նամազ են անում և ռամազանի 30 օրը ծոմ պահում: Իսկ զազա կոչվող քրդերը, որոնք ապրում են Երզնկայի, Խարբերդի, Կարնո նահանգ-

ներում և կոչվում են նաև ղղլբաշներ, Մուհամեդ մարգարեից ավելի Ալիին են պաշտում: Սրանց թիվը հասնում է մոտ 300.000-ի և մեծ մասամբ ապրում են Դերսիմում: Նրանց կրոնական սովորության մեջ զուտ մահմեդականը թլպատությունն է միայն, մնացածը շատ նման է հայկական սովորություններին: Ունեն իրենց տոները, որոնցից մի քանիսը տոնում են հայերի հետ, ինչպես ս. Սարգսի տոնը, որ կոչում են Յախչ, հայերի հետ նույն շաբաթը ծոմ են պահում, այդ օրը նրանք էլ մատաղ են անում:

Համբարձման տոնի օրը հայերը կաթնապուր են եփում, իսկ նրանք՝ աշուր աշի, որը պատրաստում են կաթի մեջ 7 տեսակ չորացրած մրգեր խառնելով: Դա ինչպես հայերը, քուրդ աղջիկներն էլ այդ օրը մանիներով վիճակ են հանում, ձեռքներին ծաղկեփնջեր: Նրանք սովորաբար չեն աղոթում:

Հարսանեկան, թաղման արարողությունները նույնպես նման են հայկականին, տարբերությունն այն է, որ այդ արարողությունները հայերի մոտ ղեկավարվում են քահանաների կողմից, նրանց մոտ՝ փիրերի, որոնք ամեն ինչ ասում են սազի նվագակցությամբ, առանց Մուհամեդի անունը տալու: Հիշում են նախահայր Ադամին, Աբրահամին, Մովսեսին, Դավիթին, Սողոմոնին և Հիսուսին: Քարոզում են դյուցազնություն, քաջություն, անզիջում վրեժխնդրություն թշնամու նկատմամբ, իսկ որպես թշնամի նկատի ունեն Թուրքերին:

Կանայք, հայ կանանց նման, ազատ են պահում իրենց տղամարդկանց մոտ: Տարվա մեջ ունեն խրախճանքի օր, որի մասին խոսել ենք Անահտական սովորությունների վերապրուկների մասին խոսելիս: Հակառակ այդ օրվա կենցաղային ազատությանը, որը մնացուկն է համարվում Անահիտի պաշտամունքի օրերից, քուրդ կինը ընտանիքում տիպար բարոյականություն է պաշտպանում: Քուրդ կնոջ հավատարմության մասին կան բազմաթիվ պատմություններ:

Ներկայացնում ենք մի քանի մանրադեպեր, բացառապես քրդերի միամտությունը, քաղաքային կյանքին անծանոթ լինելը ցույց տվող:

Քուրդը և գրամաֆոնը – Դերսիմի քրդերը՝ բացի իրենց հրացանի կառուցվածքից, գիտության ու տեխնիկայի մասին ամենևին գաղափար չունեին: Հրացանի տեսակները, վառոդն ու արճիճն էլ նրանք ձեռք էին բերում քաղաքում ապրող իրենց հայ ծանոթների միջոցով:

Որևէ իր, գործիք, որ կապված էր գիտության հետ, միանգամայն զարմանք էր պատճառում նրանց, հրաշք թվում, համարվում սատանայի գործ:

Ահա այդ ձևով է ընդունել նա գրամոֆոնը:

1900-ական թվականների սկզբներին Երզնկայի մեծահարուստներից Սրապյանները Կ. Պոլսից ստանում են 10 գրամոֆոն՝ վաճառքի համար: Առաջին անգամն էր, որ Երզնկայում երևում էր այդ գործիքը և անչուշտ, անգամ զարգացած մարդկանց կողմից, ընդունվում է զարմանքով: Մի քանիսը իսկույն գնվում են Թուրք փաչաների կողմից՝ իրենց հարեմի կանանց զվարճացնելու համար: Մի քանիսն էլ վերցնում են հայերը: Գրամոֆոնի հետ վաճառվում էին նաև եվրոպական ընկերությունների կողմից ձայնագրված թուրքերեն, հայերեն և քրդերեն երգերի, պարեղանակների ձայնապնակները:

Երզնկացի Խաչիկ Թորոսյանը, որ գաղտնի կապերի մեջ է եղել մի կողմից Կ. Պոլսում ապրող օտարերկրացի առևտրականների հետ, մյուս կողմից Դերսիմի քրդերի, որոնց մատակարարել է զենքի տեսակներ, գնում է մի գրամոֆոն ու տանում է Դերսիմ՝ իբրև նվեր մի աղայի, որն իր աղջկան ամուսնացնելիս է եղել այդ օրերին:

Թորոսյանը որոշում է անակնկալի բերել թե աղային և թե գյուղի քրդերին: Սկզբում գաղտնի է պահում գրամոֆոնը պարունակող փայտյա արկղը: Աղան հետաքրքրվում է, թե այդ ինչ թանկագին արկղ է, որի պարունակությունը գաղտնի է պահվում: Կասկածում է զենքի մեջ:

Հարսանիքից երկու օր առաջ Թորոսյանը ասում է աղային.

- Աղա, նվագ լինելու՞ է հարսանիքին:

- Անչուշտ, Խաչո քիրվա,- պատասխանում է աղան: Առանց նվագի հարսանի՞ք կլինի: Դհոլ-զուռնայից բացի՝ ունենք նաև սազ, քյամանչա, դաֆ:

- Աղա,- ասում է,- դրանց ոչ մեկը պետք չէ, միք բերի: Իզուր ծախս միք անի: Ես բոլորը բերել եմ:

- Ո՞ւր է:

- Այս, այս արկղի մեջ:

Աղան զարմանքով նայում է հային:

- Կատա՞կ ես անում:

- Ոչ, ճիշտ եմ ասում:

- Արկղի մեջ ի՞նչ կա,- հարցնում է աղան ավելի հետաքրքրությամբ:

- Նվագողներ են նստած իրենց գործիքներով:

- Ինչպե՞ս կարող են տեղավորվել այդ փոքրիկ սնտուկի մեջ,- ասում է:

- Թզուկներ են բոլոր նվագողները: Իրենց գործիքներն էլ փոքր են:

– Զարմանալի բան:
– Ոչ մի զարմանալի բան չկա: Երբ նվագեն կհամոզվեք:
– Բաց արա արկղը տեսնենք:
– Դուք նվագողներին պիտի չտեսնեք:
– Հապա՞:
– Պիտի տեսնեք միայն մի մեծ ու լայն փող, որից ձայնը պիտի լսեք:
– Ինչու՞ իրենք պիտի չերևան:
– Ասացի որ թզուկներ են, ամաչում են: Կարևորը նրանց նվագն է:
– Ի՞նչ պիտի նվագեն:
– Ամեն բան չեն կարող նվագել: Օտարներ են, բայց կնվագեն քրդերեն պարեր ու երգեր, մեզ էլ այդ է պետք:

Ապա հայը թվարկում է այն բոլոր երգերը, պարերը, նաև թուրքերեն որոշ երգեր, որոնց ձայնապնակները բերել էր: Հետո ասում է.

– Հիմա, աղա, բոլորը թող սենյակից դուրս գան, դուք էլ հեռու մի անկյունում կանգնեցեք, որպեսզի խնդրեմ ու փորձեն մի երգ: Ո՞րն ես ուզում:

Աղան ասում է մի անուն, որ հայի թվարկած երգերից էր:

Բոլորը սենյակից դուրս են գալիս: Աղան կանգնում է մի անկյունում և սրտատրոփ սպասում թզուկների ելույթին:

Թորոսյանը զգուշությամբ բաց է անում սնտուկը, մեծ փողի կլոր մասը դուրս է գցում արկղից, մյուս մասը ամրացնում գրամոֆոնին, դնում աղայի պահանջած ձայնապնակը և ... հանկարծ գյուղով մեկ տարածվում է երգի աղմուկը: Աղան սարսափած նայում է, չի իմանում ինչ անի, իսկ դրսում արտակարգ իրարանցում է սկսվում, չէ որ ոչ մի նվագող չէր եկել աղայի տունը: Այս ի՞նչ հրաշք էր:

Ամենից շատ վախենում է աղան, գույնը գցում:

– Աղա ինչու՞ մոայլվեցիք,– հարցնում է հայը:

– Ուզում եմ այդ նվագողներին տեսնել: Սա ինձ ենթակա գյուղ է և ես պարտավոր եմ իմանալ, թե ովքեր են եկել իմ տունը:

Հայը մտածում է գուցե աղան մտքով անցկացնի թե արկղի մեջ եթե այդքան նվագողներ կարող են տեղավորվել, կարող են լինել և թուրք ոստիկաններ, իսկ ոստիկաններից սարսափում են քրդերը:

– Աղա,– ասում է Թորոսյանը,– ես կատակ էի անում, այս արկղի մեջ ոչ ոք չկա, սովորական մի մեքենա է, նոր գյուտ է, այնպես է սարքված, որ երգեր, պարեր նվագի: Հիմա մոտ արի, որ ցույց տամ:

Հայը ցույց է տալիս ձայնապնակները և բացատրում է, թե հիմնական գաղտնիքը դրանց մեջ է, թե ասեղի ծայրը քսվելով ձայ-

նապնակին՝ երգեր է երգում: Անչուշտ աղան այնուամենայնիվ ոչինչ չի հասկանում, բայց գոնե համոզվում է, որ արկղի մեջ մարդիկ չկան:

Գյուղը համոզվում է, որ թզուկներ են նստած եղել արկղի մեջ: Թորոսյանը քաղաք է վերադառնում ամբողջ ձմռան պաչարը ապահոված:

Քուրդը և հեռադիտակը – Դեպքը տեղի է ունեցել 1916 թ. հունիս ամսին՝ ռուսական զորքի կողմից Երզնկայի գրավման օրերին, երբ թուրքական զինվորներն ու բնակչությունը խուճապահար փախչում էին դեպի հարավ:

Մի խումբ քրդեր, զինված թուրքերից գրավված մաուզերներով, ամեն օր սարից ցած իջնելով կողոպտում էին թուրք գաղթականներին, և վերցրած նրանց անասունները, կրկին բարձրանում էին սար:

Հայրս՝ Թարգի Խաչիկը, թեև զենք չի ունեցել, սակայն քրդերի այդ խմբից չի բաժանվել՝ ապահովական նկատառումով, մանավանդ, որ մինչև ռուսական բանակի առաջխաղացումը այդ քրդերն էին պահել իրեն և հարազատացել էին:

Մի օր քրդերի խումբը հարձակվում է փախստական թուրք զինվորների վրա, գրավում նրանց զենքը, նաև հազարապետի զգեստներն ու իրերը: Զգեստները հագնում է քրդական խմբի պետը: Ռազմաավարի մեջ եղել է երկար մի գործիք, որից ոչինչ չեն հասկացել միամիտ մարդիկ, վախվխելով են շոշափել, կասկածելով թե զենք է, կարող է հանկարծ պայթել:

Թարգի Խաչիկը գլխի է ընկնում, որ դա հեռադիտակ է: Սկզբում չի հայտնում, ուզում է քրդերի հոգու հետ խաղալ:

– Սրա բլթակը ո՞ր կողմից է,– հարցնում է քրդերից մեկը,– աջ ու ձախ շուռ տալով առեղծվածային իրը և ցույց տալով ընկերներին:

Հարցնում են Խաչիկին: Նա պատասխանում է, թե հայերին զենք կրելը արգելված է, որտեղ տեսած պիտի լինի նման զենք: Ապա, վերցնելով քրդից հեռադիտակը, ժպտալով ասում է.

– Սա կախարդական գործիք է, որի միջոցով դուք կարող եք Զինումաչինում գտնվող բաներ տեսնել, հրաչքներ տեսնել:

Բոլորի հետաքրքրությունը չարժվում է, ավելի վախվխելով են նայում խորհրդավոր իրին: Ապա Թարգին քաշում է գործիքի երկու ծայրերից, որը երկարում է մոտ 50 սանտիմետրով: Քրդերն ավելի են ապշում այդ ձևափոխությունը տեսնելով, իսկ մի քանիսը ետ ետ են գնում, վախենալով որ ուր որ է պիտի պայթի:

Թարգին հեռադիտակը դնում է աչքերին, հորիզոնի վրա որոշում մի կետ, ուշադիր նայում: Հանկարծ սկսում է բարձր ծիծաղել: Բոլորը զարմացած հետևում են նրան, հարցնում թե ինչու այդպես ծիծաղեց:

Նա դիտակը մոտեցնելով խմբի պետի աչքերին, ասում է.

– Նայիր, ինչ ես տեսնում:

Քուրդը նայում է, զարմանում ու ասում.

– Թուրք գաղթականներ եմ տեսնում, անասուններ, կրակի վրա կերակուր եփող կանայք, ծառերի տակ կուչ եկած երեխաներ: Բայց սա իսկապես հրաշք է, կատարյալ հրաշք:

– Դեռ չես տեսել ամենից զարմանալի հրաշքը,– ասում է Թարգին,– այն հրաշքը, որ ինձ ծիծաղ պատճառեց: Հիմա մի քիչ աջ թեքիր գործիքը և նայիր ուշադիր. տես թե ինչ ես տեսնելու:

– Մարդը անում է այն, ինչ ասել էր հայը և հանկարծ ծիծաղում է ավելի բարձր:

– Բայց այդ կինը չի՞ ամաչում իր հետույքը բաց արած պպզել է ծառի տակ:

– Ինչու՞ պիտի ամաչի,– ասում է Թարգին, նրան ոչ ոք չի տեսնում բացի քեզնից, իսկ դու էլ չափազանց հեռու ես: Խեղճը պարզապես իր բնական պետքն է հոգում, առանց մտածելու, թե իր մերկությունը դիտող կա հեռվում...

Մի քանիսն էլ նայում են ու կրկնում նույն նախադասությունը.

– Աջայիր, աջայիր...

– Այս գործիքը պատերազմի ժամանակ են օգտագործում, բացատրում է Թարգի Խաչիկը, դրանով հետազոտում են, թե որտեղ է թշնամին և ինչ ուղղությամբ է շարժվում:

– Շեյթանի գործիք է, բայց օգտակար,– ասում է խմբի պետը և խոսակցությունը փակում:

Քուրդը և ավտոմեքենան – Դեպքը պատահել է Երզնկայում, դարձյալ ռուսական գրավման օրերին: Թուրքերի նահանջից ու պարտությունից հետո Դերսիմի քրդերը ազատ համարձակ ման են եկել Երզնկայում: Բայց նրանց մի մասը առաջին անգամ է տեսել քաղաքը և ամեն ինչ նորություն է եղել նրանց համար:

Մի խումբ քրդեր հյուր են լինում Թարգի Խաչիկի մոտ, որը նորնոր դերձակի խանութ բաց արած՝ սկսել է աշխատել ապահով պայմաններում: Երեկոյան, մութը կոխելու վրա, նրանք դուրս են գալիս քաղաքում զբոսնելու: Մեկ էլ տեսնում են, որ դիմացից ահռելի մի զանգված՝ աչքերից կրակ արձակելով, ֆշշալով սուրում է առաջ՝

ուղիղ իրենց վրա: Բոլորն էլ հրեշի տեղ են դնում և խուճապահար այս ու այն կողմ են փախչում, ավելի շփոթվում, կորցնում ինքնազգացողությունը: Մեքենան մոտենում է նրանցից մեկին տակով անում, թեթև վիրավորելով ոտից, կայծակի արագությամբ անհայտանում, ապուշային վիճակում թողնելով բոլորին:

Նրանք վերցնում են իրենց վիրավոր ընկերոջը և վերադառնում են: Հավաքվում են դուռ-դրացի: Քրդերից ամենից համարձակը պատմում է թե ինչպես մի հրեշ, որի նմանների մասին լսել էին միայն հեքիաթներում, հարձակվել է իրենց վրա, ահռելի ձայն հանել, վախեցրել բոլորին, ցանկացել է կուլ տալ իրենց, բայց կարողացել են մի կերպ փախչել, միայն մեկի ոտից է կարողացել բռնել էժդահարը: Ապա ասում է, թե քանի որ իրենք մինչ այդ նման հրեշներ չեն տեսել, ապա ռուսները բերած պիտի լինեն իրենց հետ:

- Միայն ռուսական այդ վիշապը պիտի կարողանա թուրքերին ծնկի բերել, ասում է քրդերից ամենախելոքը:

Քուրդը և ծովը – Դերսիմցի մի քուրդ ուզում է փախչել աշիրապետի ձեռքից: Կելենցիկ գյուղում ունեցել է մի ծանոթ հայ բարեկամ, որին հայտնել է մտադրությունը: Հայը նրան խորհուրդ է տվել միասին գնալ Կ. Պոլիս: Ասել է, թե ինքն էլ փող վաստակելու համար է ուզում գնալ այդ քաղաքը և շատ գովել է այնտեղի պայմանները:

Ապա բացատրել է, թե ինչպես են գնալու՝ մինչև Տրապիզոն ոտով, այնուհետև՝ ծովով, որի համար, ասել է հայը, փող է պետք: Մի քանի ոչխար ծախելով ամեն ինչ գլուխ կգա:

Համաձայնվում են: Մի մեծ խուրջին յուղով պատրաստված գարի հաց են վերցնում իրենց հետ, մի քանի ոչխար, ընկնում են ճանապարհ: Գալիս են Երզնկա, ծախում ոչխարները, ճամփա ընկնում դեպի Տրապիզոն:

Երբ հասնում են Տրապիզոն, հեռվից տեսնում են անծայրածիր ծովը: Քուրդը զարմացած հարցնում է.

- Քիրվա, այս ինչ հարթ տարածություն է, տեսնես՝ ինչ են ցանել:

- Դա ցամաք չէ,- պատասխանել է հայը,- ջուր է, ոչինչ էլ չեն ցանել: Քուրդը չի հասկացել թե ինչպես կարելի է այդքան հարթ տարածությունը թողնել անմշակ: Եթե ջուր է, ասել է նա, հապա ինչպես են ջրի վրա այդքան չենքեր չինել:

- Դրանք չենքեր չեն, այլ նավեր, որոնցից մեկի մեջ էլ մենք ենք նստելու՝ Կ. Պոլիս գնալու համար: Երկաթից պատրաստված նավեր են:

Քուրդը ծիծաղել է, կարծել է թե կատակ է անում հայը, երկաթը ինչպես կարող է ջրի վրա մնալ, երբ մի ասեղ անգամ ջրի երեսին չի մնում:

Որքան էլ բացատրել է հայը, մարդը չի հասկացել, բայց չի էլ վիճել: Սպասել է գործի վախճանին:

Մի քանի ժամից նստել են նավ, որը առագաստները բաց արած ընկել է ճանապարհ: Երբ մի քանի ժամից այլևս ոչ մի ցամաք չի երևացել, քուրդը սկսել է անհանգստության նշաններ ցույց տալ. հարցրել է թե ուր են գնում այսպես ջրի վրայով: Ոչ սար կա, ոչ ձոր, որ իմանան իրենց ուղղությունը: Հայ բարեկամը ասել է թե նավապետը մի գործիք ունի, որը ցույց է տալիս իրենց գնալու ճանապարհը, գիտի Կ. Պոլսի տեղը:

– Վալա՞դ է,– հարցնում է քուրդը, այսինքն՝ ճանապարհը իմացող մարդ:

– Այո, վալադ է, բայց չունչ չունի, չի կարող խոսել:

– Հապա ինչպե՞ս է հասկացնում:

– Պոչը այս ու այն կողմ շուռ տալով: Պոչը որ կողմը որ թեքի, նավապետն էլ նավը այն կողմ կքշի:

– Ուրեմն նավապետից ավելի խելոք է:

– Հարկավ:

– Եթե սխալ ճամփա ցույց տա, կարո՞ղ ենք ծեծել:

– Եթե ծեծենք, կկոտրվի և բոլորովին ճանապարհներս կկորսընցնենք:

Հաջորդ օրը ծովը սաստիկ ալեկոծվում է: Քիչ է մնում նավն ընկղմվի: Քուրդը տեսնում է, որ բոլոր ուղևորները խուճապի են մատնվել, սարսափի մեջ են: Ինքն էլ սիրտը ետ է տալիս, գույնը գցում: Կարծում է թե խուճապահար ժողովուրդը ճանապարհ է որոնում փախչելու: Հարցնում է հային.

– Վալադը ո՞ւր է, հապա ասում էիր թե խելոք է, տեսա՞ր որ ճանապարհը կորցրեց: Հիմա ի՞նչ պիտի անենք:

– Մի բան կանենք, դու հանգիստ մնա,– ասում է հայը:

Քուրդը տեսնում է, որ նավի տակից ջուրը վիթխարի ուժով շատրվանում է վեր, օրորում նավը տաշեղի նման, իսկ մարդիկ կայմերի վրա բարձրացած առագաստներն են կարգի բերում: Մոտենում է նրանց ու ցանկանում է խորհուրդներ տալ: Ասում է.

– Օղուլ, սրա տակն է խախտվել, կոտրվել, դուք վերևներն եք խառնում: Իջեք ջրի տակը և տեսեք թե բանն ինչումն է...

Քուրդը և ճաշարանը – Վերջապես քուրդն իր հայ բարեկամի հետ հասնում է Կ. Պոլիս: Կ. Պոլիս մի ասա, մի աշխարհ՝ Դերսիմի սարերից ու ձորերից դուրս բան չտեսած քրդի համար: Հազարավոր տներ, լայն ու նեղ փողոցներ, գեղեցիկ կանայք, կառքեր, ամենուր արտակարգ եռուզեռ: Մարդիկ խոսում են այնպիսի լեզուներով, որից ինքը ոչինչ չի հասկանում: Անծայրածիր չուկաներ, որտեղ ինչ ասես որ չկա:

Հայը նրան առաջարկում է մի տեղ նստել ու սպասել, մինչև որ ինքը գնա և գիշերելու տեղ ճարի: Ասում է ու գնում, իսկ Մստոն նստում է ու դիտում շրջապատը: Ոչ ոք իրենով չի հետաքրքրվում:

Երկար է սպասում, հայ բարեկամը ուշանում է, ինքը սաստիկ սոված է: Տեսնում է, որ նստած տեղից ոչ շատ հեռու մարդիկ մի տուն են մտնում մարդիկ, ինչ որ բան ուտում, բերանները սրբելով դուրս են գալիս: Երևի մեռելատուն է, մտածում է ու որոշում գնալ փորը կշտացնել:

Վեր է կենում ու գնում: Ներս է մտնում, մի մեծ սրահ, տասնյակ մարդիկ նստած ուտում են, ով ինչ ուզում է՝ այն էլ ուտում է: Մի ազատ սեղանի մոտ էլ ինքն է բազմում առոք-փառոք: Նրան մոտենում է տարօրինակ շորեր հագած մատուցողը և հարցնում է Թուրքերեն, Թե ինչ է ցանկանում ուտել: Ուրեմն ինչ ցանկանա՝ այն էլ բերելու են: Այ քեզ հրաշք:

Ձեռքով ցույց է տալիս կից սեղանի մոտ նստած մարդու կերածը և հասկացնում է, Թե այդ կերակուրից է ուզում:

Բերում են դոլմա, մակարոնով ապուր, էլի բաներ, նաև գինի, հաց, սալաթներ, մրգեր:

Իսկապես որ լավ քաղաք է, մտածում է մարդը և կուշտ ու կուռ ուտում է: Գալիս նորից են հարցնում, Թե ուրիշ բանի պահանջ չի զգո՞ւմ: Հիմա էլ տապակած հավ է ուզում, և մտածում, Թե այս ինչ հյուրասեր մարդկանց մոտ է ընկել: Ուրիշ փողոց գնալու ինչ պետք ունի: Ուտում է նարինջ, խնձոր, դեղձ: Կշտանում է: Վեր է կենում տեղից և, ինչպես իրենց երկրում սովորություն էր, մոտենում է սպասարկողին, որ կարծում է Թե տան տերն է, ասում է գլուխը խոնարհեցրած.

– Աստված հանգուցյալի հոգին լուսավորե:

Ասում է քրդերեն, որից ոչինչ չի հասկանում մատուցողը: Երբ պատրաստվում է դուրս գալ ճաշարանից, սպասարկողը բռնում է նրա Թևից և ասում է Թե քսան դուրուշ փող է վճարելու: Քուրդը Թուրքերեն քիչ է իմացել, բայց այդ քչով էլ հասկացել է, որ կերածը

քթից դուրս պիտի բերեն, փող են ուզում: Իսկ իր մոտ փող չկա: Ոչխարների փողը տվել են նավ նստելու, մնացածն էլ հայ բարեկամի մոտ է մնացել:

Զարմանում է, որ այս գեղեցիկ քաղաքում մարդիկ այնքան անքաղաքավարի են, որ իրենց հյուրի կերածի համար փող են ուզում: Քրդերեն ինչ որ բաներ է բացատրում, հասկացնում է թե փող չունի:

Ոչինչ չի օգնում: Քուրդին հանձնում են ոստիկանին:

Գալիս է հայ բարեկամը, փնտրում է, չի գտնում քրդին: Կասկածում է, որ ճաչարան մտած պիտի լինի, մտնում է այնտեղ ու հարցնում: Ճաչարանի տերը ուրախանում է, որ գտել են ձրի ուտել ցանկացող մարդու բարեկամին: Հայը տալիս է 20 դուրուչը և գնում ազատում է զարմացած քրդին, որը ասում է.

– Հենց վաղը կրկին պիտի մեկնեմ Դերսիմ: Այստեղի մարդիկ անխիղճ ու անհյուրասեր են:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՅԵՐԸ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՄՈՐՈՒՄՆԵՐ ԵՐԶՆԿԱՅՈՒՄ

1850–1870-ական թվականների մասին խոսելիս ասացինք, թե գավառը այդ տասնամյակներում, դարավոր ստրկությունից ու կեղեքումից հետո ինչպիսի ազգային զարթոնք ապրեց:

Գավառ թափանցող նոր գաղափարները, որոնք բերողներն էին մամուլն ու Կ. Պոլսում կրթություն ստացած երիտասարդները, սուր քննադատության տակ էին առնում այդ քարոզը: Հիմա մերթ թաքուն, մերթ հրապարակով բացատրվում էր, որ հայերի կրավորական վիճակը ամենևին էլ ի վերուստ սահմանված չէր, որ հայերն անցյալում ունեցել էին փառքի շրջաններ, թագավորներ, նախարարներ, բանակ, սպարապետներ և եթե կրոնական նեղ պայքարը, կաթոլիկ-լուսավորչական անիմաստ թշնամությունը թողած հայերը համախմբվեն, ստեղծեն միասնական ուժ, զինված պայքարի դուրս գան սուլթանիզմի դեմ, ապա նրանք կազատագրվեն, ինչպես ազատվել են թուրքական տիրապետության տակ տառապած այլ ժողովուրդներ, ինչպես հույները, բուլղարները, հունգարացիները և այլն:

Զարթոնքի տարիներին հնազանդության քարոզը տեղի էր տվել ըմբոստացած ոգուն:

*1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, սակայն, շատ բան էր փոխվել քաղաքական կյանքում: Արգելվել էին հայկական ներկայացումները, փակվել էր հայ թատրոնը, լրագրերում չէին կարող տպագրվել անգամ **ազատություն, հեղափոխություն, ըմբոստություն** բառերը, հայ թագավորների անուններ: Սակայն սերմերը ցանվել էին և չէին կարող չբուսնել:*

Սուլթանական կառավարության ձեռքը շատ կարճ էր մինչև Արևմըտյան Հայաստանի հեռավոր անկյունների գյուղական տները երկարելու և որսալու համար այն մարդկանց, որոնք կարդում էին ար-

տասահմանից ստացվող հայերեն գրքեր, կամ լսելու, թե ինչպես հայ մայրը, նստած իր մանկիկի օրորոցի մոտ, ոչ թե առաջվա նման ողբեր էր երգում, այլ երգում էր հայրենասիրական երգեր, Մ. Պեչիկթաշլյանի Զեյթունին նվիրված մարտական երգերը, Մ. Նալբանդյանի «Ազատությունը»:

Թուրքական կառավարության դաժան հաշվեհարդարը, հարյուրավոր հայրենասերների բանտն ու աքսորը, խոշտանգումները զգաստացրին չատ տաքարյուն երիտասարդների, բայց չկարողացան հայերին ետ վերադարձնել դեպի նախկին համակերպվող վիճակը: Ընդհակառակը, որքան ուժեղանում էին համիդյան հալածանքները, այնքան ուժեղանում էր դիմադրական ոգին: Ո՛չ կախաղանը, ո՛չ գնդակահարությունը չէին կարողանում վախեցնել ազատության գաղափարը ճաչակած երիտասարդներին: Հետագայում էլ, նրանք կախաղան բարձրացան հպարտ ու հաղթողի ժպիտը դեմքներին, այն գիտակցությամբ, որ զոհվում են հանուն հայրենիքի ազատության.

Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կզոհվի:

Նալբանդյանի այս տողերը աղոթքի փոխարեն թրթռում էր բոլորի շրթներին:

Քաղաքական այս արդար ու վեհ պայքարը ունեցավ մոլորումներ, սխալներ, մասնավորապես հայ քաղաքական կուսակցությունների անհեռատես ու անխոհեմ արարքները չատ մնասեցին ազատագրական պայքարին, զոհեր խլեցին, բայց դրանով հանդերձ՝ խմորված պայքարը համաժողովրդական գիտակցված շարժում էր, իսկ նրա անվեհեր այնպիսի ներկայացուցիչները, ինչպիսիք էին Անդրանիկը, Աղբյուր Սերոբը, Գալուստ Արխանյանը, Պապիկ փաշան միչտ էլ պիտի մնան հայ ազատագրական պայքարի անվեհեր հերոսները, սրբագործված անուններ և հայ ժողովուրդը իր հետ դեպի հավերժություն պիտի տանի այդ անունները:

Ընդհանուր այս դիտողություններից հետո ցույց տանք երգնկացիների մասնակցությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարին: Չենք չարադրելու հայ քաղաքական կուսակցություններին վերագրվող որոչ սխրագործություններ: Կանգ ենք առնելու բուն ժողովրդական ընդվզում հանդիսացող ելույթների վրա:

Ազատագրական պայքարի գաղափարները, ինչպես տեսանք այս աշխատության նախորդ գլուխներից մեկում, Երգնկա էին ներթա-

փանցել 1850–1870-ական թվականներին, երբ ասպարեզի վրա չէր հայ քաղաքական կուսակցություններից և ոչ մեկը:

Սուլթանական կառավարության դեմ ծայր առած ընդվզումը ներքին էր, համաժողովրդական, արդյունք դարավոր ճնշման: Ճնշումն էր առաջացրել հակաճնշման ուժը: Այլ բան է, որ քաղաքական կուսակցությունները 1880-ական թվականների վերջերից և 1890-ական թվականների սկզբներից փորձեցին ուղղություն տալ այդ շարժմանը:

«Կամաց-կամաց անծանոթ դեմքեր սկսան երևալ Երզնկայի մեջ,- գրում է Գ. Սյուրմենյանը,- հնչակյան գործիչներ Արամ Արամյան, Ժիրայր (Մարտիրոս Պոյաճյան) Շմավոն, Կարապետ Ղումրիկյան և ուրիշներ Երզնկայի մեջ ցանեցին հեղափոխության սերմը, որ արագորեն աճեցավ և ուռճացավ: Ասոնց չնորհիվ դեռ 90-ական թվականներուն, Ընկերական վարժարանի մեջ սկսավ ազգային ու ազատագրական գաղափարներով սերունդ մը հասնիլ Երզնկայի մեջ»[1]:

Հայ քաղաքական կուսակցություններից առաջինը Երզնկայում կազմակերպություն ստեղծեցին արմենականները. «Կարապետ Ղումրիկյան, որ մասնավոր առաքելությամբ Կովկասեն Երզնկա եկած էր, իր հայրենաշունչ քարոզչությամբ մեծ խանդավառություն առաջ բերավ ժողովրդին մեջ ու իր ձեռքով հիմք դրավ Երզնկայի անդրանիկ կազմակերպության: Կազմվեցան երկու խումբեր (Արմենական) մեկը քաղաքի, մյուսը Երկան գյուղի մեջ»[2]:

Սրանից հետո է, որ Երզնկա են թափանցում նախ հնչակյանները, ապա՝ դաշնակցականները: Վերջիններիս գործունեությունը անհամեմատ թույլ է եղել այս գավառում: Գեթ ազատագրական պայքարի առավել ակնառու դրվագները չեն կապվում այդ կուսակցության հետ, ինչպես պիտի տեսնենք ստորև:

Հայրս՝ Խաչատուր Տեր-Ստեփանյանը, գրի առած հուշերում պատմում է, որ համիդյան բռնապետության ամենախստագույն տարիներին Երզնկացի հայտնի առևտրական Դանիելյանի և այլոց՝ Եվրոպայից ստացված կտորեղենի հակերի միջից դուրս էին գալիս Մարսելում տպագրվող «Արմենիա» և Լոնդոնի «Հնչակ» պարբերականների կապոցները: Այդ մասին չեն իմացել անգամ հակերի տեր վաճառականները:

Ստացված թերթերը հանձնվել են խորհրդավոր մարդկանց, որոնք բաժանել են վստահելի երիտասարդների, տվյալ կուսակցություն-

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 27:*

[2] *Նույն տեղում:*

ներին համակրողների, ընթերցվել են բացարձակ գաղտնապահության պայմաններում, անցել են ձեռքից-ձեռք, մաչված վիճակում հասել նույն խորհրդավոր մարդկանց:

Այդ ճանապարհով են Երզնկա թափանցել նաև Բաֆֆու վեպերը՝ «Խենթը», «Կայծերը», «Ջալալեդդինը», որոնք ևս ընթերցվել են գաղտնի, գիշերները:

2. ԳԱԼՈՒՍՏ ԱՐԽԱՆՅԱՆԻ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1890-ական թվականների սկզբներին, Երզնկայի լեռներում տեսնում ենք անձնազոհ երիտասարդների մի խումբ՝ Փոքր Արմտանցի Գալուստ Արխանյանի գլխավորությամբ՝ Թուրքական բռնապետության դեմ պայքարելիս:

Գալուստ Արխանյանը հայ ազգային-ազատագրական պայքարի առաջին ռահվիրաններից է, որը դժբախտաբար դեռ իր արժանի տեղը չի գրավել այդ պայքարի պատմության մեջ[1]:

Գ. Սյուրմենյանի «Երզնկա» գրքում շատ հակիրճ, մի քանի դրվագներ ենք գտնում ժողովրդական այս հերոսի մասին, ճշմարիտ մի հայդուկի, որը ֆիզիկական ուժին միացրել է հոգեկան արիությունը, մահը ստրկությունից գերադասելու հաստատակամությունը, միաժամանակ եղել է վերին աստիճանի մաքուր ու ազնիվ նկարագրի տեր անձնավորություն: Կռվել է բռնապետական կարգերի դեմ, ցուցաբերել առասպելական հերոսություն, ձերբակալվել է, դատվել և 1894 թ. վերջերին դատապարտվել ցկյանս բանտարկության: 12 տարի չղթայակապ Երզնկայի բանտում մնալուց հետո, չդիմանալով տևական տանջանքներին, վախճանվել է 1907 թ. օսմանյան սահմանադրության հռչակումից մեկ տարի առաջ:

Բարեբախտաբար, դեռևս նրա կենդանությանը, բանտում գտնվելու տարիներին, Ա. Արփիարյանը Լոնդոնի «Նոր կյանք» հանդեսի 1898–1899 թթ. մի քանի համարներում հրատարակել է Արխանյանի խմբի անդամներից Նշան Քեչիչյանի գրի առած հիշողությունները՝ ենթարկելով դրանք գրական մշակման: Արփիարյանն այդ հիշողություններին կցած սեղմ բացատրականում ասում է, թե հրատարակում է դրանք որպես վավերական ատաղձ՝ հայ ժողովրդի ազատագրական պայքարի հետագա անկողմնակալ չարադրողների: Նա

---

[1] *Թերևս բացառություն է կազմում Գ. Լազյանի ակնարկը (տե՛ս* **Գ. Լազյան,** *Դեմքեր հայ ազատագրական շարժումեն, Կահիրե, 1949, էջ 21-27):*

գրում է. «Մեր վերջին 30 տարվան պատմությունը մեկանց ամբողջությամբ գրել, դեռ հիմա գրեթե անկարելի է, դրվագներ միայն կրնանք հրապարակ հանել. ուրիշները օր մը ասոնք իրարու քով պիտի բերեն, պիտի քննեն, պիտի բաղդատեն և նորանոր գյուտերու օգնությամբ պատմությունը ամբողջությամբը պիտի ներկայացնեն: Հիմակուհիմա մենք նախնական նյութերը պատրաստենք ապագա պատմագիրներուն համար»: Արփիարյանը նաև ասում է, թե հրատարակում է Քեչիչյանի հուշերը՝ «հայտնի անուններե ոմանց տեղ ծածկանուններ դնելով», երկրում կամ բանտերում գտնվողներին չվնասելու համար: «Զեմ գիտեր՝ ով ողջ է, ով մեռած, ով հայրենիքը կգտնվի, ով՝ բանտը»[1]:

Եվ արդարև այդ շատ կարևոր փաստաթղթերում անգամ խմբի ղեկավարը՝ Գալուստ Արխանյանը հիշատակվում է ծածկանունով, կոչվում Վահան Պեյլերյան, թեև բերված փաստերը բոլորն էլ վերաբերում են Արխանյանին և վերջում էլ ասում է թե «Հիմա Պեյլերյանն իր ընկերներով» գտնվում է բանտում:

Գուցե Արփիարյանի այս զգուշությունն է պատճառ դարձել, որ մարդիկ ուշադրություն չեն դարձրել «Հրոսակի մը հիշատակներեն» խորագրով լույս տեսած հուշերի վրա:

Գալուստ Արխանյանը ծնվել է 1870 թ. Փոքր Արմտան հայաբնակ գյուղում, տեղի մեծահարուստներից Սահակ Արխանյանի ընտանիքում: Հայրը և հորեղբայրը եղել են պահպանողականներ, դեմ հեղափոխական ըմբոստություններին: Փոքր Արմտանը 1909 թ. ունեցել է 75 տուն հայ բնակչություն: Ունեցել է եկեղեցի, դպրոց, խանդավառ ու հայրենասեր երիտասարդություն, որոնցից է եղել Գալուստը: Նա ուղարկվել է Կ. Պոլիս սովորելու, բայց հոր տված փողերը տրամադրել է ազատագրական պայքարին և ինքն էլ զինվորագրվել է Հնչակյան կուսակցությանը: Գործուն մասնակցություն է ունեցել Գում Գափուի ցույցին (1890): Անձնական միջոցներով զենք է գնել և տեղափոխել ծննդավայր: 1891 թ. այստեղ կազմակերպել է ֆիդայական խումբ և մարտնչել քուրդ և թուրք ավազակախմբերի դեմ: Գործակցել է Ռուբեն Շիշմանյանի (Դերսիմի Քեռի) հետ և ծավալել հեղափոխական գործունեություն: «Հեղափոխության չունչը Մեծ ու Փոքր Արմտաններուն վրա ալ փչեց»,- գրում է Ա. Արփիարյանը:

Ստեղծվել են խմբեր, բաժանվել տասնյակների, նշանակվել տասնապետեր, կատարվել է պարտականությունների բաժանում. «Գործող ընկերները ավելի սերտ միաբանության և ավելի կանոնավոր

[1] «Նոր կյանք», Հանդես, Լոնդոն, 1898, 15 նոյեմբերի:

կազմակերպության պետք զգացին, ուստի տասնապետները Մեծ Արմտան գումարվելով... գաղտնի քվեարկությամբ երկու մարմին ընտրեցին, մեկը վարչական, մյուսը՝ դատական: Ասոնք Արմտանի հայկական իշխանությունը կազմեցին: Հայ ժողովուրդը իր վեճերուն, իր գործերուն համար այլևս տաճկին դուռը չէր երթար, վարչությունը կը դատեր, կտնօրիներ ամեն գործ»[1]:

Ինչպես տեսնում ենք, սովորական կամ պատահական դիպվածի արդյունք չի եղել հայրենասեր երիտասարդների զինված պայքարը Թուրքական իշխանությունների դեմ, այլ ունեցել է հեռանկարային ծրագիր, որի առաջին արտահայտություններից մեկն է եղել աստիճանաբար իրենց ձեռքը վերցնել գեթ գյուղի կյանքի ղեկավարման գործը, ազատվել Թուրքական իշխանությունների կամայականություններից, քաչքչուկներից, կաչառքից ու տևական ահ ու սարսափից:

Վերոհիշյալ հիշողություններից երևում է, որ սկզբում կառավարությունը թույլ է տվել, որ հայերը ինքնապաշտպանական նպատակներով որոշ քանակությամբ զենք պահեն, հետագայում, երբ տեսել է իր դեմ կազմակերպված խմբեր, անցել է հարձակման:

Զենքի պակասը լրացնելու համար խմբի գործուն անդամներից Նշան Քեչիչյանը ուղարկվել է Կ. Պոլիս, զենք բերելու: Քեչիչյանը Կ. Պոլսում գտել է իր ազգականներից մեկին՝ Սիմոն Մանիկյանին և նրա օժանդակությամբ ձեռք բերել 10 ռևոլվեր և 500 փամփուշտ, որոնք չաքարի տուփերի մեջ դնելով բերել է Արմտան:

Արդեն ասացինք, թե Արփիարյանը խոստովանել է, որ փոխել է մարդկանց անունները: Արդ հարց է ծագում՝ իսկ ո՞վ է այդ Սիմոն Մանիկյանը: Դա սովորական ազգանուն չէ, ասենք Հովհաննիսյան, Հարությունյան և այլն. Սիմոն Մանիկյանը հայտնի է, որ եղել է Միք. Նալբանդյանի ծածկանունը, որով է նա Փարիզում լույս ընծայել «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը: Արփիարյանը այլուր խոստովանել է, թե իրենց սերնդի սիրած և բարձի տակ պահած գրքերից է եղել այդ երկը: Արդ՝ ինչո՞ւ է ընտրել այդ ծածկանունը Քեչիչյանի պոլսեցի բարեկամի համար և արդյո՞ք այդ բարեկամը նույն ինքն Արփիարյանը չէ, քանի որ այդ տարիներին Արփիարյանը ղեկավար դեր էր կատարում Հնչակյան կուսակցության Կ. Պոլսի մասնաճյուղում և մասնակցել էր Բաբը Ալիի 1895 թ. հայտնի ցույցին ու ձերբակալվել այդ առիթով: Հնարավոր է նաև որ մի ուրիշ Հնչակյանի նկատի ունենա Արփիարյանը: Կաս-

[1] *«Նոր կյանք», 1899, 15 մայիսի:*

կածից վեր է, որ նա ամեն կերպ աշխատել է Արխանյանի գործունեությունը կապել Հնչակյան կուսակցության հետ:

1893 թ. ս. Սարգսի տոնին Արմտանի բնակիչներն իրենց ուխտատեղիում են եղել, որ իմացել են 25 հեծյալ ոստիկանների կողմից Արխանյանի ու Նշան պատվելիի տների պաշարվելը: Նշան Քեչիչյանը 10 ընկերներով քաշվել է սարը: Գյուղ վերադարձողներից մի քանիսը խկույն ձերբակալվել են: Նրանք 25 օր բանտում մնալուց հետո ազատ են արձակվել՝ կաշառքի զորությամբ:

Բայց արդեն դիրքերը որոշված են եղել կառավարության ու հայդուկների միջև: Ոստիկանության կողմից հավաքագրված հայ և թուրք լրտեսներ անցել են աշխատանքի, մատնություններ կատարել, հայտնել թե ուր են գնում կասկածելի մարդիկ, որտեղ են ժողովներ անում, ովքեր են մասնակցում այդ ժողովներին:

Լսվում են կրակոցներ: Ընկնում է նախ մի թուրք լրտես՝ Էոմերը, ապա ծանրորեն վիրավորվում մի հայ լրտես:

«Հետզհետե մատնիչները կպատժվին, թուրքեր կսպանվին, ձերբակալություններ իրարու կհաջորդեն ... հայ հրոսակը հրացանը ուսը լեռներ կսուրա»:

Վերջապես՝ Գալուստ Արխանյանին ու նրա ընկերներին գտնում ենք լեռներում հայդուկային թեժ մարտերի մեջ, ապաստարան ունենալով Ակնաձորի անառիկ թաքստոցը: Նրանք եղել են բացառիկ ոգևորության մեջ, որ վերջապես լծվել են հայրենիքի պաշտպանության վեհ գործին, ազատագրական պայքարի երդվյալ զինվորներ են:

«Անցուցին խաչաձև ուսերնուն վրա փայլուն փամփուշտենիները, աջ ու ձախ ձգեցին արծաթապատ խաչերնին ու ռեվոլվերնին ... Հրոսակի զգեստներով փոքրիկ խումբը գեղեցիկ, կտրիճ լեռնականներ դարձած էին»: Քեչիչյանը գրել է. «Հապա անոնցմե մե՞կը՝ ինչպես նկարագրեմ, իր հսկա մարմնով և առույգ կազմվածքով երկնային էակ մը դարձած էր»: Դա Պեյլերյանն էր, այսինքն՝ Գալուստ Արխանյանը:

Տևական բախումները, տրված զոհերը, վիրավորները, բանտարկություններն աստիճանաբար փոքրացրել են խումբը: Մնացել են վեց հոգի՝ Գալուստ Արխանյանը, Նշան պատվելի Քեչիչյանը, Ճինկոն, Գարեգինը, Հրանտը, Եկեն Պաղտասարը: «Կառավարության կողմե շրջուն հեծելազորը կպըտտեր ամեն կողմ, բայց հրոսակներուն հետքը կարող չէր գտնել»:

Քեչիչյանի հուշերում գտնում ենք հայդուկային այս խմբի մի շարք կռիվները ոստիկանության ու թուրքական զորքի դեմ, վրիժառության գործողությունները մատնիչների դեմ:

Խմբի համբավը տարածված է եղել ամբողջ Եկեղյաց գավառում և նրանից էլ հեռու: Ամեն կողմից նյութական և բարոյական օգնություն են ստացել:

Կառավարությունը գնալով խստացրել է ճնշումը Փոքր Արմտանի վրա, հեղափոխականների ընտանիքի անդամների վրա, որոնց ստիպել են հայտնել իրենց հարազատների թաքստոցների տեղերը, սպառնալով այլապես բոլորին սրի քաշել:

Ի՞նչ վախճան ունեցավ Գալուստ Արխանյանի խումբը: Քեչիչյանը պատմում է, թե երբ խումբը գտնվում էր Բագառիճ գյուղում, լուր է ստացվում, թե կառավարությունը իմացել է նրանց տեղը և մեծ թվով զորք ուղարկել, վերջնականապես բնաջնջելու համար հայ ապըստամբներին: «Երեք օր, գիշեր և ցորեկ հալածված, անոթութենե նվաղած, ոտքերնին ուռած, գիշեր մը հազիվ հաղ կարող կըլլան Արմտան ժամանել»:

Արխանյանի մայրը աղաչել է որդուն մեկնել Մեծ Արմտան, քանի որ Փոքր Արմտանի վիճակը շատ անորոշ ու վտանգավոր է եղել: Ամեն կողմ խուզարկություններ, ծեծ: Որդին լսում է մորը և ընկերներով՝ գիշերով աննկատ դուրս է գալիս գյուղից: Սակայն երկու ոստիկան, նկատելով նրանց, հետևել են ձիով, միաժամանակ սուրհանդակի միջոցով օգնական նոր ուժեր խնդրել:

Հոգնած և թուլացած հայդուկները հազիվ մեկ ժամ քայլած՝ իրենց գցում են Ինի կոչված քարայրը: Այդտեղ էլ սկսվում է փոխհրաձգությունը: Թշնամու գնդակներից մեկը ծանրորեն վիրավորում է խմբին նոր միացած անձնազոհ մի ընկերոջը՝ Խորենին, որն իր հերթին շարքից հանում է երեք թուրք զինվորի:

Գնալով ավելի ու ավելի թեժ կերպարանք է ստանում օրհասական պայքարը թուրքերի դեմ: Քարայրի դիրքը եղել է շատ անառիկ, սակայն երիտասարդները չեն ունեցել ապահով պատնեշ: Թշնամու մի նոր գնդակ խլում է Խորենի կյանքը:

Պաշարողները, նկատելով որ իրենց համար դժվար պիտի լինի գրավել քարայրը առանց մեծ զոհերի, համոզում են Արխանյանի մորն ու երկու Արմտանների քահանաներին մտնել քարայրը, համոզել խմբին՝ անձնատուր լինել: Ներսից մերժում են:

Դրությունը ավելի է լրջացել, երբ թուրքերը դիմել են նենգ միջոցների: Որպես պատնեշ օգտագործել են անզեն ու անմեղ գյուղացիներին:

«Հայերուն վրա ճնշումները կրկնապատկվեցան,- գրում է Քեչիչյանը,- զինվորներն ու ոստիկանները իբր մարտկոց հայերը կգոր-

ծածեին, զենքերը անոնց ուսին հենած կարձակեին, այնպես որ քարայրեն եթե հրացան ալ պարպվեր, փոխանակ Թուրք զինվորին գալու, հայու սիրտը պիտի ծակեր: Երկու օր այս կացությունը շարունակվեցավ»[1]:

Նոր առաջարկներ են լինում Թուրքերի կողմից, այս անգամ երկու հայ գյուղերը սրի քաշելու սպառնալիքով:

Արխանյանը հարկադրված է լինում ընդունել առաջարկը: Նա ասել է.

– Լավ է մենք զոհվենք, որպեսզի դուք ազատվեք: Այսպիսով, 1893 Թ. սեպտեմբերին Արխանյանն ու ընկերները անձնատուր են լինում, դուրս գալիս քարայրից: Նրանց տանում են զինվորների կենտրոնատեղին. «Հուզյալ, վիշտը սրտներին, հրոսակները գլխիկոր առաջնորդվեցան 500-ի չափ մարդոց քով, որոնց բոլորին ուշադրությանը առարկան էին: Պեյլերյանը պատվելով՝ հեծցուցին ջորիի վրա, Ճինկոն՝ ուսեն վիրավորված, դրին ավանակի վրա, իսկ մյուսները կապեցին մեկ մեկու ու հաղթական թափորը կընթանար Արմտան. և ամենեն վերջը Խորենին դիակը ջորիի մը վրա բեռցուցած կը տանեին ամբոխին ետևեն»[2]:

Փոքր Արմտանում նրանց ցուցադրական ձևով մի քանի ժամ պահելուց հետո՝ տանում են Երզնկա դատելու:

Ասացինք, որ Քեչիչյանի հիշողությունները տպագրվել էին «Նոր կյանքում», 1898–1899 թվականներին, այսինքն՝ այն օրերին, երբ Արխանյանն արդեն հինգ տարի էր, որ բանտում էր: Ինչ եղավ նրա հետագա ճակատագիրը:

Գալուստ Սյուրմենյանը, որ ժամանակակից է Արխանյանի կյանքի վերջին տարիների, գրում է. «Արխանյանի խումբն ալ հետո բերվեցավ Երզնկա: Այդ ատեն Երզնկայի բանտին մեջ զանազան հանցանքներով բանտարկված հայերու թիվը հիսունի կը հասներ, որոնց մեջ, բացի Արխանյանեն, քահանա մը և երիտասարդ բժիշկ մը (տոքթ. Կարապետ Փաշայան) կային: Ասոնք գլխավորապես կամբաստանվեին որպես երկրի անդորրությունը խանգարող և ժողովուրդը կառավարության դեմ գրգռող: Բացի այս, այդ չրջանին Գուրուչայի կամ չրջակա գավառներու մեջ տեղի ունեցած բոլոր դեպքերը՝ սպանություն, թալան և այլն, ասոնց կը վերագրվեին ու իրենց գլխավոր կը ճանչցվեին Արխանյան Գալուստը և տոքթ. Փաշայանը: Դատավարությունը սկսավ շատ ուշ և տևեց ամիսներ, տա-

[1] «Նոր կյանք», 1899, 15 մայիսի:
[2] Նույն տեղում:

րիներ ու վերջապես 1894 դեկտեմբերի 3-ին չաբաթ օրը վճիռը հայտարարվեցավ: Դատի տակ էին 28 հոգի, որոնց մեկ մասը մահվան, վեց հոգի ցկյանս և մնացածներն ալ առժամյա բանտարկության դատապարտվեցան: Ասոնց բանտ մտնելու օրեն իսկ՝ Երզնկայի բանտը տեսակ մը ուխտատեղի եղած էր երզնկացիներուն համար: Կիրակի ու տոնական օրերուն, ամեն ոք ուտելիքներով բեռնավորված կը վազեր բանտ, հերոսները կերակրելու և անոնց դեմքը տեսնելու համար: Թեև շատ քիչերուն կը հաջողեր այդ, բայց դարձյալ բանտի հաստակեկ ճաղերեն ներս անոնց մեկն ու մեկին չուքն անգամ տեսնել մեծ բավականություն էր այցելուներուն համար»[1]:

Հայրս, որ մինչև 1900-ական թվականների սկզբները ապրել է Երզնկայում, և քանիցս առիթ է ունեցել տեսնելու Արխանյանին բանտի երկաթալարերի ետևից, պատմում էր նույնը, ասում, թե երզնկացիները նախօրոք պայմանավորվում էին, թե հաջորդ օրը քանի ընտանիք պիտի սնունդ կամ միրգ տանի բանտարկյալներին և չնայած այդ պայմանավորվածություններին, այնքան մարդ էր այցելում բեռնավորված կապոցներով, որ կեսից ավելին հետ էին վերադարձվում: Հայրս նաև պատմում էր, թե առաջին տարիներին Արխանյանը երևացել է հպարտ ու անվհատ, հետագայում, հիվանդությունը հաղթահարելով նրան, ջլատել է ուժերը, գրեթե չի կարողացել մարդկանց երևալ:

Գալուստ Արխանյանը բանտում մնացել է 12 տարի: Այդ ընթացքում նա երկու անգամ փախուստի փորձ է կատարել, սակայն անհաջող: Բանտում վարակվել է տիֆով և մահացել 1905 թ. նոյեմբերի 18-ին[2]: Մեծ չուքով թաղվել է Երզնկայի Հայոց գերեզմանատանը: Գ. Արխանյանը վայելել է արժանի ժողովրդականություն: Արժանացել է «Մնձուրի առյուծ» անվանմանը, հայտնի է նաև Հաջի Բեկ անունով: Նրան նվիրել են բազմաթիվ երգեր, բանաստեղծություններ, նրա կերպարը մարմնավորել է Վրթանես Փափազյանը՝ իր «Հաջի Բեգ» վեպում (Կ. Պոլիս, 1919): Արխանյանի ֆիդայական խմբի ողջ մնացած անդամները օսմանյան սահմանադրության հրոչակումից հետո ազատվել են բանտից և վերադարձել իրենց ծննդավայրերը:

Գալուստ Արխանյանի ազդեցությամբ է, որ Երզնկայում կազմակերպված Հնչակյան կուսակցության տեղական մասնաճյուղը ծավա-

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 31-32:*

[2] *«Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության» (1887-1962), հատ. Ա, Բեյրութ, 1962, էջ 131:*

լել է բուռն գործունեություն: Այդ ուղղությամբ կարևոր են Երզնկացի փաստաբան Ավետիս Հինայեկյանի (Մորուք) ջանքերը: Նա էր ստեղծել Հնչակյան կուսակցության Երզնկայի անդրանիկ խմբակը (1887–1888): Հինայեկյանը գործակցվել է Ժիրայրի (Մ. Պոյաճյան), Գ. Արխանյանի, Կարապետ Փաչայանի (Թափառիկ) հետ: Մի քանի անգամ բանտարկվել է: Ի վերջո հեռացել է Երզնկայից և գործել տարբեր բնակավայրերում, մասնավորապես Իզմիրում: Զոհ է գնացել 1915 թ. արյունոտ իրադարձություններին[1]: Երզնկայի Հնչակյան առաջին գործիչներից են եղել նաև Տիգրան Մանասյանը (Զավուշ) և Գաբրիել Նռանյանը: Վերջինս գործուն մասնակցություն է ունեցել Գ. Արխանյանի և Դերսիմի Քեռու հայդուկային խմբերին: 1910 թ. տեղափոխվել է Ռումինիա, դարձել Կոստանցայի Հնչակյան շրջանային կոմիտեի ղեկավարներից[2]:

3. ԴԵՐՍԻՄԻ ՔԵՌԻՆ (ՌՈՒԲԵՆ ՇԻՇՄԱՆՅԱՆ) ԵՎ ՆՐԱ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՋՈԿԱՏԸ

Հայ ազատագրական շարժման պատմության մեջ իրեն անմահ փառքով է պսակել հայ առաջին նշանավոր ֆիդայիներից Դերսիմի Քեռին (Ռուբեն Շիշմանյան):

Ռ. Շիշմանյանը ծնվել է 1865 թ. Երզնկայում: Մանկության տարիներն անցել են Երզնկայից քիչ հեռու գտնվող Սեպուհ լեռան լանջերին: Սովորել է Երզնկայի Կեդրոնական վարժարանում, հարել է Հնչակյան կուսակցությանը: Սկզբնապես գործակցել է Գալուստ Արխանյանի հետ: 1889 թ. կազմակերպել է հայ իրականության մեջ առաջին ֆիդայական ջոկատներից մեկը, որը հերոսական մարտեր է մղել Թուրք և քուրդ հարստահարիչների դեմ: Քեռին աչքի է ընկել անձնական անօրինակ քաջությամբ ու սխրագործություններով: Քեռու հայդուկային ջոկատի շնորհիվ զսպվել են Թուրքերի և քրդերի չահատակությունները: Հետաքրքիր է նշել, որ նրա խմբի մեջ են գործել և իրենց մարտական առաջին մկրտությունը ստացել նաև հետագայում հայտնի հայդուկ Կայծակ Առաքելը (Տիգրան Աբաջյան), 1915 թ. Շապին Գարահիսարի հերոսամարտի ղեկավար Ղուկաս Դեովլեթյանը (Ղուկաս Աղբար) և ուրիշներ:

---

[1] «Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության» (1887–1962), հատ. Բ, Բեյրութ, 1963, էջ 533:

[2] Նույն տեղում, հատ. Բ, էջ 299:

1892 թվականից Քեռու հայդուկային ջոկատը գործում է Շապին Գարահիսարի շրջանում: Զենք հայթայթելու նպատակով հանդուգն հարձակումով զինաթափել է թուրքական բանակի զինապահեստները մատակարարող գումակի պահակախմբին և բռնագրվել զգալի քանակությամբ զենք ու զինամթերք: 1895 թվականին Քեռու ֆիդայիներն անսպասելի հարձակմամբ զինաթափել են Երզնկայի գավառապետի թիկնապահ զորաջոկատին: Դերսիմի Քեռու հայդուկային ջոկատի գործունեությունը լրջորեն անհանգստացնում են ոչ միայն գավառային, այլև նահանգային իշխանություններին, որոնք ջանք չեն խնայում խիզախ հայդուկապետին ծուղակը գցելու համար: 1500 հոգուց բաղկացած թուրքական մի զորամաս կրնկակոխ հետապնդում է հայդուկներին, որոնք ամրանում են Երզնկայից քիչ հեռու գտնվող ս. Լուսավորիչ վանքում: Սակայն կառավարական զորամասերը վանքը գրավել չկարողացան: Քեռին հեռանում է անմատչելի լեռները և շարունակում իր պայքարը: 1896 թվականին անդամակցել է ՀՀ Դաշնակցությանը: 1890-ական թվականների վերջերին Կարապետ Ղումրիկյանի հետ միասին սկսում է բանակցություններ վարել Դերսիմի քրդերի հետ և փորձում նրանց էլ ներգրավել հակաթուրքական պայքարի մեջ: Անկասկած է, որ հեռատես հայդուկապետի այս ջանքերն իզուր չանցան: Դրանք ունեցան ցանկալի արդյունք: 1915 թ. դեպքերի ժամանակ Դերսիմի քրդերը դրսևորեցին հայանպաստ կեցվածք, իսկ ավելի ուշ՝ քրդական ապըստամբության ժամանակ, ապստամբ քրդերի գլխավոր դեմքերից մեկը Քեռու քուրդ գործակից Սայիտ Ռիզան էր:

1900 թ. դավադրաբար ձերբակալվել է, իսկ 1903 թ. հունիսի 20-ին Երզնկայի բանտի մեջ կախաղան է բարձրացվել: Ականատեսներից մեկը վկայում է հետևյալը. «Քեռին երեք տարի չղթայակապ բանտը մնալե ետք, 1903 հունիսի 20-ին կախաղան կառաջնորդեն: Քեռին թույլ չի տար, որ դահիճը իր գործը կատարե: Քեռին իր ձեռքով կանցնե օղակը իր վզին ու ոտքով կը նետե աթոռը»[1]:

Ռուբեն Շիշմանյանի ջանքերով է, որ Երզնկան դառնում է Կովկասից Արևմտյան Հայաստան զենքի և զինամթերքի փոխադրության հանգույցներից մեկը՝ մասնավորապես Կարսից՝ Բասեն–Կարին–Երզնկա–Դերսիմ և Բաթումից՝ Օլթի–Կարին–Երզնկա ուղղություններով: Բացի այդ, ծրագրեր է մշակել Երզնկայում կազմակերպելու զենքի վերանորոգման ու զինամթերքի արտադրության արհեստանոցներ: Քեռին մեծ թվով հետևորդներ է ունեցել. երիտասարդությունը

[1] **Գ. Լազյան,** *Դեմքեր հայ ազատագրական շարժումեն, էջ 19:*

հպարտությամբ ու հիացմունքով էր տալիս նրա անունը և զինվորագրվում ազատագրական պայքարին: Անհրաժեշտ ենք համարում համառոտ գծերով ներկայացնել այդ բազմաթիվ երիտասարդներից միայն մեկին:

Խոսքը օրիորդ Սրբուհի Յանըգյանի (Հորաքույր)՝ առաջին հեղափոխական հայուհիներից մեկի մասին է: Ծնվել է Երզնկայում 1875 թվականին: Կրթությունը ստացել է տեղի Քրիստինյան օրիորդաց վարժարանում: Պատանեկան տարիներից հրապուրվել է հեղափոխական գաղափարներով: Համագործակցել է Ժիրայրի և Քեռու հետ՝ նյութական միջոցներ ապահովելով վերջինիս հայդուկային ջոկատին: Երզնկայում ստեղծել է երիտասարդներից բաղկացած ընդհատակյա խումբ: 1901 թ. ձերբակալվել է և դատապարտվել ցկյանս բանտարկության: Ազատ է արձակվել օսմանյան սահմանադրության հռչակումից հետո: Երզնկայում ստեղծել է Տիկնանց խնամակալական մարմին՝ օրիորդաց բարձրագույն վարժարանին նյութապես օժանդակելու համար: Մահացել է Ակն քաղաքում՝ 1915 թ. տարագրության դաժան օրերին:

4. 1895 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԸ ԵՐԶՆԿԱՅՈՒՄ

Գալուստ Արխանյանն իր ընկերներով Երզնկայի բանտում էր, իսկ նրա զոհված ընկերներից Խորենի եղբայր Ռուբեն Շիշմանյանն էլ նոր խումբ կազմած Սեպուհ լեռան լանջերին կռվի էր բռնվել բռնապետական ուժերի դեմ, երբ 1895 թ. աշնանից Արևմտյան Հայաստանով մեկ սկսվում են հայկական ջարդերը, անմեղ հայերի արյունով ողողելով գյուղեր ու քաղաքներ, կենտրոն ունենալով մայրաքաղաք Կ. Պոլիսը: Իրագործվում էր նախօրոք մշակված մի ծրագիր, պատճառ բռնելով 1895 թ. Բաբը Ալիում կազմակերպված հնչակյանների հայտնի ցույցը:

Այդ ջարդերի ալիքից ու թալանից զերծ չէր կարող մնալ Երզնկան իր չրջակա գյուղերով և չմնաց:

«1895 թ. աշնան,- գրում է Գ. Սյուրմենյանը,- ինչպես Անատոլուի բոլոր հայաբնակ գավառներու, նույնպես Երզնկայի մեջ կացությունը խիստ լարված վիճակ ուներ: Հայերու համար գյուղեն քաղաք, քաղաքեն գյուղ երթևեկելը գրեթե անհնար դարձած էր. թալանի, սպանության ու բռնաբարման դեպքեր հաճախակի դարձած էին, որոնց թուրք և քուրդ հեղինակները կառավարությունը իր լռությամբ կքաջալերեր: Կառավարական ոստիկանները մչտապես հայոց թաղերը

կղեզերեին. ամեն օր խուզարկություններ, ամեն օր ձերբակալություններ տեղի կունենային: Ջարդի չչուկներ կպտտեին: Ու ահա 1895 թ. հոկտեմբերի 4-ին, բանտի մեջ գտնված քյուրտերը լուր տվին, թե ամսու 7-ին, երկուշաբթի օր Թուրքերուն կողմե հարձակում պիտի գործվի հայերուն վրա»[1]:

Հայերն իսկույն հատուկ պատգամավորություն են ուղարկում 4-րդ բանակի կայազորի պետ մյուշյուր Զեքի փաշայի մոտ, խընդրում լուսաբանություն: Զեքի փաշան հերքում է լուրերը, խորհուրդ է տալիս նույն օրը վստահ սրտով անցնել աշխատանքի, բաց անել խանութները:

Ժողովուրդը ուրախանում է, հավատում Զեքի փաշային: Կիրակի առավոտ բոլոր եկեղեցիներում հավատացյալներին հայտնում են ուրախ լուրը:

Երկուշաբթի առավոտ հայերը բաց են անում իրենց խանութները և սկսում սովորական առևտուրը:

Եվ ահա, միանգամից, մի խումբ զինված Թուրքեր ու քրդեր լցվում են չուկա, հարձակվում հայերի խանութների վրա, սկսում են թալանել ու սպանել անմեղ մարդկանց:

Մի կերպ փախչել կարողացող տղամարդկանցից մի քանիսին էլ սպանել են տան ճանապարհին, սպանել են Թուրք այն ոստիկանները, որոնք իբր թե եկել էին կարգ ու կանոնին հսկելու:

Հայկական թաղերը քիչ զոհ են տվել, և այդ ոչ թե այն պատճառով, որ կարողացել են դիմադրել, այլ այն պատճառով, որ Զեքի փաշան Թույլ չի տվել շարունակել ջարդը: Ըստ երևույթին նրա նպատակն է եղել մասնակի այդ կոտորածով վախեցնել հայերին, որ հեռու մնան քաղաքական ելույթներից:

«Մյուշյուր Զեքի դադարման փող հնչեցնելով, իր թիկնապահներով ու հարյուրակ մը ձիավորներով եկավ հայոց առաջնորդարանը, ձիավոր խումբերը սկսան շրջիլ հայկական թաղերը ու քաղաքին մեջ ջարդն ու թալանը անմիջապես դադրեցավ»[2]:

Զեռք առնված այս միջոցառումներով հանդերձ՝ 2–3 ժամ տևող ջարդի ընթացքում միայն Երզնկա քաղաքում սպանվել են մոտ հարյուր հայեր, իսկ գյուղերում՝ 300-ից ավելի, ինչ որ անհամեմատ քիչ է այլ գավառների զոհերի համեմատությամբ:

Շուկայում սպանված հայերի դիակները հաջորդ օրը կառավարությունը լցրել է եզան սայլերի վրա, ուղարկել հայոց առաջնոր-

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 50:*

[2] *Նույն տեղում, էջ 52:*

դարանը՝ կրոնական ծեսով թաղելու: Նրանց բոլորին տանում են ս. Երրորդություն եկեղեցի. այնտեղ կատարում հոգեհանգստի արարողություն, թաղում հայոց գերեզմանատանը մի մեծ ու ընդհանուր փոսի մեջ:

Երզնկայի գյուղերից ամենից շատ տուժողներն են եղել Տաճրակը և Կելենցիկը: Թե՛ շատ զոհեր են տվել և թե՛ ամբողջովին թալանվել են: Եղել են գյուղեր, որոնք մարդկային կորուստ չեն ունեցել, բայց ամբողջովին կողոպտվել են, ինչպես Զիֆլիկները, իսկ Գյուլլիջե գյուղը թալանի չի ենթարկվել, բայց ինքնապաշտպանական կռիվներում տվել է 15 զոհ:

Ամենամեծ վնասը կրել է Մեղուցիկը: Այդ գյուղը տվել է 45 զոհ և ամբողջովին կողոպտվել է: Բզվան գյուղի բնակիչները, ցանկանալով պաշտպանել իրենց կյանքը, ապաստանել են եկեղեցում, նույնիսկ դիմադրել են, սակայն ի վերջո անձնատուր եղել, տալով 42 զոհ:

Մի քանի գյուղեր էլ կոտորածից ու թալանից համեմատաբար ազատ են մնացել իրենց բեկերի պաշտպանությամբ և այդ՝ ոչ թե մարդասիրական նկատառումով, այլ զուտ շահադիտական, մտածել են մարդիկ, թե թալանից հետո այլևս աշխատող չի մնալու:

Քրդերը հարձակվել են նաև հայկական վանքերի վրա: Այսպես. չորս-հինգ հարյուր քուրդ պաշարել են ս. Լուսավորչի վանքը: Վանահայր քահանան և Երզնկայից պատահաբար այնտեղ գտնվող Օհանես Էֆենդի Փափազյանը դիմադրել են: Քրդերը չորս օր շարունակել են պաշարումն ու կռվել, միայն 5-րդ օրը դիմել են խորամանկ միջոցի՝ կտրել են վանքի պարիսպների տակ գտնվող բարդիները, կամուրջ դարձրել՝ լեցվել են ներս ու թալանել:

Լուրջ դիմադրություն ցույց տվող գյուղերից է եղել Մթննին: Տեղի քահանա Մաշտոց Բզնունին, խիզախ ու համարձակ մի հոգևորական, զենքը ձեռքին առաջին օրինակն է տվել կռվի՝ անցած տեղացի մի խումբ անձնվեր երիտասարդների գլուխը. «Թշնամին գյուղը կրակի տված էր, բայց ժողովուրդը իր ազատարար քաջամարտիկներու քովը ապաստանելով՝ կռիվը շարունակած էր: Մյուշիր Զեքի փաշայի հրամանով Զերքեզ Ալի պեկ վաշտ մը ձիավորներով ասոնց օգնության գնաց ու այսպիսով գյուղացիք ստույգ ջարդե մը ազատեցան»: Այս գյուղը ընդամենը երկու զոհ է տվել, թշնամու վնասն ավելի մեծ է եղել: Մի քանի հոգու սպանել է հենց Բզնունի քահանան:

Դեպքից հետո՝ Մաշտոց քահանան, վախենալով թուրքերի փոխվրեժից, մեկնել է Երուսաղեմ:

Կոտորածների պաշտոնական դադարից հետո էլ, երկու կողմերի թշնամությունը շարունակվել է: Մթնոլորտը մնացել է չիկացած: Այս ու այն կողմ, խուլ անկյուններում թուրքերը սպանել են անմեղ հայերի:

Նման արարքներ առհասարակ հրահրվել են թուրք հոգևորականների կողմից: Այսպես, ջարդերից հազիվ մեկ շաբաթ անց, երբ դեռ հայերը խուսափում էին տներից դուրս գալ, մի քանի մեջիդներում մոլլաները հայերի դեմ հրահրումներ են կատարել, Մուհամեդ մարգարեի անունից առաջարկել են սպանել «անհավատ ու պիղծ» գյավուրներուն, հաճելի լինել մեծ մարգարեին: Տգետ ու մոլեռանդ ժողովուրդը, մեջիդներից դուրս գալուց հետո հարձակվել է շուկայի փոքրաթիվ հայերի վրա, թալանել, մի քանիսին էլ սպանել, սակայն, բարեբախտաբար, միջամտել է Զեքի փաշան, զորք ուղարկել, վերահաստատել է կարգ ու կանոնը:

1895 թ. հոկտեմբերյան այս ջարդերը մեծ հարված են հասցրել երզնկացիներին՝ թե՛ նյութական և թե՛ մարդկային զոհերի տեսակետից: Կոտորածից սարսափահար գյուղացիները լեցվել են քաղաք, մտածելով, որ այնուամենայնիվ քաղաքում կյանքի ապահովությունը ավելի երաշխավորված կլինի, քանի որ կան զորամասեր: Բայց քաղաքում էլ մատնվել են տնտեսական ծանր պայմանների: Շուկան դատարկվել էր, կողոպտվել էին սննդեղենի մառաններն ու պահեստները, խլվել ու մորթվել անասունները: Դժվար է եղել երեխաների համար անգամ կաթ ճարելը:

Մանուսագործությունը, որ Երզնկայի ապրուստի հիմնական միջոցն էր, գրեթե կանգ էր առել: Առևտրականներից շատերը հասել էին սնանկության դուռը: Ո՛չ ապրանք ունեին, ո՛չ փող: «Ամեն մարդ փակված մնացած էր տուներու մեջ. վախեն ոչ ոք գործի կերթար: Անգործության հաջորդեց սղությունը: Այդ տարի ցորենի գինը սովորականին կրկինը եղավ»:

Անշուշտ այս բոլորը նույնպես ազդել է թուրք միջին խավի վրա, սակայն հայերից թալանված հարստությունը նրանց միառժամանակ պահել է:

Հայերը սպասել են կտրուկ միջոցառումների, երաշխավորությունների, բայց այդպիսի երաշխավորություն չի տրվել: Ի վերջո՝ մահը աչք առած՝ իջել են շուկա, աշխատել: «Գյուղացիք ալ կամաց-կամաց իրենց գյուղերը քաշվեցան և սկսան իրենց գյուղական աշխատանքներուն, իրենց քանդված օճախներուն շինության, առաջին հերթին գյուղի դպրոցն ու եկեղեցին կանգնեցնելով: Կարճ ատենվան մեջ հայերը ինքզինքնին գտան. գացածին տեղը եկավ»:

Իսկ ավարի ու թալանի սովոր տարրը մնացել է նույն սովալլուկ գայլը, ակնարկը հառած նոր ջարդերի հնարավորության: Այդ տարրը աշխատանք չի սիրել և դրանով էլ դժբախտ է եղել: Ապացույց՝ տևական ջարդերից, թալանից հետո էլ միշտ հայերը ապրել են ավելի բարեկեցիկ կյանքով, քան իշխող տարրը:

1895 թ. մեծ ջարդից հետո շարունակվել են թե՛ սպանությունները և թե՛ թալանը: Այս անգամ էլ հայ քաղաքական կուսակցությունների գործունեության հետ ձերբակալություններ են կատարվել: Թուրքական իշխանությունները քրդերին գրգռել են հայերի դեմ, նրանցից խլել տասնյակ նոր զոհեր: Քաղաքական գործունեության համար բազմաթիվ մարդիկ են ձերբակալվել, իսկ օրիորդ Սրբուհի Յանըգյանը (Հորաքույր), ինչպես նշեցինք, դատապարտվել է ցկյանս բանտարգելության:

Ու այսպես, անվստահության, տևական ձերբակալությունների, սարսափի պայմաններում հայերը քարշ են տվել իրենց գոյությունը մինչև 1908 թ. օսմանյան սահմանադրության խաբուսիկ օրերը:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ՕՍՄԱՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1895 թ. դեպքերը չկարողացան վերջնականապես մարել վաթսունական թվականներից բորբոքված ազատագրական ոգին, սակայն շատ բան փոխեցին: Հիմա հայ ժողովրդի մոտ վերացել էր այն հույսը, պատրանքը, թե կար մի պետություն, որ կարող պիտի լիներ պաշտպանել հպատակներին գեթ զանգվածային կոտորածներից: Եթե անցյալում տարերայնորեն էին լինում սպանություններն ու թալանը, ապա 1895 թվինը կազմակերպել էր ինքը՝ սուլթանական կառավարությունը: Պատմության մեջ առաջին անգամ մի պետություն ցույց էր տվել, որ կարող է զանգվածային ջարդերի, միջնադարյան բարբարոսական եղանակներով կոտորել 300.000-ից ավելի խաղաղ հպատակներ՝ հողի աշխատավորներ, բանվորներ, կանայք, երեխաներ:

Փոխվել էր իշխանություն-հպատակ ժողովուրդ հասկացողությունների բովանդակությունը և դա ստիպում էր հայերին՝ ապրել ավելի միասնական փոխադարձ մերձեցման ուժով: Հիմա նվազագույնի էր հասել դավանաբանական և այլ կարգի հակամարտությունները, թեև հիմա էլ դրանց փոխարինել էր կուսակցական հակամարտությունը: Յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն ցանկանում էր ժողովրդին պարտադրել նրան ազատագրելու իր ուղին: Բայց կար ընդհանուր մի թշնամի, որը կարող էր ծրագրեր կազմել մի ամբողջ ժողովուրդ բնաջնջելու մասին:

1895 թ. ջարդերը զգաստացրել էին հայերին, բայց ելք ցույց չէին տվել: Բոլորն էլ ելքը համարում էին արդեն քաղաքական պայքարը, բայց հեշտ չէր հարյուր հազարավոր հայ երիտասարդներին զինելն ու մի ղեկավարության տակ բերելը: Քաղաքական կուսակցությունները ծրագրում էին օգտագործել Թուրքիայի այլ հպատակների դժգոհությունը, նաև հենց տիրապետող Թուրք տարրի:

Թուրք տարրը հայերի հետ մերձեցման նշաններ ցույց չէր տալիս, ընդհակառակը, մոլեռանդ կրոնավորները շարունակում էին հակաքրիստոնեական քարոզչությունը, որին զոհ էին գնում անմեղ մարդիկ: Զանգվածային ջարդեր չէին լինում, սակայն սպանություններն ու թալանը շարունակվում էր: Եվ եթե որոշ վայրերում համեմատաբար թույլ էր ջարդի սարսափը, դա ոչ թե արդյունք էր թուրքերի բարյացակամության կամ պետական հսկողության, այլ գյուղերի թուրք և քուրդ բեգերի այն գործնական նկատառման, որ դրանից տուժում էր իրենց շահը: Հիմա արդեն հայերը հողից, տնայնագործական արդյունաբերությունից ձեռք չէին բերում այնքան նյութական բարիք, որքան առաջ: Ոչ ոք իր կթան կովը չի մորթի, ասել էր Երզնկայի գյուղերից մեկի բեգը: Բեգերն ու աղաները հայերին համարում էին իրենց կթան կովը:

Հետո՝ երկրով մեկ մոլեգնող բռնապետական ռեժիմից դժգոհ էին նաև թուրքերը: Սուլթան Աբդուլ Համիդը նույնքան խստորեն հալածում էր ազատասիրական ամեն մի ձգտում նաև թուրքերի մոտ: Հենց թուրքական հրատարակություններում արգելված անուններ էին թուրք գրականության ամենանշանավոր դեմքերը՝ Նամըկ Քեմալ, Շեմսեդդին Սամի, Ալի Հայդար և այլն: Գրականական կաչկանդումները ընդհանուր էին բոլորի համար: Բառարաններից հանվել էին հարյուրավոր բառեր, որոնք արտահայտում էին ազատասիրական գաղափարներ, բռնապետական կարգերը ակնարկող նախադասություններ:

Խիստ հսկողության տակ էին մասնավորապես եվրոպական կրթություն ստացած, Փարիզում և այլուր ազատության ճաչակը ստացած մարդիկ, որոնք ձերբակալվում էին, անհետացվում: Այդպիսի հարյուրավոր թուրք երիտասարդներ, Փարիզում կամ այլ քաղաքներում գործող թուրք լրտեսների հաղորդած մատնությունների հիման վրա հայրենիք վերադարձի ճանապարհին ծովամույն էին արվում, թե նրանք վարակված են հակապետական գաղափարներով:

Թուրքիան տնտեսական, քաղաքական անկման այնպիսի աստիճանի էր հասել, որ կանգնած էր կործանման եզրին: Աստիճանաբար վերացել էին օրինականության վերջին մնացորդները, առաջացել էր վիթխարի անջրպետ ոչ միայն հպատակ հայ ժողովրդի ու սուլթանական պետության միջև, այլ բազմամիլիոն թուրք ժողովրդի ու սուլթանի և նրա նախարարների միջև: Երկրի պետական, վարչական, օրենսդրական, անգամ կրթական ու մշակութային հաստատությունների միակ պարտականությունն էր դարձել սուլթանի կյանքի ապա-

հովումն ու հանգիստը, թուլացումը թշնամական այն օղակի, որը օրըստօրե սեղմվում էր բռնապետի շուրջը:

Օրենքը փոխարինված էր կաշառքով, որը դարձել էր կյանքի գսպանակը: Չկար քրեական որևէ հանցանք, որը կատարողը կաշառքով չազատվեր: Կաշառքը իր ոլորտի մեջ էր առել պետական ամբողջ կառուցվածքը: Սուլթանը պալատականներին, փաշաներին կաշառում ու սիրաշահում էր շքանշաններով, նվերներով, իսկ վերջիններս տգրուկի նման ծծում էին ժողովրդի արյունը: Հիմա հայերը չունեին այնքան ունեցվածք, որ հավասարակշռեին պետական հարկերն ու տուրքերը, ուստի բռնությունը աստիճանաբար տարածվում էր նաև թուրք տարրի վրա: Պետության խախուտ բյուջեի հաշվին հարյուր հազարավոր լրտեսներ էին պահվում երկրի ներսում և երկրից դուրս:

Օրինակ՝ Փարիզի թուրքական դեսպան Մյունիր փաշան ոչ այնքան զբաղվում էր պետական, դիվանագիտական աշխատանքով, որքան լրտեսական մի մեծ ցանց ղեկավարելու: Նա մի կողմից կաշառում էր եվրոպական թերթերին, որպեսզի հոդվածներ տպագրեն ի նպաստ սուլթանի, քննադատական դիրք չբռնեն Թուրքիայի նկատմամբ, մյուս կողմից՝ կաշառում էր հարյուրավոր թուրքահպատակ երիտասարդների, ուսանողների, որպեսզի լրտեսեն միմյանց վրա: Լրտեսների մի մասը կապված էր Մյունիր փաշայի հետ, մի մասը՝ ուղղակի Կ. Պոլսի՝ սուլթանի պալատի հետ. ուրեմն Համիդը անգամ իր դեսպանների վրա էր կասկածում: Երբ հետագայում սուլթանը գահընկեց արվեց և բացվեցին Յըլդըզի պալատի գաղտնապահարանները, դուրս եկավ 600 սնդուկ ջուռնալ, այսինքն՝ լրտեսագիր, որոնք օրը օրին ընթերցվել էին կասկածամիտ կայսեր կողմից և տրվել հրահանգներ՝ ոչնչացնել կասկածելի մարդկանց:

Այս բոլորը Օսմանյան կայսրությունը թուլացրել էր, հյուծել, անդամահատել, խաթարել մարդկային փոխհարաբերությունները, երկիրը դարձրել «հիվանդ մարդ», ինչպես գրում էին օտար մամուլում և գրականության մեջ: Ընդհանուր կարծիքն այն էր, որ եթե երկիրը ներսից չբուժի վերքերը, չհաստատի սահմանադրական կարգեր, ապա դրսից եկող միջամտությունը հոչոտելու է Թուրքիային, կուլ տալու նրա անուժ մարմինը:

Երկրի ճակատագիրն ուզում էր իր ձեռքը վերցնել «Երիտասարդ Թուրքերի» կուսակցությունը, որի կենտրոնը գտնվում էր արտասահմանում, բայց լայն ցանց ուներ երկրի ներսում, մասնավորապես եվրոպական ցամաքամասում գտնվող թուրքական բանակում:

Բուն Թուրք ժողովուրդը, որի իննսուն տոկոսից ավելին խարխափում էր տգիտության ու անգրագիտության մեջ, մասնակից չէր հասարակական կյանքին, թմրած, խեղճացած վիճակում դեռ շարունակում էր լսել նույնքան տգետ մոլլաների քարոզները: Մտավոր այն զարթոնքը, որ ունեցան հայերը 1850-ական թվականներին, Թուրքերը պիտի ունենային դրանից յոթանասուն տարի հետո միայն՝ 1930-ական թվականներին: Ահա թե ինչու «Երիտասարդ Թուրքերի» հեղափոխությունն էլ ոչ թե ներքևից եկող ժողովրդական շարժում էր՝ այլ վերևից եկող բուրժուական սահմանափակ մի հեղափոխություն, որը սակայն անկման հասած նման մի երկրում կարող էր պաշտպանություն գտնել և գտավ:

Թուրքական գավառը քաղաքական կյանքից, խլրտումներից անտեղյակ էր: Գաղտնի կերպով գավառ թափանցած արտասահմանյան հրատարակություններից հայերն ավելի շատ բան գիտեին Երիտ-Թուրքերի գործունեության մասին, քան իրենք՝ Թուրքերը: Եվ այդ՝ հակառակ համիդյան կառավարության ձեռք առած բոլոր խստություններին, համիդիե զորամասերի պարբերական հարձակումներին հայկական գյուղերի վրա, իբր թե անկարգությունները զսպելու համար: Բացառապես քրդերից կազմված այդ զորամասերի պարտականությունն էր թույլ չտալ հայերի կողմից ծրագրված ազատագրական և քաղաքական որևէ խլրտում: Ավարի սիրահար քրդերը, միացած Թուրքերի հետ, իրենց սրերն օգտագործում էին կողոպուտի համար: Հաճախ էր պատահում, որ նման խմբեր մտնում էին հայկական գյուղերը, թալանում ժողովրդի ունեցվածքը, առևանգում սիրունատես աղջիկների ու հեռանում:

Աղբյուր Սերոբի, Անդրանիկի հայդուկային խմբերի գործունեությունը սկսվել էր նման կամայականությունների, ավազակային խմբերի դեմ պայքարելու ազնիվ մղումով: Քուրդ ցեղապետ Բչարե Խալիլի սպանությունը Անդրանիկի ու նրա ընկերների կողմից, այդպիսի բախումներից մեկն էր միայն: Մենք արդեն տեսանք Գալուստ Արխանյանի խմբի գործունեությունը Անդրանիկից առաջ:

Տեսանք, որ այսպիսի ծրագրով են գործել նաև Ռուբեն Շիչմանյանի խմբի անդամները Սեպուհ լեռան լանջերին, դիրքեր գրավելով Ավագ և այլ վանքերի պարիսպներից ներս: Գ. Սյուրմենյանն ասում է թե նրանք թեև պարտվել են, «բայց զինական ուժով իրենց ցույց տված պայքարը ընդդեմ բռնակալության, խոր տպավորություն ձգեց դարերու ստրկությամբ մեծցած, առնական թռիչքներե հեռու, թմրած հոգիներու վրա»[1]:

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երգնկա, էջ 41:*

Վերոհիշյալ խմբի աչքի ընկնող անդամներից մեկը՝ բժիշկ Խաչիկ Սեհյանն անձամբ մեզ պատմել է, թե ինչպիսի ոգևորություն է առաջացրել խմբի գործունեությունը Երզնկայում ու նրա գյուղերում, ինչպիսի հույսեր ներշնչել մարդկանց, թե իրենք ունեն պաշտպաններ:

2. ՕՍՄԱՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Հայ ժողովուրդը օրհասական այս ծանր պայմաններում էր գտնվում, որ 1908 թ. հուլիսի 11-ին պոլսահայ թերթերում տպագրվեց շատ համառոտ մի լուր, թե օգոստափառ կայսրը բարեհաճել է սահմանադրական ազատություն տալ ժողովրդին:

Առաջին օրը ոչ ոք չհավատաց այդ լուրին. մարդիկ կարծում էին, թե դա հերթական խաղ է, տրամադրություններ չոչափելու, կասկածելի մարդկանց ձերբակալելու համար: Բայց հաջորդ օրերին հրապարակվեցին նոր հրամանագրեր քաղբանտարկյալներին ազատ արձակելու, մամուլի վրայից գրաքննությունը վերացնելու, լրտեսական ցանցը լուծարելու և այլ բնագավառների մասին:

Թերթերն ուշ էին հասնում գավառ, սակայն անհավատալի լուրերը թերթերից առաջ հասնում էին հեռագրերով, որոնցից յուրաքանչյուրը բերում էր ուրախառիթ մի նոր հրահանգ:

Սկզբում հետադիմական խավերը փորձել են ընդդիմություն ցույց տալ, մոլլաներն ու մոլեռանդ տարրերը այդ հրամանների մեջ տեսել են դավաճանություն իսլամական կրոնի դեմ, անարգանք շարիաթի հանդեպ, սակայն աստիճանաբար համոզվել են, որ սահմանադրության դեմ դուրս գալը իրենց ուժերից վեր է, քաշվել են իրենց պատյանների մեջ, սպասելով դեպքերի ընթացքին:

Սուլթան Աբդուլ Համիդը դեռևս գահի վրա էր, բայց անզոր. երկիրը ղեկավարում էր երիտթուրքերի կուսակցությունը՝ միանգամայն նոր քաղաքականությամբ, հայտարարելով թե Օսմանյան կայսրության բոլոր հպատակները, անկախ կրոնից ու ազգությունից, ազատ են ու իրավահավասար:

Գավառում ստացվում են լուրեր, թե նոր կառավարությունը խստորեն պատժում է սահմանադրության թշնամիներին:

Հետո արդեն սկսում են կապոցներով հայերեն թերթեր ու հանդեսներ ստացվել, որոնք թարմ չունչ են բերում գավառ:

Թերթերը հիմա ազատորեն գրում էին, թե ինչպիսի անտանելի պայմաններում են ապրել իրենք բռնապետության ճիրաններում, երբ

«կարելի չէր նույնիսկ գիշերային զվարճության մը համար հավաքույթ մ՚ունենալ, կարելի չէր նվագել, կարելի չէր, որ 4–5 երիտասարդ քով քովի գային և խոսակցեին, լրտես ոստիկանը հոն էր, իր խոժոռ դեմքով կամ կեղծավոր, նենգամիտ երևույթովը, կաշառակեր, նենգ, քսու, բանսարկու լրտեսը, խաֆիեն, մարդկության այդ վատասերած և ձևազերծ տիպարը»:

Մարդիկ հիմա չէին վախենում այդ լրտեսներից, թքում ու անցնում էին, իսկ թաքուն անկյուններում անգամ ֆիզիկական հաշվեհարդար տեսնում:

Երիտասարդ թուրքերի հեղափոխությունն ուներ երկու դեմք. մեկը՝ արտաքին, տեսանելի բոլորի համար, մյուսը՝ ներքին, անտեսանելի, բայց խորապես վտանգավոր: Հայ ժողովրդի համար առկա էին նոր վարչակարգի երկու դեմքերը համահավասար:

Ոմանց թվում էր, թե եկել է մի չրջան, երբ վերանալու են ազգամիջյան խտրությունները և Օսմանյան կայսրության բոլոր հպատակները ստանալու են հավասար իրավունքներ ու արտոնություններ և, որ կրոնը չպետք է խանգարի, որ հայ ղերձակն ու թուրք ատաղձագործը ապրեն հաշտ ու խաղաղ, հայն ու թուրքը ազատորեն գովաբանեն այն, ինչ օգտակար է երկրի վերելքի համար, քննադատեն վատն ու վնասակարը:

Կատարվում էին հայ և թուրք համերաշխության այնպիսի ցույցեր, որոնք աննախադեպ էին Թուրքիայի պատմության մեջ: Խելացնոր ողջագուրումներ, փոխադարձ սիրո ճառեր, այս բոլորը ոչ միայն ընտանիքներում, այլև՝ հրապարակային հավաքույթներում, հանդիսավոր ժողովներում, երեկույթ-ցերեկույթներում, որտեղ հիմա հայն ու թուրքը նստում էին կողք կողքի, ծափահարում, հրճվում, գոհունակություն հայտնում տրված ազատության համար:

Ի թիվս մի քանի տասնյակ ընկերությունների, Կ. Պոլսում ստեղծվել էր հայ և թուրք կանանց միացյալ ընկերություն: Հիմա թուրք կինն էլ ուզում էր դուրս գալ հարեմական վանդակից, ստանալ մարդկային տարրական իրավունքներ, երևալ հանրային կյանքում: Բարձրաստիճան պաշտոնյաների մի քանի կանայք բանաստեղծուհիներ Սիպիլի և Անայիսի հրահրմամբ մտել էին միացյալ այդ ընկերության մեջ:

Թե ինչպիսի խանդավառ մթնոլորտ է եղել այդ տարիներին, երևում է հիշյալ ընկերության մի ցերեկույթի ծրագրից: Մի հայ աղջիկ երգել է Մ. Պեչիկթաշլյանի «Ո՞հ ինչ անուշ» երգը, որը 30 տարի արգելված էր: Մի այլ հայ աղջիկ արտասանել է թուրք բանաստեղծ

էքրեմ բեյի ոտանավորը՝ Թուրքերեն, ապա մի Թուրք աղջիկ հայերեն արտասանել է Միք. Նալբանդյանի «Ազատությունը»:

Պետք է պատկերացնել, Թե ինչ ոգևորություն է տիրել դահլիճում:

«Հեծկլտուքներ, արցունքներ, ուրախության,- գրում է Անայիան իր հուշերում և շարունակում է,- Երջանկություն մը կթևաածեր ամբողջ ամբոխին վրա, լուսափողփող հրեշտակ մը իր Թևերով կհպեր ամենուն, հրճվանք կբաշխեր... երրորդ անգամ ըլլալով բացվեցավ վարագույրը: Բեմը պարապ էր. մեկեն սպիտակ Թիթեռնիկի մը պես եկավ աղջնակ մը՝ 8–9 տարեկան, նրբամարմին, Թեթև շղարշե հագուստ մը հագած, մազերը արձակ՝ կարմիր ժապավենով պճնված: Կարծես ոտքով չէր որ եկավ ան հոն, այլ՝ Թռչելով, կանգ առավ պահ մը. աչքերը դեպի երկինք, ձեռքերը կուրծքին: Պզտիկ Թրքուհի Պալքիսն էր ան, որ հայերեն մաքուր, վճիտ առոգանությամբ սկսավ.

Ազատն աստվածն այն օրից,
Երբ հաճեցավ չունչ փչել...

Շատերը ոտքի ելած էին, ծափահարութենե ավելի բան մըն էր, ... կպոռչտային «պռավո», «կեցցե», «բիզ» ... Փոքրիկ Պալքիսը գիրկե գիրկ անցավ»[1]: Անգամ էնվեր փաշան, ինչպես վկայում է Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն, «բազմաթիվ հայ վարժարաններ այցելեց, քարոզելով տղոց, թե խլամ-քրիստոնյայի պայքարը հին օրերը հավիտյան անցած են և թե երկու ժողովուրդները հիմա պետք է իրարու հետ վարվին եղբայրներու և քույրերու պես»[2]:

Զէ, շատ էր խանդավառ մթնոլորտը, դժվար էր չխաբվել, մանավանդ որ անկեղծ էր կատարողական այս ամբողջ մթնոլորտը, խաբկանքը ներքին էր, կառավարողներու ուղեղում, անտեսանելի, դժվարըմբռնելի անգամ Գրիգոր Զոհրապի նման հասուն մարդկանց համար, որը Փարիզ՝ Ա. Զոպանյանին գրած նամակում ասում էր, թե իրական ազատություն է, չպետք է տարակուսել և պետք է վերադառնալ Կ. Պոլիս:

Սահմանադրությունը տվել էր նաև տնտեսական գործունեության ազատություն: Եվրոպայի դռները բացվել էին: Հայ ձեռներեց առևտրականներն այնպիսի եռուն աշխատանք էին կատարում, որ կարող էր լրջորեն մտահոգել տիրապետող տարրին: Եվրոպական պետություններն իրենց ապրանքները Թուրքական նավահանգիստներն

[1] **Անայիա,** *Հուշերս, Փարիզ, 1949, էջ 136–137:*
[2] **Հ. Մորգենթաու,** *Ամերիկյան դեսպանի հիշատակները, էջ 234:*

էին տեղափոխում հիմնականում հայ և հույն առևտրականների միջոցով: Անգլիական մանուֆակտուրան ողողել էր Անատոլիան բացառապես հայերի միջոցով: Օտար բազմաթիվ ընկերությունների Թուրքիայի գործակալները տեղի լեզվին ու բարքերին ծանոթ հայեր էին, ինչպես «Զինկեր» կարի մեքենայի, «Զենիթ» ժամացույցի և այլն: Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Կիրասոնում և գավառական այլ քաղաքներում հայերն ստեղծել էին մետաքսեղենի, երկաթեղենի, պահածոների գործարաններ: Արտադրում էին ընտիր երեսսրբիչներ՝ վրան հայերեն «Բարի լույս» վերտառությամբ:

Հայ և թուրք կանանց միությունում գուցե անկեղծորեն «ազատությունը» ծափահարող թուրք կանանց ամուսինները խոր մտահոգությամբ էին դիտում հայերի տնտեսական այս արագ աշխուժացումը, առևտրի հրապարակը իրենց ձեռքը վերցնելու, անգամ անգլիական ապրանքների հետ մրցելու կարողությունը:

Կ. Պոլսում այդ տարիներին հրատարակվում էին 6–7 հայերեն մեծ օրաթերթեր, տասնյակ երկօրյա, եռօրյա, շաբաթական, ամսական թերթեր, մի քանի տարեցույցներ, հարյուրավոր գրքեր՝ ինքնուրույն կամ թարգմանական: Հնարավոր չէր անտեսել այս բոլորը: Ով կարող էր մտածել, թե նույն այդ օրերին ծրագրվում էր հայերի բնաջնջման մեծ ծրագիրը:

Ազատության պարգևած խելացնոր այս իրադարձությունները թերթերի, մարդկանց միջոցով արագորեն թափանցում էին գավառ ու վարակում բոլորին, հայ թե թուրք:

Գավառում կար առաջավոր թուրք գործիչների մի խավ, մասնավորապես բարձրաստիճան զինվորականության մեջ, որը տարված էր երիտթուրքերի գաղափարներով և սպասում էր նման մի անարյուն, բայց անխուսափելի հեղափոխության: Երզնկայում գտնվող Չորրորդ բանակի հրամանատարությունը արագորեն կողմնորոշվեց դեպի նոր ռեժիմը: Դա շատ բան էր նշանակում: Եվ ահա Երզնկայում նույնպես սկսվում են խանդավառ ցույցերը, ողջագուրումները, հայ-թուրք եղբայրության հավաքույթներ: Թուրքեր ու հայեր բեմ են բարձրանում ու ճառեր են արտասանում հայերի և թուրքերի դարավոր բարեկամության մասին: Աշխատում են մոռացնել տալ տխուր անցյալը, որ, նրանց հավաստիացումներով այլևս երբեք չէր կրկնվելու: Ասում են, թե հայն ու թուրքը նույն հողի ծնունդն են, համիդյան հետադեմ ռեժիմն ու մոլեռանդ տարրերն են, որ թշնամություն են սերմանել երկու ժողովուրդների միջև:

«Երզնկան ալ անմասն չմնաց այդ ընդհանուր խանդավառութենեն,- գրում է Գ. Սյուրմենյանը,- հայ և թուրք, զինվոր ու ժողովուրդ իրար խառնված Սերային առջև, զորանոցները, հայոց առաջնորդարանին մեջ, ցույցեր, միտինգներ կազմակերպեցին. այցելեցին հայոց գերեզմանատունը, ու օվսաննաներ հյուսեցին 1895-ի նահատակներու հիշատակին: Ինչ խոլական թռիչք, ինչ ոգևորություն»[1]:

1895 թվականի նահատակների հիշատակին նվիրված այդպիսի հարգանքի մի արտահայտություն էլ կատարվել էր Կ. Պոլսում, որտեղ հայ և թուրք մտավորականներ այցելել էին հայոց գերեզմանատունը, և այդ օրն է, որ Վահրամ Փափազյանն էլ առաջին անգամ արտասանել էր Դ. Վարուժանի «Ջարդը» և արժանացել էր խելացնոր ծափահարությունների: Հիմա նույնը կատարվում էր Երզընկայում:

Աստիճանաբար թուրք չարքային մարդիկ նույնպես ճաչակում են ազատության մեծ հաճույքը, տեսնում թե որքան անկեղծ են հայերն իրենց եղբայրացման արտահայտությունների մեջ:

Կրոնական մոլեռանդությունը գեթ միառժամանակ տեղի է տալիս խոհականությանն ու բանականության ձայնին: Մոլլաները զգուշանում են գրգռիչ հրահրումներից, նույնիսկ Ղուրանից բերում են վկայություններ, թե Մուհամեդ մարգարեն դեմ չի նման բարեկամության, նա էլ է ճանաչում Հիսուսին, միայն թե առաջին մարգարեն Մուհամեդն է...

Հայ հոգևորականության նկատմամբ կատարվում են այնպիսի ցույցեր, որ անցյալում անհնար էր պատկերացնել: Երզնկայի հայոց առաջնորդ Երվանդ եպիսկոպոս Փերտահճյանը, որ երջանկությունն ունեցավ խանդավառ այդ օրերին հովվել Երզնկայի հայությանը, իր հիշողություններում գրում է. «1908 թ. հուլիսի 23-ին, իբր նորընտիր առաջնորդ ժամանեցի Երզնկա: Հյուրիեթի տոնակատարությունը դիտած էի Կ. Պոլսո մեջ. Երզնկան մայրաքաղաքեն 15 օր վերջ միայն տոնեց: Հյուրիեթ մեյտանին համախմբված էին բարձրաստիճան զինվորականներ. զարդարված ոսկեճամուկ զգեստներով և պատվանշաններով. քաղաքային պաշտոնատարներ, քանի մը հազար զինվորներ ու հայ և թուրք ծովածավալ բազմություն մը: Հրապարակին մեջտեղը զետեղված էր չարժական ամբիոն մը ճառախոսներուն համար: Անոր վրա չերքեզ Մյուշիր Զեքի փաշային և մյուֆթիին հետ համբուրվեցանք, իբր թե այդ համբույրներով պիտի մոռցվեր ար-

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 60:*

յունոտ անցյալը ու հայ, թուրք եղբայրությունը հռչակված պիտի ըլլար: Այդ միջոցին բազմությունը մոլեգնորեն կծափահարեր՝ աղաղակելով «Յաչասըն հյուրիեթ», «Յաչասըն վաթանտաչլար» (Կեցցե՛ ազատությունը, կեցցեն մեր հայրենակիցները): Քանի մը օր վերջն ալ հայ երիտասարդությունը իր կողմե ազատության չքեղ հանդես մը կազմակերպեց: 120 միաձև հագված երիտասարդներ չորս մասի բաժնված, յուրաքանչյուր խմբակ իր դրոշակներով կներկայացներ Հյուրիեթը (Ազատություն) Մյուսավաթը (Հավասարություն), Ատալեթ (Արդարություն) և Մեարիֆը (Կրթություն): Ես և մյուֆթին նըստած էինք մեկ կառքի մեջ. մեր քով ունեինք թուրք տղեկ մը ու սպիտակներ հագած հայ աղջնակ մը, որ իր ձեռքին բռնած էր զույգ մը աղավնիներ, ազատությունը խորհրդանշող: Ես կառավարչատան առջև խոսեցա Հյուրիեթի մասին, ուրիշ մը՝ Մյուշիրիեթին առջև Մյուսավաթի մասին, մյուսներն իրենց կարգին ուղերձներ ըրին Ատալեթի, Մեարիֆի մասին, 10.000 զինվորներ անդեն բարևի կանգնած էին ճամբուն վրա: Մենք այցելեցինք բոլոր զինանոցները. զինվորները գիս ձեռքերու վրա կտանեին «յաչասըն էրմենիլեր, յաչասըն էրմենի մուրախխասը» (կեցցեն հայերը, կեցցե՛ հայոց առաջնորդը) աղաղակելով: Հանդեսը տևեց հինգ ժամ և թողեց խոր տպավորություն: Անկե հետո կարգով Առաջնորդարան կհասնեին հետևակ, ձիավոր և թնդանոթաձիգ գունդերեն պատգամավորություններ: Իրենց խընդրանքին համաձայն կերթայինք գերեզմանատուն, նահատակներուն այցելության համար: Հոն օսմանյան դրոշներ կփռեին նահատակներու հողակույտերուն վրա ու կճառեին, դրվատիքներ կհյուսեին ազատության ճամբուն ընկնող դյուցազուններուն համար»[1]:

Ինչպես տեսնում ենք այս նկարագրությունից, գավառը ետ չի մնացել մայրաքաղաքից՝ ազատասիրական պոռթկումները, հայ-թուրքական բարեկամության արտահայտությունները գերադրական աստիճանի հասցնելու գործում:

Խանդավառ ցույցերով բանտից ազատվել են Գալուստ Արխանյանի զինակիցները, նրանք օվացիաներով առաջնորդվել են իրենց տները, արժանանալով նաև թուրքերի ողջագուրումներին:

Գավառում էլ հիմա մարդիկ ազատ խոսել են ու գրել ինչ ցանկացել են: Գրաքննությունը բոլորովին վերացել էր: Լրտեսները կուչ էին եկել իրենց տներում, մի քանիսն էլ թողել հեռացել էին հետքերը կորցնելու համար:

---

[1] **Գ. Այուրմենյան,** *Երգնկա, էջ 60-61:*

«Հասարակական կյանքը սկսավ եռալ. իրարու ետևե թատրոններ, լսարաններ, դպրոցները դարձան լույսի և ներշնչման վառարաններ: Սկսան երգվիլ հայկական ազատաչունչ երգեր, իսկ դպրոցներու մեջ դասավանդվիլ հայոց պատմություն, որոնք անկե առաջ խստիվ արգելված էին: Հայերն սկսան բացե ի բաց զենք գնել, զենք կրել վրանին, նշանառության, զինավարժության փորձեր ընել: Երևակայեցեք, որ Սարգիս Տեր-Ստեփանյանի նման ծանր ու լուրջ մարդիկ անգամ երբեմն նշանառությամբ կզբաղեին, և այս բոլորը կկատարվեր օր ցերեկով, Թուրքերու աչքին առջև: Այս մասին ոչ Թուրքերու զգուշացումը և ոչ հայ պահպանողական տարրի հորդորները ոչ մեկ արժեք ունեցան: Ժողովուրդը իր գտած ազատութենեն գինովցած, ետև առաջ չէր նայիր»[1]:

Ազատ, համարձակ գործում էին հայ քաղաքական կուսակցությունները, իրենց պոռոտախոս ճառերով մտահոգություն պատճառելով առավել հեռատես մարդկանց: Այդ կուսակցություններից յուրաքանչյուրը փորձում էր ցույց տալ, թե ինչպիսի մեծ դեր է կատարել բռնապետական կարգերի տապալման գործում: Հոխորտում էին այնպիսի վստահությամբ, որ կարծեք ոչ թե Թուրքիային հպատակ մի ժողովրդի ներկայացուցիչները լինեին, այլ երկրի իրական տերերը: Անգամ Թուրք մտավորականությունը, խելահաս ու հեռատես մարդիկ զգուշացնում էին, խորհուրդ տալիս պահել չափի զգացումը, առիթ չտալ ազգամիջյան նոր հակամարտությունների, բայց այդ բոլորն անցնում էր իզուր:

Նույնիսկ բռնագրավված հողերը ետ ստանալու չարժում առաջ եկավ: Համիդյան բռնապետության շրջանում խեղճ հայ գյուղացու հողերի մեծ մասը խլվել էր նրա ձեռքից և հանձնվել բեգերին ու աղաներին: Հայերը մնացել էին մի փոր հացով նրանց մոտ աշխատող բատրակներ: Հիմա հայերն ուզում էին ետ խլել իրենց պապենական իրավունքը: Կառավարությունը սկզբում ձևականորեն պաշտպանել է հայերի իրավունքը, բայց հետո սահմանափակել է: Ունենք ուշագրավ մի փաստ նման պահանջների հետ կապված:

Երզնկայի շրջանում գործել է ոմն Հայդար բեգ, որ եղել է քրդերի իշխանը, Ղուզուլչանի ու Դերսիմի տերն ու տիրականը. բոլորն աշխատել են նրա համար, բոլորը վախեցել են նրանից: «Ոմանք անոր ոտքը կհամբուրեին, ուրիշներ՝ ծունկը, ոմանք՝ ուսը, միայն տերտերներն իրավունք ունեին անոր ձեռքը համբուրելու: Ոչ մեկ զգրլբաշ

[1] **Գ. Այուրմենյան,** *Երզնկա, էջ 63:*

չէր կարող անսաստել անոր հրամաններուն: Քյուրդ մը երբ անոր հրահանգներու կատարումին մեջ թերանար, մանավանդ հեղափոխականներուն բարեկամ մարդ եղած էր, սակայն սոսկալիորեն կեղեքիչ էր, բազմաթիվ հայերու և քյուրդերու արտերը յուրացուցած էր: Բայց ոչ հայը և ոչ ալ քյուրդը կհամարձակեին անոր առջև բերան բանալ: Ամենքը կը սոսկային իրմե»[1]:

Եվ ահա եկել էր մի շրջան, երբ հայերն ու թուրքերը, մասամբ նաև քրդերը ճառեր էին լսում դասակարգային թշնամու, հողերի հավասարության, Մարքսի «Կապիտալի» մասին, լսում էին հրահանգներ, թե իրենք իրավունք ունեին ետ պահանջելու կալվածատերերից իրենցից խլված պապենական հողերը: Հիմա Հայդար բեգի հովանավորությունը վայելող մարդիկ, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները կանգնել էին նրա դեմ որպես իրավունք ու հաշիվ պահանջողներ: Ինչպես պատմում է նույն հոգևոր առաջնորդ Փերտահճյանը, օսմանյան սահմանադրության հռչակումից հետո «Հայերը, մեջքերնին վեցհարվածյան մը կապած, գավազան մը ձեռքերնին բռնած կտնկվին անոր առջև և իրենց գրավված կալվածները ետ կպահանջեին: Կալվածները ուզելով ալ չէին բավականանար, քյուրտերն ալ կդրդեին որ իրենք ալ իրենց հողերը ետ ուզեն: Կառավարությունը սակայն հայերու հողային խնդիրը լուծելու կողմը չէր երբեք: Հայդար բեգ, ասկե քաջալերված, զանազան պատճառներով իրեն հակառակորդ հայերը բանտարկել տվավ, ոմանց սպառնաց նույնիսկ մահվամբ պատժել: Քյուրդ բեգը այլևս հայոց կատարյալ թշնամին դարձավ»[2]:

Հայդար բեգը ձերբակալել և բանտարկել է տվել նաև հնչակյան դարձած քրդերի, որոնք բոլորը, ազատ արձակվելուց հետո պայքարել են այդ կալվածատիրոջ դեմ: Հայդար բեգը, որ միաժամանակ Ղուզուլչանի գայմագամն է եղել, հեռացվել է պաշտոնից, մի քանի ամսից որպես հակասահմանադրական՝ ձերբակալվել է ու բերվել Երզնկա, բանտարկվել, ինն ամիս բանտում տառապելուց հետո մեռել է:

Հասկանալի է, որ ոչ նման բեգերն ու աղաները, ոչ էլ մանավանդ մոլեռանդ հոգևորականությունը չէին կարող գոհ լինել մի սահմանադրությունից, որն իրավունք էր տալիս մինչ այդ ստրկական համակերպման դատապարտված հայերին՝ մեջքներին զենքով ու մեծ

---

[1] **Գ. Այուրմենյան,** *Երզնկա, էջ 64:*

[2] *Նույն տեղում:*

հոխորտանքով կանգնել տերերի առաջ ու հաչիվ պահանջել նրանցից: Ավելին՝ չէին կարող հանդուրժել, որ նրանք լուսավորեին, ոտի հանեին Թուրք և քուրդ գյուղացիներին, նրանց բացատրեին թե իրենց թշնամին ոչ թե աշխատասեր ու բախտակից հայն է, այլ նրանց հողերը խլող, շահագործող բեկը, անկախ այն հանգամանքից, թե ինչ ազգության է պատկանում, ինչ կրոնի՝ այդ շահագործողը:

Մայրաքաղաքում ավելի լայն տարածում ստացած հակասահմանադրական շարժումը 1909 թ. մարտի 31-ին հանդես եկավ փողոցային ցույցերով ու բախումներով, դեռևս գահի վրա գտնվող սուլթան Աբդուլ Համիդի անմիջական հովանավորությամբ, նյութական օգնությամբ: Հետամնաց ամբոխը կրկին Կ. Պոլսի փողոցները ներկեց ազատության համար մարտնչած մարդկանց արյունով: Սպանվեցին բազմաթիվ թուրքեր, այդ թվում՝ «Սերբեստ» ազատասիրական թերթի խմբագիրը:

Նախօրոք ծրագրված, բոլոր գավառներում իրենց համախոհներն ունեցող այդ շարժումը արագորեն հասավ նաև Երզնկա:

«Չորրորդ բանակի զինվորությունն ալ, առտու մը կանուխ, ապստամբության դրոշը պարզելով անմիջապես տիրացավ բանտին, հեռագրատան, թաղապետության և կառավարական բոլոր հաստատության: Ասոր վրա՝ շուկային մեջ իրար անցում մը սկսավ. հայ և թուրք՝ խանութները փակելով, սկսան փախչիլ դեպի տուն: Հայերը կկարծեին, թե թուրքերը իրենց վրա կհարձակին, իսկ թուրքերը հայերուն կկասկածեին: Զինվորությունը Հարպիե զորանոցին առջև հավաքված՝ «Շերիաթ խթերիզ» կպոռար: ... Գազազած ամբոխը վայրկյան մը մտածած էր հայոց թաղին վրա հարձակիլ, բայց մեծերը զգուշացուցած էին զիրենք, թե այդ քայլը սուղի կրնա նստիլ իրենց վրա, Սահմանադրութենեն ասդին հայերու տեսած զինվորական պատրաստությունները աչքի առաջ ունենալով, ու ձեռք քաշած էին այս վտանգավոր քայլեն»[1]:

Հայերի գլխին կուտակված ու բոպե առ բոպե թանձրացած ամպը առանց պայթելու ցրվում է չնորհիվ սահմանադրության հավատարիմ Մյուշիր փաշայի ձեռք առած միջոցառումների:

Նա անձամբ իր համհարզի հետ մտնում է գազազած ամբոխի մեջ ու համոզում, հորդորում է հանդարտություն: Դիմում է խորամանկ միջոցի: Իրեն անհնազանդ որոշ զորամասեր տեղափոխում է Կարին, այնտեղից բերում է հնազանդ զորամասեր, որոնք իրենց հակակշռի տակ են առնում լարված դրությունը, կանխում հայերի ջարդը:

---

[1] **Գ. Այուրմենյան,** *Երզնկա, էջ 64:*

1909 թ. ապրիլին Մակեդոնիայից բերված բանակը շարժվում է Կ. Պոլիս, գահընկեց անում սուլթան Աբդուլ II Համիդին: Նրա տեղը սուլթան է դառնում Մեհմեդ V Ռեշադը, որը պետք է «թագավորեր, բայց ոչ թե կառավարեր»: Նոր կառավարության մեջ մտան երիտթուրքերի ղեկավարները, որոնք չուտով երկրում հաստատեցին արյունոտ դիկտատուրա[1]:

Համիդի գահընկեցությունից հետո միաժամանակ շարունակվեց անդորրը, բայց աստիճանաբար հայ և թուրք կողմերը ճշտեցին իրենց դիրքերը արդեն ոչ որպես բարեկամներ: Դրան ուժ տվեց երիտթուրքերի քաղաքականության մեջ նկատվող փոփոխությունը: Սահմանադրության առաջին ամիսներին Թուրքիայի բոլոր ժողովուրդներին հավասար հռչակող այդ կուսակցությունը հիմա առաջ էր քաշել «Թուրքիան թուրքերին» ծրագիրը, որ ցած էր գցում հավասարության դիմակը: Դրա ցայտուն արտահայտություններից մեկն էր նույն օրերին կատարված Ադանայի հայերի զանգվածային ջարդը, որին զոհ գնացին 30.000 անմեղ հայեր, փողոցները ներկվեցին աշխատավոր մարդկանց արյունով, անապատան մնացին հազարավոր որբեր:

Նոր սուլթանն իր առաջին գահաճառում կեղծավորաբար ափսոսանք հայտնելով կատարվածի մասին, հավաստիացրել էր, թե կատարվածը հետադեմ տարրերի գործն էր, և այլևս չէր կարող կրկնվել: Թուրք թերթերն էլ հորդորել են հայերին վրեժխնդիր չլինել, մոռանալ պատահածը:

Մինչդեռ պարզվում է, որ Կիլիկիայի կոտորածը ամենևին էլ պատահական դեպք չի եղել, այլ նախօրոք մի քանի գավառների համար մշակված ծրագիր, որի կենսագործումը որոշ նկատառումներով սահմանափակվել է Կիլիկիայով:

Երզնկայի մյուշիրը, պետք է ասել, այդ օրերին վարել է խոհեմ քաղաքականություն: Չի հրահրել լիցքավորված շարժումը, ընդհակառակը, կանխել է: Երզնկայի առաջնորդ Ե. Փերտահճյանն իր հիշողություններում գրում է. «Պատրիարքարանեն ստացանք հեռագիր մը, որ կգուժեր Կիլիկիայի աղետը: Հուզված վիճակի մեջ հեռագիրը ցույց տվի մյուշիրին ու մյութասարիֆին: Մյուշիրը ինձ թելադրեց Հայաստանի վեց նահանգներու առաջնորդներուն և պատրիարքարան հեռագրել, թե Դ բանակը հավատարիմ է օսմանյան սահմանադրության, ամեն գնով պիտի պաշտպանե Հյուրիեթը և

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հատ. VI, Գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան, 1981, էջ 497:

հանցավորները խստիվ պիտի պատժե: Անմիջապես վեց առաջնորդներուն և պատրիարքարան ուղղյալ հեռագիր մը պատրաստելով, ցույց տվի Մյուշիրին, ու իր հավանությունը ստանալես հետո հեռագրեցի, առանց սակագին վճարելու»[1]:

Երիտթուրքերի կառավարությունը հիմա մտածում էր Հայկական հարցը այլ միջոցներով լուծելու մասին...

Այդ մտայնությունը ավելի չեչտվեց Բալկանյան պատերազմի օրերին: Միանգամից մի քանի երկիր՝ Հունաստանը, Բուլղարիան, Զեռնոգորիան և այլն, ոտի կանգնեցին և հարձակվեցին Թուրքիայի վրա, գրավեցին մեծ տարածություններ, հասան մինչև Կ. Պոլսի դռները՝ Զաթալջա:

Պատերազմին մասնակցեցին բազմաթիվ հայեր՝ թե՛ չարքային զինվորներ և թե՛ սպաներ, սակայն թուրքերը տարածում էին այն մտայնությունը, թե հայերի ընդհանուր համակրությունը քրիստոնյա պետությունների կողմն է:

Գաղտնիք չէր, որ հայկական մի վաշտ Գարեգին Նժդեհի և Անդրանիկի հրամանատարությամբ բուլղարական բանակում կըռվում էին թուրքերի դեմ: Թուրքիայի ղեկավարները գիտեին այդ բոլորը և լեցված էին վրեժխնդրությամբ հայերի նկատմամբ:

Գավառական քաղաքներում մանավանդ, կյանքը աստիճանաբար մոտենում էր նախասահմանադրական վիճակին: Օր չէր լինում, որ Երզնկայի գյուղերից մեկնումեկը որևէ զոհ չտար կամ չենթարկվեր քուրդ հրոսակների հարձակումներին, քաջալերվելով թուրքական իշխանությունների կողմից:

Թուրքերի և թուրքական կառավարության ատելությունն հայերի նկատմամբ գագաթնակետին հասավ Երզնկայում հայտնի ռումբի պայթյունի օրերին:

Հայ քաղաքական կուսակցություններից մեկի անխոհեմ մի քայլն էր դա, որ միանգամից փոխեց մթնոլորտն ի վնաս հայերի: Ցնցեց ոչ միայն Երզնկայի գավառը, Էրզրումի ամբողջ վիլայեթը, այլև լայն արձագանք գտավ մայրաքաղաքում, զբաղեցրեց հայկական և թուրքական մամուլը:

Առանց այն էլ հայերի նկատմամբ անբարյացակամությամբ տրամադրված թուրքերն այն համարեցին թուրքական իշխանությունների դեմ զինված պատերազմի պատրաստվելու, ապստամբվելու ազդանշան:

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 68:*

Իրականում պատահածը մի խումբ անփորձ երիտասարդների անհեռատես արարքն էր:

Ահա թե ինչ էր պատահել:

1913 թ. Երզնկայի Սյուրմենենց կոչվող թաղում, Անթառենց Սարգսի տանը, խիստ գաղտնի պայմաններում հայերը փորձում են ռումբ պատրաստել, դրանք ոչ թե ապստամբական, այլ ինքնապաշտպանական կռիվներում օգտագործելու նպատակով: Երիտասարդներից մեկի անզգուշության հետևանքով ռումբը պայթել է՝ օդը ցնդեցնելով ամբողջ շենքը, խլելով ռումբի պատրաստությամբ զբաղված երեք երիտասարդների կյանքը, որոնք էին Սարգիս Գազանճյանը, Տիգրան Մսածյանը, Գալուստ Տեր-Մուշեղյանը: Եղել են նաև վիրավորներ:

Պայթյունի ձայնը լսվել է մինչև մեկ ժամ հեռավորության վրա, իսկ մոտակա բնակարաններից մի քանիսի ապակիները ջարդվել են:

Թաղի կանայք ու աղջիկներն իսկույն շտապել են դեպքի վայրը, հեռացրել ու ապահով տեղ են տարել նույն շենքում պահվող զենքերն ու անվնաս մնացած ռումբերը:

Պայթյունից կես ժամ անց դեպքի վայրն են եկել մի խումբ զինվորներ ու ոստիկաններ՝ կառավարիչի գլխավորությամբ, շրջապատել են տունը, արգելել ելք ու մուտքը, սակայն շուտով 4-րդ բանակի հրամանատար Օսման փաշան վերացրել է շրջափակումը՝ ավելորդ աղմուկի տեղի չտալու համար, բավարարվել է թողնելով մի քանի ոստիկան՝ տեղում քննություններ կատարելու նպատակով:

Այս միջոցառումը եղել է արտաքին. իրականում Երզնկայի պետական մարմինները լրջորեն անհանգստացել են պատահածի համար և ցասումով լեցվել հայերի դեմ: Ձերբակալել են մի քանի երիտասարդների, որոնք ամենևին կապ չեն ունեցել ռումբերը պատրաստողների հետ և Կարնո առաջնորդի ու օսմանյան խորհրդարանի երեսփոխան Վարդգեսի միջամտությամբ ազատ են արձակվել:

Երեք զոհերի հանդիսավոր թաղումը, համակրանքի ցույցերի արժանանալը ավելի են գրգռել թուրքերին հայերի դեմ:

«Պոմպայի դեպքից» հետո ավելի հաճախադեպ են դառնում հայերի դեմ գործադրվող խժդժությունները: Մոլլաները մեջիդներում առիթ բաց չեն թողնում մոլեռանդ տարրին քրիստոնյաների դեմ գրգռելու, նրանց հայրենիքի ու խալամ կրոնի անարգ թշնամիներ ներկայացնելով: Կառավարությունն էլ ակնհայտորեն աչք է փակում թալանի ու սպանությունների դեպքերի ժամանակ: Բավական է թերթել այդ ժամանակաշրջանի պոլսահայ մամուլը, տեսնելու հա-

մար թե ինչպիսի չիկացած մթնոլորտ էր ստեղծվել Երզնկայի նահանգում վերոհիշյալ պայթյունից հետո:

«Հուլիսի 25-ի գիշերը Ղարաթուչ գյուղին մեջ քանի մը քյուրտեր հայու մը այգիին պահապանը կվիրավորեն և ունեցածը կկողոպտեն»: Նույն ամսին քրդերը մտել են Կելենցիկ գյուղի հայերից մեկի տունը և օր ցերեկով զենքի սպառնալիքով կողոպտել են ու մեկնել:

Մահմուտցիք գյուղից Եղիա Ժամկոչյանը ցանկացել է ծախել իր ձին. մի թուրք առաջարկել է իր գինը, որին հայը չի համաձայնվել և տարել է քաղաքում ծախել ուզած գնովը: Գյուղ վերադառնալիս՝ ճանապարհին նույն թուրքը կանգնեցրել է նրան, սպանել, փողը վերցրել ու փախել է անպատիժ:

Սկսում են կասկածով վերաբերվել նաև բանակում ծառայող հայ զինվորների ու սպաների հետ: Սահմանափակել են նրանց մինչ այդ ունեցած որոշ արտոնությունները՝ կիրակի օրերը եկեղեցի գնալու, կրոնական պարտականությունները իրենց հարազատների հետ կատարելու վերաբերյալ:

Մթնոլորտը չիկացած էր: Մոտալուտ էր ամպրոպը:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՏՈՒՐՔԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ

1. ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

«Երկուշաբթի առավոտ մըն էր,- պատմում է Գ. Սյուրմենյանը,- հանկարծ թմբուկի մը ուժեղ ձայնեն արթնցա: Փողոցին մեջ անտվոր աղմուկ մը կար: Կառավարության կողմե մունետիկ մը իր անճոռնի ձայնը մեջտեղ ձգած՝ կկանչեր: Մունետիկը կլուեր, թմբկահարը կսկսեր, թթմբկահարը կլուեր՝ մունետիկը կսկսեր, ու այսպես չարունակաբար: Թաղին կիները թափված էին փողոց. մունետիկի ու թմբկահարի գլխուն հավաքված՝ կուզեին պատառ-պատառ ընել զանոնք, որպես չարաղետ բուերու:

Նախապես քաղաքի իսլամ մուխթարներուն առանձին, ապա գյուղերու գյուղապետներուն և նույնպես քաղաքի մուխթարներուն հավասարապես կնքված գոց նամակներ բաժանված էին և խստիվ պատվիրված, որ չբացվին անոնք, մինչև իրենց հրահանգ տրվիլը: Այդ օրը այդ նամակները բացվեցան, պատերուն թուղթեր փակցվեցան: Այս բոլորով կառավարությունը կհրահանգեր 18–45 տարեկան տղամարդկանց, հետերնին հինգ օրվան պաշար առած ներկայանալ ամենամոտիկ զորահավաքի կեդրոնը: Մեկ խոսքով՝ «Ամեն մարդ զենքի տակ». այդ էր օրվա կարգախոսը»[1]:

Հայրս՝ Թարզի Խաչիկն էլ այսպես է պատմել Դերջանում հայտարարված զորակոչի մասին: Մենք այն ժամանակ ապրում էինք Մամախաթունում:

«1914 թվականի օգոստոսի սկզբներին, մի առավոտ դեռ նոր էի խանութս բաց արել ու կարի մեքենայի մոտ նստել, երբ ներս մտավ մի ծանոթ սպա և ասաց.

- Վարպետ, պատերի վրա թուղթ են կպցրել, կարդացե՞լ ես:

- Չէ, ինչի՞ մասին է:

- Պատերազմ է հայտարարվել: Ընդհանուր զորահավաք է, 20–45 տարեկան հասակ ունեցողները կանչվում են զենքի տակ:

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երգնկա, էջ 263-264:*

Մարդը մեկնեց: Զեռքս մեքենայի անիվի վրա՝ քարացած նայում էի կարածս կտավին: Զգիտեի ինչ անեի. ձեռներս թուլացել էին, այլևս չէի կարողանում աշխատել: Ընդհատեցի աշխատանքս, փակեցի խանութս, գնացի տուն... Զորակոչի ենթակա տղամարդիկ հենց հաջորդ օրը՝ օգոստոսի 10-ին հրավիրվում էին կենտրոնական հրապարակը: Այդ օրը Մամախաթունի մեծ ճանապարհի վրա համբուրեցի երեխաներիս, նայեցի իմ նորաստեղծ օջախին, և խուրջինը չալակիս, ընկերներիս հետ ճանապարհ ընկա դեպի Երզնկա... Այն ժամանակ մեզ թվում էր, թե ընդամենը մի ամսից ամեն ինչ կվերջանա և մենք կվերադառնանք մեր տները»[1]:

Ավաղ, Թարգի Խաչիկը այլևս չվերադարձավ Մամախաթուն և իր որդուն էլ՝ այս տողերը գրողին, հանդիպեց դրանից 14 տարի հետո, Երևանում...

Զորակոչվածներին Երզնկայում ջոկել են ըստ մասնագիտությունների և արհեստավորներից շատերին փոխադրել են Դարաղխանա, որտեղ նրանք բանակի համար հագուստ, կոշիկներ են կարել, մինչև որ հասել է նրանց հետ հաշիվը մաքրելու ժամն էլ...

Կարճ ժամանակում պատերազմն իր բոցերը տարածեց Եվրոպայով մեկ: Գերմանական զորքը մտավ Բելգիա, այնտեղից անցավ Ֆրանսիա:

Թուրքերը դեռ պատերազմի մեջ չէին: Ոմանք ասում էին, թե Թուրքիան չեզոքություն է պահելու: Բայց այդպես չեղավ: Շուտով կողմնորոշվեց դեպի Գերմանիան: Գերմանական «Գեբեն» և «Բրեսլաու» ռազմանավերը մտան Դարդանել՝ թուրքական անուններով, անձնակազմն էլ թուրքական զինվորական համազգեստով: Թուրքական ամբողջ բանակն արդեն վարժեցվում էր գերմանական սպայակույտի կողմից:

1914 թ. օգոստոսի կեսերին Թուրքիան պաշտոնապես միացավ Գերմանիային, իսկ հոկտեմբերի 29-ին պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: Ոչ ոքի համար գաղտնիք չէր հայերի վերաբերմունքը դեպի Ռուսաստանը, իսկ այժմ զենքի տակ գտնվող հայերը հարկադրված էին կռվել այն պետության դեմ, որի վրա էին հույսեր դրել ավելի քան մեկ դարուց ի վեր: Թուրքական բանակում ծառայող հայերը պիտի կռվեին հենց իրենց արյունակից եղբայրների՝ հայերի դեմ, որոնք ծառայում էին ռուսական բանակում:

Այս բանը քաջ գիտեր Թուրքիան: Հիմա նրան հարկավոր էր ոչ միայն ատելություն հրահրել հայերի դեմ առհասարակ, այլ ծրագրել

---

[1] **Գ. Ստեփանյան,** *Մղձավանջային օրեր, էջ 12-14:*

հայերի մասսայական բնաջնջումը, Արևմտյան Հայաստանի դատարկումը հայերից:

Այս պայմաններում է, որ սկսվեց կենսագործվել հրեչային մի ծրագիր, որը երիտթուրքերի կողմից հղացվել էր շատ վաղուց և այն մշակողները պարզապես սպասում էին հարմար ժամանակի:

Հայերի բնաջնջման ծրագիրը կենսագործողները թուրքերն էին, սակայն այդ ծրագրի մտահղացման և իրականացման միջոցների որոշման մեջ մեծ դեր էր կատարել Գերմանիան՝ Կ. Պոլսի իր դեսպան Հ. Վանգենհայմի ամենամոտիկ մասնակցությամբ: Հայկական կոտորածները սկսվելուց անմիջապես հետո գերմանական պաշտոնաթերթերից մեկը՝ «Deutsche Tegeszeitung»-ը ի լուր աշխարհի հայտարարեց. «Թուրքիան ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է պատժելու ապստամբ և արյան ծարավ հայերին»[1]:

Որոշվել էր հայ ժողովրդի գլխին խփել առաջին հարվածը: Մարմինը հոշոտելն արդեն հեշտ պիտի լիներ:

1915 թ. ապրիլի սկզբներին Կ. Պոլսի բոլոր ոստիկանատները ստանում են զմռսված և խորհրդավոր փակ ծրարներ, հետն էլ կարգադրություն, թե բաց չանել մինչև այդ մասին հրահանգ տրվելը:

Ստացվում է այդ չարագուշակ հրամանը և 1915 թ. ապրիլի 11-ի (նոր տոմարով 24-ի) գիշերը Կ. Պոլսի բոլոր ոստիկանատները նույն ժամին բաց անելով նախօրոք ստացված ծրարները, հրահանգ են ստանում ձերբակալել տվյալ թաղամասում ապրող նշված մտավորականներին:

Նույն գիշերում ձերբակալում են մոտ 270 հայերի, որոնցից ավելի քան 150-ը ականավոր մտավորականներ, գրողներ, արվեստագետներ, հրապարակախոսներ, իրավաբաններ, հասարակական գործիչներ: Նրանց լցրել են բանտերը, ապա աքսորել Այաչ և Զանկրի, իսկ մի քանի ամսից՝ նախամարդու բութ գործիքներով գազանաբար խոշտանգել են:

Մեր ժողովրդի մշակույթին ծառայելու հանցանքի համար մեղավոր այդ մարդկանց մեջ էին հայ երգի ու երաժշտության անմահ գագաթը՝ Կոմիտասը, հայ ժողովրդի վիշտն ու թախիծը, ընդվզումն ու մաքառումը երգող բանաստեղծներ Սիամանթոն, Վարուժանը, Ռուբեն Սևակը, արևմտահայ արձակի փայլուն ներկայացուցիչներ Գրիգոր Զոհրապը, Ռուբեն Զարդարյանը, Մելքոն Կյուրճյանը, դերասան Ենովք Շահենը և ուրիշներ:

---

[1] *Տե՛ս «Արարատ», ամսագիր, 1916, № 3-4, էջ 252:*

Առաջին հարվածը տրվել էր հայ ժողովրդի մտավոր ներուժին: Մնում էր հոչոտել մարմինը, իսկ հոչոտելու, խոչտանգելու դարավոր հմտություն ուներ օգտակար աշխատանքի անընդունակ թշնամին:

2. ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ

Պոլսահայ մտավորականության ահռելի նախճիրից անմիջապես հետո երիտթուրքերն սկսեցին Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի հայաբնակ քաղաքների զանգվածային տեղահանությունն ու կոտորածը:

Հարյուրավոր գրքեր են գրվել մեկևկես միլիոն անմեղ հայերի կոտորածի, հայկական ցեղասպանության մասին: Գրվել են թե ընդհանուր աշխատություններ և թե ըստ գավառների, քաղաքների՝ գրքեր, գրքույկներ: Մեր նյութից դուրս է թեկուզ համառոտ կանգ առնել դրանց վրա:

Մեզ զբաղեցնելու է միայն Երզնկայի տեղահանությունն ու կոտորածը: Այդ մասին նույնպես ստեղծվել է հարուստ գրականություն: Միայն ականատեսների պատմածներից հնարավոր է կազմել մի քանի ստվար հատոր: Հուշեր են գրել, կամ պատմել հիսունից ավելի մարդիկ: Դրանցից մի քանիսին տեղ է տվել Գ. Սյուրմենյանն իր «Երզնկա» գրքում, Թարգի Խաչիկի արկածալից կյանքը, որի դրվագների զգալի մասը կապված է Երզնկայի մեծ ողբերգության հետ, հրատարակել ենք մենք «Մղձավանջային օրեր» գրքում (Երևան, 1945, Բեյրութ, 1952)[1]: Երզնկացիների աքսորի ու ջարդերի ահասարսուռ նկարագրություններ են տպագրվել 1918–1922 թթ. պոլսահայ մամուլում («Ժամանակ», «Վերջին լուր» և այլն): Վերջապես մեր տրամադրության տակ կան Երևանում ապրող մի քանի հայրենակիցների գրավոր հիշողությունները:

Օգտագործել այդ ամբողջ գրականությունը և մանրամասն խոսել Երզնկայի եղեռնի մասին, մեզնից պիտի խլեր մի քանի հարյուր էջ. և չգիտենք թե գրողի կամ ընթերցողի թույլ ներվերը պիտի դիմանայի՞ն հոգեբանական այդպիսի ծանր հարվածի: Զէ՞ որ դա մի ամբողջ ժողովրդի ողջակիզման պատմությունն է, անհավատալի, աներևակայելի, անըմբռնելի մարդկային բանականության համար:

---

[1] *Գ. Ստեփանյանի «Մղձավանջային օրեր» գիրքը հեղինակի եղեռնի տարիներին տեսած արհավիրքներն ու որբանոցային կյանքը՝ «Որբաշխարհ» խորագրով լույս տեսան հեղինակի մահից հետո, 1989 թ. (ծան. խմբ.):*

Ներկայացնելու ենք Երզնկայի և Դերջանի հայերի ջարդերի ընդհանուր պատկերը, գաղափար տալու համար թե ինչպես կործանվեց ծաղկուն մի քաղաք, որը 3000 տարի եղել էր հայերի բնակավայրը, ինչպես կործանվեցին նրան շրջապատող հարյուրավոր հայկական գյուղերը:

1915 թ. սկզբներին Երզնկայում, մոլեռանդ Թուրքերի շրջանում ընթերցվում է չեյխուլիսլամի գաղտնի հրահանգը, որտեղ ասվում էր, թե անհավատների դեմ մղվող պատերազմը պետք է համարել սրբազան պատերազմ՝ առհասարակ քրիստոնեական աշխարհի դեմ, թե ճշմարիտ մուսուլմանը պետք է անողոք լինի ամեն մի քրիստոնյայի դեմ:

Թուրքիայի հայաբնակ բոլոր քաղաքների մեջլիզներում ընթերցված այդ հրահանգը նվիրական պարտականություն էր դնում յուրաքանչյուր մահմեդականի վրա՝ սպանել, անխնա սպանել անհավատներին: «Անհավատների արյունը կարող է թափվել առանց պատիժի,- ասում էր չեյխուլիսլամի պատգամում,- բռնեցեք նրանց ու սպանեցեք, որտեղ որ հանդիպեք, գաղտնաբար թե հայտնապես: Դուք անսահման իրավունք ունեք նրանց վրա: Նա՝ ով գոնե մի անհավատ է սպանում, լիովին վարձատրվում է Աստուծո կողմից. ո՞վ կարող է մերժել այդպիսի մի չնչին գործ՝ այդպիսի մեծ վարձատրությամբ»[1]:

Հրահանգը ուղղված էր Թուրքիայի հայ բնակչության դեմ: Ռազմաճակատի մյուս կողմում գտնվող «անհավատներին» հեշտ չէր գտնել ու սպանել, արժանանալ ջեննեթի հուրիներին: Ծրագրվում էր ահռելի մի սպանդ, որի իրագործմանը երիտթուրքերը տվել էին կրոնական գույն՝ օգտագործելու համար հետամնաց տարրերի կրոնական մոլեռանդությունը, ինչը որ լիովին արդարացրեց իրեն:

Բայց անմիջապես ո՞ւմ ձեռքով էր կատարվելու մեծ ոճիրը: Դրա համար անհրաժեշտ էին փորձառու քրեական հանցագործներ, մարդասպաններ, ավազակներ: Եվ ահա բանտերի դռները բացվում են ու ազատ արձակվում հազարավոր մարդասպաններ ու ավազակներ, որոնք մարդ սպանելու իրենց արհեստը կարճ ժամանակից պիտի սովորեցնեին Թալանի մոլուցքով տարված ամբոխին:

Վայրագությունները նախ սանձազերծվել են Երզնկայի գյուղերում, ապա աստիճանաբար անցել քաղաքը. «Ժանտարմայի հիսնապետ Սուլեյմանը, հայտնի չարագործ Ատիլի հետ կողոպտած ու անասելի չարչարանքներու ենթարկած էին Մեղուցիկի, Մեծ Ագրակի, Տաճրակի ու Երկանի հայությունը: Երկան գյուղեն մեկու մը գը-

[1] **Հ. Մորկընթաու,** *Ամերիկյան դեսպանի հիշատակները, էջ 138:*

լուխը չիկացած թաս անցուցած էին. Կելենցիկ գյուղեն աղջկան մը մազերը այրած ու քիթը չիկացած երկաթ խոթած էին, որպեսզի գյուղի զենքերուն ու պահված մարդկանց տեղը ցույց տան: Նույն Սուլեյմանը հարյուրի չափ ոստիկաններով ու չեթեներով գացած էր Մթննի գյուղը: Նախ գյուղի մեծերը և քահանան կանչած ու դրամ ուզած էր անոնցմե: ... Ժողովուրդեն ոմանց ոտքերուն պայտ զարնել տված, ոմանց եղունգները քաշել տված, մեկ քանիներու գլխուն հալած յուղ լեցուցած ու չիկացած երկաթներով մարմիններն ծակծկել տված էր, իրենցմե՝ գոյություն չունեցող դավադրության մը մասին խոստովանություններ քաղելու համար»[1]:

Աստիճանաբար սարսափը պատում է երզնկացիներին: Միմյանց ետևից բանտարկվում են քաղաքական գործունեության մեջ կասկածվող, Երզնկայի հայերի մտավոր, կրթական կյանքին մասնակցող բոլոր երիտասարդները: Ձերբակալվողն այլևս տուն չի վերադառնում: Առաջնորդարանի, քաղաքի մեծահարուստ հայերի միջամտությունները քմծիծաղով են լսվում: Այդ երիտասարդներին ենթարկել են անլուր տանջանքների՝ մարմնական խոշտանգումների: Կտրել են մի քանիսի ականջները, մյուսների քթերը, քաշել եղունգները, պահանջելով հայտնել թաքցված զենքերի տեղը: Երիտասարդների մեծ մասը ամենևին էլ կապված չի եղել քաղաքական կազմակերպությունների հետ:

Դատարկվել են քաղաքի դպրոցներն ու եկեղեցիները, վերածվել զորանոցների կամ զինվորական վարժարանների:

Վերջապես՝ զինվորականությունը գրավում է նաև հայոց առաջնորդարանը: Սկզբում մի սենյակ է թողնվել առաջնորդի համար, սակայն 1915 թ. մայիսի սկզբին այդ սենյակն էլ վերցվել է, գրավվել գանձարկղը, եկեղեցական բոլոր հարստությունը:

Նույն այդ օրերին, այսինքն՝ մայիսի սկզբներին տեղահանել են մի քանի հայ ընտանիքների՝ Սարգիս Տեր-Ստեփանյանի, Արզումանյանների, Ջայճյանների և այլոց ընտանիքներին: Երզնկայի այս մեծահարուստների աքսորի դեմ ցանկացել են բողոքել քահանաները, որոնք խմբով այցելել են չեյս հաջի Ֆեվզիին, որտեղ եղել է նաև քաղաքի կառավարիչ Մեմդուհը, այսինքն՝ հայերի դեմ սրբազան պատերազմ հրահրող չարագործները: Քաղաքի կառավարիչ Մեմդուհը կարգադրել է խկույն բանտարկել քահանաներին:

Բողոքել են նաև կանայք՝ գրկներին երեխաներ: Գազազած կառավարիչը կարգադրել է նրանց էլ տանել և գցել Եփրատ գետը:

---

[1] **Գ. Այուրմենյան,** *Երզնկա, էջ 272:*

«Անոնց մէջ կուտային Տիլպեր մամայի, Թումանենց Մարանայի, Պալիպեկեցի Նարանի և ուրիշ շատերու անունները»:

Վերևում հիշատակված և այլ տասնյակ մեծահարուստների ընտանիքներն աքսորում են Կամախ, բռնագրավելով նրանց ողջ հարստությունը:

Միամիտ այդ մարդիկ կարծել են, թե իրենց տեղափոխելու են ապահով վայրեր, դրա համար իրենց հետ վերցրել են բավական հարստություն, գրաստների վրա դրել ու տարել: Կամախում նոր միայն հասկանում են, թե ինչ ճակատագիր է սպասում բոլորին: Ահա թե ինչ է պատմում Արևալույս Նորհատյանը (օրիորդ Փաշայան) իր հիշողություններում. «Հասանք Քեմախի կիրճին բերանը. ընդարձակ դաշտի մը մէջ կեցուցին մեզ: Տղամարդիկ բեռները վար առին և սկսան վրանները դարնել: Մենք, հարս ու աղջիկ, մտանք վրաններու մեջ, ոստիկաններու աչքին չերևալու համար: Անկողինները փռեցինք ու անոնց վրա նստանք: Այդ միջոցին դուրսեն հավա՜ր հավա՜ր ձայն մը փրթավ. մայր մը «աղջիկս տարին, զավակս տարին» պոռալով աղջկան մը ետևեն կը վազեր: Ու ահա գնդակ մը գետին տապալեց հեք մայրը, իսկ Թուրքերը աղջիկը առին տարին: Քիչ մը վերջը դուրսեն կրկին ձայներ. կը պոռան, կը կանչեն: Այս անգամ ալ Մոմճյաններու հարսը, Տեր-Ստեփանյանին աղջիկը՝ Բրաբիոնը փախցուցին: Օթելճի Հոփըզի կողմե ոստիկան մը եկած՝ Թաթուլ Խաչատուրյանի աղջիկները՝ Սաթենիկն ու Արշալույսը կը հարցներ: Երկու քույրեր, մեկը մյուսեն գեղեցիկ: Մայրերնին՝ տիկին Խոսրովանույշը աղջիկներուն ձեռքեն բռնեց, մեկ կողմ տարավ ու հարցուց իրենց. «Աղջիկներս, տաճկական հարեմի մեջ անարգ կյանք մը ապրի՞լ կուզեք թե՝ պատվավոր մահ»: Երկուքն ալ անվարան «Մա՜հ, մա՜հ», պատասխանեցին: «Թույն տուր մեզի, մայր,- ըսին անոնք,- մենք կը նախընտրինք կույս մեռնիլ՝ քան հարեմներու մեջ մայր դառնալ»: Մայրերնին գրպանեն ծրար մը հանեց, դողդողալով բաժակի մը մեջ հալեցուց թույնը և աղջիկներուն տվավ, որ խմեն: ... Մայր ու աղջիկներ իրարու գրկի մեջ ինկած կուլան, մահվան կսպասեն: Անցավ մոտ 10 վայրկյան, թույնը թեև խիթեր, կծկումներ կուտար իրենց, բայց թույլ ըլլալուն՝ մահը կուշանար: Մինչ այդ ոստիկան մը եկավ և ուզեց տանիլ աղջիկները, բայց իրենք ընդդիմացան: Ոստիկանը գնաց, որ օգնականներ բերե ու բռնի տանի զիրենք: Երբ ոստիկանը քիչ մը հեռացավ՝ մայրը աղջիկներուն թևերեն բռնելով վազեց դեպի գետը, վերջին անգամ համբուրեց զիրենք ու հանձնեց Եփրատի ալիքներուն: ... Ոստիկանները, ձեռքներին լույս բռնած, վրանե վրան կը

պտտեին և աչքերնուն դպածը կառնեին կը տանեին: ... Լուսաբացին՝ Տեր Մեսրոպ քահանան, ... աղոթքի նստավ, դեռ աղոթքը չվերջացուցած՝ հրեշի նման մեկը սուրը ձեռքին խոյացավ Տեր Հոր վրա, ու մեկ հարվածով գլուխը առջևը ձգեց: Ժողովուրդը այս տեսնելուն պես չգիտցավ ուր փախչիլ: Սկսան վրանները քանդել, ձիերը բեռցնել: Երբ բոլորովին պատրաստ էինք և մեկնումի հրամանի կսպասեինք, հանկարծ ոստիկանները լուր մը տարածեցին, թե քյուրտեր կիրճը բռնած են ու թույլ չեն տար որ ժողովուրդը կիրճեն անցնի, մինչև որ 500 ոսկի չտրվի իրենց: ... Այդ միջոցին թուրք մը ուզեց Գուլյումճյանի ձեռքեն ձին առնել, Գուլյումճյան ընդդիմացավ. երբ տեսավ, որ ձին ձեռքեն պետի առնեն, եղբայրը օգնության կանչեց. թուրքը բարկացավ, երկուքին ալ մեկ մեկ գնդակ արձակեց ու տապալեց գետին: ... Մայրը մազերը կը փետտեր, երեխաներուն ճիչը, հարսներուն լացը ու կոծը երկինք կը հասնեին»:

«Մեկ ալ հանկարծ ազդանշանի մը վրա գնդակներու տեղատարափ մըն էր, որ սկսավ մեր վրա: Ամեն կողմե գնդակ կը տեղար. ոչ մեկը պարապի կանցներ. քառորդ ժամվան մեջ դաշտը դիակներով լեցվեցավ: Փախչող փախչողի: Կաղաղակեն, կճչան ու կը վազեն. բայց ո՞ւր, իրենք ալ չեն գիտեր: Շատերը գացին գետը ինկան: ... Գետը հեռու չէր մեր գտնված տեղեն... Ախ, որքան դժվար է անձնասպանությունը: Երկու քույրերս իրարու վիզ փաթթվեցանք ու լացինք, հետո օր. Սրբուհիին ձեռքերը համբուրեցինք, մորս ալ ձեռքերն ու երեսները արցունքով թրջելե ետք, բարձր տեղ մը ելանք ու «մնաք բարո՛վ» պոռալով նետվեցանք ջուրը: «Զագուկներս ես ալ կուգամ» ըսելով մայրս ալ ջուրը նետվեցավ: Անկե հետո մորեղբայրս, մեծ մորեղբորս տղան, որ տասը տարեկան գեղեցիկ մանչուկ մըն էր, իրարու ետև ինկան գետը:... Մեկ ալ տեսա, որ ձեռք մը մազերես բռնեց ու գիս իր կողմը քաշեց. դարձա տեսա, որ մայրս էր. գետին մեջտեղը՝ բարակ ծառի մը ճյուղերը բռնած՝ իր ձագուկներուն կըսպասե, որպեսզի ազատե: ... Ո՞ւր են քույրերդ,- հարցուց ինծի մայրս: «Անիկա Նորայրին հետ կորսվեցավ»,- ըսի»:

Ջրից դուրս գալուց հետո մեկնել են Երզնկա:

Մի ոստիկան նկատել է սրանց ու տարել բանտարկել է Թիրյաքյանների տանը: Առավոտյան այնտեղից դուրս են բերել ու ոստիկանների հսկողությամբ նորից տարել նույն ճամփով. «Կեսօրին հասանք հոն, ուր նախորդ օրվա ջարդն ու կոտորածը տեղի ունեցած էին: Ախ, Աստված իմ, ինչ տեսարան, դիակ դիակի վրա դիզված, ոմանք դեռ չունչերնին վրան, կը տքան: Երեխաներ «մամա», «մամա» կան-

չելով իրենց մայրերը կը փնտրեն: Կառավարութենեն մասնավոր պաշտոնյաներ եկած էին, որոնք մեռելները մերկացնեին և դիակները սայլերու վրա բեռցնելով կը տանեին գետը թափելու համար: Մեզ բերող ոստիկանները ինկան այդ դիակներու մեջ, կողոպուտի համար: Մոտ երկու ժամ սպասցուցին մեզ մինչև որ գրպաններն ոսկի ժամացույցներով, աղամանդե մատանիներով ու կարմիր ոսկիներով լեցուցին. անկե վերջը եկան մեզ ճամփա հանեցին: Բավական ոլոր մոլոր ճամփաներե անցնելե վերջ, երեկոյան հասանք «Օրթա խան» ըսված տեղը...»[1]:

Հասնում են Քեմախի կամուրջի մոտ, որտեղ գաղթականներին հանձնում են տեղական ոստիկանության, երզնկացի ոստիկանները, իրենց ավարի հետ վերադառնում են: Շարունակվում է նույն կողոպուտն ու սպանությունը: Այստեղ կրկին խուզարկել են բոլորին, ոմանց գետը նետել, ուրիշների դաշունահարել «Կամուրջին երկու կողմերը մասնավոր քննիչներ կեցած էին, որոնք երեխաները կը քննեին ու մանչերը զատելով ջուրը կը նետեին: ... Ծերեր, հիվանդներ կամ հոգնածներ, երբ կարավանեն ետ մնային, ոստիկաններու կամ ճամփեն անցնող Թուրքերու կողմե կսպանվեին. օրերով անոթի ծարավ, կիզիչ արևին տակ մնալով բոլորովին կը հյուծվեին ու կանչընչանային: Քանի մը ժամ ետքը չորս ձիավորներ Այճյան Զարուհին, Խոսրովանույշ Տեր-Անդրեասյանը, Գեղեցիկ Գաղանճյանը և ուրիշ օրիորդ մը իրենց ձիերու գավակը առին ու տարին. ... Օր մը քյուրտ մը կացինը ձեռքին մեր վրա հարձակվեցավ ու «դրամ տվեք, եթե ոչ ձեր գլուխները կը թռցնեմ» գոռաց: Մորս աչքով ըրի, որ քալե: Մայրս, օրիորդ Սրբուհին չալակը, անցավ: Ես մնացի քյուրտի ձեռքը. ինչքան լացի, աղաչեցի, օգուտ չըրավ, տեսա որ դիս բռնած չէ, ազատ եմ, ձեռքեն ազատելու համար ինքզինքս նետեցի ձորն ի վար. բավական գլորվեցա, բարեբախտաբար ճամփան քարի մը զարնվեցա ու կեցա: Գլուխս ճեղքված, մարմինս ալ քանի մը տեղե վիրավորված էր: Երբ մյուս կողմեն ճամբան կելլեի, հոն Քաջյան Նչան էֆենտիի մարմինը տեսա. նոր սպանված էր: Վերջապես գացի հասա մերոնց ու ճամփան չարունակեցինք»:

12 օրից հասել են Ակն: Այնտեղ դեռ հայերը չէին տարագրվել: Ապաստան են գտնում մի հայի տանը, որտեղ էլ մի գիշեր մեռել է հեղափոխական օրիորդ Սրբուհին: Կանայք բահերով փորել են պարտեզը, թաղել: Կառավարությունը հրաման է հանել, թե ով որ կարավանից մարդ թաքցնի իր տան առաջ կախվելու է: Մի քանի

---

[1] **Գ. Այուրմենյան,** *Երզնկա, էջ 354-358:*

չաբաթից աքսորել են նաև ակնցիներին: Տղամարդ արդեն չի եղել այնտեղ: Մի քանի ընտանիք իսլամությունն ընդունելով մնում են: Տղամարդկանց այդ իրավունքը չի տրվել:

Ակնա գայմագամը առաջարկել է օրիորդ Արևալույսին թրքություն ընդունել և դառնալ իր որդու օրինավոր կինը, սակայն Նորհատյանը մերժել է, շարունակել Գողգոթան: «... Երբ լերան գլուխը հասանք, ողբերգությունը սկսավ, հոն տղամարդիկը կացինով կըսպանեին ու ձորն ի վար կը գլորեին: Կարգը եկավ մեր Մատթեոսին, մորեղբորս կնոջ եղբորը: Մատթեոսը թևին տակ դրամ պահած էր, խեղճ տղան այդ նեղ վայրկյանին գիս մոտը կանչեց ու գաղտուկ մը այդ դրամը ձեռքս դրավ ու գնաց: Տղուն կոչիկները ոտքեն հանեցին և վզակոթին կացինի հարված մը տալով ձորն ի վար գլտորեցին: ... Այդ գիշեր առաջին գիշերն էր, որ ակնցիները սուգի մեջ կը մտնեին, թալան, առևանգում, սպանություն մինչև լույս տևեցին: Հետևյալ օրը չարունակեցինք մեր ճամփան, բայց ո՞ր, մինչև ե՞րբ կը հարցնեինք ոստիկաններուն. «մինչև որ վերջերնիդ գա», լրբորեն կը պատասխանեին մեզի»[1]*:*

Ու այսպես, մինչև արաբական տոթակեզ անապատները, ամեն քայլափոխում ահ ու սարսափ, մինչև որ ավստրիացի երկաթուղային մի պաշտոնյա է հանդիպում, ազատում ու ամուսնանում նրա հետ:

1915 թ. մայիսի 25-ը մնում է Երզնկայի պատմության ամենամռայլ ու սև էջը: Այդ օրը, չորեքշաբթի, սուգ ու շիվանով, Երզնկայի ու շրջակայքի բոլոր հայերը հավաքվում են փողոցներում, ու ժանդարմների խիստ հսկողության տակ ճանապարհ ընկնում այն ուղիով, որ ընթացել էր առաջին կարավանը, իսկ այդ կարավանի հետ պատահածի մասին արդեն լսել էր քաղաքը, լսել ու սարսափել:

Սրանք արդեն իմացել են, որ անիմաստ է հետները իրեր, ապրանքներ տանելը: Երբ որոշակի է դարձել աքսորի լուրը, հայերը թափվել են Երզնկայի հրապարակները, որպեսզի իրենց հարստության գոնե մի մասը վաճառեն ու փող տանեն իրենց հետ, սակայն թուրքերը չեն ցանկացել գնել: Միևնույնն է, այդ ամբողջ հարստությունը մնալու էր իրենց, քաղաքում, ճանապարհին, թե նրանց սպանությունից հետո: Ոմանք էլ իրենց թանկագին իրերը թողել են ծանոթ, հարևան թուրքերի մոտ, որպեսզի երբ վերադառնան, ետ ստանան: Դեռ հույս են ունեցել, թե պիտի վերադառնան: Մի քանիսը միայն կով կամ այծ են վերցրել իրենց հետ, որպեսզի երեխաներին ճանապարհին սնուցանեն կաթով, միամիտ մարդիկ, կարծեք Երզնկայի ավանդական ուխտագնացության էին գնում:

---

[1] **Գ. Այուրմենյան,** *Երզնկա, էջ 360-362:*

Գ. Սյուրմենյանի տիկինը, Աստղիկ Սյուրմենյանը, որ եղել է այս նոր կարավանի մեջ, հետևյալ ձևով է պատմում պատահած դեպքերը. «Հարսներ, աղջիկներ իրենց օժիտները, լավ լավ հագուստները սավանի մեջ առնելով վերմակ ու բարձ չինեցին, դրամ, զարդ՝ հագուստներու զանազան մասերու մեջ կարեցին: Ոմանք ոսկիներն իրենց կոշիկներու տակը, ձեռքներին բռնած գավազանին մեջ և կամ ջրամանին հատակը տեղավորեցին ու վերջապես մանկամարդ կիներ ու նորահաս աղջիկներ նաև թույնի պատրաստություն տեսան, վտանգի մը պահուն մահը գերադասելու համար»:

Ու ահա մայիսի 27-ին (հունիսի 9-ին) չորեքշաբթի օր, Երզնկայի ոստիկանները հանկարծակի լցվել են հայկական թաղերը և մտնելով տները, գավազանի հարվածների տակ դուրս են հանել ժողովրդին: Այդ բանը այնքան արագ, այնքան դաժանորեն է կատարվել, որ շատերը հացը թոնիրի կողին կպցրած թողել հեռացել են իրենց պապենական տանից, աճապարելու հետևանքով շատ անհրաժեշտ իրեր չեն կարողացել վերցնել իրենց հետ, ընդհակառակը վերցրել են անկարևոր բաներ:

Տներից բռնի դուրս քշված ժողովրդին հավաքել են եկեղեցու հրապարակը, այնտեղից ճամփա հանել դեպի Կամախ: Հետ մնացողներին էլ հաջորդ օրն են նույն ձևով հանել:

Առաջին օրվա կարավանը, երբ հասել է Թիլչայ, այնտեղ կանգնեցրել են, նախօրոք որոշված ծրագրով սարերից խուժել են զինված քրդերն ու թուրքերը և սկսել են թալանն ու ջարդը՝ հենց կարավանին ուղեկցող ոստիկանների աչքի առաջ ու նրանց մասնակցությամբ: Երզնկացիները փորձել են դիմադրել, սակայն երիտասարդները արդեն վերցված էին զինվորական ծառայության: Կարավանի մեջ եղել են կանայք, երեխաներ և ծերունիներ: Բայց պայքարը մղվել է կյանքի համար, երեխաների կյանքը փրկելու համար: Եվ, ծերունիները իրենց մոտ պահված սառը զենքերով, մահակներով հարձակվել են ավազակների վրա, սպանել մի քանի ոստիկանների ու քուրդ ավազակների:

Թուրքերը դիմում են նենգ միջոցի: Հայտնում են, թե արգելվում է ջարդը, թե 4-րդ բանակի հրամանատարությունից խիստ հրահանգ է եկել այլևս ոչ ոքի չսպանել, թե պատահածն էլ եղել է թյուրիմացություն: Հայտնում են նաև, թե Երզնկայից հատուկ մի գումարտակ զորք է ուղարկվել կարգը պահպանելու համար:

Մի պահ հավատում է դժբախտ ժողովուրդը, հավատում, թե իրենց նորից տուն են ուղարկելու, վերադարձնելու են իրենցից խլ-

ված ապրանքները: Նրանք բռնում են վերադարձի ճանապարհը: Ու երբ իսկապես տեսնում են Երզնկայից եկող զորքին, փառք են տալիս աստծուն, խաչակնքում են, հանգստանում:

Բայց պարզվում է, որ զորքն ուղարկվել է որպես օժանդակ ուժ՝ ջարդը չարունակելու համար: Թե ինչ է կատարվել դրանից հետո՝ անհնար է նկարագրել:

Մի քանի հազար անմեղ կանանց ու երեխաների, ամենատարեց ծերունիներին անգամ Թիլչայում սպանելուց հետո, կարավանը շարունակել է իր ճամփան դեպի Կամախ: Այդտեղ՝ Քեմախ բողազի մոտ կանգնեցրել են թշվառներին՝ Եփրատի ամենից նեղ ու ամենից խոր տեղում, կամրջի մոտ:

Գաղթականներին դարձրել են վարժական թիրախ՝ Քուչուկ զարիթ (կրտսեր հրամկազմ) դպրոցի ուսանողների համար....

«Հայ կանանց ու երեխաներին Քեմախ բողազիի մոտ Եփրատի ափին չարում էին 50, 100, 200 մետրի վրա,- պատմել է ականատեսներից մեկը,- ու կրակում էին: Մինչ որ կանայք գլխի էին ընկնում և փորձում էին փախչել, մի քանի տասնյակ գաղթական արյունաթաթախ, կիսամեռ գլորվում էին Եփրատի մեջ»:

Հաջորդ օրը կարավանը չարունակել է ճանապարհը: Երեկոները նույն տեսարանը: «Աջեն, ձախեն հավարի, օգնության ձայներ անպակաս էին: Այդ գիշեր առևանգումի, բռնաբարություններու բազմաթիվ դեպքեր տեղի ունեցան: Առավոտ լուսաբացին բոլորս ոտքի վրա էինք, ... երբ հանկարծ Քեմախի կիրճեն քյուրտերը ամպի նման սկսան գալ մեր կողմը... իրար կփաթթվեինք, իրարմե օգնություն կուզեինք: ... Որսորդե հալածված եղնիկներու նման խումբերու բաժնրված, մեյ մը վեր, մեյ մը վար կվազեինք, բայց ո՞ւր: Քանի մը վայրկյան վերջ դահիճներուն ճանկն էինք: Զարկին, սպանեցին, թալանեցին մեզ անխնա»[1]:

Դիակներին թողած թալանի վայրում, ողջ մնացածներին հավաքել են, չարունակել ճամփան, միշտ հավատացնելով, թե այլևս ջարդ չի լինելու, թե նրանց տանելու են Խարբերդ, որտեղ մնալու են մինչև պատերազմի վերջը:

«Հոգնած ու ջարդված անցանք մեր սիրելիներու թարմ դիակներու մեջեն: ... Ամբողջ օրը քալեցինք այրող արևի տակ, մեզի համար անսովոր պայմաններու մեջ, անոթի ու ծարավ: Երեկոյան ուշ ատեն հասանք խանի մը մոտերը. գիշերը կրկին հրաձգություն, կրկին առևանգում, թալան: Ատկե վերջը արդեն հերթական ու սովորական

[1] **Գ. Այուրմենյան,** *Երզնկա, էջ 352:*

եղան նման դեպքերը: Կորսնցուցինք ամեն բան... ճամփան Թուրք ու քուրդ գյուղացիներ, նույնիսկ կին ու երեխա՝ ձեռքերնին երկաթի կտոր մը, փայտ մը բռնած, կհարձակեին ասոր անոր վրա ու դրամ կպահանջեին: Անգամ մը Թուրք գյուղացի մը, կացինը ձեռքը հարձակեցավ հորս վրա, փարա՜ փարա՜ գոռալով. ես վախես ինչ ընելս չգիտցա. լավ էր, մայրս առաջ նետվեցավ ու այդ հրեշին բուռը ափ մը դրամ լեցուց՝ ազատեց հայրս: Առտուները կանուխ ճամփա կելլեինք և իրիկունները կանգ կառնեինք. ամբողջ օրը կքալեինք. շատ անգամ ալ ոստիկաններու հարվածներուն տակ կվազեինք, բայց կտրած ճամփանիս սովորական ատենվան 2–3 ժամվան ճամփայեն անդին չէր անցներ: Որովհետև երեխայի նման տկարացած էինք, ոտքերնիս ավելի ետ կերթար՝ քան առաջ: ... Կարավանեն ետ մնացողը կթալանվեր ու վերջն ալ կսպանվեր. և կամ, եթե բանի պետք կուգար, կառևանգվեր Թուրքերու ու քյուրդերու կողմե: ... Յորեկը Թուրքերուն ու քյուրդերուն պակաս Թողածը ոստիկանները գիշերը իրենք կլրացնեին ամեն կերպով»[1]:

Մենք նկարագրեցինք աքսորի ճամփաներին երզնկացիների կրած սպանդից դրվագներ: Սակայն Թուրքիան բնաջնջման տարբեր եղանակներ էր ծրագրել և կիրառեց հետևողականորեն: Դրանցից մեկն էր դեռևս բուն աքսորից ու ջարդից առաջ հայ տղամարդկանց ամելիե Թաբուրների, այսինքն՝ ճանապարհների վրա աշխատող խմբերի մեջ ընդգրկելով նրանց չարաչար աշխատեցնելուց հետո զանգվածային սպանությունը:

Ամենասարսափելին Սանսա ձորում կատարված սպանդն էր, որ իրագործել է Երզնկայի ժանդարմերիայի հրամանատարը: Նա այդ վայրում հավաքել է հազարից ավելի տղամարդկանց, նրանց հանձնել ոճրագործ չեթեների մի խմբակի: Չեթեները ամենավայրագ պայմաններում աշխատեցրել են հայերին, մինչև որ դարձել են անուժ ու անպետք աշխատանքի համար, ապա համատարած ջարդի են ենթարկել:

Այս մեթոդով կատարված երկրորդ սպանդը եղել է ավելի ահռելի: Հայտնի է, որ պատերազմի հենց սկզբից երկու հազար հայ աշխատավորների հավաքել էին Դարաղխանայում և աշխատեցրել զինվորական չորեր, կոշիկներ պատրաստելու գործում:

Մեծ եղեռնի ամբողջ տևողության ընթացքում նրանք դեռ ողջ էին: Սպանել, աքսորվել էին նրանց բոլոր հարազատները, իսկ իրենք այդ բոլորի մասին կցկտուր տեղեկություններ էին միայն լսել:

---

[1] **Գ. Այուրմենյան,** *Երզնկա, էջ 353:*

Բայց ահա, երբ Կովկասյան ռազմաճակատում ստեղծվում է տագնապալի իրավիճակ Թուրքական բանակի համար, ռուսական զորքը հասնում է Կարին և սկսվում է նաև Թուրքերի գաղթը: Էնվերի կարգադրությամբ սպանում են նաև այդ 2000 հայ արհեստավորներին, նրանց գնդակահարելով Զենբելեկ քեոփրու կոչվող վայրում:

Զուտ պատահականությամբ, ինչպես ասվում է՝ հրաշքով, այդ երկու հազար հայերից ազատվել է միայն մեկը՝ այս տողերը գրողի հայրը, երզնկացի Խաչիկ Տեր-Ստեփանյանը, որը եղել է Մամախաթունի միակ դերձակը պատերազմի նախօրյակին և Դաբաղխանայում էլ աշխատել է որպես դերձակ: Ահա թե ինչպես է նկարագրել նա այդ սպանդը, որ մենք տպագրել ենք մեր «Մղձավանջային օրեր» գրքում:

«Թևակոխեցինք 1916 թիվը: Ամայի քաղաքներից ու գյուղերից այլևս ոչ մի լուր չէր լսվում: Կյանքը մեռել էր ամենուր:

Հունվարի կեսերին հանկարծ լուր ստացվեց, թե Կ. Պոլսից ժամանել է Էնվեր փաշան: ... Երեկոյան դեմ ամբողջ զորանոցով մեկ հնչեց հավաքի շեփորը: Մահվան դողը պատեց մեզ: ... Հավաքվեցինք զորանոցի ընդարձակ հրապարակում: Շարվեցինք ութ-ութ: Մեր առջև զգաստ դրությամբ կանգնած էր մաքուր հագնված, փափախը գլխին, գրավիչ արտաքինով մի զինվորական: ... Նա գննող հայացք գցեց մեզ վրա, ապա դառնալով իր մոտ կանգնած զինվորականին, հանգիստ ասաց.- այս մարդկանց մեջ այլազգիներ կա՞ն: - Այո, փաշա, բազմաթիվ հայեր կան,- պատասխանեց մարդը...

Դարպասների մոտ սպասում էր ավտոմեքենան: Էնվերն իր ընկերների հետ նստեց ու հեռացավ: ... Հաջորդ օրը, աշխատանքից անմիջապես հետո, դարձյալ հնչեց հավաքի մահագույժ շեփորը: Դարձյալ շարվեցինք նախորդ օրվա պես: Հրամանատարը բարձր ձայնով ազդարարեց: Բոլոր հայերը հինգ քայլ առաջ: Հրամանատարը կարդաց մի շարք անուններ, մեծ մասամբ քաղաքի երիտասարդների անուններ: Մոտ 150 հոգու ջոկելուց հետո, մեզ ցրեցին, իսկ նրանց զույգ զույգ շարելով, դուրս հանեցին պարիսպներից: ... Մի շաբաթից 150 հոգու էլ ջոկեցին ու տարան: Երեք չորս շաբաթից հասավ աղետալի լուրը, թե բոլորին Զենբելեկ քեոփրու կոչվող կամուրջի մոտ սպանել են: Ճի՞շտ էր այդ, թե սուտ՝ չէինք կարող ստուգել: Դեռ իմ անունը չէին կարդում, բայց սպանդանոցում մսագործի դանակին սպասող ոչխարի օրհասական դրությունն էինք ապրում: Վերջապես պետք է գար սարսափելի վայրկյանը: Ու եկավ... Լավ հիշում եմ, շաբաթ երեկո էր, ամբողջ զորանոցում մնացել էր ընդամենը 200 հայ:

Դրանց մեջ էի նաև ես: Երբ վերջին անգամ հայտարարեցին, թե բոլոր հայերը պետք է հավաքվեն հրապարակում, մենք 200 հոգով, գլխիկոր, մոտեցանք հրապարակի կենտրոնում բարձրացող բարդիներին, որոնք ծածկվել էին ձյան սպիտակ չղարշով: ... Մեզ զույգ զույգ շարեցին... կարդացին մեր անունները, յուրաքանչյուրիս տվին մեկ մեկ բոքոն հաց և պաշտոնապես հայտնեցին, որ տանելու են ուրիշ տեղ: Բացվեց դարպասի դուռը, ներս մտան 50-ից ավելի սպառազեն չեթեներ: Մենք նրանց մասին լսել էինք... Երզնկայի ամբողջ հայերի ջարդն այդ մարդիկ էին իրականացրել, որոնք քրեական հանցագործներ էին, մարդասպաններ և բանտերից ազատվել էին այդ տխուր պաշտոնը կատարելու համար: ... Չեթեների մի մասը շարվեց մեր աջ կողմը, մյուս մասը՝ ձախ, ապա հրաման տրվեց շարժվելու: Բացվեցին դարպասների դռները: Մենք վերջին անգամ նայեցինք մեր անհյուրընկալ զորանոցի շենքերին և գլխիկոր քալեցինք առաջ: Արդեն մութ էր: Մեզ տարան քաղաքի կենտրոնում գտնվող մի շենք: ... Այնտեղ զույգ զույգ կապեցին մեր ձեռքերը, ապա հրամայեցին քայլել քաղաքից դուրս: Ինձ ծանոթ էին բոլոր ճանապարհները: Այո, գնում էինք դեպի Զենբելեկ քեռփրու, այն կամուրջը, որի մոտ ինչպես լսել էինք, սպանել էին մեր բոլոր ընկերներին»:

Այնուհետև Թարգի Խաչիկը պատմում է, թե ինչպես տարել են իրենց այդ չարագուշակ վայրը, շարել հատկապես նրանց համար նոր փորված փոսի առաջ, հանել են նրանց վրայի շորերը: Ապա լսել են մի բառ՝ աթեշ... (կրակ):

«Լսեցի՞նք» մենք այդ բառը, լսեցի՞նք համազարկի ձայնը, որ հաջորդեց այդ հրամանին: Չեմ հիշում: Միայն գիտեմ, որ ինկա փոսը: Դրանից հետո դահիճները դաշույնի հարվածներ հասցրին բոլորիս»:

Հրաշքո՞վ է ազատվել հայրս: Ոչ, մեր օրերում հրաշքներ չեն լինում: Ազատվել է մահից պարզապես այն պատահականությամբ, որ հասակով բոլորից կարճը լինելով՝ գնդակներն անցել են գլխի վրայից, իսկ սվինահարությունից ստացած վերքերը ծանր չեն եղել:

Փաստն այն է, որ Զեմբելեկ քեռփրուն եղել է 2000 հայ ազնիվ աշխատավորների համայնական գերեզմանը:

Գ. Սյուրմենյանը, լինելով Թուրքական բանակի սպա, սկզբում վայելել է որոշ արտոնություն: Աքսորից անմիջապես հետո Կարնո զորամասից հատուկ թույլտվությամբ մեկնել է Երզնկա, ընտանիքին տեղափոխելու ու այդ առիթով էլ, մի թուրք զինվոր օգնականի հետ անցել է աքսորի այն ամբողջ ճանապարհով, որտեղով անցել էին ընտանիքի անդամները:

Իր «Երզնկա» գրքում նա մոտ հարյուր էջ հատկացրել է ճանապարհորդական այդ տպավորություններին: Հիշել է չոր փաստերը, առանց զեղումների, ավելորդ դատողությունների, դատաստանի: Դրանով էլ նրա այդ տպավորությունները ստանում են վավերագրական արժեք և ամբողջ մերկությամբ ցուցադրում են Երզնկայի մեծ ողբերգությունը, ընթերցողին անցկացնելով Դանթեական դժոխքի ահասարսուռ պարունակներով:

Դեպի Երզնկա իր ճանապարհին Սյուրմենյանը նախ անցել է Դերջանով, ականատես եղել կամ լսել Դերջանի գյուղերից մի քանիսի վերջնական բնաջնջման պատկերներին:

«Մոտեցանք Ղարխուն գյուղին,- գրում է նա,- գյուղին գլուխը քանի մը վրաններ կային... Մտանք հրամանատարի վրանը... Գիշերը ընթրիքեն հետո մեր հյուրընկալը սկսավ խոսիլ օրվա նորություններու, հայկական ջարդերու մասին: Ան պատմեց քանի մը օր առաջ մոտակա ձորի մը մեջ տեղի ունեցած հայկական մեծ ջարդի մը մասին: Պատմեց թե երկու օր առաջ Երզնկայի կառավարիչ Մեմդուհ այդտեղեն անցնելու ատեն, ջարդեն ազատած ու արտերու մեջ պահ տված կիներն ու երեխաները հավաքել տալով ջուրը թափել տված է»:

Սյուրմենյանը ամենուր ներկայանալով որպես թուրք՝ ոչ ոք չի կասկածել, որ նա հայ է, դրա համար ամեն ինչ պատմել են հաճույքով և ինքն էլ մնացել է անվնաս՝ իր օգնական Շապանի հետ:

Ճանապարհին հանդիպել են քրդերի, որոնք ասել են թե Երզնկայի կառավարիչի հրամանով են եկել այդտեղ հայեր կոտորելու համար, և անհամբեր սպասում են, որ իմանան թե ճանապարհներին հայկական կարավաններ կամ խմբեր կա՞ն: «Շուտ կուզեին իմանալ, թե Կարնո քաղաքի հայերը ե՞րբ պիտի հասնեին իրենց քով»:

Սյուրմենյանն ու նրա օգնականը Հայդար խանի լճի մոտ նկատում են մի քանի թուրք տղաների, որոնք ասում են. «Էֆենդի, էֆենդի, այնտեղ երկու հայեր կան, մենք չկրցանք սպանել զիրենք, դուք եկեք սպանեցեք»:

Ինչպես երևում է այս փաստից, չեյխուլիսլամի հայտարարած սրբազան պատերազմի ոգին համակել էր զառամյալ ծերունուց մինչև փոքրահասակ երեխան:

«Երբ Քեմախու կիրճին բերանը հասանք, գետի անկյուն կազմած մասերուն վրա հարյուրավոր դիակներ տեսանք՝ ուռած, սևցած ու անճանաչելի վիճակի մատնված»:

Կամախում նրանց հյուրասիրել են թուրք կրոնավորներ, որոնք ոգևորությամբ պատմել են, թե ինչպես Հալեթ անուն մի թուրք երիտասարդ սպանել է բազմաթիվ հայերի, թե թուրք երեխաներն անգամ, կատարելով Ղուրանի պատգամը, մասնակցել են հայերի ջարդերին. «գետը նետված հայ տղաներեն ազատված ու ցամաք ելածները բռնելով ու զանոնք կրկին ջուրը գցելով, մինչև որ խեղդվեին»:

«Հանկարծ դուրսեն «փաթ» ձայն մը լսվեցավ: Այդ ի՞նչ ձայն էր, հարցուցի իրենց՝ գլուխս վեր առնելով: – Ոչինչ, էֆենդի, կյավուր կնետեն ջուրը» պատասխանեց չեյխերեն մեկը որպես անկարևոր դեպք մը: – Օրական հարյուրներով կթափեն գետը, վրա տվավ երկրորդը, տրամադրությունս լավացնելու համար՝ ինձ ուրախալի լուր մը հաղորդած ըլլալու գոհունակությամբ»:

Կես գիշերին ճանապարհ են ընկնում դեպի Ակն: Լուսաբացին հանդիպում են մի թուրք երիտասարդի: Հարցնում են, թե հայ գաղթականներ տեսե՞լ է մոտակայքում: Տղան պատասխանել է. «քիչ մը վարը կամուրջ մը կա. տեղահանվածները կամուրջեն անցնելու ատեն՝ ժանդարմները վիզերնին կկտրեին, ջուրը կձգեին: Ասոր վրա անոնք ալ վախնալով դաշտին մեջ ցրվեցան»:

Կամուրջի երկու կողմերու ձողերուն մեկ մասը կոտրված էր ու կամուրջը արյունով ծեփված, հոն՝ ուր հայեր սպանված ու ջուրը նետված էին: Կես օրվան ատենները ջրաղացի մը քովեն կանցնեինք. քառասուն-հիսունի չափ մարդիկ հոս ու հոն փռված էին: Ես ու Շապան ձայն տվինք իրենց, պոռացինք, բայց ոչ ոք գլուխը բարձրացուց: Բոլորն ալ անոթութենե սովամահ եղած էին: Զառիվեր մը կբարձրանայինք. ճամփուն վրա տարիքոտ թուրքի մը հանդիպեցանք, որ փոքր հայ աղջնակ մը ձեռքեն բռնած կտաներ: ... Ձիեն վար իջա ու սկսա աղջիկը հարցափորձել. «Բագարիճցի ենք, ըսավ, հայրս գյուղին մեջ սպանեցին, մայրս ալ ճամփան կորսնցուցի. հիմա այս մարդուն հետ կերթամ, որ ինծի հաց տա՝ ուտեմ, քանի օր է, որ բերանս բան դրած չեմ: ...12–13 տարեկան հայ աղջնակ մը, 50–55 տարեկան թուրքի մը ձեռքը...»:

Կամ՝ «Կեսօրեն հետո մեծկակ առուի մը մեջեն անցանք: Ջուրին երկու եզերքները դիակներով լեցված էին: Մեջերնին դեռ ողջեր ալ կային, ի միջի այլոց կնոջ մը դիակը տեսա, իր չորս զավակներով շրջապատված: Անոնցմե երեքը անշնչացած էին, չորրորդը մորը կուրծքի վրա ինկած, մահամերձ վիճակի մեջ էր: Ջուրին մոտերը քանի մը կիսավեր շենքեր կային, անոնք ալ սպանվածներով լիքն էին»:

Մի ուրիշ պատկեր՝ «Ճամփուն ճիշտ եզերքը նորածինի մը լացի ձայնը լսեցինք: Շապան ձիեն վար իջավ ու գրկեց զայն: Ան հազիվ երկու ամսու կըլլար, բերանը բոլորովին չորցած էր: Այդ միջոցին քանի մը կաթիլ անձրև ինկավ իր շրթունքներու վրա, լեզուն դուրս հանած՝ խեղճ մանկիկը կուզեր օգտվիլ այդ խոնավութենեն»:

*Գ. Սյուրմենյանի վկայությունները թեև կարելի է հաստատել հայ և օտար բազմաթիվ ականատեսների ցուցումներով, սակայն բավարարվենք միայն ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուի մեկ վկայությամբ: Նա գրում է, թե Եփրատի ոլորաններից մեկում՝ Երզնկայի մոտ, «սպանված հայերու հազարավոր դիակներ անանկ թումբ մը ձևացուցած էին, որ Եփրատը հարյուր յարդի չափ (մոտ 9 կմ – **Գ. Ս.**) տեղ իր ընթացքը փոխած էր»[1]: Այնուհետև ներկայացնելով այլ սահմռկեցուցիչ իրողություններ, Մորգենթաուն բացատրում է, որ դա արվում է բանից անտեղյակ արևմտյան ընթերցողներին ճշմարտությունը ներկայացնելու համար. «Այս տեսակ զարհուրելի դեպքեր պատմելով՝ միակ նպատակս այն է, որ առանց մանրամասնություններ լսելու, անգլիախոս հասարակությունը չկրնար ճշգրտորեն հասկանալ, թե ինչ է այն ազգը, զոր մենք թուրք կը կոչենք»[2]:*

3. ԴԵՐՋԱՆԻ ՍՊԱՆԴԸ

Մինչև այստեղ ես նկարագրեցի հիմնականում Երզնկայի կոտորածը, թռուցիկ մի քանի ակնարկ գցելով նաև հայաբնակ գյուղերի վրա:

Երզնկայի ամենից մոտ գտնվող և տնտեսական, մտավոր կյանքով նրա հետ կապված Դերջանը դուրս թողնել այս աշխատությունից ճիշտ պիտի չլիներ: Ուստի գեթ ընդհանուր գծերով խոսենք նաև Դերջանի կործանման մասին, մի հայաբնակ գավառի, որը մեր մատենագիրների մոտ հիշատակվում է դեռևս 5-րդ դարից և տվել է մտավորական, քաղաքական գործիչներ, եղել է մշակութային կենտրոն:

19-րդ դարի վերջին Դերջանի մասին տպագրված մի հոդվածից իմանում ենք, որ գավառն ունեցել է 30-ի չափ հայաբնակ գյուղեր, նաև բազմաթիվ այլ գյուղեր, որոնցում նույնպես ապրել են հայեր՝ քրդերի ու թուրքերի հետ միասին:

Հայկական գյուղերից նշանավորներն են՝ Բագառիճը, Կոթերը, Փիրիզը, Բուլքը, Դվնիկը, Մանցը, Հողեքը, Ծաղկարին, Խումլարը, Հի-

---

[1] **Հ. Մորգենթաու,** *Ամերիկյան դեսպանի հիշատակները, էջ 264:*

[2] *Նույն տեղում, էջ 266-267:*

բանին և այլն: Սրանցից Բաղառիճը ունեցել է 200 տուն հայ, Փիրիզը, Կոթերը և Բուլքը՝ մոտավորապես 100–120-ական տուն, Դվնիկը՝ 80, գրեթե նույնքան էլ մյուսները: Ամենափոքր հայկական գյուղը՝ Աստոյի գոմն ունեցել է 60 ընտանիք:

Գավառի մանր ու մեծ հայ ընտանիքների թիվը հասել է 1500-ի: Եղել են ընտանիքներ՝ բաղկացած 8–10 չնչից, բայց եղել են ընտանիքներ էլ, որոնք ունեցել են մինչև 35–40 չունչ և բազում եղբայրներով, հարսներով ապրել են նույն հարկի տակ, հնազանդ գերդաստանի ավագին: Եթե ընդունենք, որ յուրաքանչյուր ընտանիք միջին հաշվով ունեցել է տասը չունչ, ապա Դերջանի ամբողջ գավառում կունենանք մոտ 15.000 հայ:

Գյուղերի մեծ մասն ունեցել է դպրոց ու եկեղեցի: Անգամ եթե «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարանի» տվյալները ճիշտ համարենք, թե Դերջանում դարավերջին եղել է 700 տուն հայ, դարձյալ ընդհանուր թիվը մոտենում է 10.000-ի:

Այդ գավառում եղել են գործող և հանգած 5–6 վանքեր, որոնցից են Խլաձորի վանքը, Ծակքարի ս. Դավիթը, Սբրխլը ս. Թորոսը, որը գտնվում է Երզնկայի սահմանին և դրա համար էլ հիշվում է նաև Երզնկայի վանքերի շարքում:

Արդ՝ ինչ ճակատագիր ունեցավ խոր անցյալից իր ազգային ավանդույթներով, լեզվով, մինչև մեր օրերը հասած այս գեղեցիկ գավառի հայության ճակատագիրը:

Նույն ճակատագիրը: Ջարդը տեղի է ունեցել նույն մեթոդներով, ինչ Երզնկայում ու նրա գյուղերում: Այսինքն՝ նախօրոք, դեռևս 1915 թ. սկզբներին բանակային ծառայության մեջ չգտնվող տղամարդկանց հավաքել են և ճանապարհաշինության վրա աշխատեցնելու պատրվակով հանել են գյուղերից և խմբերով հաշվեհարդար տեսել մոտակա ձորերում, մի մասին էլ թափել են Եփրատ գետը:

Ունևորներին, ինչպես այդ արել էին Երզնկայում, խաբել են թե նրանց հատուկ գրաստներով, սայլերով, ոստիկանների ուղեկցությամբ տեղափոխելու են ավելի հարավ, մինչև որ պատերազմը ավարտվի ու վերադառնան: Հենց այդ սուտ խոստումն էլ հնարավոր է դարձրել, որ նրանք փոխանակ իրենց հարստությունը թաքցնելու այնպիսի տեղեր, որ կարող պիտի չլինեին գտնել թուրքերը, իրենց հետ են վերցրել արժեքավոր ամեն ինչ՝ ոսկեղեն, զարդեր, թանկագին իրեր, զգեստներ և այլն:

Ոճրագործները, նրանց գյուղերից դուրս բերելուց, ամայի տեղեր տանելուց հետո թալանել են ամբողջ ունեցվածքը, սպանել մարդ-

կանց, գցել ջուրը, գեղեցիկ կանանց ու աղջիկներին վերցնելով իրենց հետ:

Այդպես է պատահել, օրինակ, Մամախաթուն շրջկենտրոնի առևտրական, իմ հորեղբայր Ստեփան Տեր-Ստեփանյանի ընտանիքի հետ: Գյուղաքաղաքի գայմագամը նրա ընտանիքին ջարդերից հետո վեց շաբաթ պահել է, ամեն շաբաթ մի քսակ ոսկի նվեր ստանալու պայմանով, ապա ասել է թե նոր հրահանգ է ստացվել բոլորին կոտորելու վերաբերյալ, բայց ինքը, որ Ստեփան էֆենդիի լավությունը տեսել է, ուզում է ազատել նրա ընտանիքին և ամբողջ ունեցվածքով, երկու սայլերով տեղափոխել շատ ապահով մի վայր: 1915 թ. աշնանը հորեղբորս ընտանիքին տրամադրվել է երկու սայլ, ամեն ինչ տեղավորել են այդ սայլերի վրա: Աղա էմիս՝ Ստեփանն իր կարմիր ձիու վրա, կինը՝ Ազնիվը, երկու աղջիկները՝ Պերճուհին ու Շողակաթը և երկու որդիները՝ Մկրտիչն ու Մարտիրոսը սայլերի վրա, ճանապարհ են ընկել: Բացի կառապան երկու թուրքերից, որոնց հանձնարարվել է հսկել ընտանիքի ապահովությունը, ուղեկցել են նաև երկու ոստիկաններ, կասկած չթողնելով, որ իսկապես ապահով տեղ են հասնելու:

Երբ սայլերը հասնում են Մամախաթունից ոչ հեռու գտնվող Սև ջուր գետի ափը, ամայի մի վայր, կանգնեցնում են սայլերը և ընտանիքին ուղեկցող ոստիկանի տարազով չեթեները, սայլապանների մասնակցությամբ անցել են գործի: Նախ հենց ձիու վրա դաշունահարել ու սպանել են Ստեփանին, քարշ տվել ցած, գցել գետը: Ապա կողոպտել ու միմյանց մեջ են բաժանել ընտանիքի հարստությունը: Պարանը գցելով վզին, խեղդամահ են արել հորեղբորս կնոջը՝ Ազնիվին: Նրան գրկած նետել են ջուրը, սակայն չորի ծանրությունից կասկածել են, թե վրան փող կա: Հանել և գտել են շրջազգեստի փեչերին կարված ոսկիները, կրկին նետել գետը: Սպանել են նաև տղաներին, իսկ երկու գեղեցիկ աղջիկներին՝ 16 տարեկան Պերճուհուն ու 14 տարեկան Շողակաթին բաժին են հանել երկու չեթեներին:

Այս ամբողջ դեպքը պատմել են սայլապան թուրքերը Մամախաթուն վերադառնալուց հետո, դժգոհելով, թե իրենց բաժին քիչ են հանել, ամեն ինչ չեթեներն են վերցրել ու բարձրացել իրենց գյուղերը:

Դերջանի գյուղերի բուն ջարդի պատկերը կարող ենք տալ Դվնիկ հայաբնակ գյուղի ճակատագրով: Ունեցել է հազար հինգ հարյուր չնչից ավելի հայ բնակչություն: Գրեթե բոլորն էլ գոհ են գնացել ահռելի սպանդին, ամբողջ գյուղից ազատվել է ընդամենը 35–40

չունչ, որոնցից մի քանիսը առասպելական թվացող տառապանքներից հետո եկել հասել են Կովկաս, ի վերջո բնակվել Բասարգեչարում:

Դրանց մեջ են եղել մոտ քառասուն շնչից բաղկացած Մարտիրոսյանների ընտանիքի երեխաները: Այդ երեխաներից Հարություն Մարտիրոսյանը, որ այժմ ապրում է Երևանում, Բասարգեչարում ստեղծել էր դարձյալ մեծ ճյուղավորում ունեցող ընտանիք, մեր խնդրանքով գրի է առել իր քույրերի ու եղբայրներից մեկի հուշերն ու տրամադրել է մեզ: Ներկայացնում ենք Դվնիկի ողբերգությունն ըստ այդ գերդաստանի ազատված մարդկանց վկայությունների, ամենից ուշագրավ փաստերը վերցնելով Հարությունի մեծ քրոջ՝ Զարդարի հիշողություններից:

Զարդարն այդ ժամանակ եղել է 7–8 տարեկան և ամեն ինչ հիշում է հարազատորեն: Եվ կարո՞ղ է մարդ չհիշել նման դեպքեր:

1915 թ. փետրվար ամսին հավաքել են Դվնիկի բոլոր տղամարդկանց, իբր թե ճանապարհների վրա աշխատեցնելու համար: Գյուղից հեռացնելուց հետո նրանց մեծ մասին կոտորել են: Մյուսներին հաջողվել է փախչել և վերադառնալ գյուղ: Ծրագրել են գյուղը պաշտպանել զենքով, սակայն Դվնիկի հարուստներից Սահակ աղան և մի քանի այլ մարդիկ դեմ են դուրս եկել, գտել, որ դա կործանարար կլինի գյուղի համար:

Վերոհիշյալ երիտասարդները հարկադրված վերցրել են իրենց զենքերը և բարձրացել սարերը: Դրանց մեջ են եղել Հարությունի երեք եղբայրները՝ Սարգիսը, Գևորգը, Կարապետը, որոնք երեքն էլ զոհվել են թվական գերակշռություն ունեցող թուրքերի հետ կռվելիս:

Նույն տարվա հունիսյան մի օր տեղի է ունեցել Դվնիկի սպանդը: Այդ օրը անասունները սարից տուն չեն բերվել: Հովիվները հայտնել են, թե քրդերը, թե՛ ոչխարները և թե՛ նախիրը սարից ուղղակի քշել են իրենց գյուղերը: Ցանկացել են բողոքել, սակայն պարզվել է, որ դեպքը պատահել է նախօրոք ծրագրված պայմանավորվածությամբ:

Հաջորդ առավոտ չրջապատվել է ամբողջ գյուղը: Մարդկանց լցրել են մարագները, թալանել են նրանց տները, հափշտակել ամբողջ հարստությունը: Ապա արդեն թալանել են մարագները լցվածներին: Վերցրել են նրանց վրայի թանկագին զարդերը: Օղերն ավելի հեշտ խլելու համար, դանակներով կտրել են կանանց ականջները, մատանիների համար՝ մատները, եթե տեսել են, որ դժվար է մատներից հանել: Նույնիսկ ձեռքեր են կտրել ապարանջանների համար:

Զափահաս տղամարդկանց գյուղից դուրս բերելով սպանել են ձորերի մեջ: Ահռելի խոշտանգումների են ենթարկել գյուղի վարժապետին՝ Մարգարին, որը այնքան մեծ աշխատանք է կատարած եղել գյուղի մանուկներին մայրենի դաստիարակություն տալու գործում:

Կանանց առաջարկել են ընդունել մահմեդական կրոնը և ազատվել մահից: Երեցկնոջ՝ Հռիփսիմեի գլխավորությամբ նրանք մերժել են այդ առաջարկը, նախընտրել մահը: Ապա ծանր տանջանքների ենթարկելով կանանց՝ առաջարկել են հայտնել զենքերի տեղերը, որ նույնպես մերժվել է, ասելով թե իրենց մոտ զենքեր չկան, մինչդեռ հնչակյանները այդ գյուղում պահած են ունեցել բավական զենք: Գաղտագած թուրքերը սպանել են մի քանիսին, իսկ կանանցից մեկին էլ գցել են վառված թոնիրը:

Կանայք ու աղջիկները՝ թուրքերի ձեռքը չընկնելու, տգեղ երևալու համար կտրել են իրենց գլխի մազերը, մուր են քսել դեմքներին, այլանդակել են իրենց: Ոչինչ չի օգնել: Նրանք ջոկել ու տարել են առավել գեղեցիկներին ու մանկամարդներին: Մի քանիսին տարել են ծանոթ քրդեր ու թուրքեր, հավաստիացնելով, թե հետագայում ետ են բերելու:

Ապա, մոտ 200 կանանց, ծեր տղամարդկանց ու երեխաների դուրս են հանել գյուղից, տարել են նախ Մանց, որտեղի հայերն արդեն կոտորվել էին և մնացել էին միայն թուրքերը: Այնտեղ՝ կարավանը ավելի թեթևացնելու համար կրծքի երեխաներին գցել են գետը, մնացածներին տարել են Երզնկայի մոտակայքում գտնվող Ջիլխորոզ քրդական գյուղը: Այստեղ սկսվել է նոր ջարդը: Մի քանի տասնյակ կանայք գիշերով փախել են արտերը, մյուսներին տարել միացրել են դեպի Քեմախ բողազը տարվող կարավաններին և մեծ մասին այստեղ գցել են ջուրը:

Փախչողները մի քանի օր ցերեկները թաքնվել են արտերի մեջ, գիշերները սոված-ծարավ քայլել անծանոթ ուղղությամբ, հասել են Դվնիկի մոտակա մի քրդական գյուղ: Այնտեղ հավաքվել են մոտ 30 հայ ընտանիք, ապրել են մինչև 1916 թ. ռուսական բանակի գալը, երբ վերադարձել են Դվնիկ, ամբողջ գյուղից մնացել էր 33 հոգի, որոնցից 12-ը սարերից իջած տղամարդիկ: Այնտեղ էլ մնացել են մինչև 1918 թ. հունվար ամիսը, մեծ նահանջի օրերը, ապա եկել են Կովկաս՝ Կարին, Սարիղամիշ, Կարս, Դիլիջան, Սևան ճանապարհով հասել Բասարգեչար, որտեղ էլ ապրել են մինչև մեր օրերը:

Թռուցիկ նկարագրելով Երզնկայի հայերի ահավոր կոտորածը, հոգու պարտքն եմ համարում մի քանի խոսք ասել դիմադրական այն

հերոսական ճիգերի մասին, որ դրսևորեցին Երզնկայի հայերը 1915 թ. մայիսյան ողբերգական օրերին: Ընդհանրապես քիչ բան է հայտնի հայերի դիմադրական շարժման մասին: Առավելապես հանրահայտ են Վանի, Շապին Գարահիսարի, Մուսա լեռան և այլ վայրերի դիմադրական կռիվները: Առանձին փորձեր էլ եղան Երզնկայում: Երզնկայի շրջանի դիմադրական կռիվների մասին լսել եմ Նոյեմզար Բաղդասարյանի (Ադամյան), Մանուկ Աստյանի և էլի մի քանի վերապրողների պատմածներից: 1915 թ. մայիսի կեսերին, երբ Բթաոիճի հայերին կարգադրվել է տարագրվել, գյուղի հայկական հատվածի ռես Քերոբ Ադամյանն ընդդիմացել է և մի խումբ երիտասարդների հետ բարձրացել մոտակա լեռները: Դիրքավորվելով Եփրատի ափի բարձունքներից մեկի վրա, խումբը կռվել է 14 օր՝ հսկայական կորուստներ պատճառելով հակառակորդին: Քերոբի փոքրաթիվ ջոկատը շրջապատվել է կանոնավոր բանակի զորամասերով: Շուտով սպառվել է զինամթերքը, ջոկատի մարտիկներից շատերը սպանվել են, մի քանիսն էլ ծանր վիրավորվել: Քերոբ Ադամյանն իր մոտ է կանչել զինակիցներին և առաջարկել անձնատուր լինել՝ հուսալով, որ նրանցից ոմանց կհաջողվի կենդանի մնալ, միայն առաջարկելով երդվել՝ կենդանի մնալու դեպքում մինչև վերջ պայքարել թուրքերի դեմ: Իսկ ինքը՝ հրաժեշտ տալով խմբի տղաներին, բարձրադիր ժայռից նետվել է Եփրատը: Քրդերը Քերոբի մասին երգեր են հյուսել, որտեղ ասվում է, թե նա կենդանի է մնացել և շուտով կգա ու վրեժ կլուծի թուրքերից:

Դիմադրական մի այլ փորձի մասին էլ վկայում է երզնկացի Խորեն Զատիկյանը: Երզնկայի տարագիր հայերի կարավանը թուրք պահապանների ներկայությամբ հարձակման է ենթարկվում քրդերի կողմից, սկսվում է անխուսափելի թալանն ու ջարդը: Փարլոչ Կյուրեղ անունով մի երիտասարդ երզնկացի անսպասելի ու հանդուգն հարձակմամբ դաշունահարելով սպանում է ուղեկից երկու թուրք զինվորների և տիրանալով նրանց հրացանին, այլ տարագիր տղամարդկանց հետ հրացանազարկ են անում քրդերին: Հայերին հաջողվում է զինաթափել ու սպանել բոլոր քրդերին և ուղեկցող թուրք զինվորներին: Այնուհետև կարավանը ետ է վերադառնում Երզնկա: Դեռ քաղաք չհասած բանակի և ոստիկանության զինված ուժերը նրանց դիմավորել են հրացանային հուժկու համազարկերով: Անհավասար, սակայն հերոսական կռվի ընթացքում սպանվել են հարյուրավոր մարդիկ: Կենդանի մնացածներին ոստիկանները հավաքել և դարձյալ ճանապարհ են դրել դեպի Կամախ, դեպի մահվան կիրճը[1]:

---

[1] **Գ. Այուրմենյան,** *Երզնկա, էջ 344:*

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԳՐԱՎՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1916–1917 ԹԹ.)

1. ԱՄԱՅԱՅԱԾ ԵՐԶՆԿԱՆ

Մինչ Երզնկայի, Դերջանի, Կարինի և այլ վայրերի հայերի գաղթականական կարավանները մեր նկարագրած ծանր պայմաններում, կոտորվելով, թալանվելով առաջանում էին դեպի հարավի տոթակեզ անապատները, օրեցօր փոքրանալով, հալվելով ու հյուծվելով, ռուսական բանակը չարժվում էր դեպի Կարին՝ ահռելի սարսափի մատնելով հյուծված ու բարոյալքված թուրքական բանակին, նաև թուրք ու քուրդ բնակչությանը: Բանակում սկսվել էր ուժեղ դասալքություն, հակառակ բարձրագույն հրամանատարության խստագույն սպառնալիքներին:

Ռուսները Կարինը գրավեցին 1916 թ. փետրվարի 16-ին: Այժմ հերթը եկել էր թուրքերի զանգվածային տեղահանությանը դեպի արևմուտք:

Տարբերությունն այն էր, որ մինչդեռ հայերի տեղահանությունն ու հարավ տանելը արտաքին վարագույր էր՝ թաքցնելու նրանց բնաջնջման դիվային ծրագիրը, թուրքերի տեղահանությունը կատարվում էր սեփական կառավարության օժանդակությամբ, հսկողությամբ, հատուկ սայլերով, հարուստները ձիերով, կառքերով և այլն:

Դա զուգադիպեց այն օրերին, երբ Կարին–Երզնկա տարածքի բոլոր գյուղերում մնացած վերջին հայերին էլ հավաքել ու նոր կարավան էին ստեղծել այդ վայրերից նրանց վերջնականապես հեռացնելու, բնաջնջելու համար: Թեև ասում էին, թե հիմա հայերին կոտորելու հրահանգ չկար, միայն տեղահանելու էին:

Այդ վերջին կարավանի մեջ էր նաև այս գրքի հեղինակը: Ես այն ժամանակ յոթ տարեկան էի և շատ բան հիշում եմ: 1916 թ. հունվար ամսին են տեղահանել մեզ: Ցուրտ, սառնաշունչ մի գիշեր հանկարծ ոստիկանները խուժեցին մեր տունը և կարգադրեցին մի քանի օրվա ուտելիք վերցնել ու դուրս գալ: Մինչ այդ մեզ ազատ էին թողել որ-

պես Թուրքական բանակում ծառայողների ընտանիքների: Իսկ հիմա, երբ ռուսը եկել-հասել էր մեր դռները, էլ կարո՞ղ էին մեզ հանդուրժել:

Ես, յոթ տարեկան հասակումս, ընկա մահվան այդ կարավանի մեջ ու անցա տառապանքի այն ահռելի կամուրջը, որով անցել էին Երզնկայի ու Դերջանի հայերը: Չեմ նկարագրելու թե ինչ տեսա: Շատ բան տեսա, չատ բան զգացի: Դրանք ես գրի եմ առել մի այլ հատուկ գրքում, այստեղ անիմաստ է վերհիշելը, մանավանդ որ ուրիշների հետ պատահածներով արդեն գաղափար տվել եմ կատարվածի մասին:

Իմ նպատակն է ցույց տալ այն Երզնկան, ուր հասավ ռուսական զորքը ու կանգնեց. հազար ափսոս, մի տարուց նահանջեց՝ իր հետ տանելով հայ ժողովրդի բոլոր երազներն ու ծրագրերը:

Երբ մեր կարավանը հասավ Երզնկա, այնտեղ արդեն ոչ մի հայ չկար: Հենց այդ չարաթներին գնդակահարեցին Դաբաղխանայի 2000 հայ արհեստավորներին, որոնց մեջ էր հայրս:

Չգիտեմ ինչու՝ մոտ տասը օր մեզ պահեցին այնտեղ: Ամեն օր շրջակա գյուղերից հայեր էին բերում ու միացնում մեզ: Ցերեկները երեխաներով թափառում էինք հայկական տներում, ավերակ, քարուքանդ: Ջրհորների մեջ քարեր էինք գցում, որպեսզի սառույցը կոտրվեր ու մենք ձայնը լսեինք: Բայց երբեմն քարը սառույցին չէր հասնում. դիպչում էր մարդկանց գլուխներին, մարմիններին: Ջրհորները լիքն էին հայերի դիակներով:

Ահա թե ինչպես է պատմել իր ծննդավայրի այդ օրերի վիճակը հայրս՝ Խաչատուր Տեր-Ստեփանյանը, որ ռուսական գրավման առաջին օրերին իջել էր Դերսիմի սարերից և զբաղվում էր իր արհեստով՝ դերձակութիյամբ:

«Ահա և քաղաքը եզերող այգիները: Մի անբացատրելի զգացում համակում է ինձ: Մի բոպե ինձ թվում է, որ ես ամենուրեք պիտի գտնեմ ծանոթներիս, կոչկակար բարեկամիս՝ կոչիկ կարելիս, մըրգավաճառին՝ չամիչ կչռելիս, վաճառականին՝ հակեր բաց անելիս: Բայց այդ բոպեական պատրանք է: Իսկույն հիշում եմ, որ մտնում եմ մի քաղաք, որը համարյա ամայի է: Այդ միտքը կարծես մարմնական ցավ է պատճառում ինձ, ճմլվում է սիրտս: Ահա և ինձ ծանոթ փողոցները, ոչ ոք չկա: Չկան ոչ միայն հայեր, այլև թուրքեր: Փողոցներում նկատում եմ խումբ-խումբ քայլող ռուս զինվորներ: Չգիտեմ ինչու, բայց ինձ թվում է, որ իմ կյանքը պարտական եմ նրանց: Ուզում եմ վազել դեպի նրանց, փաթաթվել, չնորհակալու-

թյուն հայտնել, բայց ափսոս, լեզու չգիտեմ: Եթե այդպես անեմ, ինձ խելագար կկարծեն:

Շրջակա գյուղերից հետզհետե վերապրած հայերը գալիս էին Երզնկա: Նրանք մեծ մասամբ կանայք ու երեխաներ էին: Տղամարդ համարյա չկար: Գալիս էին ու իրենց ավերված, մոխիր դարձած տներն ուզում էին շենցնել, ուզում էին նորից շինել թռչունի իրենց բույնը, նոր ձագեր հանել, ապագայի վեմը դնել: Ընդամենը մի քանի ամսում բավական թվով հայ որբեր ու այրիներ եկան[1]:

Մի ուրիշը գրում է.

«Այդ օրերուն լեռներու գագաթներեն, ժայռերու խոռոչներեն հայեր կբուսնեին, հեղեղի պես կլեցվեին քաղաքը. կարծես գետնին տակեն կելլեին անոնք... բոլորն ալ մերկ, անոթի ու արգահատելի վիճակի մեջ»:

Կոտորածի օրերին Դերսիմի քրդերը կատարել էին վայրագություններ, խլելով հարյուրավոր անմեղ հայերի կյանքը, բայց եղել էին ցեղապետներ, որոնք փրկել էին շատ հայերի: Այդպիսի դեր են կատարել Զեյնալ աղայի, Քյուչուկ աղայի և Քիրլի Հասանի աշիրեթությունները: Նրանք «Գոմերներու, Թխնգորի, Ջաֆերլուի, Տապի շրջաններու մեջ պահած էին հարյուրավոր հայեր, ու Երզնկան ռուսներու կողմե գրավվելու ժամանակ՝ բերած էին Սուլթան Սեիդի ու հոն հանձնած էին սահմանային պահակախումբին»[2]:

Քրդական այդ ցեղախմբերն անչուշտ ունեցել են նաև իրենց տնտեսական նկատառումը՝ այդ հայերին իրենց կալվածներում ձրի, մի փոր հացով աշխատեցնելու օգուտը, սակայն, դրանով հանդերձ՝ փրկել են գազանային սպանդից հարյուրավոր հայերի:

Ռուսական զորքերի կողմից Երզնկայի գրավումից հետո (12 հուլիսի, 1916 թ.), Հայոց Ազգային բյուրոյի հատուկ հանձնարարությամբ այնտեղ է գործուղվել հայտնի հայդուկապետ Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան): Նրա առջև նաև խնդիր էր դրվել հայտնաբերել Երզնկայում, Դերջանում և շրջակայքում դեռևս կենդանի մնացած հայերին և նրանց փրկել քրդական ու թուրքական ստրկությունից: Այդ նպատակով Երզնկայում գտնվելու առաջին իսկ օրերից Մուրադը ստեղծել է հետախուզական հատուկ ջոկատներ, որոնք ուղարկվել են քրդերի և թուրքերի բնակավայրերը: Այդ ջոկատները կարողացել են ազատել բազմաթիվ երեխաների և կանանց[3]: Հուլիսի վերջերին

---

[1] **Գ. Ստեփանյան,** *Մղձավանջային օրեր, էջ 163–166:*

[2] **Գ. Այուրմենյան,** *Երզնկա, էջ 409:*

[3] **Սեպուհ,** *Էջեր իմ հուշերեն, հատ. Ա, Բոստոն, 1925, էջ 284:*

Երզնկայում զորավար Սեպուհի (Արշակ Ներսիսյան) հետ Մուրադը հիմնադրել է «Մեկ հայ՝ մեկ ոսկի» հիմնադրամը և ծրագրել մնացյալ հայության փրկության գործը:

Նախ ծրագրվում է թուրքական հարեմներից, թուրքերի կանանոցներից հայ աղջիկներին ու կանանց հավաքել, մի բան, որ սկզբում այնքան էլ հեշտ չի կատարվել, քանի որ մուսուլմանական մոլեռանդ օրենքները ամենևին չէին կարող թույլ տալ, որ օտարներ թափանցեն կանանոցները: Շատ թուրքեր աշխատել են ամեն կերպ թաքցնել իրենց մոտ գտնվող հայ աղջիկներին և դա հաջողվել է նրանց: Մինչև այսօր էլ, այդ աղետավոր օրերից յոթանասուն տարի անց, թուրքական ընտանիքներում հնարավոր է գտնել շատ հայուհիներ, որոնք այլևս չեն էլ հիշում, որ եղել են հայեր:

Հայ աղջիկներին ու կանանց թուրքական ընտանիքներից դուրս բերելու համար հայերը դիմել են բազմապիսի միջոցների:

Առաջին հերթին վճռական դեր է կատարել ամենազոր կաշառքը:

Մեծ արդյունք է տվել նաև մի խումբ հայ կանանց հետախուզական աշխատանքը վիպական պայմաններում: Այդ կանայք, ներկայանալով որպես կանացի չորեր, զարդեր, իրեր վաճառող փերեզակներ, մանր առևտրով զբաղվողներ, թափանցել են թուրքական ընտանիքներից ներս, թուրք կանանց վաճառել նման իրեր, միաժամանակ կաշառքներ, նվերներ տալով որոշ աղախինների կամ կանանց, իմացել են, թե ում տանը պահված հայ աղջիկ կա: Իսկ երբ իմացել են, նրանց բերելն արդեն դժվար չի եղել. ռուսական իշխանությունները հայերին թույլ են տվել պահանջելու նրանց:

Մեծ մասամբ հայուհիները ուրախության արտասուքներով են դիմավորել իրենց ազատարարներին, բայց պատահել է, որ արդեն նոր պայմաններին և թուրքերի կրոնական քարոզչությանը ենթարկված մանկամարդ աղջիկներ հեշտությամբ չեն բաժանվել ամուսիններից, եթե եղել են նրանց միակ ու սիրելի կինը: Այդտեղ մասամբ էլ դեր է կատարել թերահավատությունը ապագայի նկատմամբ, կրկին ետ բերվելու անպատեհությունը: Դրանով հանդերձ՝ մատների վրա են հաշվվել այդպիսիները: Թուրքական ընտանիքներից հավաքել են հարյուրավոր հայ կանանց, որոնց մի մասը ամուսնացել է ազատված հայ զինվորների հետ, ընտանիքներ կազմել:

Հայ կանանց հավաքելու այս անձնվեր աշխատանքին նվիրվածներից են եղել երզնկացի Սրբուհի Զուգուրյանը, Սաթենիկ Զաթալբաչյանը, Գեղեցիկ Խանջյանը, բաբերդցի տիկին Զարուհին և ուրիշներ, որոնց հանդեպ երախտագիտությամբ լցված հայ կանայք դեռ մինչև 1970-ական թվականներն ապրում էին նաև Երևանում:

Կոտորածի օրերին բռնի իրենց ծնողների գրկերից խլված երեխաներին կրկին դեպի մայր ժողովուրդը բերելու գործում մեծ դեր է կատարել նշված «Մեկ հայ՝ մեկ ոսկի» հիմնադրամը: Ստեղծվել է հատուկ մարմին, որը Թուրքերից և քրդերից փողով գնել է հայ երեխաների, յուրաքանչյուրի համար վճարելով մեկ ոսկի:

Այդ ձեռնարկի շրջանակներում Մուրադը՝ Կայծակ Առաքելի ընկերակցությամբ, կապեր է հաստատել Դերսիմի քրդերի ցեղապետերի հետ: Համագործակցությունը շուտով տալիս է ցանկալի արդյունքներ: Ինչպես վկայում է «Հուսաբեր» օրաթերթը՝ «Տերսիմի կողմից այնտեղի քրտերը էշերի վրա նստեցրած, բերում հանձնում էին իրենց պատսպարած հայերին, որոնց որպես ճանապարհի ծախս վճարվում էր յուրաքանչյուր բերված մի հայի համար մոտ 12 ռուբլի»[1]: «Մեկ հայ՝ մեկ ոսկի» ձեռնարկի միջոցով հայերին փրկելու վերաբերյալ չափազանց ուշագրավ է ամերիկահայ կամավոր Ռուբեն Ռահանյանի վկայությունը. «Քյուրտ ցեղապետ Խրտր աղան ութ հայ ղրկած է... Քյուրտը, որ խոստացած էր վեց հայ բերել, բերավ: Ասոնց համար էլ երեք ոսկի և մեկ գլուխ չաքար տվի: Նույն ատեն երեք հայեր ալ ինքնաբերաբար եկան՝ կազմելով 17 հոգիանոց խումբ մը, զոր ղրկեցի Երզնկա»[2]:

Թալանով ու կողոպուտով հարստություն ձեռք բերելու սովոր, ոսկու մոլուցքով տարված, բայց այժմ այն ձեռք բերելու հնարավորություններից զրկված Թուրք և քուրդ ջարդարարների համար դա չատ ձեռնտու առևտուր էր. նրանք ոչ միայն իրենց մոտ պահված երեխաներին ու կանանց են բերել հանձնել հայկական մարմիններին, այլ ընկել գյուղից-գյուղ, հետաքրքրվել, հայտնաբերել հայերի, էժան գնով գնել նրանց և բերել քաղաք վաճառել՝ ամեն մի չնչի համար ստանալով մեկ ոսկի:

Այդ առևտրով զբաղվողներից մեկը հայտնել է հայկական մարմիններին, թե եթե իմանար, որ ամեն մի հայի գլուխը արժի մեկ ոսկի, այնքան երեխաների կթափե՞ր Եփրատ գետը, մարդ էլ ոսկին ջուրը գցի...

Ի դեպ՝ փողով հայ երեխաներ գնելու չարժումը ծավալվել է նաև այլ քաղաքներում: Մալաթիայում, օրինակ, 1918 թ. ստեղծվել էր հայկական նման մի մարմին, բաց էր արել որբանոց բացառապես Թուրքերից ու քրդերից գնված երեխաների համար: Մալաթիայի շրջակա գյուղերից հենց Թուրքերը գնում էին հայ երեխաների, լցնում

---

[1] «Հուսաբեր», օրաթերթ, Կահիրե, 1916, 6 հունիսի:

[2] Տե՛ս «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1966, № 2, էջ 71:

սայլերը, բերում վաճառում էին քաղաքում, ինչպես պիտի վաճառեին ձմերուկը: Մեծ մասամբ 6–10 տարեկան երեխաներ էին դրանք, արդեն իրենց ծնողներին ու իրենց մայրենի լեզուն մոռացած:

Ես այդ տարիներին կարճ ժամանակով ապրել եմ Մալաթիայի որբանոցներում՝ մինչև Ամերիկյան նպաստամույց ընկերության որբանոցների բացվելը: Հիշում եմ, թե ինչպես Թուրքը կամ քուրդը սայլը կանգնեցնում էր մեր որբանոցի դռանը, ու մեկ-մեկ երեխաների թևերից, էնթերիների փեչերից բռնած բարձրացնում էր սարսափահար արարածներին, գովում նրանց առողջությունը, ասում թե վարդի պես պահված երեխաներ են, պետք է մի քիչ թանկ գնահատել, որպեսզի իրանց էլ մի մի բան մնա:

Ու հաշվում էին, մի կողմից որբերի գլուխները, մյուս կողմից կարմիր ոսկիները, ստացված հայկական բարեգործական մարմիններից:

Վաճառվող երեխաների մեծ մասի անունները Ահմեդ, Հասան, Հյուսեին էին, ոչ մեկ հայ անուն, բայց հենց առաջին օրը, մատյաններում արձանագրվում էին հայկական անուններով, այն էլ անպայման նշանավոր մարդկանց անուններով՝ Արշակ, Տիգրան, Արտաշես, Վարդան, Վահան և այլն: Մեր այդ որբանոցում տասից ավելի Վարդան ու Տիգրան կար, ազգանուններն էլ՝ Մամիկոնյան, Սուրենյան, Բագրատյան: Նրանցից մի քանիսը հետագայում եկան Հայաստան և գուցե մինչև այժմ էլ կան:

«Մեկ հայ՝ մեկ ոսկի» շարժումը ավելի արդյունավետ դարձնելու համար ստեղծվել է հատուկ ջոկատ, որի նպատակն է եղել չբավարարվել Երզնկայի չրջակայքով և մարդ ուղարկել Դերսիմ և այլ վայրեր՝ հայեր գնելու համար: Սեբաստացի Մուրադը «Յուրաքանչյուր հայու համար մեկ ոսկի տալով՝ Սվազեն, Խարբերդեն, Քեմախեն, Արաբկիրեն, Զմչկածագեն, Խոզաթեն և այլն բազմաթիվ հայեր Երզընկա բերել տվավ Տերսիմի վրայով, քյուրտերու միջոցով: Կովկասեն ալ բավական ներգաղթողներ եղան, այնպես որ Երզնկա հավաքված հայերու թիվը 3–4000-ի հասներ»[1]:

Հայահավաքման ու պահպանման գործով զբաղվողներից Երզընկացի Արշակ Ալճյանը Երզնկայում այդ տարիներին հավաքված հայերի թիվը հաշվում է հինգ հազար:

Անշուշտ սրանց մեծ մասը Երզնկացիներ չեն եղել: Երզնկան կործանվել էր ահավոր չափով, ազատվածների թիվն աննչան էր: Դրժվար էր ցույց տալ որևէ ընտանիք, որ զոհ տված չլիներ ընտանիքի անդամների մեծ մասին, գոնե ողջ մնացած լիներին 2–3 հոգի: Ընդհակառակը, հարյուրավոր ընտանիքների ծուխը խսպառ հանգել էր:

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 411:*

Հաճախ միմյանց գտնում էին նույն ընտանիքի այնպիսի անդամներ, որոնցից մեկը ընկել էր արաբական անապատները, մյուսը՝ Դերսիմի սարերը, երրորդը մնացել էր թաքնված սարերում կամ թուրքական գյուղերում, անչուչտ թուրքացած, անուն ազգանունը փոխած:

Ու եկել են, գտել միմյանց, հավաքվել, մղկտալով հարցուփորձ արել, ուրախացել լսելով ողջերի մասին, լաց եղել խմանալով հարազատների մահը:

Երզնկայի կյանքը բնականոն վիճակի մեջ դնելու, ռուսական գրավող բանակին օժանդակելու համար Կովկասից, Մոսկվայից և այլ վայրերից Երզնկա են ուղարկում օժանդակ մարմիններ, ինչպես Մոսկվայի հայկական կոմիտեի, «Ռուս քաղաքների միության» և այլ մասնաճյուղեր: Սրանք թե՛ զբաղվել են գաղթականների համար աշխատանք ճարելու, նրանց սնունդով ապահովելու գործով և թե՛ գաղթականների երեխաների կրթության հարցով:

«Ժողովուրդը չուտով ինքզինքը գտավ, չուկան՝ խանութներ բացվեցան, կյանքը սկսավ եռալ, այնպես որ մեկ երկու ամսվա մեջ քաղաքը կարծես հարություն առավ»,- գրում է երզնկացի Արմենակ Մելիքյանն իր հիշողություններում:

Անչուչտ սա այն Երզնկան չէր, որ տեսանք պատերազմից առաջ, տեղացի ոչ միայն հայերի, այլև թուրքերի մեծ մասը չէր երևում: Հայերը կոտորվել էին, թուրքերն իրենց կատարածի հաշիվը տալու երկյուղը սրտերում հրապարակ չէին իջնում, հակառակ որ ռուսական գրավող զորամասերի վարչությունը ոչ միայն ամեն երաշխիք տալիս էր նրանց կյանքի ապահովության համար, այլև հետևում էր, որ կիրառվեն որոշումները, առիթ չտրվի վրեժխնդրությունների, որոնք պատահում էին այս ու այն անկյունում, իշխանությունների տեսադաշտից հեռու վայրերում:

Հեչտ չէր անցյալը մոռանալը: Հայերը չէին կարող ներել մասնավորապես ջարդերի բուն կազմակերպիչների ազատ-համարձակ երևալը ժողովրդի մեջ: Քանի որ իշխանությունները նման պատիժներ չէին տալիս կրկին չհրահրելու համար ազգամիջյան ատելությունը, հայ վրիժառուներն իրենք էին երբեմն հաշվեհարդար տեսնում առավել ակնառու ոճրագործների հետ:

Այսպես, մի կերպ ծուղակը գցելով արժանի պատիժ է տրվել Երզնկայի շրջանի ամենամեծ ոճրագործներից մեկին՝ Գյուլլիջեի, Ղարատիկինի, Մահմուտցիքի, Շխլիի, Վերի և Վարի Զիֆլիկների հազարավոր հայերի սպանդը կազմակերպող, այդ ջարդերին միչտ անձամբ մասնակցած Մրթաչանին, որին կոչում էին նաև Մրթո, Մրթուզա:

Վրեժխնդրության դեպքեր ավելի շատ նկատվել են Երզնկայի և Դերջանի գյուղերում, ռուսական գրավումների այդ շրջանում: Կատարողներն էլ այդ վայրերն են թափանցել որպես քուրդ, հաճախ ավելի ապահովական նկատառումներով, իրենց հետ վերցնելով նաև մի քանի կազակներ:

Գործել է Դերջանցիների հայդուկային մի խումբ՝ Բուլք գյուղացի Կիպրանոս Սարգսյանի գլխավորությամբ: Ունեցել են տասնապետներ, հիսնապետներ, հարյուրապետ: Բաղկացած է եղել մոտ 200 հոգուց: Այդ խմբի ղեկավար Կիպրանոսը մինչև 1960-ական թվականները ապրում էր Կիրովականում, որտեղ էլ մահացել է: Իսկ խմբի աչքի ընկնող անդամներից Արսեն Բաղդասարյանը հիմա էլ կենդանի է և ապրում է Աբխազիայի Նովի Աֆոն քաղաքում, և 88 տարեկան է: Արսենը այս գրքի հեղինակի ազգականներից է, ծնված Դերջանի Աստոյի գոմ գյուղում[1]:

Ես հաճախ եմ նրան պատմել տվել իր առասպելական արկածները, իսկ 1968 թ. գրի եմ առել առավել կարևորները:

Նա ասում էր, թե իրենց խմբի հիմնական նպատակներից մեկը եղել է կարիք ունեցող հայերի զինված պաշտպանությունը, քրդերի ու թուրքերի տներից հայ կանանց ու երեխաների հավաքումը, նաև հայտնի ջարդարարներից վրեժ լուծելը:

Քեռի Արսենը նկարագրել է իրենց խմբի գործողություններից դրվագներ, որոնցից յուրաքանչյուրը մեկ-մեկ հուզիչ նորավեպ է: Ցույց տալու համար, թե ինչ պայմաններում և ինչ եղանակներով են կատարվել նրանց գործողությունները, հիշատակենք դրանցից մեկը շատ համառոտ:

Արսենն ու նրա եղբայրը՝ Միքայելը, հագած քրդական տարազ, եղել են մի յայլաղում, որտեղ տեսել են մի գեղեցիկ աղջիկ՝ հայկական չեչտված դիմագծով: Մոտին գտնվող ամուսինը վիրավորական խոսքեր է ասել Արսենին, որ համարձակվել է մինչև իրենց կանանց միջավայրը թափանցել:

Եկել են քրդերը, հաշտեցրել: Ոչ ոք չի կասկածել, որ սրանք հայեր են: Իմացել են, որ այդ մարդը հարյուրավոր հայեր ջարդող, նրանցից մեկին ծառին կապելով մորթազերծ անող Շեպկելի Մուսա կոչվող հայտնի ավազակապետն է, որ ռուսական գրավումից հետո քաշված իր պատյանը ապրում է ծայր աստիճան զգուշությամբ, իր տանը պահելով մի հայ աղջիկ:

---

[1] Արսեն Բաղդասարյանը մահացավ Գ. Ստեփանյանից կարճ ժամանակ անց, 1989 թ.: Այժմ Երևանում ապրում է Արսենի որդին՝ Կառլեն Բաղդասարյանը (ծան. խմբ.):

Յայլաղից վերադառնալուց հետո հայ երիտասարդները որոշում են գնալ Մուսայի գյուղը, ազատել դժբախտ հայուհուն: 10–15 զինված հայեր, բոլորն էլ ծպտված քրդական համազգեստով, իրենց հետ էլ վերցրած երեք կազակներ, գնում են Շեպկելի Մուսայի գյուղը՝ Էքրեկ: Ներկայանում են գյուղապետին և ասում են, թե ուզում են տեսնել Մուսային: Մուխթարը նրանց տանում ներկայացնում է, ինքը վերադառնում:

Մուսան օջախի մոտ պառկած է եղել: Հայդուկները հանում են զենքերը և ասում թե դիմադրելն անիմաստ է, իշխանություններն իմացել են, որ իր տանը բռնի հայուհի է պահում, եկել են տանելու:

Մարդը դիմադրություն ցույց չի տվել: Հենց այդ պահին սենյակը երկու մասի բաժանող վարագուրաձև կապերտի ետևից դուրս է եկել հայուհին և ցասումնալից հուզումով, հայերեն ասել է.

– Սատկեցրեք այս հրեշին, նա իր գլխի մազերի չափ հայ է սպանել, ինձ նման տասնյակ աղջիկների է դժբախտացրել, սպանեցեք, մի՛ք խնայեք, նա հրեշ է, մարդ չէ, ազատեցեք ինձ նրա ճիրաններից:

Ապա աղջիկը ասել է թե նա հայերից կողոպտված գանձերն էլ թաքցրել է օջախի տակ փորված մի խոր փոսում. կարող են փորել և հանել ու տանել բաժանել գաղթականներին:

Երիտասարդներից երկուսը հսկել են Մուսայի վրա, մյուսները աղջկա ասած օջախի կրակը հանգցնելուց հետո վերցրել են սալ քարը, փորել, բաց արել խոր փոսը, հանել տոպրակներով զարդեր, ոսկյա ապարանջաններ, օղեր, մանյակներ, մատանիներ և այլն:

Աղջիկն ասում է նաև, թե իրենից բացի հինգ այլ հայուհիներ էլ կան նույն գյուղում, քրդերի տներում որպես հարճ:

Հայ երիտասարդներն առանց դիմադրության հանդիպելու նրանց նույնպես վերցնում են, բոլորին դնում սայլերի վրա և աղջիկներին պահող մարդկանց հետ միասին տանում են Երզնկա:

Ես խոսեցի միայն Երզնկայի մասին: Գյուղերը նույնպես աստիճանաբար սկսում են կենդանության նշաններ ցույց տալ: Առաջին ամիսների անորոշությունից հետո մարդիկ աստիճանաբար կազմում են ապագայի ծրագրեր, քաշվում իրենց պապենական օջախները:

Նոսրացել էր անչուշտ բնակչության թիվը: Գյուղեր կային, որ հազիվ մեկ-երկու հոգի էին ազատվել, բայց գյուղեր էլ կային, 40–70 ազատվածներ ունեին, դրանք այն գյուղերն էին, որոնց բնակչության թիվը անցյալում հազարից անցնում էր:

Հեշտ չէր վերականգնումը: Հիմա չկար ո՛չ դպրոց, ո՛չ ուսուցիչ, ո՛չ եկեղեցի: Կոտորածը խլել էր ամեն ինչ, այնուամենայնիվ, մարդիկ

ուղում էին ապրել, ապրել իրենց նախկին գյուղերում, հարազատ վայրում, սեփական հողում ու հանդերում: Ու գալիս են միմյանց մոտ, անասուններ գնում, գյուղատնտեսական գործիքներ ձեռք բերում, վերանորոգում քանդված տները, աշխատում, նորից ծուխ բարձրացնում տանիքներից, առանց մտածելու, թե կրկին կարող էր փոխվել ամեն ինչ և քաղաքական մի նոր փոթորիկ կարող էր քանդել ամեն ինչ, իրենց էլ վերջնականապես ցրել աշխարհով մեկ:

«Մեկ երկու տարիներե ի վեր խոպան մնացած արտերը սկսան հերկվիլ ու ցանվիլ, այգիներն ու պարտեզները մշակվիլ: Գյուղերու կյանքն ալ կարճ ատենվան մեջ զգալիորեն փոխվեցավ»[1]:

Ռուսական զորքը քաշվելուց հետո ծանրացել է Երզնկայի հայերի վիճակը: Քաղաքի ղեկավարությունը փաստորեն անցել է հայերի ձեռքը՝ Սեբաստացի Մուրադի ղեկավարությամբ:

Մուրադը փորձել է սիրաշահել թուրքերին, առաջարկել է մոլլաներին անցնել իրենց կրոնական պարտականություններին, թուրք որոշ մարդկանց խոստացել է պաշտոններ, սակայն այս բոլորը անցել է ապարդյուն: Հայ և թուրք թշնամությունը կրկին օրեցօր սկսել է բորբոքվել՝ ռուսական զսպիչ ուժի բացակայության պայմաններում: Դրան նպաստել է մի կողմից ռուսական բանակի արագ նահանջը, ռազմաճակատի դատարկումը, մյուս կողմից՝ թուրքական բանակի առաջխաղացումը:

Ահա թե ինչպես է նկարագրում Երզնկայի հայերի համար ծանր այդ օրերի վիճակը երզնկացի Արշակ Փեշտիմալճյանը (Ալճյան), որ գործուն մասնակցություն է ունեցել զինվորական պաշտպանական աշխատանքներին:

«Այդ ատենները Երզնկայի ռուս բանակի հրամանատարն էր հայերու հանդեպ լավ վերաբերող գեներալ Լիախովը: Սեբաստացի հեղափոխական Մուրատ և բժիշկ Արշակ Պողոսյանը ևս որպես Մոսկվայի Հայկական կոմիտեի ներկայացուցիչներ Երզնկա կգտնվեին: Լիախով գիտեր, որ Երզնկայի զինվորական կացությունը վտանգի մեջ է»:

Լիախովի առաջարկով Մուրատը ստեղծել է մի կոմիտե, որն զբաղվելու էր առաջին հերթին երեխաներ ունեցող ընտանիքների քաղաքից ապահով հեռացումը կազմակերպելով:

Գեներալ Լիախովի հրամանով Երզնկայի կայազորի հրամանատար է նշանակվում ռուսական բանակում ծառայող ֆրանսիացի գնդապետ Մորելը: Ռուսական զորքի հեռացումից հետո ճակատագրական անհրաժեշտություն է դառնում ապահովել Քղիի ճակատը և

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 411:*

թույլ չտալ թուրքական կանոնավոր բանակների առաջխաղացմանը, որը աղետաբեր պիտի լիներ ոչ միայն Երզնկայի համար, այլև առհասարակ արևմտահայության:

Մի քանի հարյուր անձնազոհ հայ մարտիկների շնորհիվ կազմակերպվել է այդ պաշտպանությունը և հայերը կարողացել են երեք ամիս թույլ չտալ, որ թուրքական բանակը արագորեն առաջանա դեպի Արևելք:

Այս բոլորը տեղի է ունեցել 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Թուրքերը, արդեն վստահ իրենց հաղթանակին, առաջարկել են հաշտության բանակցություններ, որ տեղի է ունեցել Երզնկայում, 1917 թ. նոյեմբեր ամսին:

2. ՄԵԾ ՆԱՀԱՆՋԸ

1917 թ. դեկտեմբերի 5/18-ին թուրքական զորքերի հրամանատարության և Անդրկովկասյան կոմիսարիատի միջև Երզնկայում ստորագրվում է զինադադարի համաձայնագիրը, որով ռազմական գործողությունները դադարեցվում էին Կովկասյան ամբողջ ռազմաճակատում՝ Սև ծովից մինչև Վանա լճի հարավային կողմը:

Թուրքերը կոմիսարիատին առաջարկում են սկսել հաշտության բանակցություններ: Ռուսական 2-րդ կորպուսի հրամանատար գեներալ Լեախովը ետ է կանչվում: Ռուսները բոլորովին հեռանում են: Հայերի տրամադրության տակ այդ ժամանակ եղել է ընդամենը 800-ի չափ զինվոր, որ շատ փոքր էր մեծ ճակատը պաշտպանելու համար: Սկսվում են թուրքերի և քրդերի պարբերական հարձակումները հայերի վրա:

«Քրտական հրոսակներու արշավանքներն ու հարձակումները հայկական ուժերու վրա՝ ամենուրեք կչարունակվեին մեծ թափով: Քրտական հարձակումները դիմագրավելու նպատակավ՝ Մուրատ ճակատ ղրկեց հազարի չափ զինվոր, երկու թնդանոթով ու չորս գնդացիրով, հրամանատարությամբ բժիշկ Արսլանյանի, որ քաղաքապահ զինվորներու հազարապետն էր: Կռիվը վերջացել էր հայոց ծանր պարտությամբ, սպանվեր էին ի միջի այլոց երկու թնդանոթաձիգ ռուս սպաներ և ինքը՝ հրամանատարը՝ բժ. Արսլանյան: Այս պարտությունը մեծ վիշտ պատճառեց ժողովուրդին, միևնույն ատեն ժողովուրդի հուսալքման ու բարոյալքման խոշոր շարժառիթ մը եղավ»[1]:

[1] «Լրաբեր», շաբաթաթերթ, Նյու Յորք, 1973, 17 նոյեմբերի:

Շարունակվել են կռիվները օրեցօր թուլացնելով հայերի դիրքը:

Երզնկայի զինադադարը խախտելու պատրվակով թուրքերը թիկունքում հրահրում են քրդական շարժումներ և պարբերաբար հարձակումներ կատարում հայկական դիրքերի վրա: Մուրադն իր վրա է վերցնում Երզնկայի ճակատի հրամանատարությունը: Դրությունը օրհասական էր: Երզնկայի զինված ուժերը մեկուսացված էին էրզրումից, զգացվում էր պարենի պակաս, ամենակարևորը՝ սոսկալիորեն նվազ էին զինված ուժերի մարտիկների թիվը: Հսկայական ճակատը՝ Երզնկայից–Մամախաթուն, պահում էին ընդամենը 2 հազար զինվոր, մինչդեռ թուրքական հարձակվող զորամասերն ունեին չուրջ 23 հազար զինվոր, չհաշված քուրդ և թուրք բաշիբոզուկներից բաղկացած ոչ կանոնավոր զորամասերը: Երզնկայում կենտրոնացվել էին նաև 6000-ից ավելի գաղթականներ և անհրաժեշտ էր նաև ապահովել նրանց անվտանգ գաղթը: Արդեն փետրվարի 12-ին թուրքական զինված ուժերի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշայի հրամանով թուրքական բանակը խախտելով Երզնկայի զինադադարը՝ անցնում է հարձակման, հիմնական նպատակ ունենալով գրավել Երզնկան: Հմտորեն գլխավորելով Երզնկայի պաշտպանությունը, միաժամանակ Մուրադը կազմակերպել է տեղի հայության գաղթ-նահանջը դեպի Կարին[1]: Դա հերոսական և անօրինակելի նահանջ էր: Երզնկայի հայության «Մնացորդացը» իր փրկության համար, անչուշտ, պարտական է անվեհեր Մուրադ Սեբաստացուն:

«Գաղթական հայերը սկսան կառք, ձի փնտրել իրենց երեխաները փոխադրելու համար: ... Թշնամին կը մոտենար, թուրք կանոնավոր բանակն էր, որ կը հառաջանար, թնդանոթի ձայները մինչև քաղաք կը հասնեին... Թշնամիին կրակը երթալով կը սաստկանար ու հրացանի գնդակները կարկուտի պես կը թափվեին քաղաքին վրա: ... Հայերը երեք կողմե չրջապատված էին. միայն հյուսիսային կողմը բաց էր դաչտեն դուրս գալու համար»:

Սկսվում է մեծ նահանջը: Զինվորներին էլ հաչված՝ 6000-ի է հասել նահանջողների թիվը: Կամաց-կամաց քաղաքի թուրքերն էլ դուրս են գալիս իրենց տներից, մասնակցում թալանի և սպանությունների:

«Զորանոցները հավաքված ժողովուրդով փետրվարի 2-ի (նոր տոմարով՝ փետրվարի 15-ին – խմբ.) երեկոյան ճամփա ելանք,- գրում է Սյուրմենյանը,- կենդանիներու, սայլերու ու հետիոտն քայ-

---

[1] *Ավելի մանրաման տե՛ս* **Ա. Ամիրխանյան,** *Ռուս և թուրք զինադադար, Ֆրեզնո, 1921, էջ 101-102:*

լողներու հսկա չարան մը սկսավ քակվիլ ու երկարիլ ճամփու երկայնքին: Կքալեինք անձայն ու անշշուկ. հուղարկավորության թափորի մը պես: Շատ չանցած քաղաքը կորսվեցավ մեր տեսողութենեն, քիչ վերջը նաև զորանոցները, ուր մեր վերջապահերը կը մնային դեռ, կամուրջեն հետո զանոնք ևս օդը հանելու համար:

Ամբողջ դաշտը հանկարծական մշուշով մը ծածկվեցավ, զրկելով ժողովուրդը իր հայրենի պայծառ երկինքը, գյուղերը ու լեռները վերջին անգամ տեսնելու և անոնցմե իր կարոտը առնելու հաճույքեն: ... Նահանջի միակ բաց ճամփան Սբնգորն էր, բայց ձմռան այդ սառնամանիքին, կիներով, երեխաներով այդ լեռը անցնիլ ու Թուրքերեն առաջ Բաբերդ հասնիլ՝ հարց էր: Տրապիզոնեն հառաջացող Թրքական ուժերը մեկ ժամեն մյուսը կրնային կտրել մեր ճամփան և ամբողջությամբ բնաջինջ ընել մեզ: Որով խոհեմություն համարվեցավ, որպես փոքրագույն չարիք, անցնիլ Երզնկայի դաշտեն, ապստամբ գյուղերու մեջեն, Զոր բերանեն, ու Զիլեկեն մտնել Սանսայի ձորը ու քյուրտերու կողմե փակված այդ գիծը պատռելով բռնել Մամախաթուն–Կարին ճամփան:

Ձյունի ընդարձակ սավանով մը ծածկված էր դաշտը: Սկսավ կըրկին ձյունել: Առավոտյան արշալույսին ահագին ճամփա կտրած, հոգնած ու դադրած վիճակի մեջ հասանք Զիլեկ, Սանսայի ձորին բերանը: Ամենքի փափաքն էր գեթ օր մը հանգստանալ այդտեղ, բայց Մուրատ չհամաձայնվեցավ: Կարավանը կրկին շարժվեցավ դեպի առաջ: Քյուրտերը բռնած էին Սանսայի ձորի երկու կողմերու բարձունքները: Սկսան կրակել մեր վրա: Այլևս անկարելի էր ճամփան շարունակել: Ցուրտը մեկ կողմեն, Թշնամիի գնդակը մյուս կողմեն սաստիկ կը նեղեին ժողովուրդը. այլևս երթը կանգ առավ ու ժողովուրդի մեջ խուճապը ծայր տվավ, կիներ, երեխաներ կուլային, կը պոռային ու հոս–հոն կը վազեին: Մուրատ չկորսնցուց իր գլուխը, ձիավորներու խումբ մը ղրկեց ձախ կողմի բլուրները ու ինքն ալ իր հետ բերած երկու թնդանոթները պատրաստել տալով սկսավ ռմբակոծել քյուրտերու դիրքերը, մյուս կողմե զինվորությունը մահու կենաց կռիվ մղեց Թշնամիին դեմ, և շատ չանցած քյուրտերը թողուցին իրենց դիրքերը ու հեռացան: Անկե հետո շարունակեցինք մեր ճամփան ու հասանք Զորս. գիշերը անցուցինք Զորսի զորանոցներուն մեջ: Լուսաբացին քյուրտերը կրկին սկսան հրացանաձգության, այս անգամ ավելի բուռն թափով. ոչ ոք կրնար զորանոցներեն դուրս գալ, ելլողը կիյնար քյուրտերու գնդակեն, այդ օրը սպանվեցավ մեր նշանավոր Շեկ Պեռոսը: Ցերեկով կիրճեն անցնիլ անհնար ըլլալով,

ժողովուրդը ամբողջ օրը անցուց Զորսի մեջ ու գիշերը մութը կոխելուն ճամփա ելավ: Կիրճեն ազատվելու վերջին գիշերն էր, միայն թե կարողանայինք ապահով դուրս գալ: Հազիվ քիչ մը հառաջացած էինք, հանկարծ կարավանը կանգ առավ. քյուրտերը ճամփուն վրայի փայտյա կամուրջը, որ մեծկակ առվի մը և անդնդախոր ձորի մը վրայեն կանցներ, կրակի տված էին, որպեսզի գաղթականությունը չկրնար իր ճամփան շարունակել, մնար ձորին մեջ ու իրենք ալ գային կողոպտելու, սպանելու ամենքը: Դրությունը հուսահատական էր, ժողովուրդը կեցած էր գահավեժ խորխորատի մը առջև աջ կողմը Եփրատն էր, ձախը՝ անմատչելի ժայռեր և երկու կողմերն ալ թշնամիով բռնված: Ամեն ոք ելքի մը կսպասեր. հրամանատարությունը հոս կը վազեր, հոն կը վազեր՝ ճար մը գտնելու համար, բայց ի զուր: Անցան ժամեր, լույսը բացվեցավ և լույսին հետ քյուրտերը սկսան կրկին կրակ տեղացնել մեր վրա:

Մուրատ հանկարծ հնարք մը մտածեց. գաղթականության միասին բերած սայլ, բարձ, վերմակ, անկողին և այլ իրերը ճիշտ կամուրջին առջև ջուրը թափել տվավ ու այսպիսով անց մը գոյացավ, որուն վրայեն ժողովուրդը սկսավ մեկիկ-մեկիկ անցնիլ մյուս կողմը: Ցուրտեն սառած մեր ձեռքերով հազիվ կրցանք թույլ դիմադրություն մը ցույց տալ, մինչև որ ժողովուրդին մեծագույն մասը իյնալով, ելլելով կրցավ անցնիլ այդ վտանգավոր վայրը: Լավ էր, անկե հետո մեր լքած գույքերու թալանով զբաղեցան և չափով մը մոռցան մեզ, ու մենք ձորին մնացած մասը անցանք, անարգել հասանք Վիժան»[1]:

Երզնկացի Մկրտիչ Ապաճյանն էլ հետևյալն է պատմում այս ծանր նահանջի մասին. «Սանսայեն հետո քյուրտերը իրենց ուժերը կեդրոնացուցին Ֆամի վրա: Թշնամի ուժերու անհամեմատ առավելությունը հաշվի առնելով, մեր ուժերը որոշեցին նահանջել: Լուր տրվեցավ Շամ-փաշայի, Մուկանլը Ահմեդի կեդրոնները, որոնց դիրքերը մոտ ըլլալով, հաջողեցան իրենց շրջանի պահեստները կրակի տալ ու միանալ Ֆամի մեր կեդրոնին. իսկ Ղեմպերիի ուժերը պաշարվեցան քյուրտերու կողմե ու գերի ինկան: Ղեմպերիի մեջ 21 զինվորներ կային, բոլորն ալ երզնկացիներ, ղեկավար ունենալով Սուրեն Անդիկյանն ու Օննիկ Գուշակյանը: Ֆամի մեջ կային տասնյակ հազարավոր մոսին հրացաններ, թնդանոթի ռումբեր, միլիոններու հասնող փամփուշտ, ինչպես նաև 50.000 փութ այլուր. Ֆամի մեր պահակախումբը կովեցավ այդ մթերքն ու ռազմանյութերը փճացնելու ժամանակ չահելու համար և սակայն ատեն մը եղավ, որ մենք ալ պաշարվեցանք, թուր-

[1] **Գ. Այուրմենյան,** *Երզնկա, էջ 421-422:*

քերը ամեն կողմե շրջապատեցին մեզ, լավ էր, որ Միհրան Թուրիկյան (քղեցի) գնդացիրով մեզի օգնության եկավ. ան դուրսեն, մենք ներսեն կռվելով շղթան ճեղքեցինք ու Դերջանի վրայով Կարնո ճամփան բռնեցինք. այդ կռվին 4 սպանված և 12 վիրավոր ունեցանք»[1]:

Կարավանը Վիժանի մեջ երկու օր հանգստանալուց հետո շարժվում է դեպի Մամախաթուն, այնտեղից՝ Կարին: Վիրավորների ու կիսասառած մարդկանց տեղավորել են Սանասարյան վարժարանում, որը վերածվել էր հիվանդանոցի: Բայց կրնկակոխ երզնկացիներին հետևող Թշնամին չուտով հասնում է նաև Կարնո դռներին:

«Մուրատ, Սեպուհ և զոր. Թորգոմ բռնեցին Թեփետերեսիի, իսկ զոր. Անդրանիկ կեղրոնի դիրքերը: Առաջին հարձակումը եղավ հայերու կողմե ու բավական հաջողություն ձեռք բերվեցավ. բայց զոր. Անդրանիկ կշռելով երկու կողմի ուժերը և Թշնամիին ուժերը անհամեմատ խոշոր գտնելով, անհավասար կռվի մը աղետալի հետևանքները աչքի առջև ունենալով, նահանջի որոշում տվավ: 12 մարտ 1918-ին Թուրքերը վերագրավեցին Կարինը»[2]:

Սկսվել է Կարնո հայտնի նահանջը, որի մեջ եղել են նաև երզնկացիների բեկորները:

Գաղթականներից հետո նահանջում է բանակը: Բայց վրա է հասել Սարիղամիշի կռիվը: Մարտերով, տառապանքներով հայերը հասնում են Կարս, այնտեղից՝ Կովկաս:

Այստեղ անհրաժեշտ է մեկ-երկու խոսք ասել նշված իրադարձություններին կարևոր մասնակցություն ունեցած «Երզնկայի գնդի» («Эрзынгянский полк») *մասին: Ինչպես հայտնի է, 1917 թ. ամռանը Արևմտյան Հայաստանի ազատագրված մարզերում ձևավորվեցին ժողովրդական-պաշտպանական ոչ կանոնավոր ջոկատներ: Երզնկայում նման ջոկատի հրամանատարն էր Սեբաստացի Մուրադը: Ջոկատը կազմավորվել էր Երզնկայի և շրջակայքի հայ բնակչությունից և ուներ մոտ 300 զինվոր: Նույն թվականի դեկտեմբերին, արդեն ռուսական բանակի նահանջի պայմաններում, ռազմաճակատի Երզնկայի հատվածի ռուսական զորամասերի հայ զինվորներից ու տեղի հայ ազգաբնակչությունից՝ կամավորության սկզբունքով, ձևավորվեց Երզնկայի միասնական զորաջոկատը՝ գնդապետ Մորելի հրամանատարությամբ: Դրա կազմի մեջ մտավ նաև Երզնկայի վերը նշված ջոկատից և Բաբերդի կամավորական խմբից (հրամանատար՝*

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երզնկա, էջ 421-422:*

[2] *«Ամենուն տարեցույցը», տարեգիրք, Կ. Պոլիս, 1923, էջ 110-111:*

Սեպուհ) ձևավորված միացյալ զորամիավորը՝ բաղկացած 500 արևմտահայ կամավորականներից (հրամանատար՝ Մուրադ):

Փետրվարի կեսերին Երզնկայի զորաջոկատը արյունաքամ մարտերով նահանջելով հասավ Էրզրում, որտեղ այն կազմացրվեց և դրա հիման վրա ստեղծվեց «Երզնկայի գունդը»՝ կապիտան Կարապետ Հասան-Փաշայանի հրամանատարությամբ: Մարտին գունդը մտցվեց գնդապետ Մորելի I հայկական հատուկ բրիգադի կազմի մեջ: Երզնկայի գունդը փետրվար-ապրիլ ամիսներին նահանջելով հասավ Ալեքսանդրապոլ: Մայիսին այն ակտիվ մասնակցություն ունեցավ հերոսամարտերին: Հարվածային խմբի կազմում գունդը որոշակի դեր խաղաց Արաքս կայարանի շրջակայքում թուրքական բանակի ջախջախման գործում: Այնուհետև՝ հայկական բանակի վերակառուցման շրջանակում, գունդը կազմացրվեց, իսկ մարտիկները ծառայության վերցվեցին այլ զորամասերում[1]:

Այսպիսով, ինչպես ամբողջ Արևմտյան Հայաստանը, այնպես էլ Երզնկան գրավվեց հայ ժողովրդի ոխերիմ ու նենգ թշնամու՝ թուրքի կողմից: Ու այսպես աշխատասեր, իրեն սնող, կյանք տվող ժողովուրդից իսպառ զրկվեց Երզնկան, ամայացավ մի քաղաք, որը գեթ վավերական տվյալներով 3000 տարի եղել էր հայերի բնակավայր, ունեցել էր փառքի ու անկման շրջաններ, որտեղով եկել անցել էին հռոմեական լեգեոնները, արաբական, սելջուկյան, թուրք-թաթարական վայրի հորդաները, եկել էին, ավերել, քանդել, գնացել էին, բայց չէր հուսահատվել հայ ժողովուրդը, վերաշինել էր, կրկին կառուցել, բուժել վերքերը, մինչև որ եկել էին նվաճողներից ամենից վայրագները, ամենից անմարդկայինները, եկել էին ու իրենց բանաստեղծներից մեկի բերանով ազդարարել, թե «Կոխոտած տեղերուս ամեն մեկ մասեն արյուն պիտի ժայթքի: Երկարած թաթիս տակ, գարունները աշնան և աշունները ձնդանի պիտի վերածվին: Վարդաստաններ գերեզմանատներ պիտի ընեմ, սվինովս անանկ կործանված ու գետնի հավասար ավերակույտ մը պիտի թողում, որ տասը դարեր չկարենան քաղաքակրթություն մը կանգնեցուցնել անոր վրա... Շունչես հուր պիտի սփռեմ, զենքես մահ, իսկ քայլափոխես՝ անդունդ... Գթությունը պիտի կախեմ յաթաղանիս սայրին, իմաստությունը՝ հրազենիս լուցկիին, քաղաքակրթությունն ալ՝ նժույգիս ետևի պայտին...

---

[1] *Հայկական ազգային զորամիավորումների, այդ թվում և «Երզնկայի գնդի» մասին տե՛ս* **Գ. Ղորղանյանի՝** «La participation des Armèniens à la Guerre Mondiale sur le Front do Caucase (1914-1918)», Paris, 1927; *Տե՛ս նաև նույնի հայերեն թարգմանությունը «Հայրենիք» ամսագրի 1927 թ. համարներում:*

Լեռներու փապարներ, անտառներու չուքեր և խոպանությանց փոթ-փոթած դեմքեր պիտի խոսին հավիտենության՝ «Հոստեղեն անցնող թուրքին պատմությունը»:

Ինչպիսի հանճարեղ ինքնաբնութագրում...

Մնացե՞լ են հայեր Երզնկայում, որպեսզի գեթ մեկ ծաղիկ դնեին համայնական այդ գերեզմանների վրա:

Մեզ ծանոթ վերջին տվյալները վերաբերում են 1928–1929 թվականներին:

Այդ տարիներին Երզնկա քաղաքում եղել են վաթսուն հայ կանայք, հավանաբար թուրքական ընտանիքներում, իսկ գյուղերում՝ քառասուն հայուհիներ: Փոքր և Մեծ Արմտաններում եղել են 66 հայեր, որոնցից 26-ը՝ տղամարդ, 40-ը՝ կին: Դերջանի կենտրոն Մամախաթունում եղել է 8 տղամարդ, 15 կին: Դվնիկ գյուղում՝ 3 տղամարդ, 5 կին, Բագառիճում՝ 2 տղամարդ, 3 կին, Վիժանում՝ 4 կին, Կոթերում՝ 3 որբ, 8 որբուհի, Ծաղկարիում՝ 3 կին, Խարխինում՝ 23 կին, 6 տղամարդ և այլն[1]:

Եթե այս թվերը համեմատենք նույն տարիներին հայկական այլ քաղաքներում ու գավառներում ապրող հայերի թվի հետ, Երզնկայինը ամենից քիչն է: Այսպես այդ նույն թվերին Սեբաստիայում եղել է 5000, Կեսարիայում՝ 4000, Մալաթիայում՝ 1500 հայ և այլն:

---

[1] *«Ընդարձակ տարեցույց ս. Փրկչյան Ազգային հիվանդանոցի», Կ. Պոլիս, 1930, էջ 145:*

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ԵՐԶՆԿԱՑԻՆԵՐԻ ՑՐՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Երզնկացիներն իրենց գավառից դուրս գալուց հետո՝ հիմնականում երկու ուղղությամբ են տարածվել: Այն երզնկացիները, որոնք եղել են աքսորի ճանապարհներին և անլուր տառապանքներ կրելով հասել են մինչև արաբական անապատները, ցրվել են արաբական երկրներում, Բալկաններում, Ֆրանսիայում, հասել մինչև Ամերիկա: Մենք նրանց մասին խոսելու ենք առանձին գլխում:

Այս գլուխը հատկացրել ենք այն երզնկացիներին, որոնք կոտորածի օրերին թաքնվելով Դերսիմի սարերում, քրդերի տներում կամ այլուր, փրկվել էին, ռուսական գրավման շրջանում ապրել Երզնկայում, և մեծ նահանջի օրերին, բազմահազար այլ գաղթականների հետ բռնել էին Ռուսաստանի ճանապարհը, առաջին հերթին հանգրվանելով Կովկասում:

Բայց Կովկասը, իր վրա կրելով Առաջին համաշխարհային պատերազմի ողջ ծանրությունը, հյուրընկալելով հարյուր հազարավոր գաղթականների, ի վիճակի չէր տեղավորելու, աշխատանք ու սնունդ տալու հեղեղի նման յուրաքանչյուր օր եկող նորանոր խմբերի:

Ռուսաստանը անծայրածիր տարածություններ ուներ, որտեղ աշխատասեր ու չարքաշ կյանքի սովոր հայը կարող էր հաց ճարել:

Վանի, Կարինի, Երզնկայի բազմահազար հայեր ընտանիքներով և առանձին-առանձին՝ բռնում են Ռուսաստանի տարբեր քաղաքների ճանապարհները՝ վստահ, որ գեթ թուրք ու քուրդ ջարդարարների չեն հանդիպելու:

Երզնկացիների մի մասը մնացել է Թբիլիսիում, որտեղ մինչև 1970-ական թվականներն ապրում էին քսանից ավելի ընտանիքներ՝ Երզնկա քաղաքից կամ գյուղերից: Անշուշտ, սկզբնապես նրանց թիվը ավելի է եղել, սակայն աստիճանաբար հեռացել են: Թբիլիսիում մնացել են հիմնականում առևտրով զբաղվողներ և արհեստավորներ:

Երզնկացիների մի մասը տարածվել է Սև ծովի ափերի երկայնքով ընկած վայրերում՝ Բաթում, Սուխում, Գագրա, Սոչի, հասնելով մինչև Նովոռոսիյսկ, Անապա: Անապայում Երզնկացիները ստեղծել են «Երզնկա» կոլտնտեսությունը, որը եղել է այդ երկրամասի ամենահարուստ տնտեսություններից մեկը և մինչև Հայրենական Մեծ պատերազմի տարիները պահել է հայկական դիմագիծը, ունեցել դպրոց, ակումբ, կապեր է պահպանել Հայաստանի հետ: «Երզնկա» կոլտնտեսությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին տրվել է հերոսներ ու հերոսուհիներ, որոնցից մեկը արժանացել է բացառիկ գնահատման, կանգնեցվել է նրա արձանը:

Երզնկացիների մի այլ հոսանք չարժվել է դեպի Հյուսիսային Կովկաս, բնակություն հաստատել Կրասնոդարում, Մայկոպում, Արմավիրում: Այս բոլոր քաղաքներում մեծ թիվ են կազմել նաև վանեցիները: Ամենուր եղել են հայկական դպրոցներ:

Վերջապես երզնկացիներ ու դերջանցիներ ապրել են Վրաստանի Շուլավերի շրջանում, որտեղ մասնավորապես Կարմիր գյուղում տեղավորվել են դերջանցի բազմաթիվ ընտանիքներ: Նրանց մի մասը հետագայում տեղափոխվել է Ռուսաստան կամ Հայաստան, մի մասը մինչև այժմ էլ դեռ այնտեղ է ապրում:

Մի ընդարձակ գլուխ հնարավոր էր հատկացնել մեր հիշատակած վայրերում ցրված երզնկացիներին, ամենևին չկասկածելով, որ ինչպես Հայաստանում ապրող երզնկացի ընտանիքների, այնպես էլ Մայկոպից կամ Կրասնոդարից, Բաթումից կամ Սուխումից դուրս են եկել ականավոր շատ դեմքեր, ծնված երզնկացի ընտանիքներում:

Դժբախտաբար մեր ձեռի տակ չունենք անհրաժեշտ նյութեր այդ բացը լրացնելու, ուստի զանց առնելով՝ խոսենք Հայաստանում բնակություն հաստատած երզնկացիների մասին:

2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԶՆԿԱՑԻՆԵՐԻ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Տարբեր դարերում, տարբեր տարիներին՝ տասնյակ հազարավոր երզնկացիներ են գաղթել իրենց հայրենիքից ու ցրվել օտար ափեր: Մենք այնպես էլ չգիտենք նրանց հետագա ճակատագիրը: Գաղթել են, ձուլվել օտարների մեջ ու կուլ գնացել մարդկային օվկիանոսում:

Ձուլվել ու անհետացել են Ամերիկայում, Բալկաններում, Ֆրանսիայում, Ռուսաստանում:

Միակ վայրը, որ երզնկացիների գոյատևման, հայ ապրելու հանգրվան է հանդիսացել՝ եղել է Խորհրդային Հայաստանը: Ամենևին

էլ պատահական չէ, որ ամբողջ աշխարհով մեկ ցրված երգնկացիները միասին վերցրած չեն թողել այնքան հետք, այնքան չեն ծառայել Մայր հայրենիքին ու ժողովրդին, որքան Խորհրդային Հայաստանում ապաստան գտած, հայկական միջավայրում, հայկական պետականության պայմաններում աշխատող երգնկացիները, որոնց մեծ մասը պահել է երգնկացի լինելու արժանապատվությունը, հպարտությամբ է հիշում, որ ինքը կամ իր նախնիները եղել են երգնկացիներ:

Ծանոթացնելու ենք մի քանի երգնկացի գերդաստանների:

ԵՐԶՆԿՑԱՆՆԵՐ

Նախորդ գլուխներից մեկում տեսանք, որ երգնկացիները հարկադրված են եղել թողնել իրենց հայրենիքը և օտար երկրներ գաղթել հնագույն դարերից սկսած: Գաղթել են դեռևս Բյուզանդական կայսրության և արաբական տիրապետությունների շրջանում, մասնավորապես ջալալիների արշավանքների, ենիչերիների ասպատակությունների տարիներին:

Նման մի զանգվածային գաղթ էլ 1829 թ. մեծ գաղթն էր, որ հայ ժողովրդի պատմության մեջ հայտնի է Կարնո գաղթ անունով:

Անկախ այդ հորջորջումից՝ Կարապետ եպիսկոպոս Բագրատունու գլխավորությամբ կատարված այդ մեծ տեղաշարժին մասնակցել են նաև այլ գավառների տասնյակ հազարավոր հայեր, ինչպես Երգնկայից, Կամախից ու Դերջանից: Կա կարծիք, որ մոտ 30.000 հոգի են գաղթել վերոհիշյալ երեք գավառներից:

Կարինը իր դիմագիծը պահպանել է Ախալցխայում ու Ախալքալաքում և մինչև այսօր էլ այդ երկու քաղաքների ու նրանց տասնյակ գյուղերի բնակիչները հավատարիմ են մնացել Բարձր Հայքի ավանդույթներին, բառուբանին, ծիսակատարություններին:

Երգնկացիներն այնպես էլ պիտի մոռացվեին այդ մեծ հեղեղի մեջ, եթե գեթ մի ընտանիքի նահապետները չմտածեին Երգնկայի հիշատակն իրենց ապագա սերունդների մեջ վառ պահելու մասին:

150 տարի առաջ հայրենիքից դուրս եկած և մինչև Ախալցխա ու Ախալքալաք հասած այդ ընտանիքի շառավիղներն են, որ ճյուղավորվելով դարձել են հարյուրից ավելի Երգնկյան ընտանիքներ և ցրվել Կովկասով մեկ, նաև Ռուսաստանի տարբեր քաղաքներում:

Միայն Երևանում այժմ ապրում են 27 Երգնկյան ընտանիքներ: Գրեթե նույնքան էլ Թբիլիսիում:

Ահա այս ուշագրավ տոհմի պատմությունն է, որ ուզում ենք զետեղել մեր աշխատությունում, քանի որ Երզնկյանների մեծ մասը ոչ միայն գիտի, թե որտեղից է եկել իրենց ազգանունը, այլ հպարտությամբ է հիշատակում Երզնկայից սերվելու փաստը:

Այդպիսի Երզնկյաններից է ականավոր մանրէաբան, կենսաբանական գիտությունների դոկտոր Լևոն Երզինկյանը, որն էլ մեզ հաղորդել է Երզնկյանների տոհմագրության որոշ մանրամասնությունները:

Ահա այդ պատմությունը:

1828–1829 թթ. մեծ գաղթի ժամանակ մինչև Կովկաս հասած երզընկացիներից երկու եղբայրներ՝ Հովակիմը և Քոռ Օհանը այստեղ բաժանվել են միմյանցից: Հովակիմն իր բազմանդամ ընտանիքով մնացել է Ախալցխայում, իսկ Օհանը բնակություն է հաստատել Ախալքալաքում:

Սրանց բուն ազգանունը Երզնկայում եղել է Վահրատյան: Ըստ երևույթին այդ երկու եղբայրները կամ ծնված պիտի լինեին 1790-ական թվականներին, կամ՝ 19-րդ դարի սկզբներին:

Նրանք, իրենց ծննդավայրի հիշատակը պահելու համար, պայմանավորվել են, ուր էլ որ գնան, օգտագործեն Երզնկյան ազգանունը:

Հովակիմի սերունդը նախ ապրել է Ախալցխայում, ապա՝ Թիֆլիսում, իսկ Օհանի սերունդը՝ նախ Ախալքալաքում, ապա՝ Հաղբատում: Ավելի ուշ՝ Հաղբատցի Երզնկյաններն էլ տեղափոխվել են Թիֆլիս, վերջապես երկու ճյուղավորումների ժառանգները արդեն բնակվել են Անդրկովկասի և Ռուսաստանի տարբեր քաղաքներում, միշտ հավատարիմ մնալով իրենց նախապապերի պատգամներին՝ պահել Երզնկյան ազգանունը:

Ծանոթանանք այդ երկու ճյուղավորումներին՝ առանձին-առանձին:

1835 թ. Ախալցխայում ծնվել է Հաջի Հովակիմ Վահրատյանի որդին՝ Հարություն Հովակիմի Երզնկյանը: Նա այստեղ էլ ստացել է կրթությունը, ձեռնադրվել քահանա, պաշտոնի բերումով տեղափոխվել է Կարս, աշխատել այնտեղ:

Հարություն Հովակիմի Երզնկյանը ունեցել է երկու որդի՝ Գրիգոր Երզնկյան և Հակոբ Երզնկյան: Առաջինը՝ Գրիգոր Երզնկյանը ծնված 1856 թ., կրթությունն ստացել է ծննդավայրում և ունեցել է մանկավարժական բեղուն գործունեություն: Նա աշխատել է Կարսի ս. Լուսավորչյան և ս. Շուշանիկյան դպրոցներում որպես տեսուչ և

մի քանի առարկաների ուսուցիչ: Միաժամանակ ունեցել է գրական հրապարակախոսական գործունեություն: Աշխատակցել է արևելահայ մամուլին: 1880-ական թվականների վերջից թղթակցություններ է տպագրել «Արձագանք» հանդեսի մի քանի համարներում: Հրատարակել է դասագրքեր:

Հակոբ Երզնկյանը ունեցել է փոթորկալից կյանք: Չի հետևել հոր՝ Հարություն քահանայի մասնագիտությանը, այսինքն՝ չի ընդունել հոգևորական կոչում, ունեցել է հասարակական, քաղաքական գործունեություն: Կրթությունն ստացել է Ախալցխայում, աշխատել Թիֆլիսում, որտեղ էլ նախ հարել է Հնչակյան կուսակցությանը, ապա դարձել սոցիալ-դեմոկրատ և ունեցել հեղափոխական խիզախ գործունեություն: Հիմնական մասնագիտությունը եղել է զինագործությունը:

Թիֆլիսում նրան տրվել է զենքեր նորոգելու պատենտ, պայմանով որ իր պատրաստած զենքերը չլինեն ռուսական:

Այս աշխատանքի բերումով մտերմական կապեր է հաստատել Կովկասի հեղափոխական շրջանների հետ, ունեցել է հայ, ռուս, վրացի բազմաթիվ գաղափարակից ընկերներ, որոնց համար զենք է հայթայթել: Նրա այդ կարգի բարեկամներից են եղել առասպելական հեղափոխական գործիչ Կամոն, Սերգո Խանոյանը և ուրիշներ:

ՌՍԴԲԿ կենտրոնի առաջադրանքով և Խանոյանի հանձնարարությամբ Հակոբ Երզնկյանը պատրաստել է երեք ռումբ, որոնք ընդհատակի ընկերների կողմից կոչվել են «Հակոբի ռումբեր»:

Կամոն այդ ռումբերից մեկն օգտագործել է Թիֆլիսի Երևանյան հրապարակում իրագործած հայտնի օպերացիայի ժամանակ, մյուսով Բարյատինսկի փողոցում սպանել են գեներալ Գրյազնովին:

Այս դեպքերից հետո ձերբակալվել է Հակոբ Երզնկյանը: Նրա մոտ հայտնաբերվել է Ա. Խանոյանի և Ս. Մարտիկյանի համար պատրաստած երկու ատրճանակ: Նրան բանտարկել են Մետեխի և Օրթաճալայի բանտերում, դատել են և դատապարտել ցմահ աքսորի:

Թիֆլիսում են ծնվել Հակոբ Երզնկյանի երեք որդիները՝ Լևոնը (ծն. 1906), Ալեքսանդրը (ծն. 1909), Սուրենը (ծն. 1911) և դուստրը՝ Անահիտը (ծն. 1907 թ.):

Երզնկյանների Հաղբատում հաստատված տոհմի մի ճյուղավորումն էլ հետագայում բնակություն է հաստատել Թիֆլիսում:

Այս տոհմի շառավիղներից են՝ Հարություն Երզնկյանը, նրա որդին՝ Արամայիս Երզնկյանը, վերջինիս որդին՝ Յուրի Երզնկյանը և այլն:

Ուշագրավ է, որ Երզնկյանների երկու ճյուղավորումներում էլ կրկնվել են նույն անունները: Արամայիսի հայրն էլ Հարություն է, Լևոնի պապն էլ, Արամայիսի տղան էլ Լևոն է, Հակոբի տղան էլ:

Նախքան մի քանի ականավոր Երզնկյաններին ծանոթացնելը անհրաժեշտ է դառնում լուծել մի կնճռոտ հարց, որը չի տեղավորվում Երզնկյանների նախահայրերի 1829–1830 թթ. գաղթելու շրջանակի մեջ:

Ունենք մի այլ Երզնկյան էլ, այն էլ դարձյալ Հաղբատում ծնված, որը յոթ տարեկան էր Կարապետ եպիսկոպոսի գաղթի տարիներին: Դա Ռոստոմ բեգ Երզնկյանն է, բավականաչափ հայտնի մի դեմք, հեղինակ բազմաթիվ աշխատությունների, որի թե՛ ծննդյան թիվն է հայտնի և թե՛ մահվան: Նա ծնվել է Հաղբատում 1823 թվականին, վախճանվել 1893 թ. Թելավում:

Արդ՝ կամ պետք է կասկածի տակ առնենք մեր շարադրության այն մասը, որ վերաբերում է Երզնկյանների տոհմագրության սկզբնավորությանը, կամ ժամանակը ետ պիտի տանենք մի քանի տասնամյակով:

Ուզում ենք ընդունել երկրորդը:

Որ Ռոստոմ բեգ Երզնկյանը և արդեն մեր հիշատակած Հաղբատցի Երզնկյանները նույն գերդաստանին են պատկանել, կասկածից վեր է: Հետևաբար կասկածից վեր է նաև, որ Հովակիմ և Օհան եղբայրները Հաղբատ են եկել շատ ավելի վաղ, քան Կարնո մեծ գաղթը:

Կարող էին գալ:

Նախ Հաղբատը երզնկացիներին ծանոթ ու հարազատ վայր է եղել դեռևս 12–13-րդ դարերից: Հաղբատի հռչակավոր վանքում են սովորել մի քանի գրիչներ, ծաղկողներ, վերջապես այնտեղ գործել է Հովհաննես Երզնկացին:

Կապը Հաղպատի հետ՝ շարունակվել է հետագա դարերում: Իսկ 19-րդ դարասկզբին, երբ ռուսները փորձել են ներթափանցել Անդրկովկաս՝ ճակատել Թուրքերի հետ, արևմտահայերի հույսը միշտ դրված է եղել ռուսական զենքի վրա: Փաստ է, որ ռուսական զորքը փորձել է Ախալցխան գրավել դեռևս 1807 և 1811 թվականներին: Հուսատու այդ օրերին շատ արևմտահայեր գաղթել են հենց այն վայրերը, որ հետագայում դառնալու էին Կարապետ եպիսկոպոսի բերած գաղթականների նոր հայրենիքը:

Վավերական փաստ է նաև այն, որ 1829–1830 թթ., երբ Էրզրումի գաղթականները եկել են Ախալցխայում տեղավորվել ու գետի աջ ափին կառուցած իրենց նոր ավանը ցանկացել են կոչել «Նոր Էրզ-

ռում», Պասկևիչը մերժել է: Հենց այդ ժամանակ Ախալցխայում արդեն ապրում էին 411 հայեր, որոնք ավելի վաղ էին եկել: Իսկ որ Թուրքիայից դեռևս 16-րդ դարից սկսած, մասնավորապես հետագայում ջալալիների արշավանքների օրերին զանգվածային գաղթեր են եղել ոչ միայն դեպի արևմուտք, դեպի Կ. Պոլիս, այլ հենց դեպի Ախալցխայի ու Ախալքալաքի գավառները, ցույց է տալիս այն փաստը, որ 16-րդ դարի վերջերից Ախալցխայում ապրող ծխերի մեծ մասը կրել է հայկական անուններ:

Արդ միանգամայն բնական է, որ Հովակիմն ու Օհանը կարող էին այնտեղ եկած լինել շատ ավելի վաղ, քան Կարապետ եպիսկոպոսի գաղթը:

Դրա օգտին են խոսում այն փաստերը, որոնք վերաբերում են այդ թվականներին այլ Երզնկյանների գոյությանը Հաղբատում: Օրինակ՝ 1824 թվականին, այսինքն՝ հենց այն տարում, որ ծնվել է Ռոստոմ բեգ Երզնկյանը, Հաղպատի վանքի բակում վերանորոգվել է Հովհաննես Երզնկացու գերեզմանը: Հնարավոր է, որ այդ բանը կատարած լինեին նրա հայրենակիցները: 1833 թվականից հետո Հաղպատի վանքի վանահայրերի ցուցակում գտնում ենք երկու Երզնկյանների:

Հաղպատի վանքի բակում կա Երզնկյանների տոհմի գերեզմանատունը, որտեղ գտնում ենք 1860-ական թվականներին մահացած Երզնկյաններ, որոնց թվում՝ երեցկին Թադուհի Երզնկյանին, վախճանված 1865 թվականին: Հնարավոր է, որ սա էլ ծնված լիներ 1820-ական թվականներին:

Այս ընդհանուր դիտողություններից հետո ժամանակագրական կարգով ծանոթացնենք առավել ականավոր մի քանի Երզնկյանների:

***ԵՐԶՆԿՅԱՆ ՌՈՍՏՈՄ ԲԵԳ** (1823–1893) – Բանասեր, կրթական գործիչ: Ծնվել է Հաղպատում: Կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ավարտել 1842 թվականին՝ բարձր ցուցանիշներով, որի շնորհիվ էլ նույն տարվանից պահվել է այնտեղ՝ որպես հայկաբանության և պատմության ուսուցիչ: Հենց հաջորդ տարի՝ 1843 թվականին, լույս է ընծայել «Համառոտութիւն պատմութեան Հայոց» ուսումնական ձեռնարկը, որը երկար տարիներ օգտագործվել է որպես դասագիրք: Կովկասահայ առաջին պարբերականում՝ «Կովկասում», 1846 թ. տպագրել է Կոիլովից կատարած մի թարգմանություն և փոքրիկ մի հետազոտություն՝ Հաղպատի վանքի մասին: Նույն այդ տարում թողել է ուսուցչությունը, հրաժարվել հոգևորական կոչումից, ծառայել ցարական բանակում: Մեկնել է Դաղստան, մասնակցել*

Շամիլի դեմ մղված կռիվներին: 12 տարի ապրելով Դաղստանում, ուսումնասիրել է այդ երկրի պատմությունը, կենցաղը, սովորությունը: Գրել է «Ավարիա» խորագրով մի աշխատություն, որն ըստ էության հանդիսանում է Դաղստանի պատմությունը: Նրա այդ աշխատությունը մնացել է անտիպ: 1861 թվականին թողել է զինվորական գործունեությունը, վերադարձել Կովկաս, նշանակվել Թելավի հայկական նորաբաց դպրոցի ուսուցիչ: Գրել է «Պանդուխտ Դաղըստանի» գիրքը, որն ունի ինքնակենսագրական բնույթ, և որից հատվածներ տպագրել մամուլում: «Մեղու Հայաստանի» լրագրի 1860–1861 թթ. տասնյակ համարներում տպագրել է Սանահինի և Հաղպատի հնությունների ընդարձակ նկարագրությունները, իսկ «Արարատ» ամսագրի 1886 թվականի վերջին երեք համարներում և հաջորդ տարվա ութը համարներում տպագրվել է նրա ամենից ուշագրավ աշխատությունը՝ նվիրված Հաղպատի վանական համալիրի վիմական արձանագրություններին[1]:

***ԵՐԶՆԿՅԱՆ ԵԶՆԻԿ** (1852–1919) – Երաժշտագետ-խմբագիր: Ծնվել է Թիֆլիսում: Կրթությունն ստացել է Ներսիսյան դպրոցում, որն ավարտել է 1871 թ. և զբաղվել ուսուցչությամբ: 1873 թ. Գևորգ Դ կաթողիկոսը նրան հրավիրել է Էջմիածին՝ Նիկողոս Թաշճյանից ձայնագրություն սովորելու: 1874 թ. ավարտել է դասընթացը ձեռնադրվել քահանա, նշանակվել Ներսիսյան դպրոցի ձայնագրության ուսուցիչ, միաժամանակ պաշտոնավարել է Գայանյան օրիորդաց դպրոցում: 18 տարի շարունակ երաժշտություն է դասավանդել Ներսիսյան դպրոցում: Հրատարակել է ձայնագրության վերաբերյալ մի քանի ձեռնարկներ, ինչպես «Դասագիրք հայկական ձայնագրության», «Մանկական ձայնագրյալ երգարան», «Ազգային լիակատար ձայնագրյալ երգարան»: Հրատարակել է նաև կրոնական դասագրքեր: 1906–1910 թթ. Թիֆլիսում հրատարակել է «Հովիվ» կրոնական շաբաթաթերթը, որը հետագայում վերանվանվել է «Հովիտ» և լույս տեսել մինչև 1917 թվականը:*

***ԵՐԶՆԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ** (1881–1963) – Հրապարակախոս, խմբագիր, հասարակական գործիչ: Ծնվել է Հաղպատում: Կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Մոսկվայի, Փարիզի, Ժնևի համալսարաններում: Դա-*

[1] **Ռոստոմ բեգ Երզնկյան,** *Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհա - հռչակ վանից Սրբոյ Նշանի, Վաղարշապատ, 1886:*

բասկզբից մասնակցել է բանվորական շարժումներին: Աքսորվել է Սիբիր: Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո աշխատել է Թիֆլիսում, խմբագրել մի քանի թերթեր՝ «Բանվոր», «Լոռվա գյուղացիության ձայնը», «Երինտ»: Եղել է Թիֆլիսի «Մարտակոչ» օրաթերթի խմբագիրներից, Հայաստան կազմակերպիչներից: 1920-ական թվականների կեսերից աշխատել է Մոսկվայում, վարել պատասխանատու պաշտոններ: 1930 թվականից աշխատել է Ֆինլանդիայի խորհրդային դեսպանատանը և այլևս չի վերադարձել: Բնակություն է հաստատել Շվեդիայում: Երկար լռությունից հետո, կյանքի վերջին տասնամյակում, 1950-ական թվականներին սփյուռքահայ առաջադիմական մամուլում («Լրաբեր», «Պայքար» և այլն), հանդես է եկել մի շարք հոդվածներով, օգտագործելով Ս. Լորելլի ծածկանունը: Այդ հոդվածներից մեկում բացատրել է հայրենիք չվերադառնալու պատճառները: Շվեդիայում ապրելու տարիներին հեղափոխական հերոս Կամոյի մասին հրատարակել է մի ծավալուն աշխատություն:

***ԵՐԶՆԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ** (1879-1938) – Կուսակցական, պետական գործիչ: Ծնվել է Հաղպատում: Կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որն ավարտելուց հետո մեկնել է արտասահման, Ժնևի համալսարանում հետևել է հասարակական գիտությունների դասընթացին: Վերադառնալով Կովկաս, մասնակցել է հեղափոխական շարժումներին: 1903 թվականին, ՌՍԴԲԿ 2-րդ համագումարից հետո հարել է մենշևիկյան կուսակցությանը: 1907 թ. մասնակցել է ՌՍԴԲԿ 5-րդ (Լոնդոնյան) համագումարին: Ունեցել է խմբագրական, հրապարակախոսական բեղուն գործունեություն: 1906 թվականին խմբագրել է «Կայծ» թերթը, 1915 թվականին՝ սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթը: 1920 թ. ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը: Խորհրդային կարգերի հաստատումից հետո պատասխանատու պաշտոններ է վարել նախ Վրաստանում, ապա՝ Հայաստանում: Եղել է ՀԽՍՀ Հողագործության ժողովրդական կոմիսար, ժողկոմխորհրդի նախագահի տեղակալ, Երևանի քաղաքային գործադիր կոմիտեի նախագահ: 1920–1929 թթ. խմբագրել է «Գյուղատնտեսական կյանք» շաբաթաթերթը: Անհիմն բռնադատվել է, մահացել բանտում:*

***ԵՐԶՆԿՅԱՆ ՅՈՒՐԻ** – Կինոռեժիսոր, Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ (1975): Ծնվել է 1922 թվականին, Երևանում: Միջնակարգ և բարձրագույն կրթությունն ստացել է Երևանում: 1948 թ. ավարտել*

է Ռ. Սիմոնովի գլխավորությամբ գործող Մոսկվայի հայկական թատերական ստուդիայի ռեժիսորական բաժինը: Որպես պրակտիկանտ 1946–1948 թթ. սովորել է Մոսկվայի Վախթանգովի անվան թատրոնում: Հետագայում, 1952 թ. էքստեռն կարգով ավարտել է Երևանի թատերական ինստիտուտը:

1940 թվականից Երևանի Ջ. Ջաբարլիի անվան ադրբեջանական թատրոնում բեմադրել է պիեսներ, իսկ 1943 թվականից աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում, նախ որպես գեղարվեստական ձևավորող, ապա՝ ռեժիսոր: 1955 թվականից ունեցել է անհատական նկարահանումներ: Այդ տարվանից նկարահանել է գեղարվեստական և դոկումենտալ տասնյակ ֆիլմեր, ինչպես «Հասցեատիրոջ որոնումները», «Հովազաձորի գերիները», «Առաջին սիրո երգը», «Իմ ընկերոջ մասին», «Փառքի օղակները», «Դժվար անցում» և այլն[1]:

ԵՐԶՆԿՅԱՆ ԼԵՎՈՆ (ծն. 1906) – Մանրէաբան գիտնական. կենսաբանական գիտությունների դոկտոր: Ծնվել է Թիֆլիսում: Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի գյուղատնտեսական ֆակուլտետն ավարտել է 1930 թվականին:

1933 թվականից աշխատել է կաթի արդյունաբերության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայկական մասնաճյուղում: 1961 թ. նշանակվել է Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի մանրէաբանության ինստիտուտի խմորող միկրոօրգանիզմների լաբորատորիայի վարիչ: Հրատարակել է մասնագիտական ծավալուն հետազոտություններ: Մշակել է մայրական կաթին փոխարինող «Նարինե» և «Կարինե» սննդանյութերը[2]:

ԵՐԶՆԿՅԱՆ ԴԱՎԻԹ (1920–1976) – Դիրիժոր: Ծնվել է Հաղպատ գյուղում: 1934 թվականից Կիրովականի դրամատիկական թատրոնում նվագել է ջութակ: Ապա տեղափոխվել է Երևան, սովորել պետական կոնսերվատորիայում, ավարտելուց հետո իբրև երաժիշտ աշխատել է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում, պետական կրկեսում, իսկ 1943 թվականից մինչև կյանքի վերջը՝ Երևանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում, որտեղ նախ եղել է ջութակահար, ապա՝ դիրիժոր, գլխավոր դիրիժոր: Նրա ղեկավարությամբ այդ թատրոնում բեմադրվել են «Մեծ հարսանիք», «Աղբյուրի մոտ», «Երեք գրոչանոց օպերա», «Սիլվա», «Իմ

[1] Յուրի Երզնկյանը մահացել է 1996 թ. (ծան. խմբ.):
[2] Լևոն Երզնկյանը մահացել է 1991 թ. (ծան. խմբ.):

չքնաղ լեռի» և այլ գործեր: Նրա ղեկավարությամբ են պատրաստվել «Կարինե», «Արևելյան ատամնաբույժ» և «Մորգանի խնամի» պիեսների ռադիո-ձայնագրումները, որոնք հաճախ են հաղորդվել մեր ռադիոյից:

***ԵՐԶՆԿՅԱՆ ՄԱՐՈ** (ծն. 1920) – Կինոդրամատուրգ: Սովորել է կինոմատոգրաֆիայի համամիութենական ինստիտուտի սցենարական բաժնում, որն ավարտել է 1947 թ.: Նրա սցենարներով նկարահանվել են «Գվարդիականի կինը», «Սիրտը երգում է (Գր. Մելիք-Ավագյանի հետ), «Կյանքը կողքով անցավ» և այլ ֆիլմեր[1]:*

ԽԱՆՋՅԱՆՆԵՐ

Այժմ անցնենք մեր հիմնական չարադրանքին, այսինքն՝ մեծ նահանջից հետո Հայաստան ապաստանած երզնկացի ընտանիքներին:

Դրանցից ամենալայն ճյուղավորում ունեցողները Խանջյաններն են:

Երզնկայում եղել են Խանջյան մի քանի գերդաստաններ: Նրանցից երկուսը գաղթել են Հայաստան, ապրել Երևանում, տարիների ընթացքում բազմացել, ճյուղավորվել են և սովետահայ գիտությանն ու մշակույթին տվել տասնյակ գործիչներ:

Խանջյան այդ երկու ընտանիքներից մեկի ներկայացուցիչներն են Ներսես, Արամ, Սեպուհ և Ժիրայր Խանջյան եղբայրները և նրանց երկու քույրերը՝ Արշալույսն ու Սանդուխտը:

Սրանցից Ներսես Խանջյանը (1906–1937) ծնված Երզնկայում, բարձրագույն կրթությունն ստացել է Երևանում, և ավարտելուց հետո դասավանդել է Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտում, որպես կուսակցության պատմության դասախոս:

Երկրորդը՝ Արամ Խանջյանը եղել է հայտնի մաթեմատիկոս, այդ առարկան դասավանդել է մեր ուսումնական հաստատություններում և համարվել հանրապետության լավագույն մասնագետներից մեկը: Թարգմանել է մաթեմատիկայի դասագրքեր:

Խանջյանների երրորդ եղբայրը՝ Սեպուհը, փայլել է զինվորական ասպարեզում, կրթությունն ստացել է Երևանի զինվորական դպրոցում, ծառայել խորհրդային բանակում, Հայրենական պատերազմի տարիներին եղել է Ս. Զաքիյանի դիվիզիայում և զոհվել գերմանացիների դեմ մղված մարտերում:

---

[1] **Գ. Ստեփանյան,** *Կենսագրական բառարան, հատ. 1, Երևան, 1973, էջ 311:*

Ժիրայր Խանջյանը, որ կրտսերն է չորս եղբայրների մեջ, մասնագիտությամբ ինժեներ է:

Անհամեմատ ավելի շատ նյութ ու ասելիք ունենք երգնկացի մյուս Խանջյանների մասին, այսինքն՝ Սեպուհ Խանջյանի, նրա երկու որդիների՝ Հակոբի ու Գրիգորի, և Հակոբի ավագ որդու՝ Դավիթ Խանջյանի մասին:

Սեպուհ Խանջյանը եղել է Երգնկայի ականավոր մտավորականներից, բազմակողմանի զարգացման տեր, լեզուների հմուտ, կատակասեր, սրամիտ ու կենսուրախ անձնավորություն:

Նա միջնակարգ կրթությունն ավարտել է Երգնկայում, ապա շարունակել ուսումը Կ. Պոլսում: Օսմանյան սահմանադրության առաջին տարիներին նկատելի դեր է կատարել Երգնկայի մշակութային կյանքում, Եղնիկյան դպրոցին կից հիմնադրված գրադարանի հարստացման, դասախոսությունների կազմակերպման գործում:

Որպես հմուտ մասնագետ 1911 թվականին պաշտոնի է հրավիրվել Վան, որտեղ ապրել է մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը, Վանի ինքնապաշտպանական կռիվների օրերին եղել է այնտեղ: Մեծ նահանջի օրերին իր ընտանիքով՝ երկու որդի և մեկ դուստր, գաղթել է Կովկաս, նախ ապրել Թիֆլիսում, ապա եկել Խորհրդային Հայաստան, վարել է տարբեր պաշտոններ:

Սեպուհ Խանջյանը Նոր Երգնկա ավանի հիմնադիրներից է, 1934 թվին եղել է երևանաբնակ երգնկացիների հանձնաժողովի մեջ, ինքն է գրել շրջաբերական Նոր Երգնկայի հիմնադրման մասին, բացատրելով իրենց նպատակները: Ինչ-ինչ պատճառներով այն ժամանակ դադարեց գործը և մեկ էլ արծարծվեց և լուծում ստացավ 1960-ական թվականներին:

Սեպուհ Խանջյանն ապրեց մինչև խոր ծերություն և վախճանվեց Երևանում 1950-ական թվականներին:

***ՀԱԿՈԲ ԽԱՆՋՅԱՆ** – Սեպուհ Խանջյանի ավագ որդին է, ծնվել է Վանում, 1912 թվականին:*

1915 թ. գաղթի օրերին ընտանիքով եկել են Կովկաս, բնակություն հաստատել Թիֆլիսում, որտեղ ստացել է հանրակրթական և մասնագիտական նախնական կրթությունը: Նրա երաժշտության ուսուցիչը եղել է երգնկացի երգահան Ազատ Մանուկյանը, որը մտերմական կապերով կապված է եղել Սեպուհ Խանջյանի հետ և ամեն ջանք թափել է նրա որդու երաժշտական հակումները քաջալերելու, անհրաժեշտ օգնությունը ցույց տալու համար:

1925 թվականին Խանջյանների ընտանիքը տեղափոխվել է Երևան, որտեղ Հակոբը շարունակել է կրթությունը, սովորել նորաստեղծ պետական կոնսերվատորիայում: Վերջին դասարանից տեղափոխվել է Լենինգրադի կոնսերվատորիան, ավարտել 1937 թվականին: Համարվել է փայլուն ջութակահար:

Վերադառնալով Երևան, աշխատել է Ալ. Սպենդիարյանի անվան Օպերայի և բալետի պետական թատրոնում որպես կոնցերտմեյստեր, իսկ Երևանի կոնսերվատորիայի ջութակի դասարանում՝ որպես ավագ դասատու:

Հայրենական պատերազմի տարիներին ծառայել է խորհրդային բանակում, ղեկավարել հայկական դիվիզիայի ինքնագործ էստրադային նվագախումբը, ջութակի վարպետ կատարումներով հմայելով բոլորին:

Նրա այդ տարիների կյանքն է պատկերված գրող Հ. Քոչարի «Երգը» գեղեցիկ ակնարկում, որը նախ տպագրվել է «Սովետական Հայաստան» թերթում՝ «Նամակներ գործող բանակից» շարքում, ապա զետեղվել է հեղինակի պատմվածքների ժողովածուում:

Հակոբ Խանջյանն իր ղեկավարած նվագախմբով հարյուրավոր համերգներ է տվել զորամասերում, ամենուր արժանանալով մարտիկների ջերմ վերաբերմունքին:

Հայրենական պատերազմի ավարտից հետո վերադարձել է Երևան, շարունակել մանկավարժական, ստեղծագործական աշխատանքը, միաժամանակ վարել է պատասխանատու պաշտոններ:

Նախ աշխատել է Օպերայի և բալետի պետական թատրոնում ու երաժշտական դպրոցում: 1948–1950 թթ. եղել է Հայֆիլհարմոնիայի, իսկ 1950–1952 թթ. Օպերայի և բալետի պետական թատրոնի տնօրեն, նկատելի դեր է կատարել մեր օպերան լավագույն կատարողական ուժերով ապահովելու, հայկական, ռուսական և արևմտաեվրոպական դասական օպերաների բեմադրության ուղղությամբ:

Հակոբ Խանջյանը երկար տարիներ՝ 1952–1965 թթ., եղել է Հայաստանի կուլտուրայի մինիստրության կից Արվեստի վարչության պետ, ըստ էության ղեկավարելով և ուղղություն տալով հանրապետության երաժշտական ողջ կյանքին:

Ապա, առողջական պատճառով թողել է վարչական պաշտոնը, զբաղվել գիտությամբ: Աշխատել է Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտում:

Հակոբ Խանջյանը սովետահայ մամուլում տպագրել է երաժշտագիտական և այլ բնույթի բազմաթիվ հոդվածներ, ի հայտ բերելով

մասնագիտական, վերլուծական խոր հմտություն, հրապարակախոսական լայն ձիրք:

1962 թ. ղեկավարել է Հայաստանի երգի-պարի պետական անսամբլի հյուրախաղային համերգները Մերձավոր Արևելքում (Սիրիա, Լիբանան, Եգիպտոս): Այդ ուղևորություններից իր ստացած տպավորությունները լույս է ընծայել «Երգը կանչում է» գրքում, որը պարունակում է փաստական հարուստ նյութ՝ վերոհիշյալ գաղթավայրերի մտավոր, երաժշտական կյանքի վերաբերյալ: Առանձին գրքով լույս է ընծայել նաև «Միքայել Թավրիզյան» մենագրությունը (Երևան 1957), իսկ մամուլում տպագրել է արժեքավոր հիշողություններ Ալ. Սպենդիարյանի և այլ երգահանների մասին: Գրել է «Սայաթ-Նովա» օպերայի լիբրետտոն:

ԴԱՎԻԹ ԽԱՆՋՅԱՆ – Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, դիրիժոր Դավիթ Խանջյանը ծնվել է Երևանում, ջութակահար, երաժշտագետ Հակոբ Խանջյանի և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Տաթևիկ Սազանդարյանի ընտանիքում, 1940 թվականին:

Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, որի դաշնամուրի դասարանն ավարտել է 1963 թվականին, դիրիժորականը՝ 1968 թվականին:

Աշխատել է Հայկական ԽՍՀ սիմֆոնիկ նվագախմբում, 1971 թվականին այդ նվագախմբի հետ մասնակցել է երիտասարդ դիրիժորների համամիութենական 3-րդ մրցույթին և արժանացել դիպլոմանտի կոչման:

Նա 1972–1973 թթ. մասնագիտությունը կատարելագործել է Վիեննայի երաժշտական ակադեմիայում: Վերադառնալով Երևան, շարունակել է աշխատել Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբում նախ որպես դիրիժոր, ապա՝ գլխավոր դիրիժոր և գեղարվեստական ղեկավար[1]:

ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆ – Երգնկայում կամ երգնկացու ընտանիքներում ծնված մարդկանցից քչերն են ձեռք բերել համընդհանուր այնպիսի լայն ճանաչում, համբավ, ինչպիսին ձեռք է բերել Հայկական ԽՍՀ ժողովրդական նկարիչ, ԽՍՀՄ Գեղարվեստների ակադեմիայի իսկական անդամ, ԽՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր Գրիգոր Խանջյանը, որի ստեղծագործական կյանքի երեք տասնամյակներից յուրաքանչյուրը հանդիսացել է բեղմնավոր գործունեության, ինքնատիպ արվեստի աստիճանական հասունացման մի շրջան:

[1] Դավիթ Խանջյանը մահացել է 1981 թ. (ծան. խմբ.):

Գրիգոր Խանջյանը ծնվել է Երևանում, 1926 թ. նոյեմբերի 29-ին, երգնկացի ականավոր մշակութային գործիչ Սեպուհ Խանջյանի ընտանիքում: Կրտսեր եղբայրն է երաժշտագետ Հակոբ Խանջյանի:

Մասնագիտական կրթությունն ստացել է նախ Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում, որն ավարտել 1945 թվականին, իսկ 1951 թվականին ավարտել է Երևանի գեղարվեստական ինստիտուտը:

Նույն տարվանից մասնակցել է հանրապետական, հետագայում նաև միութենական և արտասահմանյան տասնյակ ցուցահանդեսների:

Գրիգոր Խանջյանը հենց առաջին տարիներից հավասարապես հետաքրքրություն է ցուցաբերել թե՛ գրաֆիկայի և թե՛ գեղանկարչության նկատմամբ:

Նա ստեղծել է բազմաթիվ թեմատիկ նկարներ, դիմանկարներ, բնանկարներ, նատյուրմորտներ, որոնք ցուցադրվել են Խորհրդային Միության և արտասահմանյան տարբեր քաղաքներում: Իր գործերում պատկերել է գյուղի և քաղաքի մարդկանց, նրանց աշխատանքը, Հայաստանի չքնաղ բնությունը, հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական դրվագները, արտասահմանյան տարբեր երկրներում կատարած իր ճանապարհորդություններից ստացած տպավորությունները, ընդլայնելով ընդգրկած աշխարհի սահմանները, միշտ հավատարիմ պատկերվող կյանքի էությանն ու խորքին:

Նրա առաջին տարիների, այսինքն՝ 1950-ական թվականների լավագույն գործերից են «Սևանի ձկնորսները», «Երևանի կառուցողները», «Մթնշաղը», «Եվ հաց, սեր և երազանք», նաև Փափուլ մայրիկի, Հնձվոր Հարությունի, Ջեմմայի, Որդու դիմանկարներ, բոլորն էլ կատարված 1953–1963 տասնամյակում: Նույն այդ շրջանում է ստեղծել «Գառնի», «Ձկնորսական նավակը», «Արայի լեռը» հիանալի բնանկարները, «Հայկական նատյուրմորտը» և այլն:

Հետագայում ստեղծած կտավներից են «Հացը լեռներում», «Վերադարձավ» և այլն:

Գրիգոր Խանջյանն իր մենաշնորհյալ տեղն ունի նաև գրաֆիկ նկարչության բնագավառում:

1952 թ. նրա նկարազարդումներով լույս է տեսել Հ. Թումանյանի «Անուշը», հաջորդ տարի «Սասունցի Դավիթը», ապա՝ Թումանյանի «Հեքիաթները», «Գիքորը», «Զախչախ Թագավորը», «Լոռեցի Սաքոն», որոնք սիրելի ու հարազատ են դարձրել նրա անունը մեր մատաղ սերնդի մոտ, արժանացել հանրապետական և միութենական

մամուլի բարձր գնահատմանը, իսկ դրանցից «Լոռեցի Սաքոն» պոեմի նկարազարդումները Բրյուսելի համաշխարհային ցուցահանդեսում արժանացել են բրոնզե մեդալի:

Գրքի ձևավորման սովետահայ դպրոցի մի նոր և ուրույն աստիճանը հանդիսացան Գրիգոր Խանջյանի հետագա մի քանի գործերը, առաջին հերթին Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի և Պ. Սևակի «Անլռելի զանգակատունը» երկի նկարազարդումները, առաջինը կատարված 1958 թվականին, երկրորդը՝ 1963–1965 թվականներին:

Սրանցից բացի նկարազարդել է Մ. Շոլոխովի «Մարդու ճակատագիրը», Գ. Էմինի «Սասունցիների պարը» և այլ գործեր:

Քանիցս այցելել է Իտալիա, Ֆրանսիա, Իսպանիա, Կանադա և այլ երկրներ, վերադարձել է հարուստ տպավորություններով, տեղում կատարված գործերի պաչարով: Այդ ճանապարհորդությունների արդյունքն են «Փարիզ» խորագրով նկարաշարը, ինչպես և իտալական ու իսպանական նկարաշարերը:

Խանջյանի նկարները ցուցադրվել են Խորհրդային Միության տասնյակ քաղաքներից բացի՝ նաև արտասահմանյան չատ երկրներում՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Բելգիա, Չինաստան, Լեհաստան, Մեքսիկա, արժանանալով մի չարք մեդալների ու մրցանակների: Ունեցել է անհատական ցուցահանդեսներ Երևանում (1966, 1981), Լենինգրադում (1969), Մեքսիկայում (1976) և այլն:

Գրիգոր Խանջյանի արվեստի առանձնահատկություններից են ստեղծագործական, կատարողական մեծ վարպետությունը, կերպարվեստի դասական ավանդների օգտագործման մեջ սեփականը պահելու ուժը, պատկերվող նյութի ազգային էության չեչտումը, տվյալներ, որոնք նրա համար ապահովել են բացառիկ հռչակ:

Խանջյանն ամենից առաջ իր երկրի, ժողովրդի անցյալով ապրող, ներչնչանքը նրանից ստացող նկարիչ է, համամարդկայինն էլ իր ազգային ուրույն աչխարհով տեսնող արվեստագետ:

Նրա արվեստի այս չատ կարևոր առանձնահատկությունը, որ բանալի է ամեն մի արվեստագետի ստեղծագործության խորքը թափանցելու, երևում է «Իմ ժողովրդի պատմության տարեթվերից» (1967), «Հայաստան», «Եվ այս ամենը մեր օրերում» (1972–1973) նկարաչարերում, որոնք պատկերում են հայ ժողովրդի պատմության թե՛ հուսադրող, ոգևորող և թե՛ մռայլ էջերը:

Գր. Խանջյանի տաղանդի փայլատակման վառ արտահայտությունը հանդիսացավ գոբելենների համար արված մեծադիր և բազմա-

ֆիգուր երկու ստվարաթղթերը՝ «Վարդանանքը» և «Հայոց այբուբենը», որոնք ցուցադրվեցին 1981 թ. Հայաստանի նկարիչների տանը, ապա Մոսկվայում և մեծ հետաքրքրություն առաջացրին արվեստագետների մոտ:

«Վարդանանց պատերազմը» 5-րդ դարից՝ Եղիշեից մինչև մեր օրերը, հանդիսացել է ոգևորության, հայրենասիրական զգացումների արծարծման, հերոսականության խորհրդանիշ՝ գրողների, երգահանների, նկարիչների, քանդակագործների համար:

Տարբեր մարդիկ, տարբեր դարաշրջաններում տարբեր կողմերից են դիտել հայ ժողովրդի պատմության ամենափայլուն դրվագներից մեկը հանդիսացող այդ պատերազմը:

Մինչև 18-րդ դարի վերջերը Վարդանանց պատերազմը համարել են քրիստոնեական կրոնի համար հայ ժողովրդի մղած պատերազմը: 19-րդ դարում, հայ ազգային-ազատագրական գաղափարների հրահրման, ազգային զարթոնքի շրջանում Ղևոնդ Երեցն իր տեղը զիջեց Վարդան սպարապետին և պայքարն էլ դիտվեց ու ներկայացվեց որպես օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած գոյատևման պայքար, առանց նսեմացնելու եկեղեցու դերը:

Գրվեցին տասնյակ պիեսներ, չափածո և արձակ ստեղծագործություններ, որոնցում երևաց Վարդան Մամիկոնյանն սպարապետական ուժով: Երևաց նաև ժողովուրդը, բայց որպես հավաքական հասկացողություն:

Դ. Դեմիրճյանը այդ հավաքականությանը ավելի կենդանի չունչ հաղորդեց, երևան բերելով հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչ մարդկանց:

Քաղաքական այդ իրադարձությանը միանգամայն այլ մեկնաբանություն է տվել Գրիգոր Խանջյանը: Նա Վարդան Մամիկոնյանի զորքերին պատկերել է իրենց տարերքի մեջ, նիզակներով, սրերով՝ նկարի վերին մասում: Նկարիչն աշխատել է զինվորների այդ խմբակցությամբ պատկերացում տալ պատերազմի մասին, բայց չխանգարի մի այլ մտքի մատուցմանը, որն է՝ Վարդանանց պատերազմի փառքը դուրս բերել 5-րդ դարի շրջանակից և նրան տալ հայ ժողովրդի գոյատևման համար մղված և միմյանց հաջորդող ոգորումների միասնական ընկալում: Գր. Խանջյանը հանուն հայրենիքի մղված այդ պատերազմի տրամաբանական շարունակությունն է տվել հետագա դարերի նշանավոր գործիչներին տեղ տալով:

Եթե «Վարդանանքը» արտահայտում է թշնամուն զենքով ու մտքով հաղթելու գաղափարը, ապա Գր. Խանջյանի մյուս գոբելենը՝

«Հայոց այբուբենը» տրամագծորեն նույն գաղափարի կրողն է, այն մտքի, որ առանց Մեսրոպ Մաշտոցի այդ գյուտի՝ հայոց գրերի ստեղծման պատմական մեծ իրադարձության դժվար պիտի լիներ, գուցե և անհնար՝ պահպանել հայ ժողովրդի ազգային գոյությունը:

Միանգամայն առողջ և խորապես ուսանելի գաղափար: Սակայն արվեստի որևէ գործ որպեսզի իր համար ճանապարհ հարթի դեպի ապագան, մնայուն արժեք ներկայացնի, բռնի իր տեղը տվյալ ժողովրդի, նաև այլ ժողովուրդների ստեղծած համամարդկային արժեքների գանձարանում, պետք է ունենա ստեղծագործական, գեղարվեստական ուժ:

Գր. Խանջյանի երկու գոբելենները հանդիսանում են հիանալի համադրություն՝ գաղափարի ու վարպետ կատարման: Նյութի վեհությունը, յուրահատուկ պերճանքը անկախ դրամատիկ բովանդակությունից, Խանջյանը կարողացել է մատուցել՝ դիմելով վերածննդի դարաշրջանի արվեստի առանձնահատկություններին, իտալական արվեստից վերցնելով ոչ միայն գույների ներդաշնակման, այլև կերպարների տիպականացման վարպետությունը, այս բոլորը անցկացնելով՝ իր Խանջյանական կատարողական միջոցների բովով: Այնքան կենդանի են նրա ներկայացրած կերպարները, այնքան ամբողջական ու մանրամասների մեջ մշակված, ավարտական տեսքի բերված, որ դժվար է չհամաձայնվել ռուս արվեստագետներից մեկի այն գնահատմանը, թե մարդ դժվար է կարողանում հավատալ, թե մարդկային ձեռքն է ստեղծել դրանք:

Այս բոլորից հետո միանգամայն հասկանալի է այն բարձր գնահատումը, որ տվել է Խորհրդային կառավարությունը Գրիգոր Խանջյանին: Նա 1962 թ. ընտրվել է ԽՍՀՄ Գեղարվեստների ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1973 թ.՝ իսկական անդամ, 1969 թ. էլ արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի:

Գրիգոր Խանջյանը նաև եռանդուն հասարակական գործիչ է, անդամ ստեղծագործական մի քանի խորհուրդների, խմբագրական մարմինների:

Նա ղեկավարում է Էջմիածնի Մայր տաճարի և հարակից վանքերի (Հռիփսիմե, Գայանե, Շողակաթ) սրբապատկերների պարբերական վերանորոգման ու պահպանման աշխատանքները:

Նկատելի դեր է կատարել Նոր Երզնկայի ավանի հիմնադրման աշխատանքներում, Անահիտ հեթանոսական աստվածուհու կիսանդրիով Նոր Երզնկայում աղբյուր-հուշարձան կառուցելու գործում, որ

իրականացվել է իտալահայ բարերար Հայկ Ղազարոսյանի նյութական օժանդակությամբ:

Վերջապես Խանջյանը եղել է Երզնկայի պատմությանը նվիրված այս աշխատանքը ստեղծելու գաղափարով առաջին խանդավառվողներից ու հեղինակին ամեն կերպ օժանդակողներից[1]:

ՍԵԻՍՅԱՆ-ՊԱՐԹԵՎՆԵՐ

Սեիսյանների գերդաստանը Երզնկայի հնագույն տոհմերից է և գեթ վավերական պատմությունը հասնում է մինչև 19-րդ դարի սկզբները: Այդ գերդաստանը ունեցել է երկու ճյուղավորում, որոնցից մեկը հայտնի է եղել Պոյաճյան ազգանունով, մյուսը՝ Սեիսյան, որը մեր օրերում գրվել է Պարթև-Սեիսյան:

19-րդ դարի կեսերին ապրող Հաջի Հակոբ Սեիսյանը եղել է իր ժամանակի համար բացառիկ զարգացման տեր անձնավորություն, իմացել է թուրքերեն, պարսկերեն, արաբերեն՝ գրել-կարդալով, իսկ անգլերեն կարողացել է խոսել. նա այդ լեզուն սովորել է Ղրիմի պատերազմի տարիներին՝ 1854–1855 թթ., որպես կամավոր ծառայելով անգլիական բանակում: Մասնակցել է Սևաստոպոլի հայտնի կռիվներին: Եղել է ընթերցասեր մարդ, այցելել է Երուսաղեմ, որի համար էլ անվանվել է Հաջի Հակոբ:

Նա ապրել է մինչև խոր ծերություն, վախճանվել է 1902 թվականին: Մեզ հասել է նրա հուղարկավորական թափորի շատ հազվագյուտ մի լուսանկարը, որտեղ երևում են Երզնկայի այդ ժամանակի երևելիներն ու բնակչությունից շատեր՝ անչուշտ բոլորն էլ տղամարդիկ՝ իրենց ուրույն տարազով, ֆեսերով, թաղման ծիսակատարության որոշ հանգամանքներով:

Այստեղ ուզում ենք ներկայացնել այս մեծ ու բազմաճյուղ գերդաստանի ներկայացուցիչներից երեքին՝ բժիշկ Խաչիկ Պարթև-Սեիսյանին, նրա դուստր՝ Մարի Պարթև-Վահրամյանին և որդուն՝ Զարմիկ Պարթև-Սեիսյանին, քանի որ երեքն էլ նկատելի դեր են կատարել մեր գիտական, մանկավարժական և այլ բնագավառներում:

Ասենք նաև, որ բժիշկ Խաչիկ Պարթևը մի որդի էլ է ունեցել, Հրանտ անունով, որը զոհվել է Թիֆլիսում, երիտասարդ տարիքում:

***ԽԱՉԻԿ ՊԱՐԹԵՎ-ՍԵԻՍՅԱՆ** – Բժիշկ Խաչիկ Պարթև-Սեիսյանը որդին է Հաջի Հակոբ Սեիսյանի: Ծնվել է Երզնկայում, 1874 թվականին: Հաջի Հակոբը բացառիկ ուշադրություն է դարձրել որդու կրթության վրա,*

[1] *Գրիգոր Խանջյանը մահացել է 2000 թ. (ծան. խմբ.):*

տեղական վարժարանի պարապմունքներին զուգընթաց՝ նրան մղել է դեպի ընթերցասիրությունն ու լեզուների տիրապետումը:

Խաչիկ Սեհյանը սովորել է հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն, իսկ հետագայում նաև անգլերեն և ռուսերեն: Օգտվել է այդ բոլոր լեզուներով տպագրված գեղարվեստական և մասնագիտական գրքերից:

Հազիվ քսանամյա պատանի, ականատես է եղել 1895 թ. Երզնկայի ջարդերին, տևական թալանին, որոշել է նվիրվել հայ ժողովրդի ազատագրական պայքարին, առաջին հերթին ոգևորվելով Փոքր Արմտանցի Գալուստ Արխանյանի հայդուկային խմբի գործունեությունից:

Արխանյանի բանտարկությունից, հայերի նկատմամբ տեղի ունեցող բռնությունների սաստկացումից հետո 1890-ական թվականների վերջերին միացել է հայդուկային այն խմբին, որը զինված մարտեր է մղել թուրք ջարդարարների դեմ Սեպուհ լեռան լանջերին: Խաչիկը եղել է այդ խմբի ամենահամարձակ ու քաջարի անդամներից: Մինչև կյանքի վերջին տարիները, խոր ծերության շրջանում էլ նա ոգևորությամբ պատմում էր այդ կռիվների մասին, ամեն անգամ երբ գալիս էր իր հին բարեկամ Թարգի Խաչիկի, այսինքն՝ մեր տունը:

Բարձրագույն կրթություն ստանալու նպատակով 1904 թ. մեկնել է Բեյրութ, սովորել է տեղի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Ավարտել է 1909 թ., վերադարձել Երզնկա, աշխատել իբրև բժիշկ: Նույն այդ տարիներին ամուսնացել է Էրզրումցի Աղավնի Տեր-Սարգսյանի հետ՝ Սանասարյան վարժարանն ավարտած զարգացած մի օրիորդի, որը սահմանադրության տարիներին ունեցել է կրթական, թատերական գործունեություն Մամախաթունում, որտեղ աշխատել է Խ. Սեհյանն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին:

Պատերազմի սկզբից մինչև վերջը ծառայել է թուրքական բանակում, որի շնորհիվ էլ նրա ընտանիքն ազատվել է կոտորածներից:

Մեծ նահանջի օրերին Սեհյանների ընտանիքն էլ գաղթել է Կովկաս, նախ բնակություն հաստատել Թիֆլիսում, ապա Վլադիկավկազում, իսկ 1920 թվականի վերջին տեղափոխվել են Երևան: Այստեղ Խաչիկ Պարթև-Սեհյանն աշխատել է որպես բժիշկ: Նրա մասնակցությամբ Երևանում կազմակերպվել է առաջին պոլիկլինիկան, որի գլխավոր բժիշկ է նշանակվել ինքը:

Նրա կինը՝ տիկին Աղավնի Պարթևն էլ նվիրվել է որբ երեխաների դաստիարակության գործին: Նրա անմիջական մասնակցությամբ Երևանում հիմնադրվել է առաջին մանկական հրապարակը,

որի բազայի վրա հետագայում կազմակերպվել է մանկապարտեզը նրա տնօրինությամբ:

Խաչիկ Պարթև-Սեիսյանը նշանակալից աշխատանք է կատարել 1933–1934 թթ. Նոր Երզնկա ավանի հիմնադրման գործում, Սեպուհ Խանջյանի և այլ երզնկացիների հետ միասին: Եղել է երևանաբնակ երզնկացիների միության կազմկոմիտեի նախագահը:

Մահացել է 1968 թվականին, 94 տարեկան հասակում:

***ՄԱՐԻ ՊԱՐԹԵՎ-ՎԱՀՐԱՄՅԱՆ** – Մարի Պարթևը դուստրն է բժիշկ Խաչիկ Սեիսյանի: Ծնվել է Երզնկայում, 1914 թվականին:*

Միջնակարգ և բարձրագույն կրթությունն ստացել է Երևանում: Սովորել է Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում, զուգընթաց հետևել դաշնամուրի՝ Երևանի կոնսերվատորիային կից ուսումնարանում:

Հետագայում սովորել է Մոսկվայի օտար լեզուների ինստիտուտում, մասնագիտանալով անգլերեն լեզվի մեջ: Սակայն Մեծ հայրենական պատերազմի պատճառով տեղափոխվել է Երևան, շարունակել ուսումը Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզուների բաժնում:

Համալսարանն հաջող ավարտելուց հետո դասախոսել է նույն հաստատությունում որպես անգլերեն լեզվի ավագ դասախոս: Հետագայում նույն առարկան երկար տարիներ դասավանդել է Երևանի բժշկական ինստիտուտում:

Մարի Պարթևը ամուսնացել է քիմիկոս Աշոտ Վահրամյանի հետ, ունեցել է մի աղջիկ:

***ԶԱՐՄԻԿ ՊԱՐԹԵՎ** – Զարմիկ Պարթևը որդին է բժիշկ Խաչիկ Պարթևի: Ծնվել է Երզնկայում, 1916 թ.: Երկու ամսականում ընտանիքի հետ տեղափոխվել է Կովկաս:*

Հանրագիտական և մասնագիտական կրթությունն ստացել է Երևանում, ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը, ապա՝ Լենինգրադում ասպիրանտուրան՝ դեղագիտության մասնագիտությամբ: Պաշտպանել է դիսերտացիա և ստացել բժշկական գիտությունների թեկնածուի աստիճան:

Զարմիկ Պարթևը երկար տարիներ աշխատել է Երևանի պրոֆ. Ռ. Յոլյանի անվան Հեմատոլոգիայի և արյան փոխներարկման գիտահետազոտական ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող:

Մասնագիտական մամուլում հրատարակել է մոտ հիսուն հոդված:

ԱԴԱԼՅԱՆՆԵՐ

Առաջին համաշխարհային պատերազմի փոթորիկների հորձանուտի մեջ նետված, երկրից-երկիր, քաղաքից-քաղաք ընկած մի ընտանիք էլ Ադալյաններինն է, որը ճյուղավորվել է, ի վերջո հիմնական բնակություն հաստատել Հայաստանում:

Ավելի քան մեկ դար առաջ Երզնկայում ապրող Ադամ Ադալյանի որդուն՝ Մարտիրոսին է վիճակվել այս ընտանիքի ճակատագրի տնօրինումը մեծ գաղթից հետո:

Մարտիրոսը 25 տարեկան է եղել, երբ վրա է հասել Առաջին համաշխարհային պատերազմի մեծ աղետը: Նրա հայրը վախճանված է եղել դրանից տարիներ առաջ՝ իր խաղաղ մահով: Եղեռնի օրերին էլ կորցրել է մորն ու երկու քույրերին: Ինքը մեն-մենակ՝ բազում տառապանքներով ազատվում է ջարդից, ընկնում նախ Տրապիզոն, այնտեղից նավային ճանապարհով անցնում Բաթում:

Հետագայում ապրել է Ռոստովում, Օդեսայում, Ղրիմի հայաշատ քաղաքներում: Նախ զբաղվել է կաշեգործությամբ, ապա՝ դերձակությամբ:

Մարտիրոսը Սիմֆերոպոլում կազմել է ընտանիք, ամուսնանալով լեհական ծագումով մի ռուս աղջկա՝ Աննայի հետ:

Իր օջախը ստեղծելուց հետո ցանկացել է շարունակել կրթությունը, հաճախել է Սիմֆերոպոլի հայկական դպրոցը, ավարտել գերազանց գնահատականով:

Դպրոցի տնօրինությունը հատուկ միջնորդագրով նրան ուղարկել է Երևան՝ համալսարանական կրթություն ձեռք բերելու, սակայն տարիքը խանգարել է, և չեն ընդունել համալսարան:

Բայց Հայաստան գալը ճակատագրական դեր է կատարում Ադալյանների ընտանիքի համար: Հայկական հարազատ մթնոլորտը, մարդիկ, որդիներին մայրենի դաստիարակություն տալու հնարավորությունը մղել են նրան մի նոր տեղափոխության: 1938 թվականին ընտանիքով Սիմֆերոպոլից տեղափոխվել է Երևան:

Այստեղ երեխաներին տվել է հայկական դաստիարակություն, նրանց մղելով դեպի հայ գրականությունն ու արվեստը: Որդիներից Նորայրը սովորել է Երևանի պետական համալսարանում, Ռուբենը՝ գեղարվեստի ինստիտուտում, դարձել նկարիչ, Ռաֆֆին՝ կոնսերվատորիայում, իսկ նրանց քույրը՝ Սեդան, ջութակահար է:

Մարտիրոս Ադալյանը վախճանվել է Երևանում, 1961 թվականին, իր երազների իրականացումը տեսնելուց, այսինքն՝ հայ մշակույթին ծառայող երեք որդիներ հասցնելուց հետո:

Ծանոթանանք նրանց կենսագրություններին:

ՌՈՒԲԵՆ ԱԴԱԼՅԱՆ – Նկարիչ Ռուբեն Ադալյանը Մարտիրոս Ադալյանի անդրանիկ որդին է, Նորայրի ավագ եղբայրը: Ծնվել է 1929 թվականին Սիմֆերոպոլում (Ղրիմ): Ինը տարեկանում ծնողների հետ տեղափոխվել է Երևան, որտեղ ստացել է միջնակարգ և մասնագիտական կրթությունը: Սովորել է Կ. Վորոշիլովի անվան հայկական միջնակարգ դպրոցում, Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում, իսկ 1957 թ. ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղանկարչության բաժինը:

Աշակերտական տարիներից ոգևորվել է հայ ժողովրդի պատմության հերոսական դրվագներով: Նրա ավարտական աշխատանքը եղել է «Ավարայրի ճակատամարտը» կոմպոզիցիոն մեծ կտավը, որն արժանացել է բարձր գնահատանքի:

Նույն այդ տարիներից մասնակցել է հանրապետական, հետագայում արդեն միութենական և արտասահմանյան բազմաթիվ ցուցահանդեսների: ՀՀ ժողովրդական նկարիչ, պետական մրցանակի դափնեկիր:

Ռուբեն Ադալյանը բազմաժանր նկարիչ է, ստեղծել է գունանկարներ, գրաֆիկական գործեր, կատարել է գրքերի ձևավորումներ, բնանկարներ, կոմպոզիցիոն աշխատանքներ: Լավագույն գործերից են՝ «Համբույր», «Քրոջ դիմանկարը», «Գիշեր», «Կրկես», «Ցույը», «Սուսերամարտիկը», «Գնդակով աղջիկը», «Սալոմե», «Հիրոսիմա», «Դոն Կիխոտ», «Նկարչի արվեստանոցը», «Քաղաք», «Ձիեր» և այլն:

Ադալյանի նկարները հաճախ են արտատպվել հանրապետական և միութենական մամուլում, արժանացել բարձր գնահատականների: Նրա աշխատանքները ներկայացվել են նաև Ռուսաստանում, Ֆրանսիայում, Ավստրիայում, ԱՄՆ-ում և այլուր: Այդ ստեղծագործությունների մի մասը պահպանվում են Հայաստանի ազգային պատկերասրահում ու թանգարաններում, ինչպես նաև հայրենի ու արտասահմանյան մի շարք հավաքածուներում:

ՆՈՐԱՅՐ ԱԴԱԼՅԱՆ – Ծնվել է 1936 թ. Սիմֆերոպոլ քաղաքում: Գրող՝ արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս: Բանասիրական գիտությունների դոկտոր: Ավարտել է Երևանի պետական համալսարանի հայկական բանասիրական ֆակուլտետը: Շուրջ 30 անուն գրքերի հեղինակ է: Հայտնի են նրա «Շոգ ամառ» (1965), «Խաղաղ զորանոցներ» (1973), «Կապույտ Երգնկա» (1985) ժողովածուները, «Ներկաներ և բացականեր» պիեսը (1986) և այլ ստեղծագոր-

ծություններ: Նրա ստեղծագործություններից թարգմանվել-տպագրվել են ռուսերեն և այլ լեզուներով: Լայնորեն տպագրվում է ոչ միայն Հայաստանում, այլև Սփյուռքի պարբերականներում: Արժանացել է ՀԳՄ Դերենիկ Դեմիրճյանի անվան մրցանակի՝ «Մենախոսության ժամեր» պատմվածքների գրքի համար, և «Վահագն» համահայկական մրցանակի՝ «Կինը և Տղամարդը» դրամայի համար: Ն. Աղալյանին շնորհվել է Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշան: Եղել է «Գրական թերթի» գլխավոր խմբագիր, ՀԳՄ վարչության քարտուղար:

ՌԱՖԻ ԱԴԱԼՅԱՆ – Ծնվել է 1940 թ. հուլիսի 12-ին Երևանում: Ջութակահար և նկարիչ: Ավարտել է Կոմիտասի անվան կոնսերվատորիան: Երկար տարիներ եղել է Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի առաջատար ջութակահարներից: Գեղանկարչության ժանրերն են՝ նատյուրմորտը, բնանկարը, վերացական կոմպոզիցիաներն ու ձևակառուցվածքները: Ունեցել է բազմաթիվ անհատական ցուցահանդեսներ Երևանում, ցուցադրվել արտասահմանում: Այժմ բնակվում է ԱՄՆ-ում, շարունակում զբաղվել կերպարվեստով ու երաժշտությամբ:

ՍԵԴԱ ԱԴԱԼՅԱՆ – Ծնվել է 1944 թ. օգոստոսի 12-ին Երևանում: Ջութակահար է: Ավարտել է Կոմիտասի անվան կոնսերվատորիան: Հանդես է եկել Հայաստանի ռադիոյի և Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբերի համույթներում: Այժմ զբաղվում է մանկավարժական գործունեությամբ:

ՄՈՄՋՅԱՆՆԵՐ

Մոմջոնք կամ Մոմջյանները Երզնկայի հնագույն և լայն ճյուղավորում ունեցող գերդաստաններից են: Նրանց հիմնական զբաղմունքը եղել է առևտուրը:

Այս գերդաստանից Նչան Մոմջյանի անունը գտնում ենք Երզնկայի Ընկերական վարժարանի սաների ցանկում: 1880 թ. նա սովորել է այդ դպրոցի նախապատրաստական դասարանում:

Ավարտելով Ընկերական վարժարանը, Նչանը հետևել է առևտրի և աստիճանաբար դարձել Երզնկայի աչքի ընկնող առևտրականներից, լայն գործարքների մեջ լինելով Կ. Պոլսի առևտրական տների հետ:

Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին նա ընտանիքով տեղափոխվել է Տրապիզոն, ապա եկել է Կովկաս, գործել Թիֆլիսում:

Այս ընտանիքը տվել է մի քանի նշանավոր դեմքեր, որոնցից ամենահայտնին է փիլիսոփայական գիտությունների դոկտոր Խաչիկ Մոմջյանը:

ԽԱՉԻԿ ՄՈՄՋՅԱՆ – Խաչիկ Մոմջյանը եղել է ճանաչված փիլիսոփա Խորհրդային Միությունում և նրա սահմաններից դուրս: Հեղինակել է փիլիսոփայական բազմաթիվ աշխատություններ, որոնք բարձր են գնահատվել թե՛ մեզ մոտ՝ Խորհրդային Միությունում և թե՛ նրա սահմաններից դուրս, իսկ առավել գլխավորները թարգմանվել են տասնյակ լեզուներով:

Խ. Մոմջյանը ծնվել է Տրապիզոնում, երզնկացի Նչան Մոմջյանի ընտանիքում, 1909 թվականին:

Միջնակարգ կրթությունն ստացել է Թիֆլիսում, որտեղ ապրել են նրանք Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակից: 1927–1931 թթ. որպես ուսուցիչ աշխատել է Թիֆլիսի հայկական դպրոցներում: Ապա սովորել է Մոսկվայի պատմության, փիլիսոփայության և գրականության ինստիտուտում, որի փիլիսոփայության ֆակուլտետն ավարտել է 1934 թ.: 1937 թ. պաշտպանել է դիսերտացիա, ստացել փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան:

Մի քանի տարի աշխատել է Մոսկվայի թանգարաններից մեկում:

1941 թ. տեղափոխվել է Երևան: Եղել է ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հայաստանի բաժանմունքի (Արմֆան) առաջին գիտական քարտուղարը: Հայրենական պատերազմի տարիներին լույս է ընծայել հակաֆաշիստական բնույթի մի քանի գրքույկ:

1944–1946 թթ. աշխատել է Հայկական ԽՍՀ արտաքին գործերի մինիստրությունում, 1947–1949 թթ. ղեկավարել է Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության սեկտորի աշխատանքները:

1951 թ. Մոմջյանը պաշտպանել է դոկտորական դիսերտացիա և ստացել փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան:

1950–1952 թթ. խմբագրել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի հասարակական բաժանմունքի «Տեղեկագիրը», որի էջերում ունի արժեքավոր մի քանի հոդված:

Խ. Մոմջյանը 1954 թ. ընտանիքով տեղափոխվել է Մոսկվա, որտեղ ունեցել է գիտական, մանկավարժական բեղուն գործունեու-

թյուն: Ղեկավարել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի ամբիոնը:

1958–1962 թթ. փիլիսոփայության և իրավունքի գծով եղել է «Կոմունիստ» տեսական ամսագրի խմբագրական մարմնի անդամ: 1962–1967 թթ. պրոֆեսորի աստիճանով դասախոսել է Մոսկվայի պետական համալսարանում: Ապա ղեկավարել է ԽՄԿԿ Կենտկոմին կից հասարակագիտական ակադեմիայի Մարքսիզմ-Լենինիզմի փիլիսոփայության ամբիոնը: 1977 թ. ընտրվել է ԽՍՀՄ Սոցիոլոգների ասոցիացիայի նախագահ:

Մոմջյանը լույս է ընծայել մասնագիտական բազմաթիվ աշխատություններ նվիրված պատմական մատերիալիզմի և արևմտաեվրոպական փիլիսոփայության հարցերին: Դրանցից են՝ «Սոցիալիստական հասարակարգը և մասսաների ստեղծագործական ակտիվությունը» (Երևան, 1954), «Լաֆարգը և մարքսիստական գաղափարախոսության մի քանի հարցեր» (1954), «Հելվեցիուսի փիլիսոփայությունը», որը լույս է տեսել ռուսերեն, թարգմանվել է ֆրանսերեն, գերմաներեն և ռումիներեն: «Սոցիալիզմը. նրա ներկան և ապագան» (Մոսկվա, 1963) մենագրությունը թարգմանվել է արտասահմանյան տասը լեզուներով, «Մարքսիզմը և ռենեգատ Գարոդին» (1973) թարգմանվել է անգլերեն, իսպաներեն և արաբերեն: Հայտնի է հատկապես նրա «Լաֆարգը և մարքսիստական փիլիսոփայությունը» (1977) մենագրությունը և այլն:

Հեղինակակից և խմբագիրն է «Ժամանակակից ռեֆորմիզմի գաղափարախոսությունը», «Մարքս-Լենինյան փիլիսոփայության հիմունքները» (1973–1975) և այլ գրքերի: Խմբագրել և ներածական ընդարձակ հոդվածներ է գրել Պոլ Հոլբախի «Ընտիր երկերի», Հելվեցիուսի «Ընտիր երկերի» և այլ գրքերի համար[1]:

ԳԱՍՊԱՐՅԱՆՆԵՐ ԿԱՄ ՔԵՀՅԱՆԵՆՔ

Գասպարյանների գերդաստանն ապրել է Երզնկայի գեղատեսիլ հովտում, Եփրատի փոքր մի ճյուղավորման աջ ափին գտնվող Վերի Ագրակ (Զիֆլիկ) գյուղում:

Այդ գյուղը առաջ եղել է ոմն Ղանի էֆենդու ագարակը՝ չիֆլիկը, բայց հետագայում Թուրքը այն վաճառել է մի քանի հայ ընտանիքների, որոնցից ամենից մեծն ու հայտնին է եղել Գևորգ աղան՝ իր

[1] Խաչիկ Մոմջյանը մահացել է 1996 (ծան. խմբ.):

Հովհաննես ու Ավետիս եղբայրներով, որոնք դիզել են մեծ հարստություն, ձեռք բերել կալվածներ: Իսկ Գևորգը չնորհիվ իր հյուրասիրության, շենչող բնավորության, ունեցել է մեծ հեղինակություն՝ անգամ Թուրք բարձրաստիճան պաշտոնյաների մոտ: Հենց դա էլ նպաստել է, որ նա ապահով զգա իրեն և ապրի համեմատաբար հանգիստ պայմաններում:

Վերի Զիֆլիկը եղել է զուտ հայաբնակ: Նրա հյուսիսակողմին էլ ընկած է եղել Վարի Զիֆլիկը՝ դարձյալ հայաբնակ:

Գևորգ աղայի երկու եղբայրները հետագայում տեղափոխվել են Կ. Պոլիս, պաշտոնավարել հայոց պատրիարքարանում, սակայն Ավետիսը 1895 Թ. կոտորածների օրերին սպանվել է: Հովհաննեսն էլ չդիմանալով այդ ծանր վշտին՝ հանկարծամահ է եղել: Վախճանվել են նաև Գևորգ աղան ու նրա կինը:

Գևորգի որդին, Գաբրիելը դարավերջին կարողացել է ետ վերցնել իրենց կալվածների մի մասը և աստիճանաբար կրկին շենացնել հանգած օջախը:

Գևորգի որդին է Մկրտիչ Գասպարյանը: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում:

Մեծ եղեռնի ու նրան հաջորդող դեպքերի ընթացքում հասել է Կարին, այնտեղ միացել Անդրանիկի զորամասին, մասնակցել նրա մի շարք կռիվներին:

Հետագայում եկել է Երևան, ամուսնացել, կրթություն ստացել, վարել պատասխանատու պաշտոններ: Եղել է պետապի տեսուչ:

Մ. Գասպարյանն ունեցել է երեք տղա, երկու աղջիկ: Տղաներից անդրանիկը՝ Վանիկը, զոհվել է Հայրենական մեծ պատերազմում, մյուսները՝ Գևորգը և Հենրիկը ստացել են բարձրագույն կրթություն և աշխատում են տարբեր բնագավառներում:

ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆՆԵՐ ԿԱՄ ԵՓՐԱՆԵՆՔ

Երզնկայում եղել են երկու Տեր-Ստեփանյան գերդաստաններ: Մեկը ականավոր հասարակական-մշակութային գործիչ Սարգիս Տեր-Ստեփանյանի տոհմն է, որի հնությունը ձգվում է դեպի խոր անցյալը, մյուսը՝ Եփրանենք կոչվող գերդաստանն է, որը 19-րդ դարի կեսերից հավասարապես օգտագործել է Տեր-Ստեփանյան ազգանունը՝ Եփրանի որդի Տեր Ստեփանի ժամանակից: Սակայն բազմաճյուղ այս գերդաստանը պահել է նաև Եփրանենք հին տոհմանունը, որը գնում հասնում է մինչև 1750-ական թվականները: Եփրանի կինը՝ Անթա-

ռամը, ապրել է 130 տարի, մահացել 1890 թվականին, ինչ որ նշանակում է թե ծնված պիտի լինի 1760 թ.: Եթե ընդունենք, որ Երգնկայում սովորություն է եղել ամուսնանալ 8–10 տարով փոքր աղջկա հետ, Եփրան էլ ծնված պիտի լինի 1750-ական թվականներին:

Եփրանն ունեցել է չորս տղա, երկու աղջիկ: Տղաներից Հակոբի, Հաջի Գալուստի, Հարությունի, իսկ աղջիկներից էլ Վերժինի ու Օժենի մասին քիչ տեղեկություններ են հասել մեզ:

Հայտնի է գերդաստանի Տեր Ստեփանի ճյուղի չարունակությունը:

Տեր-Ստեփանի որդին է Մարտիրոսը, այս գրքի հեղինակի պապը, որը ծնվել է 1829 թվականին և հիմնական զբաղմունքը եղել է դերձակությունը: Բայց սիրել է կարդալը, համարվել է լավ հեքիաթասացող:

Նա պահել է մեր գերդաստանի Ֆյություկը համարվող մի «Տոմար», որի վրա նշումներ ունի սկսած 1874 թվականից:

Հետագայում այդ գրքի վրա հիշատակություններ է թողել հայրս՝ Մարտիրոսի կրտսեր որդի Խաչատուրը:

Ուրեմն, Տեր-Ստեփանյանների գերդաստանի պատմությունը առնվազն 120 տարվա գրավոր վավերականություն ունի:

Մարտիրոսի որդի և նրա արհեստը չարունակող Թարգի Խաչիկը (1876–1957) և դուստրերից Սաթենիկը ողջ են մնացել և չարունակել գերդաստանի գոյությունը: Խաչատուրի մեծ եղբայրը՝ Ստեփանը, բազմանդամ ընտանիքով, նաև նրա չորս քույրերը և մայրը՝ Վարդանուշը, զոհ են գնացել Մեծ եղեռնին:

Թարգի Խաչատուրն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ունեցել է արկածալից կյանք, որը նյութ է դարձել «Մղձավանջային օրեր» վեպի:

Նրա չորս զավակներից երեքը նույնպես (Ավետիս, Վարսենիկ, Արաքսի) զոհ են գնացել ջարդերին: Ողջ է մնացել միայն Գառնիկը:

Մեծ նահանջի օրերին Խաչատուրը ռուսական բանակի հետ գաղթել է Կովկաս, ապրել Երևանում: Այստեղ կրկին ամուսնացել է և ունեցել մեկ տղա, որի անունը դրել է Ավետիս:

Խորհրդային իշխանության հաղթանակից հետո չարունակել է դերձակությունը: Եղել է Երևանի Կարի առաջին գործարանի հիմնադիր բանվորներից և երեսուն տարի, մինչև խոր ծերություն աշխատել նույն գործարանում:

Թոչակի անցնելուց հետո, 1949 թ. գրի է առել ընդարձակ հիշողությունները (մոտ հազար էջ), լայն տեղ տալով երգնկացիների համայնական կյանքին, կենցաղին, սովորություններին, ավանդու-

թյուններին: Նրա անպաճույճ այդ գրառումները մեծապես օգտակար եղան մեզ՝ այս աշխատության որոշ գլուխների պատրաստման գործում:

Խաչատուր Տեր-Ստեփանյանի ավագ որդին՝ Գառնիկը 1936 թվականին ամուսնացել է բալըքեսիրցի Վարդուհի Պետիկյանի հետ, ունեցել է երկու տղա՝ Պերճ և Արմեն ու մեկ աղջիկ՝ Ալիս:

Ներկայացնում ենք Տեր-Ստեփանյանների գերդաստանի շառավիղներից մի քանիսի կենսագրությունները:

ԳԱՌՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ (ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ) – Ընթերցողի ներողամտությունը հայցելով է, որ Երզնկային նվիրված այս յուրահատուկ հուշամատյանում մի ջերմիկ ու արևոտ անկյուն էլ ինձ եմ ուզում հատկացնել, ոչ թե փառասիրության զգացումից դրդված, այլ պարզապես սիրելի երզնկացիների մեծ ընտանիքից, հայրենի բնաշխարհից չկտրվելու, այդ մթնոլորտում հավերժ ապրելու գոհունակությունն ունենալու համար:

Ծնվել եմ Երզնկայի մերձակա պատմական Դերջան գավառի Մամախաթուն ավանում, 1909 թվականի փետրվարի 14-ին, երզնկացի դերձակ Խաչատուր Տեր-Ստեփանյանի ընտանիքում:

Հինգ տարեկան էի, որ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը:

Հայրս մեկնեց բանակ: Մեծ եղեռնի ահավոր օրերին զոհ գնացին սիրելի տատիկս, երկու քույրերս՝ Վարսենիկն ու Արաքսին, փոքր եղբայրս՝ Ավետիսը, հորեղբորս՝ Ստեփանի, բազմանդամ ընտանիքը: Ողջ մնացինք մայրս ու ես:

1916 թ. հունվարյան մի ցրտաշունչ օր մեզ էլ աքսորեցին Տեր Զոր: Մեծ էր կարավանը՝ հավաքված մինչ այդ այս ու այն կողմ մնացած կարնեցիներից, դերջանցիներից, բաբերդցիներից: Մեծ էր, բայց փոքրացավ ճանապարհին: Ու երբ հասանք Մալաթիա, հազիվ հարյուր հոգի էր մնացել...:

Ի՞նչ եղան: Հայտնի է աշխարհին: Մալաթիայում մայրս բռնեց ձեռքիցս և թաքնվեց խիտ պտղատու այգիներում: Կարավանը երբ անցավ-գնաց, դուրս եկանք...

Մարտի վերջերն էր: Բնությունն սկսել էր զարթնել... Քայլեցինք դեպի քաղաք: Նկատեցին: Եկան, սրերը հանեցին... Բայց մի թուրք կին ազատեց մեզ: Տարավ իր տան բակը, հաց տվեց, ասաց թե այդ քաղաքի բոլոր հայերին կոտորել են. մնացել են մի խումբ արհեստավորներ, որոնք թուրքական բանակի համար մանուսա են գործում: Մեզ բացատրեց նրանց տեղը:

– Եթե դուռը բաց արեցին, կաղատվեք, իսկ եթե չբացվեց...

Բայց բացվեց...

Երեք տարի ապրեցինք այդ փակ տանը՝ սարսափի մեջ: Մայրս աշխատում էր, ինձ պահում:

Մեկ էլ այդ տան երկաթյա դուռը բացվեց 1918 թ., երբ հայերի հետ հաշվեհարդար տեսնող քաղաքն ինքն էլ հաշիվ էր տալիս սովին ու համաճարակներին: Հիմա էլ թուրքերի անթաղ դիակներն էին ընկած փողոցներում, թթի այգիներում, շրջակա վայրերում:

Ու որբանոցներ՝ հայկական, թուրքական, գերմանական, ամերիկյան: Բոլորի համն էլ առել եմ, թուրքականում ներկայանալով որպես թուրք...

1919 թ. տեղափոխվեցինք Սեբաստիա: Չորս տարի ապրեցինք այդ քաղաքում: Մայրս աշխատում էր, լվացք անում, ալյուր մաղում, ինձ պահում: Մայր ունեցողների համար որբանոցներում տեղ չկար:

1922 թ. դեկտեմբեր ամսին Սեբաստիայի բազմահազար որբերին տեղափոխեցին Հունաստան: Սխալմամբ մի խումբ հայ որբեր, որոնց մեջ ես ու ապագա քանդակագործ Թորգոմ Զորեքչյանը, ընկանք հույն գաղթականներ տեղափոխող մի նավ, որը հենց առաջին օրը ժանտախտի բռնվեց... Քառասուն օր քառասուն գիշեր կարանտինա հայտարարվեց: Ոչ մի քաղաք, ոչ մի պետություն մեզ չէր ընդունում:

Քառասուն օրից ցամաք տեսանք՝ էլադայի ափերը, 2000 հույն գաղթականներից մնացել էր 700 հոգի, այսինքն՝ 700 կմախք: Ես ու Թ. Զորեքչյանն էլ ողջ մնացինք:

Հունաստանում չորս տարի ապրեցի երեք տարբեր վայրերի որբանոցներում: Մի քանի տարի սովորել էի Սեբաստիայի ազգային դպրոցում, մի քանի տարի էլ այս որբանոցներում, որտեղ իմ ուսուցիչներն են եղել բանաստեղծներ Լևոն Էսահանյանը, Վահրամ Թաթուլը, կրթական գործիչներ Մ. Օշինը, Սահակ Մինասյանը: Նրանց եմ պարտական մայրենի լեզվի կրթությունս:

1925 թ. դեկտեմբերի վերջերին չափահաս որբերի հետ ինձ տեղափոխեցին Եգիպտոս: Կահիրեում մեզնից յուրաքանչյուրն ընտրեց մի մասնագիտություն: Չգիտեմ ինչու՝ ես էլ ընտրեցի գրաշարությունը և հինգ տարի աշխատեցի «Արև» թերթի և այլ տպարաններում: Մի դպրոց էլ սա էր ինձ համար: Ամենից արդյունավետ դպրոցը, չէ՞ որ ամբողջ օրը լինում էի Երվանդ Օտյանի, Վահան Թեքեյանի, Միք. Նաթանյանի, Հովհաննես Հակոբյանի, թարգմանիչ Կարապետ Նավասարդի նման մտավորականների շրջանում:

Գուցե իմ կյանքին վիպային հանգույց տալու անհրաժեշտությունից էր, որ ողջ մնացին ոչ միայն մայրս, այլև՝ Երզնկայում 2000 արհեստավորների հետ գնդակահարված հայրս, այն էլ ո՞րտեղ՝ Հայաստանի մայրաքաղաք Երևանում:

1930 թ. սեպտեմբերին հասա Երևանի երկաթուղային կայարանը, փաթաթվեցի 16 տարի առաջ կորցրած հորս: Գտա և մորս: Գտա նաև տպարանի ու համալսարանի տեղերը...

Առաջինում աշխատեցի, երկրորդում սովորեցի, աշակերտելով այնպիսի նշանավոր մարդկանց, ինչպիսիք էին Հրաչյա Աճառյանը, Արսեն Տերտերյանը, Գրիգոր Ղափանցյանը, Զապել Եսայանը, Սիմոն Հակոբյանը:

1938 թ. ավարտեցի համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Աշխատեցի «Խորհրդային Հայաստան» օրաթերթի խմբագրությունում նախ իբրև ոճաբան, ապա՝ բաժնի վարիչ, պատասխանատու քարտուղարի տեղակալ:

Զուգահեռ չարունակեցի ուսումս համալսարանի ասպիրանտուրայում, ղեկավար ունենալով Հր. Աճառյանին, որին շատ բան եմ պարտական իմ ուսումնառության, հետագա ճակատագրի համար, և որի հետ հարազատի մտերմությամբ կապված եմ եղել քսան տարի:

Պատերազմը ընդհատեց ասպիրանտական պարապմունքս: Մեկ տարի ծառայեցի խորհրդային բանակում: Զորացրվեցի 1944 թ. աշնանը և աշխատանքի ընդունվեցի Հայկական ԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում:

Ուղիղ տասը տարի աշխատեցի այդ ինստիտուտում, հիմնականում զբաղվելով արևմտահայ գրականության ուսումնասիրությամբ: Այս շրջանում է, որ լույս տեսան իմ մի քանի աշխատությունները՝ «Մղձավանջային օրեր» վեպը, «Արփիար Արփիարյան» «Հակոբ Պարոնյան» մենագրությունները: Դրանից առաջ հրատարակվել էին «Պետրոս Ադամյան», «Արամ Միրզոյան», «Սերգեյ Օհանյան» գրքերը:

Ապա տասը տարի եղա Զարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանի տնօրենը: Այնտեղ իմ հիմնական նպատակներից մեկն էր սփյուռքահայ տարբեր կենտրոններից Մայր հայրենիք տեղափոխել ականավոր հայ գրողների, մշակութային գործիչների արխիվները: Բերվեցին Ա. Զոպանյանի, Թ. Ազատյանի, Վ. Մալեզյանի, Սիամանթոյի, Ա. Արփիարյանի և այլոց բազմաբովանդակ արխիվները, որոնք կրկնապատկեցին թանգարանի հարստությունը:

Ափսոսանքով ու խախտված առողջությամբ թողի թանգարանը: Ինձ թվում էր թե առհասարակ թողնելու եմ կյանքը: Բայց ապրեցի և երկու տասնամյակ էլ աշխատեցի Գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտում, նախ իբրև բաժնի վարիչ, ապա՝ լոկ գիտաշխատող:

Այդ երկու տասնամյակները եղան իմ ստեղծագործական կյանքի ամենաբեղմնավոր տարիները:

1962 թ. լույս տեսավ իմ ամենածավալուն հետազոտության՝ «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» Ա հատորը, 1969 թ.՝ Բ հատորը, 1975 թ.՝ Գ հատորը: Աշխատության առաջին երկու հատորների համար ինձ չնորհվեց արվեստաբանության դոկտորի աստիճան, 1967 թվականին էլ չնորհվել էր արվեստի վաստակավոր գործչի կոչում: Վերջապես՝ 1981 թ. արժանացա պետական մրցանակի:

Վերոհիշյալ աշխատությունները գրելու ընթացքում երկար տասնամյակներ նյութեր էի քաղել արխիվներից, ժամանակի մամուլից, տարբեր հրատարակություններից: Այդ նյութերի մեջ էին հազարավոր մարդկանց կենսագրությունները: Ծրագրեցի կազմել բազմահատոր մի «Կենսագրական բառարան», որն ընդգրկելու էր 10.000 մշակութային գործիչների կենսագրությունը:

Հիմնականում գլուխ եկավ նաև իմ այդ գործը: «Կենսագրական բառարանի» Ա հատորը լույս տեսավ 1973 թվականին, Բ հատորը՝ 1981 թվականին[1]: Իմ վերջին ծավալուն մենագրությունը լույս տեսավ 1982 թվականին, կոչվում է «Ֆրանսահայ թատրոնի պատմություն»: Ըստ էության, այն հանդիսանում է «Ուրվագծի» շարունակությունը:

Իմ առաջաբաններով լույս են տեսել Զ. Եսայանի, Երուխանի, Տ. Կամսարականի, Ա. Արփիարյանի, Հ. Պարոնյանի երկերի ժողովածուները, Վ. Փափազյանի «Սրտիս պարտքը» գիրքը, մանրակրկիտ ծանոթագրություններով հրատարակել եմ Հ. Պարոնյանի «Ազգային ջոջերը» (Հ. Պարոնյանի տասհատորյակի 2-րդ հատոր), Պ. Ադամյանի «Նամակները»: Եղել եմ Հ. Պարոնյանի «Երկերի ժողովածուի» տասհատորյակի (Երևան, 1962–1979) գլխավոր խմբագիրը:

Մարդիկ 70 տարեկանից հետո մղվում են դեպի անցյալի վերհուշը, ապրում նրա լավ ու վատ դրվագներով, գրում, տպագրում են հուշերի գրքերը: Երկու գրքույկ էլ ես հրատարակեցի՝ «Աճառյանի

[1] «Կենսագրական բառարան»-ի Գ հատորի առաջին գիրքը լույս տեսավ 1990 թ. (ծան. խմբ.):

հետ» և «Փափազյանի հետ»: Երկուսն էլ լավ ընդունելության արժանացան, թե՛ մեզ մոտ և թե՛ մանավանդ սփյուռքում, որտեղ նույնությամբ կամ հատվածաբար տպագրվեցին տասից ավելի հայերեն թերթերում կամ հանդեսներում:

Հայրենակցական պարտքի գիտակցությամբ է, որ 1968 թ. ձեռնարկեցի Երզնկայի լիակատար պատմության ստեղծմանը, առանց կարողանալու գուշակել հաղթահարման դժվարությունները: Ավելի քան տասը տարի կատարեցի պրպտումներ, նայեցի բազմաթիվ թերթեր ու հանդեսներ, հայրենակցական հրատարակություններ, արխիվներ: Նյութը ոգևորեց ինձ, մոռացնել տվեց տառապանքը: Երզնկան ինձ համար դարձավ ոչ թե լոկ հետազոտական աշխատանք, այլ հոգեկան սնունդ, թողնենք որ այդ սնունդի մեջ համադամ կերակուրների կողքին չատ էին կծուն ու դառը: Ապրեցի մանկության օրերի հուշերով: Հավաքած նյութս ինձ կտրեց այս կյանքից, տեղափոխեց խոր անցյալը, Անահիտի պաշտամունքի հեթանոսական դարերը, միջին դարերի գարթոնքի շրջանը: Հուզվեցի, վերապրեցի երզնկացիների ողբերգությունները ջալալիների, ենիչերիների և այլ բարբարոսական ցեղերի ասպատակությունների օրերին:

Բայց ավարտեցի «Երզնկա» ուսումնասիրությունը հոգու աննկարագրելի գոհունակությամբ:

ԱՎԵՏԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ (ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ) – Ավետիսը կրտսեր որդին է Թարգի Խաչիկ Տեր-Ստեփանյանի, փոքր եղբայրը՝ գրքիս հեղինակի, վառ ապագա խոստացող, բազմակողմանի շնորհներով օժտված մի երիտասարդ, որ անժամանակ հեռացավ այս աշխարհից՝ ավտոարկածի հետևանքով:

Ծնվել է Երևանում, 1924 թվականին: Մասնագիտական կրթություն ստացել է Երևանի քիմիական տեխնիկումում, ավարտել փայլուն կերպով և աշխատել Ս. Մ. Կիրովի անվան քիմիական գործարանում որպես ինժեներ-տեխնիկ:

Հայրենական պատերազմի առաջին օրերից մեկնել է Խորհրդային բանակ, մարտերով հասել մինչև Հունգարիա, արժանացել մի քանի շքանշանների, ծանրորեն վիրավորվել է, բուժվել, շարունակել ծառայությունը:

Զորացրվելուց հետո աշխատել է Արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերությունում, որտեղ աշխատում էր նաև մեծ եղբայրը՝ Գառնիկը որպես «Սովետական Հայաստան» ամսագրի պատասխանատու քարտուղար:

Ավետիսը 15 տարի եղել է այդ հաստատության ամենագործունյա և ձեռներեց աշխատողներից, Հայաստան այցելող հայրենաբաղձ հայերի սիրելին:

Նա օժտված էր գրելու ակնհայտ կարողությամբ: «Սովետական Հայաստան» ամսագրում և այլ պարբերականներում նրա տպագրած ակնարկները, տասնյակ հոդվածները հաճույքով ընթերցվել են և արտատպվել սփյուռքահայ մամուլում:

ՊԵՐՃ ՍՏԵՓԱՆՅԱՆ (ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ) *– Ավագ որդին է այս գրքի հեղինակ Գառնիկ Ստեփանյանի: Ծնվել է 1937 թվականին Երևանում, որտեղ ստացել է միջնակարգ և բարձրագույն կրթությունը: 1955 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և աշխատել Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, իսկ 1968 թվականից՝ Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեում նախ գրական-դրամատիկական հաղորդումների խմբագրությունում իբրև խմբագիր, գլխավոր խմբագիր, 1978 թվականից գիտահանրամատչելի և ուսումնական հաղորդումների խմբագրությունում՝ գլխավոր խմբագիր, ապա կուսակցակերպության ազատված քարտուղար նույն հաստատությունում:*

Հեռուստատեսությունում և ռադիոյում աշխատած տարիներին գրել է հարյուրավոր սցենարներ, թարգմանել պիեսներ:

Իր սցենարներով հաղորդումներ են նվիրվել Եղիշե Չարենցին, Դանիել Վարուժանին, Սիամանթոյին, Վահան Թոթովենցին, Հրաչյա Աճառյանին, Վիլյամ Սարոյանին, Պետրոս Դուրյանին, Միսաք Մեծարենցին և շատ ուրիշների:

Հեռուստաֆիլմերի «Երևան» ստուդիայում նրա սցենարով վավերագրական կինոնկարներ են նկարահանվել նվիրված Վահան Տերյանին, քանդակագործներ Խորեն Տեր Հարությանին, Լևոն Թոքմաջյանին, անվանի հայագետ Հրաչյա Աճառյանին:

Կատարել է բազմաթիվ ռադիոբեմականացումներ: Հ. Պարոնյանի «Ալաֆրանկա», Վ. Սարոյանի «Ծիծաղելի պատմություն», «Շաղ Աղնավուրը Աղնավուրի մասին», Ե. Օտյանի «Հեղափոխության մակաբույծները» և այլն:

Երվանդ Օտյանի «Թաղականին կինը», Ե. Չարենցի «Երևանի ուղղիչ տնից», Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա», Վ. Սարոյանի «Սպիտակ ձիու ամառը», գործերի հիման վրա ստեղծել է հեռուստատեսային պիեսներ, որոնք բեմադրվել են Հայկական հեռուստատեսությամբ:

1982–1985 թթ. «Երևան» կինոստուդիայի տնօրեն: 1985–1990 թվականներին հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի նախագահի տեղակալ: 1995–1997 թթ. Հայաստանի պետական հեռուստատեսության գլխավոր տնօրեն: Զբաղվել է նաև գրահրատարակչական գործունեությամբ: 1991–1995 թթ. եղել է «Լույս» հրատարակչության տնօրենը: 1999 թվականից Երևանի պետական համալսարանի հրատարակչության տնօրենն է*[1]:*

ԱՐՄԵՆ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ *– Ծնվել է Երևանում, 1946 թ.: Կրտսեր որդին է Գառնիկ Ստեփանյանի: Կրթությունն ստացել է Երևանում: 1969 թվին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Նույն թվականից աշխատել է համալսարանի հայագիտական կենտրոնում որպես գիտաշխատող: 1981 թվից աշխատում է Մաշտոցի անվան Մատենադարանում որպես ավագ գիտաշխատող: 1985 թվին պաշտպանել է թեկնածուական թեզ «Պոլսահայ գրականությունը XVII–XVIII դարերում» թեմայով: Հայ միջնադարյան մատենագիտությանը նվիրված բազմաթիվ հոդվածներ է տպագրել գիտական մամուլում, ինչպես նաև «Հայ մշակույթի նշանավոր գործիչները» ժողովածուում: Ա. Մադոյանի հետ կազմել և հրատարակության է պատրաստել Հ. Աճառյանի «Բանասիրական ուսումնասիրություններ» ժողովածուն (Երևան, 1976): Հրատարակած գրքերն են՝* «Manuscrits armeniens de la Bibliothéque nationale de France» *(Փարիզ, 1998, Հ. Գևորգյանի հեղինակակցությամբ), «Սուրբ Գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն» (Երևան, 2001, Եղնիկ եպս. Պետրոսյանի հեղինակակցությամբ), «Վիմագիր արձանագրությունները Մատենադարանի ձեռագրերում» (տպագրության մեջ): Կազմում է «Հայոց անձնանունների նոր բառարան», ինչպես նաև 16-րդ և 18-րդ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների ժողովածուներ (վերջինս Ս. Լալաֆարյանի հեղինակակցությամբ): Գլխավոր խմբագիրն է եղել «Աստվածաշնչական մեկնություններ» մատենաշարի, որից լույս է տեսել երեք գիրք: Մասնակցել է միջազգային գիտաժողովների ԱՄՆ-ում, Բելգիայում և այլուր: Ունի երկու զավակ՝ Տիգրան և Լիլիթ Տեր-Ստեփանյաններ: Տիգրանն ավարտել է Փարիզի Սորբոնի համալսարանի Եվրոպայի քաղաքականության ֆակուլտետը: Նա Թարգի Խաչիկի ծոռն է, Գառնիկ Ստեփանյանի թոռը և նրա տոհմի արու ժառանգը:*

---

[1] *Աստղանիշով հատվածները չարադրել է Ա. Տեր-Ստեփանյանը:*

ԱԼԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ (ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ)* – *Ծնվել է Երևանում, 1940 թ.: Դուստրն է Գառնիկ Ստեփանյանի: Կրթությունն ստացել է Երևանում: Երկար տարիներ աշխատել է Երևանի պետական համալսարանի գրադարանում: Ունի երեք զավակ՝ Աղավնի, Անահիտ (Մանյա) և Ռաֆայել:*

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ (ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ)* – *Ծնվել է Երևանում, 1950 թվականին: Դուստրն է Ավետիս Ստեփանյանի: Կրթությունն ստացել է Երևանում: 1972 թվին ավարտել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը: 1972–1997 թթ. աշխատել է Հայաստանի Ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում որպես գիտաշխատող: Միաժամանակ 1982–1993 թթ. աշխատել է ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչությունում, 1995–1998 թթ. դիվանագիտական առաքելությամբ մեկնել է Ժնև, աշխատել ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպություններին առընթեր ՀՀ մշտական ներկայացուցչությունում և Շվեյցարիայում ՀՀ գլխավոր հյուպատոսությունում: 1987 թվականին պաշտպանել է պատմական գիտությունների թեկնածուական թեզ՝ «Հայատառ թուրքերեն գրականության դերը Օսմանյան կայսրության սոցիալ-մշակութային կյանքում» թեմայով: Հրատարակել է հետևյալ գրքերը՝ «Հայատառ թուրքերեն գրքերի մատենագիտություն. 1727–1968» (1985), «Հայատառ թուրքերեն պարբերական մամուլը» (1987), «Հայատառ թուրքերեն գրականությունը» (2001), «Հայատառ թուրքերեն գրականության և պարբերական մամուլի մատենագիտություն» (թուրքերեն և ֆրանսերեն, Ստամբուլ, 2005): Մասնակցել է հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների:*

ԱՇՈՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ (ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ)* – *Աշոտը որդին է Ավետիս Տեր-Ստեփանյանի, եղբայրը՝ Հասմիկի: Ծնվել է Երևանում, 1951 թ.: Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, որի էլեկտրոնիկայի ֆակուլտետն ավարտել է 1974 թվականին:*

Նույն տարվանից աշխատել է Երևանի Շահումյանի շրջանային խորհրդում, իբրև ինժեներ:

ՀԱՅՐՈՒՆԻՆԵՐ

Երզնկայի գյուղերից Մեծ Արմտանում է ապրել այս մեծ գերդաստանը, որի վավերական պատմությունը գնում հասնում է մինչև 19-րդ դարի սկիզբները:

Հայրունիների նահապետը՝ Կարապետ աղան, եղել է գյուղի մուխթարը, այսինքն՝ գյուղապետը, ձեռներեց, ազդեցիկ, գիր-գրականության արժեքը իմացող մարդ:

Նրա որդին՝ Գրիգորը, չի ունեցել հոր դիրքն ու իշխանությունը, բայց եղել է գրասեր անձնավորություն և որդուն՝ Հակոբին տվել հիմնավոր կրթություն: Հակոբը իմացել է հայերեն, թուրքերեն և ֆրանսերեն, ինչ որ հազվադեպ երևույթ էր հայկական մի գյուղի համար:

Ունեցել է կրթական, մանկավարժական բեղմնավոր գործունեություն, ֆրանսերեն է դասավանդել ոչ միայն իրենց գյուղի դպրոցում, այլև Շապին Գարահիսար քաղաքում:

Հակոբ Հայրունին ամուսնացել է երիտասարդ հասակում և Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին արդեն 7 երեխայի հայր է եղել:

Բայց վրա է հասել Մեծ եղեռնը և խլել տարել է կնոջն ու յոթ երեխաներից վեցին՝ 15 տարեկան Թաթուլին, Գուրգենին, Ազատին, Սաթենիկին, Նանիկին և նորածին մանկիկին, որը դեռ անուն էլ չի ունեցել:

Ազատվել են Հակոբ Հայրունին և 1904 թ. ծնված Ագապի դուստրը: Ճակատագիրը Ագապիին գցել է հեռավոր ԱՄՆ, իսկ Հակոբին՝ Սևանի ափերը: Նա ցանկացել է ապրել Հայաստանում, այնտեղ վերաշինել իր նոր տունը, նոր օջախը:

Ամուսնացել է երկրորդ անգամ և 1919 թ. ունեցել Հայրունիների տոհմի վերընձյուղումը ավետող առաջին արու զավակին՝ Նորայրին: Տարեցտարի մեծացել է ընտանիքը, երեխաների թիվը հասել է ութի, այսինքն՝ կորցրածից ավելի:

Հակոբ Հայրունին ամեն մի նորածնի տվել է կորցրած երեխաներից մեկնումեկի անունը: Ու նահապետական այդ ընտանիքում վերակենդանացել են Թաթուլը, Գուրգենը, Սաթենիկը, Նանիկը...

Հայրունիների նոր օջախը գտնվում է Հայաստանի Վարդենիսի շրջանի Լուսակունք գյուղում, մի քանիսը միայն այլ վայրերում՝ Երևանում, Սովետակերտում:

Հակոբը իր բոլոր զավակներին տվել է հիմնավոր կրթություն և մի քանիսը ճանաչված մասնագետներ են ամբողջ հանրապետությունում: Հրաչիկն ու Սաթենիկը ավագ գիտաշխատողներ են, երկուսն էլ գիտության թեկնածուներ: Կարապետը, որին տրվել է Հայրունիների տոհմի նահապետի անունը, հիդրոինժեներ է. մասնակցել է Արզնիի Շամիրամ ջրանցքի կառուցմանը, հետագայում էլ որպես շինարարության պետ՝ աշխատել է Ջողազի ջրամբարի կառուցման վրա: Սրանք երեքն էլ ապրում են Երևանում:

Նորայր և Թաթուլ եղբայրներն աշխատում են որպես ուսուցիչ, Գուրգենը ավագ գյուղատնտես, Գառնիկը՝ լեռնային տեխնիկ, Նանիկը՝ դերձակ: Բոլորն էլ ապրում են Լուսակունք գյուղում և Սովետակերտում:

Հակոբ Հայրունու թոռներից երեքը ավարտել են բարձրագույն ուսումնական հաստատություններ, 13-ը սովորում են համալսարանում և տարբեր ինստիտուտներում, մնացածները միջնակարգ դրպրոցներում:

Հայրունիների միայն Հայաստանում ապրող գերդաստանի անդամների թիվը հասնում է հիսունի: Բայց նրանք ցյուղավորվել են նաև արտասահմանյան տարբեր երկրներում. ԱՄՆ-ում արդեն իր թոռնիկներին է ամուսնացրել Ագապին: Ֆրանսիայում և Կ. Պոլսում ապրում են Հակոբ Հայրունու հորեղբոր ընտանիքի ցյուղավորումները[1]:

Տնտեսության, լուսավորության, կրթության, գիտության և կյանքի այլ բնագավառներում գործած երգնկացիները թեև զգալի թիվ են կազմում, սակայն նրանցից ներկայացնում ենք միայն մի քանիսին:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍՐԱՊՅԱՆ – Բանասիրական գիտությունների դոկտոր, մենագրական մի քանի ծանրակշիռ հետազոտությունների հեղինակ Արմենուհի Սրապյանը, որ սերում է Երգնկայի Բթառիճ գյուղից, ծնվել է 1918 թվականին, Կարինում, գաղթի ճանապարհին:

Միջնակարգ և բարձրագույն կրթությունն ստացել է Երևանում, 1940 թ. ավարտել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի գրականության բաժինը և շարունակել է ուսումը ասպիրանտուրայում, գիտական ղեկավար ունենալով ականավոր հա-

[1] Հայրունիների գերդաստանին վերաբերող փաստերը մեզ տրամադրել է Հրաչիկ Հայրունին: Օգտվել ենք նաև Հ. Մաթևոսյանի՝ Հայրունիներին նվիրված զույգ հոդվածներից, տպագրված «Հայրենիքի ձայն» չարաթաթերթի 1983 թ. համարներում:

յագետ Մանուկ Աբեղյանին: Նրանից է ստացել հայ հին գրականության վերաբերյալ հիմնական գիտելիքները և մղումը դեպի այդ բնագավառը:

Ասպիրանտական շրջանն ավարտել է 1946 թվականին:

1943 թվականից սկսած՝ զուգահեռ աշխատել է Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի հայ հին գրականության բաժնում նախ իբրև կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող: Մինչև 1948 թ. աշխատել է նաև հայկական հեռագրական գործակալությունում իբրև խմբագիր, ոճաբան:

1958 թ. գրականության ինստիտուտում պաշտպանել է դիսերտացիա, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան, նյութ ունենալով Հովհաննես Երզնկացու մատենագրական ժառանգությունը, իսկ 1975 թ. պաշտպանել է դոկտորական դիսերտացիա՝ «Հայ միջնադարյան զրույցներ» թեմայով:

Արմենուհի Սրապյանը մեր գիտական մամուլում տպագրել է հայ հին և միջին դարերի գրականությանը նվիրված հոդվածներ, փորձելով լուսաբանել բանասիրական միտքը զբաղեցնող և քննության կարոտ մի շարք հարցեր, հաճախ հանգելով հետաքրքիր եզրակացությունների:

Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» (հեղինակակից, Երևան, 1957), «Հովհաննես Երզնկացի» (ուսումնասիրություն և գիտահամեմատական բնագիր, Երևան, 1958), «Կոստանդին Երզնկացի» (ուսումնասիրություն և գիտահամեմատական բնագիր, Երեվան, 1967), «Պատմութիւն վասն աղջկան և մանկան» (առաջաբան և գիտահամեմատական բնագրեր, Երևան, 1977):

Սոսկական այս թվարկումն էլ վկայում է, թե որքան գիտակ է Արմենուհին հայ հին մատենագրության հարցերին և նախասիրությունները էլ որքան բազմազան են:

Իր աշխատանքի բերումով տարիներ շարունակ լինելով Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում, մանրամասն հետազոտել է մասնավորապես իր գերդաստանի բնակավայր սիրելի Երզնկայի մատենագրական դպրոցը, առանցք ունենալով Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների գրական ժառանգությունը:

Գիտական խոր պրպտումների և նյութի լայն իմացության վկայություններ են այն երկու ուսումնասիրությունները, որոնք զետեղված են Հովհաննես Երզնկացու և Կոստանդին Երզնկացու երկերի հրատարակությունների սկզբում:

Այդ առաջաբաններում մանրամասն քննության է առնում վերոհիշյալ երկու մատենագիրների ապրած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական պայմանները, բացահայտում նրանց երկերի ուսումնասիրության հետ կապված հանգուցային շատ հարցեր, որոշում Հովհաննես Երզնկացու և Կոստանդին Երզնկացու տեղը առհասարակ հայ հին մատենագրության մեջ, իսկ բուն գիտական տեքստերը պատրաստված են խնամքով, հմտալից ծանոթագրություններով: Անհնար է չգնահատել այն մանրակրկիտ աշխատանքը, որ կատարել է նա՝ հրապարակի վրա դնելով միջնադարյան գրականության այդ երկու հսկաների ժառանգությունը գիտական մեկնաբանություններով:

Նույնը կարող ենք ասել նրա վերևում հիշատակված մյուս աշխատությունների և հարյուրից ավելի գրականագիտական հոդվածների մասին[1]:

***ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ** – Զկա մշակույթի որևէ բնագավառ, որին երգընկացիները գեթ մեկ-երկու ներկայացուցիչ տված չլինեն: Երաժշտությունը չէր կարող բացառություն կազմել: Այդ բնագավառում էլ ունենք Ազատ Մանուկյանին, որը մասնավորապես հայ մանկական երաժշտության մեջ գրեթե չունի մրցորդ:*

Ազատ Մանուկյանը ծնվել է Երզնկայի Վերի Ագրակ (Զիֆլիկ) գյուղում, 1878 թ.: 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայերի նկատմամբ ստեղծված ծանր պայմանների հետևանքով նրա ծնողները գաղթել են Կովկաս, երբ Ազատը փոքր երեխա էր:

Կրթությունն ստացել է Թիֆլիսում, սովորել Ներսիսյան դպրոցում, սակայն տնտեսական դժվարությունների պատճառով չի ավարտել ուսման ընթացքը: Ներսիսյան դպրոցում է նա ձեռք բերել երաժշտական բավականաչափ հմտություն, նվիրվել այդ բնագավառին:

Կազմել է երգչախմբեր, համերգներ է տվել Կովկասի տարբեր քաղաքներում, միաժամանակ աշակերտել է հայտնի խմբավար, կոմպոզիտոր Քրիստափոր Կարա-Մուրզային, որի նկատմամբ մինչև կյանքի վերջն էլ ունեցել է հարգանք ու սեր:

1899 թ. հրավիրվել է Վլադիկավկազ հայոց եկեղեցու խմբավարի պաշտոնով: Մի քանի տարի այդ պաշտոնը վարելուց հետո 1902 թ. ստեղծել է երգչախումբ՝ հայերից, վրացիներից, ռուսներից և օսերից: Դա փաստորեն եղել է առաջին ինտերնացիոնալ երգչախումբը հայ

[1] *Արմենուհի Սրապյանը մահացել է 2000 թ. (ծան. խմբ.):*

իրականությունում և նկատելի դեր է կատարել ժողովուրդների հոգևոր մերձեցման, փոխադարձ ճանաչման ուղղությամբ:

Հյուսիսային Կովկասի տարբեր ազգությունների պատկանող ժողովուրդները գնահատել են նրա օգտակար աշխատանքը: Երգչախումբը շրջագայել է տասնյակ քաղաքներ, կատարելով չորս լեզուներով ժողովրդական երգեր:

Ուսման տենչը ստիպել է նրան ցրել երգչախումբը և մեկնել Պետերբուրգ, որտեղ 1903–1905 թթ. կատարելագործել է մասնագիտությունը, հետևել ստեղծագործական բաժնի դասընթացներին:

Վերադառնալով Կովկաս՝ 1905–1906 թթ. պաշտոնավարել է հայկական դպրոցներում որպես երգի ուսուցիչ, միաժամանակ հորինել է մի շարք մանկական երգեր, որոնք 1908 թվականից հրատարակել է առանձին գրքույկներով՝ «Փնջիկ մանկական երգերի» (Թիֆլիս, 1908), «Փնջիկ մանկական երգերի (Նոր շարք, 1914), «Երեք խմբերգ Միք. Նալբանդյանի երգերից» (Թիֆլիս, 1916): Ապա լույս է ընծայել «Փնջիկի» Գ հատորը:

Նրա այդ տարիների մանկական երգերից մի քանիսը, ինչպես «Մարտը տալիս է ձնծաղիկ», «Փիսիկ, փիսիկ», «Պզան, պզան, պզպզան» և այլն, լայն տարածում են գտել հայկական դպրոցներում, տպագրվել տարբեր ժողովածուներում:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո ավելի բեղմնավոր է դարձել նրա երաժշտական գործունեությունը: 1921–1923 թթ. շրջագայել է Հայաստանի մի շարք վայրերում, երգեցողության ուսուցիչների համար կազմակերպել դասընթացներ, քաջալերել, օգնել խոստումնալից ուժերին:

1923 թ. կազմակերպել է Երևանի կենտրոնական բանվորական ակումբի առաջին երգչախումբը: Ապա մինչև 1925 թվականը նորից է շրջագայել Կովկասի և Հյուսիսային Կովկասի հայաշատ վայրերում, կազմակերպել հայ երգի երեկոներ:

Վերադառնալով Հայաստան՝ գրել է նոր երգեր, այդ թվում՝ «Ձարի վերջը», «Ոսկե ձկնիկի հեքիաթը», «Կամակոր Նունիկը», «Մադիկների երգը» մանկական օպերաները, որոնք բեմադրվել են Երևանի տարբեր թատրոններում:

Ազատ Մանուկյանը ստեղծագործական աշխատանքին զուգընթաց ունեցել է խմբավարական լայն գործունեություն նաև Հայաստանում ապրելու տարիներին: Ղեկավարել է Երևանի ռադիոկոմիտեի և Ուսուցչի տան մանկական երգչախմբերը: Շարունակել է հրատարակել «Փնջիկների» շարքը, դրանց թիվը հասցնելով տասի:

Նա Խորհրդային Վրաստանի (1936) և Հայաստանի (1952) արվեստի վաստակավոր գործիչ է, Հայաստանի վաստակավոր ուսուցիչ (1952), ՀԽՍՀ աշխատանքի հերոս (1935): Մահացել է 1958 թվականին:

ՀՈՒՍԻԿ ԽԱՆԴԱՄՈՒՐՅԱՆ (ԽԱՆԴԱՄՈՒՐ) – Գրական-երգիծական որոշակի տաղանդով օժտված այս գրողը բոլոր տվյալներն ուներ ավելի մեծ համբավի տիրանալու, քան տիրացել է: Դրան խանգարել է ամենից առաջ՝ բնավորության չհշտված ինքնատիպությունը, դեպի մենակությունը, առանձնությունը ձգտելու միտումը, կիսաղերվիշական անկազմակերպ կյանքով ապրելու, ընտանիքի, երեխաների ջերմիկ մթնոլորտի քաղցրությունից զուրկ մնալու ակամա դատապարտվածությունը:

Հոգու խորքում այնքան լույս ունեցող այս մարդը կյանքում սիրեց մթությունը, երեկոները լույս չվառեց սենյակում, չսիրեց սեղան նստել բարեկամների հետ, առհասարակ որևէ մեկի հետ, և այդ այն դեպքում, երբ իր սրամտություններով կարող էր դառնալ նման սեղանների զարդը:

Սիրեց թափառել գիշերով, այն էլ թափառել ոչ լուսավոր փողոցներով, ապրեց մեն-մենակ, իր մութ խցիկում, ամենահամեստ օրապահիկով, սննդի բեկորներով, որոնք իր թևի տակ դրած տուն սահեց մթության մեջ: Հագավ արդուկի երես չտեսած տաբատներ ու արտաշապիկներ, այն էլ հագավ, որպեսզի չմեղանչի քաղաքակրթության ընկալյալ սովորությունների դեմ և միաժամանակ պաշտպանվի ցրտից: Փողկապը համարեց մարդկանց խեղդամահ անող վզի պարան, զարմացավ, որ մարդիկ ժամանակ են վատնում կոշիկները մաքրել տալով:

Ցանկացան օգնել: Մերժեց: Արհամարհեց փողը: Զմերժեց միայն մի բան: Հայաստանի գրողների միության գրական ֆոնդը նրան առաջարկեց օգտվել Ծաղկաձորի ստեղծագործական տան բարիքներից: Այս մեկը չմերժեց: Ամեն ամառ եղավ այնտեղ, իրեն հատկացված փոքրիկ անկյունում: Ծաղկաձորում էլ վաղ առավոտյան իրեն գցեց անտառները, խոսեց ծաղիկների, գլգլան ջրերի հետ: Սառը ջրի տակ պահեց գլուխը ու երբ մարդ նշմարեց, սահեց, անհետացավ թփուտների արանքով, փչոտ կածաններով, որոնց ամեն մի թիզը ծանոթ էր իրեն: Ճաշի իջնում էր այն ժամանակ, երբ բոլորը դուրս էին գալիս ճաշարանից: Վշտահար մտավ աշխարհ, վշտահար ապրեց, բայց սիրեց երբեմն խայթել իր տարօրինակությունները

չհասկացողներին, իրեն ծաղրողներին: Ծաղրեց ոչ թե տափակ, անբովանդակ գրախոսություններով, այլ խելոք մտքերով, որոնք արդեն իր կենդանությանը պատմվում են մտավորական շրջաններում ու լիաթոք ծիծաղ առաջացնում: Խայթեց, ծիծաղեցրեց, բայց ինքը չծիծաղեց, մնաց միշտ նույն թախծոտ մարդը: Ծիծաղի կայծերը պահեց հոգու խորքում, ժլատ գտնվեց անգամ ստեղծագործությունների մեջ օգտագործելուց:

Ունեցավ երջանիկ հոգու խայտանք նույնիսկ այն ժամերին, երբ սեղանի վրա տեսավ իր գրքերի ազդանշանային օրինակները: Ճանաչեց կինը:

Ինչու՞ այս բոլորը: Գուցե այն պատճառով, որ Խանդամուրը ծնվել է աղետավոր, չարագուշակ 1915 թվականին Երզնկայում, հենց գաղթի ու աքսորի օրերին, և մոր կրծքի կաթի հետ ծծել է կյանքի, մեծ ոճիրի ու որբության դառնությունը:

Անցել է որբանոցից որբանոց: Պատերազմից հետո ընկել էր Եգիպտոս, այնտեղից 1924 թվականին Բեյրութ՝ Քելեկյան որբանոցը: Այստեղ է, որ դարձել էր գրաճանաչ, իսկ միջնակարգն ստացել էր Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունում:

Հայաստան էր եկել 1932 թվականին, շարունակել ուսումը, սովորել լրագրողների դասընթացներում և Գրողների միության կից գրական համալսարանում:

Ավարտելուց հետո աշխատել էր Պետհրատում և մի շարք հանդեսների և թերթերի խմբագրություններում՝ «Հայաստանի աշխատավորուհի», «Գրական թերթ» և այլն: Աշխատել է որպես սրբագրիչ, ոճաբան: Միաժամանակ գրել է: Տպագրել է մամուլում, գրքերով ու գրքույկներով՝ «Եզովպոսի կյանքը» (Երևան, 1940), «Եզովպոս» (1955), «Լուսաբաց» (պատմվածքներ, 1956), «Խիկար» (մանկական վիպակ, 1957), «Հանդիպում» (պատմվածքներ և մեկ պիես, 1958), «Մանկության ընկերուհին» (1961), «Եզովպոս, Խիկար» (1963), «Ուր է տանում գնացքը» (վեպ, 1964), «Մանկության ընկերուհին» (1967), «Լուրջ կատակ» (1973), «Կանաչ ճամպրուկը» (1978):

Բավականաչափ հարուստ վաստակ, որը սակայն մաղաչափ չփոխեց նրա ո՛չ առօրյան, ո՛չ կենցաղը, ո՛չ էլ ուրախության չիթ գցեց հոգեկան աշխարհում: Մնաց նույն մենակյացը, տարօրինակ ճգնավորը:

Մահացել է 1986 թվականին, Ծաղկաձորում:

ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ – *Գոհար Ազնավուրյանը ծնվել է Բաբերդում (Բայբուրդ), սակայն պատկանում է երզնկացի Ազնավուրյան գերդաստանի ճյուղավորումներից մեկին: Նրա հայրը՝ Հարությունն Ազնավուրյանը, բնիկ երզնկացի է, այնտեղ ծնված և այնտեղ կրթություն ստացած, մասնագիտությամբ՝ ժամագործ:*

Նկատի ունենալով, որ Երզնկայում եղել են մի քանի հայ ժամագործներ, իսկ Բաբերդը նման արհեստավոր չի ունեցել, 1890-ական թվականների վերջերից գործել է այնտեղ:

Գոհարը ծնվել է 1906 թ.:

Մեզ ուղարկած ինքնակենսագրականում նա հետևյալն է պատմում հոր մասին. «Նա ուշադիր հետևում էր մեր ուսման ընթացքին... Իր բոլոր հարազատները Երզնկայում էին, ամեն տարի աշնանը Երզընկայում գտնվող մեր ազգականներից ստանում էինք ընկույզ, չիր, չամիչ, պաստեղ և այլ չոր մրգեր, որոնք իրենց սեփական այգուց էին ստացվում: ... Մի անգամ հիշում եմ, որ եկեղեցում ներկայացում էին տալիս, ինչ խումբ էր, ովքեր էին, չեմ հիշում ոչինչ...»: Ապա ասում է, թե հիշում է եկեղեցում պլպլացող մոմերի լույսը, անծանոթ դերասանների՝ իր համար անհասկանալի նախադասությունները:

Բայց վայրագ ջարդարարները հանգցրել են նաև այդ մոմերը, կտրել բոլոր ձայները...

1915 թ. կորցրել է բոլորին, բոլորին... Ընկել քաղաքից քաղաք, որբանոցից որբանոց՝ Տրապիզոն, Բաթում, Թիֆլիս, Ղարս, Ալեքսանդրապոլ, Երևան, մինչև որ վրա է հասել արևածագը, ազատագրված Հայրենիքում ստացել է միջնակարգ և բարձրագույն կրթությունը: Ուսումն ավարտել է 1930 թվականին: Հասակ է առել, ամուսնացել, ընտանիք կազմել, աշխատել Զարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում: Աշխատանքի մեջ փորձել է մոռանալ ահավոր անցյալը: Կորցրել է Բայբուրդի փոքրիկ աշխարհը, գտել մտավոր մի մեծ աշխարհ, որի հետ ձուլվել է, որից ստացել է ավելին, քան կարող էր տալ մի նոր համալսարան:

Մշակել է ականավոր մտածողների արխիվները, գիտական աշխարհի սեփականությունը դարձրել այդ արխիվներում պահվող արժեքավոր շատ վավերագրեր, դրանք տպագրելով մամուլում կամ առանձին ժողովածուներում: Աստիճանաբար դարձել է ճանաչված բանասեր ու տեքստաբան:

Կազմել ու ծանոթագրել է «Գրական ժառանգության» Ա հատորը (1961), Հ. Հովհաննիսյանի երկերի երկու հատորների որոշ հատվածները:

Հետո արդեն, երբ Փարիզից ստացվել է Ա. Զոպանյանի բազմահարուստ արխիվը (1957), մոտ 25 տարի խորասուզվել է նրա մեջ, մշակել զգալի մասը, հաղթահարելով տարբեր ձեռագրեր ընթերցելու, փակագրությունները հասկանալու դժվարությունները: Այդ արխիվից հարյուրավոր փաստաթղթեր ներկայացրել է գիտական աշխարհին, մի մասը մամուլում, մի մասը՝ առանձին գրքերով, որոնցից հիշատակենք «Դանիել Վարուժանի նամականին» (Երևան, 1965), «Արևմտահայ գրողների նամականին» (1972), «Արշակ Զոպանյանի նամականին» (1980): Միայն վերջին այս երեք ժողովածուներում ընթերցողին են ներկայացված ավելի քան հազար նամակներ, մանրակրկիտ ծանոթագրություններով: Նրա այդ ծանր աշխատանքը գնահատվել է թե՛ մեզ մոտ և թե՛ սփյուռքում: Գնահատողներից է եղել Շահան Շահնուրի նման ականավոր մի գրող:

Գ. Ազնավուրյանը Զոպանյանի արխիվից հայտնաբերելով հրատարակել է նաև Զոպանյանի «Պետրոս Դուրյան» աշխատության վերամշակված տարբերակը (Երևան, 1967):

ԳՐԻԳՈՐ ՍՅՈՒՐՄԵՆՅԱՆ – Երզնկացի Սյուրմենյան մեծ ընտանիքի նախնիները խոր անցյալում ապրել են Տրապիզոնի մոտակայքում գտնվող Սուրմենե ավանում: Երեք եղբայրներ են եղել: Ինչ-որ թշնամության պատճառով սպանել են մի լազի և հարկադրված թողել են իրենց ծննդավայրն ու հեռացել տարբեր ուղղություններով: Եղբայրներից մեկը մեկնել է Թիֆլիս, մյուսը՝ Կարին, մեկն էլ՝ Երզնկա: Առաջին երկուսի վերաբերյալ տվյալներ մեզ չեն հասել և չգիտենք թե ինչ է եղել նրանց ճակատագիրը: Սակայն այն եղբայրը, որ ընտրել է Երզնկան, ունեցել է հաջողություն, ամուսնացել, ընտանիք կազմել և այնքան ճյուղավորվել, որ իր գերդաստանի ապրած ամբողջ թաղամասը կոչվել է Սուրմենենց թաղ:

19-րդ դարի վերջերին Երզնկայում արդեն եղել են Սյուրմենյանների մի քանի մեծ ընտանիքներ: Դրանցից մեկի չառավիղներից է պատերազմից հետո Իրաքում ապրած Գալուստ Սյուրմենյանը, որի մասին խոսելու ենք հետագա էջերում:

Սյուրմենյան մի այլ ընտանիքի զավակն է Գրիգորը, նույնպես ծնված Երզնկայում (1907), այնտեղ նախնական կրթությունը ստացած: Նրա հայրը՝ Համբարձումը, երկրում զբաղվել է գործվածքեղենի առևտրով:

Գրիգորը այսպես է վերհիշում Մեծ եղեռնի օրերը. «Աղոտ կերպով հիշում եմ. մայրս հաց էր թխում, Թուրքերը հանկարծ ներս խուժեցին և տաշտի միջի խմորը թոնիրը թափելուց հետո մեզ դուրս արին մեր տանից ու քշեցին ժամի մեյդանը, որտեղ հավաքված էր քաղաքի ազգաբնակչությունը՝ ի հարկե երեխաներ, կանայք ու տարիքոտ մարդիկ: Երիտասարդ տղամարդկանց տարել էին բանակ»:

Ու արդեն արկածներ, տաժանելի տարագրություններ, Եփրատ նետվելու դեպքեր, սպանություններ, խոշտանգումներ, փախուստներ, միմյանց գտնելու համար կատարված որոնումներ, մինչև որ Գրիգորը գտնում է քրդերի մոտ թաքնված հորը:

Ռուսական զորքի գալուց հետո Գրիգորի հայրը՝ որդու ձեռքից բռնած քրդերի մոտից իջել է Երզնկա, վերաշինել քարուքանդ և ավերակ դարձած իրենց տունը:

Տեղավորվել են, մի կերպ ապրել, մինչև որ վրա է հասել ճակատագրական մեծ նահանջը: 1918 թ. հունվարյան սառնամանիքների մեջ ճանապարհ ընկել դեպի Դերջան, այնտեղից Կարին, Ալեքսանդրապոլ, Երևան:

Գրիգորը միջնակարգ կրթությունն ստացել է Լենինականում, բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանում, որի գյուղատնտեսական ֆակուլտետն ավարտել է 1934 թվականին: 1935 թվականից աշխատել է Արմֆանի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտում նախ որպես լաբորանտ, ապա՝ կրտսեր գիտաշխատող, իսկ 1947 թվականից ավագ գիտաշխատող՝ կենսաբանական գիտությունների թեկնածուի աստիճանով:

Հետագայում՝ 1956 թվականից, աշխատել է Գյուղինստիտուտին կից Երկրագործության գիտահետազոտական ինստիտուտում:

Հիմնական զբաղմունքը եղել է ցորենի նոր սորտերի ստացումը: Լաբորատոր և գործնական փորձերից հետո նրան հաջողվել է ստանալ ցորենի մոտ տասը տեսակներ, որոնցից երեքը՝ նրան տված հեղինակային իրավունքով ընդունվել են և կիրառվել գյուղատնտեսության մեջ:

Կյանքի վերջին տարիներին Սյուրմենյանը զբաղվում էր ցորենի մի նոր տեսակի վրա, որը ցանկանում էր կոչել «Երզնկա»:

Զուգահեռ վարել է վարչական աշխատանքներ: Կարճ ժամանակ եղել է գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, սելեկցիայի բաժնի վարիչ: Մամուլում տպագրել է մասնագիտական հոդվածներ:

Գրիգոր Սյուրմենյանը արժանացել է Հայկական ԽՍՀ վաստակավոր գյուղատնտեսի կոչման:

ՊԵՏՐՈՍ ՋԱԹԱԼԲԱՇՅԱՆ – Երզնկայում Զաթալբաչյանների ընտանիքը բաղկացած է եղել 15 հոգուց: Ընտանիքի ավագի՝ Կարապետի, հիմնական զբաղմունքը եղել է կերպասեղենի առևտուրը:

Կարապետ Զաթալբաչյանի որդին է Պետրոսը, որ ծնվել է 1904 թվականին, Երզնկայում: Հազիվ գրաճանաչ դարձած վրա է հասել Առաջին համաշխարհային պատերազմը, ապա՝ Մեծ եղեռնը: Պետրոսի հայրը աքսորից առաջ վերցվել է զինվորական ծառայության, սակայն ի թիվս հարյուրավոր այլ երզնկացիների նրան էլ իբր թե ճանապարհաշինարարության վրա աշխատեցնելու համար տարել են Սանսա դարասի կոչվող ձորը և սպանել գազանաբար:

Ցաք ու ցրիվ է եղել ամբողջ ընտանիքը, մի քանին է միայն փրկվել ծանոթ քրդերի մոտ թաքնվելով: Պետրոսը աքսորի կարավանի հետ հասել է մինչև Խարբերդ: Ճանապարհին տանջամահ են եղել նրա տատը, փոքր քույրը, եղբայրը, հորեղբոր երկու որդիները և այլ հարազատներ: Հետագայում կորցրել է նաև մորը, մնացել որբ:

Ռուսական բանակի կողմից Երզնկայի ազատագրումից հետո, 1916 թ. երբ «Մեկ հայ՝ մեկ ոսկի» չարժումն է սկսվել և քրդերն իրենք տներից հայ որբեր են հավաքել ու բերել վաճառել, Պետրոսին էլ վերցրել է Երզնկայի հայկական որբանոցը: Այնուհետև ութ տարի, այսինքն՝ մինչև 1924 թ., նա թափառել է քաղաքից-քաղաք, որբանոցից-որբանոց: Երզնկայից տեղափոխվել է Կարին, ապա՝ Ջալալօղլի (այժմ՝ Ստեփանավան), Թիֆլիս, Կարս, Ալեքսանդրապոլ:

Միջնակարգ կրթությունն էլ ստացել է հենց որբանոցներում և ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատել է Լոռու, Լենինականի գյուղական դպրոցներում:

Տեղափոխվելով Երևան, սովորել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական մանկավարժական ինստիտուտում, որի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետն ավարտել է 1933 թ. և շարունակել է կրթական գործունեությունը:

Պետրոս Զաթալբաչյանը 1941–1946 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

Զորացրվելուց հետո շարունակել է ուսուցչական աշխատանքը, 1950 թ. նրան շնորհվել է Հայկական ԽՍՀ վաստակավոր ուսուցչի կոչում, նկատի ունենալով կրթական ասպարեզում նրա կատարած կես դարի աշխատանքը:

1928 թվականից սկսած աշխատակցել է մամուլին («Սովետական Վրաստան», «Սովետական մանկավարժ», «Սովետական դպրոց» և այլն, գրելով հիմնականում կրթական հարցերի մասին:

Պ. Զաթալբաշյանը մասնակցել է Նոր Երզնկայի հիմնադրման աշխատանքներին: Եղել է 1934 թ. Երևանում ստեղծված «Նոր Երզնկայի չինության» հանձնաժողովի կազմում, 1965 թ. էլ գործուն դեր է կատարել այդ երազի իրականացման համար սկսված աշխատանքներում:

ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԱՖՅԱՆ – Իրավաբան, հասարակական գործիչ Կարապետ Սարաֆյանը նույնպես եղել է 1934 թ. ստեղծված «Նոր Երզնկայի չինության» հանձնաժողովի կազմում և մեծ եռանդով աշխատել է այդ ծրագրի իրականացման համար:

Սարաֆյանը ծնվել է Երզնկայում, 1896 թվականին: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, իսկ իրավաբանական բարձրագույնը՝ Կ. Պոլսում:

Առաջին համաշխարհային պատերազմից, Մեծ եղեռնից հետո նա էլ գաղթել է Կովկաս, շարունակել ուսումը, միաժամանակ վարել պատասխանատու պաշտոններ: Եղել է Էջմիածնի շրջանի, ապա 1929 թվականից՝ Երևան քաղաքի ու մարզի դատախազը:

Երևանում էին ապրում նաև երզնկացի դեղագործ Աշգյանը, լրագրող Գուրգեն Քելլերյանը, որոնք երկուսն էլ եղել են 1934 թ. հիմնված «Նոր Երզնկայի չինության» հանձնաժողովի կազմում: Քելլերյանը աշխատակցել է խորհրդային մամուլին պատմագրական հոդվածներով: Նա նյութեր էր հավաքել վերապրած երզնկացիների մասին մի ալբոմ լույս ընծայելու մտադրությամբ:

ԷԴՎԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ* – Խարբերդցի հոր և երզնկացի մոր զավակ: Մեծացել է երզնկացիներով շրջապատված ընտանիքում: Երզնկացի Արմենուհի Սրապյանի ավագ քրոջ՝ Նոյեմզար Ադամյանի որդին է: Ծնվել է 1933 թվականին Երևանում: 1958 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Նույն թվականից աշխատում է Մաշտոցի անվան Մատենադարանում նախ որպես ավագ գիտաշխատող, ապա՝ խմբի ղեկավար: Պատմական գիտությունների թեկնածու է: Հիմնականում զբաղվում է Երզնկայի պատմությամբ: Բազմաթիվ հոդվածներ է տպագրել Հայաստանի 12–15-րդ դարերի պատմության տարբեր հարցերի նվիրված, որոնցից են՝ «Գևորգ Սկևռացու վարքը» («Բանբեր Մա-

տենադարանի», № 7, 1964), «Երզնկայի հայկական իշխանությունը 13–15-րդ դարերում» («Լրաբեր» ՀԳԱ ակադեմիայի, № 2, 1970), «Դանիշմանյան իշխանության պատմության հարցի շուրջը» (նույն տեղում, № 9, 1987) և այլն: Առանձին գրքերով հրատարակված գործերն են՝ «Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը» (1977), Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» (1995) և այլն:

ԹՌՉՈՒՆՅԱՆՆԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՆԵՐ* – Երզնկայի բնակավայրերից էր Ղարատիկին (Ղարադեկին) գյուղը: Այն գտնվում էր Երզնկայից հարավ-արևելք մոտ 8 կմ հեռավորության վրա՝ Եփրատի գեղատեսիլ ափին: 1915 թ. նախօրյակին գյուղն ուներ շուրջ 70 տուն հայ բնակչություն: Գյուղում բնավորվել էին նաև մի քանի թուրքացած քուրդ ընտանիքներ: Տեղի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին թվագրվում էր 1255 թվականով: Եկեղեցուն կից գործում էր ծխական դպրոց՝ 35 սաներով: Գյուղը նշանավոր էր իր բերրի վարելահողերով, այգիներով, զարգացած է եղել անասնապահությունը: Երզնկայի երևելի քաղաքացիներից չատերն այստեղ կալվածքներ և այգիներ ունեին: 1915 թ. Ղարատիկինը հիմնահատակ ավերվել է, հայ բնակչության մեծամասնությունը կոտորվել, իսկ փոքրաթիվ փրկվածներն էլ ցրվել են աշխարհով մեկ:

Գյուղի հին, նշանավոր ընտանիքներից է եղել Թռչունյանների ընտանիքը: Նրանք գլխավորապես զբաղվում էին հողագործությամբ և անասնապահությամբ: 19-րդ դարի վերջերին Հովհաննես քեհյա Թռչունյանն ունեցել է յոթ տղա և մեկ դուստր: 1895 թ. հոկտեմբերի Երզնկայի կոտորածներին զոհ են գնացել Հովհաննես Թռչունյանը, կինը և նրանց չորս որդիները: Փրկված որդիներից Պետրոսը և Արշակը Թուրքիայից հեռացել են և բնակություն հաստատել Ռումինիայի Բոտոշան քաղաքում: Բազմանդամ ընտանիքից գյուղում մնացել է միայն Պողոս Թռչունյանը, որին էլ վիճակված է եղել վերընձյուղել գերդաստանի կացնահար ծառը և վառել ընտանիքի մարած ճրագը: 1895 թ. նա ամուսնացել է բթաոիճցի Բուրաստանի հետ և բախտավորվել վեց զավակներով (Հմայակ, Սրբուհի, Հարություն, Հովհաննես, Մկրտիչ, Հազարվարդ): Մեծ դեպքերից առաջ Հմայակը տեղափոխվել է Ռումինիա, Մկրտիչը մահացել է դժբախտ պատահարից: Եղեռնին զոհ են գնացել Պողոս քեհյան, կինը, դուստրը՝ Սրբուհին, վերջինիս ամուսինն ու նրանց մանկահասակ դուստրը: Ջարդերից փրկված Հազարվարդին՝ արտակարգ գեղեցկությամբ մի աղջնակի, 1917 թ. թուրքերը գողացել են Էրզրումի որբանոցից:

Կոտորածներից հրաչքով փրկված Հարությունն ու Հովհաննեսը հեռացել են հայրենի Երզնկայից և ապաստան գտել ամենատարբեր որբանոցներում:

1917 թ. դեկտեմբերին 17-ամյա Հովհաննեսը կամավոր զինվորագրվել է նոր կազմակերպված Հայկական կորպուսին՝ ծառայել բանակային առաջին բրիգադի Երզնկայի գնդում: Ականատեսն է եղել հայկական ազգային զորամասերի նահանջին՝ Երզնկայից–Ալեքսանդրապոլ: Մասնակցել է 1918 թ. ապրիլի Կարսի և մայիսի՝ Ալեքսանդրապոլի մարտերին: 1918 թ. մայիսին Դսեղում զինվորագրվել է գեներալ Անդրանիկի հրամանատարության ներքո գործող Հայկական առանձին հարվածային զորամասին: Մասնակցել է դեպի Զանգեզուր, Նախիջևան, Ջուղա, Խոյ և Ղարաբաղ զորավարի կազմակերպած ռազմերթերին: 1919 թ. մայիսից մինչև 1920 թ. նոյեմբերը ծառայել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում: 1921–1922 թթ. աշխատել է Դերբենդում, Հյուսիսային Կովկասում, Եկատերինոդարում: 1924 թ. Եկատերինոդարում ամուսնացել է Տրապիզոնի հայտնի ընտանիքներից մեկի չառավիղ Վարդանուշ Լուսպարյանի հետ: Այս ժամանակ է, որ ի պատիվ իր Հովհաննես պապի, ընդունել է Հովհաննիսյան ազգանունը, իսկ ավագ եղբայրը՝ Հարությունը, չարունակել է կրել Թոչունյան ազգանունը:

1920-ական թթ. վերջերին Հովհաննեսը տեղափոխվում է Հայաստան և մշտական բնակություն հաստատում Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքում: Հայրենի հողի վրա դարձյալ հառնում է երիցս ոչնչացված ընտանիքի ոգին՝ աշխարհին ավետելով նոր երզնկացիների հարությունն ու վերընձյուղումը: Իր անտիպ հուշերում Հովհաննեսը ոչ առանց հպարտության գրել է. «Ես Հովհաննես պապիս գերազանցեցի՝ ունեցա յոթ տղա և երկու դուստր»: Յոթ տղաներն ու դուստրը նրան պարգևել են 21 թոռ և 42 ծոռ, բոլորը միասին 72 հոգի: Այսպես է ցեղասպան թուրքից իր ընտանիքի վրեժը լուծել 1899 թ. Երզնկայում ծնված Հովհաննես Հովհաննիսյանը: Իսկ եղբայրը՝ Հարությունը, որ բնակություն է հաստատել Կիրովականում (այժմ՝ Վանաձոր), ունեցել է չորս դուստր:

1941 թ. հուլիսին Հովհաննես Հովհաննիսյանը կամավոր (ունեցել է արտոնություն) մեկնել է ռազմաճակատ և մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Ծառայել է 390-րդ Հայկական հրաձգային դիվիզիայում: Մասնակցել է Կերչի պաշտպանական մարտերին: 1942 թվի մայիսին ծանր վիրավորվել է ու զորացրվել:

Ցեղասպանությունը վերապրած, համաշխարհային երկու պատերազմներին մասնակցած, Լենինականում հարգված ու ճանաչված վարպետ Հովհաննեսը կյանքի գլխավոր նպատակն է համարել զավակներին (Աշոտ, Լևոն, Վոլոդյա, Անիկ, Պետրոս, Հայկ, Գրիգոր, Սամվել) դաստիարակել Երգնկայի ավանդույթներով ու սովորույթներով, իր ընտանիքին հատուկ անսահման աշխատասիրությամբ, համեստությամբ, կամքով ու համառությամբ, դաստիարակել որպես ճշմարիտ ու խոհուն հայրենասերների՝ փարված հողին ու ոգուն: Ի դեպ, ավագ որդու անդրանիկ զավակը կրում է Հովհաննես անունը, երրորդ Հովհաննեսը հարյուր տարվա ընթացքում:

1960–1970-ական թվականներին շարադրել է իր փոթորկալից կյանքի հուշերը՝ «Մեր գնդի ճակատագիրը» վերտառությամբ, որի առաջին մասն ամբողջությամբ իր ծննդավայրի ու Երգնկայի հիշատակներն են: Հովհաննես Հովհաննիսյանը մահացել է 97 տարեկան հասակում՝ 1996 թ., Լենինականում:

Հովհաննես Հովհաննիսյանի որդիներից պատմաբան Պետրոս Հովհաննիսյանը (սույն գրքի խմբագիրներից) ծնվել է 1944 թ. հունիսի 22-ին, Լենինականում: Ավարտել է տեղի № 5 միջնակարգ դպրոցը: Սովորել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում:

1976 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1976 թվից առայսօր աշխատում է Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնում՝ նախ որպես դասախոս, ապա՝ դոցենտ: Նա 260 տպագիր աշխատությունների, այդ թվում 10 գրքերի հեղինակ է: Հատկապես հիշատակության են արժանի Մովսես Խորենացու, Նիկողայոս Ադոնցի, Հակոբ Մանանդյանի կյանքին ու գործունեությանը նվիրված աշխատությունները: Զափազանց կարևոր են նրա մասնակցությամբ կազմված ու խմբագրությամբ լույս տեսած «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» (հատ. 1, 1981), «Հայոց պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը». հիմնահարցեր (2000), «Ամենայն հայոց կաթողիկոսներ» (2001), «Հայոց եկեղեցու պատմություն» (2002–2005), «Նշանավոր ճեմարանականներ» (պրակ 1, 2005) հատորներն ու դասագրքերը: Հայկական հարցի ուսումնասիրության առումով բացառիկ կարևոր նշանակություն ունեն Նիկողայոս Ադոնցի «Հայկական հարց» հատորի (1996), «Հայկական հարց, հայերի ցեղասպանությունը» ռուսերեն գրականության մատենագիտությունը (1998), «Հայոց ցեղասպանությունը» (2001) հրատարակությունները և այլն:

Պետրոս Հովհաննիսյանն ունի երկու զավակ (Վլադիմիր և Անդրանիկ) և երեք թոռ (Անի, Անուշ և Պետրոս):

ԳԱՐԵԳԻՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ* – Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ծավալվեց Հայկական կամավորական շարժումը: Դա հայրենասիրական, ազգային-ազատագրական շարժում էր, որի նպատակը Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր: Կամավորական շարժումը տարածվեց ոչ միայն Ռուսաստանի տարածքում ապրող, այլև գաղթավայրերի հայության շրջաններում: Կամավորական շարժման մասին առաջին իսկ լուրերից հետո նրան մասնակցելու ցանկություն հայտնեցին ճակատագրի բերումով Ռումինիայում բնակվող երզնկացիներ Հարություն և Գարեգին Անդրեասյան եղբայրները:

Գարեգին Անդրեասյանը ծնվել է 1893 թ. Երզնկայի Բթաոիճ գյուղում: Մորաքրոջ որդին է Հովհաննես Հովհաննիսյանի: 1911 թ. նա զորակոչվել է թուրքական բանակ և մասնակցել Բալկանյան առաջին պատերազմին: Թեև սահմանադրություն էր հռչակվել և հայերին բանակ էին զորակոչում ու զենք տրամադրում՝ թուրքերը խիստ բացասաբար էին տրամադրված հայ զինվորների նկատմամբ՝ ազգային ու կրոնական վիրավորանքներ, ծեծ, խոշտանգումներ և այլն: Չկարողանալով տանել մարդկային ու ազգային արժանապատվությունը վիրավորող ամենօրյա նվաստացումները՝ Գարեգին Անդրեասյանը որոշում է փախչել Բուլղարիա: Մեծ դժվարություններով ու տառապանքներով, անասելի արկածներով նա անցնում է թուրքական սահմանը և որոշ ժամանակ անց բնակություն հաստատում Ռումինիայում, ուր վաղուց ի վեր, ապրում էր ավագ եղբայրը՝ Հարությունը: Հենց այստեղ էլ ստանում են պատերազմի և Հայկական կամավորական շարժում սկսելու լուրը: Եղբայրները որոշում են մեկնել Կովկաս և անդամագրվել ջոկատներից մեկին: Կոստանցա–Օդեսա–Բաթում–Թիֆլիս երթուղիով նրանք հասնում են Հայաստան: Գարեգինն ընդգրկվել է Քեռու (Արշակ Գաֆավյանի) հրամանատարության ներքո գործող կամավորական ջոկատում, որը կռվում էր Սարիղամիշ–Էրզրում ուղղությամբ: Ջոկատի կազմում մասնակցել է բազմաթիվ ճակատամարտերի, մասնավորապես Ռևանդուզի հայտնի գործողությանը, որտեղ աչքի է ընկել անձնական խիզախությամբ ու քաջությամբ, արժանացել հրամանատարության խրախուսանքին: 1917 թվականի վերջերին զինվորագրվել է Հայկական կորպուսին՝ մասնակցել Երզնկայի և Կարինի պաշտպանական մարտերին, ծա-

ռայել է Երզնկայի գնդում: Նահանջի ծանր ու արյունաքամ մարտերից մեկի ժամանակ զոհվել է եղբայրը՝ Հարություն Անդրեասյանը: Երզնկայի գնդի կազմացրումից հետո զինվորագրվել է Անդրանիկի զորաջոկատին և մասնակցել զորավարի վերջին ռազմերթերին դեպի Զանգեզուր, Խոյ և Ղարաբաղ:

Ամուսնացել է մամախաթունցի Մարիամ Խաչատրյանի հետ: Նորաստեղծ ընտանիքը ստիպված է եղել տեղափոխվել քաղաքից քաղաք՝ Բաքու, Բաթումի, Ջալալօղլի (այժմ՝ Ստեփանավան), Ղարաքիլիսա (այժմ՝ Վանաձոր) և ի վերջո հաստատվել է Երևանում: Նրանք ունեցել են երեք արու զավակներ՝ Հակոբ, Կորյուն և Հարություն:

Գարեգին Անդրեասյանը մահացել է 1979 թ. Երևանում:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՑԻՆԵՐՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

1. ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Եթե Մեծ եղեռնից հետո երզնկացիների մի մասը, այսինքն՝ վերապրողների այն հատվածը, որ 1916–1917 թթ. կենտրոնացել էր Երզնկայում, մեծ նահանջի ժամանակ գաղթեց Կովկաս և սփռվեց Ռուսաստանի տարբեր վայրերում, ապա այն հատվածը, որ աքսորի ճամփով հասել էր արաբական երկրներ, այնտեղից ցրվեց աշխարհով մեկ: Ոմանք զինադադարից հետո Կ. Պոլսի վրայով անցան Եվրոպա, հիմնականում Ֆրանսիա, ուրիշներ՝ Բալկանյան երկրներ, մեկնեցին հեռավոր Ամերիկա, անչուշտ զգալի մասն էլ մնաց արաբական երկրներում (Եգիպտոս, Սիրիա, Լիբանան, Իրաք և այլն):

Աշխարհով մեկ տարածված երզնկացիներն առաջին տասնամյակներում ամեն կերպ աշխատել են վառ պահել ոչ միայն ազգային ոգին, մայրենի լեզուն, այլև Երզնկայի ավանդույթները, հաճախ հավաքվել միմյանց մոտ, կազմակերպել երեկույթներ, ցերեկույթներ, հանդեսներ, անգամ թատերական ներկայացումներ: Սփյուռքահայ մամուլում հարյուրավոր նման փաստեր կարելի է գտնել:

Համաքաղաքացիական այս մերձեցման հետ կապված միջոցառումներն ավելի լայն թափ են ստացել հայրենակցական միությունների գործունեության աշխուժացման տարիներին:

Բերենք մի օրինակ: Սփյուռքահայ թերթերից մեկում գտնում ենք Մարսելում ապրող երզնկացիների մի հավաքի հուզիչ նկարագրությունը: Կազմակերպված է եղել «Երզնկացիների հայրենակցական միության» կողմից:

Հանդեսի սկզբում տրվել է զեկուցում: Եղել են ելույթներ: Ցերեկույթի երկրորդ մասում նվագախումբը նվագել է հայկական մի քանի երգեր՝ «Սարերի վրով գնաց», Ջութակահար Կարպիս Պողոսյանը մեներգել է «Ալազյազ», «Դրլե յաման», «Սիրուհիս»:

«Հետո վարչությունը կաղնդեց բոլոր հանդիսականները կաղինով լի թաշկինակներով, որ կնքված էին «Երզնկայի հայրենակցական միության» կնիքով»:

Հայրենաբաղձ երզնկացիներ. ցանկացել են տարվա մեջ գեթ մի քանի ժամով ոգեկոչել իրենց ծննդավայրը, կատարել կաղանդի ավանդական ծիսակատարությունները:

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ քիչ թվով երզնկացիներ են անցել արտասահման, հազիվ մի քանի տասնյակ ընտանիք:

Դրանցից էին Ղազարոսյան եղբայրները, Նշան Տեր-Ստեփանյանը, Դերենիկ Ճիզմեճյանը, որոնք ապրել են Իտալիայում: Գարեգին Տյուրկերյանը ապրել է Եգիպտոսում, բժիշկ Երվանդ Արզումանյանը աշխատել է Սուդանում, բժիշկ Ավետիս Գույումճյանը՝ Բուլղարիայում, ապա՝ ԱՄՆ-ում և այլն:

Քանի որ մեր տրամադրության տակ չկան ճշգրիտ տվյալներ տարբեր երկրներում ցրված երզնկացիների մասին, բավականանանք այն տվյալներով, որ իր «Երզնկա» գրքում բերում է Գ. Սյուրմենյանը:

Կոտորածից առաջ ԱՄՆ-ում ապրող երզնկացիների թիվը հազիվ եղել է մի քանի հարյուր, այն էլ ապրուստի թելադրանքով այնտեղ մեկնած երիտասարդներ: Իսկ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ են գաղթել ավելի քան 300 երզնկացի ընտանիքներ: Միայն Դեյտրոյտի շրջանում ապրող երզնկացիների թիվը եղել է 140 ընտանիք, Նյու Յորքի շրջանում՝ 120, այլ վայրերում՝ մոտ 50 ընտանիք:

Դեյտրոյտի և Նյու Յորքի երզնկացիներն ստեղծել են իրենց հայրենակցական միությունները դեռևս 1917 թվականին:

Հետագայում հիմնադրվել է «Եկեղյաց գավառի վերաշինական միությունը», ավելի ուշ՝ «Երզնկայի հայրենակցական միությունը»:

Այս միությունների հիմնական նպատակն է եղել նյութական օգնություն ցույց տալ կարոտյալ երզնկացիներին:

Բացի այս երկու միություններից, 1934 թ. Դեյտրոյտում ստեղծվել է «Համաերզնկացիական վերաշինաց միությունը», որի միակ նպատակն է եղել Խորհրդային Հայաստանում կառուցել Նոր Երզնկա ավանը:

1946 թ. դարձյալ Դեյտրոյտում ստեղծվել է Երզնկայի ներգաղթի միացյալ մարմինը՝ «իր մեջ առնելով վերոհիշյալ երկու քույր միությունների հավասար թվով ներկայացուցիչներ, համագործակցաբար ներգաղթի գործը կազմակերպելու համար»:

Այս վերջին միության հիշարժան գործերից է եղել 11.000 դոլարի հանգանակությունը, որ հանձնվեց Հ. Բ. Ը. Միությանը՝ ներգաղթի գործին ծառայեցնելու համար:

ԱՄՆ-ի «Երզնկացիների հայրենակցական միության» ջանքերով էր հիմնականում, որ 1965 թ. Հայաստանի կառավարությունը Աչտարակի չրջանի սովխոզներից մեկը կոչեց Նոր Երզնկա, որի մասին խոսվելու է առանձին գլխում:

«Համաերզնկացիական վերաչինաց միությունը» արժեքավոր գրքեր, գործիքներ ու այլ պիտույքներ է առաքել Երևանի հանրային գրադարանին, Գիտությունների ակադեմիայի, Արվեստի, Ազգագրության և հնագիտության ու այլ ինստիտուտների գրադարաններին, Հայկական սովետական հանրագիտարանին և այլն:

Երզնկայի հայրենակցական միության եռանդուն գործիչներից Արամ Ագնավուրյանը, Արչակ Ալճյանը, Հ. Աստյանը և ուրիշներ հաճախ են այցելել Հայաստան, եղել Նոր Երզնկայում, հանդիպումներ ունեցել երևանաբնակ երզնկացիների հետ, ամեն կերպ օգնել Նոր Երզնկայի բարգավաճմանը:

Նրանց նախաձեռնությամբ է, որ տողերիս գրողին հանձնարարվեց գրել հատուկ աշխատություն՝ Երզնկա քաղաքի դարավոր պատմության մասին:

Բավականաչափ մեծ թիվ են կազմել արաբական երկրներում ապաստան գտած երզնկացիները:

Իրաքում հաստատված երզնկացիների մեջ գտնում ենք «Երզնկա» փաստալից գրքի հեղինակ Գալուստ Սյուրմենյանի ընտանիքին, Գեղեցիկ Խանճյանին, Մկրտիչ Խանճյանին, Մամիկոն Աչճյանին, Սիրաք Սարաֆյանին, Հայկազ Աչճյանին և այլն, բոլորն էլ Երզնկա քաղաքից:

Հալեպում (Սիրիա) Երզնկա քաղաքից ապրել են՝ Հակոբ Էհրամճյանը, Արմենակ Շահինյանը, Կարապետ Համբարձումյանը, Գևորգ Քեչիչյանը, Արամ Պոտիկյանը, Համբարձում Գզիրյանը, Սարգիս Սարաֆյանը, Բարկեն Իփեկճյանը, իսկ Երզնկայի գյուղերից Խաչատուր Աչճյանն ու Մանուկ Պողոսյանը՝ Բթառիճից, Գառնիկ Փազարճյանը՝ Սուրբ Օհանից, Հրանտ Սուքիասյանը՝ Վերի Զիֆլիկից, Վահան Քյուլահճյանը՝ Մթննիից, Հարություն Միստեսյանը՝ Ծաթգեղից և այլն:

Բեյրութում ապրող երզնկացիներից հիշվում են Գեղամ Ամպարճյանը, Հակոբ Լևոնյանը, Հմայակ Մատթեոսյանը, Խաչատուր Ալթըգաթյանը, Գրիգոր Մանավյանը՝ քաղաքից և մի քանի հոգի էլ գյուղերից:

Եգիպտահայ գաղութում նույնպես նկատելի թիվ են կազմել երգնկացիները, մեծ մասամբ ընտանիքներով, մի քանիսը միայն ամուրի:

Հիշենք Մկրտիչ Ապաճյանին, Մասիս Զուրիկյանին, Վահե Պոյաճյանին, Նորայր, Ժիրայր, Գեղամ և Պետրոս Գազանճյաններին, Գաբրիել Լազյանին, Գարեգին Ամատյանին (հետագայում ներգաղթել է Խորհրդային Հայաստան), դեղագործ Բաբկեն Արզումանյանին, Հարություն Սյուրմենյանին, Միածան Ահարոնյանին, Եվգինե Գազանճյանին, Արաքսի Գազանճյանին, Սաթենիկ Թուխմանյան-Ստեփանյանին, Հայկանուշ Թելֆեյանին, Վարդանուշ Մարթայանին, Փառանձեմ Իփեկյանին և ուրիշների:

Վերապրող երգնկացիներն անհամեմատ մեծ թիվ են կազմել Ֆրանսիայում: Փարիզ, Մարսել, Վալանս, Լիոն և այլ քաղաքներում ապրել են երգնկացի մի քանի տասնյակ ընտանիքներ:

Ուշագրավ է, որ մինչ Փարիզում և Մարսելում ապրողների մեծ մասը Երգնկայից են եղել, Վալանսում ապրողները՝ Երգնկայի գյուղերից, ինչպես Սարգիս Գասպարյանը, Հակոբ Գապայանը, Հայկ Գապայանը, Խորեն Ապանոզյանը՝ Հոռոմագրակ գյուղից, Մարտիրոս Մարտիկյանը, Սուրեն Մակարյանը՝ Երկան գյուղից, Արգար Սրապյանը՝ Բթառիճից և այլն:

Մարսելում ապրող երգնկացիներից են՝ Շուշանիկ Փիլոյանը, Վարսենիկ Տեր-Գասպարյանը, Արմենուհի Օվըլիկյանը, Խաչատուր Աստոյանը, Աշխեն Թրլեյյանը, Գալուստ Նշանյանը, Շահեն Թահմիզյանը, Մկրտիչ Զորայանը, իսկ գյուղերից՝ Սաթենիկ Խորասանճյանը (Ծաթգեղ), Ծաղիկ Պեզիկյանը (Մեղուցիկ), Ավետիս Սուսիկյանը (Մթնին), Հարություն Սրապյանը (Բթառիճ) և այլն:

Բալկանյան երկրներում նույնպես ապրել են մի քանի հարյուր երգնկացիներ, մասնավորապես Աթենքում, Սալոնիկում, Կավալայում (Հունաստան), Սոֆիայում, Պլովդիվում (Բուլղարիա), Բուխարեստում (Ռումինիա) և այլն:

Գ. Սյուրմենյանը Մեծ եղեռնից վերապրած երգնկացի հայերին հաշվում է մոտավորապես 3000 հոգի, ինչ որ աննշան թիվ է 45.000 հայերի դիմաց, որ ապրել են Երգնկա քաղաքում, նրա գյուղերում և Դերջանում պատերազմից առաջ[1]:

Անհնար է մեկ առ մեկ հիշատակել արտասահմանում ապրող բոլոր երգնկացիներին: Ուզում ենք այս գրքում խոսել գեթ առավել ականավորների մասին:

---

[1] **Գ. Սյուրմենյան,** *Երգնկա, էջ 481-490 (թվաքանակը վերաբերում է Երգնկայի գավառին) (սանջակ – ծան. խմբ.):*

Չկա գիտության, արվեստի, առհասարակ մշակույթի որևէ բնագավառ, որտեղ իրենց լուման մուծած չլինեն երզնկացիները: Ոմանք եղել են տվյալ բնագավառի սովորական աշխատողներ, բայց մի քանիսն էլ այնպիսի դիրքերի են հասել, որ իրենցով զբաղեցրել են հայ և օտար հասարակական, գիտական միտքը:

Այստեղ մեզ զբաղեցնող մարդկանցից մի քանիսը Երզնկայից դուրս են եկել դեռևս 1895–1896 թթ. ջարդերի օրերին, նրանից հետո՝ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը, բայց մեծ մասը վերջին բռնագաղթից հետո արտասահման անցածներ են:

2. ՍՓՅՈՒՌՔԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԵՐԶՆԿԱՑԻՆԵՐԸ

ՍԱՐԳԻՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ – «Երզնկայի հայության պատվաբեր ու եռակի դեմքերեն մին»: Այսպես է բնութագրել Սարգիս Տեր-Ստեփանյանին նրա կենսագիրներից մեկը, և դա միանգամայն ճիշտ է:

Սարգիս Տեր-Ստեփանյանը մոտ 25 տարի՝ 1870-ական թվականների սկզբներից մինչև 1895 թվականը, մի քանի տարի էլ օսմանյան սահմանադրության շրջանում եղել է Երզնկայի հայ կյանքին ուղղություն տվողն ու ղեկավարողը, չխնայելով նյութական և բարոյական իր օժանդակությունը հասարակական, կրթական, գեղարվեստական միջոցառումներին, հաճախ ինքը հանդիսանալով շատ նախաձեռնությունների ծրագրողը:

Համարվել է քաղաքի բարեկեցիկ վիճակում ապրող հայերից, մի բան, որ հաճույքով չեն դիտել թուրքերը, չեն հանդուրժել մանավանդ ազգային զարթոնքի տարիների նրա գործունեությունը:

Սարգիս Տեր-Ստեփանյանը ծնված պետք է լինի 1850-ական թվականների սկզբներին, Երզնկայի հայտնի Տեր-Ստեփանյանների երկճյուղ գերդաստանում:

Կրթությունը ձեռք է բերել հիմնականում ինքնազարգացմամբ և մասնավոր ուսուցիչների մոտ, տիրապետելով հայերեն, ֆրանսերեն և թուրքերեն լեզուներին:

Առևտրով զբաղվելով հանդերձ, վարել է պետական պաշտոններ, երկար տարիներ աշխատել է Երզնկայի թուրքական դատարանում որպես իրավախորհրդատու, ստացած ոռճիկը ամբողջովին տրամադրելով հայ համայնքի կրթական, մշակութային կարիքներին: Քաղաքի Քրիստինյան օրիորդաց վարժարանն իր գոյությունը պահպանել է հիմնականում նրա հատկացրած թոշակավորումով:

Ավելի նշանակալից է նրա ծառայությունը Երզնկայի հայկական թատրոնին: Տեր-Ստեփանյանի նյութական և բարոյական լայն օգնության շնորհիվ է, որ 1870 թվականին երզնկացիները ստեղծել են թատերախումբ, կառուցել թատրոնի շենք:

Ունեցել է նաև կրթական գործունեություն: Որպես ուսուցիչ, ուսումնական խորհրդի անդամ կապված է եղել Կեդրոնական վարժարանի հետ:

1895–1896 թթ. կոտորածներից հետո հարկադրված է եղել անցնել Հունաստան, գործել Աթենքում, երզնկացի մի խումբ ազատամիտ երիտասարդների հետ, որոնք նույնպես փախել էին Թուրքիայից: Այնտեղ ապրել է Կարապետ Կարապետյան ծածկանվան տակ: Ծրագրեր է կազմել՝ Երզնկա վերադառնալուց հետո ինքնապաշտպանական ավելի արդյունավետ միջոցառումների դիմելու մասին, ընդհուպ մինչև զինված դիմադրությունը, գտնելով որ հայ ժողովրդի գլխին եկած դժբախտությունների հիմնական պատճառներից մեկը եղել է կրավորական համակերպումը:

Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո վերադարձել է Երզնկա, շարունակել հասարակական, մշակութային գործունեությունը, սակայն այս անգամ էլ վրա է հասել Առաջին համաշխարհային պատերազմը և նա էլ, Երզնկայի մտավորականներից Համբարձում Սյուրմենյանի, Նշան Քաջյանի և շատ ուրիշների հետ զոհ է դարձել 1915 թ. Մեծ եղեռնին:

ԱՐՇԱԿ ԹՅՈՒԹՅՈՒՆՋՅԱՆ – Աստվածաբան, քարոզիչ, հոգևոր գործիչ Արշակ Թյությունջյանը ծնվել է 1878 թ. Երզնկայում: Սովորել է նշանավոր Եղնիկյան վարժարանում: Հատկապես հմտացել է աստվածաբանության մեջ: Վեց տարի շարունակ ուսուցչություն է արել Երզնկայի, Կամախի և Կարինի դպրոցներում: Դարձել է բողոքական և Խնուսում զբաղվել քարոզչությամբ, եղել է պատվելի: 1903 թվականից՝ Ա. Սերունի ծածկանունով, թղթակցել է արևմտահայ նշանավոր օրաթերթերին: Գրել է կրոնական-աստվածաբանական բնույթի մի շարք ուսումնասիրություններ, որոնցից նշանավոր է «Պատմական Հիսուս Քրիստոսը» մենագրությունը (1914, Մարզվան): Նահատակվել է Մեծ եղեռնի օրերին:

ՆՇԱՆ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ – Հրապարակախոս, խմբագիր, հասարակական գործիչ Նշան Տեր-Ստեփանյանը որդին է Սարգիս Տեր-Ստեփանյանի: Ծնվել է Երզնկայում, 1889 թվականին: Նախնական կըր-

թությունն ստացել է ծննդավայրում, ապա ուսումնառությունը շարունակել է Կ. Պոլսի Պերպերյան միջնակարգ դպրոցում և Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում: Ավարտելուց հետո սովորել է Բոլոնիայի համալսարանի երկրագործական ֆակուլտետում: Նույն համալսարանում ստացել է երկրագործական գիտությունների դոկտորի աստիճան: Նրա նպատակն է եղել վերադառնալ Երզնկա, օգտակար լինել գյուղատնտեսական աշխատանքներին, հողագործական որոշ նորություններ մտցնել գյուղի աշխատանքներում, սակայն Բալկանյան և Առաջին համաշխարհային պատերազմները պատճառ են դարձել, որ մնա Իտալիայում և զբաղվի գրական-հրապարակախոսական աշխատանքով: Աշխատակցել է պոլսահայ մամուլին: Իր հայրենակից փիլիսոփա Ռաֆայել Պազարճյանի հետ Իտալիայում հիմնել է «Արմենիա» իտալերեն թերթը, որը խմբագրել է մի քանի տարի, ամբողջովին նվիրելով հայկական դատին, մերկացնելով Թուրքական կառավարության ջարդարարական քաղաքականությունը: Հոդվածների զգալի մասն էլ ինքն է գրել: Աշխատակցել է իտալական մամուլին: Վախճանվել է 1955 թվականին Իտալիայի Տորինո քաղաքում:

ՌԱՓԱՅԵԼ ՊԱԶԱՐՃՅԱՆ – Երզնկացի մտավորական սերնդի մեջ բացառիկ անհատականություն է փիլիսոփա Ռափայել Պազարճյանը՝ լայն գիտելիքների տեր, մի քանի լեզուների հմուտ, եզրակացությունների մեջ համարձակ ու ինքնուրույն, երևույթները նորովի ընկալելու և բացատրելու բացառիկ կարողության տեր մտածող, որի մասին հայ փիլիսոփայության պատմաբանները դեռ նոր-նոր պիտի խոսեն ու գնահատեն ըստ արժանվույն:

Ռափայել Պազարճյանը ծնվել է Երզնկայի Սուրբ Օհան (Սրբիհան) գյուղում, 1880 թվականին: Կրթությունն ստացել է քաղաքի Եզնիկյան վարժարանում, այն տարիներին, երբ նրա տեսուչն էր հմուտ մանկավարժ Սարգիս Ամատյանը: Հենց նա էլ, նկատելով նրա մեջ բնատուր տաղանդը, ամեն կերպ օգնել է, որ Ռափայելը կարողանա ի հայտ բերել իր լայն հնարավորությունները: Նրան գրքեր է տրամադրել, խորհուրդներ տվել, հետևել զարգացման ընթացքին:

Երեխան լիովին արդարացրել է նրա հույսերը. դեռ աշակերտական նստարանին վրա գրել է կուռ շարադրություններ, քնարական բանաստեղծություններ:

Այդ դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում, որն ավարտելուց հետո՝ 1900–1906 թթ., Պադուայի համալսարանում, հետևելով բժշկության:

Որպես բժիշկ աշխատել է Իտալիայի Ֆելդրե քաղաքում: Այդ տարիներին մտերմական կապերով կապվել է Եվրոպայում սովորող մի քանի հայ ուսանողների հետ, որոնց թվում Դանիել Վարուժանի: 1906–1907 թթ. նրա հետ ունեցել է կանոնավոր նամակագրություն, մտքերի աշխույժ փոխանակություն՝ հայ գրականության, արվեստի, հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի և այլ հարցերի մասին:

Պազարճյանը կազմել է ծրագրեր՝ արևմտահայ գրականության կենտրոնը Կ. Պոլսից գավառ տեղափոխելու, այդ գրականությունը օտար ազդեցություններից ազատելու, նրան ազգային տոհմիկ նկարագիր տալու վերաբերյալ: Թե Դ. Վարուժանը որքան է խանդավառվել իր բարեկամի նման հայացքներով, երևում է Պազարճյանին ուղարկած մի նամակի հետևյալ մտքերից.

«Ձեր նամակին ամեն մեկ տողը կարծես վերածնություն մը ստեղծեց մեջս, խորհուրդները, զոր ինծի կուտաք, Ձեր կուրծքին տակ բարեկամե մը ավելի եղբայր մը կմատնեն ինձ... կը գրեք. «Հայ գրականությունը ինքնուրույնությունը կը կորսնցնե»: Շատ ճիշտ է: Արդեն իսկ կորսնցուցած է: Արվեստը մեր արվեստը չէ, իսկ գաղափարը՝ երբեք: Ըստ իս, և տակավին ինձ համար՝ ահա օրենքս: Մեր գրականության մեջ արվեստը հայ պետք է ըլլա, իսկ անոր հատակը կամ հիմը կազմող գաղափարը՝ համամարդկային: Որ է՝ բանաստեղծը – սիրտը Թորգոմյան, իմաստասերը, միտքը՝ համազգային»:

Միանգամայն առաջադիմական միտք, որ պատիվ է բերում Վարուժանին:

Վերահաս քաղաքական դեպքերը հնարավորություն չտվեցին այս մտքերի իրականացումը տեսնելու, գաղափար, որը պաշտպանողների թիվը քիչ չէր արևմտահայ իրականությունում և շարժումն էլ հայտնի էր «վաղվան գրականություն» հորջորջումով:

Տեսնելով քաղաքական մթնոլորտի օրեցօր վատանալը, իր կազմած վառ ծրագրերի անիրագործելիությունը, Պազարճյանը ամբողջովին նվիրվել է փիլիսոփայական հարցերի: Որքան կարդացել է, ծանոթացել մեծամեծ մտածողների ստեղծագործություններին, այնքան համոզվել է, որ իր կոչումը բժշկությունը չէ: Ինքնազարգացմամբ կատարելագործել է անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուները, հոդվածներ տպագրել իտալական և գերմանական մամուլում: Հետագայում սովորել է նաև սերբերեն և բուլղարերեն, երբ մեկ տարի Բուլղարիայում հետևել է ռազմական արվեստի՝ չգիտենք ինչ նպատակով:

Փիլիսոփայության մեջ խորանալու ձգտումը այս անգամ էլ նրան նետել է Գերմանիա: Ցանկացել է անձամբ լինել այն վայրերում, որտեղ ապրել և ստեղծագործել էին գերմանական դասական փիլիսոփայության ներկայացուցիչները: Դա միաժամանակ հնարավորություն էր տալու գրքերից սովորած գերմաներենը կատարելագործելու կենդանի խոսվածքի նրբություններով: Գերմանիայում օգտվել է հարուստ գրադարաններից, խորասուզվել փիլիսոփայական մտքերի աշխարհը, մոռացել դաժան իրականությունը:

Շատ է կարդացել, բայց կանգ է առել երեք նշանավոր դեմքերի վրա՝ Նիցշե, Շոպենհաուեր, Իբսեն, մասամբ էլ Մաքս Նորդաու:

Վերոհիշյալ մտածողների մասին Պազարճյանի աշխատություններն են՝

1. «Շոպենհաուերը լավատեսության փիլիսոփա» (Լայպցիգ, 1909),
2. «Քննադատություն Իբսենի դրամատուրգիայի»,
3. «Ֆրիդրիխ Նիցշեն մեծ չաղատան»:

Այս երեք հիմնական աշխատություններից բացի, հրատարակել է մի քանի գրքույկ՝ Մաքս Նորդաուի, Բենեդետտո Քրոչեի և այլ մտածողների մասին:

Ծանոթացնենք առաջին երեք աշխատությունները մի քանի տողով: Դրանցից երկուսի խորագրերը ինքնին արդեն ցույց են տալիս, թե ինչ է բովանդակությունը:

«Շոպենհաուերը լավատեսության փիլիսոփա» գրքում Պազարճյանը փորձում է հերքել տարածված և ընդհանուր դարձած այն տեսակետը, թե Շոպենհաուերը հոռետեսություն, հուսահատություն քարոզող մտածող է: Նա գտնում է, որ ընդհակառակը, Շոպենհաուերը լավատեսության, բարության, սիրո փիլիսոփան է. Պազարճյանն ասում է. «Երբ ես քիչ մը մտերմացա Շոպենհաուերի գործին հետ, ես ինձի ցավագին հարցում մը տվի, թե ինչպե՞ս փիլիսոփա մը, իր այնքան գեղեցիկ ու մեծ գաղափարներով քննադատներու ձեռքին մեջ կրնա այնքան անգթորեն այլակերպվիլ: Բարության, մարդկային սիրո, հերոսության, գեղարվեստի և բարոյականի փիլիսոփայություն մը ինչպե՞ս կարելի է հոռետեսությամբ դրոշմել... Շոպենհաուերով զգացի հոգեկան վերածնություն մը, նոր, ներզոր ու մաքուր կյանքի մը համար: Անոր փիլիսոփայությունը իմ մեջս արթնցուց նոր բաղձանքներ, կյանքի համար անիկա ներշնչեց ինձի կովի և հաղթության քաջություն մը... Այն հոգեկան վերածնությունը, զոր անոր փիլիսոփայությունը ներշնչեց ինձի, ամենեն մեծ երջանկությունը կնկատեմ ես, որ վիճակված ըլլա ինձի»:

Պազարճյանի երկրորդ՝ այսինքն Հ. Իբսենին նվիրված գրքի լրիվ վերնագիրն է «Իբսենյան դրամատուրգիայի քննադատությունը, Սոֆոկլես, Շեքսպիր, Իբսեն»: Գրվել է դոկտոր Ֆուգեն Հեյնե Շմիտտի մի աշխատության դեմ: Հենց վերնագիրը վկայում է Պազարճյանի լայն իրազեկությունը համաշխարհային դրամատուրգիային՝ անտիկ շրջանից մինչև Շեքսպիր, Իբսեն: 219 էջից բաղկացած վերոհիշյալ աշխատությունը լույս է տեսել 1910 թվականին, դարձյալ գերմաներեն, Լայպցիգում:

Պազարճյանը չի ժխտում Իբսենյան դրամատուրգիայի մեծ արժանիքները, համաշխարհային դրամատիկական գրականության մեջ նրա գրաված տեղը: Բայց դեմ է նրա բացարձակ ֆետիշացմանը: Մանրամասնորեն քննության առնելով Իբսենի բոլոր պիեսները, փորձում է ցույց տալ, թե դրանք հետազոտող մարդիկ խուսափել են նշմարել Իբսենի բուն դերը և բավարարվել են միայն գովեստներ շռայլելով այդ մեծ գրողի հասցեին, առանց քննական, քննադատական մոտեցման:

Նա Իբսենի ամենամեծ արժանիքը համարում է այն, որ դրամատուրգիայի միջոցով փիլիսոփայական շատ հարցերի տվել է կենդանություն, մատչելի դարձրել ժողովրդին, հանդես գալով իբրև «ժողովրդի համար» տեսության քարոզիչ:

Պազարճյանի ամենածավալուն, ամենից համարձակ և կրքոտ գրչով գրված հետազոտությունն է «Ֆրիդրիխ Նիցշեն մեծ չաղատան» գերմաներեն գիրքը, բաղկացած 578 էջից, տպագրված Լայպցիգում, 1911 թվականին: Հեղինակն իր այդ աշխատությունում կուռ տրամաբանությամբ սուր քննադատության է ենթարկում Նիցշեի գերմարդու տեսությունը, այն համարելով չաղատանություն, իսկ Նիցշեին էլ մեծ չաղատան:

Հայ մտածողին տարօրինակ, զառանցական է թվում մասնավորապես ժողովուրդների, ցեղերի անհավասարության վերաբերյալ նիցշեական հակամարդկային տեսությունը, որի համաձայն օրինական է համարվում ստրուկների և ստրկատիրության անհրաժեշտությունը, թույլերի համակերպումը ուժեղներին, թե ամբոխը պիտի աշխատի գերմարդը սնուցանելու, պահելու համար, թե «հաղթող ազգի ուժը ապացույց է նրա իրավունքի, բարձրությանը՝ թույլի նկատմամբ»:

Դժվար չէ գուշակել, թե Պազարճյանն այստեղ հանդես է եկել ոչ միայն հակամարդկային մի տեսության քննադատողի դերում, այլև հանդես է եկել Նիցշեի այդ տեսությունից ամենից ավելի տուժած

մի ժողովրդի ըմբոստությունը ցուցադրողի դերում: Նիցշեի այդ տեսությամբ է, որ ֆաշիստական Գերմանիան արդարացնում էր թույլ, ենթակա ժողովուրդների խպառ ոչնչացումը հանուն բարձր ազգ համարվող Գերմանիայի բարգավաճման ու տիրակալության: Գերմանացիներից առաջ երիտթուրքերը այդ բանը կիրառել էին ծրագրելով բնաջնջել երկրի երեսից ստեղծագործ հայ ժողովրդին:

Անկախ այն հանգամանքից, որ Պազարճյանի վերոհիշյալ գրքերն իրենց դեմ ունեցել են նաև սուր քննադատողներ, դրանք եվրոպական փիլիսոփայական մտքում առաջացրել են նկատելի աշխուժություն, հայ մտածողին դարձրել օրվա մարդը: Նա տասից ավելի համարձակ հոդվածներ է տպագրել գերմանական գիտական մամուլում, մեծ մասամբ նման համարձակ մտքեր հայտնելով:

Պազարճյանը իր այդ տեսակետներով հանդես է եկել գիտաժողովներում, վեճի բռնվել ժամանակի հայտնի փիլիսոփաների հետ, իր զեկուցումները տպագրել տեսական լուրջ հանդեսներում: Այսպես, 1911 թ. նա մասնակցել է Բոլոնիա քաղաքում գումարված միջազգային փիլիսոփայական մի համագումարի, զեկուցել «Մետաֆիզիկական պոզիտիվիզմը և պոզիտիվիստական մետաֆիզիկան» հարցի շուրջը, և այն տպագրել նույն տարում:

Պազարճյանը մի քանի հոդված կամ գրքույկ էլ հրատարակել է իտալերեն, նույն քննադատական ոգով, ինչպես «Բենեդետտո Քրոչե կեղծ գեղագետը», որտեղ մերժում է իտալացի նշանավոր այդ գեղագետի տեսակետները: Սա էլ տպագրվել է 1912 թ. և բաղկացած է 25 էջից, լույս է տեսել Պագավայում:

Պազարճյանը նույն այդ տարիներին օտար լեզուներով լույս ընծայած փիլիսոփայական վերոհիշյալ աշխատությունների հիմնական թեզերը ներկայացրել է նաև հայ ընթերցողին՝ Կ. Պոլսի «Բյուզանդիոն» օրաթերթում տպագրված ընդարձակ հոդվածաշարերով: Պիտի ափսոսալ, որ գեթ դրանք մինչև այժմ առանձին գրքույկներով չեն տպագրվել և դարձել ընթերցող լայն խավերի սեփականությունը:

Ռ. Պազարճյանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ապրել է Իտալիայում, մոտիկից հետևել հայ ժողովրդի ողբերգական ճակատագրին: Նա իտալական մամուլում տպագրել է ոչ թե փիլիսոփայական հարցերի մասին, այլ քաղաքական հոդվածներ, դատապարտելով երիտթուրքերի հակահայ քաղաքականությունը, ցույց տալով նրանց կողմից իրագործվող և պատմության մեջ աննախադեպ ոճրագործությունը, այդ առիթով էլ փորձելով իտալացիներին ծանոթացնել թե՛ ոճրագործին և թե՛ ցեղասպանության զոհ ստեղծագործ ժողովրդին:

Նա մտերմական կապերով կապված է եղել նաև Սիամանթոյի հետ, լսելով, որ նրան կարող է զինվորական ծառայության վերցնեն, առաջարկել է վճարել փրկագին և ազատել: Չի կարողացել ազատել: Սիամանթոյին ոչ թե բանակային ծառայության են կանչել, այլ ի թիվս հարյուրավոր այլ մտավորականների՝ Վարուժանի, Ռ. Սևակի, Կոմիտասի, աքսորել են Զանկրի և սպանել են՝ ենթարկելով գազանային խոշտանգումների:

Պետք է պատկերացնել հոգեկան այն փլուզումը, որ ունեցել է Պազարճյանը Իտալիայում լսելով ու կարդալով այդ բոլորը, իմանալով թե ինչպիսի ճակատագրի է արժանացել իր ժողովուրդը, իր սիրելի ծննդավայր Երզնկան:

Նրա ցասման վերջին արտահայտությունն է այն գրքույկը, որ նա հրատարակել է 1917 թ. Միլանում, իտալերեն լեզվով, «Հայաստանը» խորագրով:

Հոգեպես և ֆիզիկապես քայքայված մեծ մտածողը իր աչքերը փակել է 1925 թվականին, Իտալիայում:

ԳԱԼՈՒՍՏ ԹԻՐՅԱՔՅԱՆ – Ականավոր մանկավարժ, թուրքագետ, մի քանի դասագրքերի հեղինակ Գալուստ Թիրյաքյանը ծնվել է Երզնկայում, 1840 թվականին: Ինքնակենսագրության մեջ նա իրեն կոչում է Մահտեսի Գալուստ Հ. Փառնառաջ Թիրյաքյան-Երզնկացի: Ունեցել է արկածալից ու փոթորկոտ կյանք, եղել է սրամիտ մարդ, հավասարապես սիրելի թե՛ հայ և թե՛ թուրք զարգացած խավին:

Տարրական կրթությունն ստացել է Երզնկայում, հակում ցույց տալով դեպի լեզուները: Մի թրքուհուց սովորել է թուրքերեն: Թրքուհին ցանկացել է շարունակել ուսուցումը, գնահատելով նրա ուշիմությունը, սակայն հարկադրված է եղել ընդհատել, երբ Գալուստը դարձել է 12 տարեկան, քանի որ «այդ տարիքը չափահաս կնկատվի և ուսուցիչը կին ըլլալով՝ նամահրամի հարց կծագի»:

Թրքուհին, որ այնքան հիացել էր պայծառ մտքի տեր այդ երեխայով, օժանդակել է նրան, որպեսզի շարունակի թուրքերենի ուսումը Գուրչունլու ճամիի մուեզինի մոտ: Այնտեղ երկու տարի սովորել է թե՛ թուրքերեն և թե՛ արաբերեն քերականության էական մասերը:

Բայց ահա դարաշրջանի մոլեռանդությունը իր ժանիքը ցույց է տվել, նրան առաջարկվել է իսլամություն ընդունել: Սուգ ու շիվանն ընկել է նահապետական հայ ընտանիքում: Ամենից ավելի ընդդիմացել է Գալուստը: Նախընտրել է թողնել ծննդավայրը, ծնողներին, բայց կրոնափոխի խարանը չի դրոշմել իր ճակատին:

Երկար մտորումներից հետո, գրեթե գաղտնի, միայն իր ծնողներին իմաց տալով, գիշերով դուրս է եկել տանից ու բռնել է Տրապիզոնի ճանապարհը, այնտեղից իրեն գցել նավ ու հասել Կ. Պոլիս: Այդ ժամանակ արդեն 16 տարեկան էր: Իր համար անծանոթ խորհրդավոր այդ քաղաքում դիմել է ժամանակի հայոց պատրիարքին, խնդրել օգնել:

Պատրիարքի միջնորդությամբ ընդունվել է Ս. Փրկչի ճեմարանը որպես գիշերօթիկ սան:

Այստեղ նրա թուրքերենի ուսուցիչն է եղել ոմն Օգսեն Շահինյան:

1860 թվականին ավարտել է դպրոցը: Նրան տրվել է շատ յուրահատուկ մի վկայական, որը մեջ ենք բերում ամբողջությամբ, քանի որ լավագույնս ցույց է տալիս այն պաշարը, որ ուշիմ պատանին ձեռք է բերել այդ դպրոցում: «Պ. Գալուստ Փ. Համբարձումյան Երզնկացի, աշակերտ առաջին դասու յաւարտ ժամանակի ուսմանց հասելոյ. եկար ի ճեմարանիս այս երկու ու կես: Սա ինքն ի քրիստոնեական և ի հայրենասիրական զգացումս իւր, ի բարի վարս և ի ճշմարիտ ընթացս յոյժ գովելի և նշանաւոր հանդիսացեալ վկայի: Վկայի ևս ի կրօնական հրահանգս, ի սրբազան պատմութեան, յԱզգային պատմութեան, ի հայկաբանութեան, ի շարադրութեան, ի քանակագիտութեան, յաշխարհագրութեան, ի տաճկերեն, ի հունարեն, յանգղերեն, ի գեղագրութեան, յերաժշտութեան քաջավարժ»[1]:

Պարզվում է, որ Գալուստ Թիրյաքյանի սովորած դպրոցում ավանդվել է անգամ հունարեն ու անգլերեն: Ըստ երևույթին նրա թուրքերենի մեջ ունեցած բացառիկ հաջողության համար մի վկայական էլ տվել է հանրային կրթության նախարարությունը:

Սկսվել է Թիրյաքյանի ուսուցչական, մանկավարժական աշխատանքի բեղուն շրջանը, որը շարունակվելու էր երկար տասնամյակներ:

1861 թ. նշանակվել է Նիկոմեդիայի Ասլանբեկ մեծ գյուղի հայոց դպրոցի տնօրեն և ուսուցիչ: Սակայն ցանկացել է իր գիտելիքները ի սպաս դնել ծննդավայր Երզնկա քաղաքի մտավոր վերելքին: Վառ երազներով տարված մեկնել է այնտեղ:

Ծննդավայրում, որտեղ կրթական գործը ամբողջովին գտնվում էր քահանաների ձեռքին, դժվարություններ են հարուցել նրա համար: Առաջարկել են ընդունել քահանայական կոչում. մերժել է և ամուսնացել Մսածյան ընտանիքից մի օրիորդի հետ:

---

[1] «Երջանիկ», տարեցույց, Կ. Պոլիս, 1947, էջ 65-67:

Յանկանալով կատարելագործել թուրքերենը, արաբերեն օրենսգիտության դաս է առել արաբագետ Հաճի Սրտրգ Էֆենտիից, իսկ պարսկերենը կատարելագործել է Թամպուրաճիզատե Հաճի Սալրհի մոտ:

Այս բոլորը օգտագործել են նրա հակառակորդները, տարածել սուտ լուր, թե իսլամություն է ընդունել:

1864 թ. հարկադրված է եղել թողնել ծննդավայրը և մեկնել Արմաչ, որտեղ նշանակվել է թուրքերենի դասատու: Երկու տարուց մեկնել է Իզմիր, նշանակվել Պայանտրրիի հայկական դպրոցի տեսուչ և ուսուցիչ: Այս տարիներին է, որ իր մոր հետ մեկնել է Երուսաղեմ ուխտի, որի արտահայտությունն է Մահտեսի տիտղոսը նրա անվան մոտ: Երուսաղեմից վերադառնալուց հետո չարունակել է ուսուցչությունը:

1867 թվականին ներկա է եղել Գևորգ Դ կաթողիկոսի օծմանը Էջմիածնում: Այստեղ առաջարկել են նրան վանքի պարսկերեն հրովարտակները թարգմանել հայերեն, որ կատարել է: Նրան առաջարկվել է պարսկերենի ուսուցչության պաշտոն՝ նոր բացվելիք հոգևոր ճեմարանում, բայց նախընտրել է վերադառնալ ծննդավայրը:

Երզնկայում պահպանողական տարրերի կողմից ընդունվել է նույն սառնությամբ: Նկատելով, որ անիմաստ է ճակատ տալ աղաներին, մեկ տարի էլ Տրապիզոնում որպես ուսուցիչ աշխատելուց հետո 1873 թ. վերջնականապես հաստատվել է Կ. Պոլսում: Որպես թուրքերենի ուսուցիչ աշխատել է Գուսկուճուգի և Պերայի հայկական դպրոցներում, ապա՝ Պեշիկթաշում:

Միաժամանակ ունեցել է հրապարակախոսական գործունեություն: Մամուլում լեզվաբանական հարցերի շուրջ բորբոքել է բանավեճ, որին մասնակցել են «Մասիս», «Մամուլ», «Մանզումե», «Օրագիր», «Լրագիր», թուրքերեն «Էլճեվայիպէ» թերթերը:

Ահա այդ տարիներին է, որ 1874 թվականին, Ռոբերտ քոլեջից հրավեր է ընդունում՝ դասավանդելու թուրքերեն լեզու: Պատվաբեր այս առաջարկը ստիպել է նրան թողնել հայկական դպրոցները և աշխատել Ռոբերտ քոլեջում, որի աշակերտների մեջ մեծ թիվ էին կազմում հայերը:

Երկար տարիներ այդ դպրոցում դասավանդել է ոչ միայն թուրքերեն, այլև՝ պարսկերեն ու արաբերեն, մի բան, որ վկայում է այդ լեզուների մեջ նրա լայն հմտությունը:

15 տարի պաշտոնավարելուց հետո, ընտանեկան հանգամանքները ստիպել են նրան թողնել աշխարհիկ կյանքը և 1890 թ. ձեռնա-

դրվել քահանա: Ամբողջ քսան տարի, այսինքն՝ մինչև մահը, որպես քահանա պաշտոնավարել է Տրապիզոնում: Խոր ծերության հասակում միայն մեկնել է Կ. Պոլիս, ապաստան գտել Ազգային հիվանդանոցում, որտեղ էլ մահացել է 1910 թվականին:

Գ. Թիրյաքյանն ունի տպագրած աշխատություններ առանձին գրքերով, ինչպես «Թեյսիրի իմլա կամ թեյսիրի տիքթե». հայատառ թուրքերեն, լույս է տեսել Կ. Պլսում, 1873 թ.: Դասագիրք է: «Հայոց պատմություն», արաբերենից թարգմանված հայատառ թուրքերենի և հայերենի, լույս է տեսել Կ. Պոլսում, 1879 թ.: «Վեցհազարյակ հայերեն խոսակցության մեջ գործածված բոլոր տաճկերեն, տաճկահայ և օտար բառից, մաքուր հայերեն խոսիլ փափաքողաց համար. հավաքեց Մ. Գալուստ Փ. Թիրյաքյան տաճկաբան ի Ռոբերտյան վարժարան, Կ. Պոլիս, 1880»: Պարունակում է 6000 բառ: Նույն այս գրքում որպես հավելված զետեղված է նրա ինքնակենսագրությունը «Զվարճալի կենսագրություն Մահտեսի Գալուստ Հ. Փառնառաջ Թիրյաքյան Երզնկացվո» խորագրով:

Ահա մի հատված այդ կենսագրությունից.

«Երբ կը տեսնես մեկն, որ միչտ ձեռքը լրագիր կամ այլևայլ լեզվով գիրք մը ունի, չոգենավի, չոգեկառքի, նավակի, թրամվեյի մեջ, մինչև անգամ քալած ատեն կը կարդա և աղբերաց և դրանց վերայի և այլ տեղյաց գրությունքն ալ կը կարդա, նույն ինքն Թիրյաքյան Մ. Գալուստ Երզնկացին է, կամ ուրիշ կերպով նկարագրելով, որ եկեղեցվո տոնախմբության կամ եպիսկոպոսի մը կամ համբավավոր վարդապետի մը քարոզչության կամ պատարագին տեսնաս որ դպրություն կառնե և աղվոր գիրք կը կարդա, և առանց տաճկերեն բառ մը խառնելու հայերեն կխոսի և տաճկերեն լեզվին հնչումն ալ գրվածին պես կհնչե, այն Թիրյաքն է. ... յոթը լեզու կգրե, կկարդա և կխոսի հիմիկուհիմա, որք են՝ հայ, տաճիկ, արաբ, հույն, գաղիերեն, եբրայեցերեն, լատիներեն և գերմաներենի ալ նոր սկսած է ինքնուսությամբ»:

ՕՆՆԻԿ ՍՐԱՊՅԱՆ* – Հրատարակիչ, մանկավարժ Օննիկ Սրապյանը ծնվել է 1878 թ. Երզնկայում: Սովորել է տեղի Եգնիկյան վարժարանում, որը բարձր առաջադիմությամբ ավարտելուց հետո դարձել է գրագիր: Դարասկզբին տեղափոխվել է Բուլղարիա՝ Ֆիլիպպոպոլիս (այժմ՝ Պլովդիվ), ուր զբաղվել է առևտրով: Այստեղ էլ անդամակցել է ՀՀ Դաշնակցությանը, ծավալել է հեղափոխական գործունեություն: Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո տեղափոխ-

վել է Թուրքիա, ապրել և աշխատել է Կ. Պոլսում: Բարթող Զորյանի (Ժիրայր) հետ «Օննիկ-Ժիրայր» անվամբ հիմնադրել է «Լուսաղբյուր» հրատարակչական տունը և սկսել հրատարակել «Մեղրագետ» նշանավոր դասագրքերի շարքը:

37 տարեկան հասակում զոհ է գնացել Մեծ եղեռնին:

***ՀԱԿՈԲ ՄՆՁՈՒՐԻ** – Իր ոճը, գրական ուղղությունը, նախասիրությունները հստակորեն ճշտած ինքնատիպ գրող է Հակոբ Մնձուրին, թեև նրա անվան շուրջ աղմուկ չի ստեղծվել, և ինքն էլ դրա կարիքը չի զգացել: Կարծեք իր խոնարհ հերոսների ամոթխածությունը նրան էլ է համակել, մղել մենության, մինչդեռ իր ստեղծած գեղարվեստական գրականությունը վաղուց նվաճել էր արժանի տեղ հայ արձակում:*

Մնձուրին արևմտահայ ռեալիստական արձակի լավագույն ավանդները պահպանող, մեր օրերը բերող գրող է, եղեռնի պատճառով ընդհատված «վաղվան գրականության», այսինքն՝ հայ գյուղը պատկերող տոհմիկ գրականության շարունակողը:

Եթե Թլկատինցին, Զարդարյանը, Համաստեղը Խարբերդի դաշտերի հայ կյանքը վրձինող, այդ դաշտերի բույրը պահպանողներն են, Գեղամ Տեր-Կարապետյանը՝ Մուշի, Գ. Սրվանձտյանցը՝ Վանի, ապա Մնձուրին պատմական Հայաստանի մի այլ կենտրոնի՝ գեղատեսիլ Երզնկայի հովտի համայնապատկերն ու հողի մարդկանց վրձինողն է:

Հակոբ Մնձուրին ծնվել է Երզնկայի գյուղերից Փոքր Արմտանում, 1886 թվականին: Բուն ազգանունը եղել է Տեմիրճյան: Փոքր հասակից տեղափոխվել է Կ. Պոլիս, որտեղ ստացել է կրթությունը, նախ սովորել է Ղալաթիա թաղամասի նախակրթարանում, ապա՝ Ռոբերտ քոլեջում, որտեղ հմտացել է նաև անգլերենին:

Ուսման շրջանն ավարտելուց հետո վերադարձել է Երզնկա, որպես անգլերենի ուսուցիչ պաշտոնավարել է ծննդավայր Արմտանում, վայելել մեծ հեղինակություն:

Հայաստանի մի հետամնաց ու փոքրիկ գյուղ և անգլերեն լեզու, ճաշակ՝ անգլիական գրականության և սեր գյուղացի մատաղ սերնդի մոտ դեպի նման առարկաներ՝ խոսում են և սովորեցնողի և սովորողների օգտին:

Մոտ տասը տարի աշխատել է գյուղում, եղել Եփրատի ափերին, բարձրացել Երզնկայի սրբազան լեռները, որոնցից մեկի անունն էլ դարձրել է գրական անուն և գրվել Մնձուրի: Այդ տասը տարիների

ընթացքում տեսել, զգացել է գեղջուկի առօրյան, երզնկացիների տոհմիկ հատկանիշները, սովորությունները, երգն ու պարը, զրույց հեքիաթները:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին կրկին մեկնել է Կ. Պոլիս, այնտեղ է լսել Երզնկայի ժողովրդի ողջակիզման սարսռազդեցիկ պատմությունը, իմացել, որ այլևս չկա Երզնկան, չկան Մեծ և Փոքր Արմտանները, մյուս գյուղերը, այլևս Երզնկայի դաշտում ու Եփրատի ափերին չեն լսվում դարերի խորքից եկող հայերեն երգերը, երեխաների ճռվողյունները:

Շատ բան է լսել Մեծ եղեռնի մասին, բայց զարմանալի հետևողականությամբ չի արծարծել իր ստեղծած գրականության մեջ, չի կարողացել հաշտվել այն մտքի հետ, որ այդպիսի աղետ է տեղի ունեցել, մարդկային աղետ, հայրենակիցների ողբերգություն:

Ընայած ավելի քան 60 տարի հեռու է մնացել ծննդավայրից, բայց ապրել է ընաշխարհի կախարդանքի տակ, նստել է Կ. Պոլսում, գեղատեսիլ Բոսֆորի ափերին, չի զգացել նրա հրապույրը, հոգով շարունակել է հաղորդակցել Արմտանների, Եփրատի հետ: Իմացել է մի քանի լեզու, ճանաչել համաշխարհային գրականության հսկաներին, ընթերցել է ագահորեն, բայց ... սիրել է Ակնա անտունիները, երզնկացիների ժողովրդական երգերը, պանդուխտի մորմոքները:

Նրա երգած գյուղը վաղուց չկար, նրա տեսած, ճանաչած մարդիկ վաղուց սպանվել ու թափվել էին Եփրատ գետը, բայց այդ աշխարհը դեռ զբաղեցնում էր նրա միտքը. կարծեք դեռ ամեն ինչ այնպես էր, ինչպես Մեծ եղեռնից առաջ: Չհաշտվեց կատարվածի հետ: Նրա ստեղծած գրականության մեջ մինչև մեր օրերում էլ հայ գյուղը եռում է իր հին կյանքով, աշխատանքային եռուն առօրյայով, սայլվորներ, հանդում աշխատողներ, խաղող հավաքողներ, ջրվորներ, գույնզգույն թելերով գործված գուլպաներ, տրեխներ հագած գեղջուկներ: Նրա համար հիմա էլ հայ երիտասարդները ազատ օրերին եղնիկ են որսում Եփրատի ափերին («Մատանիին խաղը»), մանկամարդ գեղջկուհիները երազում են գույնզգույն գլխարկներ, պեսպես ուլունքներ ունենալու մասին («Կարմիր-կանաչ ապրչում»), պանդխտությունից նոր վերադարձած հացթուխ Օվակը պաշտպանում է իր ընտանիքի պատիվը՝ դաշույնի փայլատակումով («Ոճիր մը»), փայտահատ Շիրինը, էշը առաջը գցած, նրա հետ զրուցելով, սուրբ Գևորգի հետ սակարկելով, անմատույց կածաններով անտառ է գնում («Սուրբ Գևորգը»), գեղջկուհի Նարոն պանդխտությունից վերադարձողների մեջ որոնում է եղբորը, նոան գինի, չիր ու չամիչ դրած սեղանին՝

սպասում է ու մտածում՝ «ինչու չեկավ, ինչու չեկան անոնք, ինչու չեկավ աղբարս»:

Ահա այն աշխարհը, որ ցուցադրում է Մնձուրին, վրձինում զարմանալի հարազատությամբ, բնականությամբ և եղած, իրական, և արդեն պատմության գիրկն անցած՝ հեքիաթային, անիրական մի աշխարհ: Չի գեղեցկացնում, չի էլ տգեղացնում կամ արհեստականորեն ողբերգական երանգ հաղորդում, իսկ իսկապես ողբերգական իրադարձությունները զանց է առնում: Որսում է գեղջկական կյանքի համար հատկանշականը: Գույների բազմազանությունը, դեպի կյանքի խորքը, մարդկային փոխհարաբերությունների բարդ գիգզագները սահելու համարձակ խիզախումը վկայում է մի կողմից իրազեկությունը նկարագրվող կյանքին, մյուս կողմից՝ գրական վարպետությունը: «Ամեն պատմածիս, ամեն ըսածիս մեջ ես կամ, մեջը եղած եմ», գրել է նա և դա ճիշտ է: Պատմվածքների, ակնարկների մեծ մասի հերոսը ինքն է: Նրա ստեղծագործությունը յուրահատուկ մի հուշագրություն է, կորած, հողմացրիվ արված հայրենիքի կարոտը մորմոքում է նրան, պահում հուշերի հաճելի մթնոլորտում: Բայց և ամենևին հուշագրություն չէ այդ բառի ընկալյալ առումով: Նա ընթերցողին իրենով չի զբաղեցնում, նյութի մեջ նկարագրվող, հիշատակվող անձը միջոց է՝ տալու շրջապատը, գծելու հերոսներ՝ տարբեր բնագավառներից, տարբեր աշխատանքներ կատարող, տարբեր հոգեբանության տեր:

Մնձուրին գրել է 150-ի չափ պատմվածք կամ պատկեր, բայց չի կրկնել իրեն: Միշտ գտել է մի նոր խորշ, մի նոր երևույթ, տեսադաշտը շատ է համապարփակ: Դա ամբողջ արևմտահայ գյուղն է: Գուցե մի բնագավառ միայն պակաս է: Մնձուրիի ծննդավայր Արմտանները տվել են ազատագրական պայքարի հերոսներ, որոնց թվում Գալուստ Արխանյանի նման ժողովրդական վրիժառու: Նման հերոսների չենք հանդիպում Մնձուրու ստեղծագործության պատկերասրահում:

Զանցառման պատճառը քաղաքական է: Մնձուրին գրել է միշտ թուրքական խստագույն հսկողության տակ, քաղաքական բարդ իրադրությունների պայմաններում: Դա առհասարակ բնորոշ հատկանիշն է պոլսահայ նոր գրականության, որի հայրենասիրական լարը միշտ փորձել է կտրել տիրապետող ռեժիմը:

Բայց Մնձուրին չի տեսել կամ շատ քիչ է տեսել նաև նոր Իստանբուլը, որտեղ ապրել և ստեղծագործել է վաթսուն տարի: Եվ եթե տեսել է, ապա դա չի եղել հարուստ ու հղփացած կյանքով ապրող Իստանբուլը, օտարամուտ կենցաղով ապրող թաղամասերն իրենց

հեքոտ գիշերներով, երգիչ երգչուհիների գեղգեղանքով, կաբարե-ներով, գարեջրի բաժակների զրնգուն ձայներով: Նա տեսել է աշ-խատավոր Իստանբուլը, բանվորական նրբանցքներով, տեսել է նա-վահանգստներում քարշ եկող, հացի համար պայքարող Ֆուրթունա Ալիներին, որոնք ցնցոտիների մեջ հպարտ են ու հոգով հարուստ: Տեսել է նման մարդկանց և պատկերել մի քանի պատմվածքներում, ինչպես «Վատահամբավը» պատմվածքում: Դրանով հանդերձ այդ չէ Մնձուրու աշխարհը, նրա տարերքը հայ գյուղն է: Նա լիաթոք է շնչում, երբ իր հերոսների հետ գնում է անտառ փայտ կրելու, խաղող հավաքելու, կալ անելու:

Մնձուրին գրել է, տպագրել մամուլում, և չի հետաքրքրվել իր գրածները հատորների մեջ ամփոփելով: Նրա առաջին գործը լույս է տեսել 1906 թվականին, Կ. Պոլսի «Մասիս» պարբերականում: Դրա-նից ուղիղ հիսուն տարի անց՝ 1958 թ. նոր միայն լույս է տեսել պատ-մվածքների անդրանիկ ժողովածուն՝ «Կապույտ լույս»-ը: 1966 թ. Երևանում և սփյուռքում նշվեց Մնձուրու ծննդյան 80-ամյակը: Այդ առիթով նրա երկերը վերահրատարակվեցին նաև Երևանում՝ «Կա-պույտ լույս» խորագրով՝ 1968 թ.:

Վերջին տարիներին Կ. Պոլսում տպագրվել են նրա երկու այլ ժո-ղովածուները ևս՝ «Արմտանը» (1966) և «Կռունկ ուստի կուգաս» (1974):

Մնձուրին վախճանվեց 1978 թ.՝ 92 տարեկան հասակում, անչուշտ Երզնկայի կարոտը սրտում:

ՈՍԿԱՆ ՄԱՐՏԻԿՅԱՆ – Ականավոր պետական գործիչ Ոսկան Մար-տիկյանը ծնվել է 1867 թ. Երզնկայում: Նախնական կրթությունն ստացել է տեղի ազգային Կեդրոնական վարժարանում: Երիտասարդ հասակից տեղափոխվել է Կ. Պոլիս, շարունակել ուսումը, ինքնա-զարգացմամբ տիրապետել ֆրանսերեն և թուրքերեն լեզուներին:

Ավարտելուց հետո այնտեղ էլ աշխատել է, վարել պատասխանա-տու պաշտոններ պետական գրասենյակներում և նախարարություն-ներում: Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո, 1913 թ. ընտրվել է թուրքական մեջլիսի պատգամավոր, վարել է Փոստի և հեռագրատների նախարարի պաշտոնը, կիրառելով մի շարք բարե-փոխություններ այդ բնագավառում, որոնք շարժել են նախանձը իր հակառակորդների: Մոլի ազգայնական և հայատյաց Հյուսեին Ջա-հիդը իր խմբագրած «Թանին» թերթում զրպարտել է Մարտիկյանին, թե նա իբր նոր բաց թողնված թուրքական թղթադրամը գծագրել

տալով մի հայի, նրա վրա դրոշմել է տվել հայերեն գաղտնագրեր: Փորձել են դրոշմանիշի եզերքի զարդերը նմանեցնել մեսրոպյան տառերի, տալ քմահաճ բացատրություններ: Կազմվել է կառավարական հանձնաժողով, որը հերքել է զրպարտությունը, սակայն շարունակվել է անվստահությունը Մարտիկյանի նկատմամբ, մասնավորապես երիտթուրքերի ղեկավար շրջաններում:

1914 թ. Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին, երբ թուրքական մեջլիսը քննարկել է Թուրքիայի պատերազմի մեջ մըտնելու հարցը, Մարտիկյանը դեմ է դուրս եկել այդ որոշմանը, որը ավելի ևս սրել է նրա և թուրքական կառավարության հարաբերությունները:

Հարկադրված հրաժարական է տվել և թողել է պատգամավորական աթոռը:

1918 թ. մեկնել է Եվրոպա, որպես ազատ ունկնդիր հաճախել մի քանի համալսարան:

Ապա Իրաքի նորաստեղծ կառավարության կողմից պաշտոնի է հրավիրվել Իրաք, որտեղ նրան տրվել է բեյության տիտղոս:

Երբ Թորգոմ արքեպիսկոպոս Գուչակյանը ընտրվել է Երուսաղեմի պատրիարք, Մարտիկյանին հրավիրել է Երուսաղեմ՝ վանքի վարչական, տնտեսական գործերը կանոնավորելու համար:

Մարտիկյանը մոտիկից կապված է եղել հայ հասարակական-մշակութային կյանքին, Կ. Պոլսում եղել է Ազգային քաղաքական ժողովի անդամ: Ունեցել է գրական-հրապարակախոսական գործունեություն: Հայ կյանքը հուզող տարբեր հարցերի մասին բազմաթիվ հոդվածներ է տպագրել պոլսահայ և եգիպտահայ մամուլում, մասնավորապես «Արև» օրաթերթում:

Մարտիկյանը 1939 թ. Կահիրեում լույս է ընծայել յուրօրինակ մի աշխատություն՝ «Բառարան մտածումի (բառերու իմաստի ընդլայնում, բաղդատություններ, փոխաբերումներ, զվարթ խոհեր, անկախ կարծիքներ, քննադատություններ, առաջարկներ, վերագնահատումներ, անցյալեն հակիրճ հիշատակներ)»:

Վերնագիրը կարող է թողնել այն տպավորությունը, թե ժամանցային մի գիրք է Մարտիկյանի բառարանը: Բայց այդպես չէ: Անչուշտ բառարան չէ՝ այդ բառի իրական առումով, բայց և ունի հետաքրքիր բովանդակություն: Այնտեղ կարելի է գտնել հեղինակի մտորումները, խոհերը շատ հարցերի մասին:

Նման բառարաններ անցյալում էլ լույս են տեսել հայ իրականությունում: Հիշենք Ե. Տեմիրճիպաշյանի «Փիլիսոփայական բա-

ռարանը», որը նույնպես պարունակում է հեղինակի մտորումները, խոհերը տարբեր հարցերի մասին:

Ոսկան Մարտիկյանը վախճանվել է 1947 թվականին, խոր ծերության հասակում, Եգիպտոսի Հելվան քաղաքում:

ԳԱԲՐԻԵԼ ԼԱԶՅԱՆ* – *Պատմաբան Գաբրիել Լազյանը ծնվել է 1893 թ. Երզնկա քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում: Այնուհետև սովորել է Կ. Պոլսի զինվորական վարժարանում և ստացել սպայի աստիճան: 1914–1918 թթ. ծառայել է թուրքական բանակի գերմանական գլխավոր հրամանատարության սպայակույտում: Մուդրոսի զինադադարից հետո՝ 1918 թ. մեկնել է Հայաստան: 1919 թ. հունվարից ծառայել է Հայաստանի զինված ուժերի գլխավոր սպայակույտում: 1921 թ. հունվարին հայկական բանակի մյուս սպաների հետ խորհրդային իշխանությունների կողմից աքսորվել է Ռուսաստան, արգելափակվել Ռյազանի համակենտրոնացման ճամբարում: Կարողացել է այնտեղից փախչել և կեղծ փաստաթղթերով անցել Հունաստան: Զինվորագրվել է հունական բանակին (1921–1922), որը պատերազմում էր քեմալական Թուրքիայի դեմ: Մասնակցել է Իզմիրի նշանավոր ճակատամարտին: Պատերազմն ավարտելուց հետո բնակություն է հաստատել Աթենքում, ուր հրատարակել է «Նոր օր» թերթը: 1938 թ. տեղափոխվել է Եգիպտոս՝ Կահիրե: Այստեղ հիմնադրել է «Հուսաբեր» մշակութային ընկերությունը, տպարանը, հրատարակչությունը: Զբաղվել է պատմագիտությամբ: Հեղինակ է հայ ազգային-ազատագրական պայքարին ու Հայկական հարցին նվիրված մի շարք ուշագրավ ուսումնասիրությունների: Դրանցից առավել կարևորներն են՝ «Հայաստանը և Հայ Դատը ըստ դաշնագիրներու» (Կահիրե, 1942), «Հեղափոխական դեմքեր. մտավորականներ, հայդուկներ» (Կահիրե, 1945), «Հայաստանը և Հայ Դատը. վավերագրեր» (Կահիրե, 1946), «Դեմքեր հայ ազատագրական շարժումեն» (Կահիրե, 1949), «Հայաստանը և Հայ Դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ» (Կահիրե, 1957) և այլն:*

Գաբրիել Լազյանը մահացել է Կահիրեում, 1960 թվականին:

ԹՈՐԳՈՄ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ* – *Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո հայերն իրավունք ստացան ծառայել բանակում, սովորել զինվորական դպրոցներում: Մեզ ծանոթ առաջին հայը, որ օգտվել է այդ իրավունքից Թորգոմ Ղազարոսյանն է: Նա ծնվել է Երզնկայում,*

1890 թվականին: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի ս. Նշան վարժարանում, այնուհետև ավարտել է Կ. Պոլսի Նշանավոր Պերպերյան վարժարանը: 1909 թ. ընդունվել է Կ. Պոլսի թուրքական զինվորական միջնակարգ դպրոցը և ցուցաբերել արտակարգ բարձր առաջադիմություն: Սակայն մեկ տարի սովորելուց հետո թողել է զինվորական դպրոցը և մեկնել Եվրոպա: Հետևել է Լոզանի և Լիեժի համալսարանների դասընթացներին: Պատերազմը սկսվելուց հետո կամավոր ծառայության է անցել բելգիական բանակում: Աչքի է ընկել իր զինվորական հմտությամբ: Քաջության համար պարգևատրվել է բելգիական մարտական չքանշաններով: 1917–1918 թթ. սովորել է Փարիզի համալսարանում: 1918 թ., երբ ֆրանսիական բանակը ազատագրեց Կիլիկիան, անմիջապես մեկնել է Կիլիկիա և մինչև 1921 թվականը ծառայել այնտեղ տեղակայված ֆրանսիական զինված ուժերում:

1922 թվականից բնակություն է հաստատել Իտալիայում, զբաղվել առևտրական ու տնտեսական գործունեությամբ: Իտալիային մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է «Իտալիայի գահի ասպետ» պատվանշանով:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔՅՈՒՐՏՅԱՆ – Սփյուռքահայ լավագույն հայագետ-պատմաբաններից է, հեղինակ՝ մեծարժեք մի շարք հետազոտությունների, միաժամանակ՝ սեփականատեր հայերեն հին ձեռագրերի ճոխ հավաքածոյի ու թանկարժեք հնությունների:

Ծնվել է 1901 թ. Բուլղարիայի Սիլիստրա քաղաքում, երզնկացի Գառնիկ Քյուրտյանի ընտանիքում, որը 1895 թ. հայկական կոտորածների օրերին փախել էր Բուլղարիա: Մայրն էլ երզնկացի է, Գազանճյանների գերդաստանից՝ Ազնիվը:

Հ. Քյուրտյանը նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի Ս. Խաչ վարժարանում, ապա՝ Պերպերյան երկրորդական վարժարանում:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին մեկնել է Ֆիլիպպե (Բուլղարիա): Պատերազմից հետո կրկին վերադարձել է Կ. Պոլիս: Այդ տարիներից բանասիրական հոդվածներով աշխատակցել է պոլսահայ մամուլին: Դեռևս 18-ամյա պատանի՝ 1919 թ. Կ. Պոլսի «Շանթ» հանդեսում տպագրել է հոդված՝ հայ առաջին պարբերական «Ազդարարի» մասին:

Հետագայում մեկնել է ԱՄՆ, շարունակել ուսումը Ուիչիթո քաղաքի համալսարանում, հետևելով հնագիտության և գեղարվեստի պատմության:

1920-ական թվականների սկզբներից սփյուռքահայ մամուլում («Հանդես ամսօրյա», «Բազմավեպ», «Անահիտ», «Հայրենիք» և այլն) պարբերաբար տպագրել է բանասիրական ծանրակշիռ հետազոտություններ, որոնցից հիշատակության արժանի են հայ հին մանրանկարչությանը, գորգագործությանը, հախճապակու արվեստին, արծաթագործությանը նվիրված հոդվածները:

Հավաքել և հայերեն թարգմանությամբ լույս է ընծայել օտար ճանապարհորդներից մի քանիսի տպավորությունները Հայաստանի մասին:

Առանձին գրքերով հրատարակած աշխատություններից են «Թորոս Տարոնեցի. կյանքն ու իր տաղերը» (Նյու Յորք, 1943), «Գորգը հայոց մոտ» (Վենետիկ, 1947), «Իսրայել Օրի» (Վենետիկ, 1960), «Նյութեր հայ վաճառականության պատմության համար», «Գոհարներու պատմությունը հայոց մեջ», «Ջուղայեցի Խոջա Նազար և իր գերդաստանը» և այլն:

Հարություն Քյուրտյանը երկար տարիներ զբաղվել է Երզնկայի պատմությամբ, առանցքային հարց դարձնելով այդ նշանավոր քաղաքի մատենագրական, կրթական, գրչագրական կյանքը, Երզնկայի վանքերի դերը միջնադարի մտավոր զարգացման գործում:

Հայ հին ձեռագրերի հիշատակարաններից, զանազան հրատարակություններից հավաքել է մեծ քանակությամբ փաստեր և շարադրել է «Երիզա և Եկեղյաց գավառ» բազմահատոր երկը, որի Ա հատորը լույս է տեսել Վենետիկում, 1953 թ. և ընդգրկում է մինչև 14-րդ դարի իրադարձությունները:

Բացառիկ արժեք է ներկայացնում հիշյալ գրքի այն մասը, որն ընդգրկում է 1012 թվականից մինչև 1375 թվականը, այլ խոսքով՝ Երզնկայի մտավոր զարթոնքի շրջանը:

Իր գիրքը կոչելով պատմական համագրություն, հեղինակը պատմական իրադարձությունները, հիշարժան դեպքերը քննության է առել պատմաքննական մեթոդով, վերանայելով, ճշտելով, մերժելով ընկալյալ շատ տեսակետներ:

Նման եղանակով է ներկայացրել Երզնկայի մատենագրական դպրոցի ականավոր ներկայացուցիչներ Հովհաննես Երզնկացի Պլուզին, Հովհաննես Երզնկացի Ծործորեցուն, Կոստանդին Երզնկացուն, Կիրակոս Երզնկացուն, Գևորգ Երզնկացուն, հանգամանորեն կանգ առնելով նրանց կյանքի հիմնական դրվագների և ստեղծագործու-

թյունների վրա, զուգահեռ ներկայացնելով դարաշրջանի հասարակական-քաղաքական իրադարձությունները:

Բանասիրական աշխատանքին զուգընթաց՝ 1920-ական թվականների սկզբներից Քյուրտյանը ստեղծել է հայագիտական հարուստ գրադարան, հավաքել հայերեն հին ձեռագրեր: Երկար տարիներ շրջագայել է Եվրոպայի և Մերձավոր Արևելքի երկրներում, ձեռք բերել հնագիտական արժեք ներկայացնող ոչ միայն ձեռագրեր, այլև՝ հին հայկական գորգեր, հախճապակյա իրեր, արծաթե և պղինձե ամաններ և այլն, իսկ հայերեն ձեռագրերի հավաքածոն ճոխացնելով հասցրել է 350-ի, գրավելով անհատական հավաքածոների մեջ եզակի տեղ:

Նրա այդ հավաքածոյի մեջ է 14-րդ դարում գրված Թորոս Տարոնեցու ձեռագիրը՝ զարդարված բազմաթիվ նկարներով, տաղասաց Գրիգոր Աղթամարցու (15–16-րդ դդ.) ինքնագիր տաղարանը, Անտիոքի Խաչակիր իշխանության օրենքների հայերեն թարգմանությունը և այլն:

1950-ական թվականների սկզբներից Քյուրտյանը հիմնականում աշխատակցել է Վենետիկի «Բազմավեպ» հանդեսին, հայագիտական հոդվածների հետ միասին տպագրելով նաև գրախոսություններ Խորհրդային Հայաստանում լույս տեսած հայագիտական, գրականագիտական աշխատությունների մասին, լայնորեն ծանոթացնելով սփյուռքահայ մտավորականությանը խորհրդահայ բանասիրական միտքը:

Քյուրտյանը քանիցս այցելել է հայրենիք, դասախոսություններ կարդացել իր ձեռագիր մատյանների մասին, միաժամանակ նյութեր է քաղել մեր Մատենադարանի հարստությունից:

Վենետիկի Մխիթարյան վանքում ծագած հայտնի հրդեհից հետո, որին զոհ դարձան բազմաթիվ հնատիպ գրքեր, իր հայագիտական գրքերը նվիրել է այդ վանքին, մի ձեռագիր էլ՝ Երևանի Մաշտոցյան Մատենադարանին:

Ծանր ու երկարատև հիվանդությունից հետո Քյուրտյանը վախճանվեց 1976 թ. նոյեմբերի 29-ին: Ունի երկու որդի, որոնք ստացել են հայագիտական դաստիարակություն Մխիթարյանների մոտ և հմուտ են հայերենին:

ԳՈՒՐԳԵՆ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ – Կրթական, մշակութային գործիչ, բանասեր Գուրգեն Տեր-Վարդանյանը ծնվել է 1898 թվականին Երզնկայում: Որդին է քաղաքի ս. Փրկիչ եկեղեցու քահանա Տեր Պիմենի: Պապն էլ՝ Տեր Վարդանը, եղել է ս. Սարգիս եկեղեցու քահանա:

Կրթությունն ստացել է Երզնկայի Կեդրոնական վարժարանում, որն ավարտելուց հետո, 1913 թվականից շարունակել է ուսումը Արմաշի դպրեվանքում, սակայն վրա է հասել Առաջին համաշխարհային պատերազմը և հնարավորություն չի ունեցել ավարտելու: 1915 թ. Մեծ եղեռնի օրերին փակվել է Արմաշի դպրեվանքը, իսկ վանահայրն ու դասատուները աքսորվել են: Հայաստանցի 15 աշակերտներին, որոնց թվում Գուրգենին, տեղափոխել են Կ. Պոլիս: Այնտեղ շարունակել է ուսումը Պեզազյան վարժարանում, աշակերտելով հայ հին մատենագրության հմուտ տեսաբան Եղիշե Դուրյանին:

1916 թ. մի խումբ աշակերտների հետ ուղարկվել է Երուսաղեմ, որտեղ շարունակել է ուսումը մինչև 1917 թ.: Երուսաղեմում նրա ուսուցիչներից են եղել ականավոր հայագետ, պատմաբան Մաղաքիա Օրմանյանն ու Գարեգին Խաչատուրյանը:

1917 թ. զորակոչվել է թուրքական բանակ: Երկու տարուց վերադարձել է Կ. Պոլիս, այնտեղից մեկնել Տրապիզոն՝ Երզնկա անցնելու ծրագրով, սակայն քաղաքական նոր իրադարձությունները ստիպել են նրան մնալ Տրապիզոնում մինչև 1922 թ.՝ քեմալական շարժման հաղթանակը և հայերի նոր ու բռնի տեղահանությունը երկրից:

1922 թ. վերջերին, Տրապիզոնի հայ որբերի հետ տեղափոխվել է Հունաստան, որպես ուսուցիչ պաշտոնավարել Կորնթոսի որբանոցում: 1926 թվականին հրավիրվել է Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունը, որտեղ դասավանդել է պատմություն, հայոց լեզու և կրոն:

1918 թվականին իր ուսուցիչ Գարեգին Խաչատուրյանի հետ միասին մեկնել է ԱՄՆ, աշխատել Կալիֆորնիայի հայոց առաջնորդարանում որպես քարտուղար: Թեմի առաջնորդը եղել է Գարեգին արքեպիսկոպոսը:

Ունեցել է գրական, բանասիրական, խմբագրական գործունեություն: Պատմա-բանասիրական և այլ բնույթի հոդվածներով աշխատակցել է ամերիկահայ մամուլին («Հայրենիք», «Մշակ», «Ասպարեզ» և այլն): 1930–1935 թթ. խմբագրել է Կալիֆորնիայի հայոց առաջնորդարանի «Փարոս Հայաստանյայց» պաշտոնաթերթը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամբողջովին նվիրվել է բանասիրական աշխատանքի:

Գ. Տեր-Վարդանյանի բանասիրական լավագույն աշխատությունն է «Երզնկա–Կամախ գավառաբարբառը և ազգագրական հուշեր» գիրքը (Երուսաղեմ, 1968): Նա այդ գրքում խոսում է Երզնկայի և Կամախի բարբառների մասին, բերում բանահյուսական արժեքավոր

նմուշներ՝ հեքիաթներ, առածներ, Երզնկա-Կամախ բարբառի բառարանը և այլն, նաև իր հուշերը, որոնց նյութը նույնպես ազգագրական է:

ԼԵՎՈՆ (ՀԵՐԱԼԴ) ՍՐԱՊՅԱՆ (ՏԵՐ-ՍՐԱՊՅԱՆ) – Հորեղբայրն է բանասիրական գիտությունների դոկտոր Արմենուհի Սրապյանի: Հիմնականում ապրել և ստեղծագործել է Ամերիկայում, գրել անգլերեն և ունեցել նկատելի հաջողություն:

Ծնվել է 1892 թվականին, Երզնկայի Բթառիճ գյուղում: Կրթությունն ստացել է Կարնո Սանասարյան վարժարանում: Քսան տարեկանում, 1912 թվականին, թերի է թողել Սանասարյանը և մեկնել ԱՄՆ՝ բախտ որոնելու: Կատարել է տարբեր աշխատանքներ, բայց աստիճանաբար մղվել դեպի գրականությունը:

Գրել է արձակ երկեր, ուղարկել է հայ թերթերին, բայց ո՛չ տպագրել են, ո՛չ էլ պատասխանել:

Կրթությունը չարունակել է Փոնթիաքի բարձրագույն դպրոցում: Այստեղ է, որ միտք է հղացել անգլերեն գրել: «Կը սիրեի քաշվիլ սենյակս ու իյնալ մտախոհանքներու մեջ: Հին սովորություն մըն էր ասիկա: Կվերհիշեի անցյալը և կջանայի պատկերացնել ապագան: Տարօրինակ բաներ կուգային մտքիս առջև: Ու ես որքան ավելի կընտելանայի անոնց՝ անոնք նույնքան ավելի կհաճախեին գիս: Սկսա գրի առնել ասոնք: Տեսնելով հայերեն ջանքերուս ապարդյունությունը, փորձեցի անգլերենը»[1]:

Գրել է անգլերեն բանաստեղծություններ, տպագրել ամերիկյան պարբերականներում, հաջողություն գտել: Մարդիկ այս արևելքցու զգացումները համարել են անկեղծ, սրտաբուխ և սիրել են:

Աստիճանաբար տպագրվել է հեղինակավոր հանդեսներում, ընդլայնել համակիրների շրջանակը:

1925 թ. ամերիկյան հայտնի մի հրատարակչություն լույս է ընծայել Սրապյանի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն՝ «Ժամն այս զարթնումի» խորագրով, որը ամերիկյան մամուլում համարվել է գրական երևույթ:

Գրախոսները Սրապյանի մոտ տեսել են բանաստեղծական չեչտված անհատականություն, անկեղծություն, վարակող հուզականություն: Ամերիկացի մի քննադատ գրել է. «Նա մի բարի թռչուն է, որ երգում է հրաբխի խառնարանում»:

---

[1] «Ամերիկահայ հանրագիտակ», Ա տարի, Բոստոն, 1925, էջ 255:

Հետագա տարիներին Լևոն Սրապյանը, որի ծածկանունը եղել է Հերալդ, առավելապես զբաղվել է փիլիսոփայական հարցերով: Ամերիկյան մամուլում տպագրել է փիլիսոփայական, գրականագիտական հոդվածներ, նաև մի գիրք՝ «Կյանքը հիմնված է բնության օրենքների վրա» խորագրով:

Ունեցել է նաև հրապարակախոսական, խմբագրական գործունեություն: Հոդվածներ է տպագրել հայ մամուլում, խմբագրել է «Հայ երիտասարդ» առաջադիմական պարբերականը, աշխատակցել է Նյու Յորքում լույս տեսնող «Լրաբեր» թերթին:

Ամերիկյան «Դայըլ» գրական պարբերականը յոթ համարներում տպագրել է նրա ընդարձակ կենսագրական վեպը, որտեղ Սրապյանը հիմնականում կանգ է առել իր մանկության և պատանեկության տարիների դեպքերի վրա, կենտրոնական հարց դարձնելով այն դաժան պայմանները, որոնց մեջ ապրել է հայ ժողովուրդը Թուրքական բռնակալության տակ:

1975 թ. Սրապյանի բանաստեղծություններից նմուշներ տողացի թարգմանվել են հայերեն՝ Կարիկ Պասմաճյանի կողմից: Դրանցից երկուսը՝ «Հուշեր իմ գյուղից», «Վատնված կորով», Վ. Դավթյանի չափածո թարգմանությամբ տպագրվել են «Գրական թերթում»[1]:

Լևոն Սրապյանը վախճանվել է 1978 թ.:

ՓԱՅԼԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ – Գրող, հրապարակախոս Փայլակ Միքայելյանը ծնվել է Երզնկայում, 1904 թվականին:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զրկվել է ծնողներից, ընկել Կ. Պոլսի որբանոցները: 1922 թ. ընդհանուր արտագաղթի օրերին տեղափոխվել է Հունաստան:

1920-ական թվականների կեսերից ապրել է Ֆրանսիայում, որտեղ կատարել է տարբեր աշխատանքներ, միաժամանակ զբաղվել գրականությամբ:

Սփյուռքահայ մամուլում («Մենք», «Կյանք և արվեստ», «Երկունք» և այլն) տպագրել է բանաստեղծություններ և արձակ երկեր: Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են «Եվա, Եվա» և «Արև, արև»: Երկրորդը նրա կյանքի վերջին տարիների օրագրություններն են:

Օգտագործել է Ցոլակ Զանգի ծածկանունը: Մահացել է 1963 թ., Փարիզում:

---

[1] «Գրական թերթ», 1975, № 20:

ՎԱՀՐԱՄ ԱՐԾՐՈՒՆԻ – Գրող, հրապարակախոս, կրթական ու մշակութային գործիչ Վահրամ Արծրունին ծնվել է Երզնկայում, 1875 թվականին, սակայն նախնական կրթությունն ստացել է Ակնա Կամարակապ գյուղում: Ապա տեղափոխվել է Կ. Պոլիս, սովորել Գեղարվեստի կայսերական դպրոցում և ազգային Կեդրոնական վարժարանում:

Ավարտելով ուսման ընթացքը, 1896 թվականից նվիրվել է ուսուցչության: Մոտ քառասուն տարի աշխատել է այդ ասպարեզում, պաշտոնավարելով մի շարք քաղաքներում (Կ. Պոլիս, Ֆիլիպպոպոլիս, Ռոդոստո, Ադրիանապոլիս և այլն):

Առաջին համաշխարհային պատերազմից հետո կրթական գործունեությունը շարունակել է Սիրիայում և Լիբանանում: 1936 թ. Ալեքսանդրիայում (Եգիպտոս) հիմնել է Թարգմանչաց վարժարանը, որի տնօրենի և ավագ ուսուցչի պաշտոնը հմտորեն վարել է երկար տարիներ:

Վ. Արծրունին ունեցել է գրական, հրապարակախոսական, բանասիրական գործունեություն: Պատմաբանասիրական բազմաթիվ հոդվածներ է տպագրել պոլսահայ և սփյուռքահայ մամուլում («Արևելք», «Հայ դպրոց», «Ժամանակ», «Արև» և այլն): Օգտագործել է Ճշմարտախոս, Տարաշրջիկ, Արծիվ, Արշամ ծածկանունները:

Նրա առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հայրենիքը և իր բնական զինակիցները», «Հայ դպրոցը», «Գրափունջ», «Կենցաղագիտություն», «Պատերազմական հուշեր» և այլն (մի մասը ուսումնական ձեռնարկներ են):

Վ. Արծրունին 1944 թվականին Ալեքսանդրիայում լույս է ընծայել վերջին գիրքը՝ «Գլխավոր մատենագիրներ հայկական դպրության» դասագիրքը:

ՎԻԿՏՈՐԻԱ ԱՐՇԱՐՈՒՆԻ – Ականավոր հասարակական գործիչ, հրապարակախոս, գրող Վիկտորիա Արշարունին ծնվել է Երզնկայում 1885 թվականին: Հայրը եղել է պոլսեցի Թովմաս Փեշտիմալճյանը, մայրը ավստրիացի Ռոզը: Թովմաս Փեշտիմալճյանը ունեցել է հընչակյան գործունեություն, ձերբակալվել է, ի վերջո Շապին Գարահիսարում դաշունահար սպանվել մի թուրքի կողմից:

Վիկտորիան մոր հետ տեղափոխվել է Եգիպտոս, որտեղ կրթությունը ստացել է ֆրանսիացի մայրապետների դպրոցում: Ավարտելուց հետո մեկնել է Փարիզ, շարունակել ուսումը: 1904 թ. ուսուցչուհու վկայականով վերադարձել է Եգիպտոս, սակայն չի զբաղվել

այդ գործով: 1905 թվականին ամուսնացել է բժիշկ Էդուարդ Արշարունու հետ, այնուհետև գրվել Արշարունի:

1910 թվականից նրանց ընտանիքը ապրել է Պորտ Սաիդում:

Առաջին համաշխարհային պատերազմի օրերին սկսվել է նրա հասարակական գործունեությունը, երբ Պորտ Սաիդ են հասել մուսալեռցիները: Մեծ դեր է կատարել նրանց տեղավորելու, ապրուստի միջոցներ հայթայթելու համար: Գրել է «Բաց նամակ հայության» կոչը, որը տպագրվել է Կահիրեի «Արև» օրաթերթում և լայն արձագանք գտել: Բացվել է հանգանակություն՝ մուսալեռցիների օգտին:

1918 թ. Եգիպտոսի հայոց առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանի առաջարկով մեկնել է Երուսաղեմ, ստանձնել վանքում ապաստան գտած 200 որբերի խնամքի գործը:

Այնտեղ էլ սկսել է գրական իր առաջին փորձերը: Որբերի վիճակը նկարագրող մի ընդարձակ հոդվածաշարք է տպագրել դարձյալ «Արև» թերթում:

1922 թ. որբահավաքման գծով աշխատել է Լիբանանում: Հաջորդ տարի ճանապարհորդել է Իտալիայում, եղել Վենետիկում, այդ առիթով գրել է մի հետազոտություն վենետիկյան օրենսդրության մասին, որն իբրև թերթոն լույս է տեսել «Արևում»:

Վիկտորիա Արշարունին 1929 թ. հիմնել է «Որբուհիների պաշտպանության տիկնանց հանձնախումբը», որը գործել է մինչև 1934 թվականը, նկատելի դեր կատարել Եգիպտոս ապաստանած 279 որբուհիների համար կյանքի տանելի պայմաններ ստեղծելու գործում:

Աշխատակցել է նաև օտար մամուլին: 1945 թ. հրատարակել է «Նուպար փաշա» գիրքը, որը 1950 թ. արժանացել է Փարիզի Ֆրանս-եգիպտական ընկերության մրցանակին:

Աշխատակցել է սփյուռքահայ մի շարք պարբերականների, գրել կրթական հարցերի նվիրված բազմաթիվ հոդվածներ: Նաև «Մեր դպրոցները գաղութներու մեջ» հայերեն գրքույկը, որ լույս է տեսել Եգիպտոսում, 1932 թ.:

Հիմնականում ապրել է Ալեքսանդրիայում:

«Արև» թերթի մի շարք համարներում տպագրվել է նրա ընդարձակ ինքնակենսագրական վեպը: Մահացել է 1971 թվականին:

ԱՐՇԱԿ ԱԼՃՅԱՆ (ՓԵՇՏԻՄԱԼՃՅԱՆ) – Հասարակական, մշակութային գործիչ, հրապարակախոս, պատմաբան Արշակ Ալճյանը ծնվել է Երզնկայում, 1895 թվականի մայիսի 7-ին, Փեշտիմալճյան հայտնի գերդաստանում, որի հիմնական զբաղմունքը եղել է զգեստեղենի վաճառականությունը:

Կրթությունն ստացել է Երզնկայի Կեդրոնական վարժարանում:

Միջնակարգ այդ վարժարանի բարձր դասարաններում սովորելու տարիներից կատարել է գրական փորձեր: 1909–1910 թթ. եղել է Կեդրոնական դպրոցի «Ծաղկունք Հայաստանի» խմորատիպ ամսագրի խմբագիրը:

1910 թվականից սովորել է Երզնկայի զինվորական բարձրագույն դպրոցում, ավարտել է 1915 թ. հուլիս ամսին, որպես սպա: Դա զուգադիպել է հայկական ջարդերի ամենադաժան օրերին:

Լինելով մտերիմ զինվորական դպրոցի մաթեմատիկայի թուրք ուսուցիչ Մյունիր բեյին, նրա օժանդակությամբ, փոխանակ թուրքական բանակ մեկնելու, որտեղ արդեն գնդակահարում էին հայ զինվորներին, փախել է Դերսիմ՝ քրդերի մոտ:

Նրա համար սկսվել է արկածներով լի թափառական կյանք, որը կարող է դառնալ վեպի նյութ:

Մեկ տարի Դերսիմում թաքնված մնալուց հետո, 1916 թ. ռուսական բանակի Երզնկա մտնելուց հետո վերադարձել է ծննդավայր: Մասնակցել է որբերի, գաղթականների հավաքման, նրանց տեղավորման աշխատանքներին: Ստեղծվել է հատուկ մի մարմին, որը Դերսիմից, Սեբաստիայից և այլ վայրերից Երզնկա է տեղափոխել հարյուրավոր հայ գաղթականների: Ալճյանը եղել է այդ մարմնի քարտուղարը:

1917 թվականի վերջերին, ռուսական զորքի ետ քաշվելուց հետո, քաղաքի պաշտպանության համար այնտեղ ստեղծվել է զինվորական խորհուրդ՝ Սեբաստացի Մուրադի գլխավորությամբ, որի անդամներից մեկն էլ եղել է Արշակ Ալճյանը:

Այդ խորհրդի ձեռք առած միջոցառումների շնորհիվ ապահով է դարձել դեպի Էրզրում հայերի նահանջը և 5000 գաղթականներ ու 1200 զինվորներ ապահով հասել են Դերջան:

Ա. Ալճյանը եղել է Ֆամ գյուղի ճակատը պաշտպանող կամավորական խմբի հրամանատարի օգնականը:

Երզնկան, շնորհիվ այդ անձնազոհ ուժերի՝ կարողացել է դիմանալ մինչև 1918 թ. հունվարի վերջը, ապա միայն դիմել է ընդհանուր նահանջի:

Ա. Ալճյանն ու նրա ընկերները Երզնկայից մինչև Ալեքսանդրապոլ կռվով են անցել, թշնամու գնդակներին և սաստիկ սառնամանիքներին տալով բազմաթիվ զոհեր:

Կովկասում և Ռուսաստանում մի քանի տարի արկածալից կյանք ունենալուց հետո, 1921 թ. մեկնել է ԱՄՆ, բնակություն հաստատել

Դեյտրոյտ քաղաքում: Քառասուն տարի աշխատել է Ֆորդի ավտոմեքենաների գործարանում, որպես մեքենագետ: 1961 թ. անցել է թոշակի:

Ունեցել է հասարակական, գրական, հրապարակախոսական բեղուն գործունեություն, մասնակցել է Հայաստանի համակիր կազմակերպությունների աշխատանքներին:

Ամերիկահայ մամուլում տպագրել է իր հուշերից դրվագներ: «Լրաբեր»-ի էջերում հուշագրական նյութերից բացի՝ տպագրել է պատմագրական հետաքրքիր հոդվածներ:

Ա. Ալճյանը եղել է 1934 թ. Դեյտրոյտում կազմակերպված «Համաերզնկացիական վերաշինաց միության» գործուն անդամներից:

Ինչպես հայտնի է, այդ միությունը նախաձեռնել էր Խորհրդային Հայաստանում հիմնադրել Նոր Երզնկա ավանը, որի կենսագործումը ինչ-ինչ պատճառներով չիրականացավ այդ տարիներին և գլուխ եկավ միայն 1965 թվականին դարձյալ Ալճյանի և հայրենակցական միության մյուս անդամների եռանդուն մասնակցությամբ:

Ա. Ալճյանը մինչև 1970-ական թվականները եղել է «Համաերզընկացիական հայրենակցական միության» Դեյտրոյտի մասնաճյուղի քարտուղար:

Նոր Երզնկա ավան-սովխոզի հիմնադրումից հետո օժանդակել է նրան՝ հաճախ այցելելով Հայաստան՝ հետևելով ավանի շինարարության ու բարգավաճման աշխատանքներին: «Համաերզնկացիական հայրենակցական միության» նյութական միջոցներով օգնել է Նոր Երզնկայի դպրոցին, գրադարանին, ակումբին:

Ա. Ալճյանը «Լրաբերի» վերջին տարիների համարներում տպագրել է արժեքավոր հոդվածներ, կապված Երզնկայի պատմության վերջին՝ ողբերգական դրվագներին, ինչպես և Երզնկայի մոտակայքում գտնվող Ալթըն թեփե բլուրի վրա հայտնաբերված և ուսումնասիրողների կողմից ուրարտական բնակավայր համարվող ամրոցից դուրս եկած հանածոների մասին, զարգացնելով այն տեսակետը, թե այդ ամրոցը կառուցողները եղել են ոչ թե ուրարտացիները, այլ հայասացիների, արմենների, խեթերի ձուլումից առաջ եկած հայերը:

***ԱՐԱՄ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ** – Հասարակական, մշակութային գործիչ, բանասեր, հրապարակախոս, «Համաերզնկացիական հայրենակցական միության» գործուն անդամներից Արամ Ազնավուրյանը 1923 թվականից սկսած, այսինքն՝ ուղիղ վաթսուն տարի է, որ ապրում է Հայ-*

րենիքից հեռու: Հեռու՝ թե՛ ծննդավայր հայրենիքից՝ Երզնկայից, և թե՛ Հայաստանից, սակայն այդ վաթսուն տարիների ընթացքում հոգով կապված է եղել երկուսի հետ էլ:

Խնդրել էինք մեզ ուղարկել ընդարձակ կենսագրությունը մեր «Երզնկա» գրքում օգտագործելու համար: Գրել է շատ համառոտ, անշուշտ արդյունք նրա վերին աստիճանի համեստության, բարության, կատարածը չթմբկահարելու մղումին:

Ուստի նպատակահարմար ենք համարում գեթ այդ համառոտ ինքնակենսագրությունը նույնությամբ մեջ բերել այստեղ.

«Ծնած եմ 1905 թ. հոկտեմբերի 14-ին Երզնկա,- գրում է նա,- հորս անունը Ղազար, մորս՝ Անուշ: 1912 թ. կորսնցուցի հայրս: Ինձմե փոքր ունեի երկու քույր, եղբայր մը: Ցեղասպանության առաջին օրվա սրածության՝ ամեն ինչ կորսնցուցած՝ հասա Խարբերդ ու մինչև զինադադար ծառայեցի Թուրքերու մոտ: Երկար փնտռտուքե հետո գտա քույրս ու փախա Կ. Պոլիս: Երեք տարի Բերայի որբանոցը մնալով հաճախեցի Կեդրոնական վարժարանը: Քեմալականներու Պոլիս ներխուժումեն առաջ անցա Վենետիկ: Հոգատար չունենալուս՝ գրկվեցա Մուրադ-Ռափայելյանեն: Հորեղբորորդույս ջանքերով 1923 թվականին Ամերիկա ապաստանելով, հաստատվեցա Դեյտրոյտ: Հետևեցա մեքենաշինության:

Աշխատակցեցա սփյուռքահայ թերթերու և պարբերականներու: 1933 թ. նախաձեռնելով վարեցի «Արագած» արտելի քարտուղարությունը, որ անդամակցողներու ներմուծած գումարներով բեռնակառքեր գնած, հայրենիք փոխադրվելով Քանաքեռգեսի հիդրոկայանի շինության օգնեցին: Նույն օրերուն թերթերով գնահատվեցավ թափված ջանքերը Հայաստանի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի կողմե:

Այդ օրերուն Արփինե Միրտիյանի հետ ամուսնանալով՝ բաղդավորվեցանք չորս զավակներով:

1935 թ. կազմեցինք «Համաերզնկացիական վերաշինաց միությունը», որ լայն մասնակցություն բերավ ներգաղթի հանգանակություններուն: 15–20 հազար դոլարով մասնակցեցանք Էջմիածնի տպարանի հանգանականության: Երկու ձեռնարկներով օգնեցինք Դեյտրոյտի հայ մշակութային շենքի կառուցման գործին և մեր վերջին ունեցածով 7860 դոլարով Երևանի Ա. Մյասնիկյանի անվան գրադարանին Վերիթայփ մեքենայական սարքավորումը գնել առաքելով հանգստյան կոչվեցանք:

Հայրենակցականի խնդրանքով 1966 թ. հիմնվեցավ Նոր Երզնկա ավանը Աչտարակ քաղաքին մոտ:

1952 թ. հրատարակվեցավ «Հայրենի հուշերս», 1971 թ.՝ «Հեքիաթներ զվարճալիքներս»: Ուղևորական տպավորություններս լույս տեսան թերթերու մեջ «Լույսի ճամփան» և «Լենինգրադեն Վոլգոգրադ» խորագիրներու տակ:

Այժմ կաշխատիմ տարագրության հուշերուս վրա»:

Արդարև՝ ամբողջովին հայրենիքին ու հայ ժողովրդին նվիրված մի արգասավոր կյանք:

ՀՐԱՉ ՍԱՐԳՍՅԱՆ – Հրաչ Սարգսյան-Փթիկյանը ներկայացուցիչն է արվեստի ուրույն մի բնագավառի՝ թատերագիտության: Հիմնականում նրա արվեստաբանական հոդվածների միջոցով է, որ հայ ընթերցողը հաղորդակից է դարձել ֆրանսիական թատերական կյանքին, թատերագիտական մտքին: Նա այդ բարդ բնագավառը լրագրային սովորական հոդվածներով ներկայացնող չէ, այլ հարցերի մատուցման ընթացքում ի հայտ է բերում արվեստաբանական լուրջ իմացություն, իրազեկություն ոչ միայն ֆրանսիական, այլև համաշխարհային թատերական կյանքին:

Հրաչ Սարգսյանը ծնվել է Երզնկայում, 1893 թ., վաստակավոր ուսուցիչ, գեղագիր Նշան Փթիկյան-Սարգսյանի ընտանիքում:

Երիտասարդ հասակում մեկնել է Շվեյցարիա՝ ժամագործություն սովորելու: Վրա հասնելով Առաջին համաշխարհային պատերազմը, այլևս չի վերադարձել ծննդավայրը, պատերազմից հետո բնակություն է հաստատել Փարիզում, որտեղ թե՛ աշխատել է և թե՛ շարունակել ուսումը, հետևել գեղագիտության դասընթացների:

Մոտիկից կապված է եղել փարիզահայ գաղութի մշակութային, թատերական կյանքին: 1930-ական թվականների սկզբներից թատերագիտական և գրականագիտական հոդվածներով աշխատակցել է «Զվարթնոց», «Կյանք և արվեստ», «Հառաջ» և այլ պարբերականների: Եղել է ֆրանսահայ գրողների միության անդամ: Գրել է դիմանկարային հոդվածներ Օշականի, Մեծարենցի, Շիրվանզադեի, Վարուժանի և այլ գրողների մասին:

Հետմահու՝ 1959 թ., Փարիզում լույս է տեսել նրա «Գրական էջեր և ուսումնասիրություններ» ժողովածուն:

Մեռել է Իտալիայում, 1954 թվականին:

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԻԼՏՈՆՅԱՆ – Կրթական, մշակութային գործիչ, հրապարակախոս-խմբագիր Բենիամին Միլտոնյանը ծնվել է 1883 թ., Երզնկայում: Կրթությունն ստացել է տեղի Ընկերական վարժարանում և Իզմիրի Մեսրոպյան դպրոցում: Ավարտելուց հետո որպես ուսուցիչ պաշտոնավարել է Իզմիրում և Կոնիայում:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո ապրել է Հալեպում, շարունակել կրթական գործունեությունը: Ապա տեղափոխվել է Իզմիր, որտեղ կարճ ժամանակ խմբագրել է «Գոյամարտ» թերթը:

Իզմիրի հայտնի աղետից հետո (1922) մեկնել է Հունաստան, այնտեղից Բուլղարիա, ի վերջո բնակություն հաստատել Մարսելում (Ֆրանսիա): Այդ քաղաքում նույնպես կարճ ժամանակ խմբագրել է «Գոյամարտը»:

Աշխատակցել է սփյուռքահայ թերթերի, մասնավորապես Փարիզի «Հառաջ» օրաթերթին, որի 1957 թ. մի շարք համարներում տպագրվել են նրա ընդարձակ հիշողությունները:

ԱՐՏԱՎԱԶԴ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ – Թատերական և հասարակական գործիչ Արտավազդ Գույումճյանը ծնվել է 1888 թվականին Երզնկայում, սակայն վաղ հասակից ծնողների հետ տեղափոխվել է Կ. Պոլիս, որտեղ ստացել է կրթությունը:

1910 թվականին մեկնել է ԱՄՆ, շարունակել ուսումը, տիրապետել անգլերենին: Կատարել է տարբեր աշխատանքներ, միաժամանակ մոտիկ մասնակցություն ունեցել ամերիկահայ մշակութային կյանքին:

1920 թվականից սկսած մասնակցել է սիրողների ուժերով Բոստոնում տրված թատերական ներկայացումներին: Հետագայում ինքն է ստեղծել նման մի թատերախումբ, տվել կանոնավոր ներկայացումներ:

Մասնակցել է Հովհ. Աբեյյանի, Հովհ. Զարիֆյանի հյուրախաղային ներկայացումներին: Գլխավոր դերերով հանդես է եկել Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար», «Զար ոգի», «Նամուս», Շեքսպիրի «Համլետ», «Օթելլո» և այլ պիեսներում:

Հետագայում խաղացել է ամերիկահայ տարբեր խմբերում, իսկ 1952 թ. Նյու Յորքում կազմակերպել է հայկական նոր թատերախումբ և տվել մի շարք ներկայացումներ, այդ թվում՝ Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» պատմական ողբերգությունը:

Եռանդուն մասնակցություն է ունեցել հայրենակցական միությունների աշխատանքներին, նրանց օգտին տվել է ներկայացումներ:

Երզնկացի մի ուրիշ հրապարակախոս էլ ունենք, Ավետիս Գուլյումճյանը, որը ծնվել է 1886 թվականին, գործել է ԱՄՆ-ում, սակայն կենսագրական տվյալներ չունենք: Գիտենք միայն, որ աշխատակցել է ամերիկահայ մամուլին՝ «Հայաստանի կոչնակ», «Նոր գիր» և այլն: Հնարավոր է, որ նախորդի ազգականներից լինի:

ՎԱՀԱՆ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ – Որդին է թատերական գործիչ Արտավազդ Գուլյումճյանի: Ծնվել է 1925 թ. Նյու Յորքում: Ստացել է ամերիկյան կրթություն, հընդրը կոլեջում հետևել է լրագրության: Ապա ուսումը շարունակել է Նորթ Ուեսթերն համալսարանում:

Աշխատել է ամերիկյան թերթերի խմբագրություններում: Հրապարակախոսական հոդվածներից բացի՝ գրել է անգլերեն բանաստեղծություններ, վիպակներ, ակնարկներ, որոնք տպագրվել են «Միչիգըն պոստ», «Մինիզոտա Ռեվյու» և այլ գրական հանդեսներում, նաև Հայկական Բարեգործական Ընդհանուր միության «Արարատ» անգլերեն եռամսյա հանդեսում: Երկար տարիներ եղել է այդ պարբերականի խմբագրական մարմնի անդամ, նաև խմբագիրը՝ մի քանի տարի:

ԲՅՈՒԶԱՆԴ ՊՈՅԱՃՅԱՆ – Պատկանել է երզնկացի Պոյաճյան հայտնի ընտանիքի այն ճյուղին, որ 1850-ական թվականներից գործել է Կ. Պոլսում:

Բյուզանդը ծնվել է 1852 թվականին, Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը և ծավալել իր գործունեությունը:

1870-ական թվականների վերջերից հրապարակախոսական հոդվածներով աշխատակցել է պոլսահայ մամուլին, մասնավորապես «Մասիս» օրաթերթին, որի օգնական խմբագիրներից է եղել:

Կարճ ժամանակ էլ խմբագրել է «Լույս» պարբերականը: Հետագայում կապվել է Բյուզանդ Քեչյանի «Բյուզանդիոն» օրաթերթի հետ, որի էջերում տպագրել է բազմաթիվ հոդվածներ, եղել բաժիններից մեկի վարիչը:

1901 թ. դարձել է «Հանրագիտակ» տասնօրյա հանդեսի մանկական բաժնի խմբագիրը:

Օսմանյան սահմանադրության տարիներին աշխատակցել է տասնյակ պարբերականների, նաև հիմնել է հրատարակչություն և հիմնականում տպագրել դասագրքեր:

ԳԱՐԵԳԻՆ ՏՅՈՒՐԿԵՐՅԱՆ – Կրթական, հասարակական գործիչ Գարեգին Տյուրկերյանը ծնվել է Երզնկայում, 1888 թվականին, մանկավարժ Խաչիկ Տյուրկերյանի ընտանիքում: 1902 թվականից սովորել է Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում, 1907 թվականից՝ Լոզանի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

1913 թվականից սկսած ապրել է Եգիպտոսում, զբաղվել մանկավարժական աշխատանքով 1920–1926 թթ. եղել է այցելու ուսուցիչ Կահիրեի Գալուստյան և Թաշճյան վարժարաններում: 1927 թվականին նշանակվել է Նուպարյան ազգային վարժարանի տնօրեն, 1933 թվականին՝ լիազոր վարչական տնօրեն Կահիրեի Պերպերյան միջնակարգ դպրոցի, իսկ 1934 թվականին՝ տնօրեն Նուպարյան վարժարանի:

Ունեցել է մշակութային, հասարակական գործունեություն: 1932 թվականին մի քանի ընկերների հետ հիմնել է Եգիպտահայերի տոհմային միությունը, որը երկար կյանք չի ունեցել:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ – Հ. Մարգարյանի ո՛չ ծննդյան թվականն է հայտնի մեզ, ո՛չ մահվան: Գիտենք միայն, որ ծնվել է Երզնկայի գյուղերից Արմտանում:

Կրթությունն ստացել է Կ. Պոլսում, սովորել Եղիկուլեի ս. Փրկչյան վարժարանում:

Ուսման ընթացքն ավարտելուց հետո երկար տարիներ զբաղվել է մանկավարժական աշխատանքով: Պաշտոնավարել է հայկական տարբեր դպրոցներում, նաև եղել է հարուստ ընտանիքների տնային դաստիարակ:

Հիմնականում կրթական հարցերի նվիրված հոդվածներով աշխատակցել է «Մասիս» և այլ պարբերականների:

1866 թվականին Կ. Պոլսում առանձին գրքով լույս է տեսել նրա «Առաջնորդ մարց կամ մայրերը ինչ պարտք ունին իրենց զավակաց վրա» մանկավարժական աշխատությունը, որի մասին դրական է արտահայտվել ժամանակի մամուլը:

ԵՐՎԱՆԴ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ – Մասնագիտությամբ բժիշկ, հասարակական գործիչ Երվանդ Արզումանյանը ծնվել է 1896 թվականին Երզնկայում: Կրթությունն ստացել է տեղի Եղնիկյան վարժարանում, ապա ուսումնառությունը շարունակել է Կ. Պոլսի Մխիթարյան և Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարաններում, իսկ Շվեյցարիայում հետևել է բժշկության: Սովորել և ավարտել է Հռոմի համալսարանը:

Հիմնականում զբաղվել է իր մասնագիտությամբ, սակայն զուգահեռ ունեցել է հասարակական, մշակութային գործունեություն 1920-ական թվականների սկզբներին Սուդանում, հետագայում՝ Միլանում: Երկար տարիներ եղել է Միլանի հայ գաղութի նախագահը:

ԴԵՐԵՆԻԿ ՃԻԶՄԵՃՅԱՆ – Մշակութային գործիչ, հրապարակախոս-խմբագիր Դերենիկ Ճիզմեճյանը ծնվել է 1886 թվականին, Երզնկայում, որտեղ ստացել է նախնական կրթությունը: 1900–1905 թթ. սովորել է Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում, Դանիել Վարուժանի հետ միասին, որը եղել է նրա մտերիմ բարեկամը մինչև վերջինիս եղերական մահը: Նրանք ունեցել են նաև նամակագրական կապ:

Մուրադ-Ռափայելյան վարժարանն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Բոլոնիայի համալսարանի երկրագործության ֆակուլտետում:

Ավարտելով ուսման շրջանը՝ վերադարձել է Երզնկա, աշխատել մեկ տարի: Այնտեղ ստեղծել է «Եկեղյաց միության թատերախումբը» և տվել է մի շարք ներկայացումներ:

1909 թվականից կրկին ապրել է Իտալիայում: Հրատարակել է «Աստղիկ» գրական գեղարվեստական պարբերականը: Աշխատակցել է սփյուռքահայ մի շարք պարբերականների:

ԼՈՒԻԶ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Պատմաբան, կրթական գործիչ Լուիզ Նալբանդյանը ծնվել է 1926 թվականին Սան Ֆրանցիսկոյում (ԱՄՆ), Երզնկայից այնտեղ գաղթած Նալբանդյանների ընտանիքում:

Ստացել է բարձրագույն կրթություն, հետևել պատմագիտության: Ավարտելուց հետո զբաղվել է ուսուցչությամբ և պատմագրությամբ: Դասավանդել է Կալիֆորնիայի համալսարանում: Ֆրեզնոյի համալսարանում հիմնադրել է հայագիտության ամբիոն:

Ամերիկյան մամուլում տպագրել է հոդվածներ, հայ ժողովրդի պատմության և մշակույթի մասին:

1963 թ. անգլերեն լույս է ընծայել մի աշխատություն հայ քաղաքական կուսակցությունների գործունեության և հայ հեղափոխական շարժումների մասին («Հայ հեղափոխական շարժումը»): Այդ աշխատությունը հրատարակել է Կալիֆորնիայի համալսարանը: Հայոց լեզու է դասավանդել նախ Լոս Անջելեսի, ապա՝ Ֆրեզնոյի համալսարաններում:

1973 թ. մասնակցել է Փարիզի Արևելագետների համաժողովին: Հաջորդ տարի զոհ է գնացել ավտովթարի:

ՀՄԱՅԱԿ ՍՈՅԱՆ – Հրապարակախոս, հասարակական, մշակութային գործիչ Հմայակ Սոյանը ծնվել է 1894 թվականին Երզնկայում: Կրթությունն ստացել է ծննդավայրի Ընկերական վարժարանում: 1912 թ. մեկնել է ԱՄՆ, Նյու Յորքում հետևել քիմիագիտության: Աշխատել է իր մասնագիտությամբ, միաժամանակ ունեցել հասարակական, մշակութային նկատելի գործունեություն: Աշխատակցել ամերիկահայ մի շարք պարբերականների («Պայքար», «Կռունկ», «Լրաբեր», «Մշակ» և այլն), նաև ամերիկյան թերթերի՝ «Յունիքն», «Միրրը սփեքթեյթրը» և այլն:

ՔԵՑ ԱՎԵՏԻՍ – Հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ: Ծնվել է Երզնկայում, 1886 թվականին: 1895–1896 թթ. դեպքերից հետո նրանց ընտանիքը մեկնել է Կ. Պոլիս, այնտեղից Բուլղարիա, որտեղ ստացել է հայկական տարրական կրթությունը: 1903 թ. անցել է ԱՄՆ, կատարել տարբեր աշխատանքներ, միաժամանակ ունեցել է գրական-հրապարակախոսական, թարգմանչական գործունեություն: Աշխատակցել է «Ձայն հայրենյաց», «Ազգ» և այլ պարբերականների: Հետագայում ստացել է բժշկական բարձրագույն կրթություն և զբաղվել է բժշկությամբ:

Նրա թարգմանությամբ ամերիկահայ պարբերականներում տպագրվել են ֆրանսիական մի շարք վեպեր, որոնցից մի քանիսը լույս են տեսել նաև առանձին գրքերով, ինչպես Վ. Հյուգոյի «Իննսուն երեքը»:

Հայ ժողովրդի պատմությանն ու նրա արդար դատին նվիրված հոդվածներ է տպագրել ամերիկյան մամուլում:

ԳՈՒՐԳԵՆ ԲՅՈՒԶԿԵՐՅԱՆ – Արվեստագետ լուսանկարիչ Գուրգեն Բյուզկերյանը ծնվել է 1907 թվականին, Երզնկայում: Մեծ եղեռնի զոհ են գնացել նրա ծնողներն ու բոլոր հարազատները, իսկ ինքը ապաստան է գտել Խարբերդի ամերիկյան որբանոցում: Այնտեղից տեղափոխվել է Հալեպ, որտեղ ստացել է կրթությունը տեղի Ներսիսյան դպրոցում:

1920 թ. մեկնել է Ֆրանսիա, այնտեղից՝ ԱՄՆ, զբաղվել որմնանկարչությամբ և դիմանկարչությամբ: Հետագայում նվիրվել է գեղարվեստական լուսանկարչության: 1938 թ. Լոս Անջելեսում բաց է արել լուսանկարչական իր արվեստանոցը՝ «Ֆոտո-Գուրգեն» անունով, որը մեծ հաջողություն է ունեցել: Մասնակցել է մի շարք ցուցահանդեսների և շահել մրցանակներ՝ 1951, 1953 թթ.: 1960 թ. Զիկագոյում 1500 լուսանկարիչների 5000 լուսանկարների մեջ շահել է

առաջին մրցանակ: Մասնագիտական հոդվածներ է տպագրել ամերիկյան մամուլում:

ՎԱՀԱՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆ – Կրթական, հասարակական գործիչ, հրապարակախոս: Ծնվել է Երզնկայում, 1886 թվականին: Կրթությունն ստացել է ծննդավայրի Ընկերական և Կարնո Սանասարյան վարժարաններում: Ավարտելուց հետո երկար տարիներ որպես ուսուցիչ աշխատել է Բրուսա, Կարին, Ագհիսար և այլ քաղաքներում: Իր ստորագրությամբ և Ցոլակ ծածկանունով բազմաթիվ հոդվածներ է տպագրել պոլսահայ մամուլում: Ունեցել է նաև հասարակական, քաղաքական գործունեություն:

ՇԱՐԱՄ ԳԱԶԱՆՃՅԱՆ – Իրավաբան, մշակութային գործիչ Շարամ Գազանճյանը ծնվել է Երզնկայում 1867 թ.: Կրթությունն ստացել է նախ ծննդավայրում, ապա Կ. Պոլսում հետևել իրավաբանության:

Ավարտելուց հետո որպես իրավաբան աշխատել է Կ. Պոլսում: Եղել է տեղի հայ իրավաբանների միության ատենապետը: Հետագայում տեղափոխվել է ԱՄՆ, կատարելագործել անգլերենը, շարունակել մասնագիտությունը: Կապված է եղել ամերիկահայ մշակութային կյանքին, աշխատակցել է հայ մամուլին:

ԱՐԼԵՆ ԳԱԶԱՆՃՅԱՆ – Ամերիկյան բեմերի սիրված այս դերասանուհին, որ հայտնի է Արլեն Ֆրանսեզ անունով, ծնվել է Բոստոնում, Երզնկայից այնտեղ գաղթած և որպես նկարիչ լայն ճանաչում գտած Արամ Գազանճյանի ընտանիքում: Մայրը եղել է ամերիկուհի:

Արլեն Գազանճյանը ստացել է ամերիկյան կրթություն, հետևել բեմական արվեստին: Խաղացել է ամերիկյան տարբեր թատերախմբերում և փայլել է հիմնականում դրամատիկ դերերում: Մամուլը հաճախ է գրել նրա մասին և բարձր գնահատել կատարողական արվեստը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԵՈՍԵՅԱՆ – Կրթական գործիչ, կենսաբան: Ծնվել է Երզնկայում, որտեղ ստացել է հայկական տարրական կրթությունը: 1912 թ. մեկնել է ԱՄՆ, բարձրագույն կրթություն ստացել Նյու Յորքի համալսարանում, հետևելով կենսաբանության, հետագայում լսել է փիլիսոփայության դասընթաց:

Ունեցել է մանկավարժական երկարամյա գործունեություն: Դասախոսել է ամերիկյան քոլեջներում և համալսարաններում:

ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԵՐՅԱՆ *– Հայ ազգային-ազատագրական շարժման պատմության ամենափայլուն էջերից մեկը գրող անձնազոհ այս երզընկացին, որ հայ ժողովրդի գլխավոր դահիճ Թալեաթ փաշայի դեմ արձակած գնդակով իր վրա հրավիրեց համաշխարհային հասարակական կարծիքը՝ ծնվել է 1896 թ. Ներքին Բագառիճ գյուղում:*

Փոքր հասակից ծնողների հետ ապրել է Երզնկայում, որտեղ ստացել է կրթությունը: Սովորել է տեղի Բողոքականաց, Եղնիկյան, ապա՝ Կեդրոնական վարժարաններում:

1913 թ. մեկնել է Սերբիա, որպեսզի այնտեղից գնա Գերմանիա՝ ուսանելու: Նրա այդ ծրագիրը չիրագործված՝ սկսվել է Առաջին համաշխարհային պատերազմը, վրա հասել Մեծ եղեռնը, որին, ի թիվս հազարավոր երզնկացիների, զոհ են գնացել նրա ընտանիքի 85 անդամներից 84-ը:

Ս. Թեհլերյանը պատերազմը սկսվելուց անմիջապես հետո եկել է Արևելյան Հայաստան և մասնակցել կամավորական շարժմանը: Զինվորագրվել է Սեպուհի վաշտին, ապա՝ մարտնչել Անդրանիկի հրամանատարության ներքո: Մարտերից մեկի ժամանակ ծանր վիրավորվել է և տեղափոխվել Թիֆլիս, ապա՝ Հյուսիսային Կովկաս: 1919 թ. մեկնել է Կ. Պոլիս և զինվորագրվել «Նեմեսիս» գործողության իրականացմանը: Կ. Պոլսում սպանել է Պեշիկթաշի թաղապետ, մատնիչ Հարություն Մկրտչյանին, որի կազմած ցուցակով թուրքական ոստիկանությունը ձերբակալել էր 250 հայ մտավորականների: Ապա Կ. Պոլսի վրայով անցել է Բեռլին՝ նպատակ դնելով լուծել մեկևկես միլիոն անմեղ հայերի վրեժը՝ սպանելով այդ մեծ ոճիրը ծրագրող և կենսագործող դահճապետ Թալեաթ փաշային:

Մի քանի ամիս հետապնդել է նրան, իմացել, որտեղ և ինչ անվան տակ թաքնված ապրելը, ինչպիսի արտաքին կերպարանափոխումով երևալը դրսում:

1921 թ. մարտի 15-ին Բեռլինի Շարլոտենբուրգ կենտրոնական պողոտայում մի քանի կրակոցով գետին է տապալել Թալեաթին:

Ձերբակալվել է, բանտարկվել: Տեղի է ունեցել մեծ դատավարություն, որի արդյունքներին սրտատրոփ հետևել է համաշխարհային հասարակական միտքը: Դատավարության ընթացքում Թեհլերյանի տված բացատրություններով, վկաների ցուցումներով մի անգամ ևս հրապարակի վրա է դրվել մեծ ոճիրն իր մանրամասներով: Բոլոր երկրների կենտրոնական թերթերը տպագրել են այդ նյութերը և մարդիկ իմացել են, թե ինչ է կատարվել աշխարհում և ումն է գնդակահարել խիզախ հայ երիտասարդը:

Գերմանական դատարանը, ոչ այնքան արդարությունը պաշտպանելու, որքան կատարված ոճիրի մեջ իր ունեցած մասնակցությունը թաքցնելու նկատառումով Թեհլերյանին անմեղ է հռչակել՝ «Արդյո՞ք Թեհլերյանը մարդ է սպանել» հարցին տալով «Ո՛չ» պատասխանը:

Ազատ արձակվելուց անմիջապես հետո մեկնել է Ամերիկա, ապա՝ Հարավսլավիա, որտեղ ապրել է երկար տարիներ, և Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մեկնել ԱՄՆ: Վախճանվել է Սան Ֆրանցիսկոյում, 1960 թվականին:

1921 թ. Վիեննայում լույս է տեսել Թալեաթի դատավարության լրիվ սղագրությունը, իսկ 1956 թվականին՝ Կահիրեում Թեհլերյանի «Վերհիշումները», որտեղ մանրամասնորեն պատմվում է ահաբեկման ամբողջ ընթացքը և դատավարությունը:

ԳԱԼՈՒՍՏ ՍՅՈՒՐՄԵՆՅԱՆ – Կրթական գործիչ, բանասեր Գալուստ Սյուրմենյանը ծնվել է Երզնկայում 1891 թվականին, Սյուրմենյանների մեծ գերդաստանում: Կրթությունն ստացել է տեղի Կեդրոնական և պետական միջնակարգ վարժարաններում, առաջինն ավարտել է 1906 թ., երկրորդը՝ 1908 թ.: 1908 թվին մեկնել է Կ. Պոլիս, սովորել նախ Ռյուշտիեի զինվորական վարժարանում, ապա 1910–1912 թվականներին՝ Բանկալթիի զինվորական բարձրագույն դպրոցում: Այն ավարտել է 1912 թ. և մտել զինվորական ծառայության: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ծառայել է թուրքական բանակում: Պատերազմից հետո եկել է Հայաստան: 1919–1920 թթ. ծառայել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում: 1921 թ. անցել է Պարսկաստան, այնտեղից՝ Բաղդատ (Իրաք), որտեղ էլ ապրել է մինչև կյանքի վերջը:

Մի քանի տարի աշխատել է որպես ուսուցիչ, ապա՝ 1955–1965 թթ. տասը տարի եղել է Բաղդատի ազգային միացյալ վարժարանի տնօրենը: 1947 թ. Կահիրեում լույս է ընծայել «Երզնկա» ծավալուն աշխատությունը, որի մասին առիթ ունեցել ենք խոսելու իր տեղում: Հրատարակել է «Տաճկահայ զինվոր և զինվորականությունը նախ տաճկական ապա Հայկական բանակներու մեջ» (Բեյրութ, 1967) և «Ապրիլյան եղեռնը արդարացում չունի» (Բեյրութ, 1971) գրքերը:

ԳԵՎՈՐԳ ԱՐԾՐՈՒՆԻ – Հոգևորական, կրթական գործիչ Գևորգ քահանա Արծրունին ծնվել է Երզնկայում, 1787 թվականին: Մկրտության անունը եղել է Մարտիրոս: Որդին է Երզնկայի ս. Գևորգ վան-

քի քահանաներից Տեր Գևորգի: Տարրական կրթությունն ստացել է ծննդավայրում:

15 տարեկանում ծնողների հետ տեղափոխվել է Կ. Պոլիս, շարունակել ուսումը Օրթագյուղի հայկական վարժարանում: Ավարտելուց հետո տասը տարի եղել է հայ ամիրաների, մասնավորապես Ճեզաիրլյանների ընտանեկան դաստիարակը: Ապա որպես ուսուցիչ աշխատել է Խասգյուղի հայոց դպրոցում: Ժամանակի պատրիարքի այն հրահանգի համաձայն, որ թաղային դպրոցներում դասավանդողները պետք է հոգևորական կոչում ունենային, Արծրունին ձեռնադրվել է քահանա, շարունակել մնալ պաշտոնում:

Վայելել է Մկրտիչ Ճեզաիրլյան ամիրայի հովանավորությունը և քաջալերված դրանից՝ ազատ է զգացել իրեն և որոշ հարցերում հանդես է բերել ինքնուրույնություն, աշակերտներին ուսանել առաջավոր գաղափարներ, ինչ որ օգտագործել են հակառակորդները, լուրեր տարածել թե Գևորգ քահանա Արծրունին հայ եկեղեցու օրենքների դեմ է գործում:

Պատրիարքարանը հատուկ զբաղվել է նրա հարցով, 1839 թ. ենթարկվել է յուրահատուկ աքսորի, ուղարկվել է Զորլու, սակայն վեց ամսից ետ է կանչվել՝ Ճազաիրլյան ամիրայի միջամտությունների շնորհիվ: 1845 թվականից նշանակվել է Խասգյուղի ս. Ստեփանոս եկեղեցու ավագերեց:

Կրթական աշխատանքը շարունակվել է մինչև խոր ծերություն, դաստիարակություն տալով մի քանի սերունդի: Եղել է կարդացած, զարգացած, նախապաշարումներից բարձր կանգնած մարդ: Հայերենից բացի իմացել է ֆրանսերեն, իտալերեն: Գրել է բարոյախոսական երկեր, որոնք մնացել են անտիպ: Վախճանվել է 1894 թվականին, 107 տարեկան հասակում:

***ՎԱՐԱԶԴԱՏ ԳԱԶԱՆՃՅԱՆ** – Մինչև այստեղ մենք խոսեցինք հիմնականում մշակույթի ասպարեզում գործած երգնկացիների մասին, լինեն դրանք Հայաստանում, թե աշխարհի տարբեր երկրներում:*

Անշուշտ հարյուրների է հասնում այն մարդկանց թիվը, որոնք երգնկացիներ են, կամ երգնկացի ընտանիքներում ծնված, և աշխատել են ճշգրիտ գիտությունների բնագավառներում կամ փայլել են առևտրի ասպարեզում: Ցանկալի պիտի լիներ նրանցից գեթ առավել հայտնիներին նույնպես ծանոթացնել մեր ընթերցողներին, սակայն առկա նյութի պակասի պատճառով զանց ենք առնում, բացառության կարգով ներկայացնելով միայն Վարազդատ Գազանճյանին:

Բացառիկ հռչակի արժանացած գիտնական է Վարազդատ Գազանճյանը: Նա վիրաբուժական արվեստով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրենով է զբաղեցրել համաշխարհային մամուլն ու գիտական միտքը:

Ծնվել է Երզնկայում, 1880 թ.՝ Գազանճյանների մեծ և բազմաճյուղ գերդաստանում: Նախնական կրթությունն ստացել է Երզնկայում և Սեբաստիայում: 1896 թ. հայկական ջարդերից հետո, 16 տարեկանում մեկնել է ԱՄՆ, ստացել մասնագիտական հիմնավոր կրթություն: 1905 թ. ավարտել է Հարվարդի համալսարանի ատամնաբուժական ֆակուլտետը, ապա հետևել է վիրաբուժության և այն դարձրել է իր հիմնական զբաղմունքը:

Վ. Գազանճյանը աստիճանաբար հռչակվել է մասնավորապես դեմքի հաջող վիրաբուժությամբ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին որպես վիրաբույժ-բժիշկ ծառայել է բրիտանական բանակում: Նրա հմտալից վիրաբուժական գործողությունների շնորհիվ ավելի քան 3000 զինվորներ, որոնք պատերազմի ընթացքում ստացած վերքերի հետևանքով կորցրած են եղել դիմագծերի բնական տեսքը, վերստացել են նախկին վիճակը այնքան հարազատորեն, որ զարմանք են պատճառել բոլորին:

Մեծ Բրիտանիայի Գեորգ թագավորը նրան շնորհել է «Ս. Գեորգի» և «Միքայել ասպետի» շքանշաններ:

1919 թ. կրկին մեկնել է ԱՄՆ, Հարվարդի համալսարանում կատարելագործել մասնագիտությունը: Ավարտելուց հետո դասախոսել է նույն համալսարանում և տարբեր բարձրագույն հաստատություններում:

Առաջին անգամ Գազանճյանն է հիմնադրել բժշկագիտության մեջ գեղարվեստական վիրաբուժություն առարկան, որ դասավանդել է մինչև 1940-ական թվականները, աստիճանաբար հռչակվելով ամբողջ աշխարհում:

Հեղինակել է գեղագիտական վիրաբուժության վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ, որոնք թարգմանվել են տարբեր լեզուներով:

Վախճանվել է 1974 թվականին: Նրա մասին մահախոսականներ են տպագրել գիտական հանդեսներն ու մի շարք թերթեր, որոնց թվում «Նյու Յորք թայմզ»-ը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՆՈՐ ԵՐԶՆԿԱՆ ՈՐՊԵՍ ԵՐԶՆԿԱՑԻՆԵՐԻ ԵՐԱԶՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

1. ՆՈՐ ԵՐԶՆԿԱՑԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ

Համաշխարհային պատմության մեջ աննախադեպ Մեծ եղեռնից ազատված և աշխարհով մեկ սփռված արևմտահայերի համար դժվար էր անչուշտ հեշտությամբ հաշտվել այն մտքի հետ, թե հազարամյակների ընթացքում նախնիների և հենց իրենց ճակատի քրտինքով ստեղծված հայրենիքը ընդմիշտ խլվելու է, որ Արևմտահայաստանը այլևս գոյություն պիտի չունենա:

Կոտորածին հաջորդող հնգամյակում, այսպես կոչված զինադադարի ու հաշտությունների բանակցությունների շրջանում (1918–1920), անգամ մինչև 1922 թվականը, այսինքն՝ քեմալական շարժման հաղթանակը, վերապրող հայերը դեռ հույսեր ունեին, թե կվերադառնան իրենց պապենական հայրենիքը և կրկին կվերաշինեն կործանվածը, կբուժեն վերքերը, հայկական ամայի գյուղերն ու թաղամասերը դարձյալ կվերականգնվեն, տանիքներից ծուխ կբարձրանա, օրորոցներում նոր կյանքեր կբողբոջեն, էլի դաշտերում հայ գյուղացին իր հորովելը կարձագանքի:

Այս հույսերը բավականաչափ իրական էին թվում, քանի որ արդեն արաբական տոթակեզ անապատներից և այլ վայրերից ողջ մնացած հայերը վերադառնում էին դեպի իրենց ծննդավայրերը: Ոմանք էլ իջնում էին լեռներից, գալիս Թուրքական և քրդական տներից, որտեղ ապաստան էին գտել կոտորածների օրերին:

Պատմական Հայաստանի շատ քաղաքներում կենտրոնացել էին տասնյակ հազարավոր հայեր, ինչպես Մալաթիայում, Սեբաստիայում, Եվդոկիայում, Տրապիզոնում, Սամսունում, Արաբկիրում, Կարինում:

Երզնկայի հուսադրիչ պատկերն արդեն տեսանք նախորդ էջերում:

Քեմալական շարժումը, սակայն, հիմնահատակ խորտակեց հայերի վերջին հույսերը:

Երկաթյա բիրտ մի ձեռք արմատախիլ արեց հայկական հողում սկսված բոլոր ծիլարձակումները և սփռեց աշխարհով մեկ, նրանց տեղը բնակեցրեց Թուրք տարրին, իրագործելով հակամարդկային այն ծրագիրը, որ փայփայում էին Թուրքերը 500 տարիների ընթացքում:

Այն, ինչ չէր կատարվել նախորդ հարյուրամյակների ընթացքում, կատարվեց կարճ ժամանակամիջոցում: Սկսեցին երիտասարդ Թուրքերը՝ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և նրանց օգնականները, բայց ավարտին հասցրեց Մուստաֆա Քեմալը, արմատախիլ անելով այն տարրը, որ սնում էր երկիրը, բայց որ այնքան անհանգստացնում էր իր ազգային զարթոնքն ապրող, գազանային ոգով տարված Թուրք բուրժուազիային:

Եվ ստացան Թուրքերն իրենց ցանկացածը, ստացան, անչուչտ, առաջին հերթին միջազգային դիվանագիտության ամենախարդախ խաղերի շնորհիվ:

Քսանական Թվականների սկզբներին որոշ միամիտ մարդկանց դեռ Թվում էր, Թե ի վերջո կհաղթի արդարությունը, ետ կվերադարձվեն իրենց հողերը, սակայն, ժամանակի ընթացքում աստիճանաբար այդ հույսը սկսեց աղոտանալ, չքանալ: Բայց արդեն կար իրական մի Հայրենիք՝ Խորհրդային Հայաստանը, որը մագնիսական ուժով իրեն էր ձգում սփյուռքահայությանը:

Ձգետք է մեղադրել նրանց, որ առաջին տարիներին որոշ վերապահ դիրք գրավեցին Մայր հայրենիքի նկատմամբ:

Նախ հեշտ չէր հոգերանորեն հաշտվելը այն մտքի հետ, Թե անդառնալիորեն իրենց ձեռքից խլվել է պապենական հողը: Երկրորդ՝ նոր Հայրենիքը՝ պատերազմներից, սովից ու համաճարակներից քայքայված, ծվեն-ծվեն եղած մի երկիր էր, և չէր կարողանում գրկաբաց ընդունել աշխարհով մեկ ցրված հայերին:

Բայց սկսվեց ներգաղթի շարժումը, ալիքների հաճախականությունը մերթ Թուլանում էր, մերթ ուժեղանում: Շարունակվում էր և չարունակվեց մինչև մեր օրերը: 1925, 1932, 1936, 1946 Թվականներին և այլն, զանգվածային ներգաղթի Թվականներ դարձան, փոքրաթիվ եկողներ միշտ եղան գրեթե ամեն տարի:

Ներգաղթի հետ էլ հրապարակ եկավ մի նոր հարց՝ կործանված քաղաքների ոգեկոչումը Խորհրդային Հայաստանում տեսնելու գաղափարը:

Հնարավոր էր Արևմտյան Հայաստանի նշանավոր քաղաքները վերաշինել մայր հայրենիքում թեկուզ մեկ-մեկ ավանի, գյուղի, փողոցի թաղամասի շրջանակներում:

Առաջինը 1925 թվականին հիմք դրվեց Նոր Արաբկիրին:

Արաբկիրցիներ շատ կային Հայաստանում, մի մասը նոր էր ներգաղթել հին Արաբկիրից:

Ու նրանք խփեցին առաջին քլունգները... խփողներից մեկն էլ Կարապետ Բալթայանն էր, որ Մեծ եղեռնի օրերին, Տեր Զորի ճանապարհներին, Մալաթիա քաղաքում փրկել էր այս տողերը գրողի կյանքը, ասելով «թող ազատվի այս մեկն էլ, մի օր պետք կգա հայ ազգին»:

Արդարացրել եմ Կ. Բալթայանի հույսերը: Գեթ մասամբ:

Կառուցվեց Նոր Արաբկիրը և ընդամենը 50 տարվա ընթացքում դարձավ արդիական մի չքեղ քաղաք, տասնապատիկ ավելի մեծ, քան հին Արաբկիրը, հարյուրապատիկ ավելի ճոխ, գեղեցիկ: Կառուցվեց ի հեճուկս դահիճների:

Արաբկիրցիների օրինակին հետևեցին սեբաստացիները, մալաթիացիները, խարբերդցիները, զեյթունցիները, հաճնցիները, մարաշցիները:

Արևմտյան Հայաստանի քարտեզը տեղափոխվեց Երևանի շրջակայքը:

Երզնկացիները չէին կարող բացառություն կազմել, թեև ամենից քիչ հնարավորություն ունեին, քանի որ ամենից շատ էին տուժել եղեռնի օրերին. Երզնկա քաղաքի ու շրջակա գյուղերի 35. 000 հայերից 1919 թ. հաշվվում էր ընդամենը 3000 չունչ, որոնց մի մասն էլ պատերազմից առաջ ԱՄՆ կամ Կովկաս գաղթածներն էին, ուրեմն բուն կոտորածներից ազատվածների թիվը չէր անցնում 2500-ից, այդքան բնակիչ Երզնկայի մեծ գյուղերից յուրաքանչյուրն ուներ:

Դրանով հանդերձ, ինչպես մյուս քաղաքների հայերը, այնպես էլ երզնկացիները ԱՄՆ-ում ստեղծեցին «Եկեղյաց գավառի վերաշինական միությունը», հետագայում, 1934 թ. Դեյտրոյտում ստեղծվեց «Համաերզնկացիական վերաշինաց միությունը», որի առաջնակարգ նպատակը պիտի լիներ «Խորհրդային Հայաստանի մեջ Երզնկայի անունով ավան մը չինել և արտասահման գտնվող երզնկացիները հոն փոխադրել»:

Այս ծրագիրը բացառիկ ոգևորություն էր առաջացրել Հայաստանում և արտասահմանում ապրող երզնկացիների մեջ: Հայրենիքում այդ գործին լծվել են մի քանի նշանավոր երզնկացիներ. բժիշկ

Խաչիկ Սեհյանը, Սեպուհ Խանջյանը, Կարապետ Սարաֆյանը, Գուրգեն Քելլերյանը, Պետրոս Զաթալբաչյանը, կոմպոզիտոր Ազատ Մանուկյանը և ուրիշներ:

Քելլերյանը նաև զբաղվել է Երգնկային նվիրված մի ալբոմ կամ ժողովածու պատրաստելու գործով, հավաքել է նյութեր, լուսանկարներ Երևանում կամ այլուր ապրող երգնկացիներից:

Նոր Երգնկայի նախաձեռնող ժողովը ընտրել էր «Նոր Երգնկայի շինարարության հանձնաժողով», որը մի կոչով դիմել է տարբեր երկրներում ապրող երգնկացիներին՝ օժանդակելու սկված գործին.

Վերոհիշյալ կոչում, որը տպագրվել է սփյուռքահայ մի քանի թերթերում, կարդում ենք.

«Ընկերներ, տարիներից ի վեր ապրում ենք Խորհրդային Հայաստանում և ականատես ու մասնակից ենք մեր սոցիալիստական Հայրենիքի օր ըստ օրե աճմանն ու բարգավաճմանը: ... Մենք ուրախությամբ ու միանգամայն բարի նախանձով դիտում ենք, որ Խորհրդային Հայաստանի շինարարության ձեռնարկներին իրենց մասնակցությունը բերում են նաև արտասահմանի զանազան անկյունները ցրված հայ աշխատավոր զանգվածները, որոնք իրենց հայրենակցական միությունների միջոցով բարձրացնում են նորանոր ավաններ:

Թեև ուշացած, բայց մենք՝ երգնկացիներս ևս պետք է նախաձեռնենք կառուցելու Նոր Երգնկան Խորհրդային Հայաստանում: ... Ձեռնարկելով Նոր Երգնկայի շինարարությանը՝ մենք տեղ պատրաստած կլինենք արտասահմանից ներգաղթող երգնկացիներին: Նոր ավանում մենք կհիմնենք արդյունաբերական ձեռնարկներ, կմշակենք այգիներն ու դաշտերը, որոնք կապահովեն հետզհետե եկողների աշխատանք ու հանգիստ ապրուստը:

Նոր Երգնկայի հանձնաժողովը այդ նպատակով արդեն դիմել է գործնական քայլերի և ՀՕԿ-ի գլխավոր վարչության հետ ընտրել է Նոր Երգնկայի կառուցման վայրը՝ Էջմիածնի և Աշտարակի խճուղու վրա, գեղեցիկ մի տեղ, Նոր Քղիի, Նոր Մալաթիայի անմիջապես հարևան Դալմայի այգիների կողքին: Այս վայրը շուտով տրամվայով միանալու է Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքին և դառնալու է նրա աչքառու արվարձաններից մեկը:

Մենք ջերմ խանդավառությամբ ձեռնարկելով աշխատանքի, սրբտագին կոչ ենք անում Երգնկայի և շրջանների (Քեմախցի, Դերջանցի, Գորուչայցի և այլն) մեր գաղութահայ հայրենակիցներին, որպեսզի նրանք իրենց ուշադրության կենտրոնը դարձնելով մեր այս ձեռնարկը, նույնպիսի խանդավառությամբ լծվեն Նոր Երգնկայի արագ

կառուցմանը, փառքով ու հաղթանակով ավարտելու սկսված գործը»[1]*:*

Ապա կոչ անելով Ամերիկայի Միացյալ Նահանգների, Արգենտինայի, Բրազիլիայի երգնկացիներին, նաև Եվրոպայի տարբեր երկրների հայրենակիցներին, լծվել օգտակար այս աշխատանքին: Դիմումի հեղինակները գրում են. «Բոլորը թող լծվեն խանդավառ աշխատանքի, օր առաջ Նոր Երգնկայի հիմքերը դնելու, Նոր Երգնկան կառուցելու նշանաբանով: Նոր Երգնկայի Շինհանձնաժողովի նախագահներ՝ բժ. Խաչիկ Սեհյան, Կարապետ Սարաֆյան, քարտուղարներ՝ Գուրգեն Քելլերյան, Ն. Խանջյան, գանձապահ՝ Սեպուհ Խանջյան, անդամներ Ազատ Մանուկյան, Հայկ Զլասդյան, Օգսեն Աչրգյան, Պետրոս Զաթալբաչյան, Խաչիկ Աստոյան: Մեր հասցեն՝ Նոր Երգնկայի Շինհանձնաժողով, Երևան, Աբովյան փողոց, թիվ 61»[2]*:*

Վերոհիշյալ հանձնաժողովի անդամներից Պետրոս Զաթալբաչյանը մեզ պատմել է, թե ինչպիսի խանդավառություն է առաջացրել կոչը սփյուռքում, մասնավորապես ամերիկահայ և ֆրանսահայ գաղութներում, որտեղ ամենից շատ երգնկացիներ են ապրել: Ամեն կողմից ստացվել են նամակներ, ներգաղթելու ցանկություն հայտնողներ:

Ստեղծվել է նամակագրական աշխույժ կապ «Համաերգնկացիական վերաշինաց միության» և Երևանի Նոր Երգնկայի շինարարության հանձնաժողովի միջև:

Վերահաս դեպքերը, սակայն, ընդհատել են այս խանդավառ աշխատանքը, ընդհատել ուղիղ 30 տարով, մինչև որ 1960-ական թվականների կեսերին նորից բարձրացվել է Նոր Երգնկայի հիմնադրման գաղափարը: Կրկին աշխատանքի են լծվել թե՛ ԱՄՆ-ում գործող «Համաերգնկացիական վերաշինաց միության» անդամները, և թե՛ Հայաստանում ապրող երգնկացիները, 30 տարի առաջ գործը ձեռնարկողներից մի քանիսի որդիների եռանդուն մասնակցությամբ, ինչպես Սեպուհ Խանջյանի որդի Գրիգոր Խանջյանի, բժիշկ Սեհյանի զավակներ Մարի և Զարմիկ Պարթևների, հին հանձնաժողովի կազմից Պ. Զաթալբաչյանի և այլոց:

Չենք կարող այստեղ չհիշել Դեյտրոյտի «Համաերգնկացիական վերաշինաց միության» վարչության ղեկավարներ Արամ Ազնավուրյանի և Արշակ Ալճյանի բացառիկ եռանդը այս գործում, գործի սկզբնավորումից մինչև այժմ:

---

[1] *«ՀՕԿ», ամսագիր, Փարիզ, 1935, № 7-8:*

[2] *Նույն տեղում:*

2. ԾՐԱԳՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄԸ

Խորհրդային Հայաստանի կառավարությունը 1964 թ. նոյեմբերին հատուկ հրամանագրով արտոնեց Նոր Երզնկա ավանի հիմնադրումը Աչտարակ տանող ճանապարհի մոտ, Արայի լեռան փեշերին: Պատմական Երզնկայում ու նրա գյուղերում ծնված տարեց մարդիկ շատ խանդավառվեցին նոր ավանին հատկացված վայրով: Ճիշտ ու ճիշտ հին Երզնկան է հիշեցնում, ասում էին,- նրա մանրանկարը. Արայի լեռը հիշեցնում է Սեպուհ սարը, Քասախը՝ Մայր Եփրատի վտակներից մեկը, որ հոսում էր Երզնկայի մոտով, Երզնկայի նման չորս կողմը հնություններ, պատմական Հայաստանի փառքը հիշեցնող վանքեր: Կլիման էլ նույնն էր, մրգերի տեսակները՝ նույնը: Արարատյան դաշտի համեղ ծիրանն ու Երզնկայի հովտի ծիրանը՝ պարկուկը, նույն համն ունեին: Ասում էին այսպես երզնկացի հյուրերը և շնորհակալություն հայտնում հարազատ կառավարությանը՝ այդ ընդառաջման համար:

Այո, վերածնվեց Երզնկան:

Սակայն Նոր Երզնկան ստեղծվում էր միանգամայն այլ պայմաններում, քան ստեղծվել էին Նոր Արաբկիրը, Նոր Սեբաստիան, Նոր Զեյթունը, Նոր Հաճընը և մյուս ավանները: Նրանք հիմնադրվել էին, բնակեցվել հենց այդ ավանների անունները կրող քաղաքների բնակիչների ջանքերով:

Նոր Արաբկիրի հիմքը փորողները եղել էին հին Արաբկիրում ծնված մարդիկ, նրանք էին կառուցել առաջին տները, առաջին փողոցները, անչուշտ հարազատ պետության աջակցությամբ և հայրենակցական միությունների օժանդակությամբ:

Նոր Արաբկիրի բնակիչներն առաջին տասնամյակներում բոլորն էլ արաբկիրցիներ էին, հին արաբկիրցիներ, խոսում էին երկրից բերած չեչտված բարբառով, ապրում էին հին կենցաղով, սովորություններով, սնվում նախահայրերի կերակուրներով, տների զգալի մասն էլ կառուցվել էր կորած քաղաքի տների ոճով, սենյակների նույն դասավորությամբ, մեծ մասում՝ ջուլհակի դազգահներով, ինչպես հին արաբկիրցիների մոտ էր և կապված էր նրանց ջուլհակագործության արհեստի հետ:

Եթե որևէ մեկը 1930-ական թվականներին այցելեր Նոր Արաբկիր, և ծանոթ լիներ նաև հին Արաբկիրին, իրեն պիտի զգար հին Արաբկիրում, պետական հոգատարության արդյունք հանրային սպասարկող կառույցներով, հաստատություններով՝ դպրոց, ակումբ, վարչական հաստատություններ և այլն:

Այդպես չէր և չէր կարող լինել Նոր Երզնկան՝ մի քանի պատճառներով: Նախ կառուցվում էր Արաբկիրից ուղիղ քառասուն տարի հետո, երբ առանց այն էլ սակավաթիվ երզնկացիների քանակը նոսրացել էր թե՛ հայրենիքում և թե՛ նրա սահմաններից դուրս: Զկային Երզնկան տեսած, Երզնկայի վերհուշով ապրող մարդկանց մեծ մասը, այդ թվում՝ 1934 թ. Նոր Երզնկայի գաղափարով ոգևորվողները: Ողջ մնացածներն էլ արդեն տարիքն առած մարդիկ, Հայաստանի տարբեր քաղաքներում, հենց Երևանի տարբեր թաղամասերում, քաղաքային կյանքով ապրելու պատճառով ի վիճակի չէին գործնականում կապվելու Նոր Երզնկայի հետ, այսինքն՝ տեղափոխվելու ու այնտեղ աշխատելու, մանավանդ որ նոր ավանի կյանքը հատկանշվում էր գյուղական աշխատանքով:

Ահա թե ինչու այնտեղ չապրեցին երզնկացիներ: Միայն մի հոգի՝ Ազատուհի Գրիգորյանն էր, որ հին Երզնկայի ծնունդ էր, մնացածները մոտակա շրջաններից եկած գյուղական աշխատողներ:

Սփյուռքից Հայաստան ներգաղթողներն էլ, մեծ մասամբ քաղաքային աշխատողներ, արհեստավորներ, բանվորներ, մտավորականներ, չկարողացան տեղափոխվել Նոր Երզնկա:

Բաղդատից Հայաստան այցելած Գալուստ Սյուրմենյանը տեսնելով և ոգևորվելով Նոր Երզնկայի գաղափարով, Իրաք վերադառնալուց հետո մեզ ուղարկած նամակում, թվագրված 1973 թ. հունվարի 5-ին, գրում էր. «Երբ Հայաստանեն վերադարձա, աշխատեցա քանի մը երզնկացի ընտանիքներ Հայաստան, Երզնկա նոր ավանը փոխադրելու համար, բայց չի հաջողեցա, հողագործ հայրենակիցներու չգոյության պատճառավ»:

Այս ընդհանուր դիտողություններից ու դատողություններից հետո փորձենք մի քիչ ավելի մոտիկից ծանոթանալ Նոր Երզնկայի իրական պատկերին:

Նոր Երզնկայի տնտեսությանը հատկացված է 15.000 հեկտար տարածություն, որի երկու երրորդը բռնում է խաղողագործության հատկացվածը, մնացածն օգտագործվում է անասնաբուծության համար:

Այդպիսի ծրագրով է, որ հիմնադրվեց ավանը 1965 թ.: Վերոհիշյալ ամայի տարածությունը հանձնվեց սովխոզի դիրեկտոր Լևոն Շահազիզյանին:

Ու սկսեցին հոնդալ մեքենավարներ Հակոբ Հակոբյանի, Լևոն Սուքիասյանի, Աչոտ Շահազիզյանի, Պարույր Հակոբյանի և այլոց տրակտորները, հողամաղիչ, հարթեցնող մեքենաները:

Դա վերմարդկային գրոհ էր անառիկ, անզիջող բնության դեմ: Քարերը կարծր, բոցկլտացող կայծերով դիմադրում էին, ժայռերը չէին ուզում տեղի տալ ոչ մի մեքենայի: Բայց հաղթեց մարդկային ուժը:

Ընդամենը 3–4 տարի անց Նոր Երզնկան ուներ 350 հեկտար տընկարք, երկու թաղամաս: Երկհարկանի հարմարավետ բնակարանների կողքին երևացին կենցաղային սպասարկման, հանրային օգտագործման համար անհրաժեշտ շենքեր՝ դպրոց, մանկամսուր:

Բնակիչներն իրենց տնամերձերը մաքրելով քարերից, գցեցին պտղատու այգիներ, բանջարանոցներ: Գցվեց և ավանդական թոնիրը:

Դիրեկտորի գրասենյակում, հենց առաջին տարիներին պատին կպցրած հատակագիծը ազդարարում էր թե ինչպիսի ճանապարհ էր անցնելու Նոր Երզնկան: Գրավելու էր մի ամբողջ հարթություն, կառուցվելու էր մշակույթի տուն, կինո-թատրոն, կառուցվելու էին խանութներ, ճաշարան, մարզական շենքեր, հիվանդանոց, դեղատուն, մանկապարտեզ:

Հիմա այդ ծրագրի մեծ մասը կատարվել է:

Բերենք մի քանի փաստեր:

1965 թվականին, այսինքն՝ հիմնադրման տարին, ավանը գրեթե չուներ բնակչություն: Ջրի, կոմունալ հարմարությունների բացակայությունը դժվարացնում էր այդ գործը, թեև ջրային տնտեսության համար կառուցվել էին 28 շենք: Երբ լուծվեցին այդ դժվարությունները, տարեցտարի Նոր Երզնկայում բնակվողների թիվը մեծացավ:

Եթե առաջին տարում ընդամենը երեք ընտանիք էր բնակվում այնտեղ, ապա 1971 թ. դրանց թիվը հասավ 117-ի, 580 շնչով, հաջորդ տարի՝ 129-ի՝ 680 շնչով, 1975 թ.՝ 203 ընտանիքի՝ մոտ 1125 շնչով: Հետագայում այլևս չաճեց, քանի որ բնակչության քանակը պետք է համապատասխաներ հողատարածության աշխատանքներին ու ստացված եկամտին:

1968 թ. շահագործման հանձնվեց դպրոցի նորակառույց շենքը, 1969 թ. մանկապարտեզի, 1973 թ. Նոր Երզնկայի կենտրոնում կանգնեցվեց Անահիտ աստվածուհու տուֆակերտ հուշարձանը իտալահայ մեծահարուստ բարերար Հայկ Ղազարոսյանի նյութական աջակցությամբ:

1976 թ. շահագործման հանձնվեց առևտրի կենտրոնը, 1980 թ.՝ Կուլտուրայի տունը, 1981 թ.՝ վարչական շենքը կապի բաժանմունքի հետ միասին, նաև ավանի չքամուտքը հանդիսացող կամարակապ դարպասը:

1966–1967 ուսումնական տարում Նոր Երզնկայի դպրոցն ունեցել է երկու դասարան, 12 աշակերտով, 1968–1969 ուսումնական տարում, երբ դպրոցն արդեն ապահովված էր նոր շենքով, դարձել 8-ամյա, աշակերտների թիվն էլ հասել է 67-ի, տասը տարի անց՝ 1981–1982 թթ. դպրոցն ունեցել է 311 աշակերտ:

1982 թ. Նոր Երզնկայի միջնակարգ դպրոցն ավարտածներից տասը ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Նոր Երզնկայի տնտեսությունը իր պլանների կատարումով հայտնի է ամբողջ հանրապետությունում: Ռադիոյով և հեռուստատեսությամբ հաճախ են հիշատակվում նրա առաջավորների անունները, որոնցից մի քանիսը արժանացել են բարձր շքանշանների, ինչպես նախկին դիրեկտոր Ավագ Պետրոսյանը՝ Լենինի, Զլոյան Համբարձումը, Քանանյան Խաչիկը, Մելքոնյան Սուրենը, Հարությունյան Լիպարիտը՝ Կարմիր դրոշի շքանշանի և այլն:

Նոր Երզնկայի տնտեսական ու կրթական արագ վերելքը ոգևորում է երզնկացիներին, լինեն դրանք հայրենիքում ապրողներ թե սփյուռքում:

Նոր ավանը նման բարգավաճման հասավ շնորհիվ առաջին հերթին պետական հովանավորության և նյութական միջոցների, սակայն հայրենաբաղձ շատ երզնկացիներ, ամեն անգամ, երբ այցելում էին Նոր Երզնկա, ծանոթանում նրա որևէ կարիքին, ուզում էին իրենց լուման մուծել: Ամերիկայի Արմտանցիների միությունը 5000 դոլար է նվիրել Նոր Երզնկայի կառուցողական գործին: Արմտանցի Գայանե Զուլայյանը, այցելելով Նոր Երզնկայի դպրոցը, երբ տեսել է մայրենի լեզվով ճովողող հայ երեխաներին, հուզվել է, ուրախությունից լաց եղել, իսկույն գնել ու դպրոցին էր նվիրել մի դաշնամուր: Դեյտրոյտի «Համաերզնկացիական վերաշինաց միությունն» էլ երկու ավտոբուս էր նվիրել՝ երեխաներին դպրոց տանել-բերելու համար:

1975 թ. Նոր Երզնկայի հիմնադրման տասնամյակի առիթով կազմակերպված հանդիսավոր հավաքույթի օրը ամերիկահայ երզնկացիները միտք հղացան ստեղծելու Նոր Երզնկայի գրադարան և գումարներ հավաքելով՝ իսկույն Երևանի գրախանութներից գնեցին ու ավանի գրադարանին նվիրեցին 233 կտոր գիրք: Նրանց օրինակին հետևեցին հայաստանաբնակ երզնկացիները և այժմ գրադարանը օժտված է տարբեր ճյուղեր ընդգրկող բազմաթիվ գրքերով:

«Համաերզնկացիական վերաշինաց միության» ղեկավարներից Արշակ Ալճյանը, որ քիչ ջանք չի թափել Նոր Երզնկա ավանի հիմնադրման ու բարգավաճման գործում, Հայաստան այցելելուց հետո

գրել է. «Նոր Երզնկա այցելեցի և ծանոթացա նոր ավանի շինարարության և արդյունաբերության դրության. նույն տարին առաջին անգամ ըլլալով դպրոցի բացումը և խնձորներու հավաքումը տեղի ունեցավ, որոնց գունավոր շարժանկարները առի»:

Այս պարզ, լակոնիկ երկու նախադասության մեջ կա Երզնկայի վերածնության իրողությունը:

Հիշարժան այդ հանդեսին մենք էլ ներկա էինք: Ներկա էին արտասահմանից եկած և հայրենիքում ապրող բազմաթիվ երզնկացիներ: Երբ հայաստանյան համադամ կերակուրներից, ընտիր կոնյակներից հետո սեղանը ողողվեց համեղ, հյութալի խաղողով ու դեղձով, տանձով ու խնձորով, հանկարծ Նոր Երզնկայի տնտեսության դիրեկտորը բաժակ բարձրացրեց Աչտարակի այդ մասի քարքարուտները մաքրող, այգիներ գցող աշխատավորության կենացը և ասաց. «Գիտե՞ք, որ այս ընտիր մրգերը ձեր հարազատ Նոր Երզնկայի այգիներում են աճել, այն վայրերում, ուր տասը տարի առաջ օձեր էին սողում, մողեսներ բույն դնում: Անուշ արեք և հիշեցեք հայոց սուրբ հողից այդ համեղ մրգերը ստացող մարդկանց»:

Պետք է երևակայել, թե ինչ տպավորություն թողեց այդ հայտարարությունը: Ուտում էին ընտիր խնձորը և հիանում, հիանում ու դժվարությամբ հավատում, թե այդ միրգը աճել էր ամայի վայրերում, այն էլ այնքան արագ:

Իմ դեմուդեմ նստած էր հազիվ 40 տարեկան թուխ դեմքով, թանձր հոնքերով մի ամերիկածին երիտասարդ, անչուշտ ամերիկյան կրթություն ստացած և ամերիկացած, նրանց կենցաղով ապրող: Հայերենը սովորել էր ընտանիքում, բայց քիչ գործածելու առիթ ունենալով, հազիվ էր կարողանում մտքերն արտահայտել, այն էլ անգլերեն բառերի օգնությանը դիմելով, նախադասություններն անգլերեն առոգանությամբ արտասանելով:

Երզնկացու որդի լինելու հպարտանք էլ դժվար էր նկատել նրա հանդարտ ու խաղաղ դեմքին: Այնքան անտարբեր էր նայում շրջապատին, նայում ամերիկյան սառնությամբ, կարծեք դժգոհ, որ փոխանակ Փարիզ, Լոնդոն, Հռոմ գնալու ու այդ քաղաքների զվարճության վայրերում լինելու, եկել-ընկել էր մի տեղ, ուր մարդիկ խոսում էին ոգևորությամբ, հուզումով, խոսում ու լաց լինում, հիշում անցյալը, համեմատություններ անում, որոնցից քիչ բան էր ընկալում:

Ջեմ հիշում նրա անունը: Ջեմ թաքցնում, նախնական տպավորությունս այնքան էր վանողական, որ կարծեք կարիք էլ չէի զգացել ծանոթանալու, հետաքրքրվելու, թե Երզնկայի որ ընտանիքին է պատկանում:

Մյուսները խոսում էին խանդավառված, իսկ այս մեկը՝ հավայան հաստ սիգարը շրթներին, անտարբեր դիտում էր շրջապատը, առանց այդ շրջապատի կրակից մի կայծ խլելու և տեղավորելու սառած սրտում...

– Խեղճ սփյուռքահայություն,– մտածում էի, որքան տարբեր են միմյանցից ծննդավայրի կախարդանքի տակ ապրող սերնդի և նրանց որդիների ընկալումները, նախասիրությունները, համոզմունքները: Գուցե այդ երիտասարդը մտածում էր, թե իր համար նույնը չէ՞, թե հայ է կամ մի այլ ազգության պատկանող, չէ՞ որ ամերիկացի է վերջապես:

Ինձ թվաց անգամ թե նա ձանձրանում է ճառերից, նեղվում: Ափսեի մեջ դրած մի մեծ ու կարմիր խնձոր անտարբերությամբ չուռ ու մուռ էր տալիս: Սիգարը վաղուց հանգել էր, բայց մատների մեջ էր:

Ես այսպիսի բաներ էի մտածում, որ նա հանկարծ՝ չեչտակի նայելով ինձ, ասաց.

– Որքան լավ պիտի ըլլար, եթե հոս, մեր սեղանին հյուր ըլլար հին սերնդին պատկանող երզնկացի թուրք մը...

Ասաց հանգիստ, անտարբեր, կարծեք հենց այնպես, ընդհակառակը՝ ավելի լրջացած, ամփոփված:

Հիմա ակնհայտնի էր նրա ներքին ալեկոծությունը, չէր ուտում, հանգած սիգարետը դրել էր գրպանը, ձեռքին բռնել էր Երզնկայում աճած կարմրաթուչ խնձորը. չուռ ու մուռ էր տալիս, նայում, մտածում...

Զէ, սխալվել էի, հայրենիքի, ազգության գաղափարը ոչ թե թողել հեռացել էր ամերիկահայ նոր սերնդից, այլ մակերեսից իջել էր խորքը, շատ խորքը: Անթեղված մի հուր կար այդ մռայլ ու թուխ երիտասարդի հոգում: Կարող էր առկայծել մի կարմրավուն խնձորից, աճած իր նախնիների ծննդավայրի անունը կրող բնակավայրում:

«Բնակելի տների թիվը 50-ից 100-ի է հասել, բնակիչների թիվը... աշակերտների թիվը... Շինվելու է մի մեծ կաթսայատուն... Նոր ծրագրի համաձայն Նոր Երզնկան մեկկակես կիլոմետր երկարություն պիտի ունենա, մեկ կիլոմետր լայնք, պիտի ունենանք հուշաղբյուր, հանգստի պարտեզ...»:

Թվարկվում էին նման փաստեր, կատարված, կատարվելիք ծրագրեր, բայց ես հիմա չէի լսում, իմ ուշադրության կենտրոնում անծանոթ, թուխ դեմքով երիտասարդն էր կարմիր խնձորը ափին...

Լսում էի միայն նրա նախադասությունը.

– Որքան լավ պիտի ըլլար, եթե երզնկացի թուրք մը տեսնար այս բոլորը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ (Պ. Հ. Հովհաննիսյան) I

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԵՐԶՆԿԱՆ ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԵՐԶՆԿԱՑԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Երզնկա անվան ծագումը 13
2. Տեղագրությունը 15
3. Կլիման 18
4. Բուսական աշխարհը 19
5. Կենդանական աշխարհը 20
6. Օգտակար հանածոները 23

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԵՐԶՆԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԴԱՐԵՐՈՒՄ

1. Երզնկան կենտրոն Հայասայի 27
2. Ալթրն թեփեի հայտնաբերումը 32
3. Այլ կարծիքներ Ալթրն թեփեի մասին 38

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԵՐԶՆԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԶՈՐԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Երզնկան Երվանդունիների և Արտաշեսյան հարստության սկզբնավորման շրջանում 42
2. Երզնկան Տիգրան II-ի թագավորության շրջանում 51

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԵՐԶՆԿԱՆ ԱՆԱՀՏԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Հայկական պանթեոնը Անահիտից առաջ 57
2. Անահիտի աստվածային ընկալումը 59
3. Անահիտի պաշտամունքի ծիսակատարությունները 64
4. Անահիտի տաճարի կործանումը 68
5. Անահտական պաշտամունքի վերապրուկները հետագա դարերում 70
6. Անահիտի պաշտամունքի վերապրուկները քրդերի մոտ 74

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Երզնկան թատերաբեմ հեթանոսական և քրիստոնեական պայքարի 80
2. Հեթանոսական տաճարների կործանումը 84
3. Երզնկան քրիստոնեություն ընդունելուց հետո 88

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՏԻՐԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԱՐԵՐՈՒՄ

1. Երզնկան հայոց գրերի գյուտի շրջանում 93
2. Քաղաքական վիճակը 5–7-րդ դարերում 98
3. Եկեղյաց գավառը Հուստինիանոս I-ի կայսրության շրջանում . . 101
4. Երզնկան արաբական գրավումների շրջանում 105

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ԱՂԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

1. Աղանդավորական շարժումների բնութագիրը 112
2. Պավլիկյան շարժման սկզբնավորումն ու տարածումը Եկեղյաց գավառում 114
3. Թոնդրակյան շարժումը Եկեղյաց գավառում 122

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Քաղաքական վիճակը 129
2. Երզնկան սելջուկյան գրավումների շրջանում 133

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՑԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Քաղաքական կացությունը 12–13-րդ դարերում 138
2. Կիլիկիայի Հայկական թագավորության հետաքրքրությունը Երզնկայի նկատմամբ 140
3. Սարգիս Երզնկացու իշխանության շրջանը 144
4. Համահայկական կենտրոն դառնալու նկրտումնե 148
5. Երզնկան Սարգիս արքեպիսկոպոսի սպանությունից հետո 154

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՑԻ ՎԱՆՔԵՐԸ

1. Երզնկայի վանքերի ընդհանուր նկարագիրը 158
2. Ավագ վանք 162
3. Սուրբ Լուսավորչի կամ Հայրապետ Սուրբ Լուսավորչի վանք . . 173

4. Թիլի կամ Ջուխտակ Հայրապետաց վանք 179
5. Տիրաչենի կամ Սուրբ Ներսես Հայրապետի վանք 181
6. Զարչարանաց Սուրբ Լուսավորիչ կամ Տատասկի վանք 186
7. Կայփոսի կամ Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի վանք 189
8. Երկանի Սուրբ Գևորգ վանք 196
9. Երիզայի Սուրբ Աստվածածնի վանք 198
10. Շողակաթ Սուրբ Աստվածածին 199
11. Սուրբ Կիրակոսի վանք 203
12. Սուրբ Թադեոսի վանք 207
13. Սրբրխոյը Սուրբ Թորոսի վանք 207
14. Սուրբ Նիկողայոսի վանք 210
15. Ճլեմոնի վանք 211
16. Միավոր Սուրբ Կարապետի վանք 213
17. Սաղի Սուրբ Ստեփաննոսի վանք 215
18. Զագրմանի Սուրբ Պողոս-Պետրոս վանք 217
19. Ակընջի վանք 218
20. Անարծաթ բժշկաց վանք 219
21. Սուրբ Աստվածածին կամ Զարխափանի վանք 219
22. Գառնիկ Ճգնավորի վանք 219
23. Սուրբ Եղիայի վանքեր 219
24. Խաչկա վանք 220
25. Խնդրակատար Սուրբ Աստվածածին վանք 220
26. Սուրբ Կաթողիկեի վանք 220
27. Սուրբ Մինասի վանք 220
28. Սուրբ Թորոսի վանք 221
29. Փորձավանք 221
30. Քառասուն խաչերի վանք 221
31. Սուրբ Քրիստափորի վանք 221
32. Սուրբ Օգսենտի վանք 221
33. Երզնկայի վանքերի աստիճանական չիջումը 224
34. Ս. Ներսես վանքի հոգաբարձության և վանապահ-
վարձակալի միջև կնքված պայմանագիրը 226

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԶՆԿԱՅԻ ԴՊՐՈՑԸ 230

1. Կոստանդին Երզնկացի 231
2. Հովհաննես Երզնկացի Պլուզ 243
3. Հովհաննես Երզնկացի Ծործորեցի 256
4. Կիրակոս Երզնկացի 259
5. Մովսես Երզնկացի 262
6. Գրիգորիս Երզնկացի 265
7. Մխիթար Երզնկացի 267
8. Գևորգ Երզնկացի 270

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ԹՈՒՐՔ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Դարաչրջանի ընդհանուր բնութագիրը 274
2. Երզնկան Լենկթեմուրի արշավանքների ժամանակ 276
3. Երզնկան 15-րդ դարում 281
4. Երզնկան 16–17-րդ դարերում 286
5. Երզնկան ջալալիների ասպատակությունների տարիներին 289
6. Երզնկան ենիչերիների սարսափի ներքո 298
7. Կրոնափոխության չարիքը 302
8. Մշակութային կյանքը թուրքական տիրապետության հինգ դարերի ընթացքում 311
9. Մարտիրոս Երզնկացի 318
10. Երզնկան բնական աղետների զոհ 325

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԵՐԶՆԿԱՆ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵՐԶՆԿԱՆ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ

1. Օսմանյան կայսրության ընդհանուր վիճակը 19-րդ դարի սկզբներին 334
2. Կյանքը արևմտահայ գավառում 337
3. Աբդուլ Մեջիդ սուլթանի ռեֆորմները 341
4. Ինչ տվեց Թանզիմաթը հայերին 345
5. Երզնկան Թանզիմաթին հաջորդող տասնամյակներում 349
6. Երզնկայի հայության ժողովրդագրությունը 355

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՑԻ ԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1. Առաջին դպրոցները 358
2. Երզնկայի Ընկերական վարժարանը 362

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԵՐԶՆԿԱՅՈՒՄ

1. Ժողովրդական խաղեր 376
2. Թատերական կյանքը Երզնկայում 378

3. Երաժշտական կյանքը Երզնկայում 388
4. Մշակութային այլ բնագավառներ 392

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՑԻ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1. Երզնկացիների առօրյա կենցաղը, զբաղմունքները 396
2. Կրոնական տոներ, ծիսակատարություններ 402

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՆԴԵՄՆԵՐԸ ԵՐԶՆԿԱՑՈՒՄ

1. Հարսանեկան ծիսակատարությունների բնույթը 415
2. Հարսանիքը երզնկացիների մոտ 417
3. Հարսը 427

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՑԻ ԱՆԳԻՐ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Երզնկայի բանահյուսության ընդհանուր նկարագիրը 433
2. Հեքիաթներ 437
3. Երզնկայի գավառին վերաբերող հեքիաթներ 445
4. Քել օղլանի հեքիաթը 450
5. Տեղանունների հետ կապված ավանդություններ 457
6. Պատառիկներ Երզնկայի երգերից ու պարերից 464
7. Առածներ 469
8. Հանելուկներ 473
9. Քրդերի հետ կապված մանրադեպեր 473

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՑԻ ՀԱՅԵՐԸ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Քաղաքական խմորումներ Երզնկայում 485
2. Գալուստ Արխանյանի հայդուկային խմբի գործունեությունը . . 488
3. Դերսիմի Քեռին (Ռուբեն Շիշմանյան) և նրա հայդուկային ջոկատը 495
4. 1895 թվականի հայկական ջարդերը Երզնկայում 497

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ՕՍՄԱՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Սահմանադրության նախօրյակին 502
2. Օսմանյան սահմանադրության հռչակումը 506

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՑԻ ՀԱՅԵՐԻ ՏՈՒՐՔԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ

1. Առաջին համաշխարհային պատերազմը 519
2. Երզնկայի հայերի բնաջնջումը 522
3. Դերջանի սպանդը 537

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԳՐԱՎՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1916–1917 ԹԹ.)

1. Ամայացած Երզնկան 542
2. Մեծ նահանջը 552

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Երզնկացիների ցրումը Ռուսաստանում 559
2. Խորհրդային Հայաստանը Երզնկացիների նոր Հայրենիք 560

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԵՐԶՆԿԱՑԻՆԵՐՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

1. Գաղթականական հոսանքի ընդհանուր պատկերը 612
2. Սփյուռքի նշանավոր երզնկացիները 616

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՆՈՐ ԵՐԶՆԿԱՆ ՈՐՊԵՍ ԵՐԶՆԿԱՑԻՆԵՐԻ ԵՐԱԶՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Նոր Երզնկայի հիմնադրման առաջին փորձերը 655
2. Ծրագրի կենսագործումը 660

ԳԱՌՆԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԶՆԿԱ
(Հնագույն դարերից մինչև մեր օրերը)

Տեխնիկական խմբագիր՝ ***Վ. Զ. Բղոյան***

Սրբագրիչ՝ ***Վ. Վ. Դերձյան***

Կազմի ձևավորումը՝ ***Գ. Վ. Մարիկյանի***

Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝ ***Թ. Շ. Վարդանյանի***
Վ. Բ. Աղոյանի

Էջադրումը և ներդիրների ձևավորումը՝ ***Ա. Խ. Աղուզումցյանի***

Ստորագրված է տպագրության՝ 18.10.05 թ.: Չափսը՝ 60x84 1/16:
Թուղթ՝ օֆսեթ: Տպագրություն՝ օֆսեթ: Հրատ.՝ 40.7 մամուլ,
տպագր. 42.5 մամուլ + 46 էջ ներդիր + 1 քարտեզ = 39.53 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 78:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան 52

Անահիտ աստվածուհու բրոնզաձույլ արձանի գլուխը (Սատաղ)

Երզնկայի լեռները



Եփրատ

Երզնկայի դաշտը



Սեպուհ լեռը

Բնապատկերներ Երզնկայի շրջակայքից

Զեմբերեկ Քյոփրու

Երզնկայի ամրոցի ավերակները



Ալթըն թեփե. Տաճարի ավերակները



Ալթըն թեփե. Զոհասեղան





Հնագիտական նյութեր Ալթըն թեփեի պեղումներից

Բրոնզե կաթսա և եռոտանի Ալբըն թեփեից



Պահպանված խաչքար Երզնկայի մերձակայքում

Հովհաննես Երզնկացի և Ապլոց իշխան
Ծաղկող՝ անհայտ, 1644 թ., Հալեպ

Կիրակոս և Մկրտիչ Երզնկացիներն իրենց աշակերտների հետ
Ծաղկող՝ Մանուել, 1334 թ., Երզնկա

Երզնկացի հայուհու տարազը (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)

Սողոմոն Թեհլերյան
1956 թ., Ֆրեզնո



Ռուբեն Շիշմանյան
(Դերսիմի Քեռի)

Գալուստ Արխանյան
(Մնձուրի առյուծ)

Սեբաստացի Մուրադ



Յուրուզկերյանների ընտանիքը
1895 թ., Երզնկա

Չաքալբաշյանների ընտանիքը
1913 թ., Երզնկա

Թորոսյանների ընտանիքը
XX դարի սկիզբ, Երզնկա

Հոգևորական դասը
1906 թ., Երզնկա

Քրիստոնյաների ամբիոնի ծոմապահները
XX դարի սկիզբ, Եղեգիս

Բրաբիոն վարժուհի
1913 թ., Երզնկա

Արշավիր Թերզյան
1912 թ., Երզնկա

Փեշտիմալճյանների ընտանիքը
1910-ական թթ., Երզնկա

Հովհաննես Պոտիկյանի
զավակները
1913 թ., Երզնկա

Երզնկացի մի ընտանիք եղեռնից առաջ

Պարթև-Սեհյանի մորաքույրն ընտանիքով
1914 թ., Երզնկա

Յուրուզկերյան ամուսինները

Երզնկացիներ. աքսորի ճանապարհին

Երզնկացիներ. Տեր Զորում



Կամախի կիրճը՝ երգնկացիների հավաքական գերեզմանոցը

Երզնկան ռուսական գրավման օրերին
1916 թ.

Սողոմոն Թեհլերյան
1921 թ., Բեռլին

Սրբուհի Յանըգյան
(Հորաքույր, Աստղիկ)

Գալուստ Սյուրմենյան



Գրիգոր Սյուրմենյան

Կարապետ և Աշխեն
Մատենցյաններ

Մի խումբ երգնկացիներ
1920-ական թթ., Բուխարեստ



Նոր Երզնկա ավանի կառուցման կազմկոմիտեն
1934 թ., Երևան

Մի խումբ երզնկացիներ
1930-ական թթ., Երևան

Հովհաննես Հովհաննիսյան և Վարդանուշ Լուսպարյան
1929 թ., Կրասնոդար

Պարթև-Սեիսյանների ընտանիքը
1920-ական թթ., Երևան

Խամբուրյանների ընտանիքը
Դոնի Ռոստով

Ավետիսյանների ընտանիքը
Երևան

Համաերզնկացիական միության դաշտահանդեսը
1934 թ., Դեյտրոյտ

Մի խումբ երզնկացիներ
ԱՄՆ-ի Օհայո նահանգի
շաքարի
պլանտացիաներում

Երզնկացի ընտանիք
ԱՄՆ-ում

Ռափայել Պազարճյան

Սարգիս Տեր-Ստեփանյան

Վարազդատ Ղազանճյան

Գրիգոր Ամատյան

Հակոբ Մնձուրի

Փայլակ Միքայելյան

Հրաչ Սարգիսյան



Արամ Ազնավուրյան

Երզնկացի թարգի
Խաչիկ
Տեր-Ստեփանյանը
իր որդու Գառնիկի հետ
1952 թ.

Գառնիկ
Ստեփանյանը
պատմաբան
Հարություն
Քյուրտյանի հետ

Գառնիկ
Ստեփանյանը
Ղազարոսյան
եղբայրների հետ

Գառնիկ Ստեփանյանը (Տեր-Ստեփանյան) իր ընտանիքի հետ

Ավետիս
Տեր-Ստեփանյանը
իր ընտանիքի հետ

Պերճ Ստեփանյանը թոռնիկների՝
Նարեի և Հայկի հետ

Պետրոս Հովհաննիսյան



Մարտիրոս Ադալյան
(գործ՝ Ռ. Ադալյանի)



Նորայր Ադալյան

Արմենուհի Սրապյան
(Տեր-Սրապյան Երզնկացի)



Գրիգոր Խանջյան

Պետրոս Չաթալբաշյան



Էդվարդ Բաղդասարյան

Հայրունիների ընտանիքը

Դերջանցի Գալուստ վարժապետի ընտանիքը Թբիլիսիում

Անահիտ աստվածուհու արձանը Նոր Երզնկայում (գործ՝ Գրիգոր Խանջյանի)

Նոր Երզնկա ավանի դպրոցի շենքը


ԵՐԶՆԿԱՅԻ ԿԱՄ ԵԿԵՂԵՑՑ ԳԱՒԱՌ
Մասշտաբ Աստիճանաչափ 1 : 160,000
Զուտ Հայկական գիւղ
Հայ և այլազգի խառն
Թրքական գիւղ
Քրտական
Վանք, ուխտատեղի
Կարմիր
Աղկի
Փալանդա
Մարկոսէր
Տնկէնսկ
Մթնի
Վերի Ուլա
Վարի Ուլա
Հարապետի
Սրպիհան
Կիւլինճէ
Թիւ
Սելիւկէ
Քիտիտ էքրէկ
Մարդին
Տաճրակ
Սուրանսիտի
Նոր Գ. Հայրապետ
Երզնկայի գավառակը XIX դ



Գառնիկ Ստեփանյան